



Գիրքը լույս է տեսել
ԳԱԼՈՒՍԿ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ
հաստատության աջակցությամբ



MATENADARAN
REPUBLIC OF ARMENIA – MASHTOTS INSTITUTE of
ANCIENT MANUSCRIPTS

LEVON KHACHIKIAN

WORKS
VOLUME I

“МАТЕНАДАРАН”
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА

ЛЕВОН ХАЧИКЯН

ТРУДЫ
ТОМ I

ИЗДАТЕЛЬСТВО «НАИРИ»
ЕРЕВАН - 2012



«ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ»

ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ԽԱԶԻԿՅԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՏՈՐ Ա

«ՆԱԻՐԻ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2012

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2 Հ)
Խ 288

Հատորը կազմեց՝ **Շ. Լ. Խաչիկյանը**
Խմբագիր՝ **Պ. Մ. Մուրադյան**

Խաչիկյան Լ.

Խ 288 Աշխատություններ. – Հ. Ա., - Եր.: Նաիրի, 2012: Հ. Ա., 547 էջ:

Ակադ. Լևոն Խաչիկյանի աշխատությունների սույն հատորը նվիրված է հայոց միջնադարյան մատենագրության նորահայտ կամ սակավ քննարկված խնդիրների ուսումնասիրությանը՝ դպրության նախամաշտոցյան շրջանից մինչև ժԸ դարը: Հատորում ներկայացված են պատմաբանասիրական առանձնահատուկ կարևորություն ունեցող բնագրեր, կատարված են բազում մատենագիտական, ազգագրական ու մշակութաբանական դիտարկումներ:

ԳՄԴ 63.3(2 Հ)

ISBN 978-5-550-01695-4

© Մատենադարան, Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ,
2012:

© «Նաիրի», հրատ. ՓԲԸ, 2012:

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀԱՅՍՏԱՆԻ

Ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի գիտական կենսագրությունը սկսվում է պետական ձեռագրատուն-Մատենադարանում աշխատելու տարիներից: Սովորաբար երիտասարդ գիտնականների առաջին հրատարակումները ներողամտությամբ հայցելու տարր են ունենում, բայց Լ. Խաչիկյանի այսօրվա վաստակի բարձունքից դիտելիս անգամ նրա առաջին հրատարակումները դրա կարիքը չունեն, եթե չասենք՝ այսօր էլ ուսանելի են: Հայագետները (Ղ. Ալիշան, Գ. Խալաթյան) վաղուց գիտեին Վանական Վարդապետի «Յաղագս տարեմտին» ճառի գոյության մասին, բայց այդ արժեքավոր տոմարական բնագրի գիտական հրատարակությունն ու ամփոփ գնահատությունը վիճակված էր իրականացնել քսաներեքամյա Լ. Խաչիկյանին¹: Նրա բնութագրմամբ՝ «Յաղագս տարեմտին» աշխատությունը «ցայտուն կերպով ցոյց է տալիս մեր բանասիրութեան միայն նեղ շրջաններին հայտնի Վանական Վարդապետի գրչի ուժն ու գիտական կարողությունը»², իսկ այդ երկի գիտական բնագիրը կազմելու, Անանիա Շիրակացու հետ ունեցած աղերսը պարզելու, Արտավազդին վերաբերող առասպելի տարբերակը գնահատելու և ծանոթագրելու հմտությունը, առանց չափազանցության, ցույց էր տալիս երիտասարդ Լ. Խաչիկյանի «գրչի ուժն ու գիտական կարողությունը»: Եվ առհասարակ, Եղիշեի «Արարածոց մեկնություն» երկը դիսերտացիայի թեզ դարձնելը նշանակում էր, թե Լ. Խաչիկյանը զբաղվելու է մատենագրության պատմության այնպիսի բնագավառներով, որոնք ինչ-ինչ պատճառներով քննության առարկա չեն դարձել, և որոնց մատենագրական կարևորությունը կարոտ է բացահայտման:

Անդադրում ու անձանձրույթ ձեռագրեր պրպտող Լ. Խաչիկյանը Մատենադարանի գրչագրերից մեկում (№ 631) սովորական «Նախերգանք քարոզից» կոչված գրությունից տարբերեց ու հայագիտության մեջ առաջին անգամ երևան բերեց միջնադարյան նշանավոր վարդապետանոց Գլաձորի սաների ատենախոսությունները՝ կատարելով Ղ. Ալիշանի երկար ժամանակ

¹ «Յաղագս տարեմտին ի Վանական Վարդապետի ասացեալ» («Գիտական նյութերի ժողովածու») № 1, 1941, էջ 151-169):

² Նույն տեղում, էջ 152:

անկատար մնացած ցանկությունը¹: Երկրի քաղաքական, կրոնական և մշակութային պատմության պատկառելի իմացություն պետք էր ունենալ՝ հիշյալ ատենախոսությունների թեթևակի ակնարկումների միջից ժամանակի աշխարհական ու հոգևոր անձանց տեսնելու, անվրեպ հասցեագրելու և նաև բացահայտած հուշարձանները թվագրելու համար: Լ. Խաչիկյանի «Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները» աշխատությունը² այդ ամենի առկայությունն էր վկայում: Ի դեպ, առաջին հոդված-հրապարակումներից սկսած, Լ. Խաչիկյանին բնորոշ է գիտական լայնախոհությունը. նրա աշխատություններում ուրիշների ուշադրությանն առաջարկվող և նոր հետախուզումներ հուշող բազմաթիվ հղումներ ու ցուցումներ կան, որոնք երբեմն հաշտություն մտնելով ևս գործածված են, իսկ երբեմն էլ դեռ սպասում են ընկալունակ կատարողի: Հիշյալ հոդվածում, օրինակ, խոսք կա Մխիթար Գոշի «արժեքավոր և ցարդ անհայտ ճառերի ու մեկնությունների» մասին ձեռագրի մատնացուցումով (№ 3276), որոնց ուսումնասիրությունը կամբողջացնեն մատենագրի վաստակը³:

Հայագետներ Հ. Մանանդյանն ու Լ. Մելիքսեթ-Բեկը դիտել էին, որ Գիոգենես Լաերտացին ստոիկյան դպրոցի հիմնադիր Ջենոնի աշխատությունների շարքում հիշատակում է «Յաղագս բնութեան» վերնագրով և հունարեն բնագրով չպահպանված մի երկ, որի հայերեն թարգմանությունն առկա է ձեռագրերում:

Առն Խաչիկյանը պրպտումների մեջ ավելի առաջ է անցնում և հայտնաբերում այդ երկի թարգմանության ընդարձակ խմբագրությունը⁴: Գիտնականի եզրակացությամբ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» և Ջենոնի «Յաղագս բնութեան» բնագիրը «թարգմանվել են նույն գործչի կողմից, և կամ նրանց թարգմանիչները եղել են ժամանակակիցներ ու թարգմանչական նույն դպրոցի համամիտ ներկայացուցիչներ»⁵:

Հայագետի՝ «Ջենոնի «Յաղագս բնութեան» երկի հայերեն թարգմանությունը» ուսումնասիրություն-հրապարակումը մեկ անգամ ևս հավաստեց

¹ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1891, էջ 137:

² Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», № 23, 1946, էջ 423-450:

³ Նկատենք, սակայն, որ ձեռագրի 40ա-44ա էջերում գտնվող Մխ. Գոշի հեղինակությունը կրող «Յաղագս ողորմութեան եւ աղբատասիրութեան» հաղը իրականում պատկանում է Մխիթար Սասնեցուն:

⁴ «Գիտական նյութերի ժողովածու» № 2, 1950, էջ 65-98:

⁵ Նույն տեղում, № 2, էջ 76:

այն ընդհանուր մշակութային նշանակությունը, որ ունեն միջնադարյան հայկական թարգմանությունները: Լ. Խաչիկյանն ականերև դարձրեց նաև, որ թարգմանական այդ բնագրերը նշանակալի հետք են թողել մեր մատենագրության պատմության մեջ:

Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւնից» հայտնի էր, որ Կոստանդին Բարձրաբերդցին «Սահմանք կանոնականք» է հեղինակել և առաքել ըստ պատկանելույն, բայց որ դրանից երեք տարի անց՝ 1251 թ., նա վերստին է անդրադարձել այդ խնդիրներին 1249 թ. հայ-վրացական հակամոռողական ապստամբության հետևանքների թելադրանքով, պարզ դարձավ, երբ Լենինգրադի գրչագրերից մեկում Լևոն Խաչիկյանի կողմից նույն հեղինակի «Խրատական թուղթը» լույս աշխարհ բերվեց¹: Այդ ոչ ծավալուն բնագիրը, հիրավի, «լրացնում է հայ պատմագիրներին և իր ուրույն տեղը գրավում մոռողական արշավանքների ու տիրապետության առաջին տասնամյակների աղբյուրների շարքում»²: Հրատարակիչը բացահայտում է կաթողիկոսի խրատների քաղաքական դրդապատճառները, նրանց պատմական, իրավագիտական, ազգագրական և կենցաղագիտական նշանակությունը: Ավելորդ չէ հիշել, որ ուսումնասիրության մեջ հստակորեն իմաստավորվեցին պաշտամունքային «քաջախօս» և «լեկրոտ», սովորութիւնական «խաւարարգել», սոցիալ-կենցաղային «հաղկից» և «խապկից» տերմինները: Լևոն Խաչիկյանի աղբյուրագիտական հմտությանն ենք պարտական նաև Թղթի հեղինակային պատկանելությունը որոշելու և միջին հայերենի պատմության նշանակալի մի աղբյուր երևան բերելու համար:

1951 թ. լույս ընծայած մի հոդվածով Լևոն Խաչիկյանը նոր էջ բացեց միջնադարյան հայկական քաղաքների ներքին կյանքի ուսումնասիրության մեջ՝ ձեռքի տակ ունենալով Հովհ. Երզնկացու կազմած (1280 թ.) «Սահմանք] եւ կանօնք միաբանութեան եղբարց, որք աստուածային սիրովն միաբանեցան յեղբայրութիւն միմեանց ի մայրաքաղաքս, որ կոչի Երզնկայ» գիտությունն անձանոթ բնագիրը³: Մեկ տասնամյակ անց «Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280 թ.)» խորագրի տակ նա շրջանառության մեջ դրեց այդ իրոք եզակի և բովանդակալից սկզբնաղբյուրը՝ համոզված լինելով, որ «այսուհետև ևս գրավելու է սևեռուն ուշագրություն»⁴:

¹ «Քանթեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 267-284:

² Նույն տեղում, էջ 270:

³ ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 12, էջ 73-84:

⁴ «Քանթեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 365-377:

Ի թիվս այլ հարցերի, և հաշիկյանն անդրադարձավ կազմակերպության կառուցվածքին, նրա անդամների սոցիալական պատկանելությանը, նպատակներին ու խնդիրներին՝ նորովի մեկնաբանելով այլ աղբյուրների, այդ թվում և չափածո գործերի, հայրենների բովանդակած և հաճախ անհասկանալի մնացած տեղեկությունները:

Ակադ. Առն հաշիկյանի հրատարակած բնագրերի շարքում առանձնակի կարևորություն ունեցողներից է Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը»¹: Այն եզնիկ Կողբացու հիմնական աղբյուրներից մեկն է, ուստի և գրված է 5-րդ դարի 40-ական թվականներից ոչ ուշ: Ն. Ադոնցից հետո և հաշիկյանն այդ երկի հետ կապված նոր լուսաբանություններ առաջադրեց: Մասնավորապես նա հատակեց երկի ստեղծման նպատակը՝ «Եկեղեցու ջատագովները ոչ միայն պետք է հիմնավոր տեղեկություններ ունենային դարավոր ավանդույթով ժողովրդի գիտակցության մեջ արմատացած հավատալիքների ու պատկերացումների մասին, այլև պետք է սովորեին քրիստոնեական վարդապետության դիրքերից դրանք մերժելու ձևերն ու եղանակները»²: Տարաբնույթ փաստերի ու դատողությունների լույսի տակ և հաշիկյանը մեծ հավանականությամբ հետևություն է անում, որ «Եզնիկի աղբյուրը հանդիսացող «Հարցումի» հեղինակն ինքը Մաշտոցն է»³, ուստի և իրավացիորեն այն կոչում է մատենագրության երախայրիք: Աղբյուրագիտական առումով ուսանելի նորություններ են սուրբգրային վկայությունների բնութագրությունն ու Վահրամ Բաբունու քաղումների համագրությունը:

Առն հաշիկյանը մեր մատենագրության պատմության ամենահմուտ հետազոտողներից էր: Մաշտոցին ու նախամեսրոպյան գրի հարցին նվիրված նրա ոչ ծավալուն ուսումնասիրությունները թե՛ փաստական, թե՛ հետազոտական մեթոդի առումով նոր խոսք են՝ գրված անկանխակալ ու քննախույզ հեղինակի գրչով: Հմայագրերից նրա քաղած ու բնութագրած տվյալները նորովի հետազոտությունների հեռանկարներ ու ուղիներ են մատնացուցում⁴:

Առն հաշիկյանը փաստորեն հայտնագործեց 11-րդ դարի հեղինակ Հակոբ Սանահնեցու «Ժամանակագրութեան» հատվածները: Իր փորձին ու վաստակին վայել հմտությամբ նա դրանք զուգադրեց Կոզեռնի «Տեսիլքի»,

¹ Նույն տեղում, № 7, 1964, էջ 301-330:

² Նույն տեղում, էջ 309:

³ Նույն տեղում, էջ 310:

⁴ «Բանբեր Մատենադարանի», № 7, էջ 11-24, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 145-158 և այլուր:

Ուռհայեցու «Փամանակագրութեան» և Տարոնացու «Յակաճառութեան» համապատասխան դրվագների հետ և պարզեց նրանց աղբյուրագիտական աղերսը, որով և ուրվագծվեց Հակոբ Սանահնեցու կենսագրությունը, ճշգրտվեցին Հակոբ քահանայի և Հակոբ Սանահնեցու նույնանձնությունը, ապրած ժամանակը, հայ-բյուզանդական հարաբերություններում ունեցած դերը և շատ այլ իրողություններ¹: Գրեթե նույնը պետք է ասել և, հաշիկյանի «Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը» աշխատության մասին²: Լ. Խաչիկյանն առաջինը կազմեց նրա աշխատությունների մատենագիտությունը, բնութագրեց ու գնահատեց դրանք, ի մի հավաքեց մատենագրության մեջ պահպանված մանր ու մեծ տեղեկությունները նրա մասին և գրեց մատենագրության արժեք ունեցող հետազոտություն³:

Տարաբնույթ սկզբնաղբյուրների նախանձելի իմացությունն ու նրանց հաղորդումները վերլուծելու կարողությունը երբեմն-երբեմն «շեղել են» նույնիսկ Լ. Խաչիկյանի հետևողականությունն ունեցող գիտնականին: Այսպես, Հովհ. Երզնկացու ճառերի ու քարոզների հաղորդած և հարակից տեղեկություններից նա նյութեր է քաղել միջնադարյան հայկական բժշկության վերաբերյալ⁴, իսկ երկու տասնամյակ անց՝ միանգամայն նոր փաստական նյութի քննությունը գրել «Հայ բնագիտական միտքը 14-18-րդ դարերում» աշխատությունը⁵: Հովհ. Ջուղայեցու «Հաշվետոմարի» հրատարակությունը և ուսումնասիրությունը Լ. Խաչիկյանն իր նպաստը բերեց տնտեսական պատմությանը⁶: Լ. Խաչիկյանի ընդգրկումն ունեցող հայագետի համար այդ բոլոր «շեղումները» ուրիշ բան չեն, քան «Հայոց մատենագրության պատմություն» հետազոտություն:

Այդ ամենով հանդերձ ակադ. Լևոն Խաչիկյանն ամենից առաջ պատմաբան էր, սոցիալական, քաղաքական ու վարչական պատմության խոշորագույն մասնագետներից մեկը Հայաստանում: Դեռ 1947 թ. հրատարակած

¹ «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 22-48:

² «Բանբեր Մատենադարանի», № 3, 1956, էջ 57-84:

³ Աշխատության վերջում կան ուշագրավ առաջարկություններ:

⁴ ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1947, № 4, էջ 83-90:

⁵ «Պատմա-բանասիրական հանդես», 1971 № 2, էջ 23-44. հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», հտ. 4, Երևան, 1972, էջ 470-490:

⁶ **Հովհաննես Տեր-Դավթյան**, Ջուղայեցու հաշվետոմարը, աշխատ. Լ. Ս. Խաչիկյանի և Հ. Գ. Փափազյանի, Երևան, 1984: Հմմտ. “Armeniaca”, Venise, 1969, p. 244-252; **Levon Khachikian**, Le registre d'un marchand arménien en Persé, en Inde et au Tibet (1682-1693), “Annales”, Paris, 1967, p. 231-278:

«Աղանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում» հոդվածով¹ նա ապացուցեց ավանդական պատմության մեջ այդ քիչ հետազոտված խնդրի կարևորությունը: Հիշյալ առումով նրա «Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից» մենագրությունը (1951 թ.) անդրանիկ հաջողված փորձն էր 4-րդ դարին վերաբերող հայկական և հունական աղբյուրների պահանջվելիք իմացությամբ: Հայագրի եվստաթիոս եպիսկոպոսի «մոլորությունը», որ այնքան անհանգստություն էր պատճառում բյուզանդական գործիչներին (այդ թվում և Բարսեղ Կեսարացուն), փաստորեն ավատականացող եկեղեցուն ընդդիմացող շարժում էր: Ի դեպ, Լ. Խաչիկյանը հաջողությամբ փաստեց նաև Մեծ ու Փոքր Հայքերի ներքին իրավիճակի նույնականությունը՝ մանավանդ Արշակավանի բնակեցման պատմության նորովի լուսաբանության առթիվ: Սրբագրելի տեղիներ ունեցող այդ մենագրությունը այսօր էլ չի կորցրել իր գիտական նշանակությունը:

Իրենց արժարժած խնդիրների կարևորությամբ ու խորությամբ մենագրական աշխատանքի նվաճումներ են բովանդակում միջնադարյան Հայաստանի գյուղական համայնքին², արհեստագործության վիճակին ու զարգացման աստիճանին³, տնտեսական գործարքներին⁴ նվիրված հոդվածները: Հայագիտության համար նոր են ոչ միայն նրանցում արված եզրակացությունները, այլև քննության առնչվող աղբյուրների ընձեռած նյութերը, որոնց լուսաբանումը տասնամյակների տքնություն և բոլորանվիրություն է պահանջել ձեռագրերի աշխարհը մտած հեղինակից:

Այդ նույն ձեռագրական հուշարձանների անընդմեջ պրպտումների արդյունքներն են ամփոփված Լևոն Խաչիկյանի նաև ոչ ձեռագրագիտական աշխատություններում, ինչպիսիք են, օրինակ, «Սյունյաց Օրբելյանների Բուրթեյան ճյուղը» տոհմագրական-տեղեկագրական ուսումնասիրությունը՝ քաղաքական ու մշակութային պատմության հարցերի առդրություն⁵, ինչպես նաև՝ «Արտագի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը» մենագրությունը⁶, որը պատմական-ազգագրական և մատենագրության պատմության ու կրթօջախների անցյալի համակողմանի ուսումնասիրության եզակի նմուշ է: Նման աշխատությունների շարքին է պատկանում նաև «Հա-

¹ Ն. Մառի անվան կաթինետի «Աշխատություններ», № 2, էջ 181-209:

² «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 110-134:

³ ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 3, էջ 29-50:

⁴ «Քանբեր Մատենադարանի», № 6, 1960, էջ 21-42:

⁵ Նույն տեղում, № 9, 1969, էջ 173-199:

⁶ Նույն տեղում, № 11, 1973, էջ 125-210:

յերը Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհներին» ընդգրկուն մենագրությունը, որ իբրև հոգված լույս տեսավ Մատենադարանի «Բանբերում»:

Մենք դիտավորությամբ ընդարձակորեն խոսեցինք Լևոն Խաչիկյանի հոգված-հրապարակում-ուսումնասիրությունների մասին, մինչդեռ հայագիտության լայն շրջանները գիտեն, որ մեր երախտավորի առավել հաճախ հիշատակվող, գրեթե բոլոր հայագիտական աշխատություններում հղվող և ինչպես ասում են, սեղանի գիրք դարձած վաստակները ներկայանում են քառահատոր «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններով» (14-15-րդ դարեր), որոնց համար գիտնականն արժանացել է Մաշտոցյան մրցանակի: Առանց հարյուրավոր հիշատակարաններ ընտրել-վերծանելու, ժամանակագրելու և գնահատելու էլ, առանց այդ ծավալուն շորս հատորների էլ, որ հետպատերազմյան հայագիտության առավել երևելի նվաճումներից են, Լևոն Խաչիկյան գիտնականն արժանի էր այդ մրցանակին և ունեցած մյուս պատիվներին: Չխոսեցինք նաև, բայց առանց դիտավորության, Լ. Խաչիկյանի գիտակազմակերպչական և խմբագրական գործունեության մասին: Կուզենայինք միայն ասել, որ Լ. Խաչիկյանի տեական ու մանրախույզ ուսումնասիրությունների կնիքն առկա է նրա հեղինակակցությամբ ու խմբագրությամբ լույս տեսած «Հայ ժողովրդի պատմություն» շորրորդ հատորում, ինչպես որ այդ նույնը շոշափելի է նրա խմբագրությամբ ու ազնիվ հոգացողությամբ լույս տեսած «Բանբեր Մատենադարանի» տասնմեկ ծավալուն և օգտակար հատորներում (№ 3-13): Մի խոսքով, ճիշտ է ասված. «Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, այլ հոգի նոյն է»:

Լևոն Խաչիկյանի գիտակազմակերպչական կարողություններն ակներև էին. նշանակալի չափով տնօրենի հեղինակությունը էին պայմանավորված Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի աճը, այդ հաստատության ճանաչումն ու վաստակը: Պատահական չէ, որ միջնադարյան մատենագրության ու գրապատմության նստաշրջանները հաճախ այստեղ էին կայանում, իսկ Լևոն Խաչիկյանի ուսուցչապետության արգասիքները դառնում էին ընդհանուր սեփականություն: Դժվար է մեզանում գտնել հայագիտությամբ և հարակից ճյուղերով լրջորեն պարապող միջին և երիտասարդ սերնդի որևէ ներկայացուցչի, որն իր մասնագիտական կողմնորոշումով ու հաջողություններով այս կամ այն չափով պարտավորված չլինի Լևոն Խաչիկյանին:

Որքան էլ խնկելի ու պարտավորեցնող, սակայն գիտնականի հիշատակը հարգելու պատեհությունը չէ, որ մղում է սույն ժողովածուն կազմելուն:

Հայոց մատենագրության պատմությունը գրելու ճանապարհին եղած հաղթահարելիքները դեռ չափազանց շատ են. հեղինակային, թեմատիկ ու ժամանակագրական մատենագիտությունների պակասը, ձեռագրական հավաքածուների գիտական նկարագրության անավարտությունը, գեղարվեստականության չափանիշով մատենագրական հուշարձանների գնահատության ակամա սկզբունքի կիրառումը, ինքնուրույն ու թարգմանական երկերի սահմանագծի անորոշությունը, Քրիստոնյա Արևելքի ստեղծած այլալեզու դպրությունների բաղդատական նյութի անտեսումը և բազում պարագաներ համառորեն մեզ պահում են Հայոց մատենագրության պատմության նախամատուցներում:

Լևոն Խաչիկյանը այն սակավ ընտրյալներից էր, որոնք ճանաչում են բանասիրական-աղբյուրագիտական «մանրուքի» կարևորությունը, ամեն մի հոդված-հրատարակումով մի նոր հեղինակ կամ հեղինակի մի նոր երկ երևան բերում: Ավելորդ է ասել, թե մեր մատենագրության պատմության ապագա հատորը կարող է կերտվել հենց նման աշխատությունների, Անասյանական մատենագիտությունների և Տաշյանական վերլուծումների գումարումով միայն: Այդ նպատակի թելադրանքով է պայմանավորված առաջարկվող հատորի և՛ նյութի ընտրությունը, և՛ տեղակարգման սկզբունքը: Այստեղ ներկայացվող առանձին հոդվածները, մանավանդ սկզբնավորման շրջանի հետ առնչվողները, նույնությամբ կարող են մատենագրության պատմության ներածվել, իսկ մյուսները կլրացնեն արդեն հայտնին, պրպտելու մեթոդ ու ճանապարհներ կհուշեն այսօրվա և գալիք սերնդի հայագետներին: Խմբագրական միջամտելիքները նրանցում աննշան են, լրացնելիքները՝ քիչ ու դժվար¹: Նյութերի հաջորդականությունը ժամանակագրական է՝ մատենագրության պատմության կառուցյին ի նպաստ:

Ժողովածուն կազմելիս մտահոգիչ էր հավելվածում ներկայացվող ընդարձակ գրախոսության հրատարակել-չհրատարակելու խնդիրը: Ինքը՝ Լևոն Խաչիկյանը, գերադասեց այն հրատարակության շտալ, բայց և միաժամանակ՝ գրեթե բոլոր միջնադարագետ-հայագետներս կարդացել ենք այդ վերլուծությունը, ինչպես որ կարդացել ենք նաև հանգուցյալ հայագետ

¹ Նկատի են առնվել հեղինակային բոլոր լրացումները, առանձին դեպքերում կատարվել են ոչ էական խմբագրական կամ սրբագրական միջամտություններ, առավելապես կրճատումների տեսքով: Տարբեր հոդվածներում նույն խնդրին վերաբերող հարցադրումների կամ եզրակացությունների զանազանությունը արդյունք է նոր պրպտումների, ուստի խմբագրական միջամտություն չի կատարվել: Աստղանիշ կրող կամ անկյունավոր փակագծերի մեջ առնված ծանոթագրությունները խմբագրիմ են:

Վազգեն Հակոբյանի նույնքան ընդարձակ պատասխանը: Յավով ու ափսոսանքով պիտի խոստովանեի, որ Լեոն Խաչիկյանի գրախոսությունը սպասելի համոզվեցումը չընկալվեց, և սերնդակից ու սննդակից, նույն ուսուցչի վարդապետանոցում ձեռնագրված և տասնամյակներ մտերմաբար հայագիտությանը լծված երկու նվիրյալները՝ Լեոն Խաչիկյանն ու Վազգեն Հակոբյանը, խորթացան միմյանց: Եվ այնուամենայնիվ, հիշյալ գրախոսությունն ու նրա պատասխանը բնագրագիտական աշխատանքի ձեռնարկի ընդգրկում ու կիրառություն ունեն, ուստի հայագիտության նոր սերունդը չպիտի զրկվի նրանց հիմամբ հմտանալու հնարավորությունից: Ահա այս նկատառումով էլ «Հավելվածում» հրապարակվում է Լեոն Խաչիկյանի գրախոսությունը: Հատորի խմբագիրը, փաստորեն, պարտավորվում է հոգալ նաև բազմաշխատ պրոֆ. Վազգեն Հակոբյանի պատասխանի հրատարակումը՝ թերևս առաջիկայում կազմելիք նրա աշխատությունների ժողովածուի հավելվածում: Պատասխանից, սակայն, պիտի հանել այն էջերը, որոնք ակադեմիական գիտությունը չեն առնչվում:

Հուսանք, որ ակադ. Լեոն Խաչիկյանի այս ժողովածուին կհետևեն մյուսները, ուր կամփոփվեն միջնադարյան Հայաստանի քաղաքական, տնտեսական, վարչական ու մշակութային պատմության խնդիրներին վերաբերող աշխատությունները:

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՆԱԽԱՄԵՍՐՈՊՅԱՆ ԳՐԻ ՀԱՐՅՈՒ ԵՎ ՀՄԱՅՆԱԳՐԵՐԸ¹

Վարդանանց հերոսամարտի վիպերգու Եղիշեն իր մի անտիպ աշխատության մեջ փորձում է բնորոշել իր ժամանակի լեզուները՝ վեր հանել նրանց առանձնահատկությունները. «Հույների լեզուն, - գրում է նա, - փափուկ է, հոռմեականը՝ կտրուկ, հոնինը՝ սպառնական, ասորունը՝ աղաչական, պարսկինը՝ պերճ, արևելինը՝ գեղեցկազարդ, գոթինը՝ ծաղրական...» և այլն, իսկ հայինը համեղական է, որ «կար է զամէնն յինքն ամփոփել»²:

V դարում ստեղծված հայ մատենագրության լեզուն իրոք կատարյալ է ու գեղեցիկ: Հայ և օտարագրի մի շարք գիտնականներ, հարցը խորապես շուտումնասիրելով, դասական հայերենի կատարելությունը բացատրելու համար ենթադրել են, որ հայերը դեռևս հեթանոսական ժամանակ ունեցել են մայրենի լեզվով գիր ու գրականություն: Այս ենթադրությունը հակասում է հայ հին մատենագիրների (Կորյուն, Փարպեցի, Խորենացի) հաղորդած որոշակի տվյալներին, որոնք միաբերան վկայում են, թե Մաշտոցն է հայ գրի ու գրականության հիմնադիրը: Չհաշտվելով, սակայն, այդ իրողության հետ՝ նախամեսրոպյան գրի ու դպրության գոյությունը հաստատել կամեցող գիտնականներն աշխատել են հիմնավորել իրենց թեզը՝ հայ և օտար աղբյուրների մի քանի մշուշապատ արտահայտությունների մտացածին իմաստ վերագրելով, ինչպես նաև՝ «չէր կարող գոյություն չունենալ», «պետք է գոյություն ունենար» և նման այլ հայտարարություններով:

Մանրամասն քննարկելով ու հերքելով բոլոր այս «փաստարկները»՝ մեծանուն հայագետ Հ. Աճառյանն իր «Հայոց գրերը» աշխատության մեջ գրել է. «Ս. Մեսրոբեն առաջ հայերեն գրականություն տեսնելը, որ իբր թե ջնջեց Լուսավորիչը՝ այրելով բոլոր հայերեն գրքերը, անմիտ հեքիաթ մ'է միայն»³: Այդ հեքիաթին, սակայն, ոմանք դեռևս հավատում են, իսկ պորֆ. Ա. Աբրահամյանը, կրկնելով իր նախորդներին, պնդում է, թե հայերը մինչև Մաշտոցի մեծ գյուտը ունեցել են մայրենի լեզվով «հարուստ գրականություն»⁴:

Մեր նպատակից դուրս համարելով նախամեսրոպյան գրի գոյության օգտին մեջբերվող կարծեցյալ «փաստարկների» կրկին հերքումը՝ նշենք

¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 145-157:

² Մատենադարան, ձեռ. № 1267, էջ 48բ:

³ Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 106:

⁴ Տէս, օրինակ, Ա. Աբրահամյան, Հայ գրի ու գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 33-46:

միայն, որ հայոց լեզվի կատարելությունը հայ մատենագրության արշալույսին՝ եզակի երևույթ չէ բնավ: Զարմանալի լեզվական կատարելությամբ են շարադրված արաբական, պարսկական, սլավոնական և այլ գրականությունների անդրանիկ արտադրանքները. երկար դարեր նրանք համարվել են օրինակելի և անգերազանցելի նմուշներ մայրենի գրականության: Ավելին, ինչպես իրավացիորեն նկատել է պորթ. է. Աղայանը, «դասական գրաբարը՝ V դարի առաջին կեսի մատենագրության լեզուն, հենց այդ ժամանակի կենդանի, խոսակցական լեզուն է՝ գրական աստիճանին բարձրացած», և այն «չէր կարող անմիջական կապ ունենալ նախաքրիստոնեական շրջանի գրական լեզվի հետ»¹, եթե նույնիսկ նախաքրիստոնեական շրջանում հայերն ունեցած լինեին գիր ու գրականություն:

Անհրաժեշտ ենք համարում պարզություն մտցնել նաև հետևյալ հարցում: Որոշ գիտնականներ հավասարության նշան են դնում «գիր» եւ «գրականություն» բառերի միջև. եթե եղել է գիր, եղել է ուրեմն նաև գրականություն՝ ենթադրում են նրանք: Այս տեսակետի հետ ևս բնավ չի կարելի համաձայնել:

Ինչպես ամեն բան աշխարհում, այնպես էլ գիրն ապրել է իր զարգացման հազարամյակների պատմությունը: Գրի սաղմնավորման շրջանին հատուկ է պատկերագիրը (պիկտոգրամմա), որի միջոցով հնարավոր էր գրանցել որևէ պարզ դեպքի կամ իրողության մոտավոր բովանդակությունը՝ առանց լեզվական կաղապարի, առանց մտքերի ու բառերի մասնատման: Գրի զարգացման հաջորդ փուլին հատուկ է գաղափարագիրը (իդեոգրամմա), որով արդեն արտահայտվում էին ամբողջական բառեր: Գաղափարագրերը, սակայն, անկարող էին արտահայտել տվյալ լեզվի հնչյունները, ուստի միաժամանակ կարող էին կիրառվել այլալեզու տարբեր ժողովուրդների կողմից: Գաղափարագրերի հետագա զարգացումով ստեղծվում է վանկային գիրը, որի մեջ արդեն նախկին գաղափարագրերին, կամ նրանց մի զգալի մասին տրվում է վանկային իմաստ, ուստի վանկային գրերն արդեն այս կամ այն չափով հնարավորություն են ընձեռում արտահայտել, սակավ կամ առավել հաջողությամբ, տվյալ լեզվի բառերի հնչույթը: Տառային կամ հնչյունային այբուբենները գրի զարգացման ամենաբարձր աստիճանն են ներկայացնում:

Հանրահայտ ճշմարտություններ են սրանք, որոնց կրկնությունը այնուամենայնիվ անհրաժեշտ է խնդիրը հստակորեն ըմբռնելու համար:

¹ «Սովետական Հայաստան», 1962, № 94:

Մեր անվանի հայագետներ Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Հ. Մանանդյանը, Ստ. Մալխասյանցը և այլ գիտնականներ, երբ ասում են, թե Մաշտոցից առաջ հայ գրականությունը չի եղել, դրանով նրանք բնավ չեն ժխտում պատկերագրերի կամ գաղափարագրերի գոյությունը Հայաստանում. այդ հարցը նրանց չի էլ հետաքրքրել: Նրանք մերժել են հայերենով հեթանոսական «աղբատ» կամ «հարուստ» գրականության գոյությունը՝ մի բան, որ մեր համոզմունքով վեճի առարկա չի կարող լինել:

Մրանով արդյոք սպառվելու՞ է հարցը, բացառվա՞ծ է արդյոք հասարակական խիստ նեղ նպատակների ծառայող, նախնական ու պարզունակ համակարգի ինչ-որ գաղափարագրերի գոյությունը հեթանոսական Հայաստանում: Ոչ, չի բացառված: Չնայած այդպիսի գրերի որոնման ուղղությամբ մեզ մոտ դեռևս ծրագրված աշխատանք չի տարվել, այնուամենայնիվ արդեն գտնվել ու նկարագրվել են մի շարք ժայռագրություններ (պատկերագրեր, իծագրեր), ինչպես նաև գրի ավելի բարձր զարգացման աստիճանը հիշեցնող այլ նշաններ, հավանաբար՝ գաղափարագրեր (նկատի ունենք Յուլակերտի արձանագրությունները): Առայժմ դժվար է որոշել, թե ովքեր են փորագրել այդ գաղափարագրերը՝ հայե՞րը, թե՞ Հայաստանի նախաբնիկները¹:

Կարելի է հուսալ, որ հեթանոսական Հայաստանի նշանավոր բնակավայրերի, մանավանդ պաշտամունքային հուշարձանների պեղումները կարող են, նոր ու անակնկալ նյութեր տրամադրելով գիտությունը, լույս սփռել նաև այս հարցի վրա: Բայց սպասելու հարկ չկա. հայ մշակույթի պատմության համար որոշակի հետաքրքրություն ներկայացնող հարցի լուծմանը, կարծում ենք, շոշափելի նպաստ կարող են բերել նաև հմայական նշաններ պարունակող հայերեն ձեռագրերը, որոնց բնույթի ու բովանդակության պարզաբանմանն է նվիրված մեր այս հոդվածը:

Հայ մատենագրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի գրական երկերից, ի բաց առյալ «Յաճախապատում» ճառերը, պահպանվել են միայն բեկորներ: Ներմուծված լինելով «Հայոց կանոնգրքի» խմբագրություններից մեկի մեջ՝ պահպանվել ու հասել է մեզ Մաշտոցի «Խրատագիր եւ զգացուցիչ» շրջաբերական թղթերից մի փոքրիկ հատված, որն ուղղված է հեթանոսական հավատալիքների և մանավանդ հմայության ստորև թվարկվող ձևե-

¹ [Հեղինակի հարցադրումը ժամանակագրական է՝ արդեն իբրև էթնոս ձևավորված հայերը, թե պրոտոհայկական ցեղերը՝ նախաբնիկները: Խմբ.]

րի դեմ՝ «երազք եւ հմայք եւ յուռութք եւ բաջաղանք եւ դիւթութիւնք եւ թովչութիւնք եւ հարցուկք եւ ձեռնածուք եւ դեղահատք եւ խտիրք եւ որ ինչ նման են սոցին»։ Մաշտոցը հայտնում է, որ բոլոր նրանք, ովքեր հավատում կամ իրենք իսկ կատարում են այդպիսի հմայություններ, «նզովեալ են ի սուրբ եկեղեցոյ եւ արտաքս ընկեցեալ յաստուածային հրամանաց»¹։

Մաշտոցի սկսած պայքարը հեթանոսական հավատալիքների ու պատկերացումների դեմ, գրեթե առանց ընդհատումների, շարունակվում է ողջ միջնադարում։ Եվ հայ հարուստ մատենագրությունը հնարավորութուն է ընձեռում հետևելու այդ պայքարի առանձին դրվագներին, նոր տվյալներ քաղելու մեր ժողովրդի հնամենի պատկերացումների, ծեսերի, կախարհության, մոգական բժշկության ձևերի ու եղանակների և հարակից այլ հարցերի մասին։

V դարի հայ նշանավոր մատենագիր Եղիշեից պահպանվել է ինչ-որ ընդարձակ աշխատության (հավանաբար «Արարածոց մեկնութեան») մասը կազմող մի թանկագին բեկոր։ Այստեղ, ժողովրդական սնահավատությունների մասին խիստ հետաքրքրական թվարկումը կատարելիս, հեղինակը գրանցել է նաև ուշագրավ այսպիսի տողեր. «Թէ ոք այլանդակապէս ընդ այս մտածութիւնս անցանէ աւտար խորհրդովք՝ նշանագիրս գծել կամ մարգարէանալ առ յապայսն եւ երազահմայ լինել... այն արտաքոյ է քրիստոնէութեան»²։

Այսպիսով, V դարի 80-ական թվականներից (հենց այս թվականներին պետք է գրված լինի Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը») ուղղակի վկայություն ունենք ինչ-որ նշանագրերի մասին, որոնք գրվում էին «օտար (այսինքն՝ հեթանոսական) խորհրդով» այնպիսի մարդկանց կողմից, որոնց եկեղեցական հեղինակը համարում է «արտաքոյ քրիստոնէութեան»։

Այս նույն նշանագրերի մասին հետաքրքրական մանրամասնություններ են գրանցված Հովհան Մանդակունուն (V դար) վերագրվող, բայց Հովհան Մայրավանեցուն (VII դար) պատկանող «Թուղթ վասն հմայից դիւթականաց եւ անօրէն յուռթողաց» ճառի մեջ³։ Ճառի հեղինակը, իր նախորդների նման, ձգտում է համոզել իր ունկնդիրներին, որ դյութերը, թովչները, հարցուկներն ու բոլոր հմայիչները սատանայի պաշտոնյաներ են. քրիստոնյաները չպետք է խաբվեն նրանց պատիր հմայություններով, պետք է

¹ «Համդէս ամսօրեայ», 1958, էջ 371։

² «Մատենագրութիւնք Եղիշէի», էջ 376։

³ «Տեառն Յովհաննու Մանդակունոյ ճառք», Վենետիկ, 1836։

խորշեն նրանից՝ որպես հեթանոս խաբեբաներից: «Իսկ եթէ անձամբդ, - գրում է նա, - առ դիւթս եւ առ թովրչս եւ առ հարցուկս եւ առ ուռութս եւ առ խտիրս եւ հմայս գերեսցիս, ոչ եւս պարտ է զանձն կոչել քրիստոնեայ, զի հեռացեալ ես Քրիստոսէ»¹: Ճառի մեջ այնուհետև թվարկված են բազմապիսի հմայական ձևեր ու եղանակներ, որոնցից ուշագրավ է հատկապես «գիր պահարան ընդ անձն արկանել»-ը²: Մայրավանեցին խաբված է համարում նրանց, ովքեր «գիր պահարան» գրողներին բժշկի տեղ են ընդունում. այդ գրերը բնավ չեն կարող ակնկալվող ներգործությունն ունենալ հիվանդների վրա, որովհետև իսկական բժիշկները բուժում են սպեղանիներով ու խարելով, իսկ «գիր պահարան հակառակ է շնորհաց եւ պատուիրանացն Աստուծոյ»³, - գրում է Մայրավանեցին: Նա նկարագրում է այդ «գիր պահարանների» կիրառության կերպը, որոշ չափով նաև բովանդակությունը՝ ճառի ստորև բերվող հատվածում. «Գրեալ պահարանս ի փողս ցաւածիցն արկանեն եւ ժածմուկս մտացածին բանից եւ զանուան որ ոչ լսի ի պատուիրանս՝ գրածս առնեն, եւ զանուն Քրիստոսի ընդ նոսինն արկանեն, զի գրածն աստուածական համարեսցի» և այլն⁴:

Քննարկվող հարցի կապակցությամբ բացառիկ նշանակություն ունի XIII դարի նշանավոր առակագիր և քարոզիչ Վարդան Այգեկցու «Վասն կուսպաշտութեան» անտիպ քարոզը: Շուրջ 900 տարի էր անցել Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հայտարարելու ժամանակներից, բայց Վարդան Այգեկցու հաղորդած տվյալները վկայում են, որ հայ ժողովրդի աշխարհայացքի մեջ դեռևս կենսունակ էին հեթանոսական պատկերացումները, ծեսերն ու սովորույթները: Ծանոթանանք այդ քարոզի՝ մեր նյութին առնչվող մասերին:

Ըստ Այգեկցու՝ սատանայի սերմանած չարիքներից է և այն, որ «մնաց առ ազգս կանանց, նաեւ յազգս արանց՝ ուսումն ծրարագործութեան⁵ եւ այլ փաթեթք սատանայականք. եւ խաբանաւք ուսուցանեն մի զմի եւ զտգէտս կործանեն ի նոյն չարն»⁶:

Կուսպաշտության սյուներն են աստղաբաշխությունը, կախարդությունը, մարդկանց ճակատագրերի գուշակությունը և այլն. այդ սյուները, սա-

¹ Նույն տեղում, էջ 184:

² Նույն տեղում, էջ 185:

³ Նույն տեղում, էջ 186:

⁴ Նույն տեղում, էջ 187:

⁵ Քարոզի մի այլ հատվածում «ծրարագործութեան» փոխարեն ասված է «գիւաց շունչ ծրարս»:

⁶ Մատենադարան, ձեռ. № 8030, էջ 209ա:

կայն արձակել են բազմապիսի ճյուղեր, որոնք թվարկված են Այգեկցու կողմից քարոզի ստորև բերվող հատվածում. «Դեղատուութիւնն եւ գարըն-կեցութիւնն եւ ձեռնածութիւնն եւ լուսնագիտութիւնն եւ աստեղաբաշխութիւնն եւ շար ասել զօրն եւ կամ զպահն, ...հայել ի կենդանակերպս եւ ասել բախտարկութիւն եւ ճակատագրութիւն իմն՝ շարի պատահել կամ բարոյ, քննել ախտարացոյցս եւ ծննդաբանել զթիւ ամաց մարդկան եւ այլ ծրարք եւ հանգուցակք իմն եւ լեզուակապք եւ քաղցրադեղք եւ անասնակապք իմն, զոր գայլակապս կոչեն. նաեւ կապեն զայր, զի թուլացեալ ի կին մերձենալ ոչ կարէ, եւ այլ անբաւ հեթեթանք»¹: Այգեկցու ժամանակակիցները, անվերապահորեն հավատալով հեթանոսական սնահավատություններին և կախարդություններին, ի մեծ վիշտ մեր հեղինակի, «փաղչին յեկեղեցոյ եւ ի խաչէ, յԱւետարանէ եւ ի քահանայէ, յաղօթից եւ ի պահոց... եւ առհասարակ գոռո՛ տուեալ՝ երթան առ կախարդս»²:

Հմայության ու կախարդության միջնադարում հարատևած ձևերի մասին կան նաև այլ ձեռագրական տվյալներ: Մեր նպատակը չէ մատենագիտական լրիվ ցանկը տալ այդ կարգի նյութերի, ուստի բերածով սահմանափակվենք: Նշենք միայն, որ կախարդության ու գուշակության դեմ «Հայոց կանոնգրքի» մեջ մուծվել են նաև մի շարք կանոններ, որոնցից հատկապես երկուսը սերտորեն առնչվում են քննարկվող նյութին: «Հարցմունք պէսպէս եւ պատասխանիք Աթանասի Աղէքսանդրացոյ եպիսկոպոսի» խորագրով կանոնխմբի մեջ, օրինակ, կա այսպիսի հարց ու պատասխան. «Հրց. Վասն պահպանաց երդմունս իմն եւ պահպանութիւնս գրեն եւ անուանս ազգի ազգիս, զոր մեք ոչ գիտեմք. պա՞րտ է համարձակ թողուլ զնոսս առնել զայն, թէ՞ նզովել եւ կարճել: Պատ. Նզովել պարտ է եւ յեկեղեցոյ եւս հանել»³:

Մի այլ կանոնխմբի մեջ կարդում ենք. «Որ զհետ դիւթաց երթան եւ կամ զգիրս կախարդաց եւ կամ զիրս կախարդութեան ուսանին եւ զղջան ի բոլոր սրտէ, է (7) ամ ընդ ունկնդիրսն ապաշխարէ»⁴:

Նզովքը, արտաքսումը եկեղեցուց, յոթնամյա ապաշխարությունը և սահմանված այլ պատիժներն անգամ անզոր են եղել արմատախիլ անել հազարամյա հնությունից եկող հեթանոսական հավատալիքներն ու պատկերացումները ժողովրդի գիտակցությունից, և դրանք հարատևել են մինչև

¹ Նույն տեղում, էջ 209բ:

² Նույն տեղում, էջ 210ա:

³ Մատենադարան, ձեռ. № 6409, էջ 60բ:

⁴ Մատենադարան, ձեռ. № 7066, էջ 11բ:

վերջին տասնամյակներն ու գրանցվել Հայաստանի մի շարք շրջաններում XIX-XX դարերի հայ ազգագրագետների կողմից:

Մեջբերված նյութերը, այսպիսով, վկայում են այն մասին, որ, սկսած հենց մատենագրության սկզբնավորման ժամանակներից մինչև ուշ միջնադար, հայ կախարհները, բախտագուշակներն ու մոգական բժշկությամբ զբաղվող անհատները, ի թիվս այլ կախարհությունների, գծել են նաև ինչ-որ նշանագրեր (եղիշե), հիվանդների վզներին ինչ-որ «գրեալ պահարաններ» են արկանել (Հովհան Մայրավանեցի), ինչ-որ «դիւայ շունչ ծրարներ» ու «սատանայական փաթեթներ» կազմել (Վարդան Այգեկցի), «զգիրս կախարդաց» գրել և ուսուցանել («Կանոնգիրք հայոց») և այլն:

Արդ, հնարավոր է արդյոք պարզել, թե ինչ են եղել և ինչ տեսք են ունեցել Հայ եկեղեցու վարդապետների իսկ վկայությամբ հեթանոսական հնությունից ժառանգված կախարդական կամ հմայական այդ գրերը:

Այս հարցերին պատասխանելու համար դիմելու ենք առաջին հերթին բազմաթիվ ձեռագիր օրինակներով մեզ հասած հմայիլներին և ախտարական ձեռագրերին: Հմայիլները գրավում են մեր ուշադրությունը նախ և առաջ իրենց արտաքին տեսքով. ի տարբերություն բոլոր մյուս ձեռագրերի՝ նրանք ժապավենաձև փաթեթների տեսք ունեն (շուրջ 10 սմ լայնքով և երբեմն 10 մ ավելի երկարությամբ): Հայ գրականության սկզբնավորման ժամանակաշրջանում թե՛ Հռոմեական կայսրության մեջ և թե՛ Ասորիքում ամենուրեք տարածված էին առանձին տետրակներով և նրանց միացումով ստեղծված գրքերը: Փաթեթավոր գրքերն ընդհանրապես, տվյալ դեպքում հմայիլները, իրենց արտաքին ձևով գրքի ավելի հին տիպի ներկայացուցիչներ են: Էլ ավելի հետաքրքիր են հմայիլներն իրենց բովանդակությամբ:

Ահա հենց այս ժապավենաձև, ապա նաև սովորական գրքի տեսք ստացած հմայիլներն են, որոնք պահպանել են հեթանոսական հավատքի խոր կնիքը կրող մեծաքանակ այնպիսի հմայական բանաձևեր, պահպանակ գրեր ու աղոթքներ, որոնց մասին ակնարկներ ունեին իրենց ճառերում հեթանոսական հավատալիքների դեմ պայքարող վերոհիշյալ հայ մատենագիրները: Ծանոթանանք այդ կարգի մի քանի հմայական բանաձևերի.

1. ԳԻՐ ՉԱՐ ԱԶՔԻ

Ազի, մագի, գարեխի, գմրուխի,

ել հովիւն Ծիրանի,

Արածէր յովիտն Ծիրանի

Յանխախաց պանիր եհան,

*Որ ոք տեսաւ զարմացաւ,
Որ ոք կերաւ պատառեցաւ:
Ամենայն շար ակն նոյնպէս պատառեցի ի դիմաց ծառայիցս
Աստուծոյ (այս անուն)՝ ընտանեաց եւ անասնոց եւ խաշանց
եւ կաթին եւ մայրեաց եւ մեղուաց եւ երիվարաց եւ շտեմարանաց
եւ ամենայն գոյից, յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգոյն¹:*

2. ԳԻՐ ԾՆԾԱՅԱԻԻ

*Մայր Ծիրանի, դուստր Ծիրանի, դէտըր(՞) Ծիրանի: Երթայք
քաղէք ալի ծաղիկ, ահնի ծաղիկ, ծիլ ծափ ծոմալ, ալ փարատեցան²:*

3. ԳԻՐ ԿԱՊԻ

*Բագբուկ, տապուկ, սաղուկ, սիթառ, փիրակ, կանաբուկ,
անտիրաթիր, իգամիրամ, լորինակաւոր³:*

4. ԳԻՐ ԶԵՐՄԱՆ

*Մանխահի, շարահի ահի, սպանութեան ահի, անդոնի ահի,
ալիխթի ահի, վասն ձեր արեւուտ՝ թողէք զծառայս Աստուծոյ⁴:*

5. ԳԻՐ ԳԼԽԱՅԱԻԻ⁵

*Ծառ մի կայր ի մէջ երկրի,
Որ ոչ ճիւղ ունէր եւ ոչ տերեւ եւ ոչ արմատ.
Արծիւ մի նստեալ էր ի վերայ նորա,
Որ ոչ գլուխ ունէր եւ ոչ թեւ եւ ոչ ոտք:
Հարցուք եղեն⁶ արծիւն այն եւ ասեն.
Որ նստեալդ ես ի ծառդ, որ ոչ ճիւղ ունի եւ ոչ տերեւ եւ ոչ արմատ:
.....⁷
Ասէ արծիւն՝ այն պեղծն.
Երթամ նստիմ ի գլուխ մարդոյն,
Զմիսն ուտեմ եւ զըղեղն ծծեմ*

¹ Մատենադարան, ձեռ. № 4600, էջ 68ա:
² Նույն տեղում, ձեռ. № 6867, էջ 545:
³ Նույն տեղում, ձեռ. № 4600, էջ 70բ:
⁴ Նույն տեղում, էջ 71ա:
⁵ Նույն տեղում, հմայիլ № 11 (A) եւ ձեռ. № 3248, էջ 51բ (B):
⁶ A հարցիմ:
⁷ Պակաս է երևում:

Եւ զաշաց լոյսն պակասեցուցանեմ:

Եւ լսեցին զայն հրեշտակք եւ հրեշտակապետք եւ ասացին¹.

Կապեմք զքեզ ԴՃԿԵ (365) սրբօքն, որ կան ի սիրտ արեգականն...

Օրինակների թիվը կարելի է բազմապատկել. մենք ընտրություն մեջ բերեցինք այնպիսիները, որոնք բոլորն էլ, լինելով հմայական բժշկության դեղատոմսեր, ուղղված են տարբեր հիվանդությունների դեմ: Դրանք, անշուշտ, միջնադարյան խմբագիրների և ընդօրինակողների կողմից կրել են մեծ ձևափոխություններ. մեկի մեջ մուծված է քրիստոնեական եռասուվածություն բանաձև (Հայր, Որդի, Հոգի), մեկ ուրիշում ջերմով տառապող հիվանդը կոչվում է «ծառայ Աստուծոյ», երրորդում հիշատակվում են հրեշտակներ ու հրեշտակապետներ և այլն: Այս նորամուծությունները, սակայն, էական չեն, հմայական այդ բանաձևերը, իրենց հիմնական մասով, անշուշտ հազարամյակների հնություն կնիք են կրում և չեն առնչվում քրիստոնեական ըմբռնումների հետ*:

Վիշապաքաղ Վահագնի ծննդյան մասին հեթանոսական երգի մեջ հանդիպում ենք Ծիրանի ծովին, որն իր երկունքով մասնակցում է ամպրոպաստծո ծննդյանը, շար աչքի հմայական բանաձևի մեջ հիշատակվում է այդ Ծիրանի մայր աստվածություն հովիվը, որն արածեցնում է աստվածության խաչներին Ծիրանի հովտում, ծծացավի հմայական բանաձևի մեջ հիշատակվում են Ծիրանի մայրը և Ծիրանի դուստրը:

Արտավազդի մասին հնագույն հայկական առասպելներում կան տվյալներ, որ նա կոչվել է նաև Շիրդար անունով. և ահա «գիր կապի» հմայական բանաձևի մեջ, ի թիվս հնություն դրոշմ կրող այլ անվանակոչումների (տափտուկ, սաղուկ, փիրակ, կանաբուկ և այլն), հանդիպում ենք նաև Սիթառին, որ հիշեցնում է մեզ վերոհիշյալ Շիրդար-Արտավազդին: Գլխացավի հմայական բանաձևի մեջ նկարագրվում է կենաց ծառի հակոտնյա մահվան ծառը, «որ ոչ ճիւղ ունէր եւ ոչ տերեւ եւ ոչ արմատ», և շարագուշակ ու մահաբեր սանդարամետյան արծիվը, «որ ոչ գլուխ ունէր եւ ոչ թեւ եւ ոչ ոտք», և այլն և այլն²:

¹ Ե հրամայեցին և ասեմ *փիս* ասացին:

* Հմայիլների թեմատիկ ու կառուցումաճային կազմության մասին, նմուշների առկայության, տե՛ս Ա. Ա. **Օդաբաշյան**, Народные верования армян (По материалам рукописных талисманов XV-XIX вв.), «Кавказский эпиграфический сборник», VI, М., 1976, с. 107-130:


² Ա. Մնացականյանը «Հայկական զարդարվեստ» իր ուսումնասիրության մեջ (Երևան, 1955, էջ 542), Մատենադարանի № 605 ձեռագրի պահպանակից ֆաղելով, տպագրել է

Այս բոլորը, լրացնելով մեկը մյուսին, վկայում են այն մասին, որ հմայիկ կոչվող ժապավենաձև ու գրքանման ձեռագրերը, շնայած իրենց ճնշող մեծամասնությունը պահպանվել են նորագույն ժամանակների (XV-XVIII դարերի) ընդօրինակություններով, իրենց մեջ բովանդակում են հեթանոսական ըմբռնումների ու պատկերացումների արգասիք հանդիսացող հմայական ու մոգական զանազան աղոթքներ ու բանաձևեր:


Սրանով, սակայն, չի սպառվում հմայիկների գիտական նշանակությունը. նրանցից շատերի մեջ կան ինչ-որ տարօրինակ նշանագրեր, որոնք արված են դարձյալ հմայական ու բուժական նպատակներով՝ շար աչքից զերծ մնալու, շար ոգի թափիին հալածելու, կատաղած շնից անվնաս մնալու, դիվահարներին բուժելու, սիրածի սերը նվաճելու և բազմաթիվ այլ ակնկալություններով¹:

Ծանոթանանք նաև այդ կարգի մի քանի հմայագրերի.

1. Գիր շար աչքից պահպանութեան²:



2. Այս տիիսմս, որոյ վերայ կենայ, կախարդութիւն ոչ բանի յինքն³:



«Գիր կովի» կոչվող հմայական մի բանաձև, որի մեջ հիշատակված է հերանոս հայերի մեռնող ու հարություն առնող Արա աստվածությունը՝ «սուրբ Արա» ֆրիստոնեական զգեստավորությամբ:

¹ Տե՛ս, օրինակ, Մատենադարան, հմայիկ NոNո 5, 11, 134, ձեռ. NոNո 4322, 6867, 6678, 4600, 9072 և այլն:

² Մատենադարան, հմայիկ Nո 11:

³ Մատենադարան, հմայիկ Nո 5:

3. Այս թլիսմս գրիր ի վերայ հաց(ի), տուր շան, որ ուտէ, կապուի լեզուն շարայկամին...¹:

ՅԵՏԻՄԱՆ ԿՆԵՐԻ
 ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ
 ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ


4. Գիր սիրոյ, ջուր ձգէ, տուր խմէ՛ սիրէ՛²:

ԵՍԵՆՆԵՆ ԿԵՆՏՐՈՆԻ
 ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ

Բազմաթիվ հմայական գրեր կան Մատենադարանի մի շարք ձեռագրերում (օրինակ, ձեռ. №№ 4322, 6867) պահպանված ուշագրավ մի բնագրին առընթեր, որի բովանդակությունը հանգում է հետևյալին. տասներկու կենդանակերպերից ամեն մեկի տակ ծնված մարդիկ ունեն իրենց հատուկ թշնամի ու հիվանդաբեր դեեր, որոնք բնակվում են տարբեր վայրերում՝ դռան շեմին, կրակի եզրին, ջրին մերձ, հորի մեջ, ավերակ ջրաղացներում և այլուր: Սողոմոն Իմաստունը հանդիպում ու հարցաքննում է այդ դեերին, սովորում նրանց հիվանդաբեր ներգործությունից մարդկանց փրկելու եղանակները և հաղորդում մարդկանց: Այդ դեերին դիմագրավելու համար մարդիկ պետք է գիտենան դրանցից յուրաքանչյուրին հալածող 3 կարգի հմայական գրերը՝ թլիսմները. առաջինը պետք է պահել հիվանդի գլխի վրա, երկրորդով պետք է լողացնել հիվանդին, իսկ երրորդը՝ լուծել ջրի հետ և տալ հիվանդին ըմպելու: Այսպիսով, ձեռագրական այդ բնագրի մեջ կան 36 հմայական գրերի շարքեր (12 դեերից յուրաքանչյուրի դեմ 3 հմայագիր): Այստեղ բերում ենք մի քանի նմուշ այդ հմայագրերից.

¹ Մատենադարան, ձեռ. № 4322, էջ 30ա:

² Մատենադարան, ձեռ. № 9072, էջ 26բ:



Այս կարգի հմայագրեր պարունակող ձեռագրերի քանակը հենց միայն մեր Մատենադարանում տասնյակներով է հաշվվում: Մենք նպատակ չենք ունեցել ուսումնասիրելու բոլոր այդ ձեռագրերը, քաղելու նրանց մեջ գրանցված հմայական բոլոր նշանագրերը. բայց նախնական ուսումնասիրություն կատարելով՝ ընտրել ենք լավագույն մի քանի ձեռագրեր և նրանց նշանների համադրությունից կազմել հմայական նշանագրերի մի ցանկ:

Մեր օգտագործած հնագույն ձեռագրերը (ՄՄ, ձեռ. № 4600) 1499 թվականի ընդօրինակություն է, մի ձեռագիր հմայիլ (№ 5) XVI դարից է, իսկ մյուսները՝ XVII-XVIII դարերի ընդօրինակություններ են:

Օգտագործված ձեռագրերն ու հմայիլները սրանք են.

a – հմայիլ № 11

b – հմայիլ № 134

c – հմայիլ № 5

d – ձեռ. № 4322

e – ձեռ. № 6867

f – ձեռ. № 9072

g – ձեռ. № 4600

h – ձեռ. № 6678

Ֆանկ հմայական նշանագրերի

I (abcdf)	\mathbb{I} (r), \mathbb{J} (a)	\mathcal{I} (abdf), \mathcal{J} (codef)
II (abcdf)	Ψ (ae)	\mathcal{B} (be), \mathcal{C} (ef)
III (abcdef)	\dagger (a), \ddagger (d), \ddagger (d)	\mathcal{C} (a), \mathcal{D} (e)
$-$ (a)	\circ (b), \otimes (d), \otimes (e)	\mathcal{C} (a), \mathcal{D} (e)
\equiv (a)	\ddagger	\mathcal{P} (ade)
\equiv (ae)	\dashv (e)	\mathcal{G} (a)
\equiv (a)	γ (e), γ (e), γ (e)	\mathcal{C} , \mathcal{D} (a)
Π (a)	Γ (d), Γ (d)	\mathcal{C} (d)
$\overline{\circ}$ (a)	\cup (a)	\mathcal{Q} (a)
\hookrightarrow (a), \longleftarrow (d)	ζ (a)	Υ (ad)
Υ (e), Υ (e)	ζ (a)	Ψ (a)
$\underline{\Upsilon}$ (a), $\underline{\Upsilon}$ (a)	\beth (d)	Φ (ad), Φ (b)
\wedge (abcd)	\beth (a)	Φ (ad), Φ (ad), Φ (a)
\wedge (b)	\beth (a)	Φ (ad), Φ (a)
∇ (b)	\boxtimes (r), \boxtimes (d)	Φ , Φ (a)
∇ (bcf), ∇ (e)	\beth (a)	\mathcal{Z} (a)
∇ (b), ∇ (e)	\boxtimes (a)	\mathcal{U} (be)
Π (bf), Π (cd),	\boxtimes (a)	\mathcal{Z} (b)
\cap (r)	\boxtimes	\mathcal{P} (r)
$\hat{\cap}$ (r)	\boxtimes (a)	\mathcal{C} (b)
\cup (b)	\boxtimes (b)	\mathcal{S} (b)
ζ (a), ζ (ab)	\circ (abcd)	\mathcal{W} (a)
H (a)	\circ (a)	\mathcal{C} (a)
M (r)	\mathcal{I} (bcdf)	\mathcal{C} (a)



Սույն ցանկը կազմելիս մի շարքում ենք դրել միմյանցից գծագրական աննշան տարբերություններ ունեցող նշանները, ինչպես և ցուցակից դուրս ենք թողել 80-ից ավելի նշաններ՝ հատկապես № 134 հմայիլից (b ձևագիր), որը կրում է արաբական ազդեցության խոր կնիք: Ցուցակի վերջին 14

նշանները խիստ նման են հայկական տառերի: Չնայած այդ հանգամանքին՝ նպատակահարմար ենք համարել թողնել դրանք ցուցակում՝ ենթադրելով, որ այդ նշանները ձևափոխվել ու նմանվել են հայկական այբուբենի նշաններին՝ հետագայում դրանց իմաստը չհասկացող գրիչների կողմից:

Չենք կասկածում, որ Մատենադարանում պահվող մյուս հմայիլների ուսումնասիրության հնարավոր կլինի այս ցանկը լրացնել հմայական այլ նշանագրերով և դրանց քանակը հասցնել մի քանի հարյուրի: Խնդիրը, սակայն, նշանների քանակի, ինչպես նաև նրանց արտաքին գծագրության մեջ չէ: Իրենց բովանդակությամբ ու պարունակած նշանագրերով նախաքրիստոնեական ծագում ունեցող հմայական այդ ձեռագրերը, ինչպես արդեն ասացինք, ընդօրինակվել են մեծ մասամբ կիսագրագետ և այդ նշանագրերի իմաստը չըմբռնող գրիչների կողմից: Այսպիսով, դրանք անտարակույս շատ են հեռացել իրենց հնագրայան կերպարանքից:

Հարցի ուսումնասիրության ներկա փուլում այդ հմայագրերի վերծանման մասին մտածելը վաղաժամ է: Իրանք, սակայն, Եղիշեի, Հովհան Մայրավանեցու, Վարդան Այգեկցու և այլ հեղինակների մեզ արդեն ծանոթ վկայությունների լույսի տակ դադարում են ախտարական անիմաստ ու մտացածին խզբզանքներ համարվելուց և որոշակի նշանակություն ստանում հայ ժողովրդի գրավոր մշակույթի սաղմնային վիճակի մասին շոշափելի տվյալներ պարունակելու առումով:

Առայժմ մենք չգիտենք հմայական այդ նշանագրերի վերծանման գաղտնիքները: Սակայն գիտենք արդեն դրանց զուգահեռ, մեսրոպաստեղծ այբուբենով գրանցված հմայական զանազան բանաձևերի և մոգական բժշկության դեղատոմսերի բովանդակությունը: Վերհիշենք շար աչքի, ծծացավի, ջերմի, գլխացավի մասին բերված բանաձևերը՝ ավելացնելով, որ ձեռագրերում կան բազմաթիվ այլ հիվանդությունների ու շար դիպվածների առթիվ կազմված ու մեր կողմից չվկայակոչված մի քանի տասնյակ այլ նմանօրինակ աղօթք-բանաձևեր:

Այդպիսի պարզունակ մտքեր գրանցելու համար հեթանոսական ժամանակներում Հայաստանում կային, ուրեմն, ինչ-որ նշանագրեր (հավանաբար գաղափարագրեր), որոնց դեմ երկար դարեր պայքարում էին Հայոց եկեղեցու գաղափարախոսները:

Մաշտոցը և նրա ժամանակակիցները, որ համառ պայքար էին մղում դեռևս իրենց գոյությունը պահպանած հեթանոսական մեհյանների և նրանց պաշտոնյաների դեմ և իրենց բերանացի ու գրավոր քարոզներով ձգտում էին արմատախիլ անել հեթանոսական հավատքի անկապտելի մա-

սը կազմող կախարդութիան ու հմայութիան ձևերը, անշուշտ գաղափար ունեին քրմերի ու կախարդների կողմից կիրառվող հմայական այդ նշանների մասին:

Քրիստոնեությունն ընդունած հույներն ու հռոմեացիները, ինչպես նաև ասորիները և այլ ժողովուրդներ հեթանոսական ժամանակներից ժառանգած իրենց գիրը առանց տատանվելու օգտագործեցին քրիստոնեական գրականություն ստեղծելու համար, որովհետև հունական, լատինական ու ասորական գրերը հնչյունական կատարյալ այբուբեններ էին:

Եվ եթե Մաշտոցը, ծանոթ լինելով հմայագրերին, մայրենի լեզվով գրականություն ստեղծելու համար ստիպված էր տարիների տքնաշան աշխատանքի գնով ի նորո ստեղծել հայկական այբուբենը, այդ նշանակում է, որ հայկական հմայագրերը ի վիճակի չէին ծառայելու ժամանակի պահանջներին:

Հմայագրերի հնարավորությունները խիստ սահմանափակ էին. դրանց օգտագործմամբ հնարավոր չէր ստեղծել իսկական գրականություն՝ պատմագրական, փիլիսոփայական, գեղարվեստական երկեր, թարգմանել Աստվածաշունչը, արտահայտել բարդ ու վերացական գաղափարներ: Հետևաբար միանգամայն իրավացի են V դարի մեր սկզբնաղբյուրները, երբ միաբերան ժխտում են հայ գրականության գոյությունը Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ գյուտից՝ հայկական այբուբենի ստեղծումից առաջ, և սխալ են այն գիտնականները, որոնք պնդում են, թե հեթանոս հայերն ունեցել են գիր ու հարուստ գրականություն, կամ նրանց մեհյանները եղել են «մշակույթի ու մատենագրության օջախներ»¹:

Վերջում անհրաժեշտ ենք համարում նշել, որ հայկական հմայական նշանագրերի ուսումնասիրության գծով մեր կատարած աշխատանքը չի սպառվում սրանով: Մեր ձեռքի տակ կան փաստեր, որոնք ցույց են տալիս հայկական միջնադարյան ձեռագրերում հանդիպող «նշանագիրք իմաստնոցների», ինչպես նաև միջնադարում տարածված ծածկագրերից մի քանիսի սերտ առնչությունը հմայագրերի հետ:

Պրոֆ. Ա. Աբրահամյանը, որ զգալի աշխատանք է կատարել «նշանագիրք իմաստնոցներ» պարունակող ձեռագրերի մի մասի ցանկը կազմելու գծով, շատ մեծ արժեք է վերագրում դրանց: Նրա կարծիքով հնարավոր է թերևս Մոխենչո-դարոյի (Հնդկաստան) պեղումներից հայտնագործված ու

¹ Ա. Աբրահամյան, նշ. աշխ., էջ 165:

դեռևս չվերծանված գաղափարագրերը վերծանել հայկական գաղափարագրերի (իմա՝ «Նշանագիրք իմաստնոցների») օգնությամբ՝ համոզված լինելով, որ դրանց իմաստը «բարեբախտաբար պահել են հայկական ձեռագրերը»¹:

Յավոք պետք է արձանագրենք, որ պրոֆ. Աբրահամյանի հույսերը չեն արդարանալու, որովհետև կան անժխտելի փաստեր այն մասին, որ «Նշանագիրք իմաստնոցների» մեջ մուծված գաղափարագրերին մեր ձեռագրերում տված իմաստները իրենց գերակշիռ մեծամասնությամբ (եթե ոչ ամբողջովին) հորինված են հետագայում XII դարից ոչ վաղ, ուստի և գիտական արժեք են ներկայացնում սոսկ այնքանով, որքանով վկայում են հայկական հմայագրերի նկատմամբ միջնադարում առաջացած հետաքրքրության և նրանց քրիստոնեական իմաստ վերագրելու մասին:

¹ Նույն տեղում, էջ 167:

ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՐՐՈՐԴ ԳԱՐՈՒՄ¹

(Ներսես Պարթևի և Եպիփանի նորահայտ «Հարցման» առիթով)

Մաշտոցի անվան Մատենադարանի № 582 ձեռագիրը դարիս սկզբներին հայտնի դարձավ բանասիրությանը որպես Ջագավանից ժողովի կանոնները պարունակող միակ սկզբնաղբյուր, իսկ այսօր այն գրավում է մեր ուշադրությունը՝ իր ծալքերում թաքցրած ունենալով «Հարցումն տեառն ներսէսի Հայոց կաթողիկոսի առ Եպիփանի միայնակեաց» խորագրով ուշագրավ բնագիրը: Չնայած իր փոքր ծավալին (պարունակում է ընդամենը 200 բառ) այն հնարավորություն է ընձեռում նորից անդրադառնալու Հայաստանում մինչ գրերի գյուտը օտար լեզուներով ստեղծված գրական հուշարձանների բնույթին ու բովանդակությանը, որոշելու նրանց նշանակությունը հայալեզու գրականության ստեղծման գործում V դարի առաջին տասնամյակներին:

1

Հայոց հին մշակույթի պատմությանը տարբեր առիթներով անդրադարձած գիտնականներից ոմանք, ուշադրություն դարձնելով սկզբնաղբյուրներում առկա որոշ տվյալների վրա, հանգել են այն եզրակացության, որ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հայտարարելու ժամանակից (շուրջ 313 թ.) մինչև գրերի գյուտն ու մայրենի լեզվով գրական հուշարձանների երևան գալը հայերն ունեցել են օտարալեզու գրականություն²:

Այդ մասին բանասիրության մեջ արտահայտված տեսակետների լավագույն ամփոփումը գտնում ենք Եղիա Քասունու մոտ. «Նորագոյն հետազոտությունք, - գրում է նա, - կ'ապացուցանեն, որ Լուսաւորչի օրէն սկսեալ, նախամեսրոպեան այդ մէկ դարու միջոցին, Հայաստանի մէջ հետզհետէ գոյացաւ յունարէն եւ ասորերէն լեզուներով գրուած, բայց հայուն համար յօրինուած եւ հաւանօրէն մեծ մասամբ ալ հայ գրիչներէ արտադրուած գրականութիւն մը՝ ոչ արհամարհելի քանակութեամբ, բայց գլխաւորապէս կրօնական, վկայաբանական-պատմողական բովանդակութեամբ, որ ապա առանձին թարգմանիչներու կողմէ օգտագործուեցաւ Ե դարուն՝ հայերէն լեզուով անդրանիկ գրականութեան յօրինման մէջ»³:

¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 3, էջ 27-51:

² Տե՛ս, օրինակ, Հ. Գաբրիելյան, Պատմություն մատենագրության Հայոց, Վիեննա, 1851: Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901. Ա. Զամինյան, Պատմություն հայ գրականության, Ա. մաս, Նոր-Նախիջևան, 1915. Եղիա Ս. Քասունի, Հայ մշակույթի պատմությունը, Պեյրուֆ, 1954 և այլն:

³ Եղիա Ս. Քասունի, Հայ մշակույթի պատմությունը, էջ 267:

Օտար լեզուներով շարադրված հայկական գրականության այդ հուշարձանների որոնման ուղղությամբ որոշ աշխատանքներ արդեն կատարվել են: Արգասավոր կարելի է համարել մասնավորապես Բ. Սարգիսյանի ուսումնասիրությունը Ազաթանգեղոսի անվամբ մեզ հասած «Պատմության» բաղկացուցիչ բաժինների (Գրիգոր Պարթևի կենսագրություն, Խոսրովի և Տրդատի պատմություն, Հռիփսիմյանց վկայաբանություն) բացահայտման և V դարի սկզբներին, հայկական այբուբենի ստեղծումից անմիջապես հետո, հունարենով գրված այդ նյութերի թարգմանության, համախմբման ու խմբագրության մասին: Բ. Սարգիսյանի ուսումնասիրությամբ ապացուցված կարելի է համարել, որ Ազաթանգեղոսի թարգմանության ու խմբագրության հիմնական աշխատանքը «Մաշտոցի վարքի» նշանավոր հեղինակ Կորյունին է պատկանում, և որ այդ գործը վերջինս կատարել է իր մեծ ուսուցչի վերակացությամբ և աշակերտակից Եզնիկ Կողբացու գործակցությամբ¹:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Փավստոս Բուզանդի «Պատմության» հնագույն շերտերն ու հեղինակի օգտագործած աղբյուրները որոնելու ջանքերը, որոնք շնայած կատարյալ արդյունքներ դեռևս չեն տվել², բայց հնարավորություն են ընձեռում եզրակացնելու, որ նշանավոր այդ գրվածքն ամբողջական իր կերպարանքով ձևակերպվել է V դարի կեսերին կամ 60-ական թվականներին՝ նախորդ հարյուրամյակում հորինված բանավոր ու գրավոր ստեղծագործությունների համախմբումով:

Մեծ հավանականությամբ նախամեսրոպյան շերտեր կան նաև Զենոբ Գլակի անվամբ հայտնի պատմագրական երկի մեջ: Եվ եթե Ազաթանգեղոսի ու Բուզանդի աղբյուրները հիմնականում հունարեն էին շարադրված, Զենոբի անվամբ նյութերի հնագույն շերտն անտարակույս գրված է եղել ասո-

¹ «Ազաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն, քննադատութիւն հ. Բարսեղ վ. Սարգիսեանի», Վենետիկ, 1890: Այստեղ որպէս եզրակացութիւն կարդում ենք. «Կորիւն է նա ինքն իւրագրող եւ գլխաւոր թարգմանիչ ազաթանգեղոսեան գրոց՝ ունելով ինքեան գործակից զհոշակեալն ի գիր եւ ի բան աշակերտակիցն իւր զԵզնիկ Կողբացի» (էջ 118): Հմմտ. նաև **Նորայր Բյուզանդացի**, Կորյուն վարդապետ և նորին թարգմանություն, Տիֆլիս, 1900:

² Վերջնականապէս չի պարզված դեռևս Պրոկոպիոս Կեսարացու օգտագործած «Հայոց պատմության» հայերեն թե հունարեն լինելու հանգամանքը, չի որոշված, թե ի՞նչ է եղել Մեսրոպ Վայոցձորեցու կողմից «Արեւելից գիրք» կամ «Հայոց մնացորդաց գիրք» կոչված սկզբնաղբյուրը. Փավստոսից հետագայում կատարված մի քանի փոփոխումներ, որից, անկախ իրարից, օգտվել են և՛ Փավստոսը, և՛ Մեսրոպ Վայոցձորեցին: Այս կարգի բազմաթիվ հարցեր անպատասխան են մնացել:

րերեն. որոշակի տվյալ ունենք այն մասին, որ մինչև VI դարի կեսերը (մինչև Թողիկ վանահայրը) Գլակա վանքում առաջնորդ եղած հոգևորականները «ամենեքեան ասորիք էին, եւ տունն այն ասորի գրով եւ պաշտամամբ է վարեալ, մինչեւ Թողիկ փոխեաց զամենայն կարգս եւ զասորոց ցեղսն բնաւ հալածական արար ի վանացն¹»:

2

Մինչև հայերեն գրերի ստեղծումն ու հայալեզու մատենագրության ծաղկումը Հայ եկեղեցու պաշտոնեություն կողմից կամ նրա նախածեռնություն մը՝ վերոհիշյալ պատմագրական երկերի մեջ տեղ գտած նյութերից բացի հորինվել են նաև այլ երկեր՝ ճառեր, թղթեր, կանոններ և այլն: Հայ մատենագրության պատմության տարբեր հարցերի նվիրված ուսումնասիրությունների մեջ երբեմն հիշատակվում են այդ կարգի որոշ գրվածքներ. դրանցից մի քանիսն արդեն տեղ են գտել հայոց հին գրականության հուշարձանների ցանկի մեջ, բայց կան նաև պատշաճ ուշադրություն չգրաված միավորներ:

Ամբողջական ցուցակ կազմելը մեր նպատակից դուրս համարելով ասորե փորձելու ենք համախմբել մեզ հայտնի տեղեկությունները նախամեսրոպյան շրջանում Հայաստանում ստեղծված քրիստոնեական գրականության այն հուշարձանների մասին, որոնք, հետագայում թարգմանվելով, հասել են մեզ, կամ որոնց մասին տեղեկություններ են պահպանվել մեր հնագույն աղբյուրներում:

Օտարալեզու հայ գրականության հիմնադիրն անտարակույս եղել է Գրիգոր Պարթևը՝ հետագայում կոչված Լուսավորիչ՝ նշանավոր այն գործիչը, որի ջանքերով IV դարի սկզբներին քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հայտարարվեց, և պայմաններ ստեղծվեցին այդ նոր կրոնը հեթանոս երկրում արմատավորելու համար:

Գրիգոր Լուսավորչի անվան շուրջ ստեղծված հրաշապատում զրույցները (հոր Վիրապում 13-15 տարի տոկալը, խոզ դարձած Տրդատ թագավորին բուժելը և այլն) քննական ուսումնասիրության հիմնական առարկա դարձնելով որոշ ուսումնասիրողներ հակված են եղել կասկածելու նաև պատմական այդ գործի կենսագրական իրական գրվածքների վրա: Մենք,

¹ Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարոնոյ, Երևան, 1941, էջ 287:

Ղազար Փարպեցիին ևս հայտնում է, որ V դարի կեսերին Սասանյան արքունիքի դրածոների պահանջով «պաշտօն եկեղեցայ եւ կարգացմում գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս եւ եկեղեցիս Հայաստան ժողովրդոցս» (Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 13):

սակայն, որևէ հիմք չենք տեսնում տարակուսելու, որ Լուսավորիչն իրոք սերված է եղել Պարթևական նշանավոր մի ընտանիքից (հավանաբար Սուրենյան գերդաստանից)¹, իր պատանեկության տարիներն անցկացրել է Կեսարիայում, ուր բարձրագույն կրթություն է ստացել և դաստիարակվել որպես քրիստոնյա, վերադարձել է Հայաստան, ծառայության մտել Արշակունյաց արքունիքում, քարոզել նոր կրոնը՝ դրա մեջ տեսնելով հայ պետականության ամրապնդման, կենտրոնախույս հակումների սանձահարման մի հզոր ազդակ, հալածվել է այդ պատճառով, ի վերջո հաղթանակ տանելով դրել է հայ քրիստոնեական եկեղեցու հիմքերը:

Քրիստոնեությունը Հայաստանում տարածելու համար անհրաժեշտ էին այն նոր վարդապետության սկզբունքներին քաջատեղյակ պաշտոնյաներ: Գիտակցելով դրա անհրաժեշտությունը՝ Գրիգոր Պարթևը, Ագաթանգեղոսի իսկ վկայությամբ, «հաւանեցուցանէր զթագաւորն, զի ի գաւառաց եւ կողմանց կողմանց ի տեղիս տեղիս ժողովեսցեն բազմութիւն մանկտոյ առ ի նիւթ վարդապետութեան»: Թագավորի հրամանով հավաքվում են մանուկներ «յարուեստ դպրութեան», նրանց վրա կարգվում գիտուն վարդապետներ, «եւ զնոսա, - շարունակում է պատմագիրը, - յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւն կարգեալ եւ զոմանս՝ ի հելլէն»²:

Նոր կրոնի քարոզիչներն իրենց ձեռքի տակ պետք է ունենային ժողովրդական զանգվածների համար օտար այդ վարդապետության հիմնական դրույթների ու ձեւերի, հին և դարերի հոլովույթով սրբագործված հավատալիքների նկատմամբ որդեգրվելիք կեցվածքի և հարակից խնդիրների մասին մատչելի ցուցումներ ու հրահանգներ: Եվ քանի որ հայ քրիստոնեական եկեղեցու համար, ըստ ազդեցության երկու շրջանների, պաշտոնական լեզուներ էին դարձել հունարենն ու ասորերենը, բնականաբար պետք է երևան գային այդ լեզուներով, բայց հայերի գործածության համար հորինված երկեր:

¹ Պարթև Արշակունիների վերնախավը 7 նշանավոր ընտանիքներից էր բաղկացած, որոնցից հայտնի են հատկապես Կարեն, Սուրեն և Միհրան տոհմերը, հիշատակվում են նաև Սպանդիատ, Սպահպատ և Զիկ կոչվածները. այս մասին տե՛ս Ричард Фрай, Наследие Ирана, М., 1972, էջ 267: Զենոբ Գլակի վենետիկյան մի ձեռագրի մեջ հիշատակություն կա այն մասին, որ Գրիգոր անունը Լուսավորչի մկրտության անունն է եղել, իսկ մինչ այդ ծնողները նրան Անակշատ-Սուրեն են կոչել (**Ք. Սարգիսյան**, Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն, էջ 37): Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ Անակ Պարթևը և նրանից սերող Գրիգոր Լուսավորչի գերդաստանը պարթևական վերնախավի ամենանշանավոր Սուրեն-Պահլավների տոհմի մի նյուղն է եղել:

² «Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց», աշխատ. **Գ. Տեր-Մկրտչյան** և **Ս. Կանայանց**, Տիֆլիս, 1910, գլ. ՃԻ, էջ 437-438:

Մեր սկզբնաղբյուրներում ուղղակի ցուցումներ կան այն մասին, որ այդ յուրատեսակ՝ օտար լեզուներով, բայց հայերի պետքերի համար կյանքի կոչված մատենագրության հիմնադիրը եղել է ինքը՝ Գրիգոր Պարթևը: Ազատանգեղոսի մոտ կարդում ենք, որ նա ավանդել է «Ճառս յաճախագոյնս դժուարապատումս, առակս խորհմացս դիւրալուրս»¹: Հաճախագոյն և դժվարապատում ճառերն իրավամբ նույնացվել են բազմաթիվ ձեռագրերով մեզ հասած և «սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի» գրչի արգասիք համարվող 23 այն ճառերի հետ, որոնք հենց ձեռագրական ավանդույթով «յաճախապատում եւ լուսաւորք» են կոչված:

Եվրոպացի և հայազգի մի շարք բանասերներ, այդ ճառերի մեջ գտնելով *V* դարի առաջին տասնամյակների պատմական կացութչյան մասին որոշ ակնարկներ, կասկածով են վերաբերվել վերոհիշյալ տվյալներին և, առաջնորդվելով Կորյունի այն վկայութչամբ, որի համաձայն հայ գրերի մեծանուն ստեղծողը նույնպես հորինել է ճառեր «յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս»², հանգել են այն մտքին որ Գրիգոր Լուսավորչին վերագրված ճառերի իրական հեղինակը պետք է համարել հենց Մեսրոպ Մաշտոցին³: Սակայն եղել են և դեռևս կարող են առաջ քաշվել այս կնճիւր հարթելու այլ եղանակներ: Եթե այդ ճառերը կամ նրանց հիմնական մասը իրոք շարադրել է Գրիգոր Լուսավորիչը, ապա այն թարգմանված պետք է լինի հայերեն՝ հայ գրականութչյան կերպավորման առաջին շրջանում, առաջին հայ թարգմանիչների կողմից: Գրիգորի ճառերի հայացման աշխատանքին կարող էր ձեռնամուխ լինել հենց ինքը՝ Մաշտոց վարդապետը՝ հայոց կրկին Լուսավորիչը՝ իր ժամանակի պահանջների թելադրանքով ներմուծելով նրանց մեջ նոր պարբերութչուններ ու մտքեր⁴:

¹ Ազատանգեղոս, գլ. ճիԷ, էջ 466:

² Կորյուն, Վարժ Մաշտոցի... ի ձեռն Մ. Աբեղյանի, Երևան, 1941, էջ 78:

³ Այս տեսակետն արտահայտել են Պ. Ֆեքթերը, Ս. Վեբերը, Կ. Տեր-Մկրտչյանը, Մ. Աբեղյանը և ուրիշներ: Ա. Սրայյանը ««Յանախապատում» ճառերի հեղինակի հարցը» իր հոդվածում (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1962, № 5, էջ 25-38) համատեսակի մեջբերել է սրանց տեսակետները և փորձ կատարել ուրիշ փաստեր շրջանառության մեջ դնել հոգուտ այս ենթադրության:

⁴ Մեր մի հոդվածի մեջ («Քանբեր Մատենադարանի», № 7, էջ 19), հետևելով Մեսրոպ Մաշտոցին «Յանախապատում» ճառերի հեղինակ համարող բանասերներին, ուշադրություն կիմ դարձրել ճառերից մեկի մի հատվածի վրա, որն իրոք պատշաճ է գալիս հայոց գրերի արարիչ Մաշտոցի գրչին: «Նաև գֆննութիւն արարածոց յօրինեաց որպէս զգիր դպրութեան եւ եղ անուանս, զի անուանֆն զընդութիւնն տայցեն գրոյն եւ միմեանց զորոշումն, եւ գիրն զբարս կարդասցէ անուանն» («Յանախապատում հաոխ», Վաղարշապատ, 1894-1896, էջ 69), - ասված է «Վասն յօրինուածոց արարածոց» հաոխ

Ինչ վերաբերում է Մաշտոցի գրած ճառերին, ապա դրանք ոմանց կողմից նույնացվել են Ազաթանգեղոսի «Պատմության» մեջ ազուցված «Վարդապետություն» հետ. այստեղ կան IV դարում ապրած մի շարք հեղինակների աշխատություններից քաղված տեղիներ, ուստի այն, ինչպես ենթադրել են, պետք է գրված լինի V դարում: Հանգամանորեն քննարկելով Գրիգոր Լուսավորչի անվամբ մեզ հասած ճառական գրվածքները՝ Բ. Սարգսյանը հանգել է այն եզրակացության, որ «Յանախապատում» իրոք Լուսավորչին է պատկանում, իսկ նրան վերագրված «Վարդապետություն» հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է¹: «Յանախապատում» կոչված ճառերը հոգևոր խրատներ են, որոնց ընդհանուր խնդիրն է քրիստոնեական ուսմունքի և

մեջ: Այժմ էլ մնում ենք այն տեսակետին, որ գրեթե հորինելու և նրանց անուններ տալու աննախադեպ երևույթը, որպես բացատրական օրինակ, կարող էր օգտագործել մի անձնավորություն, որն ինքն անձամբ առնչվել է այդպիսի մի աշխատանքի: Ուստի կարծում ենք, որ ճշմարիտ է Ա. Զամինյանը՝ ճառերի հեղինակ համարելով Գր. Լուսավորչին, իսկ քարգմանիչ՝ Մեսրոպ Մաշտոցին. «Կարելի է կարծել, - գրել է նա, - թե վերջինս (իմա՝ Գր. Լուսավորիչը - Լ. Խ.) է իսկական հեղինակը, իսկ առաջինը (Մ. Մաշտոցը) նույն գործը քարգմանել է նորանոր հավելումներով» (Ա. Զամինյան, Հայոց եկեղեցու պատմություն, Նոր Նախիջևան, 1908, էջ 89-90):

¹ Բ. Սարգսյանի մոտ, որպես եզրափակում իր ուսումնասիրության այդ հատվածի, կարդում ենք. «Կամ Յանախապատում գիրքն է կամ Գրիգորի կարծեցեալ վարդապետությունը պետք է որ անհրաժեշտ ս. Մեսրոպայ լինի, որովհետև նորա կենսագրի ասածով՝ այնպիսի ճառեր գրած էր, իսկ այժմ այդ կրկին երկասիրություններն դուրս նոյն սեղի ուրիշ անանուն գրություն մի ձեռներնիս հասած չէ, եւ որովհետև Յանախապատում գիրքը բոլոր իր ներքին հանգամանքներովն է պարզ է միաձեւ վարդապետութեամբն աւելի Գրիգորի է նորա ժամանակին, քան թէ ս. Մեսրոպայ կարէ պատշաճել, ուրեմն հետեւութիւնն յայտնի է» («Ազաթանգեղոս էլ իւր բազմադարեան գաղտնիքն», էջ 403):

Վաղաժամ է, անշուշտ, այս եզրակացությունը վերջնական համարել. կան և դեռևս կարող են երևան գալ նոր տեսակետներ հայ գրականության արշարույսին ստեղծված երկերի ժամանակագրական հերթաշարը որոշելու, միմյանց նկատմամբ նրանց ունեցած ռեակտիվ և գաղափարական առնչություններն ու տարբերությունները պարզելու և, ի վերջո, դրանցից յուրաքանչյուրի հեղինակային պատկանելությունը վերջնականապես հաստատելու համապարհին: Այդ բնույթի ուսումնասիրություններին առաջիկայում կարող են նպաստել նաև էլեկտրոնային հաշվիչ մեթոդները և գիտահետազոտական աշխատանքների նոր ձևեր ու եղանակներ: Ուստի մեր պարտքն ենք համարում զգուշացնել մեր խստապահանջ ընթերցողներին, որ ինչպես «Յանախապատում ճառերի» և «Վարդապետութեան», այնպես էլ հաջորդ շարադրանքի ընթացքում հիշատակվող որոշ գրվածքների հեղինակային պատկանելության մասին այստեղ արտահայտված տեսակետները ցուցանիչ են հարցի ուսումնասիրության այսօրվա վիճակի, որ հետագայում նոր փաստերի լույսի տակ կարող են ճշգրտվել ու լրացվել: Մեր ուսումնասիրության հիմնական նյութը, սակայն, վստահ ենք, որ առաջիկայում ավելի խորն է բացահայտվելու, և IV դարում Հայաստանում օտար լեզուներով ստեղծված գրական հուշարձանների ցանկը լրացվելու է մեր կողմից չնկատված այլ միավորներով:

բարոյական սկզբունքների քարոզը: Ճառախոսն ուսուցանում է քրիստոնեական առաքինի կյանքի պայմանները՝ բարքերի մաքրություն, ժուժկալուծություն, սեր, հեզություն, գթություն, հորդորում է բարիք գործել, հեռու մնալ անառակությունից, շարից և այլն: Եվ այս ամենը՝ մի ընդհանուր վերջնական նպատակի համար, որ է «աշխարհի խաղաղությունն ու շինությունը»¹:

Գրիգոր Լուսավորչի անվամբ պահպանվել են նաև ուշագրավ կրոնական հրահանգներ: Նրա Արիստակես որդին 325 թ. մասնակցել է Նիկիայի տիեզերական ժողովին և իր հետ Հայաստան բերել այդ ժողովի կանոններն ու նիկիական Հավատոյ հանգանակը:

Այս փաստն արձանագրելով Ագաթանգեղոսն ավելացնում է, որ Լուսավորիչը, ընդունելով ժողովի որոշումները, «ի նոյն լուսաւոր կանոնս յաւելեալ առաւել եւս զիւր վիճակն՝ զՀայաստան երկիրն, պայծառացուցեալ... լուսաւորէր»², իսկ Մովսէս Խորենացին նշում է, որ Հայ եկեղեցու հիմնադիրը «սուղ ինչ գլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին»³: Երեսուն կետից բաղկացած այդ կանոնները պահպանվել են «Հայոց կանոնագրքի» մեջ՝ մի քանի ձեռագրերում ունենալով այսպիսի խորագիր. «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի՝ յաւելումն նիկիական» կամ «Կանոնք սրբոյն Գրիգորի Պարթեւի... յաւելումն ի նիկիական կանոնս»⁴:

Դրանք հակիրճ կանոնական հրահանգներ են, որոնցով ապաշխարության ժամկետներ են սահմանվում քրիստոնյաների կատարած տարբեր հանցանքների ու զանցանքների համար: Պարզ նշմարվում է, որ շարադրված են ոչ վաղ անցյալում քրիստոնեություն ընդունած մի միջավայրում, ուր դեռևս մեծ ազդեցություն ունեն կախարդները (թովիչ, ձեռնածու), ուր հանգուցյալների թաղման արարողությունների ժամանակ կատարվում են հեթանոսական ծեսեր («կոծ դնեն... զհերս խզեն... զճակատ հարկանեն»), ուր կան դեռևս մեծ թվով հեթանոսներ, որոնց նկատմամբ քրիստոնյաներից շատերը շարունակում են ունենալ բարիդրացիական բնականոն հարաբերություններ («որք երթան ի տունս հեթանոսաց եւ ուտեն եւ ըմպեն անխտիր, Գ. ամ արտաքոյ ապաշխարեն»), - գրված է Դ

¹ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան 1944, էջ 121:

² Ագաթանգեղոս, գլ. ճԻԷ, էջ 465-466:

³ Խորենացի, II, Գ, էջ 24:

⁴ Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», Ա, աշխատ. Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 594:

կանոնի մեջ) և այլն: Այս հատկանիշներն ինքնին խնդրո առարկա կանոնների հնուվիճակն ու հարազատությունը հավաստող վկայություններ են:

Նախամեսրոպյան շրջանում հայ եկեղեցականների կողմից ստեղծված օտարալեզու գրականության մասին աղոտ պատկերացում ունենալով՝ այս կանոնների գրության ժամանակի մասին Մ. Օրմանյանը խուսափողական տողեր է շարագրել. «Չենք ուզեր պնդել, - գրել է նա,- թէ անոնք նույն ինքն Գրիգոր է գրաւոր կերպով աւանդած կանոններ ըլլան, բայց գոնէ պէտք է ընդունիլ, թէ Գրիգորի ժամանակին կարգադրութիւններն էին, որք աւանդութեամբ պահուելով յարմար ատեն մը գրի առնուեցան»¹:

Մենք, սակայն, որևէ արգելք չենք տեսնում՝ այդ կանոնները հենց Գրիգոր Պարթևի կողմից շարագրված և հետո միայն՝ V դարի առաջին տասնամյակների ընթացքում հայերենի թարգմանված համարելու: Այսպես մտածելու համար, բացի վերն ասվածներից, պէտք է նկատի առնել և այն կարևոր փաստը, որ Գրիգոր Լուսավորչին պատկանող մի սահմանադրության հոսանքներից թարգմանված լինելու մասին կա որոշակի վկայություն:

«Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մեջ կարևոր տեղ են գրավում Սահակ Պարթևի կողմից շրջանառության մեջ դրված 5 տարբեր կանոնական հրահանգներ, որոնք «Կանոնագրքի» խմբագիրների կողմից վերադասավորվել են և մասնատվել առանձին հոդվածների. այդ ընթացքում խախտվել է նրանց նախնական հերթաշարը, փոփոխություններ են կրել նրանցից մի քանիսի խորագրերը, չի բացառված, որ որոշ հատվածներ փոխվել են կամ ենթարկվել ոճական ու լեզվական խմբագրության²:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 659 ձեռագրի մեջ, որ բացառիկ նշանակություն ունի «Հայոց կանոնագրքի» աղբյուրների և բանասիրական այլ հարցերի պարզաբանման համար, Սահակ Պարթևի կանոնախմբի ԼԶ-ի համարների տակ բերված նյութն ընդօրինակված է որպես ինքնուրույն մի գրվածք՝ ունենալով այսպիսի կարևոր խորագիր. «Սահմանադրութիւն կարգաց ընկալեալ ի նահատակէն տեառնէ Գրիգորէ, թարգմանեցաւ ի ձեռն Եզնակայ, հրամանաւ երանելոյն Սահակայ եպիսկոպոսապետին Հայոց եւ նորին աթոռակցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն Վանաց»³:

¹ Մ. Օրմանյան, Ազգապատում, հտ. Ա, Պէրուք, 1959, էջ 103:

² Այս մասին տե՛ս Ն. Ակիմյանի «Ս. Սահակի վերագրված կանոնները» հոդվածը («Հանդես ամսօրեայ», 1946, էջ 48-70, 1947, էջ 1-25), հմմտ. նաև Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 624:

³ Տե՛ս ձեռ. № 659, էջ 227բ, նաև Աբել Եպիսկոպոս Մխիթարյանց, Պատմութիւն ժողո-

Նույն այս ձեռագրի մի այլ հատվածում, «Կանոն Լուսավորչին» նոր վերնագրի տակ, ընդօրինակված է նաև նույն կանոնի մեր շարունակությունը: Սահակի անունով շրջանառության մեջ դրված այս կանոնի մասին (նկատի ունենք ԼԶ-ԽԴ համարներով զատորոշված նյութը) Գրիգոր Լուսավորչի անվան հետ է շաղկապվում նաև «Կանոնագրքի» համապատասխան հատվածի վերջում դրված հիշատակարանի մեջ, որը ոչ այլ ինչ է, քան № 659 ձեռագրից վերը մեջբերված խորագրի փոքր-ինչ ձևափոխված փոփոխակը («Այս սահմանադրություն կարգաց գրեցաւ հրամանաւ երանելոյն Սահակայ մեծ հայրապետի Հայաստան աշխարհի, ընկալեալ ի քաջ նահատակէն՝ ի տեառնէն Գրիգորէ՝ թարգմանեցաւ միայն ի յունէ ի հայ...» և այլն)¹: Կանոնական այս հրահանգի մեջ սահմանված են Հայ եկեղեցու տոների կարգը, վանքերի և եկեղեցիների իրավիճակը, նրանց տրվելիք տուրքերի տեսակներն ու չափը և այլն:

Մեջբերված խորագրից ու վերջաբանից պարզվում է, որ այդ սահմանադրությունը ձևակերպված է Սահակ կաթողիկոսի և նրա աթոռակից եպիսկոպոսների կողմից այն սկզբունքների հիման վրա, որոնք հունարեն լեզվով շարադրվել էին Գրիգոր Լուսավորչի կողմից և թարգմանվել հայերեն եզնիկի ջանքերով:

Մենք այժմ միջոց չունենք որոշելու, թե Սահակի ժամանակ խմբագրված՝ Հայ եկեղեցու համար գործնական նշանակություն ունեցող այդ «Սահմանադրություն կարգացի» մեջ Լուսավորչի սահմաններից ինչն է անաղարտ պահպանված և ինչը՝ V դարի պայմաններին համապատասխան նոր ի նոր հորինված, բայց պարզ է մի բան՝ այդ կանոնի մեր խմբագրման տարիներին հանրահայտ էր, որ Գրիգոր Լուսավորչի ճշգրիտ է եղել հուններենով շարադրված գանազան գրությունների: Մեզ հայտնի այդպիսի գրություններից է նաև վերջին տարիներին հայ բանասիրության ուշադրությունը գրաված «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի, դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա» կոչվող մեծարժեք բնագիրը²: Խորագիրը երկու

վոց Հայաստանեայց եկեղեցոյ՝ հանդերձ կանոնադրութեամբ ի պէտս ժառանգաւորաց, Վաղարշապատ, 1874, էջ 25-32:

¹ «Կանոնագիրք Հայոց», Ա, էջ 402, նաև էջ 626 (ԽԱ. հատվածի կապակցությամբ Վ. Հակոբյանի գրած ծանոթագրությունը):

² Դրանից ֆաղվածներ են հրատարակվել դեռևս 1873 թ. Աբել Մխիթարյանցի կողմից «Արարատ» ամսագրի էջերում և «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցոյ» մեզ արդեն ծանոթ աշխատության մեջ: Ամբողջական բնագիրը (4 ձեռագրերի բաղդատությամբ) մինչև առաջին աշխարհամատեր հրատարակության էր պատրաստել Գալուստ Տեր-Մկրտչյանը, սակայն ֆրանսերեն թարգմանության հետ միասին տպագրվել

տարբեր նյութեր է միավորում. «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթևի» խոսքերը վերաբերում են կանոնական մի հրահանգի, որն իր ձևով ու բովանդակությամբ շատ նման է Լուսավորչի 30 այն կանոններին, որոնք, ինչպես տեսանք վերը, շարադրված են եղել որպես հավելված նիկիական կանոնների:

Միայնակ մեզ հասած այս կանոնի մեջ ասված է. «Քահանայ, որ ընդ կնոջ ի քուն է՝ ի վաղիւն պատարագ մի՛ իշխեսցէ մատուցանել: Եւ աշխարհական, որ ընդ կնոջ ի քուն է՝ ի վաղիւն աւրինաց մի՛ լիցի հաղորդ»¹: Խորագրի հաջորդ բառերը մտածել են տալիս, որ կանոնական այս հրահանգը շարադրված է եղել ի պատասխան մեզ անհայտ մի եկեղեցականի կողմից Գրիգոր Պարթևին արված հարցումի:

Քննարկվող բնագրի բուն նյութը հաջորդում է կանոնական հրահանգին և բաղկացած է 16 այլ հարցումներից (սրանց են վերաբերում վերջին բառերը՝ «գարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա»), որոնք բարոյականութեան և մանավանդ ժողովրդական հավատալիքների տարբեր բնագավառներին առնչվող ուշագրավ նյութեր են պարունակում: Հարց տվողի անունը չի պահպանվել, պատասխանողը Գրիգոր Պարթևն է:

Տեղին է այստեղ նշել, որ «հարց ու պատասխանին» կամ «թուղթը» քրիստոնեական գրականության հնագույն տեսակն է. եկեղեցական հեղինակներն այդ ժանրն էին օգտագործում, երբ գրում էին իրենց ժամանակակիցներին հետաքրքրող զանազան հարցերի մասին կամ բացատրում ու մեկնաբանում հավատքի հետ կապված զանազան խնդիրներ: «Եկեղեցու հայրերը, - գրել է այդ մասին Մ. Աբեղյանը, - թղթերի մեջ նաև կանոններ էին տալիս քրիստոնեական պաշտամունքի, ծեսերի ու պաշտոնյաների և առհասարակ վարչական խնդիրների մասին»²:

Գր. Պարթևի այս գրվածքը բացառիկ նշանակություն ունի հատկապես հայ ժողովրդի հնամենի հավատալիքների ու հեթանոսական պաշտամունքի տարբեր կողմերի լուսաբանության համար: «Հարցմունքի» այդ էջերը, շատ

է Ն. Ադոնցի աշխատասիրությամբ տարիներ հետո՝ 1926 թ. “Revue de l’Orient chrétien” պարբերականում (հատոր V (XXV), 1925-1926, №№ 3, 4, էջ 309-357): Վերահրատարակել ենք մենք, համարելով «Հայ մատենագրության երախայրի», «Ռամբեր Մատենադարանի» ժողովածուի 7-րդ հատորի մեջ (էջ 301-330):

¹ Կանոնական այս հրահանգն իր ձևով ու բովանդակությամբ շատ նման է վերոհիշյալ 30 կետերից բաղկացած կանոնիմաբի հենց թեկուզ առաջին կանոնին. «Քահանայ, որ ի մեղս զառածեալ է՝ ժ ամ ապաշխարեսցէ ջերմեռանդն ստիւ, արտասուաւ, արամ տնանկաց, ապա մտեալ հաղորդեսցի». հմմտ. նաև Բ, Գ, ԻԲ և ԻԹ կանոնների հետ («Կանոնագիրք Հայոց» Ա, էջ 245-249):

² Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Ա, էջ 93-94:

տեղերում գրեթե բառացի, օգտագործվել են եզնիկ Կողբացու կողմից՝ «եղծ աղանդոց» աշխատության մեջ:

Մեր «Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը» որպես հայ մատենագրության երախայրիք» հոդվածում, ելնելով անվիճելի այն իրողությունից, որ եզնիկն իր ձեռքի տակ է ունեցել այդ բնագիրը, այն համարել էինք հայ ինքնուրույն մատենագրության ցարդ հայտնի հուշարձաններից մեկը՝ կարծելով, որ Մեսրոպ Մաշտոցն է նրա հավանական հեղինակը. նշել էինք միաժամանակ, որ «հարցի ուսումնասիրության ներկա էտապում և ուղղակի վկայությունների բացակայության պայմաններում իհարկե դժվար է լճուսկան և վերջնական համարել այս եզրակացությունը»¹:

Գրերի գյուտից առաջ օտարալեզու հայ գրականության առկայության մասին գոյություն ունեցող նյութերի համախմբումից հետո այլևս չենք տեսնում որեւէ պատճառ՝ կասկածի տակ առնելու քննարկվող գրվածքի խորագրի ուղղակի վկայությունը՝ այն Գրիգոր Պարթևի կողմից շարագրված լինելու մասին: Միաժամանակ ավելորդ չենք համարում նշել, որ ինչպես այս, այնպես էլ IV դարում ստեղծված մյուս գրվածքները և՛ թարգմանվելիս, և՛ հետագա դարերում ընդօրինակվելու ընթացքում կարող են կրած լինել որոշ փոփոխություններ²:

Գրիգոր Լուսավորչի անունով հայերեն ձեռագրերի մեջ գտնվում են նաև մաղթանքներ, աղոթքներ, քարոզներ, տեսիլքներ և այլ գրվածքներ³, որոնք ըստ մեծի մասի հորինվել են հետագա դարերում. Լուսավորչի

¹ «Քանքեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 310:

² «Հանդես ամսօրեայ» հայագիտական պարբերականը 1971-1973 թթ. իր համարներում լույս է ընծայում Մարտիրոս Մինասյանի բանասիրական ֆննությունը Գրիգոր Պարթևի նույն այս «Հարցումնի» հետ առնչվող բարդ խնդիրների մասին: Նա փորձում է ապացուցել, որ Գրիգոր Պարթևի անունով պահպանված «Հարցումնի» հետին դարերի անարժեք մի հորինվածք է, որ եզնիկ Կողբացին որևէ հայկական աղբյուր չի օգտագործել, որ ոսկեդարյան հայերենը հենց սկզբից կատարյալ ու անթերի լեզու է եղել և այլն, և այլն:

Մեկ առ մեկ անդրադառնալն այդ տեսակետներին անօգուտ է և անիմաստ, բայց բնավ չանդրադառնալն էլ անկարելի է. հայագիտության հարցերով այժմ շատերն են հետաքրքրվում. բավարար պատրաստություն դեռևս չունեցողներից ոմանք կարող են հալած յուրի տեղ ընդունել Մ. Մինասյանի ասածները և թյուր պատկերացում կազմել հայոց գրականության պատմության սկզբնական շրջանի կարևոր երևույթների մասին: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ անհրաժեշտ ենք համարել հոդվածիս վերջում համառոտակի անդրադառնալ Մ. Մինասյանի առաջ ֆաշած հիմնական հարցերին:

³ Տե՛ս Գ. Զարպհանայան, Պատմություն հայ հին դպրության, չորրորդ տպագր., 1932, էջ 199-201:

անունն այստեղ օգտագործված է նրանց արժեքը բարձրացնելու միտումով: Չի բացառված, սակայն, որ այդ կարգի նյութերի մեջ ևս կարող են գտնվել իրոք IV դարում հունարենով շարադրված և հետագայում հայերեն թարգմանված մեկ-երկու նմուշներ:

3

Գրիգոր Պարթևն անշուշտ ունեցել է հետնորդներ, որոնք նորաստեղծ Հայ եկեղեցու դիրքերն ամրապնդելու և քրիստոնեական վարդապետության սկզբունքներն արմատավորելու մտահոգություններով հունարեն և ասորերեն նոր երկեր են շարադրել: Այս գործիչներից շատերի անուններն իսկ չեն հասել մեզ, մի քանիսի մասին էլ պահպանվել են լոկ հպանցիկ ակնարկներ: Դրանցից է, ահա, Արտիթես եպիսկոպոսը՝ մեկը Գրիգոր Լուսավորչի 12 այն աշակերտներից, որոնք, քրմերի որդիներ լինելով, հատուկ ուսում էին ստացել, ձեռնադրվել եպիսկոպոս և առաքվել Հայաստանի տարբեր գավառները՝ նորաստեղծ քրիստոնեական համայնքները ղեկավարելու համար¹:

Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» երկրորդ գրքի 80-րդ գլխի նյութը, ինչպես երևում է հենց խորագրից, քաղել է այս Արտիթես կամ Արտիթ եպիսկոպոսի մի թղթից, որ շարադրված է եղել որպես պատասխան Յագոռճան կոչվող ինչ-որ վայրում բնակվող կամ ձգնող ոմն Մարկոս միայնավորի գրավոր հարցման²: Թուղթը տեղեկություններ է պարունակել Գրիգոր Լուսավորչի կյանքի առաջին շրջանի մասին. Կապաղովկիա է տարվում, քրիստոնյա մկրտվում, ամուսնանում, որդիների հայր դառնում, Հայաստան է գալիս՝ Տրդատ թագավորի մոտ ծառայության մտնելու, և այլն: «Անշուշտ, - գրում է այդ մասին Ղ. Ալիշանը, - աւելի փափագելի մանրամասնութիւնք այլ կային ի թղթին Արտիթեայ, որով կրնայինք հետ Ագաթանգեղոսի առաջին ազգային պատմիչ համարել զնա»³: Եպիսկոպոս դարձած հայ քրմորդու Արտիթ անվան հունարեն անուններին հարմարեցված Արտիթես ձևից պետք է ենթադրել, որ նա իր թուղթը գրել է հունարեն լեզվով: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ, ինչպես ասացինք արդեն, նա մեկն

¹ Ագաթանգեղոս, էջ 441-442:

² Խորենացու «Պատմության» այդ գլխի խորագիրն է. «Յայտաբարութիւն սակաւով սննդեան եւ վարուց Գրիգորի եւ որդոցն (ցանկի մէջ՝ որդոց նորա) ի թղթոյն Արտիթեայ եպիսկոպոսի, որ վասն հարցմանն Մարկոսի միայնակեցի (ցանկի մէջ՝ միայնատրի) ի Յագոռճանի»:

Յագոռճան տեղանունը տարբեր ձեռագրերում տարբեր աղնատ ձևեր է ընդունել՝ դառնալով Յագդիռճան, Յագդին ավան, Յագդին ավան, Յագոռճան, Յագդիճան և այլն (տե՛ս Խորենացու «Պատմության» 99 և 219 էջերի տողատակի տարբերությունները):

³ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 41:

էր Գրիգոր Պարթևի ձեռնասուն այն աշակերտներից, որոնց նկատմամբ հունական միջավայրում սնված ու կրթություն ստացած Լուսավորիչը «փոյթ ուսման ի վերայ ունէր՝ ընդ հոգեւոր խնամով եւ երկիւղիւ սնուցանել»¹:

4

Գրական վաստակ ունեցող մեզ հայտնի հաջորդ գործիչն է եղել Գրիգոր Լուսավորչի ավագ որդի Վրթանեսը, որն իր կրտսեր եղբայր Արիստակեսի մահվանից հետո, հավանաբար 333 թ., ժառանգեց հայոց եպիսկոպոսապետության պաշտոնը, շարունակեց իր նախորդների պայքարը հեթանոսության դեմ՝ զգալի հաջողություններ արձանագրելով քրիստոնեության սկզբունքները Հայաստանում արմատավորելու և եկեղեցու տնտեսական հիմքերն ամրապնդելու բնագավառում:

Փավստոս Բուզանդը վկայում է, որ երբ հայոց սպարապետ Վաչե Մամիկոնյանն ու նրա զինակիցները պարսից գերագանց ուժերի դեմ հերոսաբար մաքառելուց հետո ընկան պատերազմի դաշտում, նրանց հիշատակը հավերժ հարգելու համար Վրթանեսը «օրէնքով», «կանոնով» տոն սահմանեց. «Եւ եդ օրէնս ընդ աշխարհն մեծ քահանայապետն Վրթանէս՝ զնոցա առնել զյիշատակն ամ յամէ. եւ որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ի նմանութիւն նոցա, էդ կանոն՝ յիշել զսոսա առ սուրբ սեղանն Աստուծոյ ի ժամ պատարագին» և այլն²:

Այսպիսով, որոշակի տվյալ ունենք Վրթանեսի հրապարակած կանոնական մի հրահանգի մասին, որ իրավունք է տալիս մտածելու, թե նրա կողմից կարող էին գրված լինել նաև այլ կանոններ և շրջաբերական գրություններ:

Անկախ դրանից, Վրթանեսի անունը կապված է գրական մի երկի հետ, որը մուծվել է «Հայոց կանոնագրքի» մեջ և կրում է «Երանելւոյն Մակարայ՝ սրբոյ քաղաքին Երուսաղէմի հայրապետի կանոնական թուղթ ի Հայս՝ վասն կանոնագրութեան Կաթողիկէ եկեղեցւոյ կարգաց, զոր շէ արժան ընդ սահման եւ ընդ հրաման անցանել» ընդարձակ խորագիրը:

Այս թուղթը կազմված է մկրտության, օծման, պատարագի և եկեղեցու դասակարգության մասին ութ տարբեր հարցումների պատասխաններից: Ինչպես պարզվում է ներածական տողերից, հասցեագրված է հայոց եպիսկոպոսապետ Վրթանեսին («առաքել ի կողմանդ Արեւելից առ քրիստոսա-

¹ Ագաթանգեղոս, ՃԻԱ, էջ 441:

² «Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1933, III, ԺԱ, էջ 38:

սէր եւ երկիրը՝ եպիսկոպոսապետը Վրթանէս եւ առ համարէն եպիսկոպոսս եւ քահանայս Հայոց»¹), որը Նրուսաղեմ ուխտի գնացած հայ քահանաների միջոցով տեղեկություններ էր հաղորդել Հայաստանյայց եկեղեցու վիճակի և իրենց առջև ծառայած հարցերի մասին՝ խորհուրդներ խնդրելով Մակար հայրապետից:

«Թուղթ» կամ «Հարցմունք եւ պատասխանիք» կոչվող գրությունները, որպէս կանոն, կյանքի էին կոչվում երկու տարբեր անձնավորություններին՝ հարց առաջադրողի և հարցին պատասխան տվողի համագործակցութեամբ: Իհարկէ, հիմնական դերը կատարում էր պատասխանողը (երբեմն հանդես գալով նաև հարց առաջադրողի դերում). քիչ չէին, սակայն, և այն դեպքերը, երբ հարցադրողը գործունյա մասնակիցն էր դառնում իր պատվիրած երկի ստեղծման աշխատանքի. նա էր նախաձեռնողը, նա էր ընտրում ստեղծվելիք երկի նյութը, նաև կանխորոշում պատասխանների գաղափարական բովանդակութիւնը, քանի որ նա էր ընտրում բուն հեղինակին՝ անշուշտ, ծանոթ լինելով նրա հայացքներին ու կարողութիւններին:

Վրթանէս կաթողիկոսի հարցումներին Մակար պատրիարքի տված պատասխաններն իրենց տեղն ունեն նախամեսրոպյան շրջանի օտարալեզու հայ մատենագրութեան մեջ, քանի որ վերաբերում են Հայաստանին և պարունակում կարևոր տվյալներ Հայ եկեղեցու վիճակի մասին IV դարի 30-ական թթ.՝ սերտորեն շաղկապված լինելով Վրթանէս կաթողիկոսի անվան հետ²:

¹ «Կանոնագիրք Հայոց», Բ, էջ 219-220:

² Տասնյակ օտարագրի և հայ գիտնականներ, ըստ արժանվույն գնահատելով Մակար Նրուսաղեմացու այս թուղթը, համարել են այն ստույգ և արժանահավատ պատմական փաստաթուղթ և փաղել նրանից կարևոր տեղեկություններ Հայոց եկեղեցու պատմության համար: Ն. Ակիմյանը, սակայն, որ տառապում էր Հայոց պատմության ժամանակագրությունը «նշգրտելու» մտայնությամբ, դարիս 30-ական թվականներին անդրադարձավ նաև այս բնագրին և առանց որևէ լուրջ կովանի, անհիմն ենթադրությունների ու անիմաստ զուգադրությունների հիման վրա հրապարակ նետեց մի տեսակետ, ըստ որի, իբր, այս թղթի հեղինակ Մակարը այդ անունը կրող երկրորդ անձնավորությունն է, որ Նրուսաղեմի պատրիարք է եղել 565-572 թվականներին, իսկ Վրթանէսը ոչ թե Վրթանէս կաթողիկոսն է Գրիգոր Պարթևի ավագ որդին, այլ ոմն Սյունյաց եպիսկոպոս, որ ապրել է VI դարի երկրորդ հիսնամյակում (տե՛ս Ն. Ակիմյան, Թուղթ Մակարայ Բ Նրուսաղեմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց յաղագս կարգաց եկեղեցոյ, Վիեննա, 1930): Բարեբախտաբար, ազատված ենք այս տեսակետին անդրադառնալու պարտականությունից, քանի որ այդ աշխատանքն օրինակելի բարեխղճությամբ ու հաջողությամբ կատարել է Վ. Հակոբյանը «Կանոնագիրք Հայոց» աշխատության Բ հատորի ընդարձակ ներածականի մեջ (տե՛ս էջ LXXVII-XCVIII):

Օտար լեզուներով գրական հուշարձաններ Հայաստանում ստեղծվել են, անտարակույս, նաև Հուսիկ և Փառեն կաթողիկոսների գահակալության տարիներին: Յավոք, նրանցից հետքեր չեն պահպանվել:

Այս առումով ավելի բարվոք վիճակում է գտնվում Ներսես Պարթևը (կաթողիկոս է եղել շուրջ 353-373 թթ.): Գիտենք, որ նա Հայաստանի տարբեր գավառներում բացել էր դպրոցներ, ուր ուսուցումը կատարվում էր հունարեն և ասորերեն լեզուներով¹, նա մեծարվում էր նաև որպես մի անձնավորություն, որ «վարդապետական բանին զամենեցուն զփակեալ դրունս մտաց ի բարին յորդորելով բանայր»² և այլն:

Ավելի կարևոր են այն տեղեկությունները, որոնց համաձայն Ներսեսը բազմաթիվ կանոններ է հաստատել և Աշտիշատում հրավիրել ազգային ժողով («Ժողով արարեալ եպիսկոպոսաց եւ համօրէն աշխարհականօք»³), որի «Կանոնական սահմանադրութիւնների» (օգտագործում ենք Մ. Խորենացու արտահայտությունը) բովանդակությունը հայտնի է մեզ Բուզանդի և Խորենացու կողմից վերապատմված լինելով: Ներսես Պարթևը հունական կրթություն ստացած և բյուզանդական կողմնորոշում ունեցող գործիչ էր, ուստի կարելի է շտարակուսել, որ այդ նշանավոր ժողովի որոշումները նույնպես արձանագրված են եղել հունարեն լեզվով:

5

Նախորդ շարադրանքով փորձեցինք համառոտակի ներկայացնել մեզ հայտնի բոլոր տեղեկությունները՝ ուղղակի թե անուղղակի, հայոց գրերի գյուտից առաջ՝ IV դարի ընթացքում, նորաստեղծ քրիստոնեական եկեղեցու և նորագարձ քրիստոնեական համայնքների կարիքների համար Հայաստանում օտար լեզուներով ստեղծված գրական երկերի մասին: Դրանք, ինչպես տեսանք, ըստ մեծի մասի եղել են կանոնական հրահանգներ, քրիստոնեական վարդապետության տարբեր կողմերը լուսաբանող ճառեր, թղթեր, «հարց եւ պատասխաններ», վարքաբանական-պատմագրական երկեր: Գրական աշխատանքով զբաղվել են քրիստոնեական եկեղեցու ամենաբարձրաստիճան պաշտոնյաները՝ Գրիգոր Լուսավորիչը, նրա Վրթանես որդին ու ձեռնասուն աշակերտներից Արտիթ եպիսկոպոսը, Ներսես Պարթևը և ուրիշներ, որոնց անունները չեն հասել մեզ:

¹ «Կարգէր եւ տեղիս տեղիս դպրոցս յունարէն եւ ասորերէն յամենայն գաւառս Հայոց», - գրում է այդ մասին Փավստոս Բուզանդը (Դ, 4, էջ 86):

² Փավստոս Բուզանդ, IV, Գ, էջ 84:

³ Մովսէս Խորենացի, III, Ի (էջ 279):

Ահա գրական ստեղծագործությունների և հեղինակների այդ շարքին այժմ ավելանում է մի նոր բնագիր, որը ստեղծվել է Ներսես Պարթևի և Եպիփան միայնակյացի համագործակցությամբ և հետաքրքրական տվյալներ է պարունակում հեթանոս հայերի հավատալիքների մասին:

«Հարցումն տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի առ Եպիփան միայնակեաց»՝ այսպես է նորահայտ այդ նյութի վերնագիրը: Գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 582 գրչագրի մեջ¹, որը հայտնի է բանասիրությանը որպես Ջագավանից ժողովի կանոնները և Մխիթար Այրիվանեցու «Ժամանակագրության» լավագույն ընդօրինակությունը պարունակող արժեքավոր ձեռագիր²:

Ձեռագրի 123բ էջի ստորին հատվածից սկսվում է տարբեր ժողովուրդների ամսանունների հետաքրքրական մի ցանկ, որի մեջ տեղեկություններ կան նաև կենդանակերպերի անունների մասին³: Այս ցանկերը գրված են երեքական սյունակներով. ավարտվում են 124բ էջի վրա՝ գրավելով գրադաշտի մեծագույն մասը: Էջի վերջում մի փոքր տեղ մնացել է դատարկ. ձեռագրի գրիչն այն օգտագործել է ընդօրինակելու համար մեզ հետաքրքրող «Հարցումի» սկզբի մի քանի տողը՝ շարունակությանը հատկացնելով հաջորդ՝ 125ա էջը գրեթե ամբողջությամբ⁴:

Մխիթար Այրիվանեցու «Ժամանակագրության» բնագիրը, ինչպես և վերը թվարկված ու Մխիթարի անվան հետ առնչվող բոլոր նյութերն արտագրվել են Դավիթ անունով մի գրչի կողմից, որը որդին է Վարդան և Հռիփսիմե ամուլի և ունեցել է Հովհաննես ու Մարտիրոս անունով եղբայրներ:

¹ Ձեռագրի մանրամասն նկարագրությունը տե՛ս Գ. Հովսեփյանի «Ջագավանից ժողովը» հոդվածի մեջ («Շողակաթ» հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913, էջ 39-41):

² Մ. Այրիվանեցու «Ժամանակագրության» Ք. Պատկանյանի հրատարակությունը (Մխիթար Այրիվանեցույ Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1867), որը մի շարք առավելություններ ունի Մ. էմինի հրատարակության (Մոսկվա, 1860) նկատմամբ, բխում է այս ձեռագրից:

³ Ցանկի մեջ կան տվյալներ, որոնք բացակայում են տոմարագիտական այլ ձեռագրերից, Մասնավորապես ուշագրավ են մոնղոլական ամսանունների («Անուանֆ ամսոց մոլղալին-թաթար») և կենդանակերպերի ցանկերը, ինչպես նաև վրաց կենդանակերպերի անունները՝ հայերեն բացատրականներով (այս վերջինս՝ ձեռագրի 32բ էջի վրա):

⁴ Էջի վերջում միայն ընդօրինակված են Մխիթար Վարդապետի մի նամակի սկզբի տողերը (4 տող) որպես օրինակելի նամական. «Քագագարմ եւ մեծապատիւ, ի նախնեաց բարեաց եւ յաստուածասէր արմատոց վերընծիպեալ մեզ բողբոջ յուսոյ եւ կայծակն բարէնշան, ի հանոյ եւ ի հարցն բոց ընկալեալ զաստուածապարգեւոյ իշխանութեանդ արգասիս, իշխանաց իշխան եւ մեծ պարուն այս անուն»: Մրան կից աջակողմյան լուսանցքի վրա գրված են Մխ. վր. (իմա՝ Մխիթար վարդապետ) և քուղբ բառերը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս գրչի նախընտրած նյութերի մեծ մասն առնչվում են Մխիթար Այրիվանեցու անվան հետ, հաշվի առնելով և այն, որ Այրիվանեցու հոգու փրկության համար նա շարադրել է հատուկ մի հիշատակարան¹ մեր ձեռագրի գրիչ Դավթին նույնացնում ենք նույնանուն մի անձնավորության հետ, որը 1423 թ. Այրիվանքում օրինակել է մի Մաշտոց²: Աշխատելով Այրիվանքում նա հնարավորություն է ունեցել օգտվելու Մխիթար Այրիվանեցու ժառանգությունից և հուշակավոր այդ հաստատության մատենադարանում կուտակված ձեռագրական գանձերից: Մեր ուշադրությունը գրաված այս նոր բնագիրն, այսպիսով, կորստից փրկվել և կրկին գիտական շրջանառության մեջ է դրվել հայ մշակույթի հինավուրց և նշանավոր կենտրոն Այրիվանքից:

Արդ, ովքե՞ր են մեր ուշադրությունը գրաված բնագրի խորագրում հիշատակված հարցում անող հայոց կաթողիկոս Ներսեսն ու հարցմանը պատասխան տվող Եպիփան միայնակյացը:

Ներսես անունով կաթողիկոսներ շատ են եղել Հայաստանում՝ Ներսես Մեծ (353-373), Ներսես Աշտարակեցի (548-557), Ներսես Շինող (641-661) և այլն: Բայց երբ ծանոթանում ենք «Հարցման» բովանդակությանը, կասկած չի մնում այլևս, որ այստեղ հիշատակված անձնավորությունը Ներսես Մեծն է նա, որ եռանդուն գործունեություն է ծավալել քրիստոնեական եկեղեցու դիրքերի ամրապնդման և հեթանոսական հավատալիքների արմատախիլ բնաջնջման համար: Անծանոթ դեմք չէ նաև Եպիփան միայնակյացը՝ Ներսես Մեծի ժամանակակից, ծագումով հույն նշանավոր այն հոգևորականը, որ եղել է Դանիելի աշակերտներից մեկը, սուրբ Շաղիտայի ընկերակիցը: Միայնակյաց այս ճգնավորը Ներսեսի մահվանից հետո հաստատվել է Ծոփաց երկրում և մեծ աշխատանք կատարել քրիստոնեությունը տարածելու ասպարեզում. «Դարձուցանէր զբազում մոլորեալս ի հեթանոսութենէ ի քրիստոնէութիւն եւ ընոյր զերկիրն Ծոփաց վանիւք. եւ դնէր վարժեար ընդ ամենայն երկիրն Ծոփաց», - գրում է նրա մասին Փավստոս Բուզանդը³: Երբ նա թողնում է նաև Ծոփաց աշխարհի իր միանձնանոցը, որ Մամբրե էր կոչվում (Մամուշ գետի ափին), այնտեղ մնում են նրա բազմաթիվ հետևորդ-

¹ «Քրիստոս Աստուած, - գրել է, - բարեխաւսութեամբ ծնողի քո սուրբ Աստուածածնին Կուսիդ գտէր Մխիթար վարդապետն Այրիվանեցի դասատուէայ ընդ կամարար սիրելիսն քո» և այլն (ձեռ. № 582, էջ 44բ):

² «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին (1401-1450 թթ.), կազմ. Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 303-304:

³ Փավստոս Բուզանդ, V, ԻԷ, էջ 225:

ները. «Բազում եղբայրս միաբանս միահաւանս հաւատացեալս կրօնաւորս քրիստոնէից, լեռականս ճգնաւորս միանձունս»¹:

Եպիփանը պատկանում էր Հայոց եկեղեցու այն պաշտոնյաների թվին, որոնք Գինգ վարդապետի սնուցած աշակերտների նման շրջում էին Հայաստանի հեռավոր ծայրամասերում, հեթանոսներին դարձի բերում և քարոզում նոր կրոնի սկզբունքները: Ինչպես Բուզանդն է գրում, նրանք «ընդ բազում հեթանոս տեղիս շրջէին յաշխարհս հեռաւորս եւ ի սփիւռս հեթանոսաց դարձուցանէին զմոլորութիւն բազմաց եւ զբազում մարդիկ ածէին ի գիտութիւն կենաց եւ ի ճանապարհս ճշմարտութեան»²: Քարոզչական այս աշխատանքները կատարող պաշտոնյաները ոչ միայն քաջածանոթ պետք է լինեին քրիստոնէական վարդապետութեան սկզբունքներին, այլև պետք է կարողանային հաջողութեամբ վիճաբանել հեթանոսների հետ, հերքել ժողովրդի մէջ արմատավորված հնամենի հավատալիքներն ու առասպելները, ցույց տալ նոր կրոնի առավելութիւնները հնի նկատմամբ և այլն: Ներսեսի հարցման եպիփանի պատասխանը գրված է հենց այս նպատակով:

Պետք չէ տարակուսել, որ եղել են նման և ավելի ընդարձակ ու բովանդակալից այլ գրվածքներ ևս, որոնք, սակայն, ամենակուլ ժամանակի կեր են դարձել³:

Հայոց եկեղեցին իր սրբերի շարքում տեղ է հատկացրել մեր «Հարցման» հեղինակ եպիփան միայնակյացին և արաց ամսի 27-ին (փետրվարի 3) տոն կարգել եպիփանի և նրա ընկերակից Շաղիտայի հիշատակին:

6

Այժմ ծանոթանանք նորահայտ հարցման բնագրին՝ քաղելով Մաշտոցի անվան Մատենադարանի № 582 ձեռագրի 124բ-125ա էջերից.

¹ Նույն տեղում, V, ԻԸ, էջ 227:

² Նույն տեղում, VI, ԺԶ, էջ 275:

³ Մ. Մինասյանն իր վերոհիշյալ հոդվածում, ֆննադատելով Ն. Ադոնցին և Լ. Խաչիկյանին, գրում է. «Երկու բանասերներն էլ համակարծիք են, թե Հարցարանը քրիստոնէական վարդապետության ուսուցման տեսակետից շատ կարևոր, **համակողմանի, լրիվ ու անթերի** ձեռնարկ է եղել (այս ընդգծված բառերը Մինասյանն է հրամցրել Ադոնցին և տողերիս գրողին – Լ. Խ.): Սակայն հայ բանասիրությունը դեռևս չի հաստատել, թե հինգերորդ դարում գրվել են այսպիսի «հարցարաններ» («Համդէս ամսօրեայ», 1972, էջ 206):

Մի կողմ թողնելով նորաթուխ մեր բանասերի գրելաոճը՝ այսօր կարող ենք արձանագրել, որ հայ բանասիրությունն արդեն հաստատել է հեթանոսական հավատալիքների մասին ֆննադատական «հարց ու պատասխանների» գոյությունը հայոց գրերի գյուտից էլ առաջ:

**ՀԱՐՑՈՒՄՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ԵՊԻՓԱՆ
ՄԻԱՅՆԱԿԵԱՑ**

[Հարց]. Զի՞նչ են համբարում, եւ յուշկապարիկք, եւ նահանկք, եւ ծովացույք, եւ յարալէզք, եւ եղջիւրաբաղք, եւ քաղք, եւ պեւք, եւ խիպիլիկք, եւ պարիկք, եւ հանկիոք, եւ կադրիպիսք, եւ խադադիշք, եւ ձիացուք, եւ շիդարք, եւ շահապիտք, եւ վիշապք, եւ քաղք, եւ թէ այլ ինչ սոսկական անուանք ասին. եւ զայսոսիկ ազգի ազգի ասեն, եւ ծնունդք որպէս մարդկան:

Պատասխանի. Նախ զայս պարտ է գիտել, զի ոչ այլ բանական արարածք գոն, քան զհրեշտակս եւ զմարդիկ, որպէս Գիրք Սուրբք ասեն: Իսկ դեւք ապստամբեալք յԱստուծոյ եւ աստուածամարտք եղեալք՝ մեզ շարք եղեն առ ի մոլորեցուցանել եւ սոսկ անուամբք կերպ ի կերպս լինելով, զի որսայցեն զմարդիկ ի կորուստ: Իսկ անիմաստքն ի մարդկանէ այսպէս կարծեն, եթէ են ինչ նոքա, այլ սոքա ամենեւեան են դեւք անմարմինք եւ ոչ են ծնընդական. եւ ըստ որում կերպի երեւին եւ անուանին, զնոյն ի մարդկանէ համբարին. յաւերս քաղաքաց բնակելով դիւաց՝ յուշկապարիկք եւ համբարում անուանեցան: Իսկ ըստ հեթանոսական բարբառմանցն զծովացուցն ի ծովէ ասեն լեալ, եւ զպայն ի գետոց եւ զյարալէզն ի շանէ եւ զհանդիոն յիշոյ եւ զնահանկն ի ծովային ձիոյ: Եւ այս ոչ նշմարտութեան տեսակք, այլ հեթանոսական բաշաղմունք, զի եթէ կարող գոն կերպարանիլ ի հրեշտակ լուսոյ եւ երբեմն ի կերպս կանանց եւ սեւ արանց երեւին եւ այլ երբեմն ի կերպս գազանաց, զի՞նչ զարմանք են, թէ ուրեք յանընդել եւ յանտեսեալ կերպարանս երեւին եւ անուանին:

Դժվար է վերջնական խոսք ասել այս բնագրի ամբողջական կամ թերի լինելու մասին: Եթէ դատելու լինենք այն փաստից, որ Եպիփանն իր պատասխանը շարադրելիս չի անդրադարձել Ներսեսի հարցի մեջ առկա երևակայական բոլոր էակներին, այլ թվարկել է դրանցից միայն 5-ի անունները, կարելի է թերևս մտածել, որ գրվածքը թերի է հասել մեզ: Սակայն բացաված չէ և այն, որ, խոսելով մի քանիսի մասին ու մերժելով նրանց գոյությունը, Եպիփանն ավելորդ է համարել մեկ առ մեկ թվարկել Ներսեսի հարցման մեջ առկա անգո բոլոր էակներին, ուստի և բնագիրն ամբողջական է:

Հարևանցի քննությունն իսկ բերում է այն տեսակետին, որ փոքրիկ այս գրությունն ազգակից է Գրիգոր Պարթևի «Հարցմունքի» 14-րդ կետին:

Համոզվենք այդ բանում՝ զուգորդելով մի երկու նախադասութիւն.

Գրիգոր Պարթև

Նախ զայն տեսցուք, թէ գո՞ն այլ արարածք բանաւորք քան զհրեշտակս եւ զմարդիկ եւ զդեւս... եւ մարդկան (ըստ) կերպի երեւման անուանս եղեալ՝ կոչեն յուշկապարիկ, զոմն համբարու: Եւ նոյն ազդեցութեամբ դիւացն բարբաջեն մարդիկ, զծովացուլն ի կուսէ ասեն լեալ եւ զպայն ի գետոյ, եւ զառաւելզն ի շանէ, եւ զխանդիոն ի յիշոյ, եւ նահանգն ի ձիոյ: Եւ այս ոչ եթէ տեսակք ինչ, այլ անուանք եւ եթ են հեթանոսական կռապաշտիցն:

Եպիփան միայնակեաց

Նախ զայս պարտ է գիտել, զի ոչ այլ բանական արարածք գոն քան զհրեշտակս եւ զմարդիկ որպէս Գիրք Սուրբք ասեն: Իսկ դեւք ապրստամբեալ յՍատուծոյ... եւ ըստ որում կերպի երեւին եւ անուանին՝ զնոյն ի մարդկանէ համբաւին. յաւերս քաղաքաց բնակելով դիւաց՝ յուշկապարիկք եւ համբարուք անուանեցան: Իսկ ըստ հեթանոսական բաջաղմանցն զծովացուլն ի ծովէ ասեն լեալ, եւ զպայն ի գետոյ, եւ զյարաւելզն ի շանէ, եւ զհանդիոն ի յիշոյ, զնահանկն ի ծովային ձիոյ: Եւ այս ոչ ճշմարտութեան տեսակք, այլ հեթանոսական բաջաղմունք:

Այս երկու զուգակշիռ հատվածների նմանությունն այնքան ակնառու է, որ կարող է բացատրվել միայն այդ բնագրերի ազգակցությունը՝ միևնույն աղբյուրից կամ մեկը մյուսից բխած լինելով: Մենք հակված ենք մտածելու, որ Եպիփանն իր պատասխանը շարադրել է ձեռքի տակ ունենալով Գրիգոր Պարթևի «Հարցմունքը». նա իր աշխատանքը կատարել է տեղ-տեղ արտագրելով Գրիգորի 14-րդ պատասխանին՝ մասնակի լրացումներով ու փոփոխություններով: Նկատվող տարբերությունների մի մասը հավանաբար առաջացել է այն ժամանակ, երբ այդ զույգ բնագրերը տարբեր անձնավորությունների կողմից հունարենից թարգմանվել են հայերեն:

Եպիփանի պատասխանին, որը կարող է օգտակար լինել Գր. Պարթևի «Հարցմունքի», ուստի և նրա հետ առնչվող «Եղծ աղանդոցի» համապատասխան հատվածների գիտական քննության համար¹, հայ ժողովրդի հնամենի հավատալիքների ուսումնասիրությանը նպաստող նոր տվյալներ

¹ Գր. Պարթևի «Հարցմունքի» և Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» մեջ, օրինակ, ասված է, որ ծովածույր կովից է առաջանում և ծովակում բնակվում. «Հարցմունքի» մի այլ հատվածում գրված է, որ «զծովացույն ի կուսէ ասեն լեալ»: Ներսեսի և Եպիփանի նորահայտ «Հարցումի» մեջ, սակայն, ծովացույի ծագման մասին գրված է այսպես. «զծովացույն ի ծովէ ասեն լեալ»: Ըստ այդմ ունենք «ի ծովէ», «ի կովէ» և «ի կուսէ». սրանցից մեկը («ի կուսէ») կամ երկուսը (նաեւ «ի կովէ») աղետաման արդյունք կարող են լինել և այլն: Բնագրագիտական այս կարգի հարցերն արժանի են ավելի հանգամանալից քննության:

չի պարունակում: Այս առումով շատ ավելի հետաքրքրական է Ներսեսի հարցը, որի մեջ, այլ աղբյուրներից ևս հայտնի երևակայական էականներից բացի, հիշատակված են նաև խաղաղիչ և կադրիպիս նորալուր անունները, ինչպես և տրված են արդեն հայտնի անունների այլակերպ տառադարձված ձևեր. օրինակ՝ հանդիո (Գ. Պարթևի «Հարցմունքի» մեջ գրված է խանդիո կամ խանդիուն) և պել- (հավանաբար պայ անվան փոփոխական է): Պև բառը «գեւ, սատանայ, հրեշ» իմաստով գործածական է եղել Արարատյան գավառի որոշ բնակավայրերում մինչև վերջին ժամանակներս¹:

Հայ հին մատենագրության ինքնուրույն և թարգմանական գրվածքների մեջ հիշատակվում են շուրջ երեք տասնյակ երևակայական էականների անուններ: Դրանցից շատերի մասին գոյություն ունեցող մատենագրական տվյալներն արդեն ի մի են բերված Ղ. Ալիշանի «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց» մեծարժեք աշխատության մեջ, սակայն այս ուղղութեամբ որոնումները պետք է շարունակել²: Եվ երբ հավաքված մատենագրական նյութն ուսումնասիրվի բանահյուսական և ազգագրական տվյալների, ինչպես նաև միջնադարյան հայկական ձեռագրերի լուսանցքներում նկարված տարատեսակ առասպելական կենդանիների պատկերների համադրությամբ (անշուշտ, հաշվի առնելով նաև հարևան ժողովուրդների միջավայրից քաղված ազգագրական տվյալները), ապա հնարավոր կլինի ինչ-որ չափով բացել այն թանձր վարագույրը, որ ծածկում է մեր հայացքից հեթանոս հայերի ժողովրդական հավատալիքների ինքնատիպ աշխարհը:

7

Հայոց այբուբենի գյուտից անմիջապես հետո Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը իրենց ավագ աշակերտների գործակցությամբ եռանդուն աշխատանք ծավալեցին քրիստոնեական հավատքի Սուրբ Գրքերը և եկեղեցական հայրերի կարևորագույն ստեղծագործությունները հունարեն և ասորերեն լեզուներից հայերեն թարգմանելու համար: Ընդամենը մի քանի տասնամյակների ընթացքում ոսկեդարյան կոչվող հայերենով թարգմանվեցին

¹ Տե՛ս Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 555: Հ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան (Էմինյան ազգագրական ժողովածու, Թ.), Թիֆլիս, 1913, էջ 906:

² Թե որքան արգասավոր կարող են լինել դրանք, երևում է թեկուզ այն փաստից, որ հենց միայն Թեոն Աղեհսանդրացու «Յաղագս նարտասանական կրթութեանց» քարգմանական բնագիրը (Հ. Մանանդյանի աշխատասիրությամբ հունարեն բնագրի հետ մեկտեղ տպագրված է 1938 թ. Երևանում) պարունակում է հնամենի հավատալիքների ուսումնասիրությանը նպաստող հետևյալ անունները. **Խաժ** (բերված է որպես հոմանիշ Γλαυκος դիցանվան, որը ծովայինների ու ձկնորսների Աստվածն է համարվել), **Չոհկադև** (Πύθιος), **Պարիկ** (Κένταυροι) և **Հայկ** (Γίγαντες):

Հովհան Ոսկեբերանի, Սեբերիանոս Եմեսացու, Բարսեղ Կեսարացու, Կյուրեղ Աղեքսանդրացու, Եվսեբիոս Կեսարացու, Եփրեմ Ասորու, Կյուրեղ Երուսաղեմացու, Եվագր Պոնտացու, Ափրատ Զգոն Պարսկի, Իգնատիոս Անտիոքացու, Եվթաղի և շատ ու շատ հեղինակների կարևորագույն աշխատությունները:

Եվ եթե մեր թարգմանիչների ուշադրության կենտրոնում էին գտնվում քրիստոնյա աշխարհում ճանաչում գտած օտարազգի մատենագիրների աստվածաբանական տարբեր հարցերի մասին գրած աշխատությունները (մեկնություն, ճառ, խրատ, վկայաբանություն, պատմություն և այլն), անկարելի է մտածել, որ նրանք առավել ջանասիրությամբ չեն դիմել իրենց հայրենի երկրում ապրած ու ստեղծագործած հեղինակներին, որոնք հայերեն գրերի ստեղծումից առաջ իրենց աշխատությունները ստիպված շարագրում էին օտար լեզուներով՝ հունարեն կամ ասորերեն:

Անվանի հայագետ Նորայր Բյուզանդացին, բնագրագիտական զարմանալի մանրակրկիտ աշխատանք կատարելով, կարողացել է բացահայտել Կորյունի բաժինը ոսկեդարյան թարգմանական գրականության մեջ: Նույն բնույթի ուսումնասիրությունները շարունակելով՝ հնարավոր կլինի ինչ-որ շափով որոշել նաև Մաշտոցի ու Սահակի և նրանց մերձավոր գործակիցներ Եզնիկի, Հովսեփի, Արձանի և մյուսների ավանդը հայ թարգմանական գրականության մեջ:

Բանասիրական այս կարևոր խնդրի լուծման գործին նպաստելու են նաև Գրիգոր Պարթևի կանոններն ու «Հարցմունքը», Մակար Երուսաղեմացու Հայաստան առաքած թուղթը և վերջապես՝ Ներսէս Մեծի ու Եպիփան միայնակյացի մեր այս հոգվածով գիտական շրջանառության մեջ դրվող «Հարցումը»: Այդ երկերը բացառիկ արժեք ունեն որպես IV դարում օտար լեզուներով ստեղծված հայ գրականության առ մեզ հասած մասունքներ և մանավանդ որպես հին հայերենով գրի առնված ու անաղարտ վիճակով պահպանված անդրանիկ ստեղծագործություններ¹:

¹ Այդ կարգի երկերի ցանկը նոր ուսումնասիրությունների ճանապարհով առաջիկայում կարելի է նոխացնել: Մասնավորապես ուշադրություն են գրավելու V դարում շրջանառության մեջ դրված վարձագրական հուշարձանները, որոնց մեջ, անտարակույս, կան ամբողջությամբ կամ մասամբ մինչև գրերի գյուտը հորինված և հետո միայն հայերենի թարգմանված նմուշներ: Հենց այժմ կարելի է նշել, որ այդ կարգի երկերից է Քաղեոս առաքյալի ու Սանդուխտ կույսի վկայաբանությունը, որը հայերեն է թարգմանել Սամուել անունով մի եպիսկոպոս: Մրան իրավամբ նույնացնում են Մաշտոցի աշակերտ, վրաց եպիսկոպոս Սամուելի հետ՝ համարելով մեր առաջին թարգմանիչներից մեկը (տե՛ս Ն. Անդրիկյան, Սանդուխտի վկայաբանության թարգմանիչը, «Բագմավեպ», 1907, էջ 60-61. Վ. Հացունի, Կարևոր խնդիրներ..., Վենետիկ, 1927, էջ 34-35. Ա. Զամինյան, Պատմ. հայ գրակ., Ա, էջ 85 և այլն):

ԳՐԻԳՈՐ ՊԱՐԹԵՎԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ «ՀԱՐՅՈՒՄԸ» ՈՐՊԵՍ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԱԽԱՅՐԻՔ¹

1

Հայ մատենագրութեան հնագույն արտադրանքների շարքում իր պատվավոր տեղն ունի Եզնիկ Կողբացու իմաստասիրական աշխատությունը, որը բանասիրութեանը հայտնի է «Եղծ աղանդոց» խորագրով:

Այն գրավել է և շարունակում է գրավել հայ ու օտարազգի գիտնականների ուշադրությունը՝ որպես հայ դասական լեզվի անգերազանցելի հուշարձան և հայ իմաստասիրական գրականության առաջին ինքնուրույն երկասիրություն:

Եզնիկի ուսումնասիրողները զբաղվել են նրա աղբյուրների հարցով և առ այսօր հայտնաբերել 10-ից ավելի երկեր, որոնց հունարեն բնագրերը, հաճախ ընդարձակ ու բառացի մեջբերումներով, տեղ են գտել Եզնիկի գործի մեջ:

Դեռևս 1889 թվականին «Բազմավէպի» էջերում հրատարակած «Եզնիկ եւ իւր երկասիրութիւնն» հոդվածում Հ. Թորոսյանն անվիճելի փաստերով ապացուցեց, որ Եզնիկի Գ գրքի Դ-ն հատվածները, որոնցում քննարկվում են պլուրազոդների, պլատոնականների, ստոիկյանների, եպիկուրյանների և այլոց ուսմունքները², բառացի քաղված են Եպիփան Կիպրացու «Ընդդէմ հերձուածոց» գրքից³:

Արժեքավոր էին նաև Հ. Թորոսյանի դիտողությունները Եզնիկի և Բարսեղ Կեսարացու «Մեկնութիւն վեցօրէից» աշխատության առնչությունների մասին⁴:

Հ. Թորոսյանն իր ապացույցները բերում էր Եպիփանի լատիներեն թարգմանությունից: Քիչ անց, 1892 թվականին, նույն աշխատանքը, այս անգամ արդեն համեմատելով Եզնիկի Գ գրքի Դ, Ե և Դ գրքի ժՁ հատվածները (1826 թ. հրատարակություն, էջ 204, տող 6-208, տող 2, 296, տող 18-297, տող 15) Եպիփանի հունարեն բնագրի համապատասխան հատվածների հետ, կատարեց Հ. Տաշյանը՝ «Խոսրովիկ եւ Գիրք հերձուածոց» հոդվածում⁵:

¹ «Բանբեր Մատենադարանի», 1964, № 7, էջ 301-330:

² Եզնիկ, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 204-208:

³ «Բազմավէպ», 1889, էջ 315-317:

⁴ [Այդ խնդիրն այժմ ֆինանսաված է նաև Կիմ Մուրադյանի «Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ» գրքում (Երևան, 1976, էջ 205-209): Խմբ.]:

⁵ «Համդէս ամսօրեայ» 1892, էջ 294-295, 321-322:

1919 թվականին լույս տեսավ Գ. Գալեմբյարյանի «Նորագոյն աղբերք եզնկայ Կողբացոյ Ընդդէմ աղանդոց մատենին» արժեքավոր աղբյուրագիտական ուսումնասիրությունը, որով երևան հանվեցին եզնիկի հետևյալ նոր աղբյուրները.

1. Արիստիդես Աթենացու (II դար) «Ջատագովութիւնը»,

2. Բարսեղ Կեսարացու (IV դար) «Վեցօրէից մեկնութիւնը»,

3. Մեթոդիոս Պատարացու կամ Օլիմպիացու (մ.հ. 312 թ.) «Վասն անձնիշխանութեան» աշխատությունը,

4. Հիպպոլիտոսից (III դար) մի փոքրիկ հատված:

Գեմ-դիմաց հրատարակելով Մեթոդիոսի «Վասն անձնիշխանութեան» աշխատության հունարեն և եզնիկի հայերեն համապատասխան հատվածները, որոնք «Եղծ աղանդոցի» 1826 թվականի հրատարակության 44 էջերի նյութն են կազմում՝ Գալեմբյարյանը գրում է. «Տեսնուեցաւ ուրեմն, որ եզնիկ ս. Մեթոդիոսի «Վասն անձնիշխանութեան» գիրքն ամբողջ, ի բաց առեալ Ա եւ Բ հատուածները, ինչ-ինչ փոփոխութեամբ՝ մինչեւ վերջը թարգմանած եւ իւր գործոյն մէջ տեղաւորած է. այսինքն՝ առաջին մեծ մասն Ա գրքին մէջ՝ 40 երես ի տպագրութեան (էջ 19-58) եւ վերջին մասն Գ գրքին մէջ՝ իբր 4 երես (էջ 236-239)»¹:

Եզնիկի փոխառած հատվածների համեմատությունը Մեթոդիոսի բնագրի հետ՝ հնարավորություն են տվել որոշելու մեր հեղինակի աշխատանքի մեթոդը: Լսենք դարձյալ Գալեմբյարյանին. «Եզնիկ, - գրում է նա, - իւր աղբեր այնպէս ստրկօրէն կապուած է, որ կաշխատի առ հասարակ շշեղել աղբերէն: Աղբերէն շեղումներն, որոնց տեղ-տեղ հանդիպեցանք, են. ա) յապաւել, թողուլ այն մասերն, որ հուզուած խնդրոյն էապէս չեն վերաբերիր, այլ տրամախօսական ձեւին... բ) յաւելուլ, որ միջոցին եզնկայ տկարութիւնը երեւան կ'ելլէ, վասն զի յաւելուածներն ամէնքը կրկնութիւն կամ մեկնութիւն են... արդէն ըստուածներուն»²:

Իրավացի էր Գալեմբյարյանը, երբ գրում էր, թե կան հիմքեր ենթադրելու, որ եզնիկի «գրութեան մէջ ուրիշ աղբիւրներ ալ ծածկուած պիտի ըլլան» (էջ 87):

Լ. Մարիեսն իր «Le De Deo d'Eznik de Kolb connu sous le nom de "Contre les sectes"» (Paris, 1924) աշխատությամբ եզնիկի աղբյուրների

¹ Գ. Գալեմբյարյան, Նորագոյն աղբերք եզնկայ Կողբացոյ Ընդդէմ աղանդոց մատենին, Վիեննա, 1919, էջ 80:

² Նույն տեղում, էջ 87:

ցանկն ավելացրեց Որիգենի, Դիոդորի, Ադամանտիոսի, Եփրեմ Ասորու, Իրինեոսի և այլոց անուններով:

Նշանավոր հայագետ Ն. Ադոնցը Մարիեսի աշխատության առթիվ գրած «Քննական նշմարներ եզնիկի մասին» ուշագրավ հոդվածաշարում¹, ֆրանսիացի հայագետի աշխատության գլխավոր արժանիքը համարում է հենց նոր աղբյուրների հայտնաբերումը՝ նշելով միաժամանակ, որ եզնիկի և այս կամ այն հեղինակի նմանությունների մի մասը կարող է ընդհանուր գուգադիպումների արդյունք լինել՝ երկուստեք կապ ունենալով մի ընդհանուր մայր աղբյուրի հետ²:

2

Եզնիկի առաջին գրքի ԺԵ-ԻԷ հատվածները շատ բարձր են գնահատվում Ադոնցի կողմից: Դրանք, - գրում է նա, - «ժողովրդական կենդանի միջավայրից առած թանկագին նյութեր են, որ բերում է եզնիկն ու լուսաբանում պայքարելով հին տեսությանց հետ, հայ ժողովրդի հավատալիքների և պաշտամունքների աշխարհին վերաբերյալ հնավանդ տեղեկություններ են, շողուն գոհարներ հայ ֆոլկլորի, որ փայլում են եզնիկի էջերում»³:

Խոստանալով այդ նյութերի ուսումնասիրությունը կատարել առանձին հոդվածով Ն. Ադոնցն անհրաժեշտ է համարում նշել, որ եզնիկի վերոհիշյալ էջերը «քաղվածո բնավորություն ունին, և բացի արդեն հայտնի աղբյուրներից, ինչպես օր. Հիպոլիտը, եզնիկն օգտվել է նաև մի հին հիշատակարանից, որ կոչվում է «Հարցումն և պատասխանիք սրբոյն Գրիգորի Պարթևի»: Սորան է պարտական եզնիկն մանավանդ հայ ֆոլկլորի վերաբերյալ թանկարժեք նյութերը»⁴:

Եզնիկի աղբյուր համարված «Հարցումն և պատասխանիք» այդ «հին հիշատակարանը», բնագրի ֆրանսերեն թարգմանության և ուսումնասիրության հետ միասին, Ն. Ադոնցը լույս ընծայեց իր խոստումից անմիջապես հետո՝ «*Révue de l'Orient chrétien*» պարբերականում⁵: Այստեղ ասված է,

¹ Տե՛ս «Բազմավեպ», 1925, № 7, էջ 196-200, № 10, էջ 294-298, № 12, էջ 366-371, 1926, № 1, էջ 12-17, № 3, էջ 69-72, № 4, էջ 108-113:

² «Բազմավեպ», 1925, էջ 294-295

³ Նույն տեղում, էջ 366

⁴ Նույն տեղում, էջ 366-367

⁵ Adontz N., Le questionnaire de saint Grégoire l'illuminateur et ses rapports avec Eznik (*Révue de l'orient chrétien*. Troisième série, tome V (XXV), 1925-1926, № 3, 4, p. 309-357)

Այս աշխատության ուսումնասիրական բաժնի հեղինակի իսկ կատարած թարգմանությունը լույս տեսավ «Հայրենիք» ամսագրում (1928, № 7, էջ 72-81):

որ խնդրո առարկա բնագիրը հրատարակվում է էջմիածնի մատենադարանի 4 ձեռագիր կանոնագրքերի հիման վրա: Տարիներ առաջ (հավանաբար մինչև 1913 թ.) Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան) ուղարկված է եղել Պետերբուրգ՝ Ն. Ադոնցին Մատենադարանի № 751 (այժմ 659) ձեռագրում առկա Գրիգոր Պարթևի «Հարցման» ընդօրինակությունը մի տետրակով, որի լուսանկարներում նշված են եղել 3 այլ ձեռագրերի ընթերցվածքները¹: Դրանց հաշվառմամբ Ադոնցը կազմել է բաղդատական բնագիր՝ տողատակում նշելով ձեռագրական (ըստ մեծի մասի աննշանակ) տարընթերցվածները:

Հրատարակությանն առընթեր ուսումնասիրության մեջ անվանի հայագետը կրկին առիթ է ունենում անդրադառնելու ուշագրավ այդ բնագրի և Եզնիկի առնչությունների հարցին և հանգում է այն եզրակացության, որ մեծ հավանականությամբ «Գրիգորի Հարցումը հնուկյան հազվագյուտ բեկոր է, որ իր ժամանակին մտել, կլանվել է գրեթե ամբողջովին Եզնիկի գործի մեջ, բայց դիպվածով պահել է և իր անհատական գոյությունը՝ թաքնվելով կանոնագրքի ծալքերում»²:

Ի նպաստ այս եզրակացության՝ բերվող ծանրակշիռ փաստերն ու դատողությունները մանրամասնորեն շարադրված են Ն. Ադոնցի ուսումնասիրության մեջ, ուր և հղում ենք ընթերցողին³: Մեր կողմից, սակայն, լրացման կարգով անհրաժեշտ ենք համարում նոր փաստեր մեջբերել:

Եզնիկի աղբյուրներից շատերը տրամախոսական կառուցվածք են ունեցել: Այդպիսին են, օրինակ, Մեթոդիոս Օլիմպիացու «Վասն անձնիշխանութեանը», Ադամանտիոսի «Յաղագս ուղիղ հաւատոյ յԱստուածը» և այլք:

Ըստ որում, ինչպես նկատել է Գ. Գալեմքյարյանը՝ ուսումնասիրելով Մեթոդիոսից Եզնիկի արված քաղվածքները, «Եղծ աղանդոցի» հեղինակն ամեն կերպ ձգտել է փոխել իր աղբյուրի տրամախոսական ձևը («Եզնիկ, - գրում է նա, - յուր աղբյուրը բոլորովին կը լռե և կ'աշխատի ամենայն եղանակով յուր աղբեր տրամախոսական ձևը ջնջել»)⁴:

Նշենք այստեղ, որ Ադոնցին ծանոթ չեն եղել իր հրատարակած բնագրի այն հատվածները, որոնք տպագրվել են դեռևս 1873 թվականին Ա. Մխիթարյանի կողմից (տե՛ս «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցոյ՝ հանդերձ կանոնադրութեամբ ի պէտս ժառանգատուաց, աշխատասիրեալ Աբել արհեպիսկոպոս Մխիթարեանց, ի Վաղարշապատ», 1874, էջ 23-24, նույնը նաև՝ «Արարատ», 1873, էջ 408-409):

¹ Այդ ձեռագրերն են՝ B - № 761 (այժմ № 778), C - № 458 (ըստ Գևորգյան ցուցակի՝ այժմ № 2886), D - № 749 (այժմ № 657):

² «Հայրենիք», 1928, № 7, էջ 73:

³ “Revue de l’Orient chrétien”, tome V (XXV), 1925-1926, № 3 et 4, p. 341-349. «Հայրենիք», 1928, № 7, էջ 74-78:

⁴ Գ. Գալեմքյարյան, նույն տեղում, էջ 86:

Ճիշտ նույն պատկերն ենք ստանում համեմատելով «Հարցումի» ու Եգնիկի զուգակշիռ հատվածները: «Հարցումի» մեջ կան այսպիսի տողեր. «Հարցումն. Մեղաւորք վասն մեղաց տանջին, իսկ տղայոց անմեղաց զի՛ տիրիցեն դէք. Պատասխանի. Զամենայն մարդ յորդեգրութիւն կոչէ Աստուած...» և այլն:

Այս նույն հատվածը Եգնիկի գրչի տակ ձևափոխվել ու ստացել է այսպիսի կերպարանք. «Այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց, թէ մեղաւորք վասն մեղաց տանջիցին ի դիւացն, տղայոցն անմեղացն ընդէ՞ր տիրիցեն դէք: Զամենայն մարդիկ յորդեգրութիւն կոչէ Աստուած...» և այլն:

Ինչպես պարզ երևում է, առաջին աղբյուրում տրված է հարց և ապա նրա պատասխանը, իսկ Եգնիկի մոտ կա միայն ակնարկ այն մասին, որ «այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց». «Հարցումի» տրամախոսական կառուցվածքի փոփոխության դեպքում միայն՝ շարադրությունը կարող էր ստանալ այսպիսի կերպարանք:

Այս կարգի փոփոխությունները շատ են: Ծանոթանանք մի քանիսին.

«Հարցումն»

Եգնիկ

Հրց. Դիւահարութեան պատճառ զի՞նչ է մարդկան.

- Եւ դիւահարութիւնք վասն հպարտութեան մարդկան լինին...

Պախ. Վասն հպարտութեան մարդկան լինի...

- Եւ արդ, քանզի անմարմինք են հրեշտակք եւ դէք, յայն սակս եւ ծնունդք ոչ գոն նոցա... Նախ զայն տեսցուք, թէ բնաւ գուցե՞ն այլ ինչ արարածք բանաւորք քան զհրեշտակս եւ զմարդիկ եւ զդէս...

Հրց. Ծնունդք են դիւաց եւ մահ, աճեն եւ պակասեն:

Պախ. Նախ զայն տեսցուք, թէ գո՞ն այլ արարածք բանաւորք քան զհրեշտակս եւ զմարդիկ եւ զդէս...

Հրց. Ասեն քաջաց եւ վիշապաց տեարք (իմա՛ տաճարք) են ի լերինս բարձունս և բնակութիւնք, եւ զԱղէքսանդր կապեալ ունին ի Հոռոմ եւ զԱրտաւանդ ի Մասիս եւ զԱրուանդ ի գետս եւ ի մառանս.

- Եւ ոչ որս երբէք՝ որպէս մարդկան՝ արարեալ վիշապաց, կամ առնիցեն. եւ ոչ տաճարք իբրեւ մարդկան են նոցա ի բնակութիւն: Եւ ոչ զոք ի թագաւորազգեաց եւ ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի, զի կենդանիք ի մարմնաւորաց երկուն եւեթ կան, ենովք եւ Եղիա...

Պախ. Յորդոց մարդկան կենդանի են ենովք եւ Եղիայ...

Զուգակշիռ այս հատվածները նույնպես վկայում են այն մասին, որ սկզբնաղբյուրը «Հարցումն» է. եզնիկը ջանք է թափում փոխելու իր աղբյուրի տրամախոսական կառուցվածքը՝ հարմարեցնելով այն իր երկասիրության ձևին: Ուշագրավ է հատկապես բերված օրինակներից վերջինը. «Հարցումի» հեղինակն այդ հատվածում հիշատակում է քաջերի ու վիշապների կողմից արգելափակված առասպելական հերոսներին (Աղեքսանդր, Արտավազդ, Արուանդ), իսկ եզնիկը անունները չի տալիս, բայց ակնարկում է նրանց «ոչ ոք ի թագաւորազգեսց եւ ի դիւցազանց» արտահայտությամբ:

«Հարցումի» սկզբնաղբյուր լինելը հաստատվում է նաև հետևյալ փաստով. եզնիկի «զծովացուն, գոր ի կովէ ելեալ ասեն եւ զպայն՝ իմն ի մարդկանէ եւ զառլէզն՝ ի շանէ» նախադասության սկզբնագրում, այսինքն՝ «Հարցումի» մեջ, այն շարունակված է «եւ զխանդիոն ի յիշոյ եւ զնահանգն ի ձիոյ» բառերով: Խանդիոն նորալուր առասպելական կենդանու անունը չի գործածված հայ մատենագրության որեւէ այլ հուշարձանում: Հայ աղբյուրները, որոնց շարքում նաև եզնիկը, անտեղյակ են կամ լռում են այն մասին, որ նահանգը ձիու հատկանիշներով է պատկերացվել ժողովրդի կողմից, ուստի և «Հարցումի» հեղինակն այդ տվյալները չէր կարող քաղած լինել եզնիկից, իսկ եզնիկը կարող էր այս կամ այն պատճառով չմեջբերել իր աղբյուրի վերոհիշյալ հատվածն ամբողջությամբ, ինչպես նա վարվել է մի շարք այլ դեպքերում ևս:

Կարևոր է նաև հետևյալ փաստի մատնանշումը. եզնիկի մեջբերումներն Աստվածաշնչից համապատասխանում են մեզ հասած բնագրին, սակայն «Հարցումի» հեղինակն ամենայն հավանականությամբ իր ձեռքի տակ ունեցել է Հին և Նոր Կտակարանների թարգմանության հնագույն մի օրինակ, որն իր որոշ մասերում ունեցել է շոշափելի տարբերություններ:

Այսպես օրինակ՝ եզնիկը մեջբերում է Պետրոսի առաջին թղթի Գ գլխի 18-րդ համարը ճիշտ այնպես, ինչպես գտնում ենք մեզ հասած Աստվածաշնչի օրինակներում՝ «Արդարն հազիւ կեցցէ, ամբարիշտն եւ մեղաւորն ու՛ր գտանիցին» ձևով (էջ 83):

Սակայն «Հարցումի» մեջ այդ նույնը բերված է այլ խմբագրությամբ. «Արդարն հազիւ կեցցէ, իսկ ամպարիշտն ու՛ր ապրի»:

Եզնիկն, իհարկե, կարող էր փոխել իր աղբյուրի մեջ եղող աստվածաշնչյան հատվածը՝ համապատասխանեցնելով այն Յոթանասնից թարգմանության հունարեն բնագրի հիման վրա Աստվածաշնչի նախնական թարգմանության իր իսկ մասնակցությամբ կատարված խմբագրությանը. իսկ հակառակը պատկերացնել դժվար է. «Հարցումի» հեղինակը չէր կարող եզ-

նիկի ճիշտ մեջբերումը Աստվածաշնչից քմահաճորեն փոխել¹: Վերոհիշյալ փաստերը բավարար են՝ համոզվելու համար, որ «Հարցումն» է սկզբնաղբյուրը «Եղծ աղանդոցի» համապատասխան հատվածների:

3

Ե՛րբ է ստեղծվել Գրիգոր Պարթևին կամ Լուսավորչին վերագրված այս արժեքավոր երկը: Այս հարցը, բնականաբար, հուզել է Ն. Ադոնցին: «Բազմավէպում» հրատարակված վերոհիշյալ այս հոդվածաշարում այդ կապակցությունը նա գրել է. «Արդյոք հնարավո՞ր է հայ ֆուկլորի թանկագին էջերը պարունակող «Հարցումն Գրիգորի» հիշատակարանը, որ աղբյուր է ծառայել Եղծ աղանդոցին, տանել և գետեղել հայ դպրության արևածագին»²:

Որոշակի պատասխան Ն. Ադոնցը խուսափել է տալ՝ հայտնելով, որ դրանք «դժվար հարցեր են՝ սերտորեն կապված հայ դպրության ծագման բարդ հարցին»³: Այնուամենայնիվ նրա մտորումների ուղղությունը պարզ է դառնում ստորև մեջբերվող արտահայտությունից. «Խոստովանելու է, որ Եզնիկն ավելի բախտավոր վիճակի մեջ չէ, քան Փավստոսը, Եղիշեն, Հաճախապատումը, Ագաթանգեղոսը, և գտնվում է նրանց հետ միևնույն ցանցի մեջ»⁴:

Մշուշապատ է ասված, բայց հասկանալի. Ն. Ադոնցի կարծիքով ուրեմն՝ ինչպես Փավստոսի, Եղիշեի, Ագաթանգեղոսի պատմագրական երկերի ու «Յաճախապատում ճառքի», այնպես էլ Եզնիկի «Եղծ աղանդոցի» ստեղծման ժամանակի խնդիրը կարոտ է նոր լուսաբանությունների: Այդ երկերը, Ադոնցի կարծիքով, ավելի ուշ ժամանակի ստեղծագործություններ են, քան ընդունվում են միջնադարյան ավանդույթով: Ըստ այդմ էլ «Հար-

¹ «Հարցումի» մեջ Աստվածաշնչից արված ֆալսաժֆները տարբերվում են հայկական թարգմանության կանոնական բնագրից նաև մի քանի այլ դեպքերում. Գուկասի ԻԲ 31 համարը՝ «Սատանայ խնդրեաց զձեզ խարբալել», «Հարցումի» մեջ վկայակոչված է միանգամայն տարբեր թարգմանությամբ. «Խնդրեաց սատանայ մաղել զձեզ» (մաղել *փխ* խարբալել):

Երբայեցոց թղթի Ժ 26 համարը նույնպես այլ խմբագրությամբ է մեջբերված «Հարցումի» մեջ: Կանոնական բնագրում այդ հատվածն այսպես է. «Կամակար մտոօ էթէ յանցանիցեմք յետ ընդունելութեան գիտութեան **ճշմարտութեանն**, այնուհետև **ոչ ես պիտոյ է** վասն մեղաց պատարագ»: Ընդգծված **ճշմարտութեան** բառը բացակայում է «Հարցումից», իսկ **ոչ ես պիտոյ է**-ի դիմաց այնտեղ գրված է՝ **անազուտ է**:

² «Քաղվածք», 1926, էջ 13:

³ Նույն տեղում, էջ 13:

⁴ Նույն տեղում, էջ 72:

ցումը»՝ եզնիկի աղբյուրը, չի կարող, իբր, ստեղծված լինել «հայ դպրության արևածագին»:

Մեր կարծիքով, սակայն, որևէ (և՛ գաղափարական, և՛ լեզվական) հիմք չկա կասկածելու, որ «Հարցումը» հայ դպրության արևածագի ջերմ շողերից է. ավելին՝ այն կարող է գրված լինել հենց այն ժամանակ, երբ հայ հեթանոսական հավատալիքները, ժողովրդական լայն խավերի շրջանում շատ կենսունակ լինելով, վտանգ էին ներկայացնում եկեղեցու համար ու թելադրում Հայ եկեղեցու պետերին գաղափարապես զինվել ու պայքարել նրանց դեմ: Իսկ գաղափարական այդ պայքարի համար պարարտ հող կար հենց «հայ դպրության արևածագին»:

Ելնելով այս մեկնակետից՝ հաջորդ պարբերությամբ մենք փորձելու ենք շարադրել մեր մտորումներն այն մասին, թե ով կարող է լինել «Հարցումի» հեղինակը:

4

Ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու, ձեռագրերը Գրիգոր Պարթևին կամ Լուսավորչին են վերագրում «Հարցումի» հեղինակությունը. խնդրո առարկա բնագրի ցանկը կանոնադրված կրում է «Յանկ կանոնաց Լուսավորչին» խորագիրը, իսկ բուն բնագիրը՝ «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթևի. դարձեալ հարցումն ու պատասխանիք նորա»:

Հանրահայտ է, որ այս կամ այն աշխատության հեղինակությունը բարձրացնելու մտահոգությամբ միջին դարերում Գրիգոր Լուսավորչին են վերագրել այլևայլ բոլորն էլ անհարազատ գործեր¹:

Ուստի «Հարցումի» հեղինակի որոշման ուղղությամբ աշխատելիս, առաջին հերթին ուշադրություն պետք է դարձնել գրերի գյուտից մինչև «Եղծ աղանդոցի» շարադրման քառասնամյա շրջանի խոշորագույն հայ մատենագիրների վրա. այդ քառասնամյակին մենք շունենք մատենագիրներ, որոնք խիզախեին մրցման մեջ մտնել Սահակ Պարթևի կամ Մեսրոպ Մաշտոցի հետ:

Սահակը եղել է հայ ամենաբեղմնավոր թարգմանիչներից մեկը: Մաշտոցի և նրա աշակերտների մասնակցությամբ նա թարգմանել է Հին և Նոր Կտակարանների գրեթե բոլոր գրքերը, ինչպես նաև ծիսական, աստվածաբանական և դավանաբանական մի շարք բնագրեր. «Երանելոյն Սահակայ - գրում է այդ մասին Կորյունը, - գեկեղեցական գրոց գումարութիւնն կան-

¹ Տե՛ս Գ. Զարպհանալյան, Հայկական հին դպրության պատմություն, Վենետիկ, 1886, էջ 174-180:

խաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ եւ բազում եւս զհայրապետաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն»¹:

Միաժամանակ Սահակը հեղինակել է ինքնուրույն գործեր՝ կանոններ², դավանաբանական թղթեր և հոգևոր երգեր: Նրա անունով մեզ հասած կանոնխմբերից երրորդի («Նորին Սահակայ, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն վանաց») վերջին հատվածը (որ սկսվում է «Ազապն, որ մասնականաւ է, կէս կաշոյն երթիցէ ի վանս...» բառերով) «Հարցումի» հնագույն ձեռագրում (1368 թ.) անջատված է կանոնխմբից, ընդօրինակված է նրանից էջեր հետո՝ վերագրվելով Գրիգոր Լուսավորչին (ձեռ. № 659, էջ 261բ):

Ուշագրավ է, որ հենց նույն ձեռագրում այդ կանոնխումբը կրում է բոլորովին տարբեր ու հետքննելի այսպիսի խորագիր՝ «Սահմանադրութիւն կարգաց՝ ընկալեալ ի նահատակէն տեառնէ Գրիգորէ. թարգմանուեցաւ ի ձեռն Եզնկայ, հրամանաւ երանելոյն Սահակայ եպիսկոպոսապետին Հայոց եւ նորին աթոռակցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն վանաց» (ձեռ. № 659, էջ 227բ):

Այլ ձեռագրերում (որոնց հիման վրա կատարվել է «Կանոնգրքի» Ա. Ղլտճյանի հրատարակութունը) այս հիշատակարան-խորագիրը առանց Եզնիկ-Թարգմանչի անվան հիշատակության և փոքր ինչ ձևափոխված խմբագրութեամբ դրված է կանոնխմբի վերջում³:

Մրա կապակցութեամբ մեծանուն հայագետ Մ. Աբեղյանը ամենայն իրավամբ գրել է. «Այս հիշատակարանն անպայման հետագայի գրութուն

¹ Կորիւն, Վարդ Մաշտոցի, Երևան, 1941, էջ 76:

² Նրա անունով «Կանոնգիրք Հայոցի» մէջ պահպանվել են հետևյալ 6 կանոնախմբերը. ա. Սրբոյն Սահակայ հայրապետի, յաղագս ֆոնտայիսկոպոսաց, թէ որպէս պարտ է զկարգն հաստատուն պահել յեկեղեցիս.

բ. Նորին կարգ ֆահանայից առ ժողովրդականս եւ նոցին ժողովրդականաց հնազանդութիւն եւ կարգ ուղղութեան առ ֆահանայս.

գ. Նորին սուրբ Սահակայ, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն վանաց.

դ. Նորին Սահակայ, թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց ունել զընտանիս սրբոյ եկեղեցւոյ.

ե. Նորին սուրբ Սահակայ, թէ որպէս է եպիսկոպոսաց պահել զգանձս եկեղեցւոյ կամ որպէս մատակարարել.

զ. Նորին սրբոյն Սահակայ հայոց կաթողիկոսի՝ գիր աւանդութեան յաղագս կարգաց սրբոյ եկեղեցւոյ եւ պտղոց ժողովրդականաց ընծայելոց ի տուն Աստուծոյ (տե՛ս «Կանոնգիրք Հայոց», Թիֆլիզ, 1913, էջ 12-56):

³ «Կանոնգիրք Հայոց», էջ 38-39:

է. Սահակի կանոնները վերագրվել են ս. Գրիգորին՝ դրանց ավելի կարևորություն տալու համար»¹:

Արդ, չի՞ կարելի ենթադրել արդյոք, որ Եզնիկի աղբյուրը հանդիսացող «Հարցումը» ևս ոչ թե Գրիգոր Պարթևի, այլ նրա թոռնորդի Սահակ Պարթևի հեղինակությունն է:

Այս հարցին պատասխանելուց առաջ անհրաժեշտություն է զգացվում ի միտ առնել հայ գրերի ստեղծող ու մատենագրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի մատենագիտական գործունեության հանգամանքները:

Կորյունից գիտենք, որ Մաշտոցը «բազում թուղթս խրատագիրս եւ զգացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր», «...ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ եւ ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել եւ յօրինել՝ լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան»²:

Կորյունի ասած յաճախագոյն, դիւրապատում ճառերը, ինչպես ենթադրել են մի շարք անվանի հայագետներ, հայ մատենագրության մեջ լայն տարածում գտած ու սիրված «Յաճախապատում» կոչվող ճառերն են, որոնք, ունենալով դավանաբանական բովանդակություն, Գրիգոր Լուսավորչին են վերագրվել՝ դրանց ավելի մեծ հեղինակություն տալու համար³:

Գ. Գալեմբյարյանը⁴, Ն. Ադոնցը⁵ և մանավանդ Մ. Աբեղյանը⁶ ապացուցել են արդեն, որ «Յաճախապատումի» և «Եղծ աղանդոցի» միջև կան զգալի ընդհանրություններ ու առնչություններ: Եվ այդ միանգամայն բացատրելի է. Մաշտոցն ու Եզնիկը՝ մեկը՝ հանճարեղ ուսուցիչ, մյուսը՝ նրա սիրեցյալ ու մերձավորագույն զինակիցը, իրենց գործունեության ընթացքում գաղափարական նույն գետնի վրա կանգնած, և ամեն մեկն իր կարողությունների չափով մասնակցում էր հայ նորաստեղծ մատենագրության զարգացման գործին:

¹ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 117:

² Կորիւն, Վարժ Մաշտոցի, էջ 78:

³ Մ. Աբեղյան, նույն տեղում, էջ 119-121: Անհրաժեշտ է սակայն, նշել, որ այդ հատերն ըստ երևույթին հետագայում կրել են փոփոխություններ, ընկալել որոշ հավելումներ և այլն:

⁴ Գ. Գալեմբյարյան, նույն տեղում, էջ 16-17:

⁵ «Քազմավէպ», 1926, էջ 70-72:

⁶ «Հայոց հին գրականության պատմություն», գիրք առաջին, Եզնիկին նվիրված հատվածի 135, 136, 138, 140, 143-145 էջերի տողատակի մեջբերումները:

Մաշտոցի գործունեության մեջ մեծ տեղ է բռնում քարոզչությունը. հայտնի է, որ մինչև գրերի գյուտը նա շրջել էր ու քարոզել Հայաստանի այն գավառներում, որտեղ քրիստոնեությունը դեռ չէր արմատավորված, քրմական դասը դեռ չէր հալածված: Քարոզչական իր գործունեությունն ավելի լայն ծավալով Մաշտոցը վերսկսեց գրերի գյուտից հետո. եղավ Մարաց կողմերում, Գողթնում, Սյունիքում, և շատ այլ վայրերում՝ ամենուրեք քարոզելով կրոնական նոր վարդապետության սկզբունքները, սովորեցնելով հայերեն դպրություն, բացելով դպրոցներ և այլն:

Հայ եկեղեցու հիմքերի ամրապնդման համար եթե առաջնահերթ նշանակություն ուներ պարսից քեշի՝ զրադաշտական կրոնի դեմ ուղղված պայքարը (մի ուսմունք, որ պարսից արքունիքը ցանկանում էր պարտադրել հայ ժողովրդին), ոչ պակաս նշանակություն պետք է ունենար պայքարը ներքին ճակատում:

Հայ ժողովուրդն իր հազարամյա գոյության ընթացքում ստեղծել էր վիպական երգեր ու առասպելներ. հնամենի հավատալիքներն ու ավանդույթները, պատկերացումները զանազան շար ու բարի ոգիների ու միջական կենդանիների մասին խոր արմատներ էին նետել և, անշուշտ, կենսունակ էին ժողովրդի գիտակցության մեջ: Բնականաբար, եկեղեցու ջատագովները ոչ միայն պետք է հիմնավոր տեղեկություններ ունենային դարավոր ավանդույթով ժողովրդի գիտակցության մեջ արմատացած հավատալիքների ու պատկերացումների մասին, այլև պետք է սովորեին քրիստոնեական վարդապետության դիրքերից դրանք մերժելու ձևերն ու եղանակները:

Ահա հենց այս նպատակով է ստեղծված Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը»: Եվ քանի որ քարոզչական այդ եռանդուն գործունեության ղեկը գտնվում էր Մաշտոցի ձեռքին, և նա էր ամենահմուտ քարոզիչը, առաջին հերթին նա կարող էր ըմբռնել «Հարցմունքի» նման մի երկ ստեղծելու անհրաժեշտությունը¹:

¹ Որ Մաշտոցն իրոք զբաղվել է հեթանոսական սնահավատի հերժումով, այդ մասին ունենմ ստույգ տվյալ. Հայոց կանոնգրքի միջնադարյան խմբագրությունների մեջ ներմուծված է «Երանելոյն Մեսրոպայ վարդապետի» կոչված մի փոքրիկ բնագիր, որն ուղղված է հեթանոսական կրոնի անկապտելի մասը կազմող տարացեղ հմայությունների դեմ: Ն. Ակինյանը, որ հրատարակել է այդ բնագիրը, մի քանի ձեռագրերի բաղդատությամբ տվել է նրան պատշաճ խորագիր՝ «Խօսք ընդդէմ հմայից»:

Ստորև տալիս ենք այդ բնագիրը՝ ըստ Ն. Ակինյանի հրատարակության (տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1958, էջ 379-381):

Տրամաբանական այս եզրակացությունն ամրապնդվում է առաջին հայացքից նյութին շառնչվող հետևյալ փաստով:

Արևելյան Հայաստանում իր միսիան կատարելուց հետո Մաշտոցը մեկնում է Կոստանդնուպոլիս՝ Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող հայկական շրջաններում ևս դպրոցներ բացելու և նորաստեղծ գիրն ու դպրությունը տարածելու համար: Այստեղ, ինչպես հաղորդում է Կորյունը, նա «բազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցոյ ստացեալ՝ ծովացուցանէր զվարդապետութեանն զխորութիւն»¹:

Հավանաբար «շնորհագիր» այդ մատյաններից մեկն է եղել Թեոդորոս Մոպսուեստացու «Յաղագս որ ի Պարսս մոզութեան» այն երեք ճառերը, որի մասին տվյալներ է գրանցել Փոտ պատրիարքն իր նշանավոր «Մատենադարանում»:

Փոտը վկայում է, որ Թեոդորոսի այդ ճառերն ուղղված են եղել մի հայ քորեպիսկոպոսի՝ *Μαστούβιος* անունով, Ն. Ադոնցը համոզիչ փաստերով ապացուցել է, որ աղավաղված այդ անունը պետք է սրբագրել՝ *Μαστούζιος*, այսինքն՝ Մաշթոց ձևով²: «Մաշտոցի համար գրված երկը, իհարկե, - ինչպես նշել է Ադոնցը, - կարող էր տրամադրելի լինել նրա սիրասուն աշակերտին՝ Եգնիկին»³:

Երանդյն Մեսրոպյայ հայոց վարդապետի (Խօսք ընդդէմ հմայից)

«Քարտո՛ղ դըբայր մի ոմն ի սրբոցն. գիտացե՛ք, ասէ, ով սիրելիք, զի թէպէտ եւ բեւեռեաց Տէրն զշարն ընդ խաչափայտին, սակայն խայթոցք նորա մինչեւ ցայժմ խոցոտեն զմարդիկ ի կորուստ՝ հմայիք, յուրթիք, դեղահատիք եւ ամենայն բրժժանօք դիականօք: Եւ ոչ ոք բառնայ ի մտաց զմահաբեր սերմունս շարին: Այլ մի վարել հմայիք, այլ սուրբ աղօթիք առ Աստուած կարդալով, եւ մի երթալ զհետ երազոց, այլ ունկնդիր լինել պատուիրանաց Աստուծոյ: Եւ մի ոք յՅովսէփ եւ զԴանիէլ բերցէ ի մէջ, զի այն ժամանակաւորք էին եւ հարկաւորք. ի ձեռն սրբոյ արանցն զծածկեալ խորհուրդն յայտնէր Աստուած տեսեամբ:

Արդ, այսուհետեւ ոչ երազք ոչ հմայք խոտեալ են միայն, այլ եւ մարգարէութիւնք եւ առաքելութիւնք: Երազք եւ հմայք եւ յուրթոք եւ բաշաղանք եւ դիւրութիւնք եւ թովչութիւնք եւ հարցուկք եւ ձեռնածոք եւ դեղահատք եւ խտրիք եւ որ ինչ նման են սոցին, նզովեալ են ի սուրբ եկեղեցոյ եւ արտաքս ընկեցեալ յաստուածային հրամանաց. եւ որ առնէ զմի ոք ի նոցանէ կամ ընդունի, ընդ նովին նզովիք է կապեալ եւ ընդ նմին սատանայի իջանէ ի տարտարոս դառն տանջանաց գեհեհին, զորոյ զվարդապետութիւնն ընկալաւ»:

¹ Կորիւն, էջ 67:

² Ն. Ադոնց, Անծանոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից ըստ օտար աղբյուրների (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 197): Այս ուշագրավ եզրակացությունը, առանց հիմնավոր ու համոզիչ փաստերի, անընդունելի է համարվում որոշ բանասերների կողմից:

³ «Քազմավէպ», 1925, էջ 371:

Մեզ հետաքրքրող բնագրի հեղինակի հարցը պարզելու գործին մեծապես նպաստում է այս սովյալը:

Պարսից գաղափարական ագրեսիայի առաջն առնելու համար Հայ եկեղեցին պահանջ է զգացել պարսից քեշի դեմ գրված հիմնավոր մի հերքումի:

Մաշտոցի խնդրանքով այդ աշխատանքը կատարել է եկեղեցական նշանավոր մատենագիր Թեոդորոս Մոպսուեստացին (մհ. 428 թ., եպիսկոպոս 392-ից), դրանից օգտվել է Եզնիկն իր աշխատության երկրորդ գիրքը («Եղծ քեշին պարսից») գրելիս: Արդ, մի՞թե նույն Մաշտոցն օտար եպիսկոպոսներից պետք է հայցեր նաև հայ ժողովրդի հնավանդ հավատալիքների մասին այնպիսի մի գրվածք, ինչպիսին է մեր «Հարցումը»: Եվ կարո՞ղ էին արդյոք օտարները տեղյակ լինել հեթանոս հայերի հավատալիքներին այնքան, ինչքան տեղյակ էր Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում որպես քարոզիչ շրջած Մեսրոպ Մաշտոցը:

Իհարկե ոչ. ուստի վերոհիշյալ փաստերի ու դատողությունների լույսի տակ կարելի է մեծ հավանականությամբ եզրակացնել, որ Եզնիկի աղբյուրը հանդիսացող «Հարցումի» հեղինակն ինքը Մաշտոցն է:

Հարցի ուսումնասիրության ներկա էտապում և ուղղակի վկայությունների բացակայության պայմաններում իհարկե դժվար է վճռական ու վերջնական համարել այս եզրակացությունը: Հուսով ենք, սակայն, որ հնարավոր կլինի հետագայում ամրապնդել այն նոր սովյալներով:

Այսպիսով, Ն. Ադոնցի այն հարցին, թե՞ «արդյոք հնարավո՞ր է հայ ֆոլկլորի թանկագին էջերը պարունակող «Հարցմունք Գրիգորի» հիշատակարանը... տանել և զետեղել հայ դպրության արևածագին», կարելի է տալ մի պատասխան միայն՝ այո՞, կարելի է. ավելին՝ այն կարող է զետեղվել միայն և միմիայն հայ դպրության սկզբնավորման առաջին տասնամյակներին, հանդիսանում է հայ ինքնուրույն մատենագրության ցարդ հայտնի հնագույն հուշարձանը և գրվել է հավանաբար Մեսրոպ Մաշտոցի կողմից:

5

Ն. Ադոնցը ցույց է տվել, որ «Հարցումի» բնագրից հետքեր են նշմարվում Հովհան Մանդակունուն վերագրվող ճառերի մեջ: Այդ փաստն ինքնին, անկախ այն բանից, թե ճառերը պատկանում են Հովհան Մանդակունուն (V դար) կամ Մայրավանեցուն (VII դար), գրավական է «Հարցումի» հնություն:

Հավանաբար հայ մատենագրության այլ հուշարձանների մեջ ևս հնարավոր կլինի հետագայում գտնել «Հարցումի» ազդեցության հետքեր, սա-

կայն այս առումով առաջնակարգ նյութ է պարունակում մի երկ, որի հեղինակի ու գրությունից ժամանակի մասին ևս բանասիրության մեջ տարբեր ու հակասական տեսակետներ են արտահայտվել:

Ղ. Ալիշանին այն ծանոթ է եղել որպես XIII դարի մատենագիր Վահրամ վարդապետի գործ՝ գրված առ Հեթում թագավոր¹: Ն. Մառը ծանոթ է այն նույն աղբյուրին՝ իբրև ոմն Վարդանի ստեղծագործության²:

1928 թ. Ն. Ալիշանը հրատարակեց այդ բնագիրը և, հիմք ընդունելով Վիեննայի Մխիթարյան մատենադարանի 1849 թվականի № 99 ձեռագրի վերնագիրը (որ դրել է, անտարակույս, ձեռագրի ընդօրինակող Սերովբե Պողոսյանը), վերագրեց այն Վարդանանց պատմության հեղինակ եղիշեին³:

Ն. Ալիշանի տեսակետն անհիմն է ու մերժելի⁴: Արդարացին Ղ. Ալիշանն էր, որն, ինչպես պարզվեց, իր տվյալը քաղել էր խնդրո առարկա բնագրի Վենետիկյան Մխիթարյանների մատենադարանում պահվող հնագույն ձեռագրից (ձեռ. № 265/1108, ընդօրինակված 1317-1318 թթ.): Ձեռագրում գրվածքը վերնագրված է այսպես. «Հարցումն թագաւորին Հեթում, թէ հրեշտակք յառաջ արարեալ են, քան զերկինս եւ զլուսաւորս. պատասխան վարդապետին Վահրամայ»⁵:

Այս Վահրամն, անշուշտ, Բաբունի կոչված կիլիկյան նշանավոր մատենագիրն է՝ հեղինակ փիլիսոփայական ու պատմագրական մի շարք երկերի:

Հեթում Բ թագավորի պատվերով գրած վերոհիշյալ իր աշխատության մեջ Վահրամ Բաբունին գրեթե բառացի մեջբերել է մեր բնագրից ընդարձակ քաղվածքներ:

«Հարցումի» բնագրի աղավաղված որոշ բառերի ու նախադասությունների սրբագրման գործին Վահրամի քաղվածքներն անտարակույս կարող են որոշակի նպաստ բերել:

¹ Ղ. Ալիշան, Հին հավատք հայոց, Վենետիկ, 1910, էջ 187, 195, 203, 210:

² Н. Марр, Из летней поездки в Армению (отдельный оттиск из “Записок восточн. отдел. имп. русск. Археолог. общ.”, том V, с. 9 и сл.):

³ «Եղիշեի վարդապետի Հարցումն եւ պատասխանի ի Գիրս ծննդոց», հրատ. հ. Ներսես վ. Ալիշան, Վիեննա, 1924:

⁴ Տե՛ս Ա. Վարդանյանի փաստալից ու հիմնավոր գրախոսությունը՝ տպագրված «Համադէս ամսօրեայի» էջերում (1929, № 1, էջ 1-10 եւ № 2, էջ 65-79) և տողերիս գրողի թեկնածուական դիսերտացիան՝ «Եղիշեի «Աբարածոց մեկնութիւն» աշխատութիւնը» խորագրով, պաշտպանված 1945 թ. Երևանի պետ. համալսարանում (մեմենագիր, էջ 5-9):

⁵ Ս. Սարգսյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեան ի Վենետիկ, հտ. Բ, էջ 853:

6

«Հարցումի» և «Եղծ աղանդոցի» զուգակշիռ հատվածների համեմատությունից առաջին հետևությունը, որ կարելի է անել, այն է, որ այդ երկու բնագրերն էլ արմատական խմբագրության չեն ենթարկվել հարյուրամյակների ընթացքում: Այս, անշուշտ, չի վերաբերում առանձին աղճատված մտքերի, նախադասությունների ու բառերի, որոնց մի մասը հնարավոր կլինի ճշտել այդ բնագրերի ուշագիտ համեմատության միջոցով:

1. Եզնիկի «Բայց թէպէտ եւ ասին ինչ անուանք ի գրոց յուշկապարկաց կամ համբարուց կամ պարկաց, ըստ կարծեաց մտաց մարդկան ասին» նախադասության դիմաց «Հարցումն» ունի. «Թէպէտ եւ ասեն յուշկապարկք եւ համբարուք եւ պարկք եւ պայք, ըստ կարծեաց մտաց մարդկան ասին»:

«Պայք»-ն այստեղ ավել է, Եզնիկը շունի:

Պայի մասին Եզնիկը խոսում է այլուր. «Ոչ երբէք ի մարդկանէ էլեալ պայն, եթէ երես արարած իցէ (իմա՛ երէս արածիցէ). միտքն աղճատված է: «Հարցումի» համապատասխան հատվածում կարդում ենք՝ «Ոչ երբէք ի մարդկանէ էլեալ պայն, զորմէ ասեն՝ թէ երես ածէ»:

Այս կապակցությամբ Ն. Ադոնցը գրում է. «Եթէ երեսածէ խորթ բառը կարդանք տրոհելով երես ածէ, այն ժամանակ Նորայրի սրբագրությունը՝ առ երես առածիցէ (փոխանակ առարած իցէ) պետք կլինի ուղղել՝ առ երես ածիցէ կամ ավելի ճիշտ՝ վերականգնել ըստ Հարցարանի՝ երես ածիցէ»¹:

2. Եզնիկի՝ «զծովացուլն՝ զոր ի կովէ էլեալ ասեն եւ զպայն՝ իմն ի մարդկանէ եւ զառլէզն՝ ի շանէ» նախադասության դիմաց «Հարցումն» ունի հետևյալ նախադասությունը. «ծովացուլն ի կուսէ (ուղղելի է՝ ի կովէ) ասեն էլեալ եւ զպայն՝ ի գետոյ եւ զառալէզն՝ ի շանէ եւ զխանդիռն՝ ի յիշոյ եւ զնահանգն՝ ի ձիոյ»:

Այստեղ մեկը մյուսի կողմից երկուստեք ուղղվում ու լրացվում են Եզնիկն ու «Հարցումը»: Ինչպես վերն այլ առիթով ասացինք, Եզնիկի մոտ խանդիռի (ինչպես և համբարուի՝ ձիուց առաջացած լինելու) մասին խոսք չկա:

3. Մեր բնագրում կա այսպիսի տեղիք. «Հարցումն. Քաջք աներեւոյթ արարածք են Աստուծոյ, զպատերազմունս նոքա հարկանեն, զորս երէից նոքա հարկանեն եւ զարմատիս կալոց նոքա կրեն եւ զինիս ի հնձանաց, որպէս վիշապս զտոհմականս անդէոց ծծեն»:

¹ «Հայրենիք», էջ 79:

Եզնիկը, հավատարիմ իր շարադրության ձևին, այստեղ ևս փոխել է իր աղբյուրի տրամախոսական եղանակը և խմբագրել այդ հարցը՝ տալով այսպիսի կերպարանք. «Եւ ոչ վիշապք զտոհմականս արդեանց կրեն, եւ ոչ գրաստ գոյ նոցա, եթէ զարդինս ի կալոց ուրեք կրիցեն, եւ ի գուր է կա՛լ կա՛լն ասել ումեք ի կալս՝ եւ ոչ ա՛ն ա՛ն»:

Եզնիկն այստեղ հեռացել է իր աղբյուրից. բայց վերջինիս միջոցով, այնուամենայնիվ, հնարավոր է լինում սրբագրել «եւ ոչ վիշապք զտոհմականս արդեանց կրեն» արտահայտությունը: «Հարցումի» համապատասխան տողը՝ «զտոհմականս անդէոց ծծեն», որ նշանակում է «ուտում (լափում) են անասուններից լաւերին», ավելի հարմար է գալիս իմաստին: Այս կարծիքին է նաև Ն. Ադոնցը¹:

4. Ըստ Եզնիկի՝ Արտավազդին Մասիսի վրա արգելափակել են դևերը, իսկ ըստ «Հարցումի»՝ վիշապները («...զԱրտաւազդ գոմն արգելեալ է ի վիշապաց ի Մասիս եւ է կենդանի, եւ նա ելանելոց է եւ զաշխարհ ունելոց»): Նշենք նաև, որ Արտավազդի առասպելը գրանցած Մ. Խորենացին Արտավազդի շղթայումը վերագրում է քաջքերին, իսկ «Յայսմավուրքում» այդ դերը կատարում են «չաստուածք» կամ «աստուածք»²:

Կարծում ենք, որ առասպելին հարազատ տվյալը «Հարցումինն» է, որովհետև, ինչպես գիտենք վիպասանքից,

**«Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ
Եւ դեւ փոխանակ եղին»³:**

Ուշադրություն ենք դարձնում այս տարբերության վրա՝ նկատի ունենալով նրա կարևոր նշանակությունը Արտավազդի երկվույթյան խնդրի լուծման գործում: Հայտնի է, որ քաջքերը բարի ոգիներ են, ուստի ըստ Խորենացու՝ չար է եղել Արտավազդը: Վիշապներն, ընդհակառակը, չար ուժեր են, ուստի ըստ «Հարցումի»՝ Արտավազդն է բարի: Նրա գալստյան հետ վառ հույսեր է կապել ժողովուրդը, բայց նա մնացել է արգելակված «անմիտ» մի հայ իշխանի («ըղձապատում հմաւորականների») տված խորհրդով) արձակած հրամանի զորությունամբ, որով դարբինները պարտավորվել են նավասարդին կռանով զարկել դատարկ սալին՝ Արտավազդի շղթաների ամրացման համար:

¹ «Հայրենիք», էջ 80:

² Գ. Халатянци, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, ч. II, Материалы, Москва, 1895, с. 74

³ Մ. Խորենացի, Բ 61:

5. «Հարցումին» ենք պարտական երվանդի¹ մասին հնագույն առասպելի գոյությունը հավաստող միակ վկայությունը, որ Վահրամի միջնորդությունով ծանոթ է եղել Ղ. Ալիշանին: Եզնիկի մոտ այդ մասին հիշատակություն չկա. կա՛մ դուրս է ընկել հետագայում, կա՛մ ինքն է ավելորդ համարել մեջբերել:

Այսպիսով, պարզ է դառնում, որ «Եղծ աղանդոցի» իմաստային աղճատումների մի մասը հնարավոր է սրբագրել նրա աղբյուրը հանդիսացող «Հարցումի» համապատասխան հատվածների օգնությամբ, և ընդհակառակը:

Ավելի լայն հնարավորություններ կան լեզվական ու շարահյուսական բնույթի ուղղումներ մտցնելու Եզնիկի բնագրում, որն իրավամբ համարվում է դասական հայերենի գլուխգործոցը²:

7

«Հարցումի» բնագրի հրատարակությունը “*Révue de l’Orient chrétien*” պարբերականի 1925-1926 թթ. 3-4-րդ միացյալ համարում անծանոթ մնաց հայագիտական լայն շրջաններին: Հայաստանում, օրինակ, չկա պարբերականի այդ համարից գեթ մեկ օրինակ:

Նկատի առնելով այդ՝ ավելորդ չենք համարում բնագրի վերահրատարակությունը՝ ոչ էական հետևյալ փոփոխություններով.

1. Զեռագրի հիման վրա կատարել ենք մի քանի ճշտումներ:

2. Տարբերակները նշել ենք միայն կարևորները (հենց տողաշարում, փակագծերի մեջ):

3. «Հարցումը» կանոնգրքի մեջ ներմուծող խմբագիրները, մյուս կանոնխմբերի նմանողությամբ, նաև «Հարցումի» համար կազմել են ցանկեր և ըստ այդմ համարակալել հարց ու պատասխանները (Ա-ից ԺԱ): Յանկը («Յանկ կանոնաց Լուսաւորչին») գիտական արժեքից զուրկ է, իսկ հարցերի

¹ Բնագրում այդ անունը բերված է հնավանդ՝ «Առուանդ» ձևով, որը միանգամայն համապատասխանում է պահլավական ձևին, որից և փոխառված է:

² Այդ աշխատանքը կատարելու են մեր եզնիկագետները, միայն մեկ օրինակով փորձենք շահագրգռել նրանց:

«Նոր հայկազեան բաղբոբում» տեղ է գտել «Կեղծս կեղծս» բառը՝ «սուտ, շինծու կերպարանով» իմաստով: Բաղբոբի հեղինակներին այն հայտնի է միայն Եզնիկից: Քանի որ այդ բառի դիմաց «Հարցումի» մեջ գտնում ենք «կերպս կերպս» («եւ կերպս կերպս զանձինս ցուցանիցեն եւ մարդկան կերպի երեւման անուանս եղեալ կոչեն...») բառը, որ կիրարկված է հայ հին մատենագրության մի շարք հուշարձաններում, կարելի է ենթադրել, որ Եզնիկի բնագրում ևս եղել է «կերպս կերպս»:

համարակալումը ճիշտ չի կատարված: Այդ իսկ պատճառով ցանկը դուրս ենք թողնում, իսկ հարցերի համարակալումը կատարում ենք ինքներս:

4. Ավելորդ ենք համարել նաև «Հարցումի» սկզբում որպես Ա հարցումն դրված կանոնական հրահանգի հրատարակումը, այն, ինչպես նկատել է Ն. Ադոնցը, ոչնչով չի առնչվում «Հարցումին»¹:

5. «Հարցումի» բնագրին զուգահեռ տվել ենք Եզնիկի, իսկ սողատակում՝ Վահրամ Բաբունու զուգակշիռ հատվածները (Ադոնցը ևս տպագրել է Եզնիկի հատվածները, բայց «Հարցումի» բնագրի վերջում):

6. Ինչպես արդեն ասել ենք, Գ. Տեր-Մկրտչյանը ձեռքի տակ ունեցել է «Հարցումի» 4 ձեռագիր: Թվարկում ենք այդ ձեռագրերը Մաշտոցի անվան Մատենադարանի արդի համարակալությանը.

A - № 659, ընդօրինակված 1368 թ., էջ 108բ-118բ,

B - № 778, ընդօրինակված 1635 թ., էջ 377բ-403բ,

C - № 2886, ընդօրինակված XVIII-XIX դդ., էջ 73ա-83բ,

D - № 657, ընդօրինակված XVII դ., էջ 125ա-129բ:

Մենք, բացի սրանցից, ձեռքի տակ ունեցել ենք նաև մի այլ ձեռագիր.

E - № 9298, ընդօրինակված է 1662-ից առաջ, էջ 302ա-306բ:

Վերոհիշյալ բոլոր 5 ձեռագրերից հնագույնն ու լավագույնը A ձեռագիրն է: Որպես Հայոց կանոնգրքի եզակի մի խմբագրություն՝ այն արժանի է ուշագիր քննության:

«Հարցումին» զուգահեռ հրատարակվող Եզնիկի հատվածները քաղված են Լուի Մարիեսի կազմած և հետմահու հրատարակված մեծարժեք քննական բնագրից², որը համեմատել ենք Եզնիկի միակ ձեռագիր օրինակի հետ (Մատենադարան, ձեռ. № 1097, էջ 187բ-314բ): Փոխել ենք Մարիեսի հրատարակության ուղղագրական անհարկի արխայիզմները (եթե, թե, ե ին, և-ի փոխարեն՝ ամենուրեք ես, և այլն):

«Հարցումին» առնչվող Եզնիկի հատվածները համապատասխանում են Մարիեսի հրատարակության ստորև նշվող էջերին (փակագծերում տալիս ենք նաև Վենետիկի 1826 թ. հրատարակության համապատասխան էջերը).

1. էջ 37, տող 11-12 (էջ 75, տող 24-25),

2. էջ 39, տող 30-40, տող 29 (էջ 82, տող 1-84, տող 14),

¹ Այս է կանոնական այդ հրահանգը. «Քահանայ, որ ընդ կնոջ ի քուն է ի վաղիւն պատարագ մի՛ իշխեսցէ մատուցանել: Եւ աշխարհական, որ ընդ կնոջ ի քուն է ի վաղիւն արինաց մի՛ լիցի հաղորդ»:

² Eznik de Kofb, De Deo édition critique du texte arménien par Louis Mariès..., Paris, 1959 (Patrologia orientalis, tome XXVIII, fascicule 3):

3. էջ 41, տող 12-42 , տող 18 (էջ 85, տող 21-88, տող 11),

4. էջ 46, տող 9-48, տող 13 (էջ 97, տող 4-102, տող 13),

5. էջ 48, տող 22-49, տող 1 (էջ 103, տող 4-26),

6. էջ 49, տող 9-50, տող 11 (էջ 104, տող 16-107, տող 4):

Տողատակում Վահրամ Բաբունուց մեջբերվող հատվածները քաղված են նրա աշխատության (անհիմն կերպով եղիշեին վերագրված) Ն. Ակինյանի հրատարակությունից¹: Հրատարակված բնագիրը ստուգել ենք Մատենադարանի № 631 (էջ 195ա-221ա) ձեռագրի մեջ առկա արժեքավոր ընդօրինակության հետ բաղդատելով:

Հուսով ենք, որ հայ ինքնուրույն մատենագրության երախայրիք այս բնագրի վերահրատարակությունն անհետևանք չի մնալու: Այն մեծապես նպաստելու է հեղինակի մասին արտահայտած մեր կարծիքի հաստատման կամ մերժման գործին, ինչպես նաև՝ ինչ-որ շափով դյուրացնելու եզրիկի համապատասխան հատվածների քննության ու սրբագրության գծով կատարվելիք աշխատանքը:

¹ «Եղիշեի վարդապետի հարցումն էս պատասխանիք ի Գիրս ծննդոց», հրատարակեց հ. Ներսես վ. Ակինյան, Վիեննա, 1924 (ֆննական հրատարակություն մատենագրության և թարգմանության նախնյաց հայոց, հտ. Բ, պրակ 2):

**Կանոն սրբոյն Գրիգորի Պարթևի,
դարձեալ հարցումն եւ
պատասխանիք նորա¹**
(Révues de l'Orient chrétien,
Troisième série, tome V (XXV),
1925-1926, № 3 et 4, pp. 312-
322)

1. Հարցումն. *Ո՞վ է հայր մահու.*

Պատասխանի. *Նախանձ:*

2. Հարցումն. *Ուստի՞ յայտ է.*

Պատասխանի. *Յայտմանէ՛ նա-
խանձու բարսարկուին մահ եմուտ
յաշխարհս:*

3. Հարցումն. *Եւ ո՞վ է մայր մե-
ղաց.*

Պատասխանի. *Ազահութիւն, որ-
պէս ասեն. Արմատ ամենայն շա-
րեաց արծաթասիրութիւն է:*

4. Հարցումն. *Ո՞վ է, որ տանի ի
կեանսն յաւիտենից:*

Պատասխանի. *Հեզութիւն. վասն
որոյ ասէ Հոգին Սուրբ, թէ՛ Յո՞վ
բնակեցայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խո-
նարհս եւ որք դողան ի բանից
իմոց:*

**Եզնկայ վարդապետի Կողբացոյ՝
Եղծ աղանդոց**

(Edit. par Louis Mariès, Paris,
1959. Patrologia Orientalis, tome
XXVIII, fascicule 3)

*Եւ նախանձու բանսարկուին ե-
մուտ մահ յաշխարհ (էջ 37 տող 11-
12):*

¹ Եւ ձեռագրում խորագիրն այսպէս է. «Կանոն երկրորդ երանելոյն սրբոյն Գրիգորի Պարթևի Հայաստանեայց Լուսաւորչի. Հարցումն գեղեցիկ պատասխանեալ հանդերձ խրթնաձածուկ բանից»:

Վահրամայ վարդապետի Հարցմունք եւ պատասխանիք (տպ. Եղիշեի անունով, Վիեննա, 1924):

... Հց. Թէ դեմ ի մարմին իսկապէս ոչ փոխին եւ ոչ ոստեն եւ ըմպեն ստոյգ եւ առնեն, գոր ասեն մարդիկ, ապա եւ կախարդք զիա՞րդ նոքամ բազում իրս առնեն:

Պիս. Եւ զի՞նչ առնեն կախարդքն:

Հց. Կարեն զբնութիւն արարածոց փոխել:

Պիս. Սուտ է այդ. եթէ հաստատել կարեն, ապա եւ փոխել կարեն:

5. Հարցումն. *եւ ո՞վ առիթ դժոխոցն.*

Պատասխանի. *Կրթութիւն, վասն որոյ ասեն (var. ասէ). Ոչ այսպէս ատեաց զանաւրէնն, որչափ զանամալթն:*

6. Հարցումն. *եթէ կարիցե՞ն կախարդք զբնութիւն արարածոց փոխել:*

Պատասխանի. *եթէ հաստատել կարեն, ապա եւ փոխել կարեն:*

7. Հարցումն. *Ահա բազում լուաք, եթէ զմարդիկ փոխեն ի կերպարանս անասնոց.*

Պատասխանի. *Ոչ ամենայն ինչ, որ առ աշաւք է, ճշմարտութիւն ասի, որպէս եւ ոչ ստուեր մարդոյ մարդ ասի: Զնմանութիւն եւ զկերպարանս կարեն ցուցանել, բայց ճշմարտութեամբ ոչ կարեն ցուցանել եւ ոչ փոխել զարարածս Արարչին, զի որ արարն, Նա միայն կարէ փոխել:*

Հց. Ահա զբազումս լուաք, թէ զմարդիկ փոխեն ի կերպարանս անասնոց եւ թռչնոց, եւ ինձեանք ի կարաս հեծեալ երթան ի հանապարհ հեռի եւ ի վերայ ջրոց փայլեալ՝ վաղ-վաղակի յատար աշխարհ ելանեն, քաջաց սեղան դնեն եւ ի նոցանէ բանս լսեն եւ առնեն:

Պիս. Դարձեալ զստութիւն բանս յիշեն: Ի միտ առ. ոչ ամենայն ինչ, որ առ աշաւք է՝ նշմարտութիւն ասի. զնմանութիւն եւ զկերպարանս ցուցանեն զիրար ինչ կախարդքն, զի այլ ոչինչ կարեն նշմարտութեամբ ցուցանել, զի թէ սատանայ կերպարանի ի հրեշտակ լուսոյ, որ չէ իսկ, նոյնպէս եւ պաշտանեայք նորա ցուցանեն ինչ, բայց ոչ նշմարիտ. եւ ոչ կարեն փոխել զարարածս Արարչին, զի որ արարն, Նա միայն կարէ փոխել: Հց. Նա ասանիկ եւ զիրք ցուցանեն, թէ յեգիպտոս առնէին կախարդքն, զոր ինչ առնէր Մովսէս:

Պիս. Մի՛ ընդ բարբառ բանին հայեցիս, այլ ընդ նշմարտութիւն իրացն, զի թէ արդարեւ կարող էին կախարդքն առնել ինչ, որպէս Մովսէսն առնէր նշմարտութեամբ, ընդէ՞ր ապա եւ զՄովսէսի արարեալսն առնէին եւ ոչ նոր ինչ, ուստի յայտ է՝ տեսաւքն զարհու-

8. Հարցումն. *Նա աւանիկ գիրք ցուցանեն, թէ առնէին կախարդքն, զոր ինչ եւ Մովսէս առնէր:*

Պատասխանի. *Հնդ բարբառ բանի՞ցն նայիցիս, թէ՞ ընդ ճշմարտութիւն իրացն. թէ արդարեւ որպէս Մովսէսն առնէր ճշմարտութեամբ, ոչ էր պարտ զՄովսիսի արարեալս առնել: Նա աւանիկ ճշմարտութիւնն զոչ ճշմարտութիւն յայտ առնեն, զի կանգնէր մի վիշապն եւ զբազում վիշապս կլանէր, եւ ստուեր եւ նմանութիւն եւ տեղի անգամ ոչ երեւէր: Ապա մինչ ի կախարդքն դարձան հարուածքն՝ կեղք ու խաղաւարտք՝ յայտնի եղեւ ստութիւն նոցա, եւ ի հարկէ խոստովան եղեն, թէ ձեռն Աստուծոյ է: Բայց թէ կարող լեալ էին, զյարուածսն ի Մովսէս եւ յԱհարովն դարձուցանէին:*

րեալք ի նշմարիտ նշանացն Մովսէսի առ աչամ թուր, թէ եւ կախարդքն այնպէս առնէին, վասն որոյ ի նոյն տեղոջ նշմարիտ նշանն ի Մովսիսէ եղեալ՝ յանդիմանէր զստութիւն կախարդացն... Դարձեալ յորժամ կեղն եւ խաղաւարտն հալածեցին զնոսա, զի եղև կեղն եւ ի կախարդսն, յայտնի եղև ստութիւն նոցա, որք ի հարկէ խոստովանեցան, թէ՛ Մասն Աստուծոյ է այս: Քանզի թէ կարող լեալ էին, զհարուածս ի Մովսէս եւ յԱհարոն դարձուցեալ էին:

Հց. Մովսէսի ոչ կարէին առնել ինչ, զի Աստուած ընդ նմա էր, բայց մեղաւորաց կարեն առնել զշար եւ զբարի:

Պիս. Եւ ոչ երբէք. ոչ արդարոյ եւ ոչ մեղաւորի շունին կարողութիւն առնել ինչ շար կամ բարի առանց հրամանին Աստուծոյ, զի Տէր է, որ սպանանէ եւ կեցուցանէ, եւ ի Տեսունէ են ելք մահու, քանզի եւ ննկողն յերկիր ոչ անկանի առանց Աստուծոյ, Որով ամենայն ինչ եղև եւ Նովա փոխի եւ Նովա անցանէ (Վահրամ, էջ 21-22):

Հց. Ապա եւ ամրո՞ցն ոչ կարիցեն կախարդքն որդիս տալ եւ զմէջս փակեալս բերրի (ձեռ. № 631՝ բերքի) առնել:

Պիս. Ամլոսբեան պատճառք յովով են. այն՝ զոր Աստուած արգելեալ է, չկարէ ոք նմա ձեռնհաս լինել՝ ոչ կախարդք եւ ոչ բժիշկք, զի յԱստուծոյ է, որպէս ասէր Յակոբ առ Հոսեֆէլ, յորժամ ասէր՝ Տու՛ր ինձ որդիս. եւ Յակոբ պատասխանեց՝ Մի՞թէ Աստուած իցեմ ես, որ արգելի զպտուղ որովայնի քոյ: Բայց եթէ ի պատճառէ ցաւոց իմեմէ, զայն կարեն

9. Հարցումն. Մովսիսի ոչ կարէին առնել ինչ, զի Աստուած ընդ նմա էր, բայց մեղաւորաց կարեն առնել չար եւ բարի:

Պատասխանի. Ոչ միայն մեղաւորաց չեն ձեռնհաս կախարդք բարւոյ եւ չարի, այլ եւ ոչ անասնոց անմտից, բայց զոր Աստուած մատնէ, այլ առանց Աստուծոյ ոչ կարեն սպանանել, զի ի Տեառնէ են ելք մահու: Սպասէ մեղաւորն արդարոյն, այլ Տէր ծիծաղեսցի զնոքաւք եւ ոչ մատնէ զնա ի ձեռս նորա: Նա եւ ոչ ճնճղուկ անկանի յորոգայթ առանց հրամանի Հաւր ձերոյ, որ յերկինս է, զի ամենայն ինչ Նովա եղեւ եւ Նովա (var. Աստուծով) անցանէ:

Բժիշկին ուղղել ազնականութեամբն Աստուծոյ՝ ազդեցութեամբ դէրոց. այլ գոր ձեռն վերնոյն փակեալ է՝ չէ ոք որ լուծանէ, բայց Ինքն միայն: Միթէ կարէին ամենայն բժիշկին կամ կախարդք Սառայի տալ որդի կամ Եղիսաբէթի (էջ 23):

Հմմ. Վահրամ, ԻԱ եւ ԻԲ հարցումների հետ.

Հց. Եւ ընդ որո՞ց տեղաց պատահէ այս ցաւ մարդոյն ի Տեառնէ:

Պի. Ընդ ամենայն մեղանաց, առաւել վասն հպարտութեան եւ թերահաստութեան մարդոյ:

Հց. Մարդկան ի չափ հասելոց գրեցոմ վասն մեղաց կրել զայս. անմեղ տղայքն ընդ որո՞ց սխալանաց տանջին ի դիւաց:

Պի. Անհաս են խորքն Աստուծոյ, եւ Ինքն միայն գիտէ զազուտ մարդոյն... (էջ 24-25):

Հց. Ապա զիս՞րդ է, զի բազումք ասեն, թէ քաջ գպատերազմունս մղեն, եւ գորս երէնց որսան, եւ զարմտիս ի կալոցն կրեն, եւ զգինիս ի հնձանաց առնուն, վիշապ գտոհմականս անդէնց ծծեն, եւ յորով մարդիկ տեսեալ են, զի վիշապ վերանայր յերկրէ յերկինս:

Պի. Այսպիսի յիմարութեամբ լցեալ է երկիր. միթէ արժա՞ն է զայսպիսեաց ասացողսն ֆրիստոնեայ կոչել եւ կամ բնալին առ մտատրս ունել: Ոչ քաջ լեալ է եւ ոչ վիշապ. վիշապ անուն բառ է, զի որ ինչ յերկրի մեծ լինի՝ վիշապ ասեն ըստ գրոց, թէ Դու փշրեցիր զգլուխ վիշապին ի վերայ շուրց եւ տտուր գնա կերակուր զաւրացն Հնդկաց. որ նշանակէ զփարատն փշրեալ ի Կարմիր ծովն եւ զէն եւ զարդ նոցա յալեացն յեզր ծովուն գտեալ, եւ ի ձեռն լաղորդացն ի խորան անկաւ յաշխարհն Հնդկաց. նա էր վիշապ, որպէս մարդ մեծամանեայ եւ յաղթանդամ ասի: Եւ թէ ուղիղ է, գոր ասեն ցորեան եւ զինի առեալ դիւացն, սակայն ոչ ուտեն եւ ոչ ըմբեն եւ ոչ ի տեղոյն շարժեն զիրս, այլ երեւոյթս

10. Հարցումն. Կային առանց Աստուծոյ սպան զԱբէլ, եւ սպանողն Կայինի առանց Աստուծոյ սպան զԿայէն, եւ Հերովդէս՝ զՅովհաննէս, եւ ամենայն արդարքն առանց Աստուծոյ մեռան յանարիւնաց:

Պատասխանի. Զի թէ լինի մարդ առանց Աստուծոյ, եւ մեռանի: Ոչ պոռնկորդին Աստուծոյ հրամանան լինի, եւ ոչ մեղաւորն Աստուծոյ հրամանան մեռուցանէ զարդարն, այլ սատանայ է պատճառ շարեացն: Աստուած հրեշտակաց անքննելի է եւ անհասանելի ամենից, զի որ քննէ զծով՝ մեռանի: Կինելութեան պատճառ Աստուած է, զի արհնեաց ի սկզբանէ զարդարն աճել եւ բազմանալ. ի մերձենալ արուին յէզն Աստուծոյ հրաման կատարի, լինի աճումն ըստ նախակարգ հրամանի Աստուծոյ: Աստուած է պատճառ լինելութեան եւ ոչ սատանայ, որպէս ասէ. Առանց Աստուծոյ եղեւ եւ ոչինչ: Սատանայ հրապուրանաց է պատճառ: Նոյնպէս եւ մահու հրամանն յԱստուծոյ է. Յորում ատուր ուտիցես՝ մեռցիս. եկեր եւ մեռաւ:

Իմն տան: Միթէ հրեշտակն, զոր մատուցանէին նորա կերակուր, ոպէս Մանուէ եւ Գեղէն, կերա՞ն. անմարմնոյ բնութիւն զիա՞րդ կերակրի զմարմնական կերակուր. դեմ լոկ երեւոյթս տան:

Հց. Իսկ ընդէ՞ր ապա ասեն ոմանց տեսեալ քաջաց եւ վիշապաց տանաւս ի լեռինս բարձունս եւ բնակութիւնս, ուր զԱղեփսանդր կապեալ ունին ի Հոռոմ եւ զԱրտաւազդ Հայոց թագաւոր ի Մասիս եւ զԵրուանդ ի գետս եւ ի մոայլս:

Պի. Ոչ Աղեփսանդր կայ կենդանի ի կապանս եւ ոչ Արտաւազդ եւ ոչ այլ ոմ յառաջնոց անտի. զի յորդոց մարդկան ենովք եւ եղիայ միայն կենդանիք են, այլ ամենեցուն զմահ

Եկն Քրիստոս եւ եսպան զմահ՝ եւ
կենագործեաց զմարդիկ: Ինքն
Քրիստոս Իւրով կամաւքն մեռաւ
յանաւրինացն եւ արդարոցն թոյլ
ետ մեռանիլ յամբարշտացն, զի ու-
րախասցին յարքայութեանն, որպէս
եւ գրեալ է. Ընդ Քրիստոսի մեռա-
նին, ընդ նմին եւ թագաւորեսցեն:

Արդ, այնք որք զԱստուծոյ փառս
եւ զպատիւ արարչութեանն սատա-
նայի տան, ի հուր գեհենի է ժա-
ռանգութիւն նոցա:

11. Հարցումն. Եթէ կարիցե՞ն
կախարդք որդիս տալ ամլոց եւ
զմէջ (VAR. ի մէջ) ստնտուկս (իմա՝
զմէջ սկնդուկս) բարի առնել.

Պատասխանի. Ամլութեան բա-
զում պատճառք են. այն զոր Աս-
տուած արգելեալ է, չէ որ նմա
ձեռնհաս կարէ լինել՝ ոչ կախարդ
եւ ոչ բժիշկ: Բայց եթէ պատճառք
ցաւոց ինչ իցէ (VAR. են ինչ), զայն

նաշակեալ է: Բայց մոլորութիւն դիւաց խաբեաց զկոսպաշտան Հայոց ի ձեռն Բրմացն,
որք ասէին, թէ զԱրտաւազդ ոմն Հայոց թագաւոր վիշապ արգելեալ են կենդանի ի
Մասիս լեառն. եւ նա ելանելոց է եւ զաշխարհ ունելոց. եւ ոմն ի յանմտաց, որ ունէր
զիշխանութիւն Հայոց՝ զարհուրեալ հարցանէր զըղծապատումս դիւացն եւ զկա-
խարդսն, թէ ե՞րբ լինի Արտաւազդայ ելանել ի կապանաց, եւ նոքա ասացեալ, թէ ոչ կա-
միս զեկանելն նորա ի կապանացն՝ հրաման տուր ընդ ամենայն աշխարհս Հայոց
դարբնաց, որ ի նաւասարդի ար ամենայն դարբին կոանաւ դոփէ ի վերայ սալի իւրոյ.
եւ երկաթք Արտաւազդայ անդրէն հաստատին: Զնոյն հրաման կատարեն այժմ ամե-
նայն դարբինք ի նաւասարդոջ կոանաւ զսալ հարկանեն:

Որպէս զայս ստութիւն արձանացոյց սատանայ յաշխարհ, նոյնպէս եւ վիշապ, որ է ան
մեծ, առ աչաւ մեծ ցուցանէ, զի ահագին երեւեալ՝ մարդիկ ի պաշտան անիցեն
զաւան, որպէս եւ արարին բարեկացիք եւ ելլադացիք՝ զվիշապ անսն պաշտեցին եւ յԱ-
րարչէ հեռացան: Սոյնպէս եւ ինքեանք դեմն շորիք եւ էջ երեւին ի կալ՝ կրել ցորեան եւ
զինի. եւ արագ արագ վազ առնեն երեւութիւք ի դաշտս, իբր թէ որսան. Սուտ ամե-
նեւեան (14-16):

կարող են եւ բժիշկը ուղղել Աստուծոյ ազդեցութեամբն դեղովք: Այլ առանց Աստուծոյ թէ եւ ամենայն բժիշկը եւ կախարդք ժողովէին՝ ոչ կարէին Սառայի որդիս տալ: Զոր ձեռն վերնոյն փակեալ է, չէ ոք որ լուծանէ:

12. Հարցումն. Դիւահարութեան պատճառ ի՞նչ է մարդկան.

Պատասխանի. Վասն հպարտութեան մարդկան լինի, զի որդի որ մտավարժ է եւ իմաստուն, գան ոչ ըմպէ. իսկ որ անմիտ է, հանապազ գանալից է:

13. Հարցումն. Մեղաւորք վասն մեղաց տանջին, իսկ տղայոց անմեղաց զի՞ տիրիցեն դեւք:

Պատասխանի. Զամենայն մարդ յորդեգրութիւն կոչէ Աստուած, որպէս զԻսրայէլն. Նա է որդի իմ անդրանիկ Իսրայէլ, եւ Որդիս ծնայ եւ բարձրացուցի: Արդ, եթէ փակեալքն ընդ արինաւք որդիք կոչին, որչափ եւս առաւել ազատեալքս, զոր[ոց] ասէ իսկ. Ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել:

Արդ, զի իբրեւ յորդիս մատուցեալ է ի մեզ Աստուած առ երբեմն խրատել [հարկանէ] զանասունս մեր, երբեմն զանդաստան եւ զայգիս

...Եւ դիւահարութիւնք վասն հպարտութեան մարդկան լինին: Քանզի եթէ որդի ուրուք մտավարժ իցէ, գան ոչ ըմպիցէ. եւ որ չէն մտավարժ բազում անգամ զճառայ այր առաջի նորա գան հարկանեն, զի ի նա հայեցեալ՝ ընդ այն լինիցի մտավարժ. ապա եթէ եւ այնու եւս ոչ խրատիցի, ի նա իսկ մատուցանեն զտանջանսն:

Այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց, թէ մեղաւորք վասն մեղաց տանջիցին ի դիւացն, տղայոցն անմեղացն ընդէ՞ր տիրիցեն դեւքն:

Զամենայն մարդիկ յորդեգրութիւն կոչէ Աստուած, որպէս զԻսրայէլէ ասէր. Որդի անդրանիկ իմ Իսրայէլդ. եւ դարձեալ թէ Որդիս ծնայ եւ սնուցի: Թէ առաքինեալքն ընդ արինաւք որդիք կոչէին, որչափ եւս առաւել զորոց ասէ՝ թէ Ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել:

Արդ, քանզի իբրեւ յորդիս մատուցեալ է ի մեզ Աստուած խրատել, երբեմն հարկանէ առաջի մեր իբրեւ զճառայ՝ զանասուն մեր, եւ երբեմն

մեր, զի հայելով ընդ այն ի միտ առցուք մտանել ընդ լծով երկեղի ծառայել Տեառն: Ապա մինչ այսու եւս ոչ խրատիմք, ի մեզ առաքէ տանջանս պէս պէս ցաւոց եւ խեղովթեամբ, մտանէ եւ դիւաց զտղայս մեր, զի ի միտ առցուք, թէ Արդարն հազիւ կեցցէ, իսկ ամբարիշտն ու՛ր ապրի:

Եւ տղայոցն յայն սակս պատահի այն (ՎԱՐ. չիք այն) զի մի՛ արդարն ի բարիս գործելոյ դադարեսցէ, եւ մի՛ մեղաւորն ի մեղս յամել կարասցէ: Եւ չէ այսմ պարտական, այլ շար գործք մարդկան բարկացուցանեն զԱստուած, եւ այնպիսի ցասմամբ մատնէ զտղայս մեր դիւաց: Զի որպէս այլոց հաւատովք բժշկեաց զանդամալոյծն եւ շնորհեաց նմա թողութիւն մեղաց, նոյնպէս եւ այլովք տանջանաւք ածէ յերկիւղ զբազումս. է՛ զի անմեղ տղայովք, եւ է՛ զի մեղուցելովք, որպէս եւ Ինքն միայն գիտէ Բարերարն: Եւ ոչ եթէ ի դատապարտութիւն ինչ մարդոյն ոգոյն լինի տանջումն դիւաց, այլ առաւել յարգահատութիւն. մանաւանդ թէ անմեղ ոք իցէ. եւ վասն այլոյ երկեղի ի միտսն արկանել մատնի յայնպիսի տանջանսն, զոր իբրեւ զմտրակ կախեալ ի տան

զանդս եւ զայգիս, զի ընդ այն հայեցեալ՝ մտցուք ընդ լծով Աստուծոյ երկիւղին: Ապա եթէ այնու եւս ոչ խրատիցիմք, ի մեզ իսկ մատուցանէ զտանջանսն՝ կամ ցաւովք, կամ խեղովթեամբք, կամ դիւաւք: Տանջին եւ անմեղք՝ զի ի մտի կալցին այլքն զբան իմաստնոյն՝ որ ասէ. թէ Արդարն հազիւ կեցցէ, ամբարիշտն եւ մեղաւորն ու՛ր գտանիցին:

Եւ այն յայն սակս լինի՝ զի մի՛ արդարն յարգարութենէն ծուլացի, եւ մի՛ մեղաւորն միշտ ի մեղսն կայցէ: Եւ չէ այնմ պարտական Աստուած, այլ շարիք մարդկան ածեն զԱստուած այնպիսի տանջանաւք խրատել զմարդիկ:

Զի որպէս այլոց հաւատովք հաստեաց զանդամալոյծն եւ շնորհեաց նմա թողութիւն մեղաց, նոյնպէս եւ այլոց սակաւուց տանջանաւք ածէ յերկիւղ եւ ի խրատ զբազումս: Յո՛րժամ դիպիցի անմեղաւք, եւ յո՛րժամ դիպիցի մեղաւորաւք, որպէս Ինքն միայն ճարտար գիտէ: Եւ ոչ եթէ ի դատապարտութիւն ինչ ոգոց լինին մարդոյն տանջանքն դիւաց, այլ առաւել եւս յարգահատութիւն. մանաւանդ թէ անմեղ ոք իցէ. եւ վասն այլոց երկիւղի ի միտս արկանելոյ՝ յայնպիսի տանջանս մատնիցի, զոր իբրեւ

(*VAR.* տուն) իշխանին՝ զարհուրեցուցեալ զտեսաւղան, նոյնպէս եւ տղայոցն լիկանսն ի վղջումն ածէ զմեղաւորսն:

Այլ ասեն՝ կախարդք չղեն զդեւսն եւ հանեն: Կախարդք զդեւս ոչ կարեն հանել. Տէրն ասաց. Սատանայ զսատանայ ոչ հանէ: Մարդ, որ զԱստուած թողու զսրբութիւն, զպահս, զաղաւթս եւ ի դիւթս եւ ի կախարդս ապաւինի եւ քակէ զյոյսն յԱստուծոյ, թոյլ տայ Քրիստոս դիւաց բնակիլ ի նմա եւ տանջել զնա եւ պահանջել զոգի նորա եւ տանել ի դժոխս, որպէս զոգիս անաւրինացն: Կախարդք դիւաց բագինք են եւ չեն համարեալ ի քրիստոնեայս: Ոչ զոք ի կախարդաց կարես տեսանել անցաւս եւ անդեւս: Նա եւ տեսանեմք զկախարդս միշտ լիկեալ (*VAR.* ծնկեալ) ի դիւացն, եւ մանաւանդ մոլիքն, զի նախ ինքեանք մոլին եւ դիւահարին ի դիւացն կատաղութենէ եւ խոստանան տալ բժշկութիւն յուսացելոցն ի նոսա. բայց ոչ են ձեռնհաս, զի ի ձեռս Աստուծոյ է ամենայն, որպէս ասաց մարգարէին. Ես սպանանեմ եւ ես կեցուցանեմ:

զմտրակ կախեալ ի մեծի տանս՝ ցուցանէ Աստուծոյ տեսութիւնն, զի հայեցեալ ընդ այն բազմաց՝ ամփոփեցցին եւ մտցեն երկիրլիւ ընդ Աստուծոյ հնազանդութեամբ... (էջ 39 տող 30 – էջ 40 տող 29):

Այլ կախարդք, ասեն, չղեն դեւս եւ հանեն զդեւս: Զի կախարդք զդեւս ոչ կարեն հանել՝ բաւական է մեզ հաւանեցուցանելոյ բանն Տեառն, զոր ասաց՝ թէ Սատանայ զսատանայ ոչ հանէ: Զի կախարդն եթէ հանէր, ապաքէն դիւաւք հանէր. եւ զդիւէ ասաց Քրիստոս՝ թէ Դեւ զդեւ ոչ հանէ. ապա յայտ է թէ այլազգ իմն իրք լինին, որպէս ի նոցանէն իսկ ելեալ է բանն, եւ ոչ ի մէնջ: Ասէն. հանել չկարեն, բայց անդէն կապել մարթեն, զի հանապազ խեղդ ընդ անձն հոգոց մարդոյն դեւն լինիցի: Եւ այն յԱստուծոյ արժանիցն յիրաւի լինի. զի եթող ոմն զԱստուած, զսուրբս, զպահս, զաղաւթս, եւ ի կախարդն՝ որ եւ անձին չկարէ աւգնել՝ ապաւինեցաւ: Զի ո՞ ոք ի կախարդաց անցաւ եւ անդեւս եւ անմահ իցէ: Նա եւ տեսանեմք իսկ զկախարդսն միշտ ծնկեալս ի դիւացն, եւ մանաւանդ մոլիքն, զի նախ ինքեանք դիւահարին եւ ապա այլոց իմն խոստանան տալ, որ չիցէ ի ձեռս՝ ոչ նոցա եւ ոչ դիւացն, որոց բանիւ խաւսիսն տալ ինչ ումեք, բայց միայն Աստուծոյ՝

որ Արարիչն եւ Տուիչն է: Եւ արդ, քան անդէն կապել կախարդացն զդեւն՝ որպէս ասենն, եւ խեղդ ընդ անձն միշտ ոգոց մարդոյն առնել, լաւ էր թէ յայտնէր եւ սրբովք աղաչեցեալ զԱստուած՝ աւգնականութիւն գտանէր բուժելոյ ի շարէն:

Ոչ իշխէ սատանայ ի մարդ մտանել, բայց հրամանաւն Աստուծոյ, եւ ոչ լոկ ի մարդ, այլ եւ ոչ ի զեռունս: Բայց փորձիչ ետ Աստուած գսատանայ եւ փորձէ նովաւ, որպէս ասաց մարգարէիւն. Արկ արծաթ (VAR. գարծաթ) ի բովս, եթէ փորձիցէ: Որպէս վասն նոցա փորձեցաւ Քրիստոս ի սատանայէ եւ ձեզ պատուիրեաց Քրիստոս յաղալթս կալ, շմտանել ի փորձութիւն, այլ եւ զմեղսն համբերողս. այլ զի պատերազմասէր ի շարն եւ խնդրէ կորուսանել զամենայն, Քրիստոս ասաց. Խնդրեաց սատանայ մաղել զձեզ. ըստ խնդրելոյն սատանայի ետ զնոսա ի փորձութիւն: Եւ իշխանութեամբն, զոր առեալ էին ի Քրիստոսէ, գնացին ի վերայ իժի եւ քարբի եւ կոխեցին եւ հարին զգետնի:

Եւ ընդդէմ Յովբայ պարգեւաբաշխ եղեւ սատանայ յասելն Աստուծոյ ցատանայ. Նայեցար ընդ Յովբ. եւ ետ զնա եւ զորդիս նորա եւ զստացուածս նորա: Ետ յաղ-

Այլ մեք ասեմք, թէ մտանելոյ ի մարդ շունի իշխանութիւն առանց Աստուծոյ թուլացուցանելոյ: Եւ այնր պէս պէս պատճառք են, որպէս Ինքն միայն գիտէ, եւ յայտանտի է զի յորժամ ի խոզից երամակն մտաբերեցին մտանել, ոչ կարացին մտանել՝ եթէ ոչ նախ ի Քրիստոսէ առին հրաման: Եւ յորժամ զՅովբն կամեցաւ փորձել սատանայ, ոչ իշխեաց ժտել՝ եթէ ոչ նախ յԱստուծոյ առ հրաման փորձելոյ:

թուփին Յովբայ վասն արդարութեանն, հար զչարն եւ յաղթեաց նմա եւ հռչակեցաւ:

Այլ Աստուած տայ ի փորձութիւն զամենայն ոք, վկայէ Մկրտիչն, ասէ. Գայ այլ զկնի իմ, Որոյ հեծանոցն ի ձեռին Իւր՝ սրբել զկալ Իւր եւ ժողովել զցորեանն յշտեմարանս եւ զյարդն այրեսցէ անշէջ հրով: Յայտարար համառատ, թէ որպէս շեղջ կալոյ առանց հողմածին աւդոյ չսրբի, նոյնպէս եւ մարդ առանց յաղթելոյ սատանայի ոչ կարէ մտանել յարքայութիւնն:

Եւ զէնք սատանայական պատերազմի այս են՝ կախարդութիւնք, թովչութիւն, դիւթութիւն, աստեղագիտութիւն եւ նմանք նոցին: Զոր ասէ Մեղս մահու չափ՝ այս են. հայհոյութիւնք: Ամենայն մեղաց թողութիւն կայ ապաշխարութեամբ, բայց վասն սորա համառատ վճիռ ետ Տէրն մեր Քրիստոս. Որ զՀոգին Սուրբ հայհոյէ, մի՛ թողցի նմա: Վասն այսորիկ ասէ. Մի՛ թողցի, զի ոչ լինի արժանի ապաշխարութեան. որպէս հովիւ, զի թափէ գոշխար ի գազանէ եւ տեսանէ պատառեալ գորովայնն, թողու զգէշն ի գազանն եւ ի բաց գնայ, նոյնպէս անտես առնէ հովին Քրիստոս եւ թողու զհայհոյիչ Հոգւոյն Սրբոյ: Վասն որոյ ասէ առաքեալ: Կամակար մտաւք եթէ յանցանիցեմք յետ ընդունելութեան գիտութեան, այ-

նուհետեւ անաւգուտ է վասն մեղաց պատարագ: Եւ ամենայն ոք որ քրիստոնեայ է եւ լուսաւորեալ է յաւագանէն Հոգւովն Սրբով եւ ապստամբ է յԱստուծոյ ի ձեռս է սատանայի եւ հալածական առնէ զՍուրբ Հոգին յինքենէ եւ դիւաւք վարի եւ պէս պէս հմայիւք եւ կախարդութեամբ՝ այնպիսին շինի ապաշխարութեան արժանի, եւ շտայ նմա սատանայ թոյլ ապաշխարել: Վասն այնորիկ գրեցան, թէ են մեղք, որ մեղք են եւ է, որ մահու չափ է:

Ըստ որում եւ Վասն Յուդայի ասաց Քրիստոս, թէ Մինդ (VAR. միդ) ի ձէնջ սատանայ է. եւ թէպէտ եւ գողութեամբն ջանացաւ սատանայ առնել զնա բագին, սակայն առանց Քրիստոսի ոչ կարաց մտանել, այլ յորժամ ետ զպատառն եւ ասէ. Արա՛ վինջ առնելոց ես: Յետ տալոյն զպատառն, ապա եմուտ ի նա սատանայ: Եւ դիւահարք իսկ, որ տանջէին ի դիւաց, թէ ոչ պահպանող զաւրութեանցն պահէր, շարաշար ախտին խեղդէին զնոսա: Այլ ոչ լոկ զդիւահարսն, այլ եւ զիրեանց իսկ պաշտանեայսն թէ ոչ Աստուծոյ ահն պահէր՝ ազգի ազգի խեղդութեամբք խեղդէին, բայց շեն ձեռնհաս եւ մտաբերել շիշխեն:

Եւ զՅուդայէ ասէ, թէ Ընդ պատառոյն եմուտ սատանայ: Զի թէ շէր Քրիստոսի թուլաց[ուց]եալ եւ սատանայի՝ որ գրգռէին, եւ Յուդայի՝ որ վասն կծծութեան եկն յայն, ոչ իշխէր մտանել ի նա. այլ վասն յանդիմանելոյ զանձնիշխանութիւն երկոցուն՝ թուլացոյց ըստ կամաց երկոցունց: Նա եւ մինչ դեռ տանջին իսկ ոմանք ի դիւէ, եթէ ոչ յԱստուծոյ տեսչութիւն լինէր նմա, շարաշար մահուամբ սատակէր: Նա եւ զպաշտանեայսն իսկ իւրեանց՝ եթէ ոչ Աստուծոյ սաստ պահէր, ազգի ազգի խեղդութեամբք խեղդէին եւ անհնարին մահուամբք սպանանէին: Բայց վասն զի ոչ են ձեռնհաս, ոչ իշխեն յայնպիսի իրս մտաբերել... (էջ 41, տող 12-42, տող 18):

14. Հարցումն. Ծնունդը են դի-
ւաց եւ մահ, աճեն եւ պակասեն:

Պատասխանի. Նախ զայն տես-
ցուք, թէ գո՞ն այլ արարածք բա-
նաւորք քան զհրեշտակս եւ զմար-
դիկ եւ զդեւս, եւ ապա եկեսցուք
յայն, թէ իցէ՞ն դիւաց կէս մարմ-
նաւորք եւ կէս անմարմինք: Զի շեն
այլ արարածք բանաւորք, քան
զերեք ջոկ, յԱստուածային Գրոց եւ
ի բնութենէ արարածոց յայտ է: Թէ-
պէտ եւ ասեն յուշկապարիկք եւ
համբարուք եւ պարիկք եւ պայք,
ըստ կարծեալ մտաց մարդկան ա-
սին եւ ոչ ըստ բնութեան, զի դիւաց
է կերպարանս ցուցանել, եւ մար-
դիկ զկերպարանս անուանադրեն,
որպէս յորժամ քաղաքք եւ գեղք
աւերեսցին, եւ անդ դեւք բնակես-
ցեն եւ կերպս կերպս զանձինս ցու-
ցանիցեն եւ մարդկան [ըստ] կեր-
պի երեւման անուանս եղեալ՝ կոչեն
զոմն յուշկապարիկ, զոմն համ-
բարու: Նոյնպէս եւ գրոց զանուանս
նոցա՝ առ ի նշանակելոյ զսաստ-
կութիւն աւերածի աշխարհի, յուշ-
կապարկաց ասեն բնակել յաւե-
րակս, զի ի յոյն լեզուն յուշկա-
պարիկն իշացուլ թարգմանի:

Եւ արդ, քանզի անմարմինք են
հրեշտակք եւ դեւք, յայն սակս եւ
ծնունդք ոչ գոն նոցա: Այլ ասեն
համբարուաց ծնունդք են եւ մեռա-
նին: Նախ զայն տեսցուք, թէ բնաւ
գուցե՞ն այլ ինչ արարածք բանա-
ւորք քան զհրեշտակս եւ զդեւս եւ
զմարդիկ: Եւ ապա եկեսցուք յայնր
ի քնին, թէ իցէ՞ն ի դիւաց կէսք
մարմնաւորք եւ կէսք անմարմինք:
Զի չիք ինչ արարած բանաւոր ար-
տաքս քան զայս երիս ջոկս՝ զհրեշ-
տակաց, զդիւաց եւ զմարդկան, յա-
մենայն Աստուածատուր Գրոց եւ ի
բնութենէ արարածոց յայտնի է:
Բայց թէպէտ եւ ասին ինչ անուանք
ի գրոց յուշկապարկաց կամ համ-
բարուաց կամ պարկաց, ըստ կար-
ծեաց մտաց մարդկան ասին եւ ոչ
ըստ բնութեան, քանզի դիւաց է
կերպարանս կերպարանս ցուցա-
նել, եւ մարդիկ ըստ կերպարա-
նացն անուանս դնեն. Որպէս յոր-
ժամ քաղաքք եւ գեղք աւերեսցին
եւ անդ դեւք բնակիցեն, եւ կեղծս ի
կեղծս յայտնիցին, եւ մարդկան
ըստ կեղծեաց նոցա անուանս ե-
ղեալ՝ զոմն յուշկապարիկ, զոմն
պարիկ, զոմն համբարու կոչիցեն,
նոյնպէս եւ գրոց ըստ մարդկան
կարծեացն եկեալ՝ առ ի նշանակե-
լոյ զսաստկութիւն աւերածի աշ-
խարհին՝ յուշկապարկաց ասեն
բնակել յաւերակսն, զոր յոյն լեզու
իշացուլս ասէ:

Արդ, ցուցանե՞ն, եթէ գտանի իշացուլք ի Բաբելոն. ուրեմն յայտ է՝ թէ լուկ անուանք են եւ ոչ տեսակք, եւ գիրք ըստ սովորութեան մարդկան խաւսից անուանեցին զգեւս, որ յաւերակսն Բաբելոնի բնակեալ են: Եւ նոյն ազգեցութեամբ դիւացն բարբանջեն մարդիկ, զծովացուլն ի կուսէ (իմա՝ ի կովէ) ասեն ելեալ, եւ զպայն ի գետոյ, եւ զառալէզն ի շանէ, եւ զխանդիոն (VAR. զխանդիրն) ի յիշոյ, եւ նահանգն (VAR. զնահանգն) ի ձիոյ: Եւ այս (VAR. այսք) ոչ եթէ տեսակք ինչ, այլ անուանք եւ եթ են հեթանոսական կռապաշտիցն: Զի որք զգեւան պաշտէին՝ ի դիւացն հաջէին իբրեւ զշուն, եւ նոյն մոլորութեան սովորութիւն կալաւ զերկիր: Եւ ոչ ի քրիստոնէից դարձան ի բաց ի դիւապաշտ մոլեգնութենէ, եւ ոչ ոք էր յառաջնորդաց, որ հովուէր ըստ քարոզութեան Աւետարանին: Զայս զհարդ ոչ իմանայ, թէ ի մարմնաւորէ աներեւոյթ ոչ ինչ ելանէ եւ յաներեւոյթէն մարմնաւոր ինչ: Ոչ երբէք ի մարդկանէ ելեալ պայն, զորմէ ասեն՝ թէ երես ածէ, եւ ոչ ի կովուց ծովացուլ եւ ի ծովակի բնակեալ: Զի ցամաքային մարմնաւորի ոչ ինչ է հնար ի ջուրս բնակիլ եւ ոչ ջրայնոյ ի ցամաքի. եւ ոչ իշխան (իմա՝ ի շանէ) ինչ եղեալ, թէ ընդ աներեւոյթ զաւրութիւնս կայցէ (VAR. կացցէ), եւ զոր շէզն կոչեն, թէ զվիրաւորս պատերազմի

Արդ, ցուցցե՞ն թէ գտանիցին իշացուլք ի Բաբելոնի. ապա ուրեմն յայտ է՝ եթէ անուանք առանց անձանց են յուշկապարկաց եւ իշացուց. եւ գիրք ըստ սովորութեան մարդկան կարծեաց եկեալ՝ նոյնպէս անուանեցին՝ առ ի զաւերն Բաբելոնի նշանակելոյ, իբրեւ զծովացուլն՝ զոր ի կովէ ելեալ ասեն, եւ զպայն՝ իմն ի մարդկանէ, եւ զառալէզն՝ ի շանէ: Եւ այն ոչ եթէ անձինք ինչ են, այլ անուանք զբանգտանաց, եւ բաջադանք մոլորելոց մտաց ի դիւաց: Զի ի մարմնաւորէ աներեւոյթ ինչ որ ելանէ, որպէս ոչ յաներեւոյթ իմեք մարմնաւոր: Ոչ երբէք ի մարդկանէ ելեալ պայն եթէ երես արարած իցէ (իմա՝ արածիցէ), եւ ոչ ի կովուց ծովացուլն ելեալ, եթէ ի ծովակս բնակիցէ: Զի մարմնաւորի չէ հնար՝ թէ ի ջուրս կեցէ, որպէս ոչ ջրականին՝ թէ ցամաքի կեցէ. եւ ոչ ի շանէ ինչ ելեալ՝ եթէ ընդ աներեւոյթ զաւրութիւնս ինչ կեցէ, եւ յորժամ վիրաւոր ոք անկեալ ի պատերազմի դնիցի՝ թէ լիզիցէ եւ ողջացուցանիցէ՞. այլ ամենայն առասպելք են եւ պառաւաց դրդջիւնք եւ մանաւնդ թէ ի դիւաց իսկ մոլորութենէ:

լիզեն եւ ողջանան. այն բարբա-
ջանք հեթանոսաց են եւ պառա-
ւանց առասպելք, մանաւանդ թէ
դիւաց իմն մոլորութիւն:

Այլ վիճեալ պնդին, թէ եւ մերումն
զծովացրու ձայն հանապազ լսեմք,
եւ ոմն թէ՛ զպայն իմ իսկ աշաւք
տեսեալ է, եւ ոմն՝ զի գառալէզն իմ
իսկ տեսեալ է լիզելով: Եւ այսպէս
յամառին որպէս հեթանոսս եւ զայն
ոչ իմանան, թէ դեւք լինին ի կեր-
պարանս եւ հանեն ձայն ահագին:
Եւ առաքեալ[ն] ասէ. Սատանայ
կերպարանի ի հրեշտակ լուսոյ, որ-
չափ առաւել եւս յանասնոց կեր-
պարանս ի վարհուրեցուցանել
զմարդիկ: Ոչ այդպէս, ասէն, այլ
յառաջին ժամանակսն զխոցս պա-
տերազմին ողջացուցին լեզուովն:
Անմիտ, արդ, զի՞ չբժշկեն, ո՞չ նոյն
պատերազմունք եւ արդ են: Ասեն.
յայնժամ դիցազունք էին: Արժա՞ն է
քրիստոնէից այնպէս խաւսել: Զի՞նչ
իցեն դիցազունքն՝ անմարմի՞նք են,
թէ՞ մարմնաւորք: Յայտ է թէ մարմ-
նաւոր մարդիկ զմարդկան ուրուա-
կանս ի պաշտան առեալ դիս
անուանեցին: Ապա եթէ անմար-
մինք էին, յայտ է թէ անմարմնոյն
չէ մարթ թէ ընդ կանայս ամուսնա-
նալ: Զի թէ այնմ հնար էր ծնու-
ցանել. բայց ոչ էր հնար, զի որ ան-
մարմինն է, նոյն եւ անսերմն է. զի
սերմ մարմնաւորաց է եւ ոչ ան-
մարմնոց: Զի որպէս ոչ գոյ ծնունդ
(var. ծնունդք) դիւաց, նոյնպէս ոչ

Այլ եւ վիճեալ եւս պնդին ի բա-
նիցն վերայ: Մին ասէ՛ թէ ի մերում
գեաւղ ծովացուլ զկով (իմա՛ ծովա-
ցուլս կով) գործեաց, եւ զգոչիւնն
հանապազ մեք լսեմք ամենեքեան:
Եւ միւսն ասէ. զպայն իսկ իմ աշաւք
տեսեալ է: Միթէ եւ զարալիզէ՞ն եւս
ոք կարիցէ ասել թէ եւ զայն ուրուք
տեսեալ իցէ: Եւ եթէ յառաջին ժա-
մանակսն արալէզք լիզէին զվիրա-
ւորս եւ ողջացուցանէին, արդ, ըն-
դէ՞ր ոչ լիզիցեն եւ ողջացուցանի-
ցեն, ո՞չ նոյն պատերազմունք են,
եւ նոյնպէս վիրաւորք անկանին:

Այլ յայնժամ, ասեն, դիւցազունք
էին: Եւ մեք զդիցն իսկ պահանջես-
ցուք ի նոցանէ: Մարմնաւորք էին
արդեաւք դիքն, թէ՞ անմարմինք:
Եթէ մարմնաւորք էին, յայտ է եթէ
մարդիկ էին, եւ զմարդկան ուրուա-
կանս ի պաշտան առեալ՝ դիս ա-
նուանեն: Ապա եթէ անմարմինք
էին, չէր մարթ անմարմնոցն ընդ
կանայս մարմնաւորս ամուսնանալ:
Զի եթէ այնմ հնար ինչ էր, ոչ երբէք
դադարէր սատանայ ի կանաց սա-
տանայածինս ծնուցանել: Զի որ
անմարմին ոք է, նա եւ անսերմն է:
Վասն զի սերմն մարմնաւորաց է եւ
ոչ անմարմնոց. եւ առանց սերման
ի կնոջէ ծնանել, միումն եւեթ մարթ
եղեւ՝ որ Արարիչն է բնութեան
մարմնոյ. եւ որպէս կամեցաւ, կա-

գոյ մահ. թէպէտ եւ անմահ Աստուածութիւնն է, սակայն անմահութիւն շնորհեաց հրեշտակաց եւ որդւոց (իմա՝ հոգւոց) մարդկան: Եւ դիւաց ոչ աճումն ունի եւ ոչ ծախումն, բայց մարդկան է աճումն ամուսնութեամբ (ՎԱՐ. մարդկան աճումն ամուսնութեան) եւ մեռանիլ վասն պատուիրանազանցութեան մարմնով եւ ոչ հոգւով: Եւ այլ արարած ոչ գոյ, որով կերպարանել կարէ՛ ոչ վիշապ եւ ոչ այլ ոք, բայց հրեշտակք եւ դելք:

րող եղեւ ի Կուսէ ծնանել առանց ամուսնութեան: Ուստի ամենայն իմաստնոց արտաքնոց իւրաքանչիւր դիցն տկարութիւն հայցեալ՝ շիշխեցին ասել՝ թէ ի կնոջէ ոք առանց ամուսնութեան ծնաւ: Եւ որպէս ոչ գոն ծնունդք դիւաց, նոյնպէս եւ՝ ոչ մահ: Թէպէտ եւ անմահ բնութեամբ Աստուածութիւնն եւեթ է՝ որ մշտնջենաւորն է, եւ ոչ յումեքէ առեալ սկիզբն լինելոյ, այլ եւ սկզբաւորացն եւ բանաւորաց պարգեւեաց աննախանձ զանմահութիւն, զհրեշտակաց եւ զդիւաց ասեմ եւ զոգոց մարդկան: Յորոց մարդիկ, քանզի յերկուց բնութեանց են՝ ի մարմնաւորաց եւ յանմարմնոց, յիրաւի սերին ծննդեամբ եւ գան յաճումն ամուսնութեամբ. եւ մեռանին մարմնովք եւ ոչ ոգովք՝ վասն պատուիրանազանցութեանն:

Այլ հրեշտակք եւ դելք ոչ յաւելուած ծննդեամբ առնուն եւ ոչ պակասութիւն մահուամբ. այլ որպէս հաստատեցանն, նոյնպէս եւ նովին թուով կան՝ առանց յաւելուածոյ եւ նուազութեան: Եւ ոչ այլ ինչ արարած գոյ՝ որ կարիցէ ի կերպարանս կերպարանս լինել, որպէս զվիշապացն եւ զնհանգացն համբաւեն. այլ միայն հրեշտակք եւ դելք՝ որ կարող են զաւղս զնդել եւ պարզել, եւ ազգի ազգի կերպարանս երեւեցուցանել... (էջ 46, տող 9-48, տող 13):

15. Հարցումն. Քաջք աներեւոյթ արարածք են Աստուծոյ, զպատե-

ւ եւ ոչ վիշապք զտոհմականս արդեանց կրեն, եւ ոչ գրաստ գոյ նո-

րազմունս նոքա հարկանեն, զորս երէից (var. էրէից) նոքա հարկանեն եւ զարմտիս կալոց նոքա կրեն եւ զգինիս ի հնձանաց որպէս վիշապք զտոհմականս անդէոց ծծեն:

Պատասխանի. Այսպիսի յիմարութեամբ լցեալ է երկիր: Մի՞թէ մարթ իցէ զայսպիսիսն քրիստոնեայ ասել: Ոչ քաջ լեալ է երբէք եւ ոչ վիշապ: Վիշապ բառ է, որ ինչ մեծ է յերկրի՝ վիշապ ասի ըստ Գրոց, թէ՛ Դու փշրեցեր զգլուխ վիշապին ի վերայ ջուրց. որպէս մարդ մեծանձն եւ յաղթանդամ սկայ ասի:

16. Հարցումն. Ասեն. քաջաց եւ վիշապաց տեարք (իմա՝ տաճարք) են ի լերինս բարձունս եւ բնակութիւնք, եւ զԱղեքսանդր կապեալ ունին ի Հոռոմ եւ զԱրտաւանդ՝ ի Մասիս եւ զԱրուանդ՝ ի գետս եւ ի մառանս.

Պատասխանի. Յորդուց մարդկան կենդանի են Ենովք եւ Եղիայ, այլ ամենեցուն զմահ՝ ճաշակեալ է: Բայց մոլորութիւն դիւաց խաբեաց զգիցապաշտս Հայոց, թէ զԱրտա-

ցա՝ եթէ զարդիւնս ի կալոց ուրեք կրիցեն, եւ ի գուր է կա՛լ կա՛լն ասել ումեք ի կալս, եւ ոչ՝ ա՛ռ ա՛ռ: Զի վիշապն որ ինքն գրաստ է, այնու զի անասուն եւ անխաւսունն է, զիա՛րդ որ ինքն գրաստ է՝ զայլ գրաստ վարիցէ: Զի վիշապի այլազգ ինչ բնութիւն չէ՝ եթէ ոչ աւձի, այն յայտ իսկ է: Եւ զաւձ յաղթանդամ կամ զգազան ինչ ծովածին՝ կոչեն գիրք վիշապ: Որպէս զմարդ յաղթանդամ հսկայ անուանեն, նոյնպէս եւ զաւձ ցամաքային անձոռնի եւ զգազանն ծովական լեռնաձեւ, զկիտացն ասեմ եւ զգեւրիւնաց, վիշապս անուանեն ըստ այնմ թէ՛ Դու շախշախեցեր զգլուխ վիշապացն ի վերայ ջուրց եւ ետուր կերակուր ժողովրդոց եթովպացոց... (էջ 48, տող 22-49, տող 1):

Եւ ոչ որս երբէք՝ որպէս մարդկան՝ արարեալ վիշապաց, կամ առնիցեն. եւ ոչ տաճարք իբրեւ մարդկան են նոցա ի բնակութիւն: Եւ ոչ զոք ի թագաւորազգեաց եւ ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի. զի կենդանիք ի մարմնաւորաց երկունս եւեթ կան՝ Ենոք եւ Եղիա:

Այլ որպէս զԱղեքսանդրէ խաբէին դեւք՝ թէ կենդանի կայցէ, որոց ըստ եգիպտական հնարողութեանն՝ կապեալ արկեալ կախարդանաւք զգեւ ի շիշ կարծեցուցանէին, թէ Աղէքսանդրոս կենդանի իցէ եւ մահ

լազդ գոմն արգելեալ է վիշապաց ի Մասիս, եւ է կենդանի եւ նա ելանելոց է եւ զաշխարհ ունելոց: Եւ ուրումն յանմիտ իշխանաց Հայոց հարցեալ զղծապատումն հմաւորականս, թէ ե՞րբ լինիցի Արտաւազդայ գալ ելանել ի կապանաց, եւ նոցա ասացեալ. եթէ ոչ կամիս զելանելն նորա, հրաման տուր ընդ ամենայն աշխարհս Հայոց դարբնաց, որ ար նաւասարդի է, ամենայն դարբին կոանաւ կոփէ ի վերայ սալի իւրոյ, եւ երկաթք Արտաւազդայ անդրէն հաստատին: Զնոյն հրաման կատարեն այժմ. ամենայն դարբին կոփէ կոանաւ իւրոյ ի վերայ սալի:

Սոյնպէս մեծացուցանէ սատանայ առ աշաբ զվիշապն, զի յորժամ ահագինք երեւեսցին՝ առցեն զնա ի պաշտան, թէ նահանգ ինչ իցէ գետոց կամ շահապէտ է: Յետ կարծեցուցանելոյն ինքն կերպարանի ստուերաձեւ երեւամբ ահեղաձեւ տեսիլ, եւ զարհուրեցուցանել կերպարանի կամ վիշապ, կամ նահանգ, կամ շահապետ, զի այնու (VAR. այնիւ) զմարդիկ յԱրարչէն ապստամբեցուցէ: Զի թէ էր նա-

խնդրիցէ¹. եւ գալուստն Քրիստոսի խայտառակեաց զխաբէութիւնն եւ եբարձ ի միջոյ զգայթակղութիւնն, նոյնպէս եւ մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց, եթէ գոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, եւ նա ելանելոց է եւ ունելոց զաշխարհս. եւ ի սնտի յոյս կապեալ կան անհաւատք, որպէս եւ հրեայք՝ որ ի գուր ակնկալութիւն կապեալ կան, եթէ Դաւիթ գալոց է՝ շինել յԵրուսաղէմ եւ ժողովել զՀրեայս եւ անդ թագաւորել նմա նոցա:

Եւ այնպէս ջանայ սատանայ՝ զի զամենայն ոք ի բարութք ակնկալութենէ վրիպեցուցէ եւ ի սնտի յոյս կապիցէ: Մեծացուցանէ յաշս մարդկան զվիշապս, զի յորժամ ահագինք երեւեսցին ոմանց՝ առնուցուն զնոսա ի պաշտան: Կարծեցուցանէ թէ եւ նահանգք ինչ իցեն գետոց եւ շահապետք վայրաց: Եւ յետ կարծեցուցանելոյ՝ ինքն կերպարանի կամ ի վիշապի կերպարանս, կամ ի նահանգի իմն եւ ի շահապետի, զի

¹ Աղեփսանդրի մասին այս առասպելը, որի մանրամասնութիւնները «Հարցումի» մեջ չենք գտնում, ծանոթ է եղել նաև Եղիշեիմ: Իր «Արարածոց մեկնութեան» մեջ, որից պահպանվել են միայն առանձին հատվածներ, Եղիշեմ գրել է. «Ապականացուին ամմահանալն չէ հնար, եւ թէ էր՝ լինէր իբրեւ զառասպելն, գոր ասեն՝ զԱղեփսանդրոս ոմն անմահ կայ՝ այնքան մաշեալ, որ լեզուն է միայն մնացեալ, գոր արկեալ ի շիշ, ասեն, հեծէ եւ ասէ. Ուրեմն թէ Ադամ անմահացեալ էր, լինէր իբրեւ զիս» (ձեռ. № 1267, էջ 77ա-77բ):

հանգ մարմնաւոր, ոչ երբեմն կնոջ պէս ցուլ անուն անուանին (VAR. անուանեն), ոչ մերթ մարդ երեւէր եւ մերթ աւձ, որով գաւձապաշտութիւն հնարեցաւ մուծանել յաշխարհս: Նոյնպէս եւ վիշապն՝ ոչ միանգամ վիշապ երեւէր, մերթ աւձ, միանգամ մարդ, որպէս ցուցաբն: Իսկ թէ մարմնաւոր ինչ է, ապա փոխի ոչ այլ թէ կալս ջորի ոք երեւին եւ աներեւութանան, եւ ի դաշտս երագազգ (VAR. երագ ազգ ազգ) ձգին եւ ընթանան զհետ երէոց, դեւք կերպարանին առ ի մոլորեցուցանելոյ զմարդիկ:

այնու զմարդն յիւրմէ Արարչէն թիւրեցէ: Զի եթէ էր ինչ նհանգն անձնաւոր, ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երեւէր, եւ երբեմն փոկ լինէր եւ զաւղորդաց ընդ ոտս անկեալ՝ հեղձուցանէր. այլ կամ կինն կայր, կամ փոկն փոկ:

Նոյնպէս եւ զոր շահապետ վայրաց կոչեն, ոչ մերթ մարդ երեւէր եւ մերթ աւձ, որով եւ գաւձապաշտութիւնն հնարեցաւ յաշխարհ մուծանել: Նոյնպէս եւ վիշապն ոչ մի անգամ աւձաձեւ երեւէր եւ միւս անգամ մարդակերպ, որպէս յառաջագոյնն իսկ ասացաւ թէ որ մարմնաւոր ինչ է, յայլ կերպարանս չկարէ փոխել:

Այլ թէ ի կալս ջորիք եւ ուղտք երեւիցին, դիւաց կերպարանք են այն եւ ոչ վիշապաց: Եւ եթէ ի դաշտս երագազանք ձգիցին, եւ հեծեալք իբրեւ զմարդիկ զհետ երէոյ արշաւիցեն, կեղծիք դիւաց են եւ ոչ ճշմարտութիւն ինչ իրաց (էջ 49, տող 9-50, տող 11):

Հարկադրված ենք ըստ մեր խոստման համառոտակի անդրադառնալ Մ. Մինասյանի «Գրիգոր Պարթևի կամ ս. Մաշտոցի վերագրուած «Հարցումը» և «Եզնիկ Կողբացի»» խորագրով հոդվածաշարին¹: Եվ քանի որ շեղվելու ենք բուն նյութից, մեր հոդվածի այս 8-րդ պարբերությունը եղիշեի օրինակով կարող ենք կոչել «արտաքոյ ելթն եղանակին՝ ութերորդ»²:

Ասել ենք արդեն, որ տողերիս գրողը իր մի հոդվածով³, երջանկահիշատակ ն. Ադոնցի հետ միասին, արժանացել է Մ. Մինասյանի բարեհաճ ուշադրությանը:

Ի՞նչն է եղել մեր այդ հոդվածի նյութն ու միտք բանին: Հետևելով ն. Ադոնցին և լրացուցիչ փաստեր մեջբերելով փորձել ենք ցույց տալ, որ Գրիգոր Պարթևի անունը կրող «Հարցմունքը» հայ գրականության ամենավաղ շրջանի ստեղծագործություններից է եղել, և որ այն Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» անունով հայտնի երկի սկզբնաղբյուրներից մեկը լինելով՝ գրվել է 5-րդ դարի 40-ական թթ. տարիներ առաջ:

Մեր ընդդիմախոսը, սակայն, ճգնել է հակառակն ապացուցել՝ կարծելով, որ «գիտնական», «աստվածաբան» «կուռ տրամաբանություն ունեցող», «գեղեցիկ ու անգերազանցելի լեզվով ու ոճով օժտված» և հազար ու մի այլ բարեմասնությունների տեր Եզնիկը չէր կարող այդ «խղճուկ», «անճարակ», «մակերեսային» (այս բոլոր շքեղ գնահատական-արտահայտությունների հեղինակն, անշուշտ, Մ. Մինասյանն է) գրվածքն օգտագործած լինել որպես աղբյուր. ուստի սկզբից գրվել են Եզնիկի աշխատության համապատասխան հատվածները, և դրանից շատ հետո միայն նրա «ստրկական հետևողություն» ստեղծվել է այս «Հարցումը»:

Տարօրինակ այս տրամաբանությունը՝ որևէ երկի համար աղբյուր ծառայած գրվածքները և՛ իրենց բովանդակությամբ, և՛ իրենց լեզվով ավելի կատարյալ են լինելու, քան նրանցից կախման մեջ գտնվող երկերը, ուստի գրականության ու լեզվի զարգացումը տեղի է ունեցել վարընթաց գծով լա-

¹ Հուլի Երկարբան այդ հոդվածաշարի մեզ հետաքրքրող մասերը տպագրված են «Հանդես ամսօրեայի» ստորև նշվող համարներում. 1972, № 1-3, էջ 73-94, № 4-6, էջ 199-212, № 7-9, էջ 347-354, № 10-12, էջ 439-462:

² [Խոսքը «Ստարալեզու հայ գրականությունը չորրորդ դարում» հոդվածում եղած խոստմանն է վերաբերում: Շահեկան ամբողջության նպատակով հարմար նկատեցինք այդ հոդվածի վերջին բաժինը (բնագրում՝ 8-րդ) տեղափոխել այստեղ: Խմբ.]:

³ Լ. Խաչիկյան, Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը»՝ որպես հայ մատենագրության երախայրի («Քաներ Մատենադարանի», № 7, էջ 301-330):

վից վատ, կատարյալից՝ անկատար: Ահա տեսական այս հիմքի վրա կանգնած մեր ընդդիմախոսը փառաբանում է Եզնիկին՝ որպես մի հեղինակի, որն ինքնաբավ լինելով, պետք չի ունեցել օգտվելու այլ հեղինակների գրվածքներից. և այս՝ այն դեպքում, երբ բացահայտված են արդեն շուրջ մեկ տասնյակ հունական աղբյուրներ, որոնցից Եզնիկն ընդարձակ էջեր է ընդօրինակել՝ հարմարեցնելով դրանք իր գրվածքի բովանդակութանն ու նպատակին¹:

Մեր ինքնահավան եզնիկագետը, իր ամեն մի խոսքին երկնառաք պատգամի ուժ վերագրելով, հայտարարում է, թե ինքն արդեն հերքել է «Ադոնցի և Խաչիկյանի բոլոր փաստարկումները»: Ադոնցին թողնելով հանգիստ՝ տեսնենք, թե ինչպես է նա հաշիվ մաքրել տողերիս գրողի հետ:

Եզնիկի աղբյուրներից շատերը, նշել ենք մենք վերոհիշյալ մեր հոգվածի մեջ, տրամախոսական կառուցվածք են ունեցել, այսինքն՝ գրված են եղել ճիշտ այնպես, ինչպես մեր «Հարցմունքն» է: Արդեն Գ. Գալեմբյարյանն է նկատել, որ «Եղծ աղանդոցի» հեղինակն ամեն կերպ ձգտել է փոխել իր աղբյուրի տրամախոսական ձևը:

Դեմ-դիմաց հրատարակած լինելով «Հարցմունքի» և «Եղծ աղանդոցի» ազգակից հատվածները՝ հնարավորություն էինք տվել մեր ուշիմ ընթերցողներին անձամբ համոզվելու, որ սկզբնաղբյուրը «Հարցմունքն» է, իսկ Եզնիկի համապատասխան հատվածները՝ ըստ մեծի մասի բառացի, երբեմն էլ բարեշտկված ու մշակված, քաղվածքներ են այդ բնագրից:

Հաշվի էինք առել նաև բավարար փորձ շունեցող սկսնակ բանասերներին և մի քանի բնորոշ զուգակշիռ հատվածների հատուկ անդրադարձել էինք մեր ներածական խոսքի մեջ:

Ահա դրանցից մեկը. «Հարցմունքի» մեջ գրված է.

Հարցումն. Մեղաւորք վասն մեղաց տանջին, իսկ տղայոց անմեղաց զի՞ տիրիցեն դէւք:

Պատասխանի. Զամենայն մարդ յորդեգրութիւն կոչէ Աստուած...» և այլն:

Եզնիկը, ձևափոխելով հարց ու պատասխանին, բովանդակությունը մատուցել է համառոտելով՝ այսպես. «Այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց, թէ մեղաւորք վասն մեղաց տանջիցին ի դիւացն, տղայոց անմեղացն

¹ Այս մասին տե՛ս Գ. Գալեմբյարյան, Նորագոյն աղբերք եզնկայ Կողբացոյ Ընդդիմ աղանդոց մատենին, Վիեննա, 1919:

ընդէ՛ր տիրիցեն դէւք: Զամենայն մարդիկ յորդեգրութիւն կոչէ Աստուած...»
և այլն:

«Այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց» խոսքերով եզնիկն ուղղակի մատնացուցց է արել իր աղբյուրը, որի մեջ, ինչպես տեսանք, նույն այդ հատվածը շարադրված էր հարց ու պատասխանի ձևով:

Նույնն են ապացուցում նաև մեր մատնացուցց արած մյուս օրինակները¹:

Ինչպես է «հերքում» մեր քննադատն այս և նման փաստերը. «Ինչպես այս, այնպես էլ մյուս փաստերը,- գրում է նա,- անուժ են, քանի շապացուցվի Հարցարանի վաղեմությունը եզնիկի երկի համեմատությամբ... էթե և, Խաչիկյանի պես դատելու լինենք, - շարունակում է նա, - եզնիկի բանավիճելու բոլոր նման դեպքերում պետք է ենթադրենք մի հարցարանաղբյուր»²:

Հիշեցնենք մեր ընթերցողին, որ եզնիկի երկի մեջ իրոք թաքնված են մի շարք հարցարանաղբյուրներ, ինչպես օրինակ՝ Մեթոդիոս Օլիմպիացու «Վասն անձնիշխանութեանը», Ադամանտիոսի «Յաղագս ուղիղ հաւատոյ յԱստուած» գրվածքը և այլն: Բառացի քաղելով սրանցից ամբողջական էջեր՝ եզնիկն, ինչպես ապացուցել է Գ. Գալեմքյարյանը, ճիգ ու ջանք է գործադրել իր աղբյուրների տրամախոսական ձևը ջնջելու³:

Պետք չէ անտեսել նաև եզնիկի մի այլ հավանական աղբյուրը, որը շնայած չի պահպանվել, սակայն որի գոյություն մասին հիմնավոր փաստեր է հրապարակ հանել բազմավաստակ Ն. Ադոնցը⁴: Խոսքը Թեոդորոս Մոպսուեստացու «Յաղագս որ ի Պարսս մոգութեան» (Περὶ τῆς ἐν Περσίδι μαγικῆς) երեք մասերից բաղկացած այն աշխատության մասին է, որ ձեռքի տակ ունեցել է Կ. Պոլսի նշանավոր Փոտ պատրիարքը: Աշխատությունը նույն պատրիարքի վկայությամբ ուղղված է եղել Մաստուբիոս անունով «ծագումով Հայաստանից քորեպիսկոպոսի», այսինքն գրվել է ի պատասխան առաջադրված հարցումների: Ադոնցը հանգել է այն համոզման, որ Մաստուբիոս քորեպիսկոպոս կոչվածը հենց Մեսրոպ Մաշտոցն է, հայ դպրության հանձարեղ հիմնադիրը⁵:

¹ Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 7, էջ 304-305:

² «Հանդէս ամսօրեայ», 1972, էջ 75:

³ Գ. Գալեմքյարյան, նշ. աշխ., էջ 86:

⁴ Ն. Ադոնց, Անձամոթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կյանքից՝ ըստ օտար աղբյուրների («Հանդէս ամսօրեայ», 1925):

⁵ Ե. Տեր-Մինասյանը «Հայոց գրերի գյուտի թվականի և այլ հարակից խնդիրների մա-

«Հարցմունքի» տրամախոսական ձևի կապակցությամբ մեր շատաբան ընդդիմախոսի մյուս ասածները արժանի չեն քննության:

Մեր բնագրի հնուիցնը ցույց տալու համար ուշադրություն էինք դարձրել և այն իրողությանը, որ նրա մեջ օգտագործված սուրբգրական հատվածները շատ տեղերում չեն համապատասխանում Աստվածաշնչի մեզ հասած բնագրին¹: Մենք երբեք նպատակ չենք ունեցել այս առիթով քննարկել նաև եզնիկի սուրբգրական հատվածների բնույթի հարցը, չնայած միշտ

սին» շատ արժեքավոր հոդվածի մեջ (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 7, էջ 38-45) փորձել է կասկածի տակ առնել Ն. Ադոնցի ուշագրավ առաջարկը Մաստուրիոս-Մաստուծոսին Մաշտոցի հետ նույնացնելու մասին: Սակայն նրա կասկածները հիմնավորված չեն. հենց Ադոնցի կողմից շրջանառության մեջ դրված տվյալներն օգտագործելով՝ Ե. Տեր-Մինասյանը նշում է, որ «Մաշտոց» անունը հունական մի այլ աղբյուրի մեջ տառադարձված է «Մաստիձե» և «Մաստե(ն)ձե» ձևերով, ուստի եզրակացնում է, որ եիշտ նույնպես պետք է տառադարձված լինե՛ր նաև Թ. Մոպսուեստացու կամ Փոտպատրիարքի մոտ: Սա տրամաբանական պահանջ չէ. «Մաշտոց» անվան շ և ց տառերը բացակայում են հունարենից, ուստի տարբեր ժամանակներում ապրած տարբեր հույն հեղինակներ իհարկե տարբեր ձևերով պետք է տառադարձեին իրենց ականջին խորթ այդ անձնանունը: Բերենք մի բնորոշ օրինակ. Նիկիո ժողովին մասնակցել է Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակեսը. սրա անունը, որի հունարեն տառադարձումը շատ դյուրին է, ժողովի արձանագրությունների մեջ պահպանվել է 3 տարբեր աղավաղ ձևերով՝ Արիստարֆոս, Արիստակիսոս, Արսափիոս (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա., 1959, էջ 112): Եվ եթե անձնանշելի աղավաղված է այսֆան պարզ տառադարձվող մի անուն, այն էլ նույն գրվածքի մեջ, մի՞թե տարօրինակ պետք է համարել «Մաշտոց» անձնանվան աղավաղ գրությունը հունական տարբեր աղբյուրներում:

Անընդունելի են նաև Ե. Տեր-Մինասյանի առակությունները Մաշտոցի ֆորեպիսկոպոս կոչման մասին: Ինչ բովանդակություն է ունեցել եկեղեցական այդ պաշտոնը ուրիշ երկրներում հետաքրքրական հարց է անշուշտ, բայց չի առնչվում Ադոնցի ուսումնասիրությանը: Հայաստանում, ինչպես գիտենք Փավստոս Բուզանդից, IV դարի կեսերին ֆորեպիսկոպոսական պաշտոն ուներ նշանավոր Դանիել եպիսկոպոսը՝ մի անձնավորություն, որ Հայոց կեղեցու ամենաազդեցիկ դեմքն էր՝ երկրորդ կաթողիկոսից հետո: Մաշտոցը նույն դիրքն ուներ Սահակ կաթողիկոսի ժամանակ. և եթե հունական աղբյուրը տեղեկություն է պահպանել նրա ֆորեպիսկոպոս լինելու մասին, որևէ հիմք չունենք այդ մերժելու:

Երկար անդրադարձանք Մաշտոցի պատվերով Թ. Մոպսուեստացու գրած «Յաղագս որ ի Պարսս մոգութեան» երկի հետ առնչվող հարցերին, որովհետև այդ երկու նշանավոր անձանց համագործակցությամբ ստեղծված (ավա՛ղ, մեզ չհասած) աշխատությունը, որ եղել է Պարսից ֆեշի ֆննադատությունը ֆրիստոնեական եկեղեցու դիրքերից, անտարակույս օգտագործվել է եզնիկ Կողբացու և V դարի այլ հեղինակների կողմից: Եվ այս կապակցությամբ Մ. Մինասյանի անպտուղ դատողությունները, որ արված են Ե. Տեր-Մինասյանի մեծ հեղինակությունը շարաշահելով, զուրկ են գիտական արժեքից:

¹ «Մեզ հասած բնագիր» ասելով նկատի ունենք Սուրբ Գրքի Զոհրապյան հրատարակությունը: Քաջ գիտակցում ենք, որ այն գիտական հետազոտությունների հիմք չի կարող հանդիսանալ, և որ վաղուց հասունացել է Հին և Նոր Կտակարանների հայերեն քարզմանության գիտական բնագիրը ստեղծելու անհրաժեշտությունը:

էլ գիտակցել ենք, որ հայ մատենագրության ինքնուրույն և թարգմանական հնագույն հուշարձանների միջնորդությամբ մեզ հասած աստվածաշնչային մեջբերումների մասնագիտական քննության ճանապարհով երևան են բերվելու անակնկալ ու հետաքրքրական նոր նյութեր՝ ի նպաստ դասական հայերենի հին շերտի գիտական ուսումնասիրությանը¹:

Մեր ընդդիմախոսն ավելի հանգամանորեն է ուսումնասիրել «Հարցմունքի» սուրբգրական հատվածները (այստեղ ևս անհարկի մանրուքների մեջ թաղվելով) և հասել է այն արդյունքին, որ նրանում Աստվածաշնչի 27 մեջբերումներ կան, որոնցից միայն 8-ն են նույնանուն Աստվածաշնչի մեզ հասած բնագրին, իսկ 19-ը, այսինքն՝ 70 տոկոսը, տարբերվում են: Եզնիկի զուգակշիռ հատվածներում կան ընդամենը 7 սուրբգրական մեջբերումներ, սրանցից 4-ը համընկնում են, իսկ 3-ը (շուրջ 40 տոկոս) տարբերվում²:

Արդ, այստեղից չի՞ հետևում արդյոք, որ «Հարցմունքի» հեղինակը (այժմ պետք է ասել թարգմանիչը) ձեռքի տակ ունեցել է հայերեն Աստվածաշնչի մի օրինակ, որը զգալապես տարբեր է եղել մեզ հասած խմբագրությունից: Եվ եթե այդ տարբերվող սուրբգրական հատվածներից թեկուզ մի քանիսը եզնիկի մոտ փոփոխված ու համապատասխանեցված են Աստվածաշնչի բարեշտկված խմբագրությանը (այդ բանը ցույց է տրված մեր կողմից), սրանից չի՞ բխում արդյոք, որ «Եղծ աղանդոցի» սկզբնաղբյուրը «Հարցմունքն» է եղել:

Անկանխակալ բանասերի համար հարցն, անշուշտ, պարզ է. «Հարցմունքի» սուրբգրական հատվածները չեն բխում եզնիկից. սկզբնաղբյուրը «Հարցմունքն» է և ոչ հակառակը: Մ. Մինասյանը, սակայն, երկար ու ձիգ բռնագրոսիկ դատողություններ է անում, Վահրամ Բաբունու (XIII դարի հեղինակ) «Հարցմունք եւ պատասխանիք» աշխատությունը, որ քննարկվող խնդրի տեսակետից արժեքագուրկ է, նույնպես մանրակրկիտ «հետազոտության» նյութ է դարձնում, պարզ հարցը խառնում ու խճճում է, որպեսզի ի վերջո հայտարարի, թե ինքը հերքել է արդեն «Աղոնցի ու Խաչիկյանի բոլոր փաստարկումները...»:

¹ 1945 թ. շարադրված մեր թեկնածուական թեզի մեջ, որ նվիրված է Եղիշեի «Արածոց մեկնութիւն» կորած աշխատության այն հատվածներին, որոնք պահպանվել են միջնադարյան այլ մեկնողական գրվածքներում, հատուկ գլուխ էինք նվիրել Եղիշեի օգտագործած Աստվածաշնչի օրինակին՝ բացահայտելով նրա մի շարք ուղագրավ տարբերությունները:

² «Համդէս ամսօրեայ», 1972, էջ 94:

Մենք ուրիշ փաստարկներ էլ էինք բերել «Հարցարանի» հնությունն ապացուցելու համար (խանդիռ երևակայական կենդանու և նահանգի ձիու հետ առնչված լինելու մասին տվյալների բացակայությունը «եղծ աղանդոցից» և այլն): Մրանք ևս, իհարկե, «հերքված» են մեր ընդդիմախոսի կողմից¹:

Ձեռք բերված հաղթանակի դափնիները հանգստի չեն կոչել Մ. Մինասյանին և նա, հայտարարելով, որ «Ադոնցն ու Լ. Խաչիկյանը անտեսել են Հարցարանի լեզուն և նրա մասին ոչինչ չեն ասել», կամովին իր վրա է վերցրել այդ թերին լրացնելու պատասխանատու ու դժվարին պարտականությունը:

Մինասյանի տեսական երևեալն այս խնդրում ևս գիտություն հետ հեռավոր առնչություն ունի. նա համոզված է, որ Վիեննայի Մխիթարյանները դասական հայերենի ուսումնասիրությունը այնպիսի կատարյալ աստիճանի են հասցրել, որ այլևս դժվարություններ չկան «ստույգ որոշելու գրաբար այս կամ այն գրվածքի պատկանելությունը այդ ժամանակաշրջանին» (այսինքն՝ V դարի առաջին հիսնամյակին)²:

Եվ այս ասվում է այն ժամանակ, երբ հայագիտության մեջ շարունակվում են կրքոտ վեճերը ոսկեդարյան և հունաբան կոչվող լեզվա-ոճական դրությունների հարաբերության ու ժամանակագրական սահմանների մասին, երբ դեռևս չեն ուսումնասիրված դասական հայերենի կատարյալ ստեղծագործությունը համարվող Հին և Նոր Կտակարանների հին ու նոր շերտերը, չեն բացահայտված շարահյուսական և բառամթերային այն տարբերությունները, որ գոյություն են ունեցել մի կողմից՝ սուրբգրական հուշարձանների նախնական-փուլանակի կատարված թարգմանությունների, մյուս կողմից՝ նույն բնագրերի հետագայում իրականացված խմբագրությունների միջև:

Այս ամենին անգիտակ մեր ընդդիմախոսը ձեռնարկում է «Հարցմունքի» լեզվի ուսումնասիրությանը երկու մակարդակներով: Նախ երևան է բերում շուրջ երկու տասնյակ բառեր ու կապակցություններ, որոնք կա՛մ տարբերվում են դասական հայերենի օրինակելի ձևերից, կա՛մ էլ ուղղակի սխալ են: Այսպես օրինակ՝ գրված է «կախարդքն», բայց պետք է լինի «կախարդան». գրված է «լկանս... ածէ», երբ լինելու էր «լկանս... ածեն»

¹ Նույն տեղում, էջ 81-82 և հետ.:

² Նույն տեղում, էջ 446:

(հոգնակի), «սերմն» բառը մի քանի տեղ գրված է «սերմ» ձևով (առանց վերջին ն-ի) և այլն:

Ձեռագրագիտական հետազոտությունների նվազագույն փորձ ունեցող բանասերն իսկ պետք է տեղյակ լիներ, որ նման գրչական տարրընթերցվածքների հիման վրա անհնարին է ժամանակագրական խրթին հանգույցներ լուծել, որոշել երկու տարբեր բնագրերից մեկն ու մեկի առաջնությունը կամ գրություն ժամանակը և այլն¹:

Ի պատիվ մեր ընդդիմախոսի պետք է ասել, որ նա չի բավարարվում գրչագրական տարրընթերցվածքների մանրակրկիտ հաշվառումով, այլ

¹ Վերջերս հայտնի դարձավ, որ Երուսաղեմի № 1912 ձեռագրի մեջ (ընդօրինակված 1369 թ.) նույնպես կա Գրիգոր Պարթևի «Հարցումներ», որի ԺԳ և ԺԶ հարցումները հրատարակվել են Ն. Պողարյանի կողմից (տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հտ. վեցերորդ, Երուսաղեմ, 1972, էջ 346-347): Մեր հրատարակության և Երուսաղեմյան ձեռագրի համապատասխան հատվածների միջև կան մեկ տասնյակից ավելի ուշագրավ տարբերություններ: Բերենք մի ֆանի օրինակ (նախ տալիս ենք մեր հրատարակության բառը կամ բառախումբը, ապա Երուսաղեմյան տարբերակը).

- | | |
|-----------------------------------|---------------------------------------|
| - «անեն եւ պակասեն» | - «անեն եւ ապականեն», |
| - «կէս անմարմին» | - «կէս առանց մարմնոյ», |
| - «գառալէզն» | - «գարալէզն», |
| - «գլխանդիրն» | - «գլխանդիտնն», |
| - «ընդ աներեայթ զարութիւնս կայցէ» | - «...բնակէ կամ կացցէ», |
| - «Ելանելոց է եւ գաշխարհ ունելոց» | - «...եւ գաշխարհ ունելոց», |
| - «կնոջ պէս ցոյ անուն» | - «կնոջ պէս յուրանաց անուն», |
| - «նոյնպէս եւ զհետ երէոց» | - «եւ ընդ հետ ընթանան էրէոց» եւ այլն: |

Առդ, հնարավոր է արդյո՞ք գրչագրական այս կարգի տարրնթերցվածքների հիման վրա որոշել որևէ երկի գրության ժամանակը կամ բանասիրական այլ խրթին խնդիրներ: Ժխտական պատասխան տալով այս հարցին՝ հարկ ենք համարում նշել, որ, մեր լեզվաբանների կողմից ձևակերպված ոսկեդարյան հայերենի կանոնների նկատմամբ տարբեր գրվածքներ ուսումնասիրելիս շեղումներ տեսնելով, մենք իրավասու չենք դրանք բոլորը ընդօրինակող գրիչների անուշադրության արդյունք համարելու: Հակապատմական կլիներ մտածել, որ V դարի ընթացքում ստեղծված բոլոր գրվածքներն անխտիր շարադրված են եղել դասական անթերի լեզվով, որը խաթարվել է հետագայում «անգրագետ» գրիչների կողմից: Ժամանակն է գիտակցելու, որ ընդօրինակությունների ընթացքում ոչ միայն աղնատվել, այլև հանախ շտկվել են հին բնագրերի լեզվա-ոճական թերությունները:

Այս կարևոր հանգամանքը, ցավոք, անտեսվում է ոչ միայն Մ. Մինասյանի, այլև շատ ավելի փորձ ու հմտություն ունեցող լեզվաբանների կողմից:

փորձում է բացահայտել նաև «Հարցմունքի» այն բառերն ու ոճերը, որոնք տարբերվում են «Եղծ աղանդոցից» ու չեն համապատասխանում դասական հայերենի կանոններին: Այդ էլ քիչ է թվում մեր բժախնդիր բանասերի համար, և նա ապավինում է նաև լեզվական իր հոտառությունը. «Մեսրոպյան հայերենը,- գրում է նա,- ունի իր ներքին հատկությունները, որոնք ավելի շատ զգացվում են, քան ցույց տրվում»¹:

Տերը գիտե, թե որքանով են զորավոր «զգացված», բայց «ցույց չտրված» լեզվական այդ հատկությունները. ինչ վերաբերում է «Հարցմունքի» թվով 6 այն նախադասություններին, որոնք մանրամասնորեն քննվելու են մեր գրաբարագետի կողմից՝ որպես ոսկեդարյան հայերենին անհարիր, նրա սկզբունքներին հակասող տեղիներ, ապա առանց դուշն կասկածի կարելի է հայտարարել, որ դրանք ոչինչ չեն ապացուցում:

Մ. Մինասյանը հայոց գրավոր լեզվի ձևավորման ու զարգացման ընթացքը պատկերացնում է այսպես. ի սկզբանե էր դասական գրաբարը՝ այսպես կոչված ոսկեդարյան լեզուն՝ անթերի իր բառապաշարով և քերականական ընտիր ձևերով: Այդ լեզվով շարադրված լավագույն երկերից է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը». Գրիգոր Պարթևի «Հարցմունքի» մեջ կան 6 նախադասություններ, որոնք չեն համատեղվում Վիեննայի Մխիթարյանների կողմից «հայտնագործված» ոսկեդարյան գրաբարի քերականական ու լեզվա-ոճական կաղապարի հետ, ուստի դրանից հետևում է պարզ ու որոշակի, որ «Հարցմունքը» «չի կարող գրված լինել հինգերորդ դարի առաջին կեսի գրաբարով»²:

Մ, երջանիկ անգիտություն:

Այս փայլող տրամաբանությունը առաջնորդվելու դեպքում, Խ. Աբովյանի բարբառախառն աշխարհաբարը Շիրվանզադեի կամ Նար-Դոսի լեզվի հետ համեմատելով, ստիպված պետք է լինեինք արձանագրել, որ «Վերք Հայաստանին» գրված է «Քաոս» կամ «Մահը» վեպից տասնամյակներ հետո, քանի որ նրա մեջ կան բազմաթիվ «շեղումներ» արևելահայ աշխարհաբարի հասուն շրջանի լեզվա-քերականական կանոններից: Անհեթեթ կլինի նման հետևությունը. բայց ինչո՞վ են տարբերվում սրանից Մ. Մինասյանի դատողությունները Գրիգոր Պարթևի «Հարցմունքի» լեզվի մասին:

«Հարցմունքը» շարադրված է պարզ ու դյուրըմբռնելի գրաբարով. նրա մեջ չկա նույնիսկ հունաբան բառ կամ կապակցություն, իսկ եթե կան

¹ «Համդէս ամսօրեայ», 1972, էջ 449:

² Նույն տեղում:

մեկ-երկու նախադասություններ, որոնք շեղվում են ոսկեդարյան կոչվող հայերենի դասական ձևերից, ապա դրանք այլ բացատրություն են պահանջում: Այդ երկը հունարենից թարգմանվել է հայ գրականության արշալույսին, երբ ոսկեդարյան հայերենն իր լինելության առաջին շրջանն էր բոլորում: Մի քանի տասնամյակ տևող գրական աշխույժ գործունեություն էր ծավալվելու այդ լեզվի կատարելության համար. բարբառային ազդեցությունից զտվելու, իմաստասիրական բարդ մտքեր արտահայտել կարենալու համար ժամանակ էր պետք, և համառ ջանքեր էին գործադրվելու: Եվ էթե «Եղծ աղանդոցը» մեկն է ոսկեդարյան գրաբարի հասուն շրջանի գեղեցիկ արդյունքներից, «Հարցմունքը» նրա սկզբնական թոթովանքներից է:

Նախամեսրոպյան շրջանում օտար լեզուներով Հայաստանում ստեղծված գրական այն հուշարձանները, որոնք թարգմանվել են V դարի սկզբներին և հասել մեզ, նույն այդ տարիներին շարադրված կամ թարգմանված այլ գրվածքների հետ միասին (պետք է որոնել ու գտնել դրանք) հենց այն մեծարժեք ստեղծագործություններն են, որոնց մանրակրկիտ հետազոտության ճանապարհով պետք է վեր հանվեն հայոց գրավոր լեզվի վաղ շրջանի առանձնահատկությունները: Մեր ընդդիմախոս Մ. Մինասյանը ցավոք հենու է գիտական այդ ճշմարտությունները գիտակցելուց:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԸ¹

Հայ ժողովուրդը 1962 թվականի մայիս ամսին տոնեց հայ գրի ու դպրության հանճարեղ հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը:

Մեր հանրապետությունը պատշաճ հանդիսավորությամբ նշանավորեց այդ մեծ մարդու հիշատակը, որն իր ժողովրդի պատմության դժնդակ մի շրջանում գտավ անխորտակելի այն զենքը, որով հայ ժողովուրդը դարեր շարունակ դիմագրավելու էր օտար զավթիչներին և ստեղծելու համաշխարհային ճանաչում ունեցող մշակույթ:

Քիչ ժողովուրդներ կան աշխարհում, որոնք հավաստի տվյալներ ունեն իրենց այբուբենի ստեղծման ու գրականության սկզբնավորման հանգամանքների մասին: Բարեբախտաբար, Մաշտոցի կյանքի ու գործունեության մասին պահպանվել են արժանահավատ սկզբնաղբյուրներ: Հասել է մեզ նրա ավագագույն աշակերտներից մեկի՝ Կորյունի գրած «Վարքն» իր ուսուցչի մասին. արժեքավոր տվյալներ կան նաև Ղազար Փարպեցու և Մովսես Խորենացու «Պատմություններում»:

Միակողմանի են այդ աղբյուրները. նրանցում հատուկ շեշտ է դրված Մաշտոցի քարոզչական գործունեության վրա և, ընդհակառակը, քիչ բան է ասված հայ գրի ու դպրության սկզբնավորման հետ կապված մի շարք կարևոր իրադարձությունների ու հարցերի մասին. այնուամենայնիվ նրանք հնարավորություն են ընձեռում ուրվագծելու Մաշտոցի կյանքի ու գործի ստույգ պատմությունը:

Ըստ այդ աղբյուրների՝ Մեսրոպ Մաշտոցը ծնվել է պատմական Հայաստանի Տարոնի գավառի Հացեկաց գյուղում շուրջ 360-362 թվականներին, Վարդան անունով շինականի ընտանիքում: Եղել են փորձեր նրան ազնվական ծագում վերագրելու. հայտնի է, սակայն, որ Մաշտոցի ծննդավայրը «կարճագատների» գյուղ էր, ուստի Մաշտոցը՝ հավանաբար ազատ շինականի որդի: Իր ճառերից մեկում նա ունի ուշագրավ այսպիսի տողեր. «Եւ այս յայտնի է, զի ոչ տոհմից փառաւորութիւն փառաւոր առնի առ Աստուած, այլ առաքինութեան բարեսոհմութիւն»²: Խիստ ուշագրավ են այս տողերը՝ շարադրված անտոհմիկների դիրքերից:

Մաշտոցն իր ծննդավայրում, հավանաբար ներսես Պարթևի բացած հունարեն կամ ասորերեն լեզվով ուսուցվող դպրոցներից մեկում, հմտանում է այդ լեզուների մեջ և Խոսրով Դ-ի թագավորության տարիներին գա-

¹ «Քանբեր Մատենադարանի», 1964, № 7, էջ 11-24

² «Յանախապատում հաոբ», Վաղարշապատ, 1894-96, էջ 238:

լիս Վաղարշապատ և մտնում արքունիք՝ զինվոր-գրագրի ստորին գործակալական պաշտոնով:

Կորյունը հաղորդում է, որ նա իր այս պաշտոնում տեղյակ ու հմուտ դարձավ աշխարհական կարգերին և իր զինվորական արվեստով սիրելի իր զորականներին:

Երկար շտեկեց Մաշտոցի ծառայությունը Արշակունյաց արքունիքում: Նա, ապրելով և աշխատելով մայրաքաղաքում, տեսնում էր հայ պետականության թուլացումը, նախարարական զորաբանակների մարտունակության ջլատումը՝ երևույթներ, որ կապված էին ֆեոդալական հարաբերությունների արմատավորման հետ: Նախարարներից շատերը պատրաստ էին ծառայագրվել օտար տիրակալներին և դավաճանել համընդհանուր հայկական շահերին՝ հարևանների հաշվին իրենց սահմաններն ընդարձակելու կամ այլ առանձնաշնորհումների ակնկալությամբ: Չկար ընդհանուր մի գաղափար, համագգային մի դրոշ, որի շուրջը համախմբվեին Հայաստանի կենսունակ ուժերը՝ դիմագրավելու համար մշակութային ինքնության վերացման նենգ ծրագրեր նյութող Արևելյան Հռոմեական կայսրությանն ու Սասանյան Պարսկաստանին:

Հնում ամեն մի ժողովուրդ, մանավանդ եթե նրան պատմականորեն բախտ էր վիճակվել միջազգային ռազմերթերի ու առևտրական ուղիների ճամփաբաժանի վրա ստեղծել իր հայրենի օջախը՝ պահպանելու համար իր ինքնությունը և ազատ գոյության իրավունքը, անհրաժեշտաբար ունենալու էր զինական զորություն և բարձր մշակույթ:

Հայ ժողովուրդը IV դարի վերջերին չունեի ո՛չ մեկը և ո՛չ մյուսը:

Գտնվելով շարունակ իրար բախվող Հռոմեական և Պարսկական կայսրություններին սահմանակից՝ հայերը ստիպված էին կա՛մ դաշնակցել արևելյան հարևանի հետ՝ կրելով արևմտյան հզոր հարևանի հարվածները, կա՛մ ընդհակառակը: Երկու դեպքերում էլ Հայաստանի հողը թատերաբեմ էր թշնամի բանակների բախումների, ժողովուրդը երկուստեք ենթարկվում էր գերեվարության, ավարառության և անգութ սրածուխության:

Չորրորդ դարի կեսերից պարսկա-հռոմեական բախումները վերսկսվեցին ավելի մեծ կատաղությամբ: ՅՅ3 թվականին Հուլիանոս կայսեր Արևելյան արշավանքից հետո Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև կնքված դաշնագրով կայսրությունը պարտավորվում էր չօգնել հայերին, եթե պարսիկները մտնեին Հայաստան:

Մի տարի շանցած՝ Շապուհ Բ-ն արշավեց մենակ մնացած Հայաստանի վրա: Հայ ժողովուրդը 4 տարի շարունակ, չստանալով դրսից որևէ օգնու-

թյուն, դիմադրեց պարսից գերազանց ուժերին, սակայն պատերազմն ավարտվեց հայերի պարտությունով¹:

Փավստոսի վկայությամբ՝ Շապուհի զորքերը Հայաստանում անգթորեն հրդեհում էին բնակավայրերը, գերեվարում, սպանում ու բռնադատում բնակչությանը, կողոպտում ու թալանում: Հատկապես ծանր հարված կրեցին հայկական քաղաքները, որոնք Արշակունյաց պետության ամուր հենարանն էին հանդիսանում:

387 թվականին Հայաստանը բաժանվեց երկու հզոր մրցակիցների միջև: Հայաստանի՝ Հռոմեական կայսրությանը միացված բաժնում Արշակունյաց թագավորությունը վերացվեց մեկ-երկու տարի հետո, պարսկական մասում մինչև 428 թվականը շարունակում էին ընդմիջումներով իշխել հայ թագավորներ, որոնք, սակայն պարսից արքաների կամակատարները դարձած՝ զուրկ էին ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորություններից:

Ղազար Փարպեցին Հազկերտ արքայի՝ Հայաստանի նկատմամբ բռնած դիրքը բնորոշում է՝ վերագրելով նրան այսպիսի խորհրդածություն. «Արդ, ի թագաւորել յազգէս մերմէ ի վերայ աշխարհին Հայոց՝ յամենայն այդպիսի կասկածանաց անհոգացեալ լինի թագաւորութիւնս մեր, եւ նոքա ցանկ երկիւղիւ եւ դողութեամբ ծառայեն մեզ եւ օտարոտիս ինչ եւ վնասակարս ինչ ոչ խորհին: Է՛ զի եւ սովորութիւն առնուն յանկէլ յօրէնս մեր, հանապազ խօսիւք ընդ միմեանս եւ ընդելական բարեկամութեամբ, ի զբօսմունս որսոց եւ ի խաղս, որ լինին ի միջի նոցա. այլ եւ ամուսնութեանց տուրեւառիւք հաղորդեալք առ միմեանս՝ զատուցեալք այնուհետեւ որոշին ի սիրոյ նոցա եւ յօրինացն»²:

Այսպիսով, հայ պետականության վերացման և հայերին զրազաշտական կրոն պարտադրելու ծրագիրը Սասանյան Պարսկաստանի՝ Հայաստանի նկատմամբ մշակած քաղաքականության հիմնական բովանդակությունն էր կազմում մանավանդ Հայաստանի բաժանումից (387 թ.) հետո:

Իրությունը ծանր էր ու անմխիթարական նաև հայ ազգային մշակույթի ու ինքնագիտակցության վիճակի առումով:

Դարավոր իր գոյության ընթացքում հայ ժողովուրդը ստեղծել էր հերոսական իր անցյալի և մաքառումների մասին էպիկական վեպեր ու եր-

¹ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 174 և հետ.:

² Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց եւ թուրք առ Վահան Մամիկոնեան, Տիպիս, 1904, էջ 18-19:

գեր, իր աստվածներին՝ վիշապաքաղ Վահագնի, նրա տարփածու Աստղիկի, Արա Գեղեցիկի ու Շամիրամի, հսկա Տորք Անգեղի ու այլոց մասին գեղարվեստական բարձր կատարելություններ մշակված առասպելներ, կրոնական տոների ու աշխարհական հանդեսների, խրախճանքների ու հուղարկավորությունների ժամանակ ժողովրդական գուսանները կատարում էին հիասքանչ երգեր, որոնք հղկվելով դարերի ընթացքում, սերնդից սերունդ անցնելով անկապտելի մասն էին կազմում ժողովրդի հոգևոր կյանքի:

Հայ ժողովուրդը, սակայն, չունեւ իր գիրն ու գրականությունը:

Մելեկյանների ժամանակ Այրարատյան երկրում իշխող երվանդյանները հունարեն լեզվով էին գրում իրենց արձանագրությունները: Արտաշեսյան հարստության հիմնադիր Արտաշես Ա-ից պահպանվել են արամեական արձանագրություններ: Տիգրան Բ-ի և Արտավազդ Բ-ի արքունիքում իշխում էր հունարեն գիրն ու գրականությունը: Արտավազդն ինքը գրում էր հունարեն ողբերգություններ ու պատմական գրվածքներ:

Արշակունի հայ թագավորները, Մ. Խորենացու վկայությամբ, պետական գրագրություններն ու պաշտոնական փաստաթղթերը շարադրում էին պահլավերեն ու հուններեն:

IV դարի սկզբներին Տրդատ Գ թագավորի և Գրիգոր Պարթևի ջանքերով քրիստոնեությունը Հայաստանում հայտարարվեց պետական կրոն: Այդ մեծ բարեփոխությունն առաջին հերթին քաղաքական նշանակություն ուներ: Նոր կրոնի տարածումով ու եկեղեցու ստեղծումով հայ Արշակունիները հույս ունեին, որպես զորավիգ թագավորական իշխանության, ստեղծել մի համապետական ուժեղ հաստատություն, որն ի վիճակի լիներ քրիստոնեության դրոշի ներքո միավորելու հայ նախարարների տնտեսական ու զինական ուժերը՝ օտար թշնամիների և սոցիալական պայքարի ելած ժողովրդական զանգվածների ընդվզումների դեմ:

Ժողովուրդը, սակայն, առերես ընդունեց քրիստոնեություն: Նոր և վերացական կրոնի էությունն ու բովանդակությունը անձանոթ էր մնում ժողովրդական զանգվածներին. ինչպես Փավստոսն է ասում, նրանք, ովքեր «ծանօթ էին յունարէն կամ ասորերէն գրագիրտական տարերքին, միայն սրանք էին փոքր ի շատէ հասկանում այդ կրօնը: Իսկ նախարարների ու շինականների միւս խառնադանջ բազմութիւնը... ոչ չնչին մի բան եւ ոչ մի նշոյլ իրենց լսածներից չէին կարող հասկանալ եւ մտքերում պահել» (Փավստոս, 3, ԺԳ):

Քրիստոնեության տարածմանը, անշուշտ, խանգարում էր նաև այն հանգամանքը, որ այդ գործն իրենց էին վերապահում ասորի և հույն քարո-

զիչները, որոնք Հայաստան էին գալիս հավատքի տարածման հետ մեկտեղ, նաև հեթանոսական մեհյանների ընդարձակ ու բարեբեր կալվածքները սեփականելու ձգտումներով: Քիչ չէին նաև Փառեն կաթողիկոսի (348-352) որդի Հովհան եպիսկոպոսի նմանները, որոնք կանգ չէին առնում ստորության ու քսության առաջ՝ թագավորներից նորանոր կալվածքներ շորթելու համար:

Հայաստանի պատմության ողբերգական այսպիսի շրջանում էր աչք բացել ու անցկացրել իր երիտասարդական տարիները Մեսրոպ Մաշտոցը: Եվ ահա, թողնելով գործակալական իր պաշտոնը մայրաքաղաքում, նա մեկնում է Գողթան գավառ՝ հեթանոսության դեմ պայքարելու և քրիստոնեության հիմունքները արմատավորելու մտադրությամբ:

Քաջատեղյակ հունարենին և ասորերենին՝ այդ նոր քարոզչին հաջողվում է մայրենի լեզվով մեկնաբանել քրիստոնեական վարդապետության հիմունքները և Գողթան գավառի տերերի զինական օժանդակությամբ արտաքսել երկրից հեթանոս քրմերին:

Քարոզչական գործունեության այս տարիները վճռական նշանակություն են ունենում Մաշտոցի համար. նրա միտքը լուսավորվում է այն գաղափարով, որ քրիստոնեության տարածման ու արմատավորման և ժողովրդի ինքնուրույն գոյության պահպանման համար անհրաժեշտ է ունենալ հայերեն գիր ու գրականություն:

Վերադառնելով Վաղարշապատ՝ Մաշտոցը իր մտքերին հաղորդակից է դարձնում Սահակ Պարթև կաթողիկոսին և արժանանում հավանության: Հայերեն գիր ու գրականություն ստեղծելու անհրաժեշտությունը գիտակցվում է նաև Վռամշապուհ թագավորի կողմից: Վերջինս հայտնում է, որ ոմն ասորի Դանիել եպիսկոպոսի մոտ, ըստ որոշ լուրերի, կան ինչ-որ «հայկական գրեր»:

Մաշտոցի ու Սահակի խնդրանքով մարդ է ուղարկվում Դանիել եպիսկոպոսի մոտ, և ստացվում են այդ գրերը: Մաշտոցը, հավաքելով մի խումբ մանուկներ, սկսում է սովորեցնել նրանց այդ «յանկարծագիւտ» գրերը, բայց շուտով համոզվում է, որ դրանք անկատար են, անբավարար՝ հայոց լեզվի հնչյուններն ու վանկերը լրիվ արտահայտելու համար¹:

¹ Դանիելյան այս գրերի ծագման, ֆանակի ու սիստեմի մասին ինչպես միջնադարում, այնպես էլ նորագույն պատմագիտական երկերում տարբեր և իրարամերժ տեսակետներ են արձարծվել: Մենք հակված ենք ընդունելի համարելու մեծանուն հայագետ Հ. Աճառյանի ենթադրությունն այն մասին, որ դանիելյան այդ գրերը հայկական են համարվել թյուրիմացաբար՝ շփոթելով արամյան կամ արմենական (հայկական) և արամեական համանչյուն անվանակոչումները. ուստի և Մաշտոցի տրամադրության տակ

Օգուտ չստանալով դանիելյան գրերից՝ Մաշտոցը չի վհատվում, այլ առավել վճռականությամբ լծվում է հայերեն գրերի ստեղծման գործին: Իր հետ վերցնելով մի խումբ պատանիներ՝ թագավորի հրամանով նա մեկնում է Ասորիքի Եդեսիա և Ամիգ քաղաքները՝ ասորի գիտնականների հետ խորհրդակցելու և իր աշակերտներին ասորական ու հունական կրթություն տալու նպատակով:

Ասորիքի մշակութային կենտրոնները, մանավանդ Եդեսիան, իրենց նշանավոր դպրոցներով վաղուց ի վեր գրավում էին հայ երիտասարդներին: «Այդ քաղաքում, ժամանակակից մի վկայությամբ, աստվածային դրդմամբ հիմնարկված էին մերձակա երկրների համար ասորերեն լեզվի դպրոցներ»: Նույն աղբյուրում հիշատակված են ի մասնավորի ասորի, հայ և պարսիկ դպրոցներ՝ իրարից զատ¹:

Ուշագրավ է նաև Ղ. Փարպեցու մի վկայությունն այն մասին, որ մինչև գրերի գյուտը հայ պատանիները «բազում թօշակօք եւ հեռագնաց ճանապարհօք եւ բազմաժամանակեայ դեգերմամբ մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան²»:

Եդեսիայի Բաբելաս (իմա՝ Բաբելոն) և Ամիգի Ակակիոս եպիսկոպոսները Մաշտոցին ընդունում են հաճությամբ և ըստ կարի նպաստում իր մեծ նպատակին հասնելու համար:

Մաշտոցը, «բազում աշխատութեանց համբերեալ», այնտեղ ուսումնասիրում է կիրառության մեջ եղող, ինչպես և գործածությունից դուրս եկած բազմաթիվ այբուբեններ, խորամուկ լինում նրանց առավելություններին ու թերություններին, վերլուծում հայերենի հնչյունական համակարգը, պարզում նրա բոլոր առանձնահատկությունները և այլն և այլն:

Գիտական խորաքննիչ այս հետազոտությունները Մաշտոցին բերում են այն մտքին, որ առկա այբուբեններից և ոչ մեկը չի կարող հիմք հանդիսանալ հայերենի համար. անհրաժեշտ է ստեղծել նոր ու ինքնուրույն այբուբեն:

սկզբից դրվել են ոչ թե իրոք հայերենի համար ստեղծված ինչ-որ նշանագրեր, այլ արամեական այբուբենների մի տարատեսակ: Համբահայտ է, որ արամեական այբուբենները պարունակում էին ընդամենը 22 տառանիշ. բնականաբար, նրանցով անհնար պիտի լինեի հայերեն լեզվով դպրոթյուն զարգացնել: Այս ենթադրության լույսի տակ հասկանալի են դառնում Կորյունի (նույնպես տարբեր մեկնաբանությունների տեղիք տված) խոսքերն այն մասին, որ դանիելյան նշանագրերը «յայլոց դպրութեանց թաղեալ (կամ փաղեալ) եւ յարուցեալ դիպեցան»:

¹ Հ. Տաշյան, Վարդապետություն առաքելոց անվավերական կանոնաց մատյանը, Վիեննա, 1896, էջ 195-196:

² Ղ. Փարպեցի, էջ 13:

Իր առաջ դրված գիտական խնդիրը Մաշտոցը լուծում է հանճարեղ խորաթափանցութեամբ. «Հայրական շափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աշովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղ-վաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ՝ յօրինէր սիղոբայիւք կապօք»¹:

Կորյունի այս նախադասութիւնը Մաշտոցի կատարած գործի էությունը հասկանելու համար վճռական նշանակութիւն ունի: Այստեղ հենց սկզբից ասված է, որ ստեղծված նշանագրերը և՛ք էին, այլ խոսքով չէին փոխառված կամ պատճենահանված գոյութիւն ունեցող այբուբեններից, ստեղծված էին նոր ի նորո: Շեշտում ենք այս հանգամանքը, որովհետեւ եղել են ու այժմ էլ կան գիտնականներ, որոնք ճգնել ու ճգնում են աշխարհում գոյութիւն ունեցած բոլոր այբուբենների տառաձևերի միջից (հաճախ դրանք վերից վար կամ աջից ձախ ու ձախից աջ շրջելով ու զանազան ձևափոխութիւններ կատարելով) գտնել հայերեն այս կամ այն տառը հիշեցնող մի նշան և պատահական նմանութիւնների հիման վրա որոշել մեր այբուբենի կամ նրա տառերի մի մասի «սկզբնաղբյուրը»: Այդ գիտնականները մոռանում են, որ այբուբենի ստեղծման գործի դժվարութիւնը տառաձևեր ընտրելու մեջ չէ բնավ, այլ լեզվի հնչունակարգի ճիշտ որոշման:

Վերը Կորյունից մեջբերված նախադասութեան մեջ այնուհետեւ ասված է, որ Մաշտոցը նորաստեղծ այբուբենը «նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց սիղոբաներով-կապերով»: Այս կարևոր հատվածը լուսաբանված է շատերի կողմից. նախընտրելի ենք համարում Մ. Աբեղյանի տված բացատրութիւնը, ըստ որի՝ նշանակեց (նշանակեալ) տերմինի տակ պետք է հասկանալ «հնչիւնի նշան ստեղծել», այսինքն՝ տառաձևի արտաքին գծագրութիւնը հորինել: Անվանեց տերմինը անշուշտ վերաբերում է տառերի անվանակոչութեանը՝ այբ, բեն, գիմ, դա, եչ և այլն: Կարգավորեց (կարգեալ) տերմինը ևս հասկանալի է և վերաբերում է հայոց այբուբենի տառերի դասավորութեանը այբ-ից մինչև քե (գուցե և դրանց թվական արժեքներ տալուն): «Հորինեց սիղոբաներով-կապերով» արտահայտութեան տակ, դարձյալ ըստ Մ. Աբեղյանի, պետք է հասկանալ «գիր կապ» կարգալու եղանակի, այլ խոսքով՝ կարգալ սովորեցնելու սկզբունքների մշակում:

¹ Կորյուն, Վարժ Մաշտոցի, ... ի ձեռն Մ. Աբեղեանի, Երևան, 1941, էջ 48: Այս հատվածն Աբեղյանը թարգմանում է այսպես. «Նա իր սուրբ աշով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր: Եվ այնտեղ շուտով նշանակեց, անվանեց և դասավորեց, հորինեց սիղոբաներով-կապերով» (էջ 49):

Կորյունը Մաշտոցի ստեղծած այբուբենը կոչում է սփանչելի: Իր մեծ ուսուցչին ներբողող երախտապարտ աշակերտի կողմից նետված գովասանական մի խոսք չէ այդ: Հայկական այբուբենն իրոք սքանչելի եղավ, այն առավել հարմարն է բոլոր այբուբեններից և, ինչպես իրավացիորեն նշում են մասնագետները, ներկայացնում է գրի զարգացման ամենաբարձր աստիճանը:

1. Այն ունի ձախից աջ գրություն, որն աջից ձախ կամ վերից վար գրության նկատմամբ ունի մի շարք առավելություններ:

2. Այն հիմնված է կատարյալ հնչյունական սկզբունքի վրա. հայերենի ամեն մի հնչյուն իր առանձին տառն ունի այբուբենում, և ամեն տառ միայն մեկ հնչյունի արտահայտիչ է:

3. Այն հիմնված է գրության անշատական սկզբունքի վրա, ուստի ամեն մի տառ, գրվելիս լինի նա բառասկզբին, բառամիջում, թե բառավերջին, մեկ և անփոփոխ գրության ձև ունի՝ ի տարբերություն պահլավական ու ասորական, ինչպես և հետագայում ստեղծված արաբական այբուբենների:

Իր գործը հաջողությամբ եղեսիայում ավարտելուց հետո Մաշտոցը մեկնում է Սամոսատ: Այստեղ նա դիմում է Հռոփանոս անունով մի գեղագիր հույն գրչի («գրիչ ոմն հելլենական դպրության») նորաստեղծ տառերը գեղագրչության արվեստին համապատասխան գծագրել տալու և այդ արվեստն իր հետ տարած աշակերտներին սովորեցնելու խնդրով¹:

Մաշտոցը պատմական իր առաքելությունը կատարել էր գերազանց հաջողությամբ: «Ճանաչել զհմաստութիւն եւ զխրատ» ծրագրային բառերը

¹ Մաշտոցի ու Հռոփանոսի համատեղ աշխատանքի մասին ևս տարբեր ենթադրություններ են արվել: Ոմանց կարծիքով՝ Հռոփանոսը եղել է ֆերական, և նրա օգնությամբ Մաշտոցը դասակարգել է իր ստեղծած այբուբենի տառերը հունական ֆերականական գիտության սկզբունքներին համապատասխան, պարզել է, թե որ ձայնավորներն են կարճ կամ երկար, որ բաղաձայններն են լերկ, միջակ կամ թավ և այլն: Այլ գիտնականներ կարծել են, թե Հռոփանոսն օգնել է Մաշտոցին հայ գրերի տեսակներ (երկարագիր, բոլորգիր, շղագիր և այլն) ստեղծելու գործում և այլն: Կորյունի պատմածից, սակայն, այլ բան չի կարելի եզրակացնել, քան այն, որ Հռոփանոսը, որպես հարտար մի գրիչ, բարետեսիլ և քննորինականության համար հարմար գծագրական տեսք է տվել արդեն հորինված հայկական տառերին և գրչության արվեստ սովորեցրել այդ նպատակով Սամոսատ տարված հայ պատանիներին: Այս եզրակացությունը ամրապնդվում է Կորյունի այն վկայությամբ, որի համաձայն հենց Հռոփանոսն է մագաղաթի վրա անցկացրել Մաշտոցի թարգմանչական գործունեության երախտաբարձր տողերը՝ հայերեն գրված առաջին նախադասությունը, որն ունեցել է ծրագրային նշանակություն՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հաննարոյ»:

մագաղաթի վրա գրվելով՝ հայ ժողովուրդը ստացավ իր ինքնագոյություն հզոր լծակը. բացվեց հայ ժողովրդի դարերով կապկապված լեզուն, և նա, հաղորդակից լինելով աշխարհի առաջավոր ժողովուրդների ստեղծած մշակութային արժեքներին, աննկուն կորովով լծվեց ստեղծագործական աշխատանքի՝ հարստացնելով համաշխարհային մշակույթը ինքնատիպ ու բարձր արժեքներով:

Ասորիքում Մաշտոցն այլևս գործ չունեք: Հավանաբար 405 թվականին իր աշակերտների հետ միասին նա վերադառնում է հայրենիք¹: Վաղարշապատից ոչ հեռու, Ռահ գետի ափին, Վոսմշապուհ թագավորը և Սահակ կաթողիկոսը նախարարների, գորքի և ժողովրդի հետ միասին ցնծագին գիմա-

¹ Մաշտոցի Վաղարշապատ վերադառնալը, ուստի և հայ գրերի ու դպրության ստեղծումը, ըստ Կորյունի, տեղի է ունեցել Վոսմշապուհի թագավորության վեցերորդ տարում: Իր «Վարքի» վերջում տառերի գյուտի թվականի մասին Կորյունը հաղորդում է նաև ժամանակագրական այլ կոորդինատներ: Ըստ այդմ, գրերի գյուտը տեղի է ունեցել պարսից արհա Հազկերտի գահակալության 8-րդ տարում և Մաշտոցի մահվանից (440 թ. փետրվարի 17) 35 տարի առաջ:

Թվում է, թե բազմատեսակ ժամանակագրական այս կովանները բավարար պետք է լինեին հայ գրերի գյուտի տարեթվի ստույգ որոշման համար: Սակայն բնավ այդպես չէ. նախ՝ սկզբնաղբյուրներում վստահելի տվյալներ չկան որոշելու համար, թե երբ են գահակալել Վոսմշապուհը և Հազկերտը, ուստի և որ թվականը պետք է լինի մեկի գահակալության 6-րդ, իսկ մյուսի՝ 8-րդ տարին: Խնդիրն ավելի է բարդացվել որոշ գիտնականների կողմից, որոնք որոնվող տարեթիվը գտնելու համար հիմք են ընդունել Կորյունի այն վկայությունը, որի համաձայն Մաշտոցն իր գյուտը կատարել է այն ժամանակ, երբ Ամիդում եպիսկոպոս է եղել Ակակիոսը, իսկ Եդեսիայում՝ Բաբուլասը (Կորյունի մեզ հասած բնագրում Բաբիլաս է գրված. այդ անունը, սակայն, համարել են Բաբուլաս անվան աղավաղում): Բաբուլասը եպիսկոպոս է եղել 412 թվականից, ուստի ուման (Գ. Տեր-Մկրտչյան) կարծել են, թե տառերի գյուտի հետ կապված աշխատանքները ավարտվել են 412 թվականից հետո: Ուրիշներ (Ն. Ադունց, Հ. Մանանդյան) զանազան նկատառումներով ենթադրել են, որ Կորյունի նախնական բնագրում Ռաբուլասի փոխարեն եղած պետք է լինի Թեոդորոս Մոպսուեստացու անունը, ուստի գյուտը կատարվել է IV դարի 90-ական թվականների սկզբներին (392-393):

Խնդիրն ավելի է խնճվել մանավանդ այն պատճառով, որ որոշ գիտնականներ, չնայած ստույգ տվյալների, չեն կարողացել ճիշտ որոշել Մաշտոցի մահվան տարեթիվը և այլն: Այսպիսով, հայ գրերի գյուտի տարեթիվը, տարբեր գիտնականներ տարբեր ելակետերով հաշվելով, ետ ու առաջ են տարել ֆանհանրեն՝ տարուբերելով 392-412 (նոյնիսկ 416) թվականների միջև:

Նորագույն ուսումնասիրությունների լույսի տակ (նկատի ունենք հատկապես Ե. Տեր-Մինասյանի «Բանբերի» 7-րդ հատորում հրատարակվող հոդվածը) թվում է, թե կարող ենք անտարակուսելի համարել, որ Մաշտոցի մեծ գյուտը տեղի է ունեցել իրոք նրա մահվանից 35 տարի առաջ, ուստի՝ կա՛մ 405 թվականի սկզբներին, կա՛մ էլ 404 թվականի աշնան ամիսներին:

վորում են հաղթանակով վերադարձող Մաշտոցին և բարձր ոգևորութչամբ, տոնական խրախճանքներով առաջնորդում նրան մայրաքաղաք:

Մաշտոցն այն մարդը չէր, սակայն, որ պետք է հանգիստ նստեր վաստակած դափնիների շուքի տակ: Սկսվում է նրա կյանքի մի նոր, ոչ պակաս արդյունավետ ու օգտաշատ շրջանը: Անհանգիստ այդ հանճարը, շրջապատված իր մերձավոր աշակերտներով, ծավալում է ծրագրված մի գործունեություն՝ հայերեն գիրը տարածելու, հայրենի երկրի բոլոր ծայրամասերում դպրոցներ հիմնելու, հարևան ու ազգակից ժողովուրդներին իր հանճարից բաժին հանելու, հունարենից ու ասորերենից թարգմանություններ կատարելու ու վերջապես՝ հայ ինքնուրույն գրականության հիմնաքարերը դնելու ուղղությամբ:

Նա անձամբ լինում է Մարաց կողմերում (Նախճավանի շրջան), իր երբեմնի քարոզչության վայրում՝ Գողթան գավառում, Սյունյաց աշխարհում, բյուզանդական տիրապետության տակ ընկած հայկական շրջաններում, Վրաստանում, Աղվանքում, Գարդմանքում, Տաշիրքում և այլ վայրերում, ամենուրեք ծավալում լուսավորական իր գործունեությունը՝ դպրոցներ հիմնում, ուսուցիչներ կարգում, գրագիտություն տարածում:

Այսպիսով, նա հանգիստանում է նաև հայագիր դպրոցի հիմնադիրն ու մեծ ուսուցիչը:

Մաշտոցի մասին գրվել են մի քանի տասնյակ մեծ ու փոքր ուսումնասիրություններ: Գրերի գյուտի հետ կապված ամեն մի մանրամասնություն իրավամբ գրավել է հայագետների ուշադրությունը, սակայն Մաշտոցի գործունեության ոչ պակաս արգասավոր բնագավառը, հայ գրականության ստեղծման բնագավառում նրա վաստակը մնացել է ստվերի տակ: Այս ուղղությամբ հետազոտություններ գրեթե չեն կատարվել. առկա ձեռագրական տվյալներն ամբողջությամբ դեռևս չեն հանվել ու արժեքավորվել: Այլ խոսքով՝ հայ բանասիրությունը դեռ մեծ պարտք ունի տալու հայ դպրության հիմնադրին:

Հասկանալի է, որ ներածական այս հոդվածում հնարավորություն չենք ունենալու նույնիսկ հարևանցիորեն շոշափել այդ հարցերը: Սակայն մի քանի խոսք ասել, այնուամենայնիվ, անհրաժեշտ է:

Մաշտոցի գրական զբաղմունքների մասին Կորյունը ժլատ տեղեկություններ է հաղորդում: Իր «Վարքի» վերջին էջում, երկու տարբեր առիթներով անդրադառնելով այդ հարցին, նա հայտնում է, որ Մաշտոցը գրել է բազմաթիվ դյուրըմբռնելի, հոգեշահ, բազմաբովանդակ ճառեր քրիստո-

նեական վարդապետության մասին և խրատական թղթեր է առաքել «ընդ ամենայն գաւառս»¹:

Մի շարք հայագետներ հանգել են այն եզրակացության, որ Կորյունի հիշատակած «յաճախագոյն, դիւրապատում» ճառերը հենց այն (թվով 24) «Յաճախապատում» կոչված ճառերն են, որ հասել են մեզ Գրիգոր Լուսավորչի անունով²: Դրանք խրատական բովանդակություն ունեն. ճառախոսը բացատրում է առաքինի կյանքի պայմանները՝ բարքերի մաքրություն, ժուժկալություն, սեր, ընկերասիրություն, հեղություն, գթություն: Տկարներին ու աղքատներին հորդորում է տոկալ կյանքի դժվարություններին, ենթարկվել ի վերուստ սահմանված կարգերին, բայց, միևնույն ժամանակ, զորավորներից ու մեծատուններից պահանջում է արդարադատությամբ ու գթասրտությամբ վարվել իրենցից կախման մեջ գտնվողների նկատմամբ:

Բնական ու հասարակական արհավիրքներով Աստված պատժում է իշխանավորներին, երբ նրանք «արհամարհեն զօրէնս եւ զիրաւունս տնանկաց եւ զողորմութիւնս կարօտելոց եւ զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին եւ անտես առնեն զարտասուս նեղելոց եւ ձայնի զրկելոց ոչ լսեն»³:

Այս ճառերն ունեն նաև ճանաչողական մեծ արժեք: Մի առիթով հեղինակը, օրինակ, խոսում է դարբնության, ոսկերչության և այլ արհեստների մասին, որոնք «ի պէտս մարդկան բնաւորեցան». արհեստավորները մեծ պատվի են արժանանում և ստանում իրենց հասանելիք վարձը, երբ կարողանում են «գեղեցկագոյն յօրինել զէնս կամ զարդս եւ կամ այլ ինչ գործուածս». և ընդհակառակը՝ նրանք անարգանք են կրում, տույժի ու տուգանքի տակ ընկնում, երբ «անարգի ու անպիտան» արտադրանք են տալիս⁴:

Հայոց կանոնագրքի միջնադարյան խմբագրությունների մեջ մուծվել է «Երանելոյն Մեսրոպայ հայոց վարդապետի» խորագրով մի փոքրիկ գրվածք, որն, անտարակույս, հատված է ավելի ընդարձակ մի բնագրից:

¹ Կորյուն, էջ 78, 90, 92:

² Այդ մասին տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, I, էջ 119-126: Ի միջի այլոց «դպրութեան գրի» հորինման մասին ուշագրավ տողեր կան «Յանախապատումի» «Վասն յօրինուածոց արարածոց» նաոի մէջ. «Նա եւ զբնութիւն արարածոց յօրինեաց որպէս զգիր դպրութեան եւ եղ անուանս, զի անուանին զընդրութիւնն տայցեն գրոյն ի միմեանց զորոշումն. եւ գիրն զբարս կարդասցէ անուանն» («Յանախապատում», էջ 89): Այս տողերը խիստ պատշան են Մաշտոցի գրչին:

³ «Յանախապատում նաոն», Վաղարշապատ, 1894-96, էջ 75:

⁴ Նույն տեղում, էջ 48:

Բանասեր Ն. Ակինյանը, հրատարակելով այդ գրվածքը¹, համոզված է եղել, որ այն «առանց տարակուսի հանված է Մաշտոց վարդապետի մեկ ճառեն»։ Գրվածքն ուղղված է հմայությունների դեմ և ազգագրական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում. հեղինակը թվարկում է իր ժամանակ գոյություն ունեցող հմայության տարբեր ձևերը («երազք եւ հմայք եւ յուռութք եւ բաջաղանք եւ դիւթութիւնք եւ թովչութիւնք եւ հարցուկք եւ ձեռնածուք եւ դեղահատք եւ խտիրք եւ որ ինչ նման են սոցին») և հայտնում, որ բոլոր նրանք, ովքեր հավատում կամ իրենք իսկ կատարում են այդպիսի հմայություններ, «նզովեալ են ի սուրբ եկեղեցոյ եւ արտաքս ընկեցեալ յաստուածային հրամանաց»։

Եթե նկատի առնենք այս բեկորի պարզ շարադրանքը, ուսուցողական բնույթը, ուղղակի կոչումներն իր ունկնդիրներին («մի՛ վարել հմայիք», «մի՛ երթալ զհետ երազոց», «մի՛ ոք զՅովսէփ եւ զԴանիէլ բերցէ ի մէջ» եւ այլն), կարելի է գալ այն եզրակացության, որ այն քաղվածք է ոչ թե Մաշտոցի մի ճառից, այլ նրա «խրատագիր եւ զգացուցիչ» շրջաբերական թղթերից։ Հետագա որոնումներով թերևս երևան գան այդ կարգի նոր հատվածներ, գուցե նաև ամբողջական թղթեր։

Հայերեն ձեռագրերից մի քանիստում պահպանվել է ազգագրական առումով խիստ հետաքրքրական մի գրվածք՝ ուղղված հայ հեթանոսական հավատալիքների դեմ. այն կրում է «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթևի, դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա» խորագիրը։

Այս գրվածքի մի կարևոր մասը, աննշան փոփոխություններով, մուտք է գործել Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» մեջ։

Կան անժխտելի հիմքեր՝ պնդելու համար, որ հայ մատենագրության հնագույն այդ հուշարձանը շարադրվել է «Եղծ աղանդոցից» առաջ, ուստի Եզնիկն է օգտվել նրանից և ո՛չ հակառակը։ Կան նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու համար, որ այդ հոդվածը Մաշտոցի գրչին է պատկանում և վերագրվել է Գրիգոր Լուսավորչին հետագայում (ինչպես «Յաճախապատում» ճառերը)՝ գրվածքի հեղինակությունը բարձրացնելու միտումով։

Արժեքավոր այդ աշխատության նպատակն է եղել հերքել Հայաստանում դեռևս հեթանոսական հավատալիքներն ու զրույցները քրիստոնեական վարդապետության տեսանկյունով²։

¹ «Համդէս ամսօրեայ», 1958, էջ 379-381։

² Ուշագրավ այդ աշխատությանն է նվիրված մեր «Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը» որպես հայ մատենագրության երախայրի» հոդվածը։

Յոթերորդ դարի մատենագիր եզնիկ քահանայի կազմած հայ կաթողիկոսների և թագավորների ցանկում կա այսպիսի մի ցուցում. «Կարգ գործոցն Գրիգորի նորոգեալ արամբ միով երանելեաւ Տարաւնեցոյ, որում անուն Մեսրոպ ճանաչէր»: Այս վկայութեան հիման վրա ակադ. Ն. Մառը ենթադրել է, թե «Հայկական ավանդութեամբ Մեսրոպին է վերագրվում հունական քարոզիչ ս. Գրիգորի մասին եղած առասպելի մշակումը»¹: Ն. Ադոնցը ևս, Գրիգոր Լուսավորչի մասին վարքաբանական նյութերի հավաքման ու շարադրման հանգամանքներին անդրադառնալով, ենթադրել է, որ այդ գործն առաջին անգամ կատարած պետք է լինի Մաշտոցը²: Եթե հետագա պրպտումներով նոր տվյալներ երևան բերվեն այս թեզն ապացուցելու համար, որ անհավանական չէ, ապա կպարզվի, որ Մաշտոցը եղել է նաև հայ առաջին վարքագիր-պատմագիրը:

Ձեռագիր և տպագիր Շարակնոցներից շատերի մեջ պահպանված է մի միջնադարյան ցանկ շարականների հեղինակների մասին («Որք զծորանս հոգւոյն արբին եւ ընդ ժամանակս ժամանակս երգեցին զեղանակաւոր երգս շարականաց»): Այդ ցանկում ասված է, որ «սուրբն Մեսրոպ (ասաց) զկարգն ապաշխարութեան»³:

Մեծավաստակ հայագետ, ակադեմիկոս Մ. Աբեղյանը իր «Հայոց հին գրականության պատմություն» դասական աշխատության առաջին հատորում, ինչպես և 1912 թվականին «Արարատ» ամսագրում տպագրած հոդվածաշարի մեջ, հետազոտելով հայ հին հոգևոր երգերը, հանգել է այն եզրակացության, որ «Ապաշխարության կարգի» երգերը իրոք կարող են գրված լինել Մաշտոցի կողմից⁴:

Բանասեր Ա. Մնացականյանը նոր փաստերով հաստատում է այս ենթադրությունը և ապացուցում, որ Մաշտոցին է պատկանում նաև «երից մանկանց» շարականների հնագույն մասը⁵, ուստի մենք այսօր հնարավորություն ունենք մեծարելու մեր դպրության հիմնադրին՝ նկատի ունենալով նաև նրա գեղարվեստական ստեղծագործությունները:

¹ Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов св. Григорием, арабская версия, СПб., 1905, с. 174-182:

² Н. Адонц, Армения в эпоху Ястиниана, СПб., 1908, с. 342:

³ Տէ՛ս, օրինակ, Շարական հոգևոր երգոց..., Էջմիածին, 1861, էջ Ա:

⁴ «Հայոց հին գրականության պատմություն», I, էջ 491-498:

⁵ Ա. Մնացականյանի «Մաշտոցը որպես բանաստեղծ» հոդվածը տե՛ս «Քանրեք Մատենադարանի», № 7:

Քացի վերոհիշյալ երգերից, Մաշտոցն, անշուշտ, գրել է նաև այլ հոգևոր բանաստեղծություններ: Դրանցից երկուսը հայտնի են մեզ Մատենադարանի № 1720 ձեռագրից (էջ 291ա-291բ, 336ա-339ա), դրանք կրում են «Աղօթք սրբոյն Մեսրոպայ Հայոց թարգմանչի» և «Սրբոյն Մեսրոպայ թարգմանչի ասացեալ աղօթք երրորդ ժամուն» խորագրերը: Դրանցից մեկում Մաշտոցն ունի կենսագրական ակնարկ պարունակող այսպիսի տողեր.

Աղաչեմ գֆեզ, Հոգիդ Սուրբ Աստուած,
 Զի եղիցիս ինձ առաջնորդ եւ զօրացուցիչ եւ օգնական,
 Շնորհեա՛ եւ ինձ լինիլ դարձուցիչ մոլորելոց,
 Աղ անհամելոց, լոյս խաւարելոց:

Այս տողերը շատ են պատշաճ Մաշտոցի լուսավորական գործունեությանը. նա իրոք եղավ իր ժողովրդի համար «դարձուցիչ մոլորելոց, աղ անհամելոց, լոյս խաւարելոց»:

Այսպիսով, Մաշտոցի հանճարը փայլել է ոչ միայն հայ գրերի ստեղծման իրոք տիտանական ու մեծ գործի մեջ, այլև նա հանդիսացել է հայ մատենագրության հիմնադիր, ճանաչողական ու գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող ստեղծագործությունների հեղինակ:

Իր կյանքի վերջին տարիներին արդեն 80-ին մոտեցած Մաշտոցը «զցայզ եւ զցերեկ», առանց դադարի շրջում է Հայաստանի հեռավոր անկյունները, տարածում հայ գիրն ու դպրությունը, դպրոցներ բացում, նրանց հարատևման համար միջոցներ որոնում, անդադրում ստեղծագործում և սովորեցնում: Մեծ հայրենասեր գիտնականի կյանքի թելը կտրվեց 440 թվականի փետրուարի 17-ին, շաբաթ օրը (ըստ հայկական հին տոմարի՝ մեհեկան ամսի 13-ին), Վաղարշապատ քաղաքում:

Հայոց հազարապետ Վահան Ամատունին, որ Մաշտոցի երախտավոր աշակերտներից էր, նրա մարմինը մեծ հանդիսավորությամբ ու շուքով ամփոփեց Օշական գյուղում, ուր մինչև օրս մնում է այդ մեծ մարդու գերեզմանը:

Կան գիտնականներ, որոնք կարծում են, թե Մաշտոցն իր գործունեության ընթացքում դժվարություններ չի կրել, դիմադրության չի հանդիպել, որ նա իր կենդանության ժամանակ իսկ պաշտելի է եղել մեր նախնիների կողմից և հակառակորդներ չի ունեցել¹: Այս տեսակետն, իհարկե, ճիշտ չէ:

¹ Տե՛ս, օրինակ, Ս. Մալխասյան, Մատենագիտական դիտողություններ, Երևան, 1961, էջ 24-26:

Ե՛վ Մաշտոցը, և՛ մանավանդ նրա աշակերտները հայ գրի և դպրութեան ստեղծման ու զարգացման ուղղութեամբ ծավալած իրենց առաջադիմական գործունեութեան ընթացքում հաղթահարել են մեծ դժվարութիւններ, կոտորել այլազգի եկեղեցականների դիմադրութիւնը, իսկ 428 թվականից (Արշակունցի հարստութեան բարձումից) հետո բախվել են նաև պարսից պաշտոնեութեան կողմից հարուցված արգելքներին:

Զպետք է մոռանալ, որ հայ պետականութեան վերացումից հետո պարսից արքունիքը աթոռագրկեց Սահակ Պարթևին և նրա փոխարեն հայոց կաթողիկոս կարգեց ասորի հոգևորականների: Որ օտարազգի այդ կաթողիկոսները, հենվելով Հայաստանի մի շարք վանական հաստատութիւններում և թեմերում եկեղեցական բարձր պաշտոններ գրաված իրենց ազգակից կղերականների վրա, պետք է հնարավոր միջոցներով արգելակեին հայ գրի արմատավորումն ու դպրութեան զարգացումը, այդ բխում է իրերի տրամաբանութիւնից, սակայն այդ մասին կան նաև հավաստի վկայութիւններ: Այսպես օրինակ՝ Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» աշխատութեան վերջաբանում ասված է, որ Տարոնի ամենախոշոր վանքերից մեկի՝ Գլակա վանքի վանահայրութեան պաշտոնը մինչև Թողիկ (վանահայր է եղել VI դարի վերջերին) գտնվել է ասորիների ձեռքում. «Ամենեքեան ասորիք էին, եւ տունն այն ասորի գրով եւ պաշտամամբ է վարեալ, մինչեւ Թողիկ փոխեաց զամենայն կարգս եւ զասորաց ցեղսն բնաւ Բալաճակաւ աւառ ի վանացն»¹:

Երկար տասնամյակներ է տևել ասորերենը հայ եկեղեցուց իսպառ վերացնելու և ասորի կղերականութեան դիմադրութիւնը կոտորելու համար, ուստի Մաշտոցի ու նրա աշակերտների կյանքի ուղին բնավ վարդերով պատված չի եղել: Սակայն Մաշտոցի հանճարեղ գյուտով դարերի ընթացքում կուտակված ու փոթորկող ժողովրդական հանճարը գտավ հայրենի մշակույթը ոռոգելու ուղին՝ կենսական սնունդ տալով ինքն իրեն ճանաչած, իր անկախութեան և ինքնութեան համար և՛ սրով, և՛ գրով մաքառելու անհողդողդ կամք ունեցող ժողովրդին:

Մաշտոցյան սերունդը մաքառեց այդ երկու ճակատներով:

Գրի աշակերտները՝ Եզնիկ, Կորյուն, Հովհան, Հովսեփ, Ղևոնդ, ապա՝ Եղիշե, Փավստոս, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի և բազմաթիվ ուրիշներ թարգմանեցին հունարենից ու ասորերենից և իրենք ստեղծեցին հին գրականութեան բոլոր ճյուղերին վերաբերող դասական գործեր՝ պատ-

¹ Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 287:

մագրական, փիլիսոփայական, ճարտասանական և քերականական մեծարժեք երկեր: Նրանք կատարելագործեցին մայրենի գրական լեզուն և բարձրացրին հայ ժողովրդի մշակույթը դարավոր գրականություն ունեցող ժողովուրդների մշակույթի մակարդակին:

Սրի աշակերտները՝ Վարդանանք ու Վահանանք, մարտի դաշտում պաշտպանեցին իրենց ժողովրդի պատիվը, իրենց ազգային ինքնությունը, իրենց նորաբողբոջ գիրն ու գրականությունը պարսից փղազեն բանակների դեմ:

Եվ այսպես, հարատևեց հայ ժողովուրդը, հարատևեց մեսրոպաստեղծ հայ այբուբենը, հարատևեց հազարամյա հայ մշակույթը կենաց ու մահուանվերջ գոտեմարտում:

**ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՄՈՎԱՅԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔԻ ԾԴ ԳՎԽԻ ՄԱՍԻՆ¹**

(Ադրբեջանում գտնված հին լատինական արձանագրության
առնչությամբ)

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», չնայած մի շարք խիստ քննադատությունների, ոչ միայն չի կորցրել իր դերը որպես առաջնակարգ ու հավաստի սկզբնաղբյուր, այլև վիմագիր նոր հայտնագործությունների շնորհիվ տարեցտարի ավելի մեծ նշանակություն է ստանում որպես փաստական անսպառ նյութերի հիման վրա կառուցած մի հույակապ պատմագրություն: Սակայն դեռևս աղբյուրագիտությունը մեծ անելիքներ ունի Խորենացու «Պատմություն» վարկը վերականգնելու և նրա մեծատաղանդ հեղինակին ըստ արժանվույն գնահատելու գործում:

Սույն հոդվածով մենք ցանկանում ենք վիմագիր նոր նյութի հիման վրա վերանայել Խորենացու «Պատմության» միայն մեկ գլխի (գիրք երկրորդ, գլուխ ԾԴ) մասին եղած քննադատությունները և ցույց տալ, որ այս դեպքում ևս Խորենացին, չնայած իր ձեռքի տակ եղած աղբյուրների միակողմանիության ու անբավարարության, հաղթանակող է դուրս գալիս իր նորագույն քննադատների հանդեպ:

Մ. Խորենացին իր «Պատմության» երկրորդ գրքի ԾԴ (54) գլխում պատմում է հետևյալը. «Աղմուկ շփոթից իմն լեալ յարեւմուտս, ընդ որ վստահացեալ Արտաշէս՝ նշկահեալ ընդդիմանայ Հռոմայեցւոցն տէրութեանն՝ ոչ տալով հարկս: Իսկ Դոմետիանոսի կայսեր ցասուցեալ՝ զօրս ի վերայ Արտաշիսի առաքէ, որոց հասեալ ի կողմանս Կեսարու, զՏիրան եւ զզօրսն արեւմտեան առաջի արկեալ՝ ածեն տագնապաւ մինչեւ ի քաջ ընդարձակ հովիտն Բասենայ, յորում ընդդէմ դիպեալ Արտաւագղ արեւելեայ եւ հիւսիսային զօրօքն, հանդերձ ամենայն որդւովքն արքայի, եւ պատերազմեալ՝ սաստկապէս վտանգին: Յորոյ ի վերջս պատերազմին հասեալ Սմբատ հարաւային զօրօքն՝ ընդ մէջ անցեալ ապրեցուցանէ զորդիսն արքայի, յաղթութիւն եւ զրաւ պատերազմին արարեալ: Զի թէպէտ եւ ծերագոյն էր՝ երիտասարդապէս յարդարեաց եւ մղեաց զճակատն եւ հետամուտ եղեալ հալածեաց զզօրսն Հռոմայեցւոց մինչեւ ի սահմանս Կեսարու: Զայս կամելով երգել յառասպելսն՝ Դոմետ զոմն ասեն եկեալ, որ է ինքն կայսրն Դոմետիանոս. ոչ ինքն եկեալ այսր, այլ զհրաման նորա եւ զզօրս այլաբանելով յանուն նորա կոչէն:

¹ «Տեղեկագիր» (ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ.), 1948, № 11, էջ 91-97:

Բայց ըստ բախտի եղեալ Արտաշիսի՝ մեռանի ի նմին ժամանակի Դոմե-տիանոս ի Հռոմ, եւ զկնի նորա ներուստ ոչ աւելի թագաւորեալ քան զմի ամ: Ընդ որ առաւել հպարտացեալ զօրացն Հայոց եւ Պարսից՝ ասպատակ եւս ի Յոյնս արարին: Ընդ սոսա հայելով եգիպտացոց եւ կողմանցն Պաղեստինացոց՝ արգելուն եւ նոքա զհարկիրն Հռոմայեցոց»¹:

Ինչպես Խորենացին ինքն իսկ ակնարկում է, այս գլխի շարագրութեան հիմնական աղբյուրը ժողովրդական առասպելն է, վիպասանքը: Բնական է ենթադրել, որ հեղինակին ծանոթ են եղել նաև այլ՝ գրավոր ու հավաստի աղբյուրներ, որոնց միջոցով նա կարողացել է առասպելից զտել նրա պատմական կորիզը և ցույց տալ, որ չնայած առասպելում երգվում է ոմն Դոմետի Հայաստան գալու մասին, բայց իրականում Դոմետը նույն ինքը՝ Դոմետիանոս կայսրն է, որն անձնապես չի եկել Հայաստան, այլ «զհրաման նորա եւ զգօրս այլաբանելով յանուն նորա կոչեն»:

Սակայն Խորենացու քննադատները, հակված լինելով միշտ և ամենուրեք կասկածել նրա հաղորդած պատմական փաստերին, ընթացել են բոլորովին այլ ուղղությամբ: Ելնելով միանգամայն սխալ այն դրույթից, որ հռոմեական քաղաքական շրջանակի մեջ մտնող երկրների կյանքում կատարված բոլոր իրադարձությունները գրանցվել են ժամանակակից հունահռոմեական աղբյուրներում, և որ այդ աղբյուրների հիման վրա շարագրված եվրոպական գիտնականների ուսումնասիրություններն անթերի են փաստական կողմերով ու շարագրանքի ճշմարտացիությամբ՝ Խորենացու քննադատների մեծագույն մասը մերժել կամ սրբագրել է նրա հաղորդած այն տվյալները, որոնք արտաքին աղբյուրներով չեն հիմնավորվել:

Մոմզենն իր «Հռոմեական պատմության» մեջ հայտնում է, որ Դոմետիանոսի (81-96 թթ.) և ընդհանրապես Փլաբիոսների դինաստիայի առաջին երեք կայսրերի օրոք բարեկամական հարաբերությունները Հռոմի և Հայաստանի միջև չեն խախտվել որևէ ընդհարմամբ²:

Խորենացին այլ բան է ասում, ուրեմն, ըստ նրա քննադատների, կա՛մ նա լավագույն դեպքում սխալվում է և կա՛մ ստում, հորինում իրենից չեղած և չսված բաներ: Այսպես օրինակ՝ Գ. Խալաթյանը իր «Армянский эпос в истории Моисея Хоренского» աշխատության մեջ (Մոսկվա, 1896 թ.) ուղղակի և առանց վերապահության քննարկվող գլխի տվյալները որակում

¹ «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», աշխատ. Մ. Աբեղյան և Ս. Հարությունյան, Տիգրիս, 1913, էջ 184-185:

² Mommsen, Römische Geschichte, t. V, երկրորդ հատ., էջ 393:

է որպէս մտացածին (“ВЫДУМКА”), իսկ ժողովրդական երգի վկայակոչումը՝ մի միջոց իր վրայից կեղծիքի պատասխանատուութիւնը դէն նետելու¹:

Այսպէս է դատում Խաչիկյանցը. Խորենացին հենց այնպէս, մի բան գրած լինելու համար հորինում է մի ամբողջ գլուխ Դոմեստիանոսի դէմ հայերի ընդվզման, զայրացած կայսեր կողմից Հայաստան զորք ուղարկելու, Բասենի հովտում տեղի ունեցած ճակատամարտի ու հայերի հաղթանակի մասին: Ապա, ցանկանալով հավաստի դարձնել այդ, հենվում է իր իսկ կողմից հորինված ժողովրդական երգի վրա, սակայն մի տողից ավելի «ժողովրդական» երգ չի կարողանում հորինել («Դոմեստ [զոմն ասեն] եկեալ») և այդ խղճուկ տողի մեջ Դոմեստիանոս գրելու փոխարեն, որով կկարողանար ճշմարտապատում դարձնել իր հորինվածքը, գրում է Դոմեստ, հետո նոր գլխի է ընկնում, որ դրանք տարբեր անուններ են, և անհրաժեշտ է այդ անվանը կցել նաև մի ծանոթութիւն այն մասին, որ Դոմեստը նույն Դոմեստիանոս կայսրն է, և այլն և այլն: Եվ այսպիսի «փաստարկներով» Խաչիկյանցը Խորենացու երկրորդ գրքի 54-րդ գլուխն ամբողջովին համարում է կեղծիք, պատմականութիւնից զուրկ մի հորինվածք:

Շատ ավելի զգույշ է մտնում քննարկվող գլխին Ա. Գարագաշյանը: Նա հավատում է Խորենացու ակնարկած առասպելի գոյութիւնը, ցավ է հայտնում հոռոմայեցիների դէմ Արտաշիսի մղած պատերազմի մասին հյուսված ժողովրդական երգի կորստյան առթիվ, բայց անտարակույս է համարում, որ վիպասանքի Դոմեստը Ներոնի հռչակավոր զորավար Դոմեստոս Կորբուլոնն է և ո՛չ Դոմեստիանոս կայսրը²: Այս կարծիքն առանց վերապահութեան ընդունվել է շատերի կողմից և ստացել քաղաքացիութիւն³:

Խորենացուն չհավատալու և մեզ հետաքրքրող դեպքերի ժամանակագրութեան տեղաշարժը առաջին դարի վերջերից դեպի ետ՝ դարի կեսերը,

¹ Хоренский,- գրում է Խաչիկյանցը,- прибегает к сочинительству, с целью придать больше оригинальности своему рассказу; но чтобы скрыть свою выдумку, стоящую в явном противоречии с достоверной историей, он сваливает ответственность за нее все на ту же аллегорическую мнимой народной песни, из которой сам историк не мог однако провести более одного имени-Домет (Г. Халатяни, Арм. эпос, Москва, 1896, с. 319-320):

² Ա. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 243:

³ Այսպէս օրինակ՝ ակադ. Հ. Մանանդյանը գրում է. «Վիպասանի մեջ հիշված է եղել, որ Հայաստան եկել էր և պատերազմում էր Արտաշեսի դէմ «Դոմեստ ոմն», որը իհարկէ ոչ թէ Դոմեստիանոս կայսրն է, ինչպէս սխալ ենթադրում է Խորենացին, այլ հոռոմայեցիների զորավար Դոմեստոս Կորբուլոնն է» (Հ. Մանանդյան, Քնն. տեսութ. Հայ. պատմ., հտ. Ա, Երևան, 1944, էջ 353):

Գարագաշյանի կողմից ըստ երևույթին հիմնավորվում է այն փաստարկով, որ Դոմեստիանոսի ժամանակ «չկար վէճ Հայաստանի համար ի մեջ Պարթեաց և Հռոմոց»¹:

Քննադատության այս ելակետային դրույթը թույլ է և շատ կողմերով խոցելի: Նախ՝ Խորենացին խոսում է ոչ թե Պարթևների և հռոմայեցիների միջև տեղի ունեցած վեճի մասին, այլ հաղորդում է, որ այն ժամանակ, երբ «աղմուկ շփոթից իմն լեալ [էր] յարեւմուտս», հայերն ընդդիմացան Հռոմեական տերությանը և դադարեցին հարկ վճարելուց: Բացի այդ, ինչպես հայտնի է, Դոմեստիոս Կորբուլոնը՝ Արտաշատի ավերիչն ու հայ-պարթևական բանակների պարտության մատնողը, ի վերջո ստիպեց Պարթևներին ընդունել Հայաստանի հանդեպ Հռոմի գերիշխանությունը, այնինչ Խորենացին խոսում է ոչ թե հայերի կրած պարտության, այլ ընդհակառակը՝ հռոմեական զորքերի՝ հայկական բանակներից կրած պարտության մասին՝ մի հանգամանք, որ չափազանց կասկածելի է դարձնում ռազմական իրենց բխստով հակադիր «ոմն Դոմեստի» և Դոմեստիոս Կորբուլոնի անձնավորությունների նույնացման փորձը:

Անշուշտ, Խորենացին, գրելով մեր կողմից քննարկվող իր գլուխը հիմնականում ժողովրդական երգի՝ վիպասանքի հիման վրա, կարող էր վրիպել, ժամանակագրական սխալներ կատարել և պատմական իրադարձությունները ներկայացնել ոչ իրական գույներով: Սակայն մի՞թե ժողովուրդը կարող էր վիպական երգեր հորինել, նրան պարտվող կողմ ներկայացնելով, այնպիսի մի ռազմական գործչի անվան շուրջ, որն իր հաղթական պատերազմական գործողություններով այնքա՛ն ավեր ու ավար էր հասցրել հայ ժողովրդին: Անտարակույս, ո՛չ: Ուստի Մ. Խորենացու «Պատմության» երկրորդ գրքի ԾԴ (54) գլխի բացառիկ արժեք ներկայացնող տվյալները ըստ էության չեն հերքված: Միայն նոր ուսումնասիրությունների ու լրացուցիչ փաստերի միջոցով կարելի կլինի պարզել դրանց արժանահավատության աստիճանը:

Այդպիսի նախնական մի ուսումնասիրության հնարավորություններ է ընձեռում 1948 թվականին Ադրբեջանում գտնված հին լատինական արձանագրությունը: Արձանագրության գյուտի պատմությունը հետևյալն է: 1939 թվականին Սանգաշալի երկաթուղային կայարանից մոտ 15 կմ արևելք, Ջինգիրդաղ լեռան ստորոտում (Քաբարխստան), Ի. Մ. Ջաֆարզադեն գտավ լեռան վրա փորագրված պատկերներ: 1947 թվականին Ադրբե-

¹ Ա. Գարագաշյան, նույն տեղում, էջ 253:

ջանական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը հնագիտական այդ վայրի ուսումնասիրությունը մտքրեց իր գիտական պլանի մեջ և 1947 ու 1948 թթ. այնտեղ ուղարկեց գիտական էքսպեդիցիաներ Ի. Զաֆարզադեի գլխավորությամբ:

Վերոհիշյալ էքսպեդիցիաների մասնակիցներն այդ վայրում և մերձակայքում գրանցեցին ու նկարագրեցին 123 հնագիտական օբյեկտ, որոնք մեծ մասամբ փորագրություններ են քարերի վրա ու պատկերում են եղնիկներ, այծյամներ, առյուծներ, ձիեր, շներ, որսի ու զոհաբերության տեսակներ, նավակներ, հավանորեն պաշտամունքային ծեսերի հետ առնչվող խմբական պարեր և այլն: Սակայն ամենահետաքրքիր հայտնագործությունը եղավ հռոմեական XII լեգեոնի թողած լատիներեն արձանագրությունը, որը գտնվեց Բեյուկդաշ լեռան ստորոտում, մի մեծ քարաժայռի վրա, 1948 թ. հունիսի 2-ին¹:

Արձանագրությունը, ըստ լեզվաբան պրոֆ. Պ. Խ. Տունբիլի ընթերցման ու համառոտությունների լրացման, կարդացվում է այսպես՝

IMPE(RATORE) DOMITIANO
CAESARE AVG(USTO)
GERMANIC(O)
I(NVICTO) IVLIVS
MAXSIMVS>
LEG(IO) XII FUL (MINATRIX)² *

Այսինքն՝ «Անհաղթ իմպերատոր կեսար Օգոստոս Գերմանիկոս Դոմետիանոսի ժամանակ. Հուլիոս Մաքսիմոս. XII «Կայծակնաշանթ» լեգեոն»:

Արձանագրության ընթերցումը (բացի 5-րդ տողի > նշանից, որը չի

¹ **И. М. Джафарзаде**, Древне-латинская надпись у подошвы горы Беюкдаш, «Доклады Академии Наук Аз. ССР», том IV, № 7, 1948, Баку, с. 307, տե՛ս այնտեղ նաև արձանագրության արտասպիրյունը:

² Նույն տեղում, **П. Х. Тумбиль**, Римская надпись I века н. э., обнаруженная в пределах Азербайджана (Кабаристан), с. 312-313.

* [Արձանագրության վերծանության նշգրտումը կատարել է Ե. Պոխտովը (տե՛ս նրա «Римская надпись I в. н. э. и легион XII фульмината», ИАН Азерб. ССР, 1949, № 1): Այն որոշ լրացումներով վերահրատարակվել է Կ. Վ. Տրևերի «Очерки по истории и культуре Кавказской Албании» գրքում (М.-Л., 1959, с. 342-343) և ունի հետևյալ տեխաւը. Imp(eratore) Domitiano Caesare Aug(usto) Germanic(o) I Julius Maximus> leg(ionis)XII Ful (minatae) = Իմպերատոր Կեսար Օգոստոս Գերմանիկոս Դոմետիանոսի ժամանակ. Հուլիոս Մաքսիմոս՝ Ֆուլմինատուսի XII լեգեոնի կենտուրիոնը [կատարեց]:

Ի դեպ, Կ. Վ. Տրևերը ծանոթ է Լ. Ս. Խաչիկյանի սույն հոդվածին և հղում է այն: Խմբ.]:

բացատրված) բավարար է, ուստի հռոմեական XII լեգեոնը Դոմեստիանոսի իշխանության տարիներին (81-96) ինչ-ինչ քաղաքական ու ռազմական նկատառումներով հասել է մինչև Կասպիականի ափերը: Հռոմեական աշխարհագիրների տվյալներով Դոնից մինչև Կասպիական ծով ընկած ընդարձակածավալ տարածքը, չպարփակվելով սահմանների մեջ, կոչվել է Ասիական Սարմատիա:

I-II դարի պատմիչ Սուետոնիոսը հաղորդում է, որ Դոմեստիանոսի ժամանակ ընդդեմ հռոմեական տիրակալության Սարմատիայում բռնկվել է ապստամբություն, որին զոհ է գնացել մի լեգեոն՝ զորահրամանատարի հետ միասին: Իմպերատորը ստիպված է եղել ապստամբության ճնշման նպատակով հատուկ արշավանք կազմակերպել դեպի Սարմատիա¹:

XII «Կայծակնաշանթ» լեգեոնը, որն արևելյան ռազմաբեմում հանդես է եկել նաև հետագայում, Հուլիոս Մաքսիմուսի հրամանատարության մեջ արշավել է Սարմատիա՝ ամենայն հավանականությամբ քաղաքական այս դեպքերի առնչությամբ: Արձանագրության գտնված վայրն արշավելու համար հռոմեական զորքերն ինչ ճանապարհ էլ որ ընտրեին, անցնելու էին Հայաստանի վրայով², ուստի և որևէ առնչությամբ շփման մեջ էին մտնելու հայ գինական ուժերի հետ՝ կա՛մ որպես դաշնակիցներ, կա՛մ որպես թշնամիներ:

Պատմական իրադարձությունների այս ոլորտում Մ. Խորենացու «Պատմության» քննարկվող գլուխը, հակառակ նրա քննադատների, հուշում է այլ մեկնություն: Դոմեստիանոս կայսեր ժամանակ Հռոմն ապրում էր ռազմական անհաջողությունների շրջան. կայսեր ձեռնարկած արշավանքները հիմնականում պաշտպանողական բնույթ էին կրում և մղվում էին անհրաժեշտության դրամամբ, ակամա: Դեցեբալի գլխավորությամբ հյուսիսից արշավում էին դակերը, որոնք հարվածի տակ էին պահում կայսրության պետական մարմնի ամենակենսական մասերը: Դոմեստիանոսն ի վերջո ստիպված եղավ դակերի հետ կնքել Հռոմի համար անպատվաբեր հաշտություն՝ պարտավորվելով ամեն տարի «նվեր» անվան տակ հարկ վճարել դակերին:

Հռոմի գերիշխանությունն ընդունած ժողովուրդները, օգտվելով ստեղծված քաղաքական նպաստավոր դրությունից, բնական է, որ պետք է

¹ Նույն տեղում, էջ 313:

² Տվյալ հարցի համար միևնույն է՝ ուր ուղեգծով. Սատաղա-Արտաշա՛տ, թե՞ Տիգրանակերտ-Արտաշատ (այս ուղեգծերի մանրամասն ուսումնասիրությունը տե՛ս ակադ. Հ. Մանանդյանի «Հին Հայաստանի համապարհները ըստ Պևտինգերյան փառագեղի» աշխատության մեջ):

ձգտելին թոթափել հռոմեական գաղութարարների ծանր լուծը: Հայաստանից ոչ հեռու, Սարմատիայում, ինչպես տեսանք, բռնկվում է ապստամբություն, որին զոհ է գնում մի լեզեոն:

Հայաստանում այդ ժամանակ իշխում էին Արտաշես-Տրդատի հաջորդները: Ճիշտ է, Խորենացին դեպքերը պատմում է՝ կապելով Արտաշեսի անվան հետ, բայց ապացուցված է արդեն, որ Արտաշեսը եղել է հայ թագավորների տիտղոսն այնպես, ինչպես Արշակը՝ Պարթևների, և Կեսարը՝ հռոմայեցիների մոտ: Եվ բացի այդ, Խորենացու հիմնական աղբյուրի՝ Ժողովրդական երգի մեջ, համակցման օրենքով, մի հերոսի (Արտաշես-Տրդատի) շուրջ են կենտրոնացվել մի քանի տասնամյակներում տարբեր արտաշեսների կողմից կատարված ու վիպական գոնավորում ստացած պատմական իրողությունները¹:

Այսպիսով, Տրդատի հաջորդներ Արտավազդի և Աշխադարի ժամանակ (82-108)², երբ արևմուտքում Հռոմի գործերը խառնվել էին («աղմուկ շփոթից իմն լեալ յարեւմուտս»), Արտաշես-Արտավազդը որոշում է դեն նետել հռոմեական անպատվաբեր լուծը և դադարում է հարկ վճարելուց ու թերևս, ինչպես սարմատացիք, ոչնչացնում է Հայաստանում գտնվող հռոմեական զորամիավորումները («...Արտաշես նշկահեալ ընդդիմանայ Հռոմայեցւոցն տէրութեանն՝ ոչ տալով հարկս»): Դոմեստիանոս կայսրը, լսելով այդ մասին, ստիպված է լինում զորք ուղարկել Հայաստան՝ ապստամբությունը ճնշելու համար («Իսկ Դոմեստիանոսի կայսեր ցասուցեալ՝ զօրս ի վերայ Արտաշիսի առաքէ»):

Հռոմայեցիք սկզբից հաջողություններ են ունենում. արևմտյան հայկական զորքերի հրամանատար Տիրանը, նահանջելով նրանց զորություն առաջ, Կապադովկիայի սահմաններից գալիս-հասնում է մինչև «ի քաջ ընդարձակ հովիտն Բասենայ»: Արևելյան ու հյուսիսային զորքերով վրա է հասնում Արտավազդը և ճակատամարտ տալիս, որը շնորհիվ օգնության եկած Սմբատի (հարավային զորքերի հրամանատար) ավարտվում է հռոմայեցիների պատմությունը («... Յորոյ ի վերջս պատերազմին հասեալ Սմբատ հարաւային զօրօքն ընդ մէջ անցեալ ապրեցուցանէ զորդիսն արքա-

¹ Հետաքրքիր է հիշել նաև, որ Խորենացու շարադրության մեջ Արտաշես-Տրդատը պատվով գործող անձի դերում է հանդես գալիս, իսկ, ընդհակառակը, Արտավազդը հայկական հիմնական գորաբանակների՝ արևելյան ու հյուսիսային զորքերի հրամանատարն է:

² Օգտվում ենք Գարագաշյանի «Ժամանակագրությունից» (տե՛ս «Քնն. պատմ.», հտ. Բ, էջ 253):

յի՝ յաղթութիւն եւ զրաւ պատերազմին արարեալ»): Հռոմայեցիք խուճապահար, հետապնդվելով հայերից, փախչում են «մինչեւ ի սահմանս Կեսարու»:

Խորենացու ժամանակ երգվող ժողովրդական առասպելում Հայաստան եկած հռոմեական զորքերի պետ է համարվել Դոմետր: Պատմահայրը գիտե, որ այդ անվան տակ ժողովրդական երգիչներն ի նկատի ունեն Դոմետիանոս կայսերը, բայց և տեղյակ է, որ նա անձամբ չի եկել Հայաստան, այլ «զհրաման նորա եւ զօրս այլաբանելով յանուն նորա կոչեն»: Նորագյուտ լատինական արձանագրությունը հաստատում է անուղղակի կերպով Խորենացու նաև այս տվյալը: XII լեգեոնը Սարմատիայում, ինչպես տեսանք, գործել է Դոմետիանոսի անունից, բայց՝ Հուլիոս Մաքսիմուսի հրամանատարությամբ¹:

Այս դեպքերի մոտավոր ժամանակը որոշելու համար կարևոր են Խորենացու հաջորդ տողերը՝ «բայց ըստ բախտի եղեալ Արտաշիսի՝ մեռանի ի նմին ժամանակի Դոմետիանոս»: Ինչպես ստույգ հայտնի է, Դոմետիանոսը սպանվել է 96 թվականին, ուստի հայ-հռոմեական այս բախումները կատարված պետք է լինեն 86 (Հռոմի պարտությունը դակերից) – 96 (Դոմետ. մահը) թվականների միջև:

Ուշագրավ են նաև քննարկվող գլխի հաջորդ դեպքերը: Ներվասի կարճատև թագավորության ընթացքում (96-98 թթ)², ինչպես և Տրայանոսի (98-117) թագավորության առաջին ինը տարիներին, հռոմայեցիները, զբաղված լինելով ներքին հարցերով և դակերի դեմ պատերազմելով, ուժ ու ժամանակ չունեին հայկական գործերով զբաղվելու: Հայերը կարողանում են ամրացնել իրենց նվաճումները և պարթևների հետ մեկտեղ ասպատակում հռոմեական սահմանները («Ընդ որ առաւել հպարտացեալ զօրացն Հայոց եւ Պարսից՝ ասպատակ եւս ի Յոյնս արարին»):

Այսպիսով, Մովսես Խորենացու Հայոց պատմության երկրորդ գրքի ԾԳ (54) գլխում պատմված դեպքերը հիմնականում հավաստի են և հիմնավորվում են պատմական այլ աղբյուրներով (հատկապես՝ նորագյուտ լատինական արձանագրությամբ): Ուստի և Խորենացու քննադատները այս դեպքում ևս չհաստատարված իրենց հարձակումներով անկարող են ստվեր գցել I դարի վերջին տասնամյակի քաղաքական անցուղարձի մասին հաղորդած նրա թանկարժեք տեղեկությունների ու նրա մեծատաղանդ «Պատմության» վրա:

¹ Շատ հնարավոր է, որ Խորենացին իր տվյալները ֆաղել է Հայաստանի տարածքում եղած համանման արձանագրությունից:

² Ըստ Խորենացու՝ թագավորել է մեկ տարի:

**ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈՎՀ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ»
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ***

Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» աշխատութեան համեմատական բնագրի հրատարակութեամբ¹ Մատենադարանը կատարել է գովասանքի արժանի մի քայլ՝ ընթերցող լայն հասարակութեանը տրամադրելով վաղուց ի վեր հրապարակից սպառված և մեր մատենագրութեան պատմութեան մեջ իր հայրենասիրական վեհ գաղափարներով ու օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի հերոսական դրվագների նկարագրութեամբ եզակի տեղ բռնող մի սկզբնաղբյուր: Սակայն այս հրատարակութեան նշանակությունը չի սպառվում վերոհիշյալով, մեր օրավուր բարգավաճող պատմագրութեան հետագա զարգացման համար չափազանց կարևոր է հայ մատենագրութեան ինչպես անտիպ, այնպես էլ հնում ոչ գիտական մեթոդներով հրատարակված երկերի համեմատական բնագրերի հրատարակման գործը: Արդ, այս հրատարակութեամբ Մատենադարանը սկիզբ է դնում իր հավաքածուում գտնվող հարուստ գրչագրերի համեմատութեամբ մի շարք պատմագրական և գիտական բնագրերի հրատարակմանը:

Բնագիրը հրատարակության է պատրաստել պատմական գիտությունների թեկնածու (այժմ՝ դոկտոր) Աշոտ Աբրահամյանը, որ, համեմատելով Մատենադարանում իրեն հայտնի 23 գրչագրերը, որոնք պահպանել են Հովհան Մամիկոնյանի աշխատութեան բնագիրը, ընտրել է նրանցից վեց լավագույն գրչագրեր և նրանց բաղդատման միջոցով (օգտագործելով նաև Կ. Պոլսի և Վենետիկի հրատարակությունները) կազմել է համահավաք բնագիր:

Որևէ երկի համեմատական բնագրի հաջող հրատարակման նախապայմանը տարբեր գրչագրերից բաղդատման միջոցով ստացված լավագույն տարրնթերցվածքների ճիշտ ընտրությունն է հրատարակչի կողմից և այն բնագրի մեջ մտցնելու կարողությունը: Առանց վերոհիշյալ պայմանի, խոսք անգամ չի կարող լինել որևէ երկի գիտական համեմատական բնագիր կազմելու մասին: Սակայն գրախոսվող բնագրի հրատարակիչը, հավանաբար իր աշխատանքը դյուրացնելու միտումով, որպես բաղդատական բնագիր ներ-

* «Տեղեկագիր» (ՀՍՍԻ ԳԱ հաս. գիտ.), 1944, N 1-2, էջ 141-150:

¹ Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, ՀՍՍԻ ժողկոմսովետին կից Պետական Զեռագրատուն Մատենադարան, աշխատությամբ և առաջաբանով՝ պատմ. գիտ. թեկնածու Ա. Աբրահամյանի, մասնագիտական խմբագիր՝ Ե. Տեր-Մինասյան, Երևան, 1941:

կայացրել է հրատարակության համար հիմք ծառայած № 1328 գրչագրի սովորական արտատպությունը՝ այլ գրչագրերի տարբերակները որպես հավելված տեղավորելով տողատակի ծանոթագրությունների բաժնում:

Ղեկավարվելով վերոհիշյալ տարօրինակ սկզբունքով¹ հրատարակիչը չի օգտվել հիմք հանդիսացող գրչագրի բնագիրը բազմաթիվ անխուսափելի աղավաղումներից ու թերություններից մաքրելու լայն հնարավորությունից, և, հակառակ իր հավաստիացման, նորանոր ու բազմապիսի աղավաղումներով ավելացրել է նախորդ հրատարակություններում տեղ գտած թերությունները:

Մեր հոգվածի բնույթը թույլ չի տալիս մեզ ցույց տալ բնագրի բոլոր աղճատումներն ու թերությունները, սակայն կանխելու նպատակով առաջիկայում հրատարակվելիք այլ երկերի բնագրերում նման տիպի թերությունների հնարավոր գոյությունը, ինչպես և որոշ նախադասություններ աղավաղումներից ազատելու նպատակով մենք թույլ ենք տալիս մեզ մեր թեզի ապացուցման համար բերել թերևս անհրաժեշտից ավելի թվով օրինակներ:

Նախ նշում ենք բնագրում տեղ գտած քերականական ու շարահյուսական սխալ ձևերը, աղճատված և կամ բովանդակությանը չհամապատասխանող այն բառերն ու դարձվածքները, որոնք հեշտությամբ ուղղվում են հրատարակչի կողմից արհամարհված մյուս գրչագրերի համապատասխան հատվածների միջոցով:

Բնագրում տպագրուած է.

Ըստ այլ գրչագրերի պետք է ուղղել².

Խրատել զիշխանսդ զայդոսիկ՝ լի- նել եկեղեցւոյ զարդս (էջ 43, տող 6)
Իսկ զՏիմոթէոս լուայ թէ գնաց... (44.7)

Խրատեա զիշխանսդ... (գրչագրեր ՎԼՊ)
Իսկ զՏիմոթէոսէ լուայ թէ գնաց... (ՄՊ)

¹ Հրատարակիչը հնարավոր է համարել, մի երկու տեղ շեղվելով իր սկզբունքից, ուղղել բնագիրը համաձայն այլ գրչագրերի ընթերցվածքների: Այդպիսի ուղղումների թվին է պատկանում էջ 84.5-ի «զմարդիկն բերին ի տեղի անցուցին» հատվածը, որի դիմաց № 1328 գրչագիրն ունեցել է «...ի Մեղտի անցուցին» ձևը: Թերևս № 1328-ի այս ընթերցվածքի պահպանումը հեղինակի սկզբունքի արդարացման միակ դեպքը լինե: Տեղին չէ նաև հիմք հանդիսացող գրչագրի հասկանալի ու հարթ «ե ոչ մի բան թագոյց (Վահան) ի նմանէ (ի Միհրանայ)» ձևի փոխարինումը «ե մի բան ոչ թագուցեալ ի նմանէ» ձևով (էջ 190.3-4):

² Օգտագործում ենք հրատարակչի համառոտագրությունները. Լ=№ 1886 գրչագիր, Բ=№ 1912 գրչ., Հ=№ 2618 գրչ., Մ=№ 1772 գրչ., Ս=№ 7898 գրչ., Վ=վեներտիկյան հրատարակություն (1832 թ.), Պ=Կ. Պոլսի հրատարակություն (1722 թ.):

- Ձի դեռ մանկունք երկրիս ի ...ի դպրոցս են (Լ)
 դպրոցի են... (48.11)
- ...գտեալ կիր ի բնակութիւն ...ի տանէ կոոցն...(Լ)
 կոոցն, սկիզբն արար եկեղեցւոյ
 (100.3-4)
- զի աւանք էին սոքա (Կուառս, զի աւանք էին սոքա մեծամեծք
 Մեղտի, Բրեխ եւն) բազումք... (ՎՍԼ)
 (111. 7)
- ...եկն այր մի եւ պատմեաց, եթէ ...գան ի վերայ մեր (ՀՎԼՍ)
 արք հիւսիսոյ գան ի վերայ (113.3-
 4)
- ...ակն լուսոյ դնէր ի նոյն ...գակնն լուսաւոր... (ՎԼ)
 տապանին(115.2)
- ...լուան զձայն սաղմոսերգու- ...գայր յանտառէն (Վ)
 թեան նոցա, զի գային յանտառէն
 (120.6-7)
- ...հանդերձ քահանայիւք եւ անու- ...հանդերձ ջահիւք... (ՎԼՍԲ)
 շահոտ խնկաւք (122.8)
- Բայց ի պատերազմէն արգելեալ ...արգել զնոսա Տրդատ (ԼԲՍ)
 թագաւորն ասելով (128.3)
- ...վասն ունելոյ զքեզ եկեալ է Ծ ...յիսուն եւ ութ հազար աւ...
 եւ ԸՌ եւ հրամայեաց զարացն... (ՀՄՎ) (աւ-ը շփոթված է եւ-ի հետ)
 (129.8)
- ...իջուցին ի հարաւակողմն ան- ... ի հարաւակողմն անտառին
 տառն (131.6) (ՎԼԲՍ)
- զոր տեսեալ ԳՌ արանցն, որ ի ...որ ի գեղջն կային (ՍԲԼՎ)
 վերայ գեղջն էին (131.10)
- ...ապա թէ ոչ քանդեալ գերկիրդ ...քանդեմ գերկիրդ քո...
 քո սրով եւ գերութեամբ (133.8-9) (ՎԼԲՍՀՊ)
- ...առաջի սրբոյ սեղանոյն (ման- ...ետուն ցմայր իւր (ԼԲ)
 կանն) երկրպագեցուցին Տեառն եւ
 բերին ետուն ցնա (150.5)
- ո՞չ ես զքեզ ծնայ եւ սնուցի եւ դու ... եւ զիա՞րդ դու զիս միայն թո-
 զիս միայն թողեր (151.3) դեր (ՎՍԼԲ)
- ...որ խոտաճարակքն էին ի ...որ խոտաճարակքն էին եկին ի
 վանսն (165.4) վանսն (ՎՍԼԲ)

...գեւթնեկեանն սպանին (175.1)	...գեւթանքեանն սպանին (ՎՂՍ)
...կալեալ զխելս կարմնճին (187.9)	...կամրջին (ՎՂՍՊ)
...երկու ոմանց (188.1)	...երկուց ոմանց (ՎՊ)
...այդ գերեզման ձեզի եղիցի շնորհելով Պարսից արքայի (195.7)	...շնորհիւ Պարսից արքայի (ՎՍ)
...մի՞թէ որդիս խնդրես յբանաց մերոց (209.3)	...յարանց մերոց (ՍԼՊԲ)
Յիրաւի է այդ անուն իմ (214.11)	Յիրաւի է անունդ ինձ (ՎՍԼԲ)
Իսկ նա գտէզն ձգեալ (223.4)	Եւ նորա ձգեալ գտէզն (ՎՍԼ)
...դու քրիստոնեայ լեր... եւ իւրեանքըդ քեզ (233.4)	...եւ դոքա քեզ (ՎՂՍՊ)
...զքաջ արծիւ (241.6)	զքաջ արծուի (ՎՂՍ)
...կաշի ասպարէ (256.4)	...կաշեայ ասպար (ՎՍ)
	...կաշէ ասպար (Լ)
...էր սա զատակաց յայլոց բանակացն (256.10)	...զատական յայլ... (ԼՍ)
...ջորով ամեհեաւք (256.5)	...ջորեաւք (ՊՀՄՎ)
Եւ եղեւ... դժուրթին ընդ պարսիկս եւ ընդ Վահան (168.4)	Եւ եղեւ գժտութիւն... (ՎՍ) և այլն և այլն:

Նմանօրինակ աղճատումների ու սխալների թիվը կարելի է առնվազն հնգապատկել: Դրանք հաճախ դժվարացնում են պատմվածքի ըմբռնումը, սակայն մեծ մասամբ անցնում են աննկատելիորեն... Բնագրի վրա ավելի բացասաբար են անդրադարձել աղավաղված այնպիսի նախադասությունները, որոնց ճշտմամբ ու լրացմամբ միայն հնարավոր է լինում հասկանել բնագիրը: Տեղի սղության պատճառով ստիպված ենք նման աղավաղումներից ևս բերել միայն սակավաթիվ օրինակներ:

Այսպես, էջ 47.3-5-ում կարդում ենք. «Տեառն եւ սիրելի եղբարց եւ հալածական մշակացդ վասն բանին կենաց ի տէր ողջոյն ասեմ, հանդերձ Տրդատաւ եւ ամենայն իշխանաւքս»: Եթե նույնիսկ ուշադրություն չդարձնենք շարահյուսական անհարթությունների վրա («Տեառն եւ սիրելի եղբարց» փխ «Տեառն սիրեցեալ եղբարցդ» - ՎՄՍ), դարձյալ անհնար կլինի որոշել, թե ով է գրության հեղինակը՝ բնագրի մեջ չմտցնելով և գրչագրում «կենաց» բացից հետո պահպանված «Գրիգորիոս արքեպիսկոպոս Հայոց» հատվածը:

52 էջում խոսվում է Երուսաղեմի պատրիարքի մահվան մասին առանց հիշատակելու նրա անունը. ըստ Լ գրչագրի՝ հատվածը պետք է լրացվի հետևյալ ձևով. «վախճանեցաւ Երուսաղէմի հայրապետն Սիմաբոս»։ «Իսկ Եղիազար եկեալ ի ճանապարհին հանդիպի սրբոյն Գրիգորի եւ Տրդատայ. եւ խնդացեալ յոյժ, դարձաւ զկնի նոցա մինչեւ ի Հոռոմ քաղաք: Եւ անդ կացեալ բազում աւուրս, ապա խնդրեալ ի նշխարաց սրբոց առաքելոցն մասն ինչ...» (52.12-53.3) հատվածից չի հասկացվում ով է խնդրողը. թվում է, թե խոսքը պիտի Եղիազարին վերաբերի: Լ գրչագրի համապատասխան հատվածում պահպանվել է խնդրողի անունը՝ «խնդրեալ սրբոյն Գրիգորի»:

«Պատմութիւն Տարօնոյ» աշխատութեան Ջենոբին վերագրված գլուխների վերաբերյալ բանասիրության մեջ եղել են շարժանք կրքոտ ու անխնա քննադատություններ: Այդ աշխատությունը համարվել է նոր ժամանակներում ստեղծված ու անհաջող մի կեղծիք: Այս թեզի ապացուցման համար հաճախ հենվել են նախորդ հրատարակությունների համար հիմք ծառայած գրչագրերում եղած մի բացարձակ աղավաղված նախադասության վրա, որի մեջ հեղինակը, իբր իր աշխատության կեղծիք լինելը սքողելու նպատակով, հայտնում է, թե՛ «ես յառաջագոյն գրեցի քան զնա (Ագաթանգեղոս)» (65.7-8): Լ գրչագրի հիման վրա հեշտությամբ վերականգնվում է սկզբնական բնագիրը՝ հետևյալ ձևով. «Եւ դուք մի ինչ աղարտէք զսակաւ պատմութիւնս եւ կամ թէ Ագաթանգեղոս ընդէ՞ր ոչ է գայսոսիկ յիշեալ, զի նա յառաջագոյն էր գրեալ»:

Դժբախտաբար, հրատարակիչն այս դեպքում ևս անխախտ է պահել իր «սկզբունքը»:

«...եւ գրեցին [ի վերայ արձանին] գայս. Առաջին պատերազմ եղեւ, որ յոյժ պատերազմող Արձան քրմապետն...» (94-95) անճանաչելի դարձած նախադասությունը պետք է ուղղվի, ըստ Լ գրչագրի, հետևյալ ձևով. «Այս առաջին պատերազմ եղեւ ընդ իրեարս, որ էր յոյժ սաստիկ, պատերազմին գլխաւոր Արձան քրմապետն...» և այլն:

Հրատարակիչը Լ գրչագրի «Եւ եղ (սուրբն Գրիգոր) ի ներս, ի տապանին զմի ակն պատուական, զոր եբեր ի Կեսարիոյ» միանգամայն պարզ ու հասկանելի նախադասությունից հրաժարվելով՝ գերադասել է հանուն իր շարաբաստիկ սկզբունքի բնագրում թողնել «Եւ եղ զնոյն տապանն ի նոյն պղնձի տապան. եւ եղ անդ զմին ակն լուսոյ, զոր եբեր ի Կեսարիայ» (100.10-101.1) նախադասությունը: Դժվարանում ենք ասել՝ վերոհիշյալ նախադասությունից արդյոք որևէ բան հասկացե՞լ են հրատարակիչն ու մասնագիտական խմբագիրը:

Ստիպված ենք նույն հարցն առաջադրել նաև «...զի մի կոխելով զպատուական նշխարսն, անհաշտ թշնամութիւն լիցի ընդ նա, որ մտանէն եւ որ ակնարկէն ընդ նա իսկ» (102.7-10) հատվածի առթիվ, որի դիմաց և գրչագիրը պահպանել է «...անհաշտ թշնամութիւն լիցի աստուծոյ ընդ նոսա, որք արկանեն եւ ընդ նա որ մտանէ» ձևը:

«...զի որպէս զայլ տեղեացն չէ ինչ գրեալ, զի թագաւորաց ժամանակագիրք են: Այս պատճէն առաջին պատերազմին Արձանին» (116.8-10) հատվածը պետք է ուղղել այնպես, ինչպես այն պահպանված է ԼՍ գրչագրերում և վենետիկյան հրատարակութեան մեջ, այսինքն՝ «...զի որպէս զայլ տեղեացն չեմ ինչ գրեալ ի թղթի, նոյնպէս եւ այլք իմս չիշեն: Այս պատճէն առաջին՝ Արձանին պատերազմին եւ որ ինչ գործեցաւ յաւուրս իմ»:

«Հրամայեաց [սուրբն Գրիգոր] վէմս ժողովել, զոր եւ կոչի Աւետեաց խաչ» (122.5-6) հատվածն անճանաչելի է դարձել. ի՞նչ պատճառով պետք է քարակույտը կոչվեր «Աւետեաց խաչ»: ՄԲԼ գրչագրերը «ժողովել» բառից հետո պահպանել են «բլրաձեւ, եւ կանգնեաց այդ նշան խաչի» բառերը, որոնց միջոցով փարատվում են բոլոր տարակուսանքները:

Հրատարակութեան համար հիմք ծառայած գրչագրի արտագրողը, հավանաբար շփոթելով նախագաղափար օրինակի և և և տառերը, աղավաղել է «եւ մտրակեալ [Տրդատ] զերիվարն իւր զկնի Գեղոեհոնի այնչափ փութապէս մինչ զի շատ քայլել նմա եւ ոչ ժ քայլ առաջի իւր» նախադասությունը՝ նրա վերջին բառերը փոխելով հետևյալ կերպ. «...զի շատ քայլ եւ (եւ քայլել) ոչ ժ քայլ» (135.10-136.2): Հրատարակիչը նույնիսկ բացարձակ գրչական սխալի դեպքում գերադասել է «անաղարտ» պահել իր սկզբունքը:

«Իսկ Նիհորճէն Որմիզդ գումարեալ զաւրս Պարսից...» (159.1) նախադասության մեջ թվում է, թե Որմիզդ-ը Նիհորճեն-ի (պետք է լինի՝ Նիխորճես) կրկնանունն է, այնինչ ԼԲՎ գրչագրերից պարզվում է, որ Նիխորճեսը սպանողն է Որմիզդի («Նիխորճէս, որ զՈրմիզդ եսպան...»):

Հոգվածի ծավալը չընդարձակելու համար նախընտրում ենք նշման արժանի մյուս օրինակները բերել առանց մեկնաբանումների: Ընթերցողի համար դժվար չի լինի բնագրի և այլ գրչագրերի դեմ առ դեմ դրված համապատասխան հատվածներից ջոկել խոտելին ու աղճատվածը անաղարտից:

Բնագրում տպագրված է.

«Միւս պատճառ վասն նորա եւ միւս քննութեան աղանդոյն Մե- նանդրի» (52.4-5)

Այլ գրչագրեր ունեն.

«Վասն երկուց պատճառաց, մի՝ վասն նորա, եւ միւս՝ վասն աղանդոյն Մենանդրի»

«...գրաւել զսիրտ նոցա ի յաշտութիւն» (67.5)

«...զի այս տուն թագաւորին Հայոց է եւ դուք իշխանք արքային Հայոց» (85.15)

«Իսկ զաւրացն ի մէջ առեալ սպանին արս Զ» (99.2)

«Եւ առեալ ածեր զնոսա ի տէրունական տաճարին տեղիսն» (106.2)

«...եւ ոչ ոք իցէ, որ կարիցէ հանել զգոսա, առ ի գտանել, ուր եղեալ ես» (116.2-3)

«...աւետարտս արձակեցաք ի ստորոտ Արձանին» (122.2)

«...առ եզր գետոյն, որ անցանէր ընդ մէջ գաւառին Հաշտենից» (138.10-139.1)

«Եւ պատարագս... բազում գառանց եւ աղքատաց բազում ողորմութիւն առնէին» (141.6-8)

«յաւուր միում առեալ [կինն Վարդպատրկայ իշխանին Արծրունեաց] փոքրիկ մանուկ մի ի ստեան, եւ էր անդրանիկ եւ գայր բազում յաւժարութեամբ...» (149. 19-11)

«...զառիվայրն, որ ի գլուխ Սազակայ է» (154.9)

«...առեալ զՄուշեղ տարաւ նոյն իշխանն Տարանոյ ի Դուին» (158.6-7)

«...զայս [^] ասացեալ յարձակեցան» (159.6)

«...գրաւել զսիրտ նոցա ի յաշտութիւն, այլ սովով եւ սրով հանել զվրէժս եղբաւրն իւրոյ, զոր եսպան արքայն Պարսից» (ՀՎԾԼ)

«...եւ դուք իշխանք նորա» (ՎԼՍ)

«Իսկ զաւրացն ի մէջ առեալ զքուրմսն սպանին արս Զ» (ՎԼՍ)

«...ի տերունական տաճարն» (ԼՍ)

«...եւ ոչ ոք կարէ գտանել զգոսա» (ՎՍԼ)

«...առ Տրդատ ի ստորոտ Արձանին» (ՊՀ)

«...առ եզր գետոյն փոքեր, որ անցանէր ընդ մէջ գաւառին Հաշտենից, որ երթայ ընդ արեւելս հիւսիսական» (ՎԼԲՍ)

«Եւ պատարագս... բազում գառանց բերեալ մատուցին աստուծոյ...» (ԲԼ)

«յաւուր միում առեալ զփոքրիկ մանկիկն, զիւր անդրանիկն, որ էր ի ստեան, գայ բազում յաւժարութեամբ...» (ՎԼԲՍ)

«...զառիվայրն, ի հարաւոյ կուտ վանացն որ ի գլուխ Արզակայ է» (ՎԼԲՍ)

«...առեալ Մուշեղ, զտէրն Մշոյ եւ Խութայ իշխանն Տարանոյ եւ Սասնոյ, տարաւ ի Դուին» (ՀՎՍՄՊԼ)

«...զայս ասացեալ, եթէ սուրբ Կարապետ, հա՛ս մեզ յաւզնութիւն, յարձակեցան...» (Լ)

«...թքակոծեաց զանմտութիւն նորա» (161.11)

«յիշեաց խոսրով զուխտ իւր եւ եկ առ աւար եւ գերութիւն» (164.6-7)

«Եւ ինքն առեալ զաւրս իւր Շ¹, երթեալ առ Մուշեղ. Յ այր թողեալ յանցս Մեղտեայ, եւ երկու հարիւր այր աշտենաւորս ի Սանասայ ի ծմակն թողեալ, եւ ինքն Մ այր առեալ գնաց ի Մուշն աւան առ Միհրան» (184.6-185.1)

«...Եւ զգպիրն վասն պատճառի ոչ ետ տանել ի բանտ» (193.4-5)

«... թքակոծեցին զնա եւ զանմտութիւն նորա պարսաւեցին» (ՎՆՄ)

«յիշեաց խոսրով զուխտն Մաւրկայ՝ որ ի մէջ նորա եւ իւր, եւ եկն անց ի Յոյնս շորեքտասան բիւրաւք, առ աւար եւ գերութիւն» (ՎՆՔ)

«Եւ ինքն առեալ արս եւթն հարիւր, եկն ի Մուշն աւան, երեք հարիւր այր թողեալ յանցս Մեղտեայ եւ երկու հարիւր այր աշտենաւորս եւ երկու հարիւր այր Մանասայ ցեղէն ի Ծծմակն թողեալ եւ ինքն երկու հարիւր այր առեալ ընդ իւր՝ եկն առ Միհրան» (Լ)

«...Եւ զգպիրն վասն պատճառոյ իրաց արկանել ետ ի բանտ» (ՎՆՍ)

Նման, անգամ ավելի սրտնեղիչ աղճատումներ հետաքրքրվողը կարող է գտնել գրախոսվող բնագրի համարյա բոլոր էջերում (հմմտ., օրինակ, 157.4, 159.10, 162.15, 163.1, 179.3, 184.1, 186.4, 188.3, 190.6, 193.4, 200.8, 203.8, 204.2, 206-207, 209.1, 211, 216.1, 221.1, 232.1, 237.6, 243.2, 246.1, 246.6, 249.2, 250.4, 263.3, 265.1, 268.10 և այլ էջերի բնագրերը համապատասխան տարբերակների հետ): Մենք հնարավորություն չունենք և ավելորդ ենք համարում մեջբերել ուրիշ օրինակներ ևս:

Անցնենք այլ տիպի թերությունների քննարկմանը:

Հրատարակիչը բնագրից դուրս է նետել բազմաթիվ հետաքրքիր պարբերություններ միայն այն բանի համար, որ նրանք բացակայում են №1328 գրչագրում: Այդ քայլին արգելք չի հանդիսացել ո՛չ այն փաստը, որ առանց այդ պարբերությունների բնագիրը հաճախ դառնում է անմիտ ու անհասկանալի, ու ո՛չ էլ այն, որ մյուս գրչագրերը համարյա առանց բացառության պահպանել են այդ պարբերությունները:

¹ Այս նախադասության մեջ խիստ կարևոր է հատկապես Շ-ի ուղղումը «եթն հարիւր»-ով: Եթե գումարեմք Մեղտիում թողնված գորբերի թիվը (300) Ծծմակում թողնվածի (200) և իր հետ վերցրածի (200) հետ, ապա կստանանք 700 և ոչ՝ 500: Անշուշտ, սխալն առաջացել է է և Ե տառերի նմանությունից: Աղբյուրագետի առաջնահերթ խնդիրներից մեկն էլ իր կողմից հրատարակվող բնագիրը նման աղավաղումներից մաքրելն է:

նման շատ դեպքերից նշենք միայն մի քանի ակնառու օրինակներ.

ա) 105.5 էջում «Եւ շարժեալ ծածկեցաւ տեղին» բառերից հետո ԼՎՍ գրչագրերում պահպանված «իսկ վաղին ածեալ... եւ ոչ գտին» պարբերութիւնը՝ Դեմետրեի տաճարում քրմերի թաքցրած գանձերը գտնելու նպատակով կատարված ապարդիւն որոնումների, այդ տաճարի հիմքի վրա եկեղեցի կառուցելու և այլ դեպքերի մասին:

բ) 112.5 էջում «...եւ պարսաւորս Մ եւ Չ» բառերից հետո նույն ԼՎՍ գրչագրերում պահպանված հատվածը («իսկ Պարեխ... զգաւառն Հաշտենից») Պարեխ, Կետեղք, Բաղու գյուղերի երգերի ու պատերազմողիների թվի մասին, որ, հակառակ հեղինակի խոստման, բացակայում է բնագրից:

գ) 140.3 էջում «Իսկ ընդդէմ դարձեալ զարապետն Գեղոեհոննի» բառերից հետո նույն գրչագրերում պահպանված խիստ հետաքրքիր և ընդարձակ հատվածը՝ հյուսիսային ցեղերի արշավանքի ժամանակ Տրդատ թագավորին ձերբակալելու նպատակով նրանց ձեռք առած միջոցների ու անհաջողութիւնի մասին:

Կարևոր են նաև 114.7, 117.2, 119.3, 145.7, 145.10, 266.8 էջերից դուրս մնացած հատվածները:

Ձենք կարող լուծիամբ անցնել հրատարակված բնագրի գլխակարգութիւն և գլուխների վերնագրերում եղած թերութիւնների կողքով:

Հովհան Մամիկոնյանը, խմբագրելով Տարոնի և Գլակա վանքի պատմութիւնի վերաբերյալ իր ունեցած նյութերը, նրանք բաժանել է շորս գլխի.

Առաջին գլուխ. «...Պատմութիւն Տարաւնոյ, զոր թարգմանեաց Ձենոբ Ասորի եպիսկոպոսն».

Երկրորդ գլուխ. «...Պատմութիւն վասն իննականեան տեղեաց եւ պատերազմին որ յԱրձանն եղեւ».

Երրորդ գլուխ. «Եթե ոչք էին որ յաջորդեցին յառաջնորդութիւն սուրբ Կարապետին».

Չորրորդ գլուխ. «Գլուխ Պարսից Պատմութեան...»:

Վերոհիշյալ գլուխները բաժանված են եղել ենթագլուխների (պատճենների):

Առաջին գլխի պատճեններն են.

ա) «Պատճէն առաջին. [Գիր] սրբոյն Գրիգորի, զոր գրեաց եւ յղեաց ի Կեսարիայ».

բ) «Պատճէն երկրորդ. Պատասխանի պայմանաւոր գրոյ[ն] սրբոյն Գրիգորի, զոր գրեաց Կեսարու հայրապետն»:

Երկրորդ գլխի պատճեններն են.

ա) «[Պատճեն առաջին]. Զենոբայ Ասորույ պատասխանի թղթոյն ասորուոց».

բ) «Պատճեն երկրորդ. Վասն պատերազմին որ յԱրձանն եղեւ»:

Երրորդ գլուխը պատճեններ չունի:**Չորրորդ գլուխը բաղկացած է չորս պատճեններից.**

ա) «[Պատճեն առաջին. Վասն] գալոյն Միհրանայ ի Տարան...».

բ) «[Պատճեն] երկրորդ. Վասն գալոյն Վախթանգայ ի Տարան...».

գ) «[Պատճեն] երրորդ. Վասն գալոյն Տիգրանայ եւ կոտորածին որ ի Հոնընկեցն».

դ) «Պատճեն չորրորդ. Վասն գալոյն Վարդուհեր եւ մեռանելոյն ի Փանդիկ...»¹:

Զմբբունելով գրախոսվող բնագրի վերոհիշյալ կառուցվածքը և ղեկավարվելով իր շարաբաստիկ սկզբունքով՝ հրատարակիչը, հասկանալի է վերնագրերը նույնպես հրատարակել է թերություններով:

Նախ՝ գլուխների ու պատճենների վերնագրերը դիտելով որպես ամբողջություն՝ հրատարակիչը միևնույն տառաձևերն է գործածել նրանց համար և հաճախ իրար ձուլել է տարբեր վերնագրեր:

Որպես օրինակ՝ վերցնենք չորրորդ գլխի վերնագիրը, ինչպես այն հրատարակված է բնագրում. «Գլուխ Պարսից պատմութիւն (°), եւ գալն(°) Միհրանայ ի Տարան երեսուն հազարով. եւ կոտորել(°) Գայլուն Վահանայ գնոսա յԱւ Բաղաբի».

վերնագիրն այս ձևով (անգամ եթե ուշադրություն չդարձնենք քերականական արտառոց ձևերի վրա) միանգամայն անհասկանալի է. բարեբախտաբար, մյուս գրչագրերի տված տարբերակների հիման վրա հնարավոր է ճշտել վերնագիրը հետևյալ ձևով.

ԳԼՈՒԽ ՊԱՐՍԻՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ (ՍԼԲ) [Պատճեն առաջին. Վասն] գալոյն Միհրանայ ի Տարան երեսուն հազարու եւ կոտորելն Գայլուն Վահանայ գնոսա յԱւ Բաղաբի (ՎԼՍԲ)

Ուղղագիծ փակագծերի մեջ առնված բառերը բխում են բնագրից թեկուզ այն պատճառով, որ հաջորդ ենթագլուխը վերնագրված է «[Պատճեն] երկրորդ. Վասն գալոյն Վախթանգայ...» բառերով (ըստ № 1328 և 1308 գրչագրերի), սակայն, դժբախտաբար, հրատարակիչը վերոհիշյալ պատճառներով երկրորդ պատճենը վերնագրել է «Երկրորդ գալն Վախթանգայ ի

¹ «Ծիծուան խաչի» և «Վասն մահուան Տիրանայ» գլուխներն ընդմիջարկություններ են. գտնվում են միայն սակավաթիվ գրչագրերում:

Տարան...» բառերով, որի շնորհիվ, հակառակ բնագրի բովանդակության, ստացվում է այն թյուրիմացությունը, թե Վախթանգը երկու անգամ է արձավել Տարոնի վրա...

Չի կարելի անտես առնել նաև շորրորդ գլխի երրորդ պատճենի վերնագրի աղճատման փաստը: Հաջորդելով «Վասն գալոյն Միհրանայ...» և «Վասն գալոյն Վախթանգայ...» պատճեններին՝ այն պետք է կրեր «երրորդ» թվահամարը (ինչպես և ունեն լՍՄՊՀ գրչագրերը), սակայն հրատարակիչը մեզ համար անհայտ պատճառներով գերադասել է միայն մեկ գրչագրում պահպանված «երկրորդ» սխալ թվահամարը:

Հրատարակության նշելի թերություններից մեկն էլ դեպի հատուկ անունների գրությունը հրատարակչի ցուցաբերած ոչ լուրջ վերաբերմունքն է: Միևնույն հատուկ անունը բնագրի տարբեր էջերում բազմիցս տարբեր գրությամբ է մեջբերված. այսպես օրինակ՝ երբեմն գրված է Գրիգոր, երբեմն Գրիգորիս, Ռահան-Ըռահան, Գիսանեա-Գիսանէ, Ծծմայ-Ծծմահոտ-Ծծմակ-Ծմակ, Սուրեն-Սուրեան-Սուրէն, Ուղնուտ-Ողնուտ-եղնուտ, Սրոց ձոր-Սրենց ձոր-Սրեմաձոր և այլն և այլն. թե որ ձևն է ճիշտ, այդ չի պարզված հրատարակչի կողմից:

Բնագրում հատուկ անունների սխալ և իրար հակասող ձևերի առկայությունը ավելի լուրջ թերություն է, քան սովորական բառերի ու արտահայտությունների արդեն մեզ ծանոթ սխալ և աղավաղված ձևերի առկայությունը:

Չենք կարող չնշել անձնանունների ու տեղանունների աղավաղումներից մի քանիսը:

Գրչագրերից մեծ մասի տված «Մամիկոնենից» (<Մամիկոնյան) միանգամայն ճիշտ ձևի փոխարեն բնագրում շարունակ օգտագործված է «Մամիկոնէից» ձևը. տպագրված է «ի Պարթենն» (68.7) փոխանակ «ի Պարտանն», Ուգուհի փխ Ոգուհի (70.4), Յեփթաղինեկեայ փխ Հեփթաղենեկայ (71.11), Անկիւղ կամ Անկեղ (77.7, 81.2, 82.8 ևն) փխ Անգեղ (ինչպես կա 136.10), Դովնադաշտի փխ Դունայ դաշտին (78.7), արք Մեղտոյ փխ Մեղտեայ (87.8), Բասէն փխ Բասեան (89.3), Գիսիանէ փխ Գիսանէ (95.3), Հոռա փխ Հոռենայ (<Հոռեան) 108.10, Կիրիղ փխ Կիրեղ (157.1), Մուրիկ փխ Մարիկ (158.3), Բալխաստան փխ Բահղ Շահաստան (158.10), Նիհորճէն փխ Նիխորճէս (159.1), Ծմակն փխ Ծծմակն (186.2), ի Մուրատն փխ ի Մար անդր (188.10), Արածնի փխ Արածանի (200.6), Բուսար փխ Բոսար

(201.10), աւելոյ Առինչ փխ Աւելոյառինչ¹ (213.6), Շերանիկք փխ Շիրենիք² (247.15), գիւղն Պալունեաց փխ գաւառն... (259.3) և այլն և այլն:

Բնագրում կան նաև ոչ քիչ քանակութեամբ տառասխալներ, որոնց մի մասն անշուշտ պիտի անուշադիր սրբագրութեան արդյունք համարել. որպէս օրինակ նշենք դրանցից մի քանիսը՝ մեջ (139.1), ե փխ և (141.3), ողջակիղած (141.6), ընդդեմ (140.3), մտանէն, ակնարկէն (102.9), տերունական (106.3) և այլն և այլն:

Բնագրի վրա բացասաբար է ազդում նաև թվականների տառանիշերով արտահայտված լինելը: Չափազանց դժվար կլինի շարքային ընթերցողի համար կարդալ, ասենք, «...Կուռուս ունի երդահամարս ԳՌ եւ ԲԺան (երեք հազար եւ երկուսասն) եւ հեծեալս ՌԼ (հազար երեսուն) եւ հետեւակս ԲՌ եւ Մ (երկու հազար եւ երկու հարիւր)» նախադասութիւնը, որի թվական արժեքները բառերով արտահայտելու դեպքում (ինչպէս մենք արել ենք փակագծերի մեջ) նախադասութեան ընթերցումը կհեշտանար³:

Միայն մի գրչագրով մեզ հասած բնագրերի հրատարակման ժամանակ բնագրի ուղղագրական բոլոր ձևերը, անգամ բացարձակ տառասխալները թերևս անհրաժեշտ է նույնութեամբ արտահայտել տպագրվող բնագրում, սակայն համեմատական բնագրում, ինչպիսին է գրախոսութեան նյութ դարձած բնագիրը, անբացատրելի է նման ուղղագրական ձևերի գոյութիւնը՝ տեղոյ փխ տեղույ, եկեղեցոյ փխ եկեղեցոյ և այլն, նամանավանդ, երբ նույն բառերի դիմաց գրչագրերի մեծ մասը պահպանել է քերականական ճիշտ ձևեր:

Անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել նաև տարբերակների բաժնում նկատվող թերութիւնների մասին:

Կան բազմաթիւ բառաձևեր, որ տարբերակների բաժինն են մտել, բայց նույնն են, ինչ որ բնագրի համապատասխան բառերը. այսպէս՝ 42.1 էջի տարբերակների բաժնում նշված է, որպէս ԼՄՄ գրչագրերի տարբերակութեամբ, «վիճակիս» ձևը, բնագրում էլ տպված է «վիճակիս» 151.11 էջում որպէս ԲԼ գրչագրերի տարբերակութեամբ, նույնպէս բնագրերին համապատասխան «այդչափ աշխատանք քո» ձևը (հմմտ. նաև 84.11, 84.12, 89.4, 91.4, 149.11 և այլն): Տարակուսում է ընթերցողը՝ տարբերակները հրատար-

¹ «Առինչ» նշանակում է **բնակատեղի, ամրություն** (հմմտ. Բագաոինջ և այլն):

² Կազմված է **շեք** (երգ) բառից:

³ [Այս դիտողությունը վերապահելի է: հմբ.]:

րակված են վրիպակներով, թե՛ ուղղակի թյուրիմացությունք են այդ բառաձևերը մուտք գործել հրատարակության մեջ:

Կան տարբերակներ, որոնց բնագրի որ բառին համապատասխանելն անհնար է լինում պարզել. այսպես օրինակ՝ 140 էջի տարբերակների բաժնի 2-րդ տողում, որպես ՍԼՎ գրչագրերի ընթերցվածք, բերված է «զձեռանէ նորա» արտահայտությունը, բայց թե 2-րդ տողի ո՞ր բառերին է փոխարինում այն հիշյալ գրչագրերում, մնում է անբացատրելի: Կարողում ենք նաև նախորդ և հետևորդ տողերը՝ հույս ունենալով, որ, ինչպես բազմաթիվ այլ դեպքերում, տողանիշը սխալ է բերված, սակայն արդյունքի շենք հասնում այս դեպքում ևս:

Միևնույն խմբագրության պատկանող գրչագրերի տված տարբերակներից առաջ բերվող տառանիշերը, որոնք պայմանականորեն արտահայտում են մեր Մատենադարանի՝ համեմատության ժամանակ օգտագործած գրչագրերի համարները, նշվում են առանց որևէ կանխորոշված հերթականության. մե՛րթ տպագրված է ԼԲ, մե՛րթ ԲԼ կամ ՎԼՍԲ, ՍԲԼՎ, ԲՎՍԼ և հիշյալ տառանիշերի հնարավոր բոլոր դասավորություններով, իսկ այս հանգամանքը դժվարացնում է ցանկացած գրչագրի և կամ տարբեր խմբագրությունների պատկանող գրչագրերի տարբերակները հեշտությամբ ու արագորեն գտնելու և իրարից զատելու գործը:

Եզրակացությունը պարզ է. Մատենադարանի տնօրինության գովելի նախաձեռնությունը վերջացել է անհաջող: Հայ պատմագրերի, ինչպես և գիտական բնագրերի հրատարակման խիստ պատասխանատու և կարևոր գործին պետք է լծվեն մեր փորձառու և լավագույն մասնագետները:

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ «ՎԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ» ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ¹

Հայաստանում քրիստոնեության տարածման ու պետական կրոն հայտարարելու պատմության մասին առկա սկզբնաղբյուրները, մեծ չափով նաև նույն այդ հարցերին նվիրված ուսումնասիրությունները խարսխված են հայ գրականության սկզբնավորման տարիներին հյուսված և հետագա ժամանակներում ճոխացված ու գունազարդված ավանդությունների վրա: Դրանց պատմա-բանասիրական հիմնավոր վերլուծությունը՝ գիտության արդի պահանջներին համապատասխան, նոր է սկսվում. առ այսօր դեռևս չեն որոշվել այն ուղիները, որոնցով Հայաստան են ներթափանցել քրիստոնեության վարդապետության գաղափարները, չեն ճշգրտվել ժամանակագրական շատ հարցեր, չեն պարզաբանվել հույն և ասորի քարոզիչների ազդեցության իրական ոլորտները, նրանց և հայ հոգևոր գործիչների միջև տեղի ունեցած գոտեմարտերի քաղաքական և տնտեսական շարժառիթների հետ աղերսվող բազմաբնույթ հարցեր և այլն:

Շատ խոչընդոտներ կան սրանց գիտական պարզաբանման ճանապարհին, որոնցից ամենախոշորը, թերևս, կապված է աղբյուրների ուսումնասիրության արդի վիճակի հետ:

Հայոց դարձի ամենահեղինակավոր սկզբնաղբյուրը, ինչպես հայտնի է, Ագաթանգեղոսի մատյանն է, որ հասել է մեզ Ե դարի կեսերին իրագործված և հետագայում նոր հավելումների ենթարկված հայերեն խմբագրությամբ. ինչպես նաև հունարեն, արաբերեն և այլ լեզուներով կատարված ընդարձակ ու համառոտ մի շարք թարգմանություն-խմբագրություններով: Եվ եթե մանրակրկիտ ու արդյունավետ աշխատանք է կատարված այդ խմբագրությունների (մասնավորապես հունարեն ու արաբերեն փոփոխականների) փոխադարձ առնչությունները որոշելու, աղավաղված տեղիները ճշգրտելու և աղբյուրագիտական այլ հարցեր պարզաբանելու տեսակետից, շատ քիչ բան է արված առ այսօր պատմա-քննական խորագնին ուսումնասիրությունների ճանապարհով քրիստոնեության տարածման հետ կապված հրաշապատումները պեղելու, պատմական ու իրականը առասպելականից ու հետագա գունազարդումներից զատելու և գտելու ուղղությամբ: Նույնը կարելի է ասել նաև հայոց դարձի և Հայոց եկեղեցու կազմավորման շրջանի վերաբերյալ տեղեկություններ պարունակող ուրիշ աղբյուրների ուսումնասիրության արդի վիճակի մասին:

¹ «Հայկազյան հայագիտական հանդես», Պեյուք, 1982-1984, հտ. Ժ, էջ 9-19:

Այդ աղբյուրների շարքում կան ինչպես ամբողջական ու մեծ պատմագրքեր (օր.՝ Հովհ. Մամիկոնյանի և Ստ. Օրբելյանի պատմությունները), այնպես էլ ավարտուն պատմագրական «մանրապատումներ» (օր.՝ «Պատմութիւն Գետարգել սուրբ Նշանին», «Պատմութիւն Խաչկավանից», «Յիշատակագրութիւնք եպիսկոպոսաց առաքելական վիճակիս Արտազու» և այլն), որոնք, կոչված լինելով պատասխանելու հեղինակին ու նրա միջավայրին հուզող մեկ հարցի, հավակնում են ներկայանալ իբրև պատմական վավերաթուղթ և ըստ այդմ լրացնել կամ ուղղել տվյալ հարցի շուրջ եղած պատմական գրավոր ու բանավոր տեղեկությունները:

Պատմագրական այս մանրապատումներից շատերը հայ քրիստոնեական գրականության ամենահուշակավոր մատյանին՝ Ագաթանգեղոսին, իրականում առնչվում են ոչ թե նրանով, որ ընդլայնում են մեր պատկերացումները վերջինիս նկարագրած պատմական իրականության շուրջ, այլ նրանով, որ Ագաթանգեղոսի համեմատ դրանք որոշ չափով իրենց ավանդական հիմքում ներկայացնում են միկրոդարձերի պատմություններ: Լինելով հորինովի գրվածքներ՝ իրենց հիմնական մասով նրանք զուրկ են պատմական հիմքերից ու բնավ չեն կարող արժանահավատ սկզբնաղբյուրի դեր կատարել՝ վերականգնելու և մեկնաբանելու համար այն ժամանակաշրջանի երևույթները, որն արտացոլվում է: Ընդհակառակը՝ նշված «պատմությունները», իբրև պատմական սկզբնաղբյուր, շատ կարևոր ու արժեքավոր են այն ժամանակաշրջանի պատմության համար, որում իրենք ստեղծվել ու գրավոր կյանքի են կոչվել, իսկ իբրև գրական հուշարձաններ նրանք անկասկած արժանի են հատուկ ուշադրության նաև այն բանի համար, որ օգնում են մեզ ճիշտ ըմբռնել և բացատրել որոշ կարևոր հուշարձանների (օր.՝ «Տարոնի պատմության») գրական տիպը:

Խնդրո առարկա «պատմություններն» իրենց տարատեսակներով շատ տարածված են եղել ողջ քրիստոնեական աշխարհում: Քննենք այդ տարատեսակներից մեկը՝ «Վանից պատմութիւնը»:

«Վանից Պատմութիւնք» ընդհանուր խորագրի տակ դյուրությամբ կարող են համախմբվել միջնադարյան մատենագրության մեջ ուրույն տեղ գրավող և իրենց մեծագույն մասով հորինովի ու առասպելական այն «պատմությունները», որոնց նպատակն է եղել սրբագործել վանական ու եկեղեցական նշանավոր հաստատությունների գոյությունը՝ նրանց հիմնարկությունը վերագրելով անցյալի քաղաքական ու եկեղեցական հեղինակավոր գործիչների, օժտելով նրանց Քրիստոսի, առաքյալներից մեկի կամ մի քանիսի, Աստվածամոր, ինչպես և որևէ այլ սրբի մասունքներով, հրաշապա-

տում գրույցներ հյուսելով նրանց մասին: Այդ «պատմություններից» շատերի մեջ ուշագրավ տեղ է գրավել վանական հաստատություններին պատկանող կամ նրանց ախորժակը գրգռող անշարժ ու շարժական կալվածքների, նրանց հոգևոր ենթակայության տակ գտնվող շրջանների ու բնակավայրերի միջնադարյան քրիստոնյա հավատացյալների կողմից պաշտամունքի առարկա հանդիսացող սուրբերի մասունքների թվարկությունը: Եվ այս բոլորը [երբեմն] սրբագործվել է սուտ ու պատիր կալվածագրերով, նշանավոր անձանց վերագրված նվիրաբերական կեղծ հրովարտակ-արձանագրություններով, հանձնարարական նամակներով և այլն:

Եվրոպական միջնադարյան գրականության մասնագետները վաղուց ի վեր ուշադրություն են դարձրել այս կարգի «պատմությունների» վերոնշյալ **Ֆունկցիոնալ առանձնահատկությունների** վրա, բացահայտել նրանց ժանրային առանձնահատկությունները:

Հայ միջնադարյան գրականության մեջ ևս կան բազմաթիվ վանքերի, խաչերի և այլ սուրբ համարված մասունքների մեծ ու փոքր «պատմություններ»՝ իրենց ժանրային տարատեսակներով ու երբեմն մեկից ավելի խմբագրություններով: Սակայն նրանք ըստ մեծ մասի հատուկ պատմագիտական քննության չեն արժանացել: Ավելին, արտաքին երևույթով պատմագրական երկերին ազգակից նկատվող այդ «պատմությունները» բանասիրական աշխատանքի անհրաժեշտ փորձ ու բավարար հմտություն չունեցող որոշ մասնագետների կողմից քննական նյութ են դարձել որպես ճշգրիտ պատմական գրվածքներ՝ դուռ բացելով արտառոց թյուրիմացությունների:

Ահա, նկատի ունենալով այդ հանգամանքը, սույն հոդվածով փորձելու ենք ընդհանուր գծերով բնութագրել հայկական «Վանից Պատմությունները»՝ քննության նյութ դարձնելով բազում հուշարձաններից միայն մեկ բնորոշ օրինակ՝ համոզված լինելով, որ դրանք բոլորը ոչ միայն արժանի են ավելի հանգամանալից պատմա-բանասիրական ու գրականագիտական ուսումնասիրության, այլև վաղուց հասունացել է այդ կարգի գրվածքների հավաքման, գիտական մշակման և հրատարակման ժամանակը:

Հայ միջնադարյան եպիսկոպոսական աթոռների, վանական ու եկեղեցական հաստատությունների գունազարդված ու առասպելախառն պատմությունները տարբերվում են միմյանցից իրենց ծավալով, կառուցվածքով ու պարունակված նյութերով: Ավանդական «Կոնդակ վանից» կոչվող և նույն կաղապարով ձուլված ժապավենաձև նմուշներին առընթեր (այդպի-

սիք տարածված են եղել հատկապես Վասպուրականի շրջաններում) ստեղծվել են նաև ավելի ընդարձակ ու բովանդակալից «պատմություններ», որոնց մեջ տվյալ հաստատության հիմնարկեքի շինծու պատմության հետ միասին կարևոր տեղ է հատկացվել նաև կեղծ, վավերական ու արժեքավոր կալվածագրերի, նվիրաբերական արձանագրությունների և այլ փաստաթղթերի (այդպիսին է, օրինակ, Սանահնի վանքի նշանավոր «քոթուկը»): Քիչ թիվ չեն կազմել նաև խաչափայտի մասունքների և այլ «սրբությունների» մասին հերյուրված պատմությունները, որոնք ևս վերջին հաշվով շրջանառության մեջ են դրվել վանական հաստատությունների կողմից՝ իրենց հեղինակությունը բարձրացնելու, ուխտավորներ շահելու, նոր շարժական ու անշարժ կալվածքներ ձեռք բերելու հույս-նպատակով:

Առավել մեծ չափով դրանք պահպանվել, կամ դրանց գոյության մասին տեղեկություններ են մեզ հասել Վասպուրականի և Տարոն-Տուրուբերանի շրջանների վանական հաստատություններից:

Որքան էլ տարբեր են դրանք իրենց կառուցվածքով ու բովանդակած նյութերով, բոլորն էլ գրեթե անխտիր (մի երկու տարբերությունների մասին առիթ կունենանք արտահայտվելու) իրենց սկզբնավորությունը փորձում են առնչել կա՛մ Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալներին, կա՛մ էլ Գրիգոր Լուսավորչին ու Տրդատ Թագավորին: Քիչ չեն օրինակները, երբ Հայաստանում քրիստոնեության տարածման այդ երկու շրջանների ավանդական գործիչների կյանքն ու ձեռնարկած շինարարական աշխատանքները կամրջվում են միմյանց, և Գր. Լուսավորիչը հանդես է գալիս որպես առաքյալների գործի շարունակող, նրանց հիմնադրած հաստատության վերաշինող, ծաղկեցնող կամ սուրբ մասունքներով օժտող:

Հնագույններից մեկը պետք է համարել Հոգյաց վանքի¹ Տիրամոր պատկերի մասին ընդարձակ պատմությունը, որ վերագրված է Մովսես Խորենացուն²:

Մանոթանանք նրա բովանդակությունը: «Պատմության» սկզբում տրվում է Աստվածածնի ազգաբանությունը, որ, արտագրված լինելով Թարգ-

¹ Հոգյաց վանքը գտնվել է Վանից 10-12 ժամ հեռավորության վրա, պատմական Անձևացյաց գավառում:

² Գրված է որպես պատասխան Սահակ Արծրունի իշխանի հարցման և օժտված է այսպիսի ընդարձակ խորագրով՝ «Պատասխանի թղթոյն Սահակայ, յորումն են բանի մարգարէականի եւ վասն փոխման Աստուածածնին, թէ որպէս եղեւ կամ որպէս շնորհեցաւ անարատ տիպ պատկերին ի փայտն, եւ թէ յոյր ձեռն եւ զինչ եղեւ պատեաւի խնդրոյն, կամ թէ յումնէ բերաւ ի Հայս»։ տե՛ս «Մտքոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնի», Վենետիկ, 1865, էջ 281-296:

մանական ինչ-որ գրվածքից, ինքնուրույն արժեք չի ներկայացնում: Ուշագրավ մասը սկսվում է այն տեղից, ուր պատմվում է, որ Քրիստոսի առաքյալները հավաքվում են Տիրոջ Հարուժչունից հետո և խնդրում Տիրամորը կիպարիսի փայտից պատրաստված մի տախտակ մոտեցնել իր դեմքին, որպեսզի դեմքը տպագրվի այդ տախտակի վրա, և այդ պատկերը «լիցի բժիշկ վիրատրեղոց եւ նշխար հաւատացելոց», մասնավորապես՝ ունենա բորոտության ախտը բուժելու հատկություն: Այդպես էլ լինում է: Աստվածածնի մահվանից հետո առաքյալներից Բարթողիմեոսը, որ, Թովմայի հետ մեկտեղ Հնդկաստան մեկնած լինելով, այդ հավաքին ներկա չէր գտնվել, վերադառնում է Երուսաղեմ և հույժ վշտանում Աստվածածնին կենդանի չգտնելով, նաև նրա գերեզմանը դատարկ տեսնելով: Մյուս առաքյալները, ի մխիթարություն իրենց ընկերոջ, Բարթողիմեոսին են նվիրում այդ հրաշագործ պատկերը:

Բարթողիմեոսը Սուրբ Հոգու հրամանով մեկնում է Հայաստան, քանի որ լուր է ստանում Սանատրուկ թագավորի կողմից Արտազ գավառում Թագեոս առաքյալի սպանության մասին: Գալիս է Անձևացյաց գավառի Դարբնաց քար կոչվող վայրը՝ հեթանոսական պաշտամունքի մի կենտրոն, հալածում է կոոց պաշտոնյաներին, խորտակում Անահիտի արձանը ու խաչ կանգնեցնում այն լեռան վրա, ուր գտնվում է Դարբնաց քարի քուրան (ըստ երևույթին պաշտամունքի սեղանը կամ հրաբխային ինչ-որ խառնարան): Այդ նույն վայրում Բարթողիմեոս առաքյալը կառուցում է փոքրիկ եկեղեցի հանուն սուրբ Աստվածածնի՝ նրա մեջ ամփոփելով Տիրուհու պատկերը, որ շնորհում է այդ վայրերում ապաստանած սուրբ կանանց: Կառուցում է նաև վանական խրճիթներ և իր աշակերտներից քահանա կարգում ու տեղն անվանում Հոգյաց վանք՝ «հանուն Տիրամորն և սուրբ Կուսին»:

Բարդուղիմեոսն այնուհետև սկսում է իր քարոզչությունը Հայաստանի տարբեր շրջաններում ու նահատակվում է Ուրբանոս քաղաքի Բատմա կոչված տեղում:

Հետագայում Հոգյաց վանքը ընդարձակում է Գրիգոր Լուսավորիչը: Առաքյալի շինած խաչը Լուսավորիչն իր ձեռքն է առնում և գործածում մինչև ճգնավորական կյանքին նվիրվելը, ապա նույն այդ խաչը դրվում է Տրդատ թագավորի գերեզմանի վրա: Իսկ Հոգյաց վանքի Աստվածամոր պատկերը, ինչպես գրված է «պատմության» մեջ, «կայ մինչեւ ցայսօր ժամանակի, յորում բժշկութիւնք լինին եւ ուրախութիւնք ոչ սակաւք: Եւ լուսաւորէ զախտացեալս ամենայն, որ գան առ նա հաւատով եւ յոյսով...»:

Այս գրությունը, անտարակույս, համասեռ «պատմությունների» հետ միասին միջնադարյան արձակի ուշագրավ նմուշներից մեկը կարող է համարվել և արժանանալ բանասերների ու գրականագետների ուշադրությունը:

Սակայն շատ դյուրին է ապացուցել, որ Բարթողիմեոս ու Թադեոս առաքյալների, Սանատրուկ թագավորի, այնուհետև Գրիգոր Լուսավորչի ու Տրդատի անունների շուրջ հյուսված այս գրվածքը պատմական եղելությունների հետ առնչություն չունի և, իհարկե, ոչ մի կերպ չի կարող շաղկապվել Մովսես Խորենացու անվան հետ: Ավելին, այս «պատմության» մեջ կան անսքող ակնարկներ, որոնք հնարավորություն են ընձեռում մերձավորապես որոշելու, թե երբ և ինչ նպատակով է շրջանառության մեջ դրված այս «պատմությունը»:

Ինչպես հայտնի է, 9-րդ դարի կեսերին հասունացել էին պայմանները՝ արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած դարավոր պայքարը հաջողությամբ պսակելու:

Իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին 875 թ. յուրայինների կողմից արդեն ճանաչվեց որպես Հայաստանի թագավոր: Արաբական տիրապետության կենտրոն Դվին քաղաքը նույնպես գրավվեց Աշոտի կողմից, և արավերջին ոստիկանն անփառունակ վտարվեց Հայաստանից: 886 թ. Հայաստանի անկախությունը ճանաչվեց նաև հարևան պետությունների կողմից, մեծ հանդեսներով Աշոտ Բագրատունին օժվեց Հայաստանի թագավոր:

Օտար լծի դեմ նույն այդ տասնամյակներին համառ մարտեր էին մղվում նաև պատմական Հայաստանի այլ նահանգներում, մասնավորապես Վասպուրականում՝ Արծրունի իշխանների գլխավորությամբ: Բագրատունյաց և Արծրունյաց նախարարությունների միջև մրցակցություն է սկսվում առանձին շրջանների, մասնավորապես Նախճավանի համար. արաբները փորձում են ի շահ իրենց օգտագործել հայ ավատապետների հակամարտությունները: Գագիկ Արծրունուն 908 թ. արքայական թագ է տրվում, որով և նոր դժվարություններ են ստեղծվում Բագրատունյաց իշխանության ներքո ողջ Հայաստանի միավորման համար:

Մովսես Խորենացուն վերագրված և քննարկման ենթակա «Հոգեաց Վանքի Պատմութիւն» գրվածքը շարագրված պետք է լինի 9-րդ դարի 70-80-ական թվականներին Արծրունյաց իշխանության սահմաններում ապրող և Արծրունի իշխանների քաղաքական նկրտումների ջատագով մի հոգևորականի կողմից, որի քաղաքական երազանքն է եղել Հայաստանի անկա-

խումբները երկու հզոր իշխանությունների՝ Բագրատունիների և Արծրունիների համերաշխության ու ձեռնափոխության պայմաններում:

«Պատմությունը», ինչպես ասել ենք արդեն, շարադրվել է որպես «պատասխանի թուղթ» Սահակ Արծրունու հարցման: Այդ Սահակ Արծրունին, ըստ գրվածքի հեղինակի, եղել է հորենացու մեկենաս Սահակ Բագրատունու ժամանակակիցն ու մերձավորը: Խորենացին, ինչպես հայտնի է, կատարելով Սահակ իշխանի պատվերը, շարադրում էր «Հայոց պատմությունը» և մաս առ մաս առաքում այլ վայրում գտնվող իշխանին:

Ըստ «Հոգյաց Վանքի Պատմության» ներածական թղթի՝ երկու Սահակ իշխանները՝ Բագրատունի և Արծրունի, այդ ժամանակ գտնվում էին հենց Նախճավան քաղաքում¹, այսինքն՝ այն վայրում, որ կովախնձոր էր դարձել Հայաստանի քաղաքական ուժերի համար 9-րդ դարի երկրորդ հիսնամյակում:

Ըստ գրվածքի հեղինակի՝ այդպես չէր, սակայն Մովսես Խորենացու երանելի ժամանակներում, երբ թշնամանքի ու բախման պատճառ հանդիսացող այդ նույն քաղաքում համերաշխորեն զրուցում և գրքերի ընթերցանությամբ էին զբաղվում երկու հզոր իշխանները: Սահակ Արծրունին անմիջապես ծանոթանում էր Մ. Խորենացու գրած «Հայոց Պատմությանը» («զգրեալ զիրս Բագրատունեաց իշխանին, զգրեալս ի քէն ընթերցաք, եւ ուսաք զուսմուննս հայկական ազանցս հայոց, զմեր նախնեաց գալ յայս երկիր») և այլն, այսպիսի տողեր է, իբր, ուղղում Մ. Խորենացուն Սահակ Արծրունի իշխանը² և իր հերթին պատվիրում հայոց պատմահորը գրիչ վերցնել՝ այս անգամ արդեն Արծրունյաց աշխարհի նշանավոր սրբավայրերից մեկի «պատմությունը» շարադրելու համար («Այլ կամիմք ուսանել ի քէն զսքանչելագործութիւն պատկերին, որ յանուն Տիրամօրն կայ ի Հոգեաց վանս...»):

Մ. Խորենացին, իհարկե, սիրով պետք է ընդառաջեր Արծրունի իշխանի ցանկությունը, և այդ «պատմությունն» իր նպատակին հասած չէր լինի, եթե մեզ անհայտ հեղինակը Մ. Խորենացու անունից շարադրած չլիներ

¹ Այս «պատմության» որոշ ձեռագրեր ունեն ուշագրավ խորագրեր՝ «Թուղթ Սահակայ մեծի իշխանի սպարապետի առ Մովսէս Խորենացի վարդապետ յորս եւ բանք Սահակայ Բագրատունայ, ի միում տեղոչ լինելով ի Նախնաւանի», կամ «Թուղթ Սահակայ Արծրունայ եւ Սահակայ Բագրատունայ իշխանաց առ Մովսէս Խորենացի. ի միում տեղոչ լինելով ի Նախջուանի», տե՛ս Գ. Ալիշան, Հայապատում, մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 52:

² Տե՛ս «Մերոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք», էջ 281:

Արծրունիներին փառաբանող այսպիսի տողեր. «Քեզ ասեմ, իշխանդ Արծրունեաց, եցոյց ինձ տէր, զի յորդոց քոց երեք եղբարք վասն Քրիստոսի ի մահ մատնեալք, երկուքն արեամբ վկայք լինին Քրիստոսի, եւ մինն վրիպեալ ի նոցանէ եւ ոչ յայսմ վայելէ: Վասն նոցա Աստուած զթագն թագաւորին Սենեքերիմայ յորդիս քո դարձուցեալ յերկարածգէ յերկրի»:

Արդ, ի՞նչ պատմական դեպքերի մասին է «մարգարեանում» Խորենացին, կամ ինչի՞ մասին ակնարկում գրվածքի իրական հեղինակը վերոհիշյալ տողերով:

Գագիկ Արծրունու երեք որդիները՝ Սահակը, Համազասպը և Մերուժանը, արաբների դեմ պայքարող ուժերի առաջամարտիկներից էին: Եզիզ ուստիկանը ձեռքակալում է նրանց, տանում Պարտավ և պահանջում կրոնափոխ լինելով ազատվել կամ նահատակվել: Սահակն ու Համազասպը մերժում են հավատափոխությունը և սպանվում են շարաշար («սրով գզլուխն բարձեալ եւ ապա զփայտէ կախեալ», - գրում է Ասողիկը)¹: Իսկ Մերուժանը մահմեդականություն է ընդունում, իշխանություն կոչվում, սակայն սպանվում է Գավիթ Մամիկոնյանի կողմից, ուստի «վրիպեցաւ նաեւ յերկնաւորէն», - ինչպես գրված է նրանց վանքի մեջ²:

Սահակն ու Համազասպը, որպես քրիստոնեության համար նահատակված հերոսներ, սրբացվել են Հայոց եկեղեցու կողմից, նրանց հիշատակը հավերժացվել է նաև Աղթամարի Սուրբ Խաչ տաճարի հարավային պատի աջ կողմում, ուր այսօր էլ պահպանվել են նրանց գեղեցիկ խորաքանդակները համապատասխան մակագրություններով³:

Այս տեղի է ունեցել 886 թվականին, ուստի «Հոգյաց Վանքի Պատմություն» գրություն վաղագույն եզրը պետք է փնտրել այդ թվականից հետո: Գրվածքի մեջ, սակայն, կան ուրիշ տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս ավելի ճշգրիտ պարզել գրության շարադրման մերձավոր ժամանակը:

Խորենացուն վերագրված այս և վերը մեջբերված տողերում հույս է հայտնված, որ Աստված Սենեքերիմ թագավորի թագը հանձնելու է Արծրունիներին («զթագն թագաւորին Սենեքերիմայ յորդիս քո դարձուցեալ յերկարածգէ յերկրի»), իսկ Գագիկ Արծրունին, ինչպես ասացինք արդեն, արքայական թագի արժանացավ 908 թվականին: Հենց այդ տարեթիվն էլ կա-

¹ «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Գ տպ., Ս. Պետերբուրգ, 1885, էջ 133:

² Մ. Ավգեյան, Ծաղիկ վարուց սրբոց, Վենետիկ, 1800, էջ 254-255:

³ «Documenti di Architettura Armena», № 8, Aght'amar, p. 67, նկար № 38:

րելի է հիմք ընդունել մեր «պատմության» շարադրման իրական թվականը որոշելիս: Խորենացու անունն օգտագործած մեր հեղինակը ոգևորված է Բագրատունյաց և Արծրունյաց քաղաքական հաջողություններով համոզված, որ նրանք համագործակցելով մեծ նպաստ են բերելու հայրենիքի բարգավաճման գործին:

«Զի որպէս երկուց մարդոց լինելութեամբ երկիրս հաստատեցաւ, - գրված է «Պատմության» մեջ, - այսպէս ի ձեռն երկուց տանցդ՝ Արծրունեաց եւ Բագրատունեաց, այս աշխարհիս սերունդք բնակին: Եւ որպէս երկու աչք զբոլոր մարմին զարդարէ, այսպէս երկու կողմանքդ արեւելից եւ հիւսիսոյ լուսաւորին: Եւ որպէս երկու ձեռք միացեալ ի գործ պիտոյանան, այսպէս եւ երկիրս Հայոց ի ձէնջ գոյանան: Եւ որպէս ի վերայ երկուց ոտից բոլոր մարմինն հաստատի, այսպէս եւ ի ձեռն երկուց տանց ամենայն ազգք Հայոց հնազանդք լինելով ի մի մարդ կատարեալ ի Քրիստոս լինին: Եւ դուք երկոքին ցեղք ընդ միմեանս անշարժ կայք»¹:

Եվ ահա, 10-րդ դարի սկզբներին ստեղծագործող հայրենասեր հեղինակը ձգտում է քրիստոնեական հին ավանդությունների արծարծումով, Մովսէս Խորենացու նման համազգային հեղինակության անվան շահատակումով, իր հայրենի բնագավառը համարելով Քրիստոսի առաքյալների և Լուսավորիչի գործունեության ասպարեզ, նոր փայլ հաղորդել Արծրունյաց թագավորությանը: Եվ եթե այս պարզաբանումներից հետո փորձենք անդրադառնալ Մովսէս Խորենացուն վերագրված «Հոգեաց Վանքի Պատմութեանը», որոշել նրա պատմական արժեքը և այլն, պետք է արձանագրենք, որ այն բացարձակապես անպիտան մի գրվածք է մեր թվարկության 1-4-րդ դարերի պատմության հարցերի լուսաբանության համար, սակայն, որոշելով նրա գրության իրական ժամանակը 10-րդ դարի առաջին տասնամյակով, բանասիրությունը հնարավորություն է ստանում օգտակար նյութեր քաղել նրանից՝ ժամանակի քաղաքական ակնկալությունների, գաղափարական հոսանքների, որոշ չափով նաև հեթանոսական հին հավատալիքների ու պաշտամունքային կենտրոնների մասին մեր գիտելիքներն ընդարձակելու համար: Միաժամանակ այն ուշագրավ գրական մի հուշարձան է, որ հնարավորություն է ընձեռում ուսումնասիրելու նաև միջնադարյան գրական արձակի արտահայտչական միջոցները, լեզվական իրողությունները, գրական հին աղբյուրներն ու եկեղեցական ավանդություններն օգտագործելու և մշակելու նորահնար եղանակները և այլն: Սրանով չի սպառվում

¹ «Մրցոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնի», էջ 284:

Հոգյաց վանքի հետ առնչվող հրաշապատումների շարքը: Կա նաև ավանդույթներ վանքի անվանակոչության մասին: Վանքի մոտ կա մի քարակույտ՝ Հանգստաքար կոչվող հարմար մի քարով. վանք այցելող ուխտավորներին պատմում էին, որ Աստվածածինն այդ քարի վրա նստած երևացել է Բարթողիմեոս առաքյալին ու հրամայել ձորի մեջ հանուն իր հոգու տաճար կառուցել, ըստ այդմ էլ վանքը կոչվել է Հոգյաց վանք¹:

Բարթողիմեոս առաքյալի անվան հետ առնչվել են այլ վանքերի (մասնավորապես Ս. Բարթողիմեոս վանքի²) «պատմություններ», սակայն այս առումով շատ ավելի մեծ դեր է վերագրվել Թադեոս առաքյալին, որին նվիրել են շատ մեծ թվով վանական հաստատությունների հիմնարկերի հրաշապատում գրույցներ:

¹ Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Գ մաս, Վիեննա, 1947, էջ 763:

² Նույն տեղում, էջ 789-790 և այլն:

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄՈՏ ԱՐՏԱՇԵՍ Ա.Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀՊԱՆՎԱԾ ՎԻՊԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՄԱՍԻՆ¹

ԺԱ դարի մեծանուն գիտնական ու քաղաքական գործիչ Պահլավունի իշխան Գրիգոր Մագիստրոսի նամակները, պահպանած լինելով ժողովրդական մի շարք ավանդույթներն ու գրույցներ, մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Հայ բանասիրությանը հատկապես զբաղեցրել է նրա նամակը՝ գրված Մոկաց և Մանազկերտի եպիսկոպոս Գրիգորին, որտեղ բերված է նաև «ի գոեհիկս աւանդեալ» մի հատված հայ ժողովրդական վեպի արտաշեսյան ցիկլից: Հատվածը, կանխելով Մագիստրոսի «թղթերի» լիակատար հրատարակությանը (1910 թ.), բազմիցս լույս է տեսել համառոտ կամ ընդարձակ մեկնաբանություններով:

Ամբողջ նամակը, որ Կ. Կոստանյանի հրատարակության մեջ ԼԳ համարի տակ է բերված, հետևյալն է.

«Յաւուրս ձմերայնոյ եղեալ ահագին որոտումն յամսեան ահեկի, որ էր քսաներորդ երրորդ, եւ զայսոսիկ գրեաց ի Գրիգոր եպիսկոպոսն Մոկաց եւ Մանազկերտոյ, սակս ելոյ եւս անձեւ սաստիկ.

Կամիմք իմանալ զձիածինն պառաւեալ, ծայրագոյն ծերունոյն հիբար տարտամեալն, ամոքեալ թխահերօք (տարբ. թխանայ հերօք) զհիբուլթեանն բերելով ձեւ իգական: Թերեւս եւ Առէս լուծեալ զմակաւագեանն հրաշունչ մորուեղ (տարբ. մարուեղ) յոքնայածուկ ի դովրտցի դովար (տարբ. ի գասացի դաւար) յեղափոխէ: Որ յերկեանն ճայթին գոռմանն եւ խինջին վրնջելոյ պայթուցեալ պապչեկին լալաւարթին ալախութման քաղուն: Ուրեմն նահանջեալ յԱմնոսէ, զնիսեանն նշանակեալ ցուցակութիւն, երեւակայէր, եւ այն ի կողմանէ տասնեկին եօթն անկեանց յունականին թուոյ, կամ եթէ ի Թորգոմեան երից եօթն անկեանց եռակի բարդեցելոց ահկեան: Որում Արտաշէսն Պարթեւ բաղձայր մլոյ մրրկեալ ծխոյ շամանդաղեալ մակաւասար շինից եւ քաղաքաց: Ո՛ր տայր ինձ, ասէր, զծուխ ծխանի եւ զառաւօտն նաւասարդի, զվազելն եղանց (տարբ. եզանց) եւ զվազելն եղջերուաց, մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք, որպէս օրէնն է թագաւորաց: Եւ զայս ասեն ի վախճանելն իւրում, զոր եւ ի գոեհիկս աւանդեալ գտաք, ողջ լեր»²:

¹ «Գրական-բանասիրական հետազոտումներ» (ՀՍՍՌ ԳԱ Մ. Արեղյանի անվ. գրակ. ինստ.), 1946, գիրք 1, էջ 405-424:

² Կ. Կոստանյան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 86-87:

Նամակի վերնագրում, որն անկասկած գրված է նամականիի հին խմբագրի կողմից, համառոտակի ու պարզորոշ շարադրված է նրա հիմնական բովանդակությունն ու գրություն շարժառիթը, որ է «ձմեռ ժամանակ, ահիկ ամսի 23-ին եղած մեծ որոտումը եւ սաստիկ անձրեւը»:

Ղ. Ալիշանը՝ նամակի ու վիպական հատվածի առաջին քննարկողը, իր «Ազգային վիպասանութիւն» հոդվածում¹, մեջբերելով վիպական հատվածն ամբողջապես, հետևյալ ծանոթությունն է կցում նրան.

«Արտաշէսի հիւանդութեան ու մահուան դիպուածներն ալ կ'երգե վիպասանութիւնն, եւ կ'երեւի թէ այն վիպասանութենէն առնուած է Մագիստրոսի յիշածն, թէ Արտաշէս Պարթեւ մեռած ատեն՝ յիշելով կենաց եւ տարւոյն գարունը, երբ առաւօտեան լուսը ցողին հետ խառնուած բարակ միգի պէս գեղերու եւ քաղաքներու վրայ կը տարածէր, ըսած ըլլա՜ ո տայր ինձ...»² և այլն:

Չենք ցանկանում շոշափել այն հարցը, թե Ալիշանն ինչու է Արտաշէսի բաղձանքը համարում եղած «մեռած ատեն» (Մագիստրոսն ուղղակի վկայում է, որ «զայս ասեն ի վախճանելն իւրում»), որովհետև ինքն իսկ, երկբայելով իր ասածի ճշմարտության վրա, գրում է. «կարելի է թէ Ա. Արտաշէսի գրուլցն ալ ըլլայ այս»: Բայց անկարող ենք ընդունել «Արտաշէսն... բաղձայր մ'լոյ մրրկեալ ծխոյ շամանդաղեալ մակաւասար շինից եւ քաղաքաց» արտահայտության ալիշանյան վերապատումը («առաւօտուն լոյսը ցողին հետ խառնուած բարակ միգի պէս գեղերու եւ քաղաքներու վրայ կը տարածէր...»), որովհետև այդ գեղագիտական մեկնաբանությունը հակասության մեջ է մտնում նամակի բովանդակության հետ, որն, ինչպես տեսանք, վերաբերում է բնական արհավիրքի («ահագին որոտումն... անձրեւ սաստիկ»):

Մեզ հետաքրքրող նամակը քննության նյութ է դարձրել նաև Մ. Էմինը իր («Моисей Хоренский и древний эпос Армянский») աշխատության մեջ:

Էմինի մեկնաբանությամբ՝ «վիպասանն այդ տողերի մեջ պատկերում է մահացած թագավորին, որն ուրվականների թագավորության մեջ իր վիշտն է արտահայտում անդարձ գնացած թագավորական զվարճությունների առթիվ՝ այն բանի համար, որ նա այլևս անկարող է տեսնել ծխնելույզներից ոլորապատույտ բարձրացող և առավոտներին շեների ու քաղաքների վրա

¹ Ղ. Ալիշան, Յուշիկի հայրենեաց հայոց, հտ. Բ, Վենետիկ, 1870:

² Նույն տեղում, էջ 112:

տարածվող ծուխը»¹: Իր բացատրություն համաձայն էլ էմինը կատարել է «Մ տայր...» հատվածի ուսերեն գողտրիկ, բայց անհարազատ թարգմանությունը՝

“О! еслиб кто дал мне (видеть)
из труб (выходящий) дым
И утро Навасардское,
И бег оленей и крик ланей!
Мы в рога трубили и в барабан били,
Как то обычно царям”.²

Այս թարգմանությամբ անհնարին է ըմբռնել հատվածի առնչությունը նամակի բովանդակության հետ:

Ինչ կապակցությամբ պիտի Մագիստրոսը «յաուրս ձմերայնոյ» տեղի ունեցած հորդահոս անձրևի ու որոտի նկարագիր նամակին կցեր վիպական այդ հատվածը: Եթե Մ. էմինի բացատրությունը ճիշտ համարենք, մնում է անհասկանալի: Առավել ևս, նավասարդ ամիսն ըստ հայկական քաղաքական տոմարի ընկել է հունիս-օգոստոս ամիսներին³, իսկ ըստ կրոնական տոմարի՝ համապատասխանել է մարտ-ապրիլ ամիսներին (սկսելով գարնանային գիշերահավասարին)⁴:

Հասկանալի է, որ «յաուրս ձմերայնոյ», ավելի որոշակի սասած ահեկան ամսի 23-ին կատարված դեպքի առիթով Գրիգոր Մագիստրոսը շեր կարող մեջբերել մի վիպական հատված, ուր երգվում է նավասարդ ամսվա (տվյալ դեպքում միևնույն է, այն համապատասխանում է մարտին, թե օգոստոսին) եղնիկների որսը:

¹ М. Эмин, Моисей Хоренский и др. эпос арм., Москва, 1881, с. 80-81. “В них випасан представляет умершего царя, выражающего в царстве теней сожаление о невозвратно миновавших царских забавах; о том, что ему не видать более клубящегося дыма, выходящего из труб и стелющегося по утрам поверх сел и городов”.

² Նույն տեղում, էջ 81: «Զվազելն եղջերուաց» աբախայտության թարգմանությունը (крик оленей) սխալ է:

³ 428 թվի նավասարդի 1-ը համապատասխանել է օգոստոսի 11-ին: Տե՛ս Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու», 1, Լ. Սեմյոնովի «Հայկ. տոմարի մի քանի հարցերի մասին» հոդվածը (էջ 21):

⁴ Այս առթիվ տե՛ս Ղ. Ալիշանի «Յուշիկի» Ա. հատորում (Վենետիկ, 1869) հրատարակված «Հայկա շրջան» հոդվածը, ուր կարդում ենք. «Ներքեմն էլ մեր նախնիք փոխանակ արեգի՝ նավասարդը զուգած են ընդ Մարտի և Նիսանի» (էջ 87):

Դժվար չէ վերոհիշյալից հանգել այն եզրակացության, որ ինչպես Ալիշանի, այնպես էլ էմինի կողմից Մագիստրոսի ԼԳ նամակին տրված մեկնությունները վերանայման կարիք են զգում:

Մ. էմինը, փոխառելով Ալիշանի երկբայաբար հայտնած կարծիքը այն մասին, որ նամակի վիպական հատվածը վերաբերում է Արտաշեսի «մեռած ատենին», հանգամանորեն քննարկում է այդ հարցը: Համադրելով այս և Մ. Խորենացու մոտ պահպանված Արտաշեսի անեծքի վիպական հատվածները միմյանց հետ՝ նա մի շարք հետաքրքիր դատողություններ է անում անդրաշխարհյան կյանքի, «ուրվականների աշխարհի» մասին հեթանոս հայերի հավատալիքների վերաբերյալ:

Դժբախտաբար, ինչպես իրավացի կերպով ցույց է տվել Գ. Խալաթյանը «Армянский эпос» աշխատության մեջ¹, Մագիստրոսի գրանցված հատվածը նման դատողությունների հնարավորություն չի տալիս, որովհետև, ինչպես հիշատակեցինք, «Մ տայր» հատվածը Արտաշեսի բաղձանքն է ոչ թե «մեռած ատեն», այլ «ի վախճանելն»:

Այս հարցով հետաքրքրվողը մանրամասնություններ կգտնի Գ. Խալաթյանցի հիշյալ աշխատության էջերում, որի մեջ հեղինակը քննարկել է Մագիստրոսի նամակը նախորդներից առավել մանրամասնությամբ:

Նամակի քննարկումը Խալաթյանցին բերում է հետևյալին.

(1) Նկարագրված ամպրոպն ու անձրևը տեղի են ունեցել ձմռանը, ահեկանի 23-ին, որ համապատասխանում է ապրիլին, (2) տարվա այն պահին, երբ Արտաշես Պարթևը ցանկություն էր հայտնում տեսնել ծխնելույզներից բարձրացող ծուխը և այլն, (3) վիպական հատվածում Արտաշեսը ցավ է հայտնում այն բանի համար, որ ձմռանը՝ ահեկանին չի կարող դուրս գալ որսի, ինչպես այդ անում էր ամռանը նավասարդին (օգոստոսին), որը հատկապես լավ ժամանակ էր եղնիկների որսի համար, (4) այդ հատվածը պահպանվել է ժողովրդի մեջ որպես ավանդություն, և չի կարող դիտվել որպես հին վեպի բեկոր, և (5) Արտաշես Պարթևին պետք է նույնացնել ոչ թե վիպասանքի, այլ Տակիտոսի «Տարեգրություններում» հիշատակված Արտաշեսի հետ (18-38 թթ.), որը հուշակվել էր որսերի ու խնջույքների հանդեպ ունեցած սիրով և ազգային սովորույթների կրքոտ պաշտպանությամբ, որի հետևանքով էլ հույժ սիրելի էր դարձել իր ժողովրդին²:

Այս եզրակացությունների դեմ ունենք մի շարք առարկություններ:

¹ Г. Халатяни, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, Москва, 1986:

² Նույն տեղում, էջ 312-313:

Նախ՝ եթե ամպրոպն ու անձրևը, որոնք առիթ են հանդիսացել Մագիստրոսի նամակի գրությունը, եղել են ձմռանը (իսկ այդ մասին նամակի վերնագրում կա ուղղակի վկայություն), ապա ահեկան ամիսը ոչ մի կերպ չի կարող համապատասխանել ապրիլ ամսին, ուստի Գ. Մագիստրոսն իր նամակում գործածել է կրոնական տոմարը, ըստ որի նավասարդը սկսվում է գարնանային գիշերահավասարին (մարտի 22) և ո՛չ օգոստոսին:

Երկրորդ՝ նամակում ոչ մի ակնարկ չկա այն մասին, թե Արտաշեսը տարվա այդ պահին (ըստ հալաթյանցի՝ ապրիլին) է ցանկություն հայտնել տեսնելու «ծխանի ծուխը» և այլն: Այս եզրակացությունը արդյունք է բնագրի «որում Արտաշեսն Պարթև բաղձայր...» պարբերության թյուր ըմբռնման: Ընդգծված «որում» բառը հալաթյանցն ընկալել է որպես «որ»-ի ներգոյական հոլոված (յորում) և կցել նախորդ պարբերությանը (ուր, իրոք, խոսվում է ահեկան ամսվա մասին, սակայն նամակի գրության ամսաթվի և ոչ այլ առիթով): Ուշագիտ ընթերցումը կասկած չի թողնում, որ «որում»-ը «որ»-ի տրական հոլովածն է, և նրա բացահայտիչներն են «մլոյ մրրկեալ ծխոյ...» բառերը, որով և այդ նախադասությունը հասկացվելու է հետևյալ կերպ. «շեների ու քաղաքների վրա հավասարապես (տարածվող) մրրկյալ մլին և մառախուղացած ծխին էր տեսնում Արտաշես Պարթևը»:

Երրորդ եզրահանգումն այնքան շինծու է, որ հարկ չկա կանգ առնել նրա վրա: Միայն կարելի է զարմանալ այդպիսի անհիմն, բնագրից չբխող եզրակացության առթիվ:

Ինչ վերաբերում է չորրորդ և հինգերորդ կետերին, անհրաժեշտ է ասել հետևյալը: Ինչպես հայ, այնպես էլ բոլոր թագավորների ու իշխանների ժամանցի ամենասիրելի ձևերից մեկը որսն է եղել: Այդ նպատակով Խոսրով Կոտակ արքան, ըստ Մովսես Խորենացու վկայության, տնկել է տվել մի հսկայական արհեստական անտառ և այն լցրել որսի կենդանիներով¹, ուստի Տակիտոսի վերոհիշյալ վկայության վրա հեցած հնարավոր չէ «Մ տայր...» հատվածը վերագրել մի այլ Արտաշեսի, երբ Արտաշես Ա-ի մասին Մ. Խորենացու մոտ պահպանված վիպական հատակոտորները վկայում են, ինչպես դիտել է հանգուցյալ ակադ. Մ. Աբեղյանը, որ Արտաշես Ա-ի մասին եղել է ժողովրդական մի ընդարձակ վիպասանություն:

¹ Մ. Խորենացի, Պատմություն, Թիֆլիզ, 1913, գիրք երրորդ, գլ. Ը, էջ 265. «Իսկ սուրա (խոսրովու)... զբոսանաց հատրսութեանց եւ այլոց որսոց պարսպեալ, նորին աղագաւ եւ անտառ առ Ազատ գետովն տնկէ, որ յանուն նորա կոչի մինչեւ ցայսօր ժամանակի»:

Հիշատակված բանասերների կողմից մեզ հետաքրքրող վիպական հատվածի առթիվ առաջարկված մեկնությունները, ինչպես տեսանք, հեռու են գոհացուցիչ համարվելուց: Արտաշես Ա-ի վիպասանքից մնացած բեկորը նոր մեկնության կարիք է զգում:

Նոր մեկնություն առաջարկելու համար նախ և առաջ անհրաժեշտ է հնարավորին չափ խորամուխ լինել նամակի բովանդակությանը՝ նրա և վիպական հատվածի միջև գոյություն ունեցող կապի եզրերը գտնելու նպատակով:

Գրիգոր Մագիստրոսի լեզուն մանվածապատության, անկանոնության ու միտումնավոր ստեղծված բարդությունների մի այնպիսի համակցություն է, որ անհնարին է դարձնում գոնե մեզ հետաքրքրող նամակի բառացի թարգմանությունը:

Կան նամակում մի շարք բառեր, որոնք հավանորեն ստեղծվել են Մագիստրոսի կողմից և չեն մտել հայ լեզվի բառարանների մեջ (մակավազյան, դովար), կան նաև այնպիսիները, որոնց տրված բացատրությունները պայմանական և հույժ կասկածելի են (լալաւարթին, ալախութման)¹: Հասկանալի է, որ նման պարագաներում առաջարկված մեր մեկնություն-թարգմանությունից բառացիություն չպետք է պահանջել:

Ըստ մեր ըմբռնման՝ նամակում ասված է.

Յանկանում ենք երեկվա (ահեկի 23-ի) ճայթումն ու գոռոցը պաղաշող, մկմկացող (լալավարություն), ալախութման (ալիքների մեջ սուզվո՞ղ) քաղի (այծի) աղմկալից խխնջունն ու վրնջոցը հասկանալ հետևյալ կերպ. Ձառամյալ ծերունու նման դանդաղկոտ դարձած Ձիածինը² (ամպրոպային վիշա՞պ) ամոքում է իրեն թուխ մագերով՝ իր խեղճությանը տալով իզական կերպարանք: Կամ գուցե Արեսը հրաշունչ, ճարպիկ ու հերառատ Մակավազյանին (նույնպես միֆական կենդանի, վիշա՞պ) ձևափոխելով դարձնում է դորիական (՞) տավար (՞):

Հաջորդ տողերում Գ. Մագիստրոսը մանվածապատ արտահայտություններով հավանաբար հայտնում է նամակի գրության ամիսն ու ամսա-

¹ Այս երկու բառերին էլ պրոֆ. Հ. Աճառյանը տալիս է միևնույն բացատրությունը՝ «այծի պապաչիւն»:

² Ըստ Հայկազյան բառարանի՝ «ի ձիոյ ծնեալ եւ ըստ ֆերթողաց՝ որոտմունմ եւ շանթի իբրեւ յերուարաց Արամազդայ կամ արեգական առթեալ», ակնհայտնի սխալ է. ինչպե՞ս կարող էր Մագիստրոսը որոտին ու շանթին ասել «զառամեալ ծերունու նման դանդաղկոտ դարձած» և այլն: Կարծում ենք՝ Ձիածինը միֆական մի կենդանու անուն է, հավանաբար՝ ամպրոպային վիշապի, որը պատկերվում էր որպես ձի, ջորի և այլն (տե՛ս Մ. Աբեղյան, Հայ ժող. առասպելները, էջ 116):

Թիվը հայոց և եբրայական տոմարով (ահեկի 24), ապա շարունակում՝ «Շեների ու քաղաքների վրա հավասարապես (տարածվող) մրրկյալ մլին (մոլուխ) և մառախուղացած ծխին էր տենչում Արտաշես Պարթևը, ասելով՝

Ով կտար ինձ ծխանի ծուխը
 և նաասարդի առաւօտը,
 եղնիկների վազբը
 և եղջերուների արշաւը.
 Մենք փող ենք փչում
 և թմբուկ զարկում
 ինչպէս կարգն էր թագաւորների:

Եվ ասում են, թե այս իր մահանալու ժամանակ է (ասել), որը գտանք գուեհիկների (շինականների) մեջ ավանդված»:

Որ նամակի սկզբում Մագիստրոսն ակնարկում է մի առասպել՝ թերևս հունական, որը կապված է ինչ-որ ամպրոպային աստուծո կամ դյուցազնի հետ, ավելի քան հավանական է. դժբախտաբար, նամակի շարունակությունն անորոշության շնորհիվ անհնար է ավելի որոշակի հետևություններ անել կամ նշել հեղինակի մտահղացման համար հիմք հանդիսացած առասպելը հանվանե:

Փոքր-ինչ ավելի հնարավորություն ունենք Արեսի հետ առնչված առասպելը քննելու համար:

Հենվելով Ագաթանգեղոսի պատմության մեջ բերված Տրդատի հրովարտակի «քաջութիւն հասցէ ձեզ ի քաջն Վահագնէ» արտահայտության վրա՝ Ղ. Ալիշանն իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ հայկական Վահագնը իր որոշ գծերով ազգակից պետք է եղած լինի Արես աստուծուն¹:

Արես-Վահագն համադրումը իրավունք է տալիս մեկնվող հատվածը («Թերևս և Առէս լուծեալ զՄակաւագեանն հրաշունչ մորուեղ յոքնայածուկ ի դովրացի դովար յեղափոխէ») դիտել որպես վիշապների դեմ հողմ հարուցանելով և անձրևելով կովող մի աստուծո (Վահագն, Մարս, Արես և այլն) հետ կապված առասպելի ակնարկություն:

Վահագնի և ընդհանրապես գարնան ու բուսականության աստվածների, բնության շար ուժերի (վիշապների) դեմ մղած կովի հիմնական բովանդակությունը Մ. Աբեղյանի շարադրությամբ հետևյալն է. «վիշապը, պտու-

¹ Ղ. Ալիշան, Հին հավատք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 296:

տահողմի կամ ամպրոպի շար անձնավորումը, յուր ընկեր շար ոգիների հետ, իբրև հողմ «թանձրացեալ ամպով» բարձրանում է, արեգական լուսո երեսը կտրում կամ փոթորիկի մեջ հարձակվում է արեգական վրա... և հափշտակում է նրան կամ ուրիշ առասպելներով երկնային անձրևաբեր ամպերի, ջրերի առաջը կտրում է և վայր հոսելն արգելում է՝ անոնց առաջ ցամաք ամպերի լեռներ ու բուրգեր կանգնելով: Իսկ փոթորիկի կամ ամպրոպի աստվածը... կռվում է վիշապի և նրա շար ոգիների դեմ, խորտակում նրա բուրգերը կամ լեռները, սպանում է նրան և ազատում արեգակը և կամ ջրերը վայր է հոսեցնում»¹:

Գ. Մագիստրոսի նամակների մեծագույն մասի հիմնական նպատակը եղել է հունական ու հայկական առասպելների հիշատակությամբ կամ ակնարկությամբ ընդգծել իր գիտականությունը: Մեկ անգամ այդ բանի համար առիթ է ծառայել նվեր ստացած կարմրախայտ ձուկը, մի այլ անգամ նուռը, և այլն:

Մոկաց և Մանազկերտի եպիսկոպոսին ուղղած սույն գրությունն առիթը, ինչպես տեսանք, և ակնհայտ է նամակի վերնագրից, եղել է «ահագին որոտումն. անձրեւ[ն] սաստիկ»: Այդ առիթն օգտագործելով Մագիստրոսը, իրեն հատուկ մշտնապատություն, թվարկել է որոտման ու անձրևի հետ կապակցվող իրեն հայտնի առասպելները, որոնք (գոնե նրանցից մեկը՝ առանց կասկածի) վիշապների դեմ կռվող Արեսի-Վահագնի առասպելն են հիշեցնում:

Հասնելով այդ արդյունքին՝ մենք հնարավորություն ենք ստանում մոտենալու նամակի և վիպական հատվածի առնչության հարցին նոր լույսի տակ:

Սակայն նախքան այդ հարցի քննարկումը անհրաժեշտ է պարզել վիպական հատվածի առաջին տողի («Ո տայր ինձ ծուխ ծխանի») իմաստը: Այդ տողի մեզ հայտնի առաջին մեկնաբանողները եղել են «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» մեծարժեք բառարանի հեղինակները: «Ծխան» բառը նրանք նույնացրել են «ծխահանք» բառին՝ վերջինիս տալով «ծխնելոյզ.. ծակ, որ ի դուրս հանէ զծուխս եւ զգոլորշիս» բացատրությունը:

Այս բացատրությանն են հետևել վիպական հատվածի բոլոր քննարկողները՝ աներկբա համարելով «ծխան» և «ծխնելոյզ» բառերի հոմանիշությունը: Սակայն այդ բացատրությունն անկարելի է ընդունել, որովհետև դրանով չի պարզվում, թե ինչ կապ կա ծխնելոյզներից բարձրացող ծխի և

¹ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 157-158:

նավասարդի առավոտով միջև: Տրամաբանական չէ կարծել, թե Արտաշեսը երազել է նավասարդի առավոտով ծուխը, որովհետև այդ ամսին (միևնույն է՝ համապատասխանում է այն ապրիլին, թե օգոստոսին) հատուկ չէ ծխնելույզներից ելնող ծուխը կամ, ավելի ճիշտ, ծուխն ընդհանրապես: Գուցե «ծխանի-ծուխ»-ը տեսնելու բաղձանքը մահամերձ Արտաշեսի կողմից չէր կապակցվում նավասարդի առավոտով հետ, նա երազում էր մեկը մյուսից անկախ՝ թե՛ առաջինը (ծուխը), թե՛ երկրորդը (նավասարդի առավոտը):

Այս մեկնաբանությունը նույնպես գոհացուցիչ չէ: Դրանք այնքան տարբեր բաներ են, որ եթե ընդունելու էլ լինենք մահամերձ թագավորի բաղձանքների քմահաճո և անտրամաբանական լինելու հնարավորությունը, դարձյալ դրույթունը չի փոխվի: Դարերի ընթացքում ձևավորված ու հղկված ժողովրդական վեպի մեջ անտրամաբանական կեցություններ են-թաղրելու հիմք չունենք:

Մնում է վիպական հատվածի առաջին տողին տալ նշված հակասությունները լուծող մի այլ բացատրություն:

Այդպիսի հնարավորություն ընձեռում է մեզ հունաբան դպրոցի թարգմանություններից մեկը, որը պահպանվել է Մաշտոցյան Մատենադարանի գրչագրերից մեկում, ինչպես և վենետիկյան Մխիթարյանների մատենադարանում¹: Աշխատության վերնագիրն է՝ «Ասկղեպիադեայ՝ վասն չորից բնութեանց մարդոյ եւ տարոյ եւ ամսոյ»²:

¹ Տե՛ս Գ. Զարպհանայան, Մատենադարան հայկ. թարգմանությանց, Վենետիկ, 1889, էջ 316-317, նաև՝ Մատենադարանում պահվող ցուցակներից № 18-ը՝ «Վենետիկի Մխիթարեանց հայ գրչագրաց համառօտ ցանկ՝ 1888 թուին կազմուած հայր Բառնաբաս Եսայեան գրապետից» (էջ 6բ):

² Այս աշխատությունը բժշկագիտության պատմության համար առանձնակի հետաբերություն է ներկայացնում: Հունական մատենագրության մեջ Ասկղեպիադես անվամբ մի շարք գրողներ են հայտնի, որոնցից մի քանիսը՝ բժիշկ:

Դրանցից որի՞ն պետք է համաչել որպես այս աշխատության հեղինակ՝ կարելի կլինի որոշել հատուկ ուսումնասիրությունից հետո: Առայժմ կարող ենք ասել միայն, որ այն փաստարկումը, որի հիման վրա Գ. Զարպհանայանը ժխտում է աշխատության պատկանելությունը Ասկղեպիադես Բյութանացի մեծանուն հույն բժշկի գրչին (մահ. 90 ն. մ. թ.), համոզիչ չէ: Զարպհանայանի համար վեոական նշանակություն ունի այն հանգամանքը, որ Ասկղեպիադեսի անվամբ մեզ հասած երկերի շարքում չի գտնվում «վասն չորից բնութեանց մարդոյ...» աշխատությունը. սակայն դա, իհարկե, անառարկելի փաստ չէ: Հայերեն թարգմանությամբ պահպանվել են բազմաթիվ հույն հեղինակների երկեր, որոնց բնագրերը չեն գտնվում. հիշենք Փիլոն Եբրայեցու երկերը, Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրությունը, Զենոն Ստոյիկի «Յաղագս բնութեան» երկը և այլն: Շատ հնարավոր է, որ Ասկղեպիադեսի այդ երկի հունարեն բնագրին վիճակվել է վերոհիշյալների բախար:

Աշխատությունը թարգմանված պետք է լինի է դարում կամ ավելի վաղ. որովհետեւ Անանիա Շիրակացին հիշատակություն ունի նրա մասին իր «Յաղագս շրջագայութեան երկնից» աշխատության մէջ¹, և նրա հետքերը նկատվում են Հովհան Օձնեցու ու Խոսրովիկի երկասիրություններում:

«Վասն շորից բնութեանց մարդոյ» աշխատության առաջին ենթագլխում կա հետևյալ հատվածը.

«... Ծանիր զի ի հրորտից եւ ի նաւասարդի եւ ի հոռի ամսեան արիւն յաւելու. եւ ի սահմի եւ ի տրէ եւ ի քաղոց ամսեան՝ խարտեաշ մաղցն յաւելուն. եւ յարաց եւ ի մեհեկի եւ յարեգ սեւ մաղցն յաւելուն. եւ յահկի եւ ի մարերի եւ ի մարգաց՝ մաղաս յաւելու»:

Հրորտից, նավասարդի, հոռի ամիսները բերված են աշխատության մեջ որպես գարնան ամիսներ. սահմի, տրե, քաղոց ամիսները՝ ամռան. արաց, մեհեկի, արեգ ամիսները՝ աշնան, իսկ ահեկի, մարերի և մարգաց ամիսները՝ ձմռան:

Վերը մեջբերված պարբերությունից հետո աշխատության մեջ անհրաժեշտություն է եղել կրկնելու այդ ամիսներն այլ կապակցությամբ: Այս անգամ հեղինակը կամ թարգմանիչը բոլոր ամիսները հանվանե թվելու փոխարեն բավարարվել է գարնան, ամռան, աշնան և ձմռան առաջին ամիսների անունների հիշատակությամբ: Մյուս ամիսների թվարկման փոխարեն գործ է ածել «եւ այլ Բ ամիսքն» արտահայտությունը:

Նշված ձևով հիշատակված են՝ «հրորտից եւ այլ Բ ամիսքն» (նավասարդ, հոռի), «սահմի եւ այլ Բ ամիսքն» (տրե, քաղոց), «արաց եւ այլ Բ ամիսքն» (մեհեկի, արեգ): Միայն հաջորդ ձմռան եռամսյակը բնագրում այլ ձևով է բերված: Սպասելի էր «ահկի եւ այլ Բ ամիսքն» ձևը (ինչպես հանդիպում ենք նույն բնագրի մեկ այլ հատվածում), սակայն դրա փոխարեն կարդում ենք. «Ծխանի ամիսն եւ այլ Բ ամիսքն»:

¹ Տե՛ս Ա. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 321. «նաեւ բնութիւն մարդկան ըստ երկրի գոյանան. զի ի ձմեռայնի ջերմ լինի ներքին որովայն, դիւրահալ լինի կերակուրն ի վերոյ մարմինն հով. եւ յամառայնի ի վերոյ ջերմ եւ ի ներոյ հով: Զոր եւ իմաստուննն ի բժշկաց պատմեն զայս Ասկիպիադեայ եւ Հիպոկրատայ ուսմանն ճարտարապետնն ասացին»:

Սրանից հետևում է, որ աշխատությունների թարգմանչի կամ արտագրողներից մեկի համար ահկի և ծխանի ամսանունները համարժեք են եղել. և կամ ձմռան առաջին ամսվա համար հայերենում գործածվել են թե՛ ահեկի (ահեկան), թե՛ ծխան բառերը¹:

¹ Միջնադարյան հայ տոմարագետների երկերի, հայսմավորների և այլ տիպի ձեռագիր աշխատությունների միջոցով մեզ հասած հայկական ամսանունների վերաբերյալ բանասիրությունն իր վերջնական խոսքը դեռ չի ասել: Սովորաբար դրանք ստուգաբանվել են պարսկերեն, նաև վրացերեն լեզվի օգնությամբ և դիտվել որպես փոխառություններ (հրոտից, սահմի, հոռի և այլն) և կամ կապվել գյուղատնտեսական աշխատանքների ու բնական երևույթների հետ (օրինակ՝ ֆաղոցը բացատրվել է «ֆաղել» կամ անասունների «ֆաղ»-զուգակցություն, ինչպես և «ֆաղ»-այծ բառերի միջոցով): Թվում է, թե վերոհիշյալ սկզբունքներով կատարված ուսումնասիրությունը դրական արդյունքներ չի կարող տալ: Անհրաժեշտ է նախ նշտել հայկական ամսանունների գրության ձևերը և նախնականն ու հնագույնը գտնելու ուղղությամբ աշխատանք ծավալել, որովհետև մի շարք ամսանուններ հասել են մեզ տարբեր գրության ձևերով, իսկ մի քանիսն էլ տարբեր անվանակոչությամբ: Այսպես օրինակ՝ **հրոտից** ամսանունը հնագույն ձեռագիր աղբյուրներում ամենուրեք գրված են գտնում **հրոտից** ձևով, **արէ**-ն հանդիպում է **արեայ** ձևով, **մեհեկին՝ մեհեկան, ահկին՝ ահեկան** ձևով և այլն:

Ահեկանը, ըստ միջնադարյան տոմարագետների, հնում կոչվել է **հարվանց**, իսկ ինչպես տեսանք, նաև **ծխան, հոռի** ամսանվան հին անունը, ըստ Հովհան Երզնկացու անվամբ հավաքված տոնապատեանի, եղել է **մատրան** («այբ ումն զմատրան ամիս ի հոռի փոխարկեաց» - **Ղ. Ալիշան**, Հին հավատք, էջ 140): Մեր Մատենադարանի հայսմավորներից մեկում մարտի-հունիս զուգադրության կից նշանակված է նաև **հիզան** ամսանունը, որ թվում է այդ ամսվան հին անվանակոչությունը («Մարտի ի ԻՆ, եւ յունիս, հիզանի Ա. վկայաբանութիւն սրբոյն Պետրոսի եւ Պօղոսի...» - ձեռ. № 3811, էջ 937) և այլն: Արդ, նրանցից որո՞նք են հնագույնները, փոփոխությունները ե՞րբ և ի՞նչ պարագաներում ու պատճառով են կատարվել՝ ահա այն հարցերը, որոնք լուսաբանման կարիք են զգում:

Ընդունելի արդյունքների հասնելու համար ի նկատի պետք է ունենալ մի այլ հանգամանք ևս. հայկական ամսանունները, առանց բացառության, սեռական հոլովածնով են բերվում աղբյուրներում (հմմտ. նույն բանը նաև հայկ. տեղանունների կապակցությամբ՝ Կարնո ֆաղաֆ, Այլաբերից գյուղ, Ծիրանյաց լեռ և այլն և այլն): Ամսանունները հնում գիտակցվել են որպես տվյալ ֆաղաֆական ու մշակութային միավորման բաղադրիչ մասեր կազմող ցեղախմբերին կամ ցեղախմբերի տոտեմ-աստվածներին վերաբերող, նրանց պաշտպանության տակ գտնվող և նրանց նվիրված ժամանակամիջոցներ: Եթե այս դատողությունը ճիշտ է, որի առթիվ չենք կասկածում, ապա մարաց (ամիս)-ը պետք է առաջացած համարել «մարֆ»-մարեր էթնիկական անունից, արաց (ամիսը)՝ Արա (աստուծոյ), թերևս «արիֆ»-արիներ էթնիկական տեղմիներից, արեգ (ամիս)-ը՝ Արեգ աստուծո, ուստի և նրան պաշտող էթնիկական միավորի անունից, Հրոտից (ամիս)-ը՝ Հրարտ-նուրարտ-նուրարտացիներ անունից: Մեկ առ մեկ պաշտպանել մեր առաջարկները, այս ծանոթության սահմաններում, իհարկե, անհնարին է: Ծանոթանանք միայն վերջին՝ հրոտից ամսանվան առթիվ պրոֆ. Հ. Անադյանի հայտ-

Ստացված արդյունքը ծխան և ահեկի բառերի հոմանիշություն մասին լուծում է քննությունն նյութ հանդիսացող վիպական հատվածի վերոհիշյալ մթին տեղը:

Շատ հավանական է, որ «Ո տայր ինձ զծուխ ծխանի» նշանակում է «ով կտար ինձ ահեկի ամսուայ (հունվարի) ծուխը»:

Այս բացատրությունը պարզվում է նաև «որում Արտաշէսն Պարթև բաղձայր մլոյ մրրկեալ ծխոյ շամանդաղեալ մակաւասար շինից եւ քաղաքաց» պարբերության ու վիպական հատվածի կապը նամակի բովանդակության հետ:

Նամակը գրված է «յաւուրս ձմերայնոյ», ահեկի ամսի 23-ին եղած որոտման և անձրեւի առիթով, Արտաշէս Պարթևն էլ երազել է ահեկի, ծխան ամսվա մրրկյալ միսին և մառախուղացյալ ծխին (որ թերևս պետք է հասկանալ «խիստ մառախուղ», «սև ամպ» իմաստով):

նա՞ծ կարծիքին. ըստ նրա՝ այդ իրանական փոխառություն է պիլ. fravartikan - «ավելյաց» բառից: Իսկ ինչու՞ չի կարող լինել հակառակը, այդ ամսանունը ինչու՞ չէր կարող հաբեթական աշխարհից անցնել իրանական աշխարհ՝ մի բան, որ նույնքան, գուցե առավել տրամաբանական է, բայց անտեսվում է իրանական մշակույթի ազդեցության ուժը գերագնահատելու հետևանքով: Անշուշտ կարող էր: Այնուհետև հայկական ամսանունների ու տոմարի ֆունկցիայի ընթացքում հատուկ ուշադրություն պիտի դարձվի, գուցե Անանիա Շիրակացու կողմից գրանցված, այն ժողովրդական ավանդության վրա, ըստ որի՝ հայկական ամսանուններն առաջացել են հայերի առասպելական նախահոր՝ Հայկի (հայկական Զրվանի) որդիների ու դուստրերի անուններից: Այս տեղեկությունը ենթադրել է տալիս հայ էթնոսի կազմավորման մասին եղած վեպի մի հնագույն՝ Մ. Խորենացու շարադրածից տարբեր մանրամասն փոփոխակի գոյություն, որտեղ Հայկի սերունդների թվում հիշվում են մի շարք այլ տոտեմ-աստվածներ (ցեղախմբեր): Հասկանալի է, որ ժողովրդի կազմավորման երկարատև պրոցեսի այս կամ այն էտապում, նոր և կենսունակ էթնիկական միավորներ մերձենալով մի որևէ ցեղերի կոնֆեդերացիայի և մտնելով նրա կազմի մեջ, պետք է իրենց հետ բերեին նաև իրենց աստծո պաշտամունքը: Այս պատճառով դարերի ընթացքում փոփոխվել է ինչպես ժողովրդի էթնիկական կառուցվածքը, այնպես էլ նրա պանթեոնն ու դրանից բխող՝ դրա հետ սերտ աղերսներ ունեցող տոմարը:

Սույն հոդվածի սահմաններից վերոհիշյալով մենք շատ հեռացանք: Մեր համեստ նպատակն էր միայն շեշտել հայկական ամսանունների և ընդհանրապես տոմարի հետ կապված մի շարք հարցերի առթիվ նոր ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտությունը, ինչպես և այդ ուսումնասիրության միջոցով տվյալ տոմարը ստեղծած էթնոսի բաղադրիչ տարրերի ու հեթանոսական պանթեոնի հետ կապված մի շարք հետաքրքրական խնդիրներ պարզելու հնարավորությունը:

Վիպական հատվածի ներմուծումը նամակի մեջ այժմ պատճառաբանված է¹:

Սակայն չկա՞ն արդյոք ավելի սերտ աղերսներ նրանց միջև, Արտաշեսի բաղձանքն արդյոք եղնիկների որսի սիրահար մահամերձ թագավորի բաղձա՞նքն է, թե՞ որոշ կապ կա այդ հատվածի և նամակի սկզբում հիշատակված առասպելների միջև:

Դեռևս 1899 թվին «Բյուրակն» լրագրի էջերում Վ. Ս. Քյուրքճյանը հրատարակել է մի փոքրիկ ազգագրական հոդված «Կաթնաղբյուր» վերնագրով:

Հոդվածում նկարագրված է Կեսարիայում պահպանված մի սովորույթ. ամեն տարի մայիսի 7-ին, արևածագից շատ առաջ, տարեց կանայք իրենց կաթնատու խոշոր եղջերավոր անասունների հետ մեկտեղ ուխտի են գնում գյուղից քառորդ ժամվա հեռավորության վրա գտնվող «Կաթնաղբյուր» կոչվող մի աղբյուրի: Մոմ են վառում, ծխում են խունկ և լվանում կաթնաղբյուրի շրով իրենց և անասունների կրծքերը: Այդ ժամանակ հասնում է հովիվն ու քշում անասուններին արոտի: Հոդվածագիրն այդ տեսարանը, երբ արեգակի ծագելու և բնության զարթոնքի պահին կաթնաղբյուրի մերձակայքում իրար են խառնվում անասունների բառաչն ու կանացի խոսակցությունները, համեմատում է Գ. Մագիստրոսի նամակի վիպական հատվածի «զվազելն եզանց եւ զուարգելն եղջերուաց» տողի հետ. ապա հայտնում է, որ «ետքը ամէն ոք կը սկսի ճաշել ու զբօսնուլ»՝ դրան էլ հարակցելով «մեք փող եւ թմբուկ հարկանէաք» տողը²:

Իհարկե, Քյուրքճյանի հոդվածում վիպական վերոհիշյալ տողերը միայն զարդարանքի դեր են կատարում, այնուամենայնիվ ուշադրության արժանի է, որ մեր բանասիրության կողմից որպես որսի նկարագիր ճանաչված վիպական բեկորի ու անկասկած հեթանոսական ժամանակներից պահպանված մի տոնախմբության միջև նա հնարավոր է համարել զուգահեռներ անցկացնել:

Առաջադրված հարցի լուծման համար կարևոր են բոլոր՝ թե՛ պատմական, թե՛ ազգագրական տեղակությունները, որոնք վերաբերում են նավասարդի ու ահկի (ծխան) ամիսներին Հայաստանում տեղի ունեցած հեթանոսական տոներին և դրանց հետ կապված սովորույթներին:

¹ [Եղնիկի ու ձմրան («բանջարաբուսուկի»), վիշապի հետ կապված մի ուշագրավ ավանդություն գրառել է հայագետ Գ. Տեր-Մկրտչյանը Ն. Մառին հասցեագրած նամակում (տե՛ս «Մատը և հայագիտության հարցերը», Երևան, 1968, էջ 259: Խմբ.):

² «Բյուրակն», 1899, էջ 360: Վ. Ս. Քյուրքճյան, Կաթնաղբյուր:

Նավասարդը հայկական ամենատոնաշատ ամիսն է եղել ինչպես հեթանոսական, այնպես էլ քրիստոնեական ժամանակներում:

Այդ ամսի 1-ին սկսվում էր ամանոբյա ամենաբեր դից «համաշխարհական» կամ «աշխարհաժողով» տոնը, որի տակ պետք է հասկանալ նոր տարվա ամենաբեր աստվածների տոն: Այդ աստվածների թվին էր պատկանում Վահագնը¹: Ըստ ավանդույթյան՝ կործանելով Վահագնի աշտիշատյան տաճարը՝ Գրիգոր Լուսավորիչը տեղը հիմնեց Հովհաննես Մկրտչի եկեղեցին և Վահագնի տոնի փոխարեն նույն նավասարդի 1-ին կարգեց տոն Հովհաննի և Աթանազենեսի: Իսկ «Մշո Սուլթան Սուրբ Կարապետի» (Հովհան Մկրտչի) պաշտամունքն ակնհայտորեն Վահագնի պաշտամունքն է քրիստոնեական զգեստավորումով:

Վերոհիշյալից թերևս հնարավոր լինի եզրակացնել, որ վիպական հատվածի նավասարդի առավոտն առնչվում է Վահագնի տոնին՝ մի տոն, որ կապված է եղել այդ աստուծո միֆական ծննդյան («Երկնէր երկին, երկնէր երկիր...») և վիշապների դեմ մղած հերոսամարտերի հետ²: Այս ենթադրությունն ավելի հավանական կհամարվի, եթե վերհիշենք Գ. Մագիստրոսի նամակի այն մասը, որտեղ ակնարկված է նույն Արեսի-Վահագնի կոիվն ինչ-որ միֆական Մակավազյանի (վիշապի) հետ:

Իսկ ի՞նչ հեթանոսական տոն կամ սովորույթ է կապված ահկի կամ ծխան ամսվա հետ:

Բորչալուի գավառում տարեմտին (դեկտեմբերի 31-ին) ամեն ընտանիք մի մեծ գերան էր քարշ տալիս գլխատուն, գերանի մի ծայրը դնում էին օջախի մեջ և վառում: Այդ «տարեմտի քյոթուկը» պետք է անընդհատ վառվեր մինչև ծննդյան երեկոն: Ծննդյան երեկոյին վերցնում էին այդ գերանից մնացած ածուխը, տանում հանդերում թաղում, որպեսզի թե՛ բերքն առատ լինի, և թե՛ կարկուտը չխփի արտին: Հավատում էին, որ կարկուտ եկած միջոցին եթե այդ գերանի ածխից դուրս ձգեն, ապա երկիրքը կխաղաղվի, ուստի պահում էին ածխի մի մասը՝ պետք եղած ժամանակ գործադրելու նպատակով³:

¹ Տե՛ս Գ. Ալիշան, Հին հաւատք Հայոց. նաև՝ Յուզիկի հայրենեաց Հայոց, հտ. բ, հոդված ԺԲ («Տօնք նավասարդի»):

² Մ. Խորենացի, Պատմ., գիրք առաջին, գլ. ՇԱ, էջ 80. «Ընդ վիշապաց ասէին յերգին՝ կոուել նմա եւ յաղթել եւ կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակութեանցն նմա երգէին»:

³ Տե՛ս «Ազգագրական հանդես», գիրք X, 1903, էջ 250, Ե. Լալայանի «Բորչալուի գավառ» հոդվածը:

Ինչպես արդեն նշել ենք, ահկի-ծխան ամիսը, ըստ կրոնական տոմարի, ձմեռվա առաջին ամիսն է եղել. ավելի կոնկրետ՝ այն սկսվել է դեկտեմբերի 22-ից ու տևել է մինչև հունվարի 22-ը, ուստի Բորչալուում պահպանված հեթանոսական սովորույթը տեղի է ունեցել հին՝ ահկի-ծխան ամսվա մեջ: Թերևս ծխանի ծուխի բաղձանքը որոշ կապ ունի հեթանոսական այդ սովորույթի (հնում՝ տոնակատարության) հետ, որի ընթացքում, իրոք, գյուղերի ու քաղաքների վրա բնական մառախուղի հետ մեկտեղ պետք է որ տարածվեր «տարեմտի քյոթուկի» գլխատներից բարձրացող ծուխը:

Մի այլ կողմով էլ է ուշագրավ այս սովորույթյունը:

Գերանից մնացած ածուխը, ինչպես տեսանք, քշում է կարկտաբեր ամպերն ու արտերը բերքառատ դարձնում, իսկ կարկուտը նույնպես չար սկզբունքի (դևի, վիշապի) արգասիք է. եթե «տարեմտի գերանի» ածուխը չարահալածի դեր է կատարում, ապա ուրեմն այն հեթանոսական աստվածույթյունը, որի պաշտամունքի հետ է կապված եղել Բորչալուում մինչև վերջերս պահպանված այդ սովորույթը, նույնպես եղել է կարկտաբեր դևի-վիշապի հալածիչ, բարի ու երկրագործության հովանավոր մի աստվածույթյուն:

Այդպիսի ֆունկցիաներ ունեցած պետք է լինեին ինչպես Վահագնը, այնպես էլ բազմաթիվ այլ անուններով, բայց համանման բովանդակությամբ, զանազան տեղախմբերի կողմից պաշտված աստվածները. մի հանգամանք, որ իրավունք է տալիս վիպական հատվածի «զծուխ ծխանի» արտահայտությունը նույնպես կապել այն աստվածության պաշտամունքի հետ, որի մասին ակնարկություն կա Գր. Մագիստրոսի նամակի սկզբում:

Սակայն վիպական հատվածի հաջորդ՝ 3-7 տողերը կարծես թե հակասում են առաջին երկու տողերի մեր մեկնությունը:

«...Զվագելն եղանց,
եւ զվագելն եղջերուաց.
Մեք փող հարուաք
եւ թմբկի հարկանէաք,
որպէս օրէն է թագաւորաց»

հատվածում մահամերձ թագավորը երազում է եղնիկների և եղջերուների որսը:

Բայց ի՞նչ կապ կարող է լինել որսի և Վահագնի պաշտամունքի հետ կապված հանդեսների միջև:

Սասանյան, մեծ թվով մեզ հասած տաշտակները (ԾԼՅՈԾՕ) օգնում են այդ հարցի պատասխանը գտնելու գործում:

Դրանցից մեկում պատկերված է զինավառ Խոսրով Բ արքան՝ արքայական հանդերձավորությունը, հեծած իր փառահեղ նժույզը՝ դիմացը և աջ կողմում գտնվող որսի կենդանիներին նետահարելիս: Որսի կենդանիների մեջ նկատվում են առյուծներ (2), վագր (1), վարազ (1) և եղջերուներ ու եղնիկներ (7), ուստի որսը կարելի է համարել եղնիկների ու եղջերուների որս:

Այսպիսի մի տեսարան պատկերված է նաև Դուրա-Եվրոպոսի միհրական մեհյանի որմնանկարում, որ 209-211 թվերի գործ է: Այնտեղ պատկերված է Միհրը: Միհրի ու Խոսրով Բ-ի սպառազինությունը, կեցվածքը ձիով վրա, լարված աղեղները հար և նման են միմյանց: Միհրի որսի կենդանիներն էլ, ընդհանուր առմամբ, նույնացնում են Խոսրովի որսի կենդանիների հետ (2-եղջերու, 2-եղնիկ, 1-գա՛յլ):

Համեմատելով միմյանց հետ այս և նման մի քանի հուշարձաններ՝ Կ. Վ. Տրևերն առաջարկում է նշված ընդհանրությունների մի սրամիտ բացատրություն¹:

Ըստ նրա՝ թագավորները, պատկերվելով կենդանիների դեմ կռվելիս, մոտեցնում էին իրենց կերպարը ընդդեմ խավար ու շար սկզբունքի պայքարող աստուծո՞՛ երկնային որսորդ Միհրի կերպարին²: Ժողովրդի գիտակցության մեջ ևս աստիճանաբար աստվածացված թագավորի ու աստուծո միջև եղող պատվարը վերանում է. և նրանք (թե՛ արվեստի, թե՛ գրականության մեջ) պատկերվում են համընդհանուր, միմյանց ծածկող գծերով:

Շատ հնարավոր է, որ Խոսրով Բ-ի որսը փորագրող վարպետն իր սյուժեին ըմբռնել է որպես սոսկ թագավորական զվարճություն՝ առանց հասու լինելու այդ կերպարի նախկին միհրական բովանդակությանը:

Նույնպես հնարավոր է, որ մեր վիպասանները մահամերձ Արտաշեսի բաղձանքն ըմբռնել են որպես որսասեր թագավորի վշտի արտահայտություն: Սակայն Արտաշեսի երազած սույն որսը հավանորեն կապ ունի նավասարդ ու ծխան ամիսներին տեղի ունեցած հեթանոսական հանդեսների հետ՝ որպես ծխական որսի մի արարողություն: Թագավորը, որպես հանդեսի կրոնական ղեկավար, քրմապետ, հալածելով եղնիկներին ու եղջերու-

¹ Տե՛ս նրա «Отражение зороастризма в искусстве» հոդվածը. հրատարակված է Պետ. էմփաաթի «Труды Отдела истории культуры и искусства Востока» ժողովածուում (том I, Ленинград, 1939, с. 243-254):

² Նույն տեղում, էջ 249:

ներին, պատկերում էր այն հերոսամարտը, որ մղել է երկնային շար ուժերի դեմ մարտնչող աղեղնավոր որսորդ աստվածը (Վահագն, Արես, Մհեր և այլն):

Վիպական հատվածում ասված է, որ օրենք էր թագավորների համար որսի ժամանակ փող փչելն ու թմբուկ զարկելը (տող 5-7): Սովորական որսերի ժամանակ թագավորական շքախմբի կազմում լինում էին և՛ փող փչողներ, և՛ թմբկահարներ, ուստի այդ տողերը նույնպես, համապատասխան վիպական հատվածի բովանդակության, նոր բացատրություն են պահանջում:

Տոնվող աստուծո երկնային որսը թագավորը պետք է ներկայացներ անձնապես: Ստանձնելով մենամարտիկ որսորդի դեր՝ նա պետք է և փող փչեր և թմբուկ զարկեր, որովհետև որսն այլ կերպ երկնային որսի կատարյալ պատկերը չէր լինի: Այսպիսով, վիպական հատվածում Արտաշեսի կողմից երազված որսն առնչվել է ծխան և նավասարդ ամիսներին տեղի ունեցող Վահագնի կամ նույն բովանդակության մի այլ աստվածության տոնական հանդեսներին՝ որպես կրոնական ծես-արարողություն:

Ի մի բերելով Գրիգոր Մագիստրոսի՝ Մոկաց ու Մանազկերտի եպիսկոպոս Գրիգորին ուղղած նամակի քննության արդյունքները՝ հանգում ենք հետևյալին.

ա) նամակի գրության առիթը ձմռանը՝ ահի-ծխան ամսի 23-ին տեղի ունեցած «ահագին որոտումն», «սաստիկ անձրևն» է եղել:

բ) Վերոհիշյալ առիթն օգտագործելով՝ Գրիգոր Մագիստրոսը համառոտակի շարադրել կամ ակնարկ է նետել ամպրոպաբեր և անձրևաբեր բարի ու շար աստվածների կովի վերաբերյալ եղած մի երկու առասպելների վրա, որոնցից մեկը հիշեցնում է վիշապաքաղ Վահագնի հայկական առասպելը՝ հունական պաճուճանքով (Արես փոխանակ Վահագնի):

գ) նամակի վերջում Արտաշեսյան ցիկլից բերված վիպական հատվածը նախորդ ուսումնասիրողների կողմից (Ալիշան, Էմին, Խալաթյանց) մեկնվել է անբավարար և ոչ գոհացուցիչ: Նրանք հատվածը քննարկել են առանց խորամուխ լինելու նամակում հիշված առասպելների բովանդակությանը և չեն կարողացել մեկնել վիպական հատվածի առաջին տողը:

դ) Առաջին՝ «Մ տայր ինձ զծուխ ծխանի» տողը նշանակում է ոչ թե՛ «Մ՛վ կտար ինձ ծխնելույզներից (եղնող) ծուխը», ինչպես հասկացվել է, այլ՝ «Մ՛վ կտար ինձ ահկի (ծխանի=հունվար) ամսվա ծուխը»:

ե) Ծխան բառը այս (ահի) իմաստով գործածված ենք գտնում բժշկագիտության պատմության համար մեծ արժեք ներկայացնող «Ասկղե-

պիտակեայ վասն շորից բնութեանց մարդոյ...» թարգմանական ձեռագիր աշխատության մեջ:

զ) Վիպական հատվածի առաջին երկու տողերում («Մ տայր ինձ գծուխ ծխանի եւ գառաւօտն նաւասարդի») մահամերձ Արտաշես Ա-ն հավանաբար երագել է ահկի-ծխան և նավասարդ ամիսներին կատարվող տոնախմբությունները (որոնք նույնպես առնչված են եղել երկնային շար ուժերի՝ վիշապների դեմ մարտնչող մի աստվածության պաշտամունքի հետ), իսկ հաջորդ տողերում այդ տոնախմբությունների հետ կապ ունեցող եղնիկների ու եղջերուների որսերը, որոնց ժամանակ թագավորը ստանձնում է ծխական որսի արարողապետի պաշտոնը:

ՀԱԿՈՒՅՑ ՍԱՆԱՀՆԵՑԻ՝ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ XI ԴԱՐԻ¹

Ուշ միջնադարից պահպանվել են հայ մատենագիրների ու պատմագիրների մի քանի ուշագրավ ցանկեր², որոնց մեջ հանրահայտ ու անվանի հեղինակների կողքին հիշատակվում են նաև քիչ հայտնի և բոլորովին անհայտ անուններ: Առաջին անգամ Դ. Ալիշանն է ուշագրություն դարձրել այդ ցանկերի վրա և ըստ արժանվույն գնահատել նրանց գիտական նշանակությունը: Նա մասնավորապես անդրադարձել է Ղազար Ջահկեցու «Դրախտ ցանկալի» կոչված աշխատության միջնորդությամբ մեզ հասած 36 հայ պատմիչների ցանկին³ նշելով, որ, բացի նշանավոր և այլուստ էլ հայտնի պատմագիրներից, այդտեղ հիշատակված են նաև միանգամայն անծանոթ հեղինակների անուններ՝ Հակոբ, Եսայի, Սարգիս, Դանիել և այլն⁴:

Արդեն յոթանասուն տարի է անցել «Հայապատումի» հրատարակությունից, բայց դեռևս փորձեր չեն կատարվել՝ վերոհիշյալ պատմիչների գործերը երևան բերելու: Միակ բացառությունը թերևս Հակոբ կոչված պատմագրի հետ է կապված: Հ. Աճառյանը «Հայոց անձնանունների բառարանում» այդ անվան առնչությամբ գրել է. «Յակոբ քահանա, անծանոթ պատմիչ. գրել է պատմական մի գործ՝ սկսած Ադամից մինչև 1101 թվականը: Սրա մի օրինակը գտնվում է Փարիզի Bibl. Nationale-ում (Manus. Bibl. nat., էջ 133): Երևի սրա հետ նույնն է Յակոբ անծանոթ պատմիչը, որին հիշում է Ղազար Ջահկեցի, Հայապատում, 13»⁵:

Այս տեղեկությունը, ցավոք, թյուրիմացության արդյունք է: Մեծանուն գիտնականի մատնանշած Փարիզի ազգային գրատան հայերեն ձեռագրերի ցուցակի համապատասխան էջում խոսք կա ոչ թե Յակոբ (Jacques), այլ Յովհաննէս (Jean) քահանային պատկանող պատմական դեպքերի համա-

¹ Բանբեր Երևանի համալսարանի, 1971, № 1, էջ 22-48:

² Այս ցանկերի ամբողջական ու քննական հրատարակությունն իրականացրել է Հ. Անասյանն իր «Հայկական մատենագիտություն» (Երևան, 1959) մեծարժեք աշխատության Ա հատորի ներածական ուսումնասիրության «Մատենագիտական բնագրեր» կոչվող բաժնում (տե՛ս էջ XXXIX-LXXVI):

³ «Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի՝ շարադրեալ ի Ղազարու աստուածաբան վարդապետէ ճահկեցոյ», Կ. Պոլիս, 1735, էջ 646-647: Հետագայում Ն. Ակիմյանը, ֆաղեթով Անթիլիասի մատենադարանի մի ձեռագրից, հրատարակեց Ղազար Ջահկեցուց աննշան տարբերություններ ունեցող մի ուրիշ ցանկ (Ն. Ակիմյան, Բաղեշի դպրոցը, 1500-1704, Վիեննա, 1952, էջ 309-311):

⁴ Դ. Ալիշան, Հայապատում, մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 13:

⁵ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ, Երևան, 1946, էջ 484-485:

ռոտ մի ցանկի մասին, որը, սկսելով Ադամից, հասցված է մինչև հայոց 550 (= 1101) թվականը¹:

Այդ ժամանակագրության հեղինակ Հովհաննես քահանան ոչ այլ ոք է, քան XI-XII դարերի նշանավոր մատենագիր Հովհաննես Սարկավագ վարդապետը: Փոքրիկ այդ բնագիրը երկիցս արդեն տպագրվել է. սկսվում է, իրոք, Ադամից («Եթէ կամիցիս յելանելոյն Ադամայ ի դրախտէն գիտել զժամանակն») և ավարտվում «ՇԾ (1101) թուին՝ պատառումն զատկին» տեղեկության գրանցումով (դրան անմիջապես հաջորդում է Սարկավագի մահվան մասին մի գրանցում. «ՇՀԸ թուին փոխեցաւ ի Քրիստոս մեծ վարդապետն Սարկաւագն»)²: Ըստ այդմ այս «Ժամանակագրությունը», որի պատմագիտական արժեքը մեծ չէ, վերոհիշյալ Հակոբի հետ որևէ առնչություն չունի:

Այսպիսով, ինչպես Ղազար Ջահկեցու ժամանակ (մահ. 1751 թ.), այնպես էլ այսօր, հայագիտության մեջ աղոտ մի վկայություն կա միայն Հակոբ անունով հայ պատմիչի գոյություն մասին: Եվ հայտնի չէ նույնիսկ, թե երբ է ապրել և ինչի մասին է գրել մոռացված այդ պատմագիրը:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռք բերած մեկ հազարից ավելի հայերեն ձեռագրերի մեջ մասնավոր ուշադրության արժանի են պոլսահայ մտավորական Թորոս Ազատյանի (1895-1955) հավաքած մի քանի տասնյակ ձեռագրերը, որոնք բանասերի այրու բարեհաճությանը դիվանական բազմաթիվ փաստաթղթերի, հնատիպ գրքերի և այլ նյութերի հետ մեկտեղ ուղարկվել էին մայր հայրենիք: Այդ ձեռագրերից մեկը, որ գրանցվել է Մատենադարանի 9832 համարի տակ, հայտնաբերվել է Դիարբեքիրում 1950 թվականին: Ընդամենը 38 թերթից բաղկացած և արտաքինից անհրապույր այդ փոքրիկ գրչագիրը բանասիրական ուշագրավ նյութերի մի շտեմարան է: Այստեղ գտնում ենք

¹ Յուզակի հեղինակ Ֆ. Մակլերն այսպես է ներկայացրել 1662 թ. ընդօրինակված № 252 ձեռագրի 63-66 էջերը գրավող և խնդրո առարկա «պատմական գործը». De Jean le Prêtre, sur les événements de l'histoire, depuis la sortie d'Adam du Paradis terrestre Jusqu'à l'an 550 de l'ère arménienne (=1101 d. l. C.) (տե՛ս Catalogue des Manuscrits Arméniens et Géorgiens de la Bibliothèque Nationale, par Frédéric Macler, Paris 1908, էջ 133):

² Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դդ., հտ. I, Երևան, 1951, էջ 22-25. Ա. Աբրահամյան, Հովհաննես իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 131-133:

1587-1592 թթ. եվրոպական երկրներում ճամփորդած Սարգիս արեղայի «Ուղեգրության» միակ օրինակը¹, Լանկ-Քամուրի դեպի Իրան ու Անդրկովկաս կատարած առաջին արշավանքի (1387 թ.) մասին Ստեփանոս վարդապետի բովանդակալից գրառումները (սրանք աղբյուր են ծառայել Թովմա Մեծոփեցու համար) և վերջապես՝ ընդամենը 3 փոքրադիր էջից բաղկացած պատմագրական թերի մի հատված՝ «Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի» խորագրով (էջ 25բ-27ա): Ահա նորահայտ այս պատառիկը հնարավորություն է ընձեռում նոր փորձ կատարելու մոռացված հայ մատենագիր Հակոբի կյանքի ու ստեղծագործության որոշ կողմեր բացահայտելու ուղղությամբ:

«Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի» խորագիրը կրող վերոհիշյալ գրվածքն իր բովանդակությամբ նորույթ չէ հայ պատմագրության համար: Նրա մի փոփոխակը, որպես աղբյուրագիտական ինքնուրույն միավոր, հայտնի է վաղուց ի վեր «Տեսիլ սուրբ վարդապետին Յոհաննիսի, որ մականունն Կոզեռն կոչի» խորագրով և տպագրվել է Ն. Մառի աշխատասիրությամբ անցյալ դարի վերջերին²: Նույնը, խմբագրական որոշ փոփոխություններ կրելով, օգտագործվել է Մատթեոս Ուսուցեցու կողմից, իսկ այդտեղից էլ, համառոտովելով, մուտք գործել Սմբատ Սպարապետի «ժամանակագրության» մեջ:

Խնդրո առարկա պատմական պատառիկը կարելի է բաժանել չորս ինքնուրույն հատվածների: Ստորև մեկ առ մեկ ներկայացնելու ենք դրանց բովանդակությունը՝ անդրադառնալով յուրաքանչյուրի աղբյուրագիտական բնութագրությանը:

Առաջին հատվածը վերաբերում է բյուզանդական կայսր Վասիլ Բ-ի (976-1025) Արևելյան արշավանքին: 1021 թվականին մեծ բանակով կայսրն արշավում է Տայք և պահանջում հայոց Հովհաննես-Սմբատ թագավորից՝ Անի քաղաքն ու «զամենայն տունն Շիրակայ» հանձնել կայսրությանը: Հայոց թագավորը «յաղագս թուլութեան ու տկարութեան մարմնոյ»

¹ Այդ ուղեգրության բնագիրը, տողերիս գրողի աշխատասիրությամբ, տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդես» պարբերականի 1970-ի № 3-ում [վերահրատարակութիւնը տե՛ս սոյն գրքում: Խմբ.]:

² Տե՛ս **Н. Я. Марр**, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне (из сборника факультета восточных языков, “Восточные заметки”), СПб., 1895, с. 9-34:

խոստանում է կատարել այդ պահանջը՝ «զկնի մահուան իւրոյ» իր տիրույթները Բյուզանդիային կտակելով:

Պատմական այս անցուդարձերին անդրադարձել են հայ և օտարազգի մի շարք մասնագետներ:

Արիստակես Լաստիվերտցին, օրինակ, բոլորովին այլ ձևով է մատուցում այս դեպքերի ընթացքն ու հերթականությունը: Ըստ նրա՝ Վասիլ Բ կայսրն արշավում է Արևելք, պարտություն մատնում վրացիներին, մեկնում ձմեռելու «ի գաւառն Խաղտեաց»: Այստեղ է գալիս ահա Պետրոս կաթողիկոսը՝ հրահանգ ստացած լինելով հայոց թագավոր Հովհաննես-Սմբատից՝ ստորագրելու «հայոց կորստեան գիրը», այսինքն՝ մի փաստաթուղթ, որի ուժով Անին իր շրջակայքով թագավորի մահվանից հետո տրվելու էր բյուզանդացիներին: Հայ ժողովրդի ու պետականության համար տարաբախտ հետևանքներ ունեցող այս արարքն Արիստակեսը բացատրում է Հայոց թագավորի անզավակությունը. «Քանզի իւր ոչ գոյր որդի՝ թագակալ թագաւորութեանն», - գրում է նա¹:

Վարդան Արևելցին կտակի շարժառիթ համարում է այն, որ Հովհաննես-Սմբատին նեղում էր վրաց թագավորը («Այլ եւ նեղէր զՅովհաննէս արքայն վրաց. վասն որոյ պատրիարագին պատուիրէ տալ ձեռագրով զԱնի զկնի մահուան իւրոյ ի Հոռոմս»²): Իսկ բյուզանդական պատմագիր Կեդրենոսի կարծիքով կտակի իսկական պատճառը Հայոց թագավորի երկյուղն էր Վասիլ Բ-ի վրեժխնդրությունից: Նա, վրացիների հետ դաշնակցած, պայքարել էր բյուզանդացիների դեմ, ուստի պարտությունից հետո ստիպված է եղել համակերպվել ստեղծված պայմաններին՝ ստորագրել իր մահից հետո երկիրը բյուզանդացիներին հանձնելու պարտավորագիրը:

Հ. Մանանդյանը, որ հատուկ քննության նյութ է դարձրել Հովհաննես-Սմբատի շարաքաստիկ կտակի մասին առկա տարբեր ու հակասական տեղեկությունները, Կեդրենոսի հաղորդածն է համարում իրականն ու ճշմարտացին³: Այս եզրակացությունն, ըստ երևույթին, ընդունելի է: Մեզ համար, սակայն, կարևոր է արձանագրել, որ Հակոբ քահանայի բացատրությունը, որին հետևել են Մատթեոս Ուոհայեցին և Սմբատ Սպարապետը, ինքնատիպ լինելով, խիստ տարբերվում է ինչպես Լաստիվերտցու, այնպես էլ մյուս՝

¹ «Պատմութիւն Արիստակէսի Լաստիւերտցոյ», աշխատ. 4. ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 28-29, 31-32:

² «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 93:

³ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. 3, Երևան, 1952, էջ 19-21:

ավելի ուշ ապրած հեղինակների վարկածից: Ըստ այդմ, որոշ հիմք ենք ստանում մտածելու, որ Հակոբ քահանան ինքնուրույն դիրքորոշում ու պատմագիտական հայացքներ ունեցող մի մատենագիր է եղել:

Այս եզրակացությունը հաստատվում է, երբ քննություն ենք առնում Հակոբի «Ժամանակագրություն» մեզ հասած երկրորդ հատվածը, որ նվիրված է բյուզանդա-վրացական 1021-1022 թթ. պատերազմին:

Ըստ Հակոբի՝ դեպքերն այսպիսի ընթացք են ունեցել. Վասիլ կայսրը, Արևելք գալով, իր մոտ է հրավիրում վրաց Գեորգի (1014-1027) թագավորին, բայց վերջինս, Բյուզանդիայի դեմ պատերազմած լինելով, խուսափում է ներկայանալ: Բախվում են բյուզանդական և վրացական բանակները. Ռատ և Ջոյատ եղբայրների գլխավորությամբ գործող վրացիները սկզբից հաջողություն են ունենում, սակայն Ռատի երիվարը խրվում է ճահճուտի մեջ, և անվեհեր զորավարը սպանվում է. «Յայնժամ պարտեցան զաւրբն Վրաց եւ եղեն փախստական առաջի զաւրացն Վասլին», - գրում է Հակոբը:

Այս պատերազմի մասին մանրամասն տվյալներ կան Արիստակես Լաստիվերտցու, «Վրաց պատմության» (Քարթլիս ցխովրեբայի), Յահյա Անտիոքացու երկերում և ուրիշ սկզբնաղբյուրների մեջ: Հակոբի շարադրանքը, սակայն, ուշագրավ մանրամասնություններով տարբերվում է մյուսներից: Նա է, որ տեղեկություն է հաղորդում Ռատ իշխանի եղբայր Ջոյատի մասին և հայտնում, որ վրաց զորքի քաջարի այդ հրամանատարները Լիպարտի եղբայրներն են¹: Լաստիվերտցին հիմնական ճակատամարտի վայրը մատնանշում է «մերձ ի ծովակն՝ որ կոչի Պաղակացիս» ձեռով, իսկ Հակոբը՝ «ի կողմն Շիրանայ դաշտին»: Այս տեղանունը, անտարակույս, «Քարթլիս ցխովրեբայի» հայկական թարգմանության մեջ² Շիրիմբ կոչված անվան գրչական աղճատ գրությունն արդյունք է և առնչություն չունի, իհարկե, Շիրակի հետ³:

Հակոբի ժամանակագրական հատվածներից երրորդի բովանդակությունը կարելի է ամփոփել հետևյալ հակիրճ շարադրանքով. վեց ամիս

¹ Կ. Քումանովը, հատուկ ուսումնասիրելով Տայոց իշխանական այս գեղաստանի հետ կապված սկզբնաղբյուրները, հանգել է այն եզրակացության, որ սրանք հայ Մամիկոնյանների փոխադրման դարձած հյուսիս են (տե՛ս Cyril Toumanoff, The Mamikonids and the Liparitids. տպագրված ARMENIACA, Mélanges d'études arméniennes ժողովածուի մեջ, Վենետիկ, 1969, էջ 125-137):

² «Քարթլիս ցխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը», լույս ընծայեց Իլիա Աբուլաձեն, Թբիլիսի, 1953, էջ 222:

³ [Շիրանայ ձևը գալիս է վրաց. Շիրիմնի-ի թե՛ հոլովածուից՝ Շիրիմբայ: Խմբ.]:

Վրաստանում մնալուց հետո Վասիլ Բ կայսրը մեկնում է Տրապիզոն՝ ձմեռելու: Ազգեցիկ շքախմբով այստեղ է գալիս նաև Պետրոս կաթողիկոսը, որին ընդունում են մեծ հարգանքով: Ջրօրհնեքի արարողության ժամանակ, երբ Պետրոսը մեռոնը թափում է գետի մեջ և սուրբ նշանով խաչակնքում, հրաշք է տեղի ունենում: Իսկ երբ հույն հոգևորականներն են օրհնում ջուրը, ոչինչ չի կատարվում: Հույները բաց են թողնում սպիտակ աղավնի՝ Սուրբ Հոգու խորհրդանշանը, որ պետք է սավառներ ու խաղար գետի վրա, սակայն վրա է հասնում մի արծիվ ու ճանկում աղավնուն: Վասիլ կայսրը սկսում է երկմտել «ի հաւատս Հոռոմոց» և որոշ ժամանակ անց, երբ Անտիոքի կողմերում է լինում, գաղտնի գնում է Սև լեռան վրա գտնվող Պաղակծիակ վանքը և մկրտվում հայոց դավանանքով:

Այս դեպքերին անդրադարձել են մի շարք հայ մատենագիրներ: Նրանք բոլորն էլ, բացառությամբ Արիստակես Լաստիվերտցու, իրենց նյութն ուղղակի կամ միջնորդաբար քաղել են Հակոբ քահանայի շարադրանքից: Իսկ Հակոբը, եթե նույնիսկ ծանոթ է եղել Լաստիվերտցու Պատմությանը, նոր դրվագներ ավելացնելով ու գունագարդելով, անչափ հեռացել է նրանից: Արիստակեսն, օրինակ, Պետրոսի շքախմբի մասին որևէ տվյալ չի հաղորդում, մինչդեռ Հակոբին հայտնի է, որ Հայոց կաթողիկոսին ուղեկցել են 12 եպիսկոպոսներ, ութսուն կրոնավորներ ու վարդապետներ և 300 հեծյալներից բաղկացած պահակախումբ:

Ջրօրհնեքի պատմությունը Լաստիվերտցու մոտ դեռևս չի գունագարդված հրաշապատումներով. «Յնցուղս լուսոյ ճառագայթից յանկարծակի ծագեաց ի ջուրցն, զոր տեսին առ հասարակ ամենեքեան», - գրում է նա¹: Հակոբի մոտ, սակայն, այլ կերպ է նկարագրված այս դրվագը. «Յորժամ, - գրում է նա, - արկանէր (Պետրոսն) զսուրբ մեռոնն ի ջուրն եւ նշան սուրբ խաչին Քրիստոսի հարեալ ի գետ անդ՝ հուր սաստկապէս իբրեւ զփայլակն ցոլացեալ եղեւ ի վերայ ջրոյն եւ կապեցաւ գետն առ վայր մի»:

Ջրի ընթացքը մի ակնթարթ արգելակվելու մասին Հակոբ քահանայի վարկածը Հովհ. Կոզեռնի «Տեսիլքի» մեջ դառնում է «յետս դարձաւ»², իսկ Կիրակոս Գանձակեցու մոտ արդեն՝ Պետրոս կաթողիկոսի աղոթքի ուժով ջուրը հոսում է գետն ի վեր. «Դարձաւ ջուր գետոյն ի վեր, եւ լոյս սաստիկ ծագեաց, որ նուազեցուցանէր զճառագայթս արեգականն»³:

¹ Արիստակես Լաստիվերտցի, էջ 31:

² H. Mapp, նշ. աշխ., էջ 20:

³ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատ. Կ. Ա. Մելիք-Յանջանյանի, Երևան, 1961, էջ 94

Վասիլ Բ կայսեր հայադավան դառնալու ավանդույթունը, կապված Պաղակծիակ վանքի հետ, անհայտ է կաստիվերտցուն, ուստի Հակոբ քահանայի կողմից է շրջանառության մեջ դրվել: Այսպիսով, կրկին հանգում ենք այն եզրակացության, որ մեր պատմագիրն անկախ ուրիշներից նյութեր է հավաքել, մշակել ու շարադրել՝ ցուցաբերելով ինքնուրույն մոտեցում, ունենալով ուրույն մտածելակերպ:

Հակոբ քահանայի «Ժամանակագրությունից» արված վերջին քաղվածքը վերաբերում է հայոց ՆՀԸ թվականի հոկտեմբերի հինգի (կամ երեքի) երեկոյան տեղի ունեցած երկնային անսովոր երևույթներին, որոնք նկարագրված են այսպես. «Պատառեցաւ վերին հաստատութիւն յերկնիցն, եւ յարեւելից մինչեւ ի մուտս ընդ երկուս հերձեալ երկինք, եւ համատարած լոյսն սաստկապէս [հոսեալ ի յերկիր, եւ յահէ բարկութեան դողացեալ երերէին ամենայն արարածք]» և այլն¹: Այդ նշաններն աստվածային բարկության արտահայտություն համարելով՝ մի խումբ իշխաններ դիմում են անվանի տոմարագետ Հովհաննես Կոզեռն վարդապետին ու խնդրում մեկնաբանել դրանց թաքուն իմաստը: «Հոգէտես» վարդապետը հրաշքը շաղկապում է Քրիստոսի Մկրտության և սատանայի արգելափակման հազարամյա տարելիցի հետ: Նա ասում է. «Մ՛վ որդեակք, լուարու՛ք ինձ... ահա արձակեցաւ (սատանայ) ի վերայ արարածոց, զոր կապեալն էր Քրիստոս իւր սուրբ մկրտութեամբն»²: Այնուհետև վախճանաբանական դատողություններ է անում, ավազում բարքերի անկումը, հավատքի թուլացումը և այլն:

Արիստակես կաստիվերտցին լավ ճանաչում է Հովհաննես Տարոնեցի վարդապետին, որին «վերադիր անվամբ» Կոզեռն էին անվանում, հիշատակում է, որ նա գրել է ինչ-որ «Հաւատո գիր»³, սակայն որևէ տեղեկություն չունի երկնային վերոհիշյալ երևույթների մասին նրա արած վախճանաբանական դատողությունների մասին:

Հակոբ քահանան Կոզեռնի հետ կապված պատմության վերջում ասում է. «Այս այսպէս խաւսեցաւ սուրբ վարդապետն վասն կատարածի նշանին եւ այլ բազում ինչ ճառեաց...»⁴: Այստեղից թերևս կարելի է եզրակացնել,

¹ № 9832 ձեռագրում պահպանվել են միայն այս հատվածի առաջին տողերը (մինչև «սաստկապէս» բառը՝ ներառյալ): Շարունակությունը լրացնում ենք Հովն. Կոզեռնի «Տեսիլից»:

² Ձեռ. № 1324բ-325ա, հմմտ. Ն. Մառ, նշ. աշխ., էջ 21:

³ Արիստակես կաստիվերտցի, նշ. աշխ., էջ 26:

⁴ Անհրաժեշտ ենք համարում մեկ անգամ էլ հիշեցնել, որ Կոզեռնի «Տեսիլի» միայն սկզբի մասն է պահպանվել Հակոբ Բախանայի ժամանակագրությունից հատվածներ

որ մեր հեղինակը ձեռքի տակ ունեցել է Կոզեռնի հետ կապված ավելի ընդարձակ գրավոր մի աղբյուր: Գրավոր ինչ-որ աղբյուրի երբեմնի գոյությունը հաստատվում է կարծես հետևյալ փաստով: Հովհաննես Կոզեռնը գրել է «Մեկնութիւն տումարաց» խորագրով մի աշխատություն, որ պահպանվել է մի շարք ձեռագրերով: Ահա այդ աշխատության մեջ նա փորձում է գիտականորեն բացատրել աստեղաձև ցոլմունքի առաջացման պատճառը: Նա գրում է. «Իսկ վասն ցոլման աստեղաձև աւղոյ, որ լինի ի գիշերի յաւղս՝ ի պարզ ժամանակի, զոր ոմանք ցոլ աստեղ կոչեն. եւ այս կարի անպատշաճ է Աստուծոյ արարածոյ անկանել կամ փոփոխել՝ մինչեւ ի Գալուստն երկրորդ: Եւ մանաւանդ աստեղացոյ, զոր հաստատեալ է Արարիչն յաւղս, եւ ոչ կարեն անկանել կամ փոփոխիլ ուր կամին: Իսկ որ աստեղաձև ցոլանայ յաւղս, ոչ է աստղ, այլ հողմք եւ աւղք ընդ միմեանս բախեալ հուր ցոլանայ: Եւ վկայէ սուրբն Գրիգոր Նիւսացի... թէ բռնութիւն հողմոց ջերմ աւղոյն իբրեւ զհուր ի բոցոյ բաժանեալ՝ ի վեր ցնդեալ աստեղաձև կերպարանս ցուցանէ, զոր ոմանք ցոլացեալ աստղ կոչեն»¹:

Այս նույն երևույթի մասին է խոսվում նաև Հակոբ քահանայի «Ժամանակագրության»՝ Կոզեռն վարդապետին նվիրված հատվածում. «Համատարած լոյսն սաստկապէս հոսեալ եղեւ յերկիր ի հիւսիսոյ կողմանէ, զոր այժմ մարդիկ ցոլացեալ աստղ ասեն». բայց տեղի են ունենում նաև այնպիսի երևույթներ, որոնք, ըստ Կոզեռնի, կարող էին կատարվել միայն աշխարհի կործանման օրերին («եւ այս կարի անպատշաճ է Աստուծոյ արարածոյ անկանել կամ փոփոխել՝ մինչեւ ի գալուստն երկրորդ»): Ուստի նա, տոմարական հաշիվներ կատարելով, որոշում է, որ Քրիստոսի մկրտությունից անցել է ուղիղ հազար տարի² և, ըստ Հովհաննու «Հայտնության», եկել է սատանայի կապանքագերծ լինելու պահը, մոտեցել աշխարհի վերջը և այլն:

Ինչպես տեսնում ենք, խիստ նման, նույնիսկ նույնական են օգերևութաբանական-տիեզերագիտական ու վախճանաբանական այն պատկերացումները, որ առկա են մի կողմից՝ Հովհաննես Կոզեռնի «Մեկնություն տու-

պարունակող № 9832 ձեռագրում: Շարունակությունը փաղում ենք «Տեսիլի» հնագույն ձեռագրից՝ օգտագործելով նաև Ն. Մառի վերոհիշյալ հրատարակությունը: Ստորև առիք կունենանք համոզվելու, որ Կոզեռնի «Տեսիլը» Հակոբի ժամանակագրական հատվածներից տարբերվում է միայն ռեաբանական որոշ առանձնահատկություններով:

¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1999, էջ 74ա-74բ:

² «Հայոց թուականս այսար ՆՀԸ (478), եւ կալ զառաջին ՇԾԹ (552), որ լինի հազար եւ երեսուն. զԼ (30) տուր յառաջ քան զվերտուրիսն, եւ զհազարն՝ ի մկրտութենէն մինչեւ ցայսմ», - գրված է «Տեսիլի» մեզ հայտնի հնագույն ընդօրինակության մեջ (ձեռ. № 1324, էջ 325ա, հմմտ. Ն. Մառ, նշ. աշխ. էջ 21):

մարաց» աշխատության մեջ, մյուս կողմից՝ նրան վերագրված «Տեսիլքի» առաջին մասում: Այստեղից եզրակացնում ենք, որ Հակոբ քահանան գրավոր ինչ-որ տվյալների հիման վրա է հյուսել իր «Ժամանակագրության» մեզ հայտնի վերջին այս հատվածը:

Հովհ. Կոզեռնի «Տեսիլքի» իր հրատարակության ներածական հոդվածում Ն. Մառը, անհամոզիչ փաստարկներով, կասկածի տակ է առնում քննարկվող հատվածի ՆՀԸ թվականը՝ առաջարկելով այն սրբագրել ՆՀԲ-ով (այդպես է «Տեսիլքի» իր օգտագործած ձեռագրում, որ 1320 թ. ընդօրինակություն է): Սակայն ո՛չ Հակոբ քահանայի անունով պահպանված պատասխանի, ո՛չ «Տեսիլքի» հնագույն օրինակները, ո՛չ էլ Մատթեոս Ուհայեցու և Սմբատ Սպարապետի ժամանակագրական երկերի համապատասխան հատվածների վերլուծությունը չեն հաստատում անվանի գիտնականի այս ենթադրությունը: ՆՀԸ թվականը կարոտ չէ սրբագրության¹:

Ահա սրանք են Հակոբ քահանայի անունով № 9832 ձեռագրում պահպանված նյութերը: Ասել ենք արդեն, որ ձեռագրի մեզ հետաքրքրող բաժինը վերջից թերի է, ուստի հնարավորություն չունենք որոշելու՝ ՆՀԸ թվականի տակ շարագրված հատվածով արդյոք ավարտվե՞լ է այն, թե՞ ունեցել է շարունակություն:

Հովհաննես Կոզեռնի «Տեսիլքի» բազմաթիվ ձեռագրերում, ՆՀԸ թվականի դեպքերի նկարագրությունից հետո, կա նաև շատ ընդարձակ մի հատված՝ ՆՁԵ (1036) թվականին տեղի ունեցած արևի խավարման առնչությամբ ստեղծված անհանգստության, Հովհան Կոզեռնի մոտ մի երկրորդ պատգամավորություն ժամանելու և վերջինիս վախճանաբանական նոր ու տարտամ դատողությունների մասին:

¹ Թվականի իր սրբագրությունը հավանական դարձնելու մտահոգությամբ Ն. Մառը հետամուտ է համարում երկնային նշաններին Կոզեռնի տված մեկնության կարևորագույն այն հատվածը, որով գիտնական վարդապետը տոմարագիտական դատողություններ է անում ցույց տալու համար, որ Քրիստոսի մկրտությունից իբր անցել է ճիշտ հազար տարի: Սակայն, ինչպես ցույց տվեցինք, հենց այդ հատվածի վրա է խարսխված Հովհ. Կոզեռնի ողջ մեկնությունը: Իրավացի է Ն. Մառը, երբ ակնհայտ հակասություն է գտնում ֆննարկվող հատվածի այն մասում, ուր ՆՀԸ թվականը համարվում է «ի թագաւորութեանն Հոռոմոց Վասլի»: Վասիլ Բ-ն վախճանվել է 1025-ին՝ շուրջ 4 տարի ՆՀԸ թվականից առաջ: Սակայն այս հակասությունը բնավ էլ չի շտկվում, երբ երկնային նշանների թվականը համարում ենք ՆՀԲ (1023), քանի որ, ըստ Ուհայեցու, հենց նույն այդ թվականին էլ վախճանվել է Վասիլ կայսրը (այս անգամ էլ, ուրեմն, 1025-ից 2-3 տարի առաջ): Ըստ այդմ, մենք կարծում ենք, որ հետագայի հավելում պետք է համարել միայն «ի թագաւորութեանն Հոռոմոց Վասլի» արտահայտությունը՝ անձեռնմխելի պահելով ՆՀԸ թվականը:

Ն. Մառն արդեն համոզիչ փաստերով ցույց է տվել, որ Կոզեռնի երկրորդ այդ «Տեսիլքը» հորինված պետք է լինի 1097 թ. խաչակրաց առաջին արշավանքից մի քանի տասնամյակ հետո և 1147 թ. երկրորդից մի քանի տարի առաջ, երբ Մերձավոր Արևելքում մեծ հույսեր էին կապում խաչակրաց նոր կազմակերպվելիք արշավանքի հաջողության հետ¹: Նկատի ունենալով այս ուշագրավ դիտողությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ հատվածը բացակայում է և՛ Հովհ. Կոզեռնի «Տեսիլքի» հնագույն ձեռագրից, և՛ Սմբատ Սպարապետի «Ժամանակագրությունից»² գալիս ենք այն համոզման, որ Կոզեռնի հետ կապված երկրորդ այս «մարզաբեռությունը» հետո էր հորինված, ուստի չէր կարող մաս կազմել Հակոբ քահանայի «Ժամանակագրության»:

Այդ «Ժամանակագրությունը», սակայն, ընդարձակ մի երկ է եղել, որից միայն մի քանի քաղվածքներ է կատարել № 9832 ձեռագրի կամ նրա գաղափար օրինակի գրիչը. այդ մասին ուղղակի վկայություն կա խորագրում (այնտեղ ասված է՝ «Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի»), որ ենթադրել է տալիս շատ ավելի ընդարձակ մի աշխատություն, որից միայն քաղվածքներ են կատարվել): Արդ, արդյոք հնարավորություն ունենք որոշելու, թե ժամանակագրական ինչ սահմաններ է ընդգրկել կորած այդ երկը, ի՞նչ նյութեր պարունակել, երբ և ում կողմից շարադրվել: Փորձենք ըստ հնարավորի պատասխանել այդ հարցերին:

Հակոբ քահանայի «Ժամանակագրության» պահպանված հատվածների բաղադատությունը Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» նույ-

¹ Այստեղ ակնարկներ կան «արիական ազգի» կողմից Երուսաղեմի ազատագրման, մահմեդականների համախմբման և նախահարձակման հետևանքով Սուրբ Բաղաթի կրկին թշնամիների ձեռքն անցնելու, ինչպես նաև «հոռոմայեցոց թագավորի» գլխավորությամբ կազմակերպվելիք հաղթական նոր արշավանքի մասին: Մատնանշելով այս փաստերը՝ Ն. Մառն իրավացիորեն 1047-ին նախորդող տարիներն է համարում այս նյութի գրության ետին եզրը:

² Հանրահայտ է, որ Սմբատ Սպարապետի «Ժամանակագրության» սկզբի մասը գրեթե ամբողջովին Մատթեոս Ուռհայեցու համառոտ փոփոխակն է: Ըստ այդմ, կարելի է նույնիսկ կասկածել երկրորդ տեսիլքի հարազատությանը Մ. Ուռհայեցու նախնական բնագրին: Տեղին է նշել այստեղ, որ Մ. Ուռհայեցու Ժամանակագրության զույգ հրատարակություններն էլ (Երուսաղեմ, 1869, Վաղարշապատ, 1898) գիտական չեն: Հաստատվել է նոր մի հրատարակության անհրաժեշտությունը, որն իրագործվելու է ինչպես Մաշտոցյան Մատենադարանում պահվող շուրջ 10 չօգտագործված ձեռագրերի, այնպես էլ այլ գրապահոցներում առկա օրինակների մանրակրկիտ բաղադատության հանապարհով:

նական հատվածների, ինչպես նաև Հովհ. Կոզեռնի «Տեսիլքի» հետ բերում է այն աներկբայելի համոզման, որ սկզբնաղբյուրը Հակոբի բնագիրն է եղել (այս եզրակացությունը ականհայտ կդառնա հողվածի վերջում հրապարակվող զուգահեռ բնագրերի ուշադիր ընթերցումով. այդտեղ կողք-կողքի մեջբերված են Հակոբի, Կոզեռնի «Տեսիլքի», Մատթեոս Ուռհայեցու և Սմբատ Սպարապետի համապատասխան հատվածները):

Ուռհայեցու «Փամանակագրությունն» իր սկզբի մասում փոքր-ինչ թերություն ունի (պակաս է մի պարբերություն, որ մասամբ կարելի է լրացնել Սմբատի օգնությամբ), կան նաև բազմաթիվ աղավաղված հատուկ անուններ ու նախադասություններ: Ընդհանուր առմամբ, սակայն, այն պահպանվել է ամբողջական վիճակով. բաղկացած է 3 խոշոր բաժիններից¹: Առաջին և երկրորդ բաժինների վերջում Ուռհայեցին անդրադառնում է իր աշխատանքին, շարադրում պատմագրական իր հայացքները և ակնարկներ անում իր աղբյուրների մասին: «Արդ, մինչև ցայս վայր, - գրում է նա՝ եզրափակելով հարյուրամյա շրջանը, - բազմաշան և աշխատաւոր քննութեամբ գտեալ գրեցաք զշարագրական գրեալս զհարիւրից ամաց, զորս ի բազում ժամանակաց հետաքննեալ հասու եղաք ընդ այնքանեաց տեսողացն և լսողացն, որք էին ի հին ամաց ծնեալք, և ընդ ընթերցողսն (թերևս պետք է ուղղել «ընդ ընթերցելն») ձևով – Լ. Խ.) յառաջին պատմագրացս, որք ականատեալ էին լեալք ամենայն եղելոցս և նեղութեանցս այսոցիկ, զոր վասն մեղաց կրեաց տունն Հայոց»²: Հարյուրամյա այս շրջանին Ուռհայեցուն նախորդած և մեզ հայտնի հայ պատմագիրներից անդրադարձել են Ստեփանոս Ասողիկը (սրա պատմության վերջին թվականը 1003-ն է)³ և Արիստակես Լաստիվերտցին (գրել է 1000-1071 թթ. պատմությունը): Սրանց ազդեցությունն աննկատելի է Մատթեոսի մոտ. ամենայն հավանականությամբ, նա նույնիսկ ծանոթ էլ չէ այս հեղինակներին: Իսկ ովքե՞ր են եղել այդ «առաջին պատմագիրները», որոնք «ականատեսք էին լեալք» 951-

¹ Առաջին բաժինն ընդգրկում է 951-1051 թթ. իրադարձությունների նկարագրությունը, ուստի կարելի է կոչել հարյուրամյա շրջան (էջ 1-112), երկրորդը հիսնամյա շրջանն է՝ 1051-1101 թթ. դեպքերով (էջ 112-276), իսկ երրորդ բաժինը (էջ 277-369), որ գրված է առաջին երկուսի շարադրումից տարիներ հետո, ծագրված է եղել որպես պատմություն «ամաց քսան և հինգից», բայց հասցված է մինչև 1138 թվականը (դրանցից մեկ-երկու տարի հետո էլ, հավանաբար, հեղինակը կնքել է իր մանկանացուն): Շարունակությունը (1137-1212 թթ. շրջան) գրել է Գրիգոր Երեցը (գուցե նաև այլ հեղինակներ):

² Մ. Ուռհայեցի, էջ 112:

³ «Ստեփանոսի Տարօնացոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885:

1051 թթ. դեպքերին, և որոնց գրվածքներից նյութ է քաղել նա: Դրանցից մեկն, անշուշտ եղել է Հակոբ քահանան, և մենք իրավասու ենք Ուռհայեցու «Ժամանակագրության» առաջին և երկրորդ բաժիններում փնտրելու Հակոբ քահանայի «Ժամանակագրությունից» կատարված այլ քաղվածքներ ևս:

Հակոբ քահանայի՝ մեզ հասած ժամանակագրական պատաստիկի թվական պարունակող հատվածները սկսվում են «Ի թուականութեանն Հայոց» և «Դարձեալ ի թուականութեանն Հայոց» բանաձևերով, իսկ մյուս պարբերությունները կապակցված են վերոհիշյալ հատվածներին «Եւ յայնժամ», «Յայնժամ», «Զորս յետ ժամանակաց», «Իսկ», «Զի ահա» շաղկապներով: Նույն այս բանաձևերով ու շաղկապներով են սկսվում նաև Մատթեոս Ուռհայեցու մեծ ու փոքր ժամանակագրական միավորները: Այս երկու աղբյուրների կառուցվածքային ու ռճական ազգակցությունը ցույց տալու համար կարելի է մեջբերել անհաշիվ օրինակներ¹: Այս հանգամանքն ինքնին թույլ է տալիս մտածել, որ Մատթեոս Ուռհայեցին իր աղբյուրներից ոչ միայն ընդարձակ քաղվածքներ է կատարել, այլև յուրացրել է նրա շարադրանքի ձևն ու կառուցվածքը:

Հակոբի պահպանված հատվածները փոքրաթիվ են ու վերաբերում են միայն XI դարի 20-ական թվականների դեպքերին. շնայած դրան՝ ուշադիր քննությամբ հնարավոր է լինում Մատթեոսի երկի տարբեր մասերից ի հայտ բերել Հակոբի գրելաձևին բնորոշ մի շարք արտահայտություններ, ինչպես նաև փաստական ու գաղափարական ուշագրավ ընդհանրություններ, որոնք ավելի ակնառու են դարձնում այս երկու ժամանակագրությունների առնչությունները:

Անհրաժեշտ ենք համարում մի քանի օրինակով հիմնավորել մեր այս եզրակացությունը: Գիտենք արդեն, որ Հակոբի կարծիքով Հովհաննես-Սմբատ թագավորն իր տիրույթները կտակել է Բյուզանդիային «յաղագս թուլութեան եւ տկարութեան մարմնոյ»: Հայոց թագավորի այս բնութագիրը կրկնված է նաև Մատթեոսի «Ժամանակագրութեան» մի այլ հատվածում. «Յովհաննէս աւագ էր քան զԱշոտ եւ իմաստուն եւ հանճարեղ յոյժ, բայց մարմնովն տարտամ եւ հեղզ եւ թուլամորթ ի պատերազմունս»²:

¹ Մատթեոս Ուռհայեցու մոտ էջից էջ հանդիպում ենք «Ի թուականութեանն Հայոց», «Դարձեալ ի թուականութեանն Հայոց», «Իսկ զկնի», «Յայնժամ», «Եւ յայնժամ» ու նման բազմաթիվ սկսվածքների (հենց միայն «Ժամանակագրության» առաջին 15 էջից կարելի է վկայակոչել տասնյակ օրինակներ):

² Մ. Ուռհայեցի, էջ 7:

Հակոբի ժամանակագրական հատվածներից երրորդի մեջ ասված է, որ Պետրոս կաթողիկոսը գնում է Վասիլ Բ կայսեր մոտ «երկոտասան եպիսկոպոսք եւ ութանասուն կրօնաւոր քահանայիւք եւ վարդապետօք՝ Յովսէփ Ընձուց եւ Կոզեռն Յոհաննէս»։ Բոլորովին այլ առիթով Ուռհայեցին հայտնում է, որ Վասիլ Բ կայսրը «յանուանէ գիտէր վասն Յովսէփայ Ընձայուց հօրն եւ յաղագս Յովհաննիսի, որ հոմանուն ասէին Կոզեռն»¹։ Պետրոս կաթողիկոսի շքախմբի մեջ էին մտնում նաև 300 հեծյալ թիկնապահներ՝ «ի փառաւորացն»։ 1049 թվականին, այս անգամ Կոստանդին Մոնոմախ կայսեր հրավերով, Կ. Պոլիս է ժամանում նույն Պետրոս կաթողիկոսը. Ուռհայեցին չի մոռանում հիշատակել, որ նա գնում էր «իր տանեցի ազատօքն փառաւոր արամբք երեք հարիւր»²։

Հակոբը, 1021-1022 թթ. վիրա-բիւզանդական պատերազմին անդրադառնալով, հատուկ ջերմությամբ խոսում է Ռատ և Զոյատ իշխանների մասին, հայտնում, որ նրանք «էին եղբարք Լիպարտին, արք զօրաւորք եւ քաջք» և այլն։ Մատթեոս Ուռհայեցին XI դարի 50-ական թվականների առնչությամբ երկու տարբեր առիթներով խոսում է Լիպարտի մասին՝ երկու անգամ էլ հիշելով, որ նա եղբայրն էր «Ռատին՝ առն քաջին», կամ «Ռատին եւ Զոյատին՝ վրացի ազգաւ, ի հզօր ջոկէ»³։

Փաստական նյութերի այս կրկնություններն ու նմանությունները իրավունք են տալիս մտածել, որ Հակոբից են քաղված նաև Մատթեոսի «Ժամանակագրության» վերոհիշյալ տեղիները։

Կան նաև ոճական ուշագրավ ընդհանրություններ. ստորև, էջի ձախ կողմում մեջբերում ենք հայոց ՆՀԸ թվականի երկնային նշանների նկարագրությունը Հակոբի «Ժամանակագրությունից», իսկ աջ կողմում տալիս ենք մի շարք հատվածներ Ուռհայեցուց, որոնք վերաբերում են տարբեր պատմական ու բնական արհավիրքների, սակայն շարադրանքի ոճով մեծապես նմանվում են նախորդին։

ՀԱԿՈՅ ՔԱՀԱՆԱ

Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՆՀԸ... եղեւ ահաւոր նշան եւ

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ

եւ յետ սակաւ աւուրց աստուածայոց սաստ բարկութիւնն շարժեցաւ յերկ-

¹ Նույն տեղում, էջ 44:

² Նույն տեղում, էջ 104:

³ Նույն տեղում, էջ 104, 109 [Լիպարտի և նրա սերունդների մասին տես Ս. Տ. Երեմյան, Լիպարտ գորավարի հաջորդները և Դանիշմանյան տոհմի ծագումը, «Տեղեկագիր», 1947, № 8, էջ 65-79: Խմբ.]:

սոսկալի եւ բարկութիւնն ի վերայ ամենայն արարածոցս: Վասն զի ահայ այս ինչ լինէր ի հոկտեմբեր ամսոյն, որ աւր Ե (5) էր: Ի յերեկոյն ժամուն պատառեցաւ վերին հաստատութիւն յերկնիցն եւ յարեւելից մինչեւ ի մուտս ընդ երկուս հերձեալ երկինք, եւ համատարած լոյսն սաստկապէս [հոսեալ ի յերկիր, եւ յահէ բարկութեան ցողացեալ երերէին ամենայն արարածք. այլ յառաջ քան զնուազեալ լուսոյն եղեւ ահաւոր գոչիւն ընդ ամենայն երկիր. եւ աստեղք ամենայն երեւէին որպէս ի մէջ գիշերի, վասն զի խաւար կալաւ զամենայն երկիր]¹:

նից, եւ ահա ելանէր հողմն ուժգնակի, մինչեւ ի սաստկութենէ գոչմանն շարժէր երկիրն, եւ ի բռնութենէ հողմոյն հող երկրին ի վեր հոսեալ տարածէր ի վերայ զօրացն քրիստոնէից... (էջ 15):

Յորժամ թուականութիւնն Հայոց հասանէր ի յամս ՆԿՆ, զարթեաւ աստուածասաստ բարկութիւնն ի վերայ ամենայն քրիստոսական ժողովրդեանն եւ երկրպագողաց սուրբ խաչին (էջ 46):

Յայնժամ քահանայական դասքն շարժեցան միաբան զքրիստոսական սուրբ նշանն եւ ի վերայ թշնամեացն դիմեալ յարձակեցան. եւ հուր սաստկապէս ցոլացեալ ի նոցանէ եւ եհար զգօրսն այլազգեացն (էջ 82):

Դարձեալ ի թուականութեանս Հայոց յամի ՆՂԻ եղեւ մեծասաստ բարկութիւն Աստուծոյ ի վերայ արարածոցս... եւ եղեւ շարժ ահաւոր եւ սոսկալի, եւ դողաց ամենայն տիեզերք առ հասարակ... եւ պատառեցաւ երկիրն... (էջ 97-98):

Յամս թուականութեանս Հայոց ՆՂԸ յաւուր Մոնոմախի կայսերն... զարթեաւ աստուածասաստ բարկութիւնն ի տանէն Պարսից (էջ 102):

Այս շարքը կարելի է լրացնել նաև այլ նախադասություններով: Բայց

¹ Ուղղագրի փակագծերի մեջ առած հատվածը, որ № 9832 ձեռագրում չի պահպանվել, լրացրել ենք Հովն. Կոզեմի հնագույն ձեռագրից (Մատենադարան, ձեռ. № 1324):

բերածն էլ բավական է համոզվելու, որ Ուռհայեցու անունով հասած «ժամանակագրության» մեջ, մանավանդ նրա հարյուրամյա բաժնում, գրեթե անաղարտ վիճակով օթևան են գտել Հակոբ քահանայի «ժամանակագրությանից» բազմաթիվ քաղվածքներ: Դրանց բոլորի ի հայտ բերման համար ոճաբանական մանրակրկիտ հետազոտություն պետք է կատարել, որ դուրս է մնում մեր հոգվածի ծրագրից:

Երբ է շարադրվել Հակոբ քահանայի «ժամանակագրությունը»: Նրա անունով պահպանված հատվածները հնարավորություն են ընձեռում պատասխան տալու այս հարցին:

Երկնային արտասովոր երևույթների կապակցությամբ Հովհ. Կոզեռնի մարգարեխոսության բաժինն ավարտվում է հեղինակի հետևյալ եզրափակումով. «Ձայս այսպէս խաւսեցաւ սուրբ վարդապետն վասն կատարածի նշանին եւ այլ բազում ինչ ճառեաց, զոր եւ կատարելոց էր վասն հաւատացելոց, զոր եւ կատարեցաւ մի առ մի ի ձեռն ելին կատաղի ազգին թուրքաց՝ պիղծ որդոցն Քամայ»¹:

Սելջուկ-թուրքերի առաջին արշավանքը Հայաստան տեղի է ունեցել 1048 թվականին, բայց նրանք կայուն հաստատվել են հայկական բարձրավանդակում դրանից 16 տարի հետո՝ 1064 թվականին, երբ Ալփասլանի ու Մելիք-շահի գլխավորությամբ գրավեցին Հայաստանի կենտրոնական ու հյուսիսային շրջանները և տեր դարձան Անի մայրաքաղաքին: Ըստ այդմ՝ Հակոբ քահանան իր «ժամանակագրությունը» գրած պիտի լինի 1048-ից կամ, ավելի ճիշտ, XI դարի 60-ական թվականներից հետո:

«ժամանակագրության» *terminus ad quem*-ը որոշվում է Պողոս Տարոնացու Թեոփիստե երկաբնակ հայ փիլիսոփային ուղղած հակաճառության օժանդակությամբ: Այն, որպես պատասխան մի գրություն, շարադրվել է 1101-ին, իսկ խմբագրվել ու ընդարձակվել է հեղինակի կողմից երկու տասնամյակ անց՝ 1122 թվականին: Երկու այս խմբագրություններում էլ պահպանվել է մի հատված, որն անմիջական կապ ունի Հակոբ քահանայի «ժամանակագրության» հետ (մեջբերում ենք համառոտ և ընդարձակ փոփոխակներով).

¹ Մեջբերում ենք Հովհ. Կոզեռնի «Տեսիլի» հնագույն ձեռագրից (ձեռ. № 1324, էջ 325ա): Մ. Ուռհայեցու մոտ խմբագրված է այսպես. «Ձայս այսպէս ասաց սուրբ վարդապետն Հայոց վասն կատարածի բարկութեան նշանին եւ այլ բազում ինչ ճառեաց, որ կատարելոց էր իր վերայ հաւատացելոցս, զոր ահա ամենայն ինչ կատարեցաւ մի առ մի ի ձեռն ելից կատաղի եւ շուն ազգին թուրքաց, անօրէն եւ պիղծ որդոցն Քամայ» (էջ 54-55):

Համառոտ խմբագրություն

Առան (իմա՛ Ահարոն) դուկդ դա մեծ է եւ երեւելի, դա մեծ կերով հաւատ շուղղէ՝ որչափ եւ ջանա. եւ դա մեծախել է եւ իմաստուն, թող յայտ չմտաբերէ, զի Հոռոմոց մեծ բարեպաշտն Վասիլ թագաւորն զայտ ընդդէմ Հայոց չէ հոգացեալ. եւ յաւրհներ ջրոյն Հայոց եւ Հոռոմոց առաջի նորա՝ նշան մեծ արար Աստուած Հայոց ազգիս առաջի թագաւորին. հուր եւ լոյս փայլատակեաց ի վերա ջրոյն, ուր զձէքն արհնութեան արկանէր Պետրոս կաթողիկոսն Հայոց, ուստի զարմացեալ քրիստոսապսակեալ կայսրն Վասիլ՝ խոնարհեցուցեալ զգլուխն արկանել ջրոյն ի վերա եւ արհնիր ի հայրապետէն: *Եւ այս եղեւ առաջի զարաց թագաւորին՝:*

Ընդարձակ խմբագրություն

Եւ ահա ծայթեր՝ դուք էք, որ Հայ լեզու էք, եւ ասէք զձեզ Հոռոմք: Եւ ահա Առօտն (իմա՛ Ահարոն) այր պատուական է եւ տունկ (իմա՛ դուկ) մեծ եւ փառաւոր, եւ երեւելի իշխան, բայց Խոզնա գաւառովդ եւ մեծ կերպով (իմա՛ կերով կամ գուցէ՝ Մեծկերտով) զհաւատս ոչ կարէ ուղղել եւ որչափ ջանայ՝ չհնազանդի ոք դմա: Արդ, ահա է դա մեծախելք եւ այր իմաստուն, թող չձեռնարկէ ի սուտ քննութեամբ ձեր: Վասն զի յառաջն մեծ թագաւորն Հոռոմոց Վասիլն՝ զայդ ամենայն քննութիւնդ վասն հաւատոյ ոչ է արարեալ ընդ Հայս: Եւ զայս ճշմարտապէս գիտեմք, զի յաւուսն տէր Պետրոսի Հայոց կաթողիկոսի՝ յորժամ զջուրն օրհնէր, եւ ի Հայոց եւ ի Հոռոմոց անդ էին ժողովեալ: Եւ այս եղեւ առաջի Վասիլ թագաւորին եւ զօրաց նորա, զի զնշան մեծ արար Աստուած Հայոց ազգիս, զի յորժամ արկանէր զսուրբ միտոնն ի ջուրն, հուր եւ լոյս սաստիկ փայլատակեաց ի վերայ ջրոյն եւ այս գրեալ կայ իսկ: Եւ աստուածասէր թագաւորն հիացեալ զարմանայր ընդ սփանչելիսն, զոր երեւեցոյց Աստուած. եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ արկանէր զջուրն ի վերայ իւր եւ օրհնեցաւ ի հայրապետէն.

¹ «Պապոսի իմաստասիրի Տարանագոյ վարդապետի Խաւսի ընդդէմ... երկաբնակացն Հոռոմոց քրթին պատասխանի» (ձեռ. № 1324, էջ 322բ):

եւ այս եղեւ վկայութեամբ տեսողացն՝ ամենայն զօրաց թագաւորին: Եւ յայնժամ ամենաբարի թագաւորն Հոռոմոց՝ պատուով եւ իշխանութեամբ յոյժ մեծարեաց զազգս Հայոց¹:

Ընդգծված տողերը, անտարակույս, քաղված են Հակոբի «Ժամանակագրությունից» (հմմտ. «...յորժամ արկանէր զսուրբ մեռոնն ի ջուրն... հուր սաստկապէս իբրեւ զփայլակն ցոլացեալ եղեւ ի վերայ ջրոյն»... «եւ խոնարհեալ թագաւորն եւ արկանէր զաւրհնեալ ջուրն ի վերայ գլխոյ իւրոյ՝ աջովն տէր Պետրոսի»): Պողոս Տարոնացին «Եւ այս գրեալ կայ իսկ» խոսքերով մատնանշում է հավանաբար հենց Հակոբ քահանայի «Ժամանակագրությունը»: Ուստի պարզվում է, որ այդ երկը գրված պետք է լինի 1048-ից հետո, 1101-ից առաջ, այսինքն՝ XI դարի երկրորդ հիսնամյակում:

Արդ, եղե՞լ է արդյոք այդ ժամանակաշրջանում Հակոբ անունով նշանավոր մի անձնավորություն, որ կարող էր նաև պատմագրական երկի հեղինակ լինել: Այս հարցի պատասխանը որոնելիս մեր ուշադրությունն է գրավում Հակոբոս կամ Հակոբ Սանահնեցի կոչված վարդապետը, որը մեծ հռչակ էր ստացել որպես խոշոր իմաստասեր ու գիտնական. «Սորա, - գրում է նրա մասին Մ. Ուռհայեցին, - հասեալ ի վերայ Հին և Նոր Կտակարանացն Աստուծոյ... ի վերայ հռետորական իմաստութեանցն եւ տեղեկացեալ ամենայն փիլիսոփայական խորին գիտութեանցն»²:

Ուռհայեցին երիցս անդրադառնում է այս վարդապետին՝ կենսագրական որոշ տեղեկություններ հաղորդելով նրա մասին: Կոչվել է Քարափնեցի, նաև Քարահատա որդի, իսկ այնուհետև, հաստատված լինելով Սանահնում՝ Հյուսիսային Հայաստանի նշանավոր մշակութային այդ կենտրոնում, ճանաչվել է ավելի Սանահնեցի հորջորջումով³: Աշակերտել է Սանահնի վանահայր Դեոսկորոսին, որը 1037-1038 թթ. գրավեց կաթողիկոսական աթոռը, սակայն կարգալուծ եղավ ու իր կյանքի վերջին շրջանն անցկացրեց իր վանքում (մահացել է 1063 թվականից հետո)⁴:

¹ «Թուղթ երանելոյն Պօղոսի Տարօնացոյ... ընդդէմ Թէոփիստեայ Հոռոմ փիլիսոփայի», Կ. Պոլիս, 1752, էջ 273:

² Մ. Ուռհայեցի, էջ 227:

³ [Նրա մասին տե՛ս Լ. Մելիֆուեթ-Բեկ, Վարդապետ Հայոց հյուսիսային կողմանց (վրացերեն), Թիֆլիս, 1928, էջ 96-99: Խմբ.]:

⁴ Կ. Ղաֆադարյան, Սամահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 50:

Կոստանդին Դուկաս (1057-1067) կայսեր հրամանով Կոստանդնուպոլսում դավանաբանական քննություն է կատարվել հուլյն և հայ անվանի վարդապետների մասնակցությամբ: Հայերի ներկայացուցիչն է եղել Հակոբ Սանահնեցին, որն, ըստ Մ. Ուռնայեցու, «արար դիմադրություն բազում յամենայն հարցմունսն ընդդէմ Հոռոմոց, բայց սակաւ մի վասն երկբնութեանն Քրիստոսի ի կողմն Հոռոմոց դարձաւ»: Սանահնեցի վարդապետի դավանաբանական հայացքները հաճույքով ընդունվում են կայսեր կողմից, և նրա հանձնարարությամբ Հակոբը գրում է «Գիր միաբանության Հայոց և Հոռոմոց»¹:

Լսելով այդ մասին՝ Կոստանդնուպոլիս է գալիս գահագուրկ Գագիկ Բագրատունի թագավորը, որն իմաստասերի մեծ համբավ ուներ. նա հրապարակորեն պատռում է միաբանության վնասակար այդ գիրը, մեղադրում է Հակոբին ինքնագլուխ քայլեր կատարելու համար և հայոց դավանանքի մասին գրում նոր «Գիր հավատոյ»: Հակոբ Սանահնեցու այս զանցանքը, սակայն, չի վնասում նրա հեղինակությանը, և նա շարունակում է մեծ հարգանք վայելել՝ համարվելով ժամանակի ամենանշանավոր գիտնականներից մեկը:

Միջնադարից պահպանվել են շարականների հեղինակների արձակ ու շափածո մի քանի ցանկեր², որոնցից երկուսի մեջ հիշատակված է նաև Հակոբ վարդապետը. մեկ անգամ՝ Գրիգոր Մագիստրոսից հետո՝ «Յակոբ վար-

¹ Մ. Ուռնայեցի, էջ 161-162:

[Այս փաստը, կարծում ենք, խնդրական է դարձնում վերջերս «Գանձասար» հանդեսում շարունակաբար տպագրված (Ա, էջ 304-338, Բ, էջ 168-218, Գ, էջ 174-215) «Բան հակառուրթեան...»՝ Սանահնեցուն պատկանելը: Այն խիստ հակաֆաղկեդոնական շարադրանք է: Խմբ.]:

² Այս ցանկերից հնագույնը հավանաբար այն է, որ բերել է իր «Հարցմանց գրքի» մեջ Վանական Վարդապետը: Այդ աշխատության մեկ օրինակը Երուսաղեմի մատենադարանի № 1288 ձեռագիրն է (տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հատոր չորրորդ, կազմեց Նորայր եպիսկոպոս Պողոսյան, Երուսաղեմ, 1969, էջ 485): Վանականի «Հարցմանց գիրքը» բանասիրական ուղագրավ նյութերի մի շտեմարան է՝ արժանի ուսումնասիրության և հրատարակության: Երուսաղեմում եղած ժամանակ (1966 թ.) վերոհիշյալ ձեռագրից ընթրօրինակել ենք մի քանի հատվածներ, որոնցից նմուշի համար մեջբերում ենք Վրաց արժունիքում տեղի ունեցած գիտական վեճերի մասին ուղագրավ հետևյալ վկայությունը. «Խնդիր եղել է Վիրս, զի ի տան թագատրին ախչիկ մի ասէր, թէ հոգիս երկու է՝ մի՞նն ամման է եւ մի՞նն մահկանացու. եւ ընդդէմ այսմիկ շանաին շատք, եւ ասելի մի ոք, որ ի ժամանակին իշխան էր՝ ճղամտիտել իշխան ի տան թագատրին՝ Վասիլայ անուն, որդի քեռ արաբէկ Իւանէի: Սա մին ասէր զհոգիս եւ ամման, եւ աղչիկն՝ երկու, եւ ի յասելն շխարաց պարզել կամ հաստատել, եւ ոչ սայ զմի՞նն: Այս երկ ամ խնդրեցաւ անհաստատ եւ անհաւանելի...»:

դապետ Սանահնեցի» ձևով (որպես հեղինակ «Յանսկզբնական ծոցոյ Հօրն» սկսվածքով հանգստյան շարականի), մյուս անգամ Պետրոս կաթողիկոսից հետո՝ «Յակոբ Մեծքարեցի» հորջորջումով¹ (որպես հեղինակ Աստվածամոր ծննդյան և սուրբ Տարագրոսի մասին շարականների)²: Պարզ է ուրեմն, որ Հակոբ վարդապետը բանաստեղծական շնորհք էլ է ունեցել և իր մասնակցությունն է բերել հայ հոգևոր երգերի Շարակնոց կոչվող ժողովածուի կազմավորման աշխատանքներին: Բազմաշխատ այս եկեղեցական գործիչն ու մատենագիրն իր կյանքի վերջին տարիներն անցկացրել է Եդեսիա կամ Ուռհա քաղաքում, որը XI դարի 80-ական թվականներին միակցվել էր նշանավոր հայ իշխան Փիլարտոսի տիրույթներին և գտնվում էր Թորոս իշխանի կառավարության ներքո³: Քաղաքի բնակչության մեջ հայ տարրը նշանակալից դեր է կատարում և՛ իր բազմությունը, և՛ տնտեսական ու քաղաքական կյանքում գրաված ղեկավար դերով⁴: Ե՛րբ էր հաստատվել այստեղ Հակոբ Սանահնեցին՝ չգիտենք, բայց կյանքի վերջին շրջանի ու մահվան մասին Մ. Ուռհայեցու մոտ պահպանվել են մանրամասն տվյալներ. «Դարձեալ, - գրում է նա, - ի թուականութեանս Հայոց ի յամի ՇՂԴ (1085) մեռաւ Հայոց վարդապետն Յակոբ Քարաբնեցին, որ յորջորջեալ կոչէր Սանահնեցի՝ այր հօր եւ կորովի... եւ յայսմ ժամանակիս էր ի քաղաքն յՈւռհա, եւ ծերութեամբ քաղաքավարեալ զկեանս իւր եւ դաւով նենգութեամբ լուծեալ եղեւ ի կենացս, վասն զի գտանէին զնա մեռեալ ի մահիճս իւր առանց հեծութեան եւ ցաւոյ»: Այնուհետև ժամանակագիրը հաղորդում է, որ ողջ քաղաքը հավաքվեց՝ նրա թաղման հանդեսին մասնակցելու. նրա մարմինն ամփոփեցին քաղաքի հյուսիսային կողմում պարսպից ոչ հեռու գտնվող յուր եկեղեցու շրջափակում («ի դուռն սուրբ եկեղեցոյ իւրոյ»)՝⁵:

¹ Հակոբ Սանահնեցու՝ Քարաբնեցի, Մեծքարեցի և Քարահատայ որդի հորջորջումների մեջ թերևս ծագումնաբանական կապ գոյություն ունի: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ Մեծքար անունով անապատ է եղել՝ «ընդ հովանեաւ սուրբ վկայիցս Տարագրոսի, Պրոբոսի, Անդրոնիկոսի»: Այս անապատում 1260 թ. ընդօրինակվել է Մատենադարանի № 469 ձեռագիրը:

² Հ. Անասյան, նշ. աշխ. էջ LXVI, LXVIII:

³ Տե՛ս Գ. Գ. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, с. 75:

⁴ Այս մասին ակնարկներ կան ն. Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմի տարբեր մասերում (տե՛ս «Ողբ Եդեսեայ քաղաքի... վայելչանիս շափաբանութեամբ շարադրեալ սրբոյն Ներսէսի Շնորհալոյ...», Կալկարա, 1832):

⁵ Մ. Ուռհայեցի, էջ 227:

Այս տվյալները կարևոր են ոչ միայն Հակոբ Մանահնեցու կյանքի վերջին շրջանն ուսումնասիրելու առումով, առավել հետաքրքրական է այն պարագան, որ Հակոբ վարդապետն ապրել ու իր մահկանացուն կնքել է Մատթեոս Ուռհայեցու հայրենի քաղաքում: Այս ուշագրավ հանգամանքով պետք է բացատրել հենց այն բացառիկ սերտ կապը, որ գոյություն ունի այդ երկու հեղինակների կողմից շարադրված ժամանակագրական երկերի միջև: Մատթեոսը, ապրելով ու ստեղծագործելով Ուռհայում, պատեհություն և հնարավորություն ուներ շփվելու Մանահնեցի նշանավոր վարդապետի հետ նրա կենդանության օրոք, օգտվելու և ընդարձակ քաղվածքներ կատարելու նրա գրական ժառանգությունից մահվանից հետո:

Մատթեոս Ուռհայեցու «ժամանակագրության» մեջ, մանավանդ նրա սկզբնական մասերում, կան բացառիկ նշանակություն ունեցող և հավաստի գրանցումներ, մեջբերված են պաշտոնական հույժ հետաքրքիր փաստաթղթեր, բացահայտված՝ երևույթներ, որ կարող էին հայտնի ու հասկանալի լինել միայն քաղաքական լայն կապեր ունեցող անվանի ու նշանավոր գործիչների, որոնցից չէր բնավ Ուռհայեցի մեր ժամանակագիրը:

Երկու բնորոշ օրինակներով բացահայտենք մեր միտքը:

Մ. Ուռհայեցին իր «ժամանակագրության» մեջ¹ ամբողջությամբ գետեղել է բյուզանդական կայսր Հովհաննես Չմշկիկի (969-976) մի շատ կարևոր նամակը՝ ուղղված Հայոց Աշոտ Ողորմած (953-977) թագավորին, որի մեջ կայսրն արտակարգ մանրամասնությամբ նկարագրում է արաբների դեմ 975 թվականին ձեռնարկած իր արշավանքի ընթացքն ու հաջողությունները: Այդ նամակը բյուզանդագետների կողմից ճանաչված է որպես ստույգ ու վավերական²: Արդ, ի՞նչ ճանապարհով է նամակն ընկել Ուռհայեցու «ժամանակագրության» մեջ:

Գիտենք արդեն, որ Հակոբ Մանահնեցին 1065 թվականին Կոստանդնուպոլսում հույն հոգևորականների հետ բանավիճել է դավանաբանական հարցերի շուրջ և որոշ զիջումներ կատարել, բայց վրա է հասել Գագիկ թագավորը, մերժել Մանահնեցու ստորագրած հավատո գիրը և շարադրել Հայոց եկեղեցու դավանանքի մասին մի նոր գրություն: Ուռհայեցին այդ

¹ Նույն տեղում, էջ 19-28:

² Տե՛ս, օրինակ, G. Schlumberger, L'Erpopée Byzantine, Paris, 1896, p. 282-283; X. И. Кучук-Иоаннесов, Письмо императора Иоанна Цимисхия к армянскому царю Ашоту ("Византийский временник", 1913, т. X, с. 1-21); Nicolas Adonz, Etudes Arméno-Byzantines, Lisbonne, 1965; b. 141-147 (La lettre Tzimiscès au roi Ashot).

մասին ասում է. «Եւ գրեաց Գագիկ գիր հաւատոյ ձեռամբ իւրով այսպէս եւ տայր զնա ի թագաւորն եւ ի պատրիարզն. եւ ունէր գիրն պատճէն այսպէս» (այնուհետև մեջքերված է ընդարձակ այդ գրությունը)¹:

Նորից նույն հարցն ենք տալիս. որտեղի՞ց գիտե այս մանրամասնությունները Ուռհա քաղաքում ապրող համեստ վանականը, և ինչպե՞ս է ընկել նրա ձեռքը Գագիկ թագավորի շարադրած «Հավատո գիրը»:

Ամեն ինչ պարզ ու հստակ է դառնում, երբ նկատի ենք ունենում Հակոբ Սանահնեցուն: Սա իր «Ժամանակագրության» մեջ, որ եղել է Ուռհայեցու կարևորագույն աղբյուրը, անշուշտ կարող էր անդրադառնալ վերոհիշյալ և բազմաթիվ այլ դեպքերի մանրամասնություններին, օգտագործել կաթողիկոսական ու թագավորական դիվանների մեջ պահվող փաստաթղթեր և այլն: Վերհիշենք, որ նա եղել է մի քանի տարի կաթողիկոսական աթոռը գրաված Դեոսկորոս Սանահնեցու մերձավոր աշակերտը, անձնական ծանոթութուն է ունեցել Գագիկ Բագրատունի թագավորի հետ, մտերիմ մարդ է եղել Սենեքերիմ Արծրունու Դավիթ և Ապուսահլ որդիների համար (սրանք իշխում էին Սեբաստիայում) և, վերջապես, ճանաչված ու հեղինակավոր գործիչ է համարվել ոչ միայն հայկական շրջաններում, այլև Բյուզանդական կայսրության մայրաքաղաքում:

Հակոբ Սանահնեցի վարդապետին Հակոբ քահանայի հետ նույնացնելու համար պետք է հաղթահարել մի կարծեցյալ դժվարություն. գիտենք, որ «Ժամանակագրության» մեզ հասած հատվածների խորագրում հեղինակը «Յակոբ քահանա» է կոչված, բայց Սանահնեցի Հակոբը և՛ Մ. Ուռհայեցու մոտ, և՛ շարականների ցանկում մեծարված է «վարդապետ» տիտղոսով: Արդյոք կա՞ այստեղ հակասություն: Բնավ ոչ: Վճռական այս պատասխանի համար բավական կլինի մտաբերել Հովհաննես Սարկավագ անունով հայտնի գիտնական-մատենագրին ժամանակակիցների կողմից տրված տիտղոսները: Այս նշանավոր անձնավորությունն ամենուրեք ինքն իրեն կոչում է Հովհան քահանա («Յովհաննու քահանայի Յաղագս անկիւնաւոր թուոց», «Յովհաննու քահանայի Յաղագս եղանակաց...», «Յովհաննու քահանայի Յաղագս իւրատու մանկանց» և այլն), սակայն իր ժամանակակիցներն ու աշակերտները նրան ոչ միայն ճանաչում են որպես վարդապետի, այլ մեծարում «վարդապետաց վարդապետ», «երիցս երջանիկ վարդապետ», «երիցս երանեալ ամենաերջանիկ վարդապետ»² բազմահարկ արտահայտություն-

¹ Մ. Ուռհայեցի, էջ 163-178:

² Այս տվյալները ֆաղված են Ա. Աբրահամյանի «Յովհաննէ Իմաստասէրի մատենա-

ներով: Հովհաննեսը քահանա է ըստ հոգևոր կոչումի, իսկ վարդապետ՝ ըստ գիտական աստիճանի: Նույնն է նաև Հակոբ քահանայ-վարդապետի պարագան:

Պարզելով նաև այս կնճիռը՝ կարող ենք եզրափակել մեր քննությունը հետևյալ արդյունքներով.

1. Հայոց պատմագիրների ցանկում հիշատակված Հակոբը XI դարի ժամանակագիր է: Մաշտոցի անվան Մատենադարանի № 9832 ձեռագրում «Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի» խորագրով պահպանված են արժեքավոր հատվածներ նրա կորած աշխատությունից:

2. Հակոբի «Ժամանակագրությունը» հիմնական աղբյուր է եղել Մատթեոս Ուռհայեցու համար: Իր «Ժամանակագրության» առաջին բաժինը, ինչպես նաև որոշ մասեր երկրորդ բաժնից Մատթեոսը բանաբաղել է Հակոբից՝ պահպանելով նույնիսկ շարադրանքի ձևն ու ոճը:

3. Հակոբ քահանան ոչ այլ ոք է, քան Մատթեոս Ուռհայեցուց և այլ աղբյուրներից հայտնի անվանի գիտնական ու եկեղեցական գործիչ Հակոբ վարդապետ Սանահնեցին: Մերձավոր գործակիցը լինելով Դեոսկորոս կաթողիկոսի և մտերիմ կապեր ունենալով ժամանակի նշանավոր քաղաքական ու եկեղեցական գործիչների հետ՝ Հակոբ Սանահնեցին պատմական կարևոր անցուղարձերի գլխավոր դերակատարներից է եղել, հնարավորություն է ունեցել նյութեր քաղել թագավորական ու կաթողիկոսական դիվաններից:

4. Իր կյանքի վերջին տարիները Հակոբ վարդապետն անցկացրել է Եղեսիա (Ուռհա) քաղաքում, ուր և կնքել է իր մահկանացուն 1085 թվականին: Մատթեոս Ուռհայեցին հնարավորություն է ունեցել լայնորեն օգտվելու նրա ձեռագիր ժառանգությունից:

«Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի» խորագրով № 9832 ձեռագրում պահպանված պատմական քաղվածքների անջատ հրապարակումը, առանց այդ աղբյուրի հետ անմիջապես առնչվող՝ հետազայում կատարված բանաբաղությունների հաշվառման՝ ցանկալի գիտական արդյունք չէր կարող ունենալ: Խորհելով այդ մասին՝ որոշեցինք հրապարակումը կատարել 4 զուգահեռ սյունակներով: Առաջին սյունակում ներկայացրել ենք № 9832 ձեռագրի մեզ հետաքրքրող հատվածի պարունակությունը՝ տառացի նույնությամբ, երկրորդ սյունակում՝ հրապարակել Հովհ. Կոզեռնի «Տեսիլք»

գրութիւնը» (Երևան, 1956) աշխատության բնագրի բաժնից:

անունով հայտնի բնագիրը, որ Հակոբի մեզ հասած ժամանակագրական հատվածների խմբագրական մի փոփոխակն է (վերակազմված երկրորդ խաչակրաց արշավանքից՝ 1147 թ. քիչ առաջ), երրորդը հատկացրել ենք Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» համապատասխան հատվածներին, իսկ Չորրորդը՝ Սմբատ Սպարապետի «Ժամանակագրությանը», որն իր հին մասով ոչ այլ ինչ է, քան Մատթեոսի համառոտությունը:

Բանասեր ընթերցողը, միևնույն աղբյուրից բխող այս երեք բանաբաղությունները բաղդատելով, դյուրությամբ պատկերացում կկազմի, թե ինչպես էին միջնադարյան հեղինակներն օգտվում իրենց սկզբնաղբյուրներից և, համապատասխան իրենց նպատակի և ճաշակի, իմաստային և ոճական փոփոխություններ կատարում:

Մի երկու խոսք՝ օգտագործված ձեռագրերի և ներկայացվող բնագրերի փոխհարաբերությունների մասին.

№ 9832 ձեռագրի՝ Հակոբ Սանահնեցուն պատկանող հատվածը (էջ 25բ-27ա) ընդօրինակված է XVII դարի ոչ կանոնավոր նոտրգրով: Բնագիրն ընդհատված է «Եւ համատարած լոյսն սաստկապէս» խոսքերով, որով ավարտվում է 27ա էջը: Հաջորդ (27բ) էջն անհայտ պատճառներով անգրել է թողնված, սակայն հետագայում այդ և մյուս հերթական թերթերի վրա փակցրել են «Հարանց վարքի» մի հին ձեռագրից անջատված ավելի փոքր շափսերի թերթիկներ, որոնք «Ժամանակագրության» հետ ոչ մի առնչություն չունեն:

Հովհ. Կողեռնի «Տեսիլքը», ինչպես ասել ենք արդեն, հրատարակված է մեծանուն հայագետ Ն. Մառի կողմից անցյալ դարի վերջերին, 1320 թվականի մի ձեռագրից: Մեր Մատենադարանում այդ բնագրի բազմաթիվ ձեռագրեր կան, որոնցից հնագույնն է № 1324-ը՝ ընդօրինակված 1281 թվականին: Այս բնագիրը շատ ավելի մոտ է Հակոբ քահանայի ժամանակագրական հատվածներին, քան Ն. Մառի հրատարակածը¹: Նկատի ունենալով, որ վերջինս մատչելի է ուսումնասիրողներին՝ երկրորդ սյունակով ներկայացնում ենք № 1324 ձեռագրի փոփոխակը:

¹ Ն. Մառն իր հրատարակած բնագրի մեջ նկատում է մի շարք ուսակաբանություններ (вульгаризмы)՝ նրանց մեծ նշանակություն վերագրելով (էջ 18): Դրանք, սակայն, ոչ թե հեղինակի կամ «Տեսիլքի» խմբագրի ուղղագրական սկզբունքների մասին են վկայում, այլ պարզապես Մառի օգտագործած ձեռագրի ընդօրինակող գրչի «արբաբանություններ» առդյունք են: Մատենադարանի վերոհիշյալ, ինչպես նաև 1300 թ. ընդօրինակված № 2607 ձեռագրի մեջ այդ ուսակաբանությունները չեն նկատվում:

Մատթեոս Ուոհայեցին օգտվել է ոչ թե Հովհ. Կոզեռնի «Տեսիլքից», ինչպես կարծում էր Ն. Մառը (ծանոթ չլինելով նորահայտ ժամանակագրական հատվածներին), այլ Հակոբ Մանահնեցու «Ժամանակագրությունից» անմիջականորեն: Ուոհայեցու սյունակը լրացնում ենք 1898 թ. Վաղարշապատի հրատարակությունից (էջ 49-50, 52-55):

Ուոհայեցուց հետո հրապարակ իշած հայ պատմագիրներից Սամուել Անեցին առաջինն է, որ նշումներ ունի Վասիլ Բ կայսեր արշավանքի, Պետրոս կաթողիկոսի՝ Տրապիզոնում կատարած ջրօրհնեքի հանդեսի և Հովհ. Կոզեռնի տեսիլքի մասին¹: Բոլոր այդ հատվածներն էլ, սակայն, բացակայում են Սամուելի հնագույն ձեռագրից (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 5619, ընդօրինակված է 1176 թվականին) և մուծվել են նրա բնագրի մեջ շատ ուշ ժամանակներում՝ քաղվելով Սմբատ Սպարապետի «Ժամանակագրությունից»: Ըստ այդմ, Սամուել Անեցու տպագրության մեջ առկա հատվածները, որպես հետսմուտ հավելումներ, անտեսել ենք:

Սմբատ Սպարապետի «Ժամանակագրության» հնագույն մասը, որի մեջ մտնում են նաև մեզ հետաքրքրող հատվածները, գրեթե բառացի քաղված է Ուոհայեցու «Ժամանակագրությունից»: Չորրորդ սյունակով տալիս ենք Սմբատի համապատասխան հատվածները՝ քաղելով այդ աղբյուրի գիտական հրատարակությունից, որը Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ հ. Սերովբե վ. Ագլյանն իրագործեց 1956 թվականին:

¹ Հմմտ. Սամուել Անեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 105-107:

I

Ի ժամանակագրութենէ Յակոբայ Բահանայի

(1) Ի թուականութեանս Հայոց նշ (1021) ելանէր Վասիլ թագաւորն յԱրեւելս անթիւ բազմութեամբ զարօք խուժադուժ ազգաւ, եւ խնդրեաց զԱնի եւ զամենայն տունն Շիրակա ի Յոհանիսէ՝ որդույ Գագկայ: Իսկ նա յաղագս թուութեան եւ տկարութեան մարմնոյ /26ա/ խոստացաւ տալ զԱնի ի Հոռոմս զկնի մահուան իւրոյ:

(2) Յայնժամ թագաւորն Վասիլ դարձաւ յաշխարհն Վրաց եւ գրեաց թուիթ առ Գէորգ Վրաց թագաւորն՝ գալ նմա առ նայ: Իսկ նայ ոչ առ յանձն գալ առ Վասիլն, զի բազում իշխանս կորոյս ի տանէն Հոռոմոց եւ եբարձ զամենայն մեծամեծս Յունաց աշխարհ[է]ն: Յայնժամ յարեաւ Վասիլն ի պատերազմ ընդ Վրաց զաւրացն, վասն զի եկին հասին ընդդէմ զաւրացն Վասիլն եւ ի կողմն Շրանայ դաշտին հանդիպեցան միմեանց: Իսկ Ռատ իշխանն եւ Զոյատն, որք էին եղբարք Լիպարտին, արք զօրաւորք եւ քաջք, ուժգին բախէին զզօրսն Վասիլն եւ առիւծաջան յարձակեալ եւ խողողեալ զաւրսն Վասիլն: Եւ յայնժամ երիւարն Ռա-

II

Պատմութիւն նշանաց, որ եղեն ի գուշակս առաջիկա ատուրցն, որ կատարեցաւ, ասացեալ սուրբ վարդապետին Յոհաննիսի Կոզոան՝ Հայոց վարդապետի

Ի թուականն հայոց նշ ելանել (իմա՛ ելանէր) թագաւորն Յունաց Վասիլն յԱրեւելս անթիւ բազմութեամբ խուժադուժ ազգաց եւ խնդրեաց զԱնի եւ զամենայն տունն Շիրակա ի Յոհաննիսէ՝ որդո Գագկա: Իսկ նա վասն թուութեան եւ տկարութեան խոստացաւ տալ զԱնի ի Յոյնս զկնի մահուան իւրո:

Յայնժամ թագաւորն Վասիլ դարձաւ յաշխարհն Վրաց, գրեաց թուիթ առ թագաւորն Վրաց Գարգի՝ գալ նմա առ ինքն ի հնազանդութիւն: Իսկ նա ոչ առ յանձն գալ առ Վասիլն, զի բազում իշխանս ի տանէն Հոռոմոց եւ յաշխարհէն բարձեալ էր: Յայնժամ թագաւորն Վասիլ յարեւ ի պատերազմ ընդ զաւրացն Վրաց, զի եւ զաւրքն Վրաց եկին հասին ընդդէմ Վասիլն ի կողմն Շիրակա դաշտին, եւ հանդիպեցան միմեանց սաստիկ պատերազմաւ: Իսկ Ռատ իշխանն եւ Զուատ, որ էին եղբարք միմեանց զաւրաւոր եւ քաջ, ուժգին բախէին զաւրսն Վասիլն՝ Յունաց թագաւորին, եւ առիւծաջան յարձակեացան եւ խողողեցին զբա-

տին խրեցաւ ի մարիսն՝ ի ջրագնաց տեղիսն, եւ ի նմին տեղոջ սպանեցաւ քաջ զօրաւարն Ռատ. եւ յայնժամ պարտեցան զաւրքն Վրաց եւ եղեն փախստական առաջի զաւրացն Վասիլին, եւ յայնմ տեղոջ եղեն կոտորած սաստիկ: Եւ կացեալ Վասիլն յայնմ աշխարհին ամիսս վեց՝ հաւանեցոյց զնա եւ ինքն դարձաւ Տրապիզոն ձմերեաց:

(3) Յայնժամ գայր առ Վասիլ թագաւորն տէր Պետրոս /26բ/ կաթողիկոսն Հայոց յաղագս սիրոյ, հանդերձ երկոյտասան եպիսկոպոսօք եւ ութանասուն կրօնաւոր քահանայիւք եւ վարդապետօք՝ Յովսէփ Ընձուց եւ Կոզեռն Յոհաննէս եւ այլ ԳՃ (300) ձիաւորս ընդ նմայ ի փառաւորացն: Եւ յորժամ ետես թագաւորն զտէր Պետրոս՝ կարի յոյժ մեծարեաց զնա քան զամենայն առաջնորդսն տանն Յունաց:

Եւ եղեն հանդիպեալ յաւուր միում ջրաւրհնէիցն, հրամայեաց թագաւորն զտէր Պետրոս եւ զվարդապետսն եւ զքահանայս տանն Հայոց ի վեր կացուցանել քան զառաջնորդս Յունաց եւ նախ տէր Պետրոսի հրամայեաց աւրհնել զջուրն. եւ եղեւ յորժամ արկանէր զսուրբ մեռոնն ի ջուրն եւ նշան սուրբ խաչին Քրիստոսի հարեալ ի գետ անդ՝ հուր սաստկա-

զումս ի զաւրացն Յունաց: Ապա յայնժամ վատ իմն հանդիպեցան, զերիվարս Ռատին խրեալ ի մաւրատ ինչ տեղոջ, կատարեցաւ քաջն Ռատ. յայնժամ պարտեցան զաւրքն Վրաց եւ եղեն փախստական առաջի զաւրացն Յունաց, եւ յայնմ տեղոջ եղեւ կոտորուած սաստիկ: Եւ կացեալ անտ Վասիլն ամիսս 9 (6) յանմ աշխարհի՝ մինչեւ հաւանեցոյց զնոսա եւ ինքն ապա դառնայր ձմերոց ի Տրապիզոն:

Յայնժամ գայր առ Վասիլն տէր Պետրոս կաթողիկոսն Հայոց յաղագս սիրո պատճառի, հանդերձ ԲԺ (12) եպիսկոպոսաւք եւ Բ (2) մեծանուն վարդապետաւք, յորոց մինն էր Յուսէփ Հնձուց, եւ միւսն Յոհաննէս Կոզեռն կոչեցեալ, եւ այլ երեք հարիւր ձիաւորաւք ի փառաւորաց եւ յանուանի արանց: Իսկ յորժամ ետես թագաւորն զտէր Պետրոս, կարի յոյժ մեծարեաց զնա քան զամենայն առաջնորդսն Յունաց:

Եւ եղեւ ի հանդիպել մեծի աւուրն յայտնութեան եւ մկրտութեան տեառն, յորժամ զջուրն կամեցան աւրհնել, հրամայեաց թագաւորն Վասիլ զտէր Պետրոս իւրառովքն հանդերձ ի վեր կացուցանել քան զամենայն առաջնորդսն Յունաց եւ նախ տէր Պետրոսի հրամայեաց աւրհնել զջուրն եւ ապա Հոռոմոց: Եւ եղեւ յարկանելն տէր Պետրոսի զսուրբ մեռոնն ի ջուրն

պէս իբրեւ զփայլական ցոլացեալ եղեւ ի վերայ ջրոյն, եւ կապեցաւ գետն առ վայր մի: Եւ տեսեալ թագաւորին եւ ամենայն Հոռոմոց՝ հիացեալ զարհուրեցան: Եւ խոնարհեալ թագաւորն եւ արկենէր զարհնեալ ջուրն ի վերա գլխոյ իւրոյ՝ աշովն տէր Պետրոսի: Իսկ արհնելն Յունաց զջուրն՝ ոչ ինչ երեւեալ նշան: Եւ յորժամ թողին ի վերայ ջրոյն զսպիտակ աղանին, զի խաղասցէ ի վերայ ջրոյն, խոյացեալ արծուի մի եւ էառ գնաց /27ա/ եւ եղեւ հիացումն մեծ: Եւ դարձաւ տէր Պետրոս մեծաւ պարգելօք յաշխարհն Հայոց:

Իսկ թագաւորն մտախորհ լինէր վասն տեսեան նշանին, որ երեւեցաւ ի վերայ ջրոյն, եւ յայնմ արեւ երկմտեալ ի հաւատս Հոռոմոց, զորս յետ ժամանակաց գնացեալ յաշխարհն Անտիոքայ քաղաքին եւ գաղտաբար ի զարացն երեք հաւատարիմ արամբք գնացեալ. ելանէր ի Սեաւ լեառն՝ ի վանքն, որ Պաղակծիակ կոչի, եւ ծածկաբար ի հաւրէն առնոյր զքրիստոսական կնիքն. եւ յայնմ արեւ եղեւ որպէս հայր Հայոց ազգիս եւ յայտնապէս Բժ-ան գեղս շնորհեաց վանացն, որ եւ են իսկ:

Եւ գնշան սուրբ խաչին խոնարհեցուցեալ ի ջուրն, հուր սաստկապէս իբրեւ զփայլական ցոլացեալ ի վերայ ջրոյն, եւ կապեցաւ գետն՝ դադարելով առ ժամ մի. եւ տեսեալ թագաւորին եւ ամենայն Հոռոմոց՝ հիացեալ զարհուրեցան: Եւ խոնարհեցուցեալ թագաւորն զգլուխն իւր առաջի տէր Պետրոսի՝ տայր արկանել զջուրն ի վերա գլխո իւրոն՝ աշով նորա: Իսկ յարհնելն Հոռոմոց զջուրն՝ ոչ ինչ երեւէր նշան: Այլ զի ունէին սովորական աղանի սպիտակ եւ թողին, զի խաղասցէ ի վերայ ջրոյն. եւ եղեւ իբրեւ թողին յանկարծակի, իբրեւ ի տեսչութենէ Աստուծոյ, արծիւ մի խոյացեալ առ զաղանին, եւ եղեւ հիացումն ի վերա ամենունց: Եւ դարձաւ տէր Պետրոս մեծաւ ուրախութեամբ յաշխարհն Հայոց: Իսկ թագաւորն յայնմհետէ մտախորհ լինէր վասն նշանին, որ երեւեցաւ, եւ այնուհետեւ երկմտեալ ի հաւատո Հոռոմոց, զոր եւ յետ ժամանակի ինչ գնացեալ յաշխարհն Անտիոքացոց, եւ գաղտնաբար ի զարաց իւրոց գնաց երեք հաւատարիմ արամբք ի Սեաւ լեառն՝ ի վանքն, որ Պաղակծիակ կոչի, եւ ծածկաբար ի հաւրէ վանացն առնոյր զքրիստոսական մկրտութիւնն. եւ յայնմ արեւ իբրեւ զհայր եղեւ նա ազգիս Հայոց, եւ յայտնապէս Բժ գեղ շնորհեաց վանացն:

(4) Գարձեալ ի թուականութեանս Հայոց ՆՂԸ (1030) եւ ի թագաւորութեանն Հոռոմոց Վասլին եղեւ ահաւոր նշան եւ սոսկալի եւ բարկութիւն ի վերայ ամենայն արարածոցս: Վասն զի ահայ այս ինչ լինէր. ի հոկտեմբերի ամսոյն, որ աւր Ե (5) էր, ի յերեկոյն ժամուն պատառեցաւ վերին հաստատութիւն յերկնիցն եւ յարեւելից մինչեւ ի մուտս ընդ երկուս հերձեալ երկինք, եւ համատարած լոյսն սաստկապէս...

Գարձեալ ի թուակ[ան]ութեանս Հայոց ՆՂԸ նոյն ի թագաւորութեանն Յունաց Վասլին եղեւ ահաւոր նշան յերկինս՝ սոսկալի ի վերա երկրի: Քանզի ահայ այս ինչ լինէր. ի հոկտեմբերի ամսո, որ աւր երեք էր ամսեանն, յերեկոյն ժամուն պատառեցաւ վերին հաստատութիւնն երկնից՝ յարեւելից կուսէ մինչեւ յարեւմուտս ընդ երկուս հերձեցան երկինք. ի հիւսիսական կողմանէ համատարած լոյս սաստկապէս հոսեալ ի յերկիր. է յահէ բարկութեան դողացեալ երերէին ամենայն արարածք, այլ յառաջ քան զնուաղել լուսոյն եղեւ ահաւոր գոչիւն ընդ ամենայն երկիր. եւ աստեղք ամենայն երեւէին որպէս ի մէջ գիշերի, վասն զի խաւար կալաւ զամենայն երկիր: Յայնժամ զկնի երեք աւուրն ժողովեցան իշխանք եւ ազատք եւ եկին առ մեծ վարդապետն Հայոց Յոհաննէս, որ էր աստուածագգեաց եւ հրաշակրան եւ լի իսկ առաքելական եւ վարդապետական եւ մարգարէական շնորհիւ: Եւ յորժամ եկին իշխանքն եւ ազատքն ի հարցանել եւ իմանալ զմեկնութիւն նշանին որ եղեւ, յայնժամ տեսին զվարդապետն Հայոց, զի կայր ի վերա երեսաց իւրոց անկեալ, գտին ի խոր տրամութեան: Եւ նոցա սակաւ ինչ համարձակել՝ հարցին զնա, իսկ նա լալով եւ հառաչանաւք պատասխանի առնէր ասելով. Ո՛վ որ-

դեակք, լուարուք ինձ, զի ահա այս հազար ամ է կապանաց սատանաի, զոր կապեաց տէր մեր Յիսուս Քրիստոս ի Յորդանան գետ իւր սուրբ մկրտութեամբն. եւ այժմ արձակեցաւ ի կապանաց ըստ ասացելո ճրեշտակին ի տեսլեանն Յոհաննու աւետարանչի, որ ասաց ճրեշտակն, թէ՛ Հազար ամ կապեացի բանսարկուն եւ դարձեալ արձակեացի ի կապանաց իւրոց: Եւ ահա արձակեցաւ ի վերա արարածոց, զոր կապեալն էր Քրիստոս իւր սուրբ մկրտութեամբն, զի ահա Հայոց թուականս այսաւր ՆՀԸ եւ կալ գառաջին ՇԾԲ (552), որ լինի հազար եւ երեսուն. զԼ (30) տուր յառաջ քան զմկրտութիւնն եւ զհազարն ի մկրտութենէն մինչեւ ցայսմ: Ո՛ր դեակք իմ, լալով ինչ ունիմ ասել ձեզ, զի վասն այսորիկ եղեւ պատառումն երկնից, զի ահա յայսմհետէ ոչ ոք կարէ կալ հատատուն ի վերա երկիր առ ի պատուիրանն աստուծոյ. ոչ հայրապետ, ոչ քահանա, ոչ կրանաւոր եւ ոչ իշխան: Իշխանք յարեան ի գողս եւ յանիրաւ դատաստանս, կրանաւորք թողուն զանապատս իւրեանց եւ սիրեն զաշխարհս, ատեն զկարգ կրանաւորութեան եւ յարեան ի ցանկութիւն կանանց. եւ յայսմ արէ յամենայն արարածոց խափանի փառաբանութիւնն աստուծոյ, դառնան յետս ի ճշմարտութենէն, եւ մոլորին աշ-

խարհք զհետ երգոց դիւականաց եւ ատեն զաղաւթս, որ առ Աստուած: Իշխանք պեղծ մեղաւք յանդգնին եւ մոլորին, միշտ ի գինարբուս դեգերին վասն սիրո շարախտին. հայրապետք եւ եպիսկոպոսք, քահանայք, կրանաւորք արծաթասէր լինին առաւել քան թէ քրիստոսասէրք, եւ յայսմհետէ զսատանաի կամսն մեծապէս կատարեն մարդիկ, քան զաստուծոյն. եւ ի ձեռն անարժան պատարագացն, որ յայսմհետէ լինելոց է, առաւել բարկանա Աստուած արարածոց, եւ առաւել մատուցողին. վասն զի յանարժանից դատապարտելոց է Քրիստոս եւ յանարժանս բաշխելոց, եւս առաւել վիրաւորելոց է Քրիստոս, քան զխաչեալն եւ զթաղեալն ի հրէից. արձակիլն սատանաի այս է, որ լցաւ երկիր անիրաւութեամբ, եւ ոչ երեւի ճշմարտութիւն: Եւ արդ, ո՞րդեակք իմ, զայս պատուիրեմ ձեզ հառաչանաւք սրտի, լալով եւ ողբալով, զի քակին ոմանք ի հաւատոց եւ պարծանաւք ուրանան զՔրիստոս. վասն այսորիկ խաւար կալաւ զամենայն արարածս:

Ձայս այսպէս խաւսեցաւ սուրբ վարդապետն վասն կատարածի նշանին եւ այլ բազում ինչ ճանեաց, զոր եւ կատարելոց էր վասն հաւատացելոց, զոր եւ կատարեցաւ մի առ մի ի ձեռն ելին կատաղի ազգին թուրքաց՝ պեղծ որդոցն Քամա:

III

Ժամանակագրութիւն
Մատթէոսի Ոտնայեցոյ
(Վաղարշապատ, 1898)

Ի թուականութեան Հայոց ՆՀ ելանէր Վասիլն յԱրեւելս անթիւ զօրօք եւ խնդրեաց ի թագաւորէն Հայոց զԱնի եւ զԿարս: Եւ Յովհաննէս որդին Գագկայ խորհեցաւ տալ վասն թուութեան սրտին իւրոյ:

Իսկ Վասիլն դարձաւ յաշխարհն իւր եւ գրեաց առ Գորգի թագաւորն Վրաց՝ գալ նմա ի հնազանդութիւն, զոր ոչ ընկալաւ եւ ոչ յանձն էառ: Յայնժամ գայ Վասիլն պատերազմաւ ի վերայ նորա. եւ զօրքն Վրաց գնացին ընդդէմ նորա. եւ Ռատն եւ Զոյատն՝ արք քաջք՝ եղբարք Լիպարտին, ուժգին բախեցին զզօրսն Վասիլին, մինչեւ սպանաւ Ռատն, զի ձին նորա խրեցաւ ի տեղի մի տիղմ եւ անդ սպանաւ. եւ ապա դարձան ի փախուստ զօրքն Վրացեաց. եւ զօրք Վասիլին զկնի կոտորէին: Եւ կացեալ Վասիլն անդ ամիսս Գ, մինչեւ հաւանեցոյց զնոսա, եւ ի Տրապիզոն ձմերեաց:

Եւ գնայր առ թագաւորն Վասիլ տէր Պետրոս կաթողիկոսն Հայոց եւ սուրբ վարդապետն Յովհաննէս Կոզեռն բազում սպասուք. եւ թագաւորն ընկալաւ զնոսա պատուով: Եւ ի հասանել

IV

Տարեգիրք Սմբատայ
Սպարապետի (Վեներիկ, 1956)

Ի թուին Հայոց ՆՀ ելանէր Վասիլն յԱրեւելս անթիւ զօրօք եւ խնդրեաց զԱնի եւ զԿարս: Եւ Յովհաննէս որդի Գագկայ խորհեցաւ տալ վասն թուութեան սրտի իւրոյ:

Իսկ Վասիլն դարձաւ յաշխարհն իւր եւ գրեաց առ Գորգի թագաւորն Վրաց՝ գալ նմա ի հնազանդութիւն. զոր ոչ ընկալաւ եւ ոչ յանձն առ: Յայնժամ գայ Վասիլ թագաւորն պատերազմաւ ի վերայ նորա. եւ զօրքն Վրաց գնացին ընդդէմ նորա, եւ Ռատն եւ Զոյատն՝ արք քաջք՝ եղբարք Լիպարտին, ոչգին բախեցին զզօրսն Վասիլին՝ մինչեւ սպանաւ Ռատն, զի ձին նորա խրեցաւ ի տեղի մի տիղմն եւ անդ սպանաւ. եւ ապա դարձան ի փախուստ զօրք Վրացեացն. եւ զօրք Վասիլին զկնի երթեալ կոտորէին: Եւ կացեալ Վասիլն անդ ամիսս Գ, մինչեւ հաւանեցոյց զնոսա, եւ ի Տրապիզոն ձմերեաց:

Եւ գնայր առ թագաւորն Վասիլ տէր Պետրոս կաթողիկոսն Հայոց, եւ Յովհաննէս Կոզեռն բազում սպասուք. եւ թագաւորն ընկալաւ զնոսա պատուով: Եւ ի հասանել

պատուով: Եւ ի հասանելն մեծի աւուր մկրտութեան տեառն մերոյ՝ մեծարեաց թագաւորն զտէր Պետրոսն եւ վարդապետսն Հայոց եւ ի վեր ետ կացուցանել քան զառաջնորդսն Յունաց եւ յառաջ տէր Պետրոսի հրամայեաց օրհնել զջուրն. զոր իբրեւ արկանէր զմիւսն սուրբ ձիթոյն ի ջուրն եւ հարկանէր սուրբ նշանան զջուրն, հուր սաստկապէս ցոլացեալ երեւէր ի վերայ ջրոյն, եւ կապեցաւ գետն առ վայր մի եւ ոչ շարժէր: Եւ տեսեալ թագաւորին եւ զօրացն զարհուրեցան. եւ խոնարհեալ թագաւորն՝ արկանէր զօրհնեալ ջուրն ի վերայ գլխոյն աջովն տէր Պետրոսի: Եւ դարձաւ տէր Պետրոսն մեծաւ պարգեւօք յաշխարհն Հայոց: Իսկ Վասիլն յետ ժամանակաց գայ յԱնտիոք ի ծածուկ Գ արամբք հաւատարմօք, եւ եկեալ ի Սեան լեառն՝ ի տեղին, որ կոչի Պաղակծիակ, եւ ի հօրէ եւ յառաջնորդէ տեղոյն առնու զքրիստոսական կնիքն: Եւ յայնմ հետէ եղև որպէս զհայր աշխարհիս Հայոց:

Ի թուականութեան Հայոց ՆՃԸ յամս կայսերն Յունաց Վասիլի եղև յերկինս ահաւոր նշան եւ սոսկալի եւ բարկութիւն ի վերայ ամենայն արարածոց: Ի հոկտեմբեր ամսոյ Գ (3) յերրորդ ժամու աւուրն պատուեցաւ վերին հաստատութիւնն

մեծի աւուր մկրտութեան տեառն մերոյ՝ մեծարեաց թագաւորն զտէր Պետրոս եւ զվարդապետսն Հայոց եւ ի վեր ետ կացուցանել քան զառաջնորդսն Յունաց եւ յառաջ տէր Պետրոսի հրամայեաց օրհնել զջուրն. զոր իբրեւ արկանէր զմերոն սուրբ ձիթոյն ի ջուրն եւ հարկանէր սուրբ նշանան զջուրն, հուր սաստկապէս ցոլացեալ երեւեր ի վերայ ջրոյն, եւ կապեցաւ գետն առ վայր մի եւ ոչ շարժէր: Եւ տեսեալ թագաւորին եւ զօրացն զարհուրեցան. եւ խոնարհեալ թագաւորն՝ արկանէր զօրհնեալ ջուրն ի վերայ գլխոյ աջովն Պետրոսին: Եւ դարձաւ տէր Պետրոս մեծաւ պարգեւօք յաշխարհն Հայոց: Իսկ Վասիլն յետ ժամանակաց գայ յԱնտիոք ի ծածուկ Գ արամբք հաւատարմօք գալ ի Սեան լեառն՝ ի տեղին, որ կոչի Պաղակցեակ, եւ ի հօր տեղոյն առնու զքրիստոսական կնիքն: Եւ յայնմ հետէ եղև որպէս հայր աշխարհիս Հայոց:

Ի ժամանակս Վասիլին, ի թուին ՆՃԸ, երեւեցաւ յերկինս սոսկալի նշան, որպէս թէ պատառեցաւ երկինքն, եւ լոյս սաստիկ յերկիր անկաւ, եւ զահի հարան ամենեքեան ընդ լուսոյն հեղումն: Յայնժամ ժողովեցան առ վարդապետսն

երկնից յարեւելից կուսէ մինչեւ յարեւմուտս ընդ երկուս հերձաւ կապուտ երկինդ, եւ լոյս պայծառ յերկիր թափեցաւ ի հիւսիսային կողմանէ. եւ մեծաւ շարժմամբ դողաց ամենայն երկիր. եւ նախ քան զնուագիլ լուսոյն եղեւ գոջին եւ թնդին ահաւոր ի վերայ ամենայն արարածոց. խաւարեցաւ արեգակն եւ աստեղք երեւեցան որպէս ի մէջ գիշերի, եւ սուգ զգեցան ամենայն երկիր. եւ դառն արտասուօք աղաղակէին ամենայն ազինք առ Աստուած: Եւ ապա յետ երեք աւուր ժողովեցան ամենայն իշխանք եւ ազատքն հրամանաւ թագաւորին Հայոց Յովհաննիսի եւ եկեալ առաջի սուրբ վարդապետին Յովհաննու Կոզեռանն, որ էր այր աստուածազգեաց եւ հրեշտակակրօն եւ լի իսկ առաքելական եւ մարգարէական գրոց գիտութեամբ: Եւ յորժամ եկին իշխանքն Հայոց հարցանել զնա եւ իմանալ վասն հրաշալի տեսեանն եւ նշանին, եւ տեսին զսուրբ վարդապետն Յովհաննէս անկեալ ի վերայ երեսաց իւրոց տրտմութեամբ, եւ լայր դառնապէս: Եւ ի հարցանելն նոցա՝ նա դառն ոգով եւ աղիողորմ հառաչանօք ետ պատասխանի եւ ասաց.

Ո՛վ որդիք, լուարուք ինձ, վայ եւ եղուկ է ամենայն մարդկան, զի ահա այսօր հագար ամ է կապա-

Հայոց Յովհաննէս Կոզեռն եւ հարցանէին վասն սոսկալի նշանին: Եւ նա արտասուօք սկսաւ պատմել զշարութիւն յետին ժամանակիս, զոր ինչ գալոց էր ի վերայ երկրիս:

նացն սատանայի, զոր կապեաց տէրն մեր Յիսուս Քրիստոս խաչին իւրով սրբով, մանաւանդ իւր սուրբ մկրտութեամբն ի Յորդանան գետն. եւ արդ, արձակեցաւ սատանայ ի կապանաց իւրոց ըստ վկայութեան տեսեանն Յովհաննու աւետարանչին, որպէս ասաց նմա հրեշտակն աստուծոյ, թէ՛ Ռամ կապեցի սատանայ եւ դարձեալ արձակեցի ի կապանաց իւրոց: Եւ ահա այսօր արձակեցաւ սատանայ ի հազար ամէ կապանաց իւրոց, որ Հայոց թուականն ՆՀԸ ամ է, եւ կալ զառաջինն ՇՄԲ, որ լինի ՌԼ ամ. գերեսուն ամն տուր յառաջ քան զմկրտութիւնն եւ կալ զհազարն մինչեւ ցայսօր: Եւ արդ վասն այսորիկ եղեւ պատառումն երկնից: Եւ ահա յայտմհետէ ոչ ոք կարասցէ կալ հաստատուն ի հաւատս Քրիստոսի եւ ի պատուիրանսն Աստուծոյ՝ ոչ հայրապետ եւ ոչ վարդապետ, ոչ եպիսկոպոս եւ ոչ քահանայ, ոչ աբեղայ եւ ոչ կրօնաւոր, ոչ իշխան եւ ոչ ժողովուրդ. իշխանք յարենան ի գողս եւ յաւազակս եւ յափշտակողս, դատաւորք ի կաշառս եւ յանիրաւ դատաստանս. կրօնաւորք թողուն զանապատս եւ զմենաստանս եւ յաշխարհի զբաղմունս դեգերին եւ շրջին ընդ փողոցս եւ ի մէջ կանանց ատեն զաղօթս եւ թողուն զկարգս կրօնաւորութեան իւրեանց, սիրեն

զվարս աշխարհի եւ զհետ երթան
գովեստից մարդկան, որոճալով
որոճեն զգիւական երգս եւ փքա-
ցեալ ի վերայ ընկերացն ասելով
թէ՛ ես կցորդ եւ մեղեդի գիտեմ եւ
դու՝ ոչ. եւ այսու պատճառաւ
պղտորէն զկարգ ժամատեղացն.
լինին եւ բազումք ուսումնա-
տեացք, ծոյլք եւ դատարկաբանք
տրտնջողք եւ ամբաստանողք՝ եւ
ուր ուրեք երեւի ճշմարտութիւն ի
մարդիկ, զի լինին կամապաշտք,
անձնասէրք եւ ընկերատեացք,
շոգմոգք, քսուք, ստախօսք,
հպարտք, փառասէրք, անձնա-
հաճք, ինքնահաւանք, որկորա-
մոլք, գինեսէրք եւ ցանկասէրք:
Որդեակք իմ, ահա յայսմհետէ
խափանեսցի փառաբանութիւնն
Աստուծոյ ի մարդկանէ եւ ոչ
երեւի ճշմարտութիւն առ մար-
դիկք: Այլ եւ իշխանք պիղծ եւ մեծ
ախտիւ յանդգնեալ եւ մոլորեալ՝
թողուն զհոգս շինութեան տանց
եւ յաջողուածս գործոց եւ միշտ եւ
հանապագ ի գինարբուան դեգե-
րին վասն սիրոյ եւ ցանկութեան
չար եւ պիղծ ախտին. հայրա-
պետք եւ եպիսկոպոսունք եւ քա-
հանայք եւ կրօնաւորք՝ արծաթա-
սէրք առաւել քան աստուածա-
սէրք: Որդեակք իմ, ահա յայսմհե-
տէ սատանայի կամքն առաւել
կատարեսցի յորդիս մարդկան
քան զաստուծոյն, եւ ի ձեռն ա-
նարժան պատարագողացն, որ

յայմս հետէ լինելոց է, բարկանայ Աստուած ի վերայ արարածոցս, եւս առաւել ի վերայ մատուցողին զնա, զի յանարժանիցն պատարագելոց է Քրիստոս եւ յանարժանն բաշխի. եւ առաւել վիրաւորելոց է Տէր մեր Յիսուս Քրիստոս ի յանարժան քահանայիցն, քան զչարչարիլն եւ զխաշիլն ի Հրէից, զի արձակեցաւ սատանայ ի հազար ամէ կապանց իւրոց, զոր կապեաց Քրիստոս: Եւ զայս, որդեակք իմ, պատուիրեմ ձեզ հառաչանօք սրտիւ լալով եւ ողբալով, վասն զի քակտին բազումք ի հաւատոց եւ պարծանօք ուրանան զՔրիստոս, եւ վասն այսորիկ խաւար կալաւ զամենայն արարածս: Զայս այսպէս ասաց սուրբ վարդապետն Հայոց վասն կատարածի բարկութեան նշանին եւ այլ բազում ինչ ճառեաց, որ կատարելոց էր ի վերայ հաւատացելոց, զոր ահա ամենայն ինչ կատարեցաւ մի առ մի ի ձեռն ելից կատաղի եւ շուն ազգին թուրքաց՝ անօրէն եւ պիղծ որդւոցն Քամայ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԲԱՐՁՐԲԵՐԴՅՈՒ ԽՐԱՏԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ՝ ԱՌԱՔՎԱԾ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ 1251 ԹՎԱԿԱՆԻՆ՝¹

Կոստանդին կաթողիկոս Բարձրբերդյու (1221-1267) խրատական թղթի մեզ հայտնի միակ ձեռագիրը պահվում է Լենինգրադի Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան Պետ. հանրային գրադարանի ձեռագրական բաժնի հայերեն ձեռագրերի հավաքածուի մեջ:

1954 թվականի նոյեմբերին, գործուղվելով Լենինգրադ, հնարավորություն ունեցանք ընդօրինակելու 90 ամբողջական ձեռագրերից բաղկացած այդ հավաքածուի ժՆ. դարի ձեռագրերի հիշատակարանները, ինչպես նաև թռուցիկ կերպով ծանոթացանք ձեռագրերի բովանդակության հետ:

Հայերեն ձեռագրերի այս հավաքածուն բաղկացած է երկու (հին և նոր) շարքերից, ըստ որում յուրաքանչյուր շարքում (серия) գրանցված է 45 ձեռագիր՝ 1-ից 45 ինքնուրույն համարակալությամբ:

Հին շարքի ձեռագրերը (старая серия, № 1-45) ստացվել են 1891 թվականին Կամենեց-Պոդոլսկից՝ սուրբ Նիկողայոսի անվան հայկական եկեղեցին և նրան կից արխիվը լուծարքի ենթարկելուց հետո: Հավաքածուի այս շարքի մասին համառոտ մի հաղորդում է հրատարակված գրադարանի 1891 թ. հաշվետվության մեջ (տե՛ս «Отчет императорской публичной библиотеки за 1891 год», СПб., с. 11-16), որտեղ թռուցիկ նկարագրված են ամենաարժեքավոր 13 ձեռագրերը, ինչպես նաև ձեռագրերի հետ մեկտեղ ստացված 54 հայերեն տպագիր գրքերը (նկարագրությունը կատարել է Ն. Մառը): Ձեռագրերի մեծագույն մասն ընդօրինակված է Ուկրաինայի և Լեհաստանի հայկական գաղթավայրերում, ուստի օգտակար նյութ կարող են մատակարարել այդ գաղթավայրերի պատմության հարցերով հետաքրքրվող մասնագետներին:

Ավելի մեծ արժեք են ներկայացնում հավաքածուի նոր շարքի ձեռագրերը (новая серия № 1-45), որոնք ձեռք են բերվել գրադարանի կողմից աստիճանաբար, գնումների և այլ ճանապարհներով, 1891 թվականից հետո ընկած տասնամյակներում:

Այս ձեռագրերը, եթե նկատի չառնենք նրանցից մի քանիսի հիշատակարանների հրատարակությունները «ժՆ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները» ժողովածուի մեջ (տե՛ս էջ 651-661), մինչ այժմ անծանոթ են մնացել հայագետներին:

Իրանցից ուշագրության արժանի են հատկապես հետևյալները.

¹ «Ֆանբեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 267-284:

ա) № 14, կրկնագիր ձեռագիր, բաղկացած 255 մագաղաթյա թերթերից, երկրորդ գիրը 1554 թվականից: Պարունակում է նաև Անանիա Շիրակացու թվաբանական աղյուսակները:

բ) № 39, Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց և Ասորա-հռոմեական դատաստանագիրք՝ ընդօրինակված Թովմա գրչի կողմից 1404 թվականին:

գ) № 31, Հարցմանց գիրք Գրիգորի Տաթևացու՝ ընդօրինակված Հերմոնի վանքում Գրիգոր Ախալցխացի գրչի կողմից (պատմական հարուստ բովանդակությամբ ու կենցաղագրական ուշագրավ մանրամասնություններով լի հիշատակարանով):

դ) № 15, Յայսմաուրք՝ ընդօրինակված Կարապետ գրչի կողմից 1427 թվականին. և վերջապես՝

ե) № 37, բազմազան նյութերի ժողովածու՝ ընդօրինակված Ժն. դարում: Այս ձեռագրի 208ա-214բ էջերի վրա ընդօրինակված է Կոստանդին Բարձրբերդցու մեր ուշագրությունը գրաված «հրատական թուղթը»¹:

Սահմանափակ ժամանակ ունենալով մեր տրամադրության տակ՝ 1954 թվականին կարողացանք միայն որոշ քաղվածքներ անել խրատական այդ թղթից: Հետագայում մեր խնդրանքով պատմական գիտությունների թեկնածու Հռիփսիմե Ջանփոլաղյանը ընդօրինակեց ձեռագրի մեզ հետաքրքրող էջերը, իսկ 1956 թվականին գրադարանի արտաքին սպասարկման բաժնից ստացանք «հրատական թղթի» էջերի պարզ լուսանկարները, որոնք հնարավորություն են տալիս ծայրից ծայր անսխալ վերծանել հրատարակության արժանի այդ բնագիրը:

Մեզ զբաղեցնող թուղթը սկսում է այսպես. «հրատական թուղթ ի ձեռն մեր վարդապետին Վարդանայ»:

Այս առաջին դեպքը չէր, երբ Կոստանդին կաթողիկոսը դիմում էր Արևելյան Հայաստանի հայերին «ի ձեռն» (նշանակում է՝ միջնորդությամբ, գործակցությամբ) Վարդան Արևելցու:

Հայտնի է, որ դեռևս 1246 թվականին կաթողիկոսը «իբրև ետես զաւեր աշխարհիս Հայոց եւ զտառապանսն, զոր կրէին ի հարկահանացն եւ զօրաց թաթարին, եւ մտախոհ եղեալ իմացալ էթէ մեղք են այսմ ամենայնի պատճառ... փութացաւ գրել թուղթս շրջաբերականս եւ կանոնս համաշխարհականս» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 278-279):

¹ Ձեռագիրը մուտք է գործել Սպաիկով-Շչեդրինի անվան գրադարանի ձեռագրական բաժին 1950 թվականի նոյեմբերի 30-ին:

Կիրակոս Գանձակեցին իր «Պատմութեան» մեջ ամբողջութեամբ մեջբերում է այդ շրջաբերական թուղթն ու «Սահմանք կանոնականքը»՝ հայտնելով, որ դրանք Կիլիկիայից Արևելք է բերել նույն Վարդան Արևելցին, որը Երուսաղեմից հայրենիք վերադառնալու ճանապարհին, հինգ տարի մնալով Կիլիկիայում, սերտ կապեր էր հաստատել Հեթում թագավորի և Կոստանդին կաթողիկոսի հետ (նույն տեղում, էջ 279):

Այդ մասին շրջաբերական իր թղթի նախաբանում խոսում է նաև կաթողիկոսը: «Առաքեցի զարդինական վարդապետդ զՎարդան, - գրում է նա, - փոխանակ անձին իմոյ, զոր ետ ինձ նախախնամութիւնն Աստուծոյ՝ ձգելով առ իս ի կողմանց ձերոց ի հինգ ամաց հետէ, զոր իբրեւ տեսի եւ ճանաչեցի ըստ կարի, կապեցի զդա միջնորդութեամբն Աստուծոյ ընդ անձին իմոյ կենօք եւ մահուն՝ մեծաւ հարկիւ եւ սիրով բեւեռեալ ընդ իս յաւիտեան» (նույն տեղում, էջ 282-283):

Գալով հայրենիք՝ Վարդանը շրջում է «ընդ գաւառս Հայոց», ծանոթացնում եպիսկոպոսներին, վանականներին ու իշխաններին կաթողիկոսի կանոնական սահմանների հետ և վերջնում նրանցից «ձեռագիր հաւանութեան», այսինքն՝ կանոնական սահմանները կատարելու պարտավորություն: Հայտնի է նաև, որ հետագայում նա Հաղբատում և Զագավանքում գումարում է եկեղեցական ժողովներ ու մշակում կանոններ, որոնք շատ կետերով նմանվում են Կոստանդին կաթողիկոսի «Սահմանքի» կանոններին (տե՛ս Գարգին վարդապետ, Զագավանից ժողովը, «Շողակաթ», էջ 22-46):

Վարդանի և Կոստանդին կաթողիկոսի միջև սերտ կապերի գոյության մասին փաստերը չեն սահմանափակվում սրանցով: Գիտենք, որ դեռևս Կիլիկիայում գտնված ժամանակ (1246 թ.) Վարդանը գործակցել է կաթողիկոսին՝ պատշաճ պատասխան գրելու համար Հռոմի պապի կողմից Հեթում թագավորին ուղղված դավանաբանական գրությունը:

Պատասխան այդ թուղթը հայ դավանաբանական գրականության գլուխգործոցը կարելի է համարել: Կաթողիկոսը, դարձյալ «ի ձեռն արդիւնական վարդապետին Վարդանայ», ոչ միայն վճռականորեն մերժում է կաթոլիկ եկեղեցու տեսակետն այն մասին, թե «Հռոմայ աթոռն միայն ունի իշխանութիւն ի վերայ երկրի կապելոյ եւ արձակելոյ, եւ ծառայութիւն պարտին նմա ամենայն եկեղեցիք», այլև պապի գրության մեջ գտնում է «հնգետասան սխալ եւ անընդունակ բան» և հայտարարում, որ «զիրեանց (կաթոլիկների) արուեստակեալ առասպելն իսկի չընդունիմք, այլ եւ արհամարհեմք» և այլն¹:

¹ Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 503-509: «Թուղթ Կոստանդեայ կաթողիկոսի

Կոստանդին կաթողիկոսի պատվերով Վարդանը գրել է նաև «Դավանութիւն հավատոյ» խորագրով մի գրութիւն¹:

Ուշագրավ է, որ Կոստանդին Բարձրբերդցու նորահայտ խրատական թուղթը ևս, ինչպես տեսանք, գրված է «ի ձեռն մեր վարդապետին Վարդանայ»:

Արդ, ի՞նչ է նշանակում հաճախ կրկնվող այս «ի ձեռն» արտահայտութիւնը: Եվ Վարդան վարդապետը կաթողիկոսի կամքի և մտքի լոկ թարգմանն է հանդես գալիս այս ու վերոհիշյալ դեպքերում, թե՞ ինքը գործուն մասնակցութիւն ունի կաթողիկոսի ստորագրութեամբ հրատարակված պաշտոնական այդ գրութիւնների շարադրմանը. այս մի հարց է, որի պատասխանը պետք է զբաղեցնի հայ բանասիրութեանը:

Ինչևէ. «Սահմանք կանոնականքից» ընդամենը 5 տարի հետո՝ «յեւթնհարիւր թուիս մերոյ տոմարիս եւ Լ.(30) հայրապետութեանս մերոյ», այսինքն՝ 1251 թվականին, Կոստանդին կաթողիկոսը կրկին պահանջ է զգում շրջաբերական թղթով դիմելու Արևելյան Հայաստանի հայերին:

Խրատական այդ թուղթը բաղկացած է երկու բաժնից՝ ա) Նախաբան և բ) 18 կանոն, ըստ որում 3-րդ կանոնը չի ընդօրինակված բնավ, իսկ 18-րդ կանոնը թերի է ընդօրինակված, ուստի դժվար է որոշել, որ հենց այդ կանոնով էլ ավարտվելիս է եղել բնագիրը:

Ձեռագրի գրիչը, ընդօրինակելով 18-րդ կանոնի առաջին բառերը (2,5 տող), անգրել է թողել շուրջ 7 տողի չափ տարածություն: Կարելի՞ է արդյոք այս փաստից եզրակացնել, որ բնագրի մեզ հասած միակ օրինակը թերի է ընդամենը 7 տողով, չգիտենք: Այնուամենայնիվ, ելնելով այն փաստից, որ Կոստանդինի «Սահմանք կանոնականքը» պարունակել է ընդամենը ԻԲ (22) կանոն², կարելի է ենթադրել, որ մեր միակ բնագրի թերութիւնը մեծ չէ. թերևս, ձեռագրում ինչ-ինչ պատճառներով չի ընդօրինակվել վերջից ընդամենը մեկ-երկու կանոն:

Հայոց, գոր գրեաց առ Հէթում թագաւորն ի յաստուածապահ դղեկէս, ի հայրապետական արքայս Հոռմկլաէս, ի մայրաքաղաքն Սիս. պատասխանի թղթին որ ի պապէն Հոռմայ բերաւ առ թագաւորն Հայոց Հէթում, ի ձեռն Լիկաթին, որ կոչէր Տիմանչ, ի թուիս Հայոց ի ՈՂԵ. (1246), ի ձեռն արդիւնական վարդապետին Վարդանայ, յարմար իրիս»:

¹ Գ. Մովսէսյան, Թորոս աղբար, Բ, էջ 395:

² Նկատի ունեն՝ Կ. Գանձակեցու «Պատմութեան» Ոսկան Երևանցու 1858 թ. Մոսկվայի հրատարակության բնագիրը: Ա. Պալեյանի հրատարակության մեջ (տե՛ս «Պատմ. կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նորա ընդ հոռմէական եկեղեցայ ի Փլորինտեան Սիւնհոդոսի», Վիեննա, 1878, Հավելված է, էջ 267-272) «Սահմանքը» բաժնված է ԻԿ (24) կանոնների:

Նախաբանում կաթողիկոսը մի քանի անգամ, նկատի ունենալով, անշուշտ, 1246 թվականին առաքած «Սահմանք կանոնականքը», ակնարկում է, որ ինքը նման թղթով դիմել է Արևելյան Հայաստանի բնակչությանը նաև տարիներ առաջ: Նա գրում է. «Եւ յառաջ զոր յղարկեցի առ ձեզ կարճ բանիւ զմեր սուրբ հարցն զխրատ եւ զուսումն, թէ որպէս պարտ է լինել քրիստովնին» (ձեռ. էջ 211ա), կամ՝ «Մեք զհակառակն հասկացաք, թէ բնաւ չէք լսել աղաչանցս մեր եւ չէք արարեալ. եւ բազմապատկեալ են եւ շատացեալ ամենայն շարիք եւ մեղաց տեսակք, զոր յառաջ սակաւ ունէիք» (էջ 208ա):

Այդ «մեղաց տեսակները» թվարկված են նախաբանի տարբեր էջերում, այսպես. «ծուլացեալ էք ի յուսմանէ եւ յաղաւթից եւ ի ժամատեղաց եւ էք իբրեւ զանբան անասունք՝ չգիտելով զարէնս քրիստովնէից» (էջ 208ա), չունէք «սահման խոստովանութեան եւ հաղորդութեան եւ եկեղեցագարդութեան եւ քահանայասիրութեան եւ աստուծոյ պողաբերութիւն» (էջ 208բ):

Եվ ահա, հայերի գործած այս «ծանր մեղքերով» է բացատրում կաթողիկոսը մոնղոլական հրոսակների՝ Հայաստանում գործած անլուր խժժությունները՝ գերություն, սպանություն, հարկային տաժանակիր լուծ և այլն:

Նախաբանի պատմական տեսակետից ամենաուշագրավ տողերը հենց նվիրված են մոնղոլական արշավանքներին հաշորդող տարիների քաղաքական աղետավոր անցուղարձերին: Այս առումով «Խրատական թուղթը» լրացնում է հայ պատմագիրներին և իր ուրույն տեղը գրավում մոնղոլական արշավանքների ու տիրապետության առաջին տասնամյակների աղբյուրների շարքում:

Կրկին դիմելով Արևելյան Հայաստանի հայերին՝ Կոստանդին Բարձրբերդցին իր զարմանքն է հայտնում այն բանի կապակցությամբ, որ նրանք, չնայած ճաշակած են եղել արդեն Աստուծո ցասման գավազանի դեր ստանձնած մոնղոլների հարվածների սաստկությունը, սակայն ճիշտ ճանապարհի չեն եկել և շարունակում են մեղսասեր իրենց առօրյան:

Արժե ծանոթանալ նախաբանի այդ հատվածին: «Եւ այդ եւս առաւել հիացումն եւ մեծ զարմանք, - գրում է կաթողիկոսը,- որ այդպէս մոռացայք զպատուհասն, զոր կրեցիք՝ հարուածեալք եւ գանեալք գաւազանաւ ցասմանն Աստուծոյ, եւ տեսանէք աչաւք ձերովք զլերինս եւ զդաշտս ձեր, որ սակաւ մի յառաջ լի էին դիակոյտ ոսկերաւք սպանելոցն, եւ զայրս եւ զխորածորս, որ լցեալ էին փախստականաւք, եւ ուտէք եւ ըմպէք զհաց եւ զգինի ի գետնոյդ զոր տեսէք առոգեալ արեամբ սիրելեաց ձերոց, դուք որ ծովացուցէք զաշխարհդ ձեր մեղաւք եւ տեսէք զդա լցեալք արեամբ եւ արտա-

սոււարք: Եւ զի լոյս պատուիրանին տեառն եւ արէնք եկեղեցւոյ ոչ ծագէին ի սիրտս ձեր, վասն այնորիկ տեսէք զխարումն եկեղեցւոյ եւ զկոխումն եւ կողոպուտ սպասուց եւ պաշտելի եւ ահաւոր նշանից եւ աստուածային գրոց: Եւ ոչ սնուցանէիք զտղայս ձեր աստուածապաշտութեամբ եւ ուսմամբ տեառն, առին զնոսա ի տանց եւ ի գրկաց ձերոց, այլ եւ ի ծոցոյ սուրբ եկեղեցւոյ՝ զգնաելս արեամբ Քրիստոսի գառինսն, եւ տարեալ վաճառեցին յազգս եւ յաշխարհս հեռաւորս իբրեւ յանբան անասուն» (էջ 209ա-209բ):

Շարունակութեան մեջ Բարձրբերդցին արձանագրում է, որ ողորմածն Աստված «էարկ ի բարի կամս մեծագար զանին եւ իւր խաղաղասէր զաւրազխացն եւ զաւրացն, եւ արարին խաղաղութիւն մնացորդացդ ի ձեռն քրիստոսասէր եւ աղքատասէր պարոնին Աւագին» (էջ 209բ): Այս հատվածից պարզ է դառնում, որ մեջբերված նկարագրությունը վերաբերում է 1236 թվականի դեպքերին, որովհետեւ, ինչպես հայտնի է, Ավագն այդ թվին անձնատուր եղավ Չարմաղանին (Ջուրմազուն) և կրկին վերահաստատվեց իր կալվածքներում՝ հարկատու դառնալով մոնղոլներին և պարտավորվելով մասնակցել նրանց հետագա արշավանքներին: Հաջորդ տարին Ավագը մեկնեց մեծ զանի արքունիքը և, սիրով ընդունվելով, ետ ուղարկվեց Հայաստան: Չարմաղան զորավարը հրաման ստացավ երկրի իշխանությունը հանձնել Ավագին և նրա աջակցությամբ հնազանդեցնել մյուս իշխաններին (տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. Գ, Երևան, 1952, էջ 203-206):

Հայ ժողովուրդն, այսպիսով, ընկավ կուլտուրական ցածր աստիճանի վրա կանգնած քոչվոր մոնղոլների ծանր ու զարհուրելի տիրապետության տակ: Հայ ֆեոդալները, ընդունելով մոնղոլների գերիշխանությունը, սկսեցին գործակցել նրանց՝ «ի նեղելոցն եւ ի պահանջելն վասն իւրեանց շահելոյ» (Գանձ., էջ 349) և առաջվա նման «զրկէին եւ կողոպտէին զաղքատս եւ ի զրկանաց անտի գնէին հանդերձս մեծագինս եւ ազանէին, ուտէին եւ ըմպէին եւ մեծամեծս փքանային» (նույն տեղում, էջ 303):

Այն բանից հետո, երբ մոնղոլներն իրենց սուրը պատյանի մեջ դրին, Բարձրբերդցու կարծիքով Արևելյան Հայաստանի բնակչության համար ստեղծվեցին կյանքի մխիթարական պայմաններ. «Եւ դարձեալ կարկատեցայք եւ արմատ արձակեցիք եւ շինեցայք: Եւ մեք լսեցաք եւ մխիթարեցաք եւ արհնեցաք յԱստուած եւ զզանին եւ զիւր հեծելին բարեմտութիւնն, որ առ մեզ» (էջ 209բ-210ա): Պետք է կարծել, որ նա իր տեղեկությունները քաղում էր այնպիսի տեղեկատուներից, որոնք հայ ֆեոդալների բարօրությունը նույնացնում էին ժողովրդի բարօրության հետ:

Կաթողիկոսն անշուշտ գիտեր, որ մոնղոլներն անասելի ծանր հարկեր էին բարդել ժողովրդի վրա. «հարկդ ծանր է եւ խիստ», - գրում էր նա: Սակայն այդ ևս բացատրում էր ժողովրդի մեղքերի բազմութեամբ. «Եւ այլ վասն մեղաց է, զի կարկտիւ եւ երաշտով եւ խորշակով եւ մարախով պակասութիւն է ի լինել երկրիդ պտղաբերացդ, ուստի զհարկն ձեր վճարէք», - ասում էր նա խրատական իր թղթում՝ հավաստիացնելով, որ ժողովրդի վիճակը կբարւոքվի ոչ թէ մոնղոլների դեմ զենք վերցնելով, այլ պարկեշտ վարքով Աստուծո պատվիրաններին հետևելով և մոնղոլական դանի ու իր զորքերի կենդանութեան ու հաջողութեան համար աղոթելով:

Ժողովուրդը, սակայն, կաթողիկոսի նման չէր մտածում: Եւ 1249 թվականին Հյուսիսային Հայաստանի շրջաններում ու Վրաստանում մոնղոլական տիրապետութեան դեմ բռնկվում է ապստամբություն:

Ժամանակակից հայ և վրաց աղբյուրները չեն մանրամասնում այդ ապստամբությանը ժողովրդական խավերի մասնակցության փաստը: Գրիգոր Ակնեցիին նույնիսկ դեպքը պատմում է այնպես, որ իբր ապստամբություն չի էլ եղել, այլ Դավիթ Թագավորի արքունիքում հավաքված իշխանները կերուխումի ժամանակ, երբ բավական գինովցած էին, մտածել են միայն այն մասին, որ միասնական ուժերով մոնղոլների դեմ դուրս գալու դեպքում իրենք կարող են հաղթանակող լինել. («յորժամ հաշուեցան եւ համար արարին զօրացն Հայոց եւ Վրաց ասացին զիրեանցն յաղթող լինել ի վերայ զօրաց տաթարին»): Սակայն պատմիչի հավաստիացումներով այդ «ոչ թէ ուղորդ խորհեցանկամ խօսեցան, այլ առ կատականս» կամ «ոչ ուղորդ, այլ ընդ խաղս եւ ընդ կատակս»¹:

Վրաց և հայ իշխանները բանտարկվում և հազիվ ազատվում են մահվանից՝ մեծ փրկանք վճարելով, իսկ Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի շրջանները կրկին անգամ ասպարեզ են դառնում մոնղոլական զորքերի խժոժությունների²:

«Եւ ինքեանք (մոնղոլները) յարձակեցան ի կողմանս Վրաց, ի վերայ բազում գաւառաց, որք ապստամբ եւ որք ոչ, եւ զբազումս կոտորեցին եւ

¹ Մաղափայի աբեղա (Գրիգոր Ակնեցի), Պատմութիւն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 20-21: Այդ ապստամբության մասին տե՛ս նաև «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 148, Կիրակոս Գանձակեցի, էջ 303-305, Մխիթար Այրիվանեցի, էջ 67, «Մանր ժամանակագրություններ», I, էջ 42 (Ստեփանոս Եպիսկոպոսի «Տարեգրությունը»), «Մանր ժամանակագրություններ, II, էջ 140 (Անանիա Սեբաստացու «Ժամանակագրությունը»), Մելիսեթ-բեկ, Վրաց աղբյուրներ, էջ 57 և այլն:

² [Մանրամասն տե՛ս «Վրաց ժամանակագրություն», Երևան, 1971, էջ 93-101: հմբ.]:

զեւս բազմագոյնս գերի վարեցին, զարս եւ զկանայս եւ զմանկունսն գետամոյն առնէին անթիւ ի բազմութենէ. եւ այս գործեցաւ ի ՈՂԸ. (1249) թուականին Հայոց», - գրում է Կիրակոս Գանձակեցին (էջ 305):

«Անթիւս կոտորեցին եւ գերեցին գեօղս եւ ագարակս եւ գործեցին խայտառականս ի կանայս ի Հայս եւ աւելի յաշխարհն Վրաց», - լրացնում է նրան Վարդան Արեւելցին (էջ 148):

«...Ի գերելոյ եւ յաւարելոյ զաշխարհն ոչ դադարէին», - ասում է Գրիգոր Ակնեցի (էջ 21) և այլն:

Շատ արժեքավոր է նաև Կոստանդին կաթողիկոսի «Խրատական թղթի» տվյալը այս ապստամբության առնչությամբ մոնղոլների գործած վայրագությունների մասին: Նա գրում է. «Դարձեալ զայրացոյց Աստուած զբարս զարացոյ, որ առ ձեզ, եւ հանին զսուսերս ի պատենից եւ լարեցին զաղեղունս իրեանց եւ ծայրաքաղ արարին ի բազում տեղիս՝ զմարդ եւ զանասուն եւ զստացուածս, որպէս առ մեզ էհաս համբան» (210ա):

Բայց իր հոգևոր հոտի գործած մեղքերը կաթողիկոսի աչքին այնքան խոշոր են երևում, որ նրան թվում է, թե «դեռ ոչ արար ողորմածն Աստուած ըստ մեղաց մերոց եւ ոչ հատոյց զամենայն շարիան մեր, եւ հաշտեցան ընդ մեզ դարձեալ ի Տեառնէ յաշողեալ զարքն դանին, եւ կայք ի տունս եւ ի վանորայս եւ ի հայրենիս ձեր» (210ա):

Բավարարվե՞ք ձեր ունեցածով, աղերսում է Բարձրբերդցին, «մի՛ առնէք զմեզ ամաթով... եւ մի՛ մատնէք զանձինս ձեր աստէն կենաւք ի մեծամեծ փորձութիւն եւ յետ աստի կենացս անշիջանելի գեհենին եւ աններելի տանջանացն, այլ զգաստացարու՛ք եւ ի յուշ եւ ի խելս եկէք...» (էջ 211ա):

Այդ ճանապարհով միայն և ո՛չ անհնազանդությամբ ու ապստամբությամբ, կարծում է Բարձրբերդցին, ժողովուրդը մոնղոլ տիրապետողների բարյացակամությամբ կարող է նաև թեթևացնել տնտեսական իր ծանր վիճակը:

«Արդ, դուք մեզ լսեցէ՛ք, - գրում է նա, - եւ ի բարին դարձիք եւ ի ձեր պարկեշտ վարքն ըստ պատուիրանին Աստուծոյ, եւ մեք երաշխաւոր եմք, որ ամենայն ճշմարտութեամբ Աստուած առ ձեզ դառնայ՝ գթութեամբ եւ ողորմութեամբ յաւոց եւ յեղանակաց տարւոյ... եւ երկիր առատութեամբ տացէ ձեզ զպտուղ իւր, եւ դանին կամքն արձականայ եւ թեթևացուցանէ զմալն, զի սիրտ թագաւորաց ի ձեռին Աստուծոյ են, եւ նա է տուեալ զամենայն աշխարհս դանին եւ այլ է տալոց նմա, չպակասէ ոչինչ զձեր մալն թեթևացնելով: Ապա դուք զառաջի աղաւթք նմա եւ իւր զարացն արարէք, զի այն է մեր արէնքն, որ զոր Աստուած մեզ տէր եւ թագաւոր տացէ՛ յառա-

ջին աղավթքն մեր զնմա կենդանութիւնն եւ զաջողումն խնդրեմք, եւ այսաւր զնա է տուեալ եւ թող հանապազ զնա տա» (էջ 210բ):

Կոստանդին Բարձրբերդցու այս խրատները թելադրված չէին միայն քրիստոնեական բարեպաշտության և Աստուծո կողմից առաքված տերերին հնազանդորեն ծառայելու սկզբունքով: Չպետք է մոռանալ, որ ապստամբությունը բռնկվելուց մի տարի առաջ՝ 1248 թվականին, Հեթում թագավորն իր եղբայր Սմբատ Սպարապետին ուղարկել էր մոնղոլական մեծ դանի՝ Գոյուկի մոտ՝ հայտնելու համար իր հպատակությունը՝ հույս ունենալով, որ մոնղոլների օգնությամբ Կիլիկիան կկարողանա հաջողությամբ դիմադրել եգիպտական սուլթանությանը: Եվ բնականաբար, կիլիկյան արքունիքը և նրա քաղաքական շահերի ջատագով հայ կաթողիկոսությունը մոնղոլների հետ շահավետ դաշինք կնքելու մտադրությամբ ամեն կերպ պետք է ձգտեին շահել նրանց սիրտը հայերի նկատմամբ, ցույց տալ, որ հայ ժողովուրդն ամենուեք՝ և՛ բուն երկրում, և՛ Կիլիկիայում, մոնղոլների հնազանդ հպատակներն են ու նրանց տիրակալության ջերմ կողմնակիցները:

Հայտնի է միաժամանակ, որ, սկսած 1245 թվականից, եվրոպական մի շարք թագավորներ Հռոմի պապի գլխավորությամբ առաքելություններ էին հղում մոնղոլական զաների մոտ՝ փայտաբլուրով նրանց քրիստոնյա դարձնելու և նրանց զինական անպարտելի ուժը եգիպտոսի, Պաղեստինի ու Սիրիայի դեմ ծրագրվող խաչակրաց արշավանքին ի նպաստ օգտագործելու անիրականանալի հույսեր¹: Կիլիկյան հայկական թագավորությունը, իր սեփական քաղաքական ու տնտեսական շահերն ունենալով, շահագրգռված էր այդ ծրագրերի իրականացմամբ և իր հերթին ջանքեր էր գործադրում այդ ուղղությամբ: Արևելյան Հայաստանի բնակչության անհնազանդությունը մոնղոլներին՝ հասկանալի պատճառներով կարող էր վնաս բերել Կիլիկիայի և նրա եվրոպական դաշնակիցների քաղաքական ու տնտեսական շահերին:

Այս պատմական հանգամանքներն ի նկատի ունենալով միայն հնարավոր է լինում բացահայտել Կոստանդին կաթողիկոսի խրատների քաղաքական դրդապատճառները:

Բայց հայոց կաթողիկոսը, որպես եկեղեցու գլուխ, ուներ նաև իր նկատառումները:

Հայ ժողովրդի կրած բոլոր տառապանքները բացատրելով ժողովրդի իսկ «գործած» աններելի հանցանքներով քրիստոնեական պատվիրաննե-

¹ Տե՛ս Հով. Հակոբյան, Ուղեգրություններ, հտ. Ա, Երևան, 1932, էջ 1-3:

րի խախտումով, կաթողիկոսը ձգտում էր ամրապնդել ժողովրդի հավատը, բարձրացնել եկեղեցու հեղինակությունը, վերականգնել քրիստոնեական բարոյականության ու աստվածավախության խախտված սկզբունքները, մի խոսքով՝ «դարձի բերել» Աստուծո ճանապարհից շեղված իր հոգևոր հոտին:

Հենց այս նպատակին են ուղղված «Խրատական թղթի» կանոնները, որոնք պատմական, ազգագրական ու կենցաղագրական զգալի հետաքրքրություններ են ներկայացնում:

Կանոններից մի քանիսը 1246 թվականին Հայաստան առաքված «Սահմանք կանոնականքից» են քաղված ու վերաշարադրված փոքր-ինչ համառոտվելով: Դրանք են Ա, է, ԺԱ, ԺԳ, ԺԷ կանոնները, որոնք նույն հերթականությամբ համապատասխանում են «Սահմանք կանոնականքի» է, ԺԵ, ԺԹ, ԺԴ, ԺԸ կանոններին:

Այդ կանոնների նմանություններն ու տարբերությունները պարզ ցույց տալու մտադրությամբ ստորև զուգահեռաբար մեջբերում ենք դրանք ամբողջությամբ կամ հատվածաբար:

«Սահմանք կանոնականք»

(Կ. Գանձակեցի, Պատմություն,
էջ 288-294)

է. Զպասկն ընտրութեամբ արասցեն՝ վեց ծննդովք հեռացեալ յազգակցութենէ արեան. փեսայն մի պակաս քան զչորեքտասան ամն եւ հարսն քան զերկոտասան (էջ 289-290):

ԺԵ. ...եւ յամենայն տեղիս՝ ի մեծ եւ ի փոքր յիշոց աւագ դնեն՝ ի դարպաս, ի ֆաղաֆ, ի գիւղս եւ յազարակս, եւ զանօրէն յիշոցասացսն, զբարկութիւնն Աստուծոյ շարժողսն եւ զաններեղի անօրէնսն, որ անարգեն զհաւատսն, զստեղծող, զկնունֆ, զհրեշտակ, զֆահանայ, զբերան, զերես զգերեզման եւ զայլ այսպիսիս զնոր բուսեալ շարիսդ՝ զայնպիսեացն յգեղուսն հատցեն եւ կամ ծա-

«Խրատական թուղթ»

(Կենինգրադի Հանր. գրադարան, ձեռագր. բաժին, հայերեն ձեռ. ֆոնդ, նոր շարք, № 37, էջ 211բ-214բ)

1) Եւ առաջին այս եղիցի ուսումն, որ ամուսնաւորքն հինգ ազգաւք հեռի լինին յարեան ազգակցութենէ եւ ի վեցերորդին պսակին, քան զԺԳ տարին պակաս չինի հարսն եւ փեսայն՝ քան զԺԴ... (էջ 211բ):

2) է. Յիշոցաւագ դնել յամենայն տեղիս ի մեծ եւ ի փոքր՝ անողորմ տուգանով եւ խրատով, եւ առաւել որ հաւատ կամ բերան կամ երես անարգէ կամ ֆահանայ կամ գերեզման՝ զլեզուն ծակեն եւ լար անցուցանեն եւ ի շուրջ ածեն ծեծելով եւ տուգանֆ առնուն եւ ընդ աղֆատացն ի մալն տան (էջ 213ա):

կեսցեն եւ լար ի ներս ածեցեն եւ նախատանօք ի շուրջ ածցեն օր մի, եւ ըստ գոյին տուգանս առցեն եւ յաղփատս տայցեն (էջ 292):

«ԺԹ. Ժողովրդականքն յօժարութեամբ եւ աղաչանօք տացեն զհասս քահանայիցն յամենայն արմատոց պտուղս եւ զկարգեալ բաժին մատաղին եւ պսակին ընծայիւք եւ թաղմանն հանդերձ եւ ժամու դարմ ոչ գին պատարագին, այլ երիցուն հանդերձի եւ կերակուրի, որ աղօթից եւ պատարագի պարապի յեկեղեցին (էջ 292-293)»:

ԺԴ. Առաւել ջան տարցեն եպիսկոպոսք եւ քորեպիսկոպոսք զպոռնիկսն եւ զշնացողսն, զհմայս եւ զամենայն յանցաւորսն՝ գեհենին երկիւղիւ ի դարձ ածել: Իսկ զանդարձսն մարմնաւոր պատուհասիւ եւ հոգեւորաւ խրատել եւ տուգանել... (էջ 291):

ԺԸ. Քահանայն ի տարւոջն յեկեղեցին ժողովեսցէ զարսն առանձինն եւ զկանայսն առանձինն եւ որիշ զկուսան աղջկունսն եւ որիշ զտղայսն զմանրէրսն եւ ըստ իւրաքանչիւր պատշաճի խրատեսցէ աղաչանօք եւ սաստիւ, եւ իմասցի իւրաքանչիւրոցն զվարքն, եւ դիտեսցէ հանապազ. եւ թէ ինքն չէ բաւական՝ ի ձեռն այլ կատարելոյ արասցէ, որպէս ասէ սուրբն Աթանաս յիւր կանոնքն (էջ 292):

Նման կանոնների այս համադրությունը ցույց է տալիս, որ «Խրատական թուղթը» գրված է ավելի դյուրըմբռնելի, ժողովրդական-խոսակցական

3) ԺԱ. ...Պսակին եւ թաղմանն եւ մատաղին զինչ արէնքն է, տացեն ժողովուրդքն երիցուն, եւ խաչահամբոյր եւ յամենայն արդեանց պտուղ՝ բաժին Աստուծոյ, որ այլ ամենայն ստացուածքն արհնութեամբ լցցին... (էջ 213բ):

4) ԺԳ. Կախարդ եւ գող եւ պոռնիկ եւ բող եւ յիշոցասաց կամ դառնան ի շարէն, կամ հալածին անողորմ, զի մի՛ յանմեղացն վերայ ածցեն զբարկութիւնն Աստուծոյ (էջ 214ա):

5) ԺԵ. Գ անգամ ժողովէ ի տարին երէցն յեկեղեցին որիշ որիշ զարս եւ զկանայս եւ զկուսան աղջկունս եւ զկուսան կտրձերն, եւ հարմար հասակացն եւ վարուցն խրատ տացէ, զի ամէն հասակի եւ վարուց եւ բարուց խրատ ուրիշ է (214ա):

լեզվով, և բացի այդ, կանոններն այստեղ փոքր-ինչ համառոտված են և դարձված ավելի պարզ ու նպատակասլաց:

Իմաստի տեսակետից էական տարբերություններ «Սահմանք կանոնականքի» և «Խրատական թղթի» համադրված կանոնների միջև չկան՝ ի բաց առջալ 2-րդ օրինակի վերջավորություն: Ինչպես տեսանք, «Սահմանքի» 15-րդ կանոնով առաջարկվում է հիշոցատուներին տուգանել և ստացված դրամը բաժանել աղքատներին («եւ ըստ գոյին տուգանս առցեն եւ յաղքատս տայցեն»), իսկ «Խրատական թղթի» համապատասխան 7-րդ կանոնով սահմանված է գանձվող տուգանքը տալ մոնղոլներին՝ ի դիմաց աղքատների եկամտահարկի-մալի («եւ տուգանք առնուն եւ ընդ աղքատացն ի մալն տան»): Ուշագրավ այս տարբերությունն ինքնին վկայում է մոնղոլների կողմից գանձվող հիմնական հարկի ծանրության մասին: 1251 թվականին մալը գանձվում էր այնպիսի բարձր չափերով, ու վճարել անկարող չքավորները ենթարկվում էին այնպիսի պատիժների, որ նրանց փոխարեն մալը վճարելն ու նրանց մոնղոլական հարկահանների ձեռքից ազատելն ինքնին համարվում էր բարեգործություն, ճիշտ այնպես, ինչպես մի քանի տարի առաջ ողորմություն բաշխելը:

«Խրատական թղթի» մյուս 13 կանոնները (Բ, Դ, Ե, Զ, Թ, Ժ, ԺԲ, ԺԳ, ԺԴ, ԺԵ) նվիրված են այնպիսի հարցերի, որոնք «Սահմանք կանոնականքում» կա՛մ բնավ չեն շոշափվել, կա՛մ հատուկ կանոնի նյութ չեն դարձել: Դրանք են. խրատ՝ նորածին մանկանց սնուցանելու և աստիճանաբար քրիստոնեական հավատքի սկզբունքներն ու աղոթքները նրանց ուսուցանելու մասին (Բ), կնոնքի (Դ), խոստովանության (Ե), հաղորդության (Զ) և պահքի մասին (Ը), դյուրություն, երազահանության ու գուշակությունների, նրանցից հեռու կենալու անհրաժեշտության մասին, «զի այսպիսիքս աւտար են ի կրանից քրիստովնէից» (Ժ, ԺԱ): Մեռածների թաղման ժամանակ մազ կտրելու, երես ու ձեռք կեղեքելու, լալական վարձելու և նման սովորությունները՝ որպես «հեթանոսաց եւ ոչ քրիստովնէից» սովորություններ մերժելու մասին (ԺԲ): Շաբաթ և կիրակի օրերը եկեղեցի գնալու անհրաժեշտության և այնտեղ «լուծեամբ եւ երկիւղիւ» աղոթելու (ԺԳ) և այն մասին, որ կարողներն և ունևորները տկարներին չպետք է բռնադատեն, «զի մի՛ տրտմեցուցեն զԱրարիչն նոցա» և այլն, (ԺԴ) միմյանց զրկելուց, խաբելուց և նման ակտերից զերծ մնալու անհրաժեշտության (ԺԵ), և վերջապես՝ քահանաների ընտրության մասին (ԺԸ, Թերի):

Թվարկված կանոններից պատմական ու ազգագրական առումով հատուկ հետաքրքրություն են ներկայացնում Թ, Ժ, ԺԲ և ԺԵ կանոնները, որոնք արժանի են ավելի մանրամասն ծանոթացման:

Թ և ժ կանոնները հնարավորություն են տալիս ծանոթանալ հայ ժողովրդական հավատալիքների և սնահավատությունների մի բնագավառի հետ, որը բավարար չափով չի լուսաբանվում միջնադարյան հայտնի սկզբնաղբյուրների միջոցով: Ստորև մեջբերում ենք այդ կանոնների բնագրերը.

«Թ. Գարի եւ ալիւր եւ աւազ եւ ուլուն եւ ջուր մի՛ դիւթեսցեն. եւ խտրութիւն հաւատոց (ուղղելի է՝ հաւոց) թռչման եւ կռչման եւ մարմնոյ խաղալոյ եւ երազոյ եւ ձայնի կրակոյ եւ դրան եւ սողնոյ ինչ երեւելոյ ի տանն, զի այսպիսիքս աւտար են ի կրանից քրիստովնէից, եւ մի՛ ոք իշխեսցէ առնել, զի մեծ մեղք են» (213բ):

Այսպիսով, պարզվում է, որ հայ ժողովրդի մեջ տարածված են եղել գուշակման ու երազների մեկնության զանազան եղանակներ: Գուշակություններ են արել գարու, ալյուրի, ավազի հատիկների, ինչպես նաև ուլունքների միջոցով ցրելով դրանք և իմաստավորելով հատիկների պատահական դասավորությունը: Հմայություններ են արել նաև թռչունների թռիչքի ու ձայների միջոցով, մարմնախաղություններ, կրակի ու դրան արձակած ձայներից, որևէ սողունի երևալուց և այլն:

Ժ կանոնում ասված է. «Ի քաջախաւս եւ յերազահան մի ոք երթիցէ եւ լեկրոտի մատն (իմա՝ մաւտն, մօտն) աղի մի՛ իշխեսցեն ածել եւ մի՛ ի բանից նոցա խաբեսցին եւ մի՛ հաւատասցին բնաւ» (էջ 213բ):

ՆՀԲ-ի հեղինակներին հայտնի են «քաջախօս» բառի հետևյալ իմաստները. «քաջաբան, քաջալեզու, համարձակախօս, քաղցրախօս». դրանցից և ոչ մեկը, սակայն, չի հարմարվում կանոնի բովանդակությանը: Ուստի պետք է ենթադրել, որ «քաջախօս» բառը հնում ունեցել է նաև «ոգիների, քաջքերի կամ դեերի հետ խօսող, կախարդ, պատգամախօս» նշանակությունը՝ ելնելով այն բանից, որ «քաջ» կամ «քաջք» բառն իրոք ունի «դիք, ցնորք, ոգի, այս, դեւ» նշանակությունները (հմմտ. նաև «երազախօս» և այլն):

«Լեկրոտ» բառը ցարդ հայտնի էր միայն Կիրակոս Գանձակեցու «Պատմությունից»: «Վասն Դաւթի մոլորեցուցչի» գլխում նա պատմում է, որ «Եւ լեկրոտք (Մոսկվայի և Թիֆլիզի հրատարակության մեջ սխալմամբ՝ լեկրորդք), որ երթային առ նա, ասէր, թէ՛ խաղացէք առաջի իմ եւ պարեցէք, եւ նոքա առնէին այս յօժարութեամբ, քանզի այս ազգ դիւաց ախորժեն զխաղ եւ զպար» (Կ. Գանձակեցի, Վենետիկ, էջ 183, Թիֆլիս, էջ 309): Հ. Աճառյանը, ձեռքի տակ ունենալով միակ այս վկայությունը իր «Արմատական բառարանում» (III, էջ 187), «Լեկրոտ» բառին տվել է այսպիսի բացատրություն՝ «մի տեսակ դիվահար, որ միշտ ուզում է պարել»:

«Խրատական թղթի» քննարկվող կանոնը հնարավորություն է տալիս

ճշտել այս բառի իմաստը. ըստ այդմ՝ «լեկրոտ» էին կոչվում այն գուշակները, որոնք երաժշտության տակ հափշտակությանը պարում էին մինչ ուշաթափության աստիճան և ապա ինքնամոռացության մեջ սկսում պատգամախոսել: «Լեկրոտ» բառին այսպիսի իմաստ վերագրելուց հետո միայն հասկանալի կդառնա կանոնի վերջավորությունը, որտեղ ասված է. «մի՛ ի բանից նոցա խաբեսցին եւ մի՛ հաւատեսցեն բնաւ»:

ՓԲ կանոնով կաթողիկոսը պատվիրում է. «Ի վերայ մեռելոյ մազ մի՛ կտրեսցեն եւ սեաւ մի՛ արասցեն եւ զբրեսս մի՛ կեղեքեսցեն եւ զձեռս եւ լալական մի՛ վարձեսցեն եւ խաւարարգել մի՛ լիցին, զի մի՛ զինքեանս եւ զմեռեալս վնասցեն եւ ամալթով լինին յԱստուծոյ» (էջ 214ա):

Հեթանոսական ժամանակներից պահպանված թաղման ծեսերի ու արարողությունների մասին ուշագրավ վկայություններ են պահպանված հայկական մի շարք աղբյուրներում¹:

Մեծ հատաքրքրություն է ներկայացնում «խաւարարգել» լինելու սովորույթը, որն արտահայտություն է գտել նաև «Սասնա ծռեր» ժողովրդական էպոսի լավագույն պատումներից մեկում (շատախցի Մանուշակ Զաղոյանի պատումը): Մհերի կինն ամուսնու սպանությունից հետո ուխտում է. «Ձուր մաչ եմ օջիսին եմ տրղեն շիւնի, հօր հեֆ առնի, ես երեւալոս չկամ» և իրոք «արեւալոս» չի դուրս գալիս, «խաւարարգել» է լինում, մինչև իր Դավիթ որդին կոտորում է թշնամիներին ու բերում է իր հոր սպանող Վրհաբի գլուխը. այնժամ միայն «անու մեր նոր հանոր տնեն էլաւ տուս» (Սասնա ծռեր, հտ. Ա, Երևան, 1936, էջ 707-720):

«Խրատական թղթի» կանոնների շարքում պատմական ու ազգագրական իր նշանակությանը հատուկ տեղ է բռնում նախավերջին կանոնը: Նախ ծանոթանանք նրա բնագրին.

«Ի գրկանաց եւ ի խաբելոյ պատրաստ կայցեն քրիստովնեայքն եւ ի նենգելոյ զիրեարս՝ արք եւ կանայք, հաղկիցք եւ խապկիցք եւ զինաւորակիցք եւ արուեստակիցք, գնաւղք եւ վաճառաւղք, զի որ մարմնական իրաւք զրկէ բռնութեամբ կամ խաբելով, զինքն հոգւով զրկէ եւ յաւիտենական կենաւքն» էջ 214բ):

Կանոնի իմաստը մեկնության կարոտ չէ: Կաթողիկոսը զգուշացնում է հոգևոր իր հոտին, որ հանդերձյալ կյանքում կպատժվեն բոլոր անձինք՝ լինեն նրանք ամուսիններ, զինվորականներ, գնողներ, արվեստակիցներ (համքարներ), վաճառողներ կամ գնողներ, «հաղկիցք ու խապկիցք», ովքեր փոխադարձաբար կխաբեն ու կնենգեն միմյանց:

¹ Հմմտ. Փավստոս, IV, գլ. ԺԵ, «Կանոնգիրք Հայոց», Գր. Լուսավորչի կանոն ԺԷ, Աթանասի ԼԶ, Սահակի ԼԳ, Շահապիվանի ԺԱ և այլն կանոնները (տե՛ս նեո. № 6409, էջ 48բ, 54բ, 58ա, 70բ, 79բ և այլն):

Բացատրության կարոտ են միայն կանոնի «հաղկիցք եւ խապկիցք» տերմինները:


Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանում» կա կոռու բարբառից վերցված «հախկ» բառը՝ «ընկերակից գութանավորների ամեն մեկի վարելիք հողը» նշանակությամբ (էջ 383): Ուստի դժվար չէ եզրակացնել, որ Հայաստանի որոշ շրջաններում «հաղկից» էին կոչվում հարակաշները, այսինքն՝ այն գյուղացիները, որոնք, շունենալով համապատասխան քանակությամբ քաշող անասուն ու գյուղատնտեսական գործիքներ, միավորվում էին, կազմում ընկերակիցների խմբեր և միասնական ուժերով ու միջոցներով վար ու ցանք անում:

Ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում «խապկիցք» տերմինը: Գյուղական այն ընտանիքները, որոնք փոքր քանակությամբ կաթնատու անասուններ ունեին, օրվա ընթացքում իրենց ստացած չնչին կաթով անկարող էին յուղ ու պանիր պատրաստել: Դարերի գործունեության փորձով ժողովուրդը գտել էր այդ գրությունից դուրս գալու եղանակը: Նույն վիճակի մեջ գտնվող գյուղական մի քանի ընտանիքներ փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում էին օրվա ընթացքում ստացած իրենց կաթը որոշյալ չափ ու ամանով, հերթականությամբ տալ ընտանիքներից մեկին: Ամանը, որով փոխ էին տալիս կաթը, կոչվում էր ղաբ կամ խաբ, խապ (տաճկ. զաճ-աման բառից), որից և ընկերակցության անդամները՝ խապկիցք: Հայ ժողովրդական առակներից մեկը նվիրված է հենց նենգող «խապկիցքերին»: Ընդամենը տասը այժմ ունեցող այրի մի կին, լինելով խապկից, «յամէն օր շերեփ մի ջուր լնոյր ի կաթն եւ ի խափ (տարբերակ՝ խապ, խաբ) տայր»: Իր այժարած որդու «է՞ր առնես զայդ վնասդ» հարցին մայրը տալիս է այսպիսի պատասխան. «Որդի, մեր կաթնս քիչ է, այնոր համար առնեմ, թէ քիչ մի աւելի լինի մեր կաթն, որ մեզ ձմռանս թացան լինի» (Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 238-239):

Վերոհիշյալով, անշուշտ, չի սպառվում Կոստանդին կաթողիկոսի «Խրատական թղթի» պատմական և ազգագրական նշանակությունը: Այն գրված էր Արևելյան Հայաստանի բոլոր բնակավայրերում ընթերցվելու համար, ուստի թղթի լեզուն չէր կարող ժողովրդական լայն զանգվածներին անհասկանալի գրաբարը լինել: Լեզվաբաններին թողնելով թղթի լեզվի մասնագիտական քննությունը՝ նշենք միայն, որ միջնադարյան աշխարհաբարի տարրերը գերակշռում են այնտեղ: Կարելի է մեջբերել բազմաթիվ նախադասություններ ու դարձվածքներ, որոնք ուղղակի գրված են միջնադարյան աշխարհաբարով: Օրինակ. «Արդ, պատե՞հ է, որ այսպիսի ազգն եւ անբիժ եւ անարատ հաւատն եւ ամենեւին մաքուր ի հերձուածոյ անպէս ծուլացեալ

լինի եւ սգիտացեալ, որ չգիտենայ զիւր պատին եւ շունենայ սահման խոստովանութեան եւ հաղորդութեան եւ եկեղեցագարդութեան եւ քահանայասիրութեան եւ Աստուծոյ պտղաբերութիւն, զոր աստուածապահ թագաւորն մեր եւ կաթողիկոսն եւ թագաւորութիւն՝ ամենայն եպիսկոպոսաւք եւ մեծամեծաւք յառնում են եւ այլ մերձակայ քրիստովնեայքս, ուր մեր եպիսկոպոսներս ի հասանել են՝ ունին Աստուծոյ շնորհաւքն, եւ դուք, ուր այն ամենայն աստուածագործ նշանքն եղեն, շունիք» (էջ 208բ-209ա) և այլն:

«Խրատական թղթի» բնագիրը հրատարակում ենք Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանի հայերեն ձեռագրերի Նոր շարքի № 37 ձեռագրի համապատասխան էջերի լուսանկարների հիման վրա՝ օգտագործելով նաև Հ. Զանփոլադյանի կատարած ընդօրինակութիւնը:



«Խրատական թղթի» բնագրի առաջին էջը:

[ԽՐԱՏԱԿԱՆ ԹՈՒՂԹ ԿՈՍՏԱՆԴԻՆԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ]

/208ա/ Խրատական թուղթ ի ձեռն մեր վարդապետին Վարդանայ, որպէս թէ ես եմ եկեալ եւ ձեզ առաջի զերեսս ի գետինն եղեալ աղաչեմ արտասուաւք զմի մի իւրաքանչիւր ի ձէնջ և զանձն իմ փոխան ասեմ, որ զայդ շափաւոր և դիւրագործ արէնքդ առնէք յամենայն կարողութենէ ջանացեալ, վասն ձեր հոգւոյ եւ մարմնոյ աւգտի եւ շահու եւ փրկանաց ի պատուհասէ փորձանաց, եւ մեզ՝ ի պարծանաս և յանդատապարտութիւն, որ ընդ ձեր համարս պարտիմք տալ Աստուծոյ: Եւ արդ, ի յեւթնհարիւր թուիս մերոյ տումարիս եւ յ՛. (30) հայրապետութեանս մերոյ՝ յորում ակն ունէաք ողորմութիւն ինչ գտանել յԱստուծոյ. և բարի համբաւ լսել զձէնջ, մեք զհակառակն հասկացաք, թէ բնաւ չէք լսել աղաչանացս մեր եւ չէք արարեալ. եւ բազմապատկեալ են եւ շատացեալ ամենայն չարիք եւ մեղաց տեսակք, զոր յառաջ սակաւ անէիք: Այլ ծուլացեալք էք ի յուսմանէ և յաղաւթից և ի ժամատեղաց եւ էք իբրեւ զանբան անասունք՝ չգիտելով զաւրէնս քրիստովնէից, զպատիւ հաւատոյս Հայաստանեայց զարեգակնափայլ եւ զճառագայթաւէտ կրանս սուրբ վաստակաւորին Գրիգորի: Եւ զայս ցեղ մեծ եւ զպարծելի եւ զնշանաւոր ազգս Հայոց, զոր Քրիստոս Աստուած /208բ/ յառաջ քան զխաչիւն ողջունեաց եւ արհնութեան թուղթ գրեաց, եւ Ե. (5) առաքեալ ի սուրբ աշակերտաց Իւրոց ի Հայք առաքեաց եւ ապա զսուրբ տիկնայսն՝ զսուրբ Հռիփսիմեանքն յԱրեւմտից յղարկեաց՝ սուրբ Աստուածածնին միջնորդիւ խաւսեցեալ, եւ Վիրապին սքանչելեաւքն դարձոյց զՀայք առ ինքն: Եւ ինքն իսկ՝ Թագաւորն փառաց Քրիստոս իջեալ ի բարձանց եւ ոսկի ուռամբ շարդէր զգլուխ բանսարկուին եւ բացեալ զանդունդս արկանէր ի տարտարոսան զայն, որ չկամէր թողուլ զՀայք ի ձեռաց: Եւ հրեղէն Աջովն իւրով ի վէմս քանդակեալ տար գիր Հայոց՝ մեծարելով քան զազգս ամենայն: Եւ այսպէս ինքնածագ է հիմնարկու հաւատոյս Հայաստանեայց եւ ոչ մարդ որ:

Արդ, պատե՞հ է, որ այսպիսի ազգն եւ անբիծ եւ անարատ հաւատն եւ ամենեւին մաքուր ի հերձուածոյ այնպէս ծուլացեալ լինի եւ տգիտացեալ, որ չգիտենա զիւր պատիւն եւ շունենա սահման խոստովանութեան եւ հաղորդութեան եւ եկեղեցազարդութեան եւ քահանայասիրութեան, եւ Աստուծոյ պտղայբերութիւն, զոր աստուածապահ թագաւորն մեր եւ կաթողիկոսն եւ թագաւորութիւն՝ ամենայն եպիսկոպոսաւք եւ մեծամեծաւք յառ /209ա/նում են, եւ այլ մերձակայ քրիստովնեայքս, ուր մեր եպիսկոպոսերս ի հասանել են՝ ունին Աստուծոյ շնորհաւքն, եւ դուք, ուր այն ամենայն աս-

տուածագործ նշանքն եղեն, շունիք: Եւ այդ եւս առաւել հիացումն եւ մեծ վարմանք, որ այդպէս մոռացայք զպատուհասն, զոր կրեցիք՝ հարուածեալք եւ գանեալք գաւազանաւ ցասմանն Աստուծոյ. եւ տեսանէք աշարք ձերովք զլերինս եւ զգաշտս ձեր, որ սակաւ մի յառաջ լի էին դիակոյտ ոսկերաւք սպանելոցն, եւ զայրս եւ զխորածորս, որ լցեալ էին փախստականաւք, եւ ուտէք եւ ըմպէք գհաց եւ զգինի ի զգետնոյդ, զոր տեսէք առոգեալ արեամբ սիրելեաց ձերոց: Դուք, որ ծովացուցէք զաշխարհդ ձեր մեղաւք եւ տեսէք զգա լցեալ արեամբ եւ արտասուաւք, եւ զի լոյս պատուիրանին Տեառն եւ արեւնք եկեղեցոյ ոչ ծագէին ի սիրտս ձեր՝ վասն այնորիկ տեսէք զխարումն եկեղեցոյ եւ զկոխումն եւ զկողոպուտ սպասուց եւ պաշտելի եւ ահաւոր նշանից եւ աստուածային գրոց: Եւ ոչ սնուցանէիք զտղայս ձեր աստուածապաշտութեամբ եւ ուսմամբ Տեառն՝ առին զնոսա ի տանց եւ ի գրկաց ձերոց, այլ եւ ի ծոցոյ սուրբ եկեղեցոյ՝ զգնեալս արեամբն Քրիստոսի զգառինսն, եւ տա /209բ/րեալ վաճառեցին յազգս եւ յաշխարհս հեռաւորս իբրեւ զանբան անասուն: Եւ շատ եւս այն էին, որ ոչ գիտէին զշար եւ զբարի եւ ոչ զայն, եթէ ու՞մ որդիք իցեն եւ կամ յորմէ՞ ազգէ եւ աշխարհէ: Եւ որք գիտենն եւ յիշեն՝ եւս ողորմելի, զի կարաւտին ծնաւդաց եւ ազգայնոց, տանից եւ բարեկենդանաց եւ արինաց քրիստոնէութեան, եկեղեցոյ եւ հաղորդութեան. եւ ի խորոց սրտէ հառաչեն դառնագոյն հեծեծանաւք եւ ոչ հասանեն վասն իմ մեղացն առաւել քան զձեր, որ վարդապետութեամբ այսպիսի աւուրց դիպեցայ եւ ժամանակի դառնագունի՝ տեսանել եւ լսել զկսկիծ եւ զաղէտ իմոցդ աղեաց եւ անդամոց:

Եւ ի վերայ այնորիկ, զի զաւրացաւ ողորմութիւնն Աստուծոյ մեծին ի վերայ մեր, եւ էարկ ի բարի կամս մեծագաւր դանին եւ իւր խաղաղասէր զաւրագլխացն եւ զաւրացն, եւ արարին խաղաղութիւն մնացորդացդ ի ձեռն քրիստոսասէր եւ աղքատասէր պարոնին Աւագին, որ զիւր կեանքն ձեզ փոխան երեստ: Եւ դարձեալ կարկատեցայք եւ արմատ արձակեցիք եւ շինեցայք: Եւ մեք լսեցաք եւ մխիթարեցաք եւ արհնեցաք զԱստուած եւ զզանին եւ զիւր /210ա/ հեծելին բարեմտութիւնն որ առ մեզ:

Եւ վասն զի որպէս արժանն էր չեթող ամենայն ոք զիւր ճանապարհն շար եւ մեղաց սովորութիւնն, դարձեալ զայրացոյց Աստուած զբարս զաւրացդ որ առ ձեզ, եւ հանին զսուսերս ի պատենից եւ լարեցին զաղեղունս իւրեանց, եւ ծայրաքաղ արարին ի բազում տեղիս զմարդ եւ զանասուն եւ զստացուածս, որպէս առ մեզ էհաս համբաւն: Եւ ընդ կապանս եւ եռանդն մահու անցուցին երկիւղիւ զիշխանս երկրիդ, եւ մեծաւ հայրենի եւ գթասիրտ պարոն Աւագն յետ այնորիկ վախճանեցաւ, եւ շիջաւ ճրագն վառ:

Բայց դեռ ոչ արարողորմածն Աստուած ըստ մեղաց մերոց եւ ոչ հատոյց զամենայն շարիսն մեր, եւ հաշտեցան ընդ մեզ դարձեալ ի Տեառնէ յաջողեալ զարքն զանին, եւ կայք ի տունս ի եւ վանորայս եւ ի հայրենիս ձեր, եւ եկեղեցիք են ի ձեզ տեղիք աղաւթից եւ պատարագաց ի յիշատակս մեռելոց եւ ի սնունդ եւ ի փրկութիւն կենդանեացդ: Ի վերայ այդորիկ արհնութիւն եւ գոհութիւն, պատիւ եւ փառք անձառ սիրոյն եւ գթութեանցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւիտեանս յաւիտենից:

Եւ թէ հարկդ ծանրէ եւ խիստ՝ եւ այլ վասն մեղաց է, զի կարկտիւ եւ երաշտով եւ խորշակով եւ մարախով պակասութիւն /210բ/ է ի լինել երկրիդ պտղաբերացդ, ուստի զհարկն ձեր վճարէք: Արդ, դուք մեզ լսեցէք եւ ի բարին դարձիք եւ ի ձեր պարկեշտ վարքն ըստ պատուիրանին Աստուծոյ՝ եւ մեք երաշխաւոր եմք, որ ամենայն ճշմարտութեամբ Աստուած առ ձեզ դառնայ գթութեամբ եւ ողորմութեամբ յաւոյց եւ յեղանակաց տարւոյ, բարեխառնութեամբ երկինք երկնաւորաւքն տացէ զքաղցրութիւն իւր ի վերա ձեր, եւ երկիր առատութեամբ տացէ ձեզ զպտուղ իւր, եւ զանին կամքն արձականայ եւ թեթեւացուցանէ զմալն, զի սիրտ թագաւորաց ի ձեռին Աստուծոյ են, եւ նա ի տուեալ զամենայն աշխարհս զանին եւ այլ է տալոց նմա, չպակասէ ոչինչ զձեր մալն թեթեւացնելով¹: Ապա դուք զառաջի աղաւթք նմա եւ իւր զարացն արարէք, զի այն է մեր արէնքն, որ զոր Աստուած մեզ տէր եւ թագաւոր տացէ՝ յառաջին աղաւթքն մեր զնմա կենդանութիւնն եւ զաջողումն խնդրեմք, եւ այսաւր զնա է տուեալ եւ թող հանապազ զնա տա: Զի ուստի՞ այնպիսի շարատեաց եւ մեղսատեաց իշխանութիւն եւ բարեսէր եւ լաւասէր, զի մեր արէնքն այլ այն է, որ յիշոց բնաւ չգիտեն եւ զգողութիւն եւ պոռնկութիւն մարդոյ եւ զբողութիւն /211ա/ արամբի կնոջ ատեն եւ զնենգութիւն եւ զստախաւսութիւն եւ զկեղծաւորութիւն եւ զամենայն շարութիւն մարդոյ:

Եւ արդ, ես հոգեւոր հայրս ձեր եւ հայրապետս, որպէս թէ ի ծունկս իջեալ առաջի ձեր՝ մեծի եւ փոքու, մաղթեմ արտասուաւք՝ բարեխաւս ունելով առ ձեզ զարիւն եւ զքրտունս եւ զվարս եւ զվաստակ առաջի հայրապետացն սրբոց եւ քաջ նահատակացն, եւ զիմ ձերացեալ հասակ եւ զալիս առաջի ձեր ընկենում եւ այնպէս աղաչեմ մի՛ առնէք զմեզ ամաւթով եւ դատապարտ առաջի ատենին Աստուծոյ, որ պահանջելոց է յինէն եւ յայլ առաջնորդացն ձերոց՝ զհամարս կենաց եւ վարուց ձերոց, եւ մի՛ մատնէք զանձինս ձեր աստէն կենաւք ի մեծամեծ փորձութիւն եւ յետ աստի կենացս

¹ Բնագրում շքեթեացնելով:

անշիջանելի գեհենին եւ աններելի տանջանացն, այլ զգաստացարուք եւ ի յուշ եւ ի խելս եկէք եւ ի գիտութիւն ճշմարտութեան, եւ ի բաց հանէք զամենայն բիծ եւ զարատ յանձանց ձերոց եւ զտեսակ մեղաց, որ արտաքո պատուիրանին մտեալ է ի ձեզ:

Եւ յառաջ զոր յղարկեցի առ ձեզ կարճ բանիւ զմեր սուրբ հարցն զխրատ եւ զուսումն, թէ որպէս պարտ է լինել քրիստով /211բ/նին, զոր մինչ ի մեզ պահեալ է մեր ազգս, եւ ի մեր ժամանակս լսեմք, թէ ի մոռացմունս եղեալ յաղքատութենէ եւ յանպարապութենէ եւ առաւել ի մեր ծուլութենէ, որ չենք զգուշացուցել եւ չենք ասացել եւ ամալթով ենք յԱստուծոյ եւ ի ձեզանէ: Արդ, դարձեալ յուշ առնենք ձեզ, զոր վերստին գրեցաքն, որ ով գիտէ՝ հաստատի, եւ ով չգիտէ՝ ուսանի, զի յառաջ գիտելն է եւ ապա առնելն:

Ա. Եւ առաջին այս եղիցի ուսումն, որ ամուսնաւորքն հինգ ազգաւք հեռի լինին յարեան ազգակցութենէ եւ ի վեցերորդին պսակին: Քան զԺԳ. (13) տարին պակաս չլինի հարսն, եւ փեսայն՝ քան զԺԳ. (14), եւ յեկեղեցին զպսակն եւ նաւթի եւ հաղորդին արժանիքն, եւ Ը. (8) ար սուրբ կենան մինչ ի վերանալ պսակին: Եւ աղուհացիցն եւ յինունքն եւ յամենայն արապահք եւ շաբաթապահք եւ յամենայն կիրակէի եւ ի խաչին եւ յայտնութեան ութարէքն ոչ արհնեն պսակ, զի ոչ է հրամանք հեշտանալ անկողնաւք: Եւ երբ յղի է կինն՝ ի բաց կան, որպէս եւ անասնոց անգամ արէն է, եւ ի ժամ արձակման արեանն՝ նոյնպէս:

Բ. Երբ ծնանի մանուկն շառնեն ինչ հմայութիւն եւ կապեն յորորոցն կամ /212ա/ ի բազուկ տղային, այլ խաչին կնքեն յառնուլն եւ ի դնելն եւ ի դիացուցանելն կաթն կամ ջամբ: Եւ երբ զձեռն շարժել կարէ տղայն ուսցնեն, որ ինքն կնքէ զխաչն, նախ ի գլուխն, ապա յոտսն, որ լինի բուն խաչին, ապա ի ձախ թեւն, ապա յաջն բերէ, որ լինի խոտորնակ թեւն, եւ երբ լեզուն արձակի՝ յառաջ զԱստուծոյ անունն տան խաւսել՝ Աստուած, Տէր Յիսուս Քրիստոս, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, արհնեալ է Աստուած, արհնեալ Քրիստոս Աստուած, արհնեալ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, փառք Հար եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, արհնեալ Սուրբ Երրորդութիւնն այժմ եւ միշտ, ապա զՍուրբ Աստուածն, ապա զՀայր մեր որ յերկինս: Զայս բաներս արդ ուսուցանեն քահա[նա]յքն տղայոց, մինչ ի ծերս եւ ի պառաւունս: Եւ յարն Գ. (3) անգամ ասեն՝ ի ժամ քնոյն եւ առաւաւտոյն եւ ի հացին ժամն, ԺԲ. (12) ծնրով, մեծաւ փութով²:

¹ Գրված է եղել «հաստատի», սակայն լուսանցքի վրա հատուկ նշանով ցույց է տրված, որ պետք է կարդալ «արձակի»:

² Գ կամոնը կա՛մ վրիպել է ընդօրինակողի ուշադրությունից և չի արտագրվել, կա՛մ էլ Բ

Դ. Մին շաբաթ կնքեն գտղայն, երէցն նաւթի եւ երկեղիւ եւ անգրոյց, բայց թէ մահու երկեղ լինի՝ յամէն ժամ կնքեն: Այլագգոյ եւ կնոջ շտան սան գտղայս քրիստոնէից:

Ե. Յամենայն կիրակէի առնու քահանայն զխոստովանութիւնն ի ժողովրդենէն ի Դ. (4)ամէն ի վեր՝ յառնէ եւ ի կնոջէ: Եւ թէ շատ է ժողովուրդն ի ԻԱ. (21) /212բ/ արն անպատճառ ճանաչէ զիւր ժողովուրդն երէցն, թէ որպէս է կացեալ. եւ ի մտի պահեն զյանցանքն՝ մինչ որ ասեն իրիցուն: Եւ թէ մեծ ինչ մեղք է՝ յարն յորում դիպեցաւ խոստովանի, եւ մի հանգիստ անձինն մինչ որ խոստովանի, եւ խոստովանի ի վաղիւն մի ելցէ քրիստովնէին: Եւ խոստովանութեան խրատ վայելչական զեկուցանեմք: Գ. (3) ծունր զնէ ընդ արեւելս եւ ասէ՝ Հաւատամ ի քեզ՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, երրորդութիւն եւ մի աստուածութիւն, անոխակալ եւ անյիշաշար, որ քննես զսիրտս մեր եւ քննես զամենայն գործս մեր, հաւատամ ի քեզ՝ Քրիստոս Աստուած, որ եկիր եւ գալոց ես դատել զաշխարհս ըստ իւրաքանչիւր գործոց: Եւ ի ծունկս իջանէ առաջի քահանային մարդն զլսիբաց եւ կինն ծածկով եւ ասէ՝ Մեղայ Աստուծոյ, մեղայ սուրբ պատուիրանի նորա, մեղայ առաջի Աստուծոյ եւ հրեշտակին, որ պահէ զիս, մեղայ իմոյ անձինս եւ ամենայն մերձաւորաց իմոց, մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով, աշաւք, ականջաւք, լեզուաւք, ձեռաւք, ոտաւք եւ ամենայն անդամաւքս, առաւել կամաւք եւ գիտութեամբ, քան թէ ակամա եւ անգիտութեամբ, մեղայ եւ քեզ /213ա/ տէր երէց եւ իմ հոգեւոր հայր, մեղայ քո սուրբ խրատուն եւ արինացն, զոր պատուիրեցէր ինձ: Եւ ապա սկսանի որպէս եւ լեալ է եւ զարինակ մեղացն, պարսաւելով զինքն եւ արտասուաւք, եւ այնպէս ջանայ, որ աւելի ասէ քան զայն, որ լեալ են իրքն:

Զ. Յամէն Ի. (40) ար հաղորդեսցին արժանաւորքն ահիւ եւ դողութեամբ եւ մեծաւ յուսով եւ լի հաւատով, որպէս ի ճշմարիտ մարմին եւ յարիւն Աստուծոյ մերձեցեալք: Գ. (3) ար սուրբ կացցեն յանկողնոյ արինաւոր՝ յառաջ քան զհաղորդիլն եւ յետոյ: Զգուշանան եւ սուրբ պահեն զբերանն ի յիշոցաց, եւ յամենայն շար խաւսից, ի մատնութենէ, ի զուր ասելոյ եւ սուտ, ի բանբասանաց, յանբարտաւան խաւսից, ի խաբելոյ, յաւելի ուտելոյ, ի խմելոյ եւ յանսուրբ կերակրոյ. որպէս զԱստուծոյ դուռն մտից պահել զբերանն:

կանոնից հետո սխալմամբ նշանակելով Դ (միջանցելով Գ-ն)՝ ընդօրինակողը խախտել է կանոնների նախնական համարակարգումը:

է. Յիշոցաւագ դնել յամենայն տեղիս՝ ի մեծ եւ ի փոքր, անողորմ տուգանով եւ խրատով, եւ առաւել որ հաւատ կամ բերան կամ երես անարգէ կամ քահանայ կամ գերեզման՝ զլեզուն ծակեն եւ լար անցուցանեն եւ ի շուրջ ածեն ծեծելով, եւ տուգանք առնուն եւ ընդ աղքատացն ի մալն տան:

Ը. Ամէն պահք անձու /213բ/կն եւ անգինի եւ անամուսնութիւն լիցի եւ ամենայն զգայութեանցն պահպանութիւն յամենայն մեղաց եւ ոչ միայն յուտելոյ եւ յրմպելոյ, զի պահք է անունն:

Թ. Գարի եւ ալիւր եւ աւազ եւ ուլուն եւ ջուր մի դիւթեացեն, եւ խտրութիւն հաւոց¹ թռչման եւ կոչման եւ մարմնոյ խաղալոյ եւ երազոց եւ ձայնի կրակոյ եւ դրան եւ սողնոյ ինչ երեւելոյ ի տանն, զի այսպիսիքս աւտար են ի կրանից քրիստովնէից, եւ մի ոք իշխեսցէ առնել, զի մեծ մեղք են:

Փ. Ի քաջախաւս եւ յերազահան մի ոք երթիցէ եւ լեկրոտի մա[ւ]տն աղի մի իշխեսցեն ածել, եւ մի ի բանից նոցա խաբեսցին եւ մի հաւատասցեն բնաւ:

ՓԱ. Կնքոյն եւ խոստովանութեանն եւ հաղորդին դրամ մի տացեն եւ ոչ երիցունքն առցեն, այլ ձրի լիցի ամենեւին, զի պարգեւ Աստուծոյ է եւ ոչ մարդոյ: Որպէս եւ մեք անարծաթ ձեռն դնեմք ի վերայ եպիսկոպոսացն եւ եպիսկոպոսքն ի վերայ քահանայից՝ նոյնպէս եւ քահանայքն իւրեանց արացեն անպատճառ: Ապա պսակին եւ թաղմանն եւ մատաղին, զինչ արէնքն է, տացեն ժողովուրդքն երիցուն, եւ խաչահամբոյր եւ յամենայն արդեանց պտուղ՝ բաժին Աստուծոյ, որ այլ ամենայն ստացուածքն արհնութեամբ լցցին, եւ Աստուած բաժնակից լիցի /214ա/ քրիստովնէից եւ պահէ զպտուղս տարւոյն յամենայն վնասուէ:

ՓԲ. Ի վերայ մեռելոյ մագ մի կտրեսցեն եւ սեաւ մի արացեն. եւ զերեսս մի կեղեքեսցեն եւ զձեռս, եւ լալական մի վարձեսցեն, եւ խաւարարգել մի լիցին, զի մի զինքեանս եւ զմեռեալս վնասեն եւ ամաւթով լինին յԱստուծոյ անյուսաբար կոծ դնելով, զի հեթանոսաց [է] եւ ոչ քրիստովնէից այդպիսի արէնք:

ՓԳ. Կախարդ եւ գող եւ պոռնիկ եւ բող եւ յիշոցասաց կամ դառնան ի շարէն, կամ հալածին անողորմ, զի մի յանմեղացն վերայ ածցեն զբարկութիւնն Աստուծոյ:

ՓԴ. Շաբաթ կիրակէքն ամէն մեծ եւ փոքր ի ժամատեղն երթան եւ աղուհացքն՝ յամէն ար. եւ զրոյց մի տացեն ի ժամատեղն, այլ լուութեամբ եւ

¹ Բնագրում, անշուշտ վրիպակով, գրված է «հաւատոց»:

երկեզիւ յաղաւթս կացցեն, որպէս յառաջի աստուծոյ համարելով զինքեանս:

ԺԵ. Գ. (3) անգամ ժողովէ ի տարին երէցն յեկեղեցին որիշ որիշ՝ զարս եւ զկանայս եւ զկուսան աղջկունս եւ զկուսան կտրճերն եւ յարմար հասակացն եւ վարուցն խրատ տացէ, զի ամէն հասակի եւ վարուց եւ բարուց խրատ ուրիշ է:

ԺԶ. Կարողք եւ ունեւորք զիրեանց թիկունք մի արասցեն եւ ազատ նոցին¹ եւ զոյժ հարկին ի տկարսն եւ յաղքատսն թողցեն, զի մի տրտմեցուցեն զԱրարիչն նոցա, եւ /214բ/ նոցա պսակ զուգեսցեն ի հանդերձեալն եւ զիրեանցն զրկեսցեն, զի մեղք նոցա սրբի, որ յայս ժամանակս իրք մի ոյժ հասանէ², զի վասն մեղաց է պատուհասն:

ԺԷ. Ի զրկանաց եւ ի խաբելոյ պատրաստ կայցեն քրիստովնեայքն եւ ի նենգելոյ զիրեարս՝ արք եւ կանայք, հաղկիցք եւ խապկիցք եւ զինուորակիցք եւ արուեստակիցք, գնաւղք եւ վաճառաւղք, զի որ մարմնական իրաւք զրկէ բռնութեամբ կամ խաբելով՝ զինքն հոգւով զրկէ եւ յաւիտենական կենաւքն:

ԺԸ. Արժանաւորացն եւ ուսելոցն եւ լաւ քահանայիցն լիցին եկեղեցիք եւ ժողովուրդք³:

¹ Աղնատված բառ է, թերևս պետք է կարդալ «նոցին» կամ «նստին»:

² Կարելի է կարդալ նաև «հասանի»:

³ Այսպեսով ավարտվում է: Շարունակությունը չի ընդօրինակված ձեռագրում:

«ՅԱՂԱԳՍ ՏԱՐԵՄՏԻՆ Ի ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍՍՅԵԱԿ»¹

ԱՌԱՋԱԲԱՆ

Վանական մականվամբ հայտնի Հովհաննես վարդապետը ծնվել է XII դարի 70-ական թվերին Տավուշ գավառում:

XIII դարի առաջին տարիներին նա, որպես Մխիթար Գոշի աշակերտ, շրջում է նրա հետ և անգամ գրի անցկացնում Զաքարիա սպասալարի կողմից հրավիրված դավանաբանական ժողովի հանգամանքները:

Աշակերտելով ժամանակի ամենախոշոր գիտնականներից մեկին՝ նա երիտասարդական հասակից ճանաչվում է որպես հեղինակավոր ու գիտնական վարդապետ. «համբաւ իմաստութեան սորա [Վանականի] տարածեցաւ ընդ աշխարհս. եւ գային առ նա յամենայն կողմանց եւ ուսանէին ի նմանէ զվարս պարկեշտութեան եւ սրբութեան եւ զգիտութիւն աստուածեղէն գրոց. եւ լուսաւորեալք գնային յիւրաքանչիւր տեղիս լոյս լինել աշխարհաց», - գրում է մի ժամանակակից: Եվ իրոք, համաձայն նրա աշակերտներ Կիրակոսի և Վարդանի վկայությունների, նրա շուրջն էին խմբվել բազմաթիվ ուսումնասեր աշակերտներ: Վանականը շարունակում էր իր անդուլ ուսուցչական գործունեությունը անգամ մոնղոլական աշխարհավեր արշավանքների ժամանակ՝ պատսպարվելով Տավուշ բերդի մոտ գտնվող մի քարայրում:

Մոնղոլները, պաշարելով քարայրը, ստիպում են Վանականին և քարայրում պատսպարված նրա աշակերտներին ու գյուղացիներին անձնատուր լինել: Բոլորին գերելուց, մեծ զրկանքների ենթարկելուց հետո մոնղոլները վաճառում են Վանականին Գագ բերդի քրիստոնյաներին 50 դահեկանով: Այնուհետև, հաստատվելով իր կառուցած հորանաշատ վանքում, Վանականը շարունակում է իր մանկավարժական ու գիտական գործունեությունը մինչ մահ: Նա մահանում է 1251 թվի մարտի 18-ին:

Վանական վարդապետը թողել է գրական հարուստ ժառանգություն, սակայն նրա գործերից ամենաարժեքավորները ցարդ կորած են: Կորած է նրա Պատմությունը, որը համաձայն Կիրակոսի ու Վարդանի վկայության՝ մոնղոլների և Հայաստանում կատարած նրանց արշավանքների համար մեծ արժեք ունեցող աղբյուր է եղել: Կորել է նաև Զաքարիա սպասալարի հրավիրած դավանաբանական ժողովի դեպքերի նրա նկարագրությունը, որը նույնպես արժեքավոր աղբյուր է եղել հայ հոգևորականության լուսավորչական և քաղկեզոնական թեկերի պայքարն ուսումնասիրելու համար:

¹ «Գիտական նյութերի ժողովածու», №1, Երևան, 1941, էջ 151-169:

Պահպանվել են և մեզ հասել Վանականի [«Գիրք հարցմանց»], «Համեմատութիւն Հնոյ եւ Նորոյ Կտակարանաց», «Մեկնութիւն գրոյն Յովբայ», «Ուրախացիր պսակ կուսից շարականի տեսութիւն», «Խրատ դաւանութեան», «Պատճառ առաջաւորաց պահոց» և մեզ հետաքրքրող «Յաղագս տարեմտին» աշխատութիւնները:

«Յաղագս տարեմտին» աշխատութիւնը մեզ հասած գործերի մեջ լավագոյն տեղերից մեկն է գրավում և ցայտուն կերպով ցույց է տալիս մեր բանասիրութեան միայն նեղ շրջաններին հայտնի Վանական վարդապետի գրչի ուժն ու գիտական կարողութիւնները:

Աշխատութիւնը ծանոթ է եղել միայն սահմանափակ թվով մասնագետների, որոշ մեջբերումներ է անում այնտեղից Դ. Ալիշանն իր «Հին հաւատք» ուսումնասիրութեան մեջ¹, որից և օգտվում է պրոֆ. Աբեղյանը²: Ավելի լայն կերպով այն օգտագործվել է պրոֆ. Գ. Խալաթյանցի կողմից, որն իր “Арм. эпос в ист. Моисея Хоренского” աշխատութեան մեջ հրատարակել է Արտավազդի առասպելին վերաբերող հատվածն ամբողջութեամբ: Այսպիսով, «Յաղագս տարեմտին» աշխատութիւնը դեռևս չի գրավել մեր բանասիրութեան լայն շրջանների ուշադրութիւնը և իր հիմնական մասով մնացել է անօգտագործելի:

Աշխատութեան մեջ շոշափված են տարեմտի, տարվա, ամիսների, արեգակի, լուսնի, մոլորակների և մի շարք ժողովուրդների տոմարների վերաբերյալ բազմաթիվ հետաքրքիր հարցեր, և տրված են այդ հարցերին գիտական բացատրութիւններ, որոնք, շարահյուսված լինելով բազմաթիվ փաստերի հետ, աշխատութիւնը դարձնում են տիեզերագիտութեան և աստղաբաշխութեան պատմութեամբ հետաքրքրվող մասնագետների համար կարևոր սկզբնաղբյուր:

Այսպէս օրինակ՝ չափազանց հետաքրքիր է տպագրվող տեսքստում բերված այն տեղեկութիւնը, ըստ որի՝ վրաց և աղվանից տարեմուտը սկսվում է հայոց տարեմտից 4 օր հետո (ուրեմն՝ օգոստոսի 15-ին): Հետաքրքիր է նույն էջում բերված այն առասպելը, ըստ որի բացատրվում է տարբեր ժողովուրդների տարեմուտի տարբեր օրերով սկսվելը:

Հայ լեզվաբանութեան պատմութեան համար կարևոր նշանակութիւն ունի այն միտքը, ըստ որի՝ իրերի եւ երևույթների անունները տրվել են համապատասխան նրանց բովանդակութեան: Այս սկզբունքը հայ մատենա-

¹ Դ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնի հայոց, Վենետիկ, էջ 178, 211:

² Տէս Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ, 1899:

գրության մեջ գործադրված է շատ հնուց, դեռևս Մովսես Խորենացին իր Պատմության մեջ բազմաթիվ տեղանուններ և տոհմանուններ բացատրում է այս սկզբունքով, սակայն սկզբունքը, որպես լեզվաբանական մի դրույթ առաջին անգամ արտահայտված է այստեղ: Նույն ոգով և բացատրված են հեղինակի կողմից հայկական ամիսների անունները:

Վանականի երկում ճիշտ կերպով են բացատրված արեգակի խավարումը, լուսնի շարժման առանձնահատկությունները և այլն և այլն:

«Յաղագս տարեմտին» աշխատությունը շարադրված է ոչ թե ժամանակի գիտական նեղ շրջանների, այլ լայն հասարակության համար. ճառի ձևով շարադրված աշխատությունը կարգացվել է եկեղեցիներում տարեմտի օրը (օգոստոսի 11-ին) բազմաթիվ հանդիսականների ներկայությամբ: Լայն հասարակության համար շոշափել գիտական խնդիրներ, որոնք անմիջապես չէին առնչվում սովորական եկեղեցական քարոզների հետ՝ նոր քայլ էր, ուստի զուր չէ, որ նա՝ պաշտոնական եկեղեցու հնարավոր հալածանքներից ու բամբասանքներից իրեն զերծ պահելու նպատակով, ճառի սկզբում հայտնում է, որ ոմանք կարող են տարակուսել և հարց տալ, թե՞ «Այսոքիկ հաւատոյ կամ վարուց աւգուտ զինչ», և պատասխանում է. «Բազում ինչ ամենայն իրաւք, վասն զի աշխարհս ծով է, որպէս ասէ Մարգարէն, ժամանակն՝ շափ կամ կամուրջ կամ ճանապարհ ի ծովու, եւ այս երեւելի մարդիկս ի ճանապարհի կենցաղոյս նշան բուռն հարկանելոյ, զի մի՛ որպէս կոյր անցանիցեմք ընդ կենցաղս»:

Այսպիսով, ժամանակի խոշոր մատենագիր և ուսուցիչ Վանականի նպատակն է եղել լայն հասարակությանը ծանոթացնել աստղաբաշխության և տոմարի մասին եղած գիտություն հետ. այդ նպատակով նա աշխատությունը կազմել է գյուրըմբռնելի լեզվով. որոշ խնդիրներ ավելի հասկանալի դարձնելու համար կատարել է գեղեցիկ ու պատկերավոր համեմատություններ և այլն: Օրինակ՝ ինչքան հասկանալի ու պատկերավոր են նրա հետևյալ տողերը. «Արեգակն բոլոր շրջի որպէս աղաւրիք, որպէս անիւ, իսկ լուսինն ի թռիչս՝ որպէս թռչուն, որպէս նետ»։ Նմանագույն տողեր շատ կարելի է գտնել աշխատության մեջ:

«Յաղագս տարեմտին» աշխատության ամենահետաքրքիր մասից մեկն Արտավազգի առասպելն է, որը պրոֆ. Գ. Խալաթյանցի շնորհիվ վաղուց ի վեր հայտնի է դարձել բանասիրությանը¹, սակայն, դժբախտաբար, չի օգտագործված առասպելի խորը ուսումնասիրման համար:

¹ Տե՛ս պրոֆ. Գ. Խալաթյանցի, *Արմ. էպոս Կ. Մովսէս Խորենացի, 1896, Մոսկու, մաս II, թ. 73:*

Հարևանցիորեն տեսնենք, թե ինչ նոր գծեր է իր մեջ պարունակում առասպելի՝ Վանականի կողմից շարագրված պատումը.

ա) Արտավազգի շղթաները լիզող շներն այս պատումում կոչվում են «յարալէզներ»: Մեր մատենագրութեան մեջ «արալէզ» բառի գրութեան երեք ձևեր կան. ըստ որում յուրաքանչյուր հեղինակ ըստ իր գրութեան էլ հասկացել է այս բառը:

Փավստոս Բյուզանդը գրել է «առլէզ» և հասկացել է որպէս «առնող եւ լիզող», Եզնիկն ու Անանունը գրել են «արալէզ»՝ Արային լիզող, իսկ մեր հեղինակը, գերվելով «յար լեզուն» [զկապանս Արտաւազգայ] եւ «Արալէզ» բառերի նմանահնչունութեամբ, «յարալէզ» է անվանում Արտավազգի շներին¹ և բառը հասկանում է որպէս «յար լիզող»: Այսպիսով, Արտավազգի առասպելի պատումներից միայն այս պատումում Արտավազգի շները կոչվում են «յարլէզներ»:

բ) Այնուհետև Վանականը հայտնում է, որ արալէզներից մեկը սպիտակ է, մյուսը՝ սև: Այս տեղեկութիւնը տալիս են նաև «Յայսմավուրքներում» եղած պատումները, որոնց հիմքը հավանաբար Վանականի պատումն է հանդիսացել:

գ) Եվ վերջապէս, Վանականը հաղորդում է, որ Արտավազգի շղթաները նավասարդի մեկին (տարեմտին) բարակում են այնքան, որ եթէ դարբինները կռանը չգարկեն դատարկ սալին, և նույնատիպ գործողութիւն չկատարեն մյուս արհեստավորները, ապա Արտավազգը կկտրի շղթաները, դուրս կգա աշխարհ:

Նավասարդի մեկը Վանականի ժամանակ համապատասխանում էր օգոստոսի 11-ին, սակայն հին հայկական տոմարով նա ընկնում էր գարնանամտին, երբ վերածնվում էր բնութիւնը:

Այս տեղեկութիւնները կռահել են տալիս, որ Արտավազգի առասպելում հեռավոր հիշողութիւններ են պահպանվել մի մեռնող ու հարութիւն առնող աստվածութեան մասին, որ բերում է գարուն, վերակենդանացնում է բնութիւնը, ուստի և իր վրա կրում է պտղաբերութեան, աճման, կյանքի ֆունկցիաները: Հավանաբար ուշ աշնանը բուսականութեան մահացման հետ մեկտեղ Արտավազգին բռնում են դևերը (Եզնիկ) կամ քաջքերը (Խորենացի) և կամ, նորագույն պատումներում, շաստվածները (բոլոր դեպքերում էլ՝ չար ոգի) և շղթայում ձյունապատ Մասիսի վրա:

¹ Արալէզները պատկերացվում էին շան կերպարանով. այդ առթիվ Եզնիկը գրում է. «...եւ գաղլէզն, ի շանէ ելեալ ասեն»:

Մասիս (Արարատ) սարը հայ ժողովրդական հավատալիքներով, որոնք պահպանվել են մինչև XIX դարը և հարևանցիորեն նշվել Մ. Քաղիադյանի կողմից¹, համարվել է «մութն աշխարհ», որտեղ իշխում են չար ոգիներ, և որտեղ հավանաբար տեղափոխվում էին մարդիկ իրենց մահվանից հետո:

Մասիսում քաջքերի կողմից շղթայված Արտավազդին մենակ չեն թողնում իր շները՝ սև և սպիտակ արալեզները, որոնց գույները կարող են ցերեկվա և գիշերվա, գարնան և ձմռան, կյանքի և մահու հակադիր ուժերի առասպելական պատկերացումները լինել. նրանք լիզում են Արտավազդի շղթաները (գուցե հնում լիզել են դին), մինչև գարնանամտին նորից դուրս է եկել Արտավազդը, վերածնել աշխարհը, պարգևել կյանք, բուսականություն՝ նորից մեռնելու և նորից ծնվելու համար:

Իհարկե, մեզ հասած պատումները հնարավորություն չեն տալիս անվերապահորեն հայտարարել, որ Արտավազդը, նման Արային², հնագույն ժամանակներում պաշտվել է հայերի կողմից որպես գարնան, բնություն և պտղաբերություն աստվածություն, սակայն վերոհիշյալ փաստերն անկասկածելիորեն ցույց են տալիս, որ Արտավազդի առասպելի մեզ հասած պատումներից ոչ մեկը սկզբնական չէ, և որ առասպելի որոշ պահերը հիշեցնում են փոքրասիական ժողովուրդների մեջ շատ տարածված մի հնագույն աստվածություն (Քամուզ՝ բաբելացիների, Դիոնիսիոս՝ հույների մոտ, և այլն):

Առասպելի այս պատումը հետաքրքիր է նաև մի այլ կողմից. ըստ բոլոր պատումների՝ Արտաշեսի թաղման ժամանակ շատ-շատերը, չցանկանալով ապրել իրենց սիրելի թագավորի մահվանից հետո, ինքնասպանություն են գործում ու թաղվում նրա հետ: Դժվար չէ եզրակացնել, որ այս հեռավոր հիշողություն է բարձրաստիճան մարդկանց թաղման ժամանակ մարդկային գոհեր կատարելու (այդպիսի թաղումներ Հայաստանում հայտնաբերել է Ն. Լալայանը. տե՛ս «Դամբարանների պեղումները Հայաստանում»): Վանականի պատումում այդ մասը շարադրված է այնպես, որ հաստատում է վերոհիշյալ եզրակացությունը: Նա գրում է՝ Արտաշեսի մահվան ժամանակ «ծառայքն եւ աղախնայքն սպանին զինքեանս ի վերայ նորա». իսկ ըստ Գ ձեռագրի՝ «եւ ծառայս եւ աղախնայս սպանէին ի վերայ նորա...»: Այսպիսով, մի դեպքում ինքնասպանություն գործողները ստրուկներ ու

¹ Տե՛ս Մ. Քաղիադեան, Ճանապարհորդութիւն, Կալկարա, 1847:

² Տե՛ս проф. Г. Капанцян, Хетские боги у армян, Ереван, 1940, с. 25-27.

ստրկուհիներ են, իսկ մյուս դեպքում նրանք ոչ թե ինքնասպանութիւն են գործում, այլ սպանվում են այլոց կողմից:

Վանականն աշխատութիւնը գրելու ժամանակ այլ աղբյուրների հետ միասին ձեռքի տակ է ունեցել և լայնորեն օգտագործել է Անանիա Շիրակացու «Տիեզերագիտութիւն և տոմար» աշխատութիւնը, որ լույս տեսավ Մատենադարանի հրատարակութեամբ 1940 թվին:

Ակնհայտ դարձնելու համար Շիրակացու աշխատութեան օգտագործումը Վանականի կողմից բերենք օրինակներ.

Տիեզերագիտութիւն և տոմար

Յաղագս տարեմտին

ա) «Տեսնելով զարեգակն շրջանէ ի շրջան հասեալ՝ իմացաւ զպակասումն աւուրցն եւ ասէ տարաւ...» (էջ 74):

ա) «... եւ դարձեալ զարեգակն տեսեալ կէտէն ի կէտն բոլոր ընթացեալ՝ ասացին. «տարաւ զիմ ժամանակս»...» (էջ 158):

բ) «Տեսանելով առաջնոցն զլուսինն լցեալ եւ մաշեալ՝ իմացան զանցաւորութիւն կենաց իւրեանց եւ ասացին. «է մեզ պատկեր»...» (էջ 75):

բ) «Տեսեալ զնա [զլուսին] մարդիկ յընծաիլ եւ ի մաշիլ՝ ասացին «իմ ես աւրինակ ծնընդեան եւ մահու» (էջ 162):

Անանիա Շիրակացուց է վերցված նաև հայկական ամիսների անունները Հայկի որդիների և դուստրերի անունների հետ կապելու առասպելը և այլն (հմմտ. «Տիեզերագիտութիւն և տոմար», զլ. ԽԲ, էջ 75-77, զլ. Կ, էջ 94, «Յաղագս տարեմտին», էջ 160, 162 և այլն):

«Յաղագս տարեմտին» աշխատութիւնը լայնորեն օգտագործվել է Վանականի աշակերտների և այլ մատենագիրների երկերում, ուստի այն կարող է պարզել նաև աղբյուրագիտական որոշ խնդիրներ: Հատկապես այն իրենց աշխատութիւններում օգտագործել են Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին¹:

Վանական վարդապետի «Յաղագս տարեմտին» աշխատութեան տեքստը կազմելու ժամանակ օգտագործել ենք երեք ձեռագիր:

Որպես հիմք ընդունել ենք Մատենադարանի № 5561 (872) ձեռագիրը (Ա ձեռագիր). բովանդակութիւն՝ Տոնապատճառ. մեզ հետաքրքրող աշխատութիւնը՝ «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէն ասացեալ» վերնագրով, բռնում է ձեռագրի 271ա-276բ էջերը:

¹ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Թբիլիսի, 1909, էջ 43-44, 200-201. Վարդան, Պատմություն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 12, 16:

Ա. Ձեռագրի համառոտ նկարագրությունը

Թերթ 385, մեծ. 25x17, նյութ թուղթ, վիճակ՝ վնասված, գրությունն՝ միասյուն, գիր՝ բոլորգրին անցնող միջին մեսրոպյան, գրիչ՝ Գրիգոր, ժամանակ՝ ԺԲ-ԺԳ դար:

Հիշատակություններ, էջ 154ա. «Զմեղուցե[ա]լ գրիչս՝ Գրիգորէս աղաչեմ յիշել, որպէս զայր աղքատ եւ յամենայն բարեաց թափուր»:

էջ 175բ. «մի շակեր(՞) եղբայր, վասն այն մանր գրեցի եւ յոյժ աշխատեցա, զի աչքս խոց էր անբժշկելի վասն իմ մեղացն. զհոգևոյս կուրուծիւնս յայտնեաց Աստուած ի մարմնոյս տեսութիւնս, զի եղեց նշաւակ ամենեցուն: Զգերապայծառ վարդապետն Գրիգոր մականունն Բջնեցի կոչեցեալ՝ գեղապաճոյճ եւ բազմահոշակ, որ զաւրինակս շնորհեաց, յաղաւթս մաղթեմ յիշել»:

Ա ձեռագրի թերուծությունները շտկել ենք № 4130 ձեռագրով (Բ ձեռագիր): «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ» աշխատությունը գտնվում է Բ ձեռագրի 66բ-72բ էջերում:

Բ. Ձեռագրի համառոտ նկարագրությունը

Բովանդակություն՝ Տոնապատճառ. Թերթ 517, մեծ. 26x17,8, վիճակ՝ վնասված, գրությունն՝ միասյուն: Գիր՝ բոլորգրին անցնող միջին մեսրոպյան. գրիչ՝ Տիրացու. ժամանակ՝ ՉԺԶ (1267). տեղ՝ Հաղբատ: Ունի ընդարձակ և շատ հետաքրքիր հիշատակարան Վարդան Արևելցու կյանքի և Տոնապատճառ կոչվող ժողովածուների ծագման պատմությունն ուսումնասիրողի համար, ուստի որոշ կրճատումներով բերում ենք հիշատակարանը (էջ 516բ-517ա):

«Փառք Սուրբ Երրորդութեան...

Իղձք փափագանաց սիրոյն որ առ Աստուած¹ արդարոց, անզբաղապէս ներմտածի ի տէ եւ ի գիշ[երի], յորոց մի գոլով ի լրացելոց (՞) հոգւոյն երջանիկ հայրն մեր եւ հասարակաց՝ Վարդան վարդապետն, յառաջին հեղինակացն ի մերումս բացափայլեալ ժամանակի, յամենեցունց ոգիս արեգակնածագ փայլմամբն շողիւք լուսաւորե[ա]լ, ըստ բացման աչաց եւ ականջաց ներքին մարդոյն՝ արանց միանգամայն եւ կանանց, մեծաց եւ փոքունց, եկեղեցականաց եւ աշխարհականաց, եւ ամենայն շափու հասակի, նաեւ աւտար ազգեաց եւս: Եւ այսպէս երկար ժամանակ ի ծերութեան հասե[ա]լ

¹ Ձեռագրի մաշված և ցեցակեր լինելու հետևանքով որոշ տեղեր մնում են անընթեռնելի. այդ տեղերը նշանակում ենք բազմակետերով, իսկ մեր կողմից կրճատված մասերը՝ Յ կետով:

պայման բարի քաղաքաւարութեամբ կեցեալ ըստ կամացն Աստուծոյ ի վարդ եկեղեցւոյ] եւ ի պարծանս ուղափառ հաւատացելոց՝ փոխեցաւ ի հանգիստն արդարոց. յիշատակ նորա արհնութեամբ եղիցի առաջի Աստուծոյ: Վասնորոյ հոգ տարեալ սա յոյժ եկեղեցւոյ եւ նորին մանգանց վերածնելոց ի Քրիստոս, եւ բազում ինչ թիրեալ ի սուրբ Գրոց ուղղեաց ի մեկնչաց սրբոց: Նաեւ զՍաղմոսն զլստովին եւ զերկարութիւնն յայլ եւ յայլ մեկնչաց ի մի վայր ժողովել, կարճ եւ համառուտ բանիւ սեփականել դիրահաս ընթերցողաց: Որպէս եւ զայս բուրաստանս ամենալիր ծաղկոցացս, պատճառս տանից տէրունականաց եւ հարցմունք սուրբ բանասիրաց՝ առաքելական եւ մարգարէական եւ աւետարանական (*), հաւաքեալք ի սուրբ արանց, որ ամբարեալ կան ի սմա, որով եւ ես ի[սկ²] յամենայնի անարժանս եւ անպիտանս, որ Տիրացու անւանեցաւ] ի նորին աշակերտացն, որ եւ ի սա աշխատեցայ եւ ըստ կարի իմ ջանացաւ], զտէրունական տանից պատճառն, որ ի սա գծագրեցաք: Վասնորոյ մաղթեմ զսա ժառանգողացդ, յընթերցողաց]դ եւ յաւատողացտ. եւ յարինակառ[ո]ւացդ... հոշակաւոր սուրբ ուխտիս ի յԱստուած... Հաղբատ, թուականութեանս (*) Հայոց ԶԺԶ (1267)... տէրունական սուրբ եւ աստուածընկալ նշանիս... Աստուածածնիս եւ այլ սրբոցս: Յաթոռակալութեանս տէր Յովհաննիսի մեծի հռետորի եւ սուրբ վերադիտողի, ի մէջ համագումար եղբայրութեանս: Եկեալ մեր ի Վանանդ գաւառէ ի Կարս քաղաքէ՝ պանդխտանալ աստ եւ բազում ինչ աշխատիլ, վասնորոյ կրկին մաղթանալք, երեսամած աղաչանալք հայցեմք, որ... հանդիպիք այսմ հոգեշահ խրախճանութեանս, զի խնդրէք ի Քրիստոսէ սղալեալ հանցանացն մեր թողութիւն... եւ այլն»:

Տեքստը կազմելու ժամանակ ձեռքի տակ ունեցել ենք նաև № 4669 (1187) ձեռագիրը (Գ ձեռագիր), որը գրված է 1675 թվին Գրիգոր Երեցի կողմից **Պերկամայում**: Ձեռագիրը զանազան նյութերի ժողովածու է, մեզ հետաքրքրող աշխատությունը (որը գտնվում է ձեռագրի 22ա-29ա էջերում), ինչպես և մյուս նյութերը գրված են բազմաթիվ տառասխալներով ու կրճատումներով, որոնք երբեմն անհասկանալի են դարձնում որոշ պարբերություններ.

օրինակ՝ ձեռագրում «անունս տիրանց դնէին» փխ «անուն ըստ իրաց»

«տարուղին ժամանակս» փխ «տարաւ զիմ»

«աննշանքն են փխ «այն նշանք են» և այլն և այլն:

Չափազանց շատ են նաև ուղղագրական սխալները՝ աւ-երը մեծ մասամբ փոխարինված են օ-երով, ուստի շատ դեպքերում գրված է **անուանեցօ** (անւանեցաւ), **օուր** (աւուր): Դ-ի և տ-ի փոխարեն հաճախ գրված է **թ**

(ընթանեաց, քաղթեութիւն, Կաթմոս). գ-ի փոխարեն՝ ք (սուք, թարքման, աւաք) և այլն:

Վերոհիշյալ նկատառումներով՝ տարբերակների մեջ մենք նշեցինք Գ ձեռագրի միայն այն տարբերությունները, որոնք կարող են այլ իմաստ տալ տեքստին:

Արտավազգի առասպելի հատվածի տարբերակներում նշել ենք նաև Գ. Խալաթյանցի կողմից հրատարակված¹ հատվածի և մեր տեքստի միջև եղող կարևոր տարբերությունները՝ ի պայմանական նշանի տակ:

¹ Տե՛ս Գ. Խալաթյանցի, *Արմ. էպոս Կ. Խորենցու, 1896*, Մոսկվա, Կիս. II, Մատերիալ, ս. 74:

ՅԱՂԱԳՍ ՏԱՐԵՄՏԻՆ¹ Ի ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱԳԵԱԼ²

Աստուծով իմաստնացեալն Սողովմոն³ ի գիրս իւրական գեկուցանէ մեզ յաղագս Աստուծոյ արարչութեանն՝ անճառ եւ անհաս աստուածաբանութեամբ⁴, այսպէս ասելով՝ «Աստուած իմաստութեամբ հիմունն⁵ արկ երկրի հաստատեաց զաշխարհս խորհրդով, հանճարով իւրով զանդունդս պատառեաց. եւ ամպք⁶ հոսեցին զանձրեալ»⁷*: Յաղագս որոյ ի քննութիւն կամիմք մտանել տարերց եւ տարերաց⁷, ժամուց եւ մասանց եւ կարաւտիմք⁸ աստուածաին⁹ ձեռացն եւ իմաստութեանն Որդւոյ եւ հանճարոյ Հոգոյն¹⁰: Իմաստութեան խորհրդով հաստատել զտարտամ գնացս բանից մերոց եւ անդրնդական գթութեամբքն բանալ մեզ զխորհուրդ աւուրս. եւ զւարթարար անձրեւովք¹¹ ընու զծարաւի եւ զպասքեալ միտս¹² մեր առ ի կարաւզ գոլ սպասաւորութեան¹³ ահարկու եւ պատկառելի հարց եւ եղբարց եւս առաւել բազմաժողով ատենիս, զի յոյժ դժուարին է յաղագս Աստուծոյ խաւսել զի անհասական է մարդկային¹⁴ մտաց, թէպէտ մտացի ոք իցէ. այլ այնքան կարէ ոք հասու լինել, որքան տան մեզ ծանաւթութիւն սուրբ գիրք: Յերիս անձինս որոշեալ¹⁵ եւ ի մի կատարեալ ըստ աստուածութեանն, ըստ տէրութեանն, ըստ արարչութեանն, ըստ նախախնամութեանն, ըստ բնութեանն¹⁶, ըստ ներգործութեանն, ըստ կամացն, ըստ թագաւորութեանն, ըստ իշխանութեանն, ըստ պատւոյն, ըստ փառացն, ամենայն ինչ մի՛ բաց¹⁷ յանձանցն երեք եւ մի, մի եւ երեք: Իսկ մարդեղութիւնն Որդւոյ¹⁸ ո՛չ

¹ X Բան վասն տարեմտին

² Բ Ասագեալ չիք

³ Բ Սաղամոն

⁴ Ա աստուածաբանութեան

⁵ Գ զհիմունն

⁶ Բ ամպք

⁷ Ա տարերաց չիք

⁸ Գ կարաւտ եմք

⁹ Բ աստուածական

¹⁰ Ա հոգոյն չիք

¹¹ Բ անձրեւաւք

¹² Բ զմիտս

¹³ Բ սպասատարութիւն

¹⁴ Բ մարդկայինս

¹⁵ Ա որոշել

¹⁶ Ա ըստ բնութեանն չիք

¹⁷ Բ բաց ի

¹⁸ Բ որդոյն

յաւելած եւ ոչ պակասութիւն¹, այլ մնաց նոյն Որդի՝ որպէս էրն յաթոն հայրական. անճառ միութեամբ Աստուած եւ մարդ կատարեալ, որով Աստուծոյ տամբ զամենայն զբարձրագոյնսն եւ զխոնարհագոյնսն, զի իցէ փրկութիւն² մեր յԱստուծոյ եւ ոչ ի մարդոյ: Արդ, Սուրբ Երրորդութեամբն ամենեքեանքն ի լինելութիւն եկին, որպէս աստուածախաւս³ մարգարէն ասէ. «ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր»⁴, այսինքն՝ ի սկսանելոյ⁵ եղեւ, ո՛չ էր. եւ ապա արար, զի մի ասիցեն⁶ հակառակորդքն, թէ կայր կամ ինքնին եղեւ⁷, եւ կամ այլ ոք գո արարիչ, յայտ արար թէ չէր եւ արար Աստուած. բայց որ ի սկսանելոյ լեալ իցէ, դարձեալ կատարումն⁸ ունի: Մովսէս յառաջ զերկինս ասաց արար Աստուած եւ ապա զերկիր, իսկ Դաւիթ «Դու Տէ՛ր ի սկզբանէ զերկիր հաստատեցէ՛ր, եւ գործք ձեռաց քոց⁹ երկինք են»¹⁰: Նա զվերին երկինն ասէ, որ յառաջնումն¹¹ աւուրն եղեւ, եւ Դաւիթ զհաստատութիւնդ, որ յերկրորդումն¹¹ աւուրն եղեւ: Զի հրեղեն երկինն¹² շուրջ գալ ասի եւ ոչ այլայլիլ, եւ երկին՝ այլայլիլ եւ ո՛չ շուրջ գալ, որով ցուցանի թէ նախախնամութեամբն Աստուծոյ ամենայն ինչ կա՛ հաստատուն եւ դարձեալ անցանի¹³, թէպէտ եւ յանգոութիւն ո՛չ անկանի¹⁴ այլ դադարի եւ յայլ կերպարանս¹⁵ փոխի նորոգմամբ ի գալստեան Տեառն, եւ նորո՛յ երկին եւ նորոյ երկիր¹⁶, զոր եսն առնեմ, կալ առաջի իմ. զի ամենայն որ¹⁷ ինչ ի պէտս մեր եղեալ է՝ անցանելով է, որպէս եւ չորիս յեղանակս. զի առաջին բուսուցանէ, երկրորդն հասուցանէ, եւ երրորդն ի

¹ Ա. պակասումն

² Ա, Բ փրկութիւնն

³ Բ աստուածախաւսն ասէ,

⁴ ԶԶ «զերկինս եւ զերկիր» ուղղեցինք համաձայն Ծննդոց գրքի Ա. գլխի առաջին պարբերության

⁵ Բ թէ ի սկսանելոյ

⁶ Ա. ասացեն

⁷ Ա. կամ ինքն եղէ

⁸ Բ կատարած

⁹ Բ ձեռաց քոց չէք

¹⁰ Բ յառաջնում

¹¹ Բ յերկրորդում

¹² Բ երկինքն

¹³ Բ անցանէ

¹⁴ Ա. անգանի

¹⁵ Բ կերպարան

¹⁶ Բ եւ նորոյ երկիր չէք

¹⁷ Ա. որ փիս ամենայն որ ինչ

կատար ածէ¹, /272ա/ եւ շորրորդն որպէս յշտեմարանս ժողովէ: Զնոյն եւ ի մեզ է տեսանել՝ ըստ տղայութեան, մանկութեան եւ երիտասարդութեան եւ ծերութեան, որպէս եւ արեգակն ելանելովն եւ բարձրանալովն եւ մտանելովն զնոյն տայ ապացոյց: Արդ, զամենայն արար Աստուած ի վեց աւուր², թէպէտ կարող էր ի վայրկեան³ ժամու առնել՝ ո՛չ արար, այլ զամենայն աւուր կատարած ուրիշ եղ⁴, որ իմանին, թէ արարածք են, եւ չլինին գամագիւտ⁵ չար աղանդքն. քանզի վեցն խորհրդական թիւ է, զի երկու երեք է եւ երեք երկու եւ մին վեց⁶, որով արարածք եղեալ պահին. նոյնպէս եւ եւթն⁷, որ է հանգիստ Աստուծոյ, զի նա ի ներքոյ տասնեկին անծին է եւ անծնունդ. վասն այնորիկ պատեն երբեք զեւթն, զվեցն գործեալ եւ յեւթն հանգուցեալ, որպէս վասն Աստուծոյ գրեալ է. եւ այսպէս ի շաբաթս եւ յաւուրս. եւ ի տարիս՝ վեց գործել եւ յեւթն հանգիստ⁸ եւ թողութիւն: Զի բազում տանք էին Հրէիցն ըստ մարմնոյ ծնունդք եւ կալք եւ կութք⁹ եւ շինւածոց նաւակատիս եւ այլս բազումս, իսկ հոգեւորն շաբաթն, որ խտագոյն առ նոսա պատի, ամսամուտ եւ ամսագլուխ, տարեմուտ եւ շաբաթամուտ, եւ այլք յովովք: Այլ Մովսէս երիս տաւնս ի տարոջն կատարել հրամանաց զգլխաւորագոյնան՝ զեւթն յեգիպտոսէ եւ զտաղաւարահարացն եւ զքաւութեանն¹⁰: Իսկ տան ելիցն առաւել մեծագոյն էր առ նոսա, էր որ վասն ինքեանց ազատութեան եւ պատուոյ, եւ էր որ վասն խորհրդոյ նորոյս: Որպէս եւ ասէր Աստուած՝ ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց¹¹ եւ արս՝ աւուրց եւ տարիս՝ տարոյ¹². նոքա զայն պատուէին¹³. եւ զտաղաւարահարացն. վասն քառասնամեայ յանապատին տաղաւարաւքն բնակելոյ հարցն նոցա, յորս պարծէին¹⁴. եւ զտարեկանացն, զոր ասէ մարգարէն. «Վո՛ղ հարէք ի գլուխս ամսոց, յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց»^{3*}: Երբ

¹ Բ ի կատարումն

² Ա ար

³ Ա վայրկեան

⁴ Ա ուրիշ եղ

⁵ Բ գամագիտ

⁶ Բ եւ մին վեց չէք

⁷ Բ զեւթնեւորդն

⁸ Բ գործել եւ յեւթնն հանգել

⁹ Բ կութ

¹⁰ Ա գլխաւորութիւնն

¹¹ Բ սկիզբն ամսոց

¹² Բ սկիզբն տարոյ

¹³ Բ մեծարէին *փիս* պատուէին

¹⁴ Բ բնակեցան հարբ նոցա յոր պարծէին

գայր տարին եւ 'ի կատար ելանէր, զինքեանս ընծայեցուցանէին¹, եւ զմիմեանս թագաւորաց եւ իշխանաց մեծամեծաց ընծայք² տարին. նաեւ սիրելեաց եւ ազգականաց՝ շնորհաւորելով զառաջիկայն եւ զանցեալն գոհանտին, թէ խաղաղութեամբ անցանք ընդ տարիս՝ ներքնաւք եւ արտաքնաւք: Զնոյն եւ մեք կատարեմք ընծաելով³ միմեանց եւ այլոց, ընտանեաց եւ աւտարաց⁴ *, թէ հոգեկան ինչ⁵ եւ թէ մարմնական: Առնէ ինչ եւ հեթանոսն՝ թանձրագույն եւ մարմնական, որպէս այն, որ զհացն բոլորավզեր առնել սովոր են, որպէս թէ⁶ բոլոր տարիս, անցեալն եւ որ առաջ /272բ/ ի կայ, շահաւոր⁷ եւ խաղաղութեամբ եղեւ եւ լինի, զի ի ժամանակիս սովորաբար վարիմք զայս սակաւ⁸ պատճառս աճեցուցեալ, թէ առ նոսա եւ թէ առ այլ ազգ անդուատ⁹ սկսեալ:

Իսկ թէ զի՞նչ է տարի: Առաջին մարդիկն, ասեն, իմաստունք էին, անուն ըստ իրացն դնէին: Տարի, զի յինքեան տանի զաւր, զշաբաթ, զամիս, զչորս յեղանակս. եւ դարձեալ զարեգակն տեսեալ կիտէն 'ի կէտն բոլոր¹⁰ ընթացեալ, ասացին. «տարաւ զիմ ժամանակս»: Իսկ եգիպտացիքն տարի ըստ լուսնին առնեն, զերեսուն արն: Այլ եւ զայս դիտել արժան է, զի դիր անւանց 'ի նախնոյն Ադամայ է կենդանեաց, իսկ թիւ կենդանակերպիցդ եւ մոլորակացդ՝ յԱղաւրոսէ¹¹ թագաւորէ, որ թագաւորեաց առաջին յորդոց անտի¹² Սեթայ եւ ի սմանէ անւանեցաւ քաղղէութիւնն¹³: Եւ գիւտ գրոյ յՆնովքա, թէպէտ եւ այլք¹⁴ յՆնովսա ասեն զիր եւ մոլորակացդ¹⁵ գիւտ, այլ Ննովք¹⁶ արար նշանագիրս կարճոտունս¹⁷ եւ բազմատարս, եւ այնու եթող

¹ Ա. ընծայեցանէին

² Բ. ընծայք

³ Բ. ընծաելով

⁴ Գ. աւաբաց փիւ աւտարաց

⁵ Բ. ինչ իցէ

⁶ Բ. որպէս թէ արինակաւ

⁷ Բ. շնոհատր փիւ շահատր

⁸ Ա. սակաւ շիք

⁹ Ա. անդունդ

¹⁰ Ա. բոլորն

¹¹ Բ. յԱղաւրեսէ

¹² Ա. անդի

¹³ Բ. քաղղէութիւն

¹⁴ Բ. թէպէպ ոմանք

¹⁵ Ա. մոլորակացտ

¹⁶ Ա. Ննոք

¹⁷ Գ. կարճոտունս

զկեանս վարուց առաջնոցն եւ զմարգարէութիւնն¹ իւր, զոր գտեալ Արփաք-սադ յետ ջրոյն. առաջին քաղղէացիք իմաստասիրեցին գիր եւ թագաւորութիւն կալեալ, եւ ապա որդի նորա Կայնան բազմացոյց զՔաղղէացւոցն մոլորութիւն՝ բախտ եւ ճակատագիր ասելով ըստ աստեղացոյց եւ մոլորակացոյց շրջագայութեան. եւ որդիք նորա իբրեւ Աստուած² համարեցան զնա եւ երկրպագեցին³ նմա եւ կանգնեցին⁴ նմա պատկեր ի կենդանութեան իւրում. եւ այս եղեւ սկիզբն պատկերապաշտութեան: Երկրորդ՝ Արգիացիք, երրորդ՝ Եգիպտացիք, չորրորդ՝ Եբրայեցիք, հինգերորդ՝ Փիւնիկեցիք, ապա աստուատ արար Կադմոս⁵ գիր Յունաց, վասն որոյ առ Սողոն ասէ ոմն երիկեան⁵ գոլ զՅոյնս: Նոյնպէս⁶ զանազան է մուտ տարեմտից եւ անուն ամսոցոյ, զի Եբրայեցոց եւ Մակեդոնացոց տարեմուտն ի միասին է, միով աւուրք զկնի գարնան հասարակածին, իսկ Հա[յ]ոց ընմիջել ամարանն է. եւ ութ ազգաց՝ Եգիպտաց[ցոց], Եթովպ[ացոց], Աթենաց[ցոց], Բիւթենաց[ցոց], Կապադովկացոց, Վրաց եւ Աղուանից⁷ չորս աւրով զկնի Հա[յ]ոցն է, իսկ Յունացն եւ Ասորոցն ընդ միջել աշնան յեղանակին է. եւ Հռոմոցն⁸ յետ մտանելոյ ձմերան⁹, եւ որպէս ուսաք յիմաստնոց ի բաժանել¹⁰ լեզուաց եւ գնալն յիւրաքանչիւր տեղիս ՀԲ (72) տանուտերացն՝ ըստ հեռաւորութեան եւ մաւտաւորութեան աշխարհաց, եւ ժամանելոյն ի նոսա՝ զաւրն զայն տարեմուտ կարգեցին /273ա/ եւ ուսուցին որդոց իւրեանց պատել զաւրն զայն¹¹ տրաւք ընչից¹²: Իսկ¹³ անուն ամսոցոյ՝ են որ ի նախնեացն յանլանէ¹⁴, եւ են որ յեղանակացոյ¹⁵, եւ են որ ի դիցն. քանզի Եբրայեցիք եւ Մակեդոնացիք զաւել աւուրքն դնեն սկիզբն տարոյն¹⁶, եւ ասեն՝ աւր առաջին եւ երկրորդ եւ երրորդ եւ չորրորդ եւ հինգերորդ եւ վեցերորդ մուտն

¹ Բ առաջնոց եւ զմարգարէութիւն

² Բ զաստուած

³ Ա երկրպագին

⁴ Ա կանգնեցին

⁵ Բ իրիկեան

⁶ Բ նոյնպէս եւ

⁷ Ա Աղուանից

⁸ Բ իսկ Հռոմացոցն

⁹ Բ ձմերանն է

¹⁰ Ա իմաստնոցն է ի բաժանել

¹¹ Ա պատել զաւրն զայն չիք

¹² Բ տրովք

¹³ Ա իս քիս իսկ

¹⁴ Բ յանունն է

¹⁵ Ա յեղանակացս

¹⁶ Բ գլուխ տարո

նիսան ամսոյ, որ թարգմանի կազմութիւն՝ զի ի հողոյ¹ կազմեաց զԱդամ: Զնոյն եւ յայտ առնէ արն, զի ուրբաթ ասի, որ է կազմութիւն. ասի եւ բաւթ, այսինքն սուգ եւ տրտմութիւն, վասն ելանելոյն ի² դրախտէն եւ լսելոյն, թէ՛ «հող էիր եւ ՚ի հող դարձցիս»^{6*}: Իսկ Իար որ է նոյ՝ այր³ արդար, Սիւան, Սեմ. Թամուզն, Թարաաբի, Աբրաամ. եւ այս հաստատ եղեալ է հրամանաւ Աստուծոյ ի մարգարէիցն: Իսկ Հա[յ]ոցս է ի վերայ որդոց Հայկին⁴, ըստ տասն ծննդոցն. հինգ արու՝ Նաւասարդն, Հոռի, Սահմի⁵, երեք դուստր՝ Մարի եւ այլն, եւ երկու ի վերայ եղանակացո՞⁶. զի Նաւասարդին նոր ասի, այսինքն սկիզբն տարոյ եւ դարձեալ թէ արդէն աւելոյ եղանակ ի վերա[յ]մկանացն Ովկիանու⁷: Եւ Հոռի, զի հորեն երկրագործք եւ մշակք զցորենն եւ զգինին⁸ յըշտեմարանս ժողովելով. զի յինն Հոռի մուտ է աշնան եւ ունի կենդանակերպս երիս՝ կշիռ, կարիճ, աղեղն: Տիւն ժամս երկոտասան, նոյնպէս եւ գիշերն⁹: Իսկ Սահմի, զի գնա հարաւաինն եւ գա հիւսիսաինն, եւ դարձեալ իմաստուն¹⁰ արք սահմանեն գտունս իւրեանց առ ի գալ ձմերան¹¹: Եւ Տրէ, զի կրէ գիշերն յարէն, զժամն եւ զմասունքն¹²: Իսկ Քաղոցն, զի արձակի խոյն ի հաւտն ըստ հանձարեղ արանց, այլ եւ քաղի ժամն եւ մասունքն, զի Քաղոցի տասն ձմեռնամուտ է եւ ունի երեք կենդանակերպ՝ այծեղջիր, ջրհոս, ձուկն. տիւն ժամս ինն, գիշերն հնգետասան¹³: Եւ Արանց ի յունել ձեան զլերինս եւ զբլուրս, ասեն՝ արանց է այս ճանապարհ եւ ոչ կանանց. արի մարդոց¹⁴ է արս եւ ոչ թուլից եւ վատաց: Մեհեկի¹⁵ զի տունկք եւ բոյսք, որպէս զմեռեալ լինին¹⁶ եղեմնապատ եւ ձիւնաթաղ.

¹ Ա. հող

² Ա. ի չիք

³ Ա. նու այր, Բ. նո այր, ուղղեցինք նոյ՝ այր

⁴ Ա. Հայկիմն

⁵ Բ. Հոռ, Սահմ

⁶ Ա. և Բ. ձեռագրերում «եղանակացո» բառից հետո լուսանցում կա հետևյալ հավելումը. «Մարգաց եւ Հոռոից, որ է ստուգապէս ամենայնդ ՚ի վերայ եղանակացո»: Այս հավելումը մտել է Գ. ձեռագրի տեքստի մեջ:

⁷ Բ. եւ դարձեալ... Ովկիանու չիք

⁸ Բ. զցորեան եւ զգինի

⁹ Բ. զի յինն... եւ գիշերն չիք

¹⁰ Բ. իմաստունք

¹¹ Բ. ի ձմերանոյն

¹² Ա. զի առնու գիշեր յարէն ի ժամն եւ զմասունքն, որպէս կրելով յինքն

¹³ Բ. ըստ հանձարեղ արանց... գիշերն հնգետասան չիք

¹⁴ Ա. մարդ է

¹⁵ ԶԶ Մահեկի

¹⁶ Բ. կան փիւ լինին

Մեհեկի¹ այսինքն ասի: Արեգ՝ որպէս թէ յառնեն բոյսք եւ բանջարք աստուածաին հրամանան. արի ասէ հիւսիւս² եւ եկ հարաւ, որ է գարնան ամիս, զի երկոտասան մուտ է, ունի եւ երեք կենդանակերպ՝ խոյ, ցուլ, եկաւոր. տիւն ժամս երկոտասան, նոյնպէս եւ գիշերն³: Իսկ Ահկի այսինքն ահ անկանի ի յառնել գետոց եւ ի թուլանալ ձեան. ահ է⁴, ասեն, մարդոյ ամենայն⁵ ուրէք, զի գետահարոցք է: Մարերի, որպէս թէ⁶ թաւանան մայրիք տերեւովք⁷ եւ ոստ/273բ/աւք եւ լինին մայր թուլոց եւ գազանաց: Իսկ Մարգացն, որ է ժամանակ ածելոյ⁸ զմարգ, որ ի դաշտս եւ ի հովիտս իցեն, յայգեստանս⁹ եւ ի բուրաստանս. յորժամ արեգակն առ շամբն եւ կամ յետ շանն¹⁰ իցէ, զի ի ժԳ¹¹ ունի երեք կենդանակերպ՝ խեցգետին¹², առիւծ, կոյս. գիշերն ժամս ինն, եւ տիւ հնգետասան: Եւ Հրոտից¹³ ըստ գրութեան¹⁴ է, զի հուր է ոտիցն, որ այրէ ներքուստ ի վեր ջերմութիւն արեգական^{7*}: Եւ ի գիրս սրբոց¹⁵ մարգարէից այլոց ազգաց անւանք ոչ յիշի¹⁶, բայց ի Հա[յ]ոց՝ Անդրէաս¹⁷ եւ Ջաքարիա:

Իսկ Աղուան ամիս նաւասարդուլ, որ է Նաւասարդցի¹⁸ այսինքն ի թոռացն է յուստերաց կամ ի դաստերաց: Իսկ Վրացն. ախածիլ, որ ստուգաբանի այսպէս՝ ախաց, ախացի¹⁹, թէ մեծ պատրոնացի²⁰: Սեթիելի, որ է Սոնեթացի²¹, բայց սոքա եւ յոյնք ինքեանց ամսամտաւք ոչ վարին, այլ ծառաբար²² զհետ երթան այլոց:

¹ Ա. մահ

² Ա. հիւսիսի

³ Բ զի երկոտասան... եւ գիշերն չիք

⁴ Ա. ահ է չիք

⁵ Ա. ամենայն մարդոյ

⁶ Ա. քէ չիք

⁷ Բ տերեւաւ

⁸ Ա. ակածելո

⁹ Ա. յագեստանի

¹⁰ Բ եւ առ շանն

¹¹ Բ զի ի ժԳ... եւ տիւ ժԵ

¹² Ա. խեծգետի

¹³ Բ հրոտիցն

¹⁴ Բ դրութեան

¹⁵ Ա. սուրբս

¹⁶ Ա. այլոց անւանք ոչ յիշի ազգաց

¹⁷ Ա. Անկէաս, Բ Անդրէաս

¹⁸ Բ Նաւասարդեցի

¹⁹ Բ ախեցի

²⁰ Ա. պատրոնաց

²¹ Բ Սոնեթեցի

²² Ա. ծառաբար

Իսկ Յունացն ի վերայ դիցն անւանցն է. Դիոս, այս ի Դիոնեսիոսէ, զոր որթոց եւ այլոց այլանդակութեանց արարիչ ասեն: Ապելիոս¹, այս Ապոլոն է, Պերիտոս, այս պան է Նոխագոտն:

Իսկ Հոռոմոցն² ի վերայ նախնեացն է. Յունւարի՝ այս Յովան է³ նախնին իւրեանց: Բայցիի ասեն ոմանք, թէ յաւուրս Մանասէի՝ Նումաս Պաւ- [պ]իլոս⁴ 8* երկու ամիս յաւել ի տարին Հոռոմոց⁵, զի յառաջ քան զնա տասն էր. եւ յաւել նա զ[Յ]ունւարն եւ զՓեպրւարն: Իսկ Մարտն եւ Ապրիլն⁶ իմաստասիրաց անւանք են. եւ Աւգոստոսն⁷ թագաւորի: Բայց այսոցիկ⁸ հաւատոյ կամ վարուց աւգուտ զի՞նչ, ասիցէ ոք. բազում ինչ ամենայն իրաւք, վասն զի աշխարհն ծով է, որպէս ասէ մարգարէն, ժամանակն չափ կամ կամուրջ կամ նաւ կամ ճանապարհ⁹ ի ծովու, եւ¹⁰ այս երեւելի մարդիկս ի ճանապարհի¹¹ կենցաղոյս նշան բուռն հարկանելոյ, զի մի որպէս կոյրք անցանիցեմք ընդ կենցաղս, այլ թէ որ յիշեն¹² բարիք են ի նոյն¹³ նախանձն յորդորիմք, եւ եթէ չարք՝ զգոյշանայցեմք, վասն զի¹⁴ ար եւ տիւ եւ գիշեր վասն այն եղեն¹⁵, զի մարդիկ իմաստասիրեսցեն՝ ըստ մարգարէին. «ար՝ աւուր բղխէ¹⁶ զբան. եւ գիշեր՝ գիշերի՝ ցուցանէ զգիտութիւն¹⁷»^{9*}: Եւ վասն արեգական եւ լուսնի եւ աստեղաց¹⁸ ասաց Աստուած. «եղիցին ՚ի նշանս եւ ի ժամանակս, եւ յաւուրս, եւ ի տարիս»¹⁹, վասնզի որչափ զարեգակն²⁰ գեր ի վերոյ գագաթան ունիմք զնալով ար կոչեմք զնա,

¹ Ա. Ապլիոս

² Բ. Հոռոմաւեցոցն

³ Բ. է. չիք

⁴ Ա. Պալիմոս

⁵ Բ. Հոռոմաւեցոց

⁶ Ա. Ապրիելին

⁷ Ա. աւգոստոս

⁸ Ա. այսոցիկ չիք

⁹ Ա. նաւ ճանապարհ

¹⁰ զի փիւ եւ

¹¹ Բ. ի ճանապարհին

¹² Բ. յիշինն

¹³ Բ. նոցա փիւ նոյն

¹⁴ Ա. իսկ փիւ վասն զի

¹⁵ Ա. վասն այն եղեն չիք

¹⁶ Բ. բխէ. Ա. բղխէ զբան չիք

¹⁷ Ա. զգիտութիւն չիք

¹⁸ Բ. եւ աստեղաց չիք

¹⁹ ՁՁ «եղիցին յաւուրս եւ ի ժամանակս եւ ի տարիս եւ ի նշանս» ուղղեցինք համաձայն Ծննդոց գրքի Ա. գլխի 14 պարբերության:

²⁰ Ա. զի չափ զարեգակն

զի աւրն պատկեր է ամսոյն, եւ ամիսն տարոյն, զի տարին 345 (365) աւր է. եւ յամիսն նոյնքան ժամանակք¹ 10* են եւ յաւրն այնչափ մասն.^{11*} Իսկ մասն արեգական մի շուրջ գալն է. նոյնպէս եւ լուսինն, մասն՝ նորա շուրջն է. քանզի արեգակն բոլոր շրջի /274ա/ որպէս աղաւրիք, որպէս անիւ, իսկ լուսինն՝ ՚ի թռիչս՝ որպէս թռչուն, որպէս նետ: Արեգակն մեծակն ասի կամ տւրնջեան աստղ՝ կամ լուսոյ ակն. չափ մեծութեան նորա քան զցամաք երկիր: Լուսինն նազ լոյս, իգագոյն լոյս, մթագոյն լոյս:

Եւ զի մաւտ յաշխարհս է, եւ որպէս հաեւրի որ ծովու հանդէպ է՝ մղտագոյն երեւի, եւ որ ցամաքի՝ մաքրագոյն. թէպէտ ոմանք ասեն մրուր լուսոյ, այլ զլոյս գիտեմք պարզ էութիւն: Լուսինն² անաւթն է. որպէս անուէն յայտ առնէ, թէ լոյս ունի, եւ ի հնանալն³ պատի զթիկամբն եւ ի նորանալն ի միւս կողմն պատի եւ ի ներքս մտանէ. եւ տեսեալ զնա մարդիկ յընծաիլ⁴ եւ ի մաշիլ ասացին, իմ ես աւրինակ ծնընդեան եւ մահու: Իսկ անմոլար աստեղքն ի վերայ⁵ աւդոյդ որպէս բեւեռեալ են⁶. նովաւ շարժին եւ շրջին: Իսկ մոլորակքն⁷ շրջագայք են եւ գործաւորք եւ տանուտէրք⁸: Եւ խաւարումն արեգական, որ բնութեամբ լինի ի նորանալ լուսնին, զի ընդդէմ անցանէ⁹, իսկ որ ոչ այսպէս¹⁰ այն նշանք են նոր իրաց, որ ի ժամանակին լինելոց իցէ: Իսկ խաւարումն լուսնի այսպէս լինի՝ Արաւսեակն առաջի արեգական երթայ եւ¹¹ փայլածուն զկնի եւ լուսինն ի մէջ նոցա. թէ այն երկու մոլորակքն յարեգական մաւտին՝ լուսինն խաւարի. եւ թէ քան զայս աւելի է նշանք են: Եւ ասեն ամպեր Ռաստ¹² եւ Չանապ անուն, թէ նոքա խաւարեցուցանեն զարեգակն եւ զլուսին^{12*}: Եւ չափ բարձրութեան երկնից, որչափ յարեւելից յարեւմուտս՝ այնչափ մի եւ կէս՝ ըստ կամարի գմբեթածեւ ձգեալ: Իսկ տարի արեգական. ՚ի գարնան զուգաւորութենէն¹³ ի նոյնն¹⁴ է. եւ լուսին՝ յաւազ

¹ Ա. ժամք են

² Ա. Լուսնին

³ Ա. զհնանալն

⁴ Բ. յընծաիլ

⁵ Բ. անմոլարն ի վերայ

⁶ Ա. բեւեռ են

⁷ Ա. մոլորականքն

⁸ Բ. մոլորակալն շրջագայք որպէս գործաւորք եւ տանուտէրք

⁹ Ա. անցանի

¹⁰ Ա. այսպէս ոչ

¹¹ Ա. բայց փիւ եւ

¹² ՉՉ զՌաստ

¹³ Բ. գուգաւորութենէ

¹⁴ Բ. ի նոյնն

լրման էն ի նոյնն, վասն զի թաւալի արեգակն յելիցն ի մուտս ՅԿ (360) անգամ վասն զի թաւալմամբ գնա արեգակն ի հասարակարէն¹ եւ ՅԿ² (360) անգամ ի գիշերի ընդ երկրաւ մինչեւ ցծագումն իւր. եւ անտի յառաջ մի մի թաւալ³ յաւելլ. իսկ զիջականսն մի մի թաւալ պակաս է: Չվեց ամիսն ի տւրնջեան թաւալմունս յաւելու ու զվեց` ի գիշերի: Եւ առ մի մի թաւալումն Շ (500) ասպարէս⁴ լինի յառաջ խաղացումն, զի այնքան է մեծութիւն նորա: Իսկ ՅԿ (360) թաւալումն լինի ճՁՌ (180.000) ասպարէս եւ ՆԾ (450) թաւալումն ՄԻՆՌ⁵ (225,000), վասն որոյ երկրաչափք ճՁՌ (180. 000) ասպարէս ասացին զերկրի լայնութիւն եւ զերկայնութիւն: Ասպարէսն ըստ աղագափութեան է քայլս ճէ (107), եւ զքայլն Զ (6) ոտն, եւ ոտն ժԶ (16) մատն, եւ մղոնն է (7) ասպարէս: Եւ ըստ Պարսից ասպարէսն ճԻԳ (123) քայլ է⁶, եւ գետնաչափութեամբ` մղոնն Ռ (1000) քայլ, եւ խրասախն Գ (3) մղոն⁷: Իսկ ըստ լուսնի⁸ տարին ՅԾԳ (354) ար է⁹, ըստ երկոտասան լրմանց իւրոց /274բ/ եւ ամսոց, վասն զի սա ուսոյց զերեսուն արն կոչել ամիս, որ ասէ իմ ես: Իսկ հինգ արն շարահար է¹⁰ ի նոր տարին¹¹ կամ ի նոր ամիսն: Իսկ լուսնի¹² արն ԻԳ (23) ժամք են եւ երկու մասն, վասն զի երկու մասն աւելի ընթանայ քան զարեգակն յամենայն աւուրս: Եւ ժամն լուսնի հինգ մասն են, եւ այս¹³ սակս խոնարհութեան իւրոյ, զի շատ միջոցաւ հեռի¹⁴ է յարեգականէ, վասն զի նա զկամարան¹⁵ պատելով յերեսուն մասն կատարէ¹⁶ զժամն եւ սա սակս ուղեգնացութեան հինգ մասն, եւ հնգեակ վեցեակ լինէ¹⁷, ըստ այս շափ մասին մերձ է լուսինն յերկիր քան զարեգակն:

¹ Ա. ՅԿ անգամ... հասարակորէն չիք

² Ա. ՅԿԵ անգամ

³ Ա. եւ անդի մի թաւալ

⁴ Բ. աստ եւ այլուր «ասպարէզ»

⁵ Ա. մի Ռ. ԳԻՄ ՄԻՆՌ

⁶ Բ. ճԻԳ քայլ է

⁷ Ա. խրասախն

⁸ Ա. լուսնին

⁹ Ա. Աւր է չիք

¹⁰ Բ. է արն շարարկ է

¹¹ Ա. ի տարին

¹² Ա. լուսնին

¹³ Ա. յայս

¹⁴ Բ. հեռի չիք

¹⁵ Բ. կամարովն

¹⁶ Ա. կատարելով

¹⁷ ՉԶ եւ էդ Զ եկ լինէ(?)

Եւ գնայ լուսինն, ո՛չ թաւարմամբ, այլ սողելով, եւ մասն լուսնի անձնաշափ¹ տեղափոխութեամբ իւր, եւ այն երկու մասունք լուսնի ժողովին յամսեանն եւ լինին² Կ (60), որ են հնգամասնեան³ երկոտասան ժամք, իսկ երկու ամիսն ՃԻ (120) մասն, որ լինի հնգամասնեայ⁴ ժամք ԻԳ (24), որ է ար մի, եւ լինի երկոտասան ամիսն Զ (6) ար: Այս մասունք են եւ կեսմասնականք⁵ եւ վերածականք⁶ եւ դոյն դասի վեցեակ, սակս աւարտմանդ ի վեց ար. սա լինի⁷ յարակայ հետագայ ամին. վեց արս այս եւ հինգ աւելիքն, սոքա կոչին հնգեակ եւ վեցեակ, եւ սոքաք պարտ է գտանել զքանիս լուսնին, եւ յանցեալ ամէն գան ի մի եւ լինին երկոտասան ար, որ կոչի վերագիր կամ յարակայ: Բայց ոչ կարէ վերագիրն զքանիս լուսնին ցուցանել, վասն զի երկամասնութեան⁸ հինգ արն կորընչի⁹ եւ ոչ կարէ բերել¹⁰ զթիւսն կատարեալս: Իսկ որ վասն արեգական շաբաթանալոյ ասեն ՚ի¹¹ ԻԸ (28) ամի, ժողովեալ մասունքն եւթն ար լինի, եւ շաբաթանալ ասի: Նոյնպէս եւ լուսին ժԹ (19) ամի ժողովին եւ լինին եւթն եւ շաբաթ¹²: Եւ այսոքիկ յերկար ժամու պետք են առ ի քննութիւն, զոր անդրէն թողլի է:

Իսկ ար եւ տիւ Մովսէս անւանեաց առաջին եւ երկրորդ եւ երրորդ, եւ զմինն, առանձինն՝ շաբաթ եւ Հեթանոսք Կռանոս. եւ այլ մի ըստ միոջէքն եւ զեւթն՝ Ափրոդիտեայ¹³: Եւ ի հաւատալ մեծին Կոստանդիանոսի՝ սուրբն Սեդեատրոս առալ զանուն շաբաթուն¹⁴ եդ ի վերայ իւրաքանչիւրոցն, ասաց՝ միաշաբաթ, երկշաբաթ. այլաւքն¹⁵ հանդերձ: Եւ վասն լրմանցդ¹⁶ այսպէս ասեն, թէ ի թագաւորութեանն Անտոնինոսի՝ Արիսիդէս¹⁷ Աթենացի

¹ Ա. անձաշափ

² Ա. լինի

³ Բ եւ ամասնեա

⁴ Ա. է ամսեան

⁵ Բ եւ կես մասնականք

⁶ Ա. վերածակքն

⁷ Ա. սայ լին

⁸ Բ երկամասնութիւն

⁹ Ա. է աւուրն կոչի

¹⁰ Բ ոչ բերէ

¹¹ Ա. ի չիք

¹² Գ լուսինն ի ժԹ ամին է աւուրն շաբաթ

¹³ Ա. Ափրոդիտէ

¹⁴ Ա. շաբաթուն չիք

¹⁵ Բ եւ այլաւքն

¹⁶ Ա. լրմանցս

¹⁷ Ա. Արիսիդէս

արար լրումն Հոռոմոց՝ Ի Գ (4) ապրիլի¹. Եւ ի Սեւերեայ² թագաւորութեանն եգիպտացւոց] եւ եթէոպացւոց] արար Ղեւոնդ՝ հայրն Որոզինի: Եւ յաւուրս Աղեքսանդրի՝ Մամեայ որդւոյ՝ Որոզինէ³ արար լրումն տասն ամի Արաբացւոց] եւ Մակեդոնացւոց]:

Եւ ի թագաւորութեանն Գալլիոսի, Անատոլիս եպիսկոպոս արար Յուն /275ա/աց եւ Ասորոց: Իսկ ի թագաւորութեանն Կոստանդիանոսի՝ Եւսեբի Կեսարու [հայրապետն] արար լրումն Բիւթ[ա]նացւոց եւ Կապադ[ովկացւոց]: Եւ յաւուրս որդոյ նորա, Անդրէաս^{13*} եղբայր Մանգնոսի⁴ եպիսկոպոսի, միաբանութիւն արար ութն ազգաց լրմանց իննեւտասներեկաց եւ կարգեաց⁵ զերկերիւրեակն: Ի նոյն ժամանակս եղաւ եւ յալոց ոմանց⁶ իննսուն եւ հնգեակն⁷: Իսկ ի թագաւորութեանն Յուստիանոսի ամբարշտի, որ զտեառնընդառաջնի⁸ [տաւնն] փեպրւարի⁹ յերկուսն փոխեաց երկերիւրեակն Անդր[ե]այ լցաւ եւ պիտոյ էր գլուխ ՇԹԺ (519)-եակ կանոնին: Եւ ինն ամ խափան եկաց տումար¹⁰ եւ տաւն: Ապա էաս իմաստասէր Աղեքսանդրացի¹¹ 14* ժողովեաց առ ինքն¹² երեսուն այր¹³ իւր նմանի, եւ յառաջ վարե[ա]լ զարվեստն Անդրէասայ¹⁴, արարին¹⁵ ՇԼԲ (532) ամաց լրումն ի նոյն դառնալով, վասն այն անտարակուսելի է բոլորն այն: Բայց զԻրիոն¹⁶ 15* իմաստասէրն ի դրան թագաւորին ոչ կոչեցին, սուտ եւ հերձուածող գոլով, եւ յորժամ իմաստասէրն յունաց՝ Ելոզս անուն, եբեր զարիւնակն եւ քննել Իրիոն զմասունս¹⁷ հնգեակի եւ վեցեակի, որ ոչ երբեք լեալ էր¹⁸, զի հինգ հնգեակ եւ վեց վեցեակն, որպէս յառաջն¹⁹ ասացաւ մասունք են մին՝

¹ Ա. դ-իցն ապրիլի

² Ա. Սեւերա

³ Բ. Որոզինէս

⁴ Ա. Անդրէ եղբայր Մագնոսի

⁵ Ա. եւ կարգեաց չիք

⁶ Ա. մասանց փիւ ոմանց

⁷ Ա. Լէ-ակն

⁸ Ա. ընդ աջն

⁹ Ա. փետրւարի

¹⁰ Բ. տումարն

¹¹ Ա. յԱզեմսանդր

¹² Ա. առ ինքն չիք

¹³ Բ. այր չիք

¹⁴ Ա. Անդրա

¹⁵ Բ. արարին չիք

¹⁶ Ա. զԻրոն

¹⁷ Բ. մասունս

¹⁸ Բ. լեալ է

¹⁹ Բ. յառաջ

արեգական եւ մին՝ լուսնին, այլ նա հակառակ ասաց, արար զապրիէլ հնգե-տասան 'ի վեշտասան եւ զվեց ի հինգ¹. արդ այն ժԶ (16)-ն շքերէ ինչ սխալ², այլ այն վեցն եղեալ ի վեց եւ ի հինգ տարումն կիրակէ³ ածե մեզ որպէս եւ է⁴. Իսկ այն է նոցա շաբաթ, ըստ Իրիոնի առնելոյն: Եւ նոքա ընդ Հրեայսն զատիկ առնեն եւ ի սուրբ ժողովոյն նզովքն անկանին⁵, զի գրեալ է նոցա կանոնս, թէ ընդ խաչահանունսն եղիցին: Իսկ մեք ի միւս կիրակէն տամք եւ զերծանիմք, քանզի յետ ութ ամի իմաստասիրացն ապա երեւեցաւ եղծումն իրացն եւ Հայք յԱղդէէ⁶ Պամրացի իմաստասիրէ՝ յառաջ առեալ էին զուղղորդն⁷ եւ յայն ժամ ընդ պարսից իշխանութեամբ գոլով շանկան յեղծումն նոցա. եւ էր այն 'ի տասն թևականին Հա[յ]ոց: Եւ որպէս ոչ ընկա-լան Հայք զչար աղանդն Քաղկեդոնի⁸, նոյնպէս եւ ոչ զայս, թէպէտ յետ երե-սուն ամի թագաւորեաց Զենոն եւ գրեաց ամենայն ուրէք, որ անւանի⁹ հինատիկոն, որ թարգմանի միաբանութիւն ուղղափառութեան. եւ նզովե-ցին զժողովն Քաղկեդոնի: Այսու սահմանաւ վարեցաւ Անաստաս եւ զսուրբ Աստուածն խաչեցաւ[ն]¹⁰ հաստատեաց: Բայց զկնի ամենեցուն, վերոյ¹¹ ասացեալն Յուստիանոս արար ժող/275բ/ով ի Կոստանդինուպալիս, զոր հինգերորդ ժողով կոչեն, եւ եղծեաց զամենայն կարգս եւ զկրանս, ընդ իւր միաբանե[ա]լ զամենայն ազգս բարբարոսաց հիւսիսային¹², մինչեւ 'ի Վիրս¹³: Արար լրմունք Անանիայ եւ զկնի տէր Մովսէս^{16*}, եւ յայսմ ամենայնի ընդ մեզ էին Վիրք¹⁴ ՃԺԴ (114) ամ: Եւ յորժամ մերքս բաժանեցան եւ զտու-մարս շրջեցին՝ յԱրաց¹⁵ յերեսունն էր յայտնութիւնն. վասն այն ասեն՝ կալ թիւ մի յԱրաց ամսոյ: Եւ շրջելոյ պատճառ¹⁶ ասեն ոմանք, թէ ընդ պարսից

¹ Ա, Բ, ԺԵ, ԺԶ եւ Զ, Զ-ն Ե

² Բ սղալ

³ Բ կիրակէ

⁴ Ա այն է

⁵ Ա անգամին

⁶ Բ յԱղդէ

⁷ Ա զուղղորդն, Բ զուղորդն

⁸ Ա կեդրոնի *փխ* Քաղկեդոնի

⁹ Ա ուր անւանի

¹⁰ Ա խաչեցար

¹¹ Բ վեր

¹² Ա հիւսային, Բ հիւսասինն, Բ բարբարոսաց ազգս

¹³ Ա ցՎիրս

¹⁴ Ա Վիրք

¹⁵ Ա յարանց

¹⁶ Ա եւ պատճառ շրջելոյն

իշխանութեամբ էին, իշխանքն կամեցան թէ ընդ նոսա յար լիցի, որ երկու անգամ տարեմուտ ո՛չ պիտի¹ առնել: Բայց Հայք աւելի քան զԱսորիք եւ զՀրեայք՝ չեն լեալ ընդ Պարսաւք, զի Պարսից տաւնն եւ ամիսն ի միասին շարժի² եւ մեր տաւնքս անշարժ են: Եւ այլք ասեն, թէ վասն³ աշխատելոյ մանկանց ի յուսումն, զի դիւրաւ⁴ գտանելին՝ դիւրաւ արհամարհելի է: Եւ ոմանք թէ կամեցան ամենայնիւ⁵ բաժանել զմեզ ի Յունաց, զի մի խառնեցուք⁶ ընդ նոսա տաւնիւք կամ ամսաւք⁷ կամ տարեմտիւք: Այլ մեք Աստուծոյ շնորհաւքն՝ զտերունական եւ զգլխաւոր տաւնսն սեփական ի գրոց ունիմք. եւ այս ի՞նչ վնաս նոցա⁸ կամ մեզ. տաւն որ յաւուրս Վարդավառին՝ բարեկենդան⁹ առնել, կամ որ յինունքն աշունն: Բայց այս է պատճառն, որ երբ կամեցան առնել համառաւտ եւ սեփական, եւ մինչդեռ էին ի ջանս, մեռաւ կաթողիկոսն եւ յետ նորա արուեստաւորն¹⁰, եւ այլ ոչ եղեւ ումէք փոյթ: Իսկ ի ժամանակս Եսքելլոսի Աթենացւոյ¹¹ առ որով եղաւ ազոնն¹² 19*, որ է մրցութիւն¹³ Ղոմբիազն կոչեցեալ, որով Հելլենացիքն վարեն զժամանակս իւրեանս. եւ հնարեցաւ զայս ի Փոտինոսէ¹⁴, հրամանաւ Հերակլեայ, առ ի խաղաղել զխիստ պատերազմն՝ «Կացէք, ասէ, մինչեւ ի տարին ուրախութեան եւ ապա ցուցցէ իւրաքանչիւր ոք զուժ իւր եւ զարուեստ¹⁵ եւ պսակեցի»: Բայց Եւսեբի առ Յովաթամաւ արքայիւ ասէ այլոց բանիւ: Բայց առնեն զազոնն ի հինգ ամին, յորժամ չորքն լնու եւ հինգն սկսանի. եւ այս է նահանջն, որով տուժարական արուեստսն յառաջանայ ի ժողովումն: Այլ մեզ տարի եւ տարեկան, որպէս թէ փրկութիւն եւ փրկանք¹⁴ Քրիստոս է. եւ տարեմուտ՝ ծննդեամբ մուտ¹⁵ նորա յաշխարհս, եւ չորս յեղանակ, չորեք

¹ Բ չպիտի

² Բ շարժիլ

³ Ա թէ վասն չիք

⁴ Ա դիւր

⁵ Ա ամենեւին

⁶ Ա տաւնեցոյք փի խառնեցոյք

⁷ Ա կամ ամսաւք չիք

⁸ Ա սոցա

⁹ Ա բարեկենդան, Բ բարեկենդանին

¹⁰ Ա ազոն

¹¹ Ա մրցութեան

¹² Ա ի Փոտինոսի հրամանէ, Բ ի Փիտիոսի հրամանէ. ուղղեցինք ի Փոտինոսէ, հրամանաւ

¹³ Բ արուեստ

¹⁴ Ա փրկական փի փրկանք

¹⁵ Բ մուտն

նիւթեայ բնութիւնս, կուսական յղութիւնն՝ որպէս ձմեռն, /276ա/ եւ ծնունդն որպէս գարունն. ամառն նշանքն, աշուն¹ կամաւոր անշնչանալն² ի խաչին, աւել աւուրք հինգ զգաութիւնքս: Եւթ աւր շաբաթով ձայնին եւթն գործարանքն³, երկոտասան ամիսք⁴ տիրական անդամքն ՅԿԵ (365) աւր 3 [300] յաւդուածքն⁵. տիւն աստուածութեան լոյսն. գիշեր՝ մարդկութեանն եղեալ որպէս ծածկոյթ⁶: Ընդ տիւ եւ ընդ գիշեր աւր մի՛ բանն մարմնովն մի Քրիստոս⁷: Արեգակն՝ աւետարանն: Լուսին՝ արեւնքն, արաւսեակն՝ Յովանէս, գիշերավար՝ Պաւղոս, կենդանակերպք՝ երկոտասան առաքեալքն⁸, եւթն մոլորակքն՝ Ստեփանոսեանքն, անմոլար աստեղքն՝ մարգարէքն, երկինքն⁹ երկնաւորն, երկիր՝ երկնաւորն¹⁰, հուր Հայրն¹¹, հողմն՝ Հոգին, դրախտ՝ եկեղեցի, կենաց փայտ՝ խաչն, աղբիւր՝ Տիգրիս¹² վտակն, պտուղ՝ մարմինն եւ այլք այսպիսիք:

Թէ պարծի հռոմեացին, թէ յունւարի վեցն ծնաւ Քրիստոս, ո՛չ ինչ նւագ այն, զի ի Նաւասարդի ԻԵ (25) զծնաւղն իւր փոխեաց յաստեացս, թէ բարեբախտիկ կայսր, զի ի գրեալն զմարդիկ¹³, ծնաւ Ազատարարն ի ծառաութենէ, առաւել զուարճասցի¹⁴ Աբգար, զի գրեալ դաւանեաց զնա Աստուած եւ Որդի Աստուծոյ:

Քննել արժան է եւ զայս, թէ զիա՞րդ եկեղեցիք հայաստանեայցս ի մուտն Նաւասարդի տան կատարեն¹⁵ Յովանու: Ասեն թէ, թագաւորն Հաւ[յ]ոց Արտաշէս բարեմիտ երեւեալ¹⁶ յազգի անդ իւրում շինութիւն եւ խաղաղութիւն աշխարհի ամենայն ուրէք յաճախ յաւելեալ¹⁷ եւ սիրելի ամե-

¹ Բ աշունն

² Ա անշնչանալ

³ Բ գործարանք

⁴ Ա ամիսքն

⁵ Գ ՅԿԵ յողորմածքն

⁶ Ա մարդկութիւնն որպէս ծածկոյթ եղեալ

⁷ Ա բան մարմնով միտքս *փիս* մի Քրիստոս

⁸ Բ առաքեալք

⁹ Ա, Բ երկինք

¹⁰ Բ ապայ երկրաւորն

¹¹ Ա հայր

¹² Ա, Բ Տիգրիս ուղղեցինք Գ ձեռագրով

¹³ Ա գրելն

¹⁴ Ա զարեւասցի

¹⁵ Ա, Բ կատարէ

¹⁶ Ա, Բ երեւել

¹⁷ Ա յաւելել հաճախ

նեցուն եւ հոշակաւոր լեալ: Որդի մի էր նորա՝ Արտաւազդ¹ անուն՝ բախած ի մանկութենէ, զոր Շիրաբն կոչեն: Եւ հաւրն գիտելով, զի ոչ էր բաւական վարել զթագաւորութիւնն՝ ոչ ետ նմա: Իսկ յորժամ վախճանեցաւ եւ որդի յար ինքեան ոչ մնաց՝ սուգ ծանր եղեւ աշխարհի, այնքան՝ զի բազում զէնս² խորտակեալ ի վերայ գերեզմանին եւ երիվարս յուովս. այլ եւ ծառայքն եւ աղախնայքն³ սպանին զինքեանս ի վերայ նորա⁴: Եւ⁵ զայն տեսեալ Արտաւազդայ տրտմեցաւ յոյժ եւ ասէ⁶. «Որքան կենդանի էր՝ զթագաւորութիւնն ինձ ոչ ետ, եւ արդ ի մեռանելն⁷ աւերեաց զերկիր. աւէր երկրի⁸ զիա՞րդ թագաւորեցից»: Եւ ապա հեծեալ յերիվար⁹, զբաւսանաց աղագաւ, գնալ ի կողմն կամրջին Միամաւրի¹⁰ եւ անդ հարեալ յայտոյն¹¹ շարէ՛ ընկեցեալ¹² ի կամրջէն՝ ջրասոյզ եղեալ անյայտ լինէր: Իսկ մերձ/276բ/ակայքն համբաւ այսպիսի վերացուցին. աստուածքն զայրացեալ վասն զհայրն բամբասելոյն¹³ յափշտակեցին զնա ի լեռոն¹⁴ Մասիս եւ երկաթի կերպանաւք¹⁵ կայ ի բանդի, եւ երկու շունք՝ սեւ եւ սպիտակ՝ յար լեզուն զկապանս նորա. այս է յարալէզն¹⁶ առասպելն¹⁷ որ ասեն: Յայս յաւելուած արարին քուրմքն¹⁸ ժամանակի եւ ասացին, թէ երկաթի կապանքն¹⁹ ի²⁰ տարեմտին ի մագն եկած²¹ լինի, եւ թէ կտրի, արտաքս ելանէ եւ աւերէ զաշխարհս²²: Ապա արէնք գրե-

¹ Ա. Արտաւազ

² X շէնս

³ Բ ծառայք եւ աղախնայք

⁴ Գ եւ ծառայս եւ աղախնեայս սպանելին ի վերայ նորա ինքեան

⁵ Բ եւ չէք

⁶ Բ ասէր

⁷ ՁՁ ի մեռանելս

⁸ X երկրիս

⁹ Բ յերիվարս

¹⁰ X Մեծամորի

¹¹ Ա. յայտուն

¹² Բ ընգեցեալ

¹³ Բ բամբասելոյ

¹⁴ Ա. լեռն

¹⁵ Ա. կապաւք

¹⁶ Բ յարալէզ

¹⁷ Ա. առասպելն չէք

¹⁸ Բ քուրմք ժամանակին

¹⁹ Ա. կապաւք

²⁰ Բ ի չէք

²¹ Ա. ի մագ ընկած

²² X եւ աւերէ չէք

ցին¹ յազգս Հա[յ]ոց՝ ամենայն ար[ո]ւեստաւոր մի անգամ բախել զարուեստն ի մուտն Նաւասարդի, յաւելուած կապանացն Արտաւազդայ: Գարբին զսալն հարկանէ կռանաւ՝ դատարկ, այսպէս հանդերձագործն², նոյնպէս եւ այլքն: Զայն խափանելոյ աղագաւ սուրբ Լուսաւորիչն Գրիգորիոս³ կարգեաց հաստատուն յայսմ աւուր տան⁴ մարգարէին եւ Մկրտչին Յովանու⁵:

Արդ, որովհետեւ հասաք յարս յայս շնորհիւ⁶ Աստուծոյ խաղաղութեամբ եւ տանել արժանաւորք եղաք⁷ զնոյն ինքն, որոյ տանեմքս⁸ եւ որոց այսաւր յիշատակ է՝ յիշելով զսուրբ կոյան եւ զսուրբն Ստեփաննոս⁹ նախավկայն՝ առաքելովք եւ մարգարէիւք եւ մարտիրոսաւք եւ նահատակաւք, վկաիւք¹⁰ եւ խոստովանողաւք, եւ որ մերն է Լուսաւորիչ բազմաշարշար նահատակն Գրիգորիոս, բարէխաւս եւ միջնորդ կալցուք առ նորա գործ Սուրբ Երրորդութիւնն՝ զարս զայս շնորհաւոր առնել եւ խաղաղական կենաւք անցուցանել¹¹ հանուրց հաւատացելոց¹² եկեղեցականաց եւ աշխարհականաց, թագաւորաց եւ իշխանաց, ազատաց եւ ռամկաց, տերանց եւ ծառայից, տիկնանց եւ աղախնաց, հարստից եւ աղքատաց: Նորարարն Աստուած¹³ նոր արասցէ զսոսա¹⁴ զամենեսեանն¹⁵ ներքոյ եւ արտաքոյ, նոր եւ շահեկան եւ աճեցուն տարի եւ ժամանակ ածելով յամերամս ժամանակաց: Նոր արեգակ եւ լուսին եւ աստեղք¹⁶, նոր ծագեալ թագաւորն փառաց, նոր ողորմութեամբ երեւեալ աստեղախուուն սրբովք. եւ կացցէ ի միջի՝ ձերում եւ նոր արասցէ հոգւով¹⁷ եւ մարմնով՝ պատկառելի գլխաւս եւ կատարեալ ան-

¹ Բ դրին *փխ* գրեցին

² Ա. հանդերձագործն

³ Ա. Գրիգոր լուսաւորիչն

⁴ Բ տանել

⁵ Ա. Յովանու *չիք*

⁶ ՁԶ շնորհելով, *ուղղեցինք* շնորհիւ

⁷ Ա. եղեալ

⁸ Ա. տանեմք

⁹ Բ եւ Ստեփաննոս

¹⁰ Բ վկասալ

¹¹ Բ անցուցանել *չիք*

¹² Բ Հայաստանեացս *փխ* հաւատացելոց

¹³ Բ Աստուածն

¹⁴ Ա. զսոսա *չիք*

¹⁵ Բ զամենեսեանն

¹⁶ Բ աստեղի *չիք*

¹⁷ Բ ոգով

դամոցդ. նոր ամ՝ երկոտասան ամսաւք երկոտասան անդամոցդ շնորհի, եւ նոյն ինքն տարեկանն¹ մեր Յիսուս Քրիստոս՝ Հարբ եւ Հոգով² նոր տարի եւ նոր աւուրք³ բերցէ ձեզ ՅԿԵ (ՅԵՏ), նոյնքան ոսկերացն եւ երակաց: Նոյնպէս՝ նոր ժամք եւ մասունք տւրնչեան եւ գիշերի, նոր արհնութիւն⁴ հանգիցէ ի մասունս ոսկերաց ձերոց, նոր խնդութիւն զգեցեալք⁵ երկնաւորք եւ երկրաւորք⁶ նոր բերկրանաւք ասացեն՝ եղիցի, եղիցի: Այլ եւ զսերմանս բարեպաշտութեան անսխալ⁷ աճին լայնութեամբ եւ ընդարձակութեամբ. եւ զարմատս հաւատոյ անվթար, զծաղիկ յուսոյ⁸ անթառամ, եւ զպտուղ հատուցմանն⁹ տոհմականաւք ձեզ՝ սպասաւորելոցդ¹⁰ եւ մեզ՝ սպասաւորացս, շնորհաւք բարոյն, հոգեկանաւք եւ մարմնականաւք, զաւրանալ հանապաղ՝ ի փառս տւողին ամենայն բարեաց, որում փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1*. Բառացի վերցված է Հին կտակարանից. Առակք Սողոմոնի, գլ. Գ 19:

2*. Թուղթ առ եբրայեցիս, գլ. Ա 10

3*. Գիրք Սաղմոսաց Դավթի, Զ 4

4*. Այս հատվածը Գ ձեռագիրը հաղորդում է մի քիչ այլ ձևով, որն ավելի լավ է առնչվում բովանդակության հետ: Այստեղ գրված է. «զնոյն եւ մեք առնեմք՝ ընծաելով միմեանց եւ այլոց, ընթանեաց եւ աւաքաց. թէ հոգեկան ինչ իցէ, թէ՛ մարմնական»*: Եթե աչքի առաջ ունենանք նաև վերևի պարբերությունը, ուր խոսվում է հրեաների կողմից իրենց իշխաններին ու թագավորներին տարեմտին նվեր տալու սովորության մասին, ապա պարզ

¹ Բ տարեկանն չիք

² Ա հոգովն

³ Բ աւր եւ աւուրբ

⁴ Բ արհնութեամբ

⁵ Ա սգեցեալ

⁶ Ա երկնաւք եւ երկրաւք

⁷ Ա անսղալ

⁸ Բ յոյսոյն

⁹ Ա հատուցման

¹⁰ Բ սպասաւորացդ

* Գ ձեռագրում դ-ի և տ-ի փոխարեն թ կամ գ-ի փոխարեն ֆ գործածելը սովորական և բազմաթիվ անգամ կրկնվող սխալներից է. or.՝ ֆաղթէութիւն, կաթմոս, շիթար, սոմ, քարման և այլն:

կլինի, որ հայերը նույնպես նոր տարվա օրը նվերներ էին մատուցում իշխաններին («աւաքաց»):

5*. **Կաղմոս Միլեթացի** – հնում համարվում էր հունական արձակի և պատմության նախահայրը, ապրել է VI դարում ն. մ. թ. նրան վերագրել են առասպելական որոշ գծեր:

6*. Գիրք Ծննդոց, գլ. Գ 19

7*. Վանականը ծանոթ է եղել Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության մեջ եղած հայկական ամիսների անունների մասին եղած առասպելին, բայց չի բավարարվել այդ բացատրությամբ: Նրա բացատրությունների համար որպես հիմք է ընդունված Սարկավագ վարդապետի կողմից 1084 թվին կարգավորված տոմարը, որը քիչ անց «Հայսմավուրքների» միջոցով ավելի լայն տարածում գտավ:

Ընդունելով սարկավագադիր տոմարը, ըստ որի Նավասարդի մեկը համապատասխանում է Հուլյան տոմարի օգոստոսի 11-ին՝ Վանականը, անկախ իր լեզվաբանական դրույթի սխալ կամ ճիշտ լինելուց, պիտի հանգեր բռնազբոսիկ եզրակացությունների, որովհետև Նավասարդի մեկը ի սկզբանե համընկնում էր ոչ թե օգոստոսի 11-ին, այլ գարնանամուտին:

8*. **Նումա Պոմպիլոս** – հռոմեական 7 թագավորներից երկրորդը: Հունական և հռոմեական պատմագրերը սրա անվան հետ են կապում որոշ իրավական և կրոնական ռեֆորմների անցկացումը: Սրան են վերագրում նաև տոմարի կարգավորումը: Նա հռոմեական տարվա վրա, որն ուներ 10 ամիս և 304 օր, ավելացրեց 2 ամիս: Այդպիսով, հռոմայեցոց տարին դարձավ լրիւ լուսնային տարի՝ 355 օր:

9*. Գիրք Սաղմոսաց Դավթի, ԺԸ 19:

10*. «Հայկազյան բառգրքի» հեղինակներին և պրոֆ. Հ. Աճառյանին (տե՛ս «Արմատական բառարան») հայտնի են «Ժամանակ» բառի՝ տարի, դարաշրջան, հասակ, օրհաս, կյանք, տարվա եղանակ, հարմար առիթ նշանակությունները: Բայց «Տարին ՅԿԵ օր է. եւ յամիսն նոյնքան ժամանակք են» հատվածին վերոհիշյալ նշանակություններից ոչ մեկը չի հարմարվում: Ակներև է, որ «Ժամանակ» բառը, բացի վերոհիշյալներից, ունեցել է նաև երկու ժամվա տևողության նշանակություն:

11*. «Մասն» բառը հայտնի է վայրկյանի և վրացերեն լեզվում՝ 15 վայրկյանի նշանակությամբ (տե՛ս Հ. Աճառյան, Արմատական բառարան): Այստեղ «մասն» բառը գործածված է շորս բոպե տևողության նշանակությամբ:

12*. Ռաստ եւ զանապ ամպերի մասին տեղեկութիւն կա նաև Վարդան Արևելցու Պատմութեան և սաղմոսների մեկնութեան մեջ: Մի դեպքում նրանք հանդես են գալիս որպէս փոթորիկ՝ վիշապի գլուխ և պոչ, «որ զամենայն երկիրս բոլորեալ է»: մյուս դեպքում նրանք պատկերացվում են որպէս ամպեր՝ «Թանձր ամպքն կոչեցեալ ռաստ եւ կամ զանապ»¹, և պատճառ են հանդիսանում արևի և լուսնի խավարման:

Արևի և լուսնի խավարման այս բացատրությունը սերտ առնչության մեջ է հայ ժողովրդի հավատալիքների հետ: Անգամ XIX դարում Վանի շրջանում հավատում էին, որ «սատանաները (= վիշապք) կժողովին երբեմն եւ կուզեն հակառ կայնել արեւուն, որպէս զի անոր լոյս երեսը շտեման մարդիկ»²:

Ռաստ և զանապ ամպերի մասին Վանականի հաղորդածն անշուշտ հետաքրքիր է ժողովրդի հավատալիքների և աշխարհայացքի լուսաբանման համար:

13*. **Անդրեաս Բյուզանդացի.** «Երկերիւրեակ» կոչված շրջանի կազմողը, որը գործածութեան մեջ մտավ 353 թվին, և որով սկսեց առաջնորդվել եկեղեցին եկեղեցական տոների կատարման գործում: Երկերյուրյակը վերջացավ 552 թվին:

14*. **Հաս Աղեքսանդրացի.** 552 թվին Անդրեասյան շրջանի սպառման շնորհիվ, ինչպէս մեր հեղինակն է գրում, «ինն ամ խափան եկաց տումար եւ տոն»: Եկեղեցական տոների համար մի հաստատուն ցուցակ ստեղծելու գործը ստանձնեց Հաս Աղեքսանդրացին: Նա 561 թվին Աղեքսանդրիայում հրավիրեց 36 գիտնականների ժողով, որտեղ և կազմվեց հինգհարյուրակը կամ Հասյան շրջանը:

15*. **Իրիոն Բյուզանդացի.** սրա գլխավորությամբ Բյուզանդական եկեղեցին քննարկեց Հասյան հինգհարյուրակ շրջանը և որոշ փոփոխություններով ընդունեց այն:

16*. **Մովսէս Եղվարդեցի** կաթողիկոսը 584 թվին Դվինում հրավիրում է եկեղեցական ժողով, որտեղ քաղաքական և դավանաբանական նկատառումներով ընդունեցին Հասյան (և ոչ՝ Իրիոնյան) շրջանը՝ հարմարեցնելով այն հայկական շարժական տոմարի պահանջներին: Այստեղ Անանիայի անվան հիշատակությունը թյուրիմացության արդյունք է:

¹ Տե՛ս Վարդանի «Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 180: Պիտի լինի ոչ թե «Ռաստ եւ կամ զանապ», այլ «Ռաստ եւ զանապ», հակառակ դեպքում «Թանձր ամպքն» հոգնակի չէր գրված լինի:

² Գ. Մովսէսյան, Գրոց և բրոց, Կ. Պոլիս, 1874, էջ 109:

17*. Այս հատվածում հեղինակն ակնարկում է Անաստաս Ակոռեցի կաթողիկոսին (661-697), որը 665 թվին Անանիա Շիրակացուն հանձնարարում է հայկական շարժական տոմարը դարձնել անշարժ: Ըստ Հովհաննես կաթողիկոսի վկայության՝ Անանիան «ջան ի վերայ եղեալ՝ յաջողեցաւ բարեձեւել ըստ բոլոր ազգաց պայմանի, անշուշտ, այսինքն՝ հաստատուն յօրինել զկարգ հայկական տոմարի»: Սակայն կաթողիկոսի, ապա և Շիրակացու (արվեստավորի) մահվամբ խափանվեց տոմարական այդ կարևոր բարեփոխությունը:

18*. **Էսքիլլոս Աթենացի** (ծնվել է էլևսինում 525, մահ. 456) հունական ողբերգակության հայրը: Նրա ողբերգությունները ստեղծվել են և անմիջականորեն կապված են Դեմետրայի և Դիոնիսի պաշտամունքի հետ կապված կրոնական տոների հետ:

19*. **Ագոն**. Հունաստանում կրոնական և քաղաքական տոների հետ կապված և պարբերաբար կրկնվող խաղեր և մրցակցություններ:

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅՈՒ «ՎԱՍՆ ԲԱՆԻՆ ՄԱՍԱՆՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ¹

Վարդան Արևելյին² մեր մատենագրության այն դեմքերից է, որի հանճարը փայլել է բազմաթիվ բնագավառներում. նա մեծ պատմագիր է, քերականագետ, բազմաթիվ հետաքրքիր ճառերի ու քարոզների հեղինակ, մի շարք թե՛ փիլիսոփայական և թե՛ աստվածաբանական երկերի մեկնիչ. հորինել է շարականներ, կազմել ու խմբագրել «Տոնապատճառ» կոչվող ժողովածուն, հանդիսացել է մեծ թվով անվանի մատենագիրների և հասարակական գործիչների ուսուցիչ, առաջնակարգ դեր է կատարել որպես քաղաքական գործիչ և այլն և այլն:

Վարդանի թողած գրական ժառանգությունը լայն հասարակության սեփականություն դարձնելը, ինչպես և նրա՝ որպես քաղաքական գործչի ամբողջական պատկերը ստեղծելը որքան պիտանի, նույնքան և դժվար ու երկար տարիների աշխատանք պահանջող գործ է և կարող է հաջողությամբ պսակվել միայն այն դեպքում, երբ նրա բազմաթիվ ստեղծագործություններից գոնե ամենաարժեքավորները հրապարակվելով՝ դառնան մասնագետների շրջանների ուսումնասիրության առարկա³:

Հրատարակելով նրա «Վասն բանին մասանց...» փոքրիկ, բայց արժեքավոր աշխատությունը հեղինակի ամենասեղմ կենսագրականով և պարզաբանելով մի քանի հարցեր հեղինակի կյանքի ու աշխատության նշանակության վերաբերյալ՝ հույս ունենք, որ նպաստում ենք այդ գործին:

XIII դարի սկզբին տնտեսապես բարգավաճ, քաղաքական ու սոցիալական բախումներով հարուստ կյանք ապրող և մշակութային մեծ դեր կատարող Գանձակ քաղաքում ծնվեց և ժամանակի ամենաառաջավոր մարդկանց շրջապատում մեծացավ Վարդան Արևելյին: Մինչև մոնղոլների արշավանքը նա իր եղբայր, հետագայում՝ Բջնո եպիսկոպոս Գրիգորի հետ սովորում էր Վանականի դպրոցում և նրա ամենասիրելի աշակերն էր համարվում: Հավանաբար մոնղոլների առաջին մեծ արշավանքի տարին (1236 թ.) նա թողեց իր հայրենիքը և ճանապարհ ընկավ դեպի Երուսաղեմ, որտեղ

¹ «Տեղեկագիր» ՍՍՈՒՄ ԳԱ. Հայկ. ֆիլիալի, 1943, № 2, էջ 81-89:

² Նա Արևելյի է կոչվել Կիլիկիայի գիտական շրջաններում. բուն Հայաստանում նրան կոչում են Վարդան Մեծ, Վարդան Աղվանցի և այլն: Նրա Պատմությունը Մ. Էմինի կողմից Բարձրբերդում է վերագրվել թյուրիմացաբար:

³ [Այդ աշխատանքը այժմ մասամբ կատարված է, տե՛ս Փ. Փ. Անթապյան, Վարդան Արևելյի. կյանքն ու գործունեությունը, գիրք Ա, Երևան, 1987, գիրք Բ, 1989: Խմբ.]:

այդ ժամանակ գտնվում էին անվանի հայ վարդապետներ (Հովհաննես Գառնեցի և այլն): Երուսաղեմում Վարդանը երկար շմնաց: Նա իր գործուն բնավորությամբ, ուսուցանելու, ստեղծագործելու, քարոզելու անհագ եռանդով չէր կարող բավարարվել Երուսաղեմի փոքրիկ հայկական գաղութով: Նրան հարկավոր էին պատանիներ, որոնց ուսուցաներ, հայ ունկնդիրներ, որոնց քարոզեր, կուլտուրական միջնորդը՝ իր մտածմունքներին հաղորդակից լինելու, իր գրական երկերը տարածելու համար, ուստի Վարդանը 1238 թվին թողնում է Երուսաղեմը Հայաստան վերադառնալու ցանկությամբ:

Հայաստանի ճանապարհին Վարդանն այցելում է Կիլիկիայի Հոռոմկլա ամրոցում նստող Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսին (1221-67), որին այնքան է դուր գալիս, որ, համաձայն Կիրակոս Գանձակեցու վկայության, կաթողիկոսը «ոչ կամէր երբէք մեկնել ի նմանէ»¹:

Յույց տրված լավ ընդունելության պատճառով Վարդանը Կիլիկիայում մնում է հինգ տարի և Հայաստան վերադառնում միայն 1243 թվին՝ իր հետ բերելով կաթողիկոսի շրջաբերական-կոնդակը և Սսի եկեղեցական ժողովի (որի ակտիվ մասնակիցներից մեկն էլ ինքն էր) կանոնները²:

Վարդանը Հայաստանում գումարում է բազմաթիվ ժողովներ, ուր անցկացնում է վերոհիշյալ կանոններին համապատասխան կանոններ և, մինչև իր կյանքի վերջը բազմաթիվ մատենագրական արժեքներ ստեղծելով և ուսուցչական ու քաղաքական շափագանց աշխույժ գործունեություն վարելով, մեռնում է Հաղբատում 1271 թվին:

Կիլիկիայում անցկացրած տարիները Վարդանի համար լինում են գրական գործունեության բեղուն տարիներ: Այդ շրջանում նա Հեթում Ա թագավորի խնդրանքով գրում է «Ժղլանքը» (գբոսանք), որտեղ բոլորին հասկանալի լեզվով, պարզ համեմատություններով բացատրում է աստվածաբանական մեկնության կարոտ մի շարք խնդիրներ: Նույն թագավորի համար գրում է նաև Դիոնիսիոս Թրակացու «Քերականության» մեկնությունը և հարց ու պատասխանի ձևով կազմված մի աշխատություն, որտեղ շարադրված են ժամանակի ամենաառաջավոր հայացքները տիեզերագիտության, երկրի կառուցվածքի, գրի և հայ գրերի գյուտի, երաժշտության և այլ խնդիրների մասին: Հավանաբար հենց այդ ժամանակ նա կատարում է նաև Միքայել Ասորու Պատմության թարգմանությունը³: Վարդանի կողմից նույն

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Թիֆլիզ, 1909, էջ 279:

² Նույն տեղում, էջ 278-79:

³ Վարդանն անշուշտ իմացել է ասորերեն. այդ են ապացուցում նրա հետևյալ տողերը. «...բայց գտա յԱսորոց, թէ [Մովսէս] զելսն գրեաց յառաջ» (Մատենադարան, ձեռ. № 2544, էջ 76ա):

տարիներին գրված փոքրածավալ աշխատություններից մեկն է բանասիրությանը ցարդ անհայտ մնացած «Վասն բանին մասանց» աշխատությունը, որը հեղինակի «Քերականի մեկնության» խոսքի մասերին վերաբերող գլուխների ամենասեղմ շարադրանքն է:

«Վասն բանին մասանց» աշխատությունը, համաձայն վերնագրի, գրված է «ի խնդրոյ բարեզարդ քահանայի Թորոս անուն կոչեցելոյ՝ եղբորորդու տեառն Կոստանդեայ Հայոց կաթողիկոսի»¹: Պատվիրատուն, որպես կաթողիկոսի ազգական, շափազանց մոտ հարաբերությունների մեջ էր արքունիքի և անձամբ Հեթում թագավորի հետ և, որպես այդպիսին, հանդիսանում էր պալատական շրջաններից իրեն հեռու պահող ու կրիկյան աննշան վանքերից մեկում ապաստանած Վարդանի ու թագավորի միջև կապ պահպանող անձնավորությունը:

Պահպանվել է Վարդանի գրությունը՝ ուղղված Հեթում թագավորին, որտեղ նա իր առօրյայի մասին գրում է հետևյալը. «Ես շատ պատճառ ունեի, որ խափանէր զիս յայս ձեռնարկութենէս՝ տկարութիւն, մութն խրճիս եւ հողմ Պարխարու փոշեխառն փշելով ընդ պատուհանս եւ պաղ օդոյս, բայց սիրովն հրաշագործիւ յաղթահարեալ եղեն պատճառքն»²: Նույն գրությունից պարզվում է, որ թագավորը խնդրել է Վարդանին աշխատություն գրել յուզաբեր կանանց և պատարզի խորհրդի մասին ոմն Թորոսի միջոցով³, որն իր այցելությունների ժամանակ խնդրել է Վարդանից մեր կողմից հրատարակվող «Վասն բանին մասանց» աշխատությունը:

Ամենայն հավանականությամբ աշխատության պատվիրատու Թորոս քահանան նույն անձնավորությունն է, որը ըստ Կիրակոս Գանձակեցու տեղեկության՝ գտնվում էր Մանգու դանին այցելության գնացող Հեթում Ա թագավորի շքախմբում⁴:

Նույն Թորոս քահանայի և Կիրակոսի նշած Բարսեղի հետ կարող են նույնանալ նաև Մատենադարանի №345 (155) 1270 թվին գրված ձեռագրի

¹ Խոսքը «Ժղլանի» և «Մեկնութիւն քերականին» աշխատությունների գրության մասին է:

² Մատենադարանի ձեռ. № 2544, էջ 173 բ: Տե՛ս նաև Գ. Ալիշան, Հայապատում, էջ 470, որտեղ «Պարխարու» բառի փոխարեն տպագրված է «Պարխըցու»:

³ «...եւ յիշեալ զոր ի ձեռն Թորոսի հրամայեցիմ վասն իւղաբերից կանանց գրել ձեզ եւ ի խորհուրդ պատարագին» (ձեռ. №2544, էջ 172բ. Գ. Ալիշան, Հայապատում, էջ 470):

⁴ Հեթումի շխախտման մասին Կիրակոսը գրում է հետևյալը. «Եւ եպիսկոպոս տէր Ստեփաննոսն եկն եւ Մխիթար վարդապետն եւ Բարսէլ քահանայ... եւ Թորոս քահանայ կուսակրօն...» (էջ 352-353):

գիր Աստվածաշնչի գրիչներ թորոս երեց Հուաբինենցը (չափազանց գեղեցիկ լուսանցազարդերի ու գլխազարդերի ծաղկող) և Բարսեղ քահանան: Թե ինչ կապ կա հանրահուշակ նկարիչ թորոս Ռոսլինի և թորոս երեցի միջև, այս հարցը վերջնականորեն կարող է լուծել միայն այս ձեռագրի և Ռոսլինի այլ նկարների մասնագիտական համեմատությունը, սակայն սկզբից կեթ կարելի է ասել, որ այդ երկու թորոսների նկարների միջև այն աստիճան նմանություն կա, որ հօգուտ նրանց նույնության հայտնած կարծիքը հիմնավորվում է ըստ ամենայնի:

Հայ քերականական գրականությունը դարեր շարունակ գոյություն է ունեցել ու զարգացել որպես մեկնողական գրականություն: Դիոնիսիոս Թրակացու երկը (Τὸ ἔχρη γράμματικὸν) հանդիսացել է այն հիմնաքարը, որի վրա իրենց մեկնողական աշխատություններն են կառուցել Դավիթ փիլիսոփան (Հարքացի), Մովսես Քերթողը, Անանունը, Ստեփաննոս Սյունեցին, Գրիգոր Մագիստրոսը, Համամ Արևելյին և այլք:¹

Ինչքան էլ հաջող լինեին այդ մեկնությունները, և ինչքան էլ նրանց հեղինակները լայն գիտական զարգացում ցուցաբերեին, այնուամենայնիվ նրանց ստեղծագործությունների նպատակն էր ոչ թե առաջ քաշել նոր քերականական խնդիրներ, տալ այս կամ այն հարցի վերաբերյալ նոր տեսակետներ, այլ միայն և միմիայն լավագույն կերպով լուսաբանել Դիոնիսիոս Թրակացու երկը: Վերոհիշյալ մեկնությունները, ինչպես և մեկնության նյութը քերականություններ չէին այդ գիտության արդյան իմաստով, նրանց մեջ քերականական հարցերի հետ սերտորեն շաղկապված էին ճարտասանական ու փիլիսոփայական բնույթի բազմաթիվ հարցեր, որոնք այդ գիտությունը մոտեցնում էին գրականության տեսությանն ընդհանրապես. ճիշտ է, Մովսես Քերթողն իր մեկնության մեջ հայտնում է, որ «քերթող է, որ զմասունս գիտէ բանին եւ ճանաչէ զդէմս խաւսիցն, զոր ինքն տեղեակ է լեզուին»², սակայն հին քերականական գրականության մեջ քերականությունը միշտ էլ մնաց որպես փիլիսոփայության և ճարտասանության հետ շաղկապված մի գիտություն:

Ինչպես Դիոնիսիոսի երկի թարգմանությունը, այնպես էլ նրա հին մեկնությունները, որպես հունաբան դպրոցին պատկանող ստեղծագործություններ, գրված են մի այնպիսի բարդ ու արհեստական լեզվով, որ կարող

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, СПб., 1915.

² Նույն տեղում, էջ 159:

էր հասկանալի լինել միայն հունական կրթությունն ստացած ու հունարենին տիրապետող անձանց, ուստի պատահական չէ, որ այդ երկը մեկնվել է հայ գրականության մեջ տասն անգամ, տասը տարբեր հեղինակների կողմից:

Վարդան Արևելցու «Քերականի մեկնությունը»¹, ինչպես և մեր կողմից հրատարակվող «Վասն բանին մասանց» փոքրիկ աշխատությունը առանձնահատուկ տեղ են գրավում հայ քերականական գրականության մեջ: Նրանք միակն են, որ գրված են բոլորին հասկանալի ու պարզ մի լեզվով, որի հիմքում ընկած է կիրիկյան բարբառը Ոչ միայն լեզուն, այլև այդ աշխատությունների ողջ կառուցվածքը պարզ է, շարադրանքը՝ սահուն և ազատ արհեստական գիտությունից, ոճը՝ ճոխ, ժողովրդական դարձվածքներով ու կյանքից վերցրած օրինակներով հարուստ²: Դրանք գրված են ոչ թե մի խումբ, ժամանակի գիտությունը լավատեղյակ մասնագետների, այլ սովորական ընթերցողների համար, որոնք դատում և մտածում են ոչ թե ճարտասանական արհեստական սկզբունքներով, այլ բնական դատողությամբ:

Քերականության այս պարզեցումը հեղինակը չի կատարել ի վնաս նրա գիտականությանը, ընդհակառակը՝ նրա «Վասն բանին մասանցը», վերոհիշյալ գրական կողմերից գատ, հայ հին քերականություններից միակն է, որ, ազատվելով ճարտասանական ու փիլիսոփայական գիտությունների խառնուրդից, հանդես է գալիս որպես զուտ քերականական գիտություն՝ գիտություն խոսքի մասերի վերաբերյալ (морфология): Որոշ հարցերի միակողմանի լուծմամբ ու երբեմն անգամ խնդիրների բնորոշումը տալու փոխարեն հաջող օրինակներով բավարարվելով՝ հեղինակը ցանկացել է նյութը մատչելի դարձնել պատվիրատուին: Նույն խնդիրների վրա նա մանրամասնորեն կանգ է առնում իր «Քերականի մեկնության» մեջ:

Վարդանը հետնորդներ չունեցավ. նրանից հետո գրված քերականական աշխատությունները (Եսայի Նշեցու, Հովհաննես Երզնկացու) եղան հին-հունաբան դպրոցի հետևություններ գրված աշխատություններ կամ ուղղակի հին մեկնությունների շարահյուսումներ: Լեզուն, փոքր փոփոխություններով, մնաց նույնը: Վանքերին կից դպրոցներում հատուկ տարածում

¹ [Բնագրի գիտական հետազոտությունը տե՛ս Վարդան Արևելցի, Մեկնություն քերականի, աշխատասիրությամբ՝ Լ. Գ. Խաչիկյանի, Երևան, 1972: Խմբ.]:

² Օրինակ՝ «Վասն բանին մասանցի» մեջ հեղինակը հաճախ նյութն ավելի պարզ դարձնելու համար օրինակ է բերում հենց պատվիրատուին. «Թորոս դարպաս շինեաց», «Թորոս որդիք ունի, ապրանք ունի», «Քրիստոսապահ Թորոս», «Ստեփաննոս՝ որդի [Թորոսի]» և այլն:

գտավ Հովհ. Երզնկացու աշխատությունը, որը միայն հին մեկնությունների շափազանց լավ կատարված կոմպիլացիա էր:

Ինչո՞վ բացատրել այս շրջադարձը դեպի հին-հունաբան դպրոցը... արդյո՞ք մոնղոլական արշավանքներով ու տիրապետությամբ, թե՞ դրա հետ միասին նաև իսպանացի ու պորտուգալացի խիզախ ճանապարհորդների կողմից արված աշխարհագրական մեծ գյուտերով ու ծովային նոր ճանապարհների հայտնագործությամբ՝ սրանք հարցեր են, որոնք սպասում են լուծման:

«Վասն բանին մասանց» աշխատության տեքստը հրատարակում ենք Մատենադարանի 3 ձեռագրերի հիման վրա, տալիս ենք ձեռագրերի համառոտ նկարագիրը.

Ա, № 2544

Բովանդակություն՝ Ժողովածու գերազանցապես Վարդան Արևելյու գործերի. թերթ՝ 231. մեծ՝ 17X12,5. նյութ՝ թուղթ. գրություն՝ միասյուն, գիր՝ բոլորգիր. վիճակ՝ սկզբից և վերջից պակաս էջեր. ժամանակ՝ ԺԴ դար. գրված է հմուտ գրչի կողմից և տալիս է լավ ընթերցումներ:

Մեզ հետաքրքրող հոդվածը գտնվում է հետևյալ նյութերի շարքում.

196ա - Հարցմունք Դշխոյի և պատասխանիք Սողոմոնի:

201ա - Վասն բանին մասանց ի խնդրոյ բարեզարգ քահանայի Թորոս անուն կոչեցելոյ՝ եղբարորդույ տեսուն Կոստանդեայ Հայոց կաթողիկոսի ի Վարդանայ Աղանեցույ, կարճառատ:

203բ - (Նորին Վարդանայ) Աղալթք տղայոց առ Սուրբ Երրորդութիւնն:

Բ, № 2189

Բովանդակություն՝ Ժողովածու. թերթ՝ 441. նյութ՝ թուղթ. գրություն՝ միասյուն. գիր՝ բոլորգիր. վիճակ՝ բավարար. ժամանակ՝ 1394. գրիչ՝ Գրիգոր. տեղ՝ Թավրեզ:

«Վասն բանին մասանց» աշխատությունը գտնվում է հետևյալ նյութերի շարքում».

395բ - Վասն Աստուածութեանն վկայութիւնք՝ ասացեալ ի յիմաստասիրաց:

397բ - Բան ինչ պիտանի ի վարդապետաց:

399բ - Բան Վարդանայ գերազանց սուրբ վարդապետի ասացեալ (Վասն բանին մասանց):

400բ - (Այլ բանք նորին Վարդանայ) և այլն:

Գ, № 1784

Բովանդակություն՝ ժողովածու. թերթ՝ 248, մեծ՝ 20,5x15, նյութ՝
թուղթ. գույքուն՝ մեծավ մասամբ միասյուն. գիր՝ նոտր. վիճակ՝ բավա-
րար. ժամանակ՝ ժէ՞ դար, գրել են մի քանի գրիչներ:

«Վասն բանին մասանցը» գտնվում է հետևյալ նյութերի շարքում.

199բ - Հարցմունք Դշխոյի եւ պատասխանիք Սողոմոնի՝ որդույ Դավթի:

200բ - Բայց առ ի մէնջ եւ դու առակ մի:

201ա - Վասն բանին մասանց... ի վարդանայ Աղւանեցույ. կարճառօտ:

201բ - (Այլ եւ այլ մանր մեկնութիւնք նորին Վարդանայ):

205բ - նորին Վարդանայ վարդապետի Աղօթք տղայոց առ Սուրբ Եր-
րորդութիւնն արաւօտուն եւ այլն:

Աշխատության որոշ հատվածներ ավելի հասկանալի դարձնելու, ինչ-
պես և ընթերցողին Վարդանի «Մեկնություն քերականին» աշխատության
մասին որոշ գաղափար տալու նպատակով մի քանի խնդիրների վերաբեր-
յալ ցածում բերել ենք հատվածներ «Մեկնություն քերականին» աշխատու-
թյունից՝ վերցնելով այն Մատենադարանի № 2371 ձեռագրից: Չեռագիրը
գրված է 1357 թվին Ստեփաննոս գրչի կողմից Սուրխաթում: Աշխատու-
թյունը գտնվում է ձեռագրի (որը քերականական և բառագիտական նյու-
թերի ժողովածու է) 5ա-72ա էջերում:

**Վասն բանին մասանց, ի խնդրոյ բարեզարդ ֆահանայի
Թորոս անուն կոչեցելոյ՝ եղբարորդոյ տեառն Կոստանդէայ
Հայոց կաթողիկոսի. ի Վարդանա[յ] Աղւանեցոյ.
կարճառատ¹**

Բանին մասունք ութ են եւ են այսոքիկ. նախ՝ անուն², երկրորդ՝ բայ, երրորդ՝ ընդունելութիւն, չորրորդ՝ յաւղ, հինգերորդ՝ դերանուն, վեցերորդ՝ նախդիր, եւթներորդ՝ մակբայ³, ութերորդ՝ շաղկապ:

Բան կոչի կատարումն խորհրդոյ, երբ⁴ ասես, թէ⁵ հոգեւոր տէրն հրամայեաց եկեղեցի շինել, կատարեալ⁶ բան է⁷. հոգեւորն նախադրութիւն է, եւ տէրն՝ անուն, եւ հրամայեացն՝ բայ, եւ եկեղեցի շինելն՝ խորհուրդ կատարեալ:

Իսկ բանին առաջին մասն անունն⁸ է, եւ զգոյութեան սահմանն ունի անունն, ընդ որով է⁹ մարմին եւ անմարմին՝ երկինք, երկիր, Աստուած, մարդ, ձի, արծուի:*

Յետ անուանն բայ է, որ զանունն եւ զգործն ցուցանէ, որպէս ասել¹⁰ Թորոս¹¹ դարպաս շինեաց:

¹ Բ ձեռագրում վերնագիրն այսպէս է. «Բան Վարդանայ գերագանց սուրբ վարդապետի ասացեալ»:

² Բ **Հարցումն**, Բանի են մասումբ բանի. **պատասխանի**. ութ, եւ են այսոքիկ, նախ...

³ Ա Մակբա

⁴ Ա աստ եւ այլու՝ եբ *փ/ս* երբ: Բ Զի երբ

⁵ Ա միշտ թե *փ/ս* թէ

⁶ Բ այս կատարեալ:

⁷ Ա խորհուրդ *փ/ս* բան է

⁸ Բ, Գ անուն:

⁹ Ա, Բ է **չիք**

* **Յաղագս անուան, ի մեկնութենէ ֆերականին Վարդանայ Արևելյոյ**

«...Եւ մարմին, որ բռնի ձեռամբ եւ շաւշափի, որպէս ֆար կամ փայտ. եւ իրն անմարմին է, անըմբռնելի եւ անշաւշափելի, որպէս ինքն [իմաստասէրն] ասէ, թէ խրատ կամ հանճար կամ իմաստութիւն. իսկ յատկապէս, որպէս հարտասան եւ կամ թուական եւ կամ այլ արհեստք, որ յատկապէս առանձնանան եւ իւրեանց սահմանան երեւին: Իսկ հասարակաբար ասէ զընդհանուր մարդն, եւ յատկապէս անուամբ զմի որ բաժանեալ ի յայլոց անուանցն. այս ի վերայ մարմնոցն: Իսկ ի վերայ անմարմնոցն, որպէս մակացութիւն կամ խրատ. արէնք եւ կամ իմաստութիւն, որ են բանի զարութիւնք անմարմինք. եւ այս հասարակաբար է»:

¹⁰ Ա, Գ որպէս ասել **չիք**

¹¹ Ա, Բ Սղմն [Թէ՞ Սողոմոն] *փ/ս* Թորոս

Երրորդ¹ մասն բանին ընդունելութիւնն² է, որ է ունեւելութիւն, որպէս ասել³ Թորոս որդիք ունի, ապրանք ունի:

Չորրորդ մասն յաւրն է: Յաւրն յաւգ ասի, որ ցուցանէ զմերձն⁴ եւ զհեռին, զմէկն եւ զբազումն⁵. Սէ-ն մաւտ ցուցանէ եւ Նու-(ն) հեռի, որպէս ասել⁶ գեաւըս քո է, գեաւըն⁷ քո է: Թէ եւ Քէ եւ Յոյ⁸ դնես շատ ցուցանէ, որպէս սոքա, սոցա: Յեզերգիրն է⁹ յաւրն եւ նշանաւոր ցուցանէ դիրքն¹⁰, [որպէս] հովիւն¹¹ [բաշ], կոյսն յղասցի, մարդն եկն:

Հինգերորդ մասն դերանունն է¹², որ կոչի փոխանուն, որ փոխան¹³ ա-նուանն այլ անուն ասես. Ստեփաննոս՝ որդի, արեւ՝ հոգի, դու, դա, նա, քեզ:

¹ Ա. Յերոդ: Բ եւ Երրորդ

² Բ, Գ ընդունելութիւն

³ Ա, Գ որպէս ասել շիբ

* **Յաղագս ընդունելութեան**

«Ընդունելութիւն հասարակ ասի գոյանալ ի բայէ եւ յանուանէ, մասն մի անտի եւ մասն մի աստի առեալ, որպէս ասեմք Սմբատ գրէ զի Սմբատն անուն է եւ գրեն բայ: ...Ընդունելութիւն է շինեալ, արարեալ, բերեալ. անա դեմք ոչ ցուցանէ թէ ով շինէ կամ առնէ, այդ որպէս կենդանին գտեսակս յինքեան ընդունի եւ երկինք գաստեղս եւ մարմին ախտական գմարդիկ, նոյնպէս ընդունելութիւն զանուն եւ բայ»:

⁴ Բ զմեծն

⁵ Բ զմէկն եւ զբազումն

⁶ Ա, Գ որպէս ասել շիբ

⁷ Բ գիւղս: Գ գեղս... գեղն

⁸ Ա. Յաւ, եւ ի լուսանցս՝ Յո: Գ Յօ

⁹ Ա. եւ

¹⁰ Բ եւ ... գիրքն շիբ

¹¹ Ա. յաւղ եւ հովիւն: Բ յաւղն հովիւն

** **Յաղագս յաւղի**

«Յաւղն կցումն եւ միատրութիւն կոչի, որպէս շիղբ եւ կապ մարմնոյն, այսպէս եւ յաւր բանի... զի մերս ի վախճանին գայ նշանաւոր յաւղդ, իբր թէ՛ ձին եւ ձիդ եւ ձիս, զի թէ ասես ձի՛ ակն ոչ նշանակեցեր, թէ ինչ ասացեր, իսկ դնելով զյաւղն ասիցես ձին, անդէն նշանակեցեր, զի յաւղն է, որ նշանակէ զիրն, թէ յառաջն եւ թէ ի յետն, զի թէ այլ դնեն ի սկիզբն, մեք ի վերջն, այսպէս՝ կոյսն յղասցի, հովիւն քաջ, գիտութիւնն էական, կիզիկեցին, եւ գիտեմք անդէն զնշանակեալն նոյնն կու յարականայ յաւղն»:

¹² Գ դերանուն

¹³ Բ այսինքն, որ փոխ: Գ փոխ

*** **Յաղագս դերանուն**

«Չոր արինակ, որ մարդ անունն ի վերայ բոլոր տեսակին աստի, նոյնպէս եւ դերանունն ի վերայ ամենայնին երթայ՝ եզականաց եւ երկուորականաց եւ յոճականաց, մատաւորաց եւ հեռաւորաց: Զի երբեմն զհեռաւորն յիշեմք ասելով, թէ նա աստ էր, կարաւ էր կատարել գայս իրքս, շասաց թէ ով, լուկ ասաց թէ նա, ու այն դերանունն է եւ

Վեցերորդ մասն բանին նախադրութիւնն¹ է, որ է ճոխաբանութիւն, յորժամ հէգ ինչ դնես յառաջք բանին՝ բարի² թագաւոր, իմ ապաւէն պարոն³, քրիստոսապա՛հ թորոս: Կամ շարամանեւն՝ շար նախդիր է մանեւն իրքն: *

Եւթներորդն՝ մակբայ⁴ է, որ է վերնաբայ եւ կամ⁵ կրկնաբայ: Թէ⁶ երկու մարդոյ իրք կամիս տալ, ասեն ճորտուն՝ երկաքանչիւրոցն տուր, եւ թէ ամենոյ կամիս, ասես՝ իւրաքանչիւրոցն կամ երկուց, երից, չորից⁷:

Ութերորդ մասն բանին շաղկապն է: Կապն մէկ⁸ իրաց չլինի, այլ երկուց կամ բազմաց. եւ-ն շաղկապ է, որ շաղէ գիրքն, այսինքն՝ կապէ, կցէ, միացնէ: Երբ⁹ ասես՝ գնացէք¹⁰ յարտն դու եւ Ստեփաննոսն¹¹ եւ Վասիլն. եւ-ն¹² կապէ ընդ իրար: է եւ այլ¹³ զարուծիւն շաղկապին, յորժամ ասես՝ գնաց, ցուցեր, թէ եկեալ չէր ուստէք, թէ՛ եւ գնաց ասես- զեւ-ն դնելով ցուցեր, թէ եկն, ապա գնաց ** : Այս են մասունք բանին:

այս անուանն նմանութիւն է: Եւ յիրաւի ասի թերանուն, զի զգոյութիւն բնութեանն ոչ ցուցանէ յասելն, թէ նոցա, նոքա... նա, իմոյ, բոյոյ, նորա... բայց եւ տիրանուն ասի դերանունս, այսինքն նշմարիտ անուն, զի ասեն այս հին է մշտնջենաւոր՝ ես, դու, նա, նորա, նոցա, նոքա, քան զՄովսէս եւ զԱհարովն եւ զՊաւղոս եւ զՊետրոս կամ զՊղատոն եւ զՍոկրատ, զի տոքա յետոյ եղան եւ ոչ կան եւ մնան յաւիտեան: Եւ ստոյգ անունն անժամանակ, անդէմ եւ անտեղի է, որպէս դերանունս ցուցանէ, զի միշտ էր եւ ոչ անկանի յետքիւն, զի ասելն ես, դու, նա, նոքա, նոցա, գոյութիւնն են եւ ոչ սոսկ անուն, որ այսաւր ասի եւ վաղիւ [ոչ]. վախճանի, զի դրականն են եւ ոչ բնութեամբ»:

¹ Բ, Գ նախադրութիւն

² Բ այսինքն բարի

³ Բ իմաստուն պարոն, իմ ապաւէն տէր

* **Յաղագս նախադրութեան**

«...Նախդիր ասի այսր աղագաւ, զի նախ եղեալ լինի եւ յառաջ քան զանուն եւ զբայ եւ յամենայն տեղիս ոչ իբրեւ պատուաւոր, այդ իբրեւ զպատասաւոր... Յաղագս զարդու եւ գեղեցկութեան իմացեալ եղեւ նախադրութիւնս»:

⁴ Ա Մակբա

⁵ Բ, Գ կամ շիք

⁶ Բ այսինքն թէ...

⁷ Բ ամենու կամիս տալ՝ երկաքանչիւրոցն կամ երկուց, երից, չորից

⁸ Բ մին

⁹ Զի երբ

¹⁰ Բ, Գ գնացէք շիք

¹¹ Ա Ստեփն

¹² Բ, Գ եւ

¹³ Բ այլ իմն

** **Յաղագս շաղկապի**

«Եւ շաղկապ ասի ի շաղղելոյ իմն եւ միատրելոյ եւ կապելոյ ի կարգի զբառն ընդ բառն եւ զմիտս ընդ միտս, զի մեկնութիւն բանին յայտնեսցէ»:

1280 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՐԶՆԿԱՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ «ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ»*

Միջնադարյան Հայաստանի քաղաքների ներքին կյանքի մասին հայ պատմագիրների աշխատություններում կան միայն պատահական ու անորոշ ակնարկներ: Դրանց միջոցով անհնար է քիչ թե շատ բավարար պատկերացում ունենալ այդ քաղաքների և շրջակա գյուղերի միջև գոյություն ունեցող ամենօրյա տնտեսական կապերի, քաղաքային բնակչության դասակարգային շերտավորման, առևտրաարհեստական շերտերի և ֆեոդալական վերնախավի միջև տեղի ունեցող բախումների, քաղաքային ինքնավարության մարմինների, նրանց իրավունքների ու սոցիալական կազմի և բազմաթիվ այլ հարցերի մասին:

Բարեբախտաբար, մեր Մատենադարանում կան մինչ այժմ պատշաճ ուշադրություն չգրաված ձեռագիր սկզբնաղբյուրներ (խոսքը վերաբերում է XII-XV դարերում գրված քարոզգրքերին, մեկնողական գրվածքներին և կանոնագրքերին), որոնք պարունակում են վերոհիշյալ հարցերի լուսաբանմանը նպաստող ուշագրավ նյութեր:

Տնտեսական ու սոցիալական հողի վրա բախվում էին արտադրող արհեստավորների շահերը մի խումբ մեծատուն առևտրականների շահերին, որովհետև վերջիններս, հանդես գալով որպես պատվիրատուներ և տերը լինելով արտադրվող ապրանքի հում նյութին ու իրացնելով արտադրանքի վաճառքը հեռավոր շուկաներում, շահագործում էին արհեստավորների աշխատանքը: Բախվում էին նաև հմուտ արհեստավոր վարպետների շահերը «գործավորների» (ենթավարպետներ) և «աշակերտների» շահերին, որովհետև վերջիններս, արտադրական գործիքներ չունենալով և կաշկանդված լինելով գոյություն ունեցող օրենքներով ու սովորույթներով, գրկված էին ինքնուրույն կերպով արտադրելու հնարավորությունից: Քաղաքային բնակչության ամենաստորին աստիճանի վրա էին գտնվում իրավագուրկ մշակները, որոնց շարքերն օրավուր լրացնում էին ճորտական լծից ազատվել տենչացող գյուղացիները:

Դիտող ու կշռադատող ժամանակակիցների համար պարզ էր, որ «ի չքաւորութենէ աղքատի եւ յառատութենէ մեծատան ի մէջ ժողովրդեան ծնանի երկպառակութիւն»¹:

* «Տեղեկագիր» (ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ.), 1951, N 12, էջ 73-84:

¹ Մատենադարան, ձեռ. N 677, էջ 254:

Ահա, այդ հարատև ու անդադրում «երկպառակութեան», այսինքն՝ սոցիալ-տնտեսական շահերի ամենօրյա բախումների ընթացքում քաղաքի աշխատավոր շերտերն աստիճանաբար հասունանում էին ավելի կազմակերպված պայքարի: Քաղաքներում ստեղծվում են առևտրական ու արհեստավորական եղբայրություններ, որոնք, միավորելով նույն զբաղմունքի կամ նույն սոցիալ-տնտեսական գոյավիճակի մարդկանց, կարևոր դեր են խաղում երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում:

Այդ եղբայրությունների գոյության ու էության հարցը պարզելու տեսակետից բացառիկ արժեք են ներկայացնում Մատենադարանի ձեռագրերից մեզ հայտնի դարձած «Սահմանք եւ կանոնք միաբանութեան եղբարց...» խորագրով կանոնները, որոնք վերաբերում են Երզնկա քաղաքին¹:

XII-XIV դարերի Հայաստանի քաղաքների մեջ, որպես միջազգային առևտրի կարևորագույն հանգուցակետ և արհեստագործության կենտրոն, ուրույն տեղ է գրավում Երզնկան:

Քանվելով Արևելքը Արևմտյան Եվրոպայի երկրների և Ռուսաստանի հարավային շրջանների հետ կապող կարևորագույն երկու ուղեգծերի վրա՝ նա մասնակցում էր միջազգային առևտրին թե՛ որպես Քավրիզ-Այաս բանուկ մայրուղու օղակներից մեկը և թե՛ որպես Տրապիզոնի ցամաքային մատուցք: Այսպիսով, Երզնկայի առևտրականները սերտ կապերի մեջ էին կիլիկյան նավահանգիստների, Տրապիզոնի, Դրիմի, ինչպես և Իրանի ու Հայաստանի վաճառաշահ քաղաքների՝ հատկապես Քավրիզի ու Անիի հետ:

XII-XIV դարերում Երզնկա այցելած ճանապարհորդները խոսում են նրա մասին՝ որպես «հայաբնակ», «ընտիր», «մեծ ու շեն» քաղաքի, գտվում են Երզնկայի ճարտար մանածագործներին, որոնք հյուսում են «աշխարհի լավագույն բեհեզները» (Մարկո Պոլո) կամ «իր անունով կոչվող գեղեցիկ կերպասները», վկայում են այն մասին, որ այնտեղ կան «լավ կարգավոր-

¹ Երզնկայի եղբայրության «Սահմանքի» բնագիրը պահպանվել է Մատենադարանի երկու (N 2329 և 652 ձեռագրերում: N 2329 ձեռագիրը բովանդակությամբ ֆեռականական, խրատական ու կանոնական նյութերի ժողովածու է՝ բաղկացած 303 թղթի թերթերից, ընդօրինակված է Երզնկայում 1291 թվականին: «Սահմանքի» բնագիրը գտնվում է ձեռագրի 287բ-295ա էջերում:

Երկրորդ ձեռագիրը Մատենադարանի N 652 կանոնական ու խրատական նյութերի ժողովածուն է: Բաղկացած է 132 թղթի թերթերից, ընդօրինակված է ԺԵ-ԺԶ դարում Գրիգոր կրոնավորի կողմից Հակոբ Եպիսկոպոսի համար: «Սահմանքի» բնագիրը գտնվում է ձեռագրի 70բ-75բ էջերում:

ված շուկաներ», զարմանում են քաղաքում արտադրվող պղնձե ամանների և հատկապես զարդարուն աշտանակների արվեստով և հայտնում են, որ քաղաքի վերոհիշյալ արտադրանքը մեծ հռչակ ունի հեռավոր շուկաներում (Իբն-Բատուտա):

Արաբ աշխարհագիր Յակուտին իր «Աշխարհագրական բառարանում» Արզանջան (Երզնկա) անվան դիմաց գրում է. «Այն գեղեցիկ և համբավվոր քաղաք է, շատ հաճոյալի և բարիքներով լի»: Երզնկան ճանապարհորդների ուշադրությունն է գրավում նաև հետագա՝ XV դարում:

Իսպանացի Կլավիխոն (ճանապարհորդել է 1403-06 թթ.) հայտնում է, որ «ըրջապատի բոլոր կողմերից կարելի է տեսնել գյուղեր՝ որթատունկերով և բուսականությամբ. ամբողջ դաշտում մշակվում էր որթատունկ և հացահատիկ... Քաղաքը շատ բազմամարդ է, և այնտեղ կարելի է տեսնել շատ գեղեցիկ փողոցներ ու հրապարակներ: Այնտեղ բնակվում են պաշտոնական մեծաթիվ անձինք, որոնց մեծագույն մասը հարուստ մարդիկ են, կան նաև մեծափարթամ վաճառականներ»:

Վստահելի տվյալներ են մեզ հասել նաև Երզնկայի ճարտարարվեստ ոսկերիչների, արծաթագործների ու շինարարների մասին («Հայապատում», Բ, 480, Կ. Երզնկացի, էջ 96 և այլն), ինչպես նաև այն մասին, որ Երզնկայի շրջակայքում խաղողից, մրգածառերից ու հացահատիկից բացի մշակում էին նաև բամբակ¹:

Ուկա աղբյուրները հնարավորություն են տալիս մերձավորապես որոշել նաև Երզնկայի բնակչության թիվը: Ըստ ամենահամեստ հաշվառքի՝ XIII-XV դարերում քաղաքն ունեցել է 18000-ից ոչ պակաս բնակիչ (ամենայն հավանականությամբ՝ 40-50 հազար)²:

¹ Այս տեղեկության հեղինակը XVII դարի կեսի նշանավոր տեղագիր Հակոբ Կարնեցին է: Նա գրում է. «Նու ունի (Երկիրն Եկեղեց) ֆաղաֆ մեծ՝ զԵԳՆԿԱՅ, որ լի է ամենայն բարութեամբ, բամբակօֆ, այգեստանօֆ եւ մրգաբեր ծառօֆ» («Տեղագիր Վերին Հայոց», 1903, էջ 11-12):

² Բնակչության մերձավոր թիվը որոշելիս նկատի ենք ունեցել Երզնկայի երկրաշարժերի մասին մեզ հասած հետևյալ վստահելի տվյալները: 1255 թվականից մի ֆանի տարի առաջ տեղի ունեցած երկրաշարժից, ինչպես հաղորդում է Ու. Ռուբրուֆը, «տասը հազար անունով մարդիկ կորած էին, ի բաց առյալ աղֆատներից, որոնց մասին արձանագրություն չկար» (տե՛ս «Ուղեգրություններ», հտ. Ա, էջ 24): Պակաս չի եղել զոհերի թիվը նաև 1268-ի երկրաշարժից: 1458 թ. երկրաշարժի մասին մի հիշատակագիր հայտնում է հետևյալը. «Եկաւ ահագին շարժ եւ աւերեաց զբոլոր մայրաքաղաքն յԵԳՆԿԱՅ, եւ երկոտասան հազար այր եւ կին ի ներոյ հողին մնացին» (ձեռ. N 1309, էջ 261ա), 1483 թ. երկրաշարժի մասին Մատենադարանի ձեռագիր Ավետարաններից մեկի ստացող Հոհաննեսը գրում է. «Վասն ծովացեալ մեղաց իմոց Երզնկայ ֆաղաֆ տապալեցաւ եւ ժԸՌ

Պարբերաբար կրկնվող կործանարար երկրաշարժերն ու բազմաթիվ արշավանքներն ու ասպատակությունները, որին ենթարկվել է Երզնկան նշված դարերում, նրան ծանր վերքեր են հասցրել, սակայն ժամանակավորապես են միայն խանգարել քաղաքի նորմալ կյանքը: Քաղաքը շնորհիվ իր բնակչության տոկոսնության և բարենպաստ դիրքի շուտով բուժել է իր վերքերը և ողջ միջնադարի ընթացքում շարունակել է կարևոր դեր խաղալ Փոքր Ասիայի տնտեսական ու մշակութային կյանքում:

1280 թվականին Երզնկայում տեղի է ունենում կարևոր մի իրադարձություն, ստեղծվում է ինչ-որ եղբայրություն: Գրիգոր Սանահնեցի անունով մի ձեռունի վարդապետ կարգվում է այդ եղբայրության գլուխ, իսկ Հովհան Երզնկացի նշանավոր վարդապետը գրում է այդ եղբայրության «Սահմանք եւ կանոնքը»:

Մեր միջնադարյան քաղաքների ներքին կյանքի ուսումնասիրման համար մեծ արժեք ներկայացնող այս կանոնների մասին, որքան մեզ հայտնի է, թողնելի՛ք հիշատակություն ունի միայն Ղ. Ալիշանը «Երզնկա և Հովհաննես Երզնկացի» խորագրով իր հոդվածում («Յուշիկք հայրենեաց Հայոց»),

(18000) ոգի ի ներքե հողու մնաց, եւ այլ ոչ մնաց մի կենդանի» (ձեռ. N 6879, էջ 364ա): Քաղաքի կործանարար երկրաշարժերի մասին Երզնկայի բանաստեղծները արեկտուր ողբեր են հորինել: Դրանցից Դուլ-օղլի Երզնկացին գրում է, որ երկրաշարժից

«... Տասն հազար հոգի մեռան

Հայ ու հոռոմ ու մուսուրման

Մայրաքաղաքն ախրեցաւ» (ձեռ. N 7709, էջ 108բ):

Թորոս Երզնկացին հավանորեն նույն շարժի մասին գրած իր ողբի մեջ ունի հետևյալ տողերը.

«... Անասելի մարդ կոտորեց

Ներս, որ թուա՛ տասն հազար.

Շատ մի սպաննեց մեծ խոնանին...

Շատ հիւնէրպանտ փէշաֆէրներ» (ձեռ. N 9271, էջ 108ա):

Կան նաև այլ վկայություններ (տե՛ս, օրինակ, «Պատմութիւն Առաքելի Դատրիժեցոյ», Վաղարշապատ, 1884, գլ. ԾԵ, էջ 481, 482, 486 և այլն), բայց սահմանափակվենք բերածով: Տվյալներից ոչ մեկում շարժից զոհված երզնկացիների թիվը 10000-ից պակաս չի ցույց տրված: Իսկ 1483 թ. երկրաշարժի մասին խոսող ժամանակակիցը, հայանելով, որ զոհերի քանակն էր 18000, ավելացնում է, թե այլևս մարդ չմնաց կենդանի: Ճիշտ է, այդ դարերում հազիվ թե քաղաքներն ունենային մանրամասն ու ճշգրիտ տվյալներ իրենց բնակչության մասին, այնուամենայնիվ կարծում ենք, որ ժամանակակիցներն առասպելական չափազանցություններ իրենց տված զոհերի մասին չէին կարող գրել, ուստի և հավանական ենք գտնում, որ Երզնկան XIII-XV դարերում ունեցել է ոչ պակաս, քան 40-50 հազար բնակչություն:

հտ. երկրորդ, Բ տպ., Վենետիկ, 1921, էջ 416): Նա հայտնում է, որ 1280 թվին Սուրբ Գրիգոր վանքի միաբանները նորոգեցին իրենց միաբանությունը և խնդրեցին Հովհան Երզնկացուն իրենց համար կանոններ գրել: Վերջինս, կատարելով նրանց խնդիրը, գրեց «Կանոնք եւ սահմանք միաբանութեան եղբարց...» վերնագրով կանոնախումբը: Ալիշանն, անշուշտ, թյուրիմացություն մեջ է: Կանոնախմբի բովանդակության նման շփոթություն կարող էր առաջանալ, եթե ենթադրենք, թե նա ձեռքի տակ ունեցել է նույն Հովհան Երզնկացու մի այլ աշխատությունը, որի վերնագիրը («Յաղագս միաբանութեան եղբարց, բանք սակաւ եւ պիտանիք՝ վկայութեամբ Գրոց սրբոց, զորմէ թուղթ գրեցի սիրով եղբայրութեան այնոցիկ, որք ցանկան փափականաւ բանից իմաստութեան»¹) փոքր-ինչ նման է մեզ հետաքրքրող կանոնախմբի վերնագրին:

«Սահմանք եւ կանոնքը» բաղկացած է մի նախաբանից և երեք գլուխներից:

Նախաբանում ասված է, որ մարդկանց համար գոյություն ունի կյանքի և վարքի երկու ճանապարհ. մեկն այն է, որ Սուրբ Հոգու առաջնորդությամբ տանում է դեպի հանդերձյալ երջանիկ կյանք, մյուսը, որ լայն է ու ընդարձակ և գտնվում է սատանայի առաջնորդության ներքո, տանում է դեպի կորուստ: Շատերն են գնում այս երկրորդ ճանապարհով: Երզնկայի եղբայրությանը պետք է առաջնորդի Սուրբ Հոգին դեպի «յերկիր ուղիղ բարի ճանապարհան»:

Ապա հեղինակը հայտնում է, թե չորս տարբեր տեսակի եղբայրություններ գոյություն ունեն: Եղբայր են կոչում նախ՝ բոլոր մարդիկ միմյանց նկատմամբ. երկրորդ՝ եղբայր են միևնույն ծնողների զավակները, երրորդ՝ բոլոր քրիստոնյաները, մկրտվելով միևնույն ավագանում և լինելով «Քրիստոսի և երկնավոր Հորն որդիք», դառնում են եղբայրներ:

Այլ է Երզնկայի եղբայրությունը: «Այլ դուք, - գրում է Հովհան Երզնկացին, - ի վերայ այսոցիկ չորրորդ տեսակը եղբայրութեան հաստատեցէք ի միջի ձերում, որ գրովն է եւ կանոնական սահմանաւ եւ բարեսէր ժողովմամբ եւ ընկերակցութեամբք եւ միաբանութեամբ եւ միով հաւատով եւ սիրով երկնաւոր ցանկութեամբք»:

Այս նախաբանից հետո շարադրված են եղբայրության կանոնները՝ բաղկացած երեք գլուխներից:

¹ Մատենադարան, ձեռ N 728, էջ 54բ-84ա:

Առաջին գլխով սահմանված են այն կանոնները, որոնք վերաբերում են «եղբայրութեան» անդամներից ամեն մեկի բարոյական կերպարին և անձնական կյանքին («Եթէ ամենայն ոք իւր անձամբն որպէս քաղաքավարի»):

Միաբանութեան անդամները պարտավոր են սիրել Աստուծոն, հնազանդվել և խնամել իրենց ծնողներին, պատվել և իրենց վաստակից «պտուղ» տալ քահանաներին, մինչև ամուսնութեանը «անարատ կուսութեամբ» մնալ, ամուսնանալուց հետո հեռու կենալ «յօտար եւ ի պիղծ անգողնոյ», ամեն օր երեք անգամ աղոթել, շաբաթ և կիրակի օրերին անպատճառ գնալ եկեղեցի և ներկա լինել պատարագին, խոստովանել հանցանքը, հաղորդվել, լինել աշխատասեր, աղքատներին ողորմություն տալ և այլն:

Այս գլուխը եղբայրության նպատակներն ու էությունը պարզելու տեսակետից քիչ նյութ է տալիս: Ակնհայտ է, որ Հովհան Երզնկացին, որպէս Հայ եկեղեցու ճանաչված գաղափարախոսներից մեկը, մասնակցություն է ունեցել այս եղբայրության համար «Սահմանք եւ կանոնքը» ստեղծելու գործին սոսկ այն նպատակով, որ միաբանության մեջ մտնող «տղայահասակ մանկանց» աշխարհիկ ձգտումները սանձահարի, նրանց միաբանութեանը տա «կրօնական միաբանութեան» երանգ:

Այնուամենայնիվ այս կանոնների հիման վրա հնարավոր է մի քանի կարևոր հարցեր պարզել:

Պարզվում է նախ, որ միաբանության մեջ ընդգրկվածները եթե ոչ գերազանցապէս, ապա իրենց մեծամասնութեամբ երիտասարդ մարդիկ են: «Սահմանքի» հեղինակը նրանց դիմում է հետևյալ խոսքերով. «Լուարո՛ւք, երիտասարդք եւ տղայահասակ մանգունք, որք միաբանիք եղբայրութիւնս»:

Զ (6) կանոնից, ուր սահմանված են աղոթքի ու ծնրադրության ժամերը և՛ տղամարդկանց, և՛ կանանց համար, հնարավոր է ենթադրել, որ եղբայրության դռները փակ չեն եղել կանանց առաջ:

Ավելի հետաքրքիր ու բովանդակալից է «Սահմանքի» երկրորդ գլուխը, ուր շոշափված են այն հարցերը, «թէ զինչ օգնութիւն եւ շահ արասցեն միմեանց այս միաբանեալ եղբարքս, եւ որ է պտուղ միաբանութեան սոցա»:

«Եղբայրների» միմյանց հանդեպ ունեցած պարտավորություններից առաջինն է՝ միասնական ջանքերով օգնել և ազատել այն «եղբօրը», որն «ի փորձութիւն մարդկան անգանիցի եւ բռնաւորաց նեղիցի»:

Եթե որևէ մեկը մեղքի մեջ թաթախվի, եղբայրները հնարավոր միջոցներով (աղոթք, խրատ, հանդիմանություն, արգելման հրաման) պիտի ձգտեն ազատել նրան սատանայի ծառայությունից, աղքատության մեջ ընկնողին, ըստ իրենց կարո-

ղության, պարտավոր են օգնել բոլոր «եղբայրները», հիվանդին պարտավոր են մխիթարել այցելությամբ, դեղով և բժշկով, հանգուցյալի թաղմանը նույնպես մասնակցելու են բոլորը, ըստ որում յուրաքանչյուրը պարտավոր է իր միջոցներով մեկ օր պատարագ անել հանուն վախճանվածի:

Այս երկրորդ գլխի հոգվածներից պարզվում է նախ, որ եղբայրության հիմնական նպատակը փոխօգնությունն է, ամենօրյա համագործակցությունը և միասնական պայքարը ընդդեմ «բռնաւուսաց», ընդդեմ «չար մարդկան»:

Երրորդ գլխում շարադրված են այն հոգվածները, որոնք վերաբերում են ուրիշ վայրերից եկողների հանդեպ «եղբայրների» պարտավորություններին: Նրանք պետք է հյուրընկալեն, պատվեն և օգտակար լինեն այլ վայրերից եկած վարդապետներին և օտարականներին:

«Սահմանքի» վերջում Երզնկացին դիմում է «եղբայրներին» և ասում, որ առաջնորդվելով իր կողմից շարադրված սկզբունքներով, նրանք կնմանվեն ամուր պարսպի.

«Զի որպէս բազմութիւն քարանց, - ասում է նա, - ժողովեալ ի մի տեղի՝ պարիսպ ամրութեան եւ պահապան ամուր է քաղաքի, այսպէս եւ դուք իբրեւ զկենդանի քարինս սիրովն Աստուծոյ մածեալ՝ անառիկ ամրութեամբ կացէք ի հաստատութիւնն»:

Հայտնում է նաև, որ եղբայրության անդամը պարտավոր է ենթարկվել և կատարել «Սահմանքի» կետերը: Աններելի հանցանք գործողները վտարվելու են միաբանությունից:

Վերջում պարզվում է, որ եղբայրության մեջ եղել են «կր(տ)սերներ» և «աւագներ»: «Եղբայրությունն» ունեցել է իր պաշտոնեությունը՝ «Տասին գլուխն», «Քառասունին մեծն», «Գլխաւորք եղբարցն» և «Գլուխ եղբայրութեանն»:

Այսպիսով, «Սահմանքի» ուսումնասիրությամբ որոշակի է դառնում, որ 1280 թ. Երզնկա քաղաքում ստեղծված «Եղբայրությունը» եղել է քաղաքային աշխատավորական շերտերի, հատկապես «Երիտասարդների» և «տղայահասակ մանկանց» ընդգրկող ու շաղկապող մի կազմակերպություն:

«Տասին գլուխ» տերմինը հնարավորություն է տալիս վստահորեն դատել, որ կազմակերպության ստորին օղակում միավորվել են եղբայրության տասն անդամներ՝ իրենց գլուխ ունենալով տասնապետը: Մեկ տասնյակ անձերից բաղկացած 4 այսպիսի օղակներ միավորվել են «Քառասունին մեծի» հրամանատարության ներքո:

Կազմակերպչական նման, եթե կարելի է ասել՝ զինվորական սկզբունքը հնարավոր կլինե՞ր կիրառել միայն այն դեպքում, երբ «Եղբայրությունը» լինե՞ր քաղաքային աշխատավորական լայն շերտերը միավորող կազմակերպություն՝ անմիջաբար առնչված չլինելով այս կամ այն արհեստի կամ առևտրի մասնաճյուղի հետ:

Իսկ որ այն միավորվել է գերազանցապես քաղաքի աշխատավորական շերտերին, այդ պարզ երևում է «Սահմանքի» այն հոդվածներից, որոնք վերաբերում են միմյանց հանդեպ «եղբայրների» ունեցած պարտավորություններին (օգնել աղքատ եղբորը, այցելել և բուժել հիվանդին, կազմակերպել մահացածի թաղումը և այլն և այլն): Կազմակերպությունը ղեկավարվել է «Գլխավորք եղբարց» կոչվող օրգանի կողմից, որի ավագ անդամը՝ «Գլուխ եղբայրությանը», եթե ոչ որպես կանոն, ապա 1280 թվին եղել է հոգևորական: Ըստ երևույթին, նրա ֆունկցիան է եղել հսկել եղբայրության կրոնա-բարոյական սկզբունքներին և սանձահարել «միաբանեալ մանկանց» աշխարհիկ ձգտումները:

«Եղբարց միաբանության» մեջ եղել են «ավագ» և «կրտսեր» անդամներ: Ըստ որում, «Սահմանքի» տվյալներով, ավագ եղբայրը պարտավոր է եղել քաղցրությունը խրատել կրտսերին, իսկ վերջինս՝ հնազանդությունը լսել ավագին:

«Ավագների» ու «կրտսերների» տարիքային տարբերությունը պարզ է, սակայն այս աստիճանավորումը, թվում է, արդյունք է ոչ միայն անդամների ծերություն ու երիտասարդության: Միջնադարյան համբարական կազմակերպությունների կյանքում սերտ աղերս գոյություն ունե՞ր աշխատողի տարիքի և սոցիալ-տնտեսական դրության հետ: Աշակերտները ուսման որոշված ժամանակաշրջանն անցկացնելու հետո սովորաբար իրավունք էին ստանում ինքնուրույն կերպով արհեստով զբաղվելու կամ դառնում էին ենթավարպետ՝ չկորցնելով հետագայում, որոշ կուտակումներ անելուց հետո, սեփական արհեստանոց ունենալու երազանքը:

Նրանց շահերը բախվում էին վարպետների շահերին, որոնք նրանց անմիջական շահագործողներն էին, և այս հողի վրա նրանց միջև հաճախակի ընդհարումներ էին տեղի ունենում: Սակայն նրանք ավելի հաճախ պայքարի էին դուրս գալիս քաղաքի ֆեոդոլական տերերի և մեծատուն վաճառականների դեմ՝ դաշնակցելով իրենց վարպետների հետ:

«Սահմանքի» տվյալներով՝ միաբանության հիմնական նպատակը միասնական պայքարն էր ընդդեմ բռնավորին և տնտեսական փոխօգնությունը ու համագործակցությունը միմյանց զորավիզ ու նպաստամատուց

լինելը: «Վասն զի, - կարդում ենք «Սահմանքում», - աշխարհս այս ծով է, եւ մարդիկ ալեկոծին ի սմա պէս-պէս պատահմամբ գործոց: Եթէ ոք յեղբարութենէս ի փորձութիւն մարդկան անգանիցի եւ բռնաւորաց նեղիցի, ամենայն եղբայրքն ջան եգեալ հանցեն զնա ի հասանել վշտացն... եւ եթէ ոք յաղքատութիւն անգցի եւ ի չքաւորութիւն մարմնոյ, այլ եղբարքն ըստ կարողութեան եւ ըստ ուժոյ օգնեսցին...»:

Յավոք, «Սահմանքի» հեղինակի հաղորդած տվյալներն անբավարար են եղբայրութեան մասին ավելի լրիվ պատկերացում կազմելու համար. մի շարք կարևոր ու հետաքրքրաշարժ հարցեր, օրինակ՝ ի՞նչ բնույթ են կրել և ի՞նչ հարցեր են լուծվել «եղբայրների» հավաքույթներում, քաղաքի տնտեսական կյանքում ի՞նչ ֆունկցիա ու դեր են կատարել եղբայրության ղեկավար մարմինները և նման մի շարք այլ հարցեր, մեր ձեռքի տակ եղած աղբյուրների տվյալներով առայժմ չեն ստանում իրենց լուծումը:

Վերոհիշյալ հարցերի լուսաբանմանը լայնորեն օժանդակելու են XIII դարում, մոնղոլական տիրակալության լծի խստացման ժամանակաշրջանում, Փոքր Ասիայի քաղաքներում առաջ եկած «ախի» («եղբայր») կազմակերպության մասին եղած վկայությունները¹: «Ախիները» քարոզում էին եղբայրություն և հյուրասիրություն. Իբն-Բատտուտան, որ 1332 թ. ճանապարհորդելով Փոքր Ասիայում՝ հաճախ հյուրընկալվում էր «ախիների» (ի միջի այլոց, նաև Երզնկայի «ախիների» կողմից), վկայում է, որ նրանք կանգնած էին ազատության պաշտպանության դիրքերում և ոչնչացնում էին բռնավորներին ու նրանց կամակատարներին: Տառապյալներին ու չքավորներին օգնելը պարտադիր էր նրանց համար: Հայտնի է նաև, որ «ախիները» հիմնականում երիտասարդ ամուրի մարդիկ էին:

XIX-XX դարերի ազգագրական տվյալները միաբերան վկայում են այն մասին, որ Անդրկովկասի քաղաքների համքարական կազմակերպությունները միավորում էին նույն արհեստի մարդկանց՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից և կրոնական դավանանքից: Տիրող դասակարգերի ձգտումը՝ սերմանել ազգամիջյան ատելության ու կրոնական անհանդուրժողականության թույնը սոցիալ-տնտեսական նույն պայմանների մեջ գտնվող այլազգի աշխատավորության մեջ, հակահարված էր գտնում համքարական

¹ «Ախի» կազմակերպության մասին տե՛ս **Вл. Гордлевский**, Из жизни цехов в Турции. К истории “ахи” (“Записки Коллегии востоковедов”, //, вып. 2, Ленинград, 1927. **Вл. Гордлевский**, Государство сельджукидов Малой Азии, Москва, Ленинград, 1941. **В. Бартольд**, Ислам, СПб., 1918 և այլ աշխատություններ:

կազմակերպությունների կյանքի ու գործունեության բոլոր կարևոր բնագավառներում:

Կան վստահելի տվյալներ այն մասին, որ համքարական կազմակերպությունների այդ ավանդույթները նույնպես դարավոր պատմություն ունի: Հայտնի է, որ «ախի» կազմակերպության մեջ ընդգրկվում էին նաև Փոքր Ասիայի քաղաքների քրիստոնյա աշխատավորների ներկայացուցիչները: Այս առումով ուշագրավ է նաև այն փաստը, որ 1462 թվին Կտուց անապատում ընդօրինակված Հայսմավուրքի գրիչ Խաչատուրը հիշատակություն ունի ձեռագրի ստացողի մեծ պապ «ախի Կարապետի» մասին (ձեռ. N 4883, էջ 613բ):

Երզնկայի եղբայրության մեջ միաբանվածները նույնպես տոգորված են հարևան ժողովուրդների հետ հաշտ ու խաղաղ գործակցելու գաղափարով ու ջերմ ձգտմամբ: Եղբայրության սահմանքի մեջ այդ առթիվ կարդում ենք.

«Եւ խաղաղասէրք լինին եղբարքս մեր ի մէջ աշխարհի, ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցեն զասել եւ զլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին՝ մեծարեսցին եւ յիմաստութենէն շահեսցին՝ առանց հակառակութեան»:

Համոզված ենք, որ «ախիների» (որոնցից շատ կային նաև Երզնկայում) և Երզնկայի «եղբայրների» միջև եղել են մերձավոր կապեր:

Երզնկայի «Եղբարց միաբանությունը», «Սահմանքի» վստահելի տվյալով, պաշտոնական բնույթ է ստացել և եկեղեցու կողմից ճանաչվել որպես ընդունելի կազմակերպություն 1280 թվականին:

Մեզ այժմ հետաքրքրում է կարևոր մի հարց. Երզնկայի այս եղբայրությունն ունեցե՞լ է արդյոք իր նախորդները հայկական քաղաքներում, և նման տիպի կազմակերպություններ եղե՞լ են արդյոք նաև հետագայում բուն Հայաստանում և հայկական գաղթավայրերում: Հասկանալի է, որ այս հարցերը մեծ կարևորություն ունեն միջնադարյան Հայաստանի քաղաքների սոցիալ-տնտեսական կյանքն ուսումնասիրելու տեսակետից. ցավոք, նրանց գոհացուցիչ պատասխան տալու համար առայժմ մենք զուրկ ենք հարուստ նյութերից:

Այնուամենայնիվ մատենագրական որոշ տվյալներ ու ակնարկներ կան, որոնց կողքով չի կարելի լռությամբ անցնել:

Մատթեոս Ուռհայեցին իր «Ժամանակագրութեան» մեջ¹ պատմում է «յառաջ քան գքսան ամ», այսինքն՝ 1120-ական թվականներին տեղի ունեցած մի շատ կարևոր դեպք: Լսենք նրան.

«... Նոյնպէս յաւուրն բարեկենդանին եւ նոյն ամին եկեալ կարաւան ի յարեւելից ի քաղաքն Անտիոք, եւ բարձեալ բերէին տարեիս ձուկն եւ կային ի մէջ շուկային ի գինարբութեան. եւ ի լսել քաղաքացեացն զձայն պարուց նոցա՝ ամենայն արք քաղաքին հասանէին ի վերայ նոցա եւ ծեծելով զանալից արարին զնոսա, սկսան հանել զնոսա ի քաղաքէն. էին արք իբրեւ ութսուն՝ բրէզածք եւ ընտրեալք քաջութեամբք: Եւ յայնժամ ձայն տուեալ մանկտաւազն նոցա, եւ նոցա միաբան գինեմխեալք էին՝ յարձակեցանի ի վերայ քաղաքացեացն եւ ի Սեւոտոյն դրանէն մինչեւ ի տէր-Պետրոս՝ զամենայն արք քաղաքին փախստական արարին եւ կառափնաբեկ եւ ոտնակոտոր արարին արս բազումս. եւ ապա խաչիւ եւ աւետարանով երդուեալ նոցա բնաւ այլ ոչ մեղանչել նոցա: Եւ յայնժամ արարին խաղաղութեան եւ դարձան ի տեղիս իւրեանց»:

Անտիոք եկած վաճառականների բերած ապրանքը Վանա լճի ապխտած ձուկն է՝ տառեխը, ուստի առևտրականներն էլ Վասպուրականից են՝ ամենայն հավանականությամբ հենց Վան քաղաքից: Կերուխում, երգ ու կին՝ ահա նրանց առօրյան օտար շուկաների եռուզեռի մեջ: Նրանք կազմակերպված գինական ուժ են ներկայացնում, գինված են բրերով (այդ չի նշանակում, թե այլ զենք չեն ունեցել), ունեն իրենց հրամանատարը, որ Ուռհայեցու կողմից կոչվում է «Մանկտավագ», վերջինիս կոչով բոլորը, «որ էին արք իբրև ութսուն», մի մարդու նման ոտքի են կանգնում և հալածում իրենց ծեծողներին: Նրանք հարյուրավոր կիլոմետր դժվար ճանապարհ են անցել, ազատել իրենց ապրանքը գիշատիչ տասնյակ հայացքներից. շրջանցել են բազմաթիվ մաքսատներ ու խորամանկությամբ, ուժով, խելքով ու հմտությամբ հեռավոր Վասպուրականից Անտիոք հասցրել իրենց ապրանքը՝ տառեխ ձուկը:

Նրանց այլ ընկերակիցները, նույնպիսի դժվարություններ հաղթահարելով, գնում էին Պարսկաստանի մարդաշատ քաղաքները, հասնում էին Պարտավ և այլ հեռավոր վայրեր: Եվ ամենուրեք նրանք, վաճառական լինելով հանդերձ, միևնույն ժամանակ գինված կովոզներ էին, որ պաշտպանում էին իրենց անձն ու շահը:

¹ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 226:

Պատահակա՞ն է արդյոք 80 կտրիճ վաճառականների այսպիսի համագործակցությունը հայրենիքից հեռու: Արդյոք միայն անձնական շահն ու օգո՞ւտն է տվյալ դեպքում միավորել նրանց: Համոզված կարելի է հայտարարել, որ ոչ: Ոչ թեկուզ այն պատճառով, որ նրանք հանդես են գալիս որպես կերուխումի, գինու ու կովի փորձված ընկերներ. մի ընկերություն, որ չէր կարող ծնվել Անտիոքի ճանապարհին: Եթե նրանք իրար կապ չունեցող անհատներ լինեին, օտար շուկայում նույնիսկ հակադիր շահեր պետք է ունենային, ամեն մեկը պետք է ձգտէր ավելի շուտ վաճառել իր ձուկը և տուն դառնալ:

Վերոհիշյալ հետաքրքրաշարժ դեպքի հանգամանքները պարզելու համար բացառիկ արժեք է ներկայացնում Մատթեոս Ուռհայեցուց մեջբերած հատվածի «Մանկտավագ» տերմինը: «Մանկտավագը» հանդես է գալիս որպես բերրով զինված 80 երիտասարդների ղեկավար, նրա կոչով բոլորը կովի են էլնում: Չափազանց ուշագրավ այս տերմինը կազմված է «մանկտի» և «ավագ» բառերից: Մեր բառարաններում («Նոր հայկազյան բառագիրք», Ստ Մալխասյանի «Հայերեն լեզվի բացատրական բառարան») «մանկտի» բառի արձանագրված իմաստներից են «պատանի», «երիտասարդ», «զինվոր», «քաջ զորական» և այլն: Ուշագրավ է նաև «մանկտի» բառի գավառային իմաստներից մեկը, որը համարժեք է «մակարներ» (ամուսնացող երիտասարդի ընկերներ) բառին: Բացի արձանագրված այս իմաստներից, Հակոբ Կլայեցու (XIII դարի) «Մեկնություն նուրբ գրեաց» աշխատության մեջ կա մի հատված, ուր այդ «մանկտի» բառը գործածվել է «երիտասարդ արհեստավոր» իմաստով¹:

«Մանկտի» բառի այս իմաստները, ինչպես և այն որոշակի տվյալները, որոնց համաձայն երզնկայի եղբայրության և «Ախի» կազմակերպության անդամների մեծագույն մասը ամուրի երիտասարդներ, այսինքն՝ «մանկտիք» էին, անտարակուս էն դարձնում այն, որ Մատթեոս Ուռհայեցու նկարագրած դեպքի մեջ գործող «մանկտավագը» մեզ արդեն ծանոթ եղբայրության նման ինչ-որ քաղաքային կազմակերպության ղեկավար անձ է, որի հրամանին հլու և կոչին հպատակ գործում են եղբայրության մեջ ընդ-

¹ Այդ հատվածում հեղինակն ասում է, որ դիպակագործությամբ, ոսկեգործությամբ և շֆեղ ու թանկարժեք ապրանքներ արտադրող այլ արհեստներով հոգևորականները չպետք է զբաղվեն, «այժեիմ յոստայնանկութեամբ բաւականասցում յոստայնանկական արուեստս, եւ մի որ մանգանց անարգել մտաց իմացուածք են անընդունելի է մեզ» (Մատենադարան, ձեռ. N 598, էջ 176ա):

գրկված «մանուկները»՝ լինի իրենց հայրենի քաղաքում, լինի բուն երկրից անսահման հեռու՝ օտար հորիզոններում:

«Հայկազյան բառագրքի» և մեր մյուս բառարանների հեղինակներին «Մանկտավագ» տերմինի գործածությունը միայն մի հատված է հայտնի, և դա Մ. Ուռհայեցու մեզ արդեն ծանոթ հատվածն է: Բարեբախտաբար, այդ բառը մեր մատենագրական երկերում գործածվել է նաև հետագայում: XIV դարի հայերեն ձեռագրերի յիշատակարաններում, օրինակ, «մանկտավագ» տերմինին հանդիպում ենք երեք անգամ:

1. 1334 թ. Կաֆայում ընդօրինակված «Ճառընտիրի» հիշատակարանում. («[յիշեցէք] Բահատուր բազազին, պարոն Հասրատնին, Սիմէոն չրախճուն, մանկտաւագ Կազուրին, պարոն Աւրատին եւ այլ երախաւորաց»)¹:

2. 1343 թ. մի հիշատակարանում («զպատուեալ ծերունին զԹագուոր մանկտաւագն»)²:

3. 1357 թ. Սուլթանիայում Մխիթար Անեցի գրչի կողմից ընդօրինակված ձեռագրում: Գրչին գործակցել է մանկտավագ Ներսեսը («զբազմավէր ոգի զմանկտաւագ Ներսէսս՝ զսակաւ աշխատողս ի սմայ, աղաչեմ միով Տէրողորմեայի օգնական լինել»)³: Այդ նույն ձեռագրի հիշատակարանում հիշվածների մեծագույն մասն արհեստավորներ են՝ ուսթա Վրանը, զասապ Նուրադինը, գինեծախ Զաքարեն:

Անտարակույս, այս տերմինին կհանդիպենք նաև հետագա՝ XV-XVII դարերի հիշատակարաններում և այլ աղբյուրներում⁴: Այս նշանակում է, որ «մանկտավագություն» ինստիտուտը, գոյություն ունենալով դեռևս XII դարի սկզբներին (1120 թ. մերձավորապես), իր գոյությունը շարունակել է նաև հետագայում:

«Մանկտավագ» տերմինի հետաքրքրությունն այսքանով չի սպառվում: XIX-XX դարերի ազգագրական տվյալներով Հայաստանի, Վրաստանի և Թուրքիայի քաղաքներում արհեստավորական համքարություններում հատուկ պաշտոնյա կար, որ կոչվում էր «իգիթբաշի» կամ «ջիգիթբաշի»: XIX դարում այդ պաշտոնյայի պարտականությունն էր ուստա-բա-

¹ Լ. Խաչիկյան, ՓԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 265:

² Նույն տեղում, էջ 334:

³ Նույն տեղում, էջ 428:

⁴ «Մանկտավագ» բառը գործածվել է նաև որպես անձնանուն: Հ. Անադյանը (տե՛ս «Հայոց անձնանունների բառարան», հտ. Գ, էջ 203) գտնում է, որ այն կազմված է «մանկտի» և «ավագ» հայերեն բառերից և ունի «մանուկների ավագ, ուսուցիչ կամ վարժապետ» իմաստները:

շու կարգադրությունները հաղորդել համբարությունների, անդամներին, ժողովի հրավիրել նրանց և այլն: Այդ շնչին եկամուտ բերող պաշտոնը սովորաբար հանձնում էին համբարության այն անդամներին, որոնք ժամանակավորապես կամ ընդմիջտ զրկված էին արհեստը բանեցնելու կարողությունից¹:

Իգիթ-բաշու պարտավորությունների ու պաշտոնի մեջ չկա որևէ բան, որ առնչվի նրա անվան (իգիթ, ջիգիթ թուրքերեն նշանակում է ջահել, քաջ և այլն) իմաստին: Նա ստորադաս պաշտոնյա է, ուստի որևէ մեկի հանդեպ «ավագ» (բաշի) չէ. նա որևէ կերպ չի առնչվում նաև «երիտասարդ» ու «քաջ» իմաստներին:

Սակայն այդպես էր XIX դարում, երբ Անդրկովկասում և Թուրքիայում համբարական կազմակերպությունները, զարգացման դարավոր ընթացքը ապրելով, կորցրել էին իրենց կազմակերպչական հին սկզբունքներից շատ-շատերը, երկրի հասարակական ու քաղաքական կյանքում չէին կատարում այնքան կարևոր դեր, ինչպես անում էին նրանց հեռավոր նախորդները XII-XIII դարերում, զինված ուժ իրենցից այլևս չէին ներկայացնում և այլն: Այս բոլորի հետ մեկտեղ, այնուամենայնիվ, «իգիթ-բաշի» տերմինը (որ հայկական «մանկտավագ» տերմինի հարազատ թարգմանությունն է), ինչպես նաև «աղսախկալ», «ուստաբաշի» և համբարությունների հետ կապված այլ տերմիններ վկայում են քաղաքային համբարական կազմակերպությունների և միջնադարյան «եղբայրությունների» սերտ կապի և առնչության մասին:

Շարադրված տվյալներով, որքան էլ նրանք սուղ և ակնարկային լինեն, թվում է, թե կարելի է ապացուցված համարել, որ դեռևս XII դարում Հայաստանի քաղաքներում կային կազմակերպություններ, որոնք միավորում էին քաղաքի արհեստավորական և առևտրական շերտերին, պայքար կազմակերպում ընդդեմ «բռնավորների», օգնում տնտեսապես քայքայված ընկերոջը, միմյանց գորավիզ լինում քաղաքական ու տնտեսական գործունեության բոլոր բնագավառներում: Նրանք միաժամանակ կարևոր դեր էին խաղում որպես զինված ուժ: Մանկտավագի գլխավորությամբ նրանք հարձակվում էին իրենց թշնամիների վրա, հալածում իրենց հարստահարողներին, իսկ հաճախ նաև, որպես քաղաքի իսկական հայրենասերներ, կրճքով պաշտպանում էին այն օտար նվաճողների հարձակումներից: Այդպես օրինակ՝ հայտնի է, որ 1243 թ., երբ մոնղոլները Բաշու Նոյինի գլխավորու-

¹ Ю. Ахвердов, Тифлиские амкары, Тифлис, 1887, с. 17 и др.

թյամբ պաշարեցին Երզնկան, «բնակիչք քաղաքին բազում հարուածս հասուցեալ ի վերայ զօրացն թաթարին...»¹:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Հայաստանի բոլոր քաղաքներն են արդոյք ունեցել այդպիսի կազմակերպություններ. այս հարցին վճռական պատասխան տալ չենք կարող: Թվում է, սակայն, որ այն խոշոր քաղաքները, որոնք կարևոր դեր են կատարել որպես արհեստագործության և միջազգային առևտրի կենտրոններ, պետք է, որ ունենային այդպիսի կազմակերպություններ:

Մեզ արդեն հայտնի է, որ Երզնկան և Վասպուրականի քաղաքներից մեկը (ամենայն հավանականությամբ Վանը) ունեցել են նման կազմակերպություններ:

Երզնկայի եղբայրության «Սահմանքի» մեջ կա հետևյալ ուշագրավ հատվածը.

«Իսկ երրորդ գլուխն այն է, որ եւ այլոց բարի արասցեն, որ գան ի հեռաւոր աշխարհաց եւ կամ ի սոցանէ գնան յայլք աշխարհ, օգտին եւ օգտեցուցանեն»:

Հատվածի բովանդակությունն այն է, որ «եղբայրները» պարտավոր են այլ վայրերից եկողներին բարություն անել (հյուրընկալել, կերակրել և այլն), որպեսզի իրենք ևս փոխադարձաբար հյուրընկալվեն ուրիշ երկրներ գնալու դեպքում: Այս հատվածը չի կարելի դիտել սոսկ որպես քաղաքային կազմակերպությունների «հյուրասիրության» արտահատություն: Օտար հեռավոր երկրների հետ կապ ունեցող հեռավոր քաղաքներում հյուրընկալություն ակնկալող քաղաքացիներն անշուշտ առևտրականներ էին, որոնք, անդամվածան իրենց «առ» և «տուր»-ի սկզբունքին, «օգուտ» էին տալիս այլոց՝ «օգուտ» ստանալու ակնկալությամբ միայն («օգտին եւ օգտեցուցանեն»):

Այստեղից թերևս կարելի է եզրակացնել, որ նման եղբայրություններ գոյություն են ունեցել Հայաստանի և շրջակա երկրների այլ վաճառաշահ քաղաքներում նույնպես: Կարծում ենք, որ միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի վերաբերյալ ունենք փոքր-ինչ ավելի որոշակի տվյալ:

Ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու, 1280 թվին Երզնկայի եղբայրության «գլուխ» է կարգվում Գրիգոր Սանահնեցի անունով մի ծերունի վարդապետ: Այդ Գրիգոր վարդապետն, ամենայն հավանականությամբ, Երզնկայում հաստատված հենց այն գրասեր Ահարոն-Գրիգոր վարդապետն է, որն ընդօրինակել է տվել Երզնկայի եղբայրության «Սահմանքի» մեջ

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Թիֆլիզ, 1909, էջ 268:

հայտնի հնագույն ձեռագիրը (թիվ 2329): Այդ ձեռագրի 281ա-283ա էջերի ինքնագիր հիշատակարանում ձեռագրի ստացող այդ Գրիգորը գրում է.

«Ի թու[ականին] Չե (1291)... նուստ եւ անարժան սպասաւորս բանի Ահարոն մականուն Գրիգոր կոչեցեալ ստացա զգիրքս զայս, որ է Քերական եւ Արուեստ գրադարձի եւ Համառատ կանոնք՝ երկու դիտաւորութեամբ. մի՛ զի ընթերցեալ աւգտեցայց ի սմանէ, վասն որոյ եւ խոշորագիծ ետու գրել ի թերութեան ժամանակի, եւ երկրորդ՝ զի յիշելոյ պատճառ լիցի մեզ յետ վճարելոյ մեզ ի մարմնաւոր կենացս...»¹:

Այս նույն ձեռագրի մեջ հետագայում արված երկու հիշատակությունների համաձայն (էջ 1բ, եւ 283ա) այս Գրիգոր-Ահարոն վարդապետը վախճանվել է 1316 թ. օգոստոսի 18-ին: Սակայն Երզնկայում նրա կյանքն այդ մեկ քառորդ դարի (1291-1316 թթ.) ընթացքում խաղաղ չի անցել:

Նրան պատկանող մի այլ ձեռագրի ինքնագիր հիշատակարանից (ձեռ. N 1342, «Մեկնութիւն Ղուկասու յԻգնատիոսէ») տեղեկանում ենք, որ այն գրվել է.

«Ի մայրաքաղաքն Երզնկա, բայց ի կատարումն ոչ էլ զի այլազգիք մահմեդականք ասպտակեցին ի գաւառն ի քառասներորդաց պահոցն յերկրորդ շաբաթուն եւ բազում քրիստոնեայս՝ եկեղեցականս եւ աշխարհականս նահատակեցին եւ յանխնա եւ անողորմ սրակոտոր արարին եւ զայլսն գերի վարեցին, եւ սաստիկ եւ անհնարին ահ եւ երկեղ եւ տագնապ եւ խոռվութիւն եղեւ բնակչաց քաղաքին: Եւ որպէս յոլովք ցրուեցան ի քաղաքացեացն ընդ ամենայն կողմանս, նոյնպէս եւ մեք մագապուրծ եղեալ՝ բազում տառապանաւք եւ աշխատութեամբ դիմեալ յԱրեւելից կողմն: Խնամք ողորմութեանն Աստուծոյ առաջնորդել հասուց զմեզ յԱնի քաղաքս. եւ աստ եղեւ կատարումն գրոցս՝ շնորհաւք եւ աւգնականութեամբն Աստուծոյ ի թուականիս հայոց ՉեԱ (1292), ի մարերի Ժ(10) եւ ի հոկտեմբեր ԺԳ (13), ձեռամբ մեղապարտ եւ անարժան վարդապետի Ահարոնի՝ մականուն Գրիգոր կոչեցեալ»²:

Անի քաղաքում նրան հյուրընկալում են և խնամում Գրիգոր ծեր քահանան, Սիմեոն միայնակյաց Մարընդունեցին և ուրիշները: Երախտագիտությամբ է հիշում նա իր հանդեպ «գութ և ողորմութուն» ցույց տված անձանց:

Հակված ենք կարծելու, որ Երզնկայի 1292 թ. աղետից փրկված Գրիգոր-Ահարոն վարդապետն Անիում հեշտությամբ գտնում էր թե՛ օթևան. թե՛

¹ Մատենադարան, ձեռ. N 2329, էջ 282ա:

² Մատենադարան, ձեռ. N 1342, էջ 260ա-260բ:

«խնամք ու գթություն», թե՛ գիրք ու մտերմություն, որովհետև Անի քաղաքում ևս կար երզնկայի «եղբարյություն» կազմակերպության նման մի կազմակերպություն, որի անդամների պարտավորությունների մեջ ևս հյուրընկալությունն ու օտարականին պատվելը առաջին տեղերից էր գրավում:

Այժմ աշխատենք առկայ սուղ փաստերի միջոցով առաջ քաշել երզնկայի եղբարյության և ընդհանրապես քաղաքային պլեբսի գաղափարախոսությունն առնչվող մի երկու հարց¹:

Ինչպես արդեն տեսանք, XII-XIII դարերի Հայաստանի քաղաքներում դասային հակամարտությունները ծայր աստիճան սրվում են: Փողի ուժով տնտեսական ու քաղաքական կյանքի հրամանատարական բարձունքները նվաճող մեծահարուստ ու փարթամ վաճառականներ, որոնք պարծենում էին ոչ թե իրենց տոհմի ազնվականութեամբ ու հին անցյալով, այլ իրենց հսկայական նյութական միջոցներով, բնական է, որ պետք է պայքարեին երկրի ֆեոդալ իշխողների և նրանց կամակատարների դեմ: Այս պայքարի արդյունքը լինում էր այն, որ շատ մեծատուն վաճառականներ դրամի ամենակարող ուժով ձեռք էին բերում կալվածքներ, իսկ այդ կալվածքների հին տերերը, աստիճանաբար կորցնելով իրենց ունեցվածքը, զրկվում էին անաշխատ ու շուայ կյանք վարելու իրենց նախկին հնարավորություններից:

Մեծատուն վաճառականների և նրանց գաղափարախոսների համար գաղտնիք չէր, որ եկեղեցու հովանու տակ էին պատսպարվում և զգեստավորված շարունակում տիրել իրենց հսկայական կալվածքներին հայ ֆեոդալական ընտանիքների նվազ ու վտիտ շառավիղները:

Տնտեսական ու սոցիալական այս հողի վրա քաղաքներում հանդես են գալիս մարդիկ, որոնք «Բամբասեն իսկ (զվարդապետս) ագահս եւ հեշտասէրս եւ իշամեղուս անուանեն զնոսս եւ դատարկակեացս եւ որ ինչ սոցին նման են»²:

Վարդապետներին և ընդհանրապես հոգևորականությանը «հեշտասեր» անվանողները, բնական է, որ պետք է թերանային հավատի հարցերում և հակադրվեին եկեղեցու գաղափարախոսությանը: Եվ իրոք, 1371 թ. մի հոգևորական վկայում է այն մասին, որ ինքը ծանոթ է 15-ամյա մի պա-

¹ Այս շրջանի «Հերձվածողական» գաղափարների մասին մենք արդեն առիթ ենք ունեցել խոսելու «Աղանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում XII-XIV դարերում» հոդվածում (տե՛ս Ն. Մառի անվան կաթինետի «Աշխատություններ», 1947, N 2, էջ 181-209): Այժմ ձեռքի տակ ունենմ նոր նյութեր:

² **Սարգիս Շնորհալի**, Մեկնություն եօթանց թղթոց..., Կ. Պոլիս, 1826, էջ 54:

տանու, որը դեռևս եկեղեցի չի մտել և պատարագ չի տեսել, և մի ուրիշի, որը 10 տարուց ավելի է, ինչ չի հաղորդվել:

«Եկեղեցի, - գրում է նույն հեղինակը,- սարդի ոստմամբ լցեալ, զգեստ փոշակալեալ եւ ցեցակերեալ կամ բնաւ անզարդեալ, հաղորդութիւն խորհրդոյն բորբոսքն եղեալ կամ ի մկանց ծախեցեալ, քահանայք եւ առաջնորդք գայթակղեցուցանեն եւ ոչ շինեն զհաւատս»¹:

Քաղաքային իշխող շերտերն այնուամենայնիվ իրենց կապերը չէին խզում եկեղեցուց: Ընդհակառակը՝ XIII-XIV դարերում նրանք էին հիմնականում, որ կառուցել էին տալիս ու վերաշինում եկեղեցիներ ու վանքեր: Նրանք քաջ ըմբռնում էին, որ եկեղեցին իրենց պետք է գալու, որովհետև մեծատունների դեմ ծառանում էին հասարակության աշխատավոր ու չքավոր այն շերտերը, որոնց մտահոգում է այն հարցը, թե՞ «Վասն է՞ր շարքն ի հանգիստ կան եւ մեծատունք են եւ փափկանան միշտ եւ յուրախութեան են յանապազ, եւ մեք՝ կարաւտ ամենայն բարեաց»²:

«Չարերի» շարքում այդ «կարօտ ամենայն բարեաց» շերտերը դնում են բոլոր նրանց, ովքեր «փափկանան միշտ եւ յուրախութիւն են»: Այդ շերտերը հասել էին արդեն այն գիտակցութեանը, որ Աստված բոլոր մարդկանց ստեղծել է «զոյգ եւ հաւասար», միևնույն իրավունքներով՝ իշխել գազանների, սողունների, թռչունների ու ձկների վրա: Ուստի և տիրոջ և ճորտ գյուղացու, մեծահարուստ վաճառականի և աղքատ քաղաքացու փոխհարաբերությունները ստեղծվել են հետագայում՝ բռնութեան ճանապարհով: «Տիրելն այսու եղանակաւ գործեցեալ եղեւ ի սկզբանէ, զի հզօրքն եւ կարօքն բռնացան ի վերայ տկարացն եւ հնազանդեցուցին զնոսա եւ ընչեղքն եւ հարուստքն ծառայեցուցին ինքեանց զաղքատքն»³:

Եկեղեցու գաղափարախոսները քարոզում էին, թե սատանան մարդկանց կորստի մատնելու համար բազմաթիվ հնարներ գիտե. «Չոմանս (խաբէ սատանայ) թատերաւք խաղուց եւ շարաշար ծաղրօք եւ լկտի կատականօք, դատարկ եւ վայրապար խաւսաւք, զքաջաց զրոյցն տալ տայ եւ ուսուցանէ զմարդն զարաւոր մանուկ եւ յաղթող լինել, եւ այն է կորուստ: Ի կոխ կամ ի խաղ փութացուցանէ եւ ի սպանութիւն...»⁴:

Ժողովրդին իր «քաջաց զրուցներից», իր սիրելի գուսանների ու վար-

¹ Մատենադարան, ձեռ. N 581, էջ 255բ-256բ:

² **Բարսեղ Մաշկետրցի**, Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Մարկոսի, Կ. Պոլիս, 1826:

³ Նույն տեղում, էջ 103-104 (տե՛ս նաև Մատենադարան, ձեռ. N 1314, էջ 64բ-65ա:

⁴ Ձեռ. N 2776, էջ 252բ:

ձակաների երգից ու տաղից, առածից ու հանելուկից կտրելու, հեռացնելու նպատակով եկեղեցու գաղափարախոսները բազմապիսի հնարների էին դիմում: Ներսես Շնորհալին ժողովրդական հանելուկների նմանողությամբ կրոնական բովանդակությամբ հանելուկներ էր հորինում, «զի փոխանակ առասպելեաց՝ զայն ասասցեն ի գինարբուս եւ ի հարսանիս»¹:

Մխիթար Գոշն ու Վարդան Այգեկցին օգտագործում էին ժողովրդական կենսախինդ ու առողջ առակաները՝ մեկնաբանելով և նրանց մեջ դնելով այլ՝ ժողովրդին խորթ գաղափարախոսություն: Սակայն աշխատավոր ժողովուրդը սնվում էր իր ստեղծագործական վճիռ աղբյուրներից, երգում էր իր հայրենները, լսում իր ծոցից դուրս եկած գուսաններին ու ասացողներին, շանսալով ու արհամարհելով եկեղեցականների կողմից դրված արգելքն ու անեծքը՝ շտապում էր դիտել թատերական ներկայացումներ և այլն: Մեր Մատենադարանի ձեռագրերում կա Խաչին նվիրված մի հետաքրքիր ներբողյան, որի մեջ գտնում ենք ուշագրավ հետևյալ տողերը.

«Յորժամ զանազան թատերք մոլորութեանցն ի փողոցս քաղաքացն երեւութանան յօրինեալք, յայնժամ է տեսանել զխտություն մարդկան կատարեալ ձգել գանձինս առ տեսարանն վնասակար ոգւոցն... բազումք զվաճառաշահութիւնսն արհամարհելով անդ երթալ դեգերին, այլք զարուեստս ձեռագրութեանն անփոյթ արարեալ զօրն ամենայն նստին դատարկացեալք՝ լսել վնասակար հնչմանցն ձայն, որք զհոգւոցն գործեն զապականութիւն: Իսկ յորժամ իցէ ժամանակ լսելութեան աստվածային ինչ շահաւոր պատմութեանց՝ տաղտկացեալք հրաժարին եւ տարտամեալք հեղգալով ի բաց դարձուցանեն զլսելիս...»²:

Այս և նման այլ վկայություններից պարզ է դառնում, որ քաղաքային աշխատավոր շերտերն ունեին իրենց կենսաթրթիւ մշակույթը, իրենց թատրոնը, գուսաններին և գաղափարախոսներին:

Երզնկայի եղբայրության հետ գրական բեղմնավոր գործունեությամբ և անձնական կապերով անմիջաբար առնչվում է XIII-XIV դարերի նշանավոր բանաստեղծ Կոստանդին Երզնկացին: Երզնկացին իր մի շարք տաղերում ակնարկներ է անում այն հալածանքների ու զրկանքների մասին, որ ինքը կրել է կղերականներից ստեղծագործելու համար՝ ընդհանրապես, և «աշխարհի» եւ «սիրոյ» բան ստեղծագործելու համար՝ մասնավորապես: Օրինակ՝ մի տեղ նա գրում է.

¹ «Կիրակոսի Գանձակեցոյ Հայոց պատմութիւն», Վենետիկ, 1865, էջ 69:

² Ձեռ. N 1880, էջ 355ա:

«Ոմանք չարախօսեն զինչն վասն նախանձու, թէ որպէս խօսի սա այսպիսի բան, զի վարդապետի շէ աշակերտել...»¹:

Կամ՝

«Ոմանք չար են հետ ինձ
Ու նախանձով են յիմ վերայ
Վասն իմ գրեալ բանիս,
Որ առ մարդիկ երեւանայ...»²:

Եվ կամ՝

«Նայ կէտք մ'ասեն դայ է
Յիմար ու խել մաղաս կարթել.
Ու կէտք մ'ասեն թէ պարտ է
Զայսպիսոյ արիւնն հեղել.
Նայ ես պատասխանեմ

Թէ՛ Կոստանդին շէ պարտ լըսել...»³

Բայց ոչ բոլոր տեղերում է Կոստանդինը գանգատվում իրեն նախանձողներից ու հալածողներից: Ընդհակառակը՝ «Տաղ սիրո»-ի մեջ, ուր գովերգում է «գեղեցիկ մորճին», որի նմանը ոչ ոք դեռ չի տեսել, նա հայտնում է.

«... Եղբարք մի կան հետ մեզ սիրով.
Աշխարհի բան ուզեն գրով.
Նայ ես վասն այն յայտնի ձայնով
Սիրով բաներս ասցի յոլով»⁴:

Ովքե՞ր են այդ «եղբայրները», որոնք Կոստանդինից «աշխարհի բաներ» են ուզել, ովքե՞ր են, որոնք սիրել ու տարածել են նրա «սիրու բաները»: Կոստանդինի «քերթվածների» հրատարակիչ Պոտուրյանն իրավացիորեն նկատում է, որ այս տաղի մեջ նշված «եղբայրքը կրօնաւորք չէին անշուշտ», բայց ովքեր էին՝ այդ հարցը նա թողնում է անպատասխան: Հնարավոր է, որ Կոստանդին Երզնկացու պատվիրատու «եղբայրքը» Երզնկայի մեզ արդեն ծանոթ միաբանության «եղբայրքն» լինեն:

¹ Կոստանդին Երզնկացի, ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ և յուր ֆերթվածները, հրատ. Մ. Պոտուրյան, Վենետիկ, 1905, էջ 57:

² Նույն տեղում, էջ 97:

³ Նույն տեղում, էջ 109:

⁴ Նույն տեղում, էջ 171:

Այս հավանական եզրակացությունը հիմնավորվում է հետևյալ փաստով: Կոստանդին Երզնկացին ունի «Բան Կոստանդեայ առ մեր հոգևոր եղբայրն Ամիր. հոգով ի հոգի եւ սրտէ ի սիրտ» խորագրով մի բանաստեղծություն, որը սկսվում է հետևյալ տողերով.

«Պարոն Ամիր, մեր պարծանաց
եղբայր եւ սիրելի...»¹:

Այստեղից պարզ է, որ Կոստանդինի «հոգևոր եղբայր» Ամիրը աշխարհական մարդ է («պարոն»): Այդ նույն պարոն Ամիրն է (Փոլին Քալայմաչի մականունով), որ 1336 թ. Թավրեթում ընդօրինակել է Կոստանդինի տաղերի մեզ հասած հնագույն ժողովածուն:

Երզնկա-Թավրեթ վաճառաշահ ճանապարհով անցնող ու դարձող «պարոն ամիրները» հենց այն «եղբայրներն» էին, որոնց համար Հովհան Երզնկացին 1280 թ. կազմեց «Կանոնք եւ սահմանքը»: Դրանց խնդրանքով էր, որ Կոստանդին Երզնկացին գրեց իր «աշխարհի» և «սիրու» գողտրիկ տաղերը:

Կարծում ենք, որ Կոստանդինը չի բավարարվել Երզնկայի «եղբայրներին» պատվերով մի քանի սիրո երգեր հորինելով: Նրա ստեղծագործությունների մտայնությունն ու նպատակադրումն ըստինքյան տողորված են քաղաքային պլեբսի գաղափարներով ու մտորումներով:

¹ Կոստանդին Երզնկացի, ԺԿ դարու ժողովրդական բանաստեղծ եւ իւր ֆերթուածները, հրատ. Մ. Պոստրեան, Վենետիկ, 1905, էջ 153:

**ԵՐԶՆԿԱ ՔԱՂԱՔԻ «ԵՂԵԿԱԳՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ»
ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (1280 թ.)***

Հայկական ՄՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի «Տեղեկագրի» 1951 թ. N 12-ում տողերիս գրողը հրատարակել էր մի հաղորդում՝ նվիրված 1280 թվականին Երզնկայում կազմակերպված Եղբայրությանը և նորաստեղծ այդ կազմակերպության համար Հովհաննես Երզնկացու (մհ. 1293 թ.) գրած «Սահմանք եւ կանոնքին»:

Շատ ժամանակ չի անցել այդ հաղորդման հրատարակումից, բայց այն մտել է արդեն գիտական լայն շրջանառության մեջ. Երզնկայի եղբայրության «Սահմանք եւ կանոնքը» իրավացիորեն համարվել է կարևոր մի սկզբնաղբյուր, որը լույս է սփռում միջնադարյան հայկական քաղաքների ներքին կյանքի վրա՝ հանդիսանալով համբարությունների գոյությունը հավաստող ամնաուշագրավ փաստաթղթերից մեկը. «Սահման եւ կանոնքը» հնարավորություն է ընձեռել միաժամանակ նոր տեսանկյունից քննարկելու միջնադարյան նշանավոր բանաստեղծներ Հովհաննես և Կոստանդին Երզնկացիների ստեղծագործությունները՝ բացահայտելով կապը քաղաքային բնակչության՝ առևտրականների և արհեստավորների և մասնավորապես եղբայրությունների մեջ ընդգրկված ամուրի երիտասարդների հետ:

Սրանով, սակայն, չի սպառվում Երզնկայի եղբայրության «Սահմանք եւ կանոնքին» նշանակությունը. այսուհետև ևս այն գրավելու է սևեռուն ուշադրություն՝ որպես միջնադարյան հայկական քաղաքներում ստեղծված եղբայրությունների մասին եզակի ու բովանդակալից սկզբնաղբյուր:

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ լույս ենք ընծայում Երզնկայի եղբայրության կանոնադրությունը Մատենադարանի այդ բնագիրը պարունակող երեք ձեռագրերի բաղադատությամբ:

Հակիրճ այս ներածականում, վերաշարադրելով «Տեղեկագրի» 1951 թ. N 12-ում տպագրված մեր հաղորդման հիմնական եզրակացությունները, միաժամանակ նոր նյութերի հիման վրա կատարում ենք որոշ լրացումներ:

1280 թվականին Երզնկայում կազմակերպված Եղբայրության մեջ միավորվել են քաղաքի առևտրական և արհեստավորական շերտերին պատկանող ամուրի երիտասարդները: Նրանց նպատակն է եղել միացյալ ջանքերով դիմագրավել «բռնավորաց» և «չար մարդկան», օգնել տնտեսապես քայքայված ընկերոջը, զորավիզ լինել միմյանց տնտեսական ու հասարակական կյանքի տարբեր բնագավառներում:

* «Քանբե Մատենադարանի», 1962, N 6, էջ 365-377:

Եղբայրությունն ունեցել է մարտական կազմակերպություն. սկզբնական օղակում միավորվել են տասն անդամներ՝ տասնապետի («տասին գլուխն») հրամանի ներքո. 4 այդպիսի օղակներից կազմվել է եղբայրության հաջորդ բջիջը՝ «քառասունին մեծի» գլխավորությամբ: Կազմակերպության գործերը տնօրինել է «գլխավոր եղբարք» կոչվող մարմինը՝ «գլուխ եղբայրությանն» անվանյալ պաշտոնյայի նախագահությամբ:

Եղբայրության մեջ եղել են «ավագ» և «կրտսեր» անդամներ: Ըստ որում կրտսերը պարտավոր է եղել հնազանդվել ավագ եղբորը, իսկ վերջինս՝ քաղցրությամբ վարվել ու խրատել կրտսերին: Եղբայրության անդամները պարտավորվել են խստագույնս հետևել կանոնադրության հրահանգներին. հանցապարտները վտարվել են եղբայրությունից:

Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» մի ուշագրավ հատվածը¹, ինչպես և այլ փաստեր հնարավորություն են տվել պարզելու, որ ցարդ սխալ մեկնաբանված «մանկատավագ» (նաև «մանկասար»), «մանգասար») միջնադարյան տերմինը սերտորեն աղերսվում է Երզնկայի եղբայրությանը հար և նման կազմակերպությունների հետ, ուստի և նման կազմակերպություններ եղած պետք է լինեն հայկական կամ հայաբնակ այն քաղաքներում, որոնցում տարբեր առիթներով հիշատակվել են մանկատավագ կոչվող պաշտոնյաներ:

Վերոհիշյալ մեր հաղորդման մեջ, հենվելով կողմնակի որոշ փաստերի վրա, եզրակացրել էինք, որ Երզնկայից բացի եղբայրությունների գոյությունը հավաստվում է նաև Անիում և Վանում: Ձեռքի տակ ունենալով մանկատավագ կոչումը կրող անձանց մասին վկայություններ պարունակող հիշատակարաններ՝ նույն կարծիքն էինք հայտնել նաև Սուլթանիայի (Իրան) և Կաֆայի (Ղրիմ) մասին, որոնց բնակչության մի զգալի մասը հայեր էին²:

Այժմ կարող ենք ավելացնել, որ մանկատավագ, ուստի և եղբայրություն է եղել նաև Կարին քաղաքում: 1283 թվականին Կարինի գավառի Կան գյուղում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում կան այսպիսի տողեր. «Ես տէր (Աւաքս) ստացայ զսուրբ Աւետարանս... յիշատակ ծնաւդաց իմոց եւ ամենայն նախնեաց, հաւրն իմոյ մանկտաւաք Մերչերոյն եւ մաւրն իմոյ Մինասթերին»³:

¹ Մաթթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 226:

² Սուլթանիայում հիշատակվում է Հովհաննես մանտավագը 1329 թ. և Ներսես մանկտավագը՝ 1357 թ., իսկ Կաֆայում՝ Կազուր մանկտավագը՝ 1334 թ. (տե՛ս Լ. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 217, 265, 426):

³ Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վեներտիկ, հա. առաջին, Վեներտիկ, 1914, էջ 645:

Ավելի առատ են տեղեկութիւնները երիտասարդ ու ամուրի հայ երիտասարդների ու կրօնահայ և լեհահայ գաղթավայրերում ստեղծված կազմակերպութիւնների մասին: Այս առումով մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանի N 453 ձեռագիրը, որի էջերում ընդօրինակված է Յազլովեցի քաղաքի «Կտրիճվորաց եղբայրութեան» կանոնադրութիւնը (վերահաստատվել է 1658 թ. փետրվարի 10-ին տիրահոշակ Նիկոլ արքեպիսկոպոս Թորոսովիչի կողմից): Այն իր ամբողջութեամբ դեռ չի հրատարակված. բայց նույնիսկ Հ. Տաշյանի ցուցակում մեջբերված քաղվածքները¹ հնարավորութիւն են տալիս ընդհանրութեան որոշ կետեր նշմարել Երզնկայի և Յազլովեցի եղբայրութիւնների միջև:

Յազլովեցի եղբայրութեան ղեկավարութիւնը կենտրոնացված է եղել կտրիճների (իմա՝ «երիտասարդ ամուրիների») «վոյվոտայ» (воєвода) և «սդարըսդայ» (смарочма) կոչվող պաշտոնյաների ձեռքում: 1646 թվականին վոյեվոդա է եղել վոյթ Կարապետի որդի Սիմեոնը, իսկ ստարոստա՝ պան էսերպեկի որդի Խըտըրը, այլ խոսքով՝ հայկական համայնքի ամենաազդեցիկ և ունևոր անձանց որդիների ձեռքին է եղել Եղբայրութեան ղեկավարութիւնը:

Կանոնադրութիւնը բաղկացած է 31 արտիկուլներից, որոնք շոշափում են «Կտրիճվորաց եղբայրութեան» ներքին կազմակերպութեանը և անդամների փոխադարձ պարտավորութիւններին ու իրավունքներին վերաբերող բազմապիսի հարցեր:

Ուշագրավ է նաև 1690 թ. Եղիազար կաթողիկոսի կողմից հաստատված, իսկ այնուհետև՝ 1790 թ. Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի վերահաստատած Պատուշան, Յաշ և Ուրմանի քաղաքների «Կտրիճվորաց եղբայրութեան» կանոնադրութիւնը²:

Կամենեց-Պոդոլսկ քաղաքի «Կտրիճվորաց եղբայրութեան» մասին մեզ հայտնի վկայութիւնը 1522 թվականից է:

Քաղաքի հայկական եկեղեցիներից մեկի նվիրաբերութիւնների մատչանում այդ թվականի տակ գրանցված է հետևյալը. «Ձմիաբան կարիճներն նկարել ետուն զկէս եկեղեցին՝ հանդերձ բոլորովին պատկերքներով»³: Նի-

¹ Հ. Յ. Տաշյան, Յուզակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 923-924:

² Տե՛ս «Արարատ» ամսագիր, 1889, էջ 387-405:

³ Մ. Բժշկյան, Ճանապարհորդություն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 149:

կող թորոսովիչի արքեպիսկոպոսության տարիներին (1626-1681) ստեղծվել է նաև Ստանիսլավի «Կտրիճվորաց եղբայրությունը»¹:

Եղբայրություններ, անշուշտ, եղել են նաև Ուկրաինայի, Լեհաստանի, Մոլդավիայի, Ռումինիայի և Հունգարիայի հայաբնակ մյուս քաղաքներում, որոնցից մի քանիսի մասին պահպանվել են արխիվային արժեքավոր փաստաթղթեր: Դժբախտաբար դրանք դեռևս հրապարակված չեն, ուստի վաղաժամ է որևէ խոսք ասել այն մասին, թե որքանով են մայր հայրենիքից կտրված ու հեռավոր այդ երկրների հայաշատ քաղաքներում ստեղծված եղբայրությունները ծագումնաբանորեն կապվում բուն Հայաստանի նույնատիպ կազմակերպությունների հետ:

Սակայն եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ վերոհիշյալ երկրների քաղաքային կյանքի, առևտրի և արհեստագործության զարգացման գործում հայ գաղթականները նշանակալից դեր են կատարել և հարյուրամյակներ շարունակ համառորեն ձգտել են իրենց համայնքների ներքին կյանքը կազմակերպել հայրենի երկրի ավանդական սկզբունքներով, կարելի է թերևս եզրակացնել, որ քաղաքաբնակ երիտասարդների եղբայրությունները ևս այդ գաղթավայրերում ստեղծվել են ոչ թե տեղական ժողովուրդների համանման կազմակերպությունների, այլ միջնադարյան Հայաստանի քաղաքների օրինակով:

Հրապարակելով Երզնկայի եղբայրության «Սահման եւ կանոնքը»՝ հույս ենք հայտնում, որ այս հարցը հատուկ քննության առարկա կդառնա ուկրաինահայ և լեհահայ գաղութների պատմության մասնագետների կողմից և կատանա իր բավարար պատասխանը: Եվ եթե պարզվի, որ Հայաստանից դուրս գտնվող հայաբնակ քաղաքների Կտրիճվորաց եղբայրությունների հիմքում ընկած են հայրենական ավանդությունները, ապա մենք հնարավորություն կունենանք միջնադարյան Հայաստանի քաղաքային կյանքի աղոտ պատկերը լուսավորելու համար այս կամ այն չափով օգտվել նաև Ուկրաինայի և Լեհաստանի հայաբնակ քաղաքների մասին պահպանված հայերեն, հայատառ ղփչաղերեն և լեհերեն արխիվային առատ նյութերից:

«Տեղեկագրում» տպագրված վերոհիշյալ մեր հաղորդման մեջ մատնանշել էինք, որ հայկական քաղաքների եղբայրությունները ընդհանուր շատ բան են ունեցել փոքրասիական քաղաքներում XIII դարերում առաջացած «Ախի» («եղբայրություն») կոչվող կազմակերպությունների հետ:

¹ Ղ. Ալիշան, Կամենից, տաբեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ, հավատչյա հավելվածով, Վենետիկ, 1896, էջ 129: Տե՛ս նաև Լ. Խաչիկյան, Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում XVI-XVII դարերում, («Տեղեկագիր», 1954, N 4, 53-54):

Արաբ նշանավոր ճանապարհորդ Իբն-Բատտուտան, որ 1332 թվականին շրջում էր Փոքր Ասիայում, հաճախ հյուրընկալվել է «ախիների» կողմից և ծանոթացել մասնավորապես Երզնկայի «ախիների» կազմակերպությանը, ուշագրավ տվյալներ է հաղորդել կազմակերպության անդամների միմյանց նկատմամբ ունեցած պարտավորությունների, նրանց հավաքույթների ու խնջույքների և դավանած գաղափարների մասին: Ախիները, ըստ Իբն-Բատտուտայի, կանգնած էին ազատության պաշտպանության դիրքերում, պայքարում էին բռնապետների ու նրանց կամակատարների դեմ, տառապալներին ու չքավորներին օգնելը մտնում էր նրանց սրբազան պարտականությունների մեջ և այլն:

Նույն սկզբունքների վրա են խարսխված եղել նաև հայկական եղբայրությունների գաղափարական ու կազմակերպչական հիմքերը: Երզնկայի եղբայրության մեջ միաբանվածները տոգորված են եղել հարևան ժողովուրդների հետ հաշտ ու խաղաղ ապրելու և գործակցելու ջերմ ձգտմամբ: «Սահմանք եւ կանոնքի» մեջ կան ուշագրավ այսպիսի տողեր. «Եւ խաղաղասէրք լինին եղբարքս մեր ի մէջ աշխարհի, ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցեն զասել եւ զլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին, մեծարեսցին եւ յիմաստութենէն շահեսցին՝ առանց հակառակութեան»:

Հայրենի քաղաքից դուրս առևտրական կարավանների հետ երթևեկելիս եղբայրությունների՝ զենքի սովոր ու զինավառ անդամները («մանկատիք», «կտրիճվորայք») մանկտավազի հրամանատարությամբ պաշտպան էին կանգնում իրենց կյանքին ու գույքին, թշնամական հարձակումների ժամանակ նրանք անտարակույս մասնակցում էին հայրենի քաղաքի պաշտպանողական մարտերին, իսկ խաղաղ պայմաններում նույն այդ երիտասարդները խմբվում էին խնջույքների, գիշերներ լուսացնում զինարբությանը, ունկնդրում իրենց սիրելի բանաստեղծների և գուսանների հորինած սիրո և ուրախության երգերը, լսում ժողովրդական ասացողների «Քաջաց զրոյցներ», որոնք սովորեցնում էին «զօրաւոր մանուկ եւ յաղթող լինել», և զվարճանում էին հեզաճամուկ վարձակների ու մորճերի պարերը դիտելով, երգերն ըմբոշխնելով:

Մեր հաղորդման մեջ ցույց էինք տվել Կոստանդին Երզնկացու սերտ կապն ու մտերմությունը Երզնկայի եղբայրության անդամների հետ: Կոստանդինն իր լավագույն սիրո տաղերից մեկը գրել է հենց երզնկացի եղբայրների պատվերով, որոնց մասին ակնարկել է ստորև բերվող քառյակի մեջ.

«Եղբար՛ք մի կան հեա մեզ սիրով,
Աշխարհի բան ուզեն գրով,
Նայ ես վասն այն յայտնի ձայնով,
Սիրու բաներս ասցի յոլով»¹:

Հովհաննես Երզնկացու մտերիմներից է եղել իր հայրենակից Հակոբ մանկտավազը՝ մի անձնավորություն, որը հավանաբար մեկն էր Երզնկայի եղբայրության ղեկավար մանկտավազներից: Սրա խնդրանքով է հորինել Հովհաննեսն իր արժեքավոր ստեղծագործություններից մեկը, որն ունի «Յակոբ, զարթի՛ր ի քնոյ մեղաց» սկզբնավորությունը²:

Բանաստեղծության մեջ կան մի քանի ակնարկներ պատվիրատուի մասին. նրա երեսուն տարին նոր է լրացել, եղել է «աղօթից ծոյլ», եկեղեցի չհաճախող ու պահք չպահող մի երիտասարդ: Իրավացի է Ա. Սրապյանը՝ ենթադրելով, թե Մխիթար Ապարանեցու կողմից հենց այս Հակոբ մանկտավազն է հիշված՝ որպես մեկը, որն ուրացել է Սուրբ Երրորդությունը և «հանապազորդ յաղօթս իւր» ասել, թե «ինքն է Հայր, ինքն Որդի եւ ինքն Հոգին Սուրբ»³:

Միջնադարյան հայ գուսանական քնարերգության գլուխգործոց հայրենների մի զգալի մասը ևս հորինված է քաղաքաբնակ ամուրի երիտասարդների պատվերով ու նրանց խնջույքներում երգվելու համար: Հայրեններից մեկի անձանոթ երգիչն իր խոսքն ուղղակի հասցեագրում է խնջույքի սեղանին բոլորած «մանուկներին»՝ այսպես.

Գիշերս ես ի քուն էի,
Քունս ի ներս սրտիկս երեցաւ.
Եկին ու բերին խապար՝
«Քո սիրած եարն զֆեզ մոռացաւ»:
- Մանկտի՛ք, ձեր արեւդ ասեմ,
Լսեցի, լեզուս կապեցաւ⁴:

Ծանոթանանք նաև մի ուրիշ հայրենի.

Գիշերս ես ի դուրս ելայ,
Քիչ մի լուրջ ու քիչ մի գիմով.

¹ Կոստանդին Երզնկացի, ԺԳ դարու ժողովրդական բանաստեղծ եւ իւր ֆերթաւածները, հրատ. Մ. Պոստոլյան, Վենետիկ, 1905, էջ 161:

² Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 172:

³ Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, Վենետիկ, 1901, էջ 552:

⁴ Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 42:

Իմ ետուն ինձ դէմ դիպաւ,
 Ծոցն ի լի կարմիր խնձորով.
 Ձեռքս տարայ, այն տըլի,
 Նա կանչեց՝ «Տարա՛ւ երդներով»:
 - Մանկտի՛ք, ձեր արեւն ասեմ,
 Կամ շառի ես իրմէն նորով¹:

Եվս մեկ օրինակ.

... Յանչափ ջանացի իւր հետն.
 Ուր իւրմէն պագիկ մի առի,
 Ի քաղցրութենէն, եղբայրք,
 Բռնեք է արտիկս, որ կայրի...²:

Սրանցով շեն սահմանափակվում այն հայրենները, որոնցում երգիչ-գուսանը դիմում է իր ունկնդիրներին՝ կոչելով նրանց մեզ ծանոթ և քաղաքաբնակ ամուրիների կազմակերպությունների հետ սերտ աղերսի մեջ եղող «մանկտի», «եղբայր», նաև «կտրիճ» տերմիններով³:

Սակայն կարևորը այդ կոչումները շեն, այլ այն, որ հայրենների մեծագույն մասը հորինված է հենց քաղաքային առևտրական ու արհեստավորական շերտերի կյանքին ու գործունեությունը բնորոշ պատկերներով ու միջադեպերով. նրանց նիստ ու կացը, շահի ետևից աշխարհից-աշխարհ թափառելը, «բաժգող անցնելը» (այսինքն՝ մաքսանենգությունը), արվեստակիցների («հարիֆների») հետ սեղան նստելն ու գինարբուքով զվարճանալը և կյանքի այլ բնորոշ կողմերը արտացոլվել են հայրեններում գեղարվեստական մեծ ընդհանրացումներով: Շատ հաճախ մեր գուսանները հենց նրանց տեսանկյունով են դիտել աշխարհն ու գնահատել մարդկային ու հասարակական հարաբերությունները:

Բերենք մի բնորոշ օրինակ. 1371 թվականին շարագրված ձեռագիր մի աշխատության անհայտ հեղինակը ողբացել է Հայ եկեղեցու անմխիթար վիճակը, ժողովրդի (հատկապես երիտասարդության) խորթացումը եկեղեցուց և այլն: «Իսկ ժողովրդականք, - գրել է նա, - ամայիք եւ թափառականք, կորդացեալ մտաւք, մոլորեալ ի գիտութենէ. զխոստովանութիւն ոչ գիտեն, ... յեկեղեցի ոչ դիմեն, ... զաղօթս եւ զարտասուս ոչ ճանաչեն, ... ի պատարագ ոչ փափագին» և այլն: «Լուա յումեմնէ, - շարունակում է նա, -

¹ Նույն տեղում, էջ 163:

² Նույն տեղում, էջ 178-179:

³ Տե՛ս նաև նույն տեղում, էջ 146, 147 և այլն:

զի պատմէր զմարդոյ՝ վկայեալ ի հարազատ եղբարէ իւրմէ, զի հնգետասանամեա գոլով եւ դեռ պատարագն չէր տեսեալ յեկեղեցւոջ. եւ զայլ ումեմնէ՝ թէ ժ(10) ամ աւելի եւս էր, որ Մարմնոյ եւ Արեան Տեառն չէր հաղորդել»¹:

Տասնհինգամյա այդ պատանին, որ իր կյանքում դեռ եկեղեցի չէր մտել ու պատարագ չէր տեսել, կամ նրա տարեկիցը, որ տասը տարուց ավելի հաղորդութիւն չէր ընդունել, անտարակույս պատկանում էին քաղաքաբնակ այն երիտասարդների թվին, որոնք ունկնդրում և սիրով արտասանում էին հանրաժանութ այն հայրենը, ուր ասված է.

Քանի մարըն զիս բերեւ,
Քահանի չեմ խոստովանեւ.
Ուրտեղ քահանայ տեսեւ,
Նայ ծուր նամփուս ու ելեւ.
Ուրտեղ մէկ աղտւ տեսեւ,
Գիրկ ու ծոց՝ ի դէմ գնացեւ...²:

Միջնադարյան հայ քնարերգութեան լավագույն այս էջերի ստեղծագործական միջավայրի ու տարածման ոլորտների մասին մեր գիտելիքներն անշուշտ հարստանում են այն բանից հետո, երբ տեղյակ ենք դառնում հայկական քաղաքներում ստեղծված ամուրի երիտասարդների եղբայրութիւնների գոյութեանը և խորամուխ լինում նրանց անդամների գործունեութեան և նիստուկացի մանրամասնութիւններին:

«Սահմանք եւ կանոնքի» բնագիրը հրատարակում ենք Մատենադարանի ստորև նշվող երեք ձեռագրերի բաղդատութեամբ.

A – N 2329, «Փողովածու», 1291 թ., էջ 287բ-295ա

B – N 652, «Կանոնգիրք», XV-XVI դդ., էջ 70բ-75բ

C – N 2173, «Փողովածու Յովհաննէս Երզնկացու քարոզների եւ մեկնութիւնների», ԺԳ դար, էջ 257-260բ (վերջից թերի):

¹ Մատենադարան, ձեռ N 581, էջ 255բ, 256բ:

² Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, էջ 145:

ՍԱՀՄԱՆ ԵՒ ԿԱՆՈՆՔ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՂԲԱՐՅՑ¹, ՈՐՔ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՍԻՐՈՎՆ ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ՅԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ՄԻՄԵԱՆՑ Ի ՄԱՅՐԱՔԱՂԱՔՍ, ՈՐ ԿՈՉԻ ԵԶՆԿԱՅ², Ի ԹՈՒԻՍ ԶԻԹ (1280): ԱՍՏ ՀԱՆԳԻՊԵԼՈՎ ԵՒ ԾԵՐՈՒՆԻՒՅՑ ՎԱՐԳԱՊԵՏՆ ԳՐԻԳՈՐ⁴ ՍԱՆԱՀՆԵՑԻ, ՈՐ ԵՒ ԳՐԵՑԱԻ Ի ԳԼՈՒԽ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆՍ⁵. ԵՒ ԵՄ՝ ՆՈՒԱՍՏ ՎԱՐԳԱՊԵՏՑ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵԶՆԿԱՅԻ⁷, ԳՐԵՑԻ ԶՍԱՀՄԱՆ ԵՒ ԶԽՐԱՏ ԵՂԲԱՅՐՈՒԹԵԱՆՍ ԵՒ ԶՇԱՀԱԻԵՏ ԱՒԳՈՒՏՆ⁸ ՈՐ Ի ՍՄԱՆԷ, ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ

Բանն Աստուած, որ բանիւ գոյացոյց զամենայն արարածս եւ զբանն իւրական հոգի կոչեաց եւ կյանք՝ բանիւն⁹ իմաստութեամբ զարդարեաց զհոգիս մեր, զի որպէս հացիւ կերակրի մարմին, այսպէս բանիւ հաստատի հոգի:

Արդ, հոգիացուցիչ Բանն Քրիստոսի ուսուցանէ զմեզ¹⁰, զի երկու են դուռն եւ ճանապարհ վարուց մարդկան, զոր ընտրեն¹¹ եւ գնան ճանապարհորդք կենցաղոյս: Նեղ է դուռն, եւ անձուկ է¹² ճանապարհն, որ տանի ի կեանսն, եւ սակաւք են, որք մտանեն ընդ նա¹³. Լայն է եւ ընդարձակ է ճանապարհն, որ տանի ի կորուստն, եւ բազումք գնան¹⁴ ընդ նա:

Արդ, նեղ եւ անձուկ ճանապարհ՝ զառաքինությունն ասէ եւ զբարեգործությունն, որ հեշտասէրքն եւ մեղաւք մոլորեալքն ոչ կարեն գնալ. եւ սակաւք են յաշխարհի, որք յաւժարական սիրով գնան ընդ նա, իսկ լայն եւ ընդարձակ ճանապարհ՝ զմեղացն ասէ եւ զչար գործոցն¹⁵, զոր մեղսասէր¹⁶ եւ աշխարհասէր մարդիկ սիրեն եւ յաւժարին գնալ ընդ նա: Արդ, այս երկու

¹ B եղբարցս

² AB մեծ *փխ* ուր կոչի յեզնկայս

³ AB ի թւ

⁴ B Գրիգոր *չիք*

⁵ B միաբանութեան եղբայրութեան գլուխ *փխ* ի գլուխ եղբայրութեանս

⁶ C վարդապետս

⁷ C Յոհաննէս, A Եզնկեցի, B Յոհաննէս Երզնկացի

⁸ B եւ աւգուտն

⁹ AB բանին

¹⁰ A մեզ

¹¹ A ընդուն

¹² AB է *չիք*

¹³ B այն *փխ* նա

¹⁴ B մտանեն *փխ* գնան

¹⁵ A զչարագործոցն

¹⁶ A մեղսասէրն

Ճանապարհին երկու առաջնորդ են, որ կոչեն զմարդիկ գնալ զհետ¹ իւրեանց: Բարի ճանապարհին՝ առաջնորդ է Հոգին Սուրբ, զոր եւ մարգարէն Դաւիթ հայցէ. «Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր² ուղիղ»: Եւ շար ճանապարհին առաջնորդ³ սատանայ է, զոր վէմն հաւատոյ Պետրոս ասէ. «Ոստին ձեր սատանա իբրեւ զառիւծ գոչէ եւ խնդրէ թէ զոյ⁴ կլանէ»:

Արդ, եղիցի եղբայրութեանս⁵ մեր Հոգին⁶ Սուրբ առաջնորդ, հանդերձ Հարբ եւ Միածնի Որդովն⁷, եւ առաջնորդեսցէ մեզ յերկիր ուղիղ՝ բարի ճանապարհաւն ընդ արքունի պողոտայն, առանց խոտորելոյ յաջ կամ յահեակ⁸, զի մի ի զինուցն երկոցունց խոցոտեսցուք, այլ իբրեւ ի վերայ կամրջի⁹ գետոյ ընդ մէջն գնալով մի վերոյ կամ ներքոյ գետավէժ լիցուք: Եւ զի ժողովասէր է բնություն մարդոյս եւ ընդունակ շարի եւ բարոյ¹⁰ ըստ նմանութեան աւոյս, զի զորարինակ աւոյ ի ծագել արեգականն՝ լուսաւորի եւ ի գալ գիշերոյն՝ սեւացեալ խաւարանա, այսպէս եւ մարդ, եթէ զաստուածային բանն եւ զհոգեւոր խրատն եւ զլոյս պատուիրանացն Աստուծոյ առնու ի միտ՝ լուսաւորի եւ պայծառանա, եւ թէ¹¹ սատանայի ազդմանցն եւ մեղաց խրատուն լինի ընդունակ՝ նսեմանա¹² եւ խաւարի: Եւ զորարինակ հող երկրի, զոր ինչ սերմանէ մարդ¹³ զայն բուսուցանէ. այսպէս եւ հողեղէն բնություն մարդոյս, զոր ինչ սերմանեն՝ զայն պտղաբերէ¹⁴, եթէ փուշ՝ մեղաց եւ եթէ ծաղիկ՝ առաքինութեան: Արդ, լոյս պատուիրանացն Աստուծոյ լուսաւոր լիցի յոգի եղբայրութեանս, եւ ծաղիկք¹⁵ ամենայն բարութեանց բուսցին եւ բնություն սոցա:

Բայց արժան է գիտել, եթէ քանի տեսակք են եղբայրութեանն¹⁶:

¹ B ի հետ

² C ի յերկիր

³ B առաջնորդն

⁴ B գով, C գո

⁵ B եղբայրությունս *փիս* եղիցի եղբայրութեանս

⁶ AB հոգի

⁷ B որդովն

⁸ A յահեակ

⁹ B կամրջի

¹⁰ B բարոյ եւ շարի

¹¹ AB եթէ

¹² B եւ նսեմանայ

¹³ AB ոք *փիս* մարդ

¹⁴ B պտղաբերի

¹⁵ AB ծաղիկ

¹⁶ B եղբայրութեանս

Առաջինն այս է, զի ի միոյ բնութենէ տարերացս միոյ Արարչին¹ ստեղծուածքն² եղբայր ասին. եւ այս հասարակաց է՝ բանականաց եւ անբանից, կենդանեաց եւ անկենդանեաց:

Իսկ երկրորդ եղբայրութիւնն այն է, որ ի միոջէ ծնողաց³ ծնեալ լինին. եւ այս սակաւաւոր է:

Իսկ երրորդ եղբայրութիւնն, որ եւ ճշմարիտն է եւ հոգեւորն, այն է, որ ի Հոգւոյն Աստուծոյ ծնեալքն եւ ի մի աւագան մկրտեալքն եղբարք ասին միմեանց եւ Քրիստոսի եւ⁴ երկնաւոր Հաւրն որդիք եւ արքայութեանն ժառանգաւորք⁵ եւ⁶ Քրիստոսի ժառանգակիցք. եւ այս յատուկ⁷ քրիստոնէից է պարգեւեալ շնորհք, որք⁸ անուամբն Քրիստոսի կնքին:

Այլ դուք ի վերայ այսոցիկ չորրորդ տեսակք եղբայրութեան հաստատեցէք ի միջի ձերում, որ գրովն է եւ կանոնական⁹ սահմանաւք եւ բարէսէր ժողովմամբ եւ ընկերակցութեամբ եւ միաբանութեամբ եւ միով¹⁰ հաւատով եւ սիրով եւ երկնաւոր ցանկութեամբ: Եւ ոչ եթէ նոր է այս, այլ զոր քրիստոնէից¹¹ վայել է գործ՝ զայն ուսուցանէ:

Եւ քաղցր է այս եղբայրութեան սահման, զի որպէս բազմութիւնն աստեղաց զերկինս զարդարեն, այսպէս եւ բազմութիւնն եղբարց սիրով¹² ժողովելոց՝ զեկեղեցի պայծառացուցանեն: Եւ որպէս բազմութիւնն զարաց քաջամարտիկ զինուորաց միաբանելոց դիւրաւ յաղթեն թշնամեացն, այնպէս եղբարցն բազմութիւնն քաջ հաւատով եւ հաւասար սիրով՝ դիւրաւ յաղթեն սատանայի եւ մեղսասէր դիւացն եւ չար մարդկան, որք¹³ շարժին ի սատանայէ:

Եւ արդ, դիցուք զսահման մերոյ եղբայրութեանս, որ¹⁴ են երեք սեռական գլուխք. առաջին¹⁵, եթէ ամենայն ոք իւր անձամբն որպէ՛ս քաղաքա-

¹ AB արարչի

² B ստեղծուածք

³ AB ծնաւագ

⁴ B եւ չիք

⁵ AB ժառանկաւորք

⁶ B եւ չիք

⁷ C յատուկ չիք

⁸ B որ, C որ չիք

⁹ C կանովնական

¹⁰ B միով չիք

¹¹ C քրիստովնէից

¹² C սիրով չիք

¹³ BC որ

¹⁴ B ուր

¹⁵ C առաջինն

ւարի. երկրորդ՝ թէ զի՞նչ աւգտություն եւ շահ արասցեն միմեանց այս միաբանեալ եղբարքս, եւ ո՞ր է պտուղ միաբանութեան սոցա. երրորդ՝ թէ որպէ՞ս ի հասարակաց կենցաղոյս ի մէջ աշխարհի եւ ի մէջ բազում ազգաց իմաստութեամբ գնասցեն ի շինություն տեսողացն եւ ի փառս անուանն Քրիստոսի:

Եւ արդ, ասասցուք¹, զոր պարտ է ամենայն ումէք իւր անձինն ստանալ. զի զորաւրինակ արեգակն հասարակաց ծագէ, բայց ում տեսանելիքն առողջ են՝ նա լուսաւորի, այսպէս եւ աստուածային² արէնքն³ հասարակաց է ամենայն աշխարհի, այլ որ սիրէ եւ գործէ՝ նայ է արինազարդ եւ աստուածայինլուսովն պայծառացեալ:

Լուարուք, երիտասարդք եւ տղահասակ⁴ մանկունք⁵, որք միաբանէք⁶ յեղբայրությունս:

ա) Այս ձեզ առաջին արէնք՝ սիրեցէք զԱստուած զԱրարիչն ձեր եւ վասն սիրոյ նորա արհամարհեցէք զամենայն սէր աշխարհիս:

բ) Երկրորդ. պատուեցէք զծնողսն⁷ ձեր՝ զհայր եւ զմայր, որ հետ⁸ Աստուծոյ պատճառ են ձեր⁹ ստեղծմանն, եւ ծերութեան¹⁰ նոցա խնամ տարէք եւ հրամանացն հնազանդ լերուք, զի արհնութեան նոցա արժանի լիցիք¹¹:

գ) Երրորդ. պատուեցէք զքահանայսն Աստուծոյ իբրեւ զհոգեւոր ծնողն¹². Եւ ձեր քահանային¹³, որոյ ժողովուրդ էք, խոստովանեցէք, եւ ի վաստակոց եւ յաշխատութեանց ձերոց տուք նոցա պտուղ, որպէս զի¹⁴ աղաւթք նոցա, որ վասն ձեր մատուցանեն Աստուծոյ ընդունելի լիցի:

դ) Չորրորդ. սուրբ պահեցէք զանձինս ձեր ի մեղաց եւ անարատ կուսութեամբ մնացէք՝ մինչ արժանի լինիք առնուլ զպսակն արհնութեան, որ-

¹ A ասացուի

² A այս աստուածային

³ AB արէնքս

⁴ A տղայահասակ

⁵ A մանգունք

⁶ AB միաբանիք

⁷ AB զծնալոսն

⁸ A ետ

⁹ B ձեզ

¹⁰ B ի ծերութեան

¹¹ B լինիք

¹² B ծնալոսն, C ծնալոսն

¹³ C քահանային

¹⁴ B զի չէք

պէսզի Աստուծոյ նուէր լիցին անձինք ձեր, եւ մի սատանայ նման գայլոյ գիշատեալ պատառեսցէ զձեզ:

ե) Հինկերորդ. յետ առնելոյ զպսակն արհնութեան եւ միաւորիլ սուրբ ամուսնութեամբ ընդ կողակցին¹ ձերոյ, զոր² յԱստուծոյ պատշաճեցաւ, սուրբ պահեցէք գանձինս ձեր յաւտար եւ ի պիղծ անկողնոյ³, զի մի զպսակն⁴ արհնութեան կորուսանէք եւ անկանիք⁵ յանէծս սատակիչս եւ զրկիք ի քրիստոնէութեան անուանէ՛ շունք կոչելով վասն շնութեան մեղացն:

զ) Վեցերորդ. յամենայն ար⁶ երեք անգամ յաղաւթս կացէք՝ ի լուսանալ աւուրն եւ ի ժամ ուտելոյ հացին եւ երէկունն⁷ ի ժամ քնոյն: Յամէն ժամ ժԲ (12) ծունր այր մարդն եւ Ի (20) ծունր⁸ կին մարդն. եւ այլ աւելի կարէ՛ զայն իւր հոգւոյն⁹ զարությունն եւ սէրն գիտէ, զոր առ Աստուած ունի:

է) Շաբաթն¹⁰ արն եւ կիրակէն¹¹ անպատճառ յեկեղեցին երթայք, որ զաւետարանին ձայնն լսէք ու¹² Քրիստոսի ձայնին լինիք արժանի եւ զպատարագն տեսանելով՝ զՔրիստոս տեսանէք:

ը) Յամենայն կիրակի¹³ զշաբաթուն¹⁴ յանցանքն խոստովանեցէք եւ ի Խ (40) արն հետ մի հաղորդեցէք. եւ յամենայն¹⁵ տէրունական տան յեկեղեցին ժողովեցէք եւ զխորհուրդ տանին հասկացիք. եւ զկիրակին ի բան առնելոյ սուրբ պահեցէք:

[Թ] Զբերանն, որ Աստուծոյ անուանն խոստովանող է եւ հաղորդական¹⁶, ի յիշոցաց սուրբ պահեցէք եւ յամենայն աղտեղի խաւսից եւ մի զԱստուծոյ ստեղծուածն զլեզուն սատանայի առնէք գործի:

¹ C կողակիցն

² C որ

³ A պեղծ անգողնոյ

⁴ AB պսակն

⁵ A անգանիք

⁶ B յարն *փս* յամենայն ար

⁷ AB երիկունն

⁸ A ծունր *չք*

⁹ AB հոգոյն

¹⁰ AB շաբաթ

¹¹ C կիրակէ արն

¹² AB սելով *փս* լսէք ու

¹³ C կիրակէ, A կւակէի

¹⁴ B զշաբթուն

¹⁵ B ամէն

¹⁶ C եւ հաղորդական *չք*

[Ժ] Զամենայն զգայարանս ձեր ամրացուցէք երկեւղին¹ Աստուծոյ, զաչքն՝ ի յարատ հայելոյ, զականջն՝ ի շար եւ ի մեղաց խրատէ, զձեռն՝ ի զրկելոյ եւ ի գողանալոյ եւ ի հարկանելոյ, եւ զոտքն՝ ի մեղս ընթանալոյ²: Այլ այսպէս արարէք. աչաւք զԱստուծոյ գեղեցիկ արարածս տեսէք եւ բերանով զԱրարիչն արհնեցէք, ականջով զպատուիրանս նորա լսեցէք, ձեռաւք յաղաւթս եւ յաշխատութիւն գործոյ եւ յողորմութիւն աղքատաց բարեգործիցէք³ եւ զսիրտ ի շար խորհրդոց սրբեցէք⁴:

Եւ այս ամենայն ումեք իւր անձինն արէնք եւ⁵ զգուշութիւն յաստուածային հրամանացն եւ ի գրոց սրբոց:

Բ. Իսկ երկրորդն, որ եղբարցն առնեն եւ⁶ վասն սիրոյն Աստուծոյ գեղբայրսիրութիւն⁷ կատարեն՝ այս է.

ա) Վասն զի աշխարհս այս ծով է եւ մարդիկ ալէկոծին ի սմա պէս պէս պատահմամբ գործոց. եւ թէ⁸ ոք յեղբայրութենէս ի փորձութիւն մարդկան անկանիցի⁹ եւ ի բռնաւորաց¹⁰ նեղիցի, ամենայն եղբայրքն ջան եղեալ հանցեն¹¹ զնա ի հասեալ¹² վշտացն, զի որ եղբայր եղեւ մեզ, Քրիստոս սասացէ՛ «Ի բանդի էի եւ եկիք առ իս»:

բ) Եւ թէ ոք ի փորձութիւն մեղաց անկեալ¹³ ի ձեռս սատանայի մատնեսցի՝ ամենայն եղբարքն աղաւթիւք եւ բարի խրատով եւ ողորջանաւք, այլ եւ սաստիւք եւ ամենայն հնարիւք ազատեսցեն զանկեալն¹⁴ ի ծառայութիւն մեղաց եւ Քրիստոսի ընծայեսցեն, նմանեալ այնմ, որ գթացաւ ի վերայ անկելոյն¹⁵ ի ձեռս աւազակացն¹⁶:

¹ AB երկիւղին

² AB եւ զոտքն ի մեղս ընթանալոյ չիք

³ AB բարեգործեցէք

⁴ C սրբիցէք

⁵ C արէնք եւ չիք

⁶ B եւ չիք

⁷ B գեղբայրութիւն

⁸ AB եթէ չիս եւ թէ

⁹ A անգանիցի

¹⁰ A եւ բռնաւորաց

¹¹ B հանիցեն

¹² AB հասանել

¹³ A զանգեալն

¹⁴ A անգեալ

¹⁵ A անգելոյն

¹⁶ AB աւազակաց

դ) Եւ թէ¹ ոք յաղքատութիւնն անկանիցի² եւ ի չքաւորութիւնն մարմնոյ, այլ եղբարքն ըստ կարողութեան եւ ըստ ուժոյ աւգնեսցեն եւ աղքատ եղբարն աւգնելով Աստուծոյ փոխ տացեն, որ հազարապատիկ վճարէ յայսմ աշխարհի եւ ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականս³ պարգեւեսցէ:

[դ] Եւ թէ⁴ ոք ի տկարութիւնն եւ ի ցաւ հիւանդութեան մարմնոյ անկանիցի⁵, յամենայն ար եղբայրութենէն⁶ ի տեսութիւնն գնասցեն եւ զհիւանդացեալն մխիթարեսցեն եւ դեղով եւ բժշկով ձեռնտու լիցին, որպէսզի լուիցեն ի Քրիստոսէ, թէ⁷ «Հիւանդ էի եւ տեսէք զիս»:

[է] Եւ թէ⁸ ումեք ար վաղճանին հասցէ եւ փոխեսցի յանցաւոր կենացս՝ ամենայն եղբարքն զմարմինն պատուով ի գերեզման⁹ տանիցեն¹⁰, որպէս վայել է, եւ զհողն հողոյն տացեն. եւ ամէն եղբայր¹¹ մին ար պատարագ տայ¹² առնել յանուն վաղճանելոյն:

Եւ այս սահման է, զոր եղբարքն՝ միմեանց առնեն, եթէ մաւտելոր եւ¹³ եթէ հեռաւոր լիցի եղբայրն՝ սիրով եւ հաւատով ի մէջ իւրեանց համարեսցին:

Իսկ երրորդ գլուխն այն է¹⁴, որ եւ այլոց բարի արասցեն, որ գան ի հեռաւոր աշխարհաց, եւ կամ ի սոցանէ գնան յայլ աշխարհ, աւգտին եւ աւգտեցուցանեն:

Եթէ վարդապետ եկեսցէ յայլ¹⁵ աշխարհէ՝ գլխաւորք եղբարցն ի տեսութիւնն երթիցեն եւ պատուեսցեն զնա եւ շահեսցին ի վարդապետական բանիցն եւ ժողովեսցին առ նա ի քարոզութիւնն սուրբ գրոց. եւ ի գնալն՝ յուղարկեսցեն¹⁶ զնա սիրով եւ ըստ մարմնոյ պիտոյիցն ըստ կարին տացեն

¹ AB եթէ

² AB անգցի

³ C յաւիտենական

⁴ AB եթէ

⁵ A անգցի

⁶ B յամէն ար առողջ եղբայրն փխ յամենայն... եղբայրութենէն

⁷ AB եթէ

⁸ AB եթէ

⁹ A գերեզմանի

¹⁰ B թաղեսցին ի գերեզմանի

¹¹ B եղբայր

¹² B տան

¹³ B եւ չէք

¹⁴ B այս է

¹⁵ B յայլ չէք

¹⁶ B ուղարկեսցին

հոգեւոր սերմանողին զմարմնաւոր պտղաբերությունն: Այսպէս եւ եպիսկոպոսաց արասցեն. նոյնպէս վանականաց եւ աղաւթարար եղբարցն եւ ճգնաւորաց ասպնջական եւ հանկուցիչք լիցին¹:

Եւ խաղաղասէրք լինիցին² եղբարքս մեր ի մէջ աշխարհի. ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցեն զասել եւ զլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին՝ մեծարեսցեն եւ յիմաստութենէն շահիցին³ առանց հակառակութեան, հեզ բարութ, հանդարտ գնացիւք, պարկեշտ կացաւք⁴, իբրեւ զդահեկան ոսկի ի մէջ տղմոյ աշխարհիս անաղտ եւ յստակ⁵ մնալով. իբրեւ զլոյս արեւու ի մէջ⁶ գարշահոտութեանց պայծառ մնալով՝ յիւրեանց բարոյն տալ այլոց՝ որպէս արեգական⁷ լոյս, եւ յայլոց⁸ պղծութեանց ոչ ուսանիլ որպէս եւ արեգակն ոչ առնու յայլոց պղծութեանց:

Արդ, դուք, պատուական եղբարք, այսպիսի աւրինաւք զարդարեցէք զանձինս ձեր, զի լինիցիք միմեանց որպէս զպարիսպ ամուր, զի որպէս բազմություն քարանց ժողովեալ ի մի տեղի պարիսպ ամրութեան եւ պահպանութեան է՝ քաղաքի, այսպէս եւ դուք իբրեւ զկենդանի քարինս սիրովն Աստուծոյ մածեալ՝ անառիկ ամրութեամբ կացէք ի հաստատություն: Եւ որպէս դրախտ բազում տնկաւք զարդարի, այսպէս եւ դուք եղբարք իբրեւ զդրախտ Աստուծոյ քաղցրաճաշակ պտով զարդարեալ եւ որպէս բուրաստան անուշահոտ ծաղկաւք լիացեալ¹⁰: Եւ զորաւրինակ թագ թագաւորի ի յոսկոյ եւ ի մարգարտոյ եւ յականց պատուականաց յաւրինի, նոյնպէս եւ դուք թագ պարծանաց լերութ¹¹ գլխոյն մերոյ Քրիստոսի եւ իւրաքանչիւր զիւր գեղեցիկ գործս փայլեցէք իբրեւ զակն լուսատու, եւ որպէս ակունքն յոսկին շարեալ¹² միանան, նոյնպէս եւ դուք յամբիծ¹³ հաւատն եւ յանկեղծ սէրն յարմարեալ¹⁴ գեղեցիկ եւ պայծառ լուսով փայ-

¹ B հանգուցիչ, C հանկուցիչ

² AB լինին

³ AB շահեսցին

⁴ B պարկեշտ կացով

⁵ B յիստակ

⁶ A արեւու ի մէջ չիք

⁷ A արեգակն

⁸ Այստեղ, քերթերի կորստի պատճառով, ընդհատվում է C ձեռագիրը:

⁹ A պահապան ամուր է

¹⁰ B պտղովք լցեալ փիւ ծաղկաւք լիացեալ

¹¹ B եղբարք

¹² A շարեւ

¹³ B յամբիծ

¹⁴ A յարմարել

լեցէք, եղերուք մաւր ձերոյ եկեղեցոյ կենդանի գանձ եւ պարծելի որդիք, եթէ ուտիցէք եւ եթէ ըմպիցէք¹, զամենայն ի փառս Աստուծոյ արասչիք:

Արդ, որ սիրէ զեղբայրութիւննս զայս եւ խառնի ի միաբանութիւնն սոցա, պահեսցէ նաեւ զարէնս զայս եւ զսահման եղբարցս՝ գրեսցի նա ի գիր միաբանութեանս, եւ Քրիստոս գրեսցէ ի դպրութիւնն կենաց, իսկ շնացաւզն եւ յիշոցնատունն եւ այլ զանազան մեղաւք վարեալն մի՛ կացցէ ի գրի աստ. իսկ որ աւրինապահքն են՝ սիրով զմիմեանս շահեսցին: Աւագ եղբայրն² քաղցրութեամբ³ խրատեսցէ եւ կրսերն հնազանդութեամբ⁴ լուիցէ, որ գիտունն է՝ մի հպարտասցի, եւ որ տխմարն է՝ մի յուսահատեսցի, այլ իբրեւ զՔրիստոսի անդամ միմեանց խնամ տանիցին, զմեծն եւ զիմաստունն պատուեսցեն եւ զփոքրն եւ զանուսումն գթով խրատեսցեն:

Տասին գլուխն եւ քառասնին մեծն յամենայն ժամ ի վարդապետաց ուսցին եւ զայլսն աւգտեցուցեն⁵ եւ զամենայն բան բարի խրատով զլիսաւորացն արասցեն:

¹ A ըմբիցէք

² B աւագ, գիտուն եւ իմաստուն եղբայրն

³ B փարոգութեամբ

⁴ B կրսերն եւ անմիտն եւ տգէտն հնազանդութեամբ

⁵ B աւգտեցուցեն

ԳԼՁՈՐՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՍԱՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Վարդան Այգեկցու առականերից մեկում պատմվում է հետևյալը.

«Ըմբռնեցին զմէկ աշխարհակայն ի մեզս եւ բերին առ սարկաւակն. եւ սարկաւակն ասաց, թէ երէցն աստ է եւ քան զիս մեծ է եւ ունի իշխանություն, առ նա տարէ՞ք. եւ տարին. եւ երէցն ասաց, թէ եպիսկոպոսն աստ է, առ նայ տարէ՞ք. եւ տարին. եւ եպիսկոպոսն ասաց, թէ կաթողիկոսն աստ է, առ նայ տարէ՞ք. եւ տարին. եւ կաթողիկոսն ասաց, վարդապետն աստ է, առ նայ տարէ՞ք. եւ տարին. եւ վարդապետն եղ կանոնս եւ արժանացուց ապաշխարութեամբ...»¹:

Այս առակն արտահայտում է Հայկական եկեղեցում տիրող իրական հարաբերություններ: Վարդապետական ինստիտուտը Հայ եկեղեցու կյանքում կատարել է շափազանց կարևոր դեր²: Այդ ինստիտուտը, հարմարվելով նորագույն պայմաններին, աշխարհիկ իշխանության թուլության կամ բացակայության պայմաններում հաճախ կրել է իր վրա, դատականից ու կուլտուրականից գատ, նաև քաղաքական ֆունկցիաներ:

Մխիթար Գոշը, որի անհատական ջանքերով ու ձեռներեցությամբ ստեղծված «Դատաստանագիրքն» ընդունվեց ժամանակակիցների կողմից և գործածվեց Հայաստանում ու հայ գաղթավայրերում մի շարք դարերի ընթացքում, սոսկ վարդապետ էր... Սոսկ վարդապետ լինելով՝ նա նախաձեռնեց գրել իր՝ մեր մատենագրության մեջ եզակի «Գծագրությունը»՝ ուղղված վրաց կաթողիկոսին, որով հայ և վրաց ժողովուրդների միջև դավանաբանական տարբերությունների հիման վրա սերմանվող թշնամությունը որակեց որպես հակաքրիստոնեական ակտ:

Նույնպիսի մի վարդապետ էր, առանց եկեղեցական որևէ պաշտոնի, ԺԳ դարի խոշոր մատենագիր և քաղաքական գործիչ Վարդան Արևելցին, որի առաջ բաց էին ինչպես հայ թագաւորի ու կաթողիկոսի, այնպէս էլ մոնղոլական էլզանների պալատները: Լինելով իր արտահայտությամբ «լուր աբեղայ»՝ նա հնարավորություն ուներ ներքին ու արտաքին քաղաքականության վերաբերյալ խորհուրդներ տալու մոնղոլ տիրողներին և պաշտպանելու իր ժողովրդի դատն ու իրավունքները:

* «Գիտ. աշխատ. Երևան համալս.», 1946, հտ. 23, էջ 423-450:

¹ Н. Я. Март, Сборники притч Вардана, т. II, СПб., 1894, с. 164-165.

² Н. Я. Март, Критика и мелкие статьи, СПб., 1903, с. 33-36.

Այսպիսի օրինակների թիվը կարելի է բազմապատկել, սակայն բերվածներն անգամ բավարար են ցույց տալու համար Հայկական եկեղեցու այդ ինստիտուտի (վարդապետության) կատարած հսկայական դերն ինչպես ներքին՝ եկեղեցական, դատական, մշակութային, նույնպես և արտաքին հարաբերությունների բնագավառում: Ուստի վերոհիշյալից դժվար չէ եզրակացնել, որ Հայ եկեղեցին միշտ էլ լուրջ ուղադրություն պիտի նվիրած լինի այն ուսումնական հաստատություններին, որոնք վարդապետական կադրեր էին պատրաստում:

Հովհաննես Սարկավազի Անիում հիմնադրած դպրոցը՝ Մխիթար Գոշի Նոր-Գետիկյան դպրոցը (ուր, ըստ Կ. Գանձակեցու վկայության, «բազումք էին, որք աշակերտեցան ի նմանէ վարդապետական բանին...»), նրա աշակերտ Վանականի, ապա Վարդանի, Ներսեսի, Եսայու և այլոց դպրոցները (համալսարանները) հենց այնպիսի հաստատություններ էին, որոնք տալիս էին երկրին թե՛ բարձրաստիճան հոգևորական կադրեր և թե՛ մշակութային, գիտական գործիչներ՝ վարդապետներ:

ԺԳ-ԺԴ դարերում հայկական ուսումնական ու գիտական հաստատությունները թափառական կյանք էին վարում: Իրար հաջորդող արշավանքների, ասպատակությունների և դրանցից բխող ավարառության և ավերածության պայմաններում երկրի գիտական ուժերը ստիպված էին լինում հաճախ պատսպարվել անմատույց քարանձավներում, շարունակել իրենց դասախոսությունները և պարապմունքներն աշակերտների հետ ավանից-ավան, վանքից-վանք թափառելով՝ զրկված լինելով կենսական միջոցներից, քաղցած ու բոկոտն:

Մեծ ուսուցիչ Վանականն իր դասախոսությունները շարունակում էր անգամ այն ժամանակ, երբ մոնղոլական հրոսակախմբերի ահից շրջակա շեների բնակչության հետ մեկտեղ պատսպարվել էր Տավուշ բերդից ոչ հեռու գտնվող մի քարանձավում:

Վարդան Արևելցին՝ նախորդի աշակերտը, մի քանի տարվա ընթացքում իր աշակերտներով շրջագայել է ողջ Հայաստանում՝ իր համալսարանի համար ապահով ու հարմար կայան գտնելու հույսով. Վարդանի աշակերտ Գեորգ Կիլիկեցին 1267 թվին արտագրած իր Տոնապատճառի հիշատակարանում հայտնում է հետևյալը.

«Մեզ եղեւ ժամանակ ինչ դեգերել ի դուռն աստուածազարդ այնր տաճարի (Խորվիրապ) սակս կրթութեան... ի մեծ վարդապետէն Վարդանայ... որ ի դուռն սրբոյն Գրիգորի նստելով յաստուածայինսն ուղղէր ճանապարհ. եւ անտի փոխեալ եկեալ առ մեծ իշխանն Քուրդ, եւ մեր զկնի նորա

հետեւեալ... յանուանեալն Սաղմոսավանք, ուր եւ զառաջինն աւարտեցաք հատոր սրբոց մատենիս: Եւ քան զի դէպ լինէր եւ անտի եւս փոխել նմա ի գործ բարուք ուսուցչութեան ի տեղի, ուր տէր յաջողեսցէ, յուղարկեալք եղեալ մեր ի ստացողէ տառիս ի բուն իւրե[անց ի] մեծահոշակ... սուրբ ուխտս Թեղինեանց, ուր եւ յանկ իսկ հանաք զառաջարկեալս»¹:

Վարդանն իր աշակերտների հետ միասին խաղաղ անկյուն որոնելու հույսով ստիպված էր դեռևս շատ վայրեր շրջել: Այսպես, վերադառնալով Կիլիկիայից 1246 թվականին և կատարելով Կոստանդին կաթողիկոսի հանձնարարությունները, մեկուսանում է Անդրեի վանքում «ի մեկուսարանն իւր», այնուհետև անցնում է Խորվիրապ, ապա Սաղմոսավանք, Թեղենյաց մենաստան, Հառիճ, Խորակերտի մենաստան, Հաղբատ և այլ վայրեր: Նրա վերջին կայանը եղել է Խորվիրապի մենաստանը, որտեղ և, համաձայն Սամուել Անեցու «Փամանակագրության» շարունակողի (էջ 161) և Դավիթ վանահոր մի վկայության², կնքել է իր մահկանացուն և թաղվել 1269 թվականին:

Վարդանի ուսուցչական գործունեությունը շարունակում է նրա աշակերտ Ներսես Մշեցին (Տարոնացին), որի մասին պահվել է նրա աշակերտ Մաթեոս Կիլիկիացու հետևյալ վկայությունը.

«... յետ փոխման նորա (Վարդանայ)... նստաւ յաթոռ նորին եւ լուսափայլեաց զազգս Հայոց ուսմամբ գրոց (Ներսէս). եւ հասեալ բարիոք ծերութեան հանգեաւ... ի նոյն վանս Գլաձորոյ»³:

Ինչպես տեսնում ենք, Ներսես Մշեցին իր վարդապետության գոնե վերջին տարիներն անցկացրել է և մահացել մեր մշակույթի կարևորագույն օջախներից մեկում՝ Գլաձորում, ուստի գլաձորյան համալսարանի հիմնադրումը պետք է կապել Ներսես Մշեցու անվան և նրա գործունեության հետ, որն ընկնում է 1269-1284 թվականների միջև (Վարդանի մահվանից մինչև Ներսեսի մահը)⁴:

¹ Գրիգոր վարդապետ, Ջագավանից ժողովը. տե՛ս «Շողակաթ» հայագիտ. ժողովածու, Վաղարշապատ, 1913, էջ 32:

² Հ. Ոսկյան, Հովհ. Վանական և յուր դպրոցը, Վիեննա, 1922, էջ 50:

³ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 131:

⁴ Մ. Օրմանյանն իր «Ազգապատում» աշխատության մէջ (տե՛ս էջ 1800), հետևելով Ջամլյանին, հակառակ գոյություն ունեցող ամփստելի փաստերի, Ներսես Մշեցու վարդապետանոցը տեղավորում է Մշո Առաքելոց կամ Գագարու վանքում և նրա աշակերտ Եսայի Նշեցուն ուսանելու է ուղարկում Մուշ մի վայր, որտեղ Եսայի Նշեցու լինելու մասին որևէ վկայություն չի պահպանվել:

Ներսեսի մասին եղած պատմական սուղ տեղեկությունների հիման վրա քիչ բան կարող ենք ասել նրա անձնավորության և համարյա ոչինչ՝ նրա մատենագրական ու գիտական գործունեության մասին, սակայն պահպանված մի շարք ժլատ հիշատակություններ միաբերան ներկայացնում են նրան որպես «վարժապետ եւ խրատիչ սուրբ վարդապետ», «որ լուսափայլեաց զագգս Հայոց ուսմամբ գրոց» և այլն¹:

Մեզ համար ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում նրա հաջորդ և աշակերտ Եսայի Նչեցու անձնավորությունը: Նա ծնվել է Սասունի Նիչ ավանում: Ծննդյան ստույգ թվականն անհայտ է, սակայն մի շարք տվյալների հիման վրա հնարավոր է դրա մերձավոր որոշումը: Աղբյուրները միահամուռ վկայում են, որ նա սկզբից աշակերտել է Վարդան Արևելցուն, ապա նրա մահվանից հետո՝ Ներսես Մշեցուն²: Վարդան Արևելցուն աշակերտած լինելու համար նրա մահվան թվականին նա առնվազն պետք է լիներ 15-20 տարեկան (ավելի հասակավոր լինելու հնարավորությունը ժխտվում է, որովհետև նա ուսումը 1269 թվականին՝ Վարդանի մահվան ժամանակ, դեռևս կարիք էր գգում շարունակելու): Մահացել է 1342 թվին (որոշ աղբյուրներ որպես մահվան թվական նշում են 1338-ը, սակայն մեզ ավելի հավանական է թվում վերոհիշյալ 1342 թիվը)³, խորին ծերության՝ մոտավորապես 85-90 տարեկան հասակում. եթե մահվան թվականից հանենք նրա հավանական տարիքը մահվան ժամանակ (85-90), ապա կստանանք նրա ծննդյան համար որպես հավանական թվական 1252-57 թվականները, որ համապատասխանում է մեր առաջին ենթադրությանն այն մասին, թե Վարդանի մահվան ժամանակ նա պետք է լիներ 20 տարեկանին մոտ երիտասարդ:

Ներսես Մշեցու մահվանից հետո, 1284 թվին, նա իր վրա է վերցնում գլաձորյան համալսարանի վարդապետաց վարդապետությունը և շարունակում է իր բեղմնավոր գործունեությունը մինչև մահ՝ շուրջ վաթսուն տարի:

[Գլաձորի հիմնադրության ժամանակի, տեղորոշման և այլ խնդիրների վերաբերյալ վերջին տարիներին բազմաթիվ աշխատություններ են լույս տեսել: Մասնավորապես տե՛ս Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան, Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն, Երևան, 1984: Յավոբ, Լ. Խաչիկյանի սույն կարևոր հոդվածին լավաձանոթ վերահիշյալ հեղինակները, չգիտես ինչու, զլացել են այն հղել: Խմբ.]:

¹ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 131:

² Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1800

³ Օրմանյանը Եսայու մահվան թվականը համարում է 1333-ը՝ վկայակոչելով Ղ. Ալիշանի «Սիսական» աշխատության 384 էջը, սակայն ինչպես այդ էջում, այնպես էլ այլուր այդ թվականի մասին չկա որևէ հիշատակություն:

Իր աշակերտների և ժամանակակիցների կողմից Եսայի Նչեցին վայելել է մեծ հարգանք և սեր, նրան այլ կերպ չեն հիշում ժամանակակիցները, քան «քաջ» կամ «վսեմական, անհաղթ հռետոր»¹, «ամենիմաստ փիլիսոփա», «ձիր իմաստից», «վարդապետաց վարդապետ» և այլն և այլն, իսկ նրա ղեկավարած ուսումնական հաստատությունը՝ որպես «Հիսուսական համալսարան», «Երկրորդ Աթենք» և այլն:

Եսային թողել է նաև պատկառելի քանակություն մատենագրական արժեքներ, որոնցից կարևորներն են.

ա) «Մեկնություն քերականի»,

բ) «Մեկնություն եզեղեցու մարգարէի»,

գ) «Բան վասն կարգաց եկեղեցուց եւ ժամասացութեան»,

դ) «Լուծմունք Եսայեայ մարգարէութեան» և բազմաթիւ ճառեր, նամակներ ու այլ գրություններ:

Եսայուն հաջորդեց նրա ամենաընդունակ աշակերտներից մեկը՝ Հովհան Որոտնեցին՝ լինելով ընդամենը 27 տարեկան (ծնվել է 1315 թվին): Վերջինս իր գիտությունը և թողած հարուստ գրական ժառանգությունը² գերազանցեց թե՛ իր ուսուցչին և թե՛ նրա նախորդին, ղեկավարեց քաղաքական ու գրական այն արյունահեղ պայքարը, որ Հայ եկեղեցին ստիպված էր մղել Եսայի Նչեցու մի այլ աշակերտի՝ Հովհան Քոնեցու և նրա հետևորդների դեմ, որոնք, դավաճանելով ազգային եկեղեցու և ժողովրդի շահերին, ընդունել էին Լատինական եկեղեցու դավանությունն ու աշխույժ պայքար էին մղում Հայ եկեղեցին պառակտելու դիտավորությունը:

Քլաձորյան համալսարանը դադարեց գոյություն ունենալ Հովհան Որոտնեցու վարդապետության օրոք. շուտով (ստույգ թվականն անհայտ է) Որոտնեցին, քաղաքական և տնտեսական մի շարք հանգամանքներից դրդված, համալսարանը տեղափոխեց Տաթև: Այնտեղ, արդեն որպես Տաթևի համալսարան, այդ ուսումնական հաստատությունը բեղմնավոր արդյունքներ տվեց թե՛ Որոտնեցու և թե՛ նրա աշակերտ՝ մեծ գիտնական Գրիգոր Տաթևացու վարդապետության տարիներին:

¹ Մատենադարան, գրչ. N 1141, էջ 331ա:

² Որոտնեցու թողած գրական ժառանգության ուսումնասիրությունը սկսվել է միայն վերջին տարիներս: Նրա փիլիսոփայական հայացքների մասին ամփոփ գաղափար տվեց Վ. Չալոյանը Մատենադարանի 2-րդ գիտ. սեսիայում կարդացած իր «Формальная логика Иоанна Воротнеци» զեկուցումով: Որոտնեցու տարաբանական հայացքներն ուսումնասիրել է Տ. Դազանյանը, իսկ առակների հետաքննիչ ժողովածուն պատրաստել է հրատարակության Վ. Խեչումյանը:

Մեր Մատենադարանի N 7823 գրչագրում պահպանվել է հավանաբար Դավիթ Բաղիշեցու պատմությունից մի հատված, ըստ որի Գ. Տաթևացու համալսարանը բաղկացած էր երեք «ուսումնարանից» (Ֆակուլտետ)։

«Ի միումն, - ասված է գրչագրում, - ուսուցանէր զնախկին երգիչ վարդապետաց զերաժշտութիւնս քաղցրալուր ձայնի եղանակաւ: Մինչեւ անգամ յամենայն երկրէ եւ ի քաղաքաց եկեալ պարապէին առ ոտս նորա: Եւ ի միումն նկարագրութիւն պատկերահանութեան եւ զանազան նկարչութիւնն: Եւ ի միւսումն՝ զներքին եւ զարտաքին գրեանս...» (գրչ. N 7823, էջ 42-43):

Ինչպես տեսնում ենք, չնայած քաղաքական ու տնտեսական մի շարք աննպաստ հանգամանքների, Գլաձորյան մայր համալսարանից սերված Հովհ. Որոտնեցու, Գ. Տաթևացու և այլոց համալսարանները ոչ միայն կարողացան պահպանել գլաձորյան համալսարանի գիտական ավանդույթները, այլև նոր արժեքներ տվեցին գիտության այն բոլոր ճյուղերի բնագավառներում, որոնք այս կամ այն չափով առնչվում էին համալսարանի նպատակների ու միտումների հետ:

Մատենադարանի գրչագրերից մեկում պահպանված «Վասն անապատաւորաց» վերնագրով քարոզում ասված է, որ «չորս իրս հրակաւոր է ի պէտս ուսման... Պարտ է զի կամք վարդապետին լինի ուսուցանող եւ այն՝ առանց ազահութեան կամ փառասիրութեան. երկրորդ՝ ջերմ սէր ուսանողացն, երրորդ՝ ժամանակն խաղաղութեան, չորրորդ՝ տեղիքն անապատ եւ անդորր»¹:

Գլաձորյան համալսարանն ապահովված էր թե՛ պահանջվող բարոյական աստիճանի վրա կանգնած և գիտնական վարդապետներով, թե՛ ջանասեր ուսանողներով և թե՛ տեղի անդորրութեամբ (համալսարանն ընկած էր Վայոց Ձորի Սրկղունք ավանից արևելք՝ մի գեղատեսիլ վայրում), սակայն, որ ամենակարևորն է, համալսարանն իր գործունեությունը ծավալել էր քաղաքական ու տնտեսական բարենպաստ մի ժամանակաշրջանում, որի վրա անհրաժեշտ է նետել պատմական համառոտ մի ակնարկ:

ԺԳ դարի 30-ական թվականներից մոնղոլական հորդանների աշխարհավեր արշավների ու անտանելի ծանր տիրապետության ներքո, ի թիվս Ասիայի այլ ժողովուրդների, հեծում էր նաև հայ ժողովուրդը: Հայ-վրացական միացյալ զինվորական ուժերը չկարողացան քիչ թե շատ լուրջ դիմադրություն ցույց տալ մոնղոլական հորդաններին. Կիրակոս Գանձակեցու ար-

¹ Մատենադարան, գրչ. N 573, էջ 39ա-բ:

տահայտությունները՝ «ոչ ոք էր, որ ընդդեմ կար նոցա կամ պատերազմէր ընդ նոսա...»¹: 1236 թվին մեկ տարվա ընթացքում մոնղոլների ձեռքն անցան Հայաստանի և հարևան երկրների վաճառաշատ քաղաքները՝ Շամքորը, Անին, ապա Կարսը և այլն, բնակչությունը գերեվարվեց, իսկ քիչ անց, իրենց ծանր հարկապահանջություններ քամելով ժողովրդի ողջ կենսական հյուսիսը, մոնղոլները շորացրին երկրի հետագա վերածաղկման ամեն մի հնարավորություն: Համատարած ավերածությունից զերծ մնացին միայն Հայաստանի մի քանի շրջաններ, որոնցից էին Սյունիքն ու Վայոց ձորը:

Սմբատ Օրբելյանը, այցելելով Մանգու դանին և նվիրելով նրան մի հազվագյուտ գոհար, ստանում է նրանից ինչուական իրավունք, այսինքն՝ նրա տիրապետության տակ եղող շրջանները սկսում են ենթարկվել անմիջականորեն մոնղոլական արքունիքին, ուստի և ազատվում են մոնղոլական հարկահավաքների և պաշտոնյաների շահատակության վայր լինելուց: Սմբատի հաջորդ Տարսայիճ Օրբելյանի օրոք ևս շարունակվում է Սյունիքի համեմատաբար տանելի վիճակը. նա պատերազմական իր հաղթանակների շնորհիվ նույնպես շահում է մոնղոլ իշխողների սերն ու հովանավորությունը.

«Պատուեալ եւ սիրեցեալ յաշս աշխարհակալացն եւ ամենայն մեծամեծաց՝ վարէր իշխանութիւն իւր բարձր եւ շքեղ փառօք», - գրում է իր հոր մասին Ստեփանոս Օրբելյանը. այնպես որ Սյունիքը Ստեփաննոսի հորեղբոր, հոր, ինչպես և եղբոր՝ Էլիկունի ժամանակ, երբ «ամենայն աշխարհ ակերեալ եւ ապականեալ էր, եւ վանորեայք խափանեալ ի պաշտամանէ... (եր) իբր գտապան Նոյեան ի մէջ աշխարհակործան ալեացն...»²:

Նման համեմատաբար բարենպաստ վիճակի մեջ էին նաև Պոռչյան իշխանական տան կալվածքները: Պոռչ Խաղբակյանը, մասնակցելով մոնղոլական արշավանքներին դեպի Բաղդադ և Նիփրկերտ, նույնպես հովանավորվում էր մոնղոլ իշխանների կողմից. Պոռչի հաջորդ և որդի Պապաքի (1284-99), նրա եղբորորդի Եաչի (1299-1317), ապա Ամիր Հասան Բ-ի (+ 1351) իշխանության օրոք ևս Պոռչյանների կալվածքները մնում էին բարեկեցիկ վիճակում, ուստի և՛ իրենց գրավում երկրի գիտական ուժերի ուղադրությունը:

Պոռչյանների տնտեսական ու բարոյական ամենալայն օժանդակության ու հոգատարության պայմաններում նրանց իշխանության տակ գտնվող Վայոց ձորի Աղբերց վանքում, Գլաձորում, իր կայանն է գտնում Վարդան

¹ Կիրակոս, Պատմություն Հայոց, Թիֆլիզ, 1909, էջ 240:

² Սա. Օրբելյան, Պատմություն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 316:

Արևելցու բազմաթափառ դպրոցը ներսես Մշեցու վարդապետության օրոք, որն արդեն, որպես Գլաձորի համալսարան, շուրջ յոթանասուն տարի հանդիսանում է Հայաստանի մտավոր ու քաղաքական ամենախոշոր կենտրոնը՝ ակտիվ դեր կատարելով նաև երկրի եկեղեցական ու քաղաքական գործերում:

Սակայն Գլաձորի համալսարանի տեական և բեղուն գործունեությունն արդյունք չէր միայն Սյունիքի և նրա հարևան Վայոց ձորի (որ հոգևոր թեմ էր Սյունյաց մետրոպոլիտության) տնտեսական բարեկեցության և քաղաքական համեմատաբար խաղաղ պայմանների: Գլաձորի համալսարանի գործունեությունը պայմանավորված էր նախ այն գոտեմարտերով, որ Հայկական եկեղեցին ստիպված էր մղել օտարամուտ և Հայկական եկեղեցու ինքնուրույնությունը վտանգող գաղափարախոսությունների դեմ՝ անկախ այն բանից՝ դրանք թելադրվում էին Հոմմի՞ց, թե՞ Բյուզանդիայից:

Հարկավոր էր պատասխանել ինչպես պապի ռեզիդենցիայից եկող դավանաբանական պահանջներին ու գրություններին (որոնցից մեկի մեջ Վարդան Արևելցին, իր արտահայտությամբ, գտել է «հնգետասան սխալ եւ անընդունելի բան») այնպես էլ հերքել բուն Հայաստանի, հատկապես քաղաքային բնակչության որոշ շերտերում տարածված հակալուսավորչական ուսմունքները. շերտեր, որոնք ըստ Ստեփաննոս Օրբելյանի դիպուկ արտահայտության՝ «Մամոնայի ծառայելով գանձէն գանձս յերկրի առաւել քան զամենայն ազգս. եւ ազանեն բեհեզս եւ ծիրանիս. եւ ուրախ լինեն առատապէս իբրեւ զմեծատունն. եւ Ղազարոս անկեալ առ դուրս նոցա՝ ոչ տան ի փշրանացն... Ի տապալէքն խաղալով (այսինքն է նարտն) զմիմեանց մեծութիւնս յափշտակեն...»¹ և այլն և այլն:

Հարկավոր էր հակաճառել «ընդդէմ այնոցիկ», որք՝

ա) «... զմի եւ զանբաժանելի բնութիւն Որդոյն Աստուծոյ ժպրհին յանդգնաբար քակել եւ յերկուս բաժանել եւ դնել անդ անձինք՝ կամք, կիրք եւ գործք».

բ) «... ապականեն զաստուածային խորհուրդն ջրով եւ խմորով».

գ) «... ի խաչին ուրանան զԱստուածութիւնն եւ մարդ խոստովանին գոլ զչարշարեալն վասն մեր եւ ոչ Աստուած»² և այլն և այլն:

¹ Ստ. Օրբելյան, Բան դիմադրական ընդդէմ հերետիկոսացն, Մատենադարան, ձեռ. N 573, էջ 113:

² Նույն տեղում, էջ 56ա, 66բ և այլն:

Այսպիսի ընդդիմադրություններ գրելու կարող կադրեր աճեցնելու խնդիրը, - կադրեր, որոնք իրենց եկեղեցու գաղափարախոսական դիրքերը կարող կլինեին պաշտպանել՝ ոչ միայն հենվելով սուրբ հայրերի ու Աստվածաշնչի դոգմաների վրա, այլև այնպիսի նորագույն գեներով, որոնցով զինված էին իրենց թշնամիները (փիլիսոփայություն, բնական գիտություններ և այլն), - հուզում էր Հայկական եկեղեցու հեռատես բարձրաստիճան հոգևորականությունը:

Այն հանգամանքը, որ Ստեփանոս Օրբելյանի՝ Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսին ուղղած դավանաբանական թղթի ներքո ստորագրում է Եսայի Նչեցին («Կրտսերս ի բանասիրաց եւ յետին վարժապետ իմովք աշակերտօքս»), արդեն պարզ կերպով ցույց է տալիս ուսումնական այդ բարձրագույն հաստատության դերը Հայ եկեղեցու ներքին ու արտաքին կյանքում:

Համալսարանի վրա դրված հույսերն արդարացան. միայն Եսայի Նչեցու վարդապետության ընթացքում (1284-1342) այնտեղ սովորեցին և, վարդապետական աստիճան ստանալով, ակտիվ գիտական ու քաղաքական գործունեության ասպարեզ մտան 363 աշակերտներ:

Համալսարանի համբավը հուշակվեց ողջ Հայաստանում, ուսման անհագ ծարավով այնտեղ դիմեցին երիտասարդ ուժեր Հայաստանի բոլոր գավառներից՝ ուսանելու և հայրենիքին պիտանի քաղաքացիներ դառնալու համար: Այսպես օրինակ՝ ոմն Ներսես վարդապետ իր պատվիրած Աստվածաշնչի հիշատակարանում 1330 թվին գրում է.

«Ես Ներսէս, անուամբ վարդապետ... յաշխարհէն Տարօնու ի գաւառէն Սաննու... ի գեղջէն որ կոչի Կոռ, եղէ ցանկացող ուսման եւ ընթացայ յԱրեւելս, ի գաւառն Վայու Ձոր, ի վանքն Գայլեձոր. եւ եօթն ամ վարժեցայ ի վարժումն հին եւ նոր տառից եւ այլ բազում սրբոց բանից... ի վարժապետութեան Եսայեայ Բաբունապետի, որ այժմ կայ Գլաձորի...»¹:

Մի այլ հիշատակագիր 1314 թվին գրում է.

«Ես, նուաստ անուն Մխիթար եզրնկայեցի (ընթացայ) ի մայրն իմաստից Գլաձոր՝ առ ոտս Եսայեայ վարդապետի ի վարժումն աստուածիմաստ գրոց» և այլն («Հայապատում», էջ 526):

Եվ իրոք, գլաձորյան համալսարանը տվեց երկրին անհրաժեշտ գիտական ու քաղաքական գործիչների մի ամբողջ սերունդ, որոնց գործունեության և թողած հարուստ գրական ժառանգության վրա կանգ առնելը մեզ

¹ Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 546: Հիշատակարանից պարզվում է, որ ուսման տևողությունը Գլաձորում յոթ տարի էր:

շատ հեռու կտաներ. բավարարվենք հիշատակելով, որ Սյունյաց միտրոպոլիտ, «Պատմութիւն տանն Սիսական», «Ողբ ի դիմաց Վաղարշապատու», «Բան դիմադրական ընդդէմ հերետիկոսացն» և ցարդ անհայտ մնացած «Հարցուածք վասն բնութեանցն»¹ մեծարժէք աշխատությունների հեղինակ և խոշոր քաղաքական գործիչ Ստեփանոս Օրբելյանը, բանաստեղծ և եկեղեցական գործիչ Խաչատուր Կեչառեցին, բազմաթիվ ճառերի ու մեկնությունների հեղինակ, «հմուտ... փիլիսոփայական արհեստից»² Մխիթար Սասնեցին, «ընտիր ոճով Եւագրի գրուածոց վրայ տեսություն մը յօրինած»³ Կիրակոս Երզնկացին, Վարդան Արևելցուն վերագրված աշխարհագրության հեղինակ Վարդանը և այլ բազմաթիվ բազմաշխատ գործիչներ ու մատենագիրներ գլաձորյան համալսարանի սաներն էին:

Ղևոնդ Ալիշանը, իր «Սիսական» մեծարժէք աշխատության մեջ թվելով Գլաձորի համալսարանի իրեն հայտնի գրական վաստակներից կարևորները, գրում է.

«Փափագելի խնդիր է այլոց եւս գրոց Եսայա եւ վանակցաց նորին եւ աշակերտաց, առ ի վերայ հասանել, եթէ զի՞նչ եւ որքա՞ն շնորք էին նորա եւ տեղոյն, որովք այնքան դրուատեցաւ եւ հռչակեցաւ վարժարանն այն եւ վարդապետարան՝ երկրորդն Աթէնք»⁴:

Գլաձորյան համալսարանի ավարտական ատենախոսությունների ի հայտ գալով մասամբ իրագործված պիտի համարել բազմաշխատ բանասերի փափագը:

Գլաձորի համալսարանի ուսանողների ավարտական ատենախոսությունները պահպանած՝ մեզ առայժմ միակ հայտնի գրչագիրը, որ բազմապիսի նյութերի (մեծ մասամբ քարոզների) ժողովածու է, կրում է մեր Մատենադարանի N 631 (602)-ը: Ատենախոսությունները գտնվում են գրչագրի 49ա-86բ էջերում: Այն գրված է ԺԴ-ԺԵ դարերում Գրիգոր Սամսոնեցու ձեռքով, պատվիրատուն է Մկրտիչը: Գրված է բոլորգրով, միասյուն, բաղկացած է 274 թերթից. նյութը թուղթ է, կազմը՝ դրոշմազարդ կաշի: Առաջին

¹ Ստեփանոսի այս աշխատությունը, որ մենք նպատակ ունենք հրատարակել, փիլիսոփայական լուրջ երկ է:

² **Զարպհանայան**, Պատմություն հայ դպրության, հտ. Բ, 1878, էջ 189-191:

³ Նույն տեղում, էջ 232:

⁴ **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 137:

հայացքից մեզ հետաքրքրող հոգվածները թողնում են քարոզների սովորական նախերգանքների տպավորություն¹:

Անգամ մեր մատենագրության ամենագիտակ անձնավորություններից մեկը՝ բանասեր Ն. Ակինյանը, իր համառոտ ցուցակում² գրանցել է այդ մատենախոսությունները որպես սովորական «նախերգանք քարոզից» և թողել է անուշադիր: Սակայն մանրակրկիտ քննություն կատարելուց հետո դժվար չէ փոխել նրանց մասին ստացած առաջին տպավորությունը:

Այսպես օրինակ՝ գրչագրի 73ա էջից սկսվող *ատենախոսության մեջ* (որ Ակինյանը գրանցել է որպես «Տիրական և արարչական է այս բան հրամանի») բառերով սկսվող *նախերգանք*) հեղինակն Աստուծուն է դիմում հետևյալ խոսքերով.

«Իսկ ես, անարժան ծառա քո, միշտ գտեալ ի քէն ողորմութիւն, ի նախնեաց եւ յարգանդէ մաւր իմոյ ի քեզ անկեալ եւ սնեալ ի ծոց եկեղեցո... մերո ստեղծողիդ, որ արժանի արարեր զաւրութեամբ քով անուան փառաց

¹ Մեր գրչագրերում հաճախ հանդիպող սովորական փարձերի նախերգանքների մասին որոշ գաղափար տալու նպատակով ավելորդ չենք համարում բերել մի բնորոշ նախերգանք՝ «Նախերգանք պիտանի նախան գրնաբան փարձի» վերնագրով, N 4618 գրչագրում (էջ 36բ) պահպանված հավաքածուից: Նախերգանքը, ինչպես կարելի է եզրակացնել լուսանցում գրած «հայոց» բառից, օգտագործվել է որպես նախերգանք հայ ժողովրդի վիճակի վերաբերյալ կարդացած փարձերի:

«Մանաւանդ զստորասուզեալ եւ ներգետեալ տունս Թորգոմայ Աւանազեան, ազինս Աբեթեան, ազգիս Հայկազեան, ի թագաւորական գահոյից, ի պատրիարգական արքունոց, ի յիշխանական պերճութեանց, ի հայրենական ժառանգութեանց եւ փարթաւ արգասեաց, եւ յամենայնէ թափուր եւ յունայն եղեալ ցրուեալ եւ վարատեալ, տարագիր եւ տարաշխարհիկ ընդ ոլորտս տիեզերաց: Եւ եմք տառապեալ յերկրի այսօր վասն մեղաց մերոց: Վասն որոյ առ հեծութեան սրտի եւ առ դալար աղեաց ողբս առեալ եւ արտօսը յեղեալ, առ ծունկս անկեալ եւ կական բարձեալ ի սինհոդոս սուրբ բանակաց եւ ի ջոկս մարտիրոսաց, ի հանդէս ճգնատրաց եւ ի գունդս կոսասնաց, ի գումարս մարգարէից եւ ի խումբս նահատակաց, ի հոյս աշակերտաց սրբոց եւ ի դասս երչանկաց առաւելոցն յիննեակ դասս հրեշտակացն: Այլ եւ Տիրամայրն Աստուածածին եւ ի նոյն ինքն մարդացեալ Աստուած ընծայեալն Հօր պատարագ վասն մեր: Ձի ի պատիւ ատուս շնորհի եւ ի բարեխօսութիւն այս քան յիշատակեալ երկնագումար եւ աստուածաբնակ հազարատրացս եւ բիրատրացս՝ հայտնեցէ ընդ հայկազեանս սեռիս եւ վերստին դարձեալ առաջինն նորոգեցէ: որպէս էսքան նախ՝ գերագոյն քան զազինս ամենայն, ի պատիւ փառաց իւրոց, անալէկոծ կենօք եւ խաղաղութեան արգասիք, հաստատեցէ զարթոն եւ զգաւազան իշխանութեան, թագաւորական պետութեան եւ քահանայական օժութեան ազգիս հայկազեան, ամէն»:

² Ն. Ակինյանի կազմած «Վշմիածնի մատենադարանի գրչագրերի համառոտ ցուցակը», որտեղ գրանցված են 1-2360 գրչագրերը, մեր Մատենադարանի սեփականությունն է կազմում:

եւ կոչման վարդապետութեան, լինել անաւթ ինչ ի պէտս սպասաւորութեան տան քում մեծի եւ երկնաւորի, իշխել վստահութեամբ ի բուրաստանս ծաղկոցաց, խաւսուն մարգաց եւ հովտաց շուշանաց եւ տալ անտի, ըստ կարի մերում... սրբազան մանկանց Սիոնի սրբո...»¹ և այլն:

Քերված տողերից պարզ երևում է, որ նրանց հեղինակը, լինելով հոգևոր ընտանիքի զավակ («ի նախնեաց եւ յարգանադէ մաւր իմոյ ի քեզ ունկեալ») արժանացել է վարդապետական աստիճանի («անուան փառաց եւ կոչման վարդապետութեան»):

«Յաղագս որոյ, - շարունակում է նա, - անվճար երախտեաց պարտական եղեալ իմ, նախ քեզ (Աստուծոյ) հատուցից զերեխայրիս կալո իմո եւ հնձանի եւ զանդրանիկս բանական համարձակութեան զպտուղ շրթանց...», այսինքն՝ իր առաջին հրապարակային ատենախոսությունը, որ պատկերավոր կերպով համեմատված է կալի և հնձանի առաջին արդյունքի հետ: Իսկ ատենախոսության վերջում, ավանդական օրհնություններից անմիջապես առաջ, հեղինակը խնդրում է չդատապարտել իրեն, եթե իր ասույթներում գտնվեն մտքեր՝ «արտաքոյ լաւին եւ յոյժ հեռի ի ճշմարտութենէն...», որովհետև իր այդ ելույթն առաջինն է, ուստի և չէր կարող զերծ չլինել թերություններից («զի զայս առաջինն է, որ տուաւ մեզ համարձակութիւն...» և այլն):

Նույն բանն ավելի ցայտուն կերպով արտահայտված է 60ա էջից սկսվող ատենախոսության մեջ, որի հեղինակը շնորհակալության ջերմ խոսքեր ուղղելով աշխարհիկ և հոգևոր տերերին և իր ուսուցիչներին՝ չի մոռանում իր առաջին հրապարակային ատենախոսությունը («Նաւակատեաց տեսութեանը») ունկնդրելու եկած հանդիսականներին և դիմում է նրանց հետևյալ խոսքերով.

«... զքրիստոսասէր եւ զբարեպաշտ եւ զսիրելիս սրբոց, աւրհնութեան արժանաւոր տանուտերքդ եւ հոգեսէր եւ աղքատասէր բարե (պաշտ տիկնայքդ), որ բազում ծնաւդական գութ ի մեզ ցուցե(ա)լ եւ այսաւր աշխարհասիրաբար ի մերս եկիք նաւակատեաց տեսութիւն, զորս զամենեսեան արժանացուցէ ամենախնամն Աստուած պայծառ հարսանեացն տեսութեան եւ առագաստին ուրախութեան»:

Քննարկվող հարցի կապակցությամբ չափազանց հետաքրքիր է նաև վերոհիշյալ ատենախոսության նախաբանը, որ ատենախոսը հայտնում է, որ ամեն մի նոր ինչ «բարեպատեհ երեւի տեսողաց», ինչպես անհաս, դեռ-

¹ Մէջբերվող հատվածների ուղղագրությունը թողնում ենք անփոփոխ:

ևս տտպահամ պտուղն ախորժեղի է թվում մարդկանց որպես նորություն, ինչպես նոր խոսել սկսող երեխաների բարբառանքը մեծ հաճույք է պատճառում ծնողներին, այնպես էլ հույս է հայտնում, որ իր՝ որպես առաջին անգամ հրապարակային ելույթ ունեցողի նկատմամբ հանդիսականները խստապահանջ չեն գտնվի:

Այսպիսով, պարզվում է, որ N 631 գրչագրում պահպանված հոգվածները ոչ թե քարոզների սովորական նախերգանքներ են, այլ ատենախոսություններ կամ ատենախոսությունների հատվածներ են այնպիսի հեղինակների, որոնք առաջին անգամ են հրապարակային ելույթ ունենում: Սակայն դեռևս պետք է ապացուցել, որ մեզ հետաքրքրող ատենախոսությունները գրվել են և կարդացվել հեղինակների կողմից ինչ-որ ուսումնական հաստատություն ավարտելու կապակցությամբ¹: Ատենախոսություններն այս հարցի պարզաբանման համար ևս տալիս են առատ նյութ. մենք կբավարարվենք երկու փաստ բերելով:

60ա էջից սկսվող ատենախոսության հեղինակը ատենախոսության վերջում օրհնություններից ու բարեմաղթություններից մաս է հանում նաև իր դաստիարակներին, ուսուցիչներին և ուսումնակիցներին, իր բաղձանքն է հայտնում վերջիններին ևս տեսնել իրենց նպատակին (իմա՝ կրթության ավարտմանը) հասած: Մեզ հետաքրքրող հատվածը բերում ենք ամբողջությամբ.

¹ Իհարկե, վերոհիշյալից սխալ կլինի եզրակացնել, որ այս ատենախոսությունները փոխարինել են համալսարանի ավարտական ֆննություններին: Համալսարանավարտը նախան հրապարակային իր առաջին ելույթը, Հայ եկեղեցում տիրող կանոնների համաձայն, պետք է ստացած լինե՞ր աստիճան «ծայրագոյն վարդապետութեան», որով և իրավունք՝ «սաղմոսել, վարդապետել եւ յայտնել զբանս աստուածայինս, ի լեզուս խօսել եւ թարգմանութիւնս առանել առ ի շինութիւն եղբարց եւ ի կատարումն եկեղեցոյ» (տե՛ս «Գիրք գաւազան տալոյ աշակերտացն նշմարիտ բանին... յօրինեալ սրբոյն Գրիգորի Տաթեւացոյ...» հոդվածը, «Մաշտոց ձեռնադրութեան», Վաղարշապատ, 1876, էջ 111): Ծայրագոյն վարդապետության աստիճան հնարավոր էր ստանալ միայն ուսումնական որևէ հաստատություն ավարտելուց կամ ավարտական ֆննություններ տալուց հետո միայն: Ըստ Մխիթար Գոշի «Կատաստանագրքի» (մասն Ա. հոդված Գ, էջ 88)՝ «վարդապետք եղիցին ըստ իրաւանց նախակրթեալք Հին եւ Նոր Կտակարանաց եւ Կանոնական հրամանաց: Յերկուց եւ յերից վարդապետաց կոչեսցին ի պատիւ հրամանի, թեւ պատանի միոյ աշակերտի...»: Անշուշտ, «երկուց եւ երից» վարդապետների ներկայությամբ մանրակրկիտ ֆննության ենթարկված վարդապետացուն կարող էր ստանալ վարդապետական աստիճան, ուստի և ատենախոսելու իրավունք՝ պահանջվող գիտական պատրաստությունն ունենալով միայն:

«...եւ դուք դաստիարակք եւ սնուցիչ հարք իմ հոգեւորք, ալե[ա]ւք պատեալք եւ իմաստիւք ծերունիք, նաեւ սիրեցեալ եղբարք եւ հասակակից(ք), որ բազումս վաստակեցէք ի մեզ, որոց, փոխանակ սիրոյ եւ երախտեաց, բազմապատիկս հատուցէ բարեացապարտն Աստուած աստ եւ ի հանդերձեալն:

Եւ դուք, աստուածային բանին առլցեալք եւ լիապատար իմաստիւք զարդարեալ ուսումնակիցք եւ հոգեւոր սեղանոյն հացկիցք, որ յոլով ամաւք, զմեծ մասն կենաց ձերոց ի դեգերանս հանճարոյ մնացեալ եւ ի ծայր իմաստիցն ժամանեալ, եւ այժմ զոր ձեր երանկ անարգամեծար կամաւք զմեր նուաստութիւնս յառաջ մատուցէք եւ աղաւթիւք եւ խրատու աւժընդակե[ա]լ մերում թերութեանս յանկ հասուցէք, որոց, ամենաբաշխ Հոգին Սուրբ փոխատրելով ըստ ձերոց աննախանձ բարեսէր կամացդ, լցուցէ անճառ իմաստիւքն իւրովք եւ զբաղձանս ձեր ի լրումն ածել ժամանեցուցէ ի կատարեալ շնորհն պետական, առնել եւ ուսուցանել զաւանդն տերունական զտեսեալ եւ զլեալ ի սուրբ եւ յամենալի հանճարոց եւ վարուց կատարելապետիս մերոյ եւ հաւր, ի պարծանս սորա եւ ի գովութիւն յաւուրն Քրիստոսի...»:

73ա էջից սկսվող ատենախոսության հեղինակը ևս դիմում է իր ուսումնակիցներին.

«... Զսիրելի եւ զպատուական եղբարքդ, որք ի հեռաստանէ աշխարհէ եւ որք ի մոտուստ եկեալ աշակերտիք աստուածային իմաստից... զհոգի շնորհաց երջանիկ հօրս մերոյ (այսինքն՝ իրենց վարդապետի) հանգուցէ ի վերա(յ) ձեր... եւ ժամանեցուցէ զիւրաքանչիւր ոք յաւարտումն բարի յուսոյն իրոյ...»:

Անհամեմատ դժվար է մեզ հետաքրքրող ավարտական ատենախոսությունների ժամանակը, ուստի և՛ համալսարանի ժամանակը որոշելու խնդիրը: Այդ դժվարության պատճառը հետևյալն է. N 631 կամ նրա նախագաղափար գրչագրի արտագրողը մեզ հետաքրքրող նյութն արտագրել է ոչ որպես մի որոշ համալսարանի ավարտող ուսանողների առաջին ատենախոսություններ:

Օգտվելով այն իրողությունից, որ նրանց նյութը կամ ավելի ճիշտ՝ նրանց նախերգանքներն ու վերջաբանները, գրված լինելով չափազանց վարպետորեն ու գեղեցիկ, կարող են նախերգանքների ու վերջաբանների դեր կատարել ճարտար քարոզչի ընդունակություններ չունեցող ամեն մի քարոզչի համար՝ մեզ անհայտ արտագրողը կամ խմբագրողը դեն է նետել

ատենախոսություններից ամեն մի արտահայտություն, միտք, անձնանուն, որ այս կամ այն կերպ կարող էր հիշեցնել ունկնդիրներին քարոզի սկզբնական աղբյուրը:

Այսպես օրինակ՝ արտագրելով այդպիսի ատենախոսություններից մեկի (սկ. 49ա էջից) միայն նախաբանն ու վերջաբանը՝ այն բառերից հետո, որոնց (չաղճատված օրինակում) հաջորդում էին ատենախոսության բնաբանի բառերը՝ խմբագիրը գրել է «այս ինչ է» («նեցուկ եւ գաւազան զարութեան առաքեսցէ մեզ Տէր ի Սիոնէ՛ անսայթաք եւ անգայթակղ գնալ մեզ առաջի եդեալ ճանապարհս, որոյ նախադրությունն այս ինչ է»): «Այս ինչ է» բառերի փոխարեն գրչագրից օգտվող քարոզիչը կարող էր դնել իր ցանկացած բնաբանը՝ ելնելով իր քարոզի նյութից:

Բարեբախտաբար, մեզ անհայտ խմբագիրն իր առաջ դրած խնդիրը կատարել է ոչ փայլուն կերպով, անգամ այդպիսի անդամահատված վիճակում ատենախոսությունները (հատկապես 60ա էջից սկսվողը) պահպանել են որոշ տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն նրանց գրության մերձավոր ժամանակը, այլ անգամ ճշգրիտ տարեթիվը որոշել:

Մենք առաջադրված խնդրի լուծման համար ստիպված ենք մեջբերել մի ընդարձակ հատված 60ա էջից սկսվող ատենախոսությունից: Ատենախոսության հեղինակը շափազանց ընդարձակ տեղ գրավող օրհնություններից հետո գրում է¹:

ա) «Եւ արդ, ողորմութիւնն Աստուծոյ... գթասցէ նախախնամական սիրով յիւրական արարածս եւ զերկոսեան սիւնս ամրութեան քրիստոնէական դաւանութեան անսասանելի պահեսցէ ամէնայաղթ իւրով զարութեամբն:

Չամբիժ եւ զաստուածամերձ անձն եւ տիրական պատկերն... զհայրապետն մեր զտէր... (անուան փոխարէն չորս կետէր ումբաձեւ դասաւորութեամբ) եպիսկոպոսաւք եւ վարդապետաւք եւ բնաւին իսկ լրման ուխտիս սուրբ եկեղեցոյ՝ ճշմարիտ հաւատով եւ անբասիր վարեաւք ամրացեալ միացուցէ ի մի լրութիւն ընդրութեան:

Մանաւանդ զարինական հաւատոյ, զքանոն սրբութեան, զծայրագոյն պատուոյ վիճակեալն, զվերադիտող(ն) սրբահաւաք ուխտիս սրբութեան եւ զառաջնորդն մեր ի Քրիստոս, զտէր պահեսցէ... բազում ժամանակաւք...»:

¹ Մեր հետագա աշխատանքը դյուրացնելու նպատակով մեջբերվող հատվածը բաժանում ենք 4 մասի՝ ա, բ, գ, դ թվահամարներով:

բ) «... Զբարեպաշտ եւ զմեծագաւը՝ ծիրանածին եւ արքայազարմ թագաւորն մեր... ամենայն իշխանաւք եւ իշխեցելաւք... ամրացուցէ յամենայն հակառակողաց իւրեանց»:

գ) «... Բայց ինձ աստանաւր յառաջել, ողբս եւ աղետ հասուցանէ յաղագս անկրկնելի կործանմանս եւ անողջանալի բեկմանս, զի բարձաւ ի մէնջ թագն գլխոց եւ ուրախութիւնն սրտից, վանիչն պատերազմաց եւ հերքիչն այլասեռից... ողբացից, զի ոչ է ի միջի, որ եկեղեցիսն զարդարէր եւ զսուրբսն պատուէր, եւ զսոցին նմանսն, որ ամենեցուն է գիտելի: Այլ ինքն ողորմածն Աստուած, որ հարկանէ եւ բժշկէ... մխիթարեսցէ զտրտմեալքս... զսոյն տեղի թերութեան լցուցանելով ի նորին զաւակաց...»:

դ) «... Եւ առաւել այժմու աստուածասէր եւ բարիանուն... պարոնայքս (անունները չկան) որք են զարդ եկեղեցոյ... պահպանեալ լիցին յամենակալ բազկաց Տեառն իւրեանց՝ ծննդաւք եւ սիրելեալք...»:

Վերցնենք նախ բ) հատվածը՝ «Ծիրանածին եւ արքայազարմ» թագավորի հիշատակութեամբ, որին, ելնելով ատենախոսութեանների լեզվից, ոճից և ոգուց, անշուշտ, պետք է փնտրել կիրիկյան հայկական թագավորների շարքում:

Հիշատակությունը չի կարող վերաբերել ո՛չ Առն Ա-ին (1198-1219) և ո՛չ էլ Հեթում Ա-ին (1226-1270)՝ հենց այն պատճառով, որ նրանցից ոչ մեկն արքայազարմ չէր: Ռուբինյանց թագավորներից արքայազարմ կոչվելու իրավունք ունեին միայն Հեթումի հետնորդները, ուստի «արքայազարմ» թագավորի հիշատակութեամբ ատենախոսությունը կարող է գրված լինել միայն Հեթումի մահվանից՝ 1270 թվից հետո: «Ծիրանածին» մակդիրը հայ թագավորների վերաբերյալ առաջին անգամ գործածված ենք գտնում Վահրամ վարդապետի այն ճառի մեջ, որ նա կարդացել է Առն Բ-ի թագադրման հանդեսին¹: Ճառի վերջաբանում կան հետևյալ խոսքերը.

«... Թագաւորեսցէ սա (Առն) ի կեան յայս ծիրանածին որդւովք իւրովք եւ զարմի...»:

Այս հանգամանքը ևս հաստատում է մեր վերոհիշյալ ենթադրությունը:

Ավելի հետաքրքիր են ա) հատվածի քննության արդյունքները: Պիտի փնտրել մի ժամանակաշրջան, որի ընթացքում բացի կաթողիկոսից եղած լինի մի այլ բարձրաստիճան հոգևորական «ծայրագոյն պատուոյ վիճակեալ», որ արժանի լինէր կրելու «աւրինակ հաւատոյ», «քանոն սրբութեան» մականունները, և, որ ավելի կարևոր է, կաթողիկոսի դավանաբա-

¹ Տե՛ս «Առարատ» ամսագիր, 1869, էջ 101:

նական ուղիղ ընթացքի վերաբերյալ եղած լինելն տարակույսներ (այլ կերպ չենք հասկանում ատենախոսի այն խոսքերը, որով նա իր բաղձանքն է հայտնում տեսնել կաթողիկոսին իր մերձավոր հոգևորականների հետ միասին՝ «Ճշմարիտ հաւատով եւ անբասիր վարեաւք ամրացեալ... ի մի լրություն առաքելական ընդութեան»):

1270 թվից հետո վերոհիշյալ բոլոր տվյալներին համապատասխանում են Ստեփանոս Գ Հռոմկլայեցու կաթողիկոսության տարիները (1290-1293):

Արևելյան Հայաստանում Կոստանդին Կատուկեցի կաթողիկոսի գահընկեցությունը դիտվում էր (ինչպես որ իրոք էր) որպես Կիլիկիայի հոգևորականության և արքունիքի որոշ շերտերի լատինամոլ քաղաքականության արդյունք, ուստի նրա հաջորդի՝ Ստեփանոս Հռոմկլայեցու հավատի (դավանանքի) ուղղության վերաբերյալ, մանավանդ նրա գահակալության սկզբնական շրջանում, բնականորեն կարող էին կասկածներ առաջանալ:

Այդ նույն տարիներին Արևելյան Հայաստանի հոգևոր գործերը, որպես *de facto* կաթողիկոս, վարում էր Սյունեաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը, որին ժամանակակիցները բուն Հայաստանում հաճախ կոչում էին անգամ Բահանայապետ. որպես օրինակ նշենք Մաթեոս վարդապետի՝ 1292 թվին արտագրած հիշատակարանը.

«Գրեցաւ (աւետարանս)... ի գաւառիս, որ կոչի Վայոց Ձոր քահանայապետութեան նահանգիս՝ Տեառն Ստեփանոսի...»¹:

Այսպիսով, ատենախոսության գրության ժամանակը վերոհիշյալ տվյալների հիման վրա ավելի է կոնկրետանում և ամփոփվում Ստեփանոս Հռոմկլայեցու կաթողիկոսության տարիների, այն է՝ 1290-93 թվերի միջև:

Գ հատվածում ատենախոսը ողբում է մի բարձրաստիճան աշխարհիկ մարդու մահը՝ հանգուցյալի հասցեին շուայլելով «Թագն գլխոց», «ուրախութիւն սրտից», «վանիչ պատերազմաց», «հերքիչ այլասեռից», եկեղեցիների զարդարող և այլն պատվանուններ: Այնուհետև իր ցանկությունն է հայտնում տեսնել նրա զավակներից որևէ մեկին՝ հաջորդած իր հանգուցյալ հորը:

Վերոհիշյալ պատվանունները պատշաճ են ինչպես Սմբատ Օրբելյանին, այդպես նաև նրա եղբայր Տարսայիճին: Սմբատն անզավակ մահացավ, ուստի ատենախոսը նրան չէր կարող նկատի ունենալ. ինչ վերաբերում է Տարսայիճին, ապա Ստ. Օրբելյանի նրան տված մակդիրները և ատենախոսու-

¹ Գ. Հովսեփյան, Խաղբակյանի կամ Պոռշեանի, էջ 148:

թյան մեջ հանգուցյալին ուղղած պատվանուններն ըստ ամենայնի ծածկում են իրար:

Ստեփանոսի տեղեկությամբ նույնպես՝ Տարսայիճը մեկն էր, որ «բազում գիւրութիւն եւ ողորմածութիւն առնէր նեղեալ ազգիս հայոց... Ազատեաց (ի հարկէ) զամենայն եկեղեցիս: Նաեւ այնքան ողորմած եւ զթածեղեւ առ ամենեսեան, զի ի Նետիս գիւղ... խաչ կանգնէին եւ անուամբ նորա կոչէին զնա (զխաչն)...» և այլն¹:

Ավելի նշանակալից է Ստեփանոսի տեղեկությունն իր եղբայրների միջև հոր ժառանգության առթիվ ծագած վեճերի մասին.

«Որդիք նորա (Տարսայիճի), - գրում է Ստեփանոսը, - վիճէին ի վերայ տերութեան եւ իշխանութեան հօրն, որք գնացեալ ի դուռն արքունի՝ յանդիման եղեն աշխարհակալ Ղան Արղունին: Իսկ նորա յառաջ կոչեալ զաւագագոյն զԵլիկումն եւ կարգեալ զնա ի տեղի հօրն՝ կացուցանէ իշխան ի վերայ ամենայնին»²:

Ինչպես տեսնում ենք, ատենախոսության մեզ հետաքրքրող երրորդ հատվածը համընկնում է ամբողջապես այն ամենին, ինչ պատմում է Օրբելյանը Տարսայիճի մահվան և նրա որդիների ժառանգական վեճերի մասին, ուստի մեզ հետաքրքրող ատենախոսությունը գրված և կարդացված պետք է լինի Տարսայիճի մահվան և Ելիկում բարձակալման միջև ընկած ամիսների ընթացքում, այսինքն՝ 1290 թվականին:

Դ հատվածը, նոր բան չավելացնելով վերոհիշյալ արդյունքներին, ավելորդ անգամ հաստատում է նրանց ճշտությունը: Հատվածում հիշատակված «աստուածասէր եւ բարիանուն» պարոնները ոչ այլ ոք են, եթե ոչ Պոռ Նաղբակյանի որդիները՝ Պապաք (+ 1298) և Ամիր Հասան Ա-ն (+ 1292), որոնք բազմաթիվ այլ աղբյուրներում ևս հիշվում են միասին, այսպես՝ 1288 թվին գրված մի արձանագրության մեջ կարդում ենք.

«Ի թուականիս հայոց ԶԼԷ յիշխանութեան Պապաքին եւ Ամիր Հասանայ, ես Սարգիս եւ որդի իմ Պետրոս շինեցաք զաղբիրս եւ կանգնեցաք զխաչս...»³:

Գ. Հովսեփյանը «Նաղբակյանք եւ Պոռեանք» իր աշխատության մեջ հայտնում է, որ «Էջմիածնի Մատենադարանի N 734 խառն գրչությամբ ձեռագրի մեջ մի հատակտոր (fragment) կա, ամենայն հավանականությամբ՝

¹ Սա. Օրբելյան, Պատմություն, էջ 212-313:

² Նույն տեղում, էջ 315:

³ Գ. Ալիշան, Սիսական, էջ 175:

Գլաձորի դպրոցականներից մեկի աշխատության մաս, որի վերջավորությունը բարեմաղթություն է Խաղբակյանց կամ Պոռոշյանց տոհմի ժամանակակից իշխանների՝ Ամիր Հասանի և նրա եղբայրների հասցեին»¹:

Հովսեփյանի հրատարակած փոքրիկ հատվածն այդ fragment-ից ոչ մի կասկած չի թողնում, որ այն նույնպես Գլաձորի համալսարանի համար ըստ երևույթին ավանդական դարձած ավարտական մի ատենախոսության մաս է, որը բարեբախտաբար չի աղճատված որևէ խմբագրի կողմից:

Ունենալով Ամիր Հասան Բ-ի մասին հիշատակություն՝ այն գրված կարող է լինել միայն ճաշի մահվանից (1317 թ.) հետո, ուստի, ամփոփելով ատենախոսությունների դպրության ժամանակի մասին մեր խոսքը, կարող ենք հաստատապես պնդել, որ նրանք գրվել են գլաձորյան համալսարանի ամենափայլուն շրջանում, երբ համալսարանը վարում էր «վարդապետաց վարդապետ» Եսայի Նչեցին:

Այս եզրակացությունից հետո պարզ են դառնում ատենախոսությունների սիրով և պատկառանքով լի այն տողերը, որ ուղղում են իրենց հոգևոր հորը համալսարանավարտները: 45ա էջից սկսվող ատենախոսության հեղինակը սիրելի ուսուցչին ուղղած շնորհակալական խոսքը սկսում է այսպես.

«... Արդ, երկեղ եւ զարհուրումն պաշարէ զիս, խռովի հոգի իմ, եւ դողան ոսկերք իմ, տարակուսին միտք իմ եւ խորհուրդ իմ, ընդարմանա շրթունք իմ, եւ կապի լեզու իմ... աչք իմ շրտնու. ճառագայթից սորա եւ ափ իմ ոչ կարէ ըմբռնել զսա. թողուն անբանութիւն է, եւ արժելութեան բան փառաց սորա ոչ ունին միտք իմ: Եւ գտանիմ բիւրապատիկ պարտուց ներքոյ, զի ի քեզ անկա յորովայնէ, հայր, քեւ մեծացա եւ զարգացա եւ քեւ ի շափ հասա: Ձեռք քո աշխատասէր սնուցին զիս ի Քրիստոս հոգեկանաւք եւ մարմնականաւք ուսմամբ. աչք քո քաղցրահայաց լուսաւորեցին զիս, բանք քո բարի առաջնորդեցին ինձ... հեզ եւ մարդասէր հոգի քո հանկոյց զիս...» և այլն:

Բազմաթիվ նման շնորհակալություններից և բարեմաղթություններից, որոնք հանդիպում են ատենախոսություններում՝ ուղղված ընդհանրապես, բերեք նաև 53 էջից սկսվողի համապատասխան հատվածը.

«Մ՛վ, հայր հոգեւոր, - բացականչում է ատենախոսը, - երկբայս գոմ, թէ զի՞նչ ասացից զքեզ. արեգա՞կն, եւ ահա զտիւն միայն լուսաւորէ: Եւ թէ աղբի՞ւր, երբեմն յարտաքին հեղեղաց եւ ի գազանաց կոխելով՝ պղտոր գործի:

¹ Գ. Հովսեփյան, Խաղբակյանց կամ Պոռոշեանց, էջ 200:

եւ թէ դրա՞խտ յոգնապտուղ՝ ի ձմերան եղանակին խամրի: Այլ սեղան առասացից հոգեւոր հացին, որ միշտ առատաբար բաշխես կերողաց՝ եկեղեցականաց եւ աշխարհականաց, իշխանաց եւ ռամկաց եւ ամենայն աստուածային ժողովրդոց: Եւ իմ յետ Աստուծոյ երախտաւոր, կարեկից եւ ցաւակից, յանձանձիշ եւ մխիթարիչ՝ տղա[յ]ացեալն Աստուած պատուեսցէ զերիտասարդութիւն քո եւ զվարձա աշխատութեան քո ընդ յառաջնոց վարդապետացն տացէ՛ ընդ [Յ]ոհաննու, Բարսղի, Կիւրղի եւ Աթանասի...»¹ (էջ 55ա):

Ավարտողները չեն մոռանում իրենց բարեմաղթություններում հիշել նաև «գիտնական եւ զարդիւնական» մյուս «րաբունիներին», իրենց «ալեւք պատուեալք եւ իմաստիւք ծերունիք» դաստիարակներին և սնուցող հայրերին, որոնցից միայն երկուսի՝ Տիրատուր և Դավիթ վարդապետների անուններն են պահպանվել մեր աղբյուրներում: Տիրատուրը հայտնի է N 7823 գրչագրի «Յաղագս արեւելեան վարդապետաց» հոգվածից՝ որպես Հովհ. Որոտնեցու ուսուցիչներից մեկը: Ղ. Ալիշանին հայտնի է հանելուկների հեղինակ «Տիրատուր վարդապետ մը ժ'ի դարու», որ ամենայն հավանութեամբ նույն Հովհ. Որոտնեցու ուսուցիչն է²:

Համալսարանի ամենահեղինակավոր դասախոսը Եսայի Նչեցուց հետո Դավիթն էր, որը նույնպէս ստորագրել է Ստեփանոս Օրբելյանի՝ Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսին ուղղած դավանաբանական հայտնի գրությունը՝ որպես «Նուաստ ոգի, քարոզ բանի եւ վարդապետ Հայաստանս (այսպէ՛ս) եկեղեցւոյ...»³:

Մնում է պարզել ևս մի խնդիր. արդյոք այս ավարտական ատենախոսությունները հատուկ էին միայն Գլաձորի՞ համալսարանին, թե՞ այդ ավանդույթը գալիս է Հայաստանի ավելի հնագույն ուսումնական հաստատություններից:

Մեր Մատենադարանի N 3276 գրչագրում, Մխիթար Գոշի արժեքավոր և ցարդ անհայտ ճառերից ու մեկնություններից անմիջապես հետո, պահպանվել է մի հատված ոմն վարդապետի ուղղված գովեստի արտահայտություններով, որոնք հաճախ բառացիորեն համընկնում են գլաձորյան ավար-

¹ Այս հատվածը հետաքրքիր է նաև այլ տեսանկյունով. պարզվում է, որ՝ ա) Եսային իր գիտությունն առատաբար բաշխում էր թե՛ հոգևորականներին և թե՛ աշխարհականներին՝ իշխաններին և ռամիկներին. բ) ատենախոսությունը գրելու ժամանակ նա երիտասարդ էր («Աստուած պատուեսցէ զերիտասարդութիւն քո»):

² Ղ. Ալիշան, Յուշիկի..., հտ. Բ, էջ 124:

³ Սա. Օրբելյան, Պատմություն, էջ 338:

տական ատենախոսությունների՝ Եսայի Նչեցուն ուղղված համանման արտահայտություններին:

Գտնվելով Գոշի աշխատություններին կից, այն կարող է պատկանել նրա աշակերտներից որևէ մեկի գրչին, սակայն կարող է նաև, որ ավելի հավանական է, պատահականորեն մտած լինել այդ գրչագրի մեջ, որն ի դեպ ասած, բազմազան նյութերի ժողովածու է:

Ինչպես առաջադրված, այնպես էլ այդ ավանդության՝ Որոտնեցու և Տաթևացու համալսարաններում շարունակված լինելու կամ չլինելու խնդիրները կլուծվեն միայն նոր տվյալների երևան գալով:

Քլաձորյան ավարտական ատենախոսությունների մասին ամփոփ գաղափար տալու համար նպատակահարմար ենք գտնում համառոտ կերպով շարադրել խմբագրի կողմից համեմատաբար քիչ աղճատված ատենախոսության հիմնական մտքերը: Յավոք սրտի, աղճատումներից համեմատաբար զերծ է մնացել այնպիսի մի ատենախոսություն, որը քիչ բանով է տարբերվում միջնադարում լայն տարածում գտած բարոյագիտական քարոզչությունից:

Ատենախոսության սկզբում հեղինակն օգնության է կանչում Սուրբ Հոգուն և Քրիստոսին («Եկեսցէ յիս գթությունք քո Տէր Աստուած իմ Յիսուս»), որպեսզի բարեհաջող սկսի և ավարտի հրապարակային իր առաջին ելույթը: Այնուհետև դիմում է Աստծուն՝ հայտնելով, որ ինքն իր ողջ կյանքում վայելել է Նրա գթությունն ու հովանավորությունը, մինչև որ արժանի է համարվել անգամ բարձրագույն պատվի՝ «կոչման վարդապետութեան»։ «յաղագս որոյ, - շարունակում է նա, - անվճար երախտեաց պարտական եղեալ», պատրաստվում է նախ նրան հատուցել «երեխայրիս կալո իմո եւ հնձանի եւ զանդրանիկս բանական համարձակութեանս՝ զպտուղ շրթանց՝ խոստովանութեամբ հաւատոյ ուղիղ դաւանութեան...», ապա, շարադրելով իր դավանանքը, որպես Հայ եկեղեցու վարդապետ խնդրում է տալ իրեն «զլրումն շինուածոյ լայնութեան եւ երկայնութեան, խորութեան եւ բարձրութեան, Հին եւ Նոր Կտակարանաց... ընթանալ ինձ ի խորս անսահման ծովուն, բանալ զանդունդս գրոց եւ խոր իմաստից եւ անտուտ հանել արժանաւոր ինչ փարթամություն՝ յաւգուտ ինձ եւ Սիրոնի սրբոյ...»:

Այնուհետև հայտնում է, որ որպես բնաբան իր ատենախոսության ընտրել է Պողոս առաքյալի «Այլ եկեսցէ ար Տեառն իբրեւ զգող...» արտա-

հայտնությունը¹ և չափազանց պատկերավոր ու գեղարվեստական դարձվածքներով հայտնում է, որ Տիրող Դատաստանի օրը պիտի գա բոլորի համար անսպասելիորեն, ինչպես գող, «որ ի գիշերի, յանպատրաստից, մինչ ի քուն կայցէ տանուտէրն, ի վերայ հասանէ...», ուստի Դատաստանից որպես արդար դուրս գալու և անդրաշխարհային երանությունները վայելելու համար անհրաժեշտ է «սիրտ սուրբ ունել եւ վարս պարկեշտս եւ զհոգի ուղիղ», լինել «պարկեշտ վարուք, մեղմ հայեցւածովք եւ անզբաղ մտաւք», (77բ) չաղտեղվել «մեղաւք կամ ապականեալ շարաւահոտութեամբ... արբեցութեամբ կամ շւայտութեամբ», այլ լինել ըստ ամենայնի անբիծ և անարատ, իսկ՝

«Անբիծ եւ անարատ զկատարեալ առաքինին ասէ, որ ոչ խորշ ինչ մեղաց ունիցի եւ ոչ կարկամութեան, այլ յամենայն լուսափայլ, ամենայնի սուրբ ի մեղաց... Անբիծ եւ անարատ այն է, որ ով եւ ոչ միով իւրք իցէ մեղուցեալ, ոչ մեծ մեղաց, ոչ փոքրագունից, զի թէ ոք ազատ է պոռնկութենէ, եւ յարատ է աչքն՝ չէ անարատ եւ անբիծ, եւ թէ ոք ազատ է երդմնահարութենէ եւ ի ստախօսութենէ եւ ի մատնութենէ, բայց բամբասող կամ խեղկատակ կամ տրտնշող կամ առ ուկն ճառ (իմա՛ ունկնճառ) եւ չարախօս՝ ոչ է այնպիսին անբիծ եւ անարատ...» (էջ 79բ):

Կատարյալ գեղարվեստորեն նկարագրում է բնության զարթոնքը, գարունն իր ծաղիկներով, նորածիլ բույսերով, որպեսզի, զուգահեռ անցկացնելով իրական և անդրաշխարհային կյանքի միջև, շեշտի վերջինիս կատարելությունն ու գեղեցկությունը.

«Եւ եթէ երկիրս այս անցաւոր է, - գրում է նա, - այսպէս զարճացուցանէ զմեզ, եւ երկին հստակ օդով՝ երեւե(ա)լ գեղեցիկ եւ վայելուչ եւ ցանկալի, եւ արեգակն վճիտ լուսով պայծառանա, եւ լուսինն եւ պարք աստեղացն զբոլոր գիշերն շահաւորեն, եւ երկիր ի գարնանային հասանելով ժամանակ խնդամտաբար եւ ծիծաղական զինքն՝ ի ձեռն ծաղկանցն ցուցանելով գեղեցիկ... տեսողացն երեւի, եւ խնդութեան պատճառ <ք> լինի ծառաւք եւ ծաղկաւք եւ բուսովք զարդարեալ... ապա զի՞նչ իմանամք եւ կամ զի՞նչ զմտաւ ածեմք զնոր երկին... եւ երկիր...» (էջ 79ա):

Ընդհանրապես տեղին է նշել, որ ավարտական բոլոր ատենախոսությունները գրված են գեղարվեստական մեծ կատարելությամբ, անգամ ամենավերացական գաղափարները և մտքերը շարադրված են կյանքից վերցված պատկերների, բնության նկարագրությունների հետ շարահյուս-

¹ Ա. Թեա. Ե 2:

ված: Ատենախոսությունների մեծ մասը կարդացվում է որպես գեղարվեստական արձակ ստեղծագործություններ:

Ըստ երևույթին, գլաձորյան համալսարանում լուրջ ուշադրություն էին դարձնում իրենց սաների քարոզչական ապագայի վրա և վարժեցնում նրանց իրենց ատենախոսությունները գրավիչ ու հետաքրքիր դարձնելու գործում առաջնորդվելով հավանաբար այդ ժամանակ արդեն գոյություն ունեցող «Վասն քարոզի եւ քարոզչաց» խրատական հոդվածով¹: Վերոհիշյալ հոդվածը, որ պարունակում է տասը խորհուրդներ՝ քարոզը հետաքրքիր, բովանդակալից և ունկնդիրներին մատչելի դարձնելու մասին, առաջարկում է երկար քարոզելու դեպքում «ի յուրախացնող եւ ի սիրտ բացող բաներու զրուցէ, որ մարդկանց սիրտն չի ժխորի եւ չի ձանձրանայն»²: Ատենախոսը հետևել է այս խորհուրդին: Բարոյական իր հետաքրքիր խրատներից ու դատողություններից հետո նա հայտնում է, որ «այսչափ ասացեալքս բաւականացի ի մեր նւաստութենէս», և համեստորեն շարունակում է. «եթէ էր ինչ եւ արգասաւոր եւ մաւտ ի լան՝ Աստուծոյ (է) շնորհ եւ ձեռոց (ունկնդիրների) յաւժարամտութեան եւ աղօթից, ապա թէ արտաքո լաւին եւ յոյժ հեռի ի ճշմարտութենէն՝ այն մեր հեղգութեանս եւ փոքրատար ամանի մտացս...» (էջ 80ա):

Ատենախոսության վերջում օրհնությունների երկար մի շարք է բերված, ուր հիշվում են համարյա Հայ եկեղեցում պաշտվող բոլոր սուրբերն ու սրբությունները.

«Աւրհնեալ ես դու, Ամենասուրբ Երրորդություն... արհնեալ ես դու, ամենակալդ Աստուած...» և այլն և այլն:

Այնուհետև գալիս են բարեմաղթություններ՝ ուղղված համալսարանի հովանավոր բարեպաշտ իշխաններին, վանական միաբանութեան անդամներին, գիտնական ուսուցիչներին, աշակերտակիցներին և ատենախոսությունն ունկնդրելու հավաքված հանդիսականներին.

«... Թագաւորն թագաւորաց եւ կյանքն աշխարի Քրիստոս զօրացուցէ... զամենայն թագաւորան քրիստոնէից եւ յաղթողս արասցէ ամենայն թշնամեաց... արհնեսցէ... զսուրբ ուխտս զայս եւ զբնակիչս(ս) սորա... եւ զմիաբան եղբայրութիւնս զայս. եւ զգիտնական եւ զարդիւնական սուրբ րաբունիսս, զհայր եւ զհոգաբարձու եւ զառաջնորդ սրբոց, զփակակալ սուրբ եկեղեցոյս եւ զամենայն բանարար զարդիւնատուք եւ զմիաբանքն՝

¹ Հոդվածը մեզ ծանոթ է մեր Մատենադարանի N 771 գրչագրից (էջ 261-64), վերնագրել ենք մենք:

² Նույն տեղում, էջ 264:

աւրհնեսցէ Քրիստոս Աստուած ամենայն հոգեւոր աւրհնութեամբ, որ ոչ անցանէ... Եւ աղօթիւք ձերօք եւ բարեխօսութեամբ ամենայն սրբոց, մեզ եւ մերոցն սնուցողաց եւ բարեկամաց եւ երախտաւորացն՝ մեռելոց եւ կենդանեաց լիցի գտանել մասն ողորմութեան յաւուրն դատաստանի ի կարե(ա)ց ժամուն, ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն»:

Այս և առավել շափով նաև մյուս ատենախոսությունների բնորոշ գծերից մեկն էլ նրանց հեղինակների առանձնակի սերն է դեպի փիլիսոփայությունը, որը շնորհիվ և փիլիսոփայական դատողությունների առատություն է նկատվում նրանց ատենախոսություններում: Գլաձորյան համալսարանականների այդ սերը մեզ համար հասկանալի է ու բնական:

Այսպես օրինակ՝ 49ա էջից սկսվող ատենախոսության մեջ ժամանակի գիտության կողմից ընդունված՝ «արուեստ» հասկացողության բնորոշումը ձևակերպված է հետևյալ հստակ նախադասությամբ.

«Արուեստ է գումարումն հաւաքման յառաջակիրթ արանց, զոր գտեալ եւ կրթեալ փորձիւ թողին այնոցիկ, որ գկնի գալոց էին, վասն պիտանացու ինչ իրաց եւ կարեաց աշխարհայնոց» (էջ 49բ):

Վերը շարադրված ատենախոսության մեջ արարչության մասին կա հետևյալ հետաքրքիր դատողությունը.

«Արար Աստուած զերկինս եւ զհրեշտակս, զլոյս եւ զերկիր եւ զջուր եւ զհող եւ զաւդ, եւ են¹ արարածք մեծամեծք եւ գլխաւորագոյնք, իսկ այլ արարածքդ ծայրք են եւ ծնունդք ի սոցանէ յառաջ եկեալք եւ շարախառնեալք ի զանազան կեպս եւ ի տեսակս, որպես հուր, զի ծնաւդ է լուսո եւ ցուցիչ բնութեան նորա, զի առանց հրոյ լոյս ոչ երեւի. եւ երկիր ծնաւդ է ջրոյ եւ աւդո եւ պատճառ գոյացութեան նոցա...» (էջ 75բ):

Կենդանական աշխարհի բազմակերպությունն ու բազմատեսակությունը դիտելով որպես հիմնական, Աստուծո կողմից ստեղծված, սակավաթիվ «մեծամեծ եւ գլխաւորագոյն» արարածների զարգացման արդյունք՝ ատենախոսության հեղինակը, անկախ այն բանից, թե տվյալ դեպքում շարադրում է իր սեփական կարծիքը, թե կրկնում է մի ուրիշին, հակադրվելով Աստվածաշնչին, հայտնում է ժԳ համար շափազանց առաջադեմ հայացք՝ բնության և կենդանական աշխարհի բազմազանության պատճառների բացատրման տեսակետից:

¹ «Եւ են» բառերը դժվարությամբ են ընթերցվում գրչագրում, թեևս նպատակահարմար լինի այն ուղղել «որ են» բառերով, որ ավելի հստակ կդարձնե նախադասության իմաստը:

Այսպիսով, գլխավորապես համալսարանականների ավարտական ատենախոսությունների երևան գալով մասամբ լրացվում է այն բացը, որ ցարդ գոյություն ունեւ մեր միջնադարյան համալսարանների գործունեության ու ներքին կյանքի ճանաչման բնագավառում: Իսկ մեր մատենագրության պատմությունը հարստանում է պատմագեղարվեստական մեծ արժեքներ ունեցող մի ժանրով:

Գլխավորապես համալսարանը՝ ատենախոսությունների հեղինակների «մայրն իմաստից»՝ իր «գիտնական եւ արդիւնական» վարդապետներով, միջնադարյան քաղաքական, գիտական եւ եկեղեցական կյանքում ամենաառաջնակարգ դեր խաղացած շրջանավարտներով, հառնում է մեր առաջ որպէս ուսումնական մի հաստատություն, որ հիմնադրված լինելով գերմաներէն լեզվով ամենահին համալսարանից (Պրահա) շուրջ ութսուն տարի առաջ, եւ համարյա հասակակից լինելով եվրոպական գիտական մտքի ամենահեղինակավոր հաստատություններից մեկին՝ Փարիզի համալսարանին, մրցում է նրա հետ թե՛ իր կատարած մշակութային եւ կրթական դերով, թե՛ թողած մատենագրական հարուստ ժառանգությամբ եւ թե՛ դասավանդված գիտությունների բազմազանութեամբ ու խորությամբ:

ՄԱՏԹԵՈՍ ԶՈՒՂԱՅԵՑՈՒ ԿՅԱՆՔԻՆ ՈՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

Հայ միջնադարյան մատենագրության պատմությանը նվիրված ձեռնարկներում և բանասիրական աշխատություններում դեռևս շատ կան թուուցիկ հիշատակված այնպիսի գործիչների անուններ, որոնք, ճանաչված ու անվանի լինելով իրենց ապրած ժամանակներում, այժմ լիակատար մոռացության են մատնված: Այդպիսի գործիչներից մի քանիսի ձեռագիր աշխատությունների ուսումնասիրությունից ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ մեր ժողովրդի պատմության հետ կապված մի շարք շուսաբանված ու կնճռոտ հարցեր հնարավոր է պարզաբանել հենց այդ մոռացված հեղինակների աշխատությունների միջոցով:

Այդպիսի մի մատենագիր է ԺԳ դարի վերջին և ԺԵ դարի առաջին տասնամյակներում ապրած ու ստեղծագործած Մատթեոս Զուղայեցին: Միջնադարում Մատթեոս Զուղայեցին համարվել է նշանավոր հայ մեկնիչներից մեկը. նրա աշխատությունները զգալի չափով ընդօրինակվել ու տարածվել են և՛ Հայաստանում, և՛ հայաշատ գաղթավայրերում:

ԺԷ դարի հեղինակ Վարդան Բաղիշեցին «Ով ոք են արարեալ զլուծմունս եւ զքաղուածոյս Աստուածաշունչ Գրոց» ցուցակի մեջ, Գր. Տաթևացու և Առաքել Սյունեցու աշխատությունների թվարկումից անմիջապես հետո, տեղ է հատկացնում Մատթեոս Զուղայեցուն և տալիս նրա կարևոր աշխատությունների ցանկը. այսպես՝ «զԼուկասու գլխոյ քաղուածուն եւ զՅոհաննու գլխոյ փոքր քաղուածուն. զԳործոց քաղուածուն եւ Մ քարոզ Մատթէոս Զուղայեցին է արարեալ՝ աշակերտ Գրիգորի Տաթևացոյն»¹:

1750 թվականին Կ. Պոլսում լույս է տեսնում Մատթեոսի «Վասն քարոզութեան բանի՝ առեալ ի վարդապետութենէ սուրբ հօրն Եւագրեայ...» աշխատությունը, հրատարակիչ Հովհաննես դպրի ստեղծած՝ «Գիրք ութն խորհրդոց մեղաց՝ արարեալ սրբոյ հօրն Եւագրեայ եւ հաւաքեցեալ ի մի յոգնաշան երկամբ Մատթէոսի վարդապետի բանասիրի» խորագրով:

Հանրահայտ է, որ կաթողիցիզմի և հայ ունիթոոների դեմ հատկապես ուժեղ պայքար ծավալվեց Հայաստանում ԺԳ դարի երկրորդ հիսնամյակում Տաթևի դպրոցի հիմնադիրներ ու ղեկավարներ Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և նրանց բազմաթիվ աշակերտների կողմից: Այդ աշակերտներից էր նաև Մատթեոս Զուղայեցին, որի մասին «Պատմութիւն հայերէն դպրութեան» երկհատորանոց ընդարձակ աշխատության մեջ Գ. Զարբհա-

* «Բանբեր Մատենադարանի», N 3, 1956, էջ 57-84:

¹ Մատենադարան, ձեռ. N 8444, էջ 182ա-182բ:

նալյանն անհրաժեշտ է համարել գրել ընդամենը մի-երկու տող¹: Իսկ բանասեր Բ. Սարգսյանը համարել է նրա լեզուն «գոեհիկ», մեկնաբանությունները՝ «ցամաք» և հայտարարել, որ նա իբր Տաթևի դպրոցից դուրս «բազմաթիւ ընթերցողներ ունեցած պիտի չըլլայ»²:

Գ. Զարբհանալյանի աշխատության առաջին տպագրությունից (1878 թ.) անցել է շուրջ 80 տարի, բայց, ցավոք, շատ աննշան բան է արված Մատթեոսի կենսագրության և նրա թողած ձեռագրական հարուստ ժառանգության ուսումնասիրման ուղղությամբ: Միակ ուշադրության արժանի աշխատանքն այս բնագավառում պետք է համարել հանգուցյալ մեծանուն ու բազմավաստակ հայագետ Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի» 3-րդ հատորում Մատթեոսի մասին գրված հոդվածը: Այստեղ հայերեն ձեռագրերի հրատարակված ցուցակներից հավաքված են նրա աշխատությունների վերնագրերը, մի երկու խոսք է ասված նրա կենսագրության մասին, ինչպես նաև նշված են հայագիտական բոլոր այն փոքրաթիվ ուսումնասիրությունները, որոնցում այս կամ այն առիթով հիշատակված է Մատթեոսի անունը:

Մեր սույն համառոտ հաղորդմամբ փորձում ենք Մատթեոս Զուղայեցու մեզ հասած բոլոր աշխատությունների և նրա մասին առկա մատենագրական տվյալների օգտագործմամբ առաջին քայլն անել շատ կողմերով ուշադրության արժանի և հետաքրքրաշարժ այդ մատենագրի կյանքն ու գործունեությունն ուսումնասիրելու ուղղությամբ:

Մատթեոսի ծննդյան թվականի մասին սկզբնաղբյուրները չեն պահպանել որևէ տվյալ: Որպես ճանաչված մեկնիչ նա հրապարակ է իջել ՓՊ դարի 90-ական թվականների սկզբներին, ուստի կարելի է ենթադրել, որ ծնված պետք է լինի նույն դարի 50-ական թվականներին:

Բ. Սարգսյանը եվագր Պոնտացու մասին գրած ուսումնասիրության մեջ, հարևանցիորեն անդրադառնալով Մատթեոսին, «հաւանօրէն ծննդեամբ Երզնկացի» է համարում նրան³: Սակայն մեզ հայտնի բոլոր աղբյուրները⁴ միաբան վկայում են այն մասին, որ Մատթեոսը Զուղայեցին է:

¹ «Մատթէոս վարդապետ վեցօրեայ արաշուքեան վրայ Մեկնութիւն մը (ունի), յիսուն այլ եւ այլ Քարոզք, յորոց երեք միայն հասած են առ մեզ՝ Աւետարանչաց ու Գործոց համառօտ մեկնութիւններ, Եւագրի գրոց քաղուած մը» («Պատմ. հայերէն դպրութեան», Բ, էջ 219-220):

² «Մրբոյ հօրն Եւագրի Պոնտացոյ վարք եւ մատենագրութիւնք», Վեներիկ, 1907, առաջաբանը՝ Բ. Սարգսյանի, էջ ձեռ-ձեռն:

³ «Մրբոյ հօրն Եւագրի Պոնտացոյ վարք եւ մատենագրութիւնք», էջ ձեռ:

⁴ Թովմա Մեծոփեցի, էջ 50-51 Վ. Բաղիշեցի, նեո. N 8444, էջ 182ա-182բ և այլք:

ԺԴ դարում հին Զուղան փոքրիկ մի գյուղաքաղաք էր: Գտնվելով Արաքսի նշանավոր այն կամրջի մոտ, որով անցնում էր միջագային նշանակություն ունեցող քարավանային ճանապարհներից մեկը¹, պետք է ենթադրել, որ դեռևս այդ ժամանակ Զուղան այս կամ այն չափով վերածվել էր առևտրական մի հանգրվանի, իսկ շուղայեցիները, որպես առևտրականներ ու միջնորդներ, մասնակցում էին այդ առևտրին: Թերևս նաև դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Մատթեոսի աշխատությունները լի են առևտրի ու արհեստագործության մասին ուշագրավ բազմաթիվ տվյալներով:

Մատթեոսի տարբեր աշխատությունների մեջ գրանցված են տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս եզրակացնելու, թե մեր հեղինակն իր կյանքի առաջին շրջանում (մինչև Տաթևում հաստատվելը) շրջագայություններ ու ճամփորդություններ է կատարել Հայաստանում և հարևան երկրներում:

Ավելորդ չի լինի ծանոթանալ նրա աշխատությունների վերը ակնարկված տվյալների հետ:

Այսպես, Կոստանդնուպոլսում լինելու մասին Զուղայեցին խոսում է իր քարոզներից մեկում, որը կրում է «Քարոզ սուրբ Խաչի...» խորագիրը: Այստեղ նա պատմում է, թե ինչպես արաբական արշավանքների ժամանակ Կ. Պոլիսը փրկվել է կործանումից, և աշխատում է համոզել իր ունկնդիրներին, որ այդ կատարվել է սուրբ Խաչի զորությունով: Այս կապակցությամբ ի միջի այլոց նա ասում է նաև, որ «իմ ականատես եղեալ սուրբ տեղեացն (Կ. Պոլիսի) եւ համբուրեալ»²:

«Բան յԱւետարանէն Յովհաննու» աշխատության մեջ Մատթեոսն աշխատում է բացատրել «օն» ձայնարկությունը և հայտնում է, որ դա ըստինքյան բան չի նշանակում, «զի բառ է երկրէ, որպես Սեբաստացիք կաճ ասեն, եւ Կարնոյ քաղաքացիք՝ տի, արճիշեցիք՝ անէ, իսկ իւլաթեցիք, որ է Բզնունիք՝ օ ասեն յամենայն բանի»³:

¹ Այդ կամրջի մասին 16-րդ դարի բուրդ պատմիչ Շարաֆ-բեկը գրում է հետևյալը. «Կամուրջը հիմնված է տաշած ժայռի վրա անխախտ ամրությամբ, վերևը՝ զարմանալի հարթ, և քարերը միացած են այնպես կանոնավոր և ամուր կերպով, որ ամենահնարագետ հարտարապետը պետք է զարմանա: Կամարներն այնքան բարձր ու երկայն են, որ հիմի հիմքերի սրունքը 60, մյուսինը 50 պարսկական բազուկ է: Կամարի ստորին մասում շինված է քարավանասար, իսկ երկու ծայրումը՝ դռներ՝ զարմանալի գեղեցկությամբ» (ՀԱ, 1899, էջ 66):

² Ձեռ. N 2229, էջ 230բ:

³ Ձեռ. N 5871, էջ 34ա:

Դժվար է պնդել, բայց հավանական է ենթադրել, որ մեր հեղինակն անձամբ եղել է Սեբաստիա, Կարին, Արճեշ և Խլաթ քաղաքներում և իր այցելած վայրերում ուսումնասիրել է ժողովրդի լեզուն, բառ ու բանը:

Նրա քննասեր ու խուզարկու բնավորության մասին ավելի ցայտուն վկայություն է պահպանված «Քննութիւն Գործոց առաքելոց» աշխատության մեջ: Այստեղ առիթ է ներկայանում խոսելու գողի (բորոտություն) հիվանդության մասին: Մոկաց երկրում գողի ցավով տառապողներ շատ տեսնելով և ձգտելով որոշել դրա հարուցիչները՝ Ջուղայեցին ուշադրություն է դարձրել մոկացիների սննդի վրա և, պարզելով, որ նրանց սննդի մեջ մեծ տեղ է բռնում ծանրամարս կորեկի հացը, մեղրն ու ընկույզը, եկել է այն եզրակացություն, որ «այս (ցան) տնկի ի տաք կերակրոյ՝ ի մեղրէ եւ յընկուզոյ եւ ի կորեկէ հացոյ: Եվ այս է պատճառն Մոկաց երկրին, յորում բազումք գողիք լինին»¹:

Վերոհիշյալ «Քննութիւն Գործոց առաքելոց» աշխատության մի այլ հատվածից, որի հետ առիթ կունենանք ծանոթանալու այլ կապակցություններ, պարզվում է նաև, որ մեր հեղինակը հավանորեն շրջագայել է նաև Խաչենի շրջաններում: 1392 թ. եղել է Մակվում. Մխիթարիչ Ապարանեցին այդ թվականին Մակվում գրած մի ձեռագիր հիշատակարանում վկայում է. «Ի գեղս որ կոչի Մակու, առ պարոնութեամբ տէր Զաքարիայի մեծ կրանաւորի եւ ըրբունապետիս Մատթէոս վերակոչեցեալ, ի թվականութեան մարդեղութեան Տեառն ՌՅՂԲ» («ԺԱ դարի հիշատակարաններ», հտ. Ա, էջ 61):

1393 թվականից մեկ կամ մի քանի տարի առաջ Մատթեոսը եղել է նաև Աղթամարում²: Նրա աշխատությունների ավելի մանրակրկիտ հետազոտության ճանապարհով թերևս կարելի կլինի ընդարձակել մեր հեղինակի ճանապարհորդությունների շրջանակները³: Մակայն մեջբերված տվյալներն էլ միանգամայն բավարար են ցույց տալու համար, որ հանձին Մատթեոս Ջուղայեցու մենք ունենք մի մատենագիր, որը բնավ չի բավարարվել վանական սահմանափակ «իմաստութիւններով», այլ, շրջագայելով Հայաստանում և Հայստանի սահմաններից դուրս, չփվել է աշխատավոր ժողովրդի հետ, ծանոթացել է նրա նիստուկացին և զբաղմունքներին, ուսումնասիրել է կյանքն իր տարբեր կողմերով և, ինչպես կտեսնենք ստորև, իր աշխատությունների մեջ լայնորեն օգտագործել է իր մթերած գիտելիքներն ու ուշագրավ դիտողությունները:

¹ Ձեռ. N 1402, էջ 13ա:

² Ձեռ. N 969, էջ 107բ:

³ Ենթադրում ենք, օրինակ, որ նա պետք է եղած լինի նաև Հոռոմում:

Որտեղ է ստացել Մատթեոս Զուղայեցին իր նախնական կրթությունը՝ չգիտենք: Պարզ է, սակայն, որ նա իր երիտասարդական տարիներին ուսումնասիրել է ոչ միայն հայ մատենագրությունը, այլ նաև տիրապետել է արաբերեն գրավոր լեզվին, ծանոթացել է մահմեդականների կրոնական գրքերին այն աստիճան, որ անհրաժեշտության դեպքում կարողացել է քաղվածքներ անել նրանցից¹ և տալ յուրովի մեկնաբանություններ:

Մատթեոսը բարձրագույն կրթություն է ստացել Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու համալսարաններում. «Աշակերտ տեառն Յովհաննու Որոտնեցույն», «նուսստ եւ յետին աշակերտի եռամեծացն Յովհաննու եւ Գրիգորի», «նուսստ Մաթէոսի վարդապետի՝ աշակերտի եռամեծին Գրիգորի», «յաշխատութենէ վարժապետին իմո Գրիգորի մեծի» և նման այլ արտահայտություններով, որ հանդիպում են Մատթեոսի աշխատությունների վերնագրերում և հիշատակարանների մեջ, նա իր հարգանքն է մատուցում իր նշանավոր ուսուցիչներ Հովհ. Որոտնեցուն և Գր. Տաթևացուն:

1391 թվականին Երնջակի Ապրակունյաց վանքում Զուղայեցին շարագրում է թվական ունեցող իր աշխատություններից անդրանիկը՝ «Մեկնութիւն Դուկասու Աւետարանին»: Պարզ է ուրեմն, որ Գ. Տաթևացու մանկավարժական ինքնուրույն գործունեության սկզբից (1386 թ.) ընդամենը 4-5 տարի հետո մեր հեղինակն արդեն դուրս էր եկել աշակերտական շրջանից և շարագրում էր մեկնողական աշխատություններ:

Նույն այս տարիներին (1393-ից առաջ, հավանաբար 1392 թվականին) լինելով Ախթամարում Մատթեոսը վեճի է բռնվել մահմեդական մի դանիշմանի հետ և շարագրել է այդ վեճի բովանդակությունը՝ ի խնդրո Շիրիան գյուղի տանուտեր Աբիսողոմի՝ «Վասն հարցման անօրինաց, զանազան պատասխանիք» խորագրով:

Վերոհիշյալ փաստերը վկայում են այն մասին, որ մեր հեղինակը ԺԳ դարի 90-ական թվականների հենց առաջին տարիներին, դուրս գալով ուսումնառական շրջանից, ճանաչված վարդապետ էր Սյունիքում և Վասպուրականում:

Ծանր տարիներ էին դրանք հայ ժողովրդի համար: Կանկ-Քամուրի արյունարբու զորքերն ասպատակում էին Հայաստանի նահանգներն ու շրջանները, սպանում ու գերեվարում խաղաղ բնակչությանը, թալանում և ավե-

¹ Այդպիսի ֆաղվածքներ գտնում ենք նրա «Վասն հարցմանց անօրինաց» աշխատության մեջ. բերենք մեկ օրինակ. «Զայն որ ի ձեր մսաֆն գրած է ի ԻԷ (27) վարագն, թէ Յիսէ ռաւոկլլան եւ ֆալիմաթուհու...» և այլն (ձեռ. N 3854, էջ 298բ):

րում գյուղերն ու քաղաքները: «Ի ժամանակի նեղութեան, ուր աւերեալ քակեաց զաշխարհս ամենայն հուրն հարաւային Թամուր կոչեցեալ», - գրում է այդ մասին Մ. Զուղայեցին 1395 թվականին Տաթևի վանքում¹:

Թամուրի զորքերն ամբողջ 13 տարի («յՊլե ամէն մինչեւ ի Պե՛՛՛՛ ամ թուականին») պաշարման մէջ էին պահում Երնջակի անառիկ բերդը, ուր գտնվում էր Զելաիրյան Ահմեդի որդի սուլթան Թահիրը: Ուշագրավ է, որ Երնջակի բերդում պաշարման մէջ է եղել նաև Մատթեոս Զուղայեցին: Այնտեղ է շարադրել նա Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված մի գեղեցիկ տաղ, որտեղ ականարկներ կան նաև հայ ժողովրդին հասած ծանր հարվածների մասին.

«Մեծի հանդիսի աուրս
Առ քեզ պաղատիմ, Յիսուս,
Սուրբ ըզհայրապետն Յակոբ
Առ քեզ բարեխաւս ընկալ.
Աստանաւ Վրտանկ հասեալ,
Ով սուրբ հայրապետ ընտրեալ.
Զորդիս քո գերի վարեալ,
Զաւան քո հանդիսի ցրւեալ...» և այլն²:

Երբ և որքան է Երնջակում պաշարման մէջ մնացել մեր հեղինակը՝ չենք կարող որոշել: Հայտնի է սակայն, որ 1393 թ. նա գտնվում էր Տանձափարախ անապատում՝ Տաթևի վանքին դեմ առ դեմ, ձորակի մյուս կողմը: Այստեղ «նստեալ լռիկ ի տան»՝ նա շարադրել է «Վասն քարոզութեան բանի» իր աշխատությունը: 1395 թ. նրան գտնում ենք Տաթևում, ինչպես ինքն է ասում՝ «պանդխտական կեանօք». մի արտահայտություն, որը վկայում է այն մասին, թե Մատթեոսն իրեն պատահական ու ժամանակավոր հյուր էր համարում այդտեղ:

Սակայն, ըստ երևույթին, հենց այդ թվականին նա մշտապես հաստատվում է Տաթևում և նշանակալից դեր է կատարում Տաթևի համալսարանի կյանքում: Շուտով նա այնպիսի փորձառություն է ձեռք բերում դասախոսական ասպարեզում, որ մի քանի տարի անց Գ. Տաթևացին նրան է արժանավոր համարում՝ լինելու իր ժառանգորդը, և Մատթեոսն աշակերտների

¹ «ԺԳ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», կազմ. Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 613:

² Ձեռ. N 425, էջ 46բ-47բ:

խնդրանքով և բողոքի հաճությամբ նստում է «յաթոռ տէլէտուլթեան»¹, այսինքն՝ դառնում է Տաթևի համալսարանի գլխավոր վարդապետներից մեկը: Այս մասին շատ կողմերով հետաքրքրական իր հիշատակարանի մեջ տվյալներ է հաղորդում Թումա Սյունեցի գրիչը Ծար գավառի Քարավաճառ գյուղում 1402 թվականին: Նա գրում է, որ Գրիգոր Տաթևացին, «ունելով որդի հարազատ եւ ժառանգ վարդապետութեան իւրոյ՝ զծաղկեալն ամենայն բարութեամբ եւ զարդարեալն ամենալի շնորհիւ՝ վարդապետական խոհեմութեամբ եւ փիլիսոփեական արհեստիւ՝ զախոյանն ընդդէմ հերձուածողաց՝ զվարդապետն Մատթէոս, զոր յայսմ ամի (= 1402 թ.) կամակցութեամբ Սուրբ Հոգոյն եւ ջանիւ վարդապետին Գրիգորի եւ աղաչանաւք գրոց աշակերտեալ անձանց նստաւ յաթոռ տէլէտուլթեան, զոր Տէր Աստուած վայելել տացէ եւ պահեսցէ զսոսայ հայր որդով բերկրեալ՝ պսակ պարծանաց կաթողիկէ եկեղեցւոյ»²:

1407 թվականի ինքնագիր մի հիշատակարանից պարզվում է, որ Մատթեոսը միաժամանակ վարում էր Տաթևի վանքի վանահայրուլթյան պաշտոնը. «որ ի շար ժամու եղէ քաղաքապետ եկեալ ի սուրբ ուխտս եւստաթէի», - գրում է նա³:

Ժամանակի քաղաքական անցուղարձերի արժեքավոր նկարագրությամբ՝ Մատթեոսը մի այլ հիշատակարան է շարադրում նույն 1407 թվականին ոմն Մըմբարաքշահի պատվերով ընդօրինակած Ավետարանի վերջում: Նա հայտնում է, որ ձեռագրի ընդօրինակուլթյունը կատարվել է «ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որում ազգն նետողաց անջինջ կորաւ, եւ փոխանորդ նորին իշխեց աթոռոյս Ատրպատականի թորգոմածին* Ղարա-Ուսուֆ անուամբ. որ եւ մարտեաւ երկու անգամ եւ յաղթահարեալ զոմն ի թոռանց շար գազանին Թամուրին՝ շարաբարու, ահեղատեսիլ եւ շարասիրտ՝ անուամբ Աբ[ուբաքր]: եւ այն եւս ի վերին խնամոցն ամենակարողին Աստուծոյ, որ ազատեաց աշխարհս ի յայն անիրաւ խնդրողացն, որ եւ զամենայն ազգ եւ զամենայն լեզու ի ներքո նոցա հնազանդ եւ գերի կային, որում ազատեաց զմեզ Փրկիչն Յիսուս Քրիստոս...»⁴:

¹ Յուն. ὀτελειωτη'ζ - կատարյալ բառից:

² «Փե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին (1401-1450 թթ.), կազմ. Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 25:

³ Նույն տեղում, էջ 77:

* [Իմա՝ բուրժմեն: Խմբ.]

⁴ «Փե դարի հիշատակարաններ», էջ 76:

Մատթեոսը, ինչպես և ողջ հայ ժողովուրդը որոշ հույսեր էին կապում թամուրյանների պարտության հետ: Կարծում էին, թե Ատրպատականում և Հայաստանում իշխանությունը գրաված նոր տիրակալները բարվոքելու են ժողովրդի ծանր վիճակը: Սակայն բոլորի հետ մեկտեղ Մատթեոսը ևս շատ չանցած համոզվեց, որ անհիմն ու սին էին բոլոր այն սպասելիքները, որ ակնկալվում էին Կարա-Կոյունլուների հաղթության առնչությամբ:

Քաղաքական խորին հուսախաբույթյուն ու հոգեկան ծանր վիճակ էր ապրում 1410-1411 թվականներին Մատթեոս Զուղայեցին:

Մտայլ գուշներով է նկարագրում իր ապրած օրերը մեր հեղինակը Գրիգոր Տաթևացու թաղման կապակցությամբ արտասանած դամբանականի մեջ, ինչպես նաև իր գլուխգործոցը կազմող «Քննութիւն Գործոց առաքելոց» արժեքավոր աշխատության ընդարձակ հիշատակարանում: Մեջբերում ենք մի ուշագրավ հատված այդ հիշատակարանից. «Ի սպառել ազգիս Հայկազեան եւ ի վերջին դարուս սառուցեալ ոգւոց տարածամ կորուսելոց՝ մեծ ի եւ փոքու, եւ ի ստորասուզեալ դասուն քահանայական եւ ի հարեալ ժանեաց բանսարկուին, յամս թվականի ՊԿ (1411), ի բռնակալութեան ազգին թորգոմեան (իմա՝ թուրքմեն Կարա-Կոյունլուների)... որ եւ յիշել եա զառաջին չարիսն Թամուր կոչեցեալ կաղին եւ ի նոյն վտանգի գոլով... Յայս դառնութեան ժամանակիս ես՝ նուսատ եւ խեղդամահ ի մեղս Մաթէոս, յետնեալս յիմաստից եւ տգէտս ի գիտնականաց եւ մնացեալս որբ ի յիմ հարազատագոյն հարանց՝ հոգեկանաց եւ մարմնականաց, որ եւ յայսմ ամի եղեւ զրաւ կենաց մեծ բաբունոյն իմոյ Գրիգորի... որոյ սուգն պաշարեաց զիս եւ ետ մոռանալ զառօրեայ կենցաղս...» և այլն¹:

Իր շրջապատում միսիթարական ոչինչ չի տեսնում մեր հեղինակը. ժողովրդի վիճակը ծանր է, հարկահանությունն՝ անտանելի, հայ իշխանները միմյանց օժանդակելու և զորավիզ լինելու փոխարեն կռվում են իրար դեմ, հոգևորականությունը՝ շահասեր, ամենուրեք տիրում է բռնություն, ավազակություն, խաբեբայություն և անբարոյականություն: Այս բոլորի մասին անչափ կարևոր ու հետաքրքրական տվյալներ է գրանցում իր վերջին աշխատության մեջ Մատթեոսը, իսկ Գր. Տաթևացու թաղման առթիվ արտասանած դամբանականում իր ժամանակի վիճակը նկարագրում է հետևյալ հուսահատ տողերով. «Ամենեքեան աքացէն զմիմեանս, խաժատեն զմարմինս իրերաց, բամբասեն զառաջնորդս իւրեանց, տրտնջան ի տանուտեառնէ իւրեանց. ի մարմինս մաշին, ի միտս տանջին, ի հարկահանաց ձանձրանան,

¹ Նույն տեղում, էջ 119:

յանօրինաց տառապին, զտիւ լան, զգիշերն ողբան, բարիքն տրտմին, եւ շարացեալքն ուրախանան: Եւ այս ամենայն վասն մեղաց մերոց»¹: Անձնական իր կյանքում ևս դառնություններ է ճաշակում Մատթեոս Զուղայեցին. նա բողոքում է իր աշակերտների ծուլութունից և միաբանակից «սուտ եղբայրներին» նյութած դավերից: «Այլ եւ անմեղադիր լինել աղաչեմ, - գրում է նա իր վերջին հիշատակարանում, - զի դառնութիւն ժամանակիս եւ աշխատանք (կամ «աղճատանք») չար խորհրդոց շփոթեալ աղտեղացուցին զհոգի եւ զմարմին իմ, մանաւանդ ծուլություն անգութ եւ անհնազանդ աշակերտաց վիրաւորեցին զիս, եւ յաւէտ վիշտք ի սուտ եղբարց, որք անհրաժեշտ վատթարութեամբ դառնացուցին զիս. վասն որոյ եւ ոչ կարացի զբովանդակն մակագրել, այլ զսակաւս ի բազմաց...»²:

1411 թվականից հետո Մատթեոս Զուղայեցու մասին որևէ հիշատակություն չենք գտնում: Այդ ժամանակ նա արդեն այնքան ծեր կամ հիվանդ է եղել, որ իրեն համարել է կանգնած «ի գերեզմանի դրան»³: Ե՞րբ են բացվել նրա առաջ այդ դռները՝ չգիտենք, ուստի և ծննդյան տարեթվի հետ մեկտեղ առայժմ անհայտ է մնում նաև Մատթեոսի մահվան տարեթիվը:

Մատթեոս Զուղայեցին ապրեց ստեղծագործական կարճատև կյանք: Տարեթիվ կրող նրա աշխատություններից անդրանիկը, ինչպես արդեն ասացինք, շարադրված է 1391, իսկ վերջինը՝ 1411 թվականին: Այսպիսով, մեր հեղինակը ստեղծագործել է ընդամենը 20 տարի: Սակայն այդ երկու «դառն ու դժար» տասնամյակներում նա շարադրել է պատկառելի քանակությամբ աշխատություններ, որոնց ամբողջական ցանկը, ճշտված վերնագրերով, տալիս ենք ստորև՝ հնարավորության դեպքում նշելով նաև յուրաքանչյուրի գրության տարեթիվը, շարադրման վայրը:

1. «Թ գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից եւ հոլով քարոզի ի մեկնութենէ Իգնատիոսի հայոց վարդապետի, ժողովեալ աշխատութեամբ Մատթէոսի աշակերտի Գրիգորի»⁴

¹ Նույն տեղում, էջ 120:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 121:

⁴ Օգտագործել ենք N 5332 ձեռագրում ընդօրինակված (էջ 58ա-154ա) բնագիրը: N 1345 ձեռագրում աշխատության վերնագիրը փոփոխվել է և չնայած այդ ձեռագիրն ընդօրինակված է ուշ շրջանում (1697 թ.), նրա երկրորդ մասն ավելի նախնական է թվում. «Թ գլխոյն Ղուկասու աւետարանչին, ի մեկնութենէ Իգնատիոսի սուրբ վարդապետին Հայոց, գոր յետոյ եւ՝ Մատթէոս վարդապետս, աշակերտ տեառն Յովհաննու Ռրոտնեցոյն ժողովեալ հաւաքեցի եւ արարի զայս քարոզած գիրքս առ ի յօգուտ ուսումնասիրաց անձանց» (էջ 6ա):

Շարադրել է Երնջակի Ապրակունյաց վանքում 1391 թվականին¹:

2. «Յովհաննու Ռոտնեցոյ արեգեալոյս բարունապետի արարեալ բան յաւետարանէն Յովհաննու, որ ասէ՝ Ի սկզբանէ էր Բանն եւ Բանն էր առ Աստուած»

Չնայած վերնագրում որպէս հեղինակ գրված է Հովհան Ռոտնեցոու անունը, բայց աշխատութիւնը, ինչպէս պարզվում է հիշատակարանից², հիմնականում շարադրել է Մատթեոս Զուղայեցին:

Հնդհանրապէս Մատթեոսը սիրում է իր աշխատութիւնների վերնագրերում նշել այն հեղինակների անունները, որոնցից այս կամ այն չափով օգտվել է այս կամ այն աշխատութիւնը շարադրելիս:

Սույն աշխատութեան գրութեան թվականը որոշ չէ, սակայն կարծում ենք, որ շարադրված պետք է լինի վերոհիշյալ՝ «Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից» աշխատութիւնից անմիջապէս հետո, որովհետեւ հիշատակարանում հեղինակը հայտնում է, «որ եւ այս տեսչութեան բանի ընդ նախասացեալ մեկնութեանն, որ ըստ Ղուկասու աւետարանին է՝ դիցի»³:

3. «Մատթէոսի վարդապետի՝ վասն հարցմանց անօրինաց զանազան պատասխանիք, զոր խնդրեալ բարեպաշտն Արիստղոմ մեծ տանուաւէրն Շիրիանայ»

Աշխատութիւնը շարադրել է «ի դրան սրբոյ Խաչին ի կղզոջն Ախթամարայ, ընդ խօսելն մեր ընդ վնասա[կա]ր եւ պիղծ դանիշմանին Ալի կոչեցելոյն, որ եւ յետոյ նա սպան զկաթողիկոսն Ախթամարայ զտէր Զաքարիա»⁴:

Ախթամարի Զաքարիա Բ կաթողիկոսը նահատակվել է 1393 թվականին, ուստի աշխատութիւնը գրված պետք է լինի 1393-ից առաջ:

4. «Համառօտութիւնք ի քաղաւոյն գործոց առաքելոց, զոր արարեալ է սուրբ վարդապետն մեր Մատթէոս, աշակերտ սրբոյն Գրիգորի Տաթեացոյն. ժողովեալ յամեմնէ Ղազար չնչին բանասիրէ»⁵

5. «Յետ քննութեան այնոցիկ, որ վերաբերին ի տնօրէնութիւն մարմնացեալ Բանին...»⁶

¹ «Թ Գ դարի հիշատակարաններ», էջ 591-592:

² «Թ Ե դարի հիշատակարաններ», էջ 121:

³ Տե՛ս լրիվ՝ «Թ Ե դարի հիշատակարաններ», էջ 121:

⁴ Ձեռ. N 969, էջ 107-112բ:

⁵ Բարբէն աթոռակալ կաթողիկոս, Յուցակ ձեռագրաց Ղալարիոյ ազգային մատենադարանին, Անթիլիաս, 1961, ձեռ. N 108, էջ 525-625:

⁶ Նույն տեղում, էջ 625-641:

6. «Նորին Մաթթեոսի վարդապետի ի մեկնությունն Յոհաննու Ոսկեբերանին կարճատ...»¹

7. Գանձեր ու տաղեր

ա) «Տաղ ազնիւ (Յակոբայ Մծբնայ հայրապետին) ի Մաթթեոս վարդապետէ»

սկ. «Մեծի հանդիսի ատուս...»

Շարագրել է Երնջակուժ պաշարված լինելով Թամուրի զորքերի կողմից, ուստի՝ 1386-1399 թթ. ընթացքում, թերևս մինչև 1391 թվականը: Տաղը ձայնագրված է բարդ ու բազմաքանակ խաղերով²:

բ) «Կանոն երեւման խաչին»

սկ. «Իսկակից Որդի Հար Բո հըզարի...»

Տների սկզբնատուերը հողում են հետևյալ բառերը՝ «Ի Մատթէոսէ, խնդրեաց Գրիգորն (Մերենց)»: Գանձն ունի տաղ ու հորդորակ, որոնք նույնպես ձայնագրված են երաժշտական ճոխ խաղերով³:

գ) «Կանոն մեծահրաշ կիրակէի»

սկ. «Միակդ ահաւոր

Տէր եւ զաւաւոր...»

Ակրոստիֆոս՝ «Մաթթեոսի է, խնդրեաց Գրիգոր»⁴:

դ) Գանձ մեծի երկուշաբթին»

սկ. «Ի սկզբան էին Արարեալ գերկին...»

Ակրոստիֆոս՝ «Ի Մաթթեոսէ, խնդրեաց Գրիգոր»⁵

ե) «Մեղեղի անոյշ (սրբոյ հայրապետաց Գ. Ժողովոցն) ի Մաթթեոս վարդապետէ»

սկ. «Միայն բանին հաւր իմաստնոյ

Ծառայ վայելուչ արժանիք պատուոյ...»

Ակրոստիֆոս՝ «Մաթթեոսի է երգս այս, նոր է գրեալ»⁶:

Այս գանձերի ու տաղերի մի մասը, ինչպես ասացինք, ձայնագրված են երաժշտական ճոխ խաղերով, հանգամանք, որ իրավունք է տալիս կարծելու, թէ Մատթեոս Զուղայեցին եղել է ոչ միայն բանաստեղծ, այլ նաև երաժիշտ-կոմպոզիտոր:

¹ Նույն տեղում, էջ 690-699:

² Տե՛ս ձեռ. N 425, էջ 46բ-47բ:

³ Ձեռ. N 425, էջ 255ա-258բ:

⁴ Նույն տեղում, էջ 261ա-262բ:

⁵ Ձեռ. N 474, էջ 152ա-157ա:

⁶ Ձեռ. N 474, էջ 106բ-108բ:

8. «Մատթեոսի վարդապետի աշխատասիրեալ վասն ֆարոզութեան բանի, ի վարդապետութենէն սուրբ հօրն Եւագրեայ, որ միտք անապատի կոչի եւ ի նորին վարուցն հետեւողէ սրբոյն Նեղոսէ, որ ցան եւ ցիր գոյր ի բանս նոցա՝ հաւաքեալ ի մի ի պէտս բանասէր անձանց»

Շարադրել է Տանձափարախ անապատում 1393 թվականին¹:

9. «Նուսատ Մաթեոս վարդապետի՝ աշակերտի եռամեծին Գրիգորի աշխատասիրեալ առ ի հաւաքումն բանից, որ հայի առ Զ(6) ատուր գործս Աստուծոյ, ի խնդրոյ Սարգիս կրօնատրի, ի բանն Սողոմոնի, որ ասէ՝ Ամենեցուն հարտարապետն՝ ուսոյց ինձ իմաստութիւն»

Շարադրել է 1395 թվականին Տաթևի վանքում²:

10. «Վասն ժամանակաց գիտելոյ գորհանն»

Մինքրոնիկ փոքր աղյուսակ է, որով որոշվում են եկեղեցական ու քաղաքական կարևոր ճանաչված իրադարձությունների թվականները՝ շրջեղեղից և այլ դեպքերից հաշված: Շարադրել է 1402 թվականին, հավանաբար Տաթևում: Զեռագրերում (օրինակ՝ N 3854, էջ 293բ-295ա) ընդօրինակված է Մատթեոսի աշխատությունների շարքում, բայց հեղինակի անունը վերնագրում չի նշված:

11. «Նորին Մատթեոսի վարդապետի ներբողեան ողբերգաբար՝ ոգեալ ի թաղումն երջանիկ բարունապետին Գրիգորի: Ընդ նմին յիշատակեալ գողբս լալեաց կոտորածին, որ ի Վրացտուն՝ ի Փայտակարան ֆաղափի, ֆանգի պատկեր ատուրց ի մի դիպեցաւ, մանաւանդ ի հրաշագեղ Կարապետ՝ եղբայր իւր»

Գրիգոր Տաթևացին մահացել է 1409 թ. դեկտեմբերի 27-ին և թաղվել է 1410 թ. հունվարի սկզբներին, ուստի Մատթեոսն իր դամբանականը շարադրած ու արտասանած պետք է լինի 1410 թ. սկզբներին Տաթևում³:

12. «Մատթեոս նուսատ եւ յետին աշակերտի եռամեծացն Յովհաննու եւ Գրիգորի՝ աշխատասիրեալ ի ֆննութիւն գործոց առաքելոց, ի մեկնութենէ սուրբ հարցն Յովհաննու Ոսկերեանի եւ Եփրեմի, ի խնդրոյ հարազատ եղբօր մերոյ Յակոբ վարդապետի՝ մականունն Ովսանացն կոչեցեալ»

¹ «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 606:

² Նույն տեղում, էջ 613:

³ Ամենայն հավակնությամբ, Մատթեոսին է պատկանում նաև Գրիգոր Տաթևացու կյանքի և կենսագրության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցող վարժաբանական այն գրվածքը, որը պահպանվել է մեր Մատենադարանի N 6607 ձեռագրի 5ա-6ա էջերում՝ «Ի սմին ատուր՝ ի դեկտեմբերի ԻԷ (27) ննջումն եւ հանգիստ երիցս երանեալ ֆաջ բարունապետին Գրիգորի՝ աշակերտի Յովհաննու Ռոտանեցոյ» խորագրով (տպ. «ԺԵ դարի հիշատակարաններ», էջ 103-104):

Մատթեոսի ամենաընդարձակ ու կարևոր աշխատությունն է, շարագրել է 1411 թվականին, հավանաբար Տաթևում¹:

13. Քարոզներ

Մենք արդեն տեսանք, որ «Ով ոք են արարեալ զլուծմունս եւ զքաղուածուս Աստուածաշունչ Գրոց» ցանկի հեղինակը Մատթեոսին է վերագրում նաև «Ծ (50) քարոզ»²:

Նրա քարոզներն ընդօրինակված են մեր Մատենագարանի թթ. 662, 969, 1357, 2114, 2157, 2229 և այլ ձեռագրերում, բայց դրանց քանակը 50-ի չի հասնում³:

Քարոզները գրված են, ինչպես ընդունված էր, Աստուածաշնչից քաղված բնաբաններով: Որպես բնաբան ընտրված են «Մի՛ սպանաներ», «Մի՛ սուտ վկայեր», «Մի՛ շնար», «Մի՛ գողանար», «Արթուն կացէք յամենայն ժամ», «Յարեցան սուտ մարգարէք», «Ես եմ Հովիւ քաջ» և այլ բազմաթիվ աստվածաշնչային խոսքեր:

Մատթեոսի այս քարոզները լի են պատմական, տնտեսագիտական, կենցաղագիտական, գրականագիտական հետաքրքրություններ կայացնող բազմաթիվ ուշագրավ ասույթներով և ճանաչողական մեծ արժեք են ներկայացնում:

Քարոզների շարահրման թվականը որոշ չէ: 1391 թվականին շարագրված «Ի գլխոյն Դուկասու հաւաքումն բանից» աշխատությունը նույնպես պարունակում է քարոզներ և գրված է հենց ի նպաստ քարոզչության, հակաճառության և բեմբասացության («է պիտանացություն սորա ի քարոզս բանի եւ ի կագ զրուցաց եւ ի բեմբասացությունս»): Արդ, Մատթեոսի քարոզների և այդ աշխատության որոշ հատվածներ բառացի համընկնում են միմյանց: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ հակված ենք կարծելու, որ իր քարոզները նույնպես Մատթեոսը շարագրել է ԺԳ դարի 90-ական թվականներին «Ի գլխոյն Դուկասու հաւաքումն բանից» աշխատությունից (գրված 1391 թ.) հետո:

Սրանով ավարտվում է Մատթեոս Զուղայեցու մեզ հայտնի աշխատությունների ցանկը:

Զուղայեցին, սակայն, զբաղվել է նաև ձեռագրերի ընդօրինակման աշխատանքով: Նրա բազմացրած ձեռագրերից մեզ հայտնի են հետևյալ երեքը.

¹ «Ժե դարի հիշատակարաններ», էջ 118-121:

² Ձեռ. N 8444, էջ 182ա-բ:

³ N 2229 ձեռագրում, օրինակ, ընդօրինակված են 4 գտնում ընդամենը 39 քարոզ:

1. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աշխատութիւնը՝ ընդօրինակված շուրջ 1397 թ. Ատոմ աբեղայի խնդրանքով¹:

2. Ավետարան՝ ընդօրինակված 1407 թ. Տաթևում Հովել քահանայի խնդրանքով²:

3. Մի այլ Ավետարան՝ ընդօրինակված նույն թվականին ոմն Մըմբարաքշահի պատվերով³:

Անտարակույս, մեզ հասած կամ մեզ հայտնի այս երեք ձեռագրերը Մատթեոսի ընդօրինակութիւնների միայն մի չնչին մասն են կազմում:

Այսպիսով, Մատթեոս Զուղայեցին մեզ ներկայանում է որպէս Տաթևի նշանավոր համալսարանի անվանի դասախոսներից մեկը, որն իր ստեղծագործական ոչ երկարատև կյանքի ընթացքում շարադրել է մի շարք ծավալուն աշխատութիւններ, զբաղվել է քարոզչական գործունեութեամբ և ընդօրինակել է բազմաթիվ ձեռագրեր:

Մեր սույն համառոտ հաղորդման հիմնական նպատակն է պարզել, թե ինչ արժեք են ներկայացնում մեր հեղինակի աշխատութիւնները ժԴ-ժԵ դարերի Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի պատմութիւնն ուսումնասիրելու համար:

Մենք արդեն տեսանք՝ Մատթեոս Զուղայեցու աշխատութիւնների մեծագույն մասը կրոնական բովանդակութիւն ունի: Նրանք կամ մեկնութիւններ են, կամ քարոզներ, կամ էլ աստվածաբանական գրականութեան այլ ժանրերին պատկանող ստեղծագործութիւններ:

Նման իր ժամանակի բոլոր եկեղեցական գործիչներին՝ նա իր աշխատութիւններով ձգտել է քարոզել և ուսուցանել Հայ եկեղեցու գաղափարական դրույթները, փորձել է բարձրացնել եկեղեցականների հեղինակութիւնը, նպաստել եկեղեցու տնտեսական դիրքերի ամրապնդմանը:

Իր բազմաթիվ քարոզներում Մատթեոսը խոսում է այն մասին, որ օտարագրի տերերի բռնութիւնների ու հալածանքի դեմ, ինչքան էլ դրանք ծանր լինեն, ժողովուրդը չպետք է ընդվզի ու պայքարի և իր փրկութեան հույսը պետք է դնի միայն երկնային դատավորի վրա: «Գիտասցուք մեք՝ քրիստոնայքս, - գրում է իր աշխատութիւններից մեկում Մ. Զուղայեցին, - թե Քրիստոս է մեզ դատավոր, ապա պարտ է նա ընկենուլ զգատաստան շարշարողացն մերոց եւ հալածողացն եւ մեզ ուրախութեամբ տանել զլլկանսն

¹ «ժԴ դարի հիշատակարաններ», էջ 615:

² «ժԵ դարի հիշատակարաններ», էջ 76-77:

³ Նույն տեղում, էջ 75-76:

եւ մի մեզէն վրէժխնդիր լինել մեզ, զի «Իմ է վրէժխնդրութուն», - ասէ Տէր»¹ և այլն¹:

Սակայն սխալ կլինեն միջնադարյան որևէ եկեղեցական հեղինակի գնահատել՝ ելնելով միայն նրա հասարակական ու սոցիալական հայացքներից:

Իր աշխատությունների մեծագույն մասը Մատթեոս Զուղայեցին շարագրել է «Վասն քարոզութեան բանի», այսինքն՝ նկատի ունենալով ունկնդիրների լայն լսարան՝ արհեստավորների, առևտրականների, շինականների և ընդհանրապես աշխատավոր մարդկանց:

Նա շատ լավ տեղյակ է եղել, որ «Բազումք ի լսել քարոզութեանն բամբասեն, թէ սպիտակ կուտեալ է, կամ կու խաբէ, կամ թէ յերկար կու ասէ, եւ կամ ձանձրանան ի բազմութենէն, եւ կամ այլ իմն բան խօսին՝ ոչ ունկն դնելով քարոզութեանն»²:

Իսկ որպեսզի ժողովուրդը չբամբասի քարոզչին, ունկն դնի նրա քարոզությանը, և քարոզը հասնի իր նպատակին, այդ բոլորի համար անհրաժեշտ էր խոսել ժողովրդի լեզվով, կանգ առնել նրան հուզող սոցիալական ու տնտեսական հարցերի վրա, պարզ ու պատկերավոր օրինակներ ընտրելով ժողովրդի առօրյա կյանքից ու կենցաղից՝ դրանց միջոցով դյուրամարս դարձնել գաղափարական բարդ խնդիրները և այլն և այլն³:

Հենց այդպես էլ վարվել է Մատթեոս Զուղայեցին: Եվ դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Մատթեոսի աշխատությունները լի են ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, ժողովրդի վիճակի, կենցաղի, զբաղմունքի և բազմաթիվ այլ հարցերի մասին հսկայական թվով այնպիսի տվյալներով ու ասույթներով, որոնք մեծապես բարձրացնում են նրանց ճանաչողական արժեքը և իրավունք են տալիս մեր հեղինակին պատվավոր տեղ գրավել ԺՊ-ԺԵ դարի հայ մատենագիրների շարքում:

Աշխատենք Մատթեոս Զուղայեցու աշխատությունների մեջ ցրված կարևոր այդ տվյալների ու ասույթների օգտագործմամբ փոքր-ինչ ծանոթանալ նրա ապրած ժամանակաշրջանի հետ:

¹ «Բան յԱւետարանէն Յովհաննու», ձեռ. N 5871, էջ 26բ:

² Նույն տեղում, էջ 19ա:

³ Այս մասին հետաքրքրական տվյալ է պահպանված միջնադարյան մի ֆարզի մեջ, որտեղ ասված է. «Սովորութիւն է հանճարեղաց եւ իմաստնոց յորժամ տգիտաց եւ տխմարաց զմեծամեծաց եւ զբարձրագունից եւ զանյայտ իրաց զհասո բանի կամին յառաջ բերել՝ զընտանի եւ զըմբոն արինակաց բոտն հարկանել, այսինքն ի տեսելոց կամ ի լսելոց յարացուցիչ զանտեսիցն յանդիման կացուցանել իմացուած» (ձեռ. N 1098, էջ 13բ):

Ինչպես արդեն տեսանք, Մատթեոսը, որպես մատենագիր, հրապարակ իջավ ԺԴ դարի վերջերին, երբ Լանկ-Թամուրի գորքերն ասպատակում էին Հայաստանը. «Ի ժամանակի նեղութեան, ուր աւերեալ քակեաց զաշխարհս ամենայն հուրն հարաւային՝ Թամուր կոչեցեալ», - գրում էր այդ մասին Ջուղայեցին:

Թամուրի մահվանից և նրա ժառանգների պարտութիւնից հետո Ատրպատականում և Հայաստանում իշխանության գլուխ անցավ Կարա-Կոյունլու քոչվորական ցեղերի առաջնորդ Կարա-Յուսուֆը:

Սակայն երկար տարիներ պետք չէին համոզվելու համար, որ Կարա-Կոյունլուների նոր դինաստիայի հաղթանակով հայ ժողովրդի վիճակի մեջ ոչ մի փոփոխութիւն չպետք է տեղի ունենար: 1411 թ. գրած իր «Քննութիւն Գործոց առաքելոց» աշխատութեան հիշատակարանում Մ. Ջուղայեցին, տեսանք, որ հայտնում էր, թե նոր տիրապետողների բռնակալութիւնը հիշել է տալիս «զառաջին շարիսն Թամուր կոչեցեալ կաղին» և այլն:

Այս ընդհանուր ձեւով արված հայտարարութիւնները կոնկրետ ու իմաստալից բովանդակութիւն են ստանում Ջուղայեցու տարբեր աշխատութիւնների մեջ, ուր նա այլևայլ առիթներով անդրադառնում է հայ ժողովրդի կրած տառապանքներին:

Իր «Վասն քարոզութեան բանի» աշխատութեան մեջ, օրինակ, այլազգի բռնավորների մասին մեր հեղինակը գրում է հետևյալ ուշագրավ տողերը. «Դարձեալ, դրացիք են մեզ շար բռնաւորք եւ այլազգիք, զի ի մին հոգոյ եւ նոյն ծնօղաց եմք, եւ զնոյն պատկերս մարդոյ ունին, եւ միտք եւ բան եւ ամենայն՝ հաւասարք են, եւ սիրտ գազանի ունին. եւ յանխնայ կեղեքեն եւ տանջեն զմեզ. ոչ միայն ի մարմինս, այլ եւ ի հոգիս վնասեն. զինչս յափշտակեն, զմարմինս շարշարեն եւ ի մեղս ձգեն եւ ի հաւատոց զրկեն, նախատեն եւ հալածեն եւ սպանանելով զմեզ՝ համարին պաշտօն մատուցանել Աստուծոյ»¹:

Մեջբերված հատվածի վերջին միտքն ավելի պարզորոշ շարադրված է Ջուղայեցու քարոզներից մեկում այսպես. «Արդ, ասեն դոքա (մուսուլմանք), եթէ որ զքրիստոնեայ կողոպտէ կամ սպանանէ՝ արքայութիւն նմա է»²:

Այլ կապակցութեամբ նա հայտնում է, որ տիրող բռնավորները «զարիւնս աղքատաց ծծեն եւ անիրաւ դատեն»³ կամ «բազում անգամ... սպա-

¹ Ձեռ. N 6607, էջ 229բ:

² Ձեռ. N 2229, էջ 188բ:

³ «Քան յաւետարանէն Յովհաննոս», ձեռ. N 5871, էջ 46բ:

նանեն վասն ազահուլթեան եւ կամ վասն նախանձու»¹ կամ որևէ մեկի մահ-վանից հետո նրա թողած գույքից հարուստ բաժին չստանալու դեպքում «զրկեն զզաւակսն, մանաւանդ զի զբովանդակն տանին»² և այլն և այլն:

Մատթեոս Զուղայեցին հայ ժողովրդի համար ստեղծված ծանր իրավական ու տնտեսական վիճակի պատճառները բացատրում է միջնադարյան «մեղք եւ հատուցում» սկզբունքով: Աստվածային կամքով հայերն իբր պատժվում են իրենց մեղքերի համար: Նույնիսկ Թամուրն ընտրված է եղել տիրոջ կողմից՝ պատուհասելու համար հայերին իրենց գործած մեղքերի դիմաց³:

Զուղայեցին «վասն մեղաց մերոց» սկզբունքով է բացատրում նաև բնական ու հասարակական բոլոր արհավիրքները. «Սոյնպէս եւ այժմ մի զհետ միոյ շրջին երբեմն մահ տարածամ առհասարակ կոտորին, երբեմն շարժ, երբեմն գայլ, երբեմն մարախ, թրթուր, ջորեակ, ժանկ, երբեմն կարկուտ, սով, սրածուխյուն, հեղեղ եւ այլքն: Սոքա յաշխարհէ ոչ բառնին վասն մեղաց, այլ միշտ ի սասանություն պահեն զմարդիկ», - գրում է նա «Ահա մեղաւորք կորիցին» բնաբանով քարոզում⁴:

Սակայն ուշագրավ է այն հանգամանքը, որ Զուղայեցու աշխատությունների մեջ մեղավոր են համարվում հասարակության ոչ բոլոր ներկայացուցիչները հավասարապես: Զուղայեցու կարծիքով հիմնական մեղավորները հայ իշխաններն են: Ժողովրդի ապահովության ու բարեկեցության, նույնիսկ հավատի պահպանության հիմնական պատասխանատուն աշխարհական իշխանության ներկայացուցիչներն են: «Առանց Տրդատայ ոչ կարաց սուրբն Գրիգոր ի Հայոց մին կին ի հաւատ բերել», - սրամտորեն նկատում է Զուղայեցին իր քարոզներից մեկում⁵ և հայ ժողովրդի համար ստեղծված ծանր կացության հիմնական մեղքը գցում է հայ անմիաբան, վավաշոտ ու անգուլթ իշխանների վրա:

«Իսկ զքրիստոնեայ իշխանն, - գրում է նա, - պոռնիկս եւ վաւաշոտս եւ մատնողս եւ սպանողս, յորմէ յաճախեալ մեղօքն բարկացուցին զանբարկա-

¹ «Քարոզ ի բանն՝ Մի սուտ վկայէր», ձեռ. N 2229, էջ 130ա:

² «Քննություն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 235ա:

³ Տե՛ս «Քննություն Գործոց առաքելոց» (ձեռ. N 1402, էջ 84բ), ուր ասուած է «ի պատերազմն զաներկիւղն ընտրեմք եւ Տէրն ի պատուհասն զանհաւատն (ընտրէ) որպէս... այժմ գթամուրն»:

⁴ Ձեռ. N 662, էջ 161ա:

⁵ Ձեռ. N 2229, էջ 206բ:

նալի բնությունն. եւ ետ զմեզ ի կոխան անօրինաց, եւ գեղեցաք յամենայն ազգս, եւ վա՛յ է ինձ»¹:

Այս բոլորից հետո, զարմանում է Ջուղայեցին, հայ ֆեոդալական տների վերջին տկար ու անզոր ներկայացուցիչները միաբանելու և միմյանց գորավիզ լինելու փոխարեն շարունակ կռվում են իրար դեմ. «Այժմ մնացեալ սուտ իշխանքն Հայոց զմիմեանց ջիլս հատանեն եւ զարմանալի եւս (է), զի բոլոր երկիրս աւեր եւ վասն աւերածիս կռուին», - գրում է նա²:

Մեղքերից անմասն չեն նաև հայ հոգևորականության ներկայացուցիչները, մեծատունները, առևտրականներն ու արհեստավորները, սակայն նրանց նկատմամբ Ջուղայեցին համեմատաբար մեղմ արտահայտություններ է գործածում:

Մատթեոսի ապրած ժամանակները հայ ինքնագլուխ եկեղեցին միակ հաստատությունն էր, որն այս կամ այն չափով միավորում էր հայ ժողովրդի ցիրուցան արված զանգվածները և աշխատում, իր շահերից ելնելով ու յուրովի, վառ պահել ազգային գրականության ու մշակույթի այն ավանդույթները, որոնք կարևոր ու անհրաժեշտ էին գաղափարական ու սոցիալ-տնտեսական իր դիրքերի պաշտպանության ու ամրապնդման համար:

Այդ իսկ պատճառով Մատթեոս Ջուղայեցու գրական գործունեության մեջ կարևոր տեղ է բռնում պայքարը մահմեդականության, այլ խոսքով օտարազգի տիրապետողների գաղափարախոսության դեմ: Ամբողջովին այդ խնդրին է նվիրված վերոհիշյալ «Վասն հարցմանց անօրինաց. զանազան պատասխանիք» աշխատությունը, որը շարադրված է 1393-ից առաջ Ախթամարում, ոմն դանիշման Ալիի հետ ունեցած վիճաբանությունից հետո: Այստեղ պարզ ու դյուրըմբռնելի պատասխաններ են տրված բոլոր այն հարցերին, որոնցով մահմեդական կրոնի պետերը դիմում էին հայերին քրիստոնեության դիրքերի խախտման ու նրանց հավատափոխ անելու մտադրություններ:

Նման հարցեր են շոշափված նաև Մատթեոսի «Յարեցան սուտ մարգարէք» բնաբանով քարոզի մեջ³: Ուշագրավն այն է, որ իր պատասխաններով Մատթեոսը բնավ չի վիրավորում մահմեդականների կրոնական զգացմունքները ու չի ցանկանում դիպչել նրանց համոզմունքներին: Նրա կարծիքով մահմեդականները պարտավոր են հնազանդվել իրենց մարգարեի պատվիրաններին, որովհետև Մահմեդն է նրանց կռապաշտությունից հավատքի

¹ «Քննութիւն Գործոց սուաբեոց», ձեռ. N 1402, էջ 258բ:

² Նույն տեղում, էջ 215բ:

³ Ձեռ. N 2229, էջ 185-190բ:

բերել. «բայց Զեզ արժան է նմա հնազանդել, զի զձեզ ի հաւատք եբեր եւ ի կռապաշտութենէ դարձոյց», - գրում է նա¹:

Այլ բան է քրիստոնյաների խնդիրը. Մահմեդը պատմական ասպարեզ է իջել մի քանի հարյուր տարի այն բանից հետո, երբ հայերը, հեթանոսությունը մերժելով, ընդունեցին քրիստոնեություն, ուստի հայերն իրավասու են նրան շճանաչելու և չընդունելու. «Մահմատն ձեր, - գրում է նա, - մեզ ոչինչ երախտիք չունի, զի երեկ՝ զմեզ ի հաւատք գտաւ, եւ մեք աստուածապաշտ էաք, երբ նա երեկ, եւ մեզ ոչինչ չէ ուսուցել, եւ ի նմանէ հաւատք չենք առել. վասն այնորիկ եւ ոչ ճանաչեմք զնա»²:

Մեջբերված հատվածը բավական է ցույց տալու համար, որ Մատթեոս Զուղայեցին ձգտում էր հաստատել այլակրոն ժողովուրդների միջև համերաշխություն և փոխադարձ հարգանք՝ միևնույն ժամանակ վճռականապես դեմ դուրս գալով հայերին բռնի մահմեդականացնելու քաղաքականության դեմ:

Մեր հեղինակի ապրած ժամանակներում օտար տիրապետության հետևանքները զգացվում էին նաև ժողովրդի առօրյա կենցաղում և նիստուկացի մեջ: Հայերը հրաժարվելով իրենց հնամենի ու գեղեցիկ անձնանուններից, իրենց երեխաներին տալիս էին մոնղոլական, թուրքական ու արաբական անձնանուններ՝ Ալամ-խաթուն, Յախշի-բեկ, Աղբուղա, Աբդլա, Դամուր-բուղա և այլն և այլն:

Մատթեոս Զուղայեցին վնասակար է համարում այդ սովորությունը և գտնում է, որ պատժի են արժանի այն քահանաները, որոնք քրիստոնյա մանուկներին անվանակոչում են օտար ու խորթ անուններով. «Վասն որոյ, - գրում է նա, - պատժին քահանայք, յորժամ քրիստոնեայ տղային Դուտբադին դնեն կամ Յախրատին» և այլն³:

Մատթեոս Զուղայեցու աշխատությունները շատ ավելի կարևոր նյութեր են պարունակում իր ապրած ժամանակաշրջանի Հայաստանի ներքին կյանքի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների և մշակութային երևույթների ուսումնասիրության համար:

Նախ համառոտակի ծանոթանանք նրա աշխատությունների մեջ ցրված այն տվյալների հետ, որոնք վերաբերում են գյուղական կյանքի տարբեր կողմերին:

¹ Ձեռ. N 3854, էջ 202բ:

² Ձեռ. N 3854, էջ 302ա:

³ «Քննութիւն Գործոց ստաւեղոց», ձեռ. N 1402, էջ 195բ:

Իր «Քննութիւն Գործոց առաքելոց» աշխատութեան մէջ Ջուղայեցին ֆեոդալական հասարակութեան դասային կառուցվածքը տալիս է հետևյալ աստիճանավորմամբ՝ «Թագաւոր, իշխան, ձեռնաւոր, տանուտէր, շինական»¹:

Բարձրագույն երկու աստիճանները Ջուղայեցու ապրած ժամանակաշրջանում գրավում էին ըստ մեծի մասին Հայաստանի օտարազգի տիրապետողները՝ քոչվորական ցեղերի ավագանիները և պետական պաշտոնյաները: Հայնվաճված ժողովուրդը տեղ ուներ միայն (բացառութեաններն ի նկատի չենք առնում) հիերարխիկ սանդուղքի ստորին աստիճաններում («ձեռնաւոր, տանուտէր, շինական»):

Ձեռնավորները ֆեոդալի կողմից նշանակվող այն պաշտոնյաներն էին, որոնք հաշվառման էին ենթարկում հարկատու տվյալ օբյեկտից գյուղից կամ քաղաքից, գանձվելիք հարկի չափը, ցուցակագրում էին բոլոր աշխատունակ չափահաս մարդկանց և հավաքում հարկերը:

Յուրաքանչյուր գյուղական համայնքի մէջ կային ազդեցիկ և ունևոր ընտանիքների ավագներ՝ տանուտերեր, որոնք ներկայացնում էին գյուղական համայնքը պետութեան և ֆեոդալի առաջ ու պատասխանատու էին հարկերի ժամանակին և ըստ որոշյալ չափի գանձման համար:

Վերոհիշյալ իր աշխատութեան մէջ Մ. Ջուղայեցին «անկարգ», այսինքն՝ հաստատված կարգից դուրս ու տարօրինակ գյուղերի շարքին է դասում այն գյուղերը, որոնք չունեն ձեռնավոր ու տանուտեր: Ուշագրավ այդ հատվածում, որի հետ արժե ծանոթանալ, Ջուղայեցին պատասխան է տալիս այն հարցին, թե «քանի են աւերակն» (այսինքն՝ ավերակների ինչ տեսակներ կան): Պատասխանը տալիս ենք ստորև.

«Նախ՝ կոչի աւերակ անապատն, որ ոչ է բնաւ շինեալ... երկրորդ՝ անկարգ շէնն, որ ոչ ունի ձեռնաւոր եւ տանուտէր՝ աւեր կոչեմք, որպէս խաչի նեցէք (իմա՝ խաչէնացիք)²: Երրորդ՝ աւեր կոչեմք, թէ իցէ ձեռնաւոր եւ տանուտէր, եւ ոչ սերմանալ աշունն եւ գարունն, եւ ասեմք՝ աւերեցաւ: Չորրորդ՝ աւեր կոչեմք յորժամ փախեալ լինին շինացիքն, եւ տեղիքն դատարկ: Հինգերորդ՝ կատարեալ աւերն, յորժամ գեղն բոլոր ջնջի մահուամբ կամ որով. եւ զի այլոցն գոյ հնար շինութեան, բայց յետնոյս՝ ոչ»³:

¹ Ձեռ. N 1402, էջ 83բ:

² Խաչենի գյուղերում ձեռնավոր և տանուտեր շինելու մասին այս վկայությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում և արժանի է լուրջ ուշադրության:

³ Ձեռ. N 1402, էջ 83բ:

Այս և նախորդ մեջբերումից պարզ ու որոշակի է դառնում, որ ձեռնավորները և տանուտերերը, որպես գյուղական համայնքի ազդեցիկ և ունևոր անդամներ, շինականների նկատմամբ արտոնյալ մի դաս էին կազմում:

Գյուղական համայնքը խորը շերտավորում էր ապրել: Գյուղական բնակչության մի զգալի մասը, ծանր հարկապահանջության հետևանքով զրկվելով արտադրության միջոցներից, ստիպված էր կա՛մ փախչել քաղաք, կա՛մ էլ, համագյուղացի փարթամների «հովանու տակ» մտնելով, ենթարկվել նրանց տնտեսապես և իրավապես:

Այս երևույթը նկատվել ու արձանագրվել է Զուղայեցու կողմից «Տէր, սիրեցի զվայելչություն տան քո» բնաբանով գրված քարոզում: Այստեղ հեղինակը խոսում է հնազանդության և ենթակայության ձևերի մասին, որոնցից է համարում նաև «ըստ կարեաց», այսինքն՝ կարիքից մղված հնազանդությունը. «Որպէս աշակերտ, - գրում է նա, - վասն կարեաց իւրոց հնազանդի վարդապետին, եւ նա տիրէ նմա իբրեւ սեպհական տէր... եւ աղքատք մեծատանց, որպէս ի քաղաքս եւ ի գիւղս է տեսանել, որք ընդ հովանեաւ փարթամացն բազումք կան վասն կարեաց իւրեանց»¹:

Կարևոր են նաև Զուղայեցու հայտնած տվյալները գյուղացիներից գանձվող հարկերի մասին: Նա հանվանե հիշատակում է զալան հարկը, որը գանձվում էր հպատակ ժողովուրդներից զինվորական ծառայության դիմաց, Կոռը, որը տառապանք է համարում, ինչպես նաև «տուգանքները»՝ մի հավաքական տերմին, որի տակ պետք է հասկանալ մի շարք հարկեր և այլն:

Այդ հարկերն այն աստիճան ծանր են եղել հայ շինականության համար, որ ոմանք ստիպված դիմել են հավատափոխության: Զուղայեցին ուղղակի հայտնում է, որ մարդիկ ուրանում են իրենց հավատքը և ընդունում մահմեդականություն նաև «վասն տուգանաց զալանի» և «վասն տառապանաց, զոր կոռ ասեն»²: Պետք է կարծել, որ մահմեդականություն ընդունաների վիճակը փոքր-ինչ բարվոքվել է, և այս ճանապարհով օտար տիրապետողները երբեմն ձգտել են իրագործել ուժացման իրենց քաղաքականությունը:

Զուղայեցին ուշագրավ տվյալներ է հաղորդում նաև պարսկալեզու աղբյուրներում «կոնալա» կոչվող այն հարկի մասին, որն արտահայտվում էր թագավորական սուրհանդակներին, պետական պաշտոնյաներին, օտար-

¹ Ձեռ. N 969, էջ 172բ:

² «Քննութիւն Գործոց ստաւեղոց», ձեռ. N 1402, էջ 140ա:

երկրյա դեսպաններին և նրանց ուղեկիցներին, ծառաներին ու ձիերին կերակրելու, ապաստան տալու, նրանց բոլոր կարիքները հոգալու պարտավորությունները:

Մեր հեղինակը «Կոնալդայի» փոխարեն գործածում է շատ հաջող, ըստ երևույթին ժողովրդական ծագում ունեցող «բոնահիր» տերմինը: Հայտնում է, որ «բոնահիրացն պիտոյանան ծախք»¹, իսկ մի այլ տեղ («Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո» բնաբանով քարոզում) բացատրում է, որ սերն ու հարգանքը կարող են լինել և՛ կամաւոր, և՛ ակամա: Ակամա է այն կեղծ «սէրը», որ մարդիկ ստիպված են լինում, «երկնչելով ի նոցանէ», ցույց տալ բոնահյուրերին, շար թագավորներին և իշխաններին, ծառայել նրանց «ինչս տալով» և այլն²:

Իր մի այլ քարոզում Ջուղայեցին խոսում է եկեղեցական տուրքի մասին՝ հայտնելով, որ «տուրքն, որ առ Աստուած չափով եւ համարով է, այսինքն՝ ըստ ընչից իւրեանց, զի համարով ժ(10)-էն զմինն խնդրէ»:

Ջուղայեցու կողմից նշված հարկերից բացի հայ գյուղացիությունը նրա ապրած ժամանակաշրջանում պետությունն ու ֆեոդալին վճարում էր բազմաթիվ այլ հարկեր ևս, որոնց մեր հեղինակն իր աշխատություններում առիթ չի ունեցել անդրադառնալու:

Այդ հարկերի մեծ մասը գանձվում էր հարկային պաշտոնյաների կողմից՝ գյուղովի: Յուրաքանչյուր գյուղական համայնք իր տանուտերերի և ձեռնավորի միջոցով պարտավոր էր հավաքել տվյալ գյուղի վրա ըստ հարկային ցուցակների դրված ողջ հարկը և հանձնել պետական պաշտոնյաներին: Եվ ահա այստեղ բացվում էր շարաշահության մեծ ասպարեզ գյուղի տանուտերերի ու ձեռնավորների համար: Սրանք, օգտագործելով իրենց դիրքն ու տնտեսական կշիռը, գյուղական համայնքից պահանջվող հարկերի իրենց վրա դրված բաժինը ևս բարդում էին շունևոր ու աղքատ իրենց համագյուղացիների վրա:

Այս մասին ևս իր քարոզներից մեկում շատ հետաքրքրական տվյալ է հաղորդում Մ. Ջուղայեցին: Նա գրում է. «Կոչին ծածուկ գող եւ տանուտէրք գեղոց եւ վերակացուք, որք յաղքատս զրկեն. եւ այնպէս երեւեցուցանեն, թէ մեք աւելի տամք, եւ յաղքատացն առեալ տան եւ զինչս իւրեանց պահեն»³:

¹ Նույն տեղում, էջ 50բ:

² Ձեռ. N 2229, էջ 143:

³ «Քարոզ մի բանն՝ Մի գողանար», ձեռ. N 2229, էջ 133ա:

Ուշագրավ են նաև Զուղայեցու հաղորդած տվյալները շինականների փախուստի մասին դեպի այլ շրջաններ և հեռավոր երկրներ՝ մի բան, որ հատկապես ԺԿ և ԺԵ դարերում Հայաստանում զանգվածային շափեր էր ընդունել:

Զուղայեցին մի առիթով բռնության վնասների մասին խոսելիս հայտնում է, որ «իշխանարարն զշինութիւնն պակասեցուցանէ, եւ յայտ է ի շինականացն, զի յորժամ իշխանութեամբ շարժին իշխանքն՝ թողուն եւ փաղչին, իսկ յորժամ ընկերանայ՝ նոքա վարեն եւ առաւելացուցանեն զշինութիւնն»¹:

Գյուղացիության փախուստի առաջն առնելու նպատակով դեռևս իշխանության ժամանակ մշակվել էին մի շարք միջոցառումներ: Ռաշիդ-ադ-դինը հայտնում է, որ իրենց գրանցված վայրերից այլ շրջաններ փախած գյուղացիների վերադարձման համար հատուկ պաշտոնյաներ էին ուղարկվում:

Զուղայեցու նույն «Քննութիւն Գործոց առաքելոց» աշխատության մի հատվածից կարելի է եզրակացնել, որ փախած գյուղացիների վերադարձման ու ավերակ մնացած շրջանների վերաբնակեցման համար աշխարհագիր էին կատարում: Ճիշտ է, այդ հատվածում մեր հեղինակն աշխատում է բացատրել Օգոստոս կայսեր ժամանակ տեղի ունեցած աշխարհագրի ինչ լինելը, բայց նրա տված բացատրությունն անտարակույս բխել է իրերի ժամանակակից վիճակից: Նա գրում է. «Ձի աշխարհագիրն այն էր, որ զինչ տեղիք որ շատ էին բնակիչք՝ անտի առեալ տանէր յաւերակսն եւ շինէր. եւ զինչ տեղոյ շինական որ կայր ի յայլ տեղիս՝ զայն ի յիւր բնական հայրենիքն տանէր»²:

Բազմաթիվ տվյալներ ու ակնարկներ են ցրված Զուղայեցու աշխատություններում նաև գյուղատնտեսական աշխատանքների, աղբով այգիները պարարտացնելու պրակտիկայի և այլ հարակից հարցերի մասին, հիշատակված են նաև երկրագործական մի քանի գործիքների անուններ և այլն և այլն: Առանց վարանումի կարելի է ասել, որ մեր հեղինակի մեկնողական ու աստվածաբանական բովանդակությամբ աշխատություններն ու քարոզները շատ ավելի նյութեր են պարունակում աշխատավոր մասսաների կյանքի ու կենցաղի պայմաններն ուսումնասիրելու համար, քանի մեր նշանավոր պատմիչներից շատերի աշխատությունները:

¹ «Քննութիւն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 76ա:

² Ձեռ. N 1402, էջ 99ա:

Այս բանն ավելի ցայտուն կդառնա քաղաքային կյանքի ու կենցաղի մասին Ջուղայեցու գրանցած տվյալների հետ ծանոթանալուց հետո: «Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից» աշխատության մեջ մեր հեղինակը հայտնում է, որ Ղուկաս ավետարանիչը մարդկային բնույթունն իբր նմանեցրել է քաղաքի հետ և այդ կապակցությամբ քաղաքների արտաքինի մասին հաղորդում է հիշատակության արժանի տվյալներ: Քաղվածաբար մեջբերում ենք աշխատության այդ մասից մի քանի հատված.

«Քաղաքն ամրացել է պարսպօք եւ պուրջօք... Քաղաքն են տունք բաժանեալք ի միմեանց... Իւրաքանչիւր տունս գործի ուրիշ գործ... Բարեւարքն պահեն ի քաղաքի, իսկ զվատթարս արտաքս հանեն... Սպասաւորք կարգեալ են ի քաղաքի՝ բերել նմա զամենայն ինչ... Բազում դրոււնք են քաղաքին...» և այլն¹:

Իսկ «Քննութիւն Գործոց առաքելոց» իր ամենակարևոր աշխատության մեջ մեր հեղինակն առիթ է ունենում պատասխան տալու այն հարցին, թե քաղաքային բնակչությունն աշխատանքի բնույթով ինչ խավերից է բաղկացած: Քաղաքի բնակիչներին, Ջուղայեցու կարծիքով, կարելի է բաժանել 10 խմբեր հետևյալ կերպ.

«Նախ՝ այնոքիկ, որ վայրապար շրջին, զի ոչ ունին գործ ի յայս անուն քաղաք եւ գնան:

Երկրորդ՝ որ պատահմամբ կան, որպէս մորողքն, որ թէ պատահի՝ ուտեն եւ թէ ոչ՝ մնան (անօթի):

Երրորդ՝ որ աշխատանօք ապրին, որպէս մշակք:

Չորրորդ՝ որք հնարօք ապրին, որպէս արուեստաւորք:

Հինգերորդ՝ բանահոգութեամբ, որպէս դալաք (°) եւ դեսպանք:

Վեցերորդ՝ հարամութեամբ եւ գողութեամբ:

Եւթներորդ՝ դատաստանու եւ իրաւամբք, որպէս դատաւորք:

Ութներորդ՝ իմաստութեամբ եւ հանճարով, որպէս գիտունք, որք են ուսուցանողք:

Իններորդ՝ աղօթիւք եւ պահօք, որպէս ճգնաւորք:

Տասներորդ՝ իշխանութեամբ, որպէս հոգեւոր եւ մարմնաւոր թագաւորք»²:

Չի կարելի ասել, թե այս բաժանումը մեծ ճարտարարություն է կատարված: Ակնբախ է քաղաքաբնակներին անպատճառ 10 խմբի բաժանելու

¹ Ձեռ. N 1345, էջ 63ա-63բ:

² Ձեռ. N 1402, էջ 155ա-155բ:

ցանկությունը (սրանով պետք է բացատրել, անշուշտ, դեսպանների ու աղոթողների համար հատուկ խումբ սահմանելը): Միևնույն ժամանակ չի կարելի չզարմանալ առևտարականների մասին հիշատակություն չունենալու կապակցությամբ:

Բերված ցանկի վերոհիշյալ թերությունները, սակայն, մասնակի են, և այն, ամբողջովին վերցրած, զգալի հետաքրքրություն է ներկայացնում՝ լրացնելով մեր գիտելիքները միջնադարյան հայկական քաղաքների բնակչության դասերի մասին Մատթեոսի հաղորդած տեղեկությունը, որը լրացվում է նրա մյուս աշխատությունների մեջ գրանցված տվյալներով:

Պարզվում է, որ՝ «Մշակն ի վարձու ամենայն ոք վասն գործոյ կալնու... Ըստ կամաց Տեառն առնէ զգործն... Մի օրն մին դահեկան լինի մին մշակի վարձն... Մշակ ոք ոչ կարէ ազնիւ նիւթ գործել կամ կարել... Մշակն ոչ կարէ ինչս յետս ձգել վասն վաղուանն, զի հազիւ զաւուրն հանէ պայենի: Շալակով մտնէ ի տունն... Չարշարեալ է մարմին մշակին՝ աղտոտեալ է սեւացեալ եւ նոյնպէս ննջէ» և այլն:

Այս հատվածները քաղված են Զուղայեցու «Ջանացարուք մտանել ընդ դուռն նեղ» բնաբանով քարոզից¹, և նույնը կրկնված ենք գտնում նաև «Քննութիւն Գործոց առաքելոց» աշխատության մեջ²:

Այսպիսով, Զուղայեցին հնարավորություն է տալիս մեզ պարզելու, որ մշակները վարձվում էին քաղաքներում մասնագիտական պատրաստություն չպահանջող ամեն կարգի սև աշխատանքների, հատկապես բեռնակրության համար: Նրանց ստացած աշխատավարձը հազիվ բավարարել է օրվա աղքատիկ պարենը («ինչս ոչ կարէ ձգել վասն վաղուանն, զի հազիւ զաւուրն հանէ պայենի»): Սրանով, սակայն, չեն սպառվում մշակների մասին Զուղայեցու աշխատություններում ցրված տվյալները: Նա հայտնում է նաև, որ մշակներ կային նաև գյուղերում.

«Քանի՞ կերպիւ մարդ առնու ինչ ի մարդոյ» հարցին մի տեղ պատասխանում է՝ «չորս կերպիւ» և կերպերից մեկը համարում է վարձկանությունը. «զի, - շարունակում է նա, - լինի մշակ եւ հովիւ եւ այլ ինչ. եւ առնուն համարով աւուրց զվարձս»³. մի այլ տեղ ակնարկ ունի երկրագործական աշխատանքների ժամանակ վարձուող մշակների մասին, «որ յանդի եւ ի հրապարակն առնեն (գործ) առանց պատկառանաց»⁴:

¹ Ձեռ. N 2157, էջ 41ա-41բ:

² Հմմտ. ձեռ. N 1402, էջ 102ա-102բ:

³ «Քննութիւն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 118բ:

⁴ «Քարոզ վասն աղարհնութեանն», ձեռ. N 2229, էջ 180բ:

Մշակները պարտավոր են աշխատել մինչև ուշ երեկո, «այլ թէ հիւանդանա ի կէսօրն՝ ոչ առնու զվարձն»¹, կամ որ «ոչ արասցի զգործն կամաց վարձողին՝ ոչ առնու վարձ»² և այլն:

Գյուղերից քաղաք փախած ոչ բոլոր դարիպներին էր հաջողվում մշտական կամ ժամանակավոր գործ ճարել այնտեղ. այս մասին կարևոր մի տվյալ կա հայկական միջնադարյան առակներից մեկում³: Հասկանալի է ուրեմն, որ մշտական աշխատանք և ապրուստի որևէ այլ միջոց չունեցող քաղաքաբնակ սոցիալական այդ շերտը, այսօր վարձկան լինելով, վաղը կամ մյուս օրը ստիպված պետք է լիներ մուրացկանության ձեռք կարկառել և կամ նույնիսկ դիմել գողության: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Ջուղայեցին քաղաքի բնակչության շերտերի իր բաժանման մեջ հատուկ տեղ է տալիս «մուրողներին» ու «հարամիներին եւ գողերին»: Եվ ուշագրավն այն է, որ մեր հեղինակն արդարացնում է գողերին, որովհետև նրանք ապրուստի այլ միջոց չունենալու պատճառով էին դիմել այդ ծայրահեղ միջոցին:

Այս մասին Ջուղայեցու մոտ կարդում ենք. «Գիտելի է, զի զանազանել արժան է զգողին դէմոն եւ զընչից տէրսն: Քանզի են, որ աղքատք են ամենեւին եւ առնեն գողութիւն, եւ զայս անճարակութիւնն առնէ, այսպիսեացս ներելի է գողութիւնն, զի հարկաւոր պիտոյք բնութեանս հարկեաց առնել զգործն զայն»⁴: Միևնույն ժամանակ պատժի արժանի են համարվում բոլոր այն գաղտնի ու հայտնի գողերը, որոնք զրկում են ուրիշներին, թալանում ու հափշտակում ոչ թե կարիքից դրդված, այլ իրենց ունեցվածքը կրկնապատկելու, շոտլուկյան ու զեխուկյան մեջ ապրելու համար: Դրանց շարքին է դասում Ջուղայեցին կաշառառու իշխաններին, վանքերի ընդաքաղց առաջնորդներին, դիվանադպիրներին, որոնք խարդախում են փաստաթղթերը, ծուռ դատավորներին, գյուղերի տանուտերերին, որոնք հարկերի ծանրությունը բարդում են աղքատ համագյուղացիների վրա, խաբեբա առևտրականներին, խարդախ արհեստավորներին և նմաններին:

Այլ առիթով մենք արդեն ասացինք, որ Ջուղայեցու աշխատությունների մեջ հատկապես մեծ տեղ են բռնում արհեստագործության ու առևտրի վերաբերյալ այս կամ այն առիթով գրանցված տվյալները: Դրանք կասկած չեն թողնում այն մասին, որ մեր հեղինակը երկար ժամանակ ապրել է հայ-

¹ Ձեռ. N 6607, էջ 179բ:

² Ձեռ. N 662, էջ 149ա:

³ Տե՛ս **Н. Я. Марр**, Сборники притч Вардана, часть II, тексты, СПб., 1894, с. 147.

⁴ «Քարոզ ի բանն՝ Մի գողանառ», ձեռ. N 2229, էջ 155բ:

կական քաղաքներում և ի մոտո ծանոթ է մի շարք արհեստների արտադրական պրոցեսներին ու առևտրականների գործունեության մի շարք կողմերին:

Նրա աշխատությունների մեջ հիշատակված են դարբնությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը, պղնձագործությունը, հյուանությունը, ոստայնանկությունը, կերպասագործությունը, աղեգործությունը, պարանագործությունը, ներկարարությունը, դանկարարությունը, անծուղագործությունը և այլ արհեստներ: Իսկ որոշ դեպքերում նա ոչ միայն թուղցիկ հիշատակություն է անում արհեստագործության այս կամ այն ճյուղի մասին, այլ տալիս է արտադրական պրոցեսի ամբողջական նկարագրությունը, թվարկում է արհեստավորի գործիքները: Մի խոսքով՝ մատակարարում է հայ միջնադարյան արհեստագործության ուսումնասիրողներին անգնահատելի նյութեր:

Ծանոթանանք այդ կարգի տվյալներից մի քանիսի հետ, որոնք հատկապես շուշլորեն ցրված են Զուղայեցու «Քննություն Գործոց առաքելոց» աշխատության մեջ:

Ահա ոստայնանկի աշխատանքի պրոցեսի և դազգահի ուշագրավ նկարագրությունը. «... Ոստայնանկ, յորժամ ոստան հենէ, նախ շափէ զմի թելն եւ ապա հենէ. եւ ի գործելն՝ ոտիւքն եւ ձեռօք վճարէ. եւ զինչ գործէ՝ ծրարէ ի վերայ սալմնին, ոչ գիտելով թէ զինչ գործեաց՝ մինչեւ վճարէ. եւ ի վճարելն հատանէ եւ ապա դարձեալ յետ տայ ի սալմնէն եւ կրկին շափէ եւ տեսանէ զգործն. թէ բարի է՝ փառաւորի ի տեսանելն զնա, եւ թէ գարշ է՝ տրտմի. եւ ի ծախելն կրկին փառաւորի՝ զգինս առնելով աշխատանաց իւրոց»¹:

Սրանից պակաս հետաքրքիր չէ ճոնի աշխատանքի նկարագրությունը՝ դարձյալ նույն աշխատությունից. «Ճոնն հանէ զայլ կենդանեաց մորթ եւ աղէ եւ չորացուցանէ եւ դարձեալ լուանայ եւ հանէ զմիսն եւ զնէ յաղոց՝ գարէ ալերբ եւ խմորով, եւ հանեալ դարձեալ չորացուցանէ եւ ապա գործէ եւ կակղէ եւ յետոյ ներկէ եւ ի բազում մորթոյ մի հանդերձ կարէ»²:

Այս նկարագրությունն ուշագրավ է հատկապես այն տեսակետից, որ հնարավորություն է տալիս պարզել աշխատանքի բաժանման ոչ խոր աստիճանը կաշեգործության մի բնագավառի՝ մուշտակագործության մեջ: Ինչպես պարզվում է, աշխատանքի բոլոր պրոցեսները, սկսած կենդանու կա-

¹ Ձեռ. N 1402, էջ 64ա:

² Նույն տեղում, էջ 189բ-190ա:

շին քերթելուց մինչև մուշտակ կարելը, կատարվել են միևնույն արհեստավորի (ճոնի) կողմից:

Արժե ծանոթանալ նաև Բիմիա կամ նաշին կոչվող թանկարժեք գործվածքի պատրաստման ուշագրավ նկարագրության հետ: Զուղայեցին հայտնում է, որ այդ արհեստը պատկանում է ծանր ու դժվար արհեստների թվին, և բացատրում է այսպես. «զի զվարաղ ոսկին ի վերայ ի վերայ մորթոյ կացնեն եւ մանր թել կտրեն եւ անպէս հնարեն ի գործելն, որ այն բարակ թելին ոսկին երեսն ի վեր լինի. եւ վասն այսորիկ դժուար է այս գործ քան զամենայն ինչ...»¹:

Նույն տեղում «զի՞նչ է պիտոյ կարգացողացն» հարցին Զուղայեցու տված պատասխանի մեջ մեկ առ մեկ թվարկվում են դարբնի բոլոր գործիքներն ու պարագաները. «Կռանն եւ պլէշտիկն, քուրան եւ կրակն, փուքսն, գործելին, գազն եւ կռանաւորքն, երկաթն եւ յետ ամենեցուն ջուրն, որով մխէ եւ ամրի»²:

Կարելի էր մեջբերել նաև աղեգործության, պարանագործության, ներկարարության և այլ արհեստների մասին Մատթեոսի հաղորդած տվյալներից քաղվածքներ, բայց բավականանա՞նք սրանով և անցնենք առևտրի ու շուկայական հաստատությունների մասին մեր հեղինակի հաղորդած տվյալներին:

Հայտնի է, որ մոնղոլական ծանր տիրապետության ընթացքում Հայաստանի ու հարևան երկրների քաղաքներին ծանր հարված հասցվեց: Համաշխարհային առևտրի մեջ նշանակալից դեր կատարող մի շարք բազմամարդ քաղաքների մոնղոլական տիրապետողների գիշատիչ հարկային քաղաքականության հետևանքով աստիճանաբար անկման դիմեցին: Քաղաքների մի մասն էլ շարունակում էր իր գոյությունը, սակայն շատ ավելի համեստ մասշտաբներով էր մասնակցում տարանցիկ առևտրին: Այնուամենայնիվ սխալ կլիներ կարծել, թե Մատթեոս Զուղայեցու ապրած ժամանակաշրջանում Հայաստանի քաղաքներն ամբողջովին կորցրել էին իրենց նշանակությունը՝ որպես միջազգային տարանցիկ առևտրի կարևոր հանգրվաններ:

Թավրիզից դեպի Սև ու Միջերկրական ծովերի նշանավոր նավահանգիստները տանող երբեմնի բանուկ ճանապարհների վրա, որոնք իրենց մի մասով անցնում էին Հայաստանի վրայով, դեռևս շարունակում էին իրենց գոյությունը մի շարք քաղաքներ (Երզնկա, Խլաթ, Արճեշ և այլն): Հայ

¹ Նույն տեղում, էջ 10ա:

² Նույն տեղում, էջ 19ա-19բ:

առևտրականները կարևոր դեր էին կատարում նաև հարևան երկրների առևտրի ու արհեստագործության նշանավոր կենտրոններում՝ Թավրիզում՝ Սուլթանիայում, Գանձակում, Թիֆլիսում, Ամիդում, Հալեպում և այլ մարդաշատ քաղաքներում:

Հայ խոշոր առևտրականները, որոնք այս շրջանում խոշա կոչումով են հանդես գալիս աղբյուրներում և, շարժական ու անշարժ հսկայական կալվածքների տեր դառնալով, կոչվում են նաև մեծատուններ, բացի առևտրական գործունեությունից, զբաղվում էին նաև վաշխառությամբ, հարկերի կապալառությամբ, իսկ հաճախ նաև կատարում էին երկրի տերերի հանձնարարությունները՝ որպես դիվանագետներ ու դեսպաններ:

Մատթեոս Զուղայեցու աշխատություններում ուշադրության արժանի վկայություններ կան նաև առևտրականների ու վաշխառուների գործունեության մասին: Այսպես՝ իր քարոզներից մեկում Զուղայեցին հայտնում է, որ ավագակները «ոչ կարեն յամենայն ժամ աւագակութիւն առնել եւ ոչ յամենայն տեղիս», իսկ վաշխառուները, ընդհակառակը, «վաշխ առնուն յամենայն ժամ զցայգ եւ զցերեկ, եւ յամենայն տեղիս՝ ի մէջ մարդկան եւ ի մէջ հրապարակի, եւ զամենայն թագաւոր, զիշխան, զաղքատ եւ զամենայն ոք»¹:

Միանգամայն ճիշտ տվյալ է հաղորդում մեր հեղինակը. վաշխառուներն իրենց շոշափուկները տարածել էին տնտեսության բոլոր բնագավառներում, և նրանցից կախման մէջ էին գտնվում նույնիսկ տիրապետող դասակարգի ազդեցիկ ներկայացուցիչներից շատերը:

Երկրի տիրապետողները, շահագրգռված լինելով, մտահոգվում էին առևտրական ճանապարհներն ապահով դարձնելու խնդրով, այնուամենայնիվ հարատև ու արյունալի պատերազմական բախումների, ֆեոդալական ու միջդինաստիական կռիվների պայմաններում, պարզ է, որ առևտրականները ստիպված պետք է լինեին ինքնապաշտպանության դիմելու: Ճանապարհներն ապահով չէին նաև գողերից ու ավագակներից. «Նոքա են գողք, - գրում է Զուղայեցին, - որք ի ճանապարհի եւ յանդառս եւ ի կիրճս լերանց նստեալ զպահողսն յայտնապէս յափշտակեն, որոց եւ գեղջուկքն հարամի ասեն»²: Առևտրական քարավաններն այդ պայմաններում շարժվում էին միայն զինված ջոկատների ընկերակցությամբ: «Զի զէնք եւ հեծեալս

¹ «Քարոզ վասն է մահու շափ մեղաց», ձեռ. N 2114, էջ 275բ:

² «Քարոզ ի բանն՝ Մի գողանար», ձեռ. N 2229, էջ 132ա:

առնուն ընդ յինքեանց (ճանապարհորդք), զի թշնամիքն յաղթեալ՝ սատակեսցին զնոսա», - հայտնում է Ջուղայեցին¹:

Քաղաքների շուկաներում ու փողոցներում կատարվող առևտրի եռուզեռի մասին Ջուղայեցին առիթ է ունենում օգտակար տվյալներ հաղորդելու «Քննութիւն Գործոց առաքելոց» աշխատութեան մի հատվածում, որտեղ ստուգաբանում է «փողոց» բառը: Նա ելնում է Տաթևի համալսարանի միջավայրում քաղաքացիություն ստացած այն սկզբունքից, ըստ որի առարկաների անունները դրված են նրանց հատկություններին համապատասխան: Նրա կարծիքով «փողոց» բառը կապ ունի «փող» (դրամ), «փող» (շնչափող) և «փոխ» բառերի հետ, որովհետև փողոցում «փողով են ամենայն արուեստք, որ ի նմա կատարի, զի առանց փողի ոչ առնուն եւ ոչ տան», կամ «այս ինչ տան եւ զայլսն փողիւն, որպէս զարծաթն տուեալ եւ ի նորին տեղիսն առնուն հաց կամ այլ ինչ», նաեւ այն պատճառով, որ «զամենայն ինչ ի նմա իբրեւ փողիւ գոչէ, թէ աստ եմ, մանաւանդ տեսարք ընչիցն ձայնեն՝ այս ինչ է առ իս»:

Հետաքրքիր է նաև շարունակությունը. «Ձղալպն (դրամի) յայտնեն, զի ամենայն ոք գնէ եւ վաճառէ ի միտս իւր թիւրութիւն, իբր թէ զվաճառակիցս իմ խաբեցից... Այլ ստուգաբանութեամբ է, զի այն տեղիքն ոչ է այնպէս, զի զբնակիչս իւր յափտեանս պահէ, այլ այսօր այս անուն խօճայ, ի վաղիւն՝ փոխի միւս ի տեղին նորա»²:

Ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում նույն աշխատության մի այլ հատվածը, որը նվիրված է կրպակ, գողբակ, խանութ, փոստկա և պանդոկ բառերի ստուգաբանությանը: Ջուղայեցու կարծիքով այդ բոլոր տերմինները միևնույն իմաստն ունեն՝ «ամենեքեան սոքա զմի իր նշանակեն, որ այժմ այլ լեզու քարուանսարահ կոչեն»: Հայտնի է, որ պանդոկը, նման եկեղեցու, բաժանված է լինում երեք բաժինների՝ «երիս տապաղայս. ի ներքոյ անասունքն, եւ ի միջին՝ մարդիկն եւ փոքր ապրանք, իսկ վերջինն՝ պատուական ապրշմեղէնք, ոսկեղէնք եւ ակունք պատուականք»³:

Մ. Ջուղայեցու և նրա ժամանակակից այլ հեղինակների աշխատություններում նմանօրինակ տվյալներ շատ կան, և հասկանալի է, որ այդ տվյալների հավաքման ու ի մի բերման միջոցով միայն հնարավորություն կունենանք լրացնել այն խոշոր բացը, որ սկզբնաղբյուրների պակասության

¹ «Քարոզ մահու», ձեռ. N 2229, էջ 160բ:

² «Քննութիւն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 183ա:

³ Նույն տեղում, էջ 266ա-266բ:

հետևանքով գոյություն ունի միջնադարյան հայկական քաղաքների ուսումնասիրության բնագավառում:

Ոչ պակաս արժեքավոր տվյալներ է հաղորդում մեր հեղինակը նաև քաղաքային մշակույթի, քաղաքներում տեղի ունեցող թատերական ներկայացումների, երիտասարդ քաղաքացիների հավաքույթների ու զվարճությունների մասին: Իր քարոզներից մեկում, օրինակ, ի նկատի ունենալով ամենայն հավանականությամբ քաղաքի արհեստավորական ու առևտրական շերտերին, նա գրում է. «աներկիւղք եւ պակասամիտք ելեալ ի թատերս նստին անամօթացեալք եւ ի դիւամոլ տեսարանէն աներեւոյթ նետով վիրաւորին եւ թէպէտ ոչ մարմնով, սակայն զոգիս պղծեալ ապականին»¹:

Հայագիտությունը դեռևս ստույգ տվյալներ չունի իր տրամադրության տակ միջնադարյան թատերական ներկայացումների բովանդակությունը որոշելու համար: Յավոք, այդ կարգի տվյալներ չեն գտնվում նաև Մատթեոս Զուղայեցու աշխատություններում: Այնուամենայնիվ այլ աղբյուրների հետ մեկտեղ հարցի քննարկման ժամանակ ուշադրություն են գրավելու նաև մեր հեղինակի կողմից գրանցված հետևյալ երկու տվյալները. «Ըմբշամարտք յորժամ ի թէատրոնն ընթանան մեծամեծք եւ փոքունք յարուցեալ մի զմիմեամբք անցանեն, զի տեսանիցեն զքաջութիւնս նոցա»²:

Որ թատրոններում տեղի էին ունենում նաև ըմբշամարտություններ, այդ հայտնի է նաև այլ աղբյուրներից:

Հաջորդ մեջբերումը քաղում ենք Զուղայեցու «Հաւաքումն բանից, որ հայի առ Զ աւուր գործս Աստուծոյ» աշխատությունից. «Թագաւորք, - գրված է այնտեղ, - նստեալ ի վերայ ապարանից իւրեանց՝ տեսանիցէ զխաղս թէատրոնի եւ ծաղր առնէ զնոսա»³:

Յանկալի էր այստեղ ակնարկված ներկայացման բովանդակության մասին ավելի շատ բան լսել, սակայն եղածն էլ բավական է հավաստելու համար, որ տեղի են ունեցել նաև ծիծաղաշարժ բովանդակությամբ ներկայացումներ:

Միջնադարյան քաղաքներում բանթողից հետո երիտասարդ արհեստավորներն ու առևտրականները հաճախ հավաքվում էին խնջույքի ու գինարբուքի: Այդտեղ էին մեր գուհանները երգում իրենց սիրո ու զվարճության երգերը, գեղեցկուհի վարձակները՝ պարում երաժշտական գործիքների

¹ «Քարոզ ցասման, ի բանն՝ Տէր Աստուած մեր, տուր մեզ...», ձեռ. N 2229, էջ 251բ

² «Քննութիւն Գործոց սոսիւրոց», ձեռ. N 1402, էջ 173ա:

³ Ձեռ. N 774, էջ 310ա:

նվագակցության տակ: Հնչում էին աշխարհիկ բովանդակությամբ տաղերն ու հայրենները: Եկեղեցական մատենագիրներից շատերն են պայքարել այդպիսի հավաքույթների դեմ. դրանցից է նաև մեր հեղինակը: Այդ երիտասարդներին Ջուղայեցին «լկտի» ու «յանդուգն» է համարում, իսկ նրանց մեջլիսներում կատարվածը՝ «աղտեղութիւն»: Նա գրում է. «Յամենայն աւուր լկտիքն ու յանդուգնքն ի քաղաքի ժողովին եւ ազգի ազգի աղտեղութիւն առնեն, որ յերեկոյի ժամուն սայրան սսեն»¹:

Մեջբերված տվյալներով հարկավ չեն սպառվում Մատթեոս Ջուղայեցու հաղորդած տվյալները միջնադարյան մշակույթի ու գրականության տարբեր բնագավառների վերաբերյալ: Մի տեղ, օրինակ, նա աշխատում է բացատրել, թե ձանձրության դեռ մարդկանց ինչ որոգայթների մեջ կարող է նետել: Թվարկված որոգայթներից առաջինն այսպես է որոշված. «ատել տա զուսումն եւ սսէ՛ զի՛նչ է այդ ամենայն, ո՞ կարէ ուսանել. եւ ազգի ազգի է. այս շարական է, եւ միւսն խաղտետր, եւ կցորդ, եւ Սողոմոն: Մին փոխ նարեկացի լաւ է, քան զամենայն սաղմոս Դավթի»²:

Այլևայլ առիթներով իր աշխատության մեջ Ջուղայեցին մեջբերում է նաև ժողովրդական առածներ, որ «գեղջուկքն սսեն». դրանցից է «սրտին սէրն ի տուրս ձեռին երեւի» և «սուտ վկային հուրն է բաժին»:

Մի հոդվածում անհնար է սպառիչ խոսք սսել Ջուղայեցու աշխատություններում իր ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, մշակութային երևույթների, ժողովրդի կյանքի ու կենցաղի հարցերին վերաբերող առատորեն ցրված բոլոր նյութերի մասին:

Մեր հեղինակը շատ կարևոր ասույթներ ունի նաև միջնադարյան հերձվածողների մասին, որոնք «զայսմ աշխարհի զուտելն եւ ըմպելն եւ զհեշտութիւնն քարոզեն», բազմաթիվ տեղեկություններ է հաղորդում ծառաների իրավական ու տնտեսական վիճակի մասին, անդրադառնում է վանական տնտեսությանը և որոշում վանքի գործավորների պարտավորությունները, գործածում է սոցիալական, ազմինիստրատիվ, հարկային ու իրավական բազմաթիվ սակավագյուտ տերմիններ (օրինակ՝ հռոգ, տոնլուխ, բասխախ, զապալայ, ճորտ) և այլն և այլն:

Այս բոլորից հետո տարակուսել չի կարելի այն բանում, որ Մատթեոս Ջուղայեցին գրավելու է իր վրա միջնադարյան պատմության այլևայլ բնագավառներն ուսումնասիրող պատմաբանների սկեռուն ուշադրությունը:

¹ «Քննութիւն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 232ա:

² «Վասն Բարոզութեան Բան» ձեռ. N 6607, էջ 52:

Բայց նրա կողքով սառնասրտորեն չպետք է անցնեն նաև միջնադարյան հայ հասարակական մտքի ու գիտությունների պատմության հարցերով զբաղվող մասնագետները: Նրանց ուշադրությանը ներկայացնենք մի քանի ուշագրավ փաստեր:

Մեր կարծիքով Զուղայեցին առաջին հայ հեղինակն է, որ փորձել է որոշել, թե որոնք են բնության մեջ ի սկզբանե ստեղծված նյութերը: Նրա կարծիքով այդ նյութերն են ոսկին, արծաթը, պղինձը, անագը, կապարը, երկաթը, լաժվարդը, ժիպակը, ծծումբը և զանազան թանկագին քարերը¹: Նա ձգտել է տալ նաև վերոհիշյալ սկզբնական նյութերի հատկությունները և տարբերությունները միմյանց նկատմամբ: Պղնձի հատկություններն, օրինակ, նա բնորոշում է հետևյալ կերպ. «Իսկ պղինձն ունի բազում յատկություն. նախ՝ զի ժանգ ունի բնական եւ դառն է եւ առանց կապարի ոչ հալի: Երկրորդ՝ զի մաշէ զգործօնեայս իւր: Երրորդ՝ զի վնասակար հոտ ունի...: Չորրորդ՝ զի որակ կարմիր ունի: Հինգերորդ՝ զի ապականիչ է ոսկոյ եւ արծաթոյ: Վեցերորդ՝ զի միայնակ ինքն ոչ ունի գեղեցկութիւն եւ ոչ յանօթ պիտոյանա: Եւթներորդ՝ զի ջեռուցանէ զջուրն: Ութերորդ՝ զի ազդումն տա ի կերակուրն փութով: Իններորդ՝ զի ջերմութիւն հրոյն թափանցէ ի նա իսկոյն, յորժամ հասանէ ի նա: Տասներորդ՝ զի նա է միաւորիչ երկաթի»²: Նման ձևով նա որոշում է նաև մյուս նյութերի հատկությունները:

Պարզ է, որ Զուղայեցու այս աշխատությունն արժանի է մեր քիմիկոսների ուշադիր քննությանը:

Շատ ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում, մեր կարծիքով Մատթեոսի բնագիտական հայացքները: Իր քարոզներից մեկում նա արտահայտում է այն միտքը, որ մարդիկ ևս սկզբից եղել են շորքոտանի, հետո միայն, անհրաժեշտությունից դրդված նրանք կանգնել են հետևի ոտքերի վրա, իսկ առաջին երկուսը ուղղելով դարձրել են իրենց համար գործիք: Անասունների և մարդկանց տարբերությունը Զուղայեցու կարծիքով հենց կայանում է նրանում, որ անասունները զուրկ են մտածելու ունակությունից, ուստի և շորքոտանի են մնացել*:

¹ Տե՛ս «Հատմանն բանից, որ հայի առ Զ աւուր գործս Աստուծոյ», ձեռ. N 774, էջ 331բ-332ա:

² Ձեռ. N 774, էջ 333ա:

* Լ. Խաչիկյանի այս եզրահանգումը վերանայելի է: Նախ՝ Մատթեոս Զուղայեցուց վկայակոչված հատվածում *կանգնեցաւ* ձևը կրավորական է, ինչը մեծամոտն մատենագետը իբրև ներգործական ձև է ընդունել: Քարոզում միաբժեֆորեն շեշտված է, որ մարդն արարվել է Աստուծո կողմից պատվի և փառքի մեջ և մեղքի անկումով կորցրել իր

Բնագիտության մասնագետներին թողնելով այս շատ ուշագրավ մտքի արժեքավորումը, անհրաժեշտ ենք համարում առանց կրճատման մեջ բերել նշված քարոզի մեզ հետաքրքրող հատվածն ամբողջությամբ, հնարավոր կասկածների առաջն առնելու համար:

«Ձի մարդս, - գրում է Ջուլայեցին, - կրկին գործ ունի առնել. մին՝ զի ոտաքն ընթանայ, եւ միւսն՝ զի առնէ արուեստ եւ գործէ զերկիր ձեռօք: Արդ, զի անասունք ոչ ունին միտք, որով արուեստ առնեն, վասն որոյ ոչ պիտոյանայ նոցա ձեռք, իսկ մարդս ունի իմաստութիւն եւ գիտութիւն եւ արուեստ եւ բան, որոց կարօտանան ձեռք, վասն որոյ ի հարկէ ի վերայ երկուց ոտից կանգնեցաւ եւ զերկուսն ուղղեալ գործի շինեաց բնութիւն բանին եւ արուեստին»¹:

Իր կյանքի վերջին տարիներին, ինչպես արդեն նշել ենք, Մատթեոս Ջուլայեցին վիրավորանքներ է կրել իր «անգութ եւ անհնազանդ» աշակերտներից և դառնորեն վշտացել «սուտ եղբայրների» հալածանքներից: Նա ոչինչ չի հայտնում այդ վիրավորանքների ու հալածանքների պատճառների մասին. մենք էլ վաղաժամ ենք համարում որոշակի որևէ բան ասել. բայց չի՞ կարելի արդյոք մտածել այն մասին, որ Ջուլայեցուն հալածել ու վշտացրել են հենց նրա արտահայտած ուշագրավ գաղափարների համար:

Իր վերջին աշխատության հիշատակարանում մեր հեղինակը վշտով արձանագրում է այն փաստը, որ հայերը օտարամոլ են, խոնարհվում են այլազգի հեղինակությունների առջև և, ընդհակառակը, արհամարհում են սեփական գիտնականներին նույնիսկ այն դեպքում, երբ օտարների նկատմամբ նրանք ունեն ակնառու առավելություններ: «Այլ եւ սովորութիւն է բնական մերոյ ազինս, - գրում է նա, - ի յօտար ազգաց իմաստից բանին ցանկալ եւ որոնել, թեև կարի յետնոց է արարեալ եւ զնոյն ընթեռնուլ եւ զիւրոյ հօր, թէեւ կարի մեծաց է աշխատեալ՝ ոչ ընդունել. վասն որոյ աղաչեմ՝ մի զանմտութիւնս զայս ի գործ ածել, այլ ընդ օտարացն եւ զքոյսս սիրել եւ մեծարել»²:

սկզբնական կատարելությունը, ոչ թե՛ անկատար կենդանական կերպերից հասել մարդկայինին: Այս միտքը հստակորեն արտահայտվում է արդեն Բարոզի բնաբանում. «Մարդն ի պատուի էր եւ ոչ իմացաւ, հաւասարեաց անասնոց անբանից եւ նմանեաց նոցա» [Մաղմ. ԽԸ 13] (Մեսրոպ Բանանա Արամյան):

¹ «Քարոզ ի բանն՝ Մարդ պատուի էր եւ ոչ իմացաւ», ձեռ. N 2229, էջ 109ա:

² «Ժե դարի հիշատակարաններ», էջ 120-121:

Ճշմարտացի քննադատության այս խոսքն ավելորդ չի լինի կրկնել մեր ժամանակներում թեկուզև այն պատճառով, որ մենք մոռացության ենք մատնել Մատթեոս Զուղայեցու նման մի խոշոր գործչի ու գիտնականի:

Մատթեոս Զուղայեցին միակը չէ միջնադարյան մոռացված կամ պատշաճ ուշադրություն չգրաված հեղինակներից: Այս կամ այն չափով նրան են նմանվում Սարգիս Շնորհալին, Վարդան Այգեկցին, Վարդան Արևելցին, Հակոբ Կլայեցին, Բարսեղ Մաշկեորը, Առաքել Սյունեցին և բազմաթիվ այլ իրենց ժամանակ մեծ դեր կատարած մատենագիրներ ու գիտնականներ: Նրանց մեծագույն մասը թողել է մեզ միայն աստվածաբանական աշխատություններ, կրոնական մեկնություններ և բարոյագիտական քարոզներ: Դրանց մեջ, ճիշտ այնպես, ինչպես՝ Մատթեոս Զուղայեցու աշխատություններում, հսկայական օգտակար նյութ կա գրանցված:

Կարծում ենք, որ հասունացել է միջնադարյան մեր մատենագիրների այդ կարգի աշխատություններից ըստ թեմաների կամ ըստ հեղինակների կազմված քաղվածո ժողովածուներ հրատարակելու ժամանակը: Այդ ճանապարհով միայն հնարավոր կլինի մասամբ լրացնել սկզբնաղբյուրների այն խոր պակասը, որ զգում է յուրաքանչյուր պատմաբան իր աշխատանքի հենց առաջին քայլափոխին, երբ փորձում է ձեռնարկել միջնադարյան Հայաստանի ներքին կյանքի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման գործը:

ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՅՏ ԷԶԵՐԻՑ*

Վերջին երկու տասնամյակների ընթացքում Մաշտոցի անվան Մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուն աճել է ավելի քան հազար միավորով: Նոր ձեռք բերված ձեռագրերի շարքում իր բովանդակած հետաքրքրական նյութերով ուրույն տեղ է գրավում անշուք արտաքին ունեցող փոքրիկ այն ձեռագիրը, որ գրանցված է 9832 համարի տակ: Նրա մասին առիթ ենք ունեցել արդեն մեր խոսքն ասելու՝ հրատարակելով ուղեգրական և պատմագրական երկու փոքրիկ բնագրեր¹: Այսու, գիտական շրջանառության մեջ ենք դնում նույն ձեռագրի նյութերից երկու ժամանակագրություն. մեկը՝ նվիրված Լանկ-Քամուրի դեպի Իրան և Անդրկովկաս կատարած առաջին արշավանքին առնչվող դեպքերին, մյուսը՝ 1392-1443 թթ. տեղի ունեցած քաղաքական կարևոր անցուղարձերին:

Ստորև քննարկելու ենք այդ բնագրերը՝ փորձելով որոշել նրանց հեղինակային պատկանելությունն ու պատմա-բանասիրական արժեքը:

1. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՎ ՆԵՐՍԵՍ ՄԵԾՈՓԵՑԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ պատմագիրներից թովմա Մեծոփեցին է առավել մանրամասնորեն անդրադարձել Լանկ-Քամուրի առաջին արշավանքին՝ նկարագրելով 1386-1387 թթ. Հայաստանում տեղի ունեցած ողբերգական անցուղարձերը: Գերիշխում է այն տեսակետը, որ նա «իբր ականատես գրէ զգործոց Լանկթամուրայ եւ այլոց բռնաւորաց»², սակայն այժմ, երբ հայտնի է Մեծոփեցու ծննդյան ճշգրիտ տարեթիվը (1378)³, դժվար է այլևս հավատալ, որ ապագա պատմագիրը, լինելով ընդամենը 9 տարեկան մի մանուկ, ի վիճակի էր իր հիշողության մէջ ամբարել վաղ պատանեկության տարիներին տեղի ունեցած խառնաշփոթ ու բարդ եղելությունների հիշատակները՝ տասնամյակներ հետո դրանք հանգամանորեն վերապատմելու համար: Եվ ահա, վերոհիշյալ N 9832 ձեռագրում պահպանվել է Լանկ-Քամուրի 1386-1387 թթ.

* «Պատմա-բանասիրական հանդես», 1972, N 4, էջ 231-248:

¹ «Սարգիս արեղայի ուղեգրությունը» («Պատմա-բանասիրական հանդես», 1970, N 3, էջ 125-148) և «Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի» («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, N 1, էջ 22-48):

² Մ. Չամչյանց, Պատմություն Հայոց, Ա, Վենետիկ, 1784, էջ 17:

³ 1444 թ. շարադրված իր մի հիշատակարանում Թ. Մեծոփեցին ինքնակենսագրական տվյալներ է հաղորդում. «Եւ ես, - գրում է նա, - ԿԶ (66) տարոյ եմ» («Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ա, Երևան, 1955, էջ 567). ըստ այդմ՝ ծնվել է 1378 թ.:

արշավանքի մասին հենց այն սկզբնաղբյուր-պատմությունը, որն իր ձեռքի տակ ունեցել և լայնորեն օգտագործել է Թովմա Մեծուփեցին:

Ըստ բովանդակության՝ պատմագրական այս երկը կարելի է բաժանել ութ հատվածների, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է մի որոշակի դրվագի նկարագրությանը: Ստորև թվարկում ենք այդ հատվածները՝ համառոտակի ներկայացնելով նրանց պարունակությունը:

1. Լանկ-Թամուրը քաղաքական պայքարի ասպարեզ է իջնում և սկսում իր նվաճումները:

2. Արշավում է Հայաստան: Կողբի տանուտերը փրկում է իր գյուղի և շրջակայքի բնակչությանը՝ դիմադրություն կազմակերպելով Թակալթու լեռան վրա:

3. Գետարգել սուրբ Նշանն անհայտանում է:

4. Վրաց Բագրատունիների ծագումը: Բագրատ V թագավորը (1360-1393), ծուղակի մեջ գցելով, բնաջնջում է թամուրյան մի զորախումբ, որը դրվել էր իր հրամանատարության ներքո վրացական ցեղերի նվաճման համար:

5. Թամուրը բախվում է Կարա-կոյունլու ցեղախմբի առաջնորդ Ահմադի և նրան ենթակա ամիրների զինական ուժերին: Մշո դաշտում տեղի է ունենում ճակատամարտ թամուրյանների և Փիր-Հասան ցեղապետի աշխարհազորի միջև: Թամուրյանները պարտություն են կրում: Կենտրոնական Հայաստանի մի շարք շրջանների բնավեր եղած բնակչությունը փրկվում է կոտորածից ու գերությունից:

6. Թամուրը գալիս Մուշ, այցելում ճակատամարտի վայրը, և, երկնային պատիժ համարելով իր զորախմբի բնաջնջումը, հրաժարվում է Փիր-Հասանի դեմ պատժիչ արշավանք ձեռնարկելու մտքից:

7. Արծկե քաղաքում բռնում են Կարապետ անունով Ջուղայեցի մի աբեղայի, որ վերագառնում էր Երուսաղեմից, և Թամուրի հրամանով եպիսկոպոս ձեռնադրելով ուղարկում են Սամարղանդ՝ որպես հոգևոր հովիվ այնտեղ հաստատված հայերի: Այս կապակցությամբ վերապատմվում են Սմբատ Վրկան մարզպանի ժամանակ միջինասիական երկրամասերում ի հայտ բերված հայկական բնակչության մասին առկա տվյալները:

8. Թամուրը գրավում է Վան քաղաքը. պարսից վար նետված մարդկանց դիակներից այնքան բարձր դեզ է գոյանում, որ հետո նետվածներն այլևս չեն մահանում: Թամուրյան մի իշխան ազատ է արձակում իրեն բաժին ընկած գերիներին՝ փրկելով Վասպուրական նահանգն իսպառ ամայությունից:

Այս տվյալներին հաջորդում է մի փոքրիկ պարբերույթ Լանկ-Թամուրի երրորդ արշավանքի մասին, որի ընթացքում պարտուժյան են մատնվել օսմանյան բանակները, և գերեվարվել է գոռոզ սուլթան Բայազիտ Ա Յըլդրուժը (1402 թ. յուլիս): Այս գրանցումն ըստ երևույթին կատարել է մեկ ուրիշ անձնավորություն՝ թերևս ժամանակագրական նախորդ դրվագների հետագա ընթացիկողներից մեկը:

Արդ, ո՞վ է քննարկվող երկի հեղինակը:

Այս հարցին պատասխան տալու համար 5-րդ դրվագում կան հակասական տվյալներ: Պատմելով Քաջբերունյաց երկրի հայ բնակչության դեպի Տարոն կատարած փախուստի մանրամասնությունները՝ հեղինակը հայտնում է, որ այդ բազմությունը դիմել է դեպի Մշո սուրբ Կարապետի վանք իր՝ Ստեփանոս վարդապետ Մեծոփեցու և Ներսես եպիսկոպոսի գլխավորությամբ: «Եւ ես Ստեփանոս վարդապետ Մեծյոբեցի եւ Ներսէս եպիսկոպոսն զփախստական քրիստոնայքն հանաք ի Սուրբ Կարապետ վասն զի Թամուրն քաղցր աշօք էր հայեալ ի յԱբկար եպիսկոպոսն», - գրում է նա:

Այսպես՝ դյուրին և մեկեն հեղինակի հարցը պարզված կարելի էր համարել, եթե ընդամենը մի քանի տող հետո, Քաջբերունիքից փախուստ տված ժողովրդի հոյժի լեռներում կրած տառապանքներին անդրադառնալով, հեղինակն իր մասին գրած չլիներ. «Զոր եւ ես, Ներսէս եպիսկոպոս կայի ի մէջ նոցա» նախադասությունը:

Ըստ այդմ, որպես պատմական դրվագների հեղինակ, մեկ դեպքում Ստեփանոս վարդապետն է ընթերցողին ներկայանում առաջին դեմքով (ընկերակցությամբ Ներսես եպիսկոպոսի), մյուս դեպքում՝ Ներսես եպիսկոպոսը միայնակ (առանց Ստեփանոսի):

Այս երկուսն էլ Քաջբերունյաց գավառի անվանի եկեղեցական գործիչներից են: «Հեզահոգի եւ սրբազան» Ներսես արքեպիսկոպոսը, Թ. Մեծոփեցու վկայությամբ, եղել է Մեծոփա վանքի հետագա առաջնորդ Հովհաննես վարդապետին քահանա ձեռնադրողը¹, ուստի եպիսկոպոս էր արդեն 1374 թ. կամ դրանից էլ մի քանի տարի առաջ²: Մեր ժամանակագրության տվյալ-

¹ Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 54:

² Ըստ Թովմայի՝ Հովհաննես Մեծոփեցին Ռոտմեցու բարձրագույն դպրոցում սովորել է 12 տարի («Երկոտասան ամ առ նա դարարեալ») և վարդապետական գավազան է ստացել Ռոտմեցու մանվանից հետո իր աշակերտակից Գրիգոր Տաթևացուց՝ «յետ անբան վերին կողմանն ի շար բոնատրէն Թամուր շաղաքայէն» (Թ. Մեծոփեցի, էջ 55-56), այսինքն՝ 1387-ից հետո: Ժամանակագրական այս տվյալների համադրումով հանգում ենք այն եզրակացության, որ Հովհաննես Մեծոփեցին ֆահանա է ձեռնադրվել 1374 թ., ուստի Ներսեսը Մեծոփա վանքի առաջնորդ և Քաջբերունյաց եպիսկոպոս է եղել այդ թվականից առնվազն մի քանի տարի առաջ:

ներով նա այդ պաշտոնում է եղել նաև Լանկ Թամուրի առաջին արշավանքի փոթորկահոյգ տարիներին: Ներսեսի կյանքի վերջին շրջանի մասին տվյալներ չեն պահպանվել, ուստի չգիտենք՝ երբ է կնքել իր մահկանացուն: Կարծում ենք, որ ոտք չի դրել XV դարի շեմին:

Ստեփանոս վարդապետի մասին առկա տվյալներն ավելի հստակ են. եղել է Հովհաննես Մեծոփեցու ընկերակիցը, շուրջ 1374 թ. նրանք միասին մեկնել են «առ մեծ վարժապետն Յովհաննէս մականունն Կանխիկ, յերկիրն Սիւնեաց ի յՈրոտն գաւառ»: Ստեփանոսը, բնատուր ձիրքերով օժտված, երեք տարում ավարտել է բարձրագույն ուսման դասընթացը, Որոտնեցուց ստացել վարդապետական գավազան և առաքվել Քաջբերունիք՝ «գալ մխիթարել զբազմություն քրիստոնէիցն եւ վանորէիցն անխրատից, զի անտերունչ էր գաւառն այն»¹: Շնորհալի այս վարդապետի գործունեությունն ընդհատվել է Լանկ-Թամուրի երկրորդ արշավանքի տարիներին: Կոտորածի ու գերեվարության սարսափից Քաջբերունյաց հայության հետ Կոզովիտ փախած և Դարա գյուղում ապաստան գտած Ստեփանոսը փակել է իր աչքերը 1395 թ.: Ականատես Թ. Մեծոփեցին այս կապակցությամբ գրել է. «Եւ եկեալ հասաք ի գաւառն Կոզովիտ ի գիւղն Դարա: Անդ հանգեաւ սուրբ վարդապետն Ստեփանոս՝ աշակերտ մեծին Յովհաննու Որոտնեցւոյն, յընկերաց սուրբ վարդապետին Յովհաննու»²:

Ժամանակակից ու գործընկեր այս երկու Մեծոփեցիների մասին առկա տվյալները հնարավորություն չեն ընձեռում կողմնորոշվելու, թե սրանցից որն է քննարկվող պատմական դրվագների ստույգ հեղինակը՝ Ներսես եպիսկոպոսը, թե՛ Ստեփանոս վարդապետը: Գրական-գիտական պատրաստություններ ձեռք բերած անձնավորությունը Ստեփանոսն է եղել՝ Հովհան Որոտնեցու ուշիմ աշակերտներից մեկը, բայց Ներսես եպիսկոպոսն էլ, Քաջբերունյաց տարագիր ժողովրդի հոգևոր առաջնորդի իր հանգամանքով, հեղինակ համարվելու պատշաճ թեկնածու է, մանավանդ որ հիմք չունենք մերժելու 5-րդ դրվագի «եւ ես՝ Ներսէս եպիսկոպոս կայի ի մէջ նոցա» մեզ արդեն ծանոթ տողի որոշակի ցուցումը:

Այս պարագաներում, մինչև լրացուցիչ տվյալների երևան գալը, արդարացի պետք է համարել Պատմության հեղինակ լինելու պատիվը նրանց միջև կիսելու հաշտեցուցիչ առաջարկը՝ ըստ այդմ գրվածքն օժտելով «Պատմութիւն առաջին արշաւանաց Լանկ-Թամուրայ՝ արարեալ Ստեփանոսի եւ Ներսէսի Մեծոփեցւոյ» խորագրով:

¹ Թովմա Մեծոփեցի, էջ 55:

² Նույն տեղում, էջ 47:

Այս գրվածքը գրեթե ամբողջությամբ մուտք է գործել Թովմա Մեծոփեցու Պատմության մեջ: Թովման, սակայն, ձգտել է հավելյալ տեղեկություններով հարստացնել իր օգտագործած սկզբնաղբյուրը, ճշգրտել ու լրացնել նրա մեջ պատմվող անցուդարձերն ականատես և ականջալուր մարդկանցից քաղած հավելյալ տեղեկություններով: Թովմայի կատարած հավելումների բնույթը ցույց տալու համար ստորև մեջբերում ենք քննարկվող դրվագներից երկրորդը՝ նրան զուգահեռ տալով Թ. Մեծոփեցու Պատմության համապատասխան պարբերությունը՝ ճոխացված լրացուցիչ տեղեկություններով:

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԵՒ
ՆԵՐՍԻՍԻ ՄԵԾՈՓԵՑԻՈՑ**

Եւ գնաց (Թամուր Լանկն) յերկիրն Սիւնեաց՝ ի վերայ բերդին Էրնճակու, եւ էառ զնա. զքաղաքն Սուրմարի ի հիմանց տապալեաց, որ էր պարսպեալ ազգին Բագրատունեաց: Իսկ բարի տանուտէր մի ի գեղջէն Կողբայ ազատեաց զիր գեղն եւ այլ բազում անձինք՝ հնարիւք ի լեառն Թաքալթու:

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹՈՎՄԱՅԻ
ՄԵԾՈՓԵՑԻՈՑ**

Եւ անտի շուեալ եկն յերկիրն Սիւնեաց ի վերայ դղեկին Երնջակու, եւ ապա ի վերայ երկրին Ճակատուց՝ էառ զքաղաքն Սուրբ Մարի, ի հիմանց տապալեալ զամուրն մեր, զոր էր ամրափակեալ պատուական ազգին Բագրատունեաց: Եւ գերեաց զքաղաքն եւ զամենայն շրջակայ գեղորայսն: Իսկ բարեպաշտ տանուտէր մի Մարտիրոս անուն, յոյժ զօրեղ զօրական, ողորմած եւ աղքատասէր ի գեղջէն Կողբայ, ելեալ ի լեառն Բարդող, որ կոչի յայլոց Թակալթու, յոյժ արի եւ քաջ մանկամբ գեղջն, ապրեցոյց զամենայն հաւատացեալսն մեծաւ պատերազմաւ եւ սրտապինդ զօրութեամբ, օգնութեամբ հօրին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ: Եւ թէպէտ բազում անգամ պատերազմեալ, ոչ կարացին առնուլ զլեառն զայն: Որ յետոյ այրն այն նահատակեցաւ ի պիղծ թուրքմանէն Սահաթ անուն, հեղձուցեալ ի շուրն Արագու անտես ի մարդկանէ (էջ 17-18):

Ինչպես տեսնում ենք, Թովման իր սկզբնաղբյուրի սեղմ շարադրանքն ընդարձակել է՝ եռակի օգտակար հավելում կատարելով միայն վերջին մասում Կողբի տանուտեր Մարտիրոսի եղեռնական վախճանի մասին: Այդ դեպքը, որ տեղի է ունեցել նկարագրված անցուդարձերից առնվազն մեկ-երկու տասնամյակ հետո, բնականաբար չէր կարող արձանագրված լինել Ստեփանոսի և Ներսեսի կողմից:

5-րդ դրվագում հակիրճ մի նախադասությամբ մեր հեղինակները ծանուցել են, որ «ի յայս ժամուս կին մի զիւր որդին ինքն մորթեց եւ ինքն ի վերայ որդոյն զինքն սպանեց, թէ շանկանինք ի Տաճիկ եւ ապականինք»: Սրա հիման վրա Թովմա Մեծոփեցին ընդարձակ մի վարք է հյուսել՝ այն պճնագարդելով սուրբգրական օրինակներով: Ինքնակամ նահատակված պատվախնդիր այս կնոջ մասին լրացուցիչ տեղեկություններ ժողովելու համար Թովմա Մեծոփեցին գնացել է Մուշ, տեսակցել ու զրուցել տեղյակ մարդկանց հետ. «Ի նոցանէ զճշմարիտն ստուգեցաք եւ ձեզ յիշատակ օրհնութեան Աստուծոյ թողաք», - գրում է նա¹:

Վերը շարադրվածից պետք չէ թյուր կարծիք կազմել այն մասին, որ Ստեփանոս և Ներսես Մեծոփեցիների Պատմության բոլոր տվյալներն անխտիր ու ծայրից ծայր օգտագործվել են Թովմայի կողմից: Ոչ, ամենևին: Հրապարակվող ժամանակագրական դրվագների մեջ կան նաև այլուստ անհայտ նորույթներ, ինչպես և հայտնի դեպքերի առավել ճշգրիտ՝ չգունագարդված ու չայլափոխված նկարագրություններ: Մասնավորապես հարկ է նշել, որ մեր հեղինակները, Լանկ-Քամուրի ասպատակությունների կործանարար բնույթը շեշտելով հանդերձ, փորձել են բացահայտել նաև աշխարհավեր այդ բռնակալի գործունեության իրական շարժառիթներն ու նպատակները: Ուշագրավ են հատկապես հայ վանական հաստատությունների և բարձրաստիճան հոգևորականության նկատմամբ Լանկ-Քամուրի որդեգրած դիրքորոշման մասին նրանց գրառումները: Մի առիթով նրանք ասում են, որ Քամուրը բարյացակամ է եղել («քաղցր աչօք էր հայեալ») Մշո Սուրբ Կարապետ վանքի առաջնորդ Աբգար Եպիսկոպոսի նկատմամբ, ի հետևանք որի «խիստ շէն էր վանքն Սուրբ Կարապետու». մեկ այլ կապակցությամբ նշում են, որ նա նվերներ է բաշխել Մշո շրջակայքում գտնվող երեք նշանավոր վանքերի (Աղբերկա, Առաքելոց և Ս. Կարապետի) առաջնորդներին և այլն:

Թովմա Մեծոփեցին իր Պատմության մեջ տեղ է հատկացրել Երուսա-

¹ Նույն տեղում, էջ 25-27:

ղեմից վերագարձող Կարապետ անունով ջուղայեցի մի աբեղայի՝ թամուրյանների կողմից ձերբակալվելու դրվագին՝ խոսելով նաև Սամարղանդ քշված քրիստոնյաների ու նրանց հավատքի մասին¹: Այդտեղից, սակայն, պարզ չի իմացվում, թե ինչ առնչություն կա Սամարղանդի քրիստոնյաների և վերոհիշյալ Կարապետ աբեղայի միջև: Հատվածի խաթարված իմաստը վերականգնվում է հրապարակվող բնագրի համապատասխան տողերի օժանդակությամբ: Պարզվում է, որ այդ ջուղայեցի աբեղային հենց Լանկ-Քամուրի հրամանով են բռնել ու եպիսկոպոս ձեռնադրել՝ հոգևոր առաջնորդի պաշտոնով Սամարղանդ ուղարկելու համար:

Թամուրյան կայսրության մայրաքաղաք Սամարղանդը դարձել էր առևտրի և արհեստագործության նշանավոր կենտրոն: Նվաճված բոլոր երկրներից մայրաքաղաք էին տարվում հազարավոր հմուտ արհեստավորներ, առևտրականներ, գիտություն և արվեստի գործիչներ և այլ զբաղմունքի տեր մարդիկ: Մեծ էր նաև հայերի թիվը: Կաստիլիայի Հենրիկոս թագավորի դեսպան Կլավիխոն, որ Միջին Ասիայում էր գտնվում XV դարի առաջին տարիներին, հայտնում է, որ «Նա (Քամուրը) բոլոր երկրներից այնքան տարացեղ ժողովուրդ է հաւաքել այս (Սամարղանդ) քաղաքում՝ ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց, որ բոլորը միասին, ասում են, թէ հարիւր յիսուն հազարից աւելի են: Նրանց մէջ կային շատ տարբեր ազգութիւններ՝ թուրքեր, արաբներ եւ մահմեդական այլ ազգեր, հայ քրիստոնեաներ եւ յոյն կաթողիկոսներ, նեստորականներ, յակոբիկներ եւ այն քրիստոնեաներից, որոնք կնունքը կատարում են դէմքի վրայ խարանելով»²: Քրիստոնյաների այս թվարկման մեջ հայերին առաջին տեղն է հատկացված՝ հավանաբար նրանց թվական գրակառուցությունը հաշվի առնելով:

Ստեփանոս և Ներսես Մեծոփեցիների Պատմության քննարկվող հատվածը մեծապես նպաստում է Միջին Ասիայի և մասնավորապես Սամարղանդի հայկական գաղթօջախի մասին մեր գիտելիքների ընդարձակմանը: Ինչպես տեսնում ենք, Լանկ-Քամուրն անձամբ մտահոգված է եղել իր կայսրության կենտրոնական շրջաններ տարագրված հայ գաղթականների՝ որպես ինքնուրույն համայնք կազմակերպելու, իրենց հոգևոր առաջնորդն ունենալու հարցերով:

Հրապարակվող բնագրում, անշուշտ, կան անհայտ անցուղարձերի մասին համառոտակի, բայց ճշմարտապատում այլ գրանցումներ ևս:

¹ Նույն տեղում, էջ 28-29:

² Рюи Гонзалес де Клавихо, Дневник путешествия к двору Тимура в Самарканд, в 1403-1406 гг. пер. И. И. Срезневского, СПб, 1881, с. 328.

2. ԿԻՐԱԿՈՍ ՌՇՏՈՒՆՅՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ստեփանոս և Ներսես Մեծոփեցիների պատմական դրվագներին կից, առանց սահմանաբաժան որևէ նշանի, N 9832 ձեռագրում ընդօրինակված է մի այլ ժամանակագրություն, որն ամփոփում է 1392-1443 թթ. տեղի ունեցած կարևոր անցուդարձերի մասին մեկ տասնյակ գրառումներ՝ տարեթվերի նշումով միմյանցից տարարանջատված: Դրանցից մի քանիսը գրեթե բառացի համընկնում են Մատենադարանի N 582 ձեռագրի 152բ-153բ էջերում ընդօրինակված ժամանակագրության համապատասխան հատվածներին: Նախ ծանոթանանք դրանց զուգակշիռ շարքին.

Ձեռագիր N 582

ՊհԱ (1392) դարձեալ եկաւ [Թամուրն] ի Բաղդատ եւ արար բազում աւերս ի միջագետս եւ դարձաւ յաշխարհն իւր...

ՊհԹ (1400) դարձեալ եկաւ իր վերայ Վրացն եւ էառ շատ գերի եւ գնաց յաշխարհն իւր եւ սատակեցաւ ՊԾԳ (1404):

ՊԾԵ (1406) Ղարայ-Ուսուվն, որ ի Թամուրէն փախաւ, եւ էջ ի Շամբն, եւ կապանօք տարան ի Մար, եւ անդ[ի] եկն ի Կարբոյ երկիրն եւ գնաց ի Դարեժ եւ էառ մինչեւ ի Սուլթանիայ

ՊԾԷ (1408) դարձաւ ի յԱրճէշ եւ յԱրճկէ եւ Շմեզդին ընկերեալ նմայ, արարին շատ աւեր Վանա եւ Ոստանայ¹:

Ձեռագիր N 9832

ՊհԱ (1392) կրկին գնաց ի Պաղտատ եւ աւերեաց:

ՊհԹ (1400) դարձեալ եկն ի Վրաց տունն եւ աւերեաց եւ առաւ շատ գերի, եւ գնաց Սմրղանտ եւ անդ սատակեցաւ:

ՊԾԳ (1404) Ղարայ-Ուսուվն, որ փախոցեալ էր ի Թամուրէն, եւ գնացեալ էջ ի Շամ քաղաք, եւ կապանօք տարան ի Մար, եկն ի Կարբի, եւ անդի գնացեալ էառ զԹարվէզ՝ մինչեւ ի Սուլտանիայ:

ՊԾԷ (1408) եկն ի յԱրճէշ, ի յԱրճկէ, եւ Շմեզդին ի Բաղըշու ընկերեաց նմա, արարին շատ աւեր...

¹ N 582 ձեռագրի «Ժամանակագրությունը» տպագրված է Վ. Հակոբյանի աշխատասիրությամբ «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.» (հտ. 1, Երևան, 1951, էջ 118-119) աշխատության մեջ: Այդ բնագիրը գրեթե ամբողջությամբ օգտագործել է նաև Առաքել Դավրիժեցին. շարահարելով տարբեր աղբյուրներից փաղված համանման տվյալներ՝ նա կազմել է համահավաք մի ժամանակագրություն՝ բառացի մոտեղով նրա մեջ նաև N 582 ձեռագրի ժամանակագրության մեզ հետաքրքրող հատվածները (տե՛ս «Պատմություն Առաքել վարդապետի Դարիժեցոյ», Վաղարշապատ, 1896, էջ 627-628):

Այս հատվածները ոչ միայն ազգակից են, այլև նույնական (եթե նկատի չունենանք խմբագրական աննշան տարբերությունները): Բայց այս ժամանակագրություններից յուրաքանչյուրում, մանավանդ N 9832 ձեռագրում կան հավելյալ մեծ ու փոքր հատվածներ: Այս հանգամանքը մտածել է տալիս, որ ի դեմս դրանց մեզ են հասել միևնույն ժամանակագրության՝ տարբեր ճաշակի տեր մարդկանց կողմից կատարված գույգ քաղվածքներ:

Ի հիմնավորումն այս եզրակացության կան նաև այլ կուլաններ: Սամուել Անեցու «Ժամանակագրութեան» շարունակողներից մեկը, նույնությամբ ընդօրինակելով N 582 ձեռագրի ժամանակագրության մեջբերված հատվածն ամբողջությամբ, հայտնում է, որ ինքը լուր քաղվածքներ է կատարել իր ձեռքի տակ եղած ավելի ընդարձակ ժամանակագրությունից: Նա գրում է. «Թողեալ զմանրամասնաւորսն եւ գրեցից զայնս, զորս ինձ են պիտանացուք»: Եւ դրանց հետո, մեծ թուիչք կատարելով, նա իր ընթերցողներին հրամայում է կաթողիկոսական աթոռն իջմիածնում վերահաստատելու, Կիրակոս Վիրապեցուն կաթողիկոս ընտրելու, ապա գահընկեց անելու մասին ստորև ներկայացվող տեղեկությունները.

ՊՂ (1441) զաջ Լուսաւորչին ի Սոռ զողացեալ բերին յիջմիածին, եւ վերստին հաստատեցին զկաթողիկոսութիւն՝ զԽորվիրապայ հայրն՝ զտէր Կիրակոս օրհնելով զկաթողիկոս:

ՊՂԲ (1443) ընկեցին զտէր Կիրակոս նախանձու, եւ Գրիգոր եպիսկոպոս Մակուեցի նստաւ թուրքով եւ ղաբալով¹:

Այս երկու պարբերություններից առաջինը բացակայում է և՛ քննարկվող «Ժամանակագրությունից», և՛ N 582 ձեռագրից, բայց որ եղել է սկզբնօրինակի մեջ, ինչպես ասացինք արդեն, վկայված է Սամուելի «Ժամանակագրութեան» շարունակողի կողմից: Ինչ վերաբերում է վերջին (1443 թ.) հատվածին, ապա հենց այս տեղեկության գրանցումով են ավարտվում «Ժամանակագրութեան» մյուս ընդօրինակությունները: Այսպես.

Ձեռագիր N 582

ՊՂԲ (1443) զտէր Կիրակոս կաթողիկոսն փոխեցին վասն նախանցոյ, եւ Մակուեցին նստաւ ղաբալով եւ թուրքով: Եւ զիս եւ Սարգիս վարդապետն տօգանել տվին. զինչ

Ձեռագիր N 9832

ՊՂԲ (1443) զտէր Կիրակոս հանին ի կաթողիկոսութէնէն եւ Մակուեցին նստաւ ղապալով:

¹ «Սամուելի Բաբանայի Անեցոյ Հաւաքումն ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 175:

վատութիւն որ արարին կաթողիկոսին եւ Սարգիս վարդապետին եւ ինձ, Աստուած թողոյ նոցա զմեզս նոցա¹»:

Այս հատվածի ամբողջական շարադրանքը (N 582 ձեռագրի ծավալով) պահպանվել է նաև Ա. Դավրիժեցու Պատմության մեջ: Դեռևս 1914 թ. անդրադառնալով դրան՝ անվանի բանասեր Գարեգին Հովսեփյանը հանգել է այն եզրակացության, որ այդ հատվածը գրված պիտի լինի Թովմա Մեծոփեցու կուսակից Կիրակոս վարդապետ Ռշտունցու կողմից²: Նույն տեսակետին է նաև Վ. Հակոբյանը, որն անձանօթ իր նախորդի ճիշտ եզրակացությունը, ավելի հանգամանորեն է անդրադարձել «Ժամանակագրութեան» հեղինակի հարցին³: Ըստ այդմ, նույն Կիրակոս վարդապետն է հեղինակը նաև մեր N 9832 ձեռագրում պահպանված ժամանակագրական հատվածների, որոնց մեջ, ինչպես տեսնելու ենք, անհայտ գրանցումներ կան նաև շատ հետաքրքրական անցուղարձերի մասին մինչև այժմ:

Արդ, ի՞նչ գիտենք «Ժամանակագրութեան» հեղինակ Կիրակոս Ռշտունցի վարդապետի մասին:

Թովմա Մեծոփեցին, անդրադառնալով Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի պաշտոնազրկման և աքսորման հանգամանքներին, պախարակում է հակառակորդ կուսակցության գործիչներին, մեղադրում նրանց վատաբարո արարքների մեջ. «Եւ կատարեցին զչար խորհուրդս իւրեանց, - գրում է նա, - եւ ապա սկսան զսպասուոր վարդապետք էջմիածնին՝ զվարդապետն Կիրակոս Ռշտունեանց եւ զրաբունապետն մեր զՍարգիս ի սուրբ ուխտէն Սալնապատայ մատնել անօրինաց. ի միոյն առին տասներեք հազար դահեկան եւ ի միւսոյն վեց հազար դահեկան՝ մատնութեամբ երկու եպիսկոպոսացն՝ Զարարէի եւ Անտօնի»⁴:

¹ ՄՄ ձեռ. N 582 ձեռագրում այս դեպքի գրանցումից հետո կան 1187-1294 թթ. վերաբերող մի քանի հակիրճ գրանցումներ, որոնք, ինչպես ցույց է տվել նաև հրատարակիչ Վ. Հակոբյանը, չեն առնչվում նախորդ հատվածներին և անշուշտ ֆաղված են այլ աղբյուրներից:

² Գարեգին վարդապետ Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914, էջ ԻԳ:

³ «Մանր ժամանակագրություններ», հտ. 1, էջ 113-114:

⁴ «Թովմա Մեծոփեցու Հիշատակարանը», հրատ. Կ. Կոստանյանց, Թիֆլիս, 1892, էջ 81-82:

Այս վկայությունից պարզվում է, որ Կիրակոս Ռշտունյաց վարդապետը, լինելով Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի ամենամերձավոր գործակիցներից մեկը, 1443 թ. հալածվել ու վտարվել է էջմիածնից և այնուհետև չբաժանվելով աթոռագուրկ արված կաթողիկոսի կուսակից խմբակցության պարագլուխ Թովմա Մեծոփեցուց, հավանաբար հաստատվել է Մեծոփա վանքում:

Սրա մասին լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ էր պարզել XV դարի առաջին հիսնամյակի գործիչ իրեն Կիրակոս Բանասեր կոչող անձնավորության ինքնությունը. Ռշտունցի և Բանասեր կոչվող Կիրակոսները տարբե՞ր մարդիկ են, թե՞ նույն անձնավորությունը: Այս հարցի պատասխանը գտնում ենք Կիրակոս Ռշտունցու «ժամանակագրութեան» մի բեկորում, որ ընդօրինակված է Մաշտոցի անվան Մատենադարանի N 1382 ձեռագրի 306բ կիսով չափ դատարկ թողնված էջի վրա, XV դարի ձեռագրով:

ՊՀ (1421) նստաւ Աքանդարն [ղան]

ՊՀԱ (1422) առաջին գալն Շահնուխին,

ՊՀԸ (1429) միջին գալն եւ Բուսախտն [ղան] եղիր եւ տանուտէր աղեղնաւորն.

ՊՁԵ (1436) յետին գալն եւ տանուտէր խեցգետին.

ՊՁԹ (1440) Զահանշէն Շամշուտէ առ եւ կոտորեաց աւելի քան զինն Ռ և մեծ սուք եթող քրիստոնէից, զի բազում թողին զՔրիստոս:

Քրիստոս Աստուած, ողորմեայ Կիրակոս Բանասիրին, եւ թող զմեզը նորին զմահու շափն եւ զներելին, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին եւ ամենայն սրբոց գնդին, ամէն¹:

Նման մի հիշատակագրություն էլ գտնում ենք N 582 ձեռագրի հենց այն հատվածի վերջում², ուր ընդօրինակված են մեզ հետաքրքրող ժամանակագրական նյութերը. «Քրիստոս Աստուած, ողորմեայ Կիրակոս Բան[ա]-սիրին եւ իւր ծնողացն եւ ամենայն արեան մերձաւորացն, ամէն...», - կարդում ենք այնտեղ³:

Այս տվյալներն իրավունք են տալիս այլևս պնդելու, որ իրեն Կիրակոս Բանասեր կոչողը ոչ այլ ոք է, քան Թովմա Մեծոփեցու կողմից Կիրակոս Ռշտունյաց վարդապետ կոչված անձնավորությունը: Իսկ այս եզրակացու-

¹ ՄՄ ձեռ. N 1382, էջ 306բ: Հմմտ. «Փե դարի հիշատակարաններ», Ա, էջ 506-507:

² Այս ձեռագրի մեջ կան տարբեր ժամանակներում և տարբեր անձնավորությունների կողմից արտագրված հատվածներ:

³ ՄՄ ձեռ. N 582, էջ 154բ: Հմմտ. «Փե դարի հիշատակարաններ», Ա, էջ 550:

թյունից հետո, հաջորդ քայլը կատարելով, դժվար չէ քննարկվող «Ժամանակագրութեան» հեղինակ Կիրակոս Բանասերին նույնացնել Թովմա Մեծոփեցու կենսագիր Կիրակոս Բանասերի հետ¹:

Կիրակոս Բանասերի «Ժամանակագրութեան» առավել ամբողջական պատկերը պահպանվել է N 9832 ձեռագրում: Այստեղ արժեքավոր տվյալներ կան Կարա-Կոյունլու Սքանդարի (մասամբ նաև նրա հոր՝ Կարա-Յուսուֆի) մղած պատերազմների ու Հայաստանի տարածքի վրա սփռած ասպատակությունների մասին, որոնք ճշգրտում ու ամբողջացնում են մեր գիտելիքները XV դարի 20-30-ական թթ. անցուդարձերի վերաբերյալ: Այս առումով հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Մշո դաշտի և շրջակա գավառների բնակչության գերեվարության և դեպի Սուլթանիե կազմակերպած բռնագաղթի մասին հատվածը և մասնավորապես՝ Սքանդարի և Բաղեշի քուրդ ամիրի միջև 1426-1428 թթ. ընթացքում ծավալված գոտեմարտերի նկարագրությունն այլուստ անհայտ մանրամասնություններով:

Խոսելով այն մասին, որ Սքանդարը մտադրվել էր քրդերից գրավել Բաղեշի բերդը՝ մեր ժամանակագիրը հայտնում է, որ «ամառն գայր Սքանդարն եւ աւերէր յորժամ խսարէր զԲաղէշ, եւ ոչ կարէր առնուլ, ձմեռն քուրդն եւլանէր ի Բաղըշ[ու] բերդէն եւ խեղճք զանաւթիքն եւ զթալնածքն նոր սպանանէր եւ անցուցանէր, թէ չի մնայ շինություն, որ գարունն Սքանդարն չի գայ ի վերայ Բաղըշու: Եւ ի յայսպիսի խեղճ տառապանաւք կային Գ(3) տարի Մուշ, Կինճ, Խնուս, Պուլանուխն, Սասնոյ կէսն... եւ այսպէս շնջեցան մեծ եւ փոքր, որ բնաւ շինություն չմնաց, դարձաւ աւերակ եւ ամալի»:

¹ Այս մասին «Թովմա Մեծոփեցու կյանքը» իր աշխատության մեջ կոահում ունի նաև մեծանուն Գ. Հովսեփյանը: Վկայակոչելով N 1382 ձեռագրում հիշատակված ժամանակագրական բեկորը՝ նա հայտնում է, որ «Կիրակոս բանասերը, [որ] գրել է Մֆանդարի եւ Ջհանշահի արշաւանքների տարեթուերը, հաւանօրէն նոյնն է մեր (այսինքն՝ Թ. Մեծոփեցու վարժի հեղինակ – Լ. Խ.) Կիրակոսի հետ» (տե՛ս նշ. աշխ., էջ ԺԵ, Յ-րդ ծանոթագրություն):

Տեղին է նշել, որ Կիրակոս Բանասերն իր մասնակցությունն է բերել Թ. Մեծոփեցու պատմագրական երկերի խմբագրման աշխատանքներին: Ամենայն հավանականությամբ հենց նա է մի տուփի մեջ միավորել իր ուսուցչի «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց», «Վասն միաբանութեան Հայոց եւ կաթողիկոս ձեռնադրութեանն», «Յաղագս էջմիածնին օրհնութեան եւ կաթողիկոս ձեռնադրութեանն ի նմա» և «Վասն ախորման տէր Կիրակոս կաթողիկոսին» խորագրերը կրող պատմագրական երկերը (վերջին երեքը մի ամբողջություն են կազմում, հրատարակվել են Կ. Կոստանյանցի աշխատասիրությամբ «Յիշատակարան կամ Պատմութիւն վերահաստատման արժոյն էջմիածնի» խորագրի տակ):

Կիրակոս Ռշտունցու «Ժամանակագրութեան» նորահայտ այս տարբերակը, որ ամենամբողջականը լինելով առ այսօր հայտնի ընդօրինակություններից ու քաղվածքներից¹ ուշադիր և արժեքավոր նորույթներ է պարունակում, մեզ է հասել գրչագրական աղճատումներով: Չգիտենք՝ հենց ա՞յս ձեռագրի, թե՞ գաղափար օրինակի գրիչը կոպիտ սխալներ է կատարել հատկապես թվականներն ընդօրինակելիս: Այսպես օրինակ՝ ՊԾԵ (1406) թվականին տեղի ունեցած դեպքերին նվիրված պարբերության թվականը սխալմամբ ՊԾԳ (1404) է նշանակել, ՊՀԷ (1428) և նախորդ տարիների անցուդարձերի համար (որոնք կապված են Սքանդարի գործունեության հետ) ՊԾԷ (1408) տարեթիվն է նշանակել (այդ ժամանակ Սքանդարը հազիվ 10-15 տարեկան պատանի էր), Ջհանշահի դեպի Վրաստան ձեռնարկած արշավանքի թվականը (1440 թ.) մեկ տարի առաջ է տարել և այլն:

Տարեթվերի այս աղճատումները դյուրությամբ սրբագրվում են «Ժամանակագրութեան» մյուս փոփոխականների, նույն տարիներին շարադրված հիշատակարանների և այլ սկզբնաղբյուրների համագումար տվյալներով: Բնագրի վերջում տրված ծանոթագրությունների մեջ հիմնավորված են սխալ տարեթվերի մեր կատարած սրբագրումները, ինչպես և ըստ հարկի լրացուցիչ տեղեկություններ են տրված պատմվող դեպքերի մասին:

Մեզ մնում է ասել, որ Կիրակոս Բանասեր Ռշտունցին իր այս «Ժամանակագրութեամբ» և «Պատմութիւն մեծի ընդանապետին Թումայի» գրվածքով² իրավամբ հայտ է ներկայացնում պատվավոր տեղ գրավելու XV դարի հայ պատմագրության խորշակահար անդաստանում:

Ստորև նույնությամբ հրապարակում ենք վերը քննարկված ժամանակագրական գույգ բնագրերը, որոնցից առաջինը՝ Ստեփանոս և Ներսես Մեծոփեցիների շարադրածը, գրավում է N 9832 ձեռագրի 19ա-22ա էջերը, իսկ երկրորդը՝ Կիրակոս Ռշտունցու «Ժամանակագրութիւնը»՝ 19ա-24ա էջերը:

¹ Նկատի ունենալով ՄԳ N 582 ձեռագիրը, N 1382 ձեռագրում պահպանված բեկորը, Սամուել Անեցու շարունակողներից մեկի կատարած ֆաղվածքը, ինչպես և Առաքել Գավրիթեցու Պատմության մեջ տեղ գտած «Ժամանակագրութեան» համապատասխան հատվածները:

² Տե՛ս Գարեգին վարդապետ Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, էջ 1-13:

**[ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱԻԱՆԱՅ ԼԱՆԿ-ԹԱՄՈՒՐԱՅ՝
ԱՐԱՐԵԱԿ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԵՒ ՆԵՐՍԻՍԻ ՄԵԾՈՓԵՑԻՈՑ]**

(1) ԹՎԻՆ. ՊԼԶ (1384) ելեալ Թամուր Լանկն ի Սմրղանտայ բազում հեծելու ի վերայ Թարվիզոյ խանին, զոր յառաջն զաւրական էր լեալ Թարվիզու խանին, եւ ի պատճառս ինչ փախստական գնացեալ ի Սմրղանտ, եւ եղեւ մեծ հարամիկ. եւ այս հնարիւքս առաւ զՍմրղանց, եւ զաւրացաւ, էառ զՊուխարայ: Եւ խաղաց ի յառաջ եւ էանց ընդ մեծ գետն Ջահուն, եւ էառ զԹագաւորանիստ քաղաքն Հրէ, եւ էառ զՇահ-Մանսուրն զտէրն Խորասանու եւ զամենայն աշխարհն նորա՝ զԽորասան, զՇիրազ, զՔրման, զԱսպահան, զԻւլապուհ, զԿուրան, զՄակուրան, զԹու[ս]ն, զԹաշան, զԴաղման, զՄազանտարան, զՐիէ, զՂում, զՔաշան¹: Եւ հասաւ մինչ ի Սուլթանիա, եւ անդի չուեալ եկն ի Թարվէզ եւ էառ:

(2) Եւ գնաց յերկիրն Սիւնեաց՝ ի վերայ բերդին էրնճակու, եւ էառ զնա, զքաղաքն Սուրմարի ի հիմանց տապալեաց, որ էր պարսպեալ ազգին Բագրատունեաց: Իսկ բարի տանուէր մի ի գեղջէն Կողբայ ազատեաց զիւր գեղն եւ այլ բազում անձինք հնարիւք, ի լեռն Թաքալթու²:

(3) Ի սոյն ժամանակս անփոփեցաւ Գետարգել սուրբ Նշանն, որ էր ի կենաց փայտէն, զոր (19բ) տուեալ էր Սեղբեստրոս սրբոյն Գրիգորի: Զոր Բ(2) աբեղայ Կաղզվանու, ի վանաց սուրբ հաւրն Վարդկայ, տարեալ պահեցին, եւ ճաղաթայն ի վերայ հասեալ սպան զաբեղայքն, եւ յետոյ շատ որոնեցին եւ ոչ գտին, զի այսպէս եղեւ [ի] խնամոցն Աստուծոյ³:

(4) Եւ աւերեաց աշխարհաւերն Թամուր զբոլոր աշխարհս եւ զՀայաստան աւելի քակեաց եւ մտեալ ի Տիխիս քաղաք եւ գերեաց իսպառ: Իսկ Թագաւորն Վրաց Բագրատ անուն յազգէն Հրէից, որք գերեցան յազգէն Բաբելեացոց յառաջն եւ յետոյ ի Տիգրանայ, եւ այս պատճառաւ խառնեցան յազգս մեր եւ յետոյ եղեն մեզ Թագաւորք ընդիրք, եւ նեղացեալ ի Յունաց եւ

¹ «Փամանակագրութեան» «զԹաշան... զՔաշան» հատվածը Թովմա Մեծոփեցու մոտ սրբագրված է այսպես. «զԹանշան, զԹամղան, զՄագանդարան, զՌիէ, զՂազուիմ» (Թ. Մեծոփեցի, էջ 12):

² Թ. Մեծոփեցու Պատմության համապատասխան հատվածից տեղեկանում ենք, որ Կողբ գյուղի այս ֆաջարի տանուտերի անունը Մարտիրոս է եղել, և որ նա հետագայում ջրախեղդ է արվել Արարատյան երկրի տիրակալ Ամիր-Սաադի հրամանով (Թ. Մեծոփեցի, էջ 17-18):

³ XV դարի սկզբներին (գուցե և շատ ավելի ուշ) հորինված մի հիշատակարանի համաձայն Գետարգել սուրբ նշանը 1401 թ. հայտնաբերվել է Հովհաննես, Թումաս և Կիրակոս կրոնավորների ջանքերով և պահ տրվել Ռշտունյաց գավառում (Ռստանից հարավ) գտնվող Սուրբ Եղիշեի կամ Վարդպատրկի վանքում (տե՛ս Ղ. Փիրղալեմյան, Նոտարի Հայոց, Կ. Պոլիս, էջ 15-16: Հմմտ. «Փե դարի հիշատակարաններ», Ա, էջ 53):

ի Պարսից տուրին զԱնի հոռմին, եւ փոքր Գագի[կ]ն էր աւծեալ թագաւոր, գնաց ի Մամրնդաւ, եւ այլ մնացեալքն ի Բագրատունեաց գնացին ի մէջ Վրաց եւ եղեն նոցա թագաւոր եւ յետոյ եղեն քաղկեդոնիկ. սայ բազում ընծաիւք գնաց առաջի Թամուրին: Իսկ արին Բագրատ խաբեաց զԹամուրն, թէ «Տո՛ւր ինձ զարք բազում, զի երթայց յազգն իմ, զամե[նե]սեան տաճկացուց», եւ են այսոքիկ՝ Դվալ, Աւեթ, Իմերէլ, Մկրէլ, Ափխազ, Սաւնքէր, Վրացի, Մսխ¹. եւ Թամուրն (20ա) [հ] աւատաց եւ ետ զարն ի ձեռն նորա, եւ նա տարեալ զարքն շողաթին՝ զամե[նե]սեան կոտորեաց. զառաջ ելին Թամ[ուր]ին Գ(3) որդիքն՝ Գորգին, Կոստանտին[ն], Դաւիթն, եւ եղեւ սեւերես:

(5) Բարկութեամբ ել աշխարհէս Հայոց ի վերայ Մահմատ խանին², եւ նա փախեաւ մինչեւ ի Ճապրխշուր: Եւ զարքն Թամուրին յաղթեցաւ, բայց Թամուրն մնաց ողջ եւ նոր զօրք ժողովեաց, ով ոք որ ցրուեալ էին. Թուրքման[ն] եկաւ ի Մուշ եւ Թամուր յետեւն:

Իսկ ի յայս խառնակմանէն, որ Բ(2) խանն իրար էին առեր, աշխարհս էր անտիրացեր: Երկիրն Քաջբերունոյ-Արճէշ, Խորխորոնաց տունն-Հանագահն, եւ Մանածկերտ-Հարքնիս³ փախեան ի Ճաղայթայէն եւ եկեալ հասին ի գաւառն Մշոյ՝ ի քնար սուրբ Կարապետու: Եւ ես Ստեփանոս վարդապետս Մեծյոբեցի⁴ եւ Ներսէս եպիսկոպոսն զփախստական քրիստոնայքն հանք ի սուրբ Կարապետ, վասն զի Թամուրն քաղցր աշօք էր հայեալ ի յԱբկար ե-

¹ Վրացական ցեղերի այս թվարկման մէջ աղավաղված է միայն Սավնքեր ցեղանունը, որով անտարակոյս նկատի են առնված սուանները (տե՛ս «Фома Мецопеци о Грузии», перевод, введение и комментарии проф. Л. Меликсет-Бека, Тбилиси, 1937, с. 20, ուր դեմ-դիմաց տրված է Թ. Մեծոփեցու համապատասխան հատվածի գրաբար բնագիրը՝ ֆաղված Կ. Շահնազարյանի հրատարակությունից, և վրացերեն թարգմանությունը):

² Այս Մահմատ խան կոչվածը թուրքմենական Կարա-կոյունլու ցեղախմբի առաջնորդ Կարա-Մունամադն է՝ նշանավոր Կարա-Յուսուֆի հայրը: Կարա-Մունամադը, սկսած XIV դարի 70-ական թթ., խոշոր դեր է կատարել Ջելալիդյան պետության ֆաղափական կյանքում: 1387 թ., երբ Թամուրն Ատրպատականի և Հայաստանի շրջաններն ասպատակելուց հետո իր հիմնական ուժերն ուղղել էր Ոսկե հորդայի դան Թողթամիշի դեմ, Կարա-Մունամադը փորձեց նույնիսկ իր տիրապետությունը հաստատել Ատրպատականում:

³ Հայոց միջնաշխարհի գավառների այս թվարկումը հասկանալի դարձնելու համար կրկնակ անուններով հիշատակված տեղանունները շաղկապել ենք գծիկներով: Վերջին (Հարֆնիս) տեղանունը ձեռագրում գրված է Հանրֆիս աղավաղ ձևով: Սրբագրել ենք Թ. Մեծոփեցու համապատասխան հատվածի օգնությամբ (տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 21):

⁴ Մեծոփա վանքի անունը միջնադարյան որոշ աղբյուրներում ստուգաբանված է որպես «Մեծ յոբ» (յոբ նշանակում է փոս)՝ վանքի մոտ եղող արհեստական խոր լճի անունից (տե՛ս Համագասպ Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 420-421): Ըստ այդմ, Ստեփանոս վարդապետի Մեծյոբեցի մականունը պետք է աղ-նատված համարել:

պիսկոպոսն, խիստ շէն էր վանքն սուրբ Կարապետու: Տէր Աբկարն եւ Յակոբ վարդապետն խիստ ընդունեցին զմեզ եւ զամէն փախստական միսիթարեցին կերակրով, պատարագօք եւ հաղորդութեամբ: Եւ անդի իջաք ի դաշտն եւ գնացաք ի Խասգեղ, որ գնայաք ի յԱրճէշ: Իսկ (20բ) զաւրքն Թամուրին կողոպտեցին զԽիզան եւ թալանեցին եւ յերաշխի տուին ի Խութայ Շէխ-Շարաւ անուն. եւ նա ի խնամոցն Աստուծոյ եհան զմեզ ի լեառն Խութա. եւ [յ] անկարծակի հասին զաւրքն Թամուրին ի վերայ Խիզանին՝ կոտորել եւ ի գերել: Զոր եւ ես՝ Ներսէս եպիսկոպոս կայի ի մէջ նոցա եւ տեսանէի զանողորմ խեղճն, զոր բազմությունն հաւատացելոցն աղաղակեցին առ Աստուած:

Եւ ի յայս ժամուս կին մի զիւր որդին ինքն մորթեց եւ ինքն ի վերայ որդոյն զինքն սպանեց, թէ շանկանինք ի տաճիկ եւ ապականինք¹: Իսկ յորժամ զայս խեղճս տեսաք այլ առաւել աղաղակեցաք ի Տեառն եղբօր սուրբ նշանն, որ կայր ի Վանդիրն, զոր բերեալ էր սուրբ առաքեալն Թադէոս, որ էր ի կենաց փայտէն: Եւ հայեցեալ ժողովուրդքն եւ գերիքն ի սուրբ Կարապետ եւ բարձր ձայնիւ աղաղակեցին, եւ ի միւս կողմանէ ամենեքեան յերկրպագեցաք սուրբ Առաքելոցն, որ է Ղազարու վանքն, զի անդ է հանգուցեալ ի մասանց Ղուկասու աւետարանչին եւ Անդրէի առաքելոյն, եւ Բ(2) աջն Պետրոսի եւ Պաւղոսի սուրբ առաքելոցն, զոր սուրբ Սեղբեստրոս եւ թագաւորն Կոստանդիանոս տուեալ էին պարգեւք Լուսաւորչին, եւ Լուսաւորիչն հանգուց ազգմամբ հրեշտակին ի լեառն Տիւրոսի՝ ի միջնադուրին ի թիկունս Մշոյ, որ ասի Ղազարու վանք, (21ա) վասն զի շինեաց Լուսաւորիչն զսուրբ առաքեալքն յորժամ եկն ի Հռոմայ ինքն եւ Տրդատ, եւ եղիր հայր վանացն զՂազար՝ եղբայրն Գլակայ:

Յորժամ որ գերիքն ամենեքեան, որ անկեալ էին ի ձեռն ճաղաթային բարձր ձայնիւ աղաղակեցին ընդդէմ սրբոցն, եւ բերեալ եզ մի զինեցաք ընդդէմ Ղազարու վանացն, յայնժամ եղեն մեծ հրաշք, զի Թուրքմանն Փիր-Հասանն, որ որոշեալ էր ի Ղարա-Մահմատէն եւ վասն երկիւղի Թամուրին

¹ Ներածական խոսքում ասել ենք արդեն, որ թշնամիների ձեռքը գերի շրնկներու համար կամովին նահատակված մայր ու որդու սրտանմիկ այս պատմությունը Թովմա Մեծոփեցու գրչի տակ առանձին վկայաբանական գրվածքի տեսք է ստացել՝ հոխացվելով այդ ժանրին հատուկ հնարաններով: Թովման Մեծոփա վանքի վարդապետների և աշակերտների հետ միասին իր տարագրության տարիներին (1435-1439 թթ.) անձամբ եղել է Մուշ քաղաքում, գնացել Սուրբ Կարապետի վանք, հանդիպում ունեցել 1387 թ. դեպքերին ականատես և ականջալուր մարդկանց հետ (հանվանն հիշատակվում է Գավիթ անունով մի կրոնավոր), որոնց պատմածների հիման վրա ընդարձակել է իր սկզբնաղբյուրի չոր ու ցամաք գրանցումը:

կամ էր ելանել ի Մովսսարն¹ եւ սակաւ մի զարք ընդ նմայ, յանկարծակի դիպեցան զարացն ճաղաթային, որ զանթիւ գերիսն տանէին: Եւ շաղաթայն հրաման առեալ ի Թամուրէն՝ զՓիր-Հասանն բռնել եւ զարքն կոտորել: Յայնժամ ճիշ բարձին գերիքն ի սուրբ Աղբերիկ եւ ի սուրբ Առաքելաքն եւ ի սուրբ Կարապետն, որ եւ աստ եղեւ մեծ սքանչելիք, զի ականերեւ Գ(3) սպիտակափայլ արք, հեծեալ ի ձի սպիտակ եւ գային ի վերայ աւոյնն որպես զարծիւ եւ խառնեցան ի զարքն Փիր-Հասանին, զոր պատմեաց մեզ ճգնաւոր արեղայն տէր Կարապետն, աչաւք էր տեսեալ ինքն եւ այլ բազումք ի գերելոցն: Եւ յայս հրաշիցս ուժ առեալ Փիր-Հասանն եւ կոտորեցին զշաղաթայն, զի մէկ թուրքմանն Ճ(100) շաղաթայ մորթեց, եւ գերեալքն ամենեքեան զերծեալք ի ճաղաթայն՝ որդօք եւ դատերաւք՝ արհնեցաք զԱստուած եւ զսքանչելագործ զսուրբս իւր (21բ)²:

(6) Իսկ երկրորդում աւուրն եկն Թամուրն ի Մուշ քաղաք, եւ կոչեաց առ ինքն զամիրայն նոցին եւ ասաց. «Տա՛ր զիս ի վերայ թուրքմանին, որ առնում զվրէժն իմ». եւ գնացին ի տեղի պատերազմին: Յայնժամ ետես Թամուրն իւր աչաւքն, որ առանց սրոյ մեռեալքն բազում էին, քան զսրով սպանածն. յայնժամ հիացաւ Թամուր Լանկն եւ ասաց. «Այս գործ աստուծոյ է». եւ երկուցեալ ի թուրքմանէն ի յետս դարձաւ, եւ խիլայեց զԳ (3) վանաց առաջնորդքն, եւ այլ ոչ նե[ն]գեաց Մշոյ, եւ գնաց ի Բաղէշ եւ արար սէր յետ ամիր Շարաւին:

(7) Անդի շուեալ եկն ի Արծկէ. ըմբռնեցին արեղա մի Կարապետ անուն, որ գայր յերուսաղէմայ, ի Ճուղայ գեղջէն, ետուն եպիսկոպոս արհնել հրամանաւ Թամուրին, եւ առաքեցին ի Սմրղանտ քաղաք՝ վասն ազգին Հայոց, որ գերեցան ի Շապհոյ ի ձեռն անաւրէն Վասակայ՝ յորժամ քաջ Վարդանն նահատակեցաւ: Ի թվին Հայոց Մ(602 թ.) Սմբատ Բագրատունին, որ պսակեցաւ Խոսրովու արքայէն Պարսից, գնաց աշխարհն Վրկանայ, որ ասի Սագաստան, որ է Սմրղանտ, եւ եգիտ անդ զգերեալ ազգս Հայոց, եւ մխիթարեաց զնոսա, զի մոռացեալ էին զլեզուն եւ զգիրն. նոր հաստատեաց

¹ Թ. Մեծոփեցու Պատմության տպագրի մեջ Մովսսար վիպաշունչ տեղանունն աղավաղվելով դարձել է ժողովարան (°):

² Պատերազմական այս գործողությունների և գերեվարված հայ բնակչության գլխին եկած փորձանքների մասին ընդարձակ այս հատվածը, շատ տեղերում գրեթե բառացի նույնությամբ, ընդօրինակվել է Թ. Մեծոփեցու կողմից: Վերջինս, սակայն, հոխացրել է իր շարադրանքը լրացուցիչ մանրամասնություններով: Խոսելով, օրինակ, Կարա-կոյուն-լու ապստամբ ցեղապետ Փիր-Հասանի մասին՝ նա հայտնում է, որ «յետ. ժամանակի» այդ ֆաշարի գործիչը Բայրամ անունով իր որդու հետ միասին սպանվել է Կարա-Մուհամադի կողմից և այլն (տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 23):

զգիրն եւ զլեզուն Հայոց ի մէջ նոցա, եւ արար զՀաբէլ էրէց՝ նոցա եպիսկոպոս: Եւ Լանկ Քամուրն զայս Կարապետ արեղայս (22ա) նոցա մխիթարութիւն առաքեաց ի Սմրղանդ¹:

¹ Սամարղանդում և շրջակա երկրամասերում բնակություն հաստատած հայերի համար Լանկ-Քամուրի հրամանով եպիսկոպոս ձեռնադրելու մասին ուշագրավ այս տեղեկությունը, որ Ք. Մեծոփեցու գրչի տակ ձևափոխվելով՝ մասամբ անհասկանալի է դարձել (տե՛ս Ք. Մեծոփեցի, էջ 21), բացառիկ արժեք ունի միջինասիական երկրամասերի հայ գաղթականության պատմությունն ուսումնասիրելու համար: Քննարկվող հատվածի այն մասը, ուր խոսվում է Վրկանաց երկրի (այստեղ սխալմամբ նույնացված է Սամարղանդի հետ) հայերի մասին, որոնք գտել է VII դարի սկզբներին Սմբատ Բագրատունի մարզպանը՝ լեզուն և հավատը կորցրած վիճակում, նորույթներ գրեթե չի պարունակում: Նրանց մասին տեղեկություններ կան Սեբեոսի, Հովհաննես Դրասխանակերտցու, Ասողիկի, Ինչպես նաև Սամուելի, Կիրակոսի և Մխիթար Այրիվանեցու մոտ (այս մասին տե՛ս **Н. Я. Марр**, Аркаун - монгольское название христиан, СПб., 1905, с. 48-49): Հրապարակվող «Ժամանակագրութան» մեջ վերոհիշյալ աղբյուրներից, արդեն հայտնի տվյալներից բացի, փորձ է արված նաև որոշելու, թե երբ է ստեղծվել Վրկանաց երկրի հայկական գաղութը. մեր ժամանակագիրների կարծիքով՝ գերեվարվել են «ի Շապհոյ, ի ձեռն անարէն Վասակայ, յորժամ քաջ Վարդանն անհատակեցա»: Պարզ է, սակայն, որ այս տեղեկությունները ժամանակավրեպ են (Պարսից Շապուհ արքան Վարդան Մամիկոնյանի և Վասակ Սյունեցու ժամանակակից է դարձված) և մեր հեղինակների մոտի ծնունդն են հանդիսանում:

Գիտենք, որ Վրկանաց երկրի հայերը շարունակում էին գոյատևել որպես կազմակերպված համայնք առնվազն մինչև Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի ժամանակները (X դար):

Միջինասիական հայկական գաղթօջախների մասին XI-XIII դարերից հավաստի տեղեկություններ չեն պահպանվել: Սակայն պետք չէ մտածել, թե աշխարհագրական այս միջավայրում նվազել է հայերի թվաքանակը: Ինչպես հայ վաճառականների երթևեկով, այնպես էլ հայկական կայուն բնակչություն ունեցող գաղթօջախների առկայությամբ հետավոր այս երկրամասերը նշանակալից են եղել նաև հետագայում: Այդ մասին առկա ցամ ու ցրիվ տեղեկությունները փորձել է ի մի բերել և իմաստավորել Ն. Մառը իր վերոհիշյալ “Аркаун” աշխատության մեջ (տպագրված է “Византийский временник” պարբերականի XII հատորում, 1905 թ., կա նաև առանձնատիպ):

Յոթնագետի (Սեմիրեչյե – այսպես է կոչվում Բալխաշ լճի ավազանը) շրջանում գտնվող Փիշպեկ գյուղի գերեզմանատանը անցյալ դարի վերջին հայտնաբերված հայերեն-ասորերեն տապանաքարը եկավ վկայելու, որ 1323 թ. այդ վայրում նեստորական ասորիների հետ միասին ապրում էին նաև հայեր՝ ունենալով իրենց եպիսկոպոսը (տապանաքարի վրա փորագրված է. «Տէր Յովան Հայոց եպիսկոպոս, ի ք. Հայոց էձձԲ գրեցաւ յիշատակարան»): հայտնի դարձավ նաև, որ 1375 թ. կազմված կատալոնյան մի ֆարտեզի վրա Իսսիկկով լճից հարավ մատնացույց է արված «հայկական մի վանք սուրբ Մատթեոսի անունով» և այլն (**Н. Я. Марр**, Надгробный камень из Семиречия с армянско-сирийской надписью, 1323, ЗВОАО, том VIII, с. 344-349; **В. В. Бартольд**, Очерк истории Семиречья, Фрунзе, 1949, с. 45):

Ուսումնասիրողները հակված են եղել այս միջավայրում նշմարվող հայերին ազգային եկեղեցուց կտրված սիրիական ֆաղկեդոնականների (մեթիդների) դավանանքին հարող համայնքի անդամներ համարելու: Այս խնդիրը, սակայն, կարոտ է ավելի հանգա-

(8) Եւ ինքն գնաց ի վերայ Վանայ, առ զնա. եւ անշափ մարդ կոտորեաց. մինչ զի յետին մարդն, որ ի քարէն ի վայր ընկնէր, այլ ոչ մեռանէր ի բազմութենէ դիակացն: Եւ զգերիքն բաժանեցին ի վերայ իւրեանց, եւ իշխան մի ճաղաթայ զիւր բաժին[ն] ազատ ար[ար], եւ նորա ազատեալ գերիքն Վասպուրականա շինութեան պատճառ եղեն¹:

(9) Գնաց Քամուրն ի Հոռմաց տունն, եւ զՍեբաստիայ աւերեաց, եւ զփոքրիկ տղայքն կալ արարին՝ ներքոյ ոտիցն ձիանուն: Եւ հասաւ ի Պուրսայ, եւ զՀոռմաց սուլտանն զԻշտրում Պայեագիրտն եւ զիւր կինն գերի արար, եւ զաշխարհն աւերեաց անողորմ Քամուր Լանկն²:

մանալից անկանխակալ հետազոտության: Միջինասիական հայկական գաղթաբանների պատմությունն ուսումնասիրելու համար ի թիվս այլ նյութերի պետք է օգտագործել նաև հայ կաթողիկոսներից մեկի (հավանաբար Մխիթար Գունեցու, որ գահակալել է 1341-1355 թթ.) ընդհանրական մի թուղթը, որ շարադրված է Ոսկե հորդայի դան Ջանիբեկի իշխանության տարիներին, այսինքն՝ 1342-1357 թթ. միջոցին: Հայ եկեղեցու գահակալը, իր օրհնությունը հղելով աշխարհասփյուռ հայությանը, մասնավորապես դիմում է իր հոտի այն բեկորներին, որոնք «սահեալ նժդեհութեամբ», բնակություն են հաստատել միջինասիական երկրամասերում: Ահա ընդհանրական թղթի մեզ հետաքրքրող հատվածը. «... եւ որք ի մասն արեւմտեան կողմանց սահեալ նժդեհութեամբ, եւ որք ի կողմանց Ասիացոց, որ եւ հիւսիսի, որ էք ի կող եւ ի յուս տիեզերաց, ինքնակալ տէրութեամբ եւ անյաղթ զօրութեամբ բազմեալ պաղատ ածապան (աստուածապա՛հ) մեծ դանիդ ճանիպէկի. սկսեալ անտի մինչեւ ի թագաւորական եւ յարհայանիստ հոյակապ քաղաք Գրիմ, յԱզախ եւ ի Սարայ, եւ որ շուրջ զբոլոր էթիլ (իմա՛ Վոլգա) գետով, եւ որք զՋահուն գետով, զօր Ամոյն կոչեն (իմա՛ (Ամու-Գարայ) ակումբ առեալ եւ ընդարձակ տարածեալ, այսինքն մինչեւ ի ծովն Կասբից)» (ՄՄ ձեռ. N 9622, էջ 671. այս շրջաբերական թուղթն արժանի է ամբողջական տպագրութեան):

¹ Լանկ-Քամուրը Վանը գրավել է 1387 թ. սեպտեմբեր ամսին, 26 օր տևող պաշարումից և համառ մարտերից հետո: Այդ մասին տեղեկություններ են գրանցել ժամանակակից մի շարք հիշատակագիրներ և ժամանակագիրներ: 1388 թ. շարադրված մի հիշատակարանում, օրինակ, ասված է, որ գրավելով Վանի բերդը՝ Լանկ-Քամուրն այն ավերել է. «բարահատակ արար զոմանս գերեաց եւ զոմանս գահավիժեաց եւ զայս ի սուր սուսերի մաշեաց եւ զերկիրն հրով նարակեաց» («ՓՊ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 573): Մեկ ուրիշը չափածո ողբ է հյուսել այդ մասին (նույն տեղում, էջ 589-590).

Առնու գրդեակն զՎան քաղաքի.

Չողորմի մեծի եւ ոչ փոքրի,

Ջամէն ի բերդն ի վայր ձգի

Ու զմնացեալն գերի տանի:

² Ներածական խոսքում արդեն ասել ենք, որ վերջին պարբերությունը, որի մեջ տեղեկություններ են գրանցված 1401-1402 թթ. անցուղարձերի մասին (Սեբաստիայի գրավում, օսմանյան սուլթան Բայազիտ Ա-ի գերեվարում և այլն). հավանաբար շարադրված է մի այլ անձնավորության կողմից:

[ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԻՐԱԿՈՍԻ ԲԱՆԱՍԻՐԻ ՌՇՏՈՒՆՅԻՈՅ]

[ՊՂԵ (1386) Թամուրն եկաւ ի Դաւրէժ եւ Նախշվան եւ զՎան, կոտորեաց աւելի քան ԳՌ (3000) մարդ]¹:

ՊԽԱ (1392) կրկին գնաց ի Պաղտատ եւ աւերեաց:

ՊԽԹ (1400) դարձեալ եկն ի Վրացտունն եւ աւերեաց եւ առաւ շատ գերի, եւ գնաց Սմրղանտ եւ անդ սատակեցաւ [ՊԾԳ (1404)]²

ՊԾԱ (1402) թագաւորեաց որդի Թամուրին Շահրուզ իմիրզան:

ՊԾԵ (1406)³ Ղարա-Ուսուֆն, որ փախուցեալ էր ի Թամուրէն, եւ գնացեալ էջ ի Շամ քաղաք, եւ կապանօք տարան ի Մար, եկն ի Կարբի, եւ անդի գնացեալ էառ զԹարվէզ՝ մինչեւ ի Սուլտանիայ:

ՊԾԷ (1408) եկն ի յԱրճէշ, ի յԱրճկէ, եւ Շմըզտին ի Բաղըշու ընկերեաց նմա, արարին շատ աւեր: Եւ անարէն Ղարայ-Ուսուֆն անշափելի շար եղաւ, մինչ զի սահման եղաւ կանանց, յորժամ որ տղայքն լային, նա զայս ասէին. «Մի լայք թէ՛ եկաւ Ղարա-Ուսուֆն» (22բ)⁴:

ՊՀ (1421)⁵ էլաւ Շահրաւզն ի Սմրղանտու եւ եկաւ, կոտորեաց զՂարա-Ուսուֆն, եւ նստաւ որդին Ղարա-Ուսուֆին Աքանդարն ի Թավրէզ, եւ ձՌ

¹ «Ժամանակագրութեան» առաջին այս պարբերությունը փաղել ենք N 582 ձեռագրից, որի մեջ սկզբնավորությունն ամբողջական է: Առանց այս պարբերության անհասկանալի էր մնալու հաջորդ հատվածը, որ սաված է, թէ՛ «ՊԽԱ (1392) կրկին գնաց (ն՝վ գնաց) ի Պաղտատ եւ աւերեաց»:

² Լանկ-Թամուրի մահվան թվականը լրացրել ենք N 582 ձեռագրից, որ ՊԽԱ և ՊԽԹ թվականների տակ գրանցված հատվածները պահպանվել են անվթար՝ պարունակելով լրացուցիչ տեղեկություններ: Մեջբերում ենք այդ հատվածներն ամբողջությամբ. «ՊԽԱ (1392) դարձեալ եկաւ ի Բաղդատ եւ արար բազում աւերս ի Միջագետս եւ դարձաւ յաշխարհս իւր: Եւ էր սուլտան Ահմատի որդին սուլտան Տահիրն ի յԱլմըշ բերքն. եւ Վրաց թագաւորն եկն ի վերայ բերքին եւ էառ, եւ սուլտան Տահիրն տարաւ ի Տիֆլիս: Եւ Թամուրն իբրեւ լուսա զայս ՊԽԹ (1400) դարձեալ եկաւ ի վերայ Վրացն եւ էառ շատ գերի եւ գնաց յաշխարհս իւր եւ սատակեցաւ ՊԾԳ (1404) («Մանր ժամանակագրություններ», 1, էջ 118-119):

³ Մեր ձեռագրում տարեթիվն աղնատվելով՝ դարձել է ՊԾԳ (1404). ուղղել ենք ըստ N 582 ձեռագրի:

⁴ Կարա-Յուսուֆի անունը տալով երեխաներին վախեցնելու մասին ուշագրավ այս տեղեկությունը բացակայում է N 582 ձեռագրից. և ընդհակառակը՝ այնտեղ, այս հատվածի անմիջական շարունակությամբ, կարդում ենք ստորև բերվող հետաքրքրական տեղեկությունը Բաղեշի փուրդ ամիր Շամս-եղ-դինի և Ոստանի Ամիր-եզդինի միջև տեղի ունեցած կռիվների մասին. «Եւ միս տարին (այսինքն՝ 1409-ին) Շմեզդնի հեծելն եկին եւ այրեցին զՇատուան: Եւ բարկացեալ Ամիր-եզդին[ն] գնաց եւ այրեաց Կ (60) գեղ ի Բաղիշոյ» («Մանր ժամանակագրություններ», 1, էջ 119):

⁵ Տարեթիվը մեր ձեռագրում նշանակված է ՊՀԸ, այսինքն՝ 1429, որ վերաբերում է հաջորդ պարբերության մեջ պատմվող դեպքերին: Ըստ N 582 ձեռագրի ուղղում ենք ՊՀ (1421):

(100,000) հեծելով եկաւ ի վերայ Մշոյ, Բաղըշու, եւ խսարէց գարնանէ մինչեւ յիսնակամուտն, եւ ոչ կարաց առնուլ. յայնժամ գերեաց զկէսն Սասնոյ, եւ զՄշու դաշտն զամէն, զԽութ, զԿինճ, զՎարդով, զԽնուս, զՊուլանուխն. զայսքան երկիրս գերեաց, եւ սուրկուն արար զամէնն, եւ տարաւ ի Սուլթանիա. զգրեանքն այրեաց, զլեզուն խափանեաց եւ հաւատոց եհան:

Իսկ յորժամ լսեց զչարութիւնն Աքանդարին Շահրուխ իմիրզան¹, ելաւ ի Սմրզանտա էճՌ (700.000) մարդով եւ եկն ի վերայ Աքանդարին: Եւ անաւրէն Իսքանդարն ճՌ (100.000) – [աւ] փախեաւ ի Շահրաւղէն, եւ հասաւ Շահրուղն ի Ղլաթ. եւ պատերազմեցան եւ յաղթեցաւ Իսկանդարն, փախեաւ եւ անկաւ ի Զուլամերկ: Եւ [Շահրուղն] զՊուսախտ խանն եգիր ի Թարվէզ, եւ ինքն գնաց ի Հրէ, այլ ի Սմրզանդ: Զանացաւ Շահրուխ իմիրզան, զի Աքանդարն շատ աւերք կանէր ի աշխարհիս²:

Այլ Շահրուխն զիր որդին զՈւլուխբէկն եգիր ի Սմրզանդ: Եւ ասորի երէց մի նեստորական երթեալ ի Սմրզանդ ի տուն մի իշխանի (23ա) արար սպասաւորութիւն եւ հաւանեցոյց զպարոնն, մինչ զի տունն յինքն վստահացաւ, անկաւ ի յետ կնոջ իշխանին: Եւ գնաց զաշխարհն իւր, եւ գրեաց թուխթ եւ յղրկեաց ի Սմրզանդ, թէ «Սուտ է ձեր աւրէնքն, ես եկի, զձեզ խաբեցի եւ զձեր կանայքն խայտառակեցի»: Եւ իշխանին առեալ ցթուխթն տարաւ առ Ուլուխբէկն իմիրզան. եւ նայ հարցեալ, թէ որ ազգէ էր, եւ ասացին, թէ յեսայի էր: Եւ տղա թագաւորն հրաման ետուր զքրիստոնայքն, որ անդ ի Սմրզանդ էին՝ զորս կոտորել եւ զորս տաճկացնել: Այս շարիս եղեւ եւ գործեցաւ ի ձեռն անաւրէն ասորի երիցոյ մի: Եւ գնաց եպիսկոպոս մի Յովանէս անուն ի Մեծոբայ՝ մականուն Զանկի, ի մէջ նոցա գերելոց պատճառաւ, եւ տեսեալ էր զայս խեղճ, եւ եբեր մեզ զբաւթն³, վասն զի խիստ ընտիր քրիստոնեայք էին եւ ընդունողք կարգաւորաց, եւ ունէին ընտիր եկեղեցիք

¹ Շահրուխի երկրորդ արշավանքը տեղի է ունեցել ՊՀԸ (1429) քվականին (տե՛ս նախորդ ծանոթագրությունը):

² Լանկ-Թամուրի որդի Շահրուխի (1409-1447) առաջին և երկրորդ արշավանքների մասին կարևոր մանրամասնություններ պարունակող այս գրանցումները N 582 ձեռագրում անճանաչելի համառոտվելով՝ այսպիսի կերպարանք են ընդունել. «Յառաջին գալն Շահրուխին ՊՀ (1421) եւ խոյն տանուտէր, յաղթեաց թուրքմանին եւ գնաց: Բ(2) գալն ՊՀԸ (1429) եւ աղեղնատր տանուտէր, կոտորեաց զթուրքն ի Սալամաստ եւ զԲուսախտն դան եղիր եւ գնաց յաշխարհ իւր» («Մանր ժամանակագրություններ», 1, էջ 119):

³ Այս նախադասության «գերելոց» բառը մեր ձեռագրում բացահայտ վրիպակով դարձված է «գրոց», ուղղում ենք ըստ Թ. Մեծոփեցու Պատմության ստորև մեջբերվող հատվածի. «Եւ գնացեալ եպիսկոպոսն մեր Յովաննէս մականուն Զանկի վասն գերելոց, գրեաց եւ զայս բօք դառնութեան եբեր մեզ. վա՛յ մեզ» (Թ. Մեծոփեցի), էջ 28):

*եւ քահանայք. ամէն խափանեցան ի ձեռն շարագործ իրիցոյ ասորոյ միոյ՝
Պէլէ (1428)՝ անաւրէն Սքանդարն դարձեալ կոտորեց եւ աւերեաց*

¹ Սամարղանդի և ողջ թամուրյան պետության (Մավերաննահրի) ֆրիստոնյա գաղութի աննիտման մասին այս տեղեկությունն ամբողջությամբ (աննշան լեզվական փոփոխություններով) տեղ է գտել Թ. Մեծոփեցու Պատմության մեջ (էջ 28-29) և այդ աղբյուրի միջնորդությամբ ճանաչվել արևելագետների կողմից որպես թամուրյան պետության սահմաններում բնակություն հաստատած ֆրիստոնյաների (մասնավորապես՝ նեստորականների) պատմության վերջին արարի ճշմարտացի նկարագրություն: Այս մասին տե՛ս Ի. Պ. Պետրուշևսկու «К истории христианства в Средней Азии» հոդվածը (տպագրված է «Палестинский сборник» պարբերականի մեջ. вып. 15(78), 1966, с. 141-147):

Կիլիկյան Հայաստանի նշանավոր ֆաղափական գործիչ Սմբատ Գունդստարը 1248 թ. Միջին Ասիայում եղած ժամանակ մի նամակ էր հղել Կիպրոսի թագավորին, որի մեջ Սամարղանդի ֆրիստոնյաների, մանավանդ նրանց հոգևոր առաջնորդների մասին խիստ ֆննդատական տեղեկություններ կան («նրանք, ովքեր այստեղ ֆարոգիչ են համարվում, արժանի պետք է լինեն խիստ պատիժների» և այլն): Սմբատը նկատել է, որ նախկինում ֆրիստոնյաներին սարսափի մեջ պահող մահմեդականներն այժմ (այսինքն՝ մոնղոլների աշխարհակալության սկզբնական շրջանում) «իրենք են կրկնակի հալածվում» և այլն (В. В. Бартольд, Сочинения, том II, часть 2, 1964, с. 317): Երկար չի տևում, սակայն, Սամարղանդի ֆրիստոնյաների արտոնյալ այս վիճակը: XIII դարի 50-ական թթ. վերջերից արդեն ուժերի հարաբերակցությունը փոխվում է հօգուտ մահմեդականների: Մոնղոլ ավագանու զորեղ մի խմբավորում, մահմեդականությունն ընդունելով որպես պետական կրոն, թշնամական դիրք է գրավում ֆրիստոնյաների նկատմամբ, և 1256-1259 թթ. միջոցին մահմեդականներին հաջողվում է մի եկեղեցու մեջ ոչնչացնել ֆրիստոնյա հավատացյալներին և ավերակների կույտ դարձնել այդ շինությունը (այս մասին տեղեկություններ է հաղորդել պարսիկ պատմագիր Ջուվեյնին իր «Քարաֆատ-ի Նասիրի» աշխատության մեջ):

Այս տեղեկությունը, սակայն, ինչպես իրավացիորեն նշել է Ի. Պետրուշևսկին իր վերոհիշյալ հոդվածի մեջ, վերաբերել է միայն Սամարղանդի ֆրիստոնյա համայնքներից մեկին: Քրիստոնյաները հետագայում ևս, մինչև XV դարի 20-ական թթ., շարունակել են զգալի դեր խաղալ Մավերաննահրի տնտեսական կյանքում, մանավանդ առևտրի և արհեստագործության մարզերում: Ուշադրության արժանի է Կիրակոս Բանասերի ֆննդարկվող պարբերության վերջին հատվածը, որի մեջ Սամարղանդի ֆրիստոնյաները, մինչև նրանց զանգվածային բարձումը, մեծարված են որպես ընտիր և առատաձեռն հավատացյալներ («Վասն զի խիստ ընտիր ֆրիստոնեայք էին եւ ընդունող կարգաւորաց եւ ունէին ընտիր եկեղեցիք եւ ֆահանայք»):

Սամարղանդի ֆրիստոնյաների բնաջնջումը, որի պատմությունը շարադրված է 1421-1428 թթ. դեպքերին նվիրված պարբերությունների միջնամասում, ըստ երևույթին տեղի է ունեցել 20-ական թթ. առաջին տարիներին, քանի որ Ուլունբեկը, որի հրամանով օրենքից դուրս են հայտարարվել Սամարղանդի ֆրիստոնյաները, այստեղ կոչված է «տղա թագաւոր» (ծնվել է 1394 թ., Սամարղանդի կառավարիչ նշանակվել 1409թ.): Ի. Պետրուշևսկու կարծիքով ևս՝ այս դեպքը տեղի է ունեցել 1421-1429 թթ. միջոցին (տե՛ս նշ. աշխ. էջ 146):

զՄուշ՝ գմնացեալքն, վասն զի ջանայր, որ առնէր զԲաղէշ ի (23բ) քրդուն եւ առնէր իւրն ամրոց, եւ ոչ կարէր: Յայնժամ ամառն գայր Աքանդարն եւ աւերէր՝ յորժամ խսարէր զԲաղէշ եւ ոչ կարէր առնուլ, ձմեռն քուրդն ելանէր ի Բաղըշ[ու] բերդէն եւ խեղճք զանաւթիքն եւ զթալնածքն նոր սպանանէր եւ անցուցանէր, թէ շի մնա շինություն, որ գարունն Աքանդարն շի գայ ի վերայ Բաղըշու: Եւ ի յայսպիսի խեղճ տառապանաւք կային Գ(3) տարի Մուշ, Կինճ, Խնուս, Պուլանուխն, Սասնոյ կէսն, վասն զի սովն եւ տարածամ մահն սաստկացեր էր եւ ամենեքեան հալածանաւք կային, զի մայրն որդովքն յերիկուն ի վար պարկէին, եւ առաւաւտուն կու տեսանէին, որ մայրն՝ որդովքն մեռեալ էին: Եւ այսպէս ջնջեցան մեծ եւ փոքր, որ բնաւ շինություն չմնաց, դարձաւ աւերակ եւ ամայի:

Իսկ Աքանդարն է (7) տարի ժՌ (10.000) մարդով եղեւ հարամի, զՄիջագետս, զՀոռմաց տունն՝ զամէն աւերէց: Եւ եկն Եզրնկան, կամէր ձմեռնէր, քանզի որ հեծեալն ի վերայ վարնէր, ինքն թողուր ու փախչէր եւ նոր հեծել ժողովէր:

ՊԶէ (1438) դուրն ի Մարա, որ ասեն Չարքազ, յանկարծ (24ա) ակի հասաւ յԵզրնկան ի վերայ Աքանդարին, կոտորեաց զաւրս նորա, եւ Աքանդարն փախաւ ըստ իւր սովորութեան եւ կամէր կրկին հեծել ժողովէր. յայնժամ իւր զարքն ձանձրացեալ էին, զինքն սպանին, եւ զիւր որդին² զՃիհանշահ արին թագաւոր ի Թավրէզ, ապա թէ սակաւ մի հանդարտեցաւ աշխարհս³:

¹ Այս պարբերության թվականը գրչական ակնհայտ վրիպակով ՊԾէ (1408) է նշանակված: Տասնավոր թիվը ուղղում ենք դարձնելով Հ (70)՝ նկատի ունենալով, որ այստեղ նկարագրված անցուդարձերն իրոք տեղի են ունեցել 1426-1428 թթ. ընթացքում: Թովմա Մինասենց անվանի գրիչը 1428 թ. շարադրած իր նշանավոր հիշատակարանում, անդրադառնալով նույն այս դեպքերին, գրել է. «Իսկ ի յՊՀԳ (1425) թուին էառ ամիրգա Մհանդարն գՎան եւ զայլ բերդորայքն, եւ մըլքեց զաշխարհս մեր: Եւ միս այլ տարին գնաց ի վերայ Բաղիշոյ: Եւ այս Գ (3) տարի է, որ Բաղէշ է խըսար է, եւ զվերջն Աստուած գիտէ» («Փե դարի հիշատակարաններ», Ա, էջ 376): Կիրակոս Բանասերը նույնպես անդրադառնում է Բաղէշի բերդի եռամյա պաշարմանը՝ շատ ավելի մանրամասն ու կարևոր տեղեկություններ հաղորդելով պատերազմական գործողությունների ընթացքում շրջակա գավառների հայ գյուղացիության կրած տառապանքների մասին:

² Այս տվյալը սխալ է: Ջհանշահը (1437-1467) Մհանդար Կարա-Կոյունլուի եղբայրն է և ոչ որդին:

³ Մհանդարի փոթորկահույզ գործունեության վերջին շրջանի մասին կարևոր այս պարբերությունը, Կիրակոս Բանասերի «Ժամանակագրութեան» N 582 ձեռագրում պահպանված տարբերակում խիստ համառոտվելով, ստացել է այսպիսի կերպարանք. «ՊԶէ (1438) դուրն եկաւ ի յեզնկէն եւ սպանաւ: Մհանդարն ի յորդոյն եւ նստաւ Ջսանշէն»: Այստեղից անկարելի է իմանալ, թե ով է «դուլ» կոչվածը, և ինչ հանգամանքներում է սպանվել Մհանդար Կարա-Կոյունլուն («Մանր ժամանակագրություններ» հրատարակչության կողմից):

ՊԶԹ (1440)¹ գնաց ճիհանշան ի Վրացտուն, առաւ զՇամշուլտէ. ԳՌ (3000) մարդ կոտորեաց եւ ԹՌ (9000) գերի արար²:

ՊՂԲ (1443) զտէր Կիրակոսն հանին ի կաթողիկոսութենէն եւ Մակեցին նստաւ զապալով³:

տարակշի չհիմնավորված կարծիքով՝ «դու» անվան տակ թափնված է եզնկայի իշխող Օթմանը): Ըստ այդմ, մեր ձեռագիրը այս դեպքում ևս անաղարտ է պահել ժամանակագրութեան բնագիրը: Սակայն նույնը չենք կարող ասել քննարկվող հատվածի տարեթվի վերաբերյալ: Մեր ձեռագրում գրված է ՊԶԸ (1439), որ սրբագրում ենք N 582 ձեռագրի ՊԶԷ (1438) տարեթվով՝ հաշվի առնելով նաև Կիրակոս անունով մի գրչի՝ Բաղեշում շարադրված հիշատակարանի ստորև մեջբերվող պարբերությունը. «... եւ ղանութեան Ջհանշան միրզին, որ այսամ ամի Սֆանդար՝ եղբայր նորա սպանաւ ձեռամբ որդոյ իւրոյ եւ նստաւ թաղթն Ջհանշէն, եւ ի թվականիս Հայոց ՊԶԷ (1438)» («ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 487): Տեղին է այստեղ նշել, որ Սֆանդարը սպանվել է 1437 թ.: Այդ դեպքից մի քանի ամիս հետո, բայց արդեն հաշորդ՝ 1438 թ. շարադրված հիշատակարանների մեջ բնականաբար կարող էին «յայսամ ամի» անորոշ դարձվածքը գործածել՝ հաշվի չառնելով, որ, ըստ անշարժ տոմարի, մարդկությունը թևակոխել է արդեն հաշորդ թվականի սահմանները:

¹ Այս տարեթիվը, մեր ձեռագրում նույնպես աղհատվելով, դարձել է ՊԶԷ (1439): Ուղղում ենք նկատի ունենալով N 582 ձեռագիրը («Մանր ժամանակագրություններ», I, էջ 119), «Ժամանակագրութեան» N 1382 ձեռագրում պահպանված պատասիկը («ԺԵ դարի հիշատակարաններ», Ա, էջ 506), Հովհաննես գրչի շարադրած վկայաբանական գրվածքը Սամշուլդի Բիստունյա բնակչության կոտորածի մասին (նույն տեղում, էջ 507) և այլ ժամանակակից սկզբնաղբյուրներ: Մասնավորապես միաբերան Ջհանշանի դեպի Վրաստան կատարած արշավանքի և Սամշուլդի աղետի տարեթիվը 1440 թ. են նշում:

² Այս հատվածից հետո Կիրակոս Բանասերի «Ժամանակագրութեան» անաղարտ բնագրում ըստ երևույթին եղել է 1441 թ. դեպքերի մասին այն գրանցումը, որ փրկել է Սամուել Անեցու «Ժամանակագրութեան» շարունակողներից մեկը՝ իր հաշակով որոշ ֆաղվածքներ կատարելով «Ժամանակագրութեան» ամբողջական բնագրից: Ահա այդ գրանցումը. «ՊՂ (1441) գաջ լուսատուչին ի Ստյ գողացեալ բերին յՅմիածին եւ վերստին հաստատեցին զկաթողիկոսութիւն, զհորվիրապայ հայրն՝ զտէր Կիրակոս օրհնելով զկաթողիկոս» (Սամուել, էջ 175):

³ Այս վերջին հատվածը համառոտագրվելով՝ հեռացել է նախնական բնագրից ու գրկվել հեղինակի մասին ունեցած կարևոր տվյալներից: Ինչպես նշել ենք ներածական խոսքի մեջ, այս հատվածը համեմատաբար անաղարտ պահպանվել է N 582 ձեռագրի մեջ. այսպես «ՊՂԲ (1443) զտէր Կիրակոս կաթողիկոսն փոխեցին վասն նախանցոյ եւ Մակուեցին նստաւ զաբալով եւ թուրով: Եւ զիս եւ Սարգիս վարդապետն սոգանել տուին, զինչ վատություն որ արարին՝ կաթողիկոսին եւ Սարգիս վարդապետին եւ ինձ՝ Աստուած թողոյ նոցա զմեզս իւրեանց» («Մանր ժամանակագրություններ», 1, էջ 119):

ՍԱՐԳԻՍ ԱԲԵՂԱՅԻ «ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆԸ»*

Միջին դարերում Երուսաղեմից հետո քրիստոնյա ժողովուրդների համար բարեպաշտական ուխտագնացությունների նշանավոր վայրեր էին համարվում Հռոմը, ուր, ըստ ավանդության, գործել և նահատակվել էին Պետրոս ու Պողոս առաքելները, և Սպանիայի հյուսիս-արևմտյան ծայրամասում (Գալիսիայում) գտնվող Սանտյագո դե Կոմպոստելլա քաղաքը, ուր իբրև թե պահվում է Հակոբ առաքյալի գլխատյալ մարմինը: Այդ սրբավայրերն այցելողների թվում եղել են նաև բազմաթիվ հայ ուխտագնացներ, որոնք հաղթահարելով մեծ դժվարություններ՝ հեռագնաց ճանապարհորդությամբ Հայաստանից հասել են մինչև Սպանիայի անձանոթ այդ ափերը՝ բարի հիշատակ թողնելով իրենց մասին¹:

XV-XVI դարերում ասիական և եվրոպական երկրների միջև տեղի ունեցող առևտրի մեջ հայ վաճառականության դերի ընդլայնմանը զուգընթաց բազմանում են վերոհիշյալ երկրներում դեգերող հայ մարդիկ: Այժմ արդեն ուխտագնացությունից ավելի նրանց սկսում է հետաքրքրել իրենց այցելած երկրների քաղաքական ու տնտեսական վիճակը, ժողովուրդների վարքն ու բարքը, տեսած քաղաքների բնակչության թիվն ու զբաղմունքը, նշանավոր վանական և քաղաքացիական շինությունները և այլն: Օտար բռնակալական լծի տակ կեղեքվող հայ ժողովրդի գործիչները սկսում են այցելել եվրոպական երկրներ նաև իրենց հայրենիքի ազատագրության համար օգնություն ստանալու սին հույսերով և քաղաքական այլ նպատակներով՝ հաճախ ստանձնելով դիվանագիտական հանձնարարություններ Իրանի, Վրաստանի և այլ երկրների գահակալներից:

Եվրոպական երկրներում շրջագայած առաջին նշանավոր հայը եղել է Մարտիրոս եպիսկոպոս Երզնկացին, որ 1489-1495 թթ. դեգերել է Իտալիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում, Ֆլանդրիայում, Անգլիայում, Ֆրանսիայում և Սպանիայում՝ հետագայում հակիրճ գրի առնելով իր ճամփորդական տպավորությունները²:

* «Պատմա-բանասիրական հանդես», 1970, N 3, էջ 125-148:

¹ Դրանցից են Սիմեոն Հայր (X դար), Դավիթ Հայկազնը (XII դար), Կիլիկյան Հայաստանի վերջին գահակալ Լևոն V-ը և ուրիշներ (տե՛ս «Բազմավեպ», 1937, NN 2-5, էջ 51-52):

² Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրությունը» վաղուց հայանի է հայերեն բնագրով ու եվրոպական թարգմանություններով: Martyr (Evêque), Relation d'un voyage fait en Europe et dans l'Océan Atlantique à la fin du XVe siècle le règne de Charles VIII; trad. en français par J. Saint-Martin, Paris, 1828 (ֆրանսերեն թարգմանություն): «Մար-

Մարտիրոսից շուրջ մեկ դար հետո, 1586 թվականին, Որոտանի շրջանի Գետաթաղ գյուղից մի երիտասարդ՝ Փիրզատա անունով, նույնպես ձեռնարկում է հեռագնաց ճամփորդության. «Իմ տանէն ելայ, ասկայկան մոլորեցի, օտար աշխարհ եկայ», - գրում է նա¹: Թուրքիայից անցնելով Լեհաստան՝ Փիրզատան լինում է Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, այնուհետև այցելում է Սպանիա՝ «Մատրիլ քաղաքն... մեծ թագաւորին թախտն», և եվրոպական այլ երկրներ:

1598 թ. անշուշտ հայազգի բանագնացի միջոցով Քարթլիի Սիմոն թագավորը (1558-1600) Թիֆլիսից հայերենով մի գրութչուն է ուղարկում Սպանիայի թագավոր Փիլիպոս II-ին Թուրքերի դեմ քրիստոնյա պետութչունների զինական ուժերը միավորելու և միասնական պայքարի ճակատ ստեղծելու անհրաժեշտության մասին: Նամակից պարզ է դառնում, որ առաջինը «Թուղթ ու գիր սիրոյ միաբանութեան» ուղարկողը եղել է Սպանիայի թագավորը: Չպետք է տարակուսել, որ այս բանակցութչունները հայ գործիչների միջոցով են իրականացվել²:

Բանասիրութչանը հայտնի հաջորդ հայազգի ուղեգնացը, որ իր ճանապարհորդութչունների մասին հետաքրքրական տվյալներ է գրանցել ինքնակենսագրական բնույթ ունեցող դրվածքի երկրորդ մասում, Երնշակի շրջանի Ապարաներ գյուղի ունիթոր քահանա Ավգուստինոս Բաջեցին է:

XVII դարի սկզբին, մտերմանալով սպանացի մի դիվանագետի հետ, որը շահ Աբասի մոտ իր գործերն ավարտելով՝ պատրաստվում էր եվրոպա վերադառնալ, Ավգուստինոսը դառնում է նրա ուղեկիցներից մեկը և Ռուսաստանի վրայով անցնում եվրոպա. լինում է Լեհաստանում, Գերմանիայում, Սպանիայում, Պորտուգալիայում և Իտալիայում: Անսեթևեթ լեզ-

տիրոս եպիսկոպոսի Երզնկացոյ ուղեգրութիւն ի Սպանիա» («Բազմավեպ», 1937, NN 2-5, էջ 49-60): Վ. Հակոբյան, Մարտիրոս Երզնկացու համապարհորդական նոթերը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, N 6, էջ 97-110): Relación de un viaje por un viaje por Europa, con la peregrinación a Santiago de Galicia verificado a fines siglo XV, por Mártir obispo de Arzenyan (պորտուգալերեն քարգմանությունը և ներածական հոդվածը՝ Emilia Gayangos de Riaño-ի):

¹ Փիրզատա Ղափանեցու փոբրիկ «Ուղեգրությունը» տպագրված է «Բազմավեպի» 1882 թ. համարում (էջ 317-318): Հատվածներ է հրատարակել նաև Աշոտ Հովհաննիսյանը «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» աշխատության Բ հատորում (Երևան, 1959, էջ 76-77)՝ փաղելով Տիրայր վարդապետի կազմած Օֆսֆորդի Բոդլեան գրադարանի հայերեն ձեռագրերի ամտիպ ցուցակից («Ուղեգրության» բնագիրը պահպանվել է այդ գրադարանի N 122 հայերեն ձեռագրում):

² Աշոտ Հովհաննիսյան, նշ. աշխ., էջ 74:

վով մեր ուղեգիրը նկարագրում է իր կյանքի դրվագները հայրենիքից հեռու ընկած երկրներում հատուկ ուշադրություն դարձնելով տեսած բազմաթիվ քաղաքների ու վանական հաստատությունների շինվածքին, նրանցում պահվող սրբություններին¹:

Ավգուստինոս Բաջեցին դեռ չէր ավարտել իր դեգերումները, երբ աշխարհ տեսնելու, տարբեր ժողովուրդների կյանքն ու կենցաղը ուսումնասիրելու մեծ ծրագրով ճանապարհորդական գավազան վերցրեց ու Լվով քաղաքից դուրս եկավ օտար երկրներ թափառելու հայ ուղեգրական գրականության իսկական ռահվիրա, մեծատաղանդ Սիմեոն դպիր Լեհացին: 1608 թ. սկզբներին դուրս գալով Լվովից՝ նա եղավ Ստամբուլում, Մարմարի և էգեյան ծովերի առափնյա քաղաքներում, Վենետիկում, Հռոմում, Ֆլորենցիայում, ապա Փոքր Ասիայում ու Հայաստանում, Եգիպտոսում, Պաղեստինին սրբավայրերում, Սիրիայում և այլ վայրերում: Խորաթափանց և սրատես մեր ուղեգիրը՝ լայն աշխարհայացքի և դեմոկրատական հայացքների տեր մի անձնավորություն, իր գեղեցիկ գրվածքում ոչ միայն ոգևորությամբ ու կենդանի գծերով նկարագրում է տեսած վայրերի արժանահիշատակ հուշարձանները, այլև հատուկ ուշադրություն դարձնում ժողովրդական-աշխատավորական խավերի տնտեսական ու իրավական վիճակի վրա, մասնավորապես բացահայտում Թուրքական կայսրության տաժանակիր լծի տակ կեղեքվող ժողովուրդների թշվառ ու իրավազուրկ կյանքի իրական պատկերը: Սիմեոն դպիր «Ուղեգրությունն» առաջնակարգ սկզբնաղբյուր է նաև հայկական Սփյուռքի ու հարավ-արևելյան Եվրոպայի մի շարք երկրների պատմության համար²: Նշանավոր այս աշխատությամբ ավարտվում է միջնադարյան հայ ուղեգրությունների շղթան, և գրականության այդ ժանրը դուրս է գալիս խանձարուրային իր վիճակից:

Սույն հրապարակումով ընթերցողների ուշադրությանը ներկայացվող ուղեգրությամբ լրացվում է եվրոպական երկրներ այցելած տպավորությունները գրանցած հայ ուղեգիրների աղքատիկ ցանկը XVI դարի վերջին տասնամյակներին ապրած Մարգիս աբեղայի անունով: Այս նոր ուղեգիրն

¹ Տպագրված է Ք. Պատկանյանի «Նշխարք մատենագրութեան Հայոց» աշխատության մեջ (Ս. Պետերբուրգ, 1884, էջ 5-23)՝ «Աւգուստինոսի Բաջեցոյ Գանապարհորդութիւն յԵւրոպայ» խորագրով:

² «Սիմեոն դպիր Լեհացոյ Ուղեգրություն, տարեգրություն եւ յիշատակարան», ուսումնասիրեց և հրատարակեց հ. Ներսես վ. Ակիմյան, Վիեննա, 1936: Симеон Лехацци, Путевые заметки перевод с армянского, предисловие и комментарии М. О. Дарбинян, М., 1965.

իր փոքրածավալ գրվածքով ընդարձակում է մեր գիտելիքները եվրոպական երկրների, ինչպես նորահայտ Ամերիկայի վերաբերյալ միջնադարյան Հայաստանում ամբարված տեղեկութունների մասին, միաժամանակ օգտակար տվյալներ հաղորդում իր այցելած երկրների, մասնավորապես Սպանիայի ու Պորտուգալիայի հիշարժան վայրերի, տնտեսական և քաղաքական դրույթյան վերաբերյալ:

Առաջին աշխարհամարտի դժնդակ ու ողբերգական տարիներին Արևմտյան Հայաստանի ողջ տարածքում մարդկային պատմության մեջ աննախագեպ վայրագությամբ թուրք բարբարոսների կողմից ոչնչացվեցին հայ ժողովրդի ստեղծած նյութական ու հոգևոր մշակույթի անգնահատելի հուշարձանները: Ավերակների կույտի վերածվեցին միջնադարյան մշակույթի կենտրոնները՝ հարյուրավոր վանքեր ու եկեղեցիներ, խարույկի զոհ դարձան հազարավոր ձեռագիր մատյաններ՝ գիտական աշխարհին անձանոթ բովանդակությամբ. զարդարված շքեղ մանրանկարներով ու կազմերով*:

Փրկվեց մշակութային գանձերի հազիվ մեկ տասներորդը:

Սակայն պատմական Հայաստանի հեռավոր խորշերում ծվարած փոքրաթիվ հայկական համայնքներում, իսկ ավելի մեծ շափով՝ հայերի տուն ու տեղին տեր դարձած թուրք և քուրդ նորաբնակների մոտ, պատահական որոշ տվյալներից դատելով, եղել են ու դեռևս կարող են հայտնաբերվել հայ մշակույթի բնաջնջված հուշարձանների բեկորներ, ձեռագիր արժեքավոր մատյաններ, դիվանական կարևոր փաստաթղթեր:

Հրաշքով փրկված այդպիսի մի հուշարձան է Սարգիս արեղայի «Ուղեգրութիւնը», որի միակ ձեռագիր ընդօրինակությունը 20-25 տարի առաջ գտնվել է Դիարբեքիրում (Տիգրանակերտ), տեղի հոգևոր հովվի ջանքերով¹: Այդ ձեռագիրը 1950 թ. մարտի 17-ին փոխանցվել է Կ. Պոլիս, մտել անվանի գրագետ Թորոս Ազատյանի (1895-1955) հավաքածուի մեջ (այս

* [Այդ մասին տե՛ս Ս. Քոլանջյան, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, Բ-Գ, էջ 96-107, Ե-Է, էջ 133-144, 1966, Ը, էջ 27-37, Թ-Փ, էջ 88-93, 1967, Ե, էջ 46-57, Զ, էջ 50-55: Խմբ.]

¹ Գ. Սրվանձաթյանը 1881-ից առաջ եղել է Դիարբեքիրում (Տիգրանակերտ) և համառոտակի գրանցել Ս. Սարգիս և Ս. Կիրակոս եկեղեցիներում, առաջնորդարանում և մասնավոր անձանց մոտ եղած 93 ձեռագիր մատյաններ, ինչպես նաև 42 ձեռագիր՝ Չնփուշի Սիրահայաց Ս. Աստվածածին վանքում (տե՛ս Գ. Սրվանձաթյանց, Թորոս աղբար, մասն Բ, Կ. Պոլիս, 1881, էջ 410-488): Սարգիս արեղայի «Ուղեգրութիւնը» պարունակող ձեռագիրը նրա տեսած ու նկարագրած ձեռագրերի մեջ չի եղել:

մասին համառոտ հիշատակություն կա ձեռագրի վերջին էջի վրա): Վերջինիս մահվանից հետո հանգուցյալի այրու կողմից բազմաթիվ այլ ձեռագրերի մեծարժեք արխիվային նյութերի հետ մեկտեղ ձեռագիրն ուղարկվել է Հայաստան՝ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան:

1958-1961 թթ. թանգարանը Մատենադարանին է հանձնել Թ. Ազատյանի արխիվում եղող միջնադարյան հայերեն ձեռագրերը¹, որոնց շարքում նաև Մատենադարանի 9832 համարի տակ գրանցված ու մեզ հետաքրքրող փոքրածավալ գրչագիր մատյանը, որի առաջին նյութ-միավորը Սարգիս արքեպիսկոպիտի «Ուղեգրութիւնն» է²:

Ենթադրում էինք, որ կարևոր այս բնագրի մասին Ազատյանը կարող էր որևէ հիշատակություն արած լինել իր թղթերում կամ հաղորդագրություն տպագրած՝ Կ. Պոլսի պարբերականներում, մասնավորապես «Ժամանակ» օրաթերթի մեջ, որին աշխատակցում էր իր կյանքի վերջին տարիներին: Սակայն նրա արխիվի նյութերի ցուցակներում, ինչպես նաև հոդվածների խնամքով հավաքված կտրոնների մեջ որևէ հիշատակություն այդ «Ուղեգրութեան» ու նրա հայտնաբերման մանրամասնությունների մասին չգտանք: Ուստի Սարգիս արքեպիսկոպիտի «Ուղեգրութիւնը» նորույթ է հայ մատենագրության համար:

«Ուղեգրութեան» միակ ձեռագիրը թերի է սկզբից. պահպանված առաջին թերթը սկսվում է «... Թուխ կասեն: Վանք մի կայ Կ(60) հափեղայ կայ ի մէջն... սուրբ Նիկողոսոս հայրապետի մարմինն մէջն է» բառերով: Տարակույս չկա, որ Սարգիս արքեպիսկոպիտի «Ուղեգրութեան» այս հատվածում նկարագրում է Նիկողայոս հայրապետին նվիրված նշանավոր սրբատեղին, որ գտնվում էր Զմյուռնիա (Իզմիր) քաղաքում³: Այստեղից նավով նա մեկ-

¹ Թ. Ազատյանի մոտ եղել են նաև այլ ձեռագրեր ու փաստաթղթեր, որոնց մի մասը ձեռք է բերել ծանոթ բանասեր Հ. Քյուրդյանը. «Քանի մը տարի առաջ, - գրել է նա, - ողբացեալ Թորոս Ազատեանի շնորհիւ բազմաթիւ հին ու նոր ձեռագիրներ տեսուակներ եւ դիւանական թուղթեր ձեռք բերի Կ. Պոլիս» (Յուզակ հայերեն ձեռագրաց Նիկոմիդիոյ եւ շրջակայից», Վենետիկ, 1969, էջ 67):

² Ձեռագրի համառոտ նկարագրությունը տե՛ս «Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Բ, Երևան, 1970, էջ 1000: Տե՛ս նաև Օ. Եգանյան, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, Երևան, 1965, էջ 175:

³ Տե՛ս Մ. Ավգերյան, Լիակատար վարժ և վկայաբանություն, 1813, էջ 305-340. «Վարժ սրբոյն Նիկողայոսի սփանչելագործ հայրապետին Զմիւռնոյ»:

[Իրականում ս. Նիկողայոսը մյուսացի էր, ուր և գտնվում էր նրա անունը կրող եկեղեցին: Նոր ժամանակներում այդ բնակավայրը կրում է Դեմրե, նաև Կալա անունները: Խմբ.]

նում և հասնում է Հոնիական ծովի Խապալա (*Kephallinia*) կղզին՝ հայտնելով, որ «Ըստամպալէն մինչեւ ի հոն ԾՁ (56) արն հասաք»: Պարզ է դանում ուրեմն, որ նա Զմյուռնիայից* առաջ եղել է Կոստանդնուպոլսում (Ստամբուլում), բայց անորոշ է մնում, թե որտեղից է սկսել իր ճամփորդութունը: Այդ մասին «Ուղեգրութեան» մեջ չկա որևէ ցուցում կամ ակնարկ:

«Ուղեգրութեան» լեզուն, անտարակույս, արևմտահայ բարբառների խմբին է պատկանում. Սարգիս արեղայի խոսվածքում պարզ նկատվում է ձայնեղների խլացումը՝ ք>պ (Բլուտ-Ապիլայ, Բուրգաս-Պըրդուս, Բենեկետ-Պէնուլէնդ եւ այլն), դ>տ (դ՝ Աքս-տ՝ Աքս, Պադուայ-Պատուայ, Կորդուայ-Գորտուայ եւ այլն), գ>կ (Մալագայ-Մալակայ, Գրանդայ-Ակրանատ եւ այլն): Նրա համար սովորական են արևմտահայերենին հատուկ հոն (այնտեղ), ալ («Ժե քաղաք ալ անցայ»), մն («եկեղեցի մն կայ»), մ՝ ալ բառդարձվածքները: Ուշագրավ է նաև այն, որ նա օգտագործում է թուրքերեն կամ թուրքերենի միջնորդութամբ յուրացված մի շարք բառեր՝ ըստ երևույթին չիմանալով դրանցից շատերի հայերեն հոմանիշները¹:

* [Կարդա՝ «Միւրիայից»: Խմբ.]

¹ Տալիս ենք այստեղ Սարգիս արեղայի «Ուղեգրութեան» մեջ առկա այդ բառերի այբբենական ցանկը.

Գեամի (թուրք.) - նավ

Զննիլ (պարս.) - շղթա

Թան (պարս.) - թագ

Իսպիտալ, իսպիտալիս (լատ.) - հիվանդանոց

Խանայ (պարս.) - տուն

Խասաֆ, իմա՝ դասաբ (արաբ.) - մսագործ

Խասապխանայ (արաբ.-պրսկ.) - սպանդանոց, մսավանձոխի խանութ

Խրատար - տե՛ս Ղատար

Խարն (արաբ.) - ծախս

Կամի - տե՛ս Գեամի

Ղատար (արաբ.) - որհան, ֆանակ

Ճամ (թուրք.) - ապակի

Միլաթ (արաբ.) - ժողովուրդ, կրոնական համայնք

Մոյտան (պրսկ.) - հրապարակ

Նաշ (արաբ.) - դիակով դագաղ, պատգարակ

Պուրն (պարս.) - բուրգ

Պագագ (արաբ.) - կերպասավանձո

Պադի (արաբ.) - մնացյալ, ուրիշ

Տապադայ (արաբ.) - հարկաբաժին

Տարպայ (արաբ.) - անգամ

Տօնանմայ (թուրք.) - նավատորմ

Ֆուրա (արաբ.) - մարմնի ծածկույթ, դենշակ

«Ուղեգրութեան» վերջին դրվագում մեր ճանապարհորդը հայտնում է, որ Աղբերման քաղաքում նավ նստելով նա անցել է Սև ծովը և մեկ ամիս նավելով հասել Հայաստան («Ա ամիս ծովն կացի, հասայ Հայաստան»): Շարադրանքի այս ձևը կարծել է տալիս, որ նա, կտրելով Սև ծովը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, ասի է իջել հավանաբար Տրապիզոնում և առանց նոր ու երկարաձիգ դեգերումների հասել իր հայրենի գավառը, որ կարող էր լինել Բարձր Հայքի շրջաններից մեկը (ամենայն հավանականությամբ Երզնկան):

Կան նաև այլ նկատառումներ՝ Սարգիս աբեղայի պատմա-աշխարհագրական այդ միջավայրի հետ կապելու:

Գիտենք արդեն, որ 1489-1496 թթ. եվրոպական երկրներում ճամփորդել է Մարտիրոս Երզնկացին, որը ներկայանում է իր ընթերցողներին այսպես. «Մարտիրոս միայն անուամբ եպիսկոպոս Եզրնկացի, ի սուրբ Կիրակոսու անապատէն, ի Նորգեղակ գեղէն»:

Ս. Կիրակոսի և Յուզիտայի վանքը գտնվում է Երզնկայի հարավում մեկուկես ժամ հեռավորության վրա: Երկար ժամանակ եղել է Երզնկայի առաջնորդարանը և սիրված ուխտատեղի: Կանգուն էր մինչև վերջին ժամանակներս¹:

Մարտիրոսի և Սարգսի ուղեգրությունների առաջին կեսի բաղադատությունից զարմանալի նմանություններ են ի հայտ գալիս: Վերջինս կարծես տեղյակ է իրենց ճիշտ մեկ դար առաջ ճամփորդած Մարտիրոսի երթուղուն և քայլ առ քայլ հետևում է նրան. մեր երկու ճանապարհորդներն էլ Վենետիկից նախ անցել են Հռոմ, ապա Իտալիայից մտել Շվեյցարիա, կանգ առել Կոնստանց քաղաքում, անցել Բագել և Հոենոսի առափնյա քաղաքներով (Ստրասբուրգ, Կոբլենց, Քյոլն), բարձրացել են հյուսիս, եղել Ասխենում, Անվերսում (Անտվերպեն), Ֆլանդրիայի քաղաքներում և մեկնել Անգլիա:

Սարգիս աբեղայի ընտրած երթուղին չէր կարող այսպիսի ճշգրտությունով համընկնել Մարտիրոս եպիսկոպոսի երթուղու հետ, եթե նա ծանոթ չլիներ իր նախորդի ճամփորդական հուշագրությանը, որի ձեռագիրն անշուշտ պահվում էր Ս. Կիրակոսի վանքի մատենադարանում²: Ուրեմն կարելի է ենթադրել, որ Սարգիս աբեղան կա՛մ նույն Ս. Կիրակոսի վանքի վանական է եղել, կա՛մ էլ, Երզնկայի շրջակայքի մի այլ վանքում լինելով, հնա-

Ֆուտբանա (հուն., թուրք.) - փոթորիկ

¹ Հ. Հ. Ոսկյան, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 82-89:

² Ս. Կիրակոսի վանքն ունեցել է հարուստ ձեռագրատուն, որը հետո կողոպտվել է (Հ. Ոսկյան, նշ. աշխ., էջ 89):

րավորութիւնն է ունեցել այցելելու Ս. Կիրակոս և ծանոթանալու Մարտիրոս եպիսկոպոսի այնտեղ պահվող ձեռագրին:

Որ նույն միջավայրից են դուրս եկել մեր երկու ուղեգիրները, պարզ երևում է նաև նրանց գրվածքների մի շարք հատվածների նույնութունից: Եթե անտեսենք խմբագրական ու գրչագրական ոչ էական տարբերութունները, ապա Սարգսի «Ուղեգրութեան» գրեթե մեկ-երրորդ մասն ընդօրինակված է Մարտիրոսի «Ուղեգրութիւնից»:

Համընկնում են հատկապես հետևյալ հատվածները.

1. Վենետիկ քաղաքի և Ս. Մարկոսի հրապարակի ու եկեղեցու նկարագրութիւնը.
2. Հոռոմի ու շրջակայքի սրբութիւնների նկարագրութիւնը.
3. Կոլոնիա (Քյոլն) քաղաքին նվիրված ընդարձակ հատվածը.
4. Սանտա-Մարիա դ' Աքս (Ասխեն) քաղաքի Ս. Աստվածածնի եկեղեցու նկարագրութիւնը.
5. Անվերս քաղաքի մասին պարբերութիւնը.
6. Փարիզի և մասնավորապես Նոտր-Դամի նկարագրութիւնը:

Բառացի արտագրված են, սակայն, Մարտիրոսի «Ուղեգրութիւնից» միայն այն պարբերութիւնները, որոնք վերաբերում են քաղաքի տեսարժան վայրերի՝ ըստ մեծի մասի նշանավոր վանքերի ու եկեղեցիների արտաքին տեսքին ու զարդարանքին: Բոլոր այն հատվածները, որոնք ճանապարհորդութեան մանրամասներին են վերաբերում, ինչպես և սպասելի էր, խիստ տարբերվում են միմյանցից¹:

Արդ, ի՞նչ ճանապարհով են Մարտիրոսի նկարագրութիւնները մտել Սարգիս արեղայի «Ուղեգրութեան» մեջ: Ի՞նքն է քաղել դրանք, թե՞ մեկ ուրիշը:

Վերոհիշյալ հատվածների ուշագիտ քննութիւնը մեզ բերում է այն համոզման, որ Սարգիսն ինքը չէր կարող այդ բանաքաղութիւնները կատարել: Երբ ծանոթանում ենք Սարգսի «Ուղեգրութեան» երկրորդ՝ անաղարտ

¹ Այսպես օրինակ՝ Մարտիրոս Երզնկացին Վենետիկում մնացել է ընդամենը 29 օր, հայտնում է, որ Բաղաբնում կա 74 հազար տուն, իսկ Սարգիսը 2 ամիս է եղել և Վենետիկի բնակչության մասին այլ տվյալ է հաղորդում (100 հազար տուն): Մարտիրոսը 7 ամիս մնացել է Հռոմում և օրական 10-20 եկեղեցի այցելել, իսկ Սարգիսը, որ միայն 2 ամիս է մնացել, ստիպված է եղել ավելի շտապ դիտել Բաղաբնի արքայալայերը (օրական շրջագայել է 20-30 եկեղեցի), Ասխենում Մարտիրոսը մնացել է 18 օր. Անվերսում՝ 11, իսկ Սարգիսը համապատասխանբար՝ 1 ամիս և 4 շաբաթ: Մարտիրոսի 13 օրվա դիմաց Սարգիսը Փարիզում մնացել է 2 ամիս և այլն:

պահպանված հատվածին, ակնհայտ է դառնում մեր հեղինակի սեղմ ու համառոտ գրելաոճը: Ըստ նրա ծրագրի՝ առաջին հերթին հիշատակության արժանի են նշանավոր քաղաքների բնակչության քանակի (տներով հաշված), կարևոր սրբավայրերի ու սրբոց մասունքների մասին տեղեկությունները և իր ճանապարհի հիշարժան կանգառների անվանական կամ թվական («Գ (3) քաղաք ալ անցայ», Ե (5) քաղաք ալ անցայ» և այլն) հաշվառումը (երթուղին ճշգրտորեն ներկայացնելու մտահոգություն):

Այս համեստ ծրագիրը խախտված է որոշ տեղերում ազգագրական, պատմական ու տնտեսական երևույթների մասին հակիրճ գրանցումներով, սակայն ընդհանուր առմամբ Սարգիսը հարազատ է մնում իր որդեգրած ծրագրին: Նրա գրելաձևին անհարիր են հենց այն հատվածները, որոնք, ինչպես ասացինք, գրեթե բառացի ներմուծված են Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրութիւնից»:

Այդ ներմուծումներ կատարող խմբագիրը չէր կարող ինքը՝ Սարգիս արեղան լինել, որովհետև բանաքաղված հատվածներում տեղ են գտել Մարտիրոս եպիսկոպոսի անձնական կյանքի մի քանի դրվագներ, ինչպես նաև թյուրիմացություններ, որոնք բացատրելի են միայն խմբագրի անտեղյակությամբ:

Այսպես օրինակ՝ Բազել քաղաքում Մարտիրոս Երզնկացուն բանտարկել են և նեղացրել՝ կասկածելով լրտեսության մեջ: Նույն այս դրվագը ներմուծված է նաև Սարգսի «Ուղեգրութեան» մեջ: Մարտիրոս եպիսկոպոսը եղել է Սեն-Գենի քաղաքում (Փարիզի մոտակայքում), որ «եպիսկոպոսաց եւ թագաւորաց եւ թագուհոց գերեզմանատուն էր»: այստեղ գլխավոր եկեղեցում նա տեսել և զարմանքով նկարագրել է ահռելի մեծության ձկան կողեր:

Սարգիսը Սեն-Գենիում չի եղել, այս հանգամանքը, սակայն, չի խանգարել խմբագրին՝ նրա «Ուղեգրութեան» մեջ ներմուծելու այդ վայրի մասին Մարտիրոսի գրանցած տողերը՝ դրանք վերագրելով Աթուռ (Troyes) քաղաքին:

Այս կարգի խմբագրական «վրիպակների» մի շարք այլ օրինակներ կարելի է մեջբերել, որոնք, իրար լրացնելով, վկայում են հօգուտ այն իրողության, որ Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրության» վերոհիշյալ հատվածները մուծվել են Սարգսի «Ուղեգրության» մեջ երրորդ մի անձնավորության ջանքերով, որը խմբագրի դեր է ստանձնել՝ անձամբ ճամփորդած չլինելով եվրոպական երկրներում: Այդ խմբագրի ձեռքի տակ եղել են Մարտիրոս Երզնկացու (ընդամենը 2 ձեռագիր ընդօրինակություններով մեզ հայտնի)

և Սարգսի (նոր միայն հայտնաբերված) «Ուղեգրությունները», որոնք ամենայն հավանականությամբ պահվում էին վանական այն հաստատության գրատանը, որի միաբաններն են եղել մեր ուղեգիրները: Մարտիրոսը, գիտենք արդեն, Երզնակայից ոչ հեռու գտնվող Ս. Կիրակոսի վանքից էր. վերոհիշյալ նկատառումերով նույն այդ միջավայրի ծնունդ ենք համարում նաև Սարգիս արեղային:

Երբ է ճամփորդել, և քանի՞ տարի են տևել Սարգիս արեղայի դեգերումները:

Իր «Ուղեգրութեան» Փարիզին նվիրված հատվածում նա հայտնում է, որ «Թագաւորն Լուդրան էր գնացեր ԿՌ (60.000) մարդով, խոստովանահարն սպանեց զԹագաւորն թվ. ՌԼԸ (1589), քաղքին դովին փակեցին եւ ամիս մն չի բացին, մէջն մնացի մինչեւ բացին, շատ շար քաշեցի»: Ըստ այդմ, մեր ճանապարհորդը Փարիզում եղել է քաղաքացիական լարված պայքարի և բախումների ժամանակաշրջանում: Փարիզյան Լիգայի հրամանի ներքո գործող զինվորական ուժերը, որ հիմնականում բաղկացած էին քաղաքի արհեստավորական շերտերից, պարտության էին մատնել Վալուա դինաստիայի (Ֆրանսիայում իշխել է 1328-ից) վերջին գահակալ Հենրիկոս Թագավորին (1551-1589). վերջինս ապավինել էր Հենրիկոս Նավարացու ողորմածությանը, սակայն ապստամբությունը խեղդելու պատրաստություններ էր տեսնում: 1589 թ. օգոստոսի 2-ին դոմինիկյան վանական Ժակ Կլեմանին հաջողվում է մոտենալ Թագավորին և սրախողխող անել նրան¹:

Սարգիս արեղան ականատես է եղել այս դեպքերին, ուստի գտնվել է Փարիզում 1589 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին (2 ամիս):

Ժամանակագրական հաջորդ տեղեկությունը գրանցված է Սպանիայի Վալենսիա քաղաքում. անդադարում հետիոտն երթևեկից հոգնած մեր ճանապարհորդը դիմում է տեղի հոգևորականներին ու խնդրում մի նավ գտնել Իտալիա վերադառնալու համար. «Մարմնու կարիքս (իմա՛ ուժս) հատաւ, որ Դ(4) տարի է կու քալիմ», - գրում է նա:

Ստորև առիթ կունենանք մանրամասն ծանոթանալու Սարգսի դեգերումների երթուղու հետ: Անհրաժեշտ է, սակայն, նշել այստեղ, որ Փարիզից Վալենսիա հասնելու համար մեր ուղեգիրն անցել է Նանտ, ապա նավարկել Բիլբաո (նավարկությունը տևել է 25 օր), մեկնել է նշանավոր ուխտավայր

¹ “История средних веков”, том II, под редакцией С. Д. Сказкина, Москва, 1954, с. 304-305.

Սանտյագո քաղաքը, Սպանիայի հյուսիս-արևմտյան շրջաններում դեգերել 8 ամսից ավելի, այնուհետև եղել է Պորտուգալիայում, Գրենադայում, Անդալուզիայում և Սպանիայի կենտրոնական ու արևելյան նահանգներում: Հաշվի առնելով այս բոլորը՝ կարծում ենք, որ Փարիզից մինչև Վալենսիա հասնելու համար մեր ուղեգիրը թափառել է առնվազն մեկ ու կես տարի՝ մինչև 1591-ի առաջին ամիսները: Եվ քանի որ իր ճամփորդությունը սկսել է 4 տարի դրանից առաջ, ուրեմն հայրենի երկրից դուրս է եկել 1587 թ. սկզբներին:

«Ուղեգրութեան» վերջում նա հայտնում է, որ «թվ. ՌեՆԱ (1592) հասա Հայաստան». ուստի ճամփորդել է 1587-1592 թթ.: դեգերումների մեջ լինելով շուրջ 6 տարի:

Հետևենք այժմ Սարգիս արեղայի երթուղուն՝ անհրաժեշտ պարզաբանումներ կատարելով, ճշտելով և սրբագրելով ձևափոխված ու աղճատված տեղանունները¹. նպատակահարմար ենք գտել «Ուղեգրութեան» մեջ նշանակված բոլոր տեղանուններին աղբյուրներ փակագծերի մեջ նշել դրանց ճիշտ ձևը լատինական տառադարձությամբ: Ներդիր քարտեզի վրա նույնպես ցույց է տրված մեր ճանապարհորդի երթուղին իր բոլոր կանգառներով:

1587 թ. սկզբներին Սարգիս արեղան դուրս է եկել՝ հավանաբար Երզնկայից, անցել Կոստանդնուպոլիս (ինքը գրում է Ստամբուլ): Այստեղ նավ է նստել, կարճատև ափ իջել Զմյուռնիայում և 56 օր նավելով հասել Հոնիական ծովի Խապալա (*Kephallinia*) խոշոր կղզին: Վեց օր մնալով գտել է եվրոպական մի նավ ու շարունակել իր ճանապարհը: Նավը, որ Վենետիկ էր գնում, առաջին անգամ խարխախ է նետել Վենետիկի հասարակապետությանը պատկանող Դալմաթիայի Զատրա (*Zara, Zadar*) քաղաքում, որն իրավացիորեն Սարգսի կողմից «առաջի քաղաքն Ֆրա[ն]կաց» է կոչված: Այնուհետև լինում է Իստրիայի Ուրուվին (*Rovigno*) և Փռանսան (*Parentino*) քաղաքներում, ապա Փափասար ու Տմաղու կոչված մեզ անծանոթ վայրերում և 30 օր նավի մեջ լինելուց հետո հասնում Վենետիկի մոտ՝ Ս. Դազարի հարավակողմը գտնվող Նազարեթ (*Lazzaretto vecchio*) կոչվող կղզին, ուր պարտադիր կերպով իջեցնում էին արևելյան երկրներից ժամա-

¹ Այս նպատակով օգտագործել ենք Atlas Nouveau, contenant toutes les parties du Monde, par le Sr. Sanson, Paris. 1692 և Andrees allgemeiner Handatlas, herausgegeben von A. Scobel, Bielefeld und Leipzig. 1901 նշանավոր ատլասները և փարտեզագրական այլ նյութեր:

նաձեռներին վարակիչ հիվանդութիւններէից քաղաքն ապահովելու մտահոգութեամբ: 30 օր այստեղ մնալուց հետո մտնում է Վենետիկ և 2 ամիս շարունակ դիտում այդ շքեղ քաղաքի տեսարժան վայրերը:

Վենետիկից մեկնում է Հոմո՞ անցնելով Պատուա (*Padua*), Ռընանուլուին, Աֆուաո (*Ferrara*), Քամենց, Տըմաղո¹ և 15 այլ քաղաքներով (որոնց անունը չի տրված): Երկու ամիս է տևում այս ճամփորդութիւնը: Սարգիս արեղան դժվարութիւններ է կրում իտալերեն լեզվին անձանոթ լինելով, բայց այդ ընթացքում սովորում է: «Բայց լեզու ոչ էի գիտել, խիստ շարձարեցա մինչեւ սորվեցա», - գրում է նա:

Հոմոմի ու մոտակա վայրերի նշանավոր սրբատեղիներում 2 ամիս շրջագայելուց հետո, մեր ճանապարհորդը, 15 քաղաք անցնելով, դուրս է գալիս Պապական նահանգից ու մտնում. «Հոմեական սրբազան կայսրութիւն» սահմանները. «Հասայ Տուտէշ (իմա՞ գերմանացի²) ազգի աշխարհն, որ կասին Ալաման, - գրում է նա:

Հոմոմից հետո առաջին քաղաքը, որի անունը գրանցել է Սարգիս արեղան, Բոգենի լճափին գտնվող Կաստենցիա (*Konstanz*) քաղաքն է. սահմանագիծից այստեղ հասնելու համար նա անցել է 10 այլ քաղաքներով՝ ընթանալով հավանաբար Պարմա-Միլան-Յյուրիխ ուղեգծով:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ այս տարածութիւնը կտրելու ընթացքում մեր ճանապարհորդն այս անգամ էլ սովորում է գերմաներեն, այդ մասին հատուկ նշում կատարելով («Այն աշխարհն ալ լեզու չէի գիտել, շարձարեցաք մինչեւ սորվեցաք»):

Հռենոսի առափնյա 20 քաղաքներ անցնելով՝ Սարգիս արեղան հասնում է Բագել, ապա Ֆրուտ (*Ferrette*)³: Այնուհետև, 10 քաղաք անցնելով, հասնում է Ֆրիբուրգ (*Freiburg*), ուր մնում է 20 օր: Հաջորդ քաղաքն է Սարագբուխ (*Strasbourg*), ապա 20 քաղաք անցնելուց հետո՝ Կապլա, որ անշուշտ *Coblentz* քաղաքն է: Կոբլենցից 15 քաղաք անցնելով՝ մեր ճանապարհորդը հասնում է «ի մեծայհամբաւ քաղաքն ի Կալոնիայ», այսինքն՝ Քյոլն (*Colonia*), ուր տեսնում և նկարագրում է շատ «զարմանալի բաներ»:

Քյոլնից, 15 քաղաք անցնելով, հասնում է Սանթա-Մարիա դ'Աքս, գեր-

¹ Այս երկուսը, նախորդ՝ Ռընանուլուին կոչվածի նման, կա՛մ աղնատված տեղանուններ են, կա՛մ էլ, աննշան վայրեր լինելով, չեն նշանակված մեզ մատչելի փարեզագրական նյութերի մեջ:

² Գերմանացիներն իրենց *Deutsche* են անվանում, իտալացիները՝ *Tedesco*. Սարգիս արեղայի (ինչպես նաև Մարտիրոս Երզնկացու) Տուտէշը այս բառի աղավաղված ձևն է:

³ Գտնվում է Բագելից արևմուտք շուրջ 20 կմ հեռավորության վրա:

մանացիների կողմից՝ *Aachen*, ֆրանսիացիների կողմից *Aix-la-Chapelle* կոչվող քաղաքն է: Ապա, 17 այլ քաղաքներ տեսնելով, հասնում է միջնադարյան Եվրոպայի արհեստագործության ու առևտրի նշանավոր կենտրոն՝ հայ վաճառականներին քաջաձանոթ Հանուես (իմա՝ Անվերս կամ Անտվերպեն) քաղաքը:

Քսան ուրիշ քաղաքներ անցնելով մեր ճանապարհորդը մտնում է Ֆլանդրիա և սովորում նաև ֆլանդրերեն լեզուն: Այս երկրում եղած քաղաքներից հիշատակում է միայն մեկը՝ կոչելով «մեծ քաղաքն Առոմէ»․ դժվար է ստույգ որոշել, թե այդ անվան տակ որ քաղաքի է նկատի առնված: Իրյուսելի և Կիեթի կիսաճանապարհին կայ Ռամիլյի (*Ramillies*) անունով մի քաղաք, որը չնայած Առոմե տեղանուն հետ հնչյունական աղերսի մեջ է (*Ռամիլյի-Առոմե*), սակայն աննշան մի վայր է եղել. ուստի ենթադրում ենք, որ այդ անունը միջնադարյան Ֆլանդրիայի մահուդագործության նշանավոր կենտրոն Սենտ-Օմեռ քաղաքանվան աղճատ դրուժյունն է՝ առաջացած մ և ո տառերի դրափոխությունից (Օմեռ-Առոմե): Մեր ուղեգրի տվյալներով այդ քաղաքն ունեցել է 180,000 տուն բնակիչ, 500 եկեղեցի:

Մեկ ամիս այստեղ մնալուց և 18 այլ քաղաքներ շրջելուց հետո Սարգիս արեղան ուղևորվում է «աշխարհն Ընկլուզաց», այսինքն՝ Անգլիա, լինում Լոնդոնում, շրջում 25 այլ քաղաքներում (որոնց անունները դժբախտաբար չի նշում), սովորում նաև անգլերեն, ապա մեկնում Ֆրանսիա: Այստեղ արդեն միանգամայն տարբերվում են Մարտիրոս Երզնկացու և Սարգիս արեղայի երթուղիները: Վերջինս, ափ իջնելով Ֆրանսիայի հյուսիսային նավահանգիստներից մեկում, ուղևորվում է հարավ և առաջինը հիշատակում Սանզիա կամ Տանզիա քաղաքի անունը, որ նույնացնում ենք Սան-Դիզիեր (*St. Dizier*) հետ: Այդտեղից սպասելի էր, որ մեր ճանապարհորդը կանցնի Փարիզ՝ հռչակավոր այդ քաղաքի տեսարժան վայրերն ուսումնասիրելու համար: Սակայն մայրաքաղաքում տիրող խառնակ քաղաքական վիճակից երկյուղ կրելով, թե՞ հարմար հովանավոր-ուղեկից չգտնելով նա հետաձգում է Փարիզ գնալը. հյուսիսից հարավ կտրելով ողջ Ֆրանսիան՝ անցնում է Աթուռ (*Troyes*), Այգուուս (*Dijon*), Լիոն (*Lyon*) քաղաքներով և հասնում Մարսել (*Marseille*):

Այս ճամփորդության ընթացքում նա սովորում է նաև ֆրանսերեն լեզուն: Մարսելից ուղևորվում է Փարիզ՝ անշուշտ ընտրելով մի այլ ճանապարհ (թերևս Նիմ-Կլերմոն-Ֆերրան-Նևեր-Ֆոնտենբլո ուղեգիծը). «Այլ ժե (15) քաղաք անցայ, [հասայ] մեծ քաղաքն, որ կասեն Բարիզ», - գրում է նա:

Փարիզի սրբավայրերի, մասնավորապես Նոտր-Դամի նկարագրութիւնը Սարգիս արեղայի «Ուղեգրութեան» մեջ ներմուծված է Մարտիրոսի «Ուղեգրութիւնից», բայց քաղաքի հիվանդանոցների, աղքատանոցների, դպրոցների և այլ հաստատութիւնների մասին նա գրանցում է հարցուփորձով իմացած ուշագրավ տվյալներ: Նշել ենք արդեն, որ կարևոր են մեր ճանապարհորդի գրանցած տողերը նաև Ֆրանսիայի քաղաքական դրութիւն, Հենրիկոս III Վալուայի սպանութիւնից հետո ստեղծված խառնակ վիճակի մասին:

Սպանիա մեկնելու համար Սարգիս արեղան ուղևորում է Նանտ նավահանգստային քաղաքը՝ անցնելով հետևյալ բնակավայրերով. Ուռլիան (*Orleans*), Ապիլա (*Blois*), Անպոգա (*Amboise*), Աթուրշը (*Tuors*), Անճեշ (*Angers*), Ասոմեր և Անանդ (*Nantes*):

Ուշադիր ընթերցողը կնկատի, որ այս (ինչպես և նախորդ ու հաջորդ) տեղանուններից մի քանիսը Սարգիս Արեղայի գրչի տակ ձևափոխված են՝ հատկապես անվան սկզբում հավելյալ ու ձայնավոր ստանալով (*Տրուա-Աթուռ*, *Բլուա-Ապիլա*, *Նանտ-Անանդ*, *Բիլբաո-Ավիլուա* և այլն): Ըստ երևույթին այդ առաջացել է ֆրանսերեն ուղղութիւն ցույց տվող և նախդիրի (դեպի, *B* նշանակութեամբ) թշուրիմացաբար տեղանվանը կցելու հետևանքով: Ֆրանսերեն նոր սովորած մեր ուղեգիրը դյուրութեամբ կարող էր իր լսած և *Nantes*-ը ընկալել որպես, Անանդ, կամ և *Blois*-ը՝ Ապիլա և այլն:

Նանտից նավով Սարգիս արեղան մեկնում է «Սուրբ Հակոբա աշխարհն»՝ Սպանիա: «Ուղեգրութիւնից» այս հատվածն ամենահետաքրքրականն ու կարևորն է: Միջնադարյան հայ ճանապարհորդներից ոչ մեկը չի կարող մրցել Սարգիս արեղայի հետ՝ Սպանիայի անձայրածիր տարածքի վրա այդքան երկար քայլելով և այդքան կարևոր տեղեկութիւններ գրանցած լինելով:

Երեք հարյուր մղոն ծովային ճանապարհ կտրելով և 25 օր նավելով մեր ուղեգիրը ափ է իջնում Սպանիայի Բիլբաո քաղաքում և առանց շտապելու, նշանավոր քաղաքներ ու տեսարժան սրբավայրեր այցելելու համար շեղումներ կատարելով, ուղևորվում այդ երկրի հյուսիս-արևմտյան ծայրամասում գտնվող Սանտյագո դե Կոմպոստելլա աշխարհահռչակ վանքը: Այս է նրա երթուղին՝ Ավելուա (*Bilbao*) - Պուրդուս (*Burgos*) - Վալալտուլի (*Valadolid*) - Սալամանք (*Salamanca*) - Սամուլա (*Zamora*) - Պենուվենդ (*Benvente*) - Մեդին էլ Գամբ (*Medina del Campo*) - Մետին Ըռուշեք (*Medina de Rioseco*) - Միմանդաս (*կամ Տիմանդաս*) - Դոռդայտել - Լեոն

(Leon) - Վիլյաֆրանգ (Villafranca) - Աստորկա (Astorga) - Սուրբ Հակոբ առաքյալի գերեզմանն (Santiago de Compostella):

Այստեղ ուխտ է անում, սակայն սրբի գլխատյալ մարմինը (գլուխը, ըստ ավանդույթյան, թաղված է Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց հայկական վանքում) չի կարողանում տեսնել, քանի որ դեպի սրբի գերեզմանը տանող միակ դուռը բացել են միայն 7 տարին մեկ անգամ¹: Սարգիս արքեպիսկոպոստը պատմել է, որ 8 ամսից հետո է լինելու բաղձալի ուխտի օրը, ուստի, ինչպես ինքն է ասում. «Ելայ, գնացի, ութ ամիս շուռ եկի, շատ քաղաք ու գեղ, վանորաք, ուխտայտեղ, վանք տեսայ, անկից դարձայ ճամփով մ'ալ եկի, հասայ Սուրբ Յակոբ ըխտին»: Ամիսներ տևող դեպերումների մասին այլ տվյալ չի գրանցված:

Այնուհետև Սարգիսն ուղևորվում է եզր աշխարհի (Finisterre) կոչվող հրվանդանի Աստվածածնի վանքը, ապա իջնելով հարավ լինում է Բագրոն (Padron), Փունթուպետր (Pontevedra) և Ադուու (Tuy) քաղաքներում, անցնում մի գետ (անշուշտ Մինյո գետը) և մտնում «Փոռթուկալաց աշխարհն»:

Չմոռանանք ասել, որ մինչ այդ, իր իսկ վկայություններով, նա սովորել էր սպաներեն լեզուն, իսկ Պորտուգալիս մտնելու մասին տեղեկությունը գրանցելուց անմիջապես հետո Սարգիսը շտապում է, յոթերորդ անգամ լինելով, արձանագրել իր սիրած բանաձևը. «հոն ալ լեզու չէի դիտել, չարչարեցայ, մինչև որ ուսայ»: Այսպիսով, ընդամենը 3-4 տարում մեր ճանապարհորդը, որ հայերենից բացի անշուշտ գիտեր թուրքերեն, գուցե և հունարեն լեզուները, սովորում է իտալերեն, գերմաներեն, ֆլանդրերեն, անգլերեն, ֆրանսերեն, սպաներեն և պորտուգալերեն լեզուներով պարզ նախադասություններ կազմել, հարց ու փորձ անել, հասկանալ, թե ուր պետք է գնալ, ինչ տեսնել և այլն: Ըստ այդմ, մեր ուղեգիրը լեզվագիտական մեծ ընդունակություններով օժտված անձնավորություն է եղել:

Պորտուգալիայում Սարգիս արքեպիսկոպոստը լինում է Վալենցա (Valencia), Կամինա (Caminha), Բրակա (Braga), Վիլա-Նովա (Villa Nova), Վիանա արդյո՞ք (Villa de Conde) և 3 այլ քաղաքներում (անունները չի տալիս) ու հասնում է Փոռթ (Porto) կոչվող մեծ քաղաքը: Ապա, ինչպես ինքն է ասում, «ելայ, գնացի մտայ ի ծովն ելայ Կալալ»: Պետք է ենթադրել, որ ծով է կո-

¹ Այս տեղեկությունը ֆաղում ենք Ավգուստինոս Բաշեցու «Ուղեգրությունից» («Եւ մէկ դուռն կայ եկեղեցուն՝ մօտ գերեզմանին, որ կոչին դուռն ողորմութեան, որ է (7) տարէնն մէկ ֆետ կու բացի, ու երանի այնոցիկ, որ այն ատուրն որ բացուի՝ հոն լիցի», - գրում է նա:

չում Դիեգո գետի լայն գետաբերանը, իսկ Կալա կոչվածը հավանաբար *Villa Nova de Gaia* (Փայա>Կալա¹) բնակավայրն է: Այստեղից էլ 3 քաղաք է անցնում, հասնում է Կուումորա (*Coimora*), ապա Սանթարին (*Santarem*) – Վիլա Նով¹ – Կաստինար (*Castinhera*) – Զաքապին և Կիզպոյ (*Lisboa*), այսինքն՝ Կիսաբոն:

«Խիստ մեծ քաղաք է», - ասում է մեր ուղեգիրը Կիսաբոնի մասին և հայտնում, որ բնակչությունը 100 հազար տուն է, 500 նավ է կանգնում նավահանգստում, 300 եկեղեցի ունի և այլն: Ասում է նաև, որ տեսակցություն է ունեցել թագավորի հետ, մեծարվել նրա կողմից ու «ողորմություն» ստացել: Պետք է, սակայն, նկատի ունենալ, որ Սարգսի ճամփորդությունից դեռ 10 տարի առաջ (1581 թ.) Դոն Սեբաստիանոս թագավորի մահվանից հետո Պորտուգալիան բռնի միացվել էր Սպանիային: Ուստի պետք է ենթադրել, որ Սարգիս արեղային ընդունել ու պատվել է փոխարքան կամ բարձրաստիճան մի պաշտոնյա:

Կիսաբոնից մեր արեղան նավով մեկնում է Կոն անվանած քաղաքը, որի տեղագրությունն անորոշ է մնում, ապա Սեթովը (գուցե (*Setubal*) և Բունդայլիմնմայ (կրկին անորոշ բնակավայր, գուցե խիստ աղճատ անուն): Այստեղից դարձյալ նավով մեկնում է Այմոնդ (*Ayamonte*), որը Պորտուգալիայի հարավ-արևելյան սահմանագլխին գտնվող առաջին սպանական քաղաքն է:

Այնմոնդից 5 քաղաք անցնելով՝ Սարգիսը հասնում է Սևիլիա (*Sevilla*), որի բնակչության թիվը 80 հազար ընտանիք է հաշվում. ասում է, որ «առջև մեծ գետ մն կայ» (նկատի ունի, անշուշտ, Գուադալկուիվիրը), որի վրա բազմաթիվ թագավորական նավեր են կանգնած: Շեղվելով իր «Ուղեգրութեան» բուն նյութից՝ նա մի ընդարձակ հատված է նվիրում նոր Հունդուստան (իմա՝ Ամերիկա) կոչվող երկրից ամեն տարի ուղարկվող 5 նավ լիքը արծաթի ու ոսկու մասին իր լսած առասպելական պատմություններին, Ուշագրավ է 14 առագաստանոց հսկա նավերի նկարագրությունը, որով նոր Հունդուստանից Սևիլիա էին հասնում 6 ամիս տևող նավարկությամբ:

Այնուհետև բազմաթիվ նշանավոր քաղաքներ ու սրբավայրեր է այցելում մեր ուխտավորը Անդալուզիայի և Գրանադայի շրջաններում: Երկրաբան չլինելու մտահոգությամբ ստորև թվարկում ենք միայն նրա այցելած

¹ Այս և մյուս տեղանունները, որոնց աղբյուրը չեն տրված նրանց ճշգրտված անունները լատինական տառադարձությամբ, մնում են անորոշ: Հին ու մանրամասն փառագետների օգնությամբ հնարավոր կլինի որոշել նաև սրանց տեղերը:

բնակավայրերը՝ հայերենի կողքին նշելով նրանց ճշգրտված անվանումները:

Սևիլիայից հետո այցելած բնակավայրերն են՝ Կարմունա (*Carmuna*) – Մարչինա (*Marchena*) – Սունա (*Osuna*) – Էսիչա (*Ecija*) – Գորտովա (*Cordoba*) – Հճրիտոն (*Arckidona*) – Անթքեյ (*Anteguera*) – Լոչ (*Loja*) – Պլեյլո (*Campillos*) – Մալակա (*Malaga*) – Ալհամա (*Alhama*) – Սանթաֆե (*Santafe*) – Ակրանաս (*Cranada*) – Ճայեն (*Jaen*) – Ալխալա (*Alcala la Real*): Այնուհետև անցնում է ուրիշ 10 քաղաքներ ու հասնում մի մեծ վանք, որին «նոստրը Սինոր Վատալուպ» է անվանում:

Այս, անտարակույս, Գուադալուպյի (*Guatalupe*) Տիրամոր հուշավոր վանքն է, որ XII դարի վերջերից սկսած դարձել էր նշանավոր ուխտավայր: Նոստրը Սինոր-ը *Nuestra Senora* (Ֆրանս. *Notre Dame*) բառերի աղճատ գրելաձևն է. նշանակում է Մեր Տիրուհի, այսինքն՝ Աստվածամայր:

Այստեղից ուղևորվում է Մագրիդ՝ անցնելով հետևյալ վայրերով՝ Տալայուեր (*Talavera*) – Թուլիթ (*Toledo*) – նոստրը Սինոր Կարիդա (*Nuestra Senora de Carita*)¹:

Մագրիդ (գրում է Մատրիլ) քաղաքից Փիլիպոս II թագավորին (1555-1598) տեսնելու բաղձանքով Սարգիս արքեպիսկոպոսի մեկնում է Ուսկուրյալ (*Escorial*)՝ թագավորի ամառային աթոռանիստը («ամառն հոն կերթայ, ձմեռն Մատրիլ կու նստի»), որ հայտնի էր վանական նորակառույց շինություններով: Թագավորից «ողորմություն» (նպաստ) և «թուղթ» (օգնություն) ցույց տալու հանձնարարական գրություն ստանալով՝ մեր ճանապարհորդը շարունակում է իր ուղևորությունը. անցնում է Ալխալա (*Alcala de Henares*), Վադալալար (*Guadalajara*), Սարալոս (*Saragossa*), Լերիդա (*Lerida*) քաղաքներով և հասնում Պարսալոն (*Barselona*): Հայտնում է, որ 50 հազար տուն ունեցող այդ քաղաքի բնակչության կեսը զոհ է գնացել տարափոխիկ ինչ-որ հիվանդության:

Բարսելոնից անցնում է Թոռթոն (հավանաբար *Tortosa* նավահանգստային քաղաքը), ապա 3 այլ քաղաքներից հետո՝ Վալենսա (*Valencia*):

¹ Կամ՝ *Notre Dame de Corita*. 1169 թ. Կալատրավա միաբանության ասպետներն օգնեցին Ֆեդրիկանդ II թագավորին՝ արաբներից գրավելու Կորիտա ամրոցը, որը 5 տարի անց դարձավ այդ միաբանության տիրույթ. այստեղ կառուցվեց Աստվածամոր անունով նշանավոր վանք:

Գուադալուպյի և Կորիտայի Տիրամոր վանքերի մասին տե՛ս *Encyclopédie théologique ou série de dictionnaires sur toutes les parties de la science religieuse*, publiée par l'abbé Migne. 50 volumes, vol. 20, 21, Paris, 1847.

Սարգիսն այստեղ վերհիշում է Մարտիրոս եպիսկոպոսի «Ուղեգրութեան» այն դրվագը, ուր գրանցված են հետաքրքրական տողեր հետևակ քայլերով իր ուժասպառ լինելու, իրեն մի նավի վրա տեղ տալու խնդրանքի, նավավարի «համատարած ծովով» ծրագրած հեռագնաց ճանապարհորդույթյան և հարակից հարցերի մասին¹: Կրկնելով իր նախորդից փոխառած որոշ բառեր ու արտահայտություններ՝ մեր արեղան գրում է. «Քնացի, իրիցներուն աղաչեցի: Այլ չիմ կարնալ քալել, մարմնու կարիքս հատաւ, որ Դ(4) տարի է կու քայլիմ. ինձի նաւ մի գտէք»: Նավավարը հայտնում է, որ՝ «Ես անատակ ծովն կու երթամ», շնայած խոսքը Միջերկրական ծովի մասին է (պարզ նկատվում է Մարտիրոսի «Ուղեգրութեան» ազդեցությունը):

Ի վերջո, մեր ուխտավորը նստում է նավ ու շարունակում իր ճանապարհորդությունը: Կինում է Բալյարյան Էվիսա (*Yvica*), Մաճուռկա (*Maiorca*) և Մինորգա (*Minorca*) կղզիներում, ապա 2 ամիս նավելուց հետո կրկին ոտք է դնում իտալական հողի վրա. «Հասայ մեծ քաղաքն ձենեւայ (*Genova*)», - գրում է նա: Յոթ այլ քաղաքներ անցնելով հասնում է Բավիա (*Pavia*), Միլան (*Milano*), ապա՝ Պոլոնիա (*Pologna*), Ֆլորենցա (*Florenza*), Սին (*Siena*): Սիենայից հետո հիշատակվում են Աքուա (*արդյո՞ք Acguapendente*), Թենթիր, Սանկիրիկո (*St. Quirico*), Մոգանթիֆիաշկ (*Montefiascone*) և Վիտերբե (*Viterbo*) քաղաքները: Ուրիշ 10 բնակավայր անցնելով (որոնց անունները չեն տրվում)՝ Սարգիս արեղան հասնում է Անապոլի (*Napoli*), այնուհետև հիշատակվում են Պոլիա (*Paola*) քաղաքը՝ Իտալիայի հարավում, և Մոնինու կղզի ու Լար կոչվող ինչ-որ բնակավայրեր: Հաջորդ՝ Ֆարֆարին տեղանվան տակ հակված ենք տեսնել Սիցիլիան Իտալիայից բաժանող *Faro* նեղուցն ու համանուն հրվանդանը Մեսսինայից հյուսիս: Սրան հաջորդում է Ճիլճիլիան, որ անշուշտ Սիցիլիա կղզին է, և Սարայկոսա տառադարձված մի տեղանուն, որն ըստ երևույթին առաջացել է Սարդինին և Կորսիկա կղզիների անունների աղճատ ու անբնական կցումից: Տեղանունների նորահնար այս համաձուլումը թյուրիմացաբար կատարել է կա՛մ ինքը՝ Սարգիս արեղան, կա՛մ էլ նրա «Ուղեգրութեան» խմբագիր- ընդօրինակողը:

¹ Ոմանք ենթադրել են, որ Մ. Երզնկացին, տեղ ստանալով վերոհիշյալ նավում, մասնակցել է Կոլումբոսի 2-րդ ճամապարհորդությանը դեպի Ամերիկա: «Ուղեգրության» մեջ գրանցված տվյալները բնավ հիմք չեն տալիս նման ենթադրության: Անպատասխանատու և աղմկաբար հողվածները, որ գրվեցին վերջերս այդ մասին, գիտության հետ առնչություն չունեն:

Սարալկոսա կոչված վայրից հետո «բազում քաղաքաւ» անցնելով մեր ճանապարհորդը մեկ էլ հայտնվում է Իտալիայի հյուսիսում գտնվող Կ[ր]ա-մինա (Cremona) քաղաքում, ապա անցնում Սվրոնա (Verona), Ավիցենց (Vicenza), Պատուա (Padua): Եվս մի թռիչք «բազում քաղաքաւ», և նրան գտնում ենք Ադրիատիկի ափին՝ Մատունա Լոռեդ (St. Maria Laurentana) սրբավայրում: Լորեստո քաղաքի մոտ, ապա Անքունիայում (Ancona), որ-տեղից նավով, երկրորդ անգամ լինելով, հասնում է Վենետիկ:

«Ուղեգրութունն» այստեղ թերութունն ունի. առնվազն 6 սող պակաս է (չի ընդօրինակված, ու դատարկ տեղ է թողնված): Հաջորդ էջի շարունակութան մեջ հիշատակվում են Կ. Պոլսի մոտակայքում գտնվող Ջոլու (Corlu), Սիլիվրի (Silivri) և Ջուքմայճա (հավանաբար Բոյուկ Չեքմեշե) բնակավայրերը: Սրանցից վերջին երկուսը ծովափնյա են, իսկ Ջոլուն գտնվում է Թեքիրդաղից շուրջ 60 կմ հյուսիս-արևելք՝ ծովից հեռու: Ուստի պետք է եզրակացնել, որ Սարգիս արեղան Վենետիկից Ստամբուլ ճանապարհի գեթ վերջին հատվածը կտրել է ոտքով:

Չեքմեշեից հետո մեր ուղեգիրը մտել է Ստամբուլ՝ հայտնելով, որ այդ տեղի է ունեցել հայոց Ռե, այսինքն՝ 1591 թվականին:

Եվրոպական երկրներում կատարած իր դեգերումների առաջին ու հիմնական շրջանն ավարտելով Սարգիս արեղան մի կարևոր նախադասությամբ ամփոփում է իր ճամփորդութան արդյունքները, հաշիվ ներկայացնում, թե քանի բերդ ու քաղաք, եկեղեցի ու վանք է տեսել իր շրջած երկրներում: «Ո՛վ ընթերցող բանիս՝ հարք եւ եղբարք, - գրում է նա, - թե կասէք մեղավոր Սարգիսն Ֆռանգըստան կամ ինչ գատար քաղաք է տեսեր: Ռ (1000) բերթ ու քաղաք տեսեր եմ, թող գեղրանքն, ԳՌ (4000) հանդիսի եկեղեցի տեսեր եմ, ԳՌ (3000) վանք արեղի, ԸՌ (8000) կուսանաց վանք»:

Ճանապարհորդութան երկրորդ շրջանը սկսվում է Կոստանդնուպոլսից նույն 1591 թ.: Այդ մասին գրում է ընդամենը մեկ էջ, որից հստակորեն պարզվում է նրա նոր երթուղին՝ Ստամբուլ - Ատրանտ (Edirne) - Բրավատա (Bra?) - Պապա (Papa), նավով անցնում է Տունա (Դունայ) գետը և մտնում Պուզտանաց երկիր (այսինքն՝ Մոլդովա), հասնում թագավորանիստ Եաշ (Yassy) հայաշատ քաղաքը, ապա Ուռմանի (Roman) - Ստչով (Suczava) - Պոշան (Botuschani) - Սերաթ (Sereth) - Խոլթին (Chotin): Անցնելով Դնեստր գետը՝ մտնում է Իլխսաց աշխարհ (Լեհաստան). լինում միայն Կամենեց-Պոդոլսկ նշանավոր հայաքաղաքում: Կրկին վերադառնում է Եաշ, մեկնում Ալքերման (Akkerman), նստում նավ և մեկ ամիս ծովային ճամփորդութունից հետո, ինչպես ինքն է ասում, «հասա Հայաստան»: Ասել ենք

արդեն մեր կարծիքն այն մասին, որ Սարգիս արեղան ափ է իջել հավանաբար Տրապիզոնում, ապա անցել Երզնկայի մոտ գտնվող Սուրբ Կիրակոսի վանքը: Ինչպես վերն աշխատեցինք ցույց տալ, մեր ճանապարհորդն, ըստ երևույթին, այդ վանքի միաբաններից է եղել:

Իր «Ուղեգրութեան» ամենավերջում Սարգիս արեղան գրանցել է միջնադարյան մի գողտրիկ հայրեն օտար աշխարհ ընկած ղարիպի ծանր հոգեկան վիճակի մասին: Հայրենի երկրի կարոտը ձգում է մարդուն նույնիսկ այն ժամանակ, երբ այնտեղ ծարավ է ու անոթի, իսկ օտար հորիզոններում տեր է դարձել հազար բարիքի.

Ի՛նչ անում ես հազար բարին,

Որ կու գայ ձայնս ղարիպի,

Թողում, իմ աշխարհն երթամ,

Թող կենամ ծարաւ, անօթի:

Այս քառյակով էլ ավարտվում է Սարգիս արեղայի «Ուղեգրութիւնը»:

Ինչպես ասել ենք արդեն, Սարգիս արեղայի «Ուղեգրութիւնը» պահպանվել է միակ ընդօրինակությամբ՝ Մաշտոցի անվան Մատենադարանի N 9832 թանկարժեք ձեռագրում: Գիտենք նաև, որ այս ընդօրինակությունը, մանավանդ իր սկզբնական մասերում, հետագայում ընդարձակվել է ներընկալելով խոշոր հատվածներ Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրութիւնից»: Ավելացնենք այստեղ և այն, որ N 9832 ձեռագրի «Ուղեգրութիւնը» պարունակող թերթերի ընդօրինակությանը մասնակցել են 2 տարբեր գրիչներ: Առաջինը գեղեցիկ, կանոնավոր նոտրգրով ու սև թանաքով ընդօրինակել է բնագրի պահպանված մասի 1ա-2բ և 17ա-18բ էջերը, իսկ երկրորդը՝ մեծագույն մասը՝ 3ա-16բ էջերը. սրա ձեռագիրը նույնպես նոտրգիր է, սակայն՝ տձև, օգտագործված թանաքը բաց շագանակագույն է: Այս երկուսն էլ իրենց գրագիտությամբ չեն փայլել և բազմաթիվ վրիպակներով ու սխալագրությամբ աղճատել են բնագրի առանձին նախադասություններ, իսկ ոմն սրբագրող փորձել է որոշ ճշգրտումներ կատարել լուսանցքներում ու տողամեջերում: Վերոնշյալ հանգամանքների թելադրությամբ բնագիրը շտկում ենք՝ հաշվի առնելով ձեռագրի սրբագրողի նշումներն ու ընդօրինակողների ուղղագրական ըմբռումները: Մարտիրոս Երզնկացուց քաղված հատվածները ներկայացրել ենք տարբերվող տառատեսակով՝ Սարգսի բուն շարադրանքը ակնառու ներկայացնելու մտահոգությամբ:

Տողատակում, ըստ այդմ, նշել ենք ձեռագրի առանձնահատկությունները, սրբագրողի շտկումները, ինչպես նաև Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրութեան» զույգ ձեռագրերի տարրնիթերցվածքները (անշուշտ, այն հատվածներում, որոնք քաղված են Մ. Երզնկացուց):

Օգտագործել ենք հետևյալ համառոտագրությունները.

Չ – ձեռ. N 9832.

Սրբ. – սրբագրող N 9832 ձեռագրի Սարգիս աբեղայի «Ուղեգրութեան» հատվածի:

Բզմ. – «Մարտիրոս Էպիսկոպոսի Երզնկացույ Ուղեգրություն ի Սպանիա» («Բազմավեպ», 1937, N 2-5, էջ 49-60):

Տղկ. – Վ. Հակոբյան, Մարտիրոս Երզնկացու ճանապարհորդական նոթերը (ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր», 1957, N 6, էջ 97-110):

Բնագրին կցված է Սարգիս աբեղայի ճանապարհորդությունների երթուղին ցույց տվող քարտեզ, իսկ ներածական մեր խոսքի 11-րդ ծանոթագրության մեջ տրված է օտար բառերի այբբենական բառացանկը՝ համառոտ բացատրություններով:

ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳԻՍ ԱՔԵՂԱՅԻ

1*

/1ա/ Թուխ կասեն: Վանք մի կայ Կ (60) հավերդայ կայ ի մէջն, Թ (9) գումպէթ է, խիստ մեծ վանք է. սուրբ Նիկողիոս հայրապետի մարմինն մէջն է, արծաթէ նաշով է դրված. ինչ ցաւագար¹ որ գա, կու² բժշկէ կաղ, կուր, անդամալուծ, հայ ու թուրք ու հ[ո]ռոմ ՀԲ (72) միլաթ զինչ խնդիրք որ ուզէ կուտա, նման սուրբ Կարապետի: Ի սուրբ մարմինն երկրպագեցի եւ մեղաց թողութիւն խնդրեցի մեզ եւ մեր ծնողացն եւ մեր երախտաւորացն³:

Անկէց ելայ գնացի Խապարայ^{2*}, որ նաւահանգիստ է: Ըստամպաւէն մինչեւ ի հոն ԾՁ (56) արն հասաք, Ձ (6) օր տեղն մնացինք. մտայ Ֆրանկի նա/1բ/ւ մի եւ գնացի առջի քաղաքն Փոս[ն] կաց՝ Զատրայ քաղաքն, Ուրուվին, Փոանսայ, Փափասար, Տմաղու. երեսուն օրն նաւին մէջն կեցա, հասա ի Նազարաթ^{3*}. Լ (30) օր Նազարաթ կեցա, անկից ելա, մտա ի Վանատիք:

Մեծ* եւ փառաւոր քաղաք է եւ ինք ի մէջ ծովուն շինած. ՃՌ (100.000) խանայ է, ասին: Ա (1) եկեղեցի⁴ մի կայ, ի մէջն խիստ զարդարած է ոսկով, սուրբ Մարկոս աւետարանչի եկեղեցին է, եւ Բ (2) մեծ երգեհոն⁵ կա ի մէջն, եւ Ա (1) թեաւոր ոսկի առիւծ է շինած ի մէջն, ԲՃ (200) սրբոց մաս կա ի մէջն: Եւ այլ շատ եկեղեցիք կա /2ա/ ի քաղաքն եւ շատ վանորաք կա ի բոլոր քաղաքին. ամէնն ի մէջ ծովուն է շինած: Եւ մեծ մոյտան⁶ մի կա առջեւ եկեղեցուն սուրբ Մարկոսի, եւ ի վերայ դրանն Դ (4) դեղին պղնձէ ձի է շինած մեծ, Ա-Ա (մէկ-մէկ) ոտվին ի վեր է կալել: Եւ ի հարաֆային կողմն՝ ծովուն դիմն Բ (2) մեծ սուն է կանգնեցուցած⁷. Ա (1)-ին վերա թեաւոր առիւծ մի կա եւ մէկպին վերա սուրբ Գէորգն է կանգնել: Եւ թագաւորին դարպասն ամէն ոսկով զարդարած: Ով կարէ պատմել զքաղաքին զաղեկութիւն: Եւ ԺԴՌ (14.000) կարմուննճ կա ի մէջն, եւ կեցաք ի հոն Բ (2) ամիս:

¹ Ձ ցաւարար:

² Ձ կա փխ կու:

³ Ձ երթիստաւորացն: Այս բառը ձեռագրում գրված է տարածեւ աղավաղումներով: Բնագրում տալիս ենք ուղիղ ձևը՝ տողատակում համապատասխան նշում կատարելով:

* Ուղիղ տառատեսակով ներկայացվում են Մ. Երզնկացու «Ուղեգրութիւնից» ներմուծված հատվածները:

⁴ Ձ եկեղեցին: Շատ հաճախ այս բառը որոշյալ հոդով (եկեղեցին) է գրվում ուղղական հոլովածեւի դեպքում: Ուղղում ենք՝ տողատակում համապատասխան նշում կատարելով:

⁵ Ձ երգեհոն. ուղղում ենք երգեհոն՝ հաշվի առնելով Մ. Երզնկացու բնագիրը:

⁶ Ձ մոյտան. ուղղում ենք ըստ իմաստի մոյտան՝ հրապարակ:

⁷ Ձ եւ Բ մեծ տուն մէ կանկեցուցած. ուղղում ենք ըստ Բզմ. Տղկ.-ի:

Ելա մտա ի նաւն, գնացի հասայ /2բ/ Պատվայ, Ռընանուլուին, Աֆուտո, Քամէնց, Տըմադօ, այլ ժե (15) քաղաք այլ անցա, Բ (2) ամիս հասա [Հոռմ]: Բայց լեզու ոչ էի գիտել, խիստ շարշարեցա մինչեւ սորվեցա, ապա հասա աստուածայական մեծ ֆաղաֆն Հոռմ ուր եւ սուրբ փառատուրեալ. ամենագովելի սուրբ մարմինն են գլխատուր առաքելոցն սուրբ Պետրոսի եւ Պողոսի: Մարմինն երկրպագեցի եւ մեղաց թողութիւն խնդրեցի մեզ եւ մեր ծնողաց եւ մեր երախտատուրացն: Եւ կացի անդ Բ (2) ամիս, եւ զամէն տնօրինական տեղիքն տեսա:

Սուրբ Պետրոսի դուռն արեւելք է, Ե (5) բարձր եւ անեղ դուռ ունի եւ միջի դուռն թափցու է, ամէնն պատկերք է, խիստ զար /3ա/ մանալի բաներ կայ. եւ մէկ փեղկն սուրբ Պողոս է կանկնել եւ Ա (1) սուրբ Պետրոս: Յարեւելից դիմն¹ Ներոն թագաւորին դարպասին² դիմացն՝ Պետրոսի խաչելութեան տեղն է: Ի մէջ ֆաղփին իւրեանց գնտանին տեղն է: Եւ ի Հոռմայ ի դուռ. հեռու Գ (3) մղունաւ, Պողոսու գլխատման տեղիքն է. եւ հարաֆու դիմն, որ կայ ի մօտ ֆաղափին, այն տեղ է, որ Քրիստոս հանդիպեցաւ սուրբ Պետրոսի: Եւ ֆաղփին եզերն Սան ձիվան եկեղեցին է, որ սուրբ Յովաննոյ գլուխն³ ի հոն է՝ ամպողջ մարմնով⁴: Եւ ի ֆաղփին մէջն հարաֆու դիմն Գրիգոր Ակոականդացուն⁵ /3բ/ գնտանն է, հիմայ եկեղեցի⁶ է շինած: Եւ այլ առաջ՝ մէջ ֆաղափին Սանթիլինայ կայ. այն եկեղեցին⁷ ձ (100) սրբոց նշխարք կայ եւ այլ շատ բազում փառատուրութիւն կայ. ի մէջ ֆաղափին ՌէձձԴ (1774) եկեղեցի⁸ կայ՝ ի Հոռմ, ԸՌ (8000) սրբոց⁹ գերեզման կայ. ի ֆաղափն եւ ի դուռն: Եւ ամէն օր Ի (20)-Լ (30) եկեղեցի¹⁰ շուրջ կու գայի, մեծ եւ փառատուր եկեղեցիք կայ, եւ ամէն օր գլխատուր¹¹ առաքելոցն գերեզման կերթայի եւ ինձ մեղաց թողութիւն

¹ Ձ «յարեւելից դիմն»-ի *փիւ Մ*. Երզնկացին ունի՝ եւ ի Հոռմայ յարեւմտից դեմն:

² Ձ թարգմանութիւն:

³ Սրբ. որ սուրբ Յովաննոյ գլուխն *փիւ Ձ* որ երկուսին գլուխն:

⁴ Սրբ. մարմնով *փիւ Ձ* մարմին:

⁵ Ձ ակոսականդացուն:

⁶ Ձ եկեղեցին է Ձ *չիք* շինած (*ավելացրել է սրբագրողը*):

⁷ Ձ եկեղեցին:

⁸ Ձ եկեղեցին:

⁹ Ձ սրբոց:

¹⁰ Ձ եկեղեցին:

¹¹ Ձ գլխատուր:

խնդրէի: Ով¹ կարէ պատմել զփառաւորութիւն սուրբ եկեղեցացն եւ ֆաղփին²:

Եւ եկին զիս փափին մօտն տարան, հետս զրուցեց, հարցաւ³ /4ա/ եւ թուրթ երեւտ, որ ամէնն կու զարմանային, որ կու տանէր մօտն, կու զրուցէր հետս^{4*}:

Անկիրց ետեւ ելանք գնացաք⁴, ժե (15) քաղաք անցայ, հասայ Տուտէշ^{5} ազգին աշխարհն, որ կասին Ալաման: Այն աշխարհն ալ լեզու չէի գիտել, շարշարեցաք՝ մինչեւ սորվեցաք: Եւ գնացի, ժ (10) քաղաք անցայ, հասայ ի մեծն Կասաւնցիայ, եւ այլ Ի (20) ֆաղափ ալ անցայ Ըոին գետովն⁵. որ լանքն Ա (1) գիհէն մէկ ալ գիհն չի երեւալ՝ անշափ մեծ է, գնացի ի մեծ ֆաղափն [Պազլ]⁶, որ զիս բռնեցին, թէ շաշուտ էս, ասին. հանց շատ հարցան ու քննեցին, եւ Աստուած ազատեց^{6*}:*

Եւ այլ բազում ֆաղափաւ ալ անցայ⁷, հասա ի [ֆաղափն, որ], Ֆոտտ^{7*} կու ասեն, որ շատ հիանալի բաներ [տեսայ]: /4բ/ Եւ անտի ժ (10) քաղաք ալ անցայ, հասայ ի Ֆրիփուխ⁸, որ ասին, թէ այս ֆաղփին ԳՌ (3000) ալ գի կայ, մեծ եկեղեցուն մէջն ԲՃ (200) սրբոց մաս կայ: Եւ զմեզ մեծ հարկով հարկեցին⁹: Ի (20) օր կացինք, ուխտ արինք, ելանք գնացին¹⁰ Ստրազբուխ¹¹: Եւ անտից Ի (20) քաղաք ալ անցայ, հասայ ի Կապլայ¹², որ խիստ հարկեցին զմեզ: Եւ անտից ժե (15) քաղաք ալ անցայ, հասայ ի մեծայհամբաւ ֆաղափն ի Կապունիայ¹³, որ ասեն, թէ Բ հարուր Ռ ու ԻԳՌ (224, 000) տուն է¹⁴, խիստ մեծ եւ զարմանալի ֆաղափ է: Եւ անդ /5ա/ ժԲ (12) հազար սրբոց նշխարփ կայ, ամենուն գլուխն մեծ եկեղեցուն մէջն է շարած, եւ ամէն մարդ կու տեսնու եւ մարմինն ի գերեզմանաց: Եւ եկե-

¹ Ձ Օվ կարէ:

² Ձ ֆաղփին:

³ Ձ հետս զրուցեց, հարցաւ բառերն ավելացված են սրբագրողի ձեռագրով:

⁴ Սրբ. ելայ գնացի:

⁵ Ձ Ըոզին գետովն ուղղում ենք Ըոին (իմա՝ Հոենոս) ըստ Մ. Երզնկացու:

⁶ Ձ Պազլ (Բազլ) ֆաղափի անունը բացակայում է. լրացնում ենք Մ. Երզնկացուց:

⁷ Ձ ֆաղափաւ Ի (20) ալ անցայ:

⁸ Բզմ. Ֆրիբուխ, Տղկ. Ֆրիբուխ, անտարակոյս Բադենի Ֆրեյբուրգ ֆաղափն է:

⁹ Ձ զմեզ մեծ հարկով հարկեցին զմեզ:

¹⁰ Սրբ. արի ելայ գնացի:

¹¹ Ձ Տրապուխ, Բզմ. Ստրազբուխ, Տղկ. Ստրազբուխ:

¹² Բզմ. Կապլ, Տղկ. Կապլեր (իմա՝ Կոբլենց):

¹³ Ձ Կապլայ. նիշտ են Բզմ. Կապունիայ եւ Տղկ. Կոլոնիայ, որ Colonia (Քլոն) ֆաղափն է:

¹⁴ Ձ տուն է ասին:

դեցի¹ մի այլ կայ՝ խիստ գեղեցիկ² է, ԻՊ (24) կուսանաց մարմինն կայ արծաթէ սնտրկով³ դրած: Այն քաղաքին մէջն եճ՝ (500) եկեղեցի⁴ կայ, զԱստուածածնին պատկերքըն հուն է՝ մեծ եկեղեցուն մէջն Գ (3) դուռն ունի թուճէ շինած եւ ըստ իւր սուրբ արժանեացն զարդարած: Աստուածածինն իւր գիրկն է դրած զտէրն մեր Յիսուս Քրիստոս⁵, եւ Ա (1) թան մն⁶ դրած ի գլուխն ան/Յբ/գին գոհար ակներով եւ մարգարտով⁷ զգունզգուն [զու]-գած էր, որ գին չի կար⁸: Հարցայ եկեղեցոյն իրիցուն, թէ ինչ խատար գնոչ լինի այս. նոքա ասին, թէ ԲՃՌ եւ ԺԵՌ (215,000) ոսկի⁹ խարն է եղել: Եւ ի սիրան սուրբ Աստուածածնին մարգարտէ խնծոր մի կապած էր, քան ի բրով¹⁰ ունկուզ մի էր, եւ բոլորն ԺԲ (12) հատ մարգարիտ կար, ամէն հատ քան ի փոքր կղթոր մի էր, եւ մէջն ընդ մէջ Դ (4) ակն՝ Բ (2) լալ, Բ (2) եաղուք, ամէն մէկ քան ի մեծ կղտոր մի է: Եւ ավաք խորանին բոլորն ԺԶ (16) գերեզման¹¹ կայ, դեղին պղինձ /6ա/ է քաշած ի վերայ ոսկով զարդարած, վարագուրն ի վեր քաշած: Եկեղեցին եճ (500) կամարի վերայ է¹², դուռն ունի բարձր եւ անեղ. զինչ որ աշխարհս բան կայ, զամէնն ի դրուց դիմն է հանած, ոսկով զարդարած¹³. ԳՃԿԵ (365) լուսայմուտ ունէր, որ երկանքն Գ (3) գիրկ էր, եւ եկեղեցուն լուսայմուտն զոյնզգունոց համով¹⁴ զարդարած էր: Եւ զանկակայպուտն մի կար, քան ի բերթ մի մեծ էր, եւ անեղ զանկակ մի կար կախ, որ ԻԸ (28) հոգի կու քաշէր: Եւ այլ զարմանալի բաներ շատ կար /6բ/ շատ եկեղեցիք¹⁵, շատ վանորաք կար. հարցայ, թէ քանի եկեղեցի կայ, ասին թէ ԴՃԷ (407) եկեղեցի¹⁶ է, Խ(40) վանք է. ուխտ արի, մեղաց թողութիւն խնդրեցի:

¹ Ձ եկեղեցին:

² Ձ գեղեցիկ:

³ Ձ սնտկով:

⁴ Ձ եկեղեցին:

⁵ Ձ աստուածածինն գիրկն է դրած եւ տէրն մեր Յիսուս Քրիստոս (աղնատված է):

⁶ Ձ Սրբ. մի փխ մն:

⁷ Ձ ակներով եւ մարգարտով:

⁸ Ձ քար փխ կար:

⁹ Ձ ոսկի է:

¹⁰ Ձ բրով:

¹¹ Բզմ. գերեզման փխ վարակուր:

¹² Ձ եկեղեցինն Ձ վերայ է (7) փխ վերայ է:

¹³ Ձ հանաց ոսկով զարդարած:

¹⁴ Բզմ. համով, Տղկ. համբով, Ձ հարպով:

¹⁵ Ձ եղեցին:

¹⁶ Ձ եկեղեցին:

Եւ ապա¹ ելայ, գնացի, ժե (15) քաղաք ալ անցայ, հասայ ի մեծ ֆաղաֆն Սանթա-Մարիայ տ'Աֆս, ուր կասեն թագաւորաց գերեզմանայտուն է պաւսան ազգին, ամենարհնեալ եւ փառաւորեալ շապիֆն ի հոն է սուրբ Աստուածածնին. եւ անդ շատ ջերմանջուր կայ: Եւ եկեղեցին², որ ամենարհնեալ շապիֆն է, ամէնն ոսկով³ է զարդարած. եւ Դ (4) դեղին պղնձ է սին⁴ է /7ա/ կանկնեցուցած եւ օսկած⁵, եւ մեծայմեծ սան գլխրներն ոսկով զուգած, եւ մեծ ոսկեզօծ⁶ անտուկ մն շինած, եւ սուրբ Աստուածամօր սուրբ շապիֆն ի ներսըն է դրած: Եւ կեցաք⁷ անդ ամիս մի, մինչեւ բացին, որ արժանի եղաք⁸ տեսանելոյ, եւ մեղաց թողութիւն խնդրեցաք⁹ մեզ եւ մեր ծնողացն եւ մեր երախտաւորացն¹⁰, խիստ մեծարեցին:

Եւ անտի ելաք գնացաք, ժե (17) քաղաք ալ անցաք, հասաք¹¹ մեծ ֆաղաֆն Յունվէս¹², որ թագաւորայնիստ է Ալաման ազգին, եւ կեցաք¹³ անդ Դ (4) շաբաթ մի¹⁴: Եւ անդ¹⁵ է ամէնայգօր սուրբ թագաւորին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի¹⁶ /7բ/ սուրբ ֆութան, յորժամ խաչելութեանն կապեցին. Քրիստոսի աստուածընկալ արեամբն ներկեալ է: Եւ արժանացաք¹⁷ սուրբ տեսոյն նորա, եւ մեղաց թողութիւն խնդրեցաք¹⁸ մեզ եւ մեր ծնողացն եւ մեր երախտաւորացն¹⁹:

Եւ անտի ելայ, Ի (20) քաղաք ալ անցայ, հասա աշխարհն Ֆլանտրուլեզու շէի գիտել. խիստ շարշարանք քաշեցի մինչեւ սորվեցայ: Հասայ մեծ

¹ Ձ ապայ:

² Ձ եկեղեցինն:

³ Ձ ոսկով:

⁴ Ձ սոյն փս սին:

⁵ Ձ օսկուծ, Ձ ոսկով:

⁶ Տղկ. ոսկեզօծ, Ձ ոսկեզօծն, Սրբ ոսկեզօծ:

⁷ Սրբ. կեցայ:

⁸ Սրբ եղայ:

⁹ Սրբ. խնդրեցի:

¹⁰ Ձ էրէխտայորացն:

¹¹ Սրբ. ելայ գնացի... անցայ, հասայ:

¹² Ձ Ովնես փս Յունվէս, իմա՝ Անվէրս (Ֆրանս. Anvers Ֆլամդր. Antwerpen):

¹³ Սրբ. կեցայ:

¹⁴ Ձ անդ Դ(4) շաբաթ մի աղաւաղուած է. կամ պէտք է լինի «անդ շաբաթ մի» կամ «անդ Դ(4) շաբաթ»:

¹⁵ Ձ անտ փս անդ:

¹⁶ Ձ Քրիստոսի ամէնայգօր:

¹⁷ Սրբ. արժանացայ:

¹⁸ Սրբ. խնդրեցի:

¹⁹ Ձ էրդտուորացն:

քաղաքն Առոմէ. ճՁՌ (180,000) տուն է, ասին, ԵՃ՝ (500) եկեղեցի¹ կայ ի մէջն: Կեցաք ամիս մի, ելաք, գնացաք², ժԸ (18) քաղաք ալ անցայ, հասայ աշխարհն Ընկրուգաց. որ կու ասեն Լուդրան է. ի հոն /8ա/ ալ լեզու չէի գիտել, խիստ չարչարանք քաշեցի, մինչօր սորվեցայ³: Նոքա ձկնակերք են. զինչ մեծ ահեղ ձուկն կայ, այն ծովն է: Եւ անտի դարձեալ արեւմուտս ձկան կող մի տեսայ, ժԴ (14) թիզ էր:

Գնացի, ԻԵ (25) քաղաք ալ անցայ, հասայ աշխարհն Ֆոանցու, ի քաղաքն որ կոչի Սանգիայ^{5*} ի հոն ալ լեզոյ չէի գիտել, խիստ չարչարեցայ մինչեւ սորվեցայ:

Հասայ ի քաղաքն Աթուռ, որ եպիսկոպոսաց⁴, թագաւորաց եւ թագուհուց գերեզմանայտուն է⁵, խիստ գեղեցիկ⁶ քաղաք է, ԵՃ (500) եկեղեցի⁷ կայ, եւ ավաք եկեղեցին, ուր թագաւորաց /8բ/ գերեզմանայտունն է, եկեղեցոյ ձախ դիհն⁸ Դ (4) ձկան կող էր դրած, Ա(1) կողն ժԵ (15) թիզ էր, եւ ասին թէ այս ծովս այլ մեծ ձուկն կայ^{9 9*}:

Եւ ելայ, գնացի հասայ մեծ քաղաքն Այդուռժ, ուր ասին թէ ճՌ (100,000) տուն է, ՁՃ՝ (600) եկեղեցի կայ, մեծ¹⁰ եկեղեցին ԲՃ՝ (200) սրբոց մաս կայ: Ուխտ արի, ելայ, գնացի հասայ Լեվոն, Մարսելիէ: Այլ ժԵ (15) քաղաք անցայ, [հասայ] մեծ քաղաքն, որ կասեն Բարիզ: Խիստ մեծ քաղաք է, Ա (1) մեծ եկեղեցի¹¹ մն կայ ի մէջն, ժԲ(12) դռնէն է. ճՌ (100,000) մարդ մտնու՜ չի լցվել. Եւ Գ (3) մեծ դուռն արեւմտած դիհն է, եւ ի¹² մեծ դուռն Բ (2) բլ/Պա/կէն է. դուռն վերայ Քրիստոս է կանկնել եւ վերայ դուռնն Քրիստոս դատաստան է նստել ոսկի արթոռով¹³, եւ ամէնն ոսկով է զարդարած: Եւ հրեշտակապետք, սերօքէք եւ փերօքէք աչ եւ ի ձախ կանկնել¹⁴

¹ Ձ եղեցիին:

² Սրբ. կեցայ... ելայ, գնացայ:

³ Ձ սորվեցաք:

⁴ Ձ եպիսկոպոսաց:

⁵ Ձ խիստ գերեզմանայտուն է:

⁶ Ձ գեղեցիկ:

⁷ Ձ եղեցիին:

⁸ Ձ ցախ թիհն:

⁹ Ձ այլ մեծ ծով այլ կայ, այլ մեծն ձուկն կայ (Սրբագրողը ջնջել է ծով այլ կայ բառերը):

¹⁰ Ձ եղկիցի, Սրբ. եկեղիցի փհ եկեղեցի:

¹¹ Ձ Սրբ. մի փհ մն:

¹² Ձ մեծն, Սրբ. մեծ:

¹³ Ձ արթոռով, ոսկով:

¹⁴ Ձ ցախ կանգնել է:

են, եւ աջ դիհի հրեշտակն բռնել է զայն սիւն¹, որ Քրիստոս գանեցին², եւ զգեղարդն, որ զՔրիստոսի կողմ խոցեցին. եւ ձախ³ դիհն հրեշտակն կա[ն]կնել է, զխաչն է բռնել: Եւ աջ դիհն սուրբ Աստուածածինն է չոֆել ի վերայ ծնկանց եւ ձախն՝ սուրբ Յովանէս եւ սուրբ Ստեփանոս. առջեւ[ն]՝ հրեշտակ[ֆ] եւ հրեշտակապետն եւ ամենայն սուրբ⁴: Եւ Ա. (1) հրեշտակին ձեռն կշեռ⁵ կայ, որ զմարդուն մեղքն ու վարձքն կու կշիռեն. եւ /9բ/ ձախ դիհն՝ ֆիշ⁶ մի վար, սասանէֆ եւ դեւֆ եւ ամենայն հետ իւր եւ մեղասուր մարդիքն զննիլէին⁷ եւ դժոխքն կու ֆաշին: Եւ դժոխքն հանած է զարհուրելի դիւֆ, որ մարդ կու տեսնու. կու սասանի: Եւ դէմ Քրիստոսի սուրբ առաքելքն եւ սուրբ մարգարէքն եւ սուրբ հայրապետն եւ այլ[ֆ] ամենայն՝ ազգի ազգի գունով զարդարած է եւ ոսկով է շինած զարհայութիւն[ն], որ մարդ կու տեսնու, կու փառատրի: Եւ այլ ի վեր հանած է ԻԸ (28) թագաւոր, թանն ի գլխըներն, եւ կա[ն]կնել ե[ն] մարդու պէս⁸ ի կարքն: Եւ այլ ի վեր՝ տիրայմայր Աստուածածինն ոսկով⁹ զարդարած է զունզգու/10ա/նով¹⁰, որ կանկ[ն]ել են ի յաջ եւ ի ձախ¹¹ սուրբ հրեշտակայպետ [ի] սպասատրութիւն. եկեղեցոյն լուսայմուտերին մեծութիւն ամէն ֆան ի կալ մի¹² էր: Եւ եկեղեցին ի ձախ դիհն¹³ հանած է անտաշ դէմ մի մեծ՝ սուրբ Քրիստայփորն¹⁴ եւ Քրիստոս ոսին վերայ, եւ բազում զարդարանֆ: Ով¹⁵ մարդ կարէ լեզվով պատմել զֆաղֆին¹⁶ աղեկութիւն: Եւ Բ (2) գետ կու մտնու մէջն եւ կէսն ի դուրս չի ելնել¹⁷: Ասին թէ ԶՃ (600)

¹ Զ սոյն *ֆիւ* սիւնն:

² Զ գանեցին, Սրբ. գապեցին, Մ. Երզնկ. կապեցին:

³ Զ ցախ:

⁴ Զ սուրբ եւ ամ. *ֆիւ* ամենայն սուրբ:

⁵ Սրբ. կշիռ է:

⁶ Զ ցախ դիհն ֆիշ:

⁷ Զ զննիլէին:

⁸ Բզմ. եւ կանգնել են մարդու պէս ի բոլորին. Տղկ. եւ կանկներ են մարդու պէս:

⁹ Զ ոսկով:

¹⁰ Զ գուզգունով:

¹¹ Զ ցախ:

¹² Զ լուսայմուտերն մեծություն Ա ֆան ի գալ մի էր, Բզմ. լուսամտերն բոլոր ամէն մէկ ֆան ի կալ մի, Տղկ. եւ այլ Գ(2) լուսամուտի բոլորն ամէն մէկ մէկ ֆան ի կալ մ'է:

¹³ Զ ցախ թին:

¹⁴ Զ գիստայփորն:

¹⁵ Զ օվ:

¹⁶ Զ եւ զֆաղֆին:

¹⁷ Զ չի ելել, Սրբ. չի ենել *ֆիւ* չի ելնել:

եկեղեցի¹ կայ, ճ (100) իսպիտալի եւ հիւանդի տեղ կայ, ճ (100) աղքատի կայ, ԿՌ (60, 000) դպրայտուն² կայ, ամէն դպրայտուն Գ (4) վարպետ կայ, ԿՌ (60,000) խասապխանայ³ կայ: Հանց մեծ քա/10բ/ղաք է, որ ասին թէ ճ տարպայ ճՌ տուն է^{10*}, է (7) պարիսպ է. քաղքի բոլորն ԽԳ (43) միլ է, մեծ եկեղեցին⁴ ԲՃ (200) սրբոց մաս կայ: Բ (2) ամիս կեցաք: Քագաւորն Լուդրան էր գնացել ԿՌ (60,000) մարդով⁵, խոստովանհարն սպանեց զթագաւորն թվ. ՌԼԸ (= 1589), քաղքին դովին փակեցին եւ ամիս մն շի բացին⁶, մէջն մնացաք⁷ մինչեւ բացին, շատ շար քաշեցի:

Եւ ելաք, գնացաք հասաք⁸ Ուուրիան, Ապիլայ, Անպոզայ, Աթուրշը, Անճէշ, Ասոմէր, Անանդ:

Մտաք⁹ ի նաւն, ԳՃ (300) միլ տեղ է, ԻԵ (25) օրն հասաք¹⁰ Ըսպանիայ սուրբ Յակոբայ աշխարհն. լեզու չէի գիտել. շարշարանք քաշեցի մինչեւ ուսայ: [Հասայ] Աւիլվայ, Սան Պաստիան^{11*}, այն մարտիրոսին մարմինն ի հոն է, որ խա/11ա/չեցին, նետն բռնեցին: Անոր մարմինն երկրպագեցաք¹¹ մեղաց թողութիւն խնդրեցաք, անկից ելաք, գնացաք հասաք¹² այն տեղն, որ¹³ սուրբ Յակոբ հավն յարուց. հոն ալ ուխտ արինք, ելաք, գնացաք հասաք¹⁴ մեծ քաղաք Պուրզուա, որտեղ որ Քրիստոսի խաչայփայտն է. Սանթայ Կ[ր]ուատին^{12*} կասին, այնոր մէջն է¹⁵: Երկրպագեցաք¹⁶ գայլ պաղի ուխտայտեղանք տեսանք¹⁷. ԳՃ (300) եկեղեցի կայ¹⁸ եւ Խ (40) վանք կայ, հոգէտուն կայ, թագաւորն է շինել: Կեցաք եւ ելաք, գնացաք հասաք¹⁹ Վալայ-

¹ Ձ եղկեցին:

² Ձ դպրաց տուն, Սրբ. դպրատուն:

³ Ձ հասապխանայ, Սրբ. խասապ հանայ:

⁴ Ձ եկեղեցին:

⁵ Ձ մարդով:

⁶ Ձ շի բացին:

⁷ Սրբ. մնացի:

⁸ Սրբ. ելայ գնացի հասայ:

⁹ Սրբ. մտայ:

¹⁰ Սրբ. հասայ:

¹¹ Սրբ. երկրպագեցի:

¹² Սրբ. խնդրեցի անկից ելայ գնացի հասայ:

¹³ Ձ or փի ուր:

¹⁴ Սրբ. ուխտ արի, ելայ գնացի հասայ:

¹⁵ Սրբ. կասին վանք մի (է), այնոր մէջն է:

¹⁶ Սրբ. երկրպագեցի:

¹⁷ Ձ տեսայնք, Սրբ. տեսի:

¹⁸ Ձ եկեղեցին կայր:

¹⁹ Ձ գեցաք, Սրբ. գեցայ եւ ելայ գնացի հասայ:

տուլի. մեծ քաղաք է, ԳՃ (300) եկեղեցի¹ կայ, ԲՃ (200) սրբոց մարմին կայ. ուխտ /11բ/ արի, ելայ գնացի Սալամանք. ԺԴԹ (14, 000) դպիր կայ, մեծ եկեղեցին² Ճ (100) սրբոց մաս կայ: Ելայ գնացի Սամուլայ, Պէնուվենդ, Մէդին էլ Գամբ, Մէդին Ըռուշէք, Սիմանգաս³. Դօռդայտէլ, Լէվոն Վիլայֆուանդ, Առօրկայ: Մեծ եկեղեցի⁴ մի կայ, է (7) դուռն ունի, Մ (50) խորան է, Ճ (100) սրբոց մաս կայ: Ուխտ արի, ելայ գնացի, ԺԵ (15) քաղաք անցայ, հասայ սուրբ [3]ակոբ առաքելի գերեզմանն. ուխտ արի. մարմինն չի կարցի տեսնուլ⁵. ասին, թէ տարին Ա (1) անգամ կու հանին, գնայ, ուխտին⁶ ատենն եկոյ:

Ելայ, գնացի, ութ ամիս շուռ եկի, շա/12ա/տ քաղաք ու գեղ, վանորաք, ուխտայտեղ, վանք տեսայ, անկից դարձայ ճանփօլ մ'ալ եկի, հասայ սուրբ Յակոբ ըխտին: Հանին զմարմինն դուրս, ուխտ արի: ԴԹ (4000)^{13*} էրէց ու հաբեղայ կար, թող զաշխարհականն, զկնիկն ու զտղան, զմեծն ու զպզտիկըն՝ անթիւ էր, համբար չէր ի գալ. Գ (3) օր ուխտ արին, շատ սրբոց մասեր կար:

Սուրբ Յակոբայ եկեղեցին Գ (3) տապազայ է, ԲՃԶ (206) կամար է, Լ (30) խորան է, Դ (4) դուռն է, Ճ (100) էրէց կայ ի մէջն, մեծ զանկակայտուն մի ունի է (7) տապաղայ է, Բ (2) մեծ զանկակ⁷ կայ ի մէջն, Լ (30) թիզ էր Ա զանկակն, մեկ ալ զանկակն /12բ/ Ի (20) թիզ էր^{14*}: Ուխտ արի, ելայ գնացի, բազում քաղաք անցայ, հասայ ի Եզր Աստուածածին^{15*}. արհնեալ է Աստուած, որ ողջ ու առողջ ի հոս հասայ, ուխտ արի: Այլ չէն չի կայ⁸ ծով է, հանց ծով է, որ նաւ ալ չի երթալ:

Գ (3) օր կեցայ, ելայ գնացի հարաֆային կողմն, հասայ այն տեղն, որ ծովն սուրբ Յակոբայ մարմին[ն] դուս էր հանել, որ անգլուխ Աստուած կու պաշտէին. քաղաքին անունն Բազրուն կասին: Անկից գնացի, Ե (5) քաղաք ալ անցայ, հասայ Փունթուպետրն, Ադուու: Եւ անկից մեծ գետ մն անցայ^{16*}, մտայ Փոռթուկալաց աշխարհն. հոն ալ լեզու չէի գիտել, շարշարեցայ, մինչեւ որ յուսայ⁹ /13/:

¹ Զ եկեղեցին:

² Զ եկեղեցին:

³ Զ Սիմանգաս, կարելի է վերծանել նաև Տիմանգաս:

⁴ Զ եղկեցին:

⁵ Զ տեսնեսույ *փիս* տեսնուլ:

⁶ Զ ուխտին:

⁷ Զ եւ Ա զանկակն:

⁸ Զ չի քայր *փիս* չի կայ:

⁹ Սրբ. մինչեւ որ յուսայ (Զ չիք մինչեւ):

եւ հասայ Վալէնցայ, Կամէնայ, Բրակայ, Վիլա-Նովայ, Վիանայ, Գ (3) քաղաք ալ անցայ, հասայ մեծ քաղաք մն Փոռթ. ԲՃ (200) եկեղեցի կար, ճ (100) սրբոց մաս կար, ուխտի արի, ելայ, գնացի մտայ ի ծովն, ելայ Կալայ, գնացի Գ (3) քաղաք ալ անցայ, հասայ Կուոււմրայ. ի հոն ալ շատ եկեղեցի կար¹, հասայ Սանթարին, Վիլա Նովն, Կաստինար, Ջաքապին, հասայ մեծ քաղաքն Լիզպոյ:

Բոռթուկալայ թագաւորին քաղաքն է, գնացի թագաւորին մօտ^{17*}, խիստ մեծարեց, ողորմութիւն երես: ԳՃ (300) եկեղեցի² կայր, Լ (30) վանք կար, շատ սրբոց մաս կար. ուխտ արի, ասին /13բ/ թէ ճՆ (100,000) տուն է, խիստ մեծ քաղաք է. ԵՃ (500) նաւ կու կանկնի առջեւն:

Մտայ ի նաւն գնացի առաջի քաղաքն Կոն, Աէթօվրն, Բունգայլիմնմայ: Մտայ ի նաւրն, գնացի Այմոնդ, Ե (5) քաղաք ալ անցայ³, հասայ մեծ քաղաք էր՝ Սիվիլիայ: Գ (3) հարուր եկեղեցի⁴ կայ, շատ սրբոց մաս կայ, մեծ եկեղեցի⁵ մն կայ⁶ է (7) դուռն ունի, ճՄ (150) խորան է, շատ սրբոց մաս կայ ի մէջն. ասին, թէ ՋՆ (80,000) խանայ է:

Առջեւ քաղաքին մեծ գետ մն կայ^{13*}, նաւեր շատ կանկնել է թագաւորն Իսբանեայու, որ Նոր Հունտուստան գտաւ⁷: Տարին Ե (5) կամի կու գայ, ըստակ ու ոսկի կու բերէ: /14ա/ Այտ այն ոսկին[եւ] արծաթ[ն] է, որ ինքն իրեն կու բուսանի, զարմանք բան է: Շատ ձի, շատ ջորի, կով, ոչխար կու մորթին, լաշն կու տանին այն տեղն կու ձգին, որ ոսկին-արծաթն կու բուսանի. ան տեղն մեծ մոջիմ կու լինի, մեծութիւնն քանձ շան շաք. մոջիմներն կու ելին ոսկուն միջէն, լաշն ուտել կու երթան Գ-ԳՃ (3-400) ձիաւոր կտրիչ կու երթան, ի մէջն կու մտնուն⁸, վայր ու վեր կու վազեցընեն, ոսկի-արծաթն կու մանտրի մինչեւ մոջիմն գայ, մոջիմն լաշն կուտէ ու դառն[այ] գայ իր տեղն, տես[ն] ու մա[ն] տրած է ոսկին ու արծաղն. մոջիմն բան տեղ կու շէնէ, կու տան[ի] հեռու տեղ //^{19*}: Կու առնուն ու կու տանի[ն]՝ ի նաւրն կու լնուն ու կու բերին: Նաւին մեծութիւնն ԺԲ (12) տապաղա[է], ԺԳ (14) տեղ առ/14բ/ազաստ կու բանան. եկեղեցի⁹ կայ¹⁰ ի մէջն, պահէզ կայ ի

¹ Ձ եկեղեցի մն կար:

² Ձ եկեղեցին:

³ Սրբ. Բաղաբ ալ անցա (Ձ չիք անցայ):

⁴ Ձ եկեղեցին:

⁵ Ձ եկեղեցի մն:

⁶ Ձ կաս փիս կայ:

⁷ Ձ որ գտաւ:

⁸ Ձ կու մատնի:

⁹ Ձ եղկեցին:

¹⁰ Ձ կայ փիս գայ:

մէջն, շրհոր կայ ի մէջն՝ քար ու կիր պատած, անծրեւ որ գայ՝ ի մէջն կու լցվի, խասաֆ կայ, պազազ կայ, ԵՃ՝ (500) նաւավար¹ կայ. Զ (6) ամիսն կու գայ կու հասնի Սիվիլիայ:

Ելաք գնացաք² Կարմունայ, Մարչինայ, Սունայ, էսիշայ, Գորտովայ: Մեծ եկեղեցի³ մն կայ, ԺԲ(12) դռնէն է, այլ շատ վանքեր կայ, շատ սրբոց մաս կայ: Ելայ գնացի Հրճիտոն, Անթքել, Լոշ, Պլելս⁴, Մալակայ, Ալհամայ, Սանթաֆէ, հասայ մեծ քաղաքն Ակրանատ. Մաղրիպացոց թաղթէն է^{20*} հիմայ քրիստ/15ա/ոնեայ է եղել, շատ եկեղեցի⁵, վանքեր կայ: Մեծ եկեղեցի⁶ կայ՝ Ը(8) դուռ ունի, Ճ(100) խորան է, շատ սրբոց մաս կայ. տեսայ, ելայ գնացի Ճայէն, ի հոն է Քրիստոսի անկար պատմուճանն. այլ շատ մասեր կան: Ուխտ արի, մեղաց թողութիւն խնդրեցի, ելայ գնացի Ալխալայ. այլ Ժ(10) քաղաք ալ [անցայ], հասայ նոստըր Սինոր^{21*} Վատալուպ կասեն, մեծ վանք մի կայ. ՃԾ(150) հաբեղայ կայ, շատ սրբոց մաս կայ, ըլտաւոր խիստ կու գայ: Ուխտ արի, ելայ գնացի Տալայվեր, Թուլիթ. մեծ քաղաք է, շատ եկեղեցիք կայ. մեծ եկեղեցի մի կայ՝ Ճ(100) սրբոց մաս կայ ի մէջն, է(7) դուռն ունի, ուխտ արի, ելայ գնացի նոստըր Սինոր Կարիդայ /5բ/:

Գնացի Մատրիլ, թագաւորին քաղաքն է Ըսպանու թագօրն հոն չէր. ԻԱ(21) միլ տեղ մէկ վանք մի կայ, ՃԾ(150) ապեղայ կայ, Ուսկուրեալ կասեն^{22*} թագօրի գերեզմանայտուն է, ամառն հոն կերթայ, ձմեռն Մատրիլ կու նստի: Խիստ մեծ վանք է, Ծ(50) խորան է, շատ սրբոց մաս կայ^{23*}:

Թագաւորն ի մօտ գնացի, ողորմութիւն առի. թուխթ առի, ելայ գնացի Ալխալայ, Վատալայշար, Սարայկոս. մեծ քաղաք է, զօրաւոր եկեղեցի⁸ մն կայ ի մէջն, Աստուածածին է անունն, այլ շատ մասեր կայ: Ուխտ արի, ելայ գնացի Լերիդայ, Պարսալոն⁹. ԾՌ (50,000) տո[ւ]ն է. մահ էր ընկել, ԻԵՌ (25,000) դուռն փակվել էր:

Ելայ գնացի Թոռթոն^{24*}, այլ Գ (3) քաղաք ալ, հասայ Վալենսայ. մեծ քաղաք է, շատ եկեղեցի կայ, սրբոց մասեր կայ. նաւայհանգիստ է:

¹ Զ նաւարար փի նաւավար:
² Սրբ. ելայ գնացի:
³ Զ եղկեցի:
⁴ Զ Պլել, Սրբ. Պլելս:
⁵ Զ եղկեցի:
⁶ Զ մեծ եղկեցի:
⁷ Զ շատ եղկեցի կայ մեծ եղկեցի մի կայ:
⁸ Զ եկեղեցի:
⁹ Սրբ. Պարսալոն, Զ Պարզալո:

Գնացի, իրիցներուն աղաչեցի. Այլ չիմ կարնալ քալել, մարմնու կա/16ա/րիքս հատաւ, որ Դ (4) տարի է կու քալիմ. ինձի նաւ մի գտիք: Եկին, գտան նաւ մի, ասին նաւայվարին¹. Առ զայտ աղքատ հարեղատ. տար Հոռոմայ աշխարհն: Նաւավարն ասաց, թէ իմ նաւին մէջն օտար ապրանք չի կայ², նաւըն իմն է, ապրանքն իմ[ն] է, մարդն իմն³ է. Ես աւնատակ ծովն կու երթամ, այլ ճանփան քաղաք չի կայ⁴, Բ-Գ (2-3) ամիս նաւին մէջն եմ⁵, Աստուած գիտէ իմ ազատիլըս. թէ ինքն ալ կարող է, թող մտնու, Ես ալ Աստուծոյ սիրով[ն] համա[ր] տանի [մ]^{25*}. Ես ալ ասի, թէ քանց զքեզ աղէկ չեմ Ես, ինչպէս դուն՝ այնպէս Ես:

Ես ալ հանց մտայ ի նաւըն, գնացի հասայ կղզի մըն էվիսայ կու ասին, /16բ/ անկից գնացի Մաճուռայ, կղզի է, ԼԵ (35) քաղաք կայ, անկից գնացի Մինորգայ, շատ գեղ ու շատ քաղաք կայ:

Անկից ետեւ գնացաք Մեծ ծովին մէջ. ՃԾ(150) նաւավար⁶ էր. Ես իմ ընկերներովն⁷ Բ (2) ամիս ծովին վերայ կեցայ, շէն չի տեսայ, Աստուած պահեց ազատեցայ:

Հասայ մեծ քաղաքն Ճենեւայ, արհնեալ է Աստուած շատ եկեղեցի⁸ կայ, Ի (20) վանքեր կայ: Ուխտ արի, Ելայ գնացի, է (7) քաղաք ալ անցայ, հասայ Բաւիայ, Միլան: Խիստ մեծ քաղաք է, Բ (2) տարայայ ՃՄ (200,000) տուն է, ասին, ԴՃ (400) եկեղեցի կայ, շատ սրբոց մասեր կայ. ուխտ արի, Ելայ գնացի, Ի (20) քաղաք ալ անցայ՝ Պլոնիայ, Ֆլորենցայ, Սին, Ակվայ, /17ա/ Թենթիր, Սան Կիրիկոյ, Մոգանթիֆիաշկ, Վիտերբ: Ես այլ ժ (10) քաղաք անցայ՝ Անապոլի, Պօլիա, հասայ Մոնինու կղզին, Լար, Ֆարֆարին, Ճիլ-ճիլիա, Սարայկոսայ: Այլ Ե (5) քաղաք ալ [անցայ], Ելա[յ] գնացի բազում քաղաքաւ Կամինա, Ավրօնայ, Աւիցենց, Պատվայ Ես այլ բազում քաղաքաւ հասա Մատունա-Լոռէդ, որ կու թարքմանի՝ Զօրաւոր Աստուածածին, հասա ի քաղաքն Անքունիա: Մտայ ի նաւըն՝ Վենետիք, անկից մտա ի նաւըն Ելա թո[ւ]//^{26*} [հասայ] /17բ/ Զոուու, Սիլիվիր, Զաքմայճայ, Ըստամպուլ, Ատրանա:

Ո՛վ⁹ ընթերցող բանիս՝ հարք Ես եղբարք, թէ կասէք մեղաւոր Սարգիսն Ֆռանգրստան կամ ինչ դատար քաղաք է տեսեր: Ռ (1000) բերթ ու քաղաք

¹ Սրբ. նաւայվարին, Զ նաւուն:

² Զ չի գայ:

³ Զ մարդն իմնն է:

⁴ Զ չի գայ:

⁵ Զ իմ քիւ եմ:

⁶ Զ նաւաւար:

⁷ Զ իմ ընկերն էի, Սրբ. իմ ընկերներովն էի:

⁸ Զ եկեղեցին:

⁹ Զ օվ:

տեսեր եմ, թող զգեղրանքն, ԴՌ (4000) հանդիսի եկեղեցի¹ տեսեր եմ, ԳՌ (3000) վանք հաբեղի, ԸՌ (8000) կուսանաց վանք, արհնեալ է Աստուած:

Թվ. ՌԷ (1588) Ըսբանու թագաւորն տօնանմայ շինեց, ՃԼ (130) կամի զարդարեց, ՁՌ (80,000) մարդով Լուդրանին վերայ գնաց, ֆուռթանա եղաւ զամենն^{27*} /18ա/:

Թվ. ՌԻ (1591) եկի Ըստամպոլ, ելա գնացի Ատրանա, հայտուստ Բրաւատա, Պազարճուխ, Պապա, հասա Տունա՝ մեծ գետ է^{28*}, նաւով անցա, մտա Պողտանաց երկիրն^{29*}, հասա առաջի քաղաքն Եաշն, Ուռմանի, Սաշովն², Պոչանն, Սերաթն, Խութին[ն], մտա գետն^{30*}, անցա գնացի Կամենիցն, հասա Իլախաց աշխարհն: Բազում քաղաքաւ հասա Եաշ քաղաքն, որ է թագաւորանիստ Պողտան ազգին: Անկից ելա, գնացի հասա Ագքիրման, որ է Սեւ ծով, մտա ի նաւըն, գնացի:

Աղաչեմ զքեզ Աստուածածին սուրբ կոյս,
Որ հանես զիս մթնէ ի լոյս:

Ա(1) ամիս ծովն կացի, հասա Հայաստան, արհնեալ է Աստուած:

Թվ. ՌԻԱ(1592) հասա Հայաստան /18բ/:

Թուխթն շատ էր, թանաֆ [հ]ոլով,
Մեղաւոր Սարգիսն էր մտամոլոր,
Որ գայս բաներդ շի գրեց զամէնն բոլոր,
Անմեղադիր լերուֆ ուժով:

Ղարիպ եմ ու խիստ լալի,
Այտ օտար աշխարհս որ եկի,
Կու տան ինձ հազար բարի,
Կու պահեն աչերս ի լալի:
Ինչ անեմ ես հազար բարին,
Որ կու գա ձայնս ղարիպի,
Թողում, իմ աշխարհն երթամ,
Թող կենամ ծարաւ, անօթի^{31*}:

¹ Ձ եկեղեցին:

² Ձ Սավովն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1*. Ձեռագիրը թերի է. մեկ կամ մի քանի թերթեր չեն պահպանվել: Նիկողայոս հայրապետի նկարագրվող վանքը գտնվում է Ջմյունհիա (Իզմիր) քաղաքում: Ուստի Սարգիս արեղան, Ստամբուլից նավ նստելով, կարճատև կանգառ է ունեցել Ջմյունհայում:

2*. Այս և մյուս բոլոր տեղանունների ճիշտ գրությունը և գտնվող տեղը ցույց է տրված ներածական խոսքի մեջ և ներդիր քարտեզի վրա:

3*. Նազարաթ կամ Նազարեթ էր կոչվում Վենետիկից ոչ հեռու՝ Ս. Ղազարի հարավակողմը (շուրջ 400 մ հեռավորության վրա, Լիտայի մոտ) գտնվող և այժմ *Lazzaretto Vecchio* կոչվող կղզին: Իր անունը ստացել է Նազարեթի Աստվածամորը նվիրված եկեղեցուց, որ կանգուն է եղել մինչև 1249 թ.:

Միջին դարերում այս կղզու վրա շուրջ 40 օր արգելափակում էին արևելյան երկրներից Վենետիկ այցելողներին. տարափոխիկ հիվանդությունների, հատկապես ժանտախտի համաճարակից քաղաքն ապահովելու համար (տես «Բազմավեպ», 1968, N 7-12, էջ 406): Միմեոն Լեհացին մանրամասն նկարագրում է իր քաշած ծանր օրերը այս Նազարեթում:

4*. Հռոմի պապի հետ տեսակցություն ունենալու և զրուցելու հատվածը բառացի քաղված է Մ. Երզնկացուց, ուստի դժվար է պնդել, որ այդ պատիվն արվել է նաև Սարգիս արեղային: Մեր ճանապարհորդի՝ Հռոմում եղած ժամանակ պապ էր Սիքստոս V-ը (1585-1590), որը բարեկարգեց պապական նահանգի կառավարչությունը, կառուցեց Վատիկանի գրադարանի շենքը և հիմնադրեց տպարան:

5*. Տուտեշ ասելով՝ մեր հեղինակը, հետևելով Մ. Երզնկացուն, նկատի ունի գերմանացիներին, որոնք իրենց *Deutsche* են կոչում: Աղավաղված Տուտեշ ձևն առաջացել է հավանաբար իտալական *tedesco*-ի ազդեցությունով:

6*. Լրտեսություն մեղադրանքով Բազել քաղաքում բանտարկվելու հատվածը, ընդմիջարկված լինելով Մ. Երզնկացու «Ուղեգրությունից», չի կարող վերաբերել նաև մեր ճանապարհորդին:

7*. Բազելից հետո այցելած քաղաքը Մ. Երզնկացու «Ուղեգրության» ձեռագրում Ֆրանկֆուրթ է կոչված: Այդ անշուշտ, սխալ է ստեղծված հետազայում, եվրոպայի աշխարհագրությունը վատ իմացող ընդօրինակողի կողմից: Ճիշտ է Սարգսի մոտ պահպանված Ֆրուտ-ը, որ Բազելից շուրջ 20 կմ արևելք գտնվող *Ferrette* (տառադարձված նաև *Pfirt* ձևով) քաղաքն է:

8*. Այս քաղաքի անունը գրված է այնպես, որ կարելի է կարդալ նաև Տանզիա: Գերադասում ենք Սանզիա վերծանումը՝ կարծելով, որ մեր ուղեգիրն ի նկատի ունի Սան-Դիզյե (*St. Dizier*) քաղաքը:

9*. Թագավորական գերեզմանատուն հանդիսացող եկեղեցու մեջ վիթխարի ձկան կմախքի գոյություն մասին այս տեղեկությունը գրեթե բառացի քաղված է Մ. Երզնկացու «Ուղեգրութիւնից»: Այնտեղ, սակայն, այդ ամենը պատմված է Սեն-Դենի քաղաքի նկարագրության մեջ: Սարգիս արեղան այդ քաղաքում չի եղել: Նրա «Ուղեգրութեան» մեջ Մ. Երզնկացուց ընդարձակ հատվածներ ներմուծած խմբագիրն այս դժվարությունը հաղթահարել է Սեն-Դենի քաղաքի մասին պատմածը վերագրելով Աթուռ (իմա՝ Troyes) քաղաքին:

10*. «Ճ տարպայ ճՌ տուն» նշանակում է 10 միլիոն տուն: Զարհուրելի չափազանցություն է:

11*. Սան Սեբաստիանոս վկայի անունով կոչուած Սան-Սեբաստիան քաղաքն է բասկերի երկրի վարչական կենտրոնը:

12*. Սպաներեն *CRUZ* նշանակում է խաչ:

13*. ԴՌ (4000) թվանշանի առաջին նիշը (Դ) գրված է սրբագրողի կողմից, նախկինում գրված մի այլ թվանշանի վրա: Ուշագիտ զննությամբ հնարավոր է լինում վերծանել նախկին թվանշանը՝ ԿՌ(60,000), որ անշուշտ չափազանցություն է:

14*. Սուրբ Հակոբի վանքում (*Santiago de Compostella*) Սարգիս արեղայից շուրջ երկու տասնամյակ հետո եղել է հայ ունիթոր քահանա Ավգուստինոս Բաջեցին: Ստորև մեջբերում ենք նրա «Ուղեգրութեան» այն հատվածը, որ վերաբերում է նշանավոր այդ վանքի նկարագրությանը.

«... Հասայ սուրբ Յակոբ, այն աւուրն էր վիճիլ հոգագալստեանն... վաղեան աւուրն տունն կատարեցին. ես մեղաւորս խոստովանեցայ եւ հաղորդ առի. այն աւուրն խիստ լաւ զարդարել ին եկեղեցին, գեղեցիկ թափուր արին. Ը(8) կարտինար հանապազ հոն կու բնակին. ամենեքեան եպիսկոպոսական զգեստ էին յագեալ եւ բազում ոսկէ եւ արծաթէ գաւազան էին վերառեալ եւ շատ սրբոց մասունք, ամենայն ոսկով պատած, եւ սուրբ Յակոբոս Ալփեան գլուխն ի թափուրն վեր էին առեալ: Իւր պատկերն ոսկով շինած այ մինչեւ ի գոտկայտեղն. ի գլխին անգին թագ էին եղեալ, որ գինն Աստուած լաւ գիտէ. Դ քահանայ յօժարութեամբ (իմա՝ դժարութեամբ – Լ. Խ.) վեր կունին: Եւ սուրբ Յակոբայ գերեզմանն մեծ խորանին տակին այ. դուռն մեծ բեմում այ. պապէն բանադրանք կայ, որ ոչինչ մարդ չէ կարիլ դուռն բանալ եւ վեր իջնիլ, տեսնուլ գերեզմանն սրբոյն: Եւ գերեզմանին

վերայ Բժ. կանթեղ կայ մեծիմեծ եւ արծաթէ եւ այլ բազում, հանապազ վառ են: Ամենայն քրիստոնեայ թագաւորի կանթեղ եւ տաճար կայ հոն շինած: Եւ սուրբ Յակոբայ գաւազանն ի մէջ եկեղեցումն է եւ երկաթով պատած է, վասն եկող եւ գնացողքն շտրատեն, եւ մէկ դուռն կայ եկեղեցուն՝ մօտ գերեզմանին, որ կոչեն դուռն ողորմութեան, որ է (7) տարէնն մէկ հետ բացի. երանի այնոցիկ, որ այն աւուրն որ բացուի՝ հոն լիցին: Այս սուրբ եկեղեցիս երկու տակ է. որչափ որ վերն է եւ այնչափ վայրն է. խիստ զարմանալի գեղեցիկ շէնք: Եւ Խ (40) մանկունք հանապազ երգեն եւ շարականեն եղանակաւ եւ բարբառիւ. եւ խիստ լաւ քաղաք է եւ էժանութիւն: Եւ այլ բազում գեղեցիկ վանքեր եւ եկեղեցիք կայ հոն շինած, որ մարդի բերան չի կարիլ պատմել ամենայն» (Նշխարք մատենագրութեան Հայոց, ի լոյս էած Ք. Պատկանեանց], Ս. Պետերբուրգ, 1884, էջ 12-13):

15*. Այս վայրում եղել է նաև Մ. Երզնկացին: Իր «Ուղեգրութեան» մեջ նա գրում է. «Ելեալ դիմեցի յճր աշխարհի յճր Աստուածածինն... որ ֆրանկերեն ասեն Սանթա Մարիա Ֆենէստիոնա» (իմա՝ Santa Maria Finisterre): Ավգուստինոս Բաշեցին ասում է, որ «սուրբ Յակոբայ մինչեւ եգեր Աստուածածին Գ(3) աւուր ճանապարհ է, ապա ես գնացի ոչ վասն ընկեր չունելոյն» («Նշխարք մատենագրութեան Հայոց», էջ 13):

16*. *Mino* (Մինյո) գետն է, որ Սպանիան բաժանում է Պորտուգալիայից՝ հանդիսանալով վերջինիս հյուսիս-արևմտյան սահմանագիծը:

17*. Պորտուգալիայի թագաւոր Սեբաստիանոսի (1554-1578) վախճանից հետո (սպանվել է Մարոկկոյում) 1580 թ. Սպանիայի թագավոր Փիլիպպոս II-ին հաջողվեց զինական ուժով Պորտուգալիան միակցել Սպանիային՝ խոստանալով հարգել այդ երկրի ներքին ինքնավարությունը: Այսպիսով, 60 տարի (մինչև 1640 թ.) Պորտուգալիան Սպանիայի մասն էր կազմում, ուստի շուներ իր թագավորը: Սարգիս աբեղան հավանաբար թագավոր է կոչում Պորտուգալիայի փոխարքային կամ բարձրաստիճան պաշտոնյաներից մեկին:

18*. Գվադալկուիվի գետն է, որն իր ստորին հոսանքում նավարկելի է:

19*. Աստղանիշով եզերված հատվածն ավելացված է սրբազրոյի ձեռագրով, էջի ստորին լուսանցքում: Վերջին տողը զոհ է գնացել կազմարարի դանակին. պահպանվել են միայն տառերի վերին եզրերը:

20*. Արաբերեն «մադրիպ»՝ արևմուտք բառից: Այդպես էին կոչվում ճգիպտոսից արևմուտք ընկած երկրները՝ Լիբիա, Թունիս, Ալժիր, Մարոկկո,

ինչպես նաև Սպանիայի հարավային շրջանները, որոնց մի մասը մինչև 1492 թ. գտնվում էր արաբական տիրապետության ներքո:

21*. Սարգիս արեղան Նոստը Մինոր աղճատ ձևով է տառադարձում սպաներեն *Nuestra Señora* (ֆրանս. *Notre Dame*) արտահայտությունը, որ նշանակում է Մեր Տիրուհի, այսինքն՝ Աստվածամայր: Կաթոլիկ եվրոպայում և մասնավորապես՝ Սպանիայում Աստվածամոր անունով բազմաթիվ վանքեր կան, որոնցից են նաև Սարգսի հիշատակած Գվադալուպայի և Կորիդայի վանքերը:

22*. Սպանական թագավորների ամառային աթոռանիստ էսկուրիալ քաղաքն է, որ հայտնի է շքեղ ապարանքով ու վանական մեծ համալիրով: Իր հիմնական մասով կառուցվել է Սարգիս արեղայի ճամփորդության շրջանում թագավորող նշանավոր գահակալ Փիլիպոս II-ի նախաձեռնությամբ ու ծրագրով:

էսկուրիալում եղել է նաև Ավգուստինոս Բաջեցին. «Այն աւուրն հասայ մէկ վանք, - գրում է նա, - որ կոչի Ըսկուռեալ, որ է խիստ զարմանալի շինած մէջն եւ ի դուսն. շէնքն ամենայն մառմարիայ, ի մէջ եկեղեցին կայր բազում աշտանակ եւ կանթեղք արծաթեղէն եւ ոսկեղէն. ԳՃ(300) միաբան կայ մէջն սուրբ Զերանիմոսի կարգէն, թող գնացողն, որ հանապազ Գ(3) աւուր հաց կուտան եւ ամենայն պէտսն: Մէջն գրքատոյն կայ, որ Մ(50) գազ երկայնություն է եւ Իե (25) գազ լայնություն է, գրքով լի, զամենայն ոսկով կազմած եւ ամենայն ցեղ լեզուէ ի մէջն կայ. Խ(40) ջորի հանապազ կերակուր կու բերէ եւ ըմբելի եւ ամենայն պէտսն: Ի մօտ վանքին է շինած գեղեցիկ դարպաս թագաւորին, որ թագաւորն ամառն հոն կու բնակէ» («Նշխարք մատենագրութեան Հայոց», էջ 12):

23*. Աստղանիշով եզերված հատվածը լրացված է առաջակողմյան լուսանցքի վրա, սրբագրողի ձեռագրով:

24*. Այս տեղանվան վերջին ն տառը պետք է եղած լինի գ. քանի որ խոսքն, անտարակույս, *Tortosa* քաղաքի մասին է:

25*. Աստղանիշով եզերված հատվածը լրացված է լուսանցքի վրա, սրբագրողի ձեռագրով:

26*. Այս մասից հավանաբար թերթ է ընկել: Բնագրի թերի լինելը նկատել է նաև ձեռագրի գրիչը, որ 5 տողի շափ տեղ անգրել է թողել: Այս կորստի պատճառով անորոշ է մնում Սարգիս արեղայի ճանապարհորդության այս հատվածի ուղեգրի: Վենետիկից նավ է նստում, բայց որտեղ է ափ իջնում, չգիտենք: Շարունակության մեջ հիշատակված առաջին աշխարհագրական անունը Զոուլուն է, որ գտնվում է Թեքիրդաղից շուրջ 60 կմ

հյուսիս-արևելք՝ ծովից հեռու: Պետք է ենթադրել ուստի, որ մեր ուղեգիրը ճանապարհի այս հատվածի գեթ մի մասը կտրել է հետիոտն՝ ծանոթանալով Թուրքիայի եվրոպական մասի որոշ շրջանների հետ:

27*. Սա ուշագրավ գրանցում է Սպանական ծովուծի «Անպարտելի արմաղա» կոչվող նավատորմի ղի Անգլիա կատարած անհաջող արշավանքի, փոթորկի տակ ընկնելու և կործանման մասին: Սարգիս աբեղան Սպանիայում թափառել է ողբերգական այդ դեպքից (1588 թ.) շուրջ 2 տարի հետո: Նավերի թիվը (130) ճիշտ է տրված, իսկ անձնակազմինը (80,000) չափազանցված է: Ըստ ստույգ տվյալների՝ «Անպարտելի արմաղային» սպասարկում էին 8 հազար նավաստի և 19 հազար զինվոր:

28*. Դունայ կամ Դանուբ գետն է:

29*. Միջնադարյան հայ հեղինակներն այսպես (Պուլտանա կամ Պուլտանաց երկիր) էին անվանում Մոլդովան:

30*. Դնեստր գետն է, որի աջափնյա տարածություններն այս ժամանակաշրջանում պատկանում էին Մոլդովային (Պուլտանա երկիր), իսկ ձախափնյա շրջանները՝ Լեհաստանին (Սարգիս աբեղան ուրիշ շատ հայ հեղինակների նման, Լեհաստանը Իլախաց աշխարհ է կոչում):

31*. Այս գողտրիկ հայրենը, որ իր հոգեկան վիճակին համապատասխան ընտրել է իր գիտցած գուսանական-ժողովրդական երգերի միջից ու գրանցել մեր ուղեգիրը, անձանոթ է: Մ. Աբեղյանին հայտնի է գրեթե նույն («Ղարիպ եմ ու խիստ լալի // Յայս օտար երկիրս որ եկի») սկսվածքով մի հայրեն, որի մյուս տողերը միանգամայն տարբեր են (տե՛ս «Գուսանական-ժողովրդական տաղեր», Երևան, 1940, էջ 199):

ՀԱԿՈՒ ԶՈՒՂԱՅԵՅՈՒ ԿՏԱԿԸ*

1966 թ. հունվար-մարտ ամիսներին Հորդանանում և Լիբանանում գիտական շրջագայություն կատարելիս ծանոթացանք Երուսաղեմի հայոց պատրիարքության ու Զմմառի հայոց վանքի ձեռագրատներում պահվող գրչագրերի հավաքածուներին: Այդ հաստատությունների վարիչներն ամեն դյուրությամբ ստեղծեցին մեզ համար համեմատաբար կարճ ժամանակամիջոցում մեզ հետաքրքրող ձեռագրերից զգալի քանակությամբ ընդօրինակություններ ու միկրոպատճեններ կատարելու, և մենք վերադարձանք գիտական գործուղումից՝ բերելով հայ միջնադարյան մատենագրության տարբեր բնագավառներին վերաբերող ուշագրավ նյութեր, որոնք ըստ մեծի մասի օգտագործվելու և հրատարակվելու են համապատասխան մասնագետների կողմից մեր գիտական պարբերականներում և առանձին գիտական աշխատությունների մեջ:

Բերած նյութերի շարքում իր բովանդակությամբ կարևոր նշանակություն ունի Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի շրջաբերական մի կոնդակը՝ իր կողմից «Կտակ» կոչված, որի միակ ընդօրինակությունը պահպանվել է Երուսաղեմի մատենադարանի N 2864 ձեռագրում*:

Մի քանի խոսք այդ ուշագրավ փաստաթղթի նշանակության ու գրություն հանգամանքների մասին:

Հակոբ Զուղայեցի կաթողիկոսը բեղմնավոր իր գործունեությամբ առանձնահատուկ տեղ է գրավում XVII դարի էջմիածնի կաթողիկոսների շարքում: 1655 թ. ապրիլի 8-ին օծվելով Ամենայն Հայոց կաթողիկոս և ավելի քան 25 տարի գահակալելով (մահացել է 1680 թ. օգոստոսի 2-ին Կ. Պոլսում) նա առավել չափով, քան իր գործունյա նախորդները՝ Մովսես Խոտանանցին և Փիլիպպոս Աղբակեցին, ծրագրված գործունեություն ծավալեց էջմիածնի վանքի հիմքերն ամրապնդելու, նոր կալվածքներ ձեռք բերելու, ջրանցքներ ու ջրավազաններ, ինչպես նաև վանական ու տնտեսական շենքեր կառուցելու գծով¹: Պատմագիտական նորագույն ուսումնասիր-

* «Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 4, էջ 173-186:

** Պարտք ենք համարում խորին շնորհակալություն հայտնել անվանի բանասեր Նուրայր Եպիսկոպոս Պողարյանին, որը սիրալիբ կերպով մեր ուշադրությունը սևեռեց այդ ձեռագրի վրա:

¹ Միմեռն Երևանցի, Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 104-105, 197-200 «Զափարիա սարկավազի Պատմագրություն», հտ. Երկրորդ, 1870, էջ 62, 91:

րուծություններում դրվատական էջեր են գրվում Հակոբ Զուղայեցու մասին՝ համարելով նրան նաև հայ ազատագրական շարժման ռահվիրա: Նրա գործունեության այս բնագավառը լուսաբանելու համար մեջբերվող վավերագրերը կարոտ են մանրակրկիտ քննության. սակայն ինչ արդյունքներ էլ ստացվեն այդ քննությունից, Հակոբ Զուղայեցին անտարակույս չի զիջի իր դիրքերը՝ որպես մի գործիչ, որ, Մ. Օրմանյանի խոսքերով ասած, «իր մտադրությունը կը սեւեռէ ոչ միայն կրօնական եւ կրթական բարեկարգութեանց վրայ, այլեւ ուշադրութիւն կդարձնէ ազգին ապագային վրայ. եւ անոր կենցաղական ու քաղաքական վիճակն ալ իր ջանքերուն առարկայ կ'ընէ եւ դուրսէն հովանաւորութիւններով ու նիւթական օգնութիւններով կը խորհի ազգին անկեալ կացութիւնը բարձրացնել եւ արկանեալ վիճակը երջանկացնել»¹:

Հակոբ Զուղայեցու «Կտակը» (կոչվում է նաև «Գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան») մի կարևոր սկզնաղբյուր է, որ լույս է սփռում ոչ միայն Հակոբ Զուղայեցու արդյունաշատ գործունեության տարբեր կողմերի վրա, այլև հնարավորություն է ընձեռում ծանոթանալու Ամենայն Հայոց կաթողիկոսության տնտեսական ու քաղաքական դիրքերն ամրապնդելու նպատակով լուսամիտ կաթողիկոսի մշակած արմատական բարեփոխումներ կատարելու ծրագրերի հետ:

Իր «Կտակը» կամ շրջաբերական կոնդակը Հակոբ Զուղայեցին հասցեագրել է «ընդ ոլորտս տիեզերաց» «ցիր ու ցան եղեալ» հայ ժողովրդի հոգևոր ու աշխարհիկ պետերին:

Թուուցիկ մի ակնարկ նետելով հայոց պատմության տարբեր շրջանների վրա ու համառոտակի անդարդառնալով Արշակունյաց, Բագրատունյաց ու Ռուբինյանց տիրապետության շրջանների անցուդարձերին՝ Զուղայեցին հանգում է այն եզրակացության, որ Հայ եկեղեցու տնտեսական բարգավաճ վիճակի ու նյութական բարեկեցության հուսալի պատվարը միշտ էլ եղել է աշխարհիկ իշխանությունը: «Որպէս մարմինն է կառավարիչ հոգոյն, եւ հոգին մարմնովն կատարէ զկամս Աստուծոյ եւ թողութիւն մեղաց եւ զկատարումն ամենայն բարեկարգութեանց, նոյնպէս եւ հոգեւորական գործ եւ եկեղեցական կարգ եւ սահման՝ մարմնաւոր իշխանութեամբ յառաջանայ», - գրում է նա:

Զուղայեցին հիշում է երանելի այն ժամանակները, երբ Բագրատունի թագավորների բարեգործությամբ Հայաստանում կառուցվեցին բազմաթիվ

¹ Մ. Օրմանյան, Ազգապատում, հտ. Բ. Գ գիրք, Պեյրուք, 1960, էջ 2618-2619:

վանքեր ու եկեղեցիներ, երբ «ոչ էր պակաս տուն հայրապետանոցի, քան գտուն թագաւորացն»: Սակայն նա ապրում էր մի ժամանակաշրջանում, երբ երկու մասի բզկտված Հայաստանը հեծում էր թուրք և պարսիկ տիրապետողների ծանր լծի տակ. չկային հայ թագավորներ ու իշխաններ, որոնց հովանու ներքո բարգավաճ վիճակ ստեղծվեր Հայ եկեղեցու համար:

Վշտալի ու ծանր այս պայմաններում «ի ներքոյ իշխանութեան տաճկաց երբեմն յեշտութեամբ, երբեմն նեղութեամբ, երբեմն հարստութեամբ եւ երբեմն աղքատութեամբ եւ այսպէս փոփոխմամբ» են անցկացրել իրենց օրերը Ամենայն Հայոց կաթողիկոսները, որոնց մեջ եղել են նաև ապիկար ու սոփեստ մարդիկ: Իր «Կտակի» մի զգալի մասը Զուղայեցին նվիրում է XVII դարի սկզբներին գահակալած Դավիթ, Մելքիսեթ և Սահակ կաթողիկոսներին, թվարկում է նրանց վատշվեր գործերը՝ այդ մասին հողորդելով նաև ուշագրավ նոր տեղեկություններ: Այնուհետև նա դրվատական պատմություն է հյուսում իրեն նախորդող Մովսէս ու Փիլիպպոս կաթողիկոսների, հայտնում է, որ Մովսէսը «նորոգեաց սուրբ աթոռ յամենայն դիմաց... եթէ հոգեւոր կարգօք՝ վարդապետօք, դպրատանօք եւ աշակերտեալ մանկտօք, սուրբ եկեղեցուն բազմագուն զարդիւք եւ սրբութեան անօթիւք, նոյնպէս մարմնաւորօք, ընչիւք եւ ապրանօք, վարօք եւ վաստակօք»:

Շատ ավելի մանրամասնորեն Զուղայեցին շարադրում է իր գործունեության դրվագները որպէս Փիլիպպոս կաթողիկոսի աթոռակալ, իսկ այնուհետև որպէս Ամենայն Հայոց կաթողիկոս: Սիմեոն Երևանցին «Զամբուում» ու Զաքարիա Քանաքեռցին իր «Պատմութեան» մեջ մանրամասն տվյալներ են գրանցել էջմիածնի վանքում և այլ վայրերում Հակոբ Զուղայեցու կատարած շինարարական ձեռնարկների, Մայր Աթոռի կալվածքներն ընդարձակելու և գործունեության այլ կողմերի մասին: Զուղայեցին, սակայն լրացումներ է կատարում. «Եւ յորժամ, - գրում է նա,- Շահ-Սօֆի թագաւորն եկն ի վերայ Երեւանայ բերդին՝ Յօշականայ մլքին Բ (2) դանկ եւ կէսն ծախեալ էին տեառն Փիլիպպոսին եւ դանկ ու կէսն գրաւեցեալ. ի ժամանակս տեառն Փիլիպպոսի Աղշուց վանուց մուլքն եւ էի գնեալ, Ծոփանիսոյ մուլքն եւ Սօլաքայ Գ (3) դանկն... Յօշականայ գրաւն եւ մնացեալն այլ գնեցի»: Այլուստ հայտնի չէ Աղշուց վանք, Ծոփանիս (Բյուրականի մոտ) և Սօլաք (Կոտայքում) գյուղերի մուլքը XVII դարում էջմիածնի վանքին պատկանելու փաստը: Շատ ավելի կարևոր է Վաղարշապատ գյուղի մուլքը Երևանի խաների կողմից բռնագրավված լինելու և մեծ ջանքերի շնորհիվ շահական հրովարտակով կրկին էջմիածնի վրա հաստատվելու պատմությունը, որ շարադրում է իր «Կտակում» Հակոբ Զուղայեցին: «Բ(2)

տարի, - գրում է նա, - բազում աշխատութեամբ դեգերեցայ ի դրունս մեծամեծաց, մինչ Տէր գթացաւ եւ քաղցրացոյց զսիրտ թագաւորին, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին վերստին շնորհեաց սուրբ աթոռոյն»: «Կտակի» մեջ տվյալներ կան նաև անշարժ այլ կալվածքներ ձեռք բերելու և էջմիածնի տնտեսութեան բարգաւաճման նպատակով ձեռնարկված շինարարական աշխատանքների մասին. «Գեղի մուլք եւ այգիք վախմ եմ հաստատեալ սուրբ աթոռոյն, նոյնպէս եւ այլոց մուլք եւ այգիք եմ գնեալ, բաղանիք եմ վախմ ճարեալ, դրամ բազում եմ խարճեալ եւ ջուր բերեալ, որ այլեայլ անուն ասեն. հայոց լեզուան ահակուգայ (իմա՝ ադուգայ), թուրքի լեզուան՝ քարեզ, իսկ պարսիցն՝ դանաթ. այն ջրոյն ներքեւն ծովակ եմ արաբեալ, ի նմանէ եւս գոյ վաստակ», - գրում է Ջուղայեցին¹:

«Կտակի» բուն բովանդակությունը բացահայտվում է ընդարձակ այս նախաբանից հետո, որ գրավում է 19 ձեռագիր էջից բաղկացած փաստաթղթի 13 էջը: էջմիածնի վանական տնտեսության և կաթողիկոսական աթոռի համար համեմատաբար բարվոք վիճակ ստեղծելու նպատակով իր և իր նախորդների կատարած աշխատանքը ներկայացնելուց հետո Հուղայեցին ուղղակի հայտարարում է. «Եթէ Սուրբ էջմիածնայ գէլուրի (իմա՝ հասուլթի) և դրամի հրամանն ի ձեռն սեւագլխի եղնի, փոքր ինչ ժամանակաց յետոյ սուրբ աթոռն աւեր տեսէք»:

Տնտեսական կայուն և բարվոք վիճակ ստեղծելու մտահոգությամբ Ջուղայեցին առաջարկում է սահմանափակել կաթողիկոսի իրավունքները և բարեկարգել աթոռի տնտեսության վարչությունը՝ ստեղծելով մի նոր մարմին՝ «գովաթաւոր երեսփոխանաց» գլխավորությամբ:

Իմեկով հայ ժողովրդի հոգևոր և մարմնավոր առաջնորդներին՝ Ջուղայեցին աղաչում է իրագործել իր կտակը և այսուհետև կաթողիկոս օծելիս ճշտել նրա իրավունքներն ու պարտականությունները հետևյալ կերպ. կաթողիկոսն ինքնագլուխ իրավունք պետք է ունենա տնօրինելու նվիրակությունների և այլ դրամական հասուլթիների ընդհանուր գումարի մեկ հինգերորդ մասը միայն, իսկ անշարժ կալվածքներից (մլքերից) ստացվող եկամուտի՝ մեկ-տասներորդը: Մյուս՝ մեծ մասը Մայր Աթոռի անկապտելի ստացվածքն է համարվելու և տնօրինելու է նոր ստեղծվելիք վարչության կողմից, որի կազմում լինելու են «գործօքն պարկեշտ, ինքն համեստ եւ

¹ Հակոբ Ջուղայեցու կառուցել տված ֆանդանների («գետնափոր ջուր») և ջրամբարների մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ս. Երևանցին իր մեծարժեք «Ջամբոռում» (տե՛ս էջ 197-200):

մարդաշահ» մի աշխարհական՝ «երեսփոխան», նրա «խոստովանահայրը»՝ մի հոգևորական, և մի «գալթար գրող», այսինքն՝ հաշվապահ: «Դրամի պահելն, աւելցնելն եւ շահեցուցանելն ի ձեռն երեսփոխանին է», նրա ձեռներեցությամբ ու գլխավորությամբ ավոռի հասույթները պետք է օգտագործվեն նոր կալվածքներ ձեռք բերելու, շինարարական օգտակար նոր գործեր կատարելու և այլ նպատակներով:

Պարզ ու որոշ պետք է լինեն նաեւ այս «երեսփոխան դուրաւթաւորի» իրավունքները. նա «զինչ որ առնէ՝ գիտութեամբ կաթողիկոսին լինի, իսկ թէ կաթողիկոսն այլ տեղ լինի գնացեալ՝ գիտութեամբ ավոռակալին եղնի, զի ծածուկ բան չանէ»:

Տարին մեկ անգամ կաթողիկոսն իր խորհրդականների հետ միասին պետք է ժողով գումարի՝ պարզելու համար, թե «այս տարույս մուտն ինչ է եւ ինչ է»:

Հակոբ Զուղայեցու եկեղեցական բարենորոգության այս ծրագրում նախատեսված են նաև այլ կետեր: Կաթողիկոսը պարտավորված պետք է լինի «գլխաւոր բան եւ գործ» լինելու դեպքում եկեղեցական ժողով գումարել հեղինակավոր առաջնորդների և գիտուն վարդապետների մասնակցությամբ: Էջմիածնում նոր կառուցումներ կատարելը կամ հին շինություններ քանդելը նույնպես կատարվելու է ժողովի կողմից հավանության արժանանալուց հետո: Ի վերջո, կաթողիկոսները պարտավոր են միշտ շեն պահել Աթոռի դպրատունը (հոգևոր ճեմարանը) և դասատունը (դպրոցը), «զի այն է օգուտ օրինաց եւ հաւատոյ եւ պայծառություն սուրբ եկեղեցւոյ»:

Ստույգ չգիտենք, թե երբ է գրել իր «Կտակը» Հակոբ Զուղայեցին: Մի հատվածում նա հայտնում է, որ բարենորոգությունների իր ծրագրի մասին նա առիթ է ունեցեզ գրուցելու Սպահանի (նոր Զուղայի) «դուրաւթաւորաց» հետ «Կտակի» գրությունից 18 տարի առաջ:

Հայտնի է, որ Իրանի շահից իր կաթողիկոսության հաստատման հրովարտակը ստանալու, Վաղարշապատ գյուղը կրկին էջմիածնին վերադարձնելու և ապահարկման այլ արտոնություններ ձեռք բերելու համար Զուղայեցին կաթողիկոս օծվելուց հետո մեկնել է Սպահան և, ինչպես ինքն է հայտնում կոնդակում, 2 տարի մնացել այնտեղ («Բ տարի բազում աշխատութեամբ դեգերեցայ ի դրունս մեծամեծաց»):

Մատենադարանի արխիվային բաժնում պահպանվել են Շահ-Աբբաս Բ-ի 2 հրովարտակները՝ տրված Հակոբ կաթողիկոսին հիշրայի 1069 թ. Զումադի II ամսի 24-ին, որ համապատասխանում է մեր թվարկության 1659 թ. մարտի 19-ին: Հրովարտակներից մեկում Հակոբ կաթողիկոսի անունով վե-

րահաստատվում է էջմիածնի մեկ գութանի ապահարկությունը (մուսաֆու-
թյունը), որ տրված է եղել Փիլիպպոս կաթողիկոսին, իսկ մյուս հրովար-
տակով երկրի բոլոր նահանգներում անարգել երթևեկության իրավունք է
շնորհվում էջմիածնի նվիրակներին¹: Ըստ այդմ, Հակոբ կաթողիկոսը Սպա-
հանում իր գործերն ավարտել է 1659 թ. գարնանը և հավանաբար նույն
ժամանակ էլ վերադարձել էջմիածին. գիտենք արդեն, որ «Կտակը» գրված
է դրանից 18 տարի հետո, ուստի՝ 1677 թ.:

Այս տվյալը հաստատվում է նաև «Կտակի» մեջ առկա կենսագրական
բնույթի մի քանի ակնարկներով:

Ասել ենք արդեն, որ Հակոբ Զուղայեցուն հաջողվել է Վաղարշապատ
գյուղը (որի մուլքը Թահմազ-ղուլի խանի թուրքերի կողմն անցնելուց հետո,
որպես տոնուլս (ռոճիկ), տրվում էր Երևանի իրար հաջորդող 5 խաների)
շահական հրովարտակով կրկին դարձնել էջմիածնի աթոռի վակֆային կալ-
վածք: Այս կապակցությամբ նա գրում է. «Իսկ այժմս (այսինքն՝ «Կտակի»
գրություն ժամանակ) Ե(5) խան է նստեալ, շնորհօք Սուրբ Հոգույն հաս-
տատ է (Վաղարշապատ գիւղը) սուրբ աթոռոյն»: Եվ իրոք, այդ տարիներ-
ընդմիջում, այսինքն՝ 1659-1677 թթ. միջոցին, Երևանում իշխել են հետևյալ 5 խա-
ները.

1) Նաշաֆ-ղուլի, որ խան է եղել մինչև 1663 թ.,

2) Աբաս-ղուլի՝ 1663-1666 թթ.,

3) Ալխաս-Միրզա (Սեֆի-ղուլի)՝ 1666-1674 թթ.

4) Սարուխան-բեկ (ժամանակավոր պաշտոնակատար)՝ 1674-1675
թթ.,

5) Ռուստամ խանի որդի Սեֆի-ղուլի խան՝ 1675-ի նոյեմբեր ամսից²:

Մի այլ կապակցությամբ Հակոբ Զուղայեցին հայտնում է, որ «անմար-
մին սատանայքն մտին Սահաթափոսի (Երևանի նահանգի) սեւագլուխքն, եւ
իւրեանքն եղեն մարմնաւոր սատանայ Երեւանայ խանէրին, որ այնքան
վիշտ եւ նեղութիւն կրեցաք ի ձեռաց Բ(2) խաներին»:

Այս երկու խաներից մեկը, անտարակույս, Ալխաս-Միրզան է՝ Հակոբ
կաթողիկոսի անձնական թշնամին³, իսկ մյուսը՝ Սեֆի-ղուլի խանը, որն էջ-

¹ Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1բ,
վավ. 104, 105:

² Այս տվյալները հիմնականում ֆաղում ենք Զաֆարիա Ագուլեցու ստուգապատում «Օ-
րագրությունից» (Երևան, 1938):

³ Խանի և կաթողիկոսի լարված հարաբերությունների ու թշնամանքի մասին պերեհա-
խոս տվյալներ են գրանցված Զաֆարիա Քանաֆեոցու Պատմության մեջ (տե՛ս «Զաֆա-
րիա Սարկաազի Պատմագրություն», հտ. երկրորդ, 1870, էջ 77 և հետ.):

միաձնի պարտքերի վրա նոր պարտքեր էր կուտակել և երկյուղ կրելով կաթողիկոսից, որ կարող էր գնալ Սպահան ու բացահայտել խանի ապօրինի գործերը, արգելափակել էր նրան Երևանում: 1677 թ. հունիսի 1-ին¹ նա «առանց գիտելոյ խանին՝ ելեալ գնաց ի Տփլիս քաղաք Վրաց, թերեւս կարասցէ ժողովել զգրամս զի օգնություն լիցի պարտուցն»²: Ահա հենց այս օրերին էլ, երբ, իր իսկ խոսքերով, Զուղայեցին «կիսամեռ հասակաւ» շրջում էր «երկրէ ի յերկիր եւ դռնէ ի դռն... իբր մուրացիկ», - գրված պետք է լինի մեզ հետաքրքրող փաստաթուղթը՝ հավանաբար հենց Տփլիս քաղաքում:

Հակոբ Զուղայեցու «Կտակն» արժեքավոր է ոչ միայն Մայր Աթոռի տնտեսական հիմքերն ամրապնդելու հեռանկարով մշակված վարչական բարենորոգումների ծրագրով և XVII դարի քաղաքական ու եկեղեցական անցուղարձերի մասին ուշագրավ տեղեկություններով: Այս նոր սկզբնադրյունը իր նպատակն է բերում նաև հայ պատմագրության պատմությունը: Պարզվում է, որ Զուղայեցին ունեցել է նաև «Կաթողիկոսաց պատմություն» կոչվող մի աշխատություն, որի մեջ շարադրել է եթե ոչ ավելի վաղ շրջանների, ապա անտարակույս, իր ապրած ժամանակի Հայ եկեղեցու ընդարձակ պատմությունը:

Մահակ կաթողիկոսի գործունեության դրվագները պատմելիս նա գրում է. «Շահն ասացեալ էր խօճայ նազարին, եւ նա տուեալ զպատասխանին, որպէս որ գրեալ եմ ի մէջ Կաթողիկոսաց պատմութեանն», եւ այնուհետեւ՝ «Անդ (յերկիրն Օսմանցոց) եւս ոչ դադարեաց վատաշուէրն (Մահակ) իւր խարդախութենէն, որպէս գրեալ եմ լիապէս արարք նորա ի Պատմութիւն կաթողիկոսացն»: Նույն աշխատության մասին մեկ անգամ էլ ակնարկ է անում Մովսէս կաթողիկոսի մասին խոսելիս. «Նորոգեաց սուրբ աթոռն (Մովսէս) ի յամենայն դիմաց, որպէս գրեալ կայ ի Պատմութիւնն»:

Հակոբ Զուղայեցու գրած «Պատմութեան» մասին վկայություն ունի նաև Երեմիա Քյոմուրճյանը բազմավաստակ կաթողիկոսի մահվան առիթով հյուսած իր «Ողբի» մեջ, ուր կան այսպիսի տողեր.

«Զպատմությունս գրեցեր,
Յիշատակ մեզ թողեր,
Զգանգատսդ աշխարհի ծանուցեր»³:

Զուղայեցու «Կտակն» արժեքավոր է նաև իր լեզվով, որ ժամանակի

¹ Զաֆարիա Ագուլեցի, էջ 128:

² Զաֆարիա Քանաֆեղցի, հտ. Բ, էջ 91:

³ Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 220:

խոսակցական լեզուն է՝ գրաբարախառն աշխարհաբար: Նա, օրինակ, գրում է. «Եթէ իմ կամք այլ չեղնի՝ դուք բռնադատեցէք զիս, տարին քանի մի զուռուշի մուլք գնենք, որ սուրբ աթոռոյս մնացական եղնի, յետակայից ժամանակաց լիցի օգուտ, ո՞վ գիտէ զինչ ինելոց է, եւ այլ բազում խօսք» և այլն և այլն (տե՛ս բնագիրը):

Ջուղայեցու լեզուն խառն է թուրքերեն ու պարսկերեն բառ-տերմիններով՝ տուվաթավոր, դապալա, իճարա, վախմ, ռաղամ, սիկեյ, արզուհալ, դավթար, տոնլուխ, խարճ, գելուր, քարեզ, զանատ, զատ, իղրար, հսապ և այլն, սակայն հասկանալի են ու անկարոտ բացատրությամբ:

Ստորև հրապարակում ենք Հակոբ Ջուղայեցու «Կտակը» ճիշտ այնպես, ինչպես ընդօրինակված է Երուսաղեմի մատենադարանի N 2864 ձեռագրում, որ, ըստ հնագրական տվյալների, XVII դարի վերջերի կամ XVIII-ի սկզբների արտագրությունն է (հիշատակարան չունի): Լուսանցքներում նշում ենք ձեռագրի էջահամարները:

[ԿՏԱԿ ՅԱԿՈՒԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԶՈՒՂԱՅԵՑԻՈՅ]

// [Յիսուսի] Քրիստոսի նուաստ ծառայ Յակոբ կաթողիկոս Ամենայն Հայոց եւ փոխանորդ սուրբ առաքելոցն Բարդուղիմէոսի եւ Թադէոսի, եւ աթոռակալ սրբոյն Գրիգորի Հայաստանեայց Լուսաւորչի, եւ վերադիտող Վաղարշապատու աստուածաէջ սուրբ տեղոյն իջման Բանին Աստուծոյ, եւ խնամիչ սուրբ աթոռոյն տառապեալ ազգիս, յորմէ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան, շնորհք առաքելական եւ աստուածային բազմապատիկ օրհնութիւնն ի վերայ բոլոր եւ տառապեալ ազգիս, որ մեղաց հողմով ցիր եւ ցան եղեալ են ընդ ոլոր[տ]ս տիեզերաց:

Այլ եւ զեկուցումն լիցի լուսաւորեալ շարչարանօք սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին լուսածնունդ զաւակաց մօրն լուսոյ սուրբ էջմիածնայ հոգեւոր եւ սիրելի որդիք իմ՝ եպիսկոպոսք եւ վարդապետք, վանականք եւ անա//պատաւորք, քահանայք եւ եկեղեցւոյ աստիճանւորք, իշխանաշուք տօլվաթաւորք եւ երեսփոխանք, քալանթար եւ մելիք, տանուտետարք եւ, առհասարակ, աստուածասէր ժողովուրդք, զի որպէս մարմինն է կառավարիչ հոգւոյն եւ հոգին մարմնոյն կատարէ զկամս Աստուծոյ եւ թողութիւն մեղաց եւ զկատարումն ամենայն բարեգործութեանց, նոյնպէս է հոգեւորական գործ եւ եկեղեցական կարգ եւ սահման՝ մարմնաւոր իշխանութեամբ յառաջանայ: Ոչ միայն քրիստոնէից է այս, այլազգեաց եւ կռապաշտիցն եւս էր, զի այնքան նահատակք, որ վասն սիրոյն Քրիստոսի նահատակեցան, կռապաշտք թագաւորքն վասն իւրեանց օրինացն խափանման վրէժխնդիր եղեն: Իսկ մերոյս տառապեալ ազգիս Գ (3) անգամ կանգնեալ եւ անկեալ է թագաւորութիւնն նախ՝ Արշակունեաց թագաւորութիւնն, որ ԳՃ (300) ամալ յառաջ էր, քան զգալուստն Փրկչին մերոյ. ի ժամանակս կռապաշտութեանն բազում քաջութիւն եւ յաղթութիւն եւ երեւելի գործ ցուցին, եւ այլ այլազգ թագաւորք հարկատու արարին: Իսկ յորժամ եկն լոյս աշխարհս տէրն մեր Քրիստոս եւ աստուածաճանաչք եղեն, ի մէջ Արշակուն[ե]աց թագաւորաց փոքր ինչ նշոյլ Աբգար թագաւորիցն երեւեցաւ, իսկ կատարելապէսն՝ սուրբն Տրդատ, որ քրիստոսական հաւատովն փայլէր իբրեւ զա//րեգակն, իսկ այլքն ոչ արարին այնպէս գործ, որ յիշելոյ եւ գրելոյ լինին արժան: Եւ յորժամ անկաւ թագաւորութիւնն Արշակունաց՝ սպարապետօք եւ մարզպանօք վարեցին զիշխանութիւնն իւրեանց, խրատով հայրապետացան առնէին ԳՃԼԶ (331) ամ, մինչ թագաւորեաց մեծն Աշոտ Բագրատունին:

Իսկ Բագրատունիքն ի Հրէիցն են բերեալ երկիրս Հայոց. ի ժամանակս թագաւորացն Հրէից երբեմն հարկս տային Բաբելացւոցն եւ երբեմն ոչ: Քա-

նիցս անգամ եկին Բաբելացիքն ի վերայ Հրէից եւ ոչ կարացին ըստ իւրեանց ախորժակացն առնուլ վրէժ: Բաբելացիքն յօգնութիւն խնդրեցին յազգէս Հայոց՝ գնալ ընդ բաբելացւոցն երկիրն Հրէաստանի, որ է Երուսաղէմ՝ եւ իւր շրջակայսն, այն պայմանով եղին ուխտ, զի գերիքն Հայոց լիցի, ոսկի եւ արծաթն՝ Բաբելացւոց: Թագաւորն Հայոց գլուխ զօրացն կացոյց եւ սպարապետ Բազաբրան, եւ բազում զօրօք գնացին երկիրն Հրէաստանի, եւ դարձան մեծաւ յաղթութեամբ: Եւ բերեալ Բազաբրամ ՄԹ (200,000) գերի, եւ բնակեցուցին ի յԱնի եւ իւր շրջակայքն, եւ եղէն թագադիր թագաւորացն Արշակունաց: Իսկ զկնի՝ 312 թուին (Հայոց 887 թ.) թագաւորեաց Աշոտ Բագրատունին, զկնի որդի նորա Սմբատ, եւ որդի նորա Աշոտն՝ կարգաւ մինչ ի Ժ (10) թագաւոր Բագրատունեաց նստաւ ի յԱնի: Եւ ոչ էին սոքա նման թագաւորացն // Արշակունաց. բազում բարեգործություն յաւելին ազգիս Հայոց, եւ բազում վանորայք եւ անապատք հաստատեցին, եւ բազում եկեղեցիս կառուցին. յիշատակ նոցա օրհնութեամբ եղիցի, եւ տէր թողցէ զյանցանս նոցա: Որպէս ի գիրս պատմութեանց գրեալ է՝ ոչ էր պակաս տուն հայրապետանոցի, քան զտուն թագաւորացն, զի ունէր Շ (500) գեւղ մեծանիստ եւ Շ (500) հեծելագօրս, ԼԳ (33) եպիսկոպոսք եւ գիտնական վարդապետք, [որ միշտ կային ի ծառայութիւն հայրապետին]²: Վասն միջասանման գոլոյն սուրբ Էջմիածնայ եւ էր անմարդաբնակ, զի պարսիկ[ք] զԹօփրախղալայն³ ունէին եւ Հայք զԱնբերդ, կէս աւուր ճանապարհ է հեռի միմեանց:

Իսկ ի բառնալ թագաւորացն Բագրատունացն ի յԱնոյ, որ ճԾ (150) ամ վարեցին զթագաւորութիւնն՝ յերկիրն Կիլիկոյ Ըռուբենիքն ունէին մասն ինչ յերկրէն՝ բերթ եւ գեղորայք: Սոքա սերեալք էին յազգէն Յարշակունաց եւ Բագրատունէից, ճԾ (150) ամ իշխանութեամբ կային, մինչեւ ի մեծն Լեւոն, որ թագաւորեաց եւ տիրեաց բոլոր տանն Կիլիկոյ: Եւ աթոռ թագաւորութեանն էր ի Սիս, մինչ ճՀԸ (178) ամ թագաւորեցին ի Սիս: Ի յայն ժամանակն ոչ էր Մսրը ի ձեռն Օսմանցոց, այլ յատուկ թագաւոր գոյր, որ սուլթան ասէին: Մսրա սուլթանն բազում նաւօք յանկարծակի եկն ի վերայ մեր թագաւորին, եւ մերայինքն էին անպատրաստ. ձերբակալ արար // զթագաւորն, եւ զերկիրն քանդեալ եւ գերէվարեաց, եւ բարձաւ թագաւորութիւնն: Սոքա եւս էին բարէբարոյ քրիստոսասէրք եւ երկիւղած յԱստուծոյ, յիշատակ նո-

¹ Ձեռագրում Երուսաղէմա:

² Փակագծերի մեջ առնված հատվածը գրված է լուսանցում:

³ Ձեռագրում՝ զԹօփրախղալանայն:

ցա օրհնութեամբ եղիցի, տէր թողցէ զյանցանս նոցա: Իսկ ի բառնալ թագաւորութեան մերոյ ի Սըսայ, զկնի ԽԵ (45) ամի, Օսմանցիքն առին Իստամպոլ:

Իսկ ի բառնալն թագաւորութեան Հայոց, այնուհետեւ ուր գոյր մեծ իշխան՝ անդ մնար կաթողիկոսն, մինչ որ յամենայն տեղիս տիրեցին մահմետականք: Եւ վարդապետն Թումայ Մեծոփեցին արար ժողով եպիսկոպոսաց, վարդապետաց եւ գիտնական արանց, նորոգեցին սուրբ Աթոռն, եւ անդ նստաւ կաթողիկոսն ի ներքոյ իշխանութեան Տաճկաց, երբեմն հեշտութեամբ, երբեմն նեղութեամբ, երբեմն հարստութեամբ, եւ երբեմն աղքատութեամբ, եւ այսպէս՝ փոփոխմամբ անցուցեալ են: Իսկ կաթողիկոսքն՝ ոմանք գիտունք եւ ոմանք անգէտք, մինչ ի յետին ժամանակս, որ մեք աչօք տեսաք՝ Դաւիթն եւ Մելքեսեթն՝ այր տգէտք եւ անտեղեակ սուրբ Գրոց: Բազում ժամանակ էր, որ երկուքն ի միասին վարէին զկաթողիկոսութիւնն, եւ յետոյ Մելքիսեթն ճ (100) թուման դաբալայ եդին ի վերայ սուրբ էջմիածնայ, որ եւ իճարայ եւս ասեն, որ ինքն միայն իշխեսցէ կաթողիկոսութեանն: Քանի մի ամ ետ ճ (100) թուման, եւ յետոյ ոչ կարացեալ տալ՝ եմուտ // Օսմանցոց երկիրն, եւ անտուտ ի Լէ՛՛, եւ անդ էառ զրաւ կենաց իւրոց:

Իսկ զկնի վաղջանի Մելքիսեթ կաթողիկոսին եղբօրորդի կայր՝ Սահակ եպիսկոպոս, գնաց առ թագաւորն Շահ-Ապաս, թէ տուր ինձ գտեղի հօրեղբօրն իմոյ, եւ ես վճարեցից զպարտքն, նոյնպէս ամէն տարոյ զճ (100) թուման[ն], էառ թագաւորէն հրաման եւ ըստ իւր արժանեացն նմանիցն եղեւ ձեռնադրե[ա]լ¹: Տարի մի ի Սպահան մնաց եւ ոչ ումեք գտաւ օգնութիւն, զի ամենեքեան պատճառեցին, թէ մեր մեծ եղբարքն ջուղայեցիք են, եւ յերբ նոքա քեզ ընդունեն, մեք եւս քեզ ձեռնտու լինինք, թէպէտ թագաւորին զեկուց, թէ խօճայ նազարն եւ այլ ջուղայեցիքն զիս շեն ընդունել, շահն ասացեալ էր խօճայ նազարին եւ այլ ջուղայեցիքն զիս շեն ընդունել, շահն ասացեալ էր խօճայ նազարին, եւ նա տուեալ զպատասխանին՝ որպէս որ գրեալ եմ ի մէջ Կաթողիկոսաց պատմութեանն: Եւ ոչ այնու գտաւ իւր անկարգ արարմանց դեղ, եկն երկիրս Հայաստանեայց տարի եւ երկու այսր եւ անդր, եւ ոչ այնու գտաւ հնար. զինչ որ ժողովէր՝ իւրայոց եւ թագաւորի ծառայիցն լինէր կարեացն բաւական: Հարցեալ էր գիտուն արանց, թէ որով հնարիւք կարեմ զերծանիլ ի ձեռաց ծառայից թագաւորին, եւ նոքա ասացեալ են՝ որպէս արար հօրեղբայրն քո: Ըստ նոցա խրատուն խոյս ետ // եւ եմուտ Օսմանցոց երկիրն: Անդ եւս ոչ դադարեաց վատաշվէրն իւր խարդախութենէն, որպէս գրեալ եմ լիապէս արարք նորա ի Պատմութիւն կաթո-

¹ Լուսանցիում ավելացված է. «Եւ ոմանք ասեն, թէ ի հորեղբօրէն եղեւ ձեռնադրեալ»:

դիկոսացն, ոչ լսելով դուրվաթաւորացն, մինչ եղեւ ի Քրիստոսի սեւերես եւ ուրացող հաւատոյն:

Մինչ ի վախճան Շահ-Ապասին է (7) տարոյ հարկն մնացեալ կայր ի վերայ սուրբ Աթոռոյն: Իսկ երջանիկ սուրբ հայրն մեր Մովսէս հոգեւոր տէրն բազում աշխատութեամբ եւ միջնորդութեամբ Ջուղայոյ եւ Երեւանայ դուրվաթաւորացն եւ սուրբ Լուսաւորիչին աղօթ[իւ]քն ողորմածն Աստուած քաղցրացոյց զսիրտ Շահ-Սօֆի թագաւորին, էանց մնացեալ հարկին եւ խափանեաց զեղեալ ճ' (100) թուման Մելքիսեթին: Եւ նորոգեաց սուրբ Աթոռն ի յամենայն դիմաց, որպէս գրեալ կա ի Պատմությունն. եթէ հոգեւոր կարգոք՝ վարդապետօք, դպրատանօք եւ աշակերտեալ մանկտօք սուրբ եկեղեցուն բազմագուն զարդիւք եւ սրբութեան անօթիւք, նոյնպէս մարմնաւորօք՝ ընչիւք եւ ապրանօք, վարօք եւ վաստակօք: Ի յառաջին տգէտ կաթողիկոսաց եւ ոչ մի ինչ է մնացեալ, սուրբ սեղանն փոքր է եղեալ եւ ոչ ըստ պատշաճին եւ արժանուն: Ի յօրհնել զսեղանն ոչ է եղեալ խաչ մի ի սուրբ Աթոռն, որ ի ձեռն առնու եւ օրհնէ զսեղանն, այլ ի յիւր վզի սուրբ նշանն է Մովսէս հոգեւոր տէրն ձեռին առեալ եւ օրհնեալ զսեղանն:

Եւ մեղապարտս // յորժամ եկն ի սուրբ Աթոռն՝ Ա. փոքր դեղի չափով անօթ չկայր ի սուրբ Աթոռն, զայս ամենայն վասն չբաւորութեան եւ աղքատ մնացեալ ի յառաջին նստող կաթողիկոսացն զրեցի, նոյնպէս եւ մլքի կողմանէ՝ հողի եւ վաստակից ոչ ինչ կայր եւ ոչ դրամ մի:

Իսկ զկնի տեառն Մովսիսի զինչ կիսակատար կայր ի շինուածոյ, եթէ եկեղեցւոյն եւ թէ այլ շինուածք կայր՝ Փիլիպպոս հոգեւոր տէրն ի կատար հասոյց, եթէ հոգեւոր պակասությունն եւ թէ մարմնաւոր, զամենայն ելից զթերին: Սուրբ աջն Լուսաւորիչն՝ որ Շահ-Ապասն տարեալ էր Սպահան, սուրբ աջն խնդրեալ ի թագաւորէն եւ դարձոյց ի սուրբ աթոռն: Սուրբ աթոռոյն զինչ վաստակ որ կայր՝ ոչ էր ազատ, նոյնպէս տեառն Փիլիպպոսի արարեալ ազատ ի հարկից դուան թագաւորին:

Եւ յորժամ Շահ-Սօֆի թագաւորն եկն ի վերայ Երեւանայ բերդին, Յօշականայ մլքին¹ Բ (2) դանկ եւ կէս ծախեալ էին տեառն Փիլիպպոսին եւ դանկ ու կէսն գրաւ եղեալ, ի ժամանակս տեառն Փիլիպպոսի Աղչուց վանուց մուլքն եւ էի գնեալ, Ծոփանիսոյ մուլքն եւ Սուլաքայ Գ(3) դանկն, զի մլքի կատարեալն 2 (6) դանկ է, Յօշականայ գրաւն եւ մնացեալն այլ գնեցի: Թէ Փիլիպպոս հոգեւոր տիրի գնեալն, թէ մեր գնեալն տարէն ԲՃ(200) զուռուշ ի նոցանէ վաստակ // լինէր սուրբ աթոռին:

¹ Լուսանցբում ավելացված է. «Ի մեծ նեղութիւն էին անկեալ»:

Իսկ զկնի վախճանի տեառն Փիլիպպոսի ժողովեցի զվարդապետքն եւ զմիաբանս եւ ասացի. եղբարք եւ սիրելի որդիք իմ, Փիլիպպոս հոգեւոր տիրին ձեռն այսքան դրամ եկն եւ գնաց, եւ այնքան դրամիցն քանի մի մուլք գնեցաք, որ տարին քանի մի թուման սուրբ Աթոռոյս վաստակ է գալիս. դարձեալ, սիրելի որդիք, տարին այսքան խարճ է գնում սուրբ Աթոռիս, եթէ այլազգաց, եթէ միաբանից, եւ եթէ եկող-գնացողաց: Եթէ իմ կամք այլ շեղնի՝ դուք բռնադատեցեք զիս, տարին քանի մի ղուռուշի մուլք գնենք, որ սուրբ աթոռոյս մնացական եղնի, յետակայից ժամանակաց լիցի օգուտ, ո՛վ զիտե զինչ լինելոց է, եւ այլ բազում խօսք:

Հոգեւոր սիրելի որդիք, մեղապարտս զինչ գրեմ վասն իմ, հրամայէ Սողոմոն. «Գովեսցէ զքեզ ընկերն եւ մի քո բերան, օտարն եւ մի քո շրթունն»: Սիրելիք, եթէ գովելոյ եւ պարծանաց սակէ գրեմ զարարս, տէր Քրիստոս հատեալ է վճիռն, թէ. «Այն իսկ է վարձք նոցա», իսկ եթէ սուտ գրեմ, նոյնպէս տէրն մեր Քրիստոս հրամայեաց. «Որ սուտ խօսի, յիւրմէ անտի խօսի, զի հայր նորա սատանայ է»: Զի թէ սուտ խօսողն որդի սատանայի է, իսկ որք սուտն թղթին արձանացուցանեն որքա՞ն պակաս են քան որդի սատանային: Իսկ թէ վասն // օգտի սուրբ Աթոռոյն եւ յետակայից բարի օրինակ լինելոյ, որ ամէնքն ըստ իրեանց շափոյն ջանան, թերեւս նոքա եւս յաւելուն ինչք սուրբ Աթոռոյն օգուտք: Իսկ գրելս ոչ ինձ մեղք, գովեստ եւ պարծանք, այլ բարի օրինակ յետակայիցն, եւ օգուտ սուրբ Աթոռոյն, եւ մեղապարտիս յիշատակ բարի առաջի տեառն մերոյ Քրիստոսի վասն ջանացս իջման իւրոյ տեղուոյն: Սիրելի որդիք, մի լիցի յաճախ գրելս ձեզ լսելն ձանձրութիւն, զի թէ կարճաբօտ գրեմ ոչ լինի պարզապէս իմացումն, վասն այն գրեմ փոքր ինչ յաճախ:

Հոգեւոր որդիք, բազում ժամանակ էր, որ սուրբ էջմիածնայ գեղի մուլքն ի սուրբ էջմիածնայ ելած էր, այլ յառաջ վախճ է եղած, ձեռաց ի ձեռն անկանելով եկեալ է ի ձեռն Ամիրգունայ խանին, զկնի նորա ի ձեռն որդւոյ իւրոյ Թամազ-ղուլի խանին: Եւ յերբ Թամազ-ղուլի խանն գնաց ընդ խոնթկարին, զինչս նորա թագաւորական տիրեցին, նոյնպէս եւ մուլքն սուրբ էջմիածնայ գեղին: Եւ իմ ապաւինեալ աղօթք սուրբ Լուսաւորչին, միջնորդ ունելով սուրբ զԱստուածածինն առ միածին որդին իւր, զի օգնեսցէ մեղապարտիս, գնացի ի տես թագաւորին՝ Երկրորդ Շահ-Ապասին, յառաջ ի տեսութիւն իւր եւ մեր կաթողիկոս նստելոյն, եւ նորոգեցաք ըռաղամ եւ սիկեղն մեր: Եւ զկնի այնորիկ ետու արգուհալ, թէ // էջմիածնայ գեղի մուլքն ժամանակաց-ժամանակ սուրբ էջմիածնայ վաղմ է, Ա. պատճառ ի մեր ձեռաց ելած է, ձեռաց ի ձեռն անկանելով ի ձեռն Ամիրգունայ խանին,

անկալ ի ձեռն որդւոյն՝ Թամազ-ղուլի խանին. եւ յորժամ նա գնաց օսման-լուն, ձգեալ են ի քո դաւթարն, խնդրեմք ի մեծութենէ քումէ սուրբ Էջմիածնայ վաղմն ալլվի շնորհես իւրն: Բ(2) տարի բազում աշխատութեամբ դեգերեցայ ի դրունս մեծամեծաց, մինչ Տէր գթացաւ եւ քաղցրացոյց զսիրտ թագաւորին, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին վերստին շնորհեաց սուրբ Աթոռոյն, զի Ե(5) խանի տօնլուխ ետ տուած դաւթարով Քալպաալի խանին, Ճաղաթայ Մահմատ-ղուլի խանին, Քէխոստրով խանին, Լալայ-բէկի տղայ Մահմատղուլի խանին, եւ Նաշաֆ-ղուլի խանին: Ի դաւթարացն դուրս ձգել ետու եւ սուրբ Էջմիածնայ վերայ հաստատեսցի: Իսկ այժմ Ե(5) խան է նստեալ, շնորհօք սուրբ հոգւոյն հաստատ է ի վերայ սուրբ Աթոռոյն:

Դարձեալ ծանիք սիրելի որդիք, բազում աղաչանօք, խրատով եւ քարոզելով եմ ճարեալ ի բազմաց, Աստուած ձեզ յաջողումն պարգեւէ եւ ձեր ծնօղաց հոգին լուսաւորէ, եւ երեւանցի խօճայ Յակոբջանին մեղացն թողութիւն շնորհէ եւ արքայութիւն պարգեւէ, գեղի մուլք // եւ այգիք վախմ եմ հաստատեալ սուրբ Աթոռոյն, նոյնպէս եւ ալլոց մուլք եւ այգիք եմ գնեալ, բաղանիք եմ վախմ ճարեալ, դրամ բազում եմ խարճեալ եւ ջուր բերեալ, որ այլեւայլ անուն ասեն՝ Հայոց լեզուան ահակուգայ, Թուրքի լեզուան՝ քարեզ, իսկ Պարսիցն՝ զանաթ. այն ջրոյն ներքեւն ծովակ եմ արարեալ, ի նմանէ Լուս քոյ վաստակ:

Զայսոսիկ վասն այն ծանուցանեմ սիրելի որդւոցս, զի ժամանակս դառնացեալ է եւ սէրն սպառեալ, տուրք եւ ողորմութիւն պակասեալ: Զի յառաջն գրեցի, թէ Մովսէս հոգեւոր տիրին ժամանակն մլքից զատ չգոյր, եւ Փիլիպպոս հոգեւոր տիրի ժամանակն՝ փոքր ինչ: Սիրելի որդիք, նոցա ժամանակն քաղցր էր, սէրն ոչ էր սպառեալ, տուրք եւ ողորմութիւն առատ էր: Իսկ ժամանակս այն ժամանակին մասն չէ մնացեալ, զի որքան վերայ հայրիմք, տարի քան զտարի, ըստ հաճոյիցն Աստուծոյ գործ նուազում է, մարգարէն Եսայիաս եւ ալլ մարգարէք գրեն. «Աչք ձեր ի հեռաստանէ տեսցին եւ զգուշացարուք յամենայնի»: Հոգեւոր որդիք, պարտիմք յամենայն պատրաստ եւ զգաստ լինիմք, շարն սատանայ մեզ թշնամի է, որ յամենայն կողմանց կամի մեզ փորձութիւն յարուցանել, զի բարին խափանեսցէ եւ զիւր շարիքն յառաջեցուսցէ. մեք եւս պարտիմք յամենայնի զգաստ // եւ զգոյշ լինիլ, զի մի իսպառ առ ոտն կոխան լինիմք: Դարձեալ, սրբազան առաքեալն Պօղոս հրամայէ. «Նախանձեցարուք շնորհացն, որ լաւն են», զի թէպէտ մեք յետին աղքատութիւնն եմք հասեալ, պարտիմք գիտնոց եւ իմաստնոց կարգ եւ սահմանն նայիլ եւ ի նոցանէ ուսանիլ: Զի փափն Հռոմայ, թէպէտ յամենայնի հրամայող է եւ ամենեքեան նմա հնազանդ եւ լսողք են, ալլ ոչ ունի

իշխանութիւն ի վերայ Պետրոսի առաքելոյ գանձին եւ գանձարանին, այլ է ի ձեռն երեսփոխանաց: Նոյնպէս պարտիմք եւ մեր մեր աղքատութեամբն նոցա կարգաւորութենէն օրինակ առնումք, թերեւս գթասցի Տէր, բարի կարգ եւ սահման հաստատեսցի ի մէջ տառապեալ ազգիս: Գիտեմ, զի ումանք այլ եւ այլ ընդ վայր խօսին, ասելով, թէ Մովսէս եւ Փիլիպպոս հոգեւոր տէրքն զայս ոչ սահմանեցին. բարւոք բարբառին ըստ իւրոց արժանուն, որպէս որ յառաջն գրեցի Մովսէս հոգեւոր տիրի ժամանակն զատ չկայր նորա [եւ Փիլիպպոս հոգեւոր տիրի ժամանակն Ժ (10) թուան կայր-չկայր]¹, նոքա ի՞նչ կարգ դնէին. իսկ այժմս, շնորհօք սուրբ հոգւոյն, բազում է, հարկիւ պարտիմ կարգ եւ սահման հաստատել, օրհնութեամբ եւ անիծիւք փակել:

Նոգեւոր որդիք, զայս ոչ եթէ նոր ասեմ, այլ ժԸ (18) տարաւ յառաջ եմ ասացեալ ի Ջուղայոյ դօլվաթաւորացն, // եթէ սուրբ Էջմիածնայ գէլուրի եւ դրամի հրամանն ի ձեռն սեւագլխի եղնի, փոքր ինչ ժամանակաց յետոյ՝ սուրբ Աթոռն աւեր տեսէք. իսկ եթէ ի ձեռն դօլվաթաւոր երեսփոխանաց լինի սուրբ Աթոռոյն դրամի հրամանն եւ գէլուրն՝ մինչ ի գալուստն Քրիստոսի հաստատ գիտասչիք:

Ինդրեմ ի ձէնջ, սիրելի որդիք եւ աշացս լոյս եպիսկոպոսք, վարդապետք, քահանայք եւ իշխանաշուք տօլվաթաւորք, մելիք եւ տանուտեարք, տէր առաջնորդէ, յերբ կաթողիկոս լինիք օրհնելոյ, յառաջ զայս ձեռագիրս եւ իղրարս խնդրեցէք, զինչ գէլուր, որ սուրբ Աթոռոյն գայ, թէ նուիրակից, քարվանից, գանձանակից, խոստմանց եւ կամ ձեռնադրեալ եպիսկոպոսաց եւ այլ ինչ կողմանց որ լինի, Ե (5) բաժնէն Ա (1) կաթողիկոսին եղնի, եւ իմ ստացելոցս, թէ ճարովի իցէ եւ կամ գնովի, վախմ գնողից եւ կամ Փիլիպպոս հոգեւոր տիրի ժամանակէն մնացելոցն՝ տասանորդն լիցի կաթողիկոսին, ի կամս իւր լիցին, զինչ եւ կամի՝ եկեղեցի շինէ, կարմունջ կապէ, աղքատի տայ, եւ կամ կարօտելոցն բաշխէ, եւ թէ կամի՝ ի ջուրն ձգէ, ոչ ոք իշխանութիւն չունի գէլուրին հնգեակն, որ իւր ժամանակն կուգայ, նոյնպէս եւ մեր ճարեցելոց, գնեցելոց տասանորդին. հրամանն միայն կաթողիկոսին է, եւ ոչ այլ ումեք: Իսկ մերոց մնացելոց ինն², ախարաթի // եւ գէլուրի մնացեալ չորսն, այն սուրբ Աթոռոյն է: Ուստից որ լինի ընտրեն լաւ մարդ, որ վկայեալ լինի նորա լաւութեան եւ ճշմարտասիրութեան, նոյնպէս գործօքն պարկեշտ, ինքն համեստ եւ մարդաշահ, ի նորա ձեռն տան, եւ կարգաւոր-

¹ Փակագծերի մեջ առնված հատվածն ավելացված է լուսանցում:

² «Ինն»-ից հետո այլ ձեռագրով գրված է «եւ մի»:

րացն Ա (1) նորա խոստովանահայր դնեն, եւ մի նմա դաւթար գրող դնեն, զի առանց դաւթարի առեւտուր չեղնի: Իսկ թէ կաթողիկոսն ի սուրբ Աթոռն լինի, զինչ որ առնէ՝ գիտութեամբ կաթողիկոսին լինի, իսկ թէ կաթողիկոսն այլ տեղ լինի գնացեալ՝ գիտութեամբ աթոռակալին եղնի, զի ծածուկ բան չանէ: Իսկ դրամին պահելն, աւելցնելն եւ շահեցուցանելն՝ ի ձեռն երեսփոխանին է, որպէս օրէն է աշխարհի զգրամն ամենքն կու ջանան յաւելցնել:

Դարձեալ, տարին Ա անգամ կաթողիկոսն եւ իւր խորհրդականքն նստին եւ ընդ երեսփոխանին հսապ տեսանեն եւ գիտենան, թէ այս տարւոյս մուտն ինչ է եւ ելն ինչ է. ամենքն վերահասու եղնին եւ գրեն ի մեծ դաւթարն, բայց զինչ որ գայ, ուսկից որ լինի, Բ (2) դաւթար եղնի՝ Ա (1) առ երեսփոխանն եւ միւսն առ կաթողիկոսին յառաջական: Եւ յորժամ հաշիվ տեսանեն, ճշմարիտն այն է՝ Բ (2) ի մասին խօսին դաւթարքն:

Ջայս եւս հարկ լիցի ի վերայ կաթողիկոսին, զինչ մեծ եւ գլխաւոր բան եւ գործ // լինի՝ առանց ժողովի չանէ. եթէ մեծ գործ է՝ զամենայն երեւելի առաջնորդք եւ գիտուն վարդապետք ժողովէ, եթէ միջակ գործ է՝ թղթով հեռակայիցն զեկուսցէ եւ մօտակայքն ժողովէ, զայն բանն գլխաւորէ:

Դարձեալ, զինչ սուրբ Աթոռոյն հարկաւոր կարիք լինի՝ շինելոյն եւ կամ քակելոյ, զայն եւս առանց ժողովի չառնեն. եւ յերբ հարկաւոր լինի եւ ժողովեալքն հաւանին՝ սուրբ Աթոռոյն դրամովն չինեն:

Դարձեալ, եթէ թշնամի յառնէ եւ կամ ոք չհնազանդի եւ ինքնագլուխ շարժի, զայն եւս ժողովով քննեն, զոր ինչ վճռի արժան է միաբանութեամբ հրամայեն:

Եւ դպրատուն հաստատուն պահեն, նոյնպէս եւ զդասատուն, զի այն է օգուտ օրինաց եւ հւատոյ եւ պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ:

Այլ եւ եկողաց եւ գնացողաց հարկիս եւ պատիւ ըստ իւրոց արժանուն ըստ սրբոյն Պօղոսի առաքելոյն. «Սէր հասարակաց է եւ պատիւ ըստ արժանոյն»: Եւս առաւել դաս կամ քարոզ անպակաս լիցի ի միջոյ սուրբ եկեղեցւոյն, մանաւանդ յորժամ քարվան եւ աստուածասէր վաճառականքն գան, զի են ոմանք, որ ի ժամանակս կենաց իւրոց միանգամ հանդիպին ի սուրբ աթոռն:

Ծածկագիտին Աստուծոյ է յայտ, զոր ինչ գրեցի՝ յառաջ ես առնելոց էի եւ ապա թղթով ձեզ պատ/ուիրելոց: Ոչ թէ միայն ձեզ, այլ բոլոր աշխարհիս է յայտ, ԺԵ (15) տարի է, որ գիշերն հանդիստ չունիմ եւ ցերեկն դադար, պատճառն վատաշվէր սեւագլուխք: է (7) տարի էր ի տուն Հունաց էի՝ նեղութեան միջի, վասն Եղեազար վարդապետին ցանկ-պատառութեանն, եւ մեր անբարտաւան եւ թշնամի բարեկամաց արարմանցն, որ ոչ լսելով զի-

տուն եւ ճշմարտասէր արանց եւ խաղ[աղ]արար մարդկանց պարտքն կուտակեալ են իբրեւ զլեառն, եւ զմեզ այսքան վշտի եւ նեղութեան մատնեալ:

Դարձեալ, հոգեւոր որդիք, մեր ակնկալութիւնն այն էր, որ գայինք ի սուրբ Աթոռն, փոքր ինչ հեշտութեամբ հանգստանայինք: Անմարմին սատանայքն մտին Սահաթափոսի սեւագլուխքն եւ իւրեանքն եղեն մարմնաւոր սատանայ երեւանայ խանէրին. որ այնքան վիշտ եւ նեղութիւն կրեցաք ի ձեռաց Բ (2) խանէրին. թող զվիշտն, այնքան պարտուց ներքոյ գրաւեցաք, եւ կիսամեռ հասակաւ երկրէ ի յերկիր եւ դռնէ ի դռն շրջիմ իբր մուրացիկ, թերեւս գթասցի Տէրն բոլորից եւ ազատեսցէ ի պարտուցս, զի մի պարտական ի գերեզման մտից եւ տագնապով խղճի մտաց մաշեալ եւ հիւժեալ մնասցեն:

Սիրելի որդիք, ի ժամանակ տեառն Մովսիսի եւ // Փիլիպպոսի կաթողիկոսին ոչ ինչ կողմանէ լիություն չկայր եւ իրաց կողմանէ շինութիւն, այլ յամենայնի պակասութիւն եւ աւերակ: Զինչ որ նոցա ժամանակն եկն՝ ի նորոգութիւն սուրբ եկեղեցւոյն, տանց շինութեանց եւ նորոգութեան եղեւ խարճ: Իսկ մեղապարտս զինչ շինեցի եւ արարի՝ մեծ մասն պարտեօք էր: Իսկ այժմս շնորհօք Սուրբ Հոգւոյն այնքան հարկաւոր բան չկայ շինելոյ պարտիք զգրեալս հաստատուն պահէք, որ սուրբ Աթոռոյդ զատ յաւելնուտէր մի արասցէ, եթէ նեղութիւն ինչ պատահի, առձեռն պատրաստ իրմի լինի, եւ կամ հարկաւոր շինութիւն լինի՝ ինձ նման պարտեօք չանեն, որ վիշտ եւ նեղութիւն կրեն:

Հոգեւոր եւ սիրելի որդիք այ[ս] իմ կտակս է, որ հարկաւոր ձեզ պատուիրեցի. եթէ զգրեալս կատարէք, կատարեսցէ Տէր զբարի խնդրուածս ձեր եւ պահպանեալ պահեսցէ զձեզ յամենայն վտանգէ յոգւոյ եւ մարմնոյ. եթէ զգրեալս հաստատէք, ակն ունիմ յԱստուծոյ, որ սուրբ Աթոռդ պայծառ եւ անկարօտ յամենայնի կու մնա, իսկ եթէ զգրեալս անտես առնէք եւ ոչ կատարէք, տէր մի լուիցէ ձեզ եւ ամենայն խնդիրք ձեր անընդունակ լիցի: Զինչ պակասութիւն սուրբ Աթոռոյն պատահի՝ դուք լինէք պարտական եւ ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ սեւերես մնաք եւ անլսողացն // պատժոյն պատժակից լինիք: Կատարողք աղաչանաց եւ խնդրուածաց իմոց՝ օրհնին յԱստուծոյ, իսկ անլսողքն եւ անհնազանդքն՝ դատապարտեալք մնասցեն արդարադատէն Աստուծոյ:

Սիրելի եւ աչացս լոյս որդիք, ոչ եթէ զայս կտակս, աղաչանքս եւ պաղատանքս վասն միայն զկնի իմոյ կաթողիկոս նստողին գրեցի, այլ ամենայն ժամանակի կաթողիկոսաց: Նախ զայս ձեռագիրս առնուն եւ ապա ձեռնադրեն, զի այժմս որ դուք կենդանի էք, ձեզ աղաչանօք օրհնութիւն եւ

անէծք գրեցի, վասն հաստատ եւ անկարօտ մնալոյ սուրբ Աթոռոյն. եւ զայն օրհնութիւնն եւ անէծքն յետակայից առաջնորդաց, վարդապետաց, քահանայից, կարգաւորաց եւ աշխարհականաց վերայ լիցի, զոր յառաջն յանուանէ գրեալ էմ: Դարձեալ զի որքան կենդանի էմ՝ զձեզ աղաչօղ էմ եւ առ Տէր Աստուած աղօթող եւ պաղատօղ, որ ըստ իւր հաճոյիցն տպաւորեսցէ ի սիրտս սիրելի որդոցս, իսկ զկնի վաղջանիս՝ միշտ բողոքօղ էմ առ միածին Որդին, զի թէպէտ սեւերես էմ յիւրմէ, այլ ինքն որորմեսցի եւ գթասցի իւր իջման տեղոյն եւ ցաւակցողացն ամենայնի:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԺԷ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ

(Քննություն և քննադատություն)

ԺԷ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ

Որքան հիշում եմ, 1952 թվականն էր, երբ Աշոտ Հովհաննիսյանը (այդ ժամանակ նա դեռևս չէր աշխատում Պատմության ինստիտուտում, բայց արդեն ավարտել էր «Իրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկհատոր աշխատությունը) հարցրեց ինձ, թե հիշատակարանների ո՞ր դարերի ժողովածուներն եմ ես անձամբ հավաքելու և հրատարակության պատրաստելու: Տեղեկանալով, որ ժԷ դարն իմ հետաքրքրությունների սահմաններից դուրս է մնում՝ նա իր ցանկությունը հայտնեց ձեռնարկելու այդ աշխատանքը, և ինչպես հատուկ էր նրան, առանց հապաղման գործի անցավ ու մեծ ջանասիրությամբ սկսեց ընդօրինակել Մատենադարանում պահվող ձեռագրերից ժԷ դարի հիշատակարանները:

Սակայն երկու տարի էլ չանցած, նա աշխատանքի ընդունվեց Պատմության ինստիտուտում, ստացավ գիտական ավելի հրատապ հանձնարարություններ. հիշատակարանների հավաքման գծով սկսված աշխատանքների թափը նվազեց, և, ի վերջո, այդ գործի ամբողջացման ու ավարտման ծանրությունը ստանձնեց փորձված աղբյուրագետ ու բանասեր, մեր հարգելի ընկեր Վազգեն Հակոբյանը: Կարելի էր վստահ լինել այլևս, որ աղբյուրագիտական մեծ ծավալի ու տաժանակիր այդ աշխատանքն իր ավարտին է հասցվելու, և ԺԷ ու ԺԵ դարերի հիշատակարաններից հետո հրատարակվելու է նաև հայ ժողովրդի պատմության համար բախտորոշ նշանակություն ունեցող ժԷ դարի հիշատակարանների ժողովածուն:

Այսօր ահա սեղանի վրա է այդ աշխատության առաջին հատորը, որն ընդգրկում է 1601-1620 թվականների ընթացքում շարադրված 1041 հիշատակարանային միավոր, որոնցից շատերն իրենց հերթին մի քանի ինքնուրույն մասերից են բաղկացած¹: Գիտական շրջանառության մեջ դրված հիշատակարաններն առաջնակարգ տվյալներ են պարունակում ոչ միայն Հայաստանի ու հայկական գաղթօջախների պատմության տարբեր բնագավառների սոցիալ-քաղաքական կյանք, մշակույթ և այլն, ուսումնասիրության համար, այլև իրենց շոշափելի նպաստն են բերելու Թուրքիայի և Իրանի պատմության այդ ժամանակաշրջանի վերաբերյալ մեր գիտելիքներն ընդարձակելու և խորացնելու գործին: Ջալալիների հուժկու սոցիալական

¹ «Հայերեն ձեռագրերի ժԷ դարի հիշատակարաններ» (1601-1620 թթ.), հտ. Ա, կազմ. Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Հայկ. ՍՍԿ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1974, ԼԲ, էջ 828:

շարժումը, թուրք-իրանական ռազմական բախումները, Հայաստանի ու Վրաստանի մի շարք շրջանների բնակչության բռնագաղթը դեպի Իրանի կենտրոնական շրջանները և բազմաթիվ այլ պատմական եղելություններ այս հատորում հրատարակված նյութերի շնորհիվ շատ ավելի հանգամանորեն են լուսաբանվելու: Անտարակույս, կարևորագույն հիշատակարանները հետագայում թարգմանվելու են նաև ռուսերեն և օտար լեզուներով՝ մատչելի դառնալով արևելագետների լայն շրջաններին: Ոչ պակաս չափով այդ հիշատակարանները լրացնելու են մեր գիտելիքները հայկական մշակութային կենտրոնների գործունեության և առանձին մատենագիրների կյանքի ու ստեղծագործական աշխատանքի մասին և այլն:

Որևէ աղբյուրագիտական աշխատանք գնահատելիս, անշուշտ, առաջին հերթին նկատի է առնվում նրա բովանդակությունը՝ ի՞նչ նոր ու արժեքավոր նյութեր են գիտական շրջանառության մեջ դրվում տվյալ սկզբնաղբյուրի հրատարակությամբ: Այս հարցին կարելի է միայն մեկ պատասխան տալ. նյութերն, իրոք, շատ մեծ գիտական արժեք ունեն, ուստի մեր պարտքն ենք համարում նախ և առաջ շնորհակալական խոսք ուղղել ժողովածուի կազմողներին ու հրատարակողներին: Երկրորդ հարցը, սակայն, վերաբերելու է հրատարակության աղբյուրագիտական մակարդակին. ինչպե՞ս են ներկայացված սկզբնաղբյուրները. բանասիրական ի՞նչ աշխատանք է թափված, գտնվա՞ծ է արդյոք ճիշտ ձևը նյութի մատուցման ու աղբյուրագիտական մշակման, գիտական ապարատն արդյոք համապատասխանո՞ւմ է պատմագրության այսօրվա պահանջներին և այլն:

Խիստ դժվարանում է ուշագիր ընթերցողի խնդիրը, երբ նա փորձում է պատասխան գտնել հարցերի այս երկրորդ խմբի համար: Ինչպե՞ս գնահատել ժԷ դարի առաջին երկու տասնամյակների հիշատակարաններն ընդգրկող այս հատորի վրա թափված բանասիրական աշխատանքը: Թերություններն ու վրիպումներն ակնառու են և շատ: Խոսե՞լ դրանց մասին, թե՞ լռություն պահպանել կամ այս կամ այն անկյունում շարախոսել (գժբախտաբար, մեզանում շատերը գերադասում են «քննադատության» հենց այս ձևը):

Մենք խորին հարգանքի զգացմունքներ ունենք ինչպես հանգուցյալ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի հիշատակի, այնպես էլ մեր վաղեմի ընկերոջ՝ Վազգեն Հակոբյանի գիտական վաստակի նկատմամբ: Եվ, տեղյակ լինելով, որ այս հատորին հաջորդելու են ժԷ դարի հիշատակարանների ուրիշ չորս ստվար հատորներ, որոշ տատանումներից հետո հանգեցինք այն հետևություն, որ լռելու բարոյական իրավունք չունենք, մանավանդ որ կազ-

մողներն իրենք, դիմելով ընթերցողներին, հայտնել են, որ «շնորհակալությամբ կրնդունեն մասնագետների քննադատական դիտողությունները՝ հետագա հատորներում դրանցից խուսափելու նպատակով» (Առաջաբան, էջ ԻԶ):

Մեր դիտողությունները լսելի դարձնելու լավագույն ձևը համարեցինք կիսապաշտոնական այս հանդիպումը, մի խումբ աղբյուրագետ-բանասերների ներկայությամբ:

Մինչև բուն նյութին անցնելը պետք է պայմանավորվենք մի հարցի շուրջ: Մեր շարադրանքի ընթացքում հաճախ գործածելու ենք «հրատարակիչ», «հատորի կազմող» և նման արտահայտություններ՝ եզակի թիվ օգտագործելով: Այդ բոլոր դեպքերում նկատի ունենք ընկ. Վ. Հակոբյանին. հանգուցյալ Ա. Հովհաննիսյանին հանգիստ ենք թողել ոչ թե նրան հեղինակային իրավունքից զրկելու միտումով, այլ այն պարզ գիտակցությամբ, որ առաջաբանը, ծանոթագրությունները, անվանացանկը և ժողովածուի նյութերի համախմբման հիմնական աշխատանքները կատարել է Վ. Հակոբյանը միայնակ: Հատորը հրատարակության է հանձնված 1972 թ. նոյեմբերի 22-ին, երբ Ա. Հովհաննիսյանն այլևս ֆիզիկապես ի վիճակի չէր որևէ կերպ մասնակցելու հատորի հարդարման ու խմբագրման աշխատանքներին: Առավել ևս անկարող էր հանդես գալ որպես խմբագիր, քանի որ հատորի տպագրության հիմնական աշխատանքները կատարվել են մեծանուն գիտնականի մահվանից հետո:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ առաջաբանին բնավ չենք անդրադարձել. և ոչ այն պատճառով, որ այն շատ հաջող է կազմված, այլ նկատի ունենալով այն հանգամանքը, որ առաջաբանի լավ կամ վատ լինելը որևէ առնչություն չունի հրատարակված հիշատակարանների մշակման կամ մատուցման եղանակների հետ:

Մեր ասելիքը պարզ մատուցելու համար նյութը բաժանել ենք այսպիսի ենթաբաժինների

1. Հիշատակարանների ընտրություն
2. Հիշատակարանների շարակարգություն կամ համարական հերթաշար
3. Տոմարագիտական ու ժամանակագրական խնդիրներ
4. Ձեռագրերի խորագիրը
5. Հիշատակարանների հասցեն

6. Հիշատակարանների հեղինակի հարցը
7. Նյութերի դասդասման սկզբունքը
8. Գրչության վայրը
9. Բնագրի վերծանությունը
10. Չափաձո հիշատականներ
11. Կետադրություն
12. Ծանոթագրություններ
13. Յանկեր
14. Վրիպակներ
15. Եզրակացություն

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է նշանակում հիշատակարանների ընտրություն. ոմանց համար այս խորագիրն ինքնին տարօրինակ կարող է թվալ: Հիշատակարանների ժողովածու կազմողը հավաքելու է այս կամ այն դարի ընթացքում շարադրված ձեռագրական հիշատակարանները, ապա, առաջնորդվելով որևէ սկզբունքով, շարահարելու է դրանք ըստ տարեթվերի և այլն: Բայց երբ խորամուխ ենք լինում հարցի էություն մեջ, տեսնում ենք, որ հիշատակարանների ընտրությունն ինքնին այնքան էլ պարզ ու դյուրին գործ չէ:

Գարեգին Հովսեփյանի «Հիշատակարանք ձեռագրաց» (Անթիլիաս, 1951) մեծարժեք հատորի նյութերի կեսից ավելին, օրինակ, ձեռագրական հիշատակարանների հետ ոչ մի առնչություն չունի:

Հենց առաջին համարի տակ դրված է Թադեոս առաքյալի վանքի հաջորդականության ցանկի հիշատակարանը, որն անվավեր նյութերի հիման վրա շարակցված է ԺԴ դարի սկզբներին (տե՛ս էջ 4), 3-րդ համարի տակ տպագրված է Երուսաղեմի N 1 ճառընտրից քաղված՝ Նունեի խաչի պատմությունը: Հատորի մեջ տեղ են գտել բազմաթիվ վարքաբանական գրվածքներ (Դավիթ Անհաղթի, Հովհ. Մայրագոմեցու, Սարկավագ վարդապետի վարքերը), ուշ դարերում գրված ժամանակագրական ու պատմագրական պատառիկներ, որոնց մեջ վաղ դարերի առանձին դեպքերի մասին կան, ըստ մեծի մասի, անստույգ կամ հնարովի տեղեկություններ և այլն: Չենք վիճում. հատորի մեջ տեղ գտած այդ բնույթի նյութերի մի զգալի մասը բացառիկ արժեք ունի հայ ժողովրդի մշակույթի ու գրականության պատմության տարբեր հարցերի լուսաբանության համար, սակայն դրանք ձեռագրական հիշատակարաններ չեն և, տեղ գրավելով տարաբնույթ նյութերի շարքում, իրենց համար ոչ հարազատ միջավայրում, տուժել են և՛ իրենք, և՛ իրենց հարևանները:

Հիշեցման կարգով նշենք այստեղ, որ ընկ. Վ. Հակոբյանն իր «Մանր ժամանակագրություններ» մեծարժեք հատորների մեջ հնարավոր էր համարում տեղ հատկացնել նաև ձեռագրական հիշատակարաններին: «Մանր ժամանակագրություններ» 1-ին հատորում (Երևան, 1951, էջ 181-187) «Անանուն ժամանակագրություն» խորագրի տակ տպագրված է քննարկվող ժողովածուի N 354 հիշատակարանը, իսկ «ժամանակագրություններ» 2-րդ հատորում (Երևան, 1956, էջ 218-221) Մովսես Արժկեցու 1472 թ. շարադրված չափածո հիշատակարանը և այլն: Մեր միտք բանին այն է, որ ամեն մի ժողովածուի վերնագիր անհրաժեշտաբար համապատասխանելու

է նրա բովանդակած նյութերին: Ըստ այդմ, ձեռագրական այն նյութերը, որոնք հիշատակարան չեն, պետք չէ բանագատվելով մուծվեն հիշատակարանների ժողովածուների մեջ:

Այս տեսակետից քննարկվող ժողովածուն, իհարկե, շատ ավելի բարվոք վիճակի մեջ է, քան Գ. Հովսեփյանի «Հիշատակարանք ձեռագրացը», բայց սրա մեջ ևս մուծվել են այլ բնույթի ձեռագրական նյութեր: Բայց որո՞նք են ձեռագրական հիշատակարանների հատկանիշները, կամ ո՞րն է «հիշատակարան» կոչվածի սահմանումը:

Մեր կարծիքով հիշատակարան պետք է կոչել և ըստ այդմ՝ հիշատակարանների ժողովածուների մեջ տեղ հատկացնել գրիչների, ծաղկողների, ստացողների, կազմողների, նորոգողների, գերուխյունից ազատողների կամ ձեռագրի հետ մի այլ կերպ առնչվող անձնավորությունների կողմից ու նրանց անունով շարադրված տեղեկությունները, որոնք առնչվում են տվյալ ձեռագրի կամ նրա նախագաղափարի ընդօրինակության, նկարագրուման, նորոգուման, օտարուման, ձեռքբերուման հանգամանքներին: Եվ ընդհակառակը՝ հիշատակարան չեն կարող կոչվել ձեռագրի մեջ ընդօրինակված պատմական, ժամանակագրական և այլ կարգի նյութերը, որոնք ձեռագրի ստեղծման ու պահպանման հետ չեն առնչվում, այլ նրա մեջ ընդօրինակվել են որպես անկախ նյութ-միավոր:

Մենք մեր «Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերեն ձեռագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը» հոդվածում («Բանբեր Մատենադարանի», N 5) ցույց ենք տվել, որ ինչպես վանքերի ու եկեղեցիների պատերը, այնպես էլ ծիսական ձեռագրերի (Ավետարան, Հայսմավուրք, Մաշտոց և այլն) ազատ էջերն ու լուսանցքները հաճախ օգտագործվել են տվյալ վանքին կամ եկեղեցուն արժեքավոր որևէ կալվածք, եկեղեցական սպասներ, հանդերձանք և այլն նվիրած անձնավորությունների հիշատակը հավերժացնելու համար: Այսպիսով, որոշ ձեռագրերում կան նաև հիշատակարաններին նմանվող (այստեղ ևս հաճախ գործածվում է «Յիշեցէք» բառը) գրություններ, որոնք, սակայն, իրենց բովանդակությամբ կալվածագրեր կամ նվիրաբերական արձանագրություններ են և պետք է հավաքվեն ու հրատարակվեն առանձին ժողովածուի մեջ, համապատասխան ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով:

Այս հանգամանքն, ահա, հաշվի չի առնված քննարկվող ժողովածուի մեջ, որի հետևանքով նրա մեջ տեղ են գրավել շուրջ մեկ տասնյակ նվիրաբերական արձանագրություններ: Այդպիսիք են հետևյալ համարների տակ

ներկայացված նյութերը՝ NN 208թ, 254բ, 368ա, բ, 454, 508, 515, 612ե, 613բ-ը և այլն:

Ծանոթանանք դրանցից մի երկուսին:

«Յիշեցէք ի Քրիստոս զԳրիգոր հէրպետն, որ զվանաց տոգանքն վերուց եւ զվանից խաչխամբօրն եւ ըզպսակ դրամն յիւ երաց վանից միաբանին...»:

«Յիշեցէք ի Քրիստոս զուսթայ Միրիշան զԱղերթցին... որ ամէն տարի երկու սօլ տայ վանից մշակուն...» (N 368, էջ 304-305):

«Մեք Հանավանցիք (Թվարկված են մի շարք անուններ)... միաբանեցաք Գիլանջու Ամրունի այգին տուինք յիշատակ ի դուռն Ս. Կարապետիս...» (N 454, էջ 358):

Պարզ է, որ սրանք ձեռագրական հիշատակարաններ չեն:

Ժողովածուի մեջ, բացի այս կարգի կալվածագրերից ու նվիրաբերական արձանագրություններից, տեղ են գրավել և ուրիշ կարգի անհարազատ նյութեր:

N 185բ հիշատակարանն, օրինակ, հին Ջուղայի գերեզմանատան խաչքարերից մեկի արձանագրությունն է՝ Ղ. Փիրղալեմյանի մի ծանոթագրության հավելումով: Ահա այն. «Սուրբ խաչս բարեխօս է առ Քրիստոս մեծ եւ անուանի քաղաքապետ խոջայ Խաչիկին, որ ի ՌԾԳ (1604) Թուականիս հանգեալ ի Քրիստոս»: Այնուհետև գալիս է Փիրղալեմյանի ծանոթագրությունը. «էր սա նահապետ տոհմին Լազարեանց. եւ շիրիմս է ի գերեզմանատան Հին Ջուղայու»: Մի՞թե պարզ չէ, որ Լազարյանների ու խոջա Խաչիկի ազգակցության մասին անհիմն այս ենթագրության հեղինակը Փիրղալեմյանն է, որ շատ հաճախ իր հավաքած ձեռագրական նյութերի մեջ բանասիրական միջամտություններ է կատարում (ի պատիվ իրեն պետք է ասել, որ այդ միջամտություններն ըստ մեծի մասի նա կարմիր թանաքով է կատարել՝ ակնառու դարձնելու համար միջնադարյան բնագրի և իր հավելումների սահմանները): Այս փաստերի լույսի տակ արտառոց տպավորություն է գործում Վ. Հակոբյանի ծանոթագրությունը, որի համաձայն՝ «Սույն հիշատակարանը ուշ շրջանում է գրվել տվյալ ձեռագրում» (էջ 157): Ի՞նչ ձեռագրի մասին է խոսքը, երբ Փիրղալեմյանը ծանուցում է, թե «շիրիմս է ի գերեզմանատան Հին Ջուղայու»:

Բացարձակ կեղծիք է Մ. Տեր-Մովսիսյանի անտիպ ցուցակից քաղված և 68-րդ համարի տակ ներկայացված միավորը, որի մեջ խոսք կա 1602 թ. Անանիա Շիրակացու կողմից մի ժամագիրք ընդօրինակված լինելու մասին: Տեր-Մովսիսյանը, ինչպես և սպասելի էր, հավատ չի ընծայել այս կեղծիքին

ու նշել, որ այն «ԺԹ դարու գրած է», սակայն ժողովածուի կազմողը լիարժեք միավորի իրավունքով այդ կեղծ գրությունը հրատարակել է մեծարժեք հիշատակարանների հարևանությամբ:

Որպես N 94 հիշատակարան մեջբերված է մի «Հաւանութեան թուղթ», որ կազմված է Կիլիկիայի երկու կաթողիկոսների՝ Ստում նստող Հովհաննեսի և Հալեպում ձեռնադրված հակաթոռ ու հոովմեադավան Պետրոսի միջև ծագած վեճերը հարթելու մտահոգությամբ: Անշուշտ, կարևոր փաստաթուղթ է (հրատարակված է բազմիցս), բայց, ինչպես և վերոհիշյալները, հիշատակարան չէ:

Ժողովածուի առաջաբանում ասված է, որ «առանձին դեպքերում, երբ հիշատակարանը աղբյուրագիտական, բանասիրական և առհասարակ պատմագիտական որևէ արժեք չի ներկայացնում, այդպիսիները չենք վերցրել. օրինակ՝ մեր Մատենադարանի N 4834 ձեռագրի 1-ին պահպանակի ա էջում գրված է. «Թուին ՌԾԱ աշակերտեցայ ես անարժանս, սկիզբն ամսոյ հոռի», «Կատարեցաւ գիրքս ի թուին ՌԿԹ, սեպտեմբեր ամսոյ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ (ՄՅՁԵՊ, V, N 1601, էջ 395), «Նորոգեցաւ սուրբ Աւետարանս ի թուին ՌԿԳ» (ՄՈՒՄԱՐ, II, N 50, էջ 136) եւ այլն» (էջ ԻԵ):

Չնայած այս որոշակի հայտարարության՝ ժողովածուի մեջ տեղ են գտել վերը մեջբերված մանր գրություններից շատ ավելի անարժեք միավորներ: Այսպես օրինակ՝ N 15-ի տակ բերված է ընդամենը մի տող. «//գեղկելի երդումն յիշեաց, գրեց. Կարունս քաղաք, ի թուին ՌԾ Աստուած//» (էջ 14). N 149-ի տակ բերված է երկու տող. «... Զվերջին կազմողս սբ. տառիս գտէր Հայրապետն յիշեցէք ի Տէր, ի թուին Ռ եւ ԾԲ ամէն» (էջ 121). N 153-ի տակ մեկ տող. «Ես Յակոբ երէցս Զամօսցացին ստացայ զսա ի թուին ՌԾԲ» (էջ 124). N 241-ի տակ մեկ տող. «Նորոգ կազմեալ ի Յամիթ ՌԾԳ թուին» (էջ 192):

Ժողովածուի տարբեր տարեթվերի տակ կան մեկ տասնյակից ավելի այս կարգի մանրուք-միավորներ: Արդ, ինչու սրանց նման բազմաթիվ նմուշներ աչքաթող են արված, իսկ մի մասը՝ հրատարակված:

Մեր կարծիքով ճիշտ չի լինի անտեսել այդ կարգի մանր միավորները, բայց համարաշարքի մեջ մուծելն էլ շուայություն կլինի, ուստի գերադասելի է յուրաքանչյուր տարեթվի վերջին հիշատակարանի տողատակում հատուկ ծանոթագրության մեջ, ըստ անհրաժեշտության նշումներ կատարել, որ նույն այս թվականին շարադրված են նաև մի քանի մանր-մունր հի-

շատակագրություններ. պետք կլինեն նաև մեջբերել դրանք հենց այդտեղ՝ տողատակի ծանոթագրության մեջ:

Հարցերի այս փնջի մասին մեր ասելիքը սպառելու համար նշենք նաև, որ հրատարակված հիշատակարանների մեջ կան նաև առանձին միավորներ՝ քաղված մեծ մասամբ Գ. Սրվանձտյանի ու Ղ. Փիրղալեմյանի հավաքածուներից, որոնք հարազատ հիշատակարաններ չեն, այլ համառոտագրություններ՝ կատարված հրատարակիչների կողմից:

Հաճախ այդպիսի համառոտագրություններն այն աստիճանի հեռանում են բուն բնագրերից, որ շատ դժվար է լինում այդ աղճատ շարադրանքի միջոցով ճանաչել բուն բնագիրը: Այսպես օրինակ՝ քննարկվող ժողովածուի մեջ N 121 համարի տակ տպագրված է այժմ Կ. Պոլսի Պալատ թաղի Ս. Հրեշտակապետաց եկեղեցում պահվող Մաշտոցի հիշատակարանը (ըստ Մատենադարանում պահվող մանրաժապավենի): Մի քանի էջ հետո նույն 1603 թ. տակ դրված է նույն այդ հիշատակարանի համառոտագրությունը, որ ժամանակին կատարել է Ղ. Փիրղալեմյանը: Արդ, եթե հրատարակիչը չի կարողանում տարբերակել կամ ի մի բերել նման միավորները, էլ ինչ ասենք ոչ փորձառու ընթերցողների մասին: Մի՞թե այն միավորը հիշատակարանի բուն բնագիրը չէ, այլ նրա համառոտված տարբերակը՝ կատարված ժողորմի մեր ազգագրագետ-ձեռագրագետի կողմից: Այս կարգի համառոտված-վերաշարադրված միավորներից մեկում, օրինակ, գտնում ենք այսպիսի տողեր. «Սաղմոսարան՝ Եպիփանու եւ Գառնեցոյ յառաջաբաններով» (էջ 336): Անփորձ ու դյուրահավատ ընթերցողը կարող է աշխարհաբար այս նախադասությունը վերագրել հենց 1609-ին՝ սխալ պատկերացում կազմելով հայոց լեզվի պատմության ընթացքի մասին:

Ժողովածուի մեջ կան երկու տասնյակից ավելի այս կարգի՝ վերափոխված համառոտագրված միավորներ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՐԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

(համարական հերթաշար)

Ինչ սկզբունքով են շարադասավելու այս կամ այն թվականին շարադրված հիշատակարանները տվյալ թվաշարքի տակ: Այս հարցին հնարավոր չէ մեկ ու սպառիչ պատասխան գտնել: Պետք է հաշվի առնել մի շարք հատկանիշներ.

1. Ժամանակագրական. եթե հայտնի է այս կամ այն հիշատակարանի գրություն ամսաթիվը, կամ այս կամ այն դեպքի կատարումից առաջ ու հետ գրված լինելու մասին կա տվյալ, ապա, բնականաբար, վաղ գրվածը պետք

է դնել սկզբից. այսինքն՝ պետք է ըստ հնարավորի պահպանել ժամանակագրական կարգը նաև՝ ամեն մի տարեթվի տակ:

2. Տեղագրական. հիշատակարանների կեսից ավելին օժտված են գրչության վայրի մասին տեղեկություններով: Ըստ այդմ, պետք է նույն կամ հարևան վայրերում գրված հիշատակարաններն իրար մոտ հավաքվեն՝ տվյալ աշխարհագրական միջավայրի մասին տվյալներ իրար մոտեցնելու համար:

Բնականաբար պատմական Հայաստանի շրջաններին վերաբերող հիշատակարանները պետք է նախադասվեն գաղթավայրերում գրվածներից: Եվ ոչ մի դեպքում պետք չէ երկրից երկիր տարուբերել ընթերցողների ուշադրությունը:

3. Միևնույն անձնավորության կողմից նույն տարեթվին շարագրված հիշատակարանները, իհարկե, պետք է համախմբվեն իրար մոտ:

4. Ամենակարևորը, սակայն, այն է, որ ամեն մի նոր տարեթվի սկզբի մասերում պետք է դրվեն պատմական ամենահարուստ տեղեկություններ պարունակող հիշատակարանները, որոնց մեջ բնութագրված է ժամանակը, տրված է անցուդարձերի ժամանակագրությունը և այլն: Եվ ընդհակառակը՝ տարեթվի վերջում պետք է տեղադրվեն մանր-մունր այն հիշատակագրությունները, որոնք այս կամ այն ձեռագրի ստեղծման, նորոգման կամ օտարման մասին տեղեկություններից բացի ուրիշ որևէ պատմական տվյալ չեն պարունակում:

Վերոհիշյալ հարցերին տրված պատասխանները հանպատրաստի խոսքեր չեն, այլ շուրջ 15 տարվա մեր աշխատանքի փորձից արված եզրակացություններ: Եվ պետք է խոստովանենք, որ այս տեսակետից մեր հրատարակված հիշատակարանների առաջին հատորը (ԺԴ դար) զերծ չէ լուրջ թերություններից: Մյուս հատորները, սակայն, շտկված են. հիշատակարանների դասդասումը նրանց մեջ կատարված է նշված տվյալների հաշվառումով:

Արդ, ինչպե՞ս է վարվել քննարկվող հատորի հրատարակիչը:

Ցավոք պետք է արձանագրել, որ նա կարծես մտածված կերպով այնպես է շարադասել այս կամ այն տարեթվի տակ դրվելիք միավորները, որպեսզի հիմնավորապես խախտի վերոհիշյալ բոլոր սկզբունքները: Այս, իհարկե, կատակով է ասվում: Ճիշտն այն է, որ նա ինչպես որ պատահականորեն ընդօրինակել է հիշատակարանները նախ ձեռագրերից, ապա տպագիր աղբյուրներից, այդ պատահականություններ էլ շարել է դրանք իրար ետևից՝ նկատի չունենալով ո՛չ ժամանակագրություն, ո՛չ գրչության վայր, ո՛չ բովանդակություն և ո՛չ էլ մի ուրիշ հատկանիշ:

Մեր այս եզրակացությունը վերաբերում է ողջ հատորին և բոլոր հրատարակված միավորներին, ուստի ստորև մեջբերվող մի քանի օրինակներն ընտրված են պատահականորեն՝ ի հիմնավորումն մեր ասածի, և անհրաժեշտության դեպքում կարող են տասնապատկվել:

1603 թվականին շարադրված հիշատակարանների մեծ մասն ունի տվյալ՝ գրչության վայրի մասին (մի մասը նշված Վ. Հակոբյանի կողմից, մի մասը՝ մոռացված): Հատորի մեջ նրանք դասդասված են այսպես.

Բաղեշ, Եղեգիս, Վասպուրականի Խուփ գյուղ, Խիզան, Հալեպ, Ուռհա, Վասպուրականի Արգազ գյուղ, Վարագ, Վան, Կարուց երկիր՝ Արիտոս գյուղ Առինջ, Հին Զուղա, Համիթ, Կ. Պոլիս, Լվով, Հին Զուղա, Բաղեշ, Մոկաց Սեպ գյուղ, Կամախ, Խիզան, Ուռհա, Կաֆա, Մերտին, Զամոսցա, Արզրում՝ Դյունիկ գյուղ, Լվով, Զամոսցա, Թոխաթ, Սեչով:

Այսպիսով, ընթերցողը պետք է Տարոնից մտովին անցնի նախ Սյունիք, ապա Վասպուրական, Սիրիա, նորից Վասպուրական, հետո Կարս, Այրարատյան աշխարհ, Գողթան գավառ (Հին Զուղա), կրկին Վասպուրական, Մոկք, ապա Բարձր Հայք, դարձյալ Խիզան, Ուռհա, Ղրիմ, Լեհաստան, Բարձր Հայք, էլի Լեհաստան, Փոքր Ասիա, այնուհետև Մոլդովա և այլն:

Այժմ ծանոթանանք 1614 թվականի տվյալներին.

Լվով, Երզնկա, Կ. Պոլիս, Նոր Զուղա, Լվով, Կաֆա, Կ. Պոլիս, Համիթ, Վասպուրական՝ Ավրնդանց, Լվով, Մոկաց աշխարհ, Լվով, Թիֆլիս, Մոկաց աշխարհ, Դաշտ, Լվով, Երուսաղեմ, Տիգրանակերտ, Երուսաղեմ, Լվով, Բեխ, Նոր Զուղա:

Լվովից 6 հիշատակարաններ կան, որոնք, որպես կանոն, միմյանցից տարանջատված են աշխարհի տարբեր ծայրերում գրված հիշատակարաններով և այլն:

Այժմ անցնենք «**Փամանակագրության**» հարցին. դարձյալ, որպես օրինակ, ծանոթանանք միայն երկու տարեթվի՝ 1619 և 1620 թթ. հիշատակարանների դասավորությանը՝ նախ նշելով ամսաթիվ ունեցող հիշատակարանների համարն ըստ քննարկվող ժողովածուի, ապա՝ ամսաթիվը.

1619 թ.	1620 թ.
N 920 - մայիս 25	N 979 - մարտ 14
N 921 - օգոստոս 1	N 981 - փետրվար 9
N 924 - հունիս 1	N 991 - հոկտեմբեր 10
N 932 - մարտ 18	N 992 - ապրիլ 8
N 938-սեպտեմբեր 7	N 994 - մարտ 11

<i>N 941 - հուլիս 11</i>	<i>N 996 - դեկտեմբեր 15</i>
<i>N 948 - հուլիս 20</i>	<i>N 1001 - օգոստոս 28</i>
<i>N 950 - նոյեմբեր 29</i>	<i>N 1007 - հուլիս 22</i>
<i>N 957 - հունվար 1</i>	<i>N 1009 - հունվար 18</i>
<i>N 958 - մարտ 12</i>	<i>N 1012 - հոկտեմբեր 7</i>
<i>N 959 - հունվար 15</i>	<i>N 1022 - մայիս 14</i>
<i>N 960 - հունիս 6</i>	<i>N 1024 - նոյեմբեր 7</i>
<i>N 963 - հունվար 4</i>	<i>N 1029 - հունիս 22</i>
<i>N 968 - մայիս 10</i>	
<i>N 969 - փետրվար 7</i>	
<i>N 975 - օգոստոս 8</i>	
<i>N 976 - հոկտեմբեր 7</i>	
<i>N 977 - նոյեմբեր 17</i>	
<i>N 978 - սեպտեմբեր 1</i>	

Մեկնաբանությունների կարիք չկա:

ժամանակագրական կարգը պահպանելու անհրաժեշտության գիտակցություն ժողովածուի կազմողը չի ունեցել: Եվ այն աստիճանի, որ հնարավոր է համարել նախ դնել շահ Աբասի կողմից 1604 թ. Երևանի գրավման մասին մի հիշատակարան (N 161) և դրանից հետո՝ հիշատակարաններ, որոնցում Երևանը դեռևս պաշարված է. կամ թե նախ՝ մի հիշատակարան, որի մէջ ասված է, թե Սրապիոն կաթողիկոսը «վախճանեցաւ» (N 302), իսկ հաջորդ հիշատակարանում նույն այդ Սրապիոնը դեռևս ողջ ու առողջ է և այլն:

Հրատարակիչը ջանք չի թափել նաև իրար կից համախմբելու նույն թվականին նույն գրչի կողմից գրված հիշատակարանները, որով մեծապես կդյուրացներ ընթերցողի գործը, նրան հնարավորություն կտրվեր համադրել տվյալ գրչի կատարած աշխատանքի, կենսագրության, նախասիրությունների մասին տվյալներն առանց մեծ ջանքի:

Մի քանի օրինակ:

Սրապիոն Ուռհայեցին 1603 թ. շարադրել է 3 հիշատակարան (NN 100, 103, 119), որոնք հեռացված են միմյանցից ուրիշների գրած հիշատակարաններով:

NN 246, 304 և 305 հիշատակարանները վերաբերում են խարբերդցի խոշա Սավարին և գրված են նույն 1606 թվականին:

Հակոբ Սգավոր գրիչը 1609 թ. գրել է երկու հիշատակարան, որոնք դրված են 448 և 453 համարների տակ:

Ռստակես աբեղան 1610 թ. գրել է երկու հիշատակարան (NN 489, 491). կարծես մտածված՝ միմյանցից հեռացնելու դիտավորությամբ սրանց արանքում հրատարակիչը մտցրել է աննշան արժեքի մի հիշատակագրություն:

Ամենից շատ տուժել է լվովցի գրիչ՝ Բոգդանի որդի Ջատիկը. 1615 թ. Ջատիկն ունի երեք հիշատակարան (NN 700, 703, 711): 1616 թ. երկու հիշատակարան (NN 752, 765), 1617 թ.՝ չորս հիշատակարան (NN 803, 809, 816, 849): Եվ դրանք բոլորն էլ ընդմիջված են նշված տարեթվերին ուրիշների կողմից ու տարբեր վայրերում շարադրված մեծ ու փոքր հիշատակարաններով: Ուրիշ օրինակներ էլ կարելի է բերել: Եզրակացությունը պարզ է. ոչ մի բանասիրական աշխատանք չի կատարված հավաքված հիշատակարանների խելամիտ և օգտակար դասդասման համար:

Մեր այս եզրակացությունն ամրապնդվում է, երբ ծանոթանում ենք միևնույն տարեթվի տակ դրված հիշատակարանների բովանդակությանը: Ամեն մի ընթերցող, բացելով ժողովածուի իրեն հետաքրքրող թվականը, ակնկալում է նախ և առաջ այնտեղ գտնել տեղեկություններ քաղաքական անցուղարձերի, ժողովրդի տնտեսական ու իրավական վիճակի, նշանավոր պատմական դեմքերի կյանքի ու գործունեության և հարակից հարցերի մասին: Հաշվի առնելով այս հրամայական պահանջը՝ ժողովածուի կազմողը պարտավոր էր նույն տարվա ընթացքում շարադրված հիշատակարաններն այնպես շարահարել միմյանց, որ առաջին տեղերը գրավեին հենց պատմական մեծ արժեք ունեցող հիշատակարանները (այդպիսիք բազմաթիվ են այս ժողովածուի մեջ) և ապա միայն՝ մի քանի տող գրավող մանր-մունր հիշատակագրությունները, որոնք նյութն ամբողջացնելու նպատակին են ծառայում հաճախ շունենալով որևէ ինքնուրույն նշանակություն: Ժողովածուի կազմողը, ինչպես ասել ենք արդեն, բոլորովին հաշվի չի առել նաև այս կարևոր հանգամանքը:

Օրինակ՝ 1605 թվաշարը սկսվում է ամենաչնչին մի հիշատակարանով (N 202), մինչդեռ նույն այս տարեթվին շարադրվել են 224 կամ 225 համարները կրող բովանդակալից պատմական հիշատակարանները: 1606 թ. պատահականորեն սկսվում է արժեքավոր հիշատակարանով, սակայն նրան հաջորդում են մանր ու սակավարժեք միավորներ (NN 247-253), ապա N 245 հույժ կարևոր բովանդակությամբ հիշատակալանը, նորից՝ անարժեք նյութեր, և կրկին N 227 պատմական անցուղարձերով հարուստ միավորը

և այլն: 1611 թ. Ազարիա Սասնեցու շարագրած չափածո ընդարձակ հիշատակարանը կարելի է Ջալալիների շարժման ամենանշանակալից սկզբնաղբյուրը համարել. կազմողը ոչ միայն դրանով չի սկսել տարեթիվը (առաջին տեղերում դրել է անարժեք միավորներ), այլև մոռացել է նույնիսկ նշել հիշատակարանի հեղինակի անունը՝ ոչ մասնագետ ընթերցողին զրկելով հեղինակին ճանաչելու և հաղորդուած նյութը նրա անունով օգտագործելու հնարավորությունից: 1612 թվաշարքը, որի մեջ կան բազմաթիվ առաջնակարգ հիշատակարաններ, սկսվում է մի անարժեք ու բզկտված երկտողով, և այսպես՝ բոլոր թվականները:

Այսպիսով, հիշատակարանների համարաշարքը, այլ խոսքով՝ ամեն մի տարեթիվի տակ հիշատակարան-միավորների դասավորությունը այս ժողովածուի մեջ կատարված է, բառիս լայն իմաստով, առանց որևէ գիտական սկզբունքի:

ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Որոշ հիշատակագիրներ մեծ մասամբ իրենց գիտելիքներով պարծենալու միտումով ժամանակագրական տվյալները գրանցել են խրթին ձևերով՝ օգտագործելով տոմարագիտական զանազան տերմիններ՝ ողիմպիադ, ինդոս, նոնոս և այլն: Նույն տարեթիվը հաճախ արտահայտել են հայկական, փրկչական, աշխարհի արարչագործության թվականներով և այլն: Ըստ այդմ, տոմարագիտական գիտելիքներն անհրաժեշտ են այս կամ այն ծածկագիր տարեթիվը վերծանելու, պատմական տվյալ եղելության ժամանակագրությունը պարզելու և բանասիրական այլ խնդիրներ լուծելու համար: Ի պատիվ Վ. Հակոբյանի պետք է ասել, որ նա այս առումով շատ դժվարություններ է հաղթահարել հատկապես իր «Մանր ժամանակագրությունների» զույգ հատորներում: Սակայն, շտապողականությունն ու պատասխանատվության նվազումն այստեղ իրենց զգալ են տվել. ժողովածուի մեջ տեղ են գտել մի շարք շատ ցավալի սխալներ ու վրիպումներ, որոնք բնավ չեն ներդաշնակում փորձառու և վաստակաշատ բանասեր-հրատարակչի նախորդ աշխատանքներին:

Մի երկու տասնյակ հիշատակարաններ իրենց գրությունների ճիշտ ժամանակից մեկ տարով առաջ են տարվել հետևյալ թյուրիմացություն հետևանքով: Ժէ դարի առաջին երկու տասնամյակներն ըստ հայոց տոմարի ընդգրկում են ՌԾ (1601)-ՌԿԹ(1620) թվականները: Սակայն հայկական տոմարով ՌԾ թվականը սկսվում է հոկտեմբերի 22-ից, և չորս տարին մեկ օր էտ ընկնելով համապատասխանաբար ՌԿԹ թվականի ամանորը հոկտեմ-

բերի 18-ն է դառնում: Ելակետ ունենալով այս իրողությունը՝ ժողովածուի հրատարակիչը հանգել է այն եզրակացության, որ բոլոր այն հիշատակարանները, որոնց մեջ տեղեկություններ կան հոկտեմբերի 18-22-ից (նայած թե որ թվի մասին է խոսքը) հետո (մինչև դեկտեմբերի 31-ը) գրված լինելու մասին, տարեթիվը թողնվելու է նույնը, որովհետև չնայած ըստ հայոց տոմարի տարին փոխվել է արդեն, բայց ըստ հուլյան տոմարի մնացել է նույնը (ինքն այսքան պարզ չի արտահայտվում. մենք փորձել ենք ավելի դյուրըմբռնելի դարձնել նրա խրթին դատողությունները)¹:

Կատարյալ թյուրիմացության մեջ է հրատարակիչը: Ուշ միջնադարում հայ հեղինակները, երբ օգտագործում էին հուլյան տոմարի ամիս-ամսաթիվը (յունուար... դեկտեմբեր). տարեսկիզբը կամ ամանորը ըստ մեծի մասի² հաշվում էին ոչ թե ըստ հայկական շարժական տոմարի, այլ հունվարի 1-ից հուլյան տոմարի թվականի փոխարեն համապատասխանաբար նշանակելով հայոց տարեթիվը՝ պարզ թվաբանական գործողությամբ քրիստոնեական թվականից հանելով հայոց թվականի հիմնադրման տարեթիվը՝ 551: Ըստ այդմ, երբ գրում էին, դիցուք, «Ի թւ. Հայոց ՌԾԹ՝ փետրուար ԻԵ», այդ նշանակում էր 1059+551=1610 թ. փետրվարի 25, իսկ նույն ՌԾԹ թվականի դեկտեմբերի Լ-ն համապատասխանաբար նշանակում էր 1059+551-1610 դեկտեմբերի 30: Ուրիշ ոչինչ:

Եվ զարմանալին այն է, որ հենց իր հրատարակած հիշատակարանների մեջ կան մի շարք անառարկելի փաստեր հօգուտ մեր ասածի, որ անտեսվել են հրատարակչի կողմից կամ վրիպել նրա սևեռուն ուշագրությունից:

Մանոթանաք այդ փաստերից մի քանիսին:

¹ Ռուպեզի մեր ասածը հիմնավոր լինի, ստորև բառացի մեջբերում ենք նույն հարցի մասին Վ. Հակոբյանի ստեղծագործական ծանոթագրություններից մեկը. «Հայոց ՌԿԶ թվականը սկսվում է 1616 թ. հոկտեմբերի 18-ին (հին տոմարով), հետևապես Հայոց ՌԿԶ թվականի դեկտեմբերի 4-ը կընկնի 1616թ. մեջ, Հայոց ՌԿԶ, ՌԿԵ, ՌԿԸ և ՌԿԹ տարեթիվերը սկսվում են համապատասխանաբար 1616, 1617, 1618 և 1619 թվականների հոկտեմբերի 18-ին (հին տոմարով): Այստեղից էլ այս տարիներում, երբ ձեռագրի ընդօրինակությունը ավարտվում է հոկտեմբերի 18-ից հետո մինչև դեկտեմբերի 31-ը (հին տոմարով), և, իհարկե, երբ հիշատակարանում այդ մասին նշում կա, տարեթիվը պետք է նշել ոչ թե հաջորդ, այլ նույն տարին» (էջ 578):

² Ասում ենք «ըստ մեծի մասի» և ոչ «ամենուրեք»՝ նկատի ունենալով, որ տոմարագետ որոշ գրիչներ, հուլյան տոմարի ամիս-ամսաթիվերին զուգահեռ, երբեմն նշանակում էին նաև հայկական ամիս-ամսաթիվերը՝ առաջնորդվելով սարկավագադիր անշարժ տոմարով կամ էլ հին շարժական տոմարով: Այսպիսի դեպքերը, սակայն, խիստ սահմանափակ լինելով, ընդհանուր կարգից դուրս են մնում:

N 906 հիշատակարանը շարադրված է ՌԿԸ (1619) թվականի հոկտեմբերի 25-ին, օրն երկուշաբթի: Հիշատակարանը տեղադրված է 1618-ի թվաշարքում հաշվի չառնելով, որ հոկտեմբերի 25-ը երկուշաբթի է ոչ թե 1618, այլ հենց 1619 թվականին:

N 1024 հիշատակարանը շարադրված է 1621 թվականի նոյեմբերի 7-ին, օրը չորքեշաբթի: Այս հիշատակարանն էլ, որ դրվելու էր հաջորդ հատորի մեջ, մեկ տարի իր գրովթյունից առաջ է տարված՝ դարձյալ անտեսելով այն հանգամանքը, որ օրվա պատկերը համապատասխանում է 1621 և ոչ 1620 թվականին:

Բայց ունենք շատ ավելի կարևոր ու զորավոր մի փաստ. N 950 հիշատակարանում ասված է. «Թուականին ՌԿԹ նոյեմբեր ամսուն ԻԹ (29) լուսոյնկան բըռնըւեցաւ, ամէնւին չէ[ր]եցաւ, մինչեւ ի երկու սահաթն» (էջ 698):

ՌԿԹ թվականը համապատասխանում է հուլյան տոմարի 1620 թվականին. բայց այս հիշատակարանը նախորդների նման դրված է 1619 թվաշարքում հաշվի չառնելով, որ այստեղ հիշատակված լուսնի խավարումը ըստ հուլյան տոմարի, տեղի է ունեցել հենց 1620 թ. նոյեմբերի 29-ին (ըստ գրիգորյան տոմարի դեկտեմբերի 9-ին), սկսվել Գրինվիչի ժամանակով ժամը 17անց 17 րոպեին (տեղական ժամանակով երեկոյան ժամը 9 անց 17 րոպեին), տևել է երկու ժամ (ավելի ճիշտ՝ 110 րոպե), որից 49 րոպե՝ լրիվ խավարում¹:

Այսպիսով, պարզվում է, որ բազմաթիվ հիշատակարաններ ճիշտ թվականի տակ չեն տեղադրված (օրինակ՝ NN 578, 801, 805, 826, 887, 906, 908, 950, 977, 1024 և այլն)²:

Ժողովածուի մեջ կան նաև ժամանակագրական ու տոմարագիտական այլ վրիպումներ:

¹ **Theodor Oppolzer**, Canon of Eclipses, New York, 1962, p. 368, խավարման համարն է 4367:

² Մի երկրորդական հարցի մասին խոսենք այստեղ: Վերը քվարկված հիշատակարաններից մի ֆանիսը (NN 801, 805, 1024) գրված են Լեհաստանի հայաբնակ ֆաղաֆներում (Լվով, Յագլովեց): Արդ, մի՞թե կարելի է մի վայրկյան անգամ մտածել այն մասին, որ այդտեղ բնակություն հաստատած հայերը, առաջնորդվելով իրենց հին տոմարով, գրում էին, դիցուք, 1620 թ. դեկտեմբեր, բայց դրա տակ հասկանում 1619 թվականը՝ հաշվի չառնելով, որ իրենց հյուրընկալած լեհերն ու ուկրաինացիները (որոնց հետ ամենօրյա տնտեսական համագործակցության մեջ էին) առաջնորդվում են ուրիշ հաշիվներով:

N 894 միավորն, օրինակ, շարադրված է «Ի նոր թուխ Հայոց Գ(3) (էջ 664): Հրատարակիչը կարծել է, թե սա Ազարիայի թվականն է, որի առաջին տարին համապատասխանում է մեր թվականության 1616-ին, ուստի հիշատակարանը տեղադրել է 1618-ի թվաշարքում: Այս անկարելի է: Ազարիայի թվականը գործածության մեջ է մտել 1616-ից տարիներ հետո, այն էլ նոր Զուղայում ու նրա հետ կապված հայկական գաղթօջախներում: Իսկ հիշատակարանը գրված է Տյուրիկի շրջանում, արտաքին աշխարհից կտրված ու ավանդապահ մի վայրում, ուստի «նոր թիվ» ասելով հիշատակագիրը հավանաբար նկատի է ունեցել հայոց հազար (Ռ) թիվը լրանալուց հետո սկսվող նոր հազարամյակը. ըստ այդմ, հիշատակարանը շարադրվել է ոչ թե 1618-ին, ինչպես ենթադրել է հրատարակիչը, այլ 1554-ին (1551-3):

Անդրադառնանք մեկ ուրիշ հարցի. քրիստոնեական կամ փրկչական (այսպես էին ասում միջնադարում) թվականների մի շարք հաշվումներ կան. ըստ եթովպացոց, ըստ հռովմայեցոց, ըստ հայոց և այլն: Այժմ ողջ աշխարհում համընդհանուր տարածում է գտել քրիստոնեական թվագրությունն ըստ հռովմայեցվոց: Հայկականը երկու տարով հռովմեականից շուտ է սկսվում. այլ խոսքով՝ հայկականի սկիզբը մեր թվագրությունից առաջ՝ 2-րդ թվից պետք է հաշվել:

Հայկական միջնադարյան աղբյուրներում, երբ որևէ թվականը տրվում է գուգահեռաբար և՛ հայկական թվականով, և՛ հայոց փրկչական թվականով, դրանց տարբերությունը միշտ և անպատճառ 553 է լինում: Այդպես է Անեցու մոտ և ամենուրեք: Հայ ունիթորներն են միայն, որ սկսած ԺԴ դարի 30-ական թվականներից, հետևելով կաթոլիկ եկեղեցուն, սկսում են գործածել փրկչական թվականը՝ ըստ հռովմեացվոց հաշվի:

Այս հարցին մենք անդրադարձել ենք տարիներ առաջ և, հաշվի առնելով այս պարագան, ճիշտ տեղադրել մի շարք հայկական փրկչական թվականով օժտված հիշատակարաններ (տեղին է այստեղ խոստովանել, որ ԺԴ դարի հիշատակարանների մեջ մի տեղ սխալվել ենք):

Այս հատորի հրատարակիչը, սակայն, պարզ չի պատկերացնում այս հարցը և իր մի քանի ծանոթագրություններով կարող է թյուրիմացության մեջ գցել մեր սկսնակ բանասերներին: Նա, օրինակ, գրում է. «Քրիստոնեական և հայկական տարեթվերի տարբերությունը՝ 1611 և 1609... նրանից է, որ միջնադարյան որոշ հեղինակներ, օրինակ՝ ԺԲ դարի ժամանակագիր Սամուէլ Անեցին, քրիստոնեական և հայկական տարեթվերի տարբերությունն ընդունում է ոչ թե 551, այլ 553: Վերջինիս հետևել է նաև Հակոբ Սգավորը: Ուստի սույն հիշատակարանը դնում ենք 1609 թ. շարքում» (էջ 357-358):

Իրավացի է վարվել հիշատակարանը 1609-ի թվաշարքում դնելով, բայց ճշմարտությունից շատ է հեռացել, երբ պնդում է, թե տարեթվերի այդպիսի հաշիվը հատուկ է միայն միջնադարյան հայ «որոշ հեղինակներին», ճիշտ հակառակը՝ այդպես են վարվել միջնադարյան բոլոր հայ հեղինակները, ի բաց առյալ կաթոլիկ դավանանք ընդունածներին:

Փողովածուի մեջ տեղ են գտել նաև մի քանի հիշատակարաններ, որոնք գրված են կա՛մ ժէ դարի առաջին տասնամյակներից շատ առաջ, կա՛մ էլ շատ հետո:

Այսպես՝ N 925 միավորը Եսայի Կաֆայեցի տոմարագետի աշխատություններից մեկի հեղինակային հիշատակարանն է, այդ գիտնականն ապրել ու ստեղծագործել է 1430-1440-ական թվականներին, ուստի չէր կարող հիշատակարան գրել 1619 թվականին:

N 237 միավորի Բ և Գ հիշատակարանները գրվել են ձեռագրի նորոգման առիթով, ուստի ձեռագրի ընդօրինակության թվականից, այսինքն՝ 1605-ից շատ տարիներ հետո: Հասկանալի է, որ դրանք չպետք է դրվեին գրչության հիշատակարանին առընթեր, կամ էլ հատուկ ծանոթագրությամբ պետք է նշում կատարվեր նրանց ժամանակի մասին: Նույնը, պետք է ասել N 459 գ հիշատակագրության մասին, որի մեջ խոսք կա Հայսմավուրքի վաճառման մասին: Ձեռագիրն ընդօրինակվել է 1610 թ. պարոն Աղաբաբի պատվերով, իսկ վերոհիշյալ հիշատակագրության մեջ այս Աղաբաբի թոռ Հախնազարն է, որ վաճառում է ձեռագիրը: Պարզ է, ուրեմն այս միավորը, նույնպես, իր տեղում չի գրված:

Բարեբախտաբար, այս կարգի վրիպումների քանակը մեծ չէ:

ՎԵՐՆԱԳՐԵՐԻ ՀԱՐՅԸ

Նախորդ դարերի հիշատակարանների հրատարակված հատորներում բուն բնագրերից առաջ, միմյանց հաջորդող 4 տողերով տրված են խիստ անհրաժեշտ տեղեկություններ տվյալ միավորի վերաբերյալ:

Առաջին տողը հատկացված է այն ձեռագրի վերնագրին, որից քաղված է հիշատակարանը կամ հիշատակարանների տվյալ փունջը: Երկրորդը բացահայտում է ձեռագրի հասցեն. որտե՞ղ է պահպանվում ձեռագիրը, ի՞նչ տպագիր կամ ձեռագիր աղբյուրից է քաղված հիշատակարանը (եթե հրատարակիչը ձեռագիրն անձամբ չի տեսել, այլ հիշատակարանի հետ ծանոթացել է միջանկյալ կերպով): Երրորդ տողով տեղեկություն է տրվում տվյալ հիշատակարանի հեղինակի մասին. ո՞վ է շարագրել այն՝ գրիչը, ծաղկողը, ստացողը, նորոգողը, թե՞ ձեռագրի հետ առնչված մի այլ անձնա-

վորություն: Եվ վերջապես, շորորոդ տողը հատկացված է հիշատակարանի գրություն վայրին. որտե՞ղ է շարադրված տվյալ հիշատակարանը:

Նախորդ ժողովածուներում նույնիսկ մշակված է այս տողերի տպագրական հարդարման ձևը. վերնագիրը շարված է գլխատառերով, հասցեն տրված է մանր տառատեսակով, հիշատակարանի հեղինակի ու գրչության վայրի մասին տեղեկությունները շարված են էջի աջ կողմում՝ հարց ու պատասխանի ձևով, ըստ որում հարցը շարված է սովորական տառատեսակով, իսկ պատասխանը՝ շղագիր. այսպես՝

Գրիչ՝ Վարդան

Վայր՝ Աղթամար

Դրանից հետո միայն մեջբերվում են ձեռագրի հիշատակարանը կամ հիշատակագրությունները, իհարկե, եթե կան այդպիսիք:

Երբ բացում ենք քննարկվող հատորը, առաջին հայացքից թվում է, թե նույն այս սկզբունքներով է հիշատակարանները հրատարակության պատրաստել նաև Վ. Հակոբյանը, մանավանդ որ այդ մասին նա որոշակի նշում է կատարել նաև առաջաբանի մեջ: «Ժողովածուն կազմելիս, - գրում է նա, - առանձին լրացումներով հետևել ենք Լ. Խաչիկյանի կազմած ժողովածուների կառուցվածքին»: Բայց այդ խաբուսիկ տպավորությունն իսպառ ցրվում է, երբ խորամուխ ենք լինում կատարված աշխատանքի մեջ և փորձում բացահայտել, թե որոնք են այդ «առանձին լրացումները», որ փորձել է կատարել հատորի հրատարակիչն ինքը:

Հետագա էջերում փորձելու ենք ցույց տալ, որ իրականում ոչ թե «առանձին լրացումներ» են կատարված, այլ ամբողջովին նոր մտեցում է ցույց տրված. ինչպես ասացինք, պահպանված է միայն նախորդ հրատարակությունների արտաքին ձևը: Եվ շտապում ենք հենց այստեղ հայտարարել, որ կատարված փոփոխություններից և ոչ մեկն իրեն չի արդարացրել ու միայն վնաս է բերել հիշատակարանների ժողովածուին:

Եվ այսպես, վերը նշված հերթականությամբ այժմ անդրադառնալու ենք բուն հիշատակարաններին նախորդող բացահայտիչ այն տողերին, որոնք կոչված են ձեռագրի բովանդակության հասցեի, հիշատակագրի անձնավորության ու գրչության վայրի մասին ընթերցողին անհրաժեշտ տեղեկություններ մատուցելու նպատակին:

Ձեռագրի խորագիրը կազմելը մեծ դժվարությունների հետ չի կապված: Ձեռագրագետ-բանասերն այսօր իր ձեռքի տակ ունի, տարբեր վայրերում պահվող մի քանի տասնյակ ձեռագրական ցուցակներից բացի, Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի համառոտ ցուցակը, որոնք

լայն հնարավորություններ են ընձեռում այս կամ այն ձևագրական միավորի համար ճիշտ վերնագիր ընտրելու: Չնայած այս հանգամանքին, հատորի հրատարակիչը չի մշակել վերնագրերը ներկայացնելու որոշակի մի սկզբունք, որի հետևանքով ամենախայտաբղետ ձևերի ենք հանդիպում ժողովածուի մեջ:

Բազմաթիվ հիշատակարաններ օժտված են ամբողջական ու ճշգրիտ վերնագրերով, որոնց մեջ նշում կա և՛ ձևագրի բովանդակության, և՛ հեղինակի մասին: Այսպես օրինակ.

Ընդհանրականն թուղթ ներսիսի Շնորհալույ (N 3),

Գիրք հարցմանց Գրիգորի Տաթևացույ (N 96),

Գիրք պարապմանց Կիրղի Աղեքսանդրացույ (N 107),

Քարոզգիրք Գրիգորի Տաթևացույ (N 540) և այլն:

Այսպիսի ամբողջական ու ճշգրիտ վերնագրերը, սակայն, բացառություն են կազմում:

Ըստ մեծի մասի կազմողը զլացել է ընթերցողին ծանուցել այս կամ այն աշխատության հեղինակի անունը: Բազմաթիվ օրինակներից բերենք մի քանիսը.

N 6 միավորը կրում է «Մեկնութիւն քաղուածոյ գրոցն Յոբայ» խորագիրը, բայց չի ասված, որ հեղինակը Գրիգոր Տաթևացին է:

N 7-ը դարձյալ «Մեկնութիւն Յոբայ» է, բայց սրա հեղինակն արդեն Վանական Վարդապետն է: Դարձյալ ոչինչ չի ասված:

N 569-ը կրում է «Մեկնութիւն քերականի» խորագիրը, բայց չէ՞ որ այդպիսի բազմաթիվ միջնադարյան մեկնություններ կան. ո՞վ է սրա հեղինակը (դժվար չէր պարզել, որ Հովհ. Երզնկացին է):

N 100-ի տակ ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն սաղմոսացն Սողոմոնի» աշխատությունն է՝ առանց հեղինակի անվան հիշատակության, իսկ հաջորդ վերնագրում («Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պօղոսի») չի նշված Հովհան Ռսկեբերանի անունը: Եվ այսպես շարունակ, հանդիպում ենք «Մեկնութիւն Աւետարանին Յովհաննու» (Նանայի Ասորույ), «Անգիտաց անպէտ» (Ամիրդովլաթ Ամասիացույ), «Մեկնութիւն Դուկասու Աւետարանին» (Իգնատիոսի), «Մեկնութիւն հնգամատենին» (Վարդանայ Արեւելցույ), «Գիրք առաքինութեան» (Պետրոսի Արագոնացույ) և այլ վերնագրերի՝ առանց տեղեկություն ստանալու նրանց հեղինակների մասին: Արդ, ինչո՞ւ մի դեպքում նշում է, 3-4 դեպքում՝ անտեսում: Այս հարցին բանական պատասխան տալ հնարավոր չէ: Հրատարակիչը պարզապես որևէ սկզբունքով չի ղեկավարվել կամ էլ քմահաճորեն է ընտրել վերնագրերը:

Այս բնագավառում մյուս մեծ թերությունը հետևյալն է. տասնյակ ու տասնյակ վերնագրեր իրենց կից՝ փակագծերի մեջ ունեն տարեթվեր կամ դարաթվեր, իսկ մի քանիսն էլ՝ «ժամանակ» բառը հարցական մի նշանով: Այսպես.

Լուծմունք քերականի (1600 թ.) (N 130),

Նարեկ (ժամանակ) (N 157),

Հայսմավուրք (1565 թ.), (N 219),

Հայսմավուրք (1601 թ.) (N 533),

Քերականություն (ժամանակ) (N 221),

Ճաշոց (ժե - ժՁ դդ.) (N 598),

Մաշտոց (1364 թ.) (N 640) և այլն և այլն:

Ի՞նչ են նշանակում այդ թվերն ու դարերը: Բանասիրական աշխատանքի փորձ ունեցող ամեն ոք առաջին հայացքից պետք է մտածի, որ այդ թվականներով ցույց է տրվում տվյալ աշխատության գրության կամ խմբագրության ժամանակը: Հայսմավուրք ու Մաշտոց ժողովածուների տարբեր խմբագրություններ կան. «Հայսմավուրք» բառի կողքին՝ 1565 կամ 1601 թ., իսկ Մաշտոցի կողքին՝ 1364 թ. գտնողն այլ բան չի կարող մտածել, քան այն, որ դրանք հորինվել կամ վերամշակվել են նշված այդ թվականներին և այլն: Բայց պարզվում է, որ ժողովածուի կազմողը բոլորովին այլ նպատակ է հետապնդել վերնագրերին կից թվականներ նշանակելով. ցանկացել է նշել, որ այն ձեռագիրը, որի մեջ գտնվում է տվյալ հիշատակարանը, ընդօրինակված է այս կամ այն թվականին, կամ էլ իրեն հայտնի չէ, թե երբ է ընդօրինակված (այս վերջին դեպքում է, որ գրում է «ժամանակ» հարցական նշանով):

Բուն ձեռագրի գրության ժամանակի նշումը մեր կարծիքով ոչ մի նշանակություն չունի ու ժամանակում շարադրված հիշատակարանների ժողովածուի մեջ, իսկ եթե այնուամենայնիվ անհրաժեշտ համարվի այդ տվյալի մատուցումը, դրա համար կարելի է գտնել տասնյակ այլ, շատ ավելի տրամաբանական եղանակներ (թեկուզ և համապատասխան ծանոթագրության մեջ նշում կատարելը):

Կան նաև այլ սխալներ ու թերություններ:

N 47 միավորի խորագիրն է «Մխիթար վարդապետ Սկեւոացի»: Սկեւոացու ո՞ր աշխատությունն է ոչինչ չի ասված: N 265-ն օժտված է «ժողովածու» խորագրով, մինչդեռ այդ ձեռագրում հավաքված են միայն Գրիգոր Կեսարացու գրությունները (հիշատակարանը, համենայն դեպս, վերաբերում է միայն Գ. Կեսարացու աշխատություններին): N 307-ը նույնպես «ժո-

դովաժու» վերնագիրն է ստացել, բայց հիշատակարանի մեջ կոչված է «Ոսկեփորիկ»: N 545-ին տրված է «Նամականի» խորագիրը, իսկ հիշատակարանում ասված է. «այս գիրքս, որ կոչի Հաւատոց թուղտ»: N 659-ը կոչված է «Գիրք մեկնութեան Գր. Տաթեւացոյ». այդպիսի գիրք չկա: N 683-ի «Ճառք»-ի փոխարեն ճիշտ կլիներ դնել «Վարդանգիրք» խորագիրը, որ գալիս է հիշատակարանից: N 726-ը կոչված է «Հարցմունք քաղուածոյ», որ ոչինչ չի նշանակում: N 903-ի խորագիրն է «Առ որս», իսկ N 803-ինը՝ «Աստուածաբանութիւն Առ որս Գր. Աստուածաբանի». առաջինը խիստ թերի է, երկրորդը ճշգրիտ չէ. պետք է լիներ «Առ որս գիրք Գր. Աստուածաբանի»: N 974-ն, ըստ հիշատակարանի, կոչվելու էր «Գիրք խոստովանութեան», մինչդեռ ստացել է «Ժողովածու» խորագիրը: Եվ այսպես, ժողովածուի մեջ կան հարյուրից ավելի վիճելի, թերի կամ բացարձակորեն սխալ վերնագրեր: Ասենք նաև, որ մի շարք միավորներ վերնագրեր ստանալու փոխարեն կոչվել են «Պատառիկ» և միայն այն բանի համար, որ նրանք ամբողջապես չեն հասել մեզ, այլ պահպանվել են խիստ թերի վիճակով ու պահվում են այժմ Մատենադարանի ոչ թե ձեռագրերի, այլ պատառիկների հավաքածուում: Բայց չէ՞ որ նրանց գտնվելու տեղի մասին տվյալներ հաղորդելու համար սահմանված է վերնագրից հետո եկող տողը, ուստի վերնագիրը պետք է համապատասխաներ այն ձեռագրի բովանդակությանը, որից պոկվել ու մեզ է հասել այդ պատառիկ-բեկորը: Բարեբախտաբար, հիշատակարանները հնարավորութուն են ընձեռում բացահայտել բոլոր այդ պատառիկ կոչվածների վերնագրերը.

N 31Դ Գանձարան,

N 35Դ Ավետարան,

N 508 Մատյան նվիրատվությանց,

N 70Է Ավետարան և այլն:

Բերված օրինակներն իրավունք են տալիս առանց երկընտրանքի հայտարարել, որ հիշատակարան-միավորների վերնագրերի մի զգալի մասը սխալ կամ անհաշոտ է ընտրված:

Այժմ՝ հիշատակարանների հասցեի մասին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՅԵՆ

Ամեն մի հիշատակարան պետք է ունենա իր հասցեն, այլ խոսքով՝ հրատարակիչը պարտավոր է հստակ ու մատչելի եղանակով տեղեկություն հաղորդել այն մասին, թե որտեղ է այժմ պահվում կամ տարիներ առաջ պահ-

վել այն ձեռագիրը, որից քաղված է տվյալ հիշատակարանը, ինչ համարի տակ է գրանցված և այլն:

Արդ, քննարկվող հատորում ինչպե՞ս է մատուցված հիշատակարանների հասցեն: Պատասխանն այս դեպքում ևս դրական չի լինելու. ի բացառյալ մեր Մատենադարանի ձեռագրերի, որոնք ներկայացված են «Երևան, N (այսինչ)» դիպուկ ու պարզ բանաձևով, այդ տեղեկությունը տրված է ընթերցողի շահերից չբխող ու խոտելի ձևերով: Հիմնավորենք մեր հայտարարությունը:

Ինչպես հայտնի է, Մաշտոցի անվան Մատենադարանից հետո հայերեն ձեռագրերի քանակով երկրորդ ու երրորդ տեղերը բաժանում են Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի ու Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանները, որոնցից յուրաքանչյուրում պահվում են շուրջ չորս հազար ձեռագիր մատյաններ:

Քննարկվող ժողովածուն տպագրության ներկայացնելու օրերին արդեն լույս էին տեսել Երուսաղեմի ձեռագրերի Մայր ցուցակի 6 հատորները (Ն. Պողարյանի ջանքերով), որոնցից և քաղված են հարյուրավոր հիշատակարաններ:

Ընթերցողի գործը դյուրացնելու համար ժողովածուի կազմողը երուսաղեմյան որևէ ձեռագրի հասցեն ներկայացնելիս տրամաբանության բոլոր օրենքներով պետք է նախ գրեր «Երուսաղեմ», ապա տար ձեռագրի համարը, դրանից հետո նշեր ցուցակի հատորն ու էջը. այս երկրորդ տեղեկությունը կարելի է մատուցել երկու տարբեր ձևերով՝ կա՛մ Ցուցակ, I (II, III և այլն), էջ..., կա՛մ Ն. Պողարյան, I (II, III), էջ...:

Ուրեմն այսպես (թիվն ու համարը նշում ենք պայմանականորեն).

Երուսաղեմ, N 106, Ցուցակ, I, էջ 150

կամ Երուսաղեմ, N 106, Ն. Պողարյան, I էջ 150:

Սեղմ, դիպուկ և ամեն ինչ ասող մի բանաձև:

Նույն այս տվյալը հատորում ներկայացված է ահա այսպես՝ ՄՅՁԵՊ, I, N 106: Եվ ամեն այսպիսի հասցեի դեպքում ընթերցողը պարտավորված պետք է լինի գտնել առաջաբանի վերջում դրված ցանկը, ուշադիր նայել բոլոր համառոտագրությունները, գտնել այդ ՄՅՁԵՊ-ի բանալին, հասկանալ, որ դրա տակ պետք է կարդալ «Մայր ցուցակ ձեռագրաց Երուսաղեմի Պողարեան (՞) (որը ճիշտ խորագիրը չէ այդ ցուցակի)» այս բոլորից հետո միայն հասկանալու համար, որ իրեն հետաքրքրող հիշատակարանը քաղված է Երուսաղեմի N 106 ձեռագրից:

Վենետիկի ձեռագրերի հասցեն տրված է ՅՁՎՍ, I, II, III համառոտագրություններով, որը նույնպես խրթին է և անմիջական ինֆորմացիա չի պարունակում: Այսպես են նաև բազմաթիվ այլ գրադարանների հասցեները:

Ժողովածուի N 29 միավորի վերնագրի («Տաղարան») տակ հասցեն գրված է այսպես՝ ՏեՐԱՎՋ, N 518: Ընթերցողը պետք է հասկանա, որ խոսքը Սմբատ Տեր-Ավետիսյանի «Յուզակ հայերէն ձեռագրաց նոր Ջուղայի» աշխատության մասին է: Բայց մի՞թե ավելի դիպուկ չէր լինի գրել այսպես՝ նոր Ջուղա, N 518, Յուզակ, էջ... (այս կապակցությամբ նշենք նաև, որ այդ Յուզակը լույս է տեսել 1970 թվականին զգալի չափով ճշգրտված ու խմբագրված ձևով, մինչդեռ հրատարակիչն օգտագործել է ցուցակի սխալաշատ ձեռագիրը):

N 31 միավորի հասցեն տրված է այսպես՝ ՄԻՆՋ, N 28: Այստեղ էլ մատնանշված է նույն նոր Ջուղայի N 28 ձեռագիրը, որը քաղված է Լ. Մինասյանի Յուզակից (դարձյալ ոչ տպագրից, այլ ձեռագրից, երբ այն 1972-ին արդեն տպագրված էր):

ՄՎ կարող է գլխի ընկնել, որ ԼԱՎԳԱԻ, N 213 համառոտագրության տակ տրված են Թբիլիսիի հայերեն ձեռագրերի հասցեները (ըստ այդմ ԼԱՎԳԱԻ նշանակելու է Ս. Պ. Լալաֆարյան, Յուզակ հայերեն ձեռագրաց Վրացական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի ձեռագրերի ինստիտուտի): Իսկ մի՞թե ավելի կարճ ճանապարհը չէր լինի այս բանաձևը՝ Թբիլիսի, N 213, Ս. Լալաֆարյան, էջ...:

Եվ այսպես շարունակ, Մանչեստր գրելու փոխարեն գրված է Տիրայր վարդապետ, Բուխարեստի փոխարեն՝ ՔՅԲ (իմա՝ Ս. Է. Քոլանջյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Բուդապեշտի (պետք է լիներ՝ Բուխարեստի) հայ մշակույթի տան ձեռագրերի), Թբիլիսիի Պետ. արխիվի փոխարեն՝ ՄՅՁՎԿՊԱ, Բրիտանական թանգարանի փոխարեն՝ CBCOn, Բեռլինի փոխարեն՝ KarHB, Ջամաթի փոխարեն՝ ՔՅՁՁՎ, Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի փոխարեն՝ ԼԱԱԺԻ (իմա՝ Լենինգրադի Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների ինստիտուտ) և այլն և այլն:

Խուժավուր և անհասկանալի համառոտագրություններ, որոնք կարծես ստեղծված են հենց դժվարացնելու համար ընթերցողի գործը, մինչդեռ պետք է կոչված լինեին՝ դյուրին ու կարճ ճանապարհով ընթերցողին առաջնորդելու դեպի նպատակակետ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՅՈՒ

Հիշատակարանների մասին ընթերցողին հաղորդվելիք կարևորագույն տեղեկությունները վերաբերում են հեղինակին, ո՞վ է շարագրել տվյալ հիշատակարանը, և ի՞նչ հարաբերության մեջ է այդ հեղինակը ձեռագրի հետ: Մյուս՝ ոչ սակավ կարևոր տեղեկությունը վերաբերում է տվյալ հիշատակարանի շարագրման վայրին՝ որտե՞ղ է գրվել հիշատակարանը:

Ահա այս 2 կարևորագույն հարցերի պատասխանը մեր հրատարակած ժԳ և ժԵ դարերի հիշատակարանների 4 հատորներում տրված է հասցեին հաջորդող երկու տողերում, որոնք տեղադրվում են գրադաշտի աջակողմում, այսպես.

Գրիչ՝ Հակոբ

Վայր՝ Աղթամար

«Գրիչ Յակոբ» տվյալն այս դեպքում նշանակում է, որ ժԵ դարի հիշատակարանների մեր ժողովածուի 3-րդ հատորի 63-64 էջերում տպագրված N 68 հիշատակարանի հեղինակը Հակոբն է, և որ նա տվյալ ձեռագրի գրիչն է (և ոչ, ասենք, ստացողը, ծաղկողը, նորոգողը կամ գերությունից ազատողը): Վ. Հակոբյանն ուշագրություն չի դարձրել այս հանգամանքին, որի հետևանքով ընթերցողին զրկել է տվյալ հիշատակարանի կամ հիշատակագրության հեղինակի մասին դյուրութամբ տեղեկություն ստանալու հնարավորությունից:

Մի քանի բնորոշ օրինակներով տեսնենք, թե ինչպես է լուծված այս խնդիրը քննարկվող ժողովածուի մեջ.

1. N 90 միավորը Կանոնագիրք է. սրա համապատասխան տողերում գրված

Գրիչ՝ Սիմեոն, Զախնո

Վայր՝ Իլով

Ստացող, նվիրատու՝ Էսան պեյ

Արդ, ո՞վ է այս հիշատակարանի հեղինակը՝ Սիմեոնը, Զախնոն, թե՞ Էսան պեյը: Պարզվում է, որ դրանցից ոչ մեկը հիշատակարանը շարագրողը չէ. այդ բանը կատարել է ոչ այլ ոք, քան Հակոբ Թոխաթեցի նշանավոր - բանաստեղծ-գրիչը և շատ պարզ գրել է այդ մասին հիշատակարանի մեջ.

«(յիշեցէք)... եւ զիս զանպիտան Յակոբ երէցս, որ զյիշատակարանս գրեցի» (էջ 77):

Ինչո՞ւ է այսպես ստացվել: Որովհետև Վ. Հակոբյանը չի կարողացել իր համար պարզել մի շատ կարևոր հարց. որպես ի՞նչ է հանդես գալիս ինքը՝

որպես հիշատակարանների ժողովածուի կազմող, թե՞ ձեռագրերի ցուցակի հեղինակ: Ձեռագրի նկարագրողը նախ պետք է տեղեկություն տա տվյալ ձեռագրի գրչի, ծաղկողի և գրչության հետ առնչվող այլ անձնավորությունների մասին. Բայց հիշատակարանների ժողովածու կազմողի պարտականությունն է ընթերցողին անմիջապես լուր տալ, թե ով է տվյալ հիշատակարանի հեղինակը: Եվ այս չի գիտակցված ողջ հատորի մեջ:

2. Որպես N 92 միավորի (Ավետարան) հիշատակարանի հեղինակ նշված է «Գեր. ազատող, նուիրատուն՝ Պատուական»: Ոչ, հիշատակագիրը Միքայել երեցն է («Ես Միքայել երեցս գրեցի գլխատակարանս») (էջ 78), - պարզ ծանուցել է նա իր հիշատակարանում):

3. N 101. Մեկնութիւն շարքտասան թղթոցն Պօղոսի ձեռագրի կապակցութեամբ մի հսկայական ցանկ է մեջբերված.

Գրիչ՝ Թումա արքեպիսկոպոս, Սիոն

Ծաղկող՝ կազմող՝ Գրիգոր վարդապետ

Ստացող՝ Կարապետ վարդապետ

Ով է ստորև բերվող ա, բ, գ հիշատակարանների հեղինակը: Պարզվում է, որ միայն Սիոնը. «Ակիզբն Թումայ արքեպիսկոպոս արարեալ էր... եւ գայլն ես՝ անարժանս Սիոն աւարտեցի» (էջ 87):

Արդ, եթե որևէ մեկը ցանկանա մեջբերում կատարել այդ հիշատակարաններից, ինչպե՞ս վկայակոչի, ո՞ւմ անունը տա, վերոհիշյալ ամբողջ ցանկը մեջբերի... Այս շիլաշփոթի փոխարեն պետք է գրվեր միայն գրիչ՝ Սիոն. և այսքանը միանգամայն բավական կլիներ մատնանշելու, որ հիշատակարանների հեղինակը Սիոնն է, որ նա ձեռագրի գրիչն է (կարևոր չէ, որ՝ մի մասի) և ոչ ծաղկողը և այլն:

4. 137 համարի տակ կարդում ենք. Մեկնութիւն ԺԴ թղթոցն Պօղոսի

Գրիչ՝ Սարգիս Մոկացի, Բարսեղ վարդապետ, Դիլաք սարկավազ

Ծաղկող և կազմող՝ Գրիգոր

Ստացող՝ Բարսեղ վարդապետ

Ով է հիշատակագիրը: Այս հարցին որոշակի պատասխան կա հիշատակարանում. «Ես անարգս եւ անպիտանս յամենայնի ի գիրս գրչութեան Դիլաք սուտանուն սարկաւազս» (էջ 109): Ուստի վերոհիշյալ քառահարկ տվյալները ոչ միայն որևէ բան չեն ավելացնում ի նպաստ ուսումնասիրողի, այլ խանգարում են պարզ ու մեկեն գիտենալու, որ հիշատակագիրը Դիլաք սարկավազն է: Եվ այդ հինգ անունների փոխարեն կարելի էր նշել միայն նրա անունը, ահա այսպես. «Դիլաք՝ որդի Լուսիկի»:

5. Հեռու չգնանք, վերցնենք հաշորդ՝ 138 համարը (Գիրք հարցմանց Գր. Տաթևացույ):

Արի՛ իմացիր՝ ո՞վ է շատ արժեքավոր այդ հիշատակարանի հեղինակը:

Վ. Հակոբյանը գրում է

Գրիչ՝ Հակոբ, Գրիգորիս, Գիլաք

Ծաղկող՝ Մարտիրոս, Սարգիս Խիզանցիներ

Ստացող՝ Սարգիս կրոնավոր

Հասկանալի է, որ հիշատակարանները կոլեկտիվ ուժերով չեն ստեղծվում, և այդ գործը տվյալ դեպքում կատարել է վերոհիշյալ եղբայրական գերեզմանի մեջ մտած Մարտիրոս Խիզանցին, որը ոչ միայն ծաղկողն է, այլև մի մասի գրիչը: Իր կատարած գործի մասին նա գրել է. «Աջողմամբն Աստուծոյ աւարտեցաք եւ ծաղկեցաք, զարդարեցաք ոսկով եւ լազուարդով եւ երանգ երանգ դեղօք ես՝ մեղաւոր Մարտիրոս Հիզանցիս»:

Ձեռագրի ցուցակ կազմողն, անշուշտ, պետք է տեղեկություններ հաղորդեր մյուս գրիչների, ծաղկողների և պարագաների մասին, բայց հիշատակարաններ հրատարակողից պահանջվում է մաղել այդ բոլորը և գտնել, թե ով է տվյալ շարադրանքի իսկական հեղինակը:

6. Եվս մեկ օրինակ. N 224 միավորի (Ավետարան) կապակցությամբ գրված է.

Գրիչ՝ Հոհանես քահանա

Ծաղկող՝ Խաչատուր քահանա

Ստացող՝ Խոջա Աղաջան

Մինչդեռ շատ կարևոր այս հիշատակարանի հեղինակը Խաչատուրն է. գրչության վայրը նշված է Մոկք, Հիզան, բայց իրականում գրված է Հիզանում:

Ուրեմն պետք է գրված լիներ.

Ծաղկող՝ Խաչատուր

Վայր՝ Հիզան

7. N 254. Հայսմավուրք

Գրիչ՝ Սարգիս, Հովանես, Կիրակոս Հիզանցիներ

Ստացող՝ մելիք Սարգիս

Խիստ արժեքավոր պատմական բովանդակությամբ այս հիշատակարանը շարադրել է Սարգիս Հիզանցին. մյուսների անուններն ավելորդ են:

8. N 439. Ավետարան

Գրիչ՝ Միքայել

Ծաղկող՝ Ղազար քահանա

Ստացող՝ Մինաս Քեոզուպուսեցի

Իրականում հիշատակագիրը գրիչ Ղազարն է. «Յիշեցէք... զՂազար գրիչս, որ լոկ անուամբ եմ կոչեցեալ քահանայ»:

9. N 468. Ավետարան

Գրիչ՝ Հակոբ Երեց

Ստացող, նվիրատուն՝ Խոջա Ավետիք

Զորս հիշատակարաններից բաղկացած այս միավորի ամենակարևոր հատվածը Գ-ն է, որ մի շափածո է գրված Հովհաննես Երզնկացու «Զարթի՛ր ի քնոյ մեղաց»-ի նմանողությամբ: Ծայրակապով (ակրոստիքոսով) հոգվում է հեղինակի անունը՝ Ավետիք, բայց նրա անունը բնավ չի հիշված:

10. N 549. Կանոնագիրք

Այս համարի տակ բերված է Զալալիների շարժման ամենահարուստ սկզբնաղբյուրներից մեկը՝ Ազարիա Սասնեցու շափածո հիշատակարանը (էջ 437-450), նրա անունը ոչ մի տեղ չի նշված:

11. N 550. Կանոնագիրք

Ամբողջ հիշատակարանը գրված է Հակոբ Քեոթահիացի եպիսկոպոսի կողմից, որն իր անունից (առաջին դեմքով) պատմում է իր կենսագրությունը և այլն. մինչդեռ որպես հեղինակ նշված է գրիչ Ասլանի անունը:

12. N 729. Վարք Հարանց

Գրիչ՝ տեր Մինաս, Մելքոն դպիր

Ծաղկող՝ Հովանես

Ստացող՝ Մինաս Կարնեցի

Արդ, ո՞վ է ընդարձակ հիշատակարանի հեղինակը: Անշուշտ Հովհաննեսը, որը գրել է. «...ես անարժան Յովանէս գրիչս ոչ համարձակեցայ ձեռնամուխ լինել...» և այլն: Պատմում է, որ հանձն առնելուց հետո գրչության գործը հանձնարարել է իր աշակերտներին՝ Մինասին և Մելքոնին, և այլն:

Պարզ չէ՞ միթե, որ հիշատակարանի հեղինակը հենց Հովհաննեսն է:

13. N 808. Գիրք պատճառաց

Գրիչ՝ Վարդան Հիզանցի

Ստացող՝ Բարսեղ վարդապետ

Մինչդեռ ա. հիշատակարանի հեղինակն է Հոհան Բաղիշեցին, որ բնավ չի հիշված:

14. N 844. Ավետարան

Գրիչ՝ Մելքոն դպիր

Ծաղկող՝ Հովանես, տեր Մինաս

Ստացող, նուիրատուն՝ Խոջա Պողոս

Այս շորս անձնավորություններից Հովանեսն է հիշատակագիրը. «Որ եւ ես մեղապարտ Յովանէս գրիչս ուսուցանող նորին՝ ծաղկեցաք...», - գրել է նա իր մասին: Շարունակենք այս թվարկումն ավելի արագ և այլևս թվահամարի տակ շառնելով:

N 220. Ավետարան

Գրված է՝ հետ. ստացող նվիրատուն՝ Սեթ:

Պետք է լինի՝ Գրիգոր Դարանաղեցի:

N 246. Գիրք Առաքինության

Գրված է՝ Գեր. ազատող՝ խոջա Սավար:

Պետք է լինի՝ Հովանես երեց Գահլվեցի:

(«Գրեցաւ սակաւ յիշատակարանս գրոցս ձեռամբ խոցիւ խոցեալ անարժան Յովանէս իրիցու, որ եմ յերկրէն Ղարբերդու, ի գեղջէն Գահլուայ», էջ 197):

N 265. Ժողովածու

Ձի նշված՝ ո՛վ է հիշատակարանի հեղինակը. մինչդեռ պարզ է, որ այդ ժողովածուի մեջ եղող «Ողբերգական բանք»-երի հեղինակ Գրիգոր Կեսարացին է (նշանավոր անձ):

N 268. Ավետարան

Գրված է՝ Հետ. ստացող, նվիրատուն՝ Սմբատ:

Պետք է լինի՝ հիշատակագիր Հովհաննես վարդապետ:

(վայրը չի նշված, մինչդեռ հայտնի է՝ Վան)

N 281. Ավետարան

Գրված է՝ Հետ. ստացող՝ խոջա Աղաջան:

Պետք է լինի՝ Շաղավաթ, որդի խոջա Խղաթի, վանեցի:

N 320. Ավետարան

Գրված է՝ Հետ. ստացող՝ Միրի Քուման:

Պետք է լինի. Հիշատակագիր՝ Քրիստոսատուր երեց:

N 415. Ժողովածու

Մեջբերված է Դավիթ Այթնուցու չափածո տոմարի հեղինակային հիշատակարանը, ուստի նախ՝ վերնագիրը «Ժողովածու» չպիտի դրվեր, և ապա՝ պետք է նշվեր՝ հեղինակ՝ Դավիթ Այթնուցի:

N 768. Ավետարան

Գրված է՝ Հետ. ստացող՝ Մուրատբեկ:

Պետք է լինի. Հիշատակագիր՝ Ասատուր:

N 774. Ավետարան

Գրված է՝ Հետ. ստացող՝ Մինաս:

Պետք է լինի՝ **Ովանես** («ես ճանոցի փեսայ Ովանէս գրեցի զայս գիրս»):

N 799. Ավետարան

Հիշատակարանի հեղինակի մասին բան չի ասված, մինչդեռ պարզ գրված է. «Գրեցաւ սակաւ յիշատակս... ձեռամբ Զաքարայ Վանեցոյ իրիցու»:

N 932. Ավետարան

Գրված է՝ Հետ. ստացող՝ **Մահտեսի Յայլա**:

Պետք է լինի. Հիշատակագիր՝ **Սիմեոն (վայր՝ Ախրլցխա)**:

Օրինակները կարելի է դյուրութեամբ կրկնապատկել:

Այս հատվածը պետք է ամփոփել այսպես. ժողովածուից օգտվողը գրված է իրեն անհրաժեշտ հիշատակարանը վկայակոչելիս շարադրողի անունը նշելու հնարավորությունից, որովհետև կազմողը 3-4-5 անուն է շարել իրար ետևից (հիշատակելով բոլոր գրիչներին, ծաղկողներին, ստացողին և այլն) մի բան, որ ոչ մի օգուտ չի բերում, և ընդհակառակը՝ զլացել է ցույց տալ, թե ով է տվյալ հիշատակարանի շարադրողը:

Սրա հետ միասին, բազմիցս ճիշտ չի որոշել հիշատակարանի հեղինակի անունը և դրան հատկացված տողի վրա հիշատակագրի փոխարեն գրել է ձեռագրի հետ առնչվող այլ մարդկանց անուններ:

Այս հարցի հետ սերտ աղերսվում է մի շարք հիշատակագրություններ ունեցող միավորի առանձին մասերի դասդասման և յուրաքանչյուրի հեղինակի հիշատակման կարևորագույն հարցը, որին անդրադառնում ենք հաջորդ բաժնում:

ՆՅՈՒԹԵՐԻ ԴԱՍԴԱՍՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Ձեռագրերի մեծամասնության մեջ գրչության հանգամանքների մասին, ընդարձակ հիշատակարանից բացի (որ սովորաբար դրվում է վերջում), տարբեր գլուխների ավարտին կամ լուսանցքների վրա ու տողատակերին գրչի, ծաղկողի, ստացողների և այլ անձնավորությունների կողմից գրված են լինում մեծ ու փոքր հիշատակագրություններ:

Արդ, ի՞նչ հերթականությամբ պետք է դասդասվեն հիշատակարաններն ու հիշատակագրությունները: Հիշատակարանների ժողովածու կազմողի համար այս հարցն, անշուշտ, կարևոր է:

Մենք վարվել ենք այսպես. նախ դրել ենք գլխավոր հիշատակարանը, ապա՝ նույն այդ հիշատակարանի հեղինակի (գրիչ, ծաղկող և այլն) մյուս հիշատակագրությունները, դրանից հետո՝ ուրիշ անձանց հիշատակագրու-

թյունները: Ըստ որում, ամեն մի հիշատակագրություն վերին աջ կողմում նշել ենք նրա հեղինակի անունը և գրչության վայրը, եթե, իհարկե, ուրիշ մեկն է այդ հիշատակարանի շարադրողը:

Վ. Հակոբյանն այդպես չի վարվել: Ճիշտ է, գլխավոր հիշատակարանը մեծ մասամբ տպագրել է առաջին տեղում, սակայն հաջորդ հիշատակագրությունները շարադասել է ոչ ըստ հեղինակների, այլ ձեռագրի մեջ նրանց գրաված տեղի (ըստ էջերի հերթականության): Եվ բնավ անհրաժեշտություն չի գգացել ցույց տալու դրանց հեղինակներին: Այսպիսով, ընթերցողն ինքն է որոշելու, թե ով է իրեն հետաքրքրող այս կամ այն հիշատակագրությունը շարադրել՝ արդյոք գլխավոր հիշատակարանի հեղինակը, թե՞ մի այլ անձնավորություն:

Այսպես օրինակ՝ N 3 միավորի («Ընդհանրական թուղթ») Ա և Բ հիշատակարանների հեղինակն Ավետիս կաթողիկոսն է, մինչդեռ Գ-ը գրել է Աստվածատուր Ամասիացին, բայց այդ մասին նշում չկա: N 24 -ի Ա և Գ հիշատակարանները գրիչ Կարապետինն են, բայց Բ -ի հեղինակը Փիլիպոս ծաղկողն է: N 64 միավորի 4 հիշատակարաններն էլ վերագրված են գրիչ Մատթեոս աբեղային, մինչդեռ Բ-ը շարադրված է Իփակ ստացողի կողմից կամ նրա անունից: N 65 -ը բաղկացած է 3 միավորից, որոնք բոլորն էլ վերագրված են Թորոս դպրին, մինչդեռ Բ -ը գրել է ոմն Աստվածատուր, իսկ Գ -ն՝ անծանոթ մեկը: N 70-ի 3 հիշատակարանն էլ վերագրված են գրիչ Բարսեղ Վարապեցուն, սակայն առաջինը շարադրել է Ավետիս Մոկացին, երկրորդը՝ այդ Բարսեղը, իսկ երրորդը չի իմացվում, թե դրանցից որ մեկը: N 105-ը 8 միավորից է բաղկացած: Ընթերցողին է թողնված որոշել դրանց հեղինակներին: Պարզվում է, որ Ա-ը վաճառող Մարտիրոս Վանեցու հիշատակարանն է, Բ-ը՝ ծաղկող Զաքարիա Ավանցունը, Գ-ը, ըստ երևույթին, ստացող պ. Հովհաննեսինը, Դ-ը՝ համաբարբառի գրիչ Հովհաննես աբեղայինը, Ե-ը՝ գրիչ Կարապետինը, հաջորդ 3-ը՝ հավանաբար նույն գրչինը: Հասկանալի է, որ մենք հնարավորություն չունենք ստույգ որոշելու այս հարցը, քանի որ հիշատակարանների գրչության տառաձևերի և հնագրական այլ առանձնահատկությունների մասին տվյալները ձեռագրի մեջ են, իսկ ձեռագրի մանրակրկիտ ուսումնասիրությունն այս առումով ժողովածուի կազմողի առաջնահերթ պարտականություններից մեկն է:

180-րդ համարի տակ բերված է ութ հիշատակարան-հիշատակագրություն: Գլխավորը վերջինն է, ուստի պետք է հրատարակվեր նախ այդ միավորը, ապա մյուսները, որոնք մի քանի տողանոց մանր գրություններ են:

N 208 բաղկացած է 11 միավորից, սրանցից 8-րդը կալվածագիր է (ճիշտ կլիներ չհրատարակել), մյուսները գրված են Կիրակոս ծաղկողի, Ստեփանոս երեցի, Ներսես Մոկացու, ուստա Վարդանի և գուցե ուրիշների կողմից, բայց շարադասված են ըստ էջերի հերթականության:

N 457-ի 5 միավորներից Ա, Գ, Ե-ը պատկանում են նորոգող Ստեփանոսին, իսկ Բ, Դ-ը՝ ոմն Հովհաննեսի, մինչդեռ դրանք, ըստ էջերի հերթականության դասդասված լինելով, ազուցվել են մեկը մյուսի արանքում:

N 875-ի տակ բերված են 5 հիշատակարաններ, որոնք, ըստ հրատարակողի, պատկանում են նորոգող-ծաղկող Խաչատուրին և հետ. ստացող Գրիգորին: Պարզվում է, սակայն, որ վերջինս (Գրիգորը) ոչ մի հիշատակարան չունի: Խաչատուրը շարագրել է միայն Ա և Բ միավորները, Գ-ը պատկանում է նորոգել տվող Մանուկին, Ե-ը՝ կազմող Թորոսին, իսկ Դ-ը մնում է անորոշ:

Ահա այսպես, խառնաշփոթ ձևով է դասդասվել մեկ միավորի տակ համախմբված հիշատակարան-հիշատակագրությունների մեծագույն մասը (հմմտ. նաև NN 459, 807 և այլն և այլն): Զի բացահայտված յուրաքանչյուրի հեղինակը, չեն համախմբված տվյալ անձնավորության կողմից շարագրված հիշատակագրություններն իրար կից: Դասդասման ելակետը եղել է ամեն մի ենթամիավորի գրված տեղը ձեռագրի մեջ (ըստ էջերի հերթականության)՝ մի հանգամանք, որ ոչ մի առնչություն չունի այդ միավորների բովանդակության, գրության հանգամանքների կամ հեղինակային պատկանելության հետ:

Հասկանալի է ուրեմն, որ ժէ դարի հիշատակարանների հետագա հատորները հրատարակության պատրաստելիս պետք է վերանայվեն նաև նյութի մատուցման հետ առնչվող այս հարցերը:

ԳՐՉՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ

Պատմա-բանասիրական աշխատությունների մեջ, ինչպես հայտնի է, անցուղարձերի հաջորդականությանն ու ժամանակագրությանը համահավասար, ջանքեր են թափվում պարզելու, թե աշխարհագրական ինչ միջավայրում, որ նահանգում, գավառում կամ մեծ ու փոքր բնակավայրում է տեղի ունեցել այս կամ այն եղելությունը՝ լինի այն աշխարհացունց մի իրադարձություն կամ տեղական նշանակություն ունեցող մի դեպք: Հաշվի առնելով ահա այս հանգամանքը՝ ամեն մի աղբյուրագետ իր կողմից հրատարակության պատրաստվող սկզբնաղբյուրի գիտական մշակման ընթացքում պարտավոր է առավելագույնս օգտագործել առկա տվյալներն ու ակ-

նարկները՝ պարզելու համար, թե որտեղ է շարադրված այն: Այս առումով շատ ավելի ուշադիր պետք է լինի ձեռագրական հիշատակարաններ հրատարակող բանասերը, քանի որ հայ միջնադարյան մշակույթի տարբեր բնագավառների ուսումնասիրողի համար հաճախ մեծ կարևորություն ունի այս կամ այն հիշատակարանի կամ հիշատակագրության շարադրման վայրի ճիշտ որոշումն ու մատնանշումը:

Մեր հրատարակած հիշատակարանների ժողովածուներում ամեն մի հիշատակարանի հեղինակի մասին նշում կատարելուց հետո, հաջորդ տողով, մատնացույց ենք արել գրչության վայրը, իսկ տեղանունների ցանկում ըստ հնարավորության փորձել ենք որոշել նաև քիչ հայտնի բնակավայրերի ու վանքերի վայրը՝ պատմական Հայաստանի ո՞ր նահանգում են գտնվել և այլն:

Ձի կարելի ասել, թե քննարկվող հատորի հեղինակն անտեսել է հիշատակարանների շարադրման վայրի մասին տեղեկությունները: Նա ևս, հետևելով նախկինում հրատարակված հատորներին, համապատասխան տողի վրա վաչք հարցին պատասխանել է՝ նշելով այս կամ այն հիշատակարանի գրչության վայրի անունը:

Այսպես օրինակ՝

Վայր՝ Կ. Պոլիս (N 2)

Վայր՝ Ենկյուրիա (N 4)

Վայր՝ Կաֆա (N 5) և այլն:

Բայց, ցավոք, այդպես արել է քմահաճորեն, կարծես ըստ տրամադրության: Շատ հաճախ հիշատակարաններում գրչության վայրի մասին կան որոշակի տվյալներ, որոնք բոլորովին հաշվի չեն առնված, իսկ որոշ դեպքերում էլ կան ուշագրավ ակնարկներ, որոնց հիման վրա կարելի էր բանասիրական աշխատանք կատարել ու երևան բերել վայրի անունը, բայց այս հնարավորություններն էլ չեն օգտագործված:

Ստորև տալիս ենք մի ընդարձակ ցանկ այն միավորների, որոնց գրչության վայրը քննարկվող հատորում չի նշված, բայց առանց մեծ ջանքերի պարզել ենք մենք: Հենց սկզբից ասենք, որ ցանկը դյուրությամբ կարելի էր ընդարձակել (ավելի պարզ լինելու համար՝ յուրաքանչյուր համարից հետո պետք է տալինք այսպիսի կամ նման մի բացատրություն. «Գրչության վայրը չի նշված, բայց հայտնի է, որ գրված է այսինչ վայրում»): կրկնություններից խուսափելու մտահոգությամբ՝ այդ բանաձևից հրաժարվում ենք ու հիշատակարանի հերթական համարին առընթեր, անմիջապես, նշանակում մեր կողմից պարզված վայրի անունը):

- N 65 – Ղրիմ
 N 97 – Եղեգիս
 N 118 – հավանաբար՝ Երևան
 N 265 – Կեսարիա
 N 268 – Վան
 N 271 – Խարբերդի շրջան
 N 272 – Սալմաստի Մալհամ գյուղ
 N 355 – Ատրենիս գյուղ
 N 370 – Կաֆա
 N 389 – Թոխաթի շրջան
 N 434 – Երուսաղեմ
 N 443 – Հալեպ
 N 456 – Գորի
 N 465 – Կալիպոլի
 N 487 – Երուսաղեմ
 N 489 – Երուսաղեմ
 N 502 – Կեսարիա
 N 594 – Տրապիզոն
 N 687 – Մշո Առաքելոց վանք
 N 688 – Ամրդոլու վանք
 N 699 – Տաթև
 N 704 – Ղարաշալու գյուղ
 N 714 – Տաթև
 N 720 – Լեհաստան
 N 722 – Ղրիմի Ս. Նշանի վանք
 N 724 – Սեբաստիա
 N 725 – Զեյթուն
 N 731 – Արտաշիպ գյուղ
 N 739 – Համիթ
 N 762 – Նարեկա վանք
 N 774 – Արագածոտնի Շիրիդալա գյուղ
 N 778 – Մշո Առաքելոց վանք
 N 779 – Հալեպ
 N 804 – Վրաստան
 N 821 – Գանձակի շրջան՝ Համասրաբակ գյուղ
 N 824 – Շնագ գյուղ
 N 893 – Երուսաղեմ
 N 927 – Երուսաղեմ
 N 932 – Ախալցխա
 N 944բ – Զնուկ գյուղ
 N 1004դ – Գավառ (Նոր Բայազետ)
 N 1016 – Հալեպ
 N 1026 – Սեբաստիա

Այսպիսով, հիշատակարանների մի զգալի մասն առանց գրչության վայրի է ներկայացվել ոչ թե այն պատճառով, որ այդ մասին տվյալներ ու ակնարկներ չեն գրանցել իրենք՝ հիշատակագիրները, այլ որովհետև առկա տվյալները զլացել է բացահայտել ու ներկայացնել ժողովածուի հրատարակիչը: Այս թերությունը հիմնականն է քննարկվող հարցի կապակցությամբ, բայց ոչ միակը:

Քիչ հայտնի կամ բոլորովին անհայտ տեղանունները հաճախ նշվում են այնպես, որ ընթերցողի համար պարզ չի լինում, թե որտեղ են գտնվում դրանք: Օրինակ՝ որպես N 31 հիշատակարանի վայր նշված է Քարթման տեղանունը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե խոսքը Արցախի Գարդման գավառի մասին է, մինչդեռ հենց հիշատակարանում ասված է, որ այդ մի գյուղ է Սպահանի շրջանում: Ըստ այդմ, պետք է գրվեր՝ վայր՝ Սպահանի շրջան, Քարթման գյուղ:

N 66 – գրված է Խաչու, ճիշտ կլիներ՝ յերկիրն Բասենու ի գիւղ Խաչու

N 72 – գրված է Հիլի՝ յերկիրն Ոստան, ի գիւղն Հիլի

N 78 – Խառց՝ յերկիրս Նախուանայ, ի գիւղս Խառցն

N 100 – Խուփ՝ Վասպուրական, ի գիւղս Խուփ

N 111 – Արիտօստ՝ յերկիրն Կարուց, ի գիւղն Արիտօստ

N 129 – Սէպ՝ յերկիրս Մոկաց, ի գիւղս Սէպ

N 737 (և բազմաթիվ այլ հիշատակարաններ) – գրչության վայր նշանակված է «Դաշտ», բայց չի ասված, թե նույն անունը կրող 3 վայրերից (Գողթան Դաշտ, Մոկաց Դաշտ, Սպահանի Դաշտ թաղամաս) որն է:

Նման օրինակների թիվը տասնյակներով կարելի է հաշվել:

Անորոշության ու սխալների տեղիք են տալիս նաև կրկնակ տեղանունները, որ հաճախ նշված են Վաչր հարցին առընթեր: *N 138* միավորի գրչության վայրերն, ըստ հրատարակչի, երկուսն են՝ Սեբաստիա և Խիզան: Պարզվում է, որ Հակոբ անունով մի գրիչ ձեռագրի ընդօրինակությունն իրոք սկսում է Սեբաստիա քաղաքում, բայց առուփախից հետո կիսակատար ձեռագիրը բերվել է Խիզան և ավարտվել ու ծաղկվել այնտեղ: Խիզանում էլ գրվել է հիշատակարանը:

Ճիշտ այսպես, ոչ թե Խիզանում և Վանում, այլ միայն Վանում է շարադրվել *N 254* հիշատակարանը. ոչ թե Սեբաստիայում և Ռումինիայի Եաշ քաղաքում, այլ միայն Եաշում է շարադրվել *N 349* հիշատակարանը և այլն և այլն: Հրատարակիչը երկուսական անուններ է մեջբերում դարձյալ շփոթելով իր առջև գրված խնդիրը, տվյալ ժողովածուն ձեռագրաց ցուցակ չէ, այլ հիշատակարանների ժողովածու, իսկ ամեն մի հիշատակարանի ընթերցող պետք է տեղյակ լինի, թե որտեղ է շարադրված տվյալ հիշատակարան-միավորը, իսկ թե ինչ ուրիշ վայրեր են տարբեր առիթներով հիշված այդ հիշատակարանում, այդ մասին տվյալներն իրենց համապատասխան տեղն են գտնելու տեղանունների ցանկի մեջ և ո՛չ հիշատակարանին կից:

Մի երկու օրինակով ցույց տանք, որ ժողովածուի մեջ կան նաև գրչության վայրի սխալ նշումներ: *N 81* միավորը գրված է ոչ թե Բոլենցում (այդպես է ծանուցում հրատարակիչը), այլ Շատախի Ակեո վանքում («Աւետարանն ի Մոկս գրեցի՝ ի Բոլենց, ի դուռն Ս. Գէորգայ, եւ յիշատակարանս՝ ի Շատախ, ի յԱկեոյ վանք», էջ 71): *N 244*-ը Զգիրեում է շարադրված և ո՛չ Արտամետում, *N 492*-ը՝ Բարիձորի վանքում և ո՛չ Պոռ գյուղում և այլն և այլն:

Գրչության վայրի և ընդհանրապես տեղանունների բացահայտման, նշման և ծանոթագրման հարցերին մենք դեռ անդրադառնալու ենք ստորև,

երբ հերթը կհասնի տեղանունների ցանկի բնույթին և նրա մեջ տեղ գտած անճշտություններին ու թերություններին:

Այժմ տեսնենք, թե ինչպես է իրագործված բուն նյութի, այսինքն՝ հիշատակարանների վերծանությունը:

ԲՆԱԳՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹԻՒՆԸ

Ժողովածուի կազմողները (և՛ հանգուցյալ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, և՛ գիտությունների դոկտոր Վազգեն Հակոբյանը), փորձառու և հմուտ աղբյուրագետ-բանասերներ լինելով, ինչպես և սպասելի էր, հիշատակարանների մեծ մասը հաջողությամբ են վերծանել ու հրատարակել: Բայց այս բնագավառում ևս կան թերություններ, որոնց բացահայտումը, հուսով ենք, նպաստելու է հաջորդ հատորների կատարելությանը: Մեր կողմից նշված թերությունները վերաբերում են և՛ վերծանությանը, և՛ կետագրությանը, և՛ սրբագրության ու շտկման ձևերին, և՛ բնագրի մշակման այլ կողմերին: Ուստի որոշ հերթականությամբ ստորև անդրադառնալու ենք դրանց՝ հարյուրավոր օրինակներից մեջբերելով միայն մի քանի բնորոշները:

Որևէ նոր սկզբնաղբյուր հրատարակողից ընթերցողները պահանջում են նախ և առաջ այնպես վերծանել բնագիրը, որ ճիշտ արտացոլվի հեղինակի շարադրանքը՝ արդի աղբյուրագիտության ընձեռած հնարավորություններով (գիտական կետագրություն, առանձին բառերի ու տառերի ընդգծումներ, փակագծեր, շակերտներ, ծանոթագրություններ և այլն) պարզաբանելով մոլթ տեղիները, շտկելով ու մատնացույց անելով սխալներն ու վրիպակները և այլն:

Արդ, որքանո՞վ է հաջողվել սույն հատորի հրատարակչին բարձր մակարդակով լուծել վերոհիշյալ խնդիրները:

Հիշատակարանների մի զգալի մասի նկատմամբ անկարող պետք է լինենք այս հարցին դրական պատասխան տալ: Նախ ծանոթանանք որոշ օրինակների (Թվարկումը կատարում ենք ըստ հիշատակարանների տարեթվերի):

1. Ոմն Աթաճան մասնակցել է մի Ավետարանի ձեռքբերմանը, ինչպես ինքն է ասում, «ի հալալ վաստակոց իմոց (տպ. իմոյ)» տալով անհասկանալի մի բան՝ վարթեզն (էջ 64): Խնչ է նշանակում վարթեզ (պարտե՞զ, թե՞ մի այլ բան). հրատարակիչը ո՛չ ծանոթագրում է, ո՛չ հարցական նշանով տեղեկացնում, որ իր համար նույնպես նախադասության իմաստն անհասկանալի է: Մինչդեռ ուշադիր լինելու դեպքում դյուրությամբ այդ շինծու բառը կա-

րելի է տարալուծել վարք և եզ մասերի: Կստացվեր, որ Աթալայանն իր Վարթ անունով եզն է տվել Ավետարանի դիմաց:

2. N 164 հիշատակարանում կարդում ենք. «Գենջոյ ղուլն երես Թէռէ-տաման խիստ կոտորեց» (էջ 133): Արդ, ի՞նչ է արել Գանձակի ղուլը (= մամլուկը). Թեռետամանը, որ տպագրված է շղագիր ու մեծատառով որպես տեղանուն, որտե՞ղ է գտնվում և ի՞նչ է նշանակում և այլն: Ընթերցողն անկարող է լուծել այս հարցերը, որովհետև վերծանությունը ճիշտ չի կատարված. հավանաբար ձեռագրում եղել է այսպէս. «Գենջոյ ղուլն երեկ (այսինքն՝ եկավ և ոչ երես-տվեց) Թէռէտաման խիստ կոտորեց»: Այս մասին տեղեկություններ կան նաև N 166 հիշատակարանում, ուր ասված է. «Գանձայու ղուլն Բ անգամ գնաց ի երկիրն Գեղամայ, բազում գերիս գերեաց...» և այլն (էջ 134): Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ Թեռետ վայրը Գեղամա երկրում է գտնվել և այլն:

3. N 169 հիշատակարանում ուրիշների հետ միասին հիշատակվում են նաև Խուս Մկրտիչ և Բնա Բուշարաթ անունով անձնավորություններ: Եվ որովհետև Խուս և Բնայ բառերը տպագրված են շղագրով ու գլխագրով, ուստի համարվել են անձնանվան մասեր, մինչդեռ Խուս Վասպուրականի գավառաբարբառներում նշանակում է հյուան, իսկ Բնայ – բաննահ՛ սրանք այդ անձանց արհեստի անուններն են, ուստի պիտի տեղ գտնեին նաև առարկայական ցանկի «Արհեստներ» բաժնում (էջ 825):

4. Ոմն Նիկողոս 1606 թ. ստանում է Կեղծ Կալիսթենեսի «Պատմութիւն Աղեքսանդր Մակեդոնացու» երկի մի օրինակ և գրում, որ ձեռք է բերել «այս Աղեկսա(ն)տրս մեղաւոր եւ անարժան եթեսայցի Նիկողոս...»: Աղեքսանդր անունը շղագրով տպագրելով՝ հրատարակիչն այն ընկալել է որպես հիշատակարանում նշված անձնանուններից մեկը:

5. Կոստանդնուպոլսի հայաբնակ հնագույն արվարձաններից է Սուլու Մանասոր կոչվածը: Տարբեր հիշատակարաններում հրատարակիչն այդ տեղանունը ներկայացնում է Սուլու Մանասար (էջ 311), Սուլու Մանասիր (էջ 350, 400) ձևերով և ոչ մի անգամ ճիշտ: N 227 ձեռագիրն ընդօրինակված «ի քաղաքն Իստամպուլ, ի վանքն /// տիր» (տիր տառերից առաջ չի ընթերցվել). դժվար չէ լրացնել այդ բառը [Սուլու Մանաս]տիր ձևով:

6. N 405 հիշատակարանը շարադրված է Խիզան քաղաքում՝ «ի թագաւորու /// ապասին»: Հրատարակիչը բացակայող տառերը լրացնում է առանց որևէ հիմքի և պատմական տվյալների. «ի թագաւորու/թեան շահ/Ապա/զ/ին (էջ 327) հաշվի շառնելով, որ Խիզանը երբեք չի եղել Սեֆյանների տիրապետության տակ:

7. Դավիթ Զեյթունցին գրել է չափածո տունար՝ իր կատարած աշխատանքի մասին ասելով.

Յիմար Դավիթս Զեյթունցի

Զսակաւ տունարս խոտ հանի... (էջ 333)

Խոտ բառի առաջին տառը շղագիր տալով հրատարակիչը հուշում է, որ այստեղ ինչ-որ սխալ կա, բայց ի՞նչ: Շարքային ընթերցողն ինչպե՞ս լուծի այս հանելուկը: Դրա համար պետք է նայվեին Զեյթունցու տունարի՝ Մատենադարանում պահվող մյուս ձեռագրերը. թերևս նրանց մեջ գտնվեր անաղարտ որևէ օրինակ: Բայց առանց դրա էլ կարելի էր այս տարօրինակ խոտ-ի իս-ն սրբագրել ի և կարդալ.

«Զսակաւ տունարս ի ուս հանի», այսինքն՝ ուսանավորով շարադրեցի»:

8. Մոկսի եկեղեցիներից մեկը կոչվել է երեքխորան: N 676 հիշատակարանում ասված է, որ մահմեդականները «քակեցին զերեք խորան» (էջ 529), և որովհետև մեծատառով չի տրված, թվում է, թե երեք տարբեր եկեղեցիների ավերման մասին է խոսքը: Մոկսում գրված մի այլ հիշատակարանի մեջ (N 764) ասված է, որ Ավետարանի ընդօրինակությունը կատարված է «ընդ հովանեաւ հանդար(տ)եալ երեք խորանիս» (էջ 577): Իհարկե սխալ է վերծանված. պետք է լինի ոչ թե հանդարտյալ, այլ հանգարտյալ, խանգարտյալ (Մոկացու համար իս-ի և հ-ի շփոթությունը սովորական է), որ նշանակում է «աւերուած, տակնուվրայ արուած»:

9. Լվովցի Սարգիս գրիչն ասում է, որ ձեռագրի ընդօրինակությունը կատարել է «ձերացեալ անձամբ Ին (25) ամեայ գոլով» (N 801, էջ 599): Պարզ է, որ հիշատակարանի առաջին հրատարակիչները տասնավոր թիվը ճիշտ չեն վերծանել, և, նկատի ունենալով, որ բոլորագիր ի և հ տառերը շատ նման են միմյանց, թիվը թյուր սրբագրվեր (եթե ոչ բնագրում, ապա սողատակում ծանոթագրության մեջ)՝ Հն (75):

10. N 953ե հիշատակագրության մեջ կարդում ենք այսպիսի բառեր. «Այս բանս Զատիկ շաբաթ օր դէք (sic) ժամի դահն աւարտ եղեւ»: Հրատարակիչը դէք բառի կողքին sic նշանակելով ծանուցում է, որ ձեռագրում այսպես է, բայց իր համար անհասկանալի է:

Sic լատիներեն նշանակում է «այսպես»: Իսկ ինչո՞ւ լատիներեն բառն օգտագործել և ո՞չ հայերենը, կամ ինչո՞ւ հայերեն հարցական նշանի փոխարեն հաճախ դնել լատինական ? նշանը՝ մեզ համար անհասկանալի է մնում: Միով բանիվ, այդ sic-ն այստեղ միանգամայն անտեղի է, որովհետև դէք նշանակում է Դ-եք, այսինքն՝ շաբաթ («Զատիկ օր շաբաթ ժամի դահն աւարտ եղեւ»):

Նման կարգի բազմաթիվ SiC-երից ծանոթանանք ևս մեկին:

Ամիր-Սարգիս գրիչը 1601 թ. ընդօրինակած իր ձեռագրի հիշատակագրություններից մեկում գրում է. «Վայ ճպտկ (SiC) Ամիր Սարգիս դպիր գրչիս» (էջ 38): Մի՞թե ձեռագրագիտական մեծ փորձ էր պետք՝ հասկանալու համար, որ ճպտկ-ը հարյուրապատիկ բառի ամենասովորական համառոտությունն է, ուստի որևէ SiC-ի կարիք չի զգացվում նաև այս դեպքում:

11. Հայերեն ունենք շատ նույնանիշ բառեր, որոնցից են նաև սէր (զգացմունք, գրվում է է-ով) և սեւ (կաթի սերուցք, գրվում է եչ-ով):

Ավետիս Մոկացի գրիչը N 70 հիշատակագրություններից երրորդում երկու անգամ, չափածո խոսքերով շնորհակալություն է հայտնում Բարսեղ վարդապետին (կամ մեկ ուրիշի՝ պարզ չի իմացվում) այն բանի համար, որ իր աշխատանքի ընթացքում իրեն սեւ են տվել՝ ասելով մեղրով խառնեա ու կեւ, և այլն:

Գրագետ գրիչը շատ լավ իմացել է, որ կաթնասեր սերը եչ-ով է գրվում, այդպես էլ գրել է, բայց մեր հրատարակիչը, դա տառասխալ համարելով, երկու անգամ էլ սեւ բառի և տառը ներկայացրել է շղագրով՝ կարծելով, թե մատնացույց է անում գրչի «սխալը», բայց իրականում՝ ինքն ընկնելով սխալի մեջ:

12. Աղթամարի Գրիգոր Փոքր կաթողիկոսը, երուսաղեմից վերադառնալով հայրենիք, Վասպուրականի նշանավոր վանքերի համար նվերներ է բերել. «...քիմիայ վարակուռ մի Ս. Ստեփանոսին, վեց ժամու գտակ պատկերով արծաթի առաքելոցն, երեք ժամու շապիկ...» և այլն (էջ 62):

Առաջելոց բառն այստեղ, ըստ երևույթին շաղկապված լինելով ժամու գտակների պատկերների հետ, տրված է փոքրատառով, որով և Առաքելոց վանքն առանց նվերների է մնացել:

13. Ոսկան անունով մի տանուտեր իր Փաշա տիկնոջ հետ միասին, անզավակ լինելով, գրել է տվել մի Ավետարան իր հիշատակը հավերժացնելու համար: Հիշատակարանում կարդում ենք այսպիսի անիմաստ տառակապակցություններ. «որդի Ա, փափաքայ զծիւ ? գրել տուին սբ. Աւետարան» (հարցականը հրատարակչինն է): Պա՞րզ չէ մի՞թե, որ ձեռագրում գրված է եղել «որդի փափաք ըղծիւ» (էջ 64):

Մեկ ուրիշը՝ Մելքեսեթ Սեբաստացի, գերությունից ազատել է մի նարեկ. «իմ տեսեալ զայս մատեանս ի ձեռս հենից ասպատակողաց եւ փաղաքշանաւք ժտեցայ մինչ զի կամք արարին տալին զսայ» (էջ 132). նախորդի պես անիմաստ տառախումբ, որ կարելի էր վերծանել տալ ինձ սայ ձևով:

14. Ձեռագրագետ-բանասերների առջև հաճախ ծառանում են նաև բառանշատման դժվարություններ, որոնք, սակայն, լուծվում են անձնական փորձով և արդեն կատարված հայագիտական աշխատանքների օրինակով: Միջնագրայան բնագրերի հետ գործ ունեցող բանասերների համար այսօր արդեն պարզ հայտնի է, որ իլի (լիքը) բառը, որ շատ հաճախ է հանդիպում հիշատակարաններում («մեղօք իլի»), պետք է գրել որպես մեկ բառ և ոչ ի լի անշատ ձևով: Հատորում, սակայն, հավասար չափով գործածված ենք գտնում այս երկու ձևերն էլ. ըստ երևույթին հրատարակիչը հետևել է ձեռագրի գրիչներին՝ չունենալով որոշակի տեսակետ:

Ոմն Բարսեղ վարդապետ Համիթ քաղաքում ընդօրինակել է Գր. Տաթևացու «Գիրք հարցմանցը», բայց ձեռագիրն անկազմ է մնացել, որովհետև, ինչպես ինքն է գրում, «մեր գնացեալ էլաք ի Ս. Առաքելքն, որ տէղապահէաք երկրին եւ սպասաւոր նորին Ս. Առաքելոցն» (էջ 155): Պարզ է, ընդգծված «տէղապահէաք» անիմաստ կապակցությունն առաջացել է ոչ ճիշտ բառանշատումից. ձեռագրում, անշուշտ, եղել է «տեղպահ էաք»: Ըստ այդմ, Բարսեղը Տարոնի տեղապահ-աթոռակալ եպիսկոպոսն է եղել:

Գրված է «մեծ ազգի» («եւ մայրն է քո մեծ ազգի», էջ 175) որպես երկու առանձին բառեր, երբ պէտք է գրվեր «մեծազգի»-ազնվական: Գրված է «զհամեստ եւ զհարկ եւ որ յամուսին» (էջ 196): Հարկ եւ ուր ոչինչ չի նշանակում. ձեռագրում, անշուշտ, եղել է հարկեաւ, այսինքն՝ «պատուաւոր, մեծարանքի արժանի»:

Կարդում ենք «սեպտեմբեր ամսոյ Իէ (27)-նի, օրն շաբաթ» (էջ 227). պետք է լինի. ... Իէ (27)-ն, ի օրն շաբաթ:

«Բայց թէ ախորժես մտաւոր» (էջ 159). պետք է լինի ախորժ ես:

«Հէնցեղ պատուհասել էր ետ» (էջ 315). պետք է լինի էրեւ:

«յերկրէն Բաղըշոյի, (ի) գեղջէն նէլայ» (էջ 324). պետք է լինի Բաղըշոյ, ի գեղջէն:

«որ կոչի մականունն Քաշոտի, թվին ՌԾԹ (էջ 383). պետք է լինի Քաշոտ, ի թվին:

«սխալանաց եւ խոշորութեան, մեղագիր լերուք» (էջ 405). ձեռագրում հավանաբար եղել է խոշորութե, անմեղապիւ լերուք:

«Յահեղաւորն որ տէրն գայ» (էջ 622). պետք է լինի յահեղ աւորն:

«զաղապատն եւ զշիրանն նայերաց» (էջ 741). առաջին բառերը հավանաբար կազմի պարագաներ են, իսկ նայերաց ոչինչ չատող բառը պետք է գրվեր նայ երաց (այսինքն՝ նա արեց) ձևով և այլն, և այլն:

15. Շատ անխնամ են վերծանված նաև անձնանունները, այս մասին դեռ առիթ կունենանք որոշ խոսք ասելու անձնանունների ցանկի կապակցությամբ: Այստեղ, սակայն, հարկ է բերել ոչ ճիշտ ներկայացված մի շարք անուններ:

«Փոքր Մալազին տէր Գրիգորին» (էջ 105) արտահայտության մեջ առանձին անձնանուններ է համարում Մալազ և Գրիգոր, մինչդեռ մալազ հավանաբար նշանակել է երիտասարդ¹:

Ջոհալ անվան փոխարեն տպագրել է Ոհալ (էջ 186) (զ-ն հայցականի հոգ է համարել):

«Քաթմամին» (էջ 189). պետք է լինի՝ Քա(մալի)թումին:

«զգիրքս ովբայ» (էջ 197). պետք է լինի՝ Ովբայ, այսինքն՝ Յոբի գիրք:

«Ալախշուլի» (էջ 241). պետք է լինի՝ Ալախալուլի:

«Մէլիքշաղալաթ» (էջ 297). պետք է լինի՝ մէլիք Շաղալաթ:

«Ընէփլիպրն նոր ծառիկ» (էջ 382). հրատարակիչը Ընէփլիպր անձնանուն է կարծել. պետք է լինի՝ Ընէ փլիպն՝ նոր ծառիկ (այսինքն՝ *Re Philippe* արքայն Փիլիպպոս, որ դարձրել են անձնանուն. կա նաև Վիեննայի մի ձեռագրում. Տե՛ս Հ. Աճառյան, Անձն., Դ, 318):

«զԱրդարիկ» (էջ 423). պետք է լինի՝ Ջարդարիկ:

«Ով Ջանում եղբայր» (էջ 605). Ջանում-ը անձնանուն է կարծել, բայց լոկ ջանս, հոգիս բառն է:

«Ո[հ] գոհի» (էջ 661). [հ]-ն ավելորդ է. ճիշտ ձևը Ոգոհի է:

«Շատ շարաշար տանջեցին, միաբանեցան եկան: Մրուաթ թագաւորին է մնացել, հրաման ետ թագաւորն...» (էջ 738). Մրուաթ-ը անձնանուն է կարծել, մինչդեռ այստեղ մրուաթ բառն է, որ նշանակում է «բարեգործություն, գթառատություն» և այլն և այլն:

16. Վերծանության սխալների տեսականին ամբողջացնելու համար մեջբերենք նաև մի շարք օրինակներ (իհարկե՛ ընտրովի), որոնք այլ բնույթի են.

Մի հիշատակարանի մեջ կարդում ենք. «Թողութիւն արէք մեր ա /// գիր եւ ծաղիկ եւ կազմն այս է» (էջ 9). ուրեմն ա տառով սկսված մի բառ մնացել է անընթեռնելի կամ ջնջվել-ոչնչացվել է: Վերծանողը, իմաստից ելնե-

¹ [Մալազն տերմինը հուն. մոնոզոնն է (կուսակրոն, միայնակյաց). տե՛ս Լ. Մելիքսեբեկի հոդվածը՝ «Xp. Bost.», II вып. III, с. 399: Խմբ.]

լով, այն պետք է վերականգնել ա/ռաջին»¹ ըստ այդմ ամբողջացնելով նախադասության իմաստը:

Ջուղայեցի մի հիշատակագիր թվարկում է ժամանակի հայ առաջնորդներին՝ կաթողիկոս, Ստեփանոս նախավկայի վանահայր, Ջուղայի առաջնորդ, և ամենավերջում գրում է. */// նուտրութին խօ /// գարէս»* (էջ 15): Հրատարակիչը առաջին վնասված տառախումբը, որ առանց տարակույսի կարելի էր վերծանել [տա]նուտրութիւն, թողել է անվերծանելի, իսկ երկրորդ տառախումբն առաջարկել է կարգալ խո[ջայ Սար]գարէս, որ հույժ կասկածելի է, քանի որ ժէ դարի առաջին տարիներին Հին Ջուղայի տանուտերը խոջա Սաֆարն էր:

«Եւ ոչ ով ալելում շանէ» (էջ 198). պետք է լինի՝ աւելում շանէ. այս մի բանաձև է, որին բազմիցս հանդիպում ենք վիմագիր արձանագրությունների մեջ, նշանակում է՝ վէճ չբացի և այլն:

«Եւ բազում զօրաւք շահ Աբասն ի վերայ երկրին Արարատեան» (էջ 278). կիսատ է մնում միտքը, որովհետև առաջին եւ-ը անտարակույս եղել է ել («եւ բազում զօրաւք...»):

Սահակ Վանեցի գրիչն իր հիշատակարանի վերջում գրում է. «Աստուած ողորմի Աստուած - ողորմի ասացողացն» (էջ 301). այսինքն՝ Աստված ողորմի բոլոր նրանց, ովքեր «Աստուած ողորմի» ասելով կհիշեն իրեն և իր ազգականերին: Հրատարակչի համար, սակայն, անիմաստ է թվացել այս «կրկնությունը» և նա, սուրանկյուն փակագծերի մեջ առնելով երկրորդ «Աստուած ողորմի», դրանք առաջարկել է դուրս նետել որպես թյուրիմացաբար կրկնված բառեր:

Եվ այսպես, կարելի է հարչուրավոր (չափազանցության համար չի ասված այս խոսքը) նման օրինակներ բերել, որոնք, լրացնելով մեկը մյուսին, իրավունք են տալիս եզրակացնելու, որ հիշատակարաններից շատերի բնագրերն անփույթ ու անխնամ են վերծանված:

Միջնադարյան բնագրեր հրատարակող ու գիտական շրջանառության մեջ դնող բանասերը ազավազված տեղիները, գրչագրական վրիպակները, կասկածելի վերծանությունները մատնացույց անելու տարբեր ձևերից է օգտվում: Երբ այս կամ այն բառի տառերից մեկ-երկուսը գրչի տգիտության հետևանքով կամ նրա խոսած բարբառի ազդեցությամբ ձեռագրում գրված է լինում գիտական տառադարձությունից շեղվող ձևերով, բայց այդ տարբերությունն այն աստիճանի չէ, որ բառն անհասկանալի լինի, ընդունված է այդ մեկ-երկու տառը տպագրության ժամանակ շարել այլ տառատեսակով. դիցուք՝ **խորեղփայր**, **անէցք** և այլն: Գրչի ուշագրությունից վրիպած տառե-

ըը վերականգնվում են հրատարակչի կողմից՝ ուղղագրիժ փակագծերի մեջ առնելով. սուրանկյուն փակագծեր են օգտագործվում կրկնված բառերը մատնացույց անելու համար և այլն:

Այս բոլոր եղանակներից հրատարակիչն օգտվում է լայնորեն: Սակայն նրա ելակետը հին հայերենի ուղղագրական այն համակարգն է, որը մխիթարյան բանասիրության կողմից օրինականացվել է ԺԹ դարի առաջին տասնամյակների ընթացքում: Եթե որևէ գրիչ գրում է Տիգրանա, Գանձակա, Էջմիածնա, Վանա, Հաոց, Իսմաելյան, մերո, իւրո և այլն (բառավերջին ա-ից եւ ո-ից յետոյ յ շնշանակելով), այսպիսի դեպքերում գրեթե ամենուրեք հրատարակիչը «շտկում» է բառը՝ վերջում (ուղղագրիժ փակագծերի մեջ) ավելացնելով յ տառը. այսպես՝ Տիգրանա[յ], Գանձակա[յ], Էջմիածնա[յ], Վանա[յ], Հա[յ]ոց, Իսմայ[յ]ելեան, մերո[յ], իւրո[յ] և այլն:

Հրատարակողի սկզբունքն այս է, բայց ինչպես այլ դեպքերում, այս անգամ էլ այն հետևողականորեն չի կիրառված, հանդիպում ենք նաև Լօվա աշխատեցա, աբեղախ, վաելել տա, ի վերա և այլն բառերի, որոնց վերջում յ չի դրված: Եվ եթե ա և ո տառերով ավարտվող բառերի վերջում գրաբարյան ուղղագրությանը հարազատ մնալու համար հրատարակողն ավելացրել է յ տառը, նույն տրամաբանությամբ նա պետք է սուրանկյուն փակագծերի մեջ առնելով կամ ընդգծելով մատնացույց աներ այն տեղերը, ուր յ տառը գրված է սխալմամբ. օրինակ՝ նոբայ, ապայ, գնայ, ջանայ, տայ և այլն: Սակայն այդպես չի արված:

Ասացինք արդեն, որ առանձին տառերի գրության գրաբարյան ուղղագրության սկզբունքներին չհամընկնող ձևերը հրատարակիչը մատնացույց է արել սխալ գրված տառը կամ տառերը ներկայացնելով այլ տառատեսակով. օրինակ՝ ցանգալի, ընդերձող, ձեռքս փախ, յանաքնի, աղքատասեր, խարիպ, փափաք, անկէալ, էղէ, հոգէլից, աւեղարան, սարկաւաք և այլն և այլն (այս մի քանի օրինակները քաղել ենք մի քանի պատահական էջերից):

Բայց ինչո՞ւ այդպես է վարվել գրեթե կես առ կես: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել հենց նույն էջից, նույնիսկ նույն նախադասությունից, երբ որևէ սխալ գրված տառ ընդգծված է, իսկ մեկ ուրիշը՝ անտեսված: Մի քանի օրինակ էլ բերենք այս կարգի բառերից. բաղցամբ, վաղնուց, փափաք, հան (խանի փոխարեն), շայ (շանի փոխարեն), անց (անձի փոխարեն), անէցք, խելքեց, սրախոհոհ, յուտի (յոռիի փոխարեն), մղտեցի, կայր (կարի փոխարեն), խնտիւ, միուս, ծաղկաւէդ, դաստարակ, փծոն, տրուի, փանակ խօր (հօր փոխարեն) և այլն և այլն (սրանք նույնպես պատահական օրինակներ են):

Մենք թերևս այսքան երկար կանգ չառնեինք հիշատակագիրների սխալների «շտկման» այս եղանակներին, եթե նրանց անհարկի կիրառումը շատ դեպքերում բնագիրը շտկելու փոխարեն այն ավերած չլիներ:

Ուրիշ առիթով մենք արդեն նշել ենք, թե ինչպես կաթի սերը հրատարակչի մեղքով շփոթվել է սեր զգացմունքի հետ: Կան այդպիսի ուրիշ օրինակներ ևս:

Երկու տարբեր հիշատակարաններում, գրված 1602 և 1603 թթ., տեղեկություն կա Ջամոստիե քաղաքի պարիսպների և դարպասի բարավորի (դռան շրջանակի վերին սեմի) կառուցման մասին. «Յորում ամի կամարեցաւ բարաւոր դրանց պարսպի քաղաքիս (էջ 77), «Յայսմ ամի կամարեցաւ բարաւոր դրունց քաղաքիս» (էջ 118): Հրատարակիչը, քիչ գործածվող բարաւոր բառը փառաւոր բառի աղավաղում համարելով, վերոհիշյալ երկու դեպքում էլ այն «շտկել» է Բ և Բ տառերը շղագրով տպագրել տալով («բարաւոր»):

1607 թ. մի հիշատակագիր գրում է. «դառն եւ լեզի ժամանակ հասանք մենք» (էջ 279). աշխարհաբար է և հենց այս տեսակետից՝ հետաքրքրական: Բայց ամեն ինչ գրաբարի վրա ձևերու անընդունելի միտումով հրատարակիչը մեմֆ-ի և տառը շղագիր է ներկայացնում շանդրադառնալով, որ նույն վիճակում է (այսինքն՝ աշխարհաբար է) նաև դրան նախորդող հասանք-ը:

Մեկը գրում է «առ Աստուած են փոխել» (էջ 580). փոխել բառը նույնպես աշխարհաբար է. հրատարակիչն ուղղագիծ փակագծերի մեջ մի ա է ավելացնում և նախադասությունը դարձնում գրաբար. «առ Աստուած են փոխե/ա/լ»: Մի տեղ կարդում ենք. «որք կարդայք կամ արինակէք, նայ ողորմիս ասէք» (էջ 473). ամէն ինչ կարծես կարգին է (նայ բառն այստեղ նամանաւանդ-ի բաղադրիչը կամ արեւմտահայերենի նէ-ն է՝ մոտավորապես «ապա» իմաստով): Այդ բառից հետո հրատարակիչը փակագծերի մեջ մի եւ է ավելացրել խաթարելով իմաստը: «Ի թագաւորութեան Հիզնայ միր Հասանին» (էջ 345). ի՞նչն է այստեղ պակաս. ըստ հրատարակչի՝ Հիզնայ ճիշտ չէ, պետք է լինի Հիզանայ և փակագծերի մեջ, մի հարցական նշանով ավելանում է այդ ա-ն... Մի գրիչ իր մասին ասում է, որ «Խ (40) տարի է, որ անպարապ ի գրել եմ» (էջ 94). ի գրել եմ, այսինքն՝ գրելով եմ զբաղված եղել: Նկատելով, որ սա ևս գրաբարյան արտահայտություն չէ՝ դարձյալ «շտկում է»՝ ի տառն (ի գրել եմ) անկյունավոր փակագծերի մեջ առնելու ճանապարհով անվավեր հայտարարելով: Ձեռագրում գրված է «քերքըս» (էջ 89). շտկված է f(ւ)երքըս: Ձեռագրում Ջաֆարայ անունը բազմիցս «շտկում է» Ջաֆարիայ. ձեռագրում Սիմոն (էջ 472), դարձնում է Սի-

մ(է)ոն. ձեռագրում Համիրթացոյ (էջ 532), դարձնում է Համիրթաց(ւ)ոյ և այլն և այլն:

Այս կարգի «շտկումներից» միջնադարյան բնագրերը բնավ չեն շահում: Ժէ դարում ապրած հիշատակագիրները նաև իրենց ուղղագրությամբ (գուցե սխալագրությամբ) իրենց ապրած ժամանակի հարազատ ծնունդն են ու արտահայտիչը: Ուստի գիտական գործ չէ գրաբարի ուղղագրության մկրատով նրանց խուզելն ու հարդարելը: Հայ աղբյուրագետի պարտքն է գրաբարի հետ զուգընթաց, հարազատորեն վերարտադրել նաև միջին հայերենը, միջնադարյան աշխարհաբարի ու գավառաբարբառների առանձնահատկությունները, եթե նրանք երևան են գալիս ձեռագրական հիշատակարաններում, վիճակն արձանագրություններում կամ այլ սակավաթիվ սկզբնաղբյուրներում:

Մի քանի խոսք նաև հրապարակված հիշատակարանների պատմական արժեք չունեցող մասերի կամ բացարձակ կրկնությունների կրճատման մասին: Հրատարակիչը, իրավամբ հետևելով այս բնագավառում աշխատանք կատարած նախորդ բանասերներին, այդպիսի հատվածները դուրս է թողնում ժողովածուից: Կրճատված հատվածները ցույց են տրվում բազմակետերով, ըստ անհրաժեշտության գրվում են նաև ծանոթագրություններ և այլն: Երբեմն, սակայն, կրճատումներն այստեղ կատարված են առանձին նախադասությունների միջնամասից, երբ իմաստը դեռևս չի ամբողջացել: Այսպիսի անհաջող կրճատման օրինակներ հետաքրքրվողը կարող է գտնել քննարկվող հատորի 83, 515, 602, 691, 721 և բազմաթիվ այլ էջերում:

Կարելի՞ է արդյոք «Ով հանդիպի սմա կարդալու կամ օրինակելու...» կամ «Եւ ինքն որ առատ է ի տուրս բարեաց...» և կամ «Եւ ինքն Քրիստոս կոչաւն աշխատողաց...» կիսլանջ նախադասություններով պարբերությունը փակել:

Հատորի մեջ կան նաև բազմաթիվ չափածո հիշատակարաններ, որոնց վերծանությունը լրացուցիչ դժվարությունների հետ է կապված, ուստի համառոտակի անդրադառնանք նաև այս կարգի հիշատակարանների աղբյուրագիտական մշակման մակարդակին:

ՉԱՓԱԾՈ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Հատորում տեղ գտած չափածո հիշատակարաններից մի քանիսը բացառիկ պատմական արժեք ունեն, իսկ ավելի քչերը զուրկ չեն նաև գեղարվեստական արժանիքներից:

Բնագրի վերծանության հետ սերտ աղերսի մեջ են չափածո ամբողջա-

կան հիշատակարանների կամ առանձին շափ ու կշռույթով գրված հատվածների ճիշտ ներկայացման, ծայրակապ բառերի բացահայտման մտահոգությունները: Հենց սկզբից ասենք, որ այս ասպարեզում նույնպես կան անակնկալներ: Նախ մի շարք ուշագրավ շափածո հատվածներ ներկայացված են արձակ ձևով և ակնարկ անգամ չի արված դրանց շափ ու կշռույթով գրված լինելու մասին: Այսպես՝ N 851 հիշատակարանում կարդում ենք.

Մեղոֆ լցեալ եմ յաշխարհի,
 Ի բարի գործս մերկ եւ ունայն,
 Զանունս ունեմ քահանայի,
 Գործովս շար ու անարժան:
 Զձեզ աղաչեմ սուրբ ընթերցողք
 Յիշման առնեմ զիս արժան (պէտք է լինի արժանի),
 Բազում ջանիւք աշխատեցայ
 Յաւարտ հասի (պ. լ. հանի) զԱւետարան...

Եւ այսպես մինչև հիշատակարանի վերջը (էջ 633):

Զափածո է նույնպես N 885գ հիշատակագրության վերջին մասը.

Ես Յովանէս սարկաւազ Տգաղեցի,
 Որ նորա աշակերտ էի,
 Ապայ որ մնաց այնպիսի
 Յետոյ ես առի գրեցի,
 Պակասընին ամէն լցի.
 Մատթէոսոյ, Մարկոս իլիի,
 Թէր ու թուփն այլ ես քաշեցի
 Ապա ամէնն կատարեցի,
 Որ թամամ արի, կապեցի,
 Յիշատակ առ ձեզ թողեցի,
 Ով որ հանդիպի ընթերցի
 Մի բերան ողողմի ասի (էջ 657):

Չնկատված շափածո են նաև N 988 հիշատակարանի վերջին պարբերությունը (էջ 685) և N 267 հիշատակարանի մի մասը.

Վա՛յ եւ եղուկ վերայ իմ հոգոյն,
 Որ տեսաք տագնապ սովոյն,
 Զի այլք կերան զմիս մարդոյն,
 Զտղայս խաբեալ տանէին ի տուն,
 Զենեալ կերան զերթ զանասուն (էջ 212):

Գուցե լինեն մեր կողմից շնկատված ուրիշ հիշատակարաններ ևս:

Ըստ երևույթին սրանց հակակշռելու մտահոգությամբ հրատարակիչը ոտանավոր է դարձրել սովորական արձակով գրված մի շարք հիշատակարաններ: Մարդ մնում է զարմացած, որ շափածո են համարված նույնիսկ այսպիսի սովորական տողեր. «Ձայս մեծ գանձս աստուածային տեսեալ Ստեփանոս քահանայն եւ որդի նորա Մելքիսէդեկ քահանայն, ետուն գրել զԱւետարանս յիշատակ իւրոց եւ ծնողաց իւրոց: Որք ընթեռնուն կամ տեսանեն բոլոր սրտիւ զողորմին տան...» և այլն (N 81, էջ 69):

Չափածո չէ նաև ոտանավորի ձևով ներկայացված N 610-ը հիշատակագրությունը. «Ձանբաժս ի բարեաց եւ զանգեղջս ի շարեաց, զպիտակ անուն երէց կոչեցեալ Յակոբ, աղաչեմ յիշել ի միտս բարի, զի եւ ձեզ լիցի մասն բարի ի տվողէն համայնի» (էջ 486):

Ոտանավորի ձևով է տպագրված նաև N 419 հիշատակարանի վերջին արձակ հատվածը (4 տող) և այլն:

Մյուս նշանակալից թերությունը ոտանավոր հիշատակարանների հրատարակման շափ ու կշռույթի պահպանման մտահոգության իսպառ բացակայության հետ է կապված: Պատմական հարուստ բովանդակությամբ շափածո հիշատակարանների մեջ մեծ քանակությամբ թվեր ու թվականներ են նշված հայոց այբուբենի թվահաշվով: Հիշատակագիր-բանաստեղծները, սակայն, երբ գրել են դիցուք ձ՛ կամ Ռ, նկատի են ունեցել, որ ընթերցողներն այդ թվերը համապատասխանաբար կարդալու են հարյուր և հազար (երկվանկանի բառեր), որով և ամբողջանալու է տվյալ տողը՝ համապատասխանելով իր կշռույթին:

Ստեփանոս Թոխաթեցին, իր հայրենի քաղաքի գովքը հյուսելով, 1607 թ. գրել է.

Աւարտեցաւ գիրգըս գանձի

Հայոց մեծի թրւականի,

ՌԾՁ աւելի

Սեպտեմբերի ԺԴ -ին...

Կամ՝

Հարիւր Ռ բարով իլի... .

Վեց ձ տուն կայր յայն թաղի (էջ 245, 249 և այլն):

Արդ, ինչպե՞ս են կարդացել միջնադարում նման կարգի տասնյակ ու հարյուրավոր թիվ ու թվական պարունակող շափածո տողերը. «ՌԾՁ աւելի» բառերն, օրինակ, կարելի է բաժանել վանկերի և արտասանել այսպես.

«Ռը-Մը-զա-ւե-լի» կամ «Ռը-Մը-զը-ա-ւե-լի» ստանալով համապատասխանաբար 5 կամ 6 վանկանի տողեր:

Բայց չէ՞ որ ոտանավոր հիշատակարանն ամբողջապես գրված է 8 վանկանի տողերով:

Ուստի, անտարակույս, վերոհիշյալ տողերը պետք է վերծանվեին ու տրվեին իրենց հնչյունական արտահայտությունը: Այսպես.

Հայոց Մեծի թըւականի
 Հագար հարիւր վեց անելի
 Սեպտեմբերի տասնչորսի...
 Հարիւր հագար բարով իլի...
 Վեց հարիւր տուն կայր յայն թաղի

և այլն:

Տողատակի ծանոթագրությունները հենց նրա համար են, որ նման դեպքերում ընթերցողին ծանուցեն, որ այս կամ այն թիվն ու թվականը ձեռագրում գրված են հայոց թվահաշվի այս կամ այն կարգով:

Խոսքը, սակայն, թվականներին չի վերաբերում միայն: Սուրբ բառը հրատարակիչն ամենուրեք, մեզ համար անընդունելի պատճառաբանություններով, համառոտել է սբ. կամ ս. ձևով (նույն տրամաբանություններով պետք է համառոտվեին նաև Աստված, Հիսուս, Քրիստոս, Տեր և այլ տերունական անունները, որ միջնագարյան աղբյուրներում, ինչպես սուրբ բառը, միշտ ու ամենուրեք համառոտված են ներկայացվում): Եթե արձակով գրված հիշատակարաններում այդ հանգամանքը որևէ դժվարություն չի ստեղծում, չափածո հիշատակարանների մեջ խախտում է շափն ու կշռույթը:

Ստեփանոս Թոխաթեցու վերոհիշյալ հիշատակարանում, օրինակ, կան այսպիսի տողեր.

Նախ Ս. Ահ /ա/ ռոն եկեղեցի
 Ի առ յոտըն Ս. Լուսօռչի:

Հրատարակիչն ինքը դժվարությունների առջև է կանգնել այս տողերն ընդօրինակելիս: Ձեռագրում գրված է «Նախ Ս. Ահրոն եկեղեցի»։ Ս-ն վանկ չհամարելով հրատարակիչը 8 վանկանի տողն ապահովելու համար Ահ-րոնը դարձրել է Ահարոն, բայց ոտանավորի հեղինակը գրել է «Նախ-սուրբ-Ահ-րոն // ե-կե-ղե-ցի եւ բնաւ երբէք՝ «Նախ Սա-հա-րոն // ե-կե-ղե-ցի»:

Որ հրատարակիչն ինքն իսկ չի կողմնորոշվել, թե ինչպես պետք է ճիշտ ընթերցվեն տառաթվեր պարունակող չափածո տողերը, պարզ երևում է ստորև մեջբերվող օրինակներով:

Ոմն Մարտիրոս գրիչ 1613 թ. շարադրել է չափածո մի հիշատակարան 8 վանկանի տողերով: Եվ ահա այդ տողերից երկուսը հրատարակիչը մատուցել է այսպիսի կերպարանքով.

Ի Ռ թվականի ԿԲ յարաբարթի
Գրեալ եղև բան եւ գործի (էջ 502):

Պա՞րզ չէ միթե, որ այս երկտողի առաջին տողը երկու ինքնուրույն տողերի տարօրինակ մի համաձուլվածք է, որ կյանքի է կոչվել տառաթվերի վերծանման ու ընթերցման տարրական կանոնների խախտման ճանապարհով: Պարզ է, որ վերծանումն ու տողատումը պետք է կատարվեր այսպես.

Ի /մէկ/ հազար թվականի
Վաթսուն երկու յարաբարդի
Գրեալ եղև բան եւ գործի:

Մեկ ուրիշ օրինակ՝ N 760 չափածո հիշատակարանում կան այսպիսի տողեր.

Ես անարժան ամասիացի...
Որ Կարապետ անուամբ կոչի,
Ի թվականիս ՌԿ -ի Ե անելի յարայ բարթի (էջ 574):

Մրա վերջին տողը նույնպես երկու ինքնուրույն տողերի արհեստական կցման արդյունք է, որ կատարված է տառաթվերի վերծանման պարզ կանոնների անգիտության հետևանքով: Այդ արհեստական տողը պետք է վերծանվեր ու երկու մասի բաժանվեր այսպես.

Ի թվականիս հազար վաթսնի
Հինգ անելի յարաբարթի:

Չափածոների մասին մեր ասելիքը սպառելու համար նշենք, որ N 481 հիշատակարանի չափածո բաժինը գրված է Ց-ական վանկ պարունակող սովորական տողերով, սակայն հրատարակիչը երկուական տողեր միաձուլել ու 16-վանկյա տողեր է ստեղծել՝ հաշվի չառնելով հանգավորման տվյալները (յուրաքանչյուր Ց-րդ վանկ ավարտվում է ի-ով):

Ըստ այդմ, ցավով արձանագրելու ենք, որ քննարկվող ժողովածուի մեջ տեղ գրաված չափածո հիշատակարանների աղբյուրագիտական մշակումը նույնպես անփութորեն է կատարված: Ոչ ընդունելի սկզբունքներով առաջնորդվելով՝ հրատարակիչը շատ տեղերում խախտել է ոտանավորի չափն ու կշռույթը, դժվարացրել պատմագեղարվեստական որոշակի նշանակություն ունեցող այդ սկզբնաղբյուրների օգտագործման հնարավորությունները:

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ժողովածուի կազմողն իր առաջաբանում ասում է, որ «հիշատակարանները բերված են նույնությամբ՝ պահելով ուղղագրությունը: Միայն փոփոխված է ձեռագրերից քաղված բնագրերի կետադրությունը, որովհետև գրիչների մոտ այն խիստ անկանոն է» (էջ ԻԵ): Միանգամայն իրավացի է: Ձեռագիր սկզբնաղբյուրները, սակավ բացառությամբ, հնարավոր չէ հրատարակել գրիչների կողմից դրված կետադրությամբ, քանի որ միջնադարում գիտական կետադրության հարցերը մշակված չեն եղել, իսկ շարքային գրիչներն ու ծաղկողներն անձանոթ են մնացել նույնիսկ այն մի քանի աշխատություններին, որոնց մեջ այս կամ այն չափով շոշափվել են կետադրության հետ առնչվող հարցերը: Նկատի ունենալով վերոհիշյալը՝ արդի բանասերը պարտավորված է կա՛մ ամբողջովին փոխել իր կողմից հրատարակության պատրաստվող սկզբնաղբյուրի կետադրությունը, կա՛մ էլ արմատապես շտկել ու լրացնել: Բայց այդպիսի աշխատանք կատարողը, բնականաբար, առաջնորդվելու է կայուն ու գիտական սկզբունքներով՝ հետապնդելով հիմնականում մի նպատակ՝ արդի գիտական կետադրության կիրառումով դյուրացնել բնագրի բովանդակության ճիշտ ընկալումը ընթերցողների կողմից: Անկեղծ վշտով հայտնելու ենք, որ ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների քննարկվող հատորի կետադրության մեջ կայուն ու որոշակի սկզբունքներ չեն կիրառված: Հրատարակիչն ամեն մի հիշատակարան հրատարակության պատրաստելիս կարծես տարբեր սկզբունքներով է առաջնորդվել:

Որ շաղկապի դերը բարդ նախադասությունների մեջ հանրահայտ է. և ամեն ոք գիտե, որ այդ առ-ից առաջ անպայման ստորակետ է դրվում: Իսկ ի՞նչ է արված այստեղ. մեկ անգամ դրված է, երկու կամ երեք անգամ՝ ոչ: Եվ այսպես, ողջ հատորի մեջ սկզբից մինչև վերջ կարելի է մի քանի հարյուր օրինակ բերել: Ահա մի քանիսը.

«Ստացա գտուրբ գիրքս որ կոչի Ոսկեփոր» (էջ 60). ստորակետ չի դրված:

«Ոհ, ոհ, հազար բերան գծողիս, որ մեծ գուժ լսեցի» (էջ 27). ստորակետ դրված է:

«Թվականն... ՌԾ էր որ Միմոնն բռնեցին» (էջ 4). առանց ստորակետի:

«Ընդ հովանեա... Վարդան զօրավարին, որ է սակաւ մի հեռի» (էջ 28).

ստորակետով:

«Յիշեցէք Միրումն որ ստացաւ սուրբ Աւետարանս» (էջ 14). առանց ստորակետի:

«Ողորմի ասացէք լի սրտիւ, որ եւ մեզ ողորմեսցի» (էջ 32). ստորակետով:

«Եւ այլ սրբոցս որ աստ կան» (էջ 15). առանց ստորակետի:

«Մահդասի Ամիրաղէն, որ եռափափաք սիրով...», (էջ 33). ստորակետով:

«Նորոգող սուրբ գրոցս որ է Գանձարան» (էջ 51). առանց ստորակետի:

«Ո՛հ թէ որպէս լինիցի ճարակ գերոյս, որ զկեանս իմ հպարտութեամբ... անցուցի» (էջ 38). ստորակետով, և այսպէս ամենուրեք:

Հիշատակարաններում հսկայական տեղ են գրավում այն նախադասութիւնները, որոնցով ընթերցողներին կոչ է արվում հիշել ձեռագրի պատվիրատուին, գերութիւնից ազատողին, նորոգողին, մի խոսքով՝ ձեռագրի ստեղծման կամ պահպանութեան գործում օգտակար աշխատանք կատարած անձանց ու նրանց բազմաթիւ ազգականներին՝ ծնողներին, եղբայրներին, որդիներին և այլն: Պարզ է ուրեմն, որ հիշատակարաններ հրատարակող բանասերը պարտավոր էր մշակել որոշակի մի սկզբունք գրեթէ նույն կաղապարով ձուլված այդ բնույթի նախադասութիւնները կետադրելիս: Այդպէս չի վարվել, սակայն, մեր հրատարակիչը: Այսպէս օրինակ՝ ժողովածուի 4 -րդ էջում նախ կարդում ենք.

«Գրեցաւ սայ ի հալալ արդեանց իմոց եւ ի արդար վաստակոց, յիշատակ ինձ Աւետիս կաթողիկոսին, եւ ծնողաց իմոց՝ հաւրս Միրզին եւ մաւրս Գաւարին...»: Մի քանի տող միայն հետո գրեթէ նույն բառերով կազմված նախադասութիւնն այլ կերպ է կետադրված. «...յիշատակ ինձ՝ Աւետիս կաթողիկոսին եւ ծնողաց իմոյ, հաւրս Միրզին եւ մաւրս Գաւարին»:

Ինչպէս տեսնում ենք, կետերը դրված են կարծես տարբեր անձնավորութիւնների կողմից, գիտական կետադրութեան կանոնների անտեսումով: Եվ այս մեր ասածն անհրաժեշտութեան դեպքում կարելի է հաստատել հարյուրավոր օրինակներով: Որքան էլ բարեսիրտ լինենք, չենք կարող չնշել, որ այս հանգամանքն ինքնին բացասաբար է ազդում հրատարակված հիշատակարաններին՝ առաջնակարգ պատմական այդ սկզբնաղբջուրների որակի վրա:

Բայց առավել ցավալին այն է, որ կան (և ոչ քիչ քանակութեամբ) այնպիսի հատվածներ, որոնք հրատարակչի նշանակած կետադրութեամբ աղավաղվել կամ անհասկանալի են դարձել: Օրինակներն այստեղ անհրաժեշտ են:

N 166 արժեքավոր հիշատակարանում կարգում ենք այսպիսի տողեր. «Փախիր փութարէն (=աղքատ մորացկանները) խիստ հալածական. եղեւ սով հացի եւ աղի. ելաւ որ մէկ հոխկայ աղն Ա (1) շահի...» և այլն: Այստեղ ոչ մի կետ ճիշտ չի դրված: Նախադասութիւնը պետք է կետադրվեր այսպէս. «Փախիր փութարէն խիստ հալածական եղեւ, սով հացի եւ աղի ելաւ, որ մէկ հոխկայ աղն Ա (1) շահի» (էջ 134):

N 176 հիշատակարանում կարգում ենք. «Զի ի ներկայս վայելումն լիցի խոճայ մահդասի Զիրաքին: Եւ յապագայս յիշատակ մնացէ հոգոյ իւրոյ...» (էջ 149): Պարզ է, որ եւ-ից առաջ վերջակետն ավելորդ է:

N 277 հիշատակարան. «Եւ շնորհեաց պարգեւս եւ խիլայս, տանն ամենեցուն, մեծի եւ փոքուն» (էջ 219): Պետք է լիներ այսպէս. «Եւ շնորհեաց պարգեւս եւ խիլայս տանն (այսինքն՝ Մելիք Շահնազարի գերդաստանին), ամենեցուն՝ մեծի եւ փոքուն»:

Ստեփանոս Թոխաթեցու շափածո նշանավոր հիշատակարանում (էջ 244-252) բազմաթիվ են կետադրական անճշտութիւնները.

Աւարտեցաւ գիրգըս գանձի
Սեպտեմբերի ԺԴ -ին:
Զեռամբ ումեմն անարժանի...
ԸՍտեփանոս ձեր ծառայի:

(Երկու դեպքում էլ վերջակետի տեղ ստորակետ էր պետք).

Յեանորդ ամէն քահանայի,
Վարդապետաց էր սիրելի:
Որ ի Թոխաթ նա վախճանի, (էջ 245)

(որ -ից առաջ ստորակետ էր պետք).

Կովեր հորթեր այժ եւ ոչխարնի, (էջ 248)

(ստորակետներով պետք է բաժանվեին, ինչպէս մի քանի տող առաջ. «Այգով, արտով, պաղչով ի լի»).

«Զոր մէկն ասեմ ըզմութախնին» (էջ 248)

(Զոր-ը պետք է հարցական ընդուններ, և այսպէս շարունակ):

N 367 հիշատակարան. «Աստուած ողորմի ասացէք. անարժան Սարգիս գծողիս՝ ինձ...» (էջ 303). ասացէք-ից հետո միջակետ կամ որևէ կետ պետք չէ:

N 462 հիշատակարան. «Ես իմ կամաւս տուի իմ հոգոյ, որդոյն՝ Մարտիրոս սարկաւագին» (էջ 371). անտեղի ստորակետը աղճատել է միտքը. պետք է լինի հոգոյ որդոյն = հոգեորդի:

N 521 հիշատակարան. «զայս Յայսմաուրքս ի ծախ հանեց նայ: Ես մեղօր Ստեփանոս էրէցս զայիլ շեղայ» (էջ 415). պետք է լիներ. «ի ծախ հանեց, նայ ես մեղաւոր...»:

N 655 հիշատակարան. «Գրեցաւ գիրքս այս անիմաստիցն, մուլն եւ խաւար». պէտք է լինի «անիմաստիցն մուլն ու խաւար», այսինքն՝ «Անգիտաց անպէտի» նման մի բան. ձեռագիրն ալքիմիական ձեռնարկ է (էջ 518):

N 719 հիշատակարան. «եղ ի դուռն Ս. Առաքելոյն Պետրոսի, նորընծայ սուրբ եկեղեցոյն» (էջ 552).

(ստորակետի պատճառով ստացվում են երկու եկեղեցիներ՝ ս. Պետրոս առաքյալ և Նորընծա(՞), բայց նորընծան հենց ս. Պետրոսն է):

N 730 հիշատակարան. «Ստեփանոս արհեպիսկոպոս, ի հոգին (Աստուած) լուսաւորէ» (էջ 560). պետք է լիներ «Ստեփանոս արհեպիսկոպոսի հոգին լուսաւորէ»:

N 748 հիշատակարան. «եւ քակեաց /շահ Աբաս/ զվէմն, որ է հիմն հաւատոյ, զոր միածին նստեալ էր ի վերայ նորա: Եւ զվէմն սուրբ սեղանոյն» (էջ 570). վերջակետի փոխարեն պետք է լինի ստորակետ:

N 895 հիշատակարան. «Ընդ առաջին... ստացաւ զացն աստուածեղէն տառիս եւ սուրբ կտակիս: Եւ զվերջին եւ զնուագեալ ծնունդս եկեղեցոյ... (յիշեցէք)» (էջ 664). վերջակետի փոխարեն պետք է լինի ստորակետ:

Եվ այսպես, կարելի է հարցուրավոր օրինակներ բերել:

Եզրակացությունն այն է, որ հրատարակվող հիշատակարանների մշակումը կետադրություններով օժտելու առումով նույնպես կատարվել է հապճեպ ու անուշադիր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրատարակիչն էջերի տողատակերում տարբեր բնույթի ծանոթագրություններ է գետեղել, որոնցով հայտնում է, թե ինչ հատվածներ է կրճատել, ինչպես է վերծանել այս կամ այն բառը, ինչպես պետք է հասկանալ բարդ ձևերով ներկայացված թվականները և այլն: Դրանք ըստ մեծի մասի օգտակար ծանոթագրություններ են՝ գրված բանիմացությամբ: Բայց այստեղ ևս կան թերություններ ու թյուրիմացություններ, որոնց համառոտակի անդրադառնում ենք նույն նպատակով, այն է՝ ավելի կատարյալ տեսնել ժէ դարի հիշատակարանների հաջորդ հատորները:

Հիշատակարանների և այլ սկզբնաղբյուրների մեջ առկա տեղեկությունների համադրումով այս կամ այն միավորի շարադրման վայրի որոշումը պետք է հրատարակչի մտահոգությունների մեջ կարևոր տեղ գրավի,

քանի որ հեղինակից ու թվականից հետո հիշատակարաններն օգտագործող հայագետների համար նրանց մեջ պատմվող դեպքերի առումով առաջնակարգ նշանակություն ունի գրչություն վայրը:

Յավոք, պետք է կրկին արձանագրենք, որ այս հարցը գրեթե չի հուզել հատորի հրատարակչին: Վ. Հակոբյանը ո՛չ ծանոթագրությունների մեջ է փորձ արել անծանոթ տեղանունների վայրը որոշել և ո՛չ էլ տեղանունների ցանկում: Մի երկու բացառություններ կան, և դժբախտաբար, դրանք էլ անհաշող են: Այսպես՝ N 368 հիշատակարանում խոսք կա Ասպիսթան գյուղի մասին: Հրատարակիչը հատուկ ծանոթագրության մեջ փորձում է որոշել նրա տեղը. «Արդյո՞ք Արճեշի մոտ գտնվող Ասպիսակ գյուղը չէ», - հարց է տալիս նա (էջ 304), կարծես թե ընթերցողն է հրատարակչի համար պարզելու այդ խնդիրը: Առանց դժվարության կարելի է առաջադրված հարցին բացասական պատասխան տալ, քանի որ հենց նույն հիշատակարանից դժվար չէ ենթադրել, որ այդ գյուղը Աղբակի շրջանում է եղել և ո՛չ Քաջբերունիքում:

Ակեռ կամ Ակե վանքը գտնվում է Շատախում. այդ մասին տեղեկություններ կան ժե դարի հիշատակարանների մեջ, ինչպես և քննարկվող հատորում («Գրեցաւ սուրբ Աւետարանս ի յերկիրս Շատխոյ, ի սուրբ ուխտս, որ կոչի Ակէ», - կարդում ենք N 368 հիշատակարանում): Եվ որքան էլ տարօրինակ է, հրատարակիչը ժողովածուի մեջ երկու անգամ (էջ 170 և 304), որևէ հիմք չունենալով, այդ վանքը տեղադրում է Մակու գավառում:

Մի ծանոթագրության մեջ «Ի յերկիրն Ըռըճակոյ» վայրի մասին գրում է. «Հավանաբար Արճակն է, Վանից արևելք» (էջ 521), այն դեպքում, երբ Արճակը Վանից հյուսիս կամ հյուսիս-արևելքում է գտնվում:

Բազմաթիվ հիշատակարաններում կան ծածկագիր թվականներ. դրանք բոլորն էլ բացատրված են ծանոթագրությունների մեջ, բայց հաճախ այնպես հապճեպ ու համառոտ են կազմված, որ մեծ ջանքեր են պետք հասկանալու համար: Այսպես օրինակ՝ N 518 հիշատակարանում կարդում ենք. «Ի թվականիս հայկազան տամարիս ի ՌԾԳ ամին եւ փոքր թվականն Հոռովմայեցոց Մ եւ ՂԲ ամին» (էջ 411): Ծանոթագրության մեջ գրված են միայն հետևյալ թվերը՝ 292+ 248+ (2x532), որոնցից ոչինչ չի հասկացվում: Յավոք, սա բացառություն չէ:

Նույնպիսի հապճեպությունք են բացատրվում նաև ծածկագիր բառերն ու անունները, իսկ 632-րդ էջի ծանոթագրության մեջ ծածկագրությունը ճիշտ չի վերծանված. այնտեղ կարդացվում է. «Զատիկ Պողտանին որդի...», մինչդեռ հրատարակիչը Զատիկի փոխարեն կարդացել է գէտիլ:

Կան մի քանի հիշատակագրություններ, որոնք առանց ծանոթագրությունների իրենց բուն բովանդակությունն ընթերցողի առջև չեն բացում:

N 315ժ հիշատակագրության մեջ ասված է. «Աչք իմ ծով ի ծով ծիծաղախիտ եւ թէ չես կարենա, ով զարմանալոյն ձայն ասայ...»: Խոսքն ուրեմն ինչ-որ երգի մասին է, որը գրչի հանձնարարականով պետք է երգել Գր. Նարեկացու վերոհիշյալ երգերի եղանակով, բայց այդ ո՞ր երգն է. ա՜հ այդ մասին պետք է գրվեր ծանոթագրության մեջ:

N 369 հիշատակարանի ձեռագիրը կոչված է Փամագիրք, բայց երևում է, որ նրա մեջ կան երազահան, ինչ-որ մեկնություն և այլն: Դրա մասին ևս պետք է խոսք լիներ ծանոթագրության մեջ:

N 707բ հիշատակագրության մեջ ասված է. «Այստեղս տարակուսանք բան կա, հարցանել վարդապետաց» (էջ 546): Մի՞թե պետք չէր նշել, թե այդ ինչ բնագրի և որ հատվածի մեջ է տարակուսական բան նկատել հիշատակագիրը: Այս կարգի թերությունները շատ են:

N 31 հիշատակարանը գրված է Սպահանի մոտ՝ Քարթման գյուղում, ըստ հիշատակարանի՝ «ի թուականիս Հայոց ՌԾ (1601)»: Թվականի կապակցությամբ Լ. Մինասյանը (որի ցուցակից է քաղված այս հիշատակարանը) գրում է. «ՌԾ թվականը սխալ է, թերևս մոռացության է տվել մի որևէ միավոր տառ» (Լ. Մ., Յուցակ, էջ 38): Հրատարակիչն, օգտագործելով Մինասյանի ցուցակի ձեռագիրը, նրան անհարկի դիտողություններ է անում և զարմացած հարց է տալիս. «Թե ինչու է սխալ, չի ասված», բայց մի՞թե պարզ չէ, «թե ինչու է սխալ». այն պարզ պատճառով, որ 1601 թվականին դեռևս շահ Աբասի կազմակերպած բռնագաղթը տեղի չէր ունեցել, ուստի Սպահանի մոտ գտնվող որևէ գյուղում հայերեն ձեռագիր չէր կարող ընդօրինակված լինել:

Բազմաթիվ մանր-մունր դիտողությունների վրայից թռիչք կատարելով՝ անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել ծանոթագրությունների լեզվի մասին: Ընթերցողն այն տպավորություն է ստանում, որ կարգում է սևագիր մի գործ. կարծես թե խմբագրական ու սրբագրական աշխատանք բնավ չի կատարված և՛ հրատարակողի, և՛ այն անձնավորությունների կողմից, որոնք պարտավոր էին հետևել նաև լեզվի ու շարադրանքի հարցերին:

Տասնյակ անգամ այս կամ այն հիշատակարանի կամ որևէ հատվածի գեղջման մասին ծանոթագրելիս գործածված է «չվերցրինք» անհաշոդ բառը: Օրինակ. «Եվ այսպես շարունակաբար չվերցրինք» (էջ 38). ուզում է ասել պատմական տեղեկություններ չպարունակող բազմաթիվ տողեր կան, որոնք գեղջվել են, չեն հրատարակվել:

Բազմիցս հարկ է լինում նշել, որ արդեն մեջբերված անունները նորից են կրկնված հիշատակարանի մեջ: Այս միտքն արտահայտում է այսպիսի բանաձևով. «Թվում է վերևում հիշված անունները»: Պարզ է, որ պետք է լինեն «Թվարկում է» և ոչ թե «Թվում է»:

Գրում է այսպիսի տողեր. «Ինչպես կարող է... Ավետարանը նորոգվի և վերակազմվի 1605 թ.» (էջ 188). ուզում է ասել «...նորոգվել և վերակազմվել»:

«Կրացրել ենք համաձայն «Արցախ»-ի ունեցածի» (էջ 194) փխ. «Արցախ»-ում տպագրվածի»:

«Հիշատակարանի ընդհանուր պաստառը համընկնում է N (այսինչ) հիշատակարանին» (մի քանի անգամ): Պաստառ նշանակում է լաթի կտոր կամ նման մի բան. այստեղ, սակայն, օգտագործված է շատ տարբեր և ինքնահնար իմաստով: Միտք բանին այն է, որ տվյալ հիշատակարանը ձուլված է մեկ ուրիշի կաղապարով կամ հանդիսանում է մեկ ուրիշի կրկնությունը և այլն:

«Հիշատակարաններում նշված ակտը (իմա՝ դեպքը) կարող էր պատահել ՌԾԱ -ից մինչև ՌԾԹ թվականները (այսինքն՝ թվականների ընթացքում)» (էջ 384):

«Տառերից հոգվում է» (էջ 389). ուզում է ասել «տառերով հոգվում է»:

N 772զ հիշատակագրության մէջ ասուած է. «Անմեղադիր լեռուք, զի նաւոր արի գիրն. պատճառն այն է, որ աչքս խիստ կու ցաւէր» (էջ 582): Հատուկ ծանոթագրության մեջ այս կապակցութեամբ ասված է. «Խոսքը վերաբերում է ձեռագրի առաջին գրիչ Ղազար եպիսկոպոսին», մինչդեռ գրվելու էր. «Այս հիշատակագրության հեղինակն է ձեռագրի առաջին գրիչ Ղազար եպիսկոպոսը»:

էջ 591-ում կարդում ենք. «այլ թանաքով գուցե գրչից ավելացվել է Ավետիս կաթողիկոսի ծնողների անունները և ձեռագիրը էջմիածնին նվիրելու մասին»: Իհարկե, հայերեն չի գրված: «Որոշ բառերի բացատրությունը շնորհակալութեամբ վերցրեցինք» (էջ 761). դարձյալ հայերեն չէ:

Բազմիցս գրում է. «Մագիստրոսը գրում է» կամ «տեղեկացնում է» և այլն: Ո՛վ է Մագիստրոսը. հայագիտության հարցերով հետաքրքրվող հարյուրավոր մասնագետներից այսօր 4-5 հոգի հավիվ գիտե, իսկ մի 20 տարուց հետո՝ հավանաբար ոչ ոք չի իմանա, որ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը էջմիածնի միաբանության անդամների շրջանում ծանոթ էր «Մագիստրոս» մականունով: Նա իր բոլոր աշխատությունները հրատարակել է

Մեսրոպ Տեր-Մովսիսյան անունով, ուստի այդպես էլ պետք է հիշատակվի գիտական գրականության մեջ:

Օրինակները կարելի է եռապատկել, բայց արդեն մեջբերվածն իսկ բավարար է հանգելու այն եզրակացության, որ ծանոթագրությունները և ընդհանրապես հրատարակչի հեղինակային խոսքը շարադրված են գրական հայերենի քերականական ու ոճաբանական կանոնների հաճախակի խախտումներով, անփույթ մշակված ոճով:

ՅԱՆԿԵՐ

Բնագրի հրատարակության հետ առնչվող հարցերը սպառելով մոտենում ենք ավարտին: Հատորի վերջում տրված են տարբեր բնույթի ցանկեր և ուղեցույցներ, որոնք կոչված են դյուրացնելու բանասերների աշխատանքը հարյուրավոր հիշատակարանների մեջ իրենց հետաքրքրող դեպքի, դեմքի ու վայրի մասին տեղեկություններն առանց ճիգ ու ջանքի գտնելու գործում: Անդրադառնանք այդ ցանկերին նույն այն հերթականությամբ, ինչպես նրանք հաջորդում են միմյանց քննարկվող հատորի վերջում:

Առաջին տեղը գրավում է «Ժամանակագրական օժանդակ ցանկեր» խորագիրը կրող ուղեցույց ցանկը, որի մեջ ընթերցողը պետք է գտնի ամենավստահելի տվյալներ 1601-1620-ական թվականներին իշխած աշխարհիկ ու հոգևոր պետերի հաջորդականության և գահակալության ու աթոռակալության տարիների մասին: Այստեղ հատուկ ենթավերնագրերի տակ տրված են օսմանյան սուլթանների, Սեֆյան շահերի, Ղրիմի խաների, Լեհաստանի, Քարթլիի և Կախեթի թագավորների, էջմիածնի, Սսի, Աղթամարի և Փանծասարի կաթողիկոսների, Երուսաղեմի, Կ. Պոլսի հայ պատրիարքների ու Հռոմի պապերի մասին ժամանակագրական տեղեկություններ: Անտարակույս, շատ արժեքավոր ու պիտանի տեղեկատու միավոր է, սակայն սխալաշատ է ու թերություններով լի:

Մահմեդական իշխողների մասին տեղեկությունները քաղված են Ստենլի Լեն-Պուլի վաղուց հնացած աշխատությունից (Лен-Пуль Стенли, Мусульманские династии..., СПб., 1899). այժմ լավագույն տեղեկատուն է համարվում Կ. Բոսվորտի աշխատությունը (К. Э. Босворт, Мусульманские династии, Москва, 1971):

Որպեսզի պարզ լինի, թե որքան անստույգ են հրատարակված տվյալներից շատերը, ստորև զուգահեռաբար տալիս ենք Ղրիմի խաների ցանկը՝ ըստ խնդրո առարկա ցանկի և ըստ Կ. Բոսվորտի:

Հիշատակարաններ (էջ 756)	Կ. Բոսվորտ (էջ 209)
Ղազի-Գիրեյ Բ (կրկին) 1594-1608	Ղազի-Գիրեյ Բ (կրկին) 1596-1608
Սելեմեա-Գիրեյ Ա 1608-1610	Թոխթամիշ-Գիրեյ 1608
Ջանիբեկ-Գիրեյ Բ 1610 -1622	Սալամաթ-Գիրեյ 1608-1610
	Մուհամմեդ-Գիրեյ Գ 1610
	Ջանիբեկ-Գիրեյ 1610-1623

Կրկին կամ Սսի կաթողիկոսների շարքում տեղ չի տրված Պետրոս հակաթոռ կաթողիկոսին, որը նստում էր Հալեպում և հիշատակվում է հենց այս հատորի մեջ 1601-1608 թթ.:

Աղթամարի կաթողիկոսներից նշված է միայն Գրիգոր Գ, որ աթոռակալել է 1586-1612 թթ.: Ո՛վ է նրա հաջորդը, նախորդ ուսումնասիրողները չեն իմացել, որովհետև իրենց ձեռքի տակ չի եղել հայերեն ձեռագրերի հիշատակարանների այս ճոխ ժողովածուն: Բայց հատորի հրատարակիչն ինքը մի՞թե չպետք է օգտվեր իր կողմից շրջանառության մեջ գրվող նյութերից՝ գտնելու համար Գրիգորի հաջորդի՝ Ստեփանոսի անունը, որը հիշատակված է 1618 թ. շարադրված N 882 հիշատակարանում («ի կաթողիկոսութեան Աղթամարայ տեառն Ստեփանոսին», էջ 654):

Նույնը պետք է ասել նաև Գանձասարի կաթողիկոսների ցանկի մասին, որի մեջ հիշատակված են երկու անուններ՝ Շմավոն Բ 1600-1611 թթ., Արիստակես Գ. Քոլատակեցի 1611-1622 թթ.: Բայց չէ՞ որ քննարկվող ժողովածուի երկու տարբեր հիշատակարաններում, մեկը՝ գրված 1606-ին, մյուսը՝ 1617-ին, հիշատակված է Հովհաննես անունով կաթողիկոսը («ի հայրապետութեան տեառն տէր Յոհաննէս կաթողիկոսի, ի յաթոռս Աղվանից Սուրբ Գանձասարայ», էջ 208), որով և մեջբերված ցանկը դառնում է խիստ թերի, ուստի և՛ անընդունելի: Մենք հնարավորություն չենք ունեցել ստուգելու Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքների ցանկերը. չի բացառված, որ թերություններ կան նաև դրանց մեջ:

Հաջորդ միավորը օտար բառերի բառարանն է: Այստեղ կան բազմաթիվ բառեր, որոնք վաղուց ի վեր օտար չեն համարվում և տեղ են գտել նույնիսկ «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում»՝ թալան, թաս, հալալ, դասապ, դարիպ, նալբանդ, ուսթա, շարուխ, պազար, պանդոկ և այլն: Եվ ընդհակառակը՝ բառարանից բացակայում են մի շարք իրոք օտար ու անհասկանալի բառեր՝ աւտայ (էջ 371), հաբոյ (էջ 685), մովաթ (էջ 738), շաուշի (էջ 596), տաւէթ և այլն:

Հիշատակարանների ժողովածուի համար ամենակարևորն ու ամենաընդարձակը (էջ 764-811) անձնանունների ցանկն է: Առանց ուղեցույց այս միավորի՝ հրապարակված նյութերի օգտագործումն անպատկերելի է: Արդ, ինչպե՞ս է կազմված այս ցանկը: Հենց սկզբից կարող ենք ասել, որ կազմված է բազմաթիվ թերություններով ու շատ անփուլթ: Մեր նկատած բոլոր պակասներին ու թերություններին, բնականաբար, չենք կարող անդրադառնալ: Դրանցից հատկապես ակնառու են հետևյալները.

1. Յանկի հենց սկզբում տրված է համառոտությունների մի շարք.

գրչ. – գրիչ

եպս. – եպիսկոպոս

ծղկ. – ծաղկող

ստց. – ստացող կայն:

Դրանք այն բառերն են, որ պետք է օգտագործվեին անձնանունների ցանկի մեջ՝ ցույց տալու համար այս կամ այն հիշատակված անձնավորության պաշտոնը, կոչումը և մանավանդ առնչությունը տվյալ ձեռագրի հետ (գրի՞չն է, ստացո՞ղը, նորոգո՞ղը, թե՞ այլ ոք): Այսպիսի տվյալներ ստանալու հույսով սկսում ենք նայել ցանկը և հենց առաջին էջում (էջ 764) հանդիպում ենք բազմաթիվ անձնանունների, որոնց կրողների ով լինելը չի բացահայտված ցանկը կազմողի կողմից: Որպես օրինակ վերցնենք Աբրահամ անունը.

Աբրահամ Արծկեցին ձեռագրի նորոգող է, բայց այդ մասին նշում չկա:

Աբրահամ Բուղտանցին նվիրատու է. չի նշված:

Աբրահամ Թոխաթեցին գրիչ է. չի նշված:

Աբրահամ Կ. Պոլսեցին ստացող է. չի նշված:

Աբրահամ Կոլճովցի խոջան ստացող է. չի նշված:

Աբրահամ Սեչովցին գրիչ և ծաղկող է. չի նշված:

Եվ այսպես, հարյուրավոր օրինակներ կարելի է բերել:

2. Մի շարք անուններ կան, որ գործածված են հավասարապես և՛ տղամարդկանց, և՛ կանանց համար, ուստի հաճախ անհրաժեշտ է լինում նշում կատարել այս կամ այն տարակուսելի անվան արական (ար.) կամ իգական (իգ.) լինելու մասին: Այս բանը կատարված չլինելով՝ ընթերցողը հնարավորություն չունի ցանկից պարզելու, դիցուք, կի՞ն է, թե՞ տղամարդ այս Բասալը, Բոլորը, Բուլմիշը, Գուլխարը, Դովլաթը կամ նման օտարալուր անուն ստացած հարյուրավոր այլ անձնավորություններ:

3. Մեր միջնադարյան գրիչները միևնույն անունը հաճախ հենց նույն հիշատակարանում գրում են տարբեր ուղղագրությամբ. հենց միայն Հով-

հաննես անունը տասից ավելի տարատեսակներով է հանդիպում (Հովհաննես, Հովաննես, Հովանես, Հոհաննես, Հոհանես, Հոհան, Հովան, Օհան, Ավան, Իվան և այլն և այլն): Բուն ձևից խիստ շեղված տարատեսակներն ինքնուրույն անվան իրավունք ստանալով՝ բնականաբար, ցանկում առանձին տեղ պետք է գրավեն և գրավել են: Սակայն միանգամայն սխալ է, դիցուք, Մարիամ, Մարեամ և Մարեմ ձևերը ներկայացնել առանձին-առանձին՝ որպես տարբեր անուններ: Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանն» այսպիսի հարցերում անսխալական ուղեցույց է. ըստ այդմ, պետք է նախ տալ անվան ճշգրիտ տառադարձությունը, տվյալ դեպքում՝ Մարիամ, ապա՝ փակագծերի մեջ՝ մյուս տարատեսակները: Այսպես վարվելու դեպքում Ալեքսանոս, Ալեքսիանոս, Ալիքսանոս, Ալեքսիան անունները ցանկում միմյանցից չէին հեռանա. Ակորն ու Ակորջանը պետք է տեղ գրավեն Հակոբի և Հակորջանի կողքին (նման դեպքերում հղման միջոցով). Ախիջանն ու Աղիջանը պետք է իրար մոտենային. Գասպար-Գասբար-Կասպար-Քասպար-Քասբար անունների մասին տեղեկությունները պետք է կենտրոնացվեն Գասպարի տակ և այլն և այլն: Եվ քանի որ այդպես չի արված, ընթերցողը երբեք վստահ չի կարող լինել, թե իրեն հետաքրքրող անձնավորության մասին հատորում առկա տվյալները կարող է ձեռք բերել՝ ցանկի համապատասխան տառի տակ այդ անունը գտնելով:

Սա լուրջ թերություն է, բայց գուճաթափում է հաշորդի կողքին:

4. Անձնանունները հիշատակարաններում ճնշող մեծամասնությունը տրված են լինում հոլովված ձևերով «գիտաշատուրն», «հաշատուրին» և այլն: Անձնանունների ցանկում եթե որևէ մեկը հաշատուր անվան փոխարեն դներ հաշատուրին հոլովածը՝ այն ներկայացնելով որպես անվան ուղիղ ձև, ապա կհամարվեր, մեղմ արտահայտված, զարմանալի անգիտության արդյունք: Որքան էլ տարօրինակ է, տասնյակ ու տասնյակ անունների նկատմամբ հենց այդպես է վարվել անվանացանկի կազմողը:

N 774 հիշատակարանում, օրինակ, գրված է, որ Ավետարանը վաճառվել է «Թագաւորութիւն շահ Ապագին, իշխանութիւն Ամիրկոնին (իմա՝ Ամիրգունա խանին), կաթողիկոսութիւն տէր Աւետիսին, մէլիքութիւն Ատուն» (էջ 583): Վաճառքը կատարվել է Շիրաղալա գյուղում. վերջում հիշատակված անձնավորությունն այդ գյուղի մեջ է. «մէլիքութիւն Ատուն» նշանակում է Ատի անունով անձի մելիքության ժամանակ: Ցանկի մեջ, սակայն, այս Ատի անունով անձը դարձել է «Ատուն», այսինքն՝ հոլովված ձևը շփոթվել է ուղղականի հետ: Նույն այս ճանապարհով

Արտամշահ-ը դարձել է Արտամշէ,

Գուրադի-ն՝ Գուրագէ (նաև Գոչբագէ°),

Եղիա-ն՝ Եղիէ,

Թաբառուկ-ը՝ Թաբառք (այս անունը N 255 հիշատակարանում գրված է երեք տարբեր ձևերով՝ Թաբառբ, Թաբառիկ, Թաբառակ, իսկ N 595 հիշատակարանում՝ Թաբառուկ: Ճիշտն այս վերջինն է, քանի որ անունն արաբերենից է և նշանակում է «օրհնութիւն ստանալ»․ տե՛ս Հ. Աճառյան, Անձն. բառ.),

Թուխիկ-ը՝ Թուխէ,

Խաթայի-ն՝ Խաթայ,

Խաթուշիկ-ը՝ Խաթշիկ,

Կեռաս-ը՝ Կեռսէ,

Մաղթումփաշա-ն՝ Մախթումփաշէ,

Մուշիկ-ը (յիշատակարանում «Մըշկէն» ձևով)՝ Մըիկէ,

Ոսկեակ-ը՝ Ոսկեկա,

Չիմի-ն՝ Չիմո,

Վարդիկ-ը՝ Վարդիկէ,

Վարդտիկիմ-ը՝ Վարտիկնէ,

Փիրվալի-ն՝ Փիրվալէ եւ այսպէս շարունակ:

Ուստի պարզ է, որ այս ցանկը հնարավորություն չի տալիս վստահելի տեղեկություններ քաղել 17-րդ դարի սկզբներին Հայաստանում և հայկական գաղթօջախներում կիրառված անձնանունների մասին:

5. Նշանավոր շատ մշակութային ու եկեղեցական գործիչների մասին քննարկվող ժողովածուի մեջ կան կարևոր տեղեկություններ. հիշատակված են որպէս գրիչներ, ձեռագրի պատվիրատուներ, նորոգողներ և այլ առիթներով: Անձնանունների ցանկում նրանք, անշուշտ, տեղ են գրավել, բայց ցանկի կազմողը խոսել է նրանց մասին միայն այն կապակցությամբ, ինչի համար հիշատակված են այս ժողովածուի մեջ: Ըստ այդմ, ընթերցողին հնարավորություն չի տրվել որոշելու, թե մի քանի ձեռագրեր ընդօրինակած Ասար Սեբաստացին այդ անունը կրող նշանավոր բժիշկն է, թե՞ նույնանուն մի այլ անձնավորություն:

Նույն ձևով հնարավոր չէ նաև իմանալ, որ Ավգուստինոս գրիչը Ավգուստինոս Բաջեցի ունիթոր պատմագիրն է. Կաստանա մականվամբ Խաչատուրը հեղինակն է Վենետիկ քաղաքի մասին հայտնի գովքի. Հակոբ Այվաթեհնցն ու Հակոբ Թոխաթեցին հայտնի բանաստեղծներ են. ոմն Ակոբը 15-րդ դարի տոմարագետ Հակոբ Ղրիմեցին է և այլն և այլն:

6. Անվանացանկի մեջ կա՞ն արդյօք պակաս անուններ, կամ առկա անունների մասին բոլոր տվյալներն են նշված, թե՞ կան բացթողումներ: Այս

հարցին լիակատար պատասխան տալ հնարավոր չէ: Տաժանակիր ուսումնասիրություն պետք է կատարել՝ պարզելու համար ինչպես այս, այնպես էլ որևէ այլ պատմագրական աշխատության ցանկերի ամբողջական կամ թերի լինելու հանգամանքը: Հասկանալի է, որ մենք մեր առջև այսպիսի խնդիր չենք դրել, բայց այլ առիթներով, Անձնանունների ցանկն ուսումնասիրելով, նկատել ենք, որ նրա մեջ տեղ չեն գտել Հնդուշան (էջ 384), Մաաի (էջ 736) անունները և Բարսեղ Արծրունի վարդապետի (էջ 720) մասին տեղեկությունները, ինչպես նաև չեն նշված Ատիբեկ և Ճանդեմիր անունների մասին տեղեկություններ պարունակող բոլոր էջերը (էջ 736, 703):

Անձնանունների ցանկի թերությունները սրանով չեն սպառվում, բայց չենք ցանկանում մանրուքների մեջ մտնել, ուստի՝ մի քանի խոսք Մականունների ցանկի մասին: Նախ պետք է պարզել, թե ինչ է նշանակում մականուն. արևմտահայերենում այդ բառն օգտագործվել է և այժմ էլ խոսակցական լեզվում օգտագործվում է ազգանուն բառի իմաստով, սակայն հրատարակիչն այդ բառն օգտագործել է արևելահայերեն գրական լեզվի մէջ կիրառվող իմաստով, որ է «աւել անուն» (որօՅԵԱԿԵ): Եվ եթե այդպես է, ստիպված ենք արձանագրել, որ այս ցանկի մեջ մտած մականունների շուրջ կեսը մականվան հետ որևէ առնչություն չունի: Այսպես՝ Բաթուկի Հակոբ, այս Հակոբը կոչվում է նաև Բաթուկենց, ուստի Բաթուկ նրա հոր անունն է (հմմտ. Գրիգոր Մերենց կամ Գրիգոր որդի Մերի):

Բնայ Բաշարաթ – Բնայ՝ բաննահ բառն է (արհեստի տեսակ).

Բրգովթ կամ Բրգովթենց Յովաննէս – ազգանունն է.

Դիլանշու Ամրամ – Դիլանջին Ամրամի հոր անունն է.

Խուս Մկրտիչ – խուս նշանակում է հյուան.

Կուճիպարկեցի Առաքել – Կուճիպարկ. Առաքելի հոր մականուն-ավելանունն է.

Ճլեյցի Խաչատուր – Ճլե՛լ՝ գյուղի անուն է.

Մազման Սարգիս – Մազման՝ արհեստի անուն է.

Մանկուշուկենց Ղազար – ազգանունն է.

Մար բոնակալ – սա արդեն զավեշտական երանգ ունի, քանի որ Մար բոնակալ մականվան հետ ոչ մի առնչություն չունի, այլ պարզապես նշանակում է քուրդ տիրակալ:

Պարզ է, որ ազգանուն են և ոչ մականուն նաև Տումաթիւսկի, Քարմատանենց, Քուչկանց միավորները:

Անձնանունների ցանկից հետո իր ծավալով ու կարևորությամբ երկրորդ տեղն է գրավում Տեղանունների ցանկը (էջ 812-823): Հիշատակարաններից օգտվող բանասերն ակնկալում է այստեղ գտնել անհրաժեշտ

տվյալներ անձանոթ կամ քիչ հայտնի գրչության վայրերի ու տարբեր առիթներով հիշատակված տեղանունների մասին. Հայաստանի կամ հարևան երկրների ո՞ր նահանգներում ու գավառներում են գտնվում, ի՞նչ բնակավայրեր են՝ գյուղ, քաղաք, բերդ, թե՞ մի այլ բան: Հուսախաբությունն այս անգամ ևս անխուսափելի է. այդպիսի տվյալների անհրաժեշտությունը չի գիտակցված ցանկի կազմողի կողմից, որի հետևանքով ցանկում մեկը մյուսի ետևից շարված են տասնյակ ու տասնյակ տեղանուններ, որոնք որևէ տեղեկություն չեն պարունակում իրենց մեջ: Ահա մի շարք՝ քաղված ցանկի հենց միայն առաջին էջից. Ագարակ, Ախթա, Ախվիս, Ահավանք, Ատիշ, Արդաղ, Արիփան, Արմուտաթաղ և այլն: Որևէ խոսք չի ասված դրանց ինչ լինելու և որտեղ գտնվելու մասին:

Յանկի երկրորդ ցավալի թերությունը մատնացույց անելուց առաջ ստիպված ենք այստեղ երկու խոսք ասել ընդհանրապես ցանկերի նշանակություն մասին: Ինչի՞ համար են պատմական սկզբնաղբյուրների վերջում դրվում մանրամասն ցանկեր: Ի սեր Աստծո, խնդրում եմ վիրավորական չհամարել այսպիսի հարցադրումը: Հանրահայտ է, որ ցանկերը կոչված են դյուրացնելու տվյալ աղբյուրից օգտվել ցանկացողի աշխատանքը: Որևէ մեկը, դիցուք, հետաքրքրվում է Տաթևի վանքով և ցանկանում է իմանալ, թե հիշատակարանների այս ժողովածուի որ էջերում կարելի է տեղեկություններ գտնել մշակութային այդ կենտրոնի մասին: Նա անմիջապես պետք է բացի ցանկը, գտնի Տ տառի հատվածը, կանգ առնի Տաթև տեղանվան վրա և նրան առընթեր գտնի ժողովածուի այն բոլոր էջերի հիշատակությունը, որոնցում խոսք կա Տաթևի մասին: Այսպես պետք է լիներ, բայց սույն ցանկի կազմողը հակառակ ուղով է ընթացել. կարծես միտումնավոր կերպով փնտրել ու գտել է հենց այն եղանակը, որով կարելի է արհեստական բարդություններ ստեղծել ուսումնասիրողի համար, թույլ շտալ, որ նա դյուրություն գտնի իր ցանկացած միավորը:

Ահա ձեզ փաստեր: Շարունակենք Տաթևի օրինակը: Տեղանունների համապատասխան բաժնում Տաթև անվան դիմաց հետաքրքրվողը գտնում է միայն 2 էջերի նշում՝ 542, 636: Բայց մի՞թե 17-րդ դարի սկզբներին նշանակալից դեր կատարած այդ վանքը 750-ից ավելի մեծադիր էջերից բաղկացած այս ժողովածուի մեջ հիշատակված է միայն երկու անգամ: Պարզվում է, որ ոչ բուն ցանկում Տաթև գտնելուց հետո ընթերցողը գլխի է ընկնելու, որ պետք է նայել նաև «Հոգևոր կենտրոններ» ենթավերնագրի տակ բերված անունները: Եվ եթե իսկապես գլխի ընկնի ու նայի, ապա «Անապատներ» ենթա-ենթավերնագրի տակ կգտնի Ստաթեի անունը (իմա՝ Ստաթեի անապատ) 484 էջանիշով: Սրանով, սակայն, հարցը չի փակվում: Այնուհե-

տև ուշիմ ընթերցողը պետք է հասկանա, որ միջնադարում Անապատից բացի հոգևոր կենտրոնները կոչվել են Ուխտ, ուստի պետք է գտնի այդպիսի մի ենթա-ենթավերնագիր, որի տակ դարձյալ՝ Ստաթեի ուխտ՝ 543, 713 էջանիշերով: Կարծում եք՝ սիզիֆյան աշխատանքը սրանով վերջացավ: Ոչ, պետք է իմանալ նաև, որ Անապատից ու Ուխտից բացի Տաթևը կոչվել է նաև Վանք, ապա՝ փնտրել ու գտնել, որ ցանկի մեջ իրոք կա նաև այսպիսի ենթա-ենթավերնագիր, որի համապատասխան տեղում ևս կա Ստաթեի վանք անունը՝ 133, 549, 654, 699 էջանիշերով: Փառք Աստուծո, նոր որոնումների կարիք այլևս չկա, այժմ արդեն ուսումնասիրողը ձեռքի տակ կարող է ունենալ վերոհիշյալ բոլոր տվյալների հանրագումարը, որը նա, մեծապես տարբերվելով ցանկի կազմողից, կարող է գրանցել ընդամենը երկու տողի վրա ահա այսպես.

Տաթև, նաև Ստաթև (գյուղ, վանք, ուխտ, անապատ) – 133, 484, 542, 543, 549, 636, 654, 699, 713:

Եվ հենց այսպես պետք է աներ ինքը՝ ցանկի հեղինակը:

Տաթևն ամենաբնորոշ օրինակն է, բայց տեղանունների ցանկում մոտավորապես նույն ձևով են ներկայացված բազմաթիվ այլ տեղանուններ՝ Աղթամար, Լիմ, Այրիվանք, Վանկա և այլն:

Տեղանունների ցանկի թերություններից վերջինը, որի վրա ցանկանում ենք ուշադրություն հրավիրել, նրա ոչ լրիվ լինելն է: Գործնական նշանակութունից բացի, այս ցանկը մեծապես նպաստելու էր Հայաստանի պատմական աշխարհագրության մշակմանը և տեղանունների բառարանի ստեղծման աշխատանքներին, ուստի ժողովածուի կազմողը, հետևելով իրենից առաջ հիշատակարանների ժողովածուներ հրատարակողներին, պետք է տեղանուններ քաղեր նաև իրենց ծննդավայրով կամ գործունեության վայրով հիշատակված գործիչների անուն-ազգանուններից: Եթե հիշատակված է ոմն Մկրտիչ Պրաձորցի, դա նշանակում է, որ եղել է նաև Պրաձոր անունով բնակավայր և այլն: Այս ձևով հիշատակված վայրերը մեր կազմած ցանկերում նշված են, օրինակ, այսպես.

Աղբիհն – ծննդավայր ոմն Գալուստի,

Եգեպատ – Ստեփանոս երեցի ծննդավայրը և այլն:

Այս կարգի վկայություններն օգտագործելով՝ հնարավոր կլիներ ժէ դարի հիշատակարանների ցանկն ավելացնել 3 տասնյակից ավելի այսպիսի տեղանուններով.

Ագուլիս (էջ 195),

Արագածու ոտն (մոռացված է, էջ 583),

Արղնի (էջ 497),

Աւրին (էջ 464),
 Բազէն (էջ 455),
 Բենիկ (էջ 600),
 Բուղտան (էջ 324),
 Գահլու (էջ 276),
 Գեղամայ երկիր (էջ 108),
 Դարենից (մոռացուած է, էջ 577),
 Թուրկուրան (էջ 497),
 Լուցք (էջ 388),
 Խասկալ (էջ 337),
 Ծիծան (էջ 586),
 Կապենց ուխտ (մոռացուած է, էջ 529),
 Կասիմ (էջ 350),
 Կաւլճուկ (էջ 415),
 Կորատուն (էջ 707),
 Հէգէպատ, իմա՝ էգէպատ (մոռացուած է, էջ 58),
 Ծլեկ (էջ 537),
 Մարաղա (էջ 700),
 Շամբ (էջ 392, 753),
 Որկեր (էջ 455),
 Պրաձոր (էջ 474),
 Սուրբկանց (էջ 578),
 Տիւրիկ, Տիպրիկ (էջ 600, 737):

Այս ցանկը լրիվ չէ. թերևս կարելի լինի կրկնապատկել:

Ասենք նաև, որ ինչպես Անձնանունների ցանկում, այնպես էլ այստեղ կան սխալ ներկայացված կամ տառադարձված տեղանուններ: Գրված է, օրինակ, Լոլըն, պետք է լիներ Լոլընից, Պօլան՝ Բոթուլանն է, ուստի պետք է ծանոթագրել՝ Տատկէ, պետք է լիներ Տատկու դաշտ:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՆԱԵՎ ՎՐԻՊԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ժողովածուին կցված է նկատված վրիպակների մի ցանկ՝ 36 տարբեր բառերի ճշգրտումով: Այսպիսի ստվարածավալ հատորի համար դրանք շատ չեն: Կան նաև բազմաթիվ այլ չնկատված վրիպակներ: Անդրադառնալով այս հարցին՝ մենք դուշմին չափով անգամ չենք ցանկանում մեղադրել հրատարակչին կամ սրբագրիչներին, այլ ավելի ուշադիր խմբագրական աշխատանքի կոչ ենք անում, քանի որ մեր կողմից նկատված վրիպակների մի մասը կարելի է բացատրել հենց խմբագրական աշխատանքի թերութուններով: Նշենք մեր նկատած վրիպակների մի մասը.

ի հատուցանողեն (6)
 յամէնառատ սեղանայս
 Շօղ քաղաք (89)
 մեղացեալ (96)
 Տաթկացի (116)
 աւրենէ փխ. աւրհնէ (152)
 Լակ Թամուր (էջ 198)
 էնց խոստացաւ մահն (212)
 զայս տաին փխ. տարին (236)
 Զլինել փխ. Զլինել (277)
 ասացք փխ. ասացաք (293)
 վերջացացեալ (300)
 ի դրան փխ. ի դրանէ (331)
 (յ)ուզմամբ փխ. յուզմամբ (342)
 օտարացն փխ. օտարացան (346)
 Քանզ սեւ փխ. քան զսեւ (373)
 դարի փխ. բարի (524)
 ոֆ փխ. ոխֆ կամ ո /խ/ ֆ (531)
 բարեհմիտ (547)
 դասակեսցէ փխ. դասակցեսցէ (703)
 ազաց փխ. աշաց (343) և այլն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ժէ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների այս առաջին հատորի մեջ ամփոփված նյութերի դասակարգման, վերծանուլթյան, ծանոթագրման և ընդհանրապես աղբյուրագիտական մշակման թերուլթյունների և անհաջողուլթյունների մասին մեր ասելիքը սպառեցինք: Նորից ուզում ենք նշել, որ տարբեր առիթներով մեջբերված փաստերն ու վկայակոչումները մեր այս կամ այն դիտողուլթյան հիմնավորման նպատակին են ծառայում: Անհրաժեշտուլթյան դեպքում կարելի է մատնացուլց անել նույն կարգի բազմաթիվ այլ սխալներ ու թերուլթյուններ:

Այսպիսով, ժամանակն է արդեն վերջակետ դնելու:

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները հայ պատմագրուլթյան համաշխարհային արժեք ներկայացնող այն եզակի սկզբնաղբյուրներն են, որոնց հրատարակուլթյան ու ուսումնասիրուլթյան վիթխարի աշխատանքը բախտի բերումով մեր սերնդին է վիճակվել: Հայերեն հիշատակարանների արդեն լույս տեսած հատորները ընդհանուր արևելագիտուլթյանն իրենց

նպաստը բերեցին հրապարակումից ընդամենը մի քանի տարի հետո: Նրանց մեջ ամբարված նյութերի մեծ կարևորությունը պետք է բացատրել այն հանգամանքը, որ հայերեն հիշատակարաններն ամենուրեք արդեն դիտվում են որպես ինքնատիպ աղբյուրագիտական միավորներ, նրանց մասին գրվում են ուսումնասիրություններ ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, բացահայտվում են նրանց պատմագրական, գեղարվեստական ու լեզվական առանձնահատկությունները, ցույց է տրվում նրանց նշանակությունն ի նպաստ հարևան երկրների սոցիալ-քաղաքական ու մշակութային կյանքի ուսումնասիրության և այլն:

Մեր միջնադարյան հիշատակագիրների վաստակի նկատմամբ հպարտություն զգացմունքով առկեցուն, արձանագրելով այս փաստը՝ գիտակցում ենք նաև այն մեծ պատասխանատվությունը, որ դրված է բոլոր այն հայ բանասեր-աղբյուրագետների ուսերին, որոնք իրենց նպաստն են բերում հիշատակարանների հավաքման, գիտական մշակման ու հրապարակման կարևոր աշխատանքներին: Նրանց գործն անհամեմատ դյուրին է: 25-30 տարի առաջ հայ աղբյուրագետը ձեռքի տակ չունեի Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերի գիտական ցուցակ, այժմ հրապարակի վրա են համառոտ ցուցակի զույգ հատորները, որոնց մեջ հատուկ ցանկով, ըստ ժամանակագրական հերթաշարի, ցույց են տրված մեր ձեռագրերի մեջ առկա բոլոր հիշատակարանների ձեռագիր աղբյուրներն ու էջերը: Այս նույն ժամանակաշրջանում հրատարակվել են աշխարհի տարբեր մշակութային ու եկեղեցական հաստատություններում պահվող հայերեն ձեռագրերի շուրջ երկու տասնյակ մանրամասն ցուցակներ, որոնցից հիշատակարաններով հետաքրքրվող բանասերն ի վիճակի է քաղել իրեն պիտանի հարյուրավոր նյութ-միավորներ: Ոչ պակաս բարերար գործոն է և մշակութային կապերի ստեղծումն ու ամրապնդումը հայերեն ձեռագրերի արտասահմանյան հավաքածուների հսկիչ մարմինների հետ. այսօր մենք հնարավորություն ունենք տարբեր երկրներից ստանալ մեզ հետաքրքրող ձեռագրերի մի զգալի մասի լուսանկար պատճենները կամ մանրաժայռակները:

Նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքները, չմոռանալով նաև հիշատակարանների նախկինում հրատարակված ժողովածուների դրական փորձը՝ մենք այսօր իրավունք ունենք ավելի մեծ պահանջներ ներկայացնել դեռևս անտիպ հայերեն հիշատակարանների ուսումնասիրողներին ու հրատարակության պատրաստողներին: Եվ երբ այս հանգամանքների լույսի տակ նորից անդրադառնում ենք քննարկվող հատորին ու փորձում ընդհանուր հայտարարի բերել մեր քննադատական դիտողությունները, ցավով ու

տիրությունները կրկին ստիպված ենք արձանագրել, որ ժէ դարի հիշատակարանների այս առաջին գիրքը չի համապատասխանում այսօրվա գիտական պահանջներին:

Ինչո՞վ բացատրել ցավալի այս իրողությունը: Չէ՞ որ հատորի պատրաստման աշխատանքների հիմնական ծանրությունն իր վրա է վերցրել փորձված բանասեր, մի շարք մնայուն, մեծարժեք ու ծավալուն աղբյուրագիտական երկերի՝ «Մանր ժամանակագրությունների», «Կանոնագիրք Հայոցի» հմուտ հրատարակիչ Վ. Հակոբյանը: Ինչո՞ւ է այս անգամ նա իջել իր պատշաճ մակարդակից և թույլ տվել իրեն ոչ հատուկ սխալներ ու թերություններ:

Այս հարցերի սպառիչ պատասխանը հավանաբար կարող է տալ ինքը՝ Վ. Հակոբյանը: Մենք հակված ենք կարծելու, որ թերությունների ծայրը թաղված է այն ժառանգության մեջ, որ նա ձեռագրական նյութերի արտագրությունների ձևով ստացել է հանգուցյալ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանից: Ե՛վ Վ. Հակոբյանի, և՛ նրա սեկտորի, և՛ Պատմության ինստիտուտի տնօրինության սխալն է եղել հատորի խմբագրության գործը նյութեր հավաքողներից մեկին հանձնարարելը: Եթե նույնիսկ մոռանանք այն հանգամանքը, որ վերջին տարիների ընթացքում մեծարգո ու երջանկահիշատակ մեր ուսուցիչը կորցրել էր իր աշխատունակությունը, դարձյալ չենք կարող հաշտվել այդ իրողության հետ: Աղբյուրագիտական այսպիսի դժվարին ու բարդ աշխատանքները համեմատաբար անթերի ի կատար ածելու համար օժանդակ ու փորձված աչքերի հրամայական պահանջ է զգացվում: Խմբագրությունը պետք է հանձնարարվեր այնպիսի մի բանասերի, որը, ձեռագրագիտական աշխատանքների մեծ փորձ ունենալով, ընդունակ լինի տքնաջան բանասիրական աշխատանք կատարել՝ ուշադրություն դարձնելով ոչ միայն աշխատանքի հիմնական ուղղությանը, այլև խորամուկս լինելով առաջին հայացքից քիչ նշանակություն ունեցող մանրուքների մեջ: Այո՛, խմբագիրը պարտավոր է պատասխան տալ նաև ամեն մի սխալ դրված ստորակետի կամ վերջակետի համար: Հայերեն ձեռագրերի հիշատակարանների գիտական արժեքը մեծ է ու հսկայական, ուստի մեծ ու հսկայական պետք է լինի նաև պատասխանատվության զգացումը բոլոր այն անձնավորությունների, որոնք առնչվում են նրանց գիտական մշակման ու հրատարակման սրբազան գործին:

Ուզում ենք հավատալ, որ շուրջ մեկ ամսվա լարված աշխատանքի արդյունք հանդիսացող քննադատական մեր այս դիտողությունները չեն լինելու «ձայն բարբառոյ յանապատի», այլ նպաստելու են հիշատակարանների հաջորդ հատորների կատարելությանը:

ՅԱՆԿԵՐ

(Կազմեցին Մարգարիտ և Շուշանիկ Խաչիկյանները, Շողիկ Զաղոյանը)

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՅԱՆԿ

- Աբաս-Ղուկի 430
Աբգար 247, 433
Աբգար եպս. 364, 367, 376
Աբրիլա 345
Աբեղյան Մ. 16, 35, 37, 40, 61, 62, 106, 110, 112, 117, 151, 152, 154, 225, 290, 292, 424
Աբել 76
Աբել եպս. Մխիթարյանց 38, 39
Աբխաղոմ 331, 336
Աբովյան Խ. 98
Աբրամ 238
Աբրահամ Արծկեցի 502
Աբրահամ Բուդտանցի 502
Աբրահամ Թոխաթեցի 502
Աբրահամ Կոլնովցի 502
Աբրահամ Կ. Պոլսեցի 502
Աբրահամ Սեչովցի 502
Աբրահամյան Ա. 14, 29, 124, 156, 166, 186
Աբուբաքր 333
Աբուլաձե Իլիա 169
Ագաթանգեղոս 32, 34-37, 42, 59, 128, 137, 138, 153
Ագապ 61
Ադամ 166, 236, 238
Ադամանախոս 55, 56, 93
Ադդե Գամրացի 245
Ադոնց Ն. 8, 40, 48, 55, 56, 59, 62, 64, 65, 67, 68, 70, 91-96, 108, 112, 184, 257
Ազատյան Թ. 166, 389, 390
Ազարիա Սասնեցի 457, 460, 471
Աթանաս 211, 214, 321
Աթանաս Աղեֆսանդրացի 19
Աթանան 479
Աթանագենետ 160
Ալախաղուկի 484
Ալամ-Խաթուն 345
Ալեֆսանոս (Ալեֆսիանոս, Ալիֆսանոս, Ալեֆսիան) 503
Ալխաս-Միրզա 430
Ալի 336, 344
Ալիշան 5, 6, 31, 42, 51, 66, 69, 143, 148-150, 153, 157, 160, 163, 165, 166, 225, 256, 267, 268, 288, 290, 304, 305, 310, 311, 319, 321
Ալփասլան 179
Ախիջան տե՛ս Ադիջան
Ակակիոս 105, 108
Ակինյան Ն. 38, 44, 63, 66, 71, 111, 165, 312, 388
Ակոբ տե՛ս Հակոբ
Ակոբջան տե՛ս Հակոբջան
Ահարոն 74, 180, 263, 491
Ահարոն-Գրիգոր
 տե՛ս Գրիգոր-Ահարոն
Ահմադ 363
Աղաբաբ 461
Աղայան Է. 15
Աղաջան (խոջա) 470, 472
Աղավրոս, Աղավրես 236

- Աղբերիկ 378
 Աղբուղա 345
 Աղեֆանդր 58, 76, 88, 89
 Աղեֆանդրոս 89
 Աղեֆանդր (Մամեայ որդի) 244
 Աղեֆանդր Մակեդոնացի 480
 Աղիջան (Ախիջան) 503
 Աղվան 239
 Անաոյան Հ. 14, 16, 51, 104, 152, 157, 165, 166, 213, 251, 276, 328, 484, 503, 504
 Ամատունի Ս. 51, 113
 Ամիրադա 372
 Ամիրզումա խան (Ամիրկոն) 437, 504
 Ամիրդովլաթ Ամասիացի 463
 Ամիր-Եզդին 381
 Ամիր Հասան Ա 319
 Ամիր Հասան Բ 308, 319
 Ամիր-Սաադ 375
 Ամիր Սարգիս 482
 Ամրամ Դիլանջու 505
 Այգեկցի տե՛ս Վարդան Այգեկցի
 Անակ Պարթև 34
 Անակշատ-Սուրեն 34
 Անանիա 245
 Անանիա Շիրակացի 5, 156, 158, 202, 229, 251, 252, 253, 450,
 Անանիա Սեբաստացի 207
 Անասյան Հ. 165, 183
 Անաստաս 245
 Անաստաս Ակոռեցի 253
 Անատոլիս Էպս. 244
 Անդրա, Անդրե 244
 Անդրեաս 239, 244
 Անդրեաս Բյուզանդացի 252
 Անդրեասյան 252
 Անդրիկյան Ն. 52
 Անդրոնիկոս 183
 Անթապյան Փ. 254
 Անկեսա 239
 Անտոնինոս 243
 Անտոն 371
 Աշխադար 122
 Աշոտ Բագրատունի 142, 176, 433, 434
 Աշոտ Ողորմած 184
 Ապուսանկ (որդի Սենեֆերիմ Արծրունու) 185
 Առաֆել Դավրիժեցի 267, 369, 374
 Առաֆել Կունիպարկեցի 505
 Առաֆել Սյունեցի 328, 361
 Ասատուր 472
 Ասար Սեբաստացի 504
 Ասլան 471
 Ասկղեպիադես Բյուքանացի 155
 Ասողիկ 144, 175
 Աստղիկ 103
 Աստվածատուր 474
 Աստվածատուր Ամասիացի 474
 Ասֆանազյան Թորգոմ 312
 Ատի 503
 Ատիբեկ 505
 Ատոմ 340
 Արա Գեղեցիկ 23, 103, 227, 228
 Արամազդ 152
 Արսափիոս 94
 Արևշատյան Ս. 305
 Արես 152-154, 160, 163
 Արիստիդես Աթենացի 54, 243
 Արիստակես (Լուսավորչի որդի) 37, 43, 94

- Արիստակես Լաստիվերցի 168-171, 175
 Արիստակես Գ Քոլասակեցի 501
 Արիստարֆու տե՛ս
 Արիստակես (Լուսավորչի որդի)
 Արծրունի իշխաններ 130, 142-144
 Արձան Բրմապետ 128
 Արդուն-դան 319
 Արշակունիներ 103, 433, 434
 Արտամշահ 503
 Արտաշես Ա 103, 118, 122, 147, 148, 150-153, 155, 158, 159, 162-164, 228
 Արտավազդ Ա 5, 22, 58, 68, 122, 225-228, 232
 Արտավազդ Բ 103
 Արտավանդ 57, 88
 Արտիթ (էս) եպս. 42, 45
 Արվանդ 58
 Արփախադ 237
 Ավագ 206, 218
 Ավան 503
 Ավգերյան Մ. 144, 390
 Ավգուստինոս Բաջեցի 387, 388, 421-423, 504
 Ավետիս Մոկացի 474, 482, 494, 499, 503
 Ավետիֆ (խոջա) 471
 Ավրատ 276
 Ափրասադ Զգոն Պարսիկ 52
- Բ**
 Բաբիլաս 105, 108
 Բագրատ V 363, 376
 Բագրատունիք 142, 143, 145, 363, 366, 375, 376, 426, 433, 434
 Բագաբրամ, Բագաբրան 434
 Բահատուր 276
 Բայազիտ Ա Յըլդրում 364, 380
 Բայրամ 378
 Բաշուն Նոյին 277
 Բարդուղիմեոս առաք. 140, 141, 146, 433
 Բարձրբերդցի տե՛ս Կոստանդին
 Բարձրբերդցի
 Բարսեղ վրդ. 469, 471, 482, 483
 Բարսեղ Բհն. 257
 Բարսեղ Արծրունի 505
 Բարսեղ Կեսարացի 10, 52
 Բարսեղ Մաշկևորցի 281, 361
 Բարսեղ Վարազեցի 474
 Բաբիլաս տե՛ս Բաբիլաս
 Բժշկյան Մ. 287
 Բնա Բուշարաթ 480, 505
 Բոգդան 456
 Բոսվորա Կ. է. 500
 Բոստուր տե՛ս Բուստուր
 Բրգուրթ (Բրգուրթենց) Հովաննես 505
 Բուզանդ տե՛ս
 Փավստոս Բուզանդ
 Բուսախա-դան 372, 382
 Բուստուր 134
- Գ**
 Գագիկ Արծրունի 142, 144,
 Գագիկ Բագրատունի 182, 184, 185, 376
 Գագիկ (Հոհաննիսի որդի) 189
 Գաթրբյան Հ. 31
 Գալեմֆյարյան Գ. 54, 56, 62, 92, 93
 Գալլիոս կայսր 244

- Գալուստ 507
 Գայլ Վահան 133
 Գառնեցի 452
 Գասպար (Գասբար, Կասպար, Քասպար, Քասբար) 503
 Գարագաշյան Ա. 118, 119, 122
 Գարեգին վրդ. 203, 304
 Գավար 494
 Գորգի տե՛ս Գեորգ (վրաց թագավոր)
 Գեղեոն 76
 Գեղոսեոն 129, 132
 Գեորգ, վրաց թագավոր (Գորգի, Գեորգի, Գորգի) 169, 189, 195, 376
 Գեորգ Կիլիկեցի 303
 Գինդ վրդ. 48
 Գիսանե (Գիսանեա, Գիսիանե) 134
 Գոյուկ-դան 209
 Գրիգոր (Գրիգորիս) 134
 Գրիգոր (տեր) 484
 Գրիգոր (Մոկաց և Մանազկերտի եպս.) 147, 154, 163
 Գրիգոր (Գրիգորես) 230
 Գրիգոր Ախալցխացի 202
 Գրիգոր Ակնեցի 207, 208
 Գրիգոր Ակոսկանդացի 408
 Գրիգոր Ահարոն 278, 279
 Գրիգոր Անավազեցի 310, 321
 Գրիգոր Աստվածաբան 465
 Գրիգոր Բջնեցի 230, 254
 Գրիգոր Դարանաղեցի 472
 Գրիգոր երեց 231
 Գրիգոր Լուսավորիչ (ս. Գրիգոր, Գրիգոր Պարթև) 8, 32-45, 49, 50, 52, 53, 55, 56, 59, 60-63, 65, 72, 91, 94, 97, 98, 103, 110-112, 127-129, 132, 140-142, 145, 160, 249, 251, 303, 375, 433, 436, 450
 Գրիգոր Ծերենց 337, 338, 505
 Գրիգոր Գ (Աղթամարի կաթ.) 501
 Գրիգոր Կեսարացի 464, 472
 Գրիգոր Կրոնավոր 265
 Գրիգոր Հերպետ 450
 Գրիգոր Մագիստրոս 147-154, 159-163, 182, 257, 499
 Գրիգոր Մակվեցի 370
 Գրիգոր Նարեկացի 340, 358
 Գրիգոր Նյուսացի 172
 Գրիգոր Պարթև տե՛ս Գրիգոր Լուսավորիչ
 Գրիգոր Սամսոնեցի 311
 Գրիգոր Սանահնեցի վրդ. 267, 278, 294,
 Գրիգոր (սաացոյ) 475
 Գրիգոր Տաթևացի 202, 306, 307, 314, 322, 327, 328, 331-334, 336, 338, 364, 463, 465, 470, 483
 Գրիգոր Փոֆր 482
 Գրիգորիս (գրիչ) 470
 Գուլբագի 503
Պ
 Պամուր-բուղա 345
 Պանիել 47, 64
 Պանիել պատմագիր 165
 Պանիել եպս. 104
 Պանիել ֆորեպս. 94
 Պանիշմանյան տոհմ 177
 Պավլիթ 376
 Պավլիթ Բաղիշեցի 307
 Պավլիթ (գրիչ) 46, 47

- Դավիթ Անհաղթ 6, 448
 Դավիթ Զեյթունցի 472, 481
 Դավիթ կար. 427, 435
 Դավիթ (կրոն.) 377
 Դավիթ Մամիկոնյան 144
 Դավիթ մարգարե 294
 Դավիթ մոլորեցուցիչ 213
 Դավիթ (որդի Սենեֆերիմ Արծրունու) 185
 Դավիթ (վանահայր) 304
 Դավիթ Բաբունի 321
 Դավիթ փիլիսոփա (Հարֆացի) 257
 Դավիթ (թագավոր) 89, 207, 234, 250, 251, 260, 358
 Դեոսկորոս Սանահնեցի 181, 185, 186
 Դիլաֆ արկ. 469
 Դիոդոր 55
 Դիոնիսիոս Թրակացի 255, 257
 Դշխ 259
 Դոմեոտիանոս կայսր 116-123
 Դոմեոտիոս Կորբուլոն 118
 Դոն Սեբաստիանոս 401
- Ե**աչի 308
 Եգանյան Օ. 390
 Եզնիկ Կողբացի 8, 32, 39, 41, 52-62, 64, 65, 67-72, 91-95, 98, 111, 112, 114, 227
 Ելիկում 319
 Ելոգս (իմաստասեր) 244
 Եղեազար վրդ. 440
 Եղիա 57, 76, 88
 Եղիազար 128
 Եղիազար կար. 287
- Եղիշե 5, 17, 20, 28, 59, 66, 71, 72, 89, 91, 95, 114
 Եղիսաբեթ 75
 Ենովք 57, 76, 88, 236
 Եպիփան 452
 Եպիփան Կիպրացի 53
 Եպիփան Միայնակեաց 31, 46-50, 52
 Եսայան Բառնաբաս 155
 Եսայի 166
 Եսայի Կաֆայեցի 461
 Եսայի Նշեցի 258, 304-306, 310, 320-322
 Երվանդ 69, 76
 Երվանդյաններ 103
 Եսայիա մարգարե 438
 Եսայեա Բաբունապետ 310
 Եվսեփոս Կեսարացի 52, 155
 Երեմյան Ս. Ս. 177
 Եվազր Պոնտացի 52, 311, 327, 328, 338
 Եվթաղ 52
 Եվսեթ 244
 Եփրեմ Ասորի 52, 55, 338
- Զ**ադոյան Մանուշակ 214
 Զախնո 468
 Զամինյան Ա. 31, 36, 52
 Զատիկ 456, 497
 Զարբհանալյան Գ.
 տե՛ս Զարպհանալյան
 Զարդարիկ 484
 Զարպհանալյան Գ. 14, 41, 60, 155, 311
 Զաֆար (գինեծախ) 276
 Զաֆար Վանեցի 473

- Զամբարե 371
 Զամբարիա 239
 Զամբարիա Ագուլեցի 430, 431
 Զամբարիա Ավանցի 474
 Զամբարիա Բ (Ախթամարի կաթ.)
 330, 336
 Զամբարիա արկ.
 տե՛ս Զամբարիա Քանափեցի
 Զամբարիա սպասալար 224
 Զամբարիա Քանափեցի 427, 430,
 431
 Զենոբ Ասորի 132, 133
 Զենոբ Գլակ 32, 34, 377
 Զենոն 6, 245
 Զիկ 34
 Զոհրապյան 94
 Զոյաա 169, 177, 189, 195

 Էաս Աղեֆսանդրացի 244, 252
 Էմին Մ. 46, 148-150, 254
 Էսան-պեյ 468
 Էսերպեկ 287
 Էսփիլոս Աթենացի 246, 253

 Ընդունիք 434

 Թաբատուկ (Թաբատրֆ, Թաբա-
 ուիկ, Թաբատակ) 504
 Թադեոս առաֆ. 52, 140-142, 146,
 377, 432, 448
 Թանիր 332
 Թադիաղյան Մ. 228
 Թանմագ-դուլի 430, 437
 Թարաաբի 238
 Թեոդորոս Մոպսուեստացի 64,
 65, 93, 108
 Թեոփիստե 179, 181

 Թողիկ վանահայր 33, 114
 Թողամիշ 376
 Թովմա առաֆ. 141
 Թովմա (գրիշ) 202
 Թովմա Մեծոփեցի 167, 328, 362,
 364-367, 371-375, 377, 384, 435,
 Թովմա Մինասենց 384
 Թորոս 256, 258, 259, 261, 262
 Թորոս (դալիր) 474
 Թորոս երեց Ընաքինենց 257
 Թորոս Երզնկացի 267
 Թորոս իշխան 183
 Թորոս կազմող 475
 Թորոս Ռոսլին 257
 Թորոսյան Հ. 53
 Թոխթամիշ-Գիրեյ 501
 Թուփսիկ 504
 Թումա արֆեպա. 469
 Թումա Սյունեցի 333
 Թումանով Կ. 169
 Թումասա (Կրոնավոր) 375

 Իբն-Բատուտա 266, 272, 289
 Իզնատիոս 279, 463
 Իզնատիոս Անտիոֆացի 52
 Իզնատիոս վրդ. 335
 Իսկանդար 382
 Իսրայել (Իսրայել) 78
 Իրինեոս 55
 Իրինոն Բյուզանդացի 252
 Իրինոն (Իրոն) 244, 245
 Իվան տե՛ս Հովհան
 Իփակ (ստացող) 474

 Լալայան Ե. 160, 228
 Լալայ-բեկ 438
 Լալաֆարյան Ս. 467

- Լազարյանց տոհմ 450
 Լանկ Թամուր. Լանկ Թեմուր 167,
 331, 342, 362-365, 367, 368, 373,
 375, 379, 380-382
 Լևոն 399
 Լևոն Ա 317
 Լևոն Բ 317
 Լևոն Վ 388
 Լիպարիտ 169, 177, 189, 195
 Լուսիկ 469
- Խաթայի 504**
 Խաթուշիկ 504
 Խալաթյանց Գ. 117, 118, 150, 151,
 163, 225, 226, 232
 Խաղբակյան Պողոշ 308, 319
 Խաչատուր 470
 Խաչատուր (գրիչ) 273
 Խաչատուր (նորոգ.-ծաղկող) 475
 Խաչատուր Կաստանա 504
 Խաչատուր Կեչառեցի 311
 Խաչատուր Ճլեցի 505
 Խաչատուր Բնն. 470
 Խաչիկ (խոջա) 450
 Խաչիկյան Լ. 5-13, 47, 48, 91-93,
 95, 96, 120, 276, 286, 288, 305,
 332, 333, 359, 462
 Խըբըր 287
 Խլղաթ 472
 Խոսրով 32, 131
 Խոսրով Բ 162
 Խոսրով Դ 100
 Խոսրով Կոտակ 151
 Խոսրովիկ 53, 156
 Խորենացի տե՛ս Մովսես Խորե-
 նացի
- Կադմոս Միլեթացի 237, 251**
 Կագուր մանկտավագ 276, 286
 Կանայանց Ստ. 34
 Կարա-Կոյունլուներ 334, 342, 363,
 373, 376
 Կարա-Մահամադ,
 Մահմատ-խան 376
 Կարա-Յուսուֆ 342, 373, 376, 381
 Կարապետ (ախի) 273
 Կարապետ (գրիչ) 202, 474
 Կարապետ (հայր Սիմեոնի) 287
 Կարապետ (նգնավոր արդ.) 378
 Կարապետ (չուղայեցի արդ.) 363,
 368
 Կարապետ վրդ. 469
 Կարեն (տոհմ) 34
 Կեդրենոս 168
 Կեղծ-Կալիսթենես 480
 Կեռաս 504
 Կիրակոս Բանասեր Ռշտունցի
 369, 371-374, 383, 385
 Կիրակոս Գանձակեցի 7, 170, 202,
 203, 207, 208, 210, 213, 229,
 255, 256, 278, 307, 308
 Կիրակոս Երզնկացի 311
 Կիրակոս կրոնավոր 375
 Կիրակոս Հիզանցի 470
 Կիրակոս Վիրապեցի կաթ. 370,
 371, 372
 Կյուրեղ 134
 Կյուրեղ Աղեփսանդրացի 52, 463
 Կյուրեղ Երուսաղեմացի 52
 Կյուրեղ վրդ. 321
 Կլավիխ 266, 368
 Կլեման Ժակ 395
 Կոզեռն տե՛ս Հոհաննես Կոզեռն

- Կոստանդիանոս (կայսր) 243, 244, 377
 Կոստանդին Բարձրերդցի կաթ. 7, 201-205, 208, 209, 215, 217, 255, 256, 259, 261, 304
 Կոստանդին 376
 Կոստանդին Դուկաս 182
 Կոստանդին Երզնկացի 282-285, 289, 290
 Կոստանդին Կատուկեցի կաթ. 318
 Կոստանդին Մոնոմախ 177
 Կոստանյանց Կ. 147, 371, 373

 Հաբել 379
 Հագկերտ 102, 108
 Հախնազար 461
 Հակոբ 74
 Հակոբ (ս.) 388, 400, 414, 415, 421, 422
 Հակոբ (գրիչ) 468, 470, 478
 Հակոբ Այվաթենց 504
 Հակոբ Բաթուկենց 505, 511
 Հակոբ եպս. 265
 Հակոբ երեց 471, 490
 Հակոբ երեց Զամոսցացի 451
 Հակոբ երեց Թոխաթեցի 468, 504
 Հակոբ կաթ.
 տե՛ս Հակոբ Ջուղայեցի
 Հակոբ Կարնեցի 266
 Հակոբ Կլայեցի 275, 361
 Հակոբ Դրիմեցի 504
 Հակոբ մանկտավազ 290
 Հակոբ Մեծֆարեցի 183
 Հակոբ Մծնբա հայրապետ 332, 337
 Հակոբ վրդ. Ովսանանց 338
 Հակոբ Ջուղայեցի 425-433
 Հակոբ Սանահնեցի 165, 181-188, 362
 Հակոբ Սգավոր 456, 460, 462
 Հակոբ վրդ. 377
 Հակոբ ֆհն. 165, 168-179, 186, 187, 189
 Հակոբ Քարաբնեցի
 տե՛ս Հակոբ Սանահնեցի
 Հակոբ Քեոթահիացի 471
 Հակոբյան Հովհ. 209
 Հակոբյան Վ. 13, 37-39, 44, 166, 209, 369, 371, 388, 406, 444-446, 448, 450, 454, 457, 458, 468, 470, 474, 479, 497
 Հակոբջան (խոջա) 338, 503
 Համազասպ 144
 Համամ Արևելցի 257
 Հայկ 229, 238
 Հասրատ 276
 Հարությունյան Ս. 117
 Հացունի Վ. 52
 Հեթում Ա. 255, 256, 317
 Հեթում Բ 66
 Հեթում թագավոր 203, 209
 Հենրիկոս (Կաստիլիայի թագավոր) 368
 Հենրիկոս Նավարացի 395, 399
 Հենրիկոս III Վալուա 395
 Հերակլես 246
 Հերովդես 76
 Հիպոկրատ 156
 Հիպպոլիտ (Հիպոդիտոս) 54, 55
 Հնդուշահ 505
 Հոհան Բաղիշեցի 471

- Հոհան վրդ. 320
 Հոհանես ֆհն. 470
 Հովարթամ արֆա 246
 Հովան 240
 Հովան եպս. 379
 Հովանես երեց Գահլվեցի 472
 Հովանես ծաղկող 471
 Հովանես Հիզանցի 470
 Հովանես սրկ. Տզաղեցի 489
 Հովբ, Հոբ 81, 82, 225, 463, 484
 Հովհան 114
 Հովհան եպս. 104
 Հովհան Մամիկոնյան 33, 114, 124, 132, 138
 Հովհան Մայրավանեցի 17, 20, 28
 Հովհան Մանդակունի 17, 65
 Հովհան Ոսկեբերան 52, 337, 338, 463
 Հովհան Որոտնեցի 306, 307, 321, 327, 331, 335, 336, 338, 364, 365
 Հովհան Քոնեցի 306
 Հովհան Օձնեցի 156
 Հովհաննես 46
 Հովհաննես (արդ.) 474
 Հովհաննես (գրիչ) 383
 Հովհաննես (ստացող) 474
 Հովհաննես Գառնեցի 255
 Հովհաննես Դրասխանակերացի 379
 Հովհաննես Երզնկացի 7, 9, 157, 258, 266-270, 285, 290, 292, 463, 471
 Հովհաննես կաթ. 253, 451, 501
 Հովհաննես Կանխիկ
 տե՛ս Հովհան Որոտնեցի
 Հովհաննես Կոզեոն 8, 167, 170-179, 187, 188, 190, 195, 197
 Հովհաննես կրոնավոր 375
 Հովհաննես Մայրազովեցի 448
 Հովհաննես մանկտավազ 286
 Հովհաննես Մեծփեցի 364, 365, 382
 Հովհաննես Ջանկի 382
 Հովհաննես Ջմշկիկ 184
 Հովհաննես Սարկավազ 166, 185, 303
 Հովհաննես-Սմբատ 167, 168, 176
 Հովհաննես վրդ. 472
 Հովհաննես վրդ. Վանական
 տե՛ս Վանական վարդապետ
 Հովհաննես Տարոնեցի 171
 Հովհաննես ֆհն. 166
 Հովհաննիսյան Աշոտ 387, 431, 444-446, 479, 511
 Հովսեփ 64, 111, 114
 Հովսեփ արֆեպս. Արղուսյան 287
 Հովսեփ Ընծայուց 177, 190
 Հովսեփյան Գ. 46, 318-320, 371, 373, 374, 448, 449
 Հովիանոս կայսր 101
 Հովիոս Մաֆսիմոս 120, 121, 123
 Հուսիկ 45
 Հուստիանոս 244, 245
 Հուսեփ 74
 Հոփսիմեան 217
 Հոփսիմե 46
Ղազար բանասեր 336
 Ղազար եպս. 499
 Ղազար Մանկուշուենց 505

- Ղազար Ջահկեցի 165, 166
 Ղազար (վանահայր) 377
 Ղազար Փարպեցի 14, 33, 100, 102, 105, 114
 Ղազար ֆին. 470
 Ղազի-Գիրեյ Բ 501
 Ղարա-Մահմատ 377
 Ղարա-Ուսուֆ 333, 369, 381
 Ղաֆադարյան Կ. 182
 Ղևոնդ 114, 244
 Ղլտեյան Ա. 61
 Ղոլ-օղլի Երզնկացի 267
 Ղուկաս 59
 Ղոսրադի 345
- Ճանդեմիր** 505
 Ճանո 473
 Ճիհանշահ տե՛ս Ջհանշահ
- Մագիստրոս**
 տե՛ս Գրիգոր Մագիստրոս
 Մագնոս 244,
 Մաքևոսյան Ա. 305
 Մաթեոս Կիլիկիացի 304
 Մաթեոս վրդ. 318
 Մալխասյանց Ստ. 16, 113, 275
 Մակար Երուսաղեմացի 44, 52
 Մակլեր Ֆ. 166
 Մակվեցի (Մակուեցի) 370
 Մահմատ իսան
 տե՛ս Կարա-Մունամադ
 Մահմատ-ղոլի-իսան 438
 Մահմեդ (Մահմատ) 344, 345
 Մահտեսի Յայլա 473
 Մադաֆիա աբդ. 207
 Մադթումփաշա 504
 Մամբրե 47
- Մամիկոնյան 134, 169
 Մայրավանեցի 66
 Մանանդյան Հ. 6, 16, 51, 102, 109, 118, 121, 168, 206
 Մանասե 240
 Մանգնոս տե՛ս Մագնոս
 Մանգու-ղան 256, 308
 Մանուե 76
 Մանուկ 475
 Մաշտոց տե՛ս Մեսրոպ Մաշտոց
 Մառ 10, 65, 112, 159, 167, 171-174, 187, 188, 201, 215, 280, 379
 Մասի 505
 Մաստիձե (Մաստե(ն)ձե) 94
 Մաստուրիոս 93
 Մատթեոս աբդ. 474
 Մատթեոս Ջուղայեցի 9, 327-361
 Մատթեոս Ուոհայեցի 167, 168, 173-177, 184, 186-188, 274, 275, 286
 Մարիամ (Մարեամ, Մարեմ) 503
 Մարիես Լուի 54, 55, 70
 Մարկո Պոլո 265
 Մարկոս միայնավոր 42
 Մարի 238
 Մարտիրոս (գրիչ) 492
 Մարտիրոս
 (Դավիթ գրչի եղբայր) 46
 Մարտիրոս Երզնկացի 386, 387, 392-395, 397-399, 403, 405-409
 Մարտիրոս Հիզանցի 470
 Մարտիրոս սրկ. 495
 Մարտիրոս Վանեցի 474
 Մարտիրոս (տանուտեր) 366, 367
 Մավրիկ 134
 Մեթոդիոս Պատարացի (Օլիմպիացի) 54, 56, 93

- Մելիֆ-շահ 179
 Մելիֆ-Շահնազար 495
 Մելիֆ-Օհանջանյան Կ. Ա. 170
 Մելիֆսեր-Բեկ Լ. 6, 181, 207, 484
 Մելիֆսեր կաթ. 427, 435, 436
 Մելիֆսեր Սերաստացի 482
 Մելիֆսերեկ ֆհն. 490
 Մելֆոն դպիր 471
 Մեծուփեցի
 տե՛ս Թովմա Մեծուփեցի
 Մեծֆարեցի
 տե՛ս Հակոբ Մեծֆարեցի
 Մենանդր 129
 Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյան
 499, 500
 Մեսրոպ Մաշտոց 8, 14, 16, 17,
 28, 29, 32, 35, 36, 41, 51, 52, 60,
 62-65, 91, 93, 100, 104-109, 111-
 114
 Մեսրոպ Վայոցձորեցի 32
 Մեսրոպ ֆհյ. Արամյան 360
 Մերուժան 144
 Մըմբարաֆշահ 333, 340
 Միհրան 125, 131, 133, 134
 Միհրան (տոհմ) 34
 Միմաս (գրիչ) 471
 Միմաս (ծաղկող) 471
 Միմաս (ստացող) 471, 472
 Միմաս Կարնեցի 471
 Միմասբեր 286
 Միմասյան Լ. 467, 498
 Միմասյան Մ. 41, 48, 91, 94-99
 Միրաչան Սղերթցի 450
 Միրզա 494
 Միրի Թուման 472
 Միրում 493
 Միֆայել 469, 470
 Միֆայել Ասորի 255
 Մխիթար Այրիվանեցի 46, 47,
 207, 379,
 Մխիթար Անեցի 276
 Մխիթար Ապարանեցի 290, 330
 Մխիթար Գոնեցի 380
 Մխիթար Գոշ 6, 202, 224, 282,
 302, 303, 314, 321, 322
 Մխիթար եզնկայեցի 310
 Մխիթար Սասնեցի 6, 311
 Մխիթար Սկևացի 464
 Մխիթարյան Ա. 56
 Մկրտիչ 82, 311
 Մկրտիչ խոս 480, 505
 Մկրտիչ Պրածորցի 507
 Մհեր 163, 214
 Մնացականյան Ա. 22, 112
 Մովզեն 117
 Մովսես 73, 74, 234, 235, 243, 263
 Մովսես Արծկեցի 448
 Մովսես եղվարդեցի 245, 252
 Մովսես Խոտանանցի 425
 Մովսես Խորենացի 14, 37, 42, 45,
 68, 100, 103, 114, 116-119, 121-
 123, 140, 142-145, 150, 151, 158,
 160, 226, 227, 425
 Մովսես կաթ. 427, 431, 436, 438,
 439, 441
 Մովսես Քերթող 195
 Մոմամմեդ-Գիրեյ Գ. 501
 Մուշեղ 130, 131
 Մուշիկ 504
 Մուրադյան Կ. 53
 Մուրադյան Պ. 13
 Մուրաաբեկ 472
 Մուրիկ 134

- Յախշի-բեկ** 345
Յակուտ 266
Յահյա Անախոբացի 169
Յուզբաշյան Կ. Ն. 168
- Նանա Ասորի** 463
Նազար (խոջա) 431, 435
Նաչաֆ-ղուլի-խան 430, 438
Նար-Դոս 98
Ներոն 118, 408
Ներսես Աշտարակեցի 47
Ներսես Լամբրոնացի 463
Ներսես եպս. 364, 365
Ներսես մանկտավազ 276
Ներսես Մեծոփեցի 362, 365-369, 374, 375
Ներսես Մշեցի (Տարոնացի) 304, 305, 309
Ներսես Մոկացի 475
Ներսես Շինող 47
Ներսես Շնորհալի 183, 282, 463
Ներսես Պարթև 31, 45-47, 100
Ներսես վրդ. 310
Ներուաս 117, 123
Նիկոլ արքեպս. Թորոսովիչ 287, 288
Նիկողայոս հայրապետ 390, 420
Նիկողոս 480
Նիհորենն, Նիխորենն 129, 134
Նոխազոան 240
Նորայր Բյուզանդացի 32, 52, 67
Նումա Պոմպիլոս 240, 251
Նունե 448
Նուրադին 276
- Շահ-Մանսուր** 375
Շահ-Սոֆի 427, 436
- Շահնագարյան Կ.** 376
Շահրուղ (Շահրաղ, Շահրուխ) 372, 381, 382
Շաղավաթ (մելիֆ) 484
Շաղավաթ (որդի խոջա Խլղաթի) 472
Շաղիտա (ս.) 47, 48
Շամիրամ 103
Շապուհ Բ 101, 102
Շապուհ արքա 378, 379
Շարավ (ամիր) 378
Շարաֆ-բեկ 329
Շիդար, Շիդար-Արտավազդ 22, 248
Շիրվանզադե 28
Շմավոն Բ կաթ. 501
Շամս-եդ-դին 381
Շահ-Արքաս (շահ Աբաս, շահ Ապազ, շահ Ապաս) 387, 429, 435-437, 455, 480, 485, 496, 498, 503
- Ոգոնի** 484
Ոգունի, Ուգունի 134
Ումիզդ 129
Ոսկան 482
Ոսկան Երևանցի 204
Ոսկյակ 504
Ոսկյան Հ. 146, 304, 376, 392
Որոզինես, Որոզեն 55, 244
Որոտնեցի
 տե՛ս Հովհանն Որոտնեցի
Ովանես 473
Ովկիանոս 238
- Ջալոյյան Վ.** 306
Ջամշյանց Մ. 304, 362
Ջամաղան տե՛ս Ջուրմազուն

- Չարֆագ 384
 Չինի 504
- Պ**ալեյան Ա. 204
 Պահլավունի (իշխան) 147
 Պապաֆ 308, 319
 Պատկանյան Ք. 46, 388
 Պատվական 469
 Պարեխ 132
 Պողոս (առաք.) 157, 247, 263, 322, 377, 387, 408, 438, 440, 463, 469, 496
 Պողոս (խոջա) 471
 Պողոս Տարոնացի 179, 180, 181
 Պետրոս (առաք.) 58, 157, 263, 377, 387, 408, 439, 496
 Պետրոս Արագոնացի 463
 Պետրոս կաթ. 168, 170, 177, 180-183, 188, 190, 191, 195, 196, 274, 294, 451, 501
 Պետրոս (Սարգսի որդի) 319
 Պետրոշևսկի Ի. Պ. 383
 Պերխոն 240
 Պղատոն 263
 Պոլիմոս 240
 Պողարյան Ն. 97, 182, 425, 466
 Պողոտան 497
 Պոտուրյան Մ. 283, 284
 Պոռչյան 308
 Պրոբոս 183
 Պրոկոպիոս Կեսարացի 32
 Պուսախտ տե՛ս Բուսախտ
- Ջ**անիբեկ-ղան 380
 Ջանիբեկ-Գիրեյ Բ 501
 Ջանփոլադյան Հ. 202, 216
- Ջաֆարզադե Ի. 119, 120
 Ջհանշահ 373, 374, 384, 385
 Ջուլեյնի 383
 Ջուրմագուն 206
- Ռ**ահան, Ըռահան 134
 Ռաշիդ-ադ-դին 349
 Ռատ 169
 Ռստակես 456
 Ռոբինյաններ 317
 Ռուբրոմ Ռ. 266
 Ռուստամ խան 430
- Ս**ալամաթ-Գիրեյ,
 (Սելեմեթ-Գիրեյ) 501
 Սահաթ 366
 Սահակ Արծրունի 140, 143, 144
 Սահակ Բագրատունի 143
 Սահակ եպս. 435
 Սահակ Պարթև 38, 39, 51, 52, 60-62, 94, 108, 114, 427, 431
 Սահակ Վանեցի 485
 Սաղամոն 233
 Սումուել 379
 Սամուել եպս. 52
 Սամուել Անեցի 188, 304, 370, 374, 385, 460,
 Սան Սեբաստիանոս 421
 Սանատրուկ 141
 Սանդուխտ կոյս 52
 Սառա 75, 78
 Սատաղա 121
 Սարգիս աբղ. 167, 362, 386, 388-407, 418-424
 Սարգիս (գծող) 495
 Սարգիս Լվովցի 481

- Սարգիս Խիզանեցի 470
 Սարգիս կրոնավոր 338, 470
 Սարգիս Մազման 505
 Սարգիս (մելիֆ) 470
 Սարգիս Մոկացի 469
 Սարգիս Շնորհալի 280, 361
 Սարգիս վրդ. 370, 385
 Սարգիս Բաբունապետ 371
 Սարգիսյան Բ. 32, 34, 36, 286, 328
 Սարկավազ վրդ. 251, 448
 Սարուխան-բեկ 430
 Սավար (Սաֆար) 455, 472, 485
 Սեբաստիանոս 401
 Սեբեոս 379
 Սեբերիանոս Եմեսացի 52
 Սեթիել 239
 Սելենենո-Գիրեյ Ա.
 տե՛ս Սալամաթ-Գիրեյ
 Սեդրեսարոս (ս.) 243, 375, 377
 Սեմ 238
 Սեմյոնով Լ. 149
 Սենեֆերիմ Արծրունի 144, 185
 Սերովբե վրդ. Ագլյան 188
 Սերովբե Պողոսյան 66
 Սեֆյաններ 480
 Սեթ 236, 472
 Սեֆի-Ղուլի 430
 Սիրաո տե՛ս Շիդար-Արտավազդ
 Սիմաֆոս 128
 Սիմեոն Երևանցի 425, 427, 428
 Սիմեոն Լեհացի 388, 420
 Սիմեոն (որդի Կարապետի) 287
 Սիմեոն Մարզնդունեցի 279
 Սիմեոն չրախնի 276
 Սիմեոն 468, 473
 Սիմոն թագավոր 387
 Սիմոն 487, 493
 Սիվան 238
 Սիֆաոս V 420
 Սմբատ 116, 122, 262, 308, 434, 472
 Սմբատ Բագրատունի 378, 379, 343
 Սմբատ Գունդստարլ 383
 Սմբատ Սպարապետ 167, 168, 173-175, 187, 188, 195, 209
 Սմբատ մարզպան 363
 Սմբատ Օրբելյան 308, 318
 Սոկրատ 263
 Սողոմոն 24, 250, 259-261, 338, 358, 437, 463
 Սողոմ 237
 Սոնեթացի 239
 Սպահապատ 34
 Ստենլի 500
 Ստեփաննոս 258, 262
 Ստեփաննոս,
 Ստեփաննոս (ս.) 249, 413
 Ստեփաննոս (գրիչ) 260
 Ստեփաննոս Ասողիկ 175
 Ստեփաննոս արհեստ. 496
 Ստեփաննոս եպս. 207
 Ստեփաննոս երեց 475, 496, 507
 Ստեփաննոս Թոխաթեցի 490, 495
 Ստեփաննոս կաթ. 501
 Ստեփաննոս Դ Հոռմկլայեցի 318
 Ստեփաննոս Մեծոփեցի 362-369, 374-376
 Ստեփաննոս Օրբելյան 308-311, 318, 321
 Ստեփաննոս (վանահայր) 485

- Ստեփանոս (նորոգող) 475
 Ստեփանոս Սյունեցի 257
 Ստեփանոս ֆին. 490
 Սրապյան Ա. 35, 290
 Սրապիոն Ուոհայեցի, Սրապիոն կաթ. 455
 Սրվանձոյան Գ. 204, 252, 389, 452
 Սուետոնիոս 121
 Սուրեն-Սուրյան-Սուրեն 134
 Սուրեն-Պահլավներ, Սուրեն տոհմ 34
 Սֆանդար Կարա-Կոյունլու 372-374, 381-385
- Վ**
 Վալուա 395
 Վախթանգ 133
 Վահագն վիշապաֆաղ 22, 103, 153, 154, 160, 161, 163
 Վահան Ամատունի 113
 Վահան Մամիկոնյան 102
 Վահանանֆ 115
 Վահրամ Բաբունի 8, 66, 69-72, 74, 75, 95, 317
 Վանական վարդապետ 5, 182, 224, 225, 229, 230, 233, 463
 Վաչե Մամիկոնյան 43
 Վասակ Սյունեցի 378, 379
 Վասիլ Բ (Վասիլ կայսր, Վասիլ թագ.) 167-171, 173, 177, 180, 183, 188-190, 195, 196, 263
 Վարդան 66
 Վարդան Աղվանեցի 254, 259-261
 Վարդան Այգեկցի 18-20, 28, 282, 302, 361
 Վարդան Արևելցի 168, 202, 203, 208, 229, 230, 252, 254-256, 258, 259, 302, 303, 305, 308, 309, 311, 361, 463
 Վարդան Բաղիշեցի 327, 328
 Վարդան (գրիչ) 462
 Վարդան (Դավիթ գրիչ հայր) 46
 Վարդան Հիգանեցի 471
 Վարդան Մամիկոնյան 378, 379, 493
 Վարդան (շինական, Մաշտոցի հայր) 100
 Վարդան (ուստա) 475
 Վարդանյան Ա. 66
 Վարդիկ 504
 Վարդապետրիկ (Իշխան Արծրունյաց) 130
 Վարդտիկին 504
 Վարդուներ 133
 Վեբեր Ս. 35
 Վըհաբ 214
 Վոամշապուհ 104, 108
 Վրան ուսրայ 276
 Վրթանես 43-45
- Տ**
 Տակիտոս 150
 Տահիր (Ահմատի որդի) 381
 Տաշյան Հ. 53, 105, 287
 Տարագրոս 183
 Տարոնացի 112
 Տարսային Օրբելյան 308, 318, 319
 Տեր-Ավետիսյան Ս. 467
 Տեր-Դավթյան Հ. 9
 Տեր-Մինասյան Ե. 93, 94, 108, 124

- Տեր-Մկրտչյան Գ. 34, 35, 56, 70, 108, 159
 Տեր-Մկրտչյան Կ. 35
 Տեր-Մովսիսյան Մ. 450, 499, 500
 Տիգրան 133
 Տիգրան Բ. 103
 Տիմանչ 204
 Տիմոթեոս 125
 Տիրայր վրդ. 467
 Տիրան 116
 Տիրատուր 321
 Տիրացու (գրիչ) 230
 Տրայանոս 123
 Տրդատ 32, 33, 42, 103, 122, 126-130, 132, 140-142, 153, 343, 377, 433
 Տրևեր Կ. Վ. 120, 162
 Տումաթիրակի 505
 Տորք Անգեղ (Անկեղ. Անկիւղ) 103, 134
 Տումբիլ Պ. Խ. 120
- Բ**արուպաս 108
- Ո**ւգունի տե՛ս Ոգունի
 Ուլունբեկ 382, 383
- Փ**աշա 482
 Փառեն 45, 104
 Փավստոս Բուզանդ 32, 43, 45, 47, 48, 59, 94, 102, 103, 114, 214, 227
 Փիլարոս 183
 Փիլիպոս (ծաղկող) 474
 Փիլիպոս արքա 484
 Փիլիպոս կաթ. 425, 427, 430, 436-439, 441
- Փիլիպպոս II 387, 402, 422, 423
 Փիլոն Եբրայեցի 155
 Փիտիոս տե՛ս Փոտիմոս
 Փիրգատա 387
 Փիր-Հասան 363, 377
 Փիրղալեմյան Դ. 375, 450, 452
 Փիրվալի 504
 Փլաբիոսներ 117
 Փոլին Քալայմաչի 284
 Փոտ պատրիարք 64, 93
 Փոտիմոս 246
- Ք**ալպապի 438
 Քամ 179, 194
 Քաշոտ 483
 Քասունի Ե. 31
 Քարափնեցի
 տե՛ս Հակոբ Սանահնեցի
 Քարմատանեն 505
 Քյոմուրեյան Երեմիա 431
 Քեխոստով խան 438
 Քյուրդյան Հ. 390
 Քյուրեյան Վ. Ս. 159
 Քոլանջյան Ս. 389, 467
 Քրիստոսատուր երեց 472
 Քուչկանց 505
 Քուրդ (մեծ իշխան) 303
- Օ**գոստոս 349
 Օգոստոս Գերմանիկոս Դոմե-տիանոս 120
 Օթման 385
 Օլիմպացի տե՛ս Մեթոդիոս Պատարացի (Օլիմպիացի)
 Օհան 503
 Օրմանյան Մ. 38, 94, 304, 305, 426

- Ֆախրաադին 345
 Ֆերթեր Պ. 35
 Ֆերդինանդ II 402
 Ֆիլիպսոս Աղբակեցի, Ֆիլիպսոս կար. 425, 427
- Адонц Н. 112
 Ахвердов Ю. 277
 Ашот, царь 184
 Бартольд В. 272
 Босворт К. Э. 500
 Вардан 302, 352
 Гордлевский Вл. 272
 Дарбинян М. О. 388
 Джафарзаде 120
 Дионисий Фракийский 257
 Иоанн Воротнеци 306
 Иоанн Козерн 167
 Иоанн Цимисхий 184
 Капанцян Г. 228
 Кучук-Иоаннесов Х. И. 184
 Марр Н. Я. 66, 112, 167, 170, 302, 352, 379
 Микаелян Г. Г. 183
- Моисей Хоренский 68, 118, 149, 150, 226, 232
 Одабашян А. 22
 Петр, католикос 167
 Рюи Гонзалес де Клавихо 368
 Симеон Лехаци 388
 Сказкин С. Д. 395
 Стенли 500
 Тимур 368
 Тумбиль П. Х. 120
 Фома Мецопеци 376
 Ричард Фрай 34
 Халатьянц Г. 68, 118, 150, 226, 232
 Эмин Н. 149
 Юстиниан 112
- Adontz N. 55
 Mommsen 117
 Oppolzer Theodor 459
 Re Philippe 484
 Schlumberger G. 184
 Toumanoff Cyril 169

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աախեն 392, 393, 398, 411
Ագարակ 506
Ագուլիս 507
Ադրբեջան 116, 117, 119, 120
Ադրիատիկ ծով 404
Ադուու 400, 415
Ազախ 380
Աթենք 306
Աթուո 394, 398, 399, 412, 421
Աթուրշ 399, 414
Աիֆլիս 506
Ալաման 397, 409
Ալժիր 422
Ալխալա 402, 417
Ալհամա 402, 417
Ալնչո բերք 381
Ախալցխա, Ախըլցխա 473, 477
Ախթա 506
Ախթամար 144, 330, 331, 336, 344, 462, 468, 482, 500, 501, 507
Ակվա 418
Ակրանատ տե՛ս Գրանադա
Ահավանք 506
Աղբակ 497
Աղբերկա վանք 367
Աղբերց վանք 308
Աղեֆսանդրիա 252
Աղթամար տե՛ս Ախթամար
Աղջուց վանք 427, 336
Աղվանք 109, 237
Աղբերման 392, 405, 419
Ամերիկա 389, 401, 403
Ամիդ 105, 108, 355
Ամոյ 380
Ամրդուլու վանք 477
Ամու-Դարյա 480
Այաս 265
Այդուոժ 398, 412
Այլաբերից գյուղ 157
Այմոնդ 401, 416
Այրարատյան աշխարհ, երկիր 51, 103, 375, 454, 485
Այրիվանք 47, 507
Անանդ 399, 414
Անապուլի, Անապուլի 403, 418
Անբերդ 434
Անգլիա 386, 392, 398, 424
Անդալուզիա 396, 401
Անդրեի վանք 304
Անդրկովկաս 167, 272, 277, 362
Անթեղ 402, 417
Անի 167, 189, 195, 265, 278-280, 286, 303, 308, 376, 434
Անձևացյաց գավառ 140, 141
Աննեշ 399, 414
Անպոզա 399, 414
Անտիոք 52, 170, 191, 196, 274, 275
Անավերպեն (Անվերս, Անուերս, Յանուես, Ովնես) 392, 393, 398, 411
Անֆունիա 404, 418
Աշտիշատ 45
Ապարաներ 387
Ապիլա տե՛ս Բյուս
Ապրակունյաց վանք 331, 336

- Առաքելոց վանք (Մշո) 304, 367, 477
 Առինջ (Առինջ) 135, 454
 Առոմե 398, 412
 Ասդորկա 400
 Ասպահան տե՛ս Սպահան
 Ասումեր 399, 414
 Ասորիք 20, 105, 108, 246
 Ասպիսակ (գյուղ) 497
 Ասպիսթան (գյուղ) 497
 Ավրոնա 404, 418
 Ատիշ 506
 Ատրանա 404, 418, 419
 Ատրենիս 477
 Ատրպատական 333, 334, 342, 376
 Արագածոտն (Արածու ոտն) 477, 507
 Արածանի 134
 Արարատ 228
 Արարատան երկիր տե՛ս Այրարատյան աշխարհ
 Արգազ (գյուղ) 454, 506
 Արդակ 130
 Արևելյան Հայաստան 64, 201, 202, 204-206, 209, 215, 318
 Արևելյան Հռոմեական կայսրություն 101
 Արևմտյան Հայաստան 389
 Արզանջան 266
 Արզրուվ 454
 Արիտոս, Արիտոսա 454, 478
 Արիֆան 506
 Արծկե 363, 369, 378, 381
 Արձան 130, 132, 133
 Արդնի 507
 Արնակ 497
 Արնեշ 330, 335, 369, 376, 377, 381, 497
 Արմուտթաղ 506
 Արտազ 10, 138, 141
 Արտամետ 498
 Արտաշատ 119, 121
 Արտաշիպ (գյուղ) 477
 Արցախ 477
 Ավելոյաոինջ 135
 Ավընդանց 454
 Ավիրուա, Ավիրվայ տե՛ս Բիրբառ
 Ավիցենց 404, 418
 Ավն ֆաղաֆ 133
 Ատրբին 507
 Ատրին 508
 Աֆուա 403
 Բաբելովն, Բաբելոն 85
 Բագատինջ 135
 Բադեն 409
 Բադրոն 400, 415
 Բագել 392, 394, 397, 420
 Բագեն 508
 Բալեարյան էջիսա 530
 Բալխաշ լիճ 379
 Բալխաստան 134
 Բահո Շահաստան 134
 Բադդադ (Բադդաստ, Պադդաստ) 308, 369, 381
 Բադեշ 165, 373, 378, 381, 384, 385, 454
 Բադու 132
 Բասենու երկիր, հովիտ 116, 118, 122, 478
 Բավիա 403, 418

- Բատմա 141
 Բարդող լեռ 366
 Բարիզ տե՛ս Փարիզ
 Բարիձոր 478
 Բարձր Հայք 392, 454
 Բեխ 454
 Բենեկենտ, Պենուվենդ 391
 Բենիկ 508
 Բեդին 467
 Բիլբառ (Ավիրուս, Ավիլայ) 395, 399, 414
 Բյուզանդիա 64, 168, 169, 176, 185, 309,
 Բյուրական 427
 Բլուսխ (Ապիլայ) 391, 399, 414
 Բողեն լին 397
 Բորուշան 508
 Բոլենց 478
 Բոյուկ Չեմեչե, Զաֆմայնայ 404, 418
 Բորչալու 160, 161
 Բջնի 254
 Բրակա 400, 416
 Բրավատա 404, 419
 Բրեխ 126
 Բրյուսել 398
 Բուդապեշտ 467
 Բուխարեստ 467
 Բուդտան 508
 Բունդայլիմնայ 401
 Բուրգաս 391

Գ
 Գագ բերդ 224
 Գալիսիա 386
 Գահլու (գյուղ) 472, 508
 Գայա 401
 Գայլեձոր վանք 310
 Գանձակ (Գաննայ, Գենջոյ) 254, 355, 477, 480, 486
 Գանձասար 500, 501
 Գավառ (Նոր Բայազետ) 477
 Գրադմանֆ, Գարդման գավառ 109, 477
 Գեղամա երկիր 480, 508
 Գետաթաղ գյուղ 387
 Գերմանիա 386, 387
 Գլակա վանք 33, 114, 132
 Գլաձոր 5, 304, 305, 308-311, 320, 321
 Գողթան գավառ 104, 109, 454
 Գողթան Դաշտ 478
 Գողթն 63
 Գորի 477
 Գորտովա, Գորտուս տե՛ս Կորդուսայ
 Գվադալկուիվիր 401, 422
 Գվադալուպա 402, 423
 Գրանադա (Ակրանատ) 391, 401, 402, 417

Դ
 Դավմաթիա 396
 Դադման 375
 Դանուբ 424
 Դաշտ 454
 Դարա գյուղ 365
 Դարբնաց ֆար 141
 Դարենից 508
 Դ՛Ա.Բ (տ՛Ա.Բ) 393
 Դավրեժ տե՛ս Թավրիզ
 Դեմրե 390
 Դիարբեխ 166, 389
 Դիեզո (զետ) 401

- Դինեսուր 404, 424
 Դոն գետ 121
 Դոռոպայտել (Դոռոպայտել) 399, 415
 Դովնադաշտ տե՛ս Դունա դաշտ
 Դվին 142, 130, 252
 Դունայ (Տունա) 404, 419, 424
 Դունայ դաշտ 134
- Ե**
 Եաշ 404, 419, 478,
 Եգեպատ 507
 Եգիպտոս 73, 209, 235, 388, 422
 Եդեսիա 105, 107, 108, 183, 186
 Եզր աշխարհ (հրվանդան) 400, 422
 Եզր Աստվածածին 415, 422
 Եղեգիս 454, 477
 Ս. Եղիշեի վանք
 տե՛ս Վարդապատրկի վանք
 Եղնուտ 134,
 Ենկյուրիա 476
 Եվտաթեի ուխտ
 տե՛ս Տաթևի վանք
 Եվրոպա 265, 387, 388, 398, 420, 423
 Երզնկա 7, 264-268, 270, 272, 273, 275, 278-280, 282, 283-290, 355, 392, 396, 405, 454,
 Երևան 6, 9, 14, 22, 33, 35, 37, 47, 51, 53, 61, 62, 66, 102, 113, 114, 118, 124, 156, 159, 165, 166, 168, 170, 182, 186, 206, 207, 209, 214, 224, 254, 258, 276, 286, 290, 302, 305, 332, 333, 362, 369, 380, 387, 390, 424, 427, 430, 431, 444, 448, 455, 466, 477
- Երնջակ (Երննակ, Իրննակ) 331, 332, 336, 337, 366, 375, 387
 Երուսաղեմ 43, 44, 89, 97, 128, 141, 174, 182, 203, 254, 255, 363, 367, 378, 386, 400, 425, 432, 434, 448, 454, 466, 477, 482, 500, 501
- Զ**
 Զամոսցա 454
 Զամոստիե 487
 Զաարա 396, 407
 Զաֆապին 401, 416
 Զեյթուն 477
 Զմյուռնիա 390, 391, 396, 420
 Զմմառ 425, 467
- Է**
 Էգեյան ծով 388
 Էթիլ տե՛ս Վոլգա
 Էջմիածին 56, 112, 312, 319, 370-373, 385, 425, 427-430, 433-435, 437, 438, 486, 499, 500
 Էսիշա 402, 417
 Էսկուրիալ (Ըսկուտեալ, Ոսկուրեալ) 402, 417, 423
 Էվիսա 403, 418
 Էրննակ տե՛ս Երնջակ
 Էլեսին 253
- Ը**
 Ընկլուզաց աշխարհ
 տե՛ս Անգլիա
 Ըոին (Ըոզին) տե՛ս Հոեմոս
 Ըսկուտեալ տե՛ս Էսկուրիալ
 Ըսպանիա (Սպանիա) 387, 414, 416, 422-424
 Ըստամպալ (Ըստամպոլ)
 տե՛ս Իստամպոլ

- Թակալթու, Թափալթու լեռ** 363, 366, 375
Թամղան 375
Թանջան (Թաջան) 375
Թափալթու տե՛ս Թակալթու
Թավրիզ (Թարիզ, Թարեզ, Թարեժ, Թավրեզ, Թարվեզ) 259, 265, 284, 354, 355, 375, 381, 382
Թբիլիսի տե՛ս Թիֆլիս
Թեղենյաց մենաստան, Թեղինյանց ուխտ 304
Թենթիր 403, 418
Թեփրդալ 404, 423
Թիֆլիս 51, 118, 181, 202, 203, 213, 355, 371, 387, 454
Թոխաթ 454
Թոխաթի շրջան 477
Թոռթոն 402, 417
Թուլիթ 402, 417
Թուկուրան 508
Թունիս 422
Թու[ս] 375
Թուրֆիա 276, 277, 387, 424, 444
Թոփրախդալայն 434
Իզմիր 390, 420
Իլախաց աշխարհ տե՛ս Լեհաստան
Իսթանեա տե՛ս Սպանիա
Իսսիկկոյ լին 379
Իստամպոլ 391, 407, 418, 419, 435, 480
Իստրիա 396
Իսֆանդար 382
Իտալիա 386, 387, 392, 395, 403, 404
Իրան 167, 265, 286, 362, 386, 429, 444, 445
Լար 403, 418
Լեհաստան 201, 287, 288, 387, 404, 419, 424, 454, 459, 477, 500
Լենինգրադ 7, 201, 210, 216, 467
Լեվոն Վիլայֆուանգ 399, 412, 415
Լերիդա 402, 417
Լիբանան 425
Լիբիա 423
Լիեժ 398
Լիզպոյ տե՛ս Լիսաբոն
Լիմ 507
Լիոն 398
Լիսաբոն 401, 416
Լիտա 420
Լոլլնից 508
Լոնդոն 395, 398, 412, 414, 419
Լոշ 402, 417
Լոտի 215
Լորեստո 404
Լվով 388, 454, 459
Լուդրան տե՛ս Լոնդոն
Լուգ 508
Խաչեն 330
Խաչու (գյուղ) 478
Խապալա 391, 396, 407
Խաոցն (գյուղ) 478
Խասգեղ 377
Խասկալ 508
Խարբերդի շրջան 477
Խիզան 377, 454, 478, 480
Խլաթ 330, 354
Խնուս 373, 382, 384
Խոզնա գավառ 180

- հոյթի լեռներ 364, 377
 հոր Վիրապ 33, 217, 303, 304
 հորակերտի մենաստան 304
 հորանաշատ վանք 224
 հորասան 375
 հուբ 130, 382
 հուբա լեռն տե՛ս հոյթի լեռներ
 հուբին 404, 419
 հուսի 454, 478
- Ծամրնդավ** 376
 Ծար գավառ 333
 Ծիծան 508
 Ծիրանյաց լեռ 157
 Ծծակ (Ծծմահոռ, Ծծմա, Ծմակ)
 131, 134
 Ծովասար 378
 Ծոփանիս 427
 Ծոփաց երկիր 47
- Կալա** (Կալայ) 390, 401, 416
 Կալիպոլի 377
 Կախեթ 500
 Կաղզվան 375
 Կամախ 454
 Կամենեց-Պողոսյ 201, 287, 404,
 419
 Կամենա 400, 416, 418
 Կան (գյուղ) 286
 Կապադովկիա 42
 Կապենց ուխտ 508
 Կապլ (Կապլա, Կապլեր)
 տե՛ս Կոբլենց
 Կասբից ծով
 տե՛ս Կասպիական ծով
 Կասիմ 508
- Կասպիական ծով 121, 380
 Կաստենցա 397, 409
 Կաստիլիա 368,
 Կաստինար 401, 416
 Ս. Կարապետի վանք 367, 450
 Կարբի 370, 381
 Կարին, Կարնո ֆաղաֆ 286, 329,
 330
 Կարմիր ծով 75
 Կարմունա 402, 417
 Կարս 195, 231, 308, 454
 Կարոց երկիր 454, 478
 Կապայ, Կոլոնիա
 տե՛ս Քյոլն
 Կալնուկ 508
 Կաֆա 276, 286, 454, 476, 477
 Կեսարիա 34, 116, 123, 128, 132,
 159, 477
 Կետեղ 132
 Կիլիկիա 203, 209, 225, 254, 255,
 304, 318, 383, 388, 434, 451, 501
 Կինն 373, 382, 384
 Կիպրոս 383
 Ս. Կիրակոսի վանք անապատ
 392, 393, 395
 Կլերմոն 398
 Կոբլենց 392, 397, 409
 Կոգովիա 365
 Կոլոնիա տե՛ս Քյոլն
 Կողբ 366, 367, 375
 Կոն 401, 416
 Կոստանց 392
 Կոռ (գյուղ) 310
 Կոստանդնուպոլիս (տե՛ս նաև
 Իստամպոլ...) 64, 93, 124, 125,
 165, 177, 181, 182, 184, 252, 280,

- 281, 327, 329, 375, 389, 390, 391, 396, 404, 425, 452, 454, 476, 480, 500, 501
- Կոտայք 427
- Կորատուն 508
- Կորդոուայ 391, 402, 417
- Կոմիդա տե՛ս Կորիսա
- Կորիսա 402, 417
- Կորսիկա 403
- Կտուց անապատ 273
- Կրամիմա 404
- Կուրան 376
- Կուտմրա 401
- Հակեպ 355, 451, 454, 477, 501
- Ս. Հակոբա աշխարհ
տես՝ Սպանիա
- Հաղբատ 203, 230, 231, 255, 304
- Համասրաբան գյուղ 477
- Համիթ տե՛ս Յամիթ 451, 454, 477, 483
- Հայաստան 9, 10, 13, 16, 18, 20, 28, 31, 33, 34, 36, 37, 39, 42-45, 47, 48, 52, 63, 65, 69, 93, 94, 98-104, 111, 113, 114, 117-119, 121-123, 137, 140-143, 159, 179, 181, 205, 206, 210, 215, 224, 228, 254, 255, 264, 265, 273, 276-278, 280, 288, 302, 303, 305, 308-310, 318, 321, 327, 329, 330, 331, 334, 340, 342, 345, 346, 349, 354, 361-363, 373, 375, 376, 383, 386, 388-390, 392, 396, 405, 419, 426, 427, 444, 445, 453, 476, 504, 506, 507, 510
- Հայաստանյայց երկիր 435
- Հանագան 376
- Հանրֆիս տե՛ս Հարֆնիս 376
- Հաշտենց գավառ 130, 132
- Հատին 304
- Հացեկաց 100
- Հերմոնի վանք 202
- Հեգեպատ 508
- Հիզան (տե՛ս նաև Խիզան) 470, 487
- Հիլի գյուղ 478
- Հին Ջուղա 329, 450, 454, 485
- Հյուսիսային Հայաստան 181, 207
- Հնդկաստան 29, 141
- Հոնրնկեցն 133
- Հոնիական ծով 391, 396
- Հորդանան 425
- Հորդանան գետ 193
- Հունաստան. Հունաց աշխարհ 189, 253
- Հոենոս (Ըոին, Ըոզին) 392, 397, 409
- Հոոմ, Հոոմ 57, 76, 88, 117, 119, 121-123, 128, 203, 209, 309, 330, 377, 386, 388, 392, 393, 397, 408, 420, 438, 500
- Հոոմա աշխարհ 418
- Հոոմեական կայսրություն 20, 101, 102
- Հոոմկլա 204, 255
- Հրեաստան 434
- Հրնիտոն 417
- Հունգարիա 288
- Ջագավան, Ջագավանք 31, 46, 203
- Ս. Ղազար (կղզի) 396, 420
- Ղազարու վանք 304, 377

- Ղազուլին 375
 Ղարաջալու (գյուղ) 477
 Ղարբերդ 472
 Ղալթ (տե՛ս նաև Խլաթ) 382
 Ղրիմ 265, 286, 380, 454, 477, 500
 Ղոմ 376
- Ճ**
 Ճաղաթ 438
 Ճակատուց երկիր 366
 Ճայեն 402, 417
 Ճապրխչուր 376
 Ճենևայ 403, 418
 Ճիլհիլիա 403, 418
 Ճլել 505, 508
 Ճուլա գյուղ 378
- Մ**
 Մադրիդ 402
 Մագանտարան 475
 Մալակա (Մալագա) 391, 402, 417
 Մալհամ գյուղ 477
 Մակու 330, 497
 Մակուրան 375
 Մանուզա (Մանուկա) 403, 418
 Մամուշ գետ 47
 Մանածկերտ 376
 Մանչեստր 467
 Մասիս 57, 68, 76, 77, 88, 89, 227, 228, 248
 Մառիլ 387, 402, 417
 Մատունա Լոռեղ 404, 418
 Մարաղա 508
 Մարաց կողմեր 63, 109
 Մարկոս ավետարանչի եկեղեցի 408
 Մարոկկո 422
- Մարսելիե տե՛ս Մարսել
 Մարմարի ծով 388
 Մարշինա 402, 417
 Մարսել 398, 412
 Մեծամոր 248
 Մեծոփա վանք 364, 372, 376, 377
 Մեղտի 126, 131, 134
 Մեսաինա 403
 Մետին Ընուշեֆ
 տե՛ս Մեղին Ընուշեֆ
 Մերտին 454
 Մեղին էլ Գամբ 399
 Մեղին Ընուշեֆ 399, 415
 Միամար տե՛ս Մեծամոր
 Միլան 397, 403, 418
 Մինյո գետ 400, 422
 Մինորգա 403, 418
 Միջերկրական ծով 354, 403
 Միջին Ասիա 368, 383,
 Միվրիա 391
 Մոզանթիֆիաչկ 403, 418
 Մոլդավիա տե՛ս Մոլդովա
 Մոլդովա (Պոլտանաց երկիր, Պոլտանա, Պոլտանաց երկիր) 288, 404, 419, 424, 454
 Մոխենչո-դարո 29
 Մոկաց երկիր, Մոկաց աշխարհ 330, 454, 478
 Մոկֆ (Մոկս) 454, 470, 478, 481
 Մոնինու կղզի 403
 Մար 334, 369, 381
 Մուշ 131, 304, 363, 367, 373, 376-378, 384

- Յագոռնան** (Յաշղիհան, Յագդիո-
 նան, Յագոին յաոգին) ավան 42
 Յագլովեց 287, 459
 Յանուես տե՛ս Անավերպեն
 Յաշ 287
 Յուդիսայի վանք 392
- Նագարեթ** (Նագարաթ) 396, 407,
 420
 Նախնավան 109, 142, 143, 381
 Նանտ 395, 399
 Նարեկ 477
 Նեղոս 338
 Նիկիա 37, 94
 Նիմ 398
 Նիշ 305
 Նյուշապուն 375
 Նոր Բայազետ տե՛ս Գավառ
 Նորգեղակ 392
 Նոր Հունդուստան 401, 416
 Նոր Ջուղա 429, 454, 460, 467
 Նփրկետ 308
 Նևեր 398
- Շամ, Շամբ** 369, 381, 508
 Շամշուպտ 372, 385
 Շամֆոր 308
 Շատախ 478, 497
 Շատուան 381
 Շիրազ 375
 Շիրակ 167, 169, 189
 Շիրաղալա գյուղ 503
 Շիրիան գյուղ 331, 336
 Շիրիղալա գյուղ 477
 Շմեզդ, Շմրգտին 369, 381
 Շնագ (գյուղ) 477
 Շվեյցարիա 386, 392
- Ողնուտ** 134
 Ոստան 369, 375, 381, 478
 Որկեր 508
 Որոտանի շրջան 387
 Որոտն գավառ 365
 Ովնես տե՛ս Անավերպեն
- Չնֆուշ** 389
- Պաղուա** (Պատվայ, Պատուայ)
 391, 397, 404, 408, 418
 Պագարնուխ 419
 Պագլ 409
 Պալունյաց գավառ 135
 Պաղակացիս ծովակ 169
 Պաղակծիակ վանք 170, 171, 191,
 196
 Պաղեստին 209, 388
 Պաղեստինացվոց կողմանք 117
 Պապա 404, 419
 Պապական նահանգ 397
 Պատուշան 287
 Պարգալո, Պարասլոն 402, 417
 Պարմա 397
 Պարսկաստան 101, 274
 Պարսք 64, 94
 Պարտավ 134, 144, 274
 Պետերբուրգ (տե՛ս նաև Լենինգ-
 րադ) 46, 56, 144, 175, 207, 215,
 388, 422
 Պերկամա 231
 Պենովենդ տե՛ս Բեննենտո
 Պըրդուս տե՛ս Բուրգաս
 Պլելս, Պլեշ 402, 417
 Պլոնիա 418
 Պոլիա 403, 418
 Պոլոնիա տե՛ս Լեհաստան

- Պողոտանաց (Պուղտանաց) երկիր տե՛ս Մուղոլա
- Պոչան 404, 419
- Պորտուգալիա 387, 389, 396, 400, 401, 422
- Պոռ 478
- Պրահա 326
- Պրածոր 507, 508
- Պուլանուլս 373, 382, 384
- Պուխարա 375
- Պուրդուս 399, 414
- Պուրսա 380
- Ջ**
- Ջահուն գետ 375, 380
- Ջամայնա տե՛ս Բոյուկ Չեմեշե
- Ջզիբե 478
- Ջինգիրդաղ 119
- Ջնուկ (գյուղ) 477
- Ջոլու 404, 418, 423
- Ջուլա 436, 439, 485
- Ջուլամերկ 382
- Ռ**
- Ռամիյի 398
- Ռէ 375
- Ռընանույուին 397, 408
- Ռշտունյաց գավառ 375
- Ռումինիա 288, 478
- Ռուսաստան 265, 387
- Ս**
- Սագակ 130
- Սագաստան 378
- Սալամանֆ 399, 415
- Սալմաստ (Սալամաստ) 382, 477
- Սալնապատա ուխտ 371
- Սահաթափոս 430, 441
- Սաղմոսավանֆ 304
- Սամարղանդ (Սմրղանա) 363, 368, 369, 375, 378, 379, 381, 382
- Սամշուղե տե՛ս Շամշուլս
- Սամոսաա 107
- Սամուլա 399, 415
- Սանահին 140, 181, 182
- Սանգաչալի 119
- Սան-Դիգե, Սան-Դիգյե 398, 421
- Սանգիա 398, 412, 421
- Սանթիայ Մարիա Ֆենեստիոնա 422
- Սանթարին 401, 416
- Սանթաֆե 402, 417
- Սանթիլինա 408
- Սանկիրիկո (Սան Կիրիկոյ) 403, 418
- Սան-Սեբաստիան 414, 421
- Սանտա-Մարիա դ'Աֆս տե՛ս Աախեն
- Սանտյագո 396
- Սանտյոգո դե Կոմպոստելլա վանֆ 386, 399
- Սաշով 419
- Սասանյան Պարսկաստան 101, 102
- Սասուն 130, 305, 373, 382, 384
- Սարայ 380
- Սարայկոս (Սարայկոս) 402-404, 417, 418
- Սարդինիա 403
- Սարմատիա 121-123
- Սեբաստիա 185, 330, 380, 477, 478
- Սեթովր (Սեթովրն) 401, 416
- Սև լեռ 170, 191, 196
- Սև ծով 354, 392, 419
- Սևիլիա 401, 402

- Սեմիրեչյե 379
Սեչով 454
Սերաբ 404, 419
Սեն-Դենի 394, 421
Սենա-Օմեո 398
Սեպ 454
Սիլվիեր (Սիլվիեր) 404, 418
Սիմանգաս 399, 415
Սին 403, 418
Սիս 204, 255, 370, 385, 434, 451, 500, 501
Սիվիլիա 416, 417
Սիրիա 209, 388, 454
Սիցիլիա 403
Սյունիք (Սիւնյաց աշխարհ, Սյունյաց երկիր) 44, 63, 109, 308, 309, 311, 318, 331, 454
Սպահան (Սապահան) 283, 429-431, 435, 436, 477, 478, 498
Սպանիա (Ըսպանիա) 386, 387, 389, 395, 396, 399, 401, 406, 414, 422, 423, 424,
Ստաբլ տե՛ս Տաբլ
Ստամբուլ (տե՛ս նաև Իստամբուլ...) 388, 391, 396, 404, 420
Ստրագբուրգ (Ստրասբուլս, Ստրագբուլս, Տրաբուլս) 392, 397, 409
Սրեմաձոր տե՛ս Սրոց ձոր
Սրկղունք ավան 307
Սրոց ձոր
(Սրեմաձոր, Սրենց ձոր) 134
Սուլթանիա (Սուլթանիայ, Սուլտանիայ) 276, 286, 355, 369, 373, 375, 381, 382
Սուլու Մանասուր 480
Սունա 402, 417
Սուրբ Խաչ տանար 144
Սուրբկանց 508
Սուրխաթ 260
Սուրբ Մարի, Սուրմարի 366, 375
Սոլաք 427, 436
Վաղարշապատ (Վատալաշապատ) 402, 417
Վալայտուլի 399, 414-415
Վալենսիա (Վալենաց, Վալենցա) 395, 396, 400, 402, 417
Վահկա 507
Վաղարշապատ 35, 39, 46, 51, 56, 100, 101, 104, 108, 110, 113, 174, 188, 195, 225, 267, 274, 286, 304, 311, 314, 369, 370, 371, 425, 427, 429, 430, 433
Վայոց Ձոր 307-310, 318
Վան 140, 146, 274, 278, 286, 363, 370, 380, 381, 384, 454, 472, 477, 478, 497
Վանա լիճ 274
Վանի շրջան 252
Վանանդ 231
Վանատիք 407
Վասպուրական 140, 142, 146, 274, 278, 231, 263, 376, 380, 454, 478, 480, 482
Վատալուպ 402, 417
Վարազ 454
Վարդիկ 375
Վարդով 382
Վարդպատրիկ վանք 375
Վենետիկ 6, 17, 31, 32, 42, 43, 52, 53, 60, 66, 70, 124, 140, 143, 144, 148, 149, 153, 155, 165,

- 168, 169, 195, 207, 213, 225, 268,
282-284, 286-288, 290, 328, 362,
388, 390, 392, 393, 396, 397, 404,
418, 420, 424, 466, 467, 504
Վիեննա 14, 31, 44, 54, 66, 71,
72, 92, 96, 98, 105, 146, 165, 204,
287, 304, 376, 388, 392, 484
Վիլա Նով (Վիլա-Նովայ, Վիլա-
Նովա) 400, 401, 416
Վիլայֆոանգ 415
Վիտերբ 403, 418
Վիրապ տե՛ս Խոր Վիրապ
Վոլգա 380
Վրաստան (Վիրք, Վիրգ, Վրաց
աշխարհ, Քարթլի) 109, 170, 189,
207, 245, 276, 374, 385, 387, 445,
477, 500
Վրկանա աշխարհ, Վրկանաց եր-
կիր 378, 379
- Տաթև** (Ստաթև) 306, 329, 332,
338-340, 477, 506, 507
Տաթևի վանք 332, 333, 338, 506,
507
Տալայվեր (Տալայուեր) 402, 417
Տայֆ 167
Տանգիա 398, 421
Տանձափարախ անապատ 332,
338
Տաշիր 109
Տատկու դաշտ 508
Տարոն (Տարան) 100, 114, 124,
128, 130, 132-134, 138, 140, 310,
364, 454, 483,
Տավուշ 224, 303
Տըմադո 397, 408
Տիգրանակերտ 121, 389, 454
Տիգրիս 247
Տիմազաս 415
Տիարիկ (Տիրի) 508
Տիրոս լեռ 377
Տմադու (Տմադոյ) 396, 407
Տրապիզոն 170, 188, 190, 195,
265, 392, 405, 477
Տրապուխ տե՛ս Ստրազբուրգ
Տրուա 399
Տունա տե՛ս Դունայ
Տուրուբերան 140
Տփլիս տե՛ս Թիֆլիս
- Յյուրիս** 397
- Ուկրաինա** 201, 288
Ուլնուտ 134
Ուոլիան 399, 414
Ուտհա տե՛ս Եդեսիա
Ուոմանի 404, 419
Ոսկուրյալ տե՛ս Էսկուրիալ
Ուրբանոս 141
Ուրմանի 287
Ուրոուվին 396, 408
- Փարիզ** 165, 326, 364, 393-396,
398, 399
Փայտակարան 338
Փանդիկ 133
Փափասար 396, 407
Փիշպեկ գյուղ 379
Փոռք 400, 416
Փոռքուկալաց աշխարհ
տե՛ս Պորտուգալիա
Փոբր Ասիա 267, 272, 273, 289,
388, 454
Փունրուպետ 400, 415

- Քարաբխատան** 119
Քաղկեդոն 245
Քամենց 397, 408
Քաշան 375
Քաջբերունիք 364, 365, 376, 497
Քարավանատ գյուղ 333
Քարթլի տե՛ս Վրաստան
Քարթման գյուղ 477, 498
Քյոլն (Կալայ, Կալոնիայ, Կոլոնիայ, Կոլոնիա) 392, 393, 397, 409
Քրման 375
- Օշական** 113, 427, 436
Օամանցոց երկիր 431, 435
- Ֆարֆարին** 403, 418
Ֆերրան 398
Ֆլանդրիա, Ֆլանտրու աշխարհ 386, 392, 398, 411
Ֆլորենցիա (Ֆլորենցայ) 388, 403, 418
Ֆոնտենբլո 398
Ֆոնգստան 404, 418
Ֆոանկֆուրթ 420
Ֆոանցու աշխարհ տե՛ս Ֆրանսիա
Ֆոիբուլի տե՛ս Ֆրեյբուրգ
Ֆոուտ տե՛ս Ֆրուտ
Ֆրանսիա (Ֆոանսա) 386, 387, 395, 398, 399, 412
Ֆրեյբուրգ 397, 409
Ֆրուտ, Ֆոուտ (Ferrette) 409, 420
- Աзербայդջան** 120
Արմենիա 66, 68, 112, 118, 150, 226, 232
Бөжүкдаш 120
Грузия 376
Иран 34
Кабаристан 120
Кавказская Албания 120
Малая Азия 272
Самарканд 368
Турция 272
- Aachen** 398
Acqupendente 403
Aix-la-Chapelle 398
Akkerman 404
Alcala de Henares 402
Alcala la Real 402
Alhama 402
Amboise 399
Ancona 404
Angers 399
Anteguera 402
Antwerpen 411
Anvers 411
Arckidona 402
Astorga 400
Ayamonte 401
- Barcelona** 402
Benuvente 399
Blois 399
Botuschani 404
Bra 404
Braga 400
Burgos 399

- Caminha 400
Campillos 402
Carmuna 402
Castinhera 401
Chotin 404
Coblentz 397
Coimora 401
Colonia 397, 409
Cordoba 402
Corita 402
Corlu 404
Cremona 404

St. Dizier 421

Ecija 402
Edirne 404
Escorial 402
Europe 386, 387

Faro 403
Ferrara 397
Ferrette 397, 420
Finisterre 400
Florenza 403
Freiburg 397

Genova 403
Granada 402
Guadalajara 402
Guatalupe 402

Jaen 402

Kephallinia 391, 396
Konstanz 397

Laurentana 404
Lazzaretto Vecchio 396, 420

Leon 400
Lerida 402
Lisboa 401
Loja 402
Lyon 398

Maiorca 403
Malaga 402
Marchena 402
Marseille 398
Medina de Campo 399
Medina de Rioseco 399
Milano 403
Mino 422
Minorca 403

Nantes 399
Napoli 403

l'Océan Atlantique 386
Orleans 399
Osuna 402

Padron 400
Padua 404
Paola 403
Papa 404
Parenzo 393
Pavia 403
Pfirt 420
Pologna 403
Pontevedra 400
Porto 400

Rammillies 398
Roman 404
Rovigno 396

Salamanca 399	Tuors 399
Sanson 396	Troyes 398
Santa Maria Finisterre 422	Tuy 400
Santafe 402	
Santarem 401	Valadolid 399
Santiago de Compostella 421	Valencia 400
Santiago de Galicia 387	Verona 404
Saragossa 402	Vicenza 404
Sereth 404	Villa de Conde 400
Setubal 401	Villafranca 400
Sevilla 401	Villa Nova de Gaia 401
Siena 403	Viterbo 403
Silivri 404	
St. Quirico 403	Yassy 404
Strasburg 397	Yvica 403
Suczava 404	
	Zadar ւե՛ւ Zara
Talavera 402	Zamora 399
Toledo 402	Zara 396
Tortosa 402, 423	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վաստակաշատ հայագետը	5
Նախամետրոպյան գրի հարցը և հմայագրերը	14
Օտարալեզու հայ գրականությունը	31
Հարցումն տեսան Ներսէսի Հայոց կաթողիկոսի առ Եփիպան միայնակեաց	49
Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը» որպես հայ մատենագրության երախայրիք	53
Մետրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը	100
Դիտողություն Մովսես Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ գրքի ԾԴ գլխի մասին	116
Դիտողություններ Հովհ. Մամիկոնյանի «Պատմության» նոր հրատարակության առթիվ	124
Հայ միջնադարյան «Վանից պատմութեանց» գնահատման հարցի շուրջ	137
Գրիգոր Մագիստրոսի մոտ Արտաշես Ա-ի վերաբերյալ պահ- պանված վիպական հատվածի մասին	147
Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի	165
Կոստանդին Բարձրերոցու իրատական թուղթը՝ առավել Արևելյան Հայաստան 1251 թվականին	201
[Իրատական թուղթ Կոստանդեայ կաթողիկոսի]	217
«Յաղագս տարեմտին ի Վանական Վարդապետէ ասացեալ»	224
Վարդան Արևելցու «Վասն բանին մասանց» աշխատությունը 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «Եղբայրությունը»	264
Երզնկա ֆաղափի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280 թ.)	285
Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները	302
Մատթեոս Զուղայեցու կյանքն ու մատենագրությունը	327
Հայ պատմագրության անհայտ էջերից	362
1. Ստեփաննոս և Ներսես Մեծոփեցիների ժամանակագրությունը	362
2. Կիրակոս Ռշտունցու ժամանակագրությունը	369
Սարգիս աբեղայի «Ուղեգրութիւնը»	386
Հակոբ Զուղայեցու կտակը	425
Ժէ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների առաջին հատորը	444

Հիշատակարանների ընտրություն	448
Հիշատակարանների շարակարգություն	452
Տոմարագիտական ու ժամանակագրական խնդիրներ	457
Վերնագրերի հարցը	461
Հիշատակարանների հասցեն	465
Հիշատակարանների հեղինակի հարցը	468
Նյութերի դասդասման սկզբունքը	473
Գրչության վայրը	475
Բնագրի վերծանությունը	479
Չափաձո հիշատականներ	488
Կետադրություն	493
Ծանոթագրություններ	496
Ցանկեր	500
Երկու խոսք նաև վրիպակների մասին	508
Եզրակացություն	509
Անձնանունների ցանկ	513
Տեղանունների ցանկ	530

ԼԵՎՈՆ ԽԱՉԻԿՅԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հատոր Ա

Սրբագրիչ՝
Էջաղրում և ձևավորում՝
Համակարգչային շարվածք՝

Նորայր Դազարյան
Շողիկ Զաղոյան
Անահիտ Խանգաղյան
Համիկ Մխիթարյան